Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԸ

ԴԱՒԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆԻ ՎԵՐԱԾԵՑ
ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐԵՑ
ՅԱԿՈԲ ՔԻՒՍԷԵԱՆԸ

ԹԵՀԲԱՆ
2003

ԱԿԱ Ռ. ՅՈԿՈՍ
ՀՐԱՇԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻ
ՖՈՆԴ

ԵՊՀ Գրադարան
SU0214233
232803

ՀՐԱՄԱՆԱՒ՝

ՏԷՐ ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Այն գիրքը հրատարակում է մեկենասութեամբ՝
Շահրազեան եղբայրների
ի յիշատակ
իրենց Ծնողաց՝

Արմէն (Ամիր) եւ Հեղինէ Շահրազեանների

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Արշակ Տէր-Միքէլեանի այս կոթողային երկասիրութիւնը հեղինակի երկարատև, ջանադիր աշխատութեան արդիւնքն է: Այն Հայ Առաքելական եկեղեցու դաւանական աստուածաբանութեան նուիրուած միակ հետազօտական հրապարակումն է, ուր աստուածախօսական աւանդութեան բազմադարեան փորձը շահեկանօրէն համակարգուած է ժամանակի եւրոպական գիտութեան նուաճումների օգտագործումով: Աշխատութիւնը շարադրուած է բազմաթիւ ու բազմաբնոյթ աղբիւրների (դաւանական երկեր, ճառեր, քարոզներ, մեկնութիւններ, պատմագրական երկեր) հիման վրայ: Հեղինակն օժտուած է հետազօտելու, այլազան սկզբնաղբիւրների հսկայական զանգուածից հիմնադրոյթը փաստող վկայութիւններ քաղելու, իրարու շաղկապելու և դրա հիման վրայ ընդհանրացումներ կատարելու հազուագիւտ կարողութեամբ: Այս և ոչ միայն այս տեսակէտից Արշակ Տէր-Միքէլեանի հրապարակող աշխատութիւնը, յիրաւի, կարող է դասագիրք լինել Հայ Եկեղեցու դաւանաբանութեամբ զբաղող մասնագէտների համար: Թերևս չկայ Հայ Եկեղեցու աստուածաբանական ժառանգութեամբ զբաղող մի ուսումնասիրող, որ օգտագործած չլինի Արշակ Տէր-Միքէլեանի բերած բազմահարուստ նիւթը, իր փաստարկները ապացուցելու և հիմնաւորելու համար չվկայակոչի այս կարևոր երկը: Տեսալ յատկութիւնների շնորհիւ հրապարակող գիրքը կարող է ոչ միայն տեսական, այլ նաև գործնական ծառայութիւն մատուցել Հայ Եկեղեցու Ազգային դիմապատկերը անաղարտ պահելու հոգսերով ապրող հոգևորականներին և աշխարհականներին: Աշխատութեան խմբագրումն իրականացուած է այդ հոգսերի լրջութիւնը քաջապէս գիտակցող «Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցու քրիստոնէական դաստիարակութեան և քարոզչութեան կենտրոնի» յանձնարարութեամբ:

Հայ Եկեղեցու դաւանական մաքրութեանը նախանձախնդիր հեղինակը շատ յաճախ, գտնելով յախուռն ներշնչանքի տիրական ազդեցութեան տակ, կատարում է փաստերի իրական վիճակից չբխող կտրուկ ընդհանրացումներ, անվերապահ ձևակերպումներ: Այս պատճառով անհրաժեշտաբար հարկ եղաւ մեղմել արդի էկումենիկ ոգուն անյարիր սուր անկիւնները, լեզուաոճական անպատշաճ դարձուածքներն ու ձևերը:

Նկատի ունենալով օգտագործուած աղբիւրների հանրայայտ լինելը՝ հեղինակը շատ յաճախ (առանց հրատարակութեան տեղը և թիւը նշելու) բաւարարուել է լոկ երկի անուն համառօտագրուած յիշատակութեամբ: Սա անհարժեշտութիւն առաջացրեց վերջում զետեղելու «Ցանկ և բանալի Արշակ Տէր-Միքէլեանի օգտագործած գրականութեան» բաժինը, ուր ոչ միայն նշուած և բացուած են հեղինակի օգտագործած աղբիւրները (տպագիր և անտիպ), այլև անկիւնաւոր փակագծերում տրուած են դրանց հետագայի քննական հրատարակութիւնները: Խմբագրինն են աշխատութեան տողատակում առկայ անկիւնաւոր փակագծերում զետեղուած տեսալները նմանապէս:

«Ծանօթագրութիւններ» բաժնում տեղ են գտել աստուածաբանական, բանասիրական, աղբիւրագիտական, մատենագիտական տեղեկութիւններ, որոնք այս կամ այն չափով լոյս են սփռում հարիւր տարի առաջ հրատարակուած այս աշխատութեան, մեր կարծիքով, մինչև վերջ չպարզաբանուած կամ թերի թողուած որոշ կէտերի վրայ:

«Անուանացանկ» բաժնում հեղինակների մասին տրուած են ամփոփ տեղեկութիւններ:

Յակոբ Քիւսէեան

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ուրախութեան եւ գոհունակութեան իւրայատուկ զգացումով է, որ վերահրատարակում ենք հայ իրականութեան մէջ եզակի եղող կոթողային այս գործը՝ հմուտ աստուածաբան, եւ հայ եկեղեցու դաւանութեան ջերմ ջադագով Արշակ Տէր Միքէլեանի:

Քսաներորդ դարի սկիզբը հրատակւած այս աշխատասիրութիւնը, կազմում է մեր աստուածաբանութեան, դաւանաբանական գրականութեան գոհար մի էջ, որով բազմերախտ հեղինակը Հայց. Եկեղեցու դաւանական վարդապետութիւնն այնքան հմտութեամբ ու նախանձախնդիր ոգով է մեզ փոխանցում:

Սոյն աշխատասիրութիւնը իր բազմակողմանի հարստութեամբ մինչ այժմ մնում է եզակի: Մինչ այսօր մենք նման ձեռնարկ չենք ունեցել ոչ արեւելահայ եւ ոչ արեւմտահայ իրականութեան մէջ. ահա թէ ինչու համար այնքան այժմէական ու անհրաժեշտօրէն էական է վերահրատարկութիւնը սոյն երկասիրութեան:

Արշակ Տէր Միքէլեանը ինք, որպէս հմուտ աստուածաբան, Հայց Եկեղեցու պատմութեան եւ դաւանութեան մասնագէտ, այլեւ խորաթափանց մեկնաբան Աստուածաշունչ մատեանի հանդիսանում է երախտարժան այն սպասաւորներից, որը իր կեանքով ու գրչով պայքարեց հայ եկեղեցու առաքելական ու աւետարանական նկարագրի անաղարտ պահպանման եւ պաշտպանութեան համար:

Վստահաբար այս կոթողային աշխատանքի հրատարկութիւնը մեծ նպաստ պիտի բերի մեր հոգեւոր եւ աստուածաբանական գրականութեան, առաւել կենսաւորման եւ միեւնոյն ժամանակ ծառայի, որպէս սքանչելի աղբիւր ինքնազարգացման հոգեւոր մշակների, քրիստոնէական դաստիարկութեան կալւածում աշխատողների եւ ընդհանրապէս հոգեւոր գրականութեամբ զբաղւողների:

Այս առիթով ուզում ենք մեր ջերմ գնահատանքն ու օրհնութիւնը յայտնել սոյն գրքի վերահրատարակութեան մեկենասութիւնը ստանձնած Շահբազեան եղբայրներին, որոնք ընդառաջելով մեր փափագի, սիրով յանձն առին այս գրքի

տպագրութեան ծախսերը ի յիշատակ իրենց ծնողաց՝ Արմէն (Ամիր) եւ Հեղինէ Շահբազեանների:

Բիւր շնորհակալութիւն եւ օրհնութիւն նւիրատու մեկենասներին եւ խաղաղութիւն իրենց հանգուցեալ ծնողների հոգիների համար:

Յատուկ շնորհակալութիւն ենք յայտնում գաղութիս մտաւորականներից՝ Պրն. Նորայր Շահնազարեանին, որ այնքան բծախնդրօրէն վերստուգեց եւ վերասրբագրեց գրքի ամբողջ բնագիրը, կատարելով միաժամանակ օգտակար ու շինիչ թելադրութիւններ կապւած լեզւական, արտայայտչական ասոյթներին, որը ստորեւ ներկայացնում ենք.-

1- Գրքում տեղ գտած բացատրական կամ մեկնաբանական արտայայտութիւնների եզրափակիչ խօսքերը, մի շարք հաստատումներ, ինչպէս նաեւ մտքերի համեմատութիւնների տերմինները եւ եզրայանգումների բոլոր ընդգծումները կատարւել են մեր կողմից, որպէս արդի արտայայտչական ձեւ:

2- Մեսրոպեան ուղղագրութեան կիրառմամբ, ըստ արդի հայերէն արտայայտչաձեւի եւ շարահիւսական ոճի, վերստուգման ժամանակ նկատի է առնւել լեզւական-ոճական մատչելի արտայայտչաձեւ:

3- Մի շարք տերմինների եւ հին հայերէնով գործածւած բառերի արդի բացատրականները ներկայացւել են փակագծերում:

Սոյն արժէքաւոր գործի վերահրատարակութիւնը, որպէս անթառամ ծաղիկ ընծայում ենք Հայ Եկեղեցու բոլոր այն արժանաւոր զաւակներին, որոնք իրենց կեանքով եւ գրչով մեր եկեղեցու ծառայութեան գանձանակը հարստացրին:

ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

21.06.2003
Ի Տօնի Սրբոյն Հօրն Մերոյ
Գրիգորի Լուսաւորչին Ելն ի Վիրապէն
Թեհրան

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՌԱՔԱԲԱՆ

«Հաւատքի ճշմարտութիւնը մտքի աչքի լոյսն է»

Ս. Գրիգոր Լուսաւորիչ[1*]

Ս. Գրիգոր Լուսաւորչի և նրա որդիների ու թոռների հաւատարիմ աշակերտ ս. Եղիշէ վարդապետը, խօսելով Քրիստոսի անփոխարինելի վաստակի մասին, մաղթում է, որ Տէրը ծագեցնի Նրա շնորհաց լոյսը իր հոգու և մարմնի մէջ, լուսաւորի իր մտքի տեսողութիւնը և դրանով օգնի իրեն՝ արժանապէս պատմելու Քրիստոսի վեհ փառքը: Ապա նա յիշում է, որ այդ փառքով է մեծացել եկեղեցին, այդ փառքով է ստացել բազմաթիւ հոգեկիր հայրեր, առաքեալներ, մարգարէներ, ճշմարիտ հովիւներ կամ երկնաւոր գանձի ժառանգաւորներ: Ըստ որում «Որքան շատ են հոգևոր հայրերը, նոյնքան շատ են առաքինի որդիները, և որքան մեծ է ժառանգութիւնը, առաւելագոյնս շատ են ժառանգորդները»[1], որովհետև մարդիկ չքաւորութիւնից փախչում են և հարստութեան վրայ են հաւաքւում: Բայց առաջիններն իրենց ժամանակ փայլեցին կատարեալ վաստակով, աշխատեցին արթնութեամբ, հաւատքի մէջ հաստատ մնացին և հեռից նայելով ու տեսնելով Տիրոջը՝ Իր բոլոր բարիքներով, չշեղուեցին կենարար աւետիսից և հաւատքով անյողդողդ մնացին մինչև այսօր. «Հետևաբար և որդիներին հարկ է հայրերի հետքերով ընթանալ՝ ունենալով նոյն հաւատքը, անձի մէջ կրելով նոյն վաստակը»[2], որպէսզի մենք ևս նոյն աւետեաց ժառանգը լինենք: Եւ երբ այս ամենի մէջ կրթուենք և մեր հոգևոր հայրերի վաստակի մէջ ընտելացած լինենք և նրանց հայրերի հոգևոր որդիները նկատուենք, այնժամ Ս. Հոգու օգնութեամբ ևս կարող կը լինենք մեր ս. Հայրերի մեզ աւանդած ժառանգութիւնը գտնել ու վայելել: «Որովհետև առաջինները սերմանեցին և սնուցեցին, միջինները հնձեցին և վաստակեցին, և մենք եկանք մտանք առաջինների վաստակի մէջ»: «Արդ, մենք՝ վերջիններս, անհոգութեամբ չծուլանանք, որպէսզի չշեղուենք սկզբից ու զարգացումից, վախճանից, և անպտուղ հեռանանք իբրև վատ ժառանգորդ և

[1] Եղիշէ, էջ 241:
[2] Եղիշէ, էջ 233:

սովամահ լինենք: Ահա մենք ամենքս գիտենք, որ եկեղեցին շատ մեծութիւն և երկնաւոր գանձ ունի, որոնք ոչ թուել և ոչ կարող ենք լիովին հասու լինել նրանց: Միայն թէ ես երկնաւոր պտուղների մի մասը կը յայտնեմ ձեզ, որպէսզի մէկ մասով երևան նաև նրա բոլոր մասերը: Թող որ աստուածային մեծութեամբ շատ լցած լինէք, ես առաջ անցնելով նոր-նոր հաւատք չպէտք է պատմեմ ձեզ՝ «որ քա՜ւ և մի՛ լիցի, ասել կամ լսել այնպիսի բաներ սուրբ եկեղեցու մէջ»: Այլ միայն Տիրոջ սիրով համոզած և յաղթող եկեղեցու հաստատութեան սիւներ դարձած մեր հին հայրերի վարմամբ խանդաղատանքով», կամենում ենք ըստ մեր գիտութեան աշխատել գիշեր ու ցերեկ, անդադար կարդալ երկնաւոր կտակարանները, մտնել «տեսական խորհուրդների մտածումների մէջ», որպէսզի մեր մէջ ևս Ս. Հոգու շնորհաց լոյսը կաթի և կարողանանք ուղղուել դէպի այն անվրէպ շաւիղը, որ տանում է նուրբ ճանապարհով ու նեղ դռնով դէպ երկնաւոր մեծ մայրաքաղաքը[1]:

Չէի կարող մտաթև թռիչքով անցնել հազարաւոր տարիների վրայով, նայել ու տեսնել Հայաստանեայց ս. Եկեղեցու վաստակաւոր հայրերի գրուածքները և նրանցով մտնել առաքեալների հզօր քարոզութեան մէջ՝ առանց գէթ մի անգամ խորամուխ լինելու ու թափանցելու մեր փառաւոր ոսկեդարի այդ ընտիր աւետարանչի գողտրիկ ու սրտագրաւ մտքերի մէջ: Այդ նոյն խօսքերը պէտք է աւէլին եօթը դար յետոյ, այն է՝ ԺԲ դարի վերջում: Այդ նոյն խօսքերն ենք կրկնում եօթը դար յետոյ ևս, այսինքն՝ ԺԹ դարի աւարտին, որովհետև այդ երեք շրջանի դարավերջերը իրենց եկեղեցական պատմական զարգացմամբ, ճգնաժամով և գրեթէ ամէն հանգամանքներով յար և նման ընթացք ու վախճան են ունենում ըստ իրենց ժամանակի բարձրութեան: Ճանաչելով պատմութեան արժէքը, իմանալով, որ պատմութիւնն է մեզ կրթողը, մեր փորձառութեան հիմնաքարն ու հետևելու օրինակ տուողը, այսօր անշուշտ մեր ճշմարտատենչ մտքերը պէտք է դէպ այդ դարավերջերը սլանան, այդ դարավերջերի խորհուրդների մէջ խորասուզուեն՝ մեր դարավերջի խորհուրդն ևս ըմբռնելու համար: Այս սկզբունքն է հիմնադրել մեր Եկեղեցու կազմակերպութեան հետ միասին: «Եւ բոլորի յոյսը նոյն շահն է, որովհետև առաջիններն ուրախանում են վերջինների բարեգործութեամբ,

[1] Եղիշէ, էջ 333:

և մենք՝ վերջիններս, ամրանում ենք առաջինների յոյսի կատարելութեան մէջ: Եվ առաջինների առաքինութիւնը ժառանգութիւն է [դառնում] մեզ՝ վերջիններիս [համար], որովհետև առաջինների մնացեալ բարի գործերն իրենց լրումին են հասնում վերջիններիս միջոցով»[1]:

Ինչպէս մի մարգարէութիւն է հնչում այս գեղեցիկ խօսքը, որով առաջնորդուել է և ս. Եղիշէն: Կար մի օր, երբ ս. Գրիգոր Լուսաւորիչն ամբողջ մի ազգ էր հեռացնում ապականիչ խաւարից և առաջնորդում դէպի ճշմարիտ լոյսը: Նա իր առջև ուզում էր տեսնել և համոզւած էր, որ տեսնելու էր լուսամիտ որդիներ լուսակէզ կերպարանքով, ազատ ամենայն խաւարից ու խորթ, մոլոր մտքերից, թէև կար նաև այն սրտմաշուք կասկածը, թէ «յետին ժամանակներում» լինելու են սևաթոյր այծեր, որոնք յետ են դառնալու լոյսից և ճշմարտութիւնից, ընկնելու են իրենց աստուածային ազատութիւնից և վերստին մտնելու են հեթանոսական խաւարի, մարդկային ստութեան և մարմնական գերութեան մէջ: Սակայն աստուածային ձայնը պնդում էր, որ դրանք մեծապէս կը նպաստեն ճշմարտութեանն ու լոյսի հաստատմանը, տարածմանն ու Հայաստանեայց ս. Եկեղեցու զօրացմանը: Նրա այս հաւատքի մի ապացոյցն ու հաստատութիւնը եղաւ Ե դարը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ Ս. Գրիգոր Լուսաւորչի վար ու ցանքի առատ հունձքի ժամանակը: Եւ որքան ճշմարիտ էր Ս. Գրիգոր Լուսաւորչի հաւատքն ու նրա միջոցով Աստծու պարգևած երկնաւոր շնորհների հեղումը Հայաստանեայց ս. Եկեղեցու վրայ, այնքան էլ ապահովւած էր նրա առաջադիմութիւնն ու զարգացումը դարեդար՝ մինչև յաւիտեան: Վերցրէք Գ, Դ և Ե դարերը իբրև Հայաստանեայց ս. Եկեղեցու ծննդեան, աճման և զարգացման ժամանակ և ապա առաջ գնացէք և դուք կը տեսնէք, որ հետևող ամէն մի շրջան այդ հիմնական շրջանի որևիցէ մասի պատկերն է կրում: Բայց որքա՜ն պէտք է զարմանաք, երբ իրար դիմաց դնէք Ե, ԺԲ և ԺԹ դարերն իրենց Հայրապետներով ու հայրերով, փառքով ու վարքով, արդով ու զարդով, վշտերով ու վէճերով, կսկիծով և անձկութեամբ: Այս ոչ այլ ինչ է, եթէ ոչ վսեմ առաջադիմութեան ապացոյցը, որ բոցկլտում է Հայաստանեայց ս. Եկեղեցու մէջ և իբրև ճշմարիտ լոյս առաջ է մղւում ս. Լուսաւորչեան զարկով: Այդ լոյսի հաստատուն հնոցն է Հայաստանեայց

[1] Ցաճախ. ԺԲ 29:

ս. Եկեղեցին և նրա անշէջ կրակն է նրա սուրբ հաւատքը, որ այդ բոլոր շրջաններում առաջադիմութեան ոգեւորութիւն է տուել, պահելին ամրացրել, վանելին դուրս մղել. այն հաւատքը, որ վառւելով ս. հայրապետի մէջ՝ հնչեցնում էր. «Հաւատքի լոյսը ոչ թէ ծածկւում է գրւանի տակ՝ խաւարի մէջ, այլ դրւում է ճշմարտութեան աշտանակի վրայ, իսկ ծածուկ հաւատքը գրեթէ հաւասար է անհաւատութեան, որովհետև խաբէութիւն է և ոչ՝ ճշմարտութիւն»[1]: Նրա ամրութիւնն է եղել իր հոգևոր լուսաւորութիւնը և նրա զէնքը՝ ճշմարտութեան բարբառը, ըստ որում՝ հաւատքի լոյսը լուսաւորել է նրա հոգին, իսկ հաւատքի ձայնը շարժել է նրա լեզուն, այնուհետև թէ՛ նրա անձի և թէ՛ նրա ժողովրդի հոգին, խօսքն ու արդիւնքը մէկ է եղել ապագայի երաշխաւորութեան համար:

Այլապէս չէր կարող առաջադիմութիւն լինել: Առաջադիմութիւնը կը լինի միայն համերաշխութեամբ. ապա ո՞րն է այն երաշխիքը, որի շուրջը հաւաքւելով՝ համերաշխ ընթանան: Համերաշխութիւնը լինում է միաբանութեամբ, ապա ո՞րն է այն բանը, որ միացնի մարդկանց և առաջ մղի առանց վայրիվերումների: Առաջադիմութիւնը զօրանում է և ոգևորութեամբ. բայց ո՞ւր է այն ոգին, որ ոգևորի ամենքին հաւասարապէս: Առաջադիմական զարգացումը վերածնութեամբ է լինում. չէ՞ որ պէտք է լինի ծնող, որ ամենքին նորոգապէս ծնի և կեանքի ուժ տայ: Վերջապէս ո՞րն է այն ապագան, այն լոյսը, դէպի ուր պիտի ընթանանք: Այդ երաշխիքը Աստծու անխաբ խոստումն է, որ յաջողութիւն է պարգևում մեր գործերում. այն բանն է Աստծու խօսքը, որ մեզ միաւորում է, այն ոգին՝ Աստծու հոգին է, որ մեզ ոգևորում է. այն ծնողը Հայաստանեայց ս. Եկեղեցին է, որ միշտ մեզ վերածնում է. և այն առաջաւոր լոյսը մեր սուրբ հաւատքն է՝ յոյսով ու սիրով զարդարւած:

Որ դարում մարդիկ զօրացրել են խաւարը, մոլարը և խաբուսիկը, սաստիկ է եղել և անկումն ու ջախջախումը, իսկ երբ մարդիկ զարթնել են և հաւատքի լոյսով լուսաւորւել, առաջ են ընթացել ճշմարիտ առաջադիմութեան ընթացքով: Ուստի և առաջադիմութեանը նւիրւած ճշմարիտ մարդը ջերմ ընթերցանութեամբ ուսումնասիրում է Ե և նրա պատկեր դարերի պատմութիւնն ու ստանում առաջմղիչ նոր կենսունակութիւն, իսկ աշխարհային քնով ու խաւարով նիրհողը

[1] Ընդհանր., էջ 195:

ընկնում է մարմնական թմրութեան մէջ և իր մարմնի ժամանակաւոր կեանքի բուսական աճման մէջ սուզւում: Անցողիկ է նրա վայելքը. անցողիկ է նրան զբաղեցնող միտքն ու խօսքը, անցողիկ է նաև նրա կեանքն ու կարծեցեալ առաջադիմութիւնը: Այդպիսի մարդը անօգուտ ու վնասակար է պետութեան, եկեղեցու, հասարակութեան և ընտանիքի մէջ, քանի որ ում համար էական չէ հաւատքը, էական չէ և ամենայն ինչ, որ բարձր է, սուրբ է և ազնիւ:

Աստուած և աստուածային, Հայաստանեայց ս. Եկեղեցին ու նրա սուրբ Հայրապետները չեն կարող թոյլ տալ, որ իրենց լուսամիտ որդիները ժամանակաւոր, վաղանցիկ առաջադիմութեամբ, զարգացմամբ ու կեանքով ղեկավարեն իրենց ընթացքը: Հայաստ. ս. Եկեղեցին ոչ թէ հակառակ է աշխարհային, մարմնաւոր կեանքին, ո՛չ. ինչ որ կայ՝ թէ՛ երևացող թէ՛ աներևոյթ, ամենքն էլ Աստծու բարիքներն են մարդկանց համար: Այլ նա հակառակ է սոսկ աշխարհայինին, լոկ մարմնականին, միմիայն անցողիկ կեանքին և նպատակի միակողմանիութեանը: Ամենայն ինչ, որ կայ, բարձրագոյն նպատակների համար է, մարդու անփոխելի կոչման իրագործման համար է, ըստ որում՝ կեանքի էութիւնը յաւիտենական է և նրա ամբողջացումն Աստծով է կատարւում: Աստծու առաջ մարդն աստուածային պատկեր է և Աստծու որդի, ուրեմն մարդը չպէտք է անասունի հաւասարւի ու նրա կեանքը անասնական շրջանակի մէջ չպէտք է պարփակւի. ահա այս է ճշմարիտ սկզբունքը: Ուստի և Հայաստ. ս. Եկեղեցու աշխատութիւնն ու ձգտումն է՝ ապահովել իր որդիներին յաւիտենական կեանքով և այդպիսի կեանքի մէջ ամփոփել նրանց լուսաւորութիւնն ու առաջադիմութիւնը, ծաղկումն ու բարգաւաճումը, որպէսզի այն ամենը, ինչ վեհ է և բարձրացնում է մարդու կոչումը, իր էութեամբ չմատնւի վաղանցիկ բաների և ինքնըստինքեան լուծւի ու եղծւի: Այդպիսով նա կարողանում է անցեալի, ներկայի և ապագայի մէջ միութիւն ապահովել և ոչ թէ իւրաքանչիւր սերունդ բաժանել և պառակտել:

Այս մի քանի հիմնական դիտողութիւնները պարզում են մեր առաջ եկեղեցական գործունէութեան սկզբունքը, և այս բաւարար շարժառիթ պէտք է լինի՝ ուսումնասիրելու այն ամենը, ինչ ծառայում է այդ գործունէութեանը: Նոյնիսկ սոսկ մեր ողջ պատմութիւնը դիտելով տեսնում ենք, որ նախնեաց փառաւոր գործունէութիւնը միշտ հաստատուած է եղել քրիստոնէական ճշմարիտ հայեցողութեան վրայ. այդ հայեցողութիւնը կամ աշխարհայեցողութիւնը նրանց

հաւատքն է եղել, որից և սփռւել է նրանց գործունէութեան ուժն ու միտումը: Նրանց անձնական և հասարակական կենցաղը, ձգտումները և յաւերժական վաստակները ծնունդն են այդ հաւատքի: Հաւատքը, որ է մարդու աշխարհայեցողութեան սկզբունքն ու ամփոփումը, նրանց կեանքի կողմնացոյցն, առաջատարն ու կազդուրիչն է եղել, և նրանք այդ լաւ գիտէին, ինչպէս սովորել էին իրենց անզուգական Վարդապետից (Մատթ. Ե, 48.45, Յովհ. ԺԷ 3-4, Մատթ. ԺԹ, 17): Ուստի և նրանք իրենց ուսուցման մէջ առաջին տեղը տուել են մի նպատակի իրագործման. թէ նախ պէտք է մարդու բնաւորութեան մէջ տարրացնել ճշմարտութեան սկզբունքը, որից սկսւի նրա կամեցողութիւնը, ճշմարտութեան դաւանանքը, որով նա առաջնորդւի կեանքի մէջ, և ճշմարտութեան հաւատքը, որի ամրութեամբ նա առաջ մղւի՝ յաղթելով ժամանակաւոր և աշխարհային ամեն արգելք և խոչընդոտ (Յովհ. Գ, 19-20. Է, 17. Ը, 43): Ահա և հազարաւոր օրինակներ ունենք պատմութեան մէջ, որոնք ցոյց են տալիս, թէ ինչպէս Հայոց Եկեղեցու ճշմարիտ առաջամարտիկը զոհում էր իր կեանքն ու բախտը ճշմարտութեան համոզմունքի անսասանութեան համար: Տեսնում ենք նոյնպէս, թէ ինչպէս ճշմարտութեան համոզմունքը բարձր էին պահում իրենց գործունէութեան դրօշակի վրայ, միմիայն նրա յաջողութեան և միմիայն նրա տարածման համար շնչելով ու գործելով: Ուստի և չարաչար սխալւում են այն նեղմիտ գիտնականները, ովքեր զուրկ լինելով իրենց տգիտութիւնը խոստովանելու և գէթ այժմ ուսանելու արիութիւնից՝ իրենց հոգու խաւարը տարածում են նաև թերուսների ու տգէտների մէջ՝ քարոզելով, որ իբր թէ աւելորդ է դաւանանքը և աւելորդ բեռ է մարդու ազատութեան վրայ: Ցիրաւի դաւանանքը սանձ է անսանձութեան, ղեկ է ալիքներին յանձնւած խորտակւող նաւի համար, հիմք է մարդու հոգու ճշմարիտ շէնքի կառուցման, սկիզբն ու վարիչն է բարոյական և ազգօգուտ գործունէութեան և դէպ յաւիտենական կատարելատիպ առաջնորդող ճանապարհն է: Սակայն դաւանանքը արգելք է այն մարդու համար, ով առաջնորդւում է եսապաշտ մղումներով, ով իր կեանքի նշանաբան է ընտրել անսանձ կամայականութիւնը:

Ամեն անգամ, երբ դաւանանքը յետ է մղել մարդու հոգուց, տեղի է ունեցել ուրացումն ամեն բարոյականութեան, կարգ ու կանոնի, երախտագիտութեան և ամօթի: Ամեն անգամ, երբ դաւանանքը հիմնաքարի նման չի ամրացել մարդու

հոգու մէջ, տեղի է ունեցել դրժումը ճշմարտութեան, ժխտումը մարդու կոչման և աւերումն անցեալի ժառանգութեան ու ներկայի բարեկարգութեան: Շփոթութիւն առաջացնելով ամեն սեռի, հասակի ու դասակարգի մարդկանց մօտ, տակնուվրայ անելով, եղծելով ժողովրդի բարոյութեան և փոխադարձ յարաբերութեան սրբութիւնը: Իսկ այս կամեցել են այնպիսի մարդիկ, որոնց նշանաբանն է եղել ես-ի և որովայնի յագեցումն ու արարումը, և որոնք այդ նպատակի համար ջուր են պղտորել ձուկ որսալու համար, եթէ նոյնիսկ այդ պղտորմամբ հազարաւոր ձկներ պիտի կոտորուէին :

Արդ, տեսանելի մարդն իր բոլոր գործերով արտայայտութիւնն է ներքին մարդու. «պտղից է ճանաչւում ծառը»: Նայած ի՞նչ գաղափար, ի՞նչ համոզմունք և ի՞նչ աշխարհայեցողութիւն է թագաւորում մարդու հոգու, մտքի ու սրտի մէջ, այն համապատասխան արձագանք է գտնում նրա կամքի ու գործունէութեան մէջ: Նայելով, թէ մի ժողովրդի ընդհանուր կեանքը և ընթացքը յաւիտենական ճշմարտութեան գաղափարո՞վ է առաջնորդւում, թէ՞ անցողիկ, խաբուսիկ ու շրջմոլիկ շողերով, ըստ այնմ կազմակերպւում են նրա գոյութեան և առաջադիմութեան տարրերն ու շէնքը: Նայելով թէ ի՞նչ հիմքերով, ի՞նչ շաղկապներով և ի՞նչ հոգով է հաստատւած ժողովուրդը, ըստ այնմ էլ կանխանշւում է նրա ապագան: Վերջապէս նայելով, թէ մանկան սրտում յաւիտենական կատարելատիպի ճշմարտութիւննե՞րն ես յարդարում ու նրան լուսաւորում, թէ՞ անցողիկ, մասնաւոր և փոփոխական խռիւներ ու տաշեղներ. այնպէս էլ գոյանալու է ապագայ երիտասարդը. միայն թէ առաջինը ճշմարիտ ու մշտասնունդ հաստատութեամբ՝ ինչպէս լոյս, իսկ երկրորդը՝ շարժուն և անկայուն, ինչպէս ստուեր:

Արդ, ոչինչ է այն ուսումը, որ կրթութիւն չէ, և ոչինչ է այն կրթութիւնը, որ յաւիտենական ճշմարտութեան վրայ չի հիւսում իր նուիրեալ սանի հոգևոր կազմակերպութիւնը: Աւազի վրայ չպէտք է հիմնուի հոգևոր շէնքի կառուցումը (Մատթ. Է, 21-28): Ուրեմն այն դաւանանքը, որ Մովսիսեան մի լուսաւոր ու հրեղէն սիւնի պէս մեր նախնեաց առաջնորդել է հրացեալ բովի և ալեկոծեալ ծովի միջով դէպի յաւիտենական կեանքը, պահելով ու պահպանելով ճշմարտութեան լոյսը և անսասան յոյսը նաև մեր մէջ, թող նոյն այդ աստուածային անշէջ սիւնը լինի նաև մեր ուսման, կրթութեան, առաջադիմութեան,

գործունէութեան ու կեանքի յենարանը, ղեկավարն ու պատուարը: Քանի կայ աշխարհը, կայ և փարաւոնը, կայ առաջադիմութեան ճանապարհը, կայ և Կարմիր ծովը. ճշմարիտ քրիստոնեան նա է, որ ունի իր հրեղէն ու լուսեղէն սիւնը:

Հայաստ. ս. Եկեղեցու դաւանական վարդապետութեան ձեռնարկ է այս գրուածքը, որ երկար տարիների աշխատութիւնների ու տքնութիւնների արդիւնք լինելով հանդերձ՝ ըստ կարելւոյն սեղմ ու հակիրճ ամփոփում և բովանդակում է այնքան, որքան հնարաւոր է մեր սուրբ նախնեաց վարդապետութիւնը տալ այսպիսի մի փոքր ձեռնարկի մէջ: Ո՛չ թռուցիկ ընթերցանութեան նիւթ է այս և ոչ հարևանցի խորհրդածութեան, այլ ուշիմ ընթերցող ուսումնասիրողը հետամուտ կը լինի իւրաքանչիւր մտքին տող առ տող և բառ առ բառ, բաց անելով Ս. Գրքի և նախնեաց մատենագրութեան գոնէ նշանակւած տեղերն ու հեղինակի հետ համընթաց աշխատելով: Իսկ այս ձեռնարկով աւանդող ուսուցիչն անշուշտ սրա ամփոփած շողերը կը սփռի բացատրութեան և լուսաբանութեան մէջ, լաւ իմանալով, որ մեռեալ տառը չի կարող առանց իր սկզբնատիպ կենդանութիւնը ստանալու, անհրաժեշտօրէն ազդել մատաղ հոգու վրայ և կարող դարձնել աստուածային լոյսն ընդունելու և աճելու, բայց և լաւ գիտենալով, որ խօսքը պայմանական նշան է որոշ գաղափարներ ու մտքեր արտայայտելու համար, իսկ ամէն գաղափար ու միտք ըմբռնելու համար անհրաժեշտ են որոշ նախապատրաստութիւններ, որոնք սակայն միանգամից և մի նիւթի մէջ չեն կարող ընդարձակօրէն տրւել: Եւ որպէսզի ընթերցողը փոքր ի շատէ ղեկավարութիւն ունենայ, վերջում կը գտնի՝ ըստ իւրաքանչիւր գլխի բովանդակութեան պարբերութիւնների մի մանրամասն գլխակարգւած ցանկ:

ԱՐՇԱԿ ՏԷՐ ՄԻՔԷԼԵԱՆ

Շուշի, 1899թ. 6 փետրուարի

Տօն ս. Գրիգոր Լուսաւորչի ս. որդիների և թոռների

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՒԱՏԻ ՀԱՆԳԱՆԱԿՆԵՐԸ

«Մենք այս ճշմարիտ հաւատքն ունենք սուրբ գրքերից և եկեղեցու օրէնքներից՝ իբրև դէպ Աստուած տանող առաջնորդ կեանքի ճանապարհին՝ Սուրբ Գրքի վարդապետութեան հաւատքով: Եւ մի՛ խոտորուէք իմաստուն կարգերից՝ ոչ ձախ և ոչ աջ» (Ագաթ., ԽԱ):

«Պղտոր ուսմունքը թող չխառնի սուրբ և առաքելական Գրիգոր Հայրապետի յստակ և ականակիտ վարդապետութեանը» (Փարպ., էջ 76, 104, 139, 142, 147):

Ա

«Հաւատում ենք ամենասուրբ Երրորդութեանը՝ Հօրը, Որդուն և Սուրբ Հոգուն, Գաբրիէլի աւետմանը, Քրիստոսի ծննդեանը, մկրտութեանը, չարչարանքին, խաչելութեանը, աստուածապէս համբարձմանը, Հօր աջ կողմում նստելուն, անաւոր և փառաւորեալ միւս անգամ գալստեանը՝ խոստովանում և հաւատում ենք»:

Բ

ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ

Հաւատում ենք մէկ Աստծու՝ ամենակալ Հօրը՝ երկնքի և երկրի, տեսանելի և անտեսանելի բաների Արարչին: Եւ մէկ Տէր Յիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն, ծնւած Հօր Աստծուց՝ Միածին, այսինքն՝ Հօր էութիւնից: Աստուած՝ Աստծուց, լոյս՝ լոյսից, ճշմարիտ Աստուած ճշմարիտ Աստծուց՝ ծնունդ և ոչ արարած: Նոյն Ինքը

Հօր բնութիւնից, որով ամէն ինչ եղաւ երկնքում և երկրի վրայ՝ տեսանելի և անտեսանելի: Որ մեզ՝ մարդկանց համար և յանուն մեր փրկութեան իջնելով երկնքից՝ մարմնացաւ, մարդացաւ, կատարելապէս ծնւեց սուրբ կոյս Մարիամից՝ Սուրբ Հոգով: Որով առաւ մարմին, հոգի և միտք և ամենայն ինչ, որ կայ մարդու մէջ՝ ճշմարտապէս և ոչ թւացեալ: Չարչարւեց, խաչւեց, թաղւեց, երրորդ օրը յարութիւն առաւ, երկինք բարձրացաւ նոյն մարմնով, նստաւ Հօր աջ կողմում: Գալու է նոյն մարմնով և Հօր փառքով՝ դատելու ողջերին և մեռեալներին, որի թագաւորութեանը վախճան չկայ: Հաւատում ենք նաև Սուրբ Հոգուն՝ անեղ և կատարեալ, որ խօսեց օրէնքներում, մարգարէներում և աւետարաններում: Որ իջաւ Յորդանանի մէջ, քարոզեց առաքեալներին, բնակւեց սրբերի մէջ: Հաւատում ենք նաև միմիայն ընդհանրական և առաքելական եկեղեցուն, մէկ մկրտութեանը, ապաշխարութեանը, քարոզութեանը և մեղքերի թողութեանը, մեռելների յարութեանը, հոգիների և մարմինների յաւիտենական դատաստանին, երկնքի արքայութեանը և յաւիտենական կեանքին[2*]:

ՄԻՆՉԵՒ ԱՅՍՏԵՂ ԵՆ ՀԱՒԱՏՔԻ ԽՕՍՔԵՐԸ

Իսկ ովքեր ասում են՝ կար ժամանակ, երբ չկար Որդին կամ կար ժամանակ, երբ չկար Սուրբ Հոգին, կամ թէ Աստծու Որդու և կամ Սուրբ Հոգու համար ասացին, թէ անէութիւնից եղան կամ ուրիշի էութիւնից, թէ փոփոխելի են կամ՝ այլայլելի. այնպիսիներին նզովում է Կաթողիկէ և Առաքելական սուրբ եկեղեցին:

ՄԵՐ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՑ ԱՍՒԱԾ

Իսկ մենք փառաւորենք Նրան, որ յաւիտենութիւնից առաջ է՝ երկրպագելով Սուրբ Երրորդութեանը ու մէկ Աստուածութեանը՝ Հօրը, Որդուն և Սուրբ Հոգուն: Այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն (Տե՛ս անդ., էջ 27, Ժամագիրք, էջ 541):

ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՔԻ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ

1. Խոստովանում և հաւատում ենք ամենակատար սրտով Հայր Աստծուն՝ անեղ, անծին և անսկիզբ, այլև՝ Որդու ծնող և Սուրբ Հոգու բխեցնող:

2. Հաւատում ենք Բանն Աստծուն՝ անեղ՝ ծնուած և սկսուած Հօրից յաւիտենութիւնից առաջ, ոչ թէ յետոյ և ոչ թէ կրտսեր, այլ որքան Հայրը Հայր է Նրա հետ էլ՝ Որդին որդի:

3. Հաւատում ենք Սուրբ Հոգի Աստծուն՝ անեղ, անժամանակ՝ ոչ թէ ծնուած, այլ բխած Հօրից, էակից Հօրը և փառակից Որդուն:

4. Հաւատում ենք Սուրբ Երրորդութեանը [որպէս] մէկ բնութիւն, մէկ Աստուածութիւն, ոչ թէ երեք Աստուածներ, այլ՝ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, տեսանելի և անտեսանելի բաների արարիչ:

5. Հաւատում ենք Սուրբ Եկեղեցում մեղքերի թողութեանը՝ սրբերի հաղորդութեամբ:

6. Հաւատում ենք երեք անձերից մէկին՝ Աստուած Բանին՝ ծնուած Հօրից յաւիտենութիւնից առաջ, ժամանակի ընթացքում իջած կոյս Մարիամ Աստուածածնի մէջ: Առնելով նրա արիւնից միաւորեց իր Աստուածութեանը՝ ինն ամիս լինելով անարատ Կոյսի արգանդում, և կատարեալ Աստուածը եղաւ կատարեալ մարդ՝ հոգով, մտքով և մարմնով՝ մի անձ, մի դէմք և միաւորեալ մի բնութիւն: Մարդացած Աստուած առանց փոփոխման և առանց այլայլութեան. անսերմ յղութիւն, անապական ծնունդ. ինչպէս սկիզբ չունի նրա Աստուածութիւնը նոյնպէս և ոչ վախճան՝ նրա մարդկութիւնը: Որովհետև Յիսուս Քրիստոս երէկ և այսօր՝ նոյնն է և յաւիտեան:

7. Հաւատում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսին՝ շրջած երկրի վրայ, երեսուն տարի յետոյ եկած մկրտուելու, Հօրից վկայութիւն ստացած. «Դա է իմ սիրելի Որդին», և Սուրբ Հոգին աղաւնակերպ իջած նրա վրայ: Փորձուած սատանայից և նրան յաղթած: Մարդկանց փրկութիւն քարոզած: Մարմնով աշխատած, վաստակած, քաղցած և ծարաւած: Յետոյ կամովին եկած չարչարուելու, խաչուած և մարմնով մեռած և կենդանի՝ Աստուածութեամբ: Մարմինը դրուած գերեզմանում՝ միաւորուած Աստուածութեամբ, և հոգով իջած դժոխք՝ անբաժանելի Աստուածութեամբ: Հոգիներին քարոզած, դժոխքը աւերած և հոգիներին ազատած: Երեք օր յետոյ յարութիւն առած մեռելներից և երևացած աշակերտներին:

8. Հաւատում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսին՝ նոյն մարմնով երկինք համբարձած և Հօր աջ կողմում նստած: Այլև գալու է նոյն մարմնով և Հօր փառքով՝ դատելու ողջերիս և մեռեալներիս, որը և բոլոր մարդկանց յարութիւնն է:

9. Հաւատում ենք նաև գործերի հատուցմանը. արդարներին՝ յաւիտենական կեանք, և մեղաւորներին՝ յաւիտենական տանջանք:

Ժամագիրք, էջ 1-2, Մաշտոց ձեռնադր., էջ 36:

ՆԱԽԱԾԱՒԻՂ

Հայաստանեայց ս. Եկեղեցին իբրև մի առաքելական հաստատութիւն և աստուածային կազմակերպութիւն՝ ունի իր վարդապետութիւնը, որ հիմնուած է Ս. Գրքի և առաքելական աւանդութեան վրայ: Նրա էութեան հիմքը բացատրուած և բովանդակուած է իր այդ առաքելական ուղղափառ վարդապետութեան մէջ, որ Հայոց առաքելական Հայրերի և նրանց սուրբ յաջորդների միջոցով դարերի ընթացքում պահպանուել և մեզ է հասել: Նրա գերագոյն նպատակն է՝ իր քրիստոնէական անբիծ կրօնը մարմնացնել իր զաւակների մէջ, որպէսզի բոլորն Աստծու արքայութեան արժանաւոր ժառանգները լինեն:

Կրօնն է Աստծու և մարդու միջև այն կենսական ճշմարիտ հաղորդութիւնը, որ բխում է և անբաժան է մարդու հոգուց կամ նրա խղճմտանքից և էութիւնից: Այն իրականացել է իր կատարելութեամբ քրիստոնէութեան մէջ (տե՛ս Ա. Յովհ. Ա. 3. 6. 7.): Եւ քանի որ կրօնը բխում է արդէն իսկ մարդու էութիւնից և բնորոշում է մարդու կոչումը թէ՛ Աստծու առաջ և թէ՛ աշխարհում, այսինքն՝ թէ՛ զգալի է դարձնում Աստծու և աշխարհի, այլև Աստծու և մարդու հակադրութիւնը, և թէ՛ վերացնում այն (տե՛ս ստորև գլ. Բ.): Պարզ է, որ ճշմարիտ կրօնը այն կրօնն է, որի սկիզբը դրուած է նախամարդուց և տանում է մարդուն դէպի հանդերձեալ կեանք՝ յայտնի և որոշ պատմական սուրբ շաւղով և վարդապետութեամբ:

Քանի որ կրօնական հաղորդակցութիւնը կատարւում է Աստծու՝ այսինքն Արարչի՝ և մարդու, այսինքն արարածի միջև, ուստի մարդու կողմից պէտք է իրականացուի պաշտամունք և հնազանդութիւն, իսկ Աստծու կողմից՝ խնամք ու յայտնութիւն: Բայց մեր պաշտելն ու հնազանդուելը չի կարող լրիւ լինել, եթէ չիմանանք մեր հաւատի ճշմարտութիւնները և Աստծու ս. կամքը: Հետևաբար Աստծու յայտնութիւնն անհրաժեշտաբար կարևոր է մեզ համար: Ահա և Աստուած իր ընտրեալների միջոցով յայտնեց մեզ այն ամէնը, ինչ որ անհրաժեշտ է մեր փրկութեան համար: Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև այն անսահման և ամենակարող զօրութիւնը, որ աշխարհի և մեր ծագման պատճառն է ու մեր կեանքի նպատակը, մեզ կենդանութիւն չէր տայ: Մեր հոգեկան բոլոր կարողութիւններն ընդունել ենք անշուշտ Նրա անվերջ զօրութիւնից, մեր մարմնի կազմութիւնը ստացել ենք երկրից կամ հողից, ուստի և ինչպէս որ առանց երկրի

հաղորդակցութեան մեր մարմինը չի կարող գոյութիւն պահպանել, այնպէս էլ մեր հոգին, մեր բանական էութիւնը չի կարող զօրաւոր մնալ ու առաջադիմել, առանց աստուածային շնորհատու և լուսաւորող հաղորդակցութեան: Այս պարզ ճշմարտութիւնից ինքնըստինքեան հետևում է, որ մեր Արարիչը չպէտք է մեզ թողնէր առանց Իր կենդանացնող և զօրացնող հաղորդակցութեան, քանի որ աստուածայինը, բարձրագոյնն ու վեհագոյնը միմիայն Աստուած կարող է տալ մեզ:

Աստուած Իր յայտնութեամբ պէտք է շնորհէր մեզ այն, ինչ որ մենք սահմանափակ մտքերով գտնել չենք կարող, հետևաբար այդ յայտնութիւնը առնչւում է Աստծու և նրա սուրբ կամքի ճանաչողութեանը, որ իբրև աստուածային բարձր յայտնութիւն ընդունելի է թէ՛ ուսեալ և թէ՛ անուս մարդու համար: Քանի որ Աստծու և Նրա սուրբ կամքի ճանաչողութիւնը մարդու բանականութեան և նրա ամբողջ էութեան անհրաժեշտ պահանջն է, մարդն ի վերջոյ զգալու է իր ինքնաբաւութեան սնամէջ լինելը և հարկադրուելու է դիմել յայտնութեան օրհնութեանը: Հաւատքը մտքի պսակն է, քանի որ գիտութիւնն էլ հաւատքով ենք իրացնում, (տե՛ս գլ. Բ-Գ), և որքան սովորում ենք, այնքան աւելանում են գաղտնիքները (Ժողովող Ա, 18):

Սակայն յայտնութիւնն ընդունելը և հաւատալը դեռ բաւական չէ. հասկացող քրիստոնեան պէտք է ոչ միայն հաւատայ այդ բարձր յայտնութեան ճշմարտութիւններին, այլ նրա խորհուրդների լոյսով պայծառանալով՝ պէտք է իրացնի, իր մտածողութեան առարկայ դարձնի այդ ճշմարտութիւնները, մշակի իր հոգևոր անդաստանը և հաւատալով՝ ճանաչի, զգայ ու կամենայ:

Ահա այստեղից է ծագում այն գիտութեան կարևորութիւնը, որի նիւթն են Աստծու յայտնութեան ճշմարտութիւնները: Բացառապէս մտածողութեամբ, զգացողութեամբ ու կամեցողութեամբ միայն կարելի է իրացնել նաև հաւատալիքը, որքան թոյլ է տալիս իրաքանչիւրիս ուսման ու զարգացման չափը: Տգէտը հաւատում ու զգում է իր հաւատալիքի բարձրութիւնը, իսկ փոքր ինչ ուսում առածը պէտք է իր ուսման համեմատ էլ գիտակցական դարձնի իր հաւատացածը, որպէսզի թերի գիտութեամբ իր սրտի, մտքի ու կամքի մէջ հաւասարակշռութիւնը չկորցնի և իր չհասկանալու պատճառով փոխարէն միայն

տարակուսելու եւ երկբայելու, չստորացնի վեհը, բարձրը և աստուածայինը[1]. այս է ամէն տեսակ գիտութեան յատուկ կամ մասնաւոր նպատակը: «Ովքեր գրուածքներում միայն խօսքի կերպարանքն են կարդում և հետազօտաբար դրանց վրայ չաշխատելու պատճառով չեն կարողանում ճիշտ հասկանալ ծածկուած մտքի զօրութիւնը, այլ համաձայն իրենց սխալ և տկար իմացութեան, բաժանում են խօսքը և իրենք իրենց կարծում են թէ՝ գիտեն աւելի լաւ էր նրանց անգրագէտ լինել և անմեղութեամբ մնալ տգէտների մէջ և չկորչել, քան թէ մոլար գիտութեամբ ընկնել կորստեան վիհի մէջ՝ դպիրների և փարիսեցիների նման, կոյր լինելով դառնալ կոյրերի առաջնորդ»[2]: Թերուսների մասին այսպէս է խորհում ս. Ներսէս Շնորհալին:

Ճշմարիտ է, առաջին պայմանը հաւատքն է, որ մտցնում է մեզ Քրիստոսի շնորհքի ներքոյ. այդ ասում է նոյնիսկ Քրիստոս. «Ով հաւատայ և մկրտուի՝ կապրի, իսկ ով չհաւատայ՝ կը դատապարտուի» (Մարկ. ԺՁ 15, Մատթ. ԻԸ 19, Եբր. ԺԱ 6, Հռ. Ժ 9, Յովհ. Ի 31), որովհետև մեր մտքերը հաւատքով ու մկրտութեամբ հաստատուն լուսաւորութիւն են ստանում և ինչը որոշ ընթացք է տալիս մեր կենցաղավարութեանը[3]: Սակայն «ի՞նչ է հաւատքը, եթէ ոչ յուսացուած իրերի հաստատութիւնը» (Եբր. ԺԱ 1):

Հետևաբար իւրաքանչիւր կրթուած ճշմարիտ հայ պէտք է գիտակցաբար խոստովանի ու մոլորութիւններից տարբերի այն բոլոր դաւանական սկզբունքները, որոնք կազմում են Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետութեան հիմնական ճշմարտութիւնները: Խոստովանութեան հետ պաշտպանել կարողանալը անհրաժեշտ է, քանի որ ինչպէս որ ճշմարտութեան ու լոյսի պարզելով է մոլորութիւնն ու խաւարը երևում, այնպէս էլ մոլորութեան ու խաւարի յաղթահարութեամբ ճշմարտութեան ու լոյսի զօրութիւնը թափանցում է մարդկանց ոգիների մէջ: Ուստի և առաքեալն ասում է. «Պատրաստ եղէք

[1] Տե՛ս Ղուկ., ԻԳ 34, Գործք., Գ 14, Մատթ., ԻԲ 29, Յովհ., Գ 19, Ը 42, ԺԲ 37, 39, 40, Գործք., ԻԸ 24, Եփես., Դ 17, Բ Կոր., Դ 3, Հռ., Ա 21, Բ Տիմ., Գ 6:

[2] Ընդհան., էջ 334, 333, 335:

[3] «Եւ ինչպէս այս արեգակը, որ լուսաւորում է երկիրը և սրա մէջ եղող արարածներին, որ երևում են ծովի և ցամաքի վրայ, նոյնպէս էլ հաւատքի ճշմարտութիւնն ու սրբութիւնն է լուսաւորում Աստծուն սիրողների միտքը» (Յաճախ.ախ., Բ 455): «Եթէ մէկն իր Աստծու (հանդէպ) սուտ գտնուեց, մահկանացուներից ո՞ւմ (նկատմամբ) արդար կը գտնուի» (Եղիշէ, էջ 105):

հեզութեամբ ու երկիւղածութեամբ պատասխան տալու ամէն մարդու, որ կը հարցնի ձեր մէջ եղած յոյսի մասին» (Ա Պետ., Գ 15): «Քանի որ պայքարի մեր զէնքը մարմնաւոր չէ, այլ Աստծու կողմից տրուած զօրաւոր զէնք է՝ քանդելու համար ամրութիւնները, [մենք] քանդում ենք գաղտնի մտածումները և Աստծու գիտութեան դէմ գոռոզացած ամէն ծառացում և գերելով բոլոր մտքերը՝ հնազանդեցնում ենք Քրիստոսին» (Բ Կորնթ., Ժ 4-5):

Այն գիտութիւնը, որի առարկան են աստուածային յայտնութեան ճշմարտութիւնները, բաժանւում է գլխաւորապէս երկու ճիւղերի. առաջինը վերաբերում է հաւատալիքին, իսկ երկրորդը՝ բարոյական վարդապետութեանը: Բարոյական վարդապետութեամբ զբաղւող գիտութիւնը կոչւում է բարոյագիտութիւն (էթիկա), իսկ հաւատալիքով զբաղւողը՝ դաւանաբանութիւն (դոգմատիկա): Մեր քննութեան առարկան հաւատալիքն է, ըստ որում՝ Հայաստ. ս. Եկեղեցու քրիստոնէական վարդապետութիւնն է այն գիտութիւնը, որ օգտուելով ամէն գիտութիւնից (Ա Կոր., Գ 22) ամփոփ ու որոշակի ուսուցանում է դաւանաբանութեան հիմնական բովանդակութիւնը, ինչը հաստատագրում է Աստուածաշնչի ու Եկեղեցու ս. Հայրերի վկայութիւններով[1]:

Քանի որ Քրիստոնէական վարդապետութեան առաջին մասի նիւթն է Հայաստ. ս. Եկեղեցու հաւատալիքը, պարզ է, որ նրա բովանդակութիւնը պէտք է կազմի այն ամենը, ինչ հիմնական կերպով ամփոփուած է հայոց հաւատամքի մէջ: Հետևաբար նրա քննութեան առարկաներն են.

Նախ՝ Աստուած և նրա գործերը.

Երկրորդ՝ Աստուածորդու փրկագործութիւնը և

Երրորդ՝ Ս. Հոգու շնորհաբաշխութիւնը, Եկեղեցին, նրա սուրբ խորհուրդներն ու հանդերձեալ կեանքը:

Այս ամենը համառօտապէս ամփոփւում է երեք բնաբանի մէջ, այն է՝ ա) Աստուած, բ) աշխարհ ու մարդ և գ) փրկութիւն ու կատարումն, կամ թէ՝ ա)

[1] Վկայաբերուած են միայն ամփոփ քաղուածքներ՝ համաձայն ս. Ներսէս Շնորհալու այն սկզբունքի, թէ՝ «Բազում բաներից այս քիչը բաւական է լսողների համար, իսկ ովքեր չեն կամենում լսել՝ թէկուզ բազում բերաններից հնչի խօսքը՝ նրանք խուլ կը մնան» (Ընդհան., էջ 385):

Աստուած ու Նրա գործերը, բ) Աստուածորդու փրկագործութիւնը և գ) փրկութեան տնօրինութիւնն ու կատարումը:

Մեր ուսումնասիրութեան ընթացքում միշտ պէտք է նկատի ունենանք, որ մեր զբաղմունքը վերաբերում է աստուածային յայտնութեան դաւանական ճշմարտութիւններին, որոնք իւրաքանչիւր հայ հաւատացեալի սրբազան իմաստութիւնը, համոզմունքը, հաւատքն են կազմում: Մենք պէտք է աշխատենք երբեք մեր անընդունակութեան և անխելահասութեան ստուերը չգցել Հայոց ս. Եկեղեցու աստուածային լուսաւոր վարդապետութեան վրայ, այլ ընդհակառակը, պէտք է ձգտենք նրա լոյսով կենդանացնել մեր հոգին և մտնել իսկական աստուածգիտութեան մէջ: Եւ որպէսզի երկնաւոր ճշմարտութիւնները երկրաւորով սահմանափակած մեր մտքերին ըմբռնելի դառնան, կաշխատենք երկրաւոր նմանութիւններով բացատրել, ինչպէս որ մեզ իրաւունք է տալիս Աստուած՝ մարդու կերպարանք առնելով, և ինչպէս ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը. «Մեր բնութեան նմանութեան հիման վրայ՝ ցուցադրում ենք աներևոյթի նմանութիւնը մեր անհասութեան պատճառով»[1]: Ոչ թէ պէտք է ջանանք Աստծու անսահմանութիւնը ամփոփել մեր նեղ մտքի մէջ, այլ մեր սահմանափակ միտքը պէտք է ընդլայնենք նրան հասկանալու և հաւատալու համար. մանաւանդ այդ ճանաչողութեան շնորհը մեզ տրուեց Աստծու ճշմարիտ և իսկական յայտնութիւնն ու իմաստութիւնը հանդիսացող Քրիստոսի միջոցով. «Եւ գիտենք, որ Աստծու Որդին եկաւ և մեզ միտք տուեց, որպէսզի ճանաչենք ճշմարիտը»: Սակայն աստուածային պարզ ճշմարտութիւնները մարդկային ձևաւոր խօսքերով են յայտնւում, ուստի երբեք չպէտք է մոռանանք Հայոց նշանաւոր վարդապետի հրաշալի խօսքը. «Ինչը խօսքով է գծագրւում՝ նրա երևալը ընկնում է մարմնաձևութեան տակ, մինչդեռ երկնաւոր փառքը սրանից վեր է»[2]: Ըստ որում աստուածային յայտնութիւնը որքան էլ մարդկային նմանութիւններով ու խօսքի ձևակերպութեամբ է տրւում, անպայման ճշմարիտ է և մտքի հասողութեանը յարմար և ընդունելի (Բ Թեսաղ., Բ 12-14, Հակ., Ա 18, Յովհ., Ը 31-32, 40, ԺԸ 6,

[1] Ագաթ., էջ 209, Եղիշէ, էջ 227:
[2] Եղիշէ, նոյնը, էջ 231:

14,17,ԺԶ12): Մենք պէտք է ձգտենք ճանաչել աստուածային ճշմարտութիւնները[1], բայց նրանց խորհուրդներին կատարելապէս հաղորդակից կը լինենք միայն այն ժամանակ, երբ երկրաւոր սահմանափակումից ազատուելով կը կարողանանք անարգելք ըմբռնել ու տեսնել, այսինքն՝ հանդերձեալում «դէմ յանդիման» լինել (Ա Կոր., ԺԳ 8, 13, Բ Կոր., Ե 7, Ա Յովհ., Գ 2), իսկ այդ ապագայ կատարելութիւնն ապացոյց է, որ այստեղ ևս մեր անկատարութեամբ հանդերձ, կարող ենք աւելի և աւելի հասու լինել աստուածային խորհուրդներին (Եփ., Գ 17-19, Դ 13, Կող., Ա 26), ինչպէս մանուկ կրթելով աստուածային լոյսի շողարանում, կատարելագործելով ու կատարելութեան հասնելով հանդերձեալում (Եփր., Դ 3, Փիլ., Գ 12-15): Հետևաբար, ինչպէս որ մանուկն ուսման մէջ պէտք է հաւատքով սովորի, այնպէս էլ մենք պէտք է ունենանք հաւատք, որպէսզի կարողանանք ընդունել ճշմարտութիւնը և նրանով լուսաւորուել՝ կատարելագործելու համար[2] (Ա Կոր., ԺԳ 12): Աստուածային ճշմարտութիւնները սովորողի ականջում միշտ պէտք է հնչեն. «Քաջիմաց եղիր, մանրամասն քննիր, սրատես եղիր մտքով աւելի, քան աչքով»[3]

[1] Կեպլերն այսպէս է վերջացնում իր աստղագիտական մի աշխատութիւնը. «Ինձ մնում է ի վերջոյ աչքերս ու ձեռքերս ապացոյցի թերթից բարձրացնել դէպ երկինք և աղօթքով ու հեզութեամբ գոչել. «Առ Հայրը լուսոյ». Ո՞վ Դու, որ բնութեան լոյսով մեր մէջ արթնացնում ես տենչանք դէպ շնորհաց լոյսը, որպէսզի դրանով մեզ տեղափոխես փառքի լոյսի մէջ՝ գոհութիւն Քեզ, Հայր և Արարիչ, Դու, որ ինձ ուրախացրիր Քո արարչագործութեամբ, որովհետև սքանչացած եմ Քո ձեռքի գործերի վրայ: Տես, ահա այստեղ իմ կոչման մի գործը վերջացրել եմ այնքան հոգևոր զօրութեամբ, որքան Դու ինձ տուել ես. ես յայտնեցի Քո գործերի փառքը մարդկանց, որոնք պէտք է կարդան այս ապացոյցները, այնքան, որքան իմ սահմանափակ հոգիս կարող էր հասու լինել Նրա անսահմանութեանը: Իմ սիրտը ձգտում էր ըստ կարելւոյն ճշտութեամբ իմաստասիրել. եթէ ես Քեզ անարժան մի բան եմ կատարել, սովորեցրու ինձ, որ այդ ուղղեմ: Եթէ ես յանդգնաբար հրապուրւել եմ Քո գործերի զարմանալի գեղեցկութեամբ կամ եթէ մարդկանց առջև անձնական պատիւ եմ որոնել Քո պատւին նւիրուած մի գրւածքով, այն դէպքում ներիր ինձ ողորմածաբար և գթութեամբ: Վերջապէս ինձ շնորհ պարգևիր, որ այս գրւածքս ծառայի Քո փառքին և հոգիների փրկութեանը և բնաւ չվնասի»[3*]:
[2] «Գիրն աստուածային պատւիրանները հասցնում է լսելիքին, իսկ անգրութիւնը՝ աներևոյթ մտքի տախտակներին, և երկուսն էլ աստուածային շնորհներ են, որ տեսնում են աչքերը, ընթերցում շրթունքները, լսում ականջները, առանց գրերի մտքերը տալիս են բացատրութիւնը»: «Արդ, թող մէկը չծառայի խօսքին, այլ մտքին հնազանդւի» (Եղիշէ, էջ 233, 373):
[3] Եղիշէ, էջ 320:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱՍՏԻԱԾ ՈՒ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԸ

Ա

ԱՍՏԾՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ

«Հաւատալը, արժանի է նրան, ով մերձենում է Աստծուն, թէ Աստուած է», ասում է Պօղոս առաքեալը (Եբր. ԺԱ 9): Քրիստոնէական հաւատքի հիմքը Աստուած ինքն է. Քրիստոնէական կեանքի կատարելութիւնը աստուածճանաչութիւնն է: Թէև Աստծու գաղափարը և անունը կայ ամբողջ մարդկութեան՝ այսինքն նաև ոչ քրիստոնեայի մէջ, այսուհանդերձ քրիստոնէական հաւատքի, քրիստոնէական դաւանանքի և քրիստոնէական կեանքի սկիզբն ու վախճանը Աստուած է և Աստուածճանաչութիւնը, որովհետև ճշմարիտ յայտնութիւնն ու աստուածգիտութիւնը միմիայն քրիստոնէութեան մէջ է, և ճշմարիտ աստուածգիտութիւնից է բխել քրիստոնէական լոյսն ու լուսամիտ կեանքը[4*]:

Մարդկային գիտութեան ձգտումները կենտրոնանում են ներքին՝ մարդու և արտաքին աշխարհի մէջ միայն. մարդն իր առաջընթացն իրականացնում է այդ երկու տարածքներում: Բայց այդ երկու տարածքներում ևս մարդ իր մէջ ծագած բոլոր խնդիրներն ու գիտելիքները փորձելուց յետոյ, դարձեալ դառնում է դէպի Աստուած և Նրա ճանաչողութիւնը խնդրում՝, նրան ճանաչելով որպէս բովանդակ գիտութեան ու առաջադիմութեան հիմքն ու լրումը: Մենք չենք կարողանում հեռանալ Աստծուց, թէկուզև խոստովանենք մեր անկումը, որ այդպիսի հեռացման հետևանքն է: Մենք անկարող ենք մեր հայացքները ինքնուրոյնաբար որոշարկել ու միշտ Աստծուց բոլորովին անկախ գործել, որովհետև Նա մեր կեանքի էութեան մէջ է, և մենք Նրա մէջ ենք ապրում: Վերջապէս մենք չենք կարող մոռանալ Նրան, քանի որ թէ՛ մեր ներքին և թէ՛ արտաքին աշխարհը մեզ միշտ յիշեցնում է Նրա մասին: Եւ ճշմարտութիւնն ու մեր մտածողութիւնը

անբաժան են Աստծու գաղափարից, ըստ որում մենք կարող ենք ժխտել Աստծու գոյութիւնը, բայց նրա գաղափարը՝ ոչ:

Մեր բոլոր գիտելիքները մենք ստանում ենք մեր ներքին և արտաքին աշխարհից, ըստ որում՝ թէ՛ արտաքին իմացութիւնները և թէ՛ ներքին շփումները մեզ յայտնում են Աստծու գոյութիւնը: Կա՛մ արտաքին իմացութիւններից պէտք է կտրուենք, և կա՛մ ներքին շփումներից զրկուենք, որպէսզի այսպէս կամ այնպէս տկարանայ մեր մէջ Աստծու հաւատքը: Սակայն կանոնաւոր մարդու մէջ ոչ ա՛յն կարող է լինել և ոչ ա՛յս կատարելապէս. և ուրեմն Աստծու գոյութեան գաղափարը կունենանք միշտ աղօտ կամ պայծառ կերպով:

Թէ ինչպէ՞ս արտաքին աշխարհի իմացութիւնը տալիս է մեզ այդ գաղափարը, երգւում է Սաղմոսի մէջ՝ Քրիստոսից շատ տարիներ առաջ. «Երկինքը պատմում է Աստծու փառքի մասին, և հաստատութիւնը պատմում է Նրա ձեռքի ստեղծածների մասին»[1] Ինչ կարգ, գեղեցկութիւն, վսեմութիւն տեսնում է մարդ իր չորս կողմը, երկնքի ու երկրի վրայ, այդ ամենը ցոյց է տալիս նրան իր Արարչի մեծութիւնն ու ամենակարողութիւնը: Թէպէտ այդ գիտելիքը տակաւին աղօտ էր նախնական անորոշութեան մէջ խարխափող մարդկութեան մէջ, բայց կար: Ուստի և Պօղոս առաքեալը, մտնելով դրանց մէջ, դիտեց նրանց կեանքը և քարոզեց. «Արդ, Աթենացիք, ես ձեզ ըստ ամենայնի կրօնական եմ տեսնում, որովհետև շրջելով ձեր սրբութիւնները՝ մէկ բագին ևս գտայ, որի վրայ արձանագրուած էր. «Անծանօթ Աստծուն»»: Այն, որին դուք անծանօթ կերպով պաշտում էք, նոյնը պատմում եմ ձեզ: Աստուած, որ ստեղծեց աշխարհը և ամէն ինչ, որ կայ նրա մէջ, Նա երկնքի ու երկրի Տէրն է...: Նա ստեղծեց մի արիւնից մարդկային ամբողջ ազգը, որ բնակւում է երկրի երեսին և հաստատեց նրանց համար կարգւած ժամանակներ, որպէսզի նրանք որոնեն Աստծուն՝ «Որպէսզի թերևս փնտռեն Նրան և գտնեն, բայց նա հեռու չէ մեզանից՝ իւրաքանչիւրից: Որովհետև Նրանով կանք, Նրանով ենք շարժւում և ապրում» (Գործք, ԺԷ 22-28): Այդպէս և ճշմարտութիւնը որոնելու մէջ խարխափող մարդկանց Պօղոսն ասում է, որ ինքն էլ մահկանացու է, սակայն ուրախ աւետիս է բերել, որպէսզի նրանք յետ դառնան ունայնութիւններից դէպի կենդանի Աստուած, որ ստեղծել է երկինքն ու

[1] Սղմ. ԺԸ, Յանախ., Դ 275, Եղիշէ, 323:

երկիրը և որ անցեալ ժամանակներում թողեց մարդկանց իրենց ճանապարհով գնալ, բայց չթողեց նրանց առանց Իր մասին վկայութիւն տալու՝ բարերարութեամբ, նրանց շնորհելով անձրև ու պտղաբերութիւն և կերակրելով բոլորին և ուրախացնելով բոլորի սրտերը (ԺԴ 14-16):

Բնականաբար դիտելով աշխարհի սկիզբն ու վերջը, կարգաւորութիւնն ու նպատակը, կենդանութիւնը, արարած աշխարհում բոյսերից մինչև մարդը եղած աստիճանաւորութիւնը, մարդու բանական կեանքը, բարոյականութիւնն ու նրա հատուցումը, մենք անպատճառ ուղորդւում ենք դէպի Աստծու հաւատքի հաստատութիւնը: Առանց Աստծու աշխարհն ու նրա մէջ եղած ամէն ինչ անբացատրելի և անհասկանալի կը լինեն: Սակայն որովհետև մեր իմացութիւնը ևս ներըմբռնումով է ձեռք բերւում, պարզ է, որ մեր ներըմբռնումը դարձեալ հիմք է կազմում մեր գիտութեան: Ուստի և Ս. Գրիգոր Լուսաւորիչը խօսելով Աստծու անհասանելիութեան մասին ասում է. «Բայց իր գործերով և միայն երախտիքով է իմացւում ու ճանաչւում և անւանւում Հայր, Բարերար և Հաստատող՝ Իր բովանդակ երախտաւոր արուեստով: Քանզի ովքեր կատարեալ են, միայն նրանք կարող են հասու լինել Նրա երախտիքին, իսկ ովքեր տխմար են, անկարող են դրան իսկ»[1]:

Մարդու ներըմբռնողութեան մասին ևս առաքեալն ասում է. «Ինչ որ կարելի է իմանալ Աստծու մասին, յայտնւած է նրանց, քանզի Աստուած Ինքը յայտնեց այն նրանց: Արդարև, ի սկզբանէ Աստծու աներևոյթ յատկութիւնները, այն է՝ Նրա մշտնջենաւորութիւնը, զօրութիւնը և աստուածութիւնը, իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մէջ, այնպէս որ ամենևին արդարանալ չեն կարող, որովհետև ճանաչեցին Աստծուն, բայց իբրև Աստուած չփառաւորեցին կամ գոհութիւն չմատուցեցին Նրան, այլ իրենց մտածումների մէջ դատարկւեցին, և նրանց սրտերը անմտութեամբ խաւարեցին» (Հռոմ., Ա 19-21): Եւ ոչ միայն աստուածճանաչողութիւնը, այլև նոյնիսկ օրէնքն ու բարոյականութիւնը գրւած է նրանց սրտերում և նրանց խղճի ձայնը, նրանց իսկ վկայում է բարին և օրհանաւորը (Հռոմ., Բ 14-15, ԺԲ 2, Փիլ., Դ 8): Ուստի և Քրիստոս երանի է տալիս նրանց, ովքեր «սուրբ են սրտով, որովհետև նրանք տեսնելու են Աստծուն»

[1] Ցաճախ., Ա 65:

(Մատթ. Ե 8): Այդպիսին լինելով կը տեսնենք Աստծուն, որովհետև «հէնց նրան ենք պատկանում» (Գործք, ԺԵ 28):

Եւ շատ տարօրինակ կը լինէր, եթէ մարդիկ ոչ մի գաղափար չունենային իրենց Ստեղծողի մասին և կամ Աստուած անյայտ թողնէր Իր անունը արարածներից, որոնց ստեղծել է Իր արարչական սիրուց մղւած: Ըստ որում մարդիկ ո՞ր կողմն էլ նայէին, պէտք է անպատճառ յիշէին իրենց Արարչին, որովհետև ամբողջ աշխարհը Աստծու արարչական գործն է, և մեծ վկան է նրա ամենակարողութեան:

Թէ՛ մեր հոգևոր և թէ՛ արտաքին աշխարհը միշտ յայտնում են մեզ Աստծու անունը. մենք չենք կարող այնպէս անել, որ Աստծու անունը մեր մէջ չբնակւի և որքան էլ կամովին մոռանանք Աստծուն, սրանով հանդերձ մեր սիրտը կը բողոքի մեր արարքի դէմ: Ինչպէս որ մեր խիղճը վկայում է մեզ, թէ ո՞րն է բարոյական և ո՞րը՝ անբարոյական, և ապա մեր միտքը սկսում է ուսումնասիրել բարոյականութիւնը, այնպէս էլ Աստծու գաղափարը կայ մեր սրտում և մեր մտածողութիւնը իր մտաւոր բովի մէջ է ձգում այդ և բազմակողմանի հասկացողութիւն ձեռք բերում: Ըստ որում մարդկային բաները պէտք է նախ ճանաչենք, որ յետոյ սիրենք, իսկ աստուածայինը պէտք է նախ սիրենք, որ յետոյ ճանաչենք (Գործք., ԻԸ 24, Մատթ., ԺԳ 13, ԺԱ 25, Թ 35, Եփես., Ա 18). «Եթէ չհաւատաք, չէք էլ կարող ի մտի ունենալ» ասում էր դեռ Եսայի մարգարէն (Է 9): «Ովքեր սիրում են Նրան, իրենց սէրը Նրան կերպագծում է իրենց սրտերում, և Նրան երկրպագում են ճշմարտութեան հոգով, իրենց սրբւած սրտերը և մարմինները դարձնում են Սուրբ Հոգու տաճար, նաև՝ հաղորդ, հաւասարորդ և բաժանորդ են դառնում մեր երանութիւններին», բացատրում է ս. Ներսէս Մեծը[1]: Հասկանալի է ուրեմն, որ նախ պէտք է ձգտենք դէպի Աստուած, ականջ դնենք մեր խղճմտանքին, որպէսզի կարողանանք ընդունակ դառնալ Աստուածային ճշմարտութիւններն ըմբռնել և լուսաւորւել, որովհետև հոգևոր շնորհը հոգու զգայարանով է ստացւում[5*] «և միայն նա է իմանում, որին ներգործում է»[2]:

[1] Բուզանդ, էջ 72:
[2] Ցաճախ., Ժ 297, Դ 289, Գ 102, Մատթ., ԺԳ 11-12, Ղուկ., Ը 18, Ս. Ղևոնդի միտքը, Եղիշէ, էջ 85:

Սակայն ոչ միայն Աստծու գաղափարը, այլև ամէն մի գաղափար չենք կարող մեր հասողութեամբ իւրացնել կամ հասկանալ, եթէ մեր հոգին ընդունակ չէ դրան: Այսինքն՝ արտաքին գրգիռը անհրաժեշտ է մեր հոգևոր զարգացման համար, միայն թէ այն ևս չի կարող ոչինչ առաջ բերել հոգու մէջ, եթէ հոգին անընդունակ կամ ամուլ լինի: Գրգիռը առաջ է բերում մեր հոգու մէջ որոշ դրութիւն, և մենք հասու ենք լինում այդ դրութեանը, իսկ եթէ հոգին չկարողանար այդ դրութիւնը ունենալ, այնժամ մենք ոչինչ չէինք իմանայ: Չենք կարող բաժանել հոգին մարմնից, որոնք իրար հետ գործելով են մեր հասողութեանը միջոց տալիս: Կոյրը չի կարող գաղափար ստանալ գոյնի մասին, և ոչ էլ խուլը՝ ձայնի մասին. գոյնը հասկանալու համար աչք է հարկաւոր, իսկ ձայնն ընկալելու համար՝ ականջ: Այդ զգայարանները, ստանալով գրգիռը, հաղորդում են հոգուն, և հոգին իւրաքանչիւր զգայարանքի համապատասխան դրութեան մէջ է ընկնում, և մենք հասու ենք լինում նրան: Այդ գրգիռները առիթ են լինում մեր հոգևոր որոշ գործունէութեան:

Նոյնպէս և Աստուած դրոշմել է մարդու սրտում, որ «Աստուած է՛». սերնդէ սերունդ ևս յայտնել է՝ «Ես եմ Աստուած որ էն», և մարդ, արտաքին աշխարհի գրգիռները ստանալով, բանական ու բարոյական մտածողութեամբ հաւատում է Աստծու գոյութեան ճշմարտութեանը: Բանական մարդու ներկայացուցիչները հեթանոս աշխարհի իմաստասէրներն էին, որոնք բանական և բարոյական մտածողութեամբ հաստատում էին Աստծու գոյութեան ճշմարտութիւնը: Օրինակ Սոկրատը Քրիստոսից 469 տարի առաջ ասում էր, որ ոչ միայն կայ աշխարհի արարիչ անտեսանելի Աստուած, այլև հաստատում, որ Նա հաղորդակից է մարդկանց, խօսում է մարդկանց հոգու հետ[6*]: Եզնիկ Կողբացին հետեւեալն է ասում Պլատոնի մասին. «Եւ մի բան, որ առաւել անճառելի է համարում Պլատոնը այս է, թէ միշտ Աստուած կար և արարածներ չունէր, Աստծուն փնտռելու պատճառով սիրում եմ նրա կամքը, [սակայն] չեմ գովում՝ ամբարտաւանութիւնը»[1]:

Բաւական է, որ մարդ հոգով ու բանականութեամբ փոքրիշատէ կատարեալ լինի, բաւական է, որ նա անձնական թերութեամբ կամ կամաւոր

[1] Եզնիկ, էջ 241:

միտումով բթացրած չլինի իր հոգու ընդունակութիւնը, նա անպատճառ անբաժան կը լինի այդ ճշմարիտ հաւատալիքից, կիմանայ իր արարածական լինելն ու իր Արարչի ամենակարող զօրութիւնը: Հաւատալ Աստծուն նշանակում է ճշմարիտ մարդ լինել[1], Աստծու ճշմարիտ պատկեր լինել, Աստծուն ցոլացնել իր հոգու հայելու մէջ: Եւ քանի որ մարդու իսկական արժանիքը նրա հոգևոր բարձրութեան մէջ է, առաւել բարձր բան չկայ մարդու համար, քան եթէ հոգով Աստծու նման և Աստծու հետ լինել: Սակայն որքան էլ հոգին ձգտի զարգանալ և աշխատի անբաժան մնալ Աստծու հաղորդակցութիւնից, այնուհանդերձ նա ևս ենթարկւած է մարդու ներգործութեանը: Մարդ կարող է ինքնուրաց կամքով վնասարար ներգործութիւն ունենալ իր մտքի և զգացողութեան, իր հոգու վրայ և զրկել նրան այն բարձր հաղորդակցութիւնից, որով միայն ճշմարիտ մարդ լինելու հնար կայ: Այդ է պատճառը, որ երբ իր հաւատքը խեղդող մէկը դառնալով ասաց Թէոփիլոս Անտիոքացուն՝ «ցոյց տուր ինձ քո Աստծուն»[7*], նա պատասխանեց. «Ցոյց տուր ինձ քո մարդկութիւնը և ես այն ժամանակ ցոյց կը տամ քեզ իմ Աստծուն»: Այսինքն՝ քանի որ Աստուած միմիայն մարդուն է յայտնւում, ցոյց տուր ինձ, թէ արդեո՞ք իսկապէս դու մարդկութիւն ունես, արդեո՞ք քո հոգու տեսողութիւնը բաց է և ապա ես կը կարողանամ քո աչքերը դարձնել դէպ Աստուած[2]:

Ուրիշ խօսքով մեր արտաքին զգայարանները միայն միջնորդներ են արտաքին գրգիռներ ստանալու համար, մինչդեռ այդ գրգիռներին հասու լինելու համար հարկաւոր է հոգու ներքին տեսողութիւն, լսողութիւն կամ ընդհանրապէս զգացողութիւն[3]: Աչքով ստանում ենք իրերի գրգիռներ և հոգու տեսողութեամբ իմանում ենք այդ իրերի որպիսութիւնը: Աչքով ստանում ենք Աստծու մեծամեծ գործերի տպաւորութիւնը և հոգու տեսողութեամբ հաղորդակից ենք դառնում Աստծու արարչական զօրութեանը և հոգու լսողութեամբ լսում ենք Աստծու յայտնութիւնը: Ամէն մի ճշմարտութիւն հասկանում է միմիայն նա, որ ունի հոգու հասողութեան պայծառութիւն: Այդ պայծառութիւնը հարկաւոր է մանաւանդ

[1] «Իւրաքանչիւր մարդ, ով չի խոստովանում Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով, նա մարդ չէ» (Մաշտոց):
[2] Տե՛ս նաև Եղիշե, էջ 130:
[3] «Եւ ինչին չես հասնի մտքի քննութեամբ, փութով կը հասնես հաւատքի քաջութեամբ, միտք դիր Գրքի իմաստութեանը և չես մոլորուի հաւատքի ճշմարտութիւնից, ճանաչիր ոչ միայն խօսքը, այլև ճշմարտօրէն ասւած միտքը և յիմարութեամբ մի աղաւաղիր ճշմարիտ գրուածքը» (Ընդհան. 346):

հոգևոր, աստուածային ճշմարտություններին հասու լինելու համար: Այս հաստատում է հէնց նիւթական օրինակով. կոյրը արեւ չի տեսնում, սակայն չի կարող ասել, թէ չկայ լոյս, բայց և նրան չենք կարող փորձով համոզել, թէ լոյս կայ: Դալտոնականին, որ որոշ գոյն չի տեսնում, չենք կարող համոզել, թէ կայ այդ գոյնը: Արտաքին լոյս ու գոյն իմանալու համար հարկաւոր է առողջ միջնորդ զգայարաններ ունենալ, այսինքն աչք. ուրեմն աստուածային լոյսն իմանալու և նրան հասու լինելու համար անհրաժեշտ է բաց ու պայծառ պահել իւրաքանչիւր մարդու տրուած ներքին տեսողությունը[1]: Կամ ինչպէս որ փչացած հայելու մէջ չենք տեսնում մեր կերպարանքը, նոյնպէս և մեղքերով շաղախուած հոգին չի կարող իր մէջ իսկութեամբ ցոլացնել Աստծու անհասանելի պատկերը: Նոյնիսկ Պլատոնն է ասում, որ միայն Աստծուն նմանուելով կարող ենք հասկանալ Նրա խորհուրդները: «Որդեակս, ասում է բնական կեանքին նուիրուած դաստիարակ Ռուսսոն, պահիր քո հոգիդ միշտ այնպիսի վիճակում, որ քեզ թոյլ տայ կամենալ Աստծու լինելը, և դու երբեք չես կասկածի, թէ Աստուած կայ »[8*]: Լաւ է ասում նաև ս. Ղևոնդը. «Բայց մեզ, որ բացայայտ աչքով տեսնում ենք երկնաւոր լոյսը, թող չհանդիպի արտաքին խաւարը»[2]:

Արդ, վերևի բացատրություններից պարզապէս հետևում է, որ աստուածճանաչողությունը մարդու մէջ մի ներքին անհրաժեշտություն է և բնական իսկություն: Աստուած ու մարդ պատկանում են իրար. մարդու ճշմարտությունը իր հաղորդակցությունն է Աստծու հետ. աստուածճանաչողությունը մարդու կեանքի ճշմարտությունն է[9*]: Ինչպէս որ աչքը կարիք է զգում լոյս տեսնելու, այնպէս էլ մարդու հոգու բնական անհրաժեշտությունն է հաղորդ լինել յաւիտենական ճշմարտության լոյսին: Աստուածճանաչողություն է մարդու կեանքը (Յովհ., ԺԷ 3). դէպի այդ գնալ կարող ենք Աստծու կամքը կատարելով (Յովհ., Է 17), կամ կարճ ասած՝ հոգով նրա հետ լինելով. «Որովհետև հաւատքը հասցնում է Աստծու փառքի ճանաչողությանը»[3]: Ներդաշնակությամբ միացած մեր միտքը, կամքը և զգացմունքը կազմում են հաւատքը, որ զօրանում, ամրանում է արտաքին

[1] Տե՛ս և Եղիշէ, 130:
[2] Եղիշէ, էջ 85, 24, 87, Հարց, էջ31-33:
[3] Յաճախ., ԺԵ 69. «Բայց եթէ Աստուած ինքը կամենայ՝ կը ճանաչուի իրեն արժանիների մտքով, բայց չի երևայ նրանց աչքին, և ոչ թէ երկրաւորների մտքի վրայ, այլ նրանց, ովքեր ճշմարտապէս հաւատում են Աստծուն»:

իմացողությամբ: Եւ ինչպէս որ Աստծու ճշմարիտ հաղորդակցությունը պահանջում է Երկնաւոր Հօր պէս կատարեալ լինել (Մատթ., Ե 48), և այդ կատարելության աստիճանից բխում է ամէն առաջադիմություն, բարոյական զարգացում ու ճշմարիտ լուսաւորություն, այնպէս էլ այդ ճշմարիտ հաղորդակցությունից զրկուելուց առաջ է գալիս անկատարությունը, որին հետևում է սոսկալի անկումը: Մարդու ճշմարիտ հոգու պահանջն է այդ հաղորդակցությունը, և նա տեսնում է իր Աստծուն և առաջադիմում, ուստի և նրա որևիցէ անկատարությունն է միայն ժխտում այն բարձր Էակի գոյությունը, որին ձգտում է նրա պատկերով ստեղծուած ադամորդին: Հաւատքը խաւարում է միմիայն մտքի կամ կամքի և կամ զգացմունքի այլանդակելուց կամ «հնությեան կուրությամբ»[1]: Ճշմարիտ հոգու համար Աստուած տեսանելի է[2]: Այսպէս և Աստուած երբեք չի թողնում, որ իր արարածներն անտեղեակ լինեն իրենց Արարչին, այլ ամենքին յայտնում է Իր մասին ոչ միայն հոգևոր հաղորդակցությամբ, այլև արտաքին երևոյթներով, որոնց բազմաթիւ օրինակներն ունենք Ս. Գրքում Աստծու ս. ուխտի պատմությունից: Այս է ասում և Ս. Գրիգոր Լուսաւորիչը. «Մարդու համար անկարելի է Աստծուն տեսնել Իր գոյությամբ, ինչպէս մոմը՝ կրակին, բայց իր յօժար կամքի բարերարությամբ Ինքն Իրեն ցոյց էր տալիս. մերթ երևում էր մարդու կերպարանքով. մէկին (իբրև) լոյս, մէկին՝ կրակ, մէկին՝ հողմ և ամպի, մէգի և մրրիկի մէջ»[3]:

[1] Եղիշէ, 114, 116, 281. «Եւ միտքը, որ անմասն է Աստուածատեսության հաւատքից, իբրև աւերակ՝ թափուր և զուրկ է [Աստծու] կերպարանքից: Իսկ ովքեր լուսաւորուած են աներևոյթ սրտի աչքի տեսանելիքով, ինչպէս ասում է մարգարէն. «Քո մէջ խօսեց սիրտն իմ, և իմ երեսը փնտռեց քո երեսը...»... ովքեր այժմ ծածուկ լուսաւորությանն խորհրդով են տեսնում նրան, համաձայն Իր կամքի, ապա վախճանին դէմյանդիման կերևայ նրանց» Ս. Ներսէս Մեծն (Բուզանդ, էջ 72):
[2] «Մարդն արարուեց համաձայն Աստծու պատկերի, որպէսզի ըստ հայելու նմանության մաքուր պահելով սիրտն իբրև մեղքի ժանգը սրբող, և միշտ Աստծուն նայելով և Աստուած՝ մեզ, մեր սկզբնատիպի աստուածային գեղեցկությունը պատկերենք մեր հոգիների և մտքերի մէջ և դրանով լինենք Աստծու նմանող և պատկերակից: Իսկ ովքեր մեղքով ապականում են իրենց հոգիները, չեն կարող Աստուածության լոյսը իրենց մէջ կերպագործել, ինչպէս անմաքուր հայելու մէջ ոչ ոք չի կարող տեսնել իր դէմքը» (Ընդհան., 400, նաև՝ Հռոմ., Ա 21, Գործք., ԻԸ 27, Յովհ., ԺԲ 37, Մատթ., ԺԳ 13, Մրկ., Զ 52, Ղուկ., ԻԴ 25, Եփես., Ա 18):
[3] Ագաթ., 209:

Ըստ այսմ այն հաւատացեալները, որոնց Աստուած արժանացրել է իր յայտնութեանը, թէ՛ տեսնում են Աստծուն, և թէ՛ հոգով խօսում Նրա հետ[1], մինչդեռ հին հեթանոս ինքնավստահ իմաստասէրների բոլոր զննութիւնները հասան միմիայն մի եզրակացութեան, թէ կայ մի «անծանօթ Աստուած»: Նրան էր պաշտում հեթանոս աշխարհն իր զարգացման աստիճանում, սակայն Աստծու յայտնութեան քարոզիչները չթողեցին նրանց այդ անորոշութեան մէջ, ասելով. «Որին դուք պաշտում էք իբրև անծանօթի, ես նոյնի մասին եմ պատմում ձեզ» (Գործք., ԺԷ 23):

Բ

ԱՍՏԾՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԿՐՕՆՆԵՐՈՎ

Որքան հին է մարդկութիւնը, նոյնքան էլ հին է Աստծու գոյութեան յայտնութիւնը նրա մէջ. մարդկութեան հետ աճել է և նրա գիտութիւնը, ըստ որում և այդ գիտութեան առաջին զբաղմունքը նոյն այդ յայտնութիւնն է եղել: Աստուա՛ծ է Աստուած - ահա այն յայտնութիւնը, որ հնչում է մարդկութեան մէջ և իւրաքանչիւր կրօնի մէջ կայ այդ ճշմարտութեան որևիցէ հիմքը, որով մարդիկ

[1] «Եւ մենք բոլորս բաց երեսով տեսնելով Տիրոջ փառքը, ինչպէս հայելու մէջ, նոյն պատկերով ենք նորոգւում փառքից փառք, որպէս թէ Տիրոջ Հոգով (Բ Կորնթ., Գ 18): Քանզի ինչպէս մարդկային հոգին թոյլ է տալիս մարմնաւոր աչքին տեսնելու, քանի դեռ մարմնի մէջ է, այս օրինակով էլ աստուածային հոգին քանի դեռ բնակւում է մեր հոգու մէջ՝ աստուածային բաներն է ցոյց տալիս մեզ: Նա թոյլ է տալիս տեսնելու Աստծուն, հրեշտակներին, սրբոց խմբերին և այն բարիքը, որ Աստուած պատրաստեց իր սիրելիների համար: Իսկ ովքեր մեղքի պատճառով զրկւում են Ս. Հոգուց, նրանք շնչաւոր մարդ են կոչւում՝ ունենալով սոսկ մարդկային հոգի և այն էլ՝ իբրև անասունի: Այս պատճառով շունչ է կոչւում և ոչ՝ հոգի, որովհետև հաւասարւել է անբան անասուններին՝ նրանց նման մարմնաւոր ցանկութիւնների միայն հետամուտ լինելով. կերակուրների և ըմպելիքների և այլ մարմնաւոր ցանկութիւնների՝ զրկւած լինելով հոգևորներից: Որովհետև շնչաւոր մարդը չունի Աստծու Հոգին, քանզի «նրա համար յիմարութիւն է», ասաց առաքեալը: «Սակայն մեզ, ասում է, Աստուած յայտնեց Իր Հոգով»: Քանզի ինչպէս մարդու հոգին է իմանում մարդուն, այնպէս էլ Աստծու հոգին է աստուածային բաներն իմանում և իմանալ է տալիս՝ ում մէջ բնակւում է...: Արդ, գոնէ երբեմն դիմենք մեր լոյսին՝ Քրիստոսին, և Նրան աղաչենք, որպէսզի բացի մեր սրտի աչքերը և լուսաւորի մեր հոգիները» (Մեկն. ժամ., էջ 215-217):

կարող էին ընդունակ լինել Աստծուն գտնելու: Այդ յայտնութիւնն աւանդւում էր որդուց որդի և աւանդւածն էլ ներքին հիմքերով ամրանում, մնում և յարատևում էր իր զարգացման մէջ: Հետևաբար թէ՛ այդ յայտնութեան հաւատքը, և թէ՛ այդ յայտնութեան հետևանքները ուսումնասիրելու ձգտումները տալիս են մեզ Աստծու գոյութեան ապացոյցի արտաքին կողմը: Նախընթաց հիմնական բացատրութիւնից յետոյ հարկ է առաջանում այս արտաքին կողմի վրայ մի առանձին ուշադրութիւն դարձնել և այդ երկու կէտերն ամփոփ ներկայացնել: Ըստ որում հաւատքն ու նրա բովանդակութիւնը թողնել միմիայն սրտի զգացողութեանը՝ այն օտարելով մարդու բանականութիւնից, այդ նշանակում է սահմանափակւել միայն խորհրդապաշտութեան (միստիկայի) մէջ[10*]: Ընդհակառակն անտեսել սրտի զգացողութիւնը և միմիայն բանականութեան, մտքի վերացական ու ձևական մտածողութեան նիւթ դարձնել հաւատքի էութիւնն ու հիմքերը, այդ էլ նշանակում է գլորւել մի այլ ծայրայեղութեան մէջ, որ յայտնի է բանապաշտութիւն (ռացիոնալիզմ) անունով: Մէկ միակողմանիութիւնը ընկղմւում է մարդու զգացմունքի, իսկ միւսը ձևական, չոր ու ցամաք մտածողութեան աշխարհը: Ուստի մեր դաւանաբանական ընթացքը, խոյս տալով այս երկու միակողմանիութիւնից, յարակցում է մարդու ներքին իմացութիւնների հետ նաև արտաքինի ուսումնասիրութիւնը: «Աստծու եկեղեցու գործն այն է, որ նիւթականի ուսումնասիրութեամբ, առանց Գրքի, յանդիմանի աշխարհի [իմաստասէրներին] և Ս. Գրքով յանդիմանի իրենց սխալմամբ հոգևոր կարծողներին»[1]:

Կրօնն աւելի հին է, քան մարդկային պատմութիւնը, այսինքն՝ մարդկութեանը յայտնի չէ մի որևիցէ անկրօն ժամանակ: Եղել են գիտնականներ, որոնք արդի ամենայետին ժողովուրդների կեանքը ևս ուսումնասիրել են ու գտել, որ դրանք ոչ միայն կրօնական հայացքներից զուրկ չեն, այլ մինչև անգամ դրանց նիստ ու կացն ու հոգևոր հարստութիւնները որոշ քաղաքակրթութեան մնացորդներն են անկման շրջանում: Բուն մտքով վայրենի ժողովուրդ չկայ մեր աշխարհում: Անկեալ ժողովուրդներին այդպէս անւանեցին անխելահաս ճանապարհորդները, որոնց տեղեկութիւնները մոլորեցրին նաև գիտնականներից

[1] Եզնիկ, էջ 111:

ոմանց, կարծել տալով, որ իբր թէ վայրենի ժողովուրդները կրօն չունեն. սակայն այդ անստոյգ հիմքերի վրայ (ԺԹ դարի) վաթսունական թւականներին կառուցւած անհաստատ եզրակացութիւնները ցնդուեցին նորանոր գիտնականների վերստուգումով: Այժմ արդէն ճշտւած է, որ այդպէս կոչւած վայրենի ժողովուրդների մէջ կան կրօնական ու բարոյական բարձր գաղափարներ: Ովկիանիայի կղզիներում ապրում են քաղաքակրթւած ժողովուրդներ: Երկնաւոր Աստծու անունը յայտնի է նոյնիսկ Աֆրիկացի բուն ժողովուրդներից շատերի մէջ: Եւ ինչպէս Կիկերոնը, Սենեկան և այլ հեթանոս փիլիսոփաներն ասում էին, թէ միայն կրօնն է մարդուն տարբերում անասունից, չկայ մարդ, առանց Աստծու գաղափարի. պտոյտ ես կատարում բովանդակ աշխարհով մէկ, գտնում ես քաղաքներ առանց պարսպի, գիտնականներ՝ առանց օրէնքի, առանց հարստութեան ու դրամի, սակայն երբեք չես գտնի մի քաղաք առանց աստւածների, առանց բագինի, աղօթքի ու զոհի, առանց երդման ու բարու ձգտման. այնպէս որ այժմ ընդհանրացած համոզմունք է, որ չկայ ժողովուրդ առանց կրօնի: Ընկած (զարգացման ցածր մակարդակում գտնւող) ժողովրդի կրօնական կեանքը պտտւում է նախապաշարմունքի, սնոտիապաշտութեան ու զանազան կախարդութիւնների մթնոլորտում, սակայն ոչ ոք ցարդ չկարողացաւ գտնել մի ժողովուրդ, որ կատարելապէս զուրկ լինի նոյնիսկ կրօնի այդ ստւերական կողմից: Կրօնի այդ ընդհանրութիւնը խոստովանում են յայտնի գիտնականներ Գերլանդը, Յ. Գ. Միլլերը, Մաքս Միլլերը, Պեշելը, Ա. դը Քատրֆաժը, Թեյլորը և այլք: Մինչև անգամ Լուբոկը 20 տարի առաջ (1880 թականներին) զարգացած կրօն փնտռելով վայրենի երկրներում՝ խոստովանում է, որ կախարդութեան հաւատալն ընդհանուր է նրանց մէջ, ինչը և կրօն համարելով՝ չի կարելի անկրօն ժողովուրդ գտնել[11*]:

Բայց դեռ բաւական չէ համոզւել, որ աշխարհի բոլոր ազգերը կրօնական կեանք ունեն, այս դեռևս ապացոյց չէ Աստծու գոյութեան, որովհետև պէտք է նաև պարզել, թէ արդեօ՞ք մարդկութեան կրօնը մի որևիցէ այլ պատճառից չի առաջացել: Եթէ իսկապէս մի այլ պատճառից և ոչ Աստծու յայտնութիւնից լինի կրօնի առաջացումը, մենք անշուշտ կը գտնենք մի այնպիսի պատճառ և կը հաստատենք այդ: Սակայն որտե՞ղ որոնենք այդ պատճառը, այսինքն՝ եթէ կայ մի այդպիսի պատճառ, կամ արտաքին է լինելու, կամ ներքին:

Արդեօք որո՞նք կարող են լինել արտաքին պատճառները:

Ոմանք ասում են, թէ պետութիւնն է կրօն հնարել ժողովուրդ կառավարելու համար: Այդ չի կարող լինել, որովհետև մենք գիտենք, որ ժողովուրդների մէջ կրօնը միշտ պետութիւնից բարձր է համարւել: Քահանաների հնարածը չէ, որովհետև քահանաները երևան են եկել ի հետևանս հին կրօնի: Կրօնը ընտանիքից էլ չի ծագել, որովհետև անկրօն ընտանեկան կեանք չի եղել, որ ընտանիքը կրօնի պատճառ եղած լինէր: Այլև որևիցէ բռնակալ չէր կարող կրօն ստեղծել իր աշխարհակալութեան համար, որովհետև բռնակալները կրօնի վրայ են յենւել իրենց տիրապետութեան մէջ, ապա թէ ոչ՝ ինչպէ՞ս կարող էին նախապէս կրօնը տարածել այն երկրներում, որտեղ դեռևս տէր ճանաչւելու պէտք ունէին:

Ոմանք կրօնի պատճառ են համարում ոչ թէ մարդուն ու մարդկային հաստատութիւնները, այլ երկիրն ու նրա հանգամանքները: Բայց մենք գիտենք, որ ոչ թէ կեանքի հանգամանքներն են կրօն առաջ բերել, այլ կրօնն է ձևակերպւել իւրաքանչիւր ժողովրդի կեանքի հանգամանքների համեմատ: Վախն էլ պատճառ չէ, որովհետև վախից մարդը կը յիշէր Աստծուն, եթէ արդէն ճանաչէր Նրան, իսկ բնութեան արկածների մէջ նա միայն ապացոյցներ է գտնում իր ճանաչած Աստծու գոյութեան: Մահւան վախից էլ չէ կրօնը, որովհետև մարդ ճանաչելով Աստծուն՝ որոնում է նրա հովանին և այդ հայրական հովանու տակ սովորում է պատւել ու յարգել իր մարմնաւոր հայրերին ու նախնիներին: Առանց Աստծու հայրութեան ոչ մի մարմնաւոր հայր ու բարերար չի կարող երախտիքի յարգանքի արժանանալ: Եթէ մարդը չճանաչէր Աստծուն ու նրա գաղափարները չունենար, երբեք ո՛չ կարող էր նրա հովանին որոնել, ո՛չ նրան պաշտել ու ծառայել, և ո՛չ էլ կեանքի անկեալ ու մոլորեալ ընթացքի մէջ Նրա պատւից բաժին հանել անցաւոր մեծանուն անձանց:

Բայց արդեօ՞ք ներքին պատճառներ չեն կարող լինել Աստծու գաղափարների ծագման համար: Ոմանք հոգեբանօրէն դատելով, զգացմունքն են առաջին պատճառ համարում, որ իբր թէ միանալով երևակայութեան ու պատկերացման հետ, իր հետաքրքրութիւններին գոհացում է տալիս զանազան խաբկանքներով: Սակայն մի՞թէ կարելի է ընդունել խաբկանքի գոյութիւնը մի այդպիսի էական հարցում. մի՞թէ կարելի է ենթադրել, որ մարդկութիւնը խաբւի,

մարդ գոհ մնայ խաբկանքով և ինքնահնար մտապատկերներով մի այդպիսի կենսական խնդրում: Խաբկանքից կառաջանայ կեղծ կրօն և ոչ իսկական կրօն: Երևակայութեան ծնունդը տեսնում ենք մանկութեան ժամանակ, որ յետոյ թողնում ենք. մինչդեռ ամենալուսաւորուած ազգերն ամենից լաւ հաւատացողներն են:

Եւ իրա՜ւ. մանկութիւնից մարդ ձգտում է իմանալ ամէն բան. որտեղի՞ցը, ո՞ւրը, ինչո՞ւն և ինչպէ՞սը. որոնելով՝ նա հասնում է այն բարձր Էակին, որին ճանաչում է որպէս բոլոր երևոյթների պատճառ: Երբեմն նա ընկնում է առասպելաբանութեան մէջ, որով իսկապէս այդ պահանջն անորոշ է մնում և այդ գաղտնիքը՝ չլուծուած, որովհետև **ինչպէ՞ս կարող է մարդ լուծել պատճառականութեան գաղտնիքը, եթէ նրան յայտնուած չլինէր Աստծու գաղափարը:** Կրօնական մտածողութիւնը ժողովրդական բնազանցութիւն է, որով ժողովուրդը ձգտում է տեսանելի աշխարհի և իրեն յայտնի Աստծու մէջ գտած կամ հետապնդած գաղտնիքը լուծել: Այդ ձգտումն է առկայ առասպելաբանութեան մէջ: Այդ բնազանցութեան մէջ մարմիններն իսկ շնչաւորուած են երևում մարդուն, իսկ այդ այդպէս չէր լինի, եթէ մարդն ինքը հոգի չունենար և բացարձակ հոգու բացարձակ զօրութեան մասին գաղափար ստացած չլինէր: Աշխարհն Աստծու ստեղծածը չէր համարուի, եթէ հոգևորը չճանաչէր իբրև ամենաբարձրը:

Տեսնելով, որ այդ վերոյիշեալ պատճառն անկայուն է, ոմանք ուզում են միմիայն միտքը կրօնի պատճառ համարել: Եթէ այդ այդպէս է, պէտք է միտքը կա՛մ աշխարհի վրայ ձեռք բերած հայեցողութեամբ, և կա՛մ առասպելաբանութեամբ կրօն ծնած լինի. մինչդեռ աշխարհայեցողութիւնը պատճառ չէ կրօնի, որովհետև կրօնը ո՛չ բնութեան աստուածացումով, և ո՛չ էլ տիեզերքի վերաբերեալ դատողութեամբ է առաջ եկել. առասպելաբանութիւնն էլ պատճառ չէ, որովհետև առասպելաբանութիւնը կրօնի մոլորումն է, որով մարդ փորձել է Աստծու կեանքը մարդու նմանութեամբ ներկայացնել՝ նրա գաղտնիքը լուծելու համար[12*]: **Մարդը որքան էլ հետազօտեց՝ իր հարցասիրութեան գոհացումը կամ պատասխանը հաւատքի մէջ գտաւ, որ ամենահինն է և ամենավերջինը.** առասպելաբանութիւնը կորաւ, իսկ կրօնը մնաց նոյնիսկ ամենալուսաւորուած ազգերի մէջ[13*]:

Ուրեմն կրօնը լոկ մտքից չէ. բարոյականութիւնը մեծ դեր է խաղում նրա մէջ. բարոյական ու կրօնական անկումը եղել է նոյնիսկ ամենագիտուն համարուած ժամանակներում: Եթէ լոկ միտքը լինէր մարդուն կրօնի ենթարկողը, այն ժամանակ, երբ ժողովուրդը փոխում էր իր աշխարհայեցողութիւնը, պէտք է անկման ենթարկուէր նաև նրա կրօնը, որ երբեք չի եղել: Հաւատքը լոկ մտքից չի ծագում. չէ՞ որ «Աստուած ընտրեց այս աշխարհի յիմարներին, որպէսզի ամօթի մատնի իմաստուններին» (Ա Կորնթ., Ա 27):

Կրօնը կապուած է մարդու ամբողջ հոգու և ոչ թէ նրա մի կարողութեան հետ, և եթէ կամենանք կրօնի ծագման մի որևիցէ սոսկական պատճառ գտնել, կը սխալւենք, որովհետև բոլոր կրօնների էութիւնն է այն ձգտումը, որով աշխատում են **ի վերուստ յայտնուած և իւրաքանչիւրի հոգու մէջ ծրարուած անհասանելի գաղափարն իմանալ: Այդ ձգտումն է, որ ընդհանրապէս կոչւում է սէր դէպի Աստուած:**

Կրօնի ծնողն Աստծու յայտնութիւնն է, իսկ նրա հիմքն Աստծուց կախեալ ու ստեղծուած լինելու զգացմունքն է և աստուածային օգնութեան կարօտութիւնը[14*]. «Իմացէք, որովհետև նա է մեր Տէր Աստուածը: Նա արարեց մեզ և ոչ թէ մենք եղանք, մենք ենք Նրա ժողովուրդն ու արօտի ոչխարները» (Սաղմ., Ղթ 3, Ես., ԽԳ 1): Բնութեան մէջ գիտակցում ենք մեր թուլութիւնը, դիմում ենք դէպի Աստուած և կամենում ենք հաւատալ Նրան, որ ամէն ինչ հնազանդեցնում է մեզ: Մարդու յաղթանակը բնութեան նկատմամբ նրա բարոյական հնազանդութիւնն է Աստծու առջև: Այս զգացմունքը, գիտակցութիւնն ու կամեցողութիւնը զօրանում են չարիքի ծանրանալուց և մեր մեղքի դառնութիւնից: Այդ ամենի գիտակցութիւնը ծագում է մարդու խղճմտանքից, ներքին և արտաքին մարդու կուից: Խղճմտանքը վճռահատում է այդ կռիւը, ձայն տալով, որ պէտք է դիմենք դէպի բացարձակ ճշմարտութիւնը՝ մեզ յայտնող Աստծուն, Որի տաւծն ըստ ամենայնի մեզ համար երաշխաւորուած է:

Ամէն մի ժողովուրդ ստացած լինելով Աստծու գոյութեան ու բարիքի յայտնութիւնը[15*], կարող է յետադիմել իր հասկացողութեամբ, ընկնել կենսական հանգամանքների փորձութեան մէջ, իր չփորձած մոլար ճանապարհներում որոնել ինքնըստինքեան յայտնի ճշմարտութիւնները, սակայն վերստին այդ փորձութիւնների գիտակցութեանը գալ, որ միմիայն Աստուած է Աստուած և

ամենայն ճշմարտութիւն ու բարիք միմիայն Նրանից է: Սա մի օրէնք է ոչ միայն կրօնում, այլև պատմական կեանքում. **միշտ նախ հանճարն է լինում, որ զարկ է տալիս ազգի առաջադիմութեանը, և ոչ թէ առաջադիմութիւնն է հանճար առաջացնում. բարձրից ընկնելով է առաջ գալիս ցածրը:** Այսպէս և քրիստոնէութիւնը բարձրութեամբ գրաւեց ազգերին: Բայց և այնպէս, որքան էլ մի ժողովուրդ իջնում է իր բարձրութիւնից, իր քաղաքակրթութիւնից, նա երբեք չի հասնում կենդանական վիճակի. նա միշտ ինքնըստինքեան զատւում է իրեն շրջապատող կենդանիներից: Նա միշտ ունի խիղճ, կարեկցանք, աղօթք, մեռեալի համար հոգս, հանդերձեալ կեանքի զգացողութիւն, մեղքի ճանաչողութիւն և այլն՝ որևիցէ կերպով և աստիճանով, որոնցից ամբողջապէս զուրկ է կենդանին: Կենդանիների ընկերական ձգտումն էլ սեռական պահանջի և ինքնապահպանութեան մէջ է սահմանափակուած, որոնց վերանալով վերանում է և այդ ձգտումը. այդ արդէն կրօնական չէ և ոչ մի նմանութիւն չունի մարդու ընկերական ձգտման հետ:

Արդ, կրօնը պատմական զարգացմամբ չի ծագել, կենսական պահանջներից և աշխարհային պատճառներից չի առաջացել, այլ աստուածային տուրք է, որ անբաժան է մարդու էութիւնից: Կրօնի մէջ կայ թէ՛ ներքին տրամադրութիւն, և թէ՛ աստուածային ներգործութիւն, սակայն երկուսն էլ Աստծուց է: Բնական կոչուած կրօնը նորաբողբոջ կրօն չէ, այլ բարձր համարելու յատկանշից զուրկ կրօն է, կրօնի բացասութիւնն ու մոլորութիւնն է: Մարդու միտքն երբեմն մոլորւում է՝ չդիմանալով կեանքի փորձանքներին. նա սկսում է իր ուժով ձգտել վերստին դէպի բարձրութիւն, զգում է իր տկարութիւնը, և վերստին նւիրւում Աստծուն. հաւատքը մտքի պսակն է:

Կրօնը ո՛չ լոկ բարձր ճշմարտութիւններ է տալիս, ո՛չ լոկ բարոյականութիւն, ո՛չ լոկ ճանաչողութիւն, և ո՛չ լոկ կախման զգացողութիւն, այլ նա պարփակում է իր մէջ մարդու ներքին աշխարհի այն բոլոր հարստութիւնները, որոնք երջանկացնում են նրան և տանում դէպի աստուածային բարիքի վայելումը: Ուստի և կրօնն անբաժան է մարդուց. **մարդու բանականութեան արտայայտութիւնը լեզուն է, էութեան հիմքը՝ աստուածճանաչութիւնը.** լեզուն և աստուածճանաչութիւնը մարդկութեան սկիզբն են և նրա չափ հին: Մարդու հոգևոր, բանական կեանքի սկիզբն Աստծու գոյութեան գիտակցութիւնն է:

Բոլոր կրօնների մէջ հիմնական գաղափարները միևնոյնն են և միևնոյնն են եղել բոլոր ժամանակներում: Բոլոր կրօնների մէջ առաջ են գալիս միևնոյն հիմնական հարցերը, որոնց լուծման համար մարդիկ աշխատել են օգնութիւն գտնել հաւատքից: Աստծու յայտնութիւնն ամէն տեղ լոյս է սփռել, սակայն ժողովուրդների մոլար ճանաչողութիւնն ու մոլորւած կամքը խեղաթիւրել են այդ լոյսի շողերը: Բայց որքան էլ լոյսի շողերը խեղաթիւրւել են, այնուհանդերձ լուսաւոր ճշմարտութեան հետքերն աննկատելի չեն մնացել ամենքի մէջ: Բարու և լաւագոյնի զգացողութիւնն ու կամեցողութիւնը, աստուածային նախախնամութեան զգացումը, Աստծու գոյութեան ուշադրութիւնը, մանաւանդ Աստծու հաղորդակցութեան ջերմ փափագը նկատելի է ամէն տեղ, ամէն կրօնի և ամէն ժողովրդի մէջ՝ պարզ կամ բարդ, որոշ կամ աղօտ մտապատկերներով ու հասկացողութեամբ: Դիմելով պատմութեան օգնութեանը կամ թէ աշխարհի ներկայ կեանքի ուսումնասիրութեանը, միշտ կը նկատենք, որ ազգերի կրօնական վիճակը էապէս համապատասխանելով կրօնի գաղափարներին, միմիայն արտաքուստ կամ իր կերպով ու կերպաւորութեամբ է զարգացել իր ժողովրդի հոգևոր առաջադիմութեան համեմատ: Ընդհանուր պատմական օրէնք է, որ իւրաքանչիւր ազգի առաջադիմութեան արդիւնքները բեղմնաւորւում են միմիայն նրա հոգևոր զարգացմանը հետևելով: Եւ կրօնն էլ ճշմարիտ հաղորդակցութիւն լինելով մարդու և Աստծու միջև, այնքան է զարգանում և համապատասխանում իր գաղափարներին, որքան մարդու ներքին և արտաքին կեանքն է բարեկարգւում և ներդաշնակութեան մէջ մտնում կրօնի ճշմարիտ բովանդակութեան հետ: Հետևաբար կրօնն իբրև հաղորդակցութիւն Աստծու հետ, էապէս նոյնն է սկզբից մինչև այժմ, մինչդեռ իր իրականացումն է ստանում՝ պատմականօրէն զարգանալով ու ծաւալւելով մարդու և նոր կեանքի մէջ: Որքան ընդարձակ է մարդու ներքին աշխարհը, այնքան ծաւալւում ճառագայթում է նաև կրօնը, ըստ որում և որքան ընդարձակւում է մարդու կեանքը, այնքան բազմապատիկ կերպով է գտնում իր կենդանացումը իր ներքին աշխարհի և ապա կրօնի լուսաղբիւրի մէջ:

Այստեղից պարզ հետևում է, որ կրօնը պատմականապէս ունի իր զարգացումը, առաջադիմութիւնը և իրականացումը: Այդ զարգացումն ունի իր դրական ու բացասական ընթացքը: Դրական ընթացքը տեղի է ունեցել այնտեղ,

որտեղ Աստծու և մարդու հաղորդակցությունն իբրև մի ամուր առանցք, մի որոշ ազգի կեանքի էությունն է կազմել և այդ ազգը դարձրել Աստծու ընտրեալը: Այդ եղել է հրեաների մէջ, որոնք վայելել են Աստծու մասնայատուկ յայտնությունը, ուստի և մեղքերի գիտակցությեան մի օրինական առաջադիմությեամբ դիմել են դէպի կատարելությունն: Մինչդեռ Աստծու ճշմարիտ հաղորդակցությունից շեղող և աստուածային յատուկ յայտնությունից խուսափած մարդկությունը մտել է բացասական ընթացքի մէջ և ինքնայուսությեամբ միմիայն իր ներքին և արտաքին կեանքով զբաղուել: Սրանք ձգտել են լոկ աշխարհային երջանկությունն վայելել սեփական վստահությեամբ, և իրենց ներքին, հոգևոր կեանքի պահանջների գոհացումը այնտե՛ղ որոնել ու գտած կարծել, որտեղ լինել չի կարող, քանի որ այնտեղ չէ Աստծու ճշմարիտ հաղորդակցությունն ու հաղորդակցությեան ճանապարհը: Նրանց ճանապարհը բացասական ճանապարհ է, որով ընթացող զարգացումն ու առաջադիմությունն այնքան պէտք է շարունակուեն ըստ իւրաքանչիւր ազգի պատմական զարգացման, մինչև որ հասնեն բացասականի կատարելագործմանը: Իսկ այդ բացասական կատարելագործման հետևանքն է փորձածից և ակնկալածից յուսահատուելը, ճգնաժամը, և ուրեմն՝ դարձը դէպի Աստուած հակադիր դրական ճանապարհով: Ըստ որում հեթանոս աշխարհն իր բացասական կրօնով աշխարհի և Աստծու գաղափարի մէջ ծփալով, բարու և չարի հակադրությեամբ տարուբերուելով և մեղքերի անգիտությեան և օրէնքի ծանրությեան տակ տքնելով, առաւել և առաւել երկպառակւում է՝ երկությեան մէջ տատանուելով և վերջ ի վերջոյ պէտք է առ Քրիստոս դիմի խաղաղություն ձեռք բերելու համար (համեմատել Բ Կորնթ., Ե 15, 19), որովհետև միմիայն Աստծով կը կարողանայ աշխարհի տէրը դառնալ:

Հին հեթանոս աշխարհի մի մասը հասնելով իր բացասական ճանապարհի ծայրին, իր վախճանը գտել է քրիստոնէությեան մէջ[16*]. իսկ արդի հեթանոս աշխարհն էլ ընթանալով իր բացասական ճանապարհով մաս առ մաս, ըստ իր մասերի պատմական զարգացման մօտենում է իր ճանապարհի վախճանին: Դրանցից նրա՛նք են աւելի մօտիկ իրենց ընթացքի լուծմանը, որոնք քաղաքակրթությեան բարձր միջոցների գործադրությեանն են հասել, ինչպէս է գրաւոր օրէնքը: Բացասական կրօնի այդ բարձրությեանը հասել են եօթը կրօններ. Բրահմանականներն ու Բուդդայականները (հինդուներ),

Կոնձէականներն (կոնֆուցիականներ), Լաւոձականները (չիները), արդի հրեաները, Ղուրանի հետևորդները և Զրադաշտականները: Եւ եթէ յիշենք, որ հին յոյներն ու հռոմէացիները բարձր քաղաքակրթությեան հասնելով, նախքան իրենց բացասական կրօնը գրաւոր կանոնի վերածելը, լքելով մտան ճշմարիտ Աստծու հաղորդակցությեան կամ քրիստոնէությեան մէջ[17*], և համեմատենք այժմեան բացասական բարձրությեան մօտեցած կրօնների հետ, յայտնապէս կը տեսնենք, որ մի ազգի ճշմարիտ աստուածապաշտ դառնալու համար, ճշմարիտ լուսաւորությեան ու քաղաքակրթությեան ընդունակությունն է անհրաժեշտ: Իսկ եթէ քաղաքակրթությեան մէջ հզօրապէս թևակոխող ժողովուրդներ են լինում, որոնք տակաւին յարատևում են իրենց կրօնի բացասական ընթացքի մէջ, դրան ևս նպաստում են բացառիկ ու ժամանակաւոր հանգամանքներ, որպիսիք են քրիստոնեայ աշխարհում բացասական ճանապարհի արդիւնքները թովմայաբար անձամբ փորձող գիտնականների որդեգրած ուղղությունն ու քարոզությունը: Սակայն ընդհանրապէս դարձեալ անուրանալի է, որ քաղաքակրթությեան ու լուսաւորությեան ընդունակների վրայ է իջնում քրիստոնէությեան լոյսը: Այդ երևում է արդէն իսկ երկրագնդի բնակիչների վիճակագրություններից, ըստ որում 1440 միլիոն ժողովրդից հազիւ 440 միլիոնն է քրիստոնէական լոյսով վայելում քաղաքակրթությեան բարգավաճումը, մինչդեռ 1000 միլիոնը դեռևս շարունակում է տքնել ու խարխափել խաւարի ճանկերի ու ճիրանների մէջ[18*]:

Գ

ԱՍՏԾՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԲՆԱԶԱՆՑԱԿԱՆ ՁՆՆՈՒԹԵԱՄԲ

Մարդը տրամադիր է քննել, զննելով հետազօտել ամէն ինչ իր շուրջը և հասկանալ իր կեանքի բոլոր պարագաների գաղտնիքն ու խորհուրդը: Ամէն ինչ քննել ու զննել և ճշմարտությունը ճանաչել ու պահել պատուիրում է մեզ նաև սուրբ առաքեալը (Հռ., ԺԲ 2, Ա Կոր., Բ 10, Բ Կոր., ԺԳ 5, Գործք., ԺԷ 27): Ահա այդ քննությունն իսկ տանում է մեզ դէպի մեր հիմնական հաւատքի ճշմարտությունը, դէպի Աստծու գոյությեան ճշմարտությունը : Մարդկությունն իր բովանդակ

գիտութեամբ նիւրել է այդ քննական հետազօտութիւններին, ձգտել է ամէն հարց ու հանգոյց լուծել և իր զննելի հարց ու խնդիրներին վերջնական պատասխան տալ, ուղիղ աշխարհայեցողութիւն ձեռք բերելով իր կենսական ճանապարհի ու հոգևոր խաղաղութեան համար: Սակայն նա իր այդ բոլոր ձգտումների ու տքնութիւնների մէջ չի կարողացել ելք գտնել, որքան էլ վստահութեամբ յենել է իր մտքի հեղինակութեան վրայ:

Մարդ այդ քննութիւնների մէջ մտաւ, մերժելով Աստծու գոյութիւնը. «Անզգամն ասաց իր սրտում, թէ Աստուած չկայ». ասում էր հազարաւոր տարիներ առաջ սաղմոսերգուն (Սաղմ., ԺԳ 1, ԾԲ 1): Մարդիկ սկսեցին նիւթեղէնի մէջ որոնել Նրան, որ նիւթեղէնից վեր է. «կամ կրակին, կամ քամուն, կամ սրընթաց հողմին, կամ աստղաբոյլերին, կամ ջրերի սաստկութեանը, կամ երկնքի լուսատուներին՝ աշխարհի արբանեակներին աստուածներ համարեցին»[1]. Նրանք Աստծու արարչական բարիքների արդիւնքներին էին Աստծու պատիւ վերագրում և իսկական անտեսանելի Աստծուն ուրանում:

Մերժելով Աստծուն՝ մարդն սկսեց մտքի ուժով, բանականութեան հեղինակութեամբ հետամուտ լինել աշխարհի ծագումը բացատրելուն: Բոլոր հին ազգերը, ինչպէս հնդիկները, ասորեստանցիները, եգիպտացիները և այլ ուրիշները, գիտէին արարչութիւնը, սակայն մոլորուելով աստուածգիտութեան մէջ, աշխարհի ծագումը ևս մոլար և հակասական կարծիքների ու տեսութիւնների ենթարկեցին, ըստ որում ընդհանրապէս անցողիկ աշխարհի նիւթը յաւիտենական էին համարում, Աստծուն՝ կարգադրիչ ու կազմող, և հէնց հեթանոսների պակասութիւնն էր, որ Աստծուն չէին ճանաչում ճշմարտապէս:

Հեթանոս գիտնականներն աշխատում էին աշխարհի ծագումը տարրերով բացատրել: Երբեմն ջուրը, նիւթը, օդը և հիւթն էին տարր համարում (Յունական իմաստասէրներ), երբեմն հիւլէն (հիւլէականները, ատոմիստները Քրիստոսից 460 տ. ա.), երբեմն թիւը (Պիւթագորաս), գոյութիւնը (գաղափարական համաստուածեան պանթէիստ Պարմենիդէս Ք. 500 տ. ա.) և եղելութիւնը (Հերակլիտ), երբեմն նիւթն ու ձևը[19*], բայց երբեք չկարողացան իսկական հիմք գտնել, որով կարողանային աշխարհի ծագումն առանց արարչութեան պարզել:

[1] Իմաստ., ԺԲ 2, ԺԴ 21, Եզնիկ, էջ 9, 12-21, 205-241

Եւ ինչպէս որ աշխարհի ծագումը, այնպէս էլ վերջն ու նպատակն անլուծելի է մնում նրանց տեսութեան մէջ:

Հին տեսութիւնների նշանաւոր կէտն այս է, որ նիւթականը մի սկզբնական հիմք էր նկատւում աշխարհի ծագումը բացատրելու համար: Թալեսը մեզ յայտնի առաջին իմաստասէրն է, որ Քրիստոսից 600 տարի առաջ մի սկզբնական նիւթով էր ուզում պարզել բնութեան բոլոր գաղտնիքները: Նրան հետևեցին հետագայի իմաստասէրները, ինչպէս Դեմոկրիտէսը և ուրիշներ: Էպիկուրեանների մէջ զարգացաւ նիւթապաշտութիւնն ըստ ամենայնի. իսկ դրանց հակառակ Ստոյիկները սկսեցին նիւթի հետ ուժի գաղափարը ևս առաջ տանել և բնութեան բոլոր երևոյթները նիւթով և ուժով բացատրել, որովհետև աշխարհում կեանքի գոյութիւնն անուրանալի է, որի գործունէութիւնը լոկ մեռեալ նիւթով անկարելի է բացատրել ու հասկանալ[20*]:

Այսպիսով, հին իմաստասիրութիւնն իր անկատար վիճակով հանդերձ, ժամանակի ընթացքում զանազան ձևակերպութիւն ու փոփոխութիւն ստացաւ և մերթ բանապաշտական (ռացիոնալիզմ), մերթ համաստուածական, (պանթէիզմ), մերթ գաղափարական, (իդէալիզմ), մերթ ոգեպաշտական և մերթ դրանց այլայլութիւնների բովից անցնելով դարձաւ մեր դարի (ԺԹ) նիւթապաշտութիւնը (մատերիալիզմ):

Այս նիւթապաշտութիւնը ձգտում էր լոկ բանական դատողութեամբ ամէն երևոյթ նիւթով ու որոշ օրէնքներով բացատրել, չճանաչելով ո՛չ Աստծուն, և ո՛չ էլ որևիցէ հոգևոր սկզբունք: Գործնական կեանքում ևս ուղղակի թէ անուղղակի այս նիւթապաշտութիւնը ճանապարհ է հարթում էպիկուրեան մարմնասիրութեան համար (տե՛ս բանք ժողովողին)՝ մերժելով հոգևոր առաջադիմութիւնը, գեղարուեստ, գիտութիւն, կրօն ու բարոյականութիւն և մարդկանց մտցնելով վայրենական վիճակի մէջ: Թէև այս կոպիտ նիւթապաշտութիւնից ուզում է հեռու մնալ մեխանիկական մատերիալիզմը և լոկ բնութեան գաղտնիքների լուծմանը նիւրել, սակայն անկարող է իր տեսութիւններով կտրել իր ստեղծած այդ վայրենի գործնական կեանքից: Ուստի և նիւթապաշտական սկզբունքներին նիւրուածները կամայ թէ ակամայ անմտաբար նիւրում են էպիկուրեան եսապաշտութեանն ու զեղխութիւններին[21*], վտանգաւոր և աւերիչ տարր դառնալով պետութեան ու հասարակութեան մէջ:

Բայց նիւթապաշտութիւնն իր մեքենայական տեսութեամբ ևս անկարող է բնութեան սկզբնական նոյնիսկ երկրորդական գաղտնիքների սակաւ մասն անգամ լուծել և մարդկային բանական դատողութեան պահանջին գոնէ մի թեթև գոհացում տալ. ո՛չ Կանտ-Լապլասեան համակարգը՝ աշխարհի ծագման մասին[22*], ո՛չ Լայելինը և ընկերներինը՝ երկրի ծագման ու կազմակերպութեան, ո՛չ Դարուինը՝ բոյսերի ու կենդանիների ծագման առնչութեամբ, և ո՛չ էլ Կանտը, Սպենսերը, Լետուրնօն, Լուբբոկը, Թէյլորը և ուրիշներ չկարողացան քաղաքակիրթ աշխարհը ծագած համարել որպէս հետևանք վայրենական վիճակի ինքնազարգացման: Նիւթապաշտութիւնը կատարելապէս անկարող է բացատրել, թէ ինչպէ՞ս է առաջ եկել գոյութիւնը, ինչպէ՞ս է ծագել կեանքը, ո՞րտեղից է աշխարհի բազմազանութիւնը և դրա ներդաշնակութիւնը: Որքան էլ նա յենւում է զանազան ենթադրութիւնների վրայ, ինչպիսին են՝ «յաւիտենական նիւթ»[23*], «ուժի պահպանութիւն»[24*], «ամենաիմաստուն պատահականութիւն»[25*] և այլն, դարձեալ չի կարողանում շատ ու շատ հարցեր լուծել: Նա կամայականօրէն ընդունում է, որ եղել է յաւիտենական նիւթ, բայց ո՛չ նիւթի էութիւնը գիտէ, և ո՛չ կարող է այդ նիւթը ցոյց տալ: Նա չգիտէ, թէ ի՞նչ է ուժը, ինչպէ՞ս է առաջացել գիտակցութիւնը, ի՞նչ նշանակութիւն ունի գոյութիւնը կամ առհասարակ աշխարհը, զգացողութիւնը, ազատութիւնը, պարտքը, բարոյականութիւնը, կամքը կամ ընդհանրապէս ի՞նչ է և ինչո՞ւ համար է մարդկութեան կեանքն ու գործունէութիւնը: Կամ թէ ինչպէ՞ս է զգայութիւնների և զգացողութիւնների բազմազանութիւնից առաջ գալիս մարդու գիտակցութեան միութիւնը. կամ նիւթը ինչպէ՞ս է յաւիտենական, երբ չունի գիտակցութիւն և միայն մարդու մէջ է գիտակցութեան գալիս:

Եթէ նիւթը յաւիտենական է, ապա ինչպէ՞ս կարող է յաւիտենական նիւթից արարուած աշխարհը առաջանալ: Բնագիտութիւնը հաստատում է, որ աշխարհը սկիզբ է ունեցել. ուրեմն ինչպէ՞ս է այդ սկիզբը եղել: Նիւթի շարժումո՞վ: Ապա որտեղի՞ց է նիւթը, և որտեղի՞ց է շարժումը,[26*] կամ ո՞վ է շարժողը[1]:

[1] «Եւ ովքեր առողջ միտք ունեն՝ նրանք պարտաւոր են փառաւորել ոչ թէ շարժողներին, այլ շարժողին, պարտաւոր են զարմանալ ոչ թէ արբանեակների վրայ, այլ՝ կառավարչի, ոչ թէ քայլողների վրայ, այլ՝ քայլեցնողի, քանզի նրանցից իւրաքանչիւրի փոփոխմամբ իսկ ցոյց է տրւում, թէ մէկը կայ, որ փոփոխում է նրանց» (Եզնիկ, էջ 9, 11): «Որովհետև

Նիւթապաշտները ընդունում են, թէ 70-ից աւելի տարրեր կան, բայց չգիտեն, թէ ինչպէ՞ս են դրանցից մարմիններ առաջացել: Ասում են, թէ երկիրը մի մեծ գնդակից կտրուած մարմին է[1], բայց բոլորովին անզօր են բացատրել, թէ ինչո՞ւ արեգակի վրայ, որ մեր երկրի մասն է համարւում, չկայ ոչ թթուածին և ոչ բորակածին: Խօսում են տարրերի և հիլէի մասին, բայց չգիտեն, թէ ի՞նչ է մէկն ու միւսը: Կամ ինչպէ՞ս կարելի է լոկ նիւթով բացատրել օրինակ առաձգականութիւնը, ծանրութեան ուժը, մագնիսականութիւնը, կցողութիւնը և էլեկտրականութիւնը, որ իբրև մի շանթ մի ակնթարթում 80 հազար մղոն է գնում, ըստ որում դրանք անտեսանելի են ու գրեթէ անշօշափելի, այլ միայն իրենց արդիւնքով ճանաչելի: Եւ մինչև այժմ ո՞վ կարողացաւ Յոբի տւած հարցերին պատասխանել աւելի՝ քան Յոբը. «Ո՞րն է այն երկիրը, ուր լոյսն է օթևանում», «Շանթեր կարձակե՞ս, ու կը սլանան դրանք, և կասե՞ն քեզ, թէ ինչ է սա» (ԼԸ 19, 35): Որպէսզի կարողանան բացատրել, թէ ինչպէ՞ս է լոյսը մեզ հասնում, հնարեցին, թէ բովանդակ գոյը լիքն է եթերով, սակայն բնաւ չկարողացան հաստատել իրենց ասածը կամ որոշել, թէ ի՞նչ է եթերը: Ենթադրում են, թէ լոյսը ալիքների ծածանումով է գալիս, բայց չգիտեն, թէ այդ ալիքները նիւթի ազդեցութե՞ն տակ են առաջ գալիս, թէ՞ նրանից անկախ: Կենսաբանական հետազօտութեամբ հասկանում են գործարանաւոր մարմինների իւրաքանչիւր անդամը, սակայն երբեք չկարողացան հասկանալ, թէ ի՞նչ է կենդանութիւն ասած բանը: Ուրեմն նիւթապաշտութիւնը չի կարող իր ուղղութեամբ և սկզբունքներով ոչ միայն հիմնական, այլև շատ երկրորդական հարցեր լուծել իր երևակայած հեղինակութեամբ[27*]:

Անթիւ և անհամար այսպիսի հարցեր կուտակւում են նիւթապաշտութեան առաջ և անլուծելի մնում, ուստի և իրաւապէս ասում է լորդ Սոլսբէյին, «որ մենք ապրում ենք գիտութեան փոքրիկ լուսաւոր կղզու վրայ և շրջապատւած ենք ամէն կողմից անթափանցելի գաղտնեաց ընդարձակ անյայտ տարածութեամբ». ըստ որում «աշխարհի մէջ ամէն ապրող կախւած է յաւիտենական Արարչից և ամենախնամ Էակից»: Թերուսը բնագիտական վայրիվերոյ տեղեկութիւններ

ինչ շարժւում և փոփոխւում է՝ էական չէ, այլ կա՛մ եղել է ինչ որ մէկից կամ ինչից, և կամ կեանքի է կոչւած չգոյութիւնից» (Եզնիկ, էջ 12):

[1] Հմմտ. Եզնիկ, էջ 131-192:

ստանալով կարծում է, թէ շօշափելի փաստերով նոր համոզմունք է ձեռք բերում, հակառակ իր աստուածատուր հաւատքին, մինչդեռ լաւ զննելով պարզ տեսնում է, որ այդ ամէնը խաբուսիկ է և ոչ մի նիւթական կամ նիւթապաշտական տեսութիւն չի կարող ոչ միայն աշխարհի գաղտնիքները պարզել, այլև մէկ գիւտով տասնեակ գաղտնիքներ է երևան հանում, մինչդեռ մեր շօշափելի իրերի մասին չի կարողանում բացատրութիւն տալ: «Մի քիչ իմաստասիրութիւնը հակում է մարդու միտքը դէպ անաստուածութիւն, բայց խորին իմաստասիրութիւնը տանում է մարդու միտքը դէպի կրօն». ասում է լորդ Բէյգընը:

Նիւթապաշտութեան անզօրութիւնն է պատճառը, որ նրա դպրոցից ելած շատ գիտնականներ ջանացին փրկել իրենց դպրոցը, ճանաչելով նիւթի հետևում նաև հոգու նշանակութիւնը: Այս ձգտումից առաջացաւ ոգեպաշտութիւնը (իդէալիզմը), որ նիւթի տեղ հոգին է դնում և կամ հոգու նման մի «անյայտ» իրողութիւն: Սակայն այդ ուղղութիւնը ևս շարունակեց ընթանալ իր շաւղով, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ Քրիստոսից 500 տ. ա. Պարմենիդէսի գաղափարական համաստուածութիւնը (պանթէիզմը), որ իսկապէս չի տարբերւում նիւթապաշտութիւնից և նմանապէս անկարող է ոչ միայն սկզբնական, այլև երկրորդական պատճառական գաղտնիքներ լուծել[28*]:

Թէ՛ նիւթապաշտական, և թէ՛ ոգեպաշտական ուղղութիւնները և նրանց բոլոր ճիւղաւորութիւնները չկարողացան իրենց սկզբնական կազմակերպութեամբ փոքրիշատէ աչալուրջ քննադատութեան դիմանալ: Խոհական բոլոր հետազօտութիւնները հասնելով աշխարհի ծագման քննութեանը, միշտ աւելի ու աւելի անհրաժեշտ էին դարձնում Աստծու գոյութեան ճշմարտութիւնը: Բայց և այնպէս հեշտ չէր այդ դպրոցներում դաստիարակւած անձանց համար թողնել իրենց մաքառման դաշտը և միանգամից անցնել հաւատքի շրջանը: Եւ ահա դրանցից շատերը դառնալով դէպի կրօն՝ ընկան պանթէիզմի մէջ՝ ենթադրելով, որ իբրև թէ ամենից առաջ եղել է «բացարձակ գոյութիւնը», որ անիրական է և իրականի հիմք, անգիտակցական է և գիտակցութեան հիմք, ընդհանուր է և մասնաւորի հիմնաքար: Այդ «բացարձակը» մէկ գիտնականի մօտ կոչւում է «գոյացութիւն», միւսի մօտ «ես» կամ «անձն», երրորդի մօտ «չէզոք անտարբերութիւն» և կամ «հակադրութիւնների միութիւն»[29*], բայց և այնպէս աշխարհի սկիզբը չեն կարողանում բացատրել և

երևան են հանում բազմաթիւ նոր հակասութիւններ, որոնք վերևի զուգադիպութիւնների մէջ ակներև են: Այդ ի՞նչ բացարձակ գոյութիւն է, որ իրական չէ. ինչպէ՞ս, ի՞նչ նոր պատճառական օրէնքով կարող է անիրականը (ոչինչը) իրական (ինչ) առաջ բերել կամ ուժ առաջացնել[1]: Նա ոչինչ է և պէտք է ու կարող է ամէն ինչ լինել. ինքը ոչինչ է, բայց և չի կարող ոչ վերջնական և ոչ անվերջ լինել. ինքը բոլոր երևոյթների բովանդակութեան անորոշ ամբողջութիւնն է, բայց և բացարձակ անորոշութիւն լինելով՝ ոչինչ է: Ահա հակասութիւններ, որոնց եթէ հետևենք, անթիւ հակասութիւններ երևան կը հանենք: Մէկից նիւթապէս ելնում են շատ իրեր. այդ մէկը անորոշ է, բայց որոշ իրեր են ելնում նրանից. ինքը ցածր է, բայց բարձրը նրանից է դուրս գալիս և այլն և այլն: Պարզ է, որ **համաստուածութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գիտնականների օդային կառուցումը:**

Ցիրաւի օդային կառուցում. չէ՞ որ մարդ տարբերում է իր անձը կենդանիներից ու բոյսերից, մինչդեռ ըստ այդ տեսութեան ամենքն էլ մի մաս կամ մի ստորոգութիւն են «ընդհանուր գոյութեան»: Եւ եթէ ամէն մի անհատ մի մաս է «ընդհանուր գոյութեան և միութեան», ապա ի՞նչ բան է գոյութեան կռիւը, անհատի կռիւը ամենքի դէմ և նրա տիրապետութիւնը բնութեան վրայ: Ինչո՞ւ ամէն մի զգայական մարմին ինքնըստինքեան մի սահմանափակ ամբողջութիւն է ճանաչում և ամենքից տարբերւում իր բովանդակ գործունէութեան մէջ: Կամ ինչպէ՞ս է նա միւսներից զատ մտածում, ընդհանուր գոյութիւնից տարբերւում, մարմնից զանազանւում, կամ ինչպէ՞ս է հին սերնդից ընդունակ նոր սերունդ առաջանում. հանճար երևում: Եւ որքան ծիծաղելի է լսել, որ ընդհանուր բացարձակ գոյութիւնը անգիտակցական է, իսկ մենք գիտակցութիւն ունենք. նա չի մտածում, իսկ մենք մտածում ենք. օրէնքի, գաղափարի և իմաստութեան մասին մենք ենք մտածում, իսկ այդ բացարձակը՝ ոչ: Եւ եթէ այդ ցածր բացարձակից մենք զարգանալով բարձրանում ենք, արդեօք ո՞րն է մեր բարձրանալու սահմանը և ի՞նչ վիճակ պէտք է ունենայ աշխարհի անխուսափելի վերջը. պէտք է վերստին ոչնչանանք, ուրեմն յաւիտենական չէ նիւթն ու իր յատկութիւնը և նպատակայարմար ձգտումը. պէտք է և մնա՞նք այս

[1] Եզնիկ, էջ 27, 32:

գիտակցութեան մէջ. ուրեմն ա՞յլ էր նիւթը նախքան մեր լինելը և մեզանով ո՞ւրիշ է դարձել:

Բարոյական հակասութիւնը ևս մեծ է, որովհետև չարն ու բարին միաժամանակ բացարձակից են. հապա ինչպէ՞ս է մէկը բարի նպատակ դնում, միւսը՝ չար, կամ ինչպէ՞ս են իրար հետ յարմարւում զանազան մարդկանց տարորոշ նպատակները, կամ ո՞րն է ճիշտ՝ հոռետեսութիւնը թէ՞ լաւատեսութիւնը. կամ ո՞րը պէտք է վերջ ի վերջոյ յաղթանակ տանի՝ բարին, թէ՞ չարը, իսկ եթէ միշտ պէտք է մնան, մի՞թէ աշխարհն այսպէս անվերջ է:

Այսպիսով ո՛չ նիւթապաշտութեան անտեսանելի նիւթը, և ո՛չ համաստուածութեան «բացարձակ գոյացութիւնը» չեն կարող աշխարհի սկիզբը բացատրել և Աստծու գոյութեան գաղափարի անհրաժեշտութիւնից բաժանել: Աշխարհի ծագման բացատրութիւնը պահանջում է անպատճառ ճանաչել Աստծու գոյութիւնը, մինչդեռ Նրան մերժողներն իսկ աստուածային կարողութիւններն այսպէս թէ այնպէս վերագրում են կամ «նիւթին», կա՛մ «բացարձակ գոյացութեանը», կա՛մ «ոգևոր նիւթին», կա՛մ «ոգևոր հիլէին», կա՛մ բնութեանը, որոնք իսկապէս իշխան չեն, այլ մտացածին, գոյութիւն չեն, այլ արարած աշխարհի որևիցէ յատկութիւնը, ինչպէս կրակի յատկութիւնն է այրել: Այդ բոլոր մոլորութիւնների հիմքը բառախաղն է:

Հին ժամանակ այդ տեսութիւններն արդէն բաւական զարգացած էին, ուստի և Սենեկան իր ժամանակի բնապաշտների դէմ ասում էր. «Չկարծես, թէ Աստծու անունը փոխեցիր, քանզի բնութիւնն այլ բան չէ, քան Աստուած և աստուածեղէն բան, որ ներկայ է բովանդակ աշխարհում և նրա բաղադրամասերում»[30*]: Այս խօսքերը վերաբերում են բոլոր նիւթապաշտներին, որովհետև դրանք ինչ ձևակերպութիւն էլ տան իրենց տեսութեանը, շատ հարցեր պարզեն, թէ լռելեայն անցնեն, այդ միևնոյն է. նրանք այսպէս թէ այնպէս ստիպած են նիւթի հետ ընդունելու նաև աստուածային զօրութիւն, կամ աստուածային կարողութիւն, կամ աստուածային բանականութիւն և կամ աստուածային յատկութիւն՝ զանազան անունների ու սահմանումների ներքոյ: Իսկ այդպիսի տեսութիւնները հիմք ընդունելով անհրաժեշտապէս գալիս ենք դարձեալ դէպ այն ճշմարտութիւնները, որոնք տրուած են մեզ աստուածային յայտնութեամբ: Աստուածային այդ յայտնութիւնը տանում է մարդուն դէպ այդ

եզրակացութիւնը, որ աշխարհի ստեղծողն ու կառավարողն ամենակարող բանականութիւնն է, ինչպէս պնդեց իր ժամանակի նիւթապաշտների դէմ Անաքսագորաս իմաստասէրը Քրիստոսից 500 տ. ա.[31*]:

Արդ, բնազանցական, (ինչպէս եւ ամէն քննութիւն) սկսում է իսկապէս կասկածելով ունեցած հասկացութեան վրայ և առաջացած հարցերին նոր լուծում որոնելով: Այդպիսի քննութիւնը գերագնահատում է իր բանականութեան մասին մեծ կարծիք ունեցողը, ով համոզուած է, որ իր մտածողութեամբ կարող է աշխարհի բոլոր գաղտնիքների ու խորհուրդների մէջ թափանցել և ամէն ինչ իմանալ: Մարդկութիւնն այդ ընթացքը բռնեց և բնականաբար հակւելով դէպի տեսանելին և զգալին, ձգտեց նիւթական մեքենայական բացատրութիւն տալ բոլոր երևոյթներին և նրանց սկզբնական ծագմանը: Ինչպիսի ուղղութիւն էլ նա բռնեց այդ ընթացքում, միշտ կա՛մ նիւթապաշտական տեսութիւնների մէջ ընկաւ, և կա՛մ նիւթապաշտական ու կրօնական սկզբունքների համադրութիւնների մէջ խարխափեց: Այդպիսի համադրութիւններն են համաստուածութիւնը, ոգեպաշտութիւնը, բնապաշտութիւնը, գաղափարապաշտութիւնը և այլն: Այդ բոլոր տեսութիւններն իբրև նորութիւններ ժամանակաւորապէս գրաւեցին մարդկանց մտքերը, թէև դրանք իսկապէս հնաւանդ նորութիւններ են՝ նոր ձևի տակ ձևաւած: Դրանք ևս հնացան. մարդիկ չեն կարող թէ՛ այդ տեսութիւնները թողնել, և թէ՛ նոր ելք չորոնել, բայց նոր ելք էլ չի մնացել որոնելու: Այդ հին տեսութիւնները լաւ են միմիայն նրանց համար, որոնք լաւ են համարում հանդերձեալ կեանք չճանաչել, անմահ չնկատել և մի խօսքով Աստծուն մոռացութեան տուած լինել, իրենց խղճմտանքի բողոքը խեղդելու համար: Դրա հետևանքը կը լինի կեանքի թշուառութեան զգացումը, յոռետեսութիւնը և հետևաբար ոչնչութեան նիրելը: Այդ էլ նոր չէ և Բուդդայականութեան մէջ իբրև անհաճոյ բան ճանաչւում է փորձնականապէս[32*]: Այլևս ուրիշ ճանապարհ չի մնում ո՛չ աշխարհի ծագման, և ո՛չ էլ նրա վերջին վիճակի մասին մի որոշ հասկացողութիւն ձեռք բերելու կեանքի մեծ հանգոյցի խաղաղութեան համար: Ո՞ւր դիմի զննողը, որտե՞ղ կայ նոր ելք. որտե՞ղ որոնել մեր հոգու այդ անընկճելի պահանջի գոհացումը: Ո՛չ մի տեղ. ուրիշ տեղ չի մնացել: Սակայն դեռևս հնից մի նորութիւն չի ճաշակւել. այդ «չգիտեմութիւնն» (ագնոստիկութիւն) է, և դրա մէջ սկսեց խարխափել վերոյիշեալ բոլոր զննութիւնների մէջ յուսահատած

գիտնականը: Նա խոստովանում է, որ չգիտէ այն, ինչ որ մերժել է և ինչ որ ձգտել է մտքի ուժով և զգայական շաւղով բացատրել (Սպենսէր): Սակայն դուրս եկաւ Մաքս Միլլէրը, որ քաջութիւն ունեցաւ խոստովանելու անհասանելի Էակի գոյութիւնը: Եւ որովհետև աշխարհի երևոյթների և իրերի փոխադարձ պատճառական կապակցութիւնն անուրանալի է գիտական հետազօտութիւնների մէջ, իսկ այդ մի անհերքելի ապացոյց է այդ պատճառականութեան Ստեղծողի և պահանջողի, այսինքն՝ Աստծու գոյութեան, ուստի «չգիտեմականներն» այնքան կը խարխափեն հին հեթանոսների բացասական ճանապարհի վրայ, մինչև որ Աստծու լոյսի շողը նրանց վրայ ևս կը ծագի, ինչպէս Քրիստոսի գալստեամբ ծագեց հեթանոս աշխարհի վրայ[33*]:

Եւ այս յիրաւի այսպէս է, որովհետև առաջ, ըստ հին «գիտեմականների» (գնոստիկներ), ասում էին, թէ գիտենք ամէն ինչ, առանց Աստծու յայտնութեան: Քննեցին ամէն ինչ և տեսան, որ սխալւած են. այժմ էլ ասում են, թէ չգիտենք ո՛չ սկզբի, և ո՛չ վերջի մասին, իսկ չգիտենալ խոստովանելը նշանակում է, որ մարդկային բանականութիւնը չի կարող սոսկ իր ուժով, Աստծուն չճանաչելով կամ առանց Աստծու յայտնութեան աստուածային գործերի խորհուրդները գտնել և հասկանալ: Ս. Գրքի կրօնական սկզբունքն արդէն իսկ այդ է, որ ճշմարիտ մարդը պէտք է զգայ իր անզօրութիւնն աստուածային խորհուրդների մէջ թափանցելու, խոնարհւի ու իմանայ, որ ինքը մի խեղճ փոշեհատիկ է Ստեղծողի անսահման գործերի մէջ և ապա Նրանից ստանայ իր հերքին տոգորումների խաղաղ լուծումը: «Չգիտեմականներն» արդէն արել են առաջին քայլն ու խոնարհւել:

Բայց մարդկային հոգու առաջադիմութիւնը չի կարող չիմանալով գոհ մնալ. նա լուծում է ուզում իր կոչման, հետևաբար, և իր ծագման ու վերջի, իսկ նրա բանականութիւնն ասում է՝ «ես անզօր եմ բացատրութիւն տալ»: Ուրեմն կը մնայ դիմել դարձեալ առ Աստուած և Նրա յայտնութեամբ ամէն ինչի պատասխանը ստանալ: Մարդու անզօրութեան խոստովանումը հիմնական քայլն է Աստծու գոյութեան խոստովանութեան և քրիստոնէական հաւատքի: Սակայն ոչ միայն «չգիտեմութեամբ» է մարդ գալիս դէպի այդ վերջին եզրակացութիւնը և հաւատքի անհրաժեշտութիւնը, նա մինչև անգամ նիւթապաշտութեան կատարեալ ուսումնասիրութեամբ ևս գալիս է և կամ պէտք է անպատճառ գայ

դէպի նոյն կէտը: **Ուրանալ այն ճշմարտութիւնները կամ անգիտանալ այն ամենը, ինչ որ մեր փորձերին չի ենթարկւում, դեռ իրաւունք չի տալիս ուրանալու նաև աշխարհի գոյութիւնը:** Զուրանալով աշխարհի գոյութիւնը և բացատրելով նրա բոլոր երևոյթներն ըստ նիւթի «բնայատուկ օրէնքների», «չգիտեմականը» կամ թէ նոյնիսկ նիւթապաշտը ստիպւած է ընդունելու և վարդապետելու նիւթի այդպիսի յատկութիւնների և օրէնքների յաւիտենականութիւնը: Նա նոյնպէս ստիպւած է խոստովանելու, որ բնական ընթացքի նպատակայարմար և առաջադիմական ձգտումը՝ նիւթից մինչև երկրաւոր գերագոյն արարած մարդը, նոյնպէս յաւիտենական է: Իսկ այդպիսի սկզբունքներից արդէն ինքնըստինքեան հետևում է, որ ապագայում պէտք է լինի կեանքի մի կատարեալ վիճակ, որ պսակաւորի աշխարհի ընթացքը, և որ մարդու նիւթի բանական և գիտակցական կեանքը նոյնպէս պէտք է ըստ իր ընդհանրական հերքին ձգտման անմահ լինի և հանդերձեալ երանութիւն ունենայ. որովհետև այդ նիւթապաշտները երբեք չեն կարող ժխտել անձնաւորութիւնների իրականութիւնը, թէև չեն էլ կարողանում բացատրել, թէ ինչպէ՞ս ընդհանուր նիւթից մասնայատուկ անձնաւորութիւնը դառնում է դիմաւոր: Անշուշտ այստեղ մի ուրիշ բան կայ, որ զատորոշում է մարդուն աշխարհի ընդհանուր էութիւնից, և մարդ գիտակցում է, որ ինքը տարբեր է նիւթից իր էութեամբ: Բայց եթէ ընդունենք էլ, որ մարդ միմիայն նիւթ է, հոգին նիւթեղէն է, դարձեալ պէտք է գանք այն եզրակացութեան, ինչպէս ասացինք, որ մեր կեանքի ընթացքը դիմում է դէպի կատարելութիւն. այդ է մեր նիւթի ձգտումը, իսկ նիւթը երբեք չի զրկւում իր ձգտումների առաջադիմութիւնից ըստ արդի գիտութեան[1]: Մանաւանդ, որ նիւթապաշտների «գոյութեան կռւի» տեսութիւնը ցոյց է տալիս, որ մարդը կռւում է իրականութեան դէմ, նա

---

[1] «Եթէ գիտութիւնն անկրօն կամ հակակրօնական ընթացք է որդեգրում, ասում է Ռընանի քննադատ պրոֆեսոր Դոյտինգէրը, նա այդ անում է ոչ թէ այն պատճառով, որ իբր թէ գիտութիւնն ու կրօնն իրար հետ չեն հաշտւում, այլ այն պատճառով, որ այդ գիտութիւնը կորցրել է իր դիրքն ու սկզբունքները կամ դրանց ճանաչողութեանը չի հասել: Մեր ժամանակի մի մեծ սխալն է, որ կարծում է, թէ գիտութիւնն ու կրօնը բացարձակապէս իրար հակառակ են: Ով որ ասում է, թէ իմանալու համար պէտք է թողնել հաւատքը, իսկ հաւատալու համար պէտք է մերժել գիտութիւնը, նա նոյնքան սխալ գաղափար ունի թէ՛ հաւատքի և թէ՛ գիտութեան մասին: Եթէ գիտութիւնը կրօնի դէմ է խօսում, նա այդ անում է ոչ թէ գիտական հիմնաւորութեամբ, այլ գիտական հիմնաւորութեան բացակայութեամբ: Ոչ թէ գիտութիւնն է կրօնի դէմ մաքառում, այլ՝ տգիտութիւնն ու անգիտնականութիւնը»[34*]:

գիտակցական կռիւ է մղում և այդ կռիւը չի վերջանում նրա մահով. ինչո՞ւ. որովհետև նիւթի ձգտումը յաւիտենական լինելով՝ երևում է այդ գիտակցական կռւի մէջ, և ուրեմն այսպէս թէ այնպէս պէտք է յաղթանակի: Եւ ահա կեանքի պսակը նաև նիւթապաշտական եզրակացութեամբ կը լինի անձի յաւիտենական կեանքը և երանութիւնը, որ միմիայն Նրա մօտ կը լինի, Ով յաւիտենական Կեանք է, Երանութիւն է և Գիտակցութիւն Իր ինքնաբաւութեամբ[1]:

Դ

ԱՍՏԾՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՄԲ

Համաստուածութիւնը (պանթէիզմ), նիւթապաշտութիւնը (մատերիալիզմ) և բանապաշտութիւնը (ռացիոնալիզմ) ինչ ուղղութիւն էլ որդեգրեն, ինչ խառնուրդ ու համադրութիւն էլ կազմեն, ինչպէս տեսանք, անզօր են ոչ միայն հիմնական, այլև երկրորդական հարցերը պարզել, հակառակ այն բանին, որ մարդու բանականութիւնը զգաց իր անզօրութիւնը և խոստովանում է, թէ ինքը սոսկ իր ուժով անկարող է աստուածային գաղտնիքներն առանց Աստծու յայտնութեան հասկանալի դարձնել, այսուհանդերձ այդ ուղղութիւնների ազդեցութիւնը դեռ մնում է իրական նիւթական աշխարհով զբաղող գիտութիւնների մէջ, որովհետև իւրաքանչիւր գիտութեան մի ճիւղն իսկապէս միակողմանի է, զբաղւում է իրականի մի որևիցէ հարցով և հիմնւում է փորձառականի վրայ: Այդպիսի ընթացքը օգտակար է, քանզի տոգորելով այդ ընթացքի մէջ, խելահաս ուսումնասիրողն ի վերջոյ դարձեալ գալիս է այն եզրակացութեան, որ իր իմացածը մի չնչին մանանեխի հատիկ է աստուածային անհասանելի գործերի խորհուրդների բազմութեան մէջ և որ իր ուսումնական մտատանջութիւնների պսակն ու խաղաղական հանգիստը հաւատքն է և Աստծու յայտնութեան ընկալումը:

[1] Տե՛ս Գոլուբինսկի. Աստծու իմաստութիւնն ու բարերարութիւնը աշխարհի և մարդու վիճակների մէջ. Մոսկւա, 1894 (ռուսերէն):

Սակայն իւրաքանչիւր այդպիսի գիտութիւն շեղող ազդեցութիւն էլ է թողնում իր մակերեսային ուսումնասիրողի կամ թերուսի վրայ, որը և միակողմանի ու անուղղակի զգացողութեամբ ընկնում է նիւթապաշտական ու բանապաշտական ընթացքի մէջ և աշխատում է ամենայն ինչ իր բանականութեան հեղինակութեամբ, իր ինքնադատաստան անձնական օրէնքներով կամ քմահաճութեամբ հասկանալ ու բացատրել: Այնուհետև նա ամէն հարցի վրայ, եկեղեցու, ուսման, հասարակական կեանքի, պետութեան, ընտանիքի և անհատի ու նրանց յարաբերական խնդիրների վրայ խօսում է հեղինակաբար, դատում է կամայականօրէն, անձնական զգացողութեամբ, առանց օրինաւոր հիմքի ու սկզբունքի, սակայն յանուն իր չգիտեցած գիտութեան: Եւ այս մոլար ու մոլորեցուցիչ ընթացքը ոչ միայն իր գործաւորներին ու իր ասպարէզում ընթացողների կեանքն է խորտակում ու թունաւորում, այլև լուսաւորութեան ու գիտութեան բարձր դրօշակի աստղով շլացած և գիտութեան աղբիւրի վճիտ ջրին պապակող բազմութեան կեանքն ու գործունէութիւնը, աշխատանքն ու նպատակը պղտորում, գլորում դառնութեան վիհի մէջ:

Քանի որ այդ մոլորեցուցիչները մարմնասիրական ճանապարհն են գոհացուցիչ համարում իրենց անձնական կեանքի հեշտութեան համար, այդ իսկ պատճառով չեն ճանաչում Աստծու և աստուածային հեղինակութիւնը կա՛մ սրտով, կամ ուղղակի արտայայտելով: Ուղղակի ուրանում է Աստծու գոյութիւնը նա, որ լաւ է համարում իր անօրէն կեանքի և ինքնարդարացման համար Աստծու չլինելը. իսկ նա, ով սրտով մտատանջութիւնների մէջ դեռևս տնքում է ու դեգերում. այդ տքնութեան հետևանքն էլ կամ բարեբաստիկ է լինում, այն է՝ դարձ դէպի ճշմարտութիւն, կամ չարաբաստիկ, այն է՝ գլորում դէպի խարխափանքի ճանապարհը: Երկու դէպքում էլ սիրտն առանձնայատուկ տեղ է զբաղեցնում: **Ինչպէս մարդու սիրտն է, այնպէս և իր Աստուած,** որովհետև սիրտն է մարդու կեանքի ուղղութեանը զարկ տալիս, կամքը գործում է, իսկ միտքը կառավարում ու ղեկավարում: Սրտի բարոյական զարկի ծռութիւնը մոլար ընթացք է տալիս կամքին ու մտքին և խելագար շարժման մէջ դնում մարդուն: «Սրտից են դուրս գալիս չար խորհուրդները», ասում է Քրիստոս (Մատթ., ԺԵ 19, Ղուկ., Զ 45):

Տեղին չէ մի առ մի վերլուծել այդպիսիների կեանքը, դատողութիւնն ու գործունէութիւնը. մենք միայն հետամուտ կը լինենք իրական աշխարհի գիտական

ուսումնասիրութեան հիմնական մասերին, որոնք հաստատում են Աստծու գոյութեան Ճշմարտութիւնը, և այնուհետ մեզ կը մնայ բանապաշտութեան (ռացիոնալիզմ) մէջ յետադիմաբար ընկնողներին ասել. «Դուք ըստ մարմնի էք դատում» (Յովհ., Ը 15-19):

Իրական աշխարհի երևոյթներով զբաղւում է ընդհանրապէս բնագիտութիւնը, որ ըստ բովանդակութեան վարում է դէպի նիւթապաշտական (մատերիալիզմ) **աշխարհայեցողութիւն. տրամաբանական կամ տեսական գիտութիւնները տանում են դէպի գաղափարական** (իդէալիզմ) **աշխարհայեցողութիւն:** Երկուսի վրայ են հիմնւած թէ՛ լեզուն և թէ՛ մարդը, ըստ որում բարոյաբանութիւնը միացնում է այդ երկուսին ու հաշտեցնում մարդու մէջ: Կատարեալ գիտութիւնն այդ երեք գիտութիւնների մէջ է[35*]. թերուսութիւն է դրանցից մէկնումէկին նւիրելը: **Մտնենք ուրեմն այդ գիտութիւնների հիմնական մասի շրջանի մէջ և կը տեսնենք, որ Աստծու գոյութիւնը դրանց անխուսափելի եզրակացութիւնն է**[36*], մանաւանդ որ գիտութեան հիմքը Ադամով եղաւ, երբ նա սկսեց անուն դնել կենդանիներին, մշակել երկիրը, տիրել ու կերակրւել (Ծննդ., Ա 28-30, Բ 19-20, 23, տե՛ս և Գ. Թագ., Ե 13):

Հետամուտ լինել աշխարհի երևոյթներին ու ճանաչել նրանց փոխադարձ յարաբերութիւնը, անմիջական պատճառներն ու օրէնքները գիտութեան գործն է, մարդու աստւածադիր առաջադիմութեան սահմանն է, որով պէտք է կարողանանք տիրապետել բնութիւնը: Մեր գիտութեան շրջանից դուրս են մնում այն հարցերը, որոնք սահման են դնում մեր հետազօտութեանը, և այդ իսկ հարցերի մէջ է իւրաքանչիւր գիտութեան վերջին եզրակացութիւնը: Այդպիսի շատ հարցեր ի դէպ արդէն յիշւեցին նախընթացում, իսկ այժմ առաջ բերենք գիտութեան սահմանից դուրս մնացող, բայց հետազօտելի կարծւած մի քանի էական խնդիրներ՝ փոքր ինչ մանրամասնօրէն:

1. Հնուց բնագիտութիւնը զբաղւելով տարրերի զանազան բարդութիւններով, ձգտում էր այդպէս լուծել զանազան երևոյթների գոյութեան պատճառը: Բնական էր, որ մարդ ամէնից առաջ զբաղւէր այն ամենով, ինչ որ մօտաւորագոյն կապ ունի իր գոյութեան հետ. դա կեանքն է կամ կենսունակ եղանակներն են: Բնագիտութիւնն ասում է, որ բնալուծական և բնաբանական տարրերը զանազան բարդութիւնների մէջ մտնելով՝ զգայարանական մարմին են

առաջացնում: Լաւ. բայց հարցը դրանով չի վերջանում: Որտեղի՞ց է այն գործունէութիւնը, որով յիշեալ տարրերը բարդւելով առաջացնում են այդ մարմինները: Հներն ու հին իմաստասէրները, ինչպէս Քսենոփանէսը, Էմպեդոկլէսը (500-440 Ք. ա.) և Արիստոտէլը (384 Ք. ա.), այն կարծիքի էին, որ կենսունակ էակները ծագում են ինքնաբերաբար հողից կամ տիղմից: Քրիստոնէական դարերում էլ ոչ ոք չէր կասկածում, որ զեռուններն ու սողունները ծագում են տիղմից և կենդանիների ու բոյսերի նիւթի փտութիւնից[1]: Քրիստոսից մի դար առաջ եղան և իմաստասէրներ, որոնք նկատում էին, թէ սերմ պէտք է լինի, որ առաջ գայ էակը[2]: Արդի բնագիտութիւնն էլ քննելով՝ գտնում է, որ արդէն իսկ միաբջիջ էակները (0,001 միլիմետր մեծութեամբ) դարձեալ կենսունակ բջիջներից են ծագում և չկայ մի էակ, որ կենսունակ սաղմից կամ բջջից առաջացած չլինի: Մանրադէտը (միկրոսկոպ) դեռ առայժմ ցոյց չի տւել, որ մի կենսազուրկ էութիւնից որևիցէ կենսունակ էակ ծագած լինի (Վիրխով, Ալտման, Նեգելի և ուրիշներ): Շատ որոնեցին մի ամենապարզ էակ գտնել. կարծեցին, թէ այդ է պրոտոպլազման (առաջին բաղկանիւթը), սակայն այն բարդ դուրս եկաւ. ապա համարեցին բակտերիան (ձողիկ), բայց այդ էլ բաղկացուցիչ մասեր ունի: Հետևաբար ամենատարրական մոները (պարզուկ) դարձեալ ունի ստորադրեալ մանր կենդանիներ: Սակայն ենթադրենք, թէ սկզբնական նիւթը կենդանութիւն ունի և էակներ է առաջացնում. ապա այդ կենդանութիւնը որտեղի՞ց է և ինչպէ՞ս են նրանից զգայուն էակներ առաջ գալիս: **Կանտը և Դարւինը խոստովանում են, որ կեանքի ծագումը անբացատրելի է երկրի վրայ և անօգուտ են համարում այդ մասին խօսել.** «Պարզապէս անմտութիւն է այժմ կեանքի ծագման մասին մտածել, այդ նոյնն է՝ եթէ մարդ մտածի նիւթի ծագման վերաբերեալ»[3]:

Արդ՝ կենդանութեան պատճառը պէտք է ինքը կենդանի լինի և այդ պատճառն է կենդանի Աստւած, որ Ինքն է կեանքն ու կեանքի պատճառը: Բնագիտական նոյն սկզբունքն են արտայայտում և մեր ս. Հայրերը, միայն թէ յիշում են և ամենի պատճառը. «Զորս նիւթերից ստեղծեց արարածներին, և կարգով յօրինեց տեսանելի և անտեսանելի բաներին և դրանով՝ ցամաքից,

---

[1] Որոգինէս, Ընդդէմ Կելսոսի, Դ 57[37*]:
[2] Լուկրեցիոս, Հարց. 214[38*]:
[3] Դարւինի կեանքը [11], 1887, Գ 18, Կանտ, Երկնքի բնապատմութիւն, էջ 14:

խոնաւութիւնից, ջերմութիւնից և սառնութիւնից յօրինեց մարմինները: Եւ այս չորս նիւթերից արարուեցին ծնունդներն ու դարմանները, որպէսզի երևայ արարչութեան խնամքը»[1]: Միայն թէ մարդուն հոգի տուեց Աստուած՝ փչելով, և ոչ թէ լոկ երկրից ստեղծելով:

2. Կենդանիների ու բոյսերի տեսակները միութիւն ու ներդաշնակութիւն ունենալով հանդերձ՝ ներկայացնում են հարիւր հազարաւոր բազմազանութիւն, ինչպէս բիւրաւոր երկնային մարմինները (Ա Կորնթ., ԺԵ 41): Այլև երկու տերև, երկու կենդանի, ծնող ու ձագ չենք կարող գտնել, որոնք լիապէս իրար նման լինեն: Որտեղի՞ց է այդ բազմազանութիւնը. Արիստոտելը բոլորին մի շարունակական կարգի մէջ է դասաւորում, ընդունելով, որ իրարից են դուրս գալիս, այն է՝ անկենդանականից կենդանականը, անկատարից կատարեալը: Էպիկուրը կարծում էր, թէ բոլոր էակները ծագել են հիւլէների պատահական միաւորութեամբ: Տեսակների փոփոխելն ու փոխակերպելը Լուկրեցիոսի, Պլինիոսի, Թէոփրաստի և այլ իմաստասէրների տեսութիւնն էր[39*]: Քրիստոնեայ հայրերի մէջ ևս պնդում էր այն կարծիքը, որ տեսակները ժամանակի մէջ առաջ են եկել սկզբնական ստեղծագործութիւնից:

Այս միտքը հաստատում են նորագոյն բնագիտութեան նշանաւոր դարուինականները, որոնք տեսակների ծագման երեք հիմքեր են տալիս. դրանք են՝ տեսակաւորումը, որը պէտք է բացատրի ծնողից տարբերուելը, ժառանգաւորումը, որը պէտք է տարբերութիւնների ժառանգաւորումը պարզի, և բնական ընտրողութիւնը, որ պէտք է ցոյց տայ օգտակար փոփոխութիւնների զօրացումը: Այս երեք կէտերը յայտնի էին հների մէջ և նորերից էլ ոչ ոք չի մերժում[2], սակայն դրանցով խնդիրը չի լուծուում: Մի էակ, որքան էլ տեսակաւորուում է, այնուհանդերձ ժառանգական յատկութիւնները մնում են նրա մէջ, ըստ որում թէ՛ հին նկարները, և թէ՛ բոյսերի ու կենդանիների մնացորդները պեղումների մէջ նոյնն են մեր ժամանակի բոյսերի ու կենդանիների հետ: Բայց եթէ նոյնն էլ չլինէին, դարձեալ

[1] Ցաճախ., ԺԴ 32, Դ 29, 49, 295: Տե՛ս և Դանիլևսկու ռուսերէն՝ «Դարուինիզմ» քննաբանական գիրքը[40*], և Գլագոլև. Մարդկային սեռի ծագումը և սկզբնական վիճակը, Մոսկա, 1894:

[2] «Աստուած կենդանութեան նշան է տուել մագնիտ քարին, որ ադամանդն է, և նա կենդանու նման է բռնում երկաթը, և յետոյ Աստուած կենդանութեան նշան տուեց բոյսերին և տունկերին և ապա [ծովի] կենդանական բոյսերին և խեցեմորթերին, և այնուհետ հասնում է չորքոտանիներին». Ցայսմաւուրք[41*]:

հարցը մնում է, թէ ի՞նչն է այդ տեսակաւորման պատճառը: Ժառանգաւորումն էլ ամենքիս յայտնի մի իրողութիւն է. բայց ինչո՞ւ և ինչպէ՞ս է լինում այդ ժառանգաւորումը, մանաւանդ մի գիտակցութիւնից, մի անձից՝ մի ուրիշ գիտակցութիւն, մի ուրիշ անձ ծնելը՝ այդ ևս կարօտ է բացատրութեան: Իսկ օգտակարութեամբ բացատրել փոփոխութիւնների զօրացումը,նոյնպէս անկարելի է, որովհետև ինչպես օրինակ, զգայարանների ծագումը անբացատրելի է մնում, մանաւանդ, որ այդ կէտը ոչ մի կերպ չի յարմարուում բոյսերին, և Դարուինը բուսաբանութիւն չգիտէր, որ նկատէր այդ սխալը (1878-ին Ֆրանս. ճեմարանը նրան բուսաբանութեան բաժնի անդամ ընտրեց, բայց նա այդ ծաղր համարեց):

Այսպիսով, փոխակերպութեան տեսութիւնը մի պատմական դասաւորութիւն է, որի անդամների մէջ մեծամեծ ժամանակամիջոցներ ու ոստիններ են շարժուում. այդպիսի դասաւորութիւնը ոչ մի պատճառական բացատրութիւն չէ բնաւ: Ուստի և ֆրանսիացի Նոդը ու Քատրֆաժը և անգլիացի Էվենը, Միւորա Միլլէրը և ուրիշներ, խոստովանելով դարուինական տեսութեան անհիմն լինելը, ասում են, որ Արարիչը դրել է սկզբնական էակների մէջ հետզհետէ փոփոխուելու մի բնական յատկութիւն ու ձգտում: Այլև ինքը՝ Դարուինը, հրաժարուում է որևիցէ բացատրութիւն տալուց, թէ ինչպէ՞ս է կենդանիների մէջ ոգեկան գործունէութիւն սկսել և որտեղի՞ց. նա այդ որոնումը, ինչպէս և կեանքի ծագումը որոշելու աշխատանքը զուր է համարում: Այդ պատճառով և Դարուինը իր մի նամակով խոստովանում է, որ իր տեսութիւնը դիւրութեամբ տանում է դէպի «չգիտեմականութիւնը» (ագնոստիցիզմ)[1]: Եւ Մ. Միլլէրը այդ «չգիտեմականութիւնն» համարում է առաջին քայլը քրիստոնէական հաւատքի մէջ[2]:

Այսպիսով, ուրեմն, աշխարհի էակների միութեան ու ներդաշնակութեան մէջ առկայ անթելի բազմազանութիւնը մի հաստատուն ապացոյց է Աստծու գոյութեան ու Նրա տնօրինութեան, ըստ որում և մեր սուրբ հայրերը, նկատելով այդ բազմազանութիւնը, առանձնապէս շեշտել են նաև միութիւնն ու ներդաշնակութիւնը[42*]:

[1] Դարուինի կեանքը, I, էջ 281, II, էջ 176:

[2] Տե՛ս Մյուլլեր, Մտածողություն, էջ 95:

3. Երկրի բոլոր կենդանիների մէջ ամենաբարձրն ու կատարեալը մարդն է, որ ունի իր մէջ բոյսի աճեցողութիւնը և անասունի զգայականութիւնը, մինչդեռ միւս կողմից երկրաւորների ու երկնաւորների միջին տեղն է զբաղեցնում: Մարդը նման լինելով երկնաւորներին՝ ունի նաև մեծ տարբերութիւն: Արիստոտելը, նրանից յետոյ և քրիստոնէական հայրերը մարդուն համարում են բանական կենդանի, որ ուրեմն միմիայն իր բանականութեամբ է տարբերւում անասուններից[43*]: Անասուններին համեմատելով մարդու հետ՝ գտնում ենք ինչ որ նմանութիւն, սակայն ոչ ամբողջական նմանութիւն: Նոյնիսկ արտաքին նմանութիւնը կորցնում է իր ազդեցութիւնը, երբ ի նկատի ենք ունենում այնպիսի նշանաւոր ազդեցութիւններ, որպիսիք են ուղիղ կանգնելը[44*], երեսի ինքնուրոյն տեսքը, գանգի առանձնայատկութիւնը, կմախքի յատուկ կազմութիւնը և մանաւանդ լեզուն, որի ծագումը զուտ հոգևոր է և մարդու ամենամեծ տարբերութիւնն է: Այս խոստովանում են այնպիսի հոչակաւոր գիտնականներ, որպիսիք են Մ. Միլլէրը, Հուբերը, Հիքսէլը, Կուիէրը, Ալ. Ֆ. Հումբոլդը և ուրիշներ[45*]:

Արտաքինից անցնելով ներքին կեանք՝ տեսնում ենք, որ բանականութիւնը տարբերութեան մեծ խտրութիւն է դնում մարդու և կենդանու մէջ: Անասունը միայն խելք ունի, իսկ մարդը բանականութիւն. անասունը դատում է իր տեսած առարկաները կապակցելով ու տարբերելով միայն, իսկ մարդը՝ վերացարկելով և ընդհանրացնելով. անասունը գնահատում է առարկան ըստ օգուտի ու վնասի, իսկ մարդը հասկանում է պատճառականութիւնը. անասունը գիտակցում է մի որևիցէ իր, իսկ մարդն ինքնագիտակցում է. անասունը չի առաջադիմում իր բնազդական գործողութիւնների մէջ, իսկ մարդն առաջադիմում է գիտակցաբար, անասունն ունի բնազդ, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ նպատակայարմար արարք առանց նպատակի գիտակցութեան, իսկ մարդն ունի բանականութիւն, որով գիտակցում է իր անելիքն ու նպատակը, նոյնպէս և մարդու մէջ ոչ միայն հոգևոր կարողութիւններն են զարգանում, այլև նրա մէջ եղող բնազդը մտածողութեան ներքոյ նպատակայարմար կերպով կրճատւում, պարզւում է և այդպէս զարգանում: Անասունները խելք ունեն և ոչ՝ միտք, յուզւում են, բայց բարոյականութիւն չունեն, զգայուն են, բայց խիղճ չունեն, պատկերացում ու դատում ունեն, բայց ոչ գաղափար, ոչ ընդհանուր մտքեր, ոչ էլ տրամաբանական

գործողութիւնների համար նշաններ, այլև հանճարը միմիայն մարդու մէջ է: Ուստի և մարդու անունը ուղիղ է դրոշմել. մարդ՝ մարթուչ՝ մտածող[46*]: Ոսկեբերանն ասում է, թէ սատանան միշտ աշխատել է մարդուն հաւասար դուրս բերել անասուններին. այդ աշխատանքի մի քայլն է այն նախապաշարմունքը, թէ մարդու հոգին փոխւում է կենդանու մէջ, սակայն ոչ ոք չհաւատաց այդ անհիմն կարծիքին: Ամբողջ կեանքը հաստատումն է մարդու ինքնուրոյնութեան: Մտածողութեամբ ու կամքով մարդը տէրն է բնութեան, գիտութեան և արուեստի մէջ առաջադիմող է, իսկ անասունը միայն կրաւորական է: Միայն մարդն է ինքնաճանաչ և իրեն իր եսից տարբերող: Նա տարբերում է էականը նիւթական պայմաններից, պատճառը և ներգործութիւնը, հիմքն ու հետևանքը: Ընդհանրացումը, սկզբունք ունենալը, վերացարկումը և այլն միմիայն մարդուն է յատուկ և այդ չէր լինի, եթէ մարդն ինքը միութեան ու գիտակցութեան չհասնէր: Մարդն է ճանաչում բացարձակին, անվերջին. նա կրօնական է, որով և մտնում է յաւիտենականի մէջ. միմիայն մարդն է դրանով տարբերւում իր շրջապատից:

Այս բոլոր տարբերութիւնների իրական ամենամեծ արտայայտութիւնը ազատ կամքն է: Մարդը բարոյական կեանքով ազատօրէն առաջադիմում է: Բարոյական պարտք և անբարոյականութեան ամօթ միայն մարդն ունի, բարոյական արիութիւն և նահատակութեան վեհ զգացումը բացառապէս մարդուն է յատուկ. կրօնական, բարոյական, մտաւոր ու քաղաքակրթական առաջադիմութիւնն է միայն մարդկային: Այս ամենի մէջ գերիշխում է բարոյական խիղճը, որի բարձր նշանակութիւնը խոստովանում է և Կանտը[47*]: Այս ամենի հակառակ Դարուինը պնդում էր, թէ կայ կենդանական ժողովուրդ, սակայն 1870-ին խոստովանեց իր սխալը, ըստ որում այդ վայրենիների մէջ 40 հազարի չափ բառի հարստութիւն կայ, ինչպէս ասում են Միլլէրը, Պեշէլը, Մ. Շանցը, Գիրարդը և ուրիշներ: Շատ ազգեր, որոնք այժմ ցածր վիճակում են, բարձր քաղաքակրթութիւնից են իջել, ինչպէս ցոյց են տալիս պեղումները և աւերակները. սակայն դրանք ևս երբեք անասնականին դոյզն իսկ չեն մօտեցել: «Ստոյգ է, որ մարդն ըստ իր մարմնի ազգակից է կենդանիներին: Բայց եթէ նա հոգով Աստծու ազգակից չլինէր, նա լիովին արհամարհելի արարած կը լինէր».- ասում է Բեկոնը: Այդ նկատի ունենալով, ս. Գրիգոր Տաթևացին շեշտում է մարդու բարձրութիւնը և արարած աշխարհի հետ նրա նմանութիւնը, ըստ որում ասում է,

որ մարդը նման է այս ամբողջ աշխարհին՝ «իմանում է հրեշտակների պէս, զգում կենդանիների նման, աճում բոյսի պէս և կայ անշունչների հետ»[1]: «Իմանում է հրեշտակների պէս»՝ ահա սրանով է նա տարբերւում երկրաւոր արարածներից: Մարդու ձգտումն ու առաջադիմութիւնն էլ բանականութիւնն ու գիտակցութիւնն է, առանց որոնց նա իր գոյութիւնը չի ճանաչում ու ցանկալի չի համարում: Իսկ եթէ մարդը միայն նիւթ է և նիւթն էլ յաւիտենական է, անշուշտ յաւիտենական են և նրա մէջ եղող բնական օրէնքները, ինչպէս օրինակ իրերի երկրաձգութեան օրէնքը: Ուրեմն ինչո՞ւ անասուններն էլ չեն հասնում գիտակցութեան ու բանական կեանքի. ո՞վ է նրանց արգելում: Եթէ մի անգամ նիւթից ինքնիրեն առաջ է եկել մարդը, ինչո՞ւ այժմ ևս ճիճուն կամ գորտը, կամ կապիկը մարդ չի դառնում «յաւիտենական նիւթի» այդ «յաւիտենական յատկութեամբ և օրէնքով»: Եւ եթէ մարդու բանականութիւնը նիւթի յաւիտենական «յատկութիւնն» է՝ ինչո՞ւ չի յիշում իր անցեալը հազարաւոր տարիներ առաջ. մի՞թէ նոր է գիտակցութեան գալիս, ապա ինչպէ՞ս է յաւիտենական, որ միայն մարդու մէջ է գիտակցութեան գալիս: Կամ ինչ ասել է «նիւթի յատկութիւն», եթէ ոչ այն, որ մարդու մէջ կայ բացի նիւթից և մի բան, որ կազմում է նրա ինքնագիտակցութիւնն ու բանականութիւնը: Ըստ այսմ ինչպէս էլ դատենք, **մարդը մարմնով հողիցն է և պատկեր է արարած աշխարհի, իսկ գիտակցութեամբ, բանականութեամբ, հոգով Աստծուցն է և պատկերն է իր Արարչի**[2] (տե՛ս Ծննդ., Բ 7, Է 2, Սաղմ., Ծ 12, ՃԲ 1):

4. Աշխարհը սկիզբ ունենալով՝ իր կարգաւորութեամբ և օրինաւորութեամբ, դիմում է դէպի մի նպատակ, և այդ դիտելով ստանում ենք նպատակի գաղափարը: Մենք նկատում ենք, որ ամենայն ինչ ունի իր նպատակը. ոչ մի

[1] Գիրք Հարցմանց, էջ 231-232:

[2] «Արարիչ Աստուած եղական կենդանի արարածների ազգը զանազանելով՝ երեք սեռի բաժանեց. նախ ստեղծուած հոգեղէն զօրութիւններին վերին կայաններում՝ Իր հետ և Իրեն կից բնակութեան վայր տալով, իսկ զգալիներին և անասուն կենդանիներին, որ հողից էին, սահմանեց այնպէս բազմանալ, որից որ ստեղծուեցին, և դարձեալ վերադառնալ և լուծուել իրենց մօր գրկում: Բայց բանական մարդուն այս բոլորից յետոյ արարեց, ինչպէս իմացանք պատմութիւնից՝ այս իմանալի և զգալիների էութիւնը շաղկապելով և խառնելով իրար արարեց նրան, քանզի երկրից հող վերցրեց, որտեղից գոյացան անասունների զոյգերը և նրա երեսին կենդանի շունչ փչեց, որով Աստծու իմանալի պատկերն էացաւ նրա մէջ, և հողեղէն մարդը եղաւ անասունների նման, և իբրև Աստծու պատկեր՝ իմանալի հոգով՝ հրեշտակների պէս...». Ներսէս Լամբրոնացի. Մեկնութ. [Պատարագի], էջ 109:

բնական զօրութիւն անկարգ և աննպատակ չի ներգործում: Մի ժամանակ էպիկուրեանները պնդում էին այն տեսութիւնը՝ թէ ամենայն ինչ պատահական է: Նրանց դէմ գրեց Դիոնիսիոս Աղեքսանդրացին[48*]: Եւ այժմ էլ գիտութեան մէջ «պատահական» անհասկանալի խօսքը դաւանելը նոյնն է, թէ «չգիտեմութեան» (ագնոստիցիզմ) մէջ մտնել: Աշխարհի նպատակաւորութիւնը հաստատուեց և՛ գիտական գիւտերով, և առաջադիմութեան բոլոր փաստերով և իրողութեամբ. ուսողութիւնը ևս ճշտութիւն ու հաշիւ գտաւ երկնային մարմնի մէջ, որով ամրացրեց նպատակաւորութեան գաղափարը մեր մէջ, որովհետև որտեղ օրէնք կայ, այնտեղ չի կարող նպատակ չլինել:

Բայց ոչ միայն արտաքին աշխարհը, այլև մեր ներքին կեանքը պարզ հաստատութիւն է այդ ճշմարտութեան. **մարդը մտածում է որոշ օրէնքով, գործում է որոշ օրէնքով և մինչև անգամ նրա ազատութիւնն ու բարոյական պարտաւորութիւնը դիմում է միշտ դէպի բարձրն ու արդարութեան հատուցումը կամ իրաւունքների և արդարութեան հաւասարացումը:** Առաքինիներն այստեղ նեղւում են առաքինութեան իրականացման համար և արդարացումն ու հատուցումը հանդերձեալից սպասում: Բոլոր ազգերն էլ ունէին այդ ակնկալութիւնը, որովհետև ամենքի մէջ կայ անցեալ փառքից անկման զգացումը և ամենքն էլ ուզում են վերստին բարձրանալ նոյն դիրքին: Եւ որովհետև արդէն իսկ այդ օրւանից հատուցում է լինում, մեր ամեն գործի հատուցումը ստանում ենք այդ օրւանից, այդ իրողութիւնը պարզ հաւաստիք է հանդերձեալի հատուցման: Կայ մեղք, կայ և հատուցում. կայ խղճի ձայն, կայ և արդարացում, և այս բարոյական ապացոյցը հաստատում է աշխարհի նպատակաւորութիւնը: Եւ ինչպէս որ աշխարհի սկզբի պատճառն Աստուած է, այնպէս էլ Աստուած է աշխարհի նպատակը դնող-որոշողը[49*]: Աշխարհի սկիզբը միութիւն է և մէկ պատճառից է. ուստի և դրանից ելած բոլոր օրէնքներն ու նրանց ներդաշնակութիւնը մէկ է և անխախտ. այդ օրէնքներն ու ներդաշնակութիւնն իրենց առաջադիմութեան և յարատև ծաւալման մէջ դարձեալ մէկ կը լինեն և անխախտ, որովհետև վերջը ևս մէկ է, որ է Աստուած: Ըստ որում **մի գործ խոհական է և օրինաւոր այն ժամանակ, երբ արդէն իսկ սկզբնաւորութեան մէջ բովանդակում է նաև իր նպատակը:** Սովորական գործերի թերութիւնը և անյաջողութիւնը ծագում է այս իսկ սկզբունքից, որ երբեք չենք կարողանում

այնպիսի գործ ձեռնարկել, որ իր սկզբնաւորութեան մէջ ունենայ նաև իր նպատակը: Մեր ամէն մի գործի մէջ ընդհակառակը՝ ոչ թէ նպատակը սկզբում ունենալով ենք առաջադիմում, այլ հետու ապագայում մեր աչքի առաջ դնելով և նրան ձգտելով: Այնուհետև այլևս չենք կարողանում հաստատապէս ասել, թէ արդեօ՞ք կը հասնենք այդ նպատակին, քանի որ այլ է մեր գործի ձեռնարկութիւնը և այլ է մեր դիմաց դրած աղօտ նպատակը և անորոշ է մեր ճանապարհն ու յաջողութիւնը: Այսպէս չէ աստուածային գործը. աստուածային գործը ճշմարիտ և հաստատուն գործ է, որի նպատակն արդէն իսկ իր մէջ և իր սկզբում է, ըստ որում և ծաւալելով և առաջադիմելով՝ պէտք է իրականացնի այն: Ամբողջ աշխարհի ու նրա ընթացքի գաղափարը կար Աստծու մէջ և ստացաւ իր գոյութիւնը, հետևաբար և ընթանալով իր ճանապարհով ամենայն առաջադիմութեամբ, պէտք է բնականաբար հասնի այն նպատակի իրականացմանը, որ կրել է իր սկզբնաւորութեան մէջ իբրև ճշմարտութիւն: Այդ նպատակը, այժմ ճշմարտութիւնը Աստծու մէջ էր և ուրեմն նրան է դիմում, և Աստուած է նրա լրումը[1], որ թէ՛ բնութեան գրքում, և թէ՛ Ս. Գրքում յայտնում է Իր անխախտելի օրէնքները և անփոփոխելի ճշմարտութիւնը[50*]:

Ե

ԱՍՏԾՈՒ ԷՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Արարածների մեծութիւնից և գեղեցկութիւնից՝ նոյն համեմատութեամբ էլ երևում է դրանք արարչագործողը» (Իմաստ., ԺԳ 5), իսկ Նրա էութիւնը մենք կատարելապէս իմանալ չենք կարող առանց Աստծու օգնութեան: Աստծու էութեան մասին մեր հաստատուն գիտելիքը այնքան է, որքան նա յայտնել է մեզ: Մենք հիարկէ երբեք չենք կարող ամփոփել մեր արարած սահմանափակ հոգու մէջ Աստծու անսահման էութեան իրական մտապատկերը, քանզի մենք ստեղծածներ ենք, իսկ նա մեր ստեղծողը (Ես., Խ 18, 25, 15, Առակ., ԺԱ 23): Բայց և որոշել Աստծու էութիւնը չի կարելի, քանզի որոշել, սահմանել նշանակում

[1] Տե՛ս ստորև գլ. Զ և Է:

է որոշել տեսակը ըստ սեռի և տարբերութիւնների, մինչդեռ Աստուած չի կարգորոշւում ո՛չ սեռի, և ո՛չ տեսակի, հետևաբար անսահմանելի է: Սակայն Աստուած մեզ սիրով այնքան միջոց է պարգևել Իր յայտնութեամբ, և այնքան շնորհ է տուել՝ այդ յայտնութեան հիման վրայ զօրացնելով մտածել, որ մենք կարող ենք մեր ճշմարիտ հաւատքը լուսաբանել մեր բանականութեան առաջ: Արդ որքան մեր բանականութեան առաջադիմութիւնը վստահութեամբ պարզում է իր առաջ աստուածային ճշմարտութիւնները, նոյնքան մեր կենդանի հաւատքը թելադրում է մեզ, որ իբրև ստեղծածներ չենք կարող միակ ամենագետ մեր ստեղծողի բոլոր խորհուրդների, էութեան ու գաղտնիքների մէջ թափանցել: Այս կենդանի հաւատքի ձայնն է, որ հնչում է Ս. Եղիշէի մի ճառի մէջ, թէ՝ «Իմանում է՝ ճշմարտապէս գիտենալով, որ կայ Աստուած. հաւատարիմ է ինձ, Նրա որպիսութիւնը չգիտեմ, գիտեմ միայն այն, ինչ երևում է. Աստծու աներևոյթ բաները միայն Աստուած գիտէ»[1]: Այս է մարդու մտաւոր զննութեան վերջին եզրակացութիւնը, այլև այն ճշմարիտ աստուածապաշտի և երկիւղած հաւատացեալի վերջին խօսքը, որ տեսնում է անվերջ և անսահման լոյսի շողերը, բայց անկարող է նայել լոյսի յաւիտենական աղբիւր արեգակի վրայ[2]:

Այդ խօսքը ճշմարիտ աստուածպաշտութեան արտայայտութիւն է մանաւանդ այն պատճառով, **որ մէկ իրի էութիւնն իմանալ նշանակում է տիրապետել նրան, իսկ այդ անկարելի է իրականացնել Արարչի նկատմամբ:** Մենք Աստծու էութեան մասին այնքան պէտք է իմանանք և այնքան կարող ենք իմանալ, որքան այդ անհրաժեշտ է մեր փրկութեան համար:

Աստծու էութիւնը ճանաչելու ձգտումն այնքան հին է, որքան հին է մարդկութիւնը. այդ ձգտման առաջին քայլն այն էր, որ մարդիկ սկսեցին անուն դնել և անուանել իրենց Ստեղծողին կամ իսկական անունն իմանալ: «Եւ նրա անունը երկնքի և երկրի Արարիչ է: Իսկ երկնքից և երկրից առաջ իբրև ինքնագոյ [էութիւն]՝ ինքնանուն է»[3]. ահա սկզբնական քննութեան եզրակացութիւնը[51*]: «Նրա անունը ոչ ոք չիմացաւ, քանզի նրանից առաջ մէկը չկար, որ այս կամ այն

[1] Մատեն., էջ 311:
[2] «Եւ քանի որ Էն է՝ հարկ է, որ մշտնջենաւոր լինի և անսկիզբ, որի ոչ սկիզբն է մէկից սկսում իր լինելութիւնը, և ոչ էլ իրենից վեր մէկն ունի, որ հարկ լինի նրան պատճառ կարծել կամ իմանալ, թէ նրանից է Էանալու սկիզբն էլ» (Եզնիկ, 6):
[3] Եղիշէ, էջ 24:

կերպ անուանէր», ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը[1]: Իսկ Արարիչ անունը որոշում է միմիայն նրա յարաբերութիւնը մեր և աշխարհի գոյութեան հետ, բայց ոչ լիովին կամ ինքնըստինքեան, այնպէս որ մարդիկ «արարիչ» ասելով՝ արտայայտում են Աստծու մի կատարելութիւնը միայն. դրանով գոհ չէին և չէին կարող գոհացնել իրենց մտաւոր պահանջը: Ուստի և Մովսէսը յանձն առնելով Աստծու պատգամի ծանուցումը, իսկոյն տարակոյսի մէջ է ընկնում, թէ ի՞նչ ասի, երբ ժողովուրդը հարցնի, թէ ի՞նչ է Նրա անունը: «Ի՞նչ է անունը Նրա», այս հարցն էր հնչում մինչև ժամանակի ոգին հասկացող Մովսէսը: Եւ Աստուած յայտնում է այն, ինչ որ մարդիկ իրենց մտքի ուժով հասկանալ չէին կարող՝ «Որ էն» (Ելից., Գ 13)- Է - ահա Աստծու ճշմարիտ անունը: Այս նշանակում է, որ Նա միակ է և ամենայն ինչ Նրանով է ստանում իր գոյութիւնը:

Ա՛րդ, ի՞նչ որոշման ենք գալիս Աստծու յայտնութեամբ[2]:

«Այլ թէ ինչպէս էր, է և կայ յաւիտենապէս, միայն Ինքը գիտի, բայց Իր սիրով յայտնեց արարածներին և ճանաչեց Իր խնամքով», ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը[3]: Ուրեմն մեր մտածողութեան նիւթ է դառնում թէ՛ Աստծու ուղղակի յայտնածը, և թէ՛ ըստ Նրա խնամքի ծանուցածը: Ըստ այսմ, մեր տուած բնորոշումներն երկու ընթացք ունեն՝ բացասական ու դրական[52*]. բացասական որոշումները բացատրում են Աստծու ներքինը, իսկ դրականը՝ այն կատարելութիւնը, որի իսկութիւնն Աստծու մէջ է և միայն նմանութիւններն ենք այս աշխարհում տեսնում[4]:

Բացասական ընթացքով գիտենք, որ «ճանաչում է իսկական Աստուածութիւնը անեղծ, անստեղծ, անտարրական»[5]: Նա աննիւթական է, բայց և աշխարհից դուրս չէ, ինչպէս ուսուցանում են՝ «աստուածեանները» (դէիստ), որովհետև եթէ դուրս լինէր, հաղորդակից չէր լինի մեզ հետ: Նա աշխարհի գոյացութիւնն էլ չէ, ինչպէս ուսուցանում են «համաստուածեանները» (պանթէիստ), որովհետև եթէ աշխարհի գոյակցութիւնը լինէր, մեր Հայրը չէր լինի: Այլ Նա ինքնըստինքեան մէկ է և անվերջ, ինքնըստինքեան ծաւալում է և

[1] Ագաթ., 209, Յաճախ., Բ 293, 31, Դ 324:
[2] Յաճախ., Բ 36:
[3] Յաճախ., Բ 300, Եղիշէ, էջ 23:
[4] Ընդհանր., 393-400:
[5] Ագաթ., ԻԴ, Ընդհ., 393-398, Գր. Մագիստր. Տաղ., էջ 1-4, Եղիշէ, 23:

անտարածական է, իրենից առաջ է բերում և անփոփոխ է. ամենայն ինչ Իր մէջ է կրում և անսահման է. և այդ է մեր Աստուածն ու Հայրը, որին և մենք բացասական տեսակէտից վերջնականապէս ճանաչում ենք նրանով, որ Նա անհասանելի է (Սիր., ԺԸ 2-6, ԽԳ 36), սակայն միմիայն Իր կամքով ու յայտնութեամբ, սիրով և ուխտով է մեզ համար քննելի և հասանելի (Ա Կոր., Բ 10, Եփ., Գ 18): Բայց և այնպէս որքան էլ հասկանում ենք Նրա և Նրա գործերի մեծութիւնն ու փառքը, մեր հաւատքը դարձեալ թելադրում է, որ դեռ անսահման է այն ամենը, որ չենք հասկանում, ուստի և Աստուած հասանելի լինելով մեր փրկութեան կարևորութեան չափ, միանգամայն և անհասանելի է իր անսահման էութեամբ: Ուստի և մենք բոլորը գիտենք, բայց և՝ փոքրիշատէ միայն (Ա Յովհ., Բ 20, Ա Կոր., ԺԳ 12), ճանաչում ենք իբրև նրա որդիներ, սակայն միայն հանդերձեալ կեանքում ենք նրան կատարելապէս տեսնելու (Ա Յովհ., Գ 2, Ա Կոր., ԺԳ 12), քննում ենք Նրա խորքերը, այդուհանդերձ Նրան ոչ ոք չի տեսել, որովհետև բնակւում է անմատչելի լոյսի մէջ (Ա Կոր., Բ 10, Ա Յովհ., Դ 12, Ա Տիմ., Զ 16), ըստ որում այժմ անհասանելի և անքննելի է մեզ համար, և իսկապէս կը տեսնենք ու կիմանանք ինչպէս և է միմիայն հանդերձեալ կեանքում[53*]:

Դրականապէս էլ մենք ճանաչում ենք Աստծու կատարելութիւնները միայն և այդ ևս մեր կեանքի մէջ պատահած կատարելութիւնների օրինակով, մինչդեռ իսկականը և իրականը Աստծու մէջ է: Ըստ այդ կատարելութիւնների մենք անուններ ենք ընծայում Աստծուն, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ այդ կատարելութիւնների արտայայտիչ նշանները: Աստծու էութեան դրական ճշմարիտ արտայայտութիւնն այն է, որ նա բացարձակ հոգի է, բացարձակ կամք, բացարձակ գիտակցական զօրութիւն. գիտակցական զօրութիւն կամ բացարձակ անձնաւորութիւն է, այսինքն՝ բացարձակապէս Ինքն Իր մէջ կենտրոնացած յաւիտենական հիմունք է ու գիտէ, որ ինքն է ամենայնի միջնակէտը, Իր անվերջ փառքի Եսը (Եսայ., ԽԴ 6) և միևնոյն ժամանակ Իր փառքի տէրը: Նա տեսնող կարողութիւն է և այն խորին իմաստութիւնն է, որի մէջ իրականանում է աշխարհի նպատակը արարուած մարդու գիտակցութեան ընթացքով (Հռովմ., Ա 18):

Սակայն այս ամենով մենք դեռ բաւականաչափ չլուսաւորեցինք մեր մտածողութիւնը, որի պայծառութեան համար պէտք է գիտենանք Աստծու կատարելութիւնները: Յայտնի է, որ Աստծու էութեան երանութիւնը կայանում է

Նրա անբաւ կենդանութեան և բարոյական կատարելութեան մէջ: Որքան այդ անբաւ կենդանութիւնը և բարոյական կատարելութիւնը սփռուում է աշխարհի վրայ, այնքան մեր առաջ պայծառանում է Աստծու փառքը: Ահա այդ երանութեան ու փառքի դէպ աշխարհ ունեցած յարաբերութիւնից երևում են Աստծու :կատարելութիւնները կամ ստորոգութիւնները, որոնք և ամփոփելով դասաւորում ենք երկու կարգի մէջ:

Ա. Բնական աշխարհի, այն է՝ ժամանակի ու տարածութեան վերաբերմամբ՝ Աստուած միշտ նոյնն է՝ յաւիտենական, ինքնագոյ, ամենուրեք, ամենակալ, ամենագէտ, ամենիմաստուն:

Բ. Բարոյական աշխարհի վերաբերմամբ Աստուած է արդար, ճշմարիտ, սէր, բարի, ողորմած, հաւատարիմ և սուրբ (Ա Յովհ., Դ 16, Հռովմ., ԺԱ 33):

Երկու կարգի կատարելութիւնները հիմնապէս ամփոփած դաւանում ենք Հաւատամքի առաջին խօսքերի մէջ. «Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի երևելեաց և աներևոյթից» (Գործք. առ. ԺԷ 22-29, Եփ., Գ 14, Ա Տիմ., Զ 15, Հռովմ., Ա 20, Եբր., ԺԱ 3):

Աստծու միութիւնը կամ միակութիւնը առաջին դաւանանքն է, որ պէտք է ունենայ ճշմարիտ հաւատացողը, ուստի և Աստուած նախապատրաստող ժողովրդին ասում էր իր մարգարէի բերանով. «Լսի՛ր, Իսրայէլ, քանզի քո Տէր Աստուածը մէկ Տէր է» (Բ Օր., Զ 4): Այդ միութիւնն է արտայայտում նաև Աստծու առաջին յայտնութիւնը, որ Ինքն է Է, այսինքն՝ առանց Աստծու ոչինչ չի կարող լինել: **Երկու աստուածներ չեն կարող լինել, որովհետև եթէ լինէին, կամ մէկն ու մէկը պէտք է մեծ լինէր իր կարողութեամբ, և կամ երկուսն էլ անկատար պէտք է լինէին, այսինքն՝ Աստուած չէր լինի:** Աստծու կատարելութիւնը և բացարձակութիւնը չեն կարող բաժանուել Նրա միութիւնից: Նա մէկ է Իր զօրութեամբ. ամէն ինչ Նրանից է կախուած և ամենայն ինչ Նրա խնամքով է պահւում: Ուստի և մենք, խոստովանելով մի Աստուած, դրանով երեք բան ենք արտայայտում և յանձն առնում. նախ՝ որ ամենայն հոգևոր ու մարմնաւոր բարիքներ ստանում ենք Նրանից ու վայելում Նրա ողորմութեամբ, երկրորդ՝ որ Նրա անունն ու պատիւը միմիայն իրեն պէտք է տանք և ոչ թէ աշխարհային գոյութեան, և երրորդ՝ որովհետև **նրա միաստուածութեան մէջ են պարփակւում ամենայն կարողութիւն և իմաստութիւն, Նրան պէտք է լսենք ու հնազանդւենք:**

Իբրև արարիչ ու յաւիտենական պատճառ՝ նա կոչւում է Աստուած (Էլոհիմ), և մենք ճանաչում ենք, որ Նա ամբողջ աշխարհի Աստուածն է. իսկ իբրև նախախնամող, կառավարող, դատող ու յայտնող, կոչւում է Տէր (Եհովայ կամ Եահվէ), որ ամենքին տանում է դէպի մի նպատակ, և մենք խոնարհւում ենք Նրա առաջ[54*]:

Աստծու միութիւնից անհրաժեշտապէս հետևում է և Նրա՝ միշտ միևնոյն լինելը կամ անփոփոխութիւնը, որովհետև եթէ միշտ նոյն իսկութիւնը չլինէր ու փոփոխւէր, յաւիտենական չէր լինի, այլ այն, որ առաջ է եղել, ուրիշ կը համարւէր և դրան հետևածը՝ ուրիշ: Եւ որովհետև փոփոխականութիւնն արտաքին կախում է ենթադրում իր մէջ, ուստի այդ հակառակ կը լինէր նաև նրա ինքնագոյութեանը: Այսպէս և Աստծու ինքնագոյութիւնից հետևում է Նրա ամենուրեքութիւնը, ըստ որում և ամենակալութիւնը, ամենիմաստութիւնը և ամենագիտութիւնը: Այսպիսով թէ՛ Ա. և թէ՛ Բ. կարգի կատարելութիւնները ծագում են մէկը միւսից, երբ բնական կամ բարոյական տեսակէտով համեմատում ենք Աստծու ինքնագոյութեան հետ:

Ապա ինչո՞ւ միաժամանակ խոստովանում ենք, որ Նա և՛ Հայր է, և՛ Ամենակալ, և՛ Արարիչ: Որովհետև Նա կենդանի Աստուած է, «հայր է հոգիների» (Եբր., ԺԲ 9, Յակ., Ա 18): Նա հայր է իր արարչագործութեան, նախախնամութեան ու հայրական հոգատարութեան, իր փրկագործական ողորմածութեան և անչափ շնորհագործութեան համար: Բայց և նա Արարիչ Հայր է, այսինքն՝ բոլոր հոգևոր ու մարմնաւոր բարիքների ստեղծող, և Ամենակալ Հայր է, այսինքն՝ ամեն ինչ կարող է և ամեն ինչ նրանից է կախուած: Նրանով ենք եղել, Նրանով գոյութիւն ունենք այժմ և դէպի Նրան պէտք է գնանք, որովհետև Նա է մեր իրական կատարելատիպը. (Մատթ., Ե 48): Նրա հայրութիւնը որոշում է նաև այն վերաբերմունքը, որ մենք պէտք է միշտ ունենանք նրա նկատմամբ. «Աստուած հոգի է, և Նրան երկրպագողները հարկ է, որ հոգով և ճշմարտութեամբ երկրպագեն», «որովհետև Հայրն այնպիսի երկրպագողներ է ուզում» (Յովհ., Դ 24):

Թէպէտ Հաւատամքի այդ սկզբի խոստովանութեան մէջ Աստծու բոլոր կատարելութիւնները արտայայտուած են յստակ կերպով, այսուհանդերձ, ճշմարիտ աստուածճանաչողութեան համար հարկ է վերոյիշեալ իւրաքանչիւր եօթնեակ կատարելութիւնը ակնարկով մի առ մի պարզել և ըմբռնել:

Աստուած միշտ նոյնն է և յաւիտենական, սակայն ոչ թէ անկենդան նոյնութեամբ, այլ կենդանի է ու գործունեայ, ինքնագոյ և Իր փառքով մշտապայծառ. նրա մէջ է յաւիտենական կեանքը և կենդանութիւնը, անսպառ զօրութիւնը և մշտագործ կատարելութիւնը. «Լի է կատարեալը, որ բոլորին լցնում է, և Ինքը չի թերանում և չի նորոգւում, որովհետև չի հնանում, և չի լցւում, որովհետև չի պակասում: Քանզի Ինքը նոյնն է իր լիութեան մէջ»[1]:

Աստուած ամենակալ է, այսինքն ամեն ինչ Նրա ստեղծագործութեամբ է առաջ եկել և ամենքի գոյութիւնը Նրանով է, Որից բխում է ամենայն կատարելութիւն և կեանք: Ըստ որում և Նա ամենուրեք է և ամենուրեք ներգործում է, պահպանում և կենսագործում: Նա ամեն ինչ է ամեն ինչի մէջ, հետևաբար ամեն ինչ Նրա մէջ է. Նա ամենուրեք է, ցորենի հատիկի մէջ՝ այլ կերպ, տերևի մէջ՝ այլ, բնութեան մէջ՝ այլ, պատմութեան և եկեղեցու մէջ՝ այլ և այլ տեսակ, աշխարհում այլ, նոյնպէս և այլ տեսակ երկիւղածների մէջ և այլ՝ անաստուածների մէջ, ծովում ու ցամաքում, արքայութեան մէջ ու դժոխքում (Սաղմ., ՃԼԸ 7, Ցակ., Դ 8, Գործք., ԺԷ 28): Սակայն Նա ամենուրեք է միայն Իրեն յայտնի կերպով և ինչպէս Ինքը որոշում է ու կարևոր համարում իբրև ինքնագոյ իսկութիւն: Հետևաբար և Նա իր ամենուրեքութեան մէջ ամենագէտ է, Նա տեսողութիւն է և ամենատես է, այսինքն Նրա էութիւնը կատարեալ գիտութիւն է և ամենայն ինչ գիտի իր ճշմարիտ էութեան մէջ՝ էութիւնն իբրև էութիւն, ճշմարտութիւնն իբրև ճշմարտութիւն, անհրաժեշտն իբրև անհրաժեշտութիւն, իրականն իբրև իրական և այլն, այսինքն՝ կատարեալ և ոչ պայմանական ու յարաբերական կերպով ըստ մեզ (Մատթ., Ժ 30, ԺԱ 23, Եբր., Դ 13): Ուստի և Նա ամենահմաստուն է, այսինքն՝ Նրա միտքը ճշմարտութիւն է և իրականութիւն, Նրա խօսքը իրողութիւն է՝ «Քանզի Աստծու համար ամեն ինչ հնարաւոր է» (Ղուկ., Ա 37, Մատթ., ԺԹ 26), և աշխարհի օրէնքը Իր իմաստութիւնն է: Նա է աշխարհաբնակ բանականութիւնը, սակայն ոչ աշխարհից հեռու է, և ոչ աշխարհի հետ նոյնացած: Աշխարհով ճանաչում ենք Իր իմաստութիւնը, և Աստծու իմաստութեամբ ճանաչում ենք աշխարհը: Աստծու ամենիմաստութիւնը երևաց ոչ միայն Իր արարչագործութեան, այլև փրկագործական տնօրէնութեան և ապա

[1] Ցաճախ., Ա 15:

մարգարէական նախապատրաստութեան մէջ՝ Իսրայէլում, որտեղ փայլած բարձր իմաստութիւնը Սողոմոնի գահի վրայ անլուծելի մնալով (Առ., Ը Իմաստ., Է, Սիր., ԻԴ), միմիայն Քրիստոսով գտաւ իր լուծումն ու գերագահ բարձրութիւնը. (Եփես., Գ 10, Հռ., ԺԱ 33, Եփ., Ա 10, Ա Կոր., Բ 2):

Իմաստութիւն բաշխող ու զարդարող զօրութիւնը արդարութիւնն է, որով Աստծու արքայութեան մէջ ամեն արարած իր բաժինն է ստանում, իսկ արդար բաշխումը դատով կը լինի (դատարանով), որ բարին ու չարը տարբերի և ըստ արժանիքի գնահատի: Աստծուց ոչինչ ծածուկ չի մնում, և մարդը միշտ «պատասխան է տալու» Աստծու դատարանի առաջ (Գաղ., Զ 7, Հռ., Բ 6), ուստի և Նրա արդարութեան խրատական մի թևը՝ սպառնալիքն ու պատիժն է, իսկ միւս թևը՝ աւետիսն ու պարգևը:

Աստծու իմաստութեան և արդարութեան միութիւնը Նրա բարութիւնն է, որովհետև բարութիւնը բարութիւն չի լինի, եթէ իրաւունք չի ճանաչում, օրէնք չգիտի և իւրաքանչիւրին ըստ իր արժանեաց չի գնահատում. որովհետև բարութիւնն այն է, որ խրատում է (Ա Յովհ., Ա 9, Հռ., Գ 26): Աստծու բարութիւնը երևում է մանաւանդ նրանից, որ Նա արարչագործութեան նպատակը Իր նպատակն է դարձնում, յետոյ արարչագործութեամբ յայտնում է Իր մեծութիւնը մարդկանց և միևնոյն ժամանակ յայտնութիւն է տալիս մարդկանց դարձեալ իր արարչական տնօրէնութեան համար, այնպէս որ ամեն ինչ ծառայեցնում է մարդու բախտաւորութեանը: Արդ, Աստծու բարութեան քաղցրութիւնը երևում է, քանզի մարդ ստանում է, երբ ուզում է և որքան խնդրում է հաւատքով: Այդ բարութիւնն էլ անսպառ է, քանզի բարին միայն Աստուած է (Մարկ., Ժ 18): Բայց որովհետև «ամեն բարի շնորհ և ամեն կատարեալ պարգև վերևից են իջել՝ լոյսի Հօրից, որի մէջ չկայ փոփոխում կամ էլ հանգչելու ստուեր» (Ցակ., Ա 17), և ընդունելութեան շնորհն էլ Աստծուցն է միայն, Աստուած էլ այդ շնորհը կատարելապէս իրականացրել է մարդու մէջ: Այդ պատճառով մարդու մէջ Աստծու բարութիւնը ներկայանում է իբրև սէր:

Աստծու բարութիւնը վայելում են բոլոր արարածները, իսկ սէրը՝ միմիայն հրեշտակներն ու մարդիկ: Կայ Աստուած, կայ և Նրա արքայութիւնը, որի մէջ են Ինքն ու Իր որդիները. Նա Ինքը սէր է (Ա Յովհ., Դ 16), ճշմարիտ հոգու մէջ է և ճշմարիտ հոգին նրա մէջ է: Աստծու բոլոր կատարելութիւնները կապած են Նրա

սիրոյ հետ, և բոլոր տնօրինութիւնները և գործերը բխում են Նրա սիրուց և մարդկանց հաղորդակից դարձնում աստուածային բնութեանը (Բ Պետր., Ա 4): Այսպիսով մարդ իրական ու սուրբ միութիւն է վայելում Աստծու հետ, ըստ որում Աստուած իր սիրով ողորմած է մարդու մեղքի հանդէպ, երկայնամիտ է մարդուն դաստիարակելու գործում և հաւատարիմ է այն աւետիսի ու յոյսի նկատմամբ, որոնք նա ներշնչում է մարդու սրտի մէջ (Ա Պետր., Դ 19) և առաջ մղում դէպի կատարելութիւն: Իր արքայութեան մէջ Աստուած մարդու հետ միութիւն է պահում Իր սրբութեամբ, այնպէս որ Իր և Իր արարածի տարբերութիւնը չի վերացնում. այդ սիրոյ միութեան յարաբերութեան մէջ Աստծու վեհութիւնն ու փառքը մնում են յաւիտենական և երբեք չար ու արատ չի մօտենում նրա էութեանը (Եսայ., Զ 3, Բ Օր., Է 21, Յակ., Ա 13, Եբր., Ժ 27, ԺԲ 29): Առանց այդ սրբութեան չի կարող լինել ճշմարիտ սէր մարդկանց նկատմամբ և Աստուածային կատարելութիւն Աստծու մէջ:

Սիրոյ փառքն Աստծու մէջ և կատարելութիւնների լրումը կոչւում է երանութիւն: Երանութիւնն Աստծու մէջ է, որովհետև կեանքն ինքնըստինքեան Աստծու մէջ է, կատարեալ և լրիւ: Նրա սիրոյ մէջ է տիրում յաւիտենական խաղաղութիւն, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ յաւիտենական գործունէութիւն իր սիրոյ ծաւալման մէջ (Եբր., Դ 3, Յովհ., Ե 17): Եւ ահա Աստուած ունենալով Իր ներքին կեանքն առանձին և արտաքին գործունէութիւնը դէպ աշխարհ առանձին, պահում է Իր արդարութիւնը, բարութիւնը, սրբութիւնը, սէրը, ողորմածութիւնը և հաւատարմութիւնը մարդկանց նկատմամբ և միևնոյն ժամանակ Իր խաղաղական երանութիւնն իր կեանքի մէջ. ուստի և Նա ճշմարիտ է ու կատարեալ ճշմարտութիւն, այսինքն՝ որ Ինքն իր հետ իրական նոյնութիւն է և միակ իրական նոյնութիւնը: Այսինքն՝ Նրա իմաստութիւնը, տնօրինութիւնը, կամքը, գործը և ամենայն վերաբերմունք կատարելապէս համապատասխան են իր էութեան հետ և իրողութիւն են կատարեալ նոյնութեամբ:

Ընդունելով այս բոլոր կատարելութիւնները ճանաչում ենք և տեսնում մեր Արարչին միմիայն իբրև արարած, այսինքն՝ «իբրև ընդ հայելի օրինակաւ». իսկ երբ կարժանանք նրա երանական տեսութեանը, այսինքն երբ կատարեալ սիրով կը վաւեենք նրա փառքի մէջ. «Այն օրը Տէրը մէկ կը լինի և նրա անունը՝ մէկ» (Զաք., ԺԴ 9) և մեր ճանաչողութիւնը ընդարձակելու համար կարիք չենք ունենայ

բազմաթիւ ստորոգութիւնների. «Այնժամ կիմանանք, ինչպէս և Նա իմացաւ ինձ» (Ա Կորնթ., ԺԳ 12):

Զ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Աստուած կատարեալ կեանք և կատարեալ սէր լինելով՝ ծաւալում է նաև իսկական գործունէութիւն: Նրա բովանդակ գործունէութիւնը և կամ ամբողջ յարաբերութիւնն աշխարհի հետ իրականանում է Հօր, Որդու և Ս. Հոգու յայտնութեամբ կամ Ս. Երրորդութեամբ: Մեր հաւատքը խելամուտ է դարձնում մեզ, որ մենք աստուածային կեանք ու սէր ենք վայելում այդ Ս. Երրորդութեան շնորհաց շրջանում, ըստ որում մենք ստանում ենք այդ կեանքը Հօր Աստծուց, որ մեր Արարիչն է, Որդի Աստծուց, որ մեր փրկիչն է, Հոգի Աստծուց, որ մեր քաւիչն ու որդեգրողն է: Հայր, Որդի և Ս. Հոգի. սրանք ո՛չ կատարելութիւններ են միայն, և ո՛չ էլ աստուածային գործունէութեան երևոյթներ, այլ՝ անձինք: Իւրաքանչիւր անձ, որ կատարեալ և իսկական ինքնագիտակցութիւն է, Աստծու ամբողջ էութեան յայտնութիւնն է և իր մէջ ունի աստուածային բոլոր կատարելութիւնները: Կատարեալ Աստուած է Հայրը, որ ստեղծել է աշխարհը իր աստուածային բանով և իր արքայութիւնը տնօրինել յաւիտենականութիւնից: Կատարեալ Աստուած է և Որդին, Աստծու Բանը, որ ի սկզբանէ «Աստծու մօտ էր և Աստուած էր» և մարդանալով բնակւեց մեր մէջ (Յովհ., Ա 14, Փիլ., Բ 6, Եբր., Ա 3, Մատթ., ԺԱ 27): Կատարեալ Աստուած է և Ս. Հոգին, որով ճանաչում ենք Աստծուն և աստուածայինը, քննում ենք Աստծու խորքերը, խոստովանում ենք Քրիստոսին ու նորոգւում, լուսաւորւում. (Մատթ., ԻԸ, 19, Ա Կոր., Բ 10, ԺԲ 37, Բ Կոր., ԺԳ 13, Տիտ., Գ 4-6): Երեք անձինք, բայց մի Աստուած. մի սէր, բայց և իւրաքանչիւրը կատարեալ սէր իր մասնայատուկ յայտնութեան մէջ. «Լոյս եռեակ, և մի անբաժանելի սուրբ Երրորդութիւն»[1]:

[1] Շար., էջ 597:

Ս. Երրորդութեան դաւանանքը այնքան անհրաժեշտ է, որ առանց նրա քրիստոնէական կրօնն ըստ ամենայնի անկատար կը լինէր: Այդ է պատճառը, որ թէև Աստծու նախապատրաստական յայտնութիւնը գործ ունէր ժողովրդի կռապաշտութեան հետ և նախապէս պէտք է շարունակ կուէր նրանց բազմաստուածութեան դէմ և ուրեմն Աստծու միութիւնը միայն ծանուցանէր, այսուհանդերձ այդ յայտնութիւնն էլ յաճախ ակնարկում է Ս. Երրորդութեան դաւանանքը. (Ծննդ., Ա 26, Զ 3, Ելք, Զ 3, ԽԸ 16, ԽԳ 10, Թուեր, Զ 22, Առ., Ը 22-36, Ես., ԿԱ 1, Թ ԿԳ, Սաղմ., ՃԹ 1, ԼԲ 6, ԾԱ 13, Յովբ., Լ 4 Ա): Ուստի և Նոր Կտակարանում Քրիստոսի փրկութիւնը վայելում են միմիայն նրանք, ովքեր մկրտւում են «յանուն Հօր և Որդու և Սուրբ Հոգու» (Մատթ., ԹԸ 19). ինչպէս և Ս. Երրորդութեան փառքը յայտնուեց Յիսուսի մկրտութեան միջոցով բացորոշապէս: (Մատթ., Գ 16, 17, Մարկ., Ա 10, 11, Ղուկ., Գ 21, 22, Յովհ., Ա 32-34): Այլև աստուածային բոլոր շնորհներն առհասարակ պարգևում են հաւատացեալներին միայն Ս. Երրորդութեան դաւանանքի խորհրդով (Բ Կոր., ԺԳ 13, Ա Կոր., ԺԲ 4-7, Ա Պետր., Ա 2), ինչպէս և ամփոփ ու հակիրճ արձանագրում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը. «Հայրը՝ ամենակալ, Որդին՝ բարերար՝ մեզ կեանք տուող, Սուրբ Հոգին՝ հաւատացեալներիս նորոգող»[1]:

Ս. Երրորդութեան դաւանանքն Աստծու այն յայտնութիւն է, որ էապէս զատորոշում է քրիստոնէական ճշմարիտ հաւատքը աստուածեան և պանթէիստական մոլորութիւնից: Առաջինը սնունդ ստանալով հրէական միակողմանի տեսութիւնից, անանցանելի խորխորատ է բաց անում Աստծու և մարդու մէջ, իսկ երկրորդը, սնուելով հեթանոս աշխարհում, խառնում է աստուածութիւնն արարուած աշխարհի հետ: Քրիստոնէութիւնը երկուսի դէմ դրեց Աստծու կատարեալ սիրոյ յայտնութիւնը, սակայն այդ երկու մոլորութիւնները յարատևելով՝ երևան եկան Արիոսական և Սաբէլական աղանդի մէջ, որոնց դէմ պատերազմ մղեց քրիստոնէական եկեղեցին:

Արիոսականները, ընկնելով հրէութեան մէջ, միմիայն Հօրն են Աստուած ճանաչում, իսկ Որդի ու Հոգի Աստծուն համարում են ստորադրեալ և արարուած էակներ: Աստուած կառավարում է աշխարհը անհասանելի վեհութեան մէջ՝ բարձր

[1] Տե՛ս և Յաճախ., Զ 1-8:

գահի վրայ բազմած, և մարդ երբեք չի կարող Նրան տեսնել, որովհետև Աստծու ներգործութիւնն աշխարհի վրայ նման է մի մատի ծայրի շարժմանը: Ուրեմն Նա աշխարհից դուրս է, շատ բարձր և անմատչելի:

Քրիստոնէութիւնն այս աղանդի դէմ քարոզում է, որ Աստծու սէրն իրագործւում է ի յաւիտենից ծնուած Որդու գործակցութեամբ ու մարդեղութեամբ, որովհետև Քրիստոս միմիայն իբրև Աստուած կարող էր ճշմարիտ յայտնութիւն տալ մեզ ու փրկագործել, միմիայն Քրիստոս Աստուած կարող էր վերացնել Աստծու և մարդու միջև բացուած խորխորատը: Իսկ այդ փրկութիւնը իրագործել և Աստծուն սիրել կարող ենք մենք դարձեալ Աստծով, այն է՝ Ս. Հոգով, որով մենք մօտենում ենք մեր Աստծուն: Աստուած է մեր միակ սիրելին և մեր բովանդակ ճանաչողութեան ու սիրոյ հիմքն ու հաստատութիւնը:

Սաբէլական աղանդն էլ ընդունում է Հօր, Որդու և Ս. Հոգու Աստուածութիւնը, սակայն դրանք ոչ թէ անձ է համարում, այլ միևնոյն Աստուածութեան այլևայլ ժամանակի երևումը, ըստ որում դրանք գոյութիւն չունեն աշխարհից անկախ, այլ Աստուած ըստ ամենայնի մէկ է և անձ չէ[55*]: Նա վեր է ամեն կարգի տրոհուածութիւնից: Իբրև արարիչ Նա Հայր է մեր կրօնական պատկերացմամբ, Քրիստոսի մէջ Որդի է, իսկ եկեղեցու մէջ՝ Ս. Հոգի:

Քրիստոնէութիւնն այս ևս մերժում է, որովհետև ի՞նչ սէր կը լինի այն Աստուած, որ միմիայն Քրիստոսի մէջ է գիտակցութեան գալիս և եկեղեցու մէջ է իմանում, որ ինքը Հոգի է, այս պարագային այն կախուած կը լինի աշխարհից և ուրեմն չի կարող ազատօրէն յայտնուել, հետևաբար Նա չի ունենայ իր ներքին կեանքը և ներքին կեանքում էլ զուրկ կը լինի սիրուց: Այլև ի նկատի պէտք է ունենալ, որ եթէ Աստուած Իրեն յայտնում է մեզ երեք անձանց, այն է՝ Հօր, Որդու և Ս. Հոգու մէջ, ուրեմն և յաւիտենութիւնից երեք անձինք՝ Հայրը, Որդին ու Ս. Հոգին պէտք է ինքնընստինքեան սիրեն Աստծուն: Այստեղից դուրս է գալիս, որ այդ երեք անձինք մէ՛կ դէպի աշխարհին են վերաբերմունք ունենում, և մէ՛կ դէպի իրենց, և մէկմէկու նկատմամբ լցուած են սիրով և կեանքով՝ մէկը միւսի մէջ հայելացնելով սէր և կեանք (Յովհ., ԺԴ 9, 17, ԺԷ 26, ԺԶ 13): Իսկ Սաբէլականները լոկ դիմակ դարձնելով և ժխտելով երեք անձանց գոյութիւնը, ժխտում են և Աստծու կեանքի ու սիրոյ այս մեծ գործունէութիւնը թէ՛ Իր մէջ, և թէ՛ աշխարհի նկատմամբ: Այդպիսով այդ աղանդը վերացնում է նաև Աստծու անկախութիւնն աշխարհից ու

վեհութիւնը: Ըստ որում մոլորւում են թէ՛ հին Սաբէլականները և թէ՛ նորերը, որոնք Շլէյերմախերի ու Հեգէլի ցանած սերմերով աճում են բողոքական աշխարհում զանազան բանաձևումների մէջ կամ թափառելով սաբէլականութեան բաւիղում (Շլէյերմախեր և ընկ.) կամ գլորւելով արիոսականութեան խորխորատը (Շվեդեբորգ և ընկ.): Զարմանալի չէ, եթէ Ս. Երրորդութեան դաւանանքը վերացնողների դէմ եռաստւածութիւնը դաւանող էլ գտնւեց՝ ինչպէս Փիլիպպոնը (508-ին) իր հետևորդներով (Շարլոկկէ, Էմբս) զանազան դարերում, որ Ս. Երրորդութեան «մի Էութիւնը» նոյնանիշ համարեց «սեռ» ասածին, օրինակ բերելով երեք մարդու, որոնք բոլորն էլ մարդիկ են, սակայն երեք անձինք են:

Նախընթացում ասել ենք, որ մենք չենք կարող իմանալ Աստծու Էութիւնը, քանզի մենք արարած ենք, սակայն Աստուած յայտնում է իր Էութեան մասին: Նա յայտնւել է Ս. Երրորդութեան մէջ, իսկ ինչ յայտնւում է, կայ նրա էութեան մէջ, որ յայտնւում է: Հետևաբար **Ս. Երրորդութեան դաւանանքն իսկապէս Աստծու էութեան ճանաչողութիւնն է, որ մենք պէտք է ունենանք.** «Բայց Աստուած մեզ յայտնեց այն իր Հոգով, որովհետև Հոգին քննում է ամեն ինչ, նոյնիսկ Աստծու խորունկ ծրագրերը, քանզի մարդկանցից ո՞վ է, որ բան գիտէ մարդու մասին, եթէ ոչ՝ մարդու հոգին, որ նրա մէջ է: Նոյնպէս և ոչ ոք չգիտէ Աստծու խորհուրդները, եթէ ոչ Աստծու Հոգին: Ուրեմն մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին, որ Աստծուց է, որպէսզի ճանաչենք այն, որ Աստծուց շնորհւեց մեզ» (Ա Կոր., Բ 10-12): Ս. Հոգին գիտէ Աստծու խորքերը և մենք, Ս. Հոգի ստացած լինելով, կարող ենք մարդկայնօրէն պարզել մեր առաջ այս աստուածճանաչութիւնը տրամաբանական դատողութեամբ ևս:

Նախ՝ Աստուած կատարեալ կեանք է. ամեն կեանք գործունէութիւն է ու գիտակցութիւն, և այն է ամենակատարեալ կեանքը, որ ամենաընդարձակ գործունէութիւն ունի: Աստուած էլ իր յաւիտենական զօրութեամբ պէտք է նաև յաւիտենական գործունէութիւն ունենայ, ինչը և ունի իր էութեան մէջ: Աստուած չի կարող կատարեալ կեանք լինել առանց Ս. Երրորդութեան. Աստուածութիւնն իր յաւիտենական կեանքում չէր կարող կենսական գործունէութիւն ունենալ, եթէ միայն ինքը լինելով Իրենից տարբերւելու և իր հետ միացնելու բան չունենար իր հետ, իսկ այդ տարբերումն ու միացումը լինում է Որդու ի յաւիտենից ծննդեամբ և Ս. Հոգու անհատահոս բղխմամբ: Սրանցով յաւիտենական կեանքն ու

յաւիտենական գործունէութիւնը յաւիտենական առարկայ էլ է ունենում իր յաւիտենական էութեան մէջ: Նրա մէջ յարաբերութիւն է գոյանում մէկի Հայրութեամբ ու միւսի Որդիութեամբ, որոնք և մի բնութիւն և մի էութիւն ունեն Էաբուխ ու հայրաշարժ Ս. Հոգու միութեամբ, ուր գործունէութիւնն ու կեանքը կատարեալ են դառնում:

Երկրորդ՝ մարդու հոգու նմանութեամբ ևս հաստատւում է նոյն դաւանանքը. **մարդն ունի միտք, կամք և զգացմունք. դրանք անձնաւորութիւններ չեն, այլ կարողութիւններ:** Սակայն այդ երեքն Աստծու մէջ իրողութիւն են, քանի որ Աստծու մէջ մտածողութիւնն ու գոյութիւնը մէկ է, մտածողութեան ու գոյութեան միջև հակադրութիւն չկայ և ամենայն գոյութիւն Նրանից է ծաւալւում, մինչդեռ մեր մէջ մտածողութեան ու գոյութեան միջև հակադրութիւն կայ՝ մեր սահմանափակութեան և արարածութեան պատճառով: Ուստի **և հոգեկան երեք կարողութիւններն անձնաւորութիւն չեն, իսկ Աստծու մէջ կամքը, միտքը և զգացմունքն անձինք են:**

Եւ երրորդ՝ Աստծու յաւիտենական գործունէութիւնը իր լրումը ստանում է նախ իր մէջ և ապա՝ դէպ աշխարհ. իր մէջ կատարւում է Ս. Երրորդութեան յարաբերութեամբ կամ առնչութեամբ, իսկ աշխարհի հանդէպ՝ նրանց յայտնութեամբ: Իր մէջ յաւիտենական գործունէութիւնը չի կարող առանց յաւիտենական ինքնագիտակցութեան լինել, իսկ ինքնագիտակցութիւնը պահանջում է կատարեալ «դու» և «ես», առանց որոնց ո՛չ անձ կը լինի, և ո՛չ ներքին յաւիտենական գործունէութիւն[56*]: Իսկ երկուութեան հակադրութիւնն ու հակառակութիւնը վերանում է միմիայն երրորդութեամբ, ինչպէս եռանկիւնու մէջ՝ ըստ հին հայրերի տեսական օրինակի: Այսպիսով **Աստծու գործունեայ ինքնագիտակցութիւնն իր լրումը ստանում է Հօր և Որդու մէջ, որոնցում սփռւում է Աստծու էութիւնը,** իսկ երրորդ անձը՝ Ս. Հոգին, բխելով Հօրից և առնելով Որդուց՝ երկուսի հետ մի միութիւն, մի էութիւն ու կատարեալ սէր է կազմում «իբրև անհատահոս վտակ»:

Ս. Երրորդութեան մէջ որոշւում է այն վերոյիշեալ առնչականութիւնը, որ արտայայտւում է Հայր, Որդի և Սուրբ Հոգի անուններով, այսինքն՝ որ Հայրը ծնող է Որդուն և բխող Ս. Հոգուն. «Հայրը արարչական զօրութիւնն է, որ թագաւորական զօրութեան նշանակն է, Որդին՝ բնական զօրութիւնը, որով

երևում է դատողական զօրութիւնը, Հոգին՝ հաշտարար զօրութիւնը, որով յայտնի է դառնում կենարար զօրութիւնը, ինչը և կոչւում է միասնական Աստուածութիւն»[1]: Միևնոյն աստուածային զօրութիւնը մէկ լինելով հանդերձ, յայտնւում է երեք որոշ անձանց մէջ, որոնցից իւրաքանչիւրը մէկ Աստծու յայտնութիւնն է: Սկզբնական հիմք, սկզբնական աղբիւր է Հայրն Աստուած (Յակ., Ա 18): Նա անտեսանելի է և Իր կատարեալ լիութեամբ ծաւալելով, յայտնւում է Որդու և Ս. Հոգու մէջ ու յայտնի դառնում (Յովհ., Ա 18, Ա Կոր., Բ 10): Որդին «պատկեր է աներևոյթ Աստծու»՝ յաւիտենից ծնւած (Ա Կոր., Ա 5), Հօր փառքը (Եբր., Ա 2), որին Հայրը «կեանք պարգևեց կրելով իր անձի մէջ» (Յովհ., Ե 26) և «ամենայն ինչ նրանով եղաւ» (Յովհ., Ա 3), «որով արարեց յաւիտեանները» (Եբր., Ա 3, Կող., Ա 16): Ինչպէս որ մեր գիտակցութեան համար արտաքին աշխարհն է պէտք, այնպէս էլ յաւիտենական Աստծու գիտակցութեան համար ոչ թէ ժամանակաւոր աշխարհն է պէտք, որ չէր էլ եղել, այլ գաղափար, երկնաւոր գաղափարների աշխարհ, որ բխում է Աստծու խորքից: Այդ գաղափարները խառնիխուռն չեն, այլ որոշապէս ու կանոնաւոր, և այդ հաստատուն է նրանով, որ հէնց Աստծու էութիւնից է ծնւում իբրև մտածողութեան սկզբունք, կատարեալ լոյս ու կեանք կամ աստուածային ճշմարիտ իրականութիւն: Այդ է, որ կոչւում է Խօսք, որ ի սկզբանէ էր, Աստծու մօտ էր և Աստուած էր, որ Աստծու բացարձակ յայտնութիւնն է, որի մէջ յայտնւում է փրկութիւնը՝ իր բովանդակ լրութեամբ: Նա է Խօսքը, քանզի նրա իւրաքանչիւր խօսքը փրկչական է և կենդանարար՝ իւրաքանչիւր մարդու և ժամանակի համար: Նա աշխարհ է շարժում ու նորոգում[2]: Նա յաւիտենական Խօսք է, որով Հայրը ճանաչում է Ինքն Իրեն, նաև՝ խօսւած ու խօսող, յայտնւած ու յայտնող Խօսք է: Այսպիսով Հայր Աստուած ոչ միայն Հայր է արարածների և կամ արարւած աշխարհի գաղափարների, ինչպէս ուսուցանում է Փիլոն Եբրայեցին[57*], այլև Հայր է մտածող Խօսքի, առանց որի ոչ մի միտք, ոչ մի գաղափար չի կարող Հօրը ներկայանալ իբրև մի տարբեր առարկայ: Աստծու Որդով որոշարկւում է Աստծու մէջ ճշմարիտ գիտակցութիւն՝ «ես», որ առանց «դու»-ի չի կարող լինել: Աստծու Որդով Աստծու մտքի աշխարհը, գաղափարի աշխարհը, երկնաւոր աշխարհը դառնում է իրականութիւն, անվերջութիւն, անսահմանութիւն և կատարելութիւն:

[1] Եղիշէ, 308-309:
[2] Ընդհանր., էջ 165:

Հայրական աղբիւրից ծաւալւած մտային կամ գաղափարական աշխարհը յայտնելով Որդու մէջ՝ աստուածային փառքի լուսաւորութիւն է ստանում ու մի ներքին արքայութիւն դառնում Ս. Հոգով: Ս. Հոգին բխում է Հօրից ազատապէս, առնում է Որդուց, բխում է անհատաբար, որով և Հօր և Որդու առնչութիւնը դառնում է սիրոյ յարաբերութիւն ու կապ: Բայց նա Ս. Հոգի է, ուստի և Աստծու հոգիութեան կատարեալ յայտնութիւնն է և Հօր ու Որդու սիրոյ իրականութիւնը, ինչպէս Որդին Աստծու մտքի յայտնութիւնն ու իրականութիւնն է: Իւրաքանչիւր անձ ներկայացնում է մեզ կատարեալ Աստուածութեան յայտնութիւնը. նրանցից մէկը փոքր կամ մեծ, առաջ կամ յետ չէ միւսից, այլ երեքն էլ հաւասար են յաւիտենից, միայն թէ Հայրը սկիզբն ու ծնող, Որդին՝ ծնունդ և Ս. Հոգին՝ բխում. «Ինչպէս բոցն ու ջերմութիւնը կրակի մէջ, ինչպէս լոյսն ու տապը արեգակի[1] մէջ, ինչպէս ջուրն ու բղխումը՝ աղբիւրից, ինչպէս խօսքն ու հոգին՝ մտքից»[2]: «Ինչպէս հոգին, միտքը և խօսքը մի հոգի են ասւում և ոչ երբեք՝ հոգիներ. այլ նոյն հոգու կենդանութիւնը կոչւում է հոգի, իմաստութիւնը կոչւում է միտք, խօսողութիւնը կոչւում է խօսք, այդպէս էլ Հայրը՝ անձին իսկութեամբ, անսկիզբ էութեամբ, Հայր՝ Որդու՝ միշտ իր հետ լինելու, և Հոգու՝ Իր հետ լինելու պատճառով»[3]: «Անքննելի է Երրորդութեան միութիւնը, որն ունի մէկ իսկութիւն, մէկ էութիւն, մէկ Աստուածութիւն. Հայր և Որդի և Ս. Հոգին՝ նրանցից և նրանց մէջ, իսկութեամբ, էութեամբ և Աստուածութեամբ հարթ, հաւասար, պարզ.՝ խորութեան, բարձրութեան, լայնութեան, երկարութեան մէջ. բնութեան մէկ էութիւն, երրորդութեան մէկ պսակ, և երկինքն ու երկիրը լի են նրա փառքով»[4]:

«Հօրից են Որդին և Ս. Հոգին, բայց չեն կոչւում եղբայրներ կամ երկու որդիներ...: Որովհետև Հայրը ծնող է, Որդին ծնունդ և Սուրբ Հոգին՝ բխում: Որդին նստում է Հօր աջ կողմում և Սուրբ Հոգին՝ Որդու աջ կողմում»: «... Եւ արդ, Սուրբ Երրորդութեան մէջ ոչ մեծ կայ և ոչ փոքր, որովհետև մեծն ու փոքրը, ծանրն ու թեթևը, շատն ու քիչը ժամեր և ժամանակներ են պարունակում, իսկ ուր չկան ժամեր և ժամանակներ, անբաւելի բնութեանը չի մօտենայ ոչ չափ և ոչ կշիռ,

[1] Տես և Ա Տիմ., Զ 16, Յովհ., Ա 4-10, Զ 12, Ղուկ., Ա 48, Եբր., Ա 2-3, Մատթ., Գ 11, Ղուկ., Գ 16, Աթես., Ե 19: Հմմտ. Մեկն. ժամ., էջ 321-323:
[2] Յաճախ., Ա 700:
[3] Եզնիկ, 123:
[4] Ագաթ., ԼԷ, տե՛ս Հարց., 51-60, 107-110, Ընդհ., 13:

այնտեղ չի տեսնի ոչ փոքր և ոչ մեծ: ... Արդ, այս դաւանութիւնը հայերն ընդունեցին Մեծն Գրիգորից, Արիստակէսից և երանելի Ներսէսից»[1] [58*]:

Բայց Աստուած, աղբիւր և հաստատուն հիմք լինելով երկնաւոր գաղափարների ու զօրութիւնների, իր կատարեալ փառքը յայտնած չէր լինի, եթէ միմիայն իր մէջ ամփոփուէր: Նա, իբրև կատարեալ Տէր և կատարեալ սէր, կամեցաւ յայտնուել գիտակցական մի աշխարհի, որով տէր է ազատ աշխարհի վրայ և կատարեալ սէր է ոչ միայն իր կատարելութիւնների, այլև անհաւատ անձանց նկատմամբ: Ուստի և Աստուած ստեղծում է այս աշխարհը, որում և հիմնում Իր կատարեալ սիրոյ արքայութիւնը: Ստեղծագործութիւնն իբրև աստուածային տնօրինութեան կամ Հօր կամքի իրականացում՝ կատարւում է Որդով, որը և ժամանակը լրանալուց յետոյ Հօր և աշխարհի համար միջնորդ է դառնում: Աշխարհում Աստծու յաւիտենական տնօրինութիւններն Աստծու արքայութեան համար յայտնւում են Քրիստոսի մէջ, և ապա այդ տնօրինութիւնների իրականացումը կատարւում է Ս. Հոգով: Որդին որդիացնում է մարդկանց իր Հօրը և մասնակից դարձնում աստուածային բարիքին, իսկ Ս. Հոգին կենդանագործում է մարդկանց և աստուածային, սիրոյ զօրացուցիչ շաղկապով լուսաւորում նրանց նորոգ կեանքի մէջ, ինչպէս և ստեղծագործութեան ժամանակ նոյն Ս. Հոգին էր, որ գործակից էր Որդուն և Նրա գործի յաւիտենական կարելիութիւնների ներքին կազմակերպիչն էր[2]:

Հայրն Աստուած յայտնւում է նախապատրաստական օրէնքի և մարգարէութիւնների մէջ, Որդին Աստուած ժամանակի լրման մէջ, իսկ Հոգեգալստեան տօնին իջնում է Ս. Հոգին հաւատացեալների մէջ:

---

[1] Մամբրէ վերածանող, Ճառք [էջ 70]:

[2] «Ինչ որ ներգործում են Հայրն ու Որդին, նոյն էլ՝ Հոգին: Եւ ինքն ամեն ինչում ամեն ինչը տիրապէս մարդացած Աստուած է: Որովհետև Երրորդութեան մէջ առաջինը ասելու պատճառով մէկը միւսից մեծ չէ, և ոչ էլ յետոյ անուանուածը՝ փոքր: Եւ կամ մէկ ասելով՝ դէմքերը խառնւում են, կամ երեքի տրոհուած լինելով՝ կամքը տրոհւում է երեքի: Որովհետև Հայրն ամեն ինչով մեծարելի չի լինի, եթէ իր մէջ չունենայ Բանի զօրութիւնը: Ճիշտ այդպէս էլ. եթէ Հոգի չունենայ իր հետ, կը լինի անշունչ և անկենդան և հրամանի մէջ՝ տկար...: Իսկ Բանն էլ, եթէ Հօր անունով չի ճանաչւում, դառնում է որբ և լքած կամ էութիւնից զուրկ մի մահկանացու: Նոյնպէս և Հոգին, եթէ չասենք նրա պատճառը, այն կը նկատուի թափառական անկարգ, որպէս մի անդասակարգելի շունչ...»[59*] (Ս. Գրիգոր Նարեկացի,):

Այսպիսով Ս. Երրորդութեան դաւանանքը պարունակում է իր մէջ երկու նշանաւոր խորհուրդներ, որոնցից մէկը վերաբերում է Աստծու ներքին կեանքի փառքին, և երկրորդը՝ աշխարհի հանդէպ ունեցած յայտնութեանը: Առաջինն արդէն մեր հաւատատենչ քննութեամբ ուսումնասիրեցինք, այժմ էլ մնում է մեզ թեւակոխել այդ երկրորդ շրջանը՝ խօսելով նախ Հօր Աստծու գործերի, ապա Որդու փրկագործութեան, և յետոյ Ս. Հոգու շնորհաբաշխութեան մասին, ինչպէս նոյն կարգով դաւանում ենք մեր Հաւատամքի մէջ:

Է

ԱՍՏԾՈՒ ԱՐԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Աստուածային սիրոյ արտաքին գործունէութեան առաջին իրականացումն Աստծու արարչութիւնն է: Աստծու արարչութիւն է կոչւում Նրա այն գործը, որով Նա Իր էութիւնից տարբեր ինչ-որ բան է առաջացնում կամ ստեղծում: Նրա արարչութեան պատճառն այն է, որ Նա սէր է, ուստի և չի կարող իր մտքերը իր մէջ ամփոփել, այլապէս նա սէր չի կարող լինել: Սէր լինելով Աստուած պէտք է հոգիների հայր լինի, կենդանիների Աստուած և իր արքայութեան մէջ հոգի՝ ճշմարիտ հոգով երկրպագողների համար: Ինչպէս որ Աստծու սէրն անկարելի է դարձնում արարչութեան չլինելը, այնպէս և այդ սիրոյ անսպառ առատութիւնից բխում է արարչութիւնը: Աստուած իր սիրոյ առատութեամբ և իր կամքի անսահման ազատութեամբ կամեցաւ ստեղծել աշխարհը և Իր յայտնութիւնը շնորհել Իր ստեղծածին: Այսպիսով արարչութեան պատճառն Աստծու ազատ կամքի, անբաւ սիրոյ և բազմախորհուրդ մտքի արտաքին իրականացումն է:

Աստծու արարչութեան նպատակը ևս սիրոյ արքայութիւնն է, որ նա կամենում է հաստատել: Սիրոյ արքայութիւնը հիմնադրւում է Աստծու արարչութեամբ և իրականում, կատարելագործւում է դէպի Աստուած ձգտելով: Աստուած ստեղծեց աշխարհն «ի գովեստ իր փառքի», ասում է առաքեալը (Եփ., Ա 12,14), միևնոյն ժամանակ ասում է, որ մենք նորոգւում ենք «նոյն պատկերով փառքից փառք» (Բ Կոր., Գ 18): Հետևաբար ոչ թէ արարուած աշխարհը ստեղծուած է միմիայն իր Արարչի փառքի համար և ինքնըստինքեան ոչ մի

նշանակութիւն չունի, նոյնպէս և ոչ թէ արարուած աշխարհն ինքնըստինքեան նպատակ է և իր առաջադիմութեան համար է՝ առանց Աստծուն նպատակ ունենալու. ո՛չ, այլ Աստուածը Ինքն Իր նկատմամբ ունեցած սէրն իրականացնում է աշխարհի նկատմամբ ունեցած սիրով, ինչը հեռու է ինքնանպատակ փառասիրութիւնից: Աստծու նպատակն է դրա միջոցով մարդուն «փառաց ի փառս» բարձրացնել: Ուստի և դատապարտելի է Կալւինի և պանթէիստներից ոմանց տեսութիւնը, թէ աշխարհը ծառայում է միմիայն Աստծու փառքին ու փառասիրութեանը, և իբր թէ մարդիկ կաշկանդուած անօթներ են, որոնց երանութիւնն ու նզովքը իրենց ճակատագիրն է: Այդպիսի մոլոր տեսութեամբ Աստուած դառնում է մի եսական զօրութիւն, որպիսի տեսութիւնը կատարելապէս խորթ ու խոտելի է քրիստոնէական վարդապետութեան սկզբունքով[1]:

Աշխարհն Աստծու առաջ ոչ լոկ միջոց է և ոչ լոկ նպատակ, այլ միանգամայն թէ՛ միջոց է, և թէ՛ նպատակ. միջոց է իր փառքի յայտնութեան և նպատակ՝ իր սիրոյ արքայութեան համար, և աշխարհի նորոգման նպատակն է Ինքն Աստուած: Այսպիսով արարչութիւնն Աստծու յաւիտենական զօրութեան ճշմարիտ արքայութիւնն է: Այս տեսնելու ենք մանաւանդ փրկագործութեան խորհրդի ուսումնասիրութեան մէջ (Հմմտ. Սաղմ., ԺԸ 1, ԿԸ 35, ՃԽԸ., Ել, ԽԳ 7, Մատթ., Ե 16, Ա Պետ., Դ 10, Ա Կոր., Զ 20, Ժ 51, Եփ., Ա 4, 6, 12, Յովհ., ԺԳ 31, ԺԷ 1-4, Բ Թես., Ա 10, Առ., ԺԶ 4, Եբր., Բ 10, Կող., Ա 16):

Արարչութեան պատճառն ու նպատակը իմանալուց յետոյ պէտք է գիտենանք և «ստեղծել» բառի իմաստը:. Ս. Գրքում ասուած է, թէ Աստուած ստեղծեց աշխարհը ոչնչից (Ծննդ., Ա 1, Բ Մակ., Է 28, Հռ., Դ 17, Եբր., ԺԱ 3): «Ըստ մարդկան» մտածելով՝ ոչնչից ոչինչ կը լինի: Սակայն առաքեալն ասում է. «Հաւատքով ենք իմանում, որ աշխարհները ստեղծուել են Աստծու խօսքով՝ անտեսանելի բաներից տեսանելի դառնալով» (Եբր., ԺԱ 3, Կող., Ա 16, 17, Յովհ., Ա 3, Գործք., Դ 24, Սաղմ., ԿԸ 35): Ուրեմն նախքան ստեղծումը մեր տեսանելի աշխարհից ոչինչ չի եղել, այլ միմիայն Աստուած է եղել և նա աներևոյթից է ստեղծել աշխարհն ու ստեղծել է «Բանիւ»: Այսինքն՝ աշխարհի ստեղծագործութեան բոլոր կարելիութիւնները («աներևոյթից» - «ոչնչից»)

[1] Եզնիկ, էջ 232-235, 236-238:

Աստծու կամքի մէջ էին, որովհետև Աստուած է բոլոր կարելիութիւնների աղբիւրը[60*]: Իսկ այդ կարելիութիւնները բացւում են Աստծու առաջ իր Որդով կամ իր Բանով (Յովհ., Ա 1-5), որով Աստուած իր մէջ մտածելով և աշխարհի գաղափարը յայտնելով՝ իրականացնում է իր արարչական կամքը: Այս են բացատրում մեր Ս. Հայրերը՝ գրելով. «Մինչև արարելը Աստուած անեղ բաները չէր իմանում խառնիխուռն կերպով, այլ իւրաքանչիւր մասի տեսակները կարգաւորուած էին իր առջև, իսկ մարդկանց և հրեշտակների պարագային՝ ոչ միայն տեսակներն [իր մտքում ունէր], այլև այդ տեսակներից լինելիքները»[1]: Եւ այդ կարելիութեան գաղափարը նա իրականացրեց «ոչ թէ ինչ որ բանից, այլ՝ ոչնչից, որովհետև միայն Նա է ինչ որ բան, և մնացեալ ամեն ինչ Նրանով եղաւ»:

«Բան չկար, որ ժամանակակից լինէր Աստծուն, և մի նիւթ իսկ չկար, որ վերցնէր և դրանից արարածներ ստեղծէր, այլ ինքն է բովանդակ բնութեան Արարիչը, և ստեղծիչն է ոչ միայն կերպարանքների, և ոչ էլ էակների էութիւնների միախառնիչն է, այլ՝ գոյանալիք գոյերի գոյաւորողը»[2]:

«Չենք կարող ասել, որ այս մեծ արարուած մարմինը ոչնչից է, և ոչ այն, որ նա ինքնաբոյս գոյացութիւն է, և վարանոտ տարակոյսի մէջ չենք ընկնում, թէ՝ որտեղից եղաւ Աստծու բնական կամքը՝ իմանալ և ստեղծել, այլ միշտ Աստուած է, և արարող զօրութիւնը միշտ Իր հետ է: Եւ երբ կամեցաւ՝ կամեցաւ, մտածուող բաները գոյութեան կոչեց, որովհետև իմանալի բաների արարիչը բնական իմացութիւն է: «Աշխարհը նախքան լինելն արդէն կար Աստծու նախագաղափար տեսութեան մէջ»[3]:

Արդ, Աստուած ստեղծեց աշխարհը «Բանով», այսինքն՝ Որդով, և Իր անբաւ սիրոյ լրմամբ Նա իրականացրեց աշխարհի գաղափարը և գոյացրեց ըստ իր Հօր կամքի, իսկ Ս. Հոգին՝ Հօր անհատ բխումը լինելով՝ իր կենդանարար ներգործութեամբ ներքին կազմակերպութիւն տուեց սիրոյ արքայութեանը: Ինչպէս որ Ս. Երրորդութիւնն առանց Ս. Հոգու կը զրկուէր Իր ներքին սիրոյ յարաբերութիւնից ու կապից, այնպէս էլ Աստծու արարչութիւնն առանց Ս. Հոգու համագործակցութեան խառնիխուռն, անկապ և անզարդ կը լինէր: Ուստի և Ս.

[1] Եղիշէ, էջ 24:
[2] Եզնիկ, էջ 239:
[3] Եղիշէ, էջ 369, 374, 173, Հարց., 156-164, 167:

Ներսէս Շնորհալին գրում է. «Հայրը կամեցաւ ստեղծել տեսանելի և անտեսանելի արարածներին, Որդին նրանց անգոյութիւնից գոյութեան կոչեց. և Սուրբ Հոգին զարդարեց իմաստութեամբ»[1]:

Ը

ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Որովհետև Աստուած անսահման կեանք է, և աշխարհը ստեղծուած է ոչ թէ լոկ Աստծու փառքի յայտնութեան համար, այլև նոյն աշխարհը Աստծու արարչութեան նպատակն է և ծառայում է Աստծու արքայութեան իրականացմանը, ուստի այդպիսի մի աշխարհը չի կարող կենդանութիւնից և կենդանական առաջադիմութիւնից զուրկ մի մեռեալ գոյութիւն լինել: Անբաւ կեանքի ու կեանք բաշխողի արարչութիւնը բնաւ չի կարող մեռելութիւն լինել: Հետևաբար աշխարհը ստեղծելով կունենար իր առաջընթացը կամ իր զարգացման բնական ընթացքը, ըստ որում նախ խառը նիւթ է ստեղծում և ապա կանոնաւորապէս կազմակերպում (Ծննդ., Ա 1-2...): Սոյն միտքը տեսնում ենք արարչութեան պատմութեան մէջ Ծննդոց գրքում ևս իրապէս արտայայտուած[61*]:

Նախ այնտեղ «Եւ ասաց Աստուած՝ Եղիցի լոյս. և եղև լոյս», և այլ նման խօսքերով ասուած է, որ Աստծու հրամանը կամ Աստծու կամքն անմիջապէս կատարւում է, որովհետև Նրա կամքը մերինի նման չէ, այլ իրականութիւն է:

Երկրորդ՝ այնտեղ բովանդակ արարչագործութիւնը վեց բաժանմունք ունի, և իւրաքանչիւր բաժանմունք նկատւում է մի օրւայ գործ: «Օր»-ը Ս. Գրքում գործ է ածւած ժամանակի ու շրջանի իմաստով (օրինակ՝ Ծննդ., Բ 4,17, Գ 5, Թւոց., ԺԴ 34, Եզեկ., ԺԳ 12, Ա Թես., Ե 4, Եբր., Ա 2), մանաւանդ, որ արեգակը, այսինքն՝ երկրիս ժամն ու ժամանակը որոշողը չորրորդ օրւայ գործերի մէջ է յիշւում, թէև սրբազան մատենագիրները սոսկ կրօնական նպատակ ունենալով՝ պարագաների կարգորոշութեանը նշանակութիւն չեն տալիս (տե՛ս օր. Յովբ., ԼԸ, Սաղմ., ՃԳ, հմմտ. Մատթ., ԺԹ 3-6, Ե 17-19), և այդ բաժանմունքներն օր են

[1] Ընդհանր., 13:

կոչւում եօթերորդ օրւայ և եօթնամեայ տարեդարձի կրօնական վճռի համեմատութեամբ (Ելից., Ի 1, Ղևտ., ԻԵ): Այլև Մովսիսի սաղմոսում (ՁԹ) երգւում է. «Հազար տարին Տիրոջ աչքում երեկւայ օրւայ նման է, որ անցաւ, կամ գիշերւայ մի պահի պէս: Նրա տարիները տառապանքով պիտի լինեն» (4-5): Այդպէս գրում է նաև առաքեալը. «Տիրոջ համար մէկ օրը՝ ինչպէս հազար տարի է, և հազար տարին՝ ինչպէս մէկ օր» (Բ Պետր., Գ 8), այսինքն՝ մեր ժամանակաչափով չենք կարող Աստծու գործերը չափել: Հետևաբար իւրաքանչիւր շրջանի գործ իր կատարման մէջ է մտնում Աստծու կամքի մի վճռով և իր զարգացման կարգով ընթանում, ըստ որում ամբողջ ստեղծագործութիւնը, սկսւելով անկատարից, դիմում է դէպի կատարելագոյնը կամ թէ յաջորդ գործն ընթացք է ստանում նախորդ գործի լրմամբ միայն: Եւ ուրեմն Աստուած այնպէս է տնօրինել իր արարչագործութիւնը, որ արարածներն ըստ Արարչի ստեղծման կարգաւորութեան բնական զարգացում են ստանում և առաջադիմում: Իսկ եօթերորդ օրւայ հանգստութիւն է կոչւում Աստծու նախախնամական գործունէութիւնը մինչև աշխարհի վերջը[1]:

Երրորդ՝ արարչագործութեան պատմութիւնը Ս. Գրքում կրօնական և ոչ թէ բնագիտական նպատակ ունենալով, յիշում է, որ աշխարհի բոլոր տեսանելի և անտեսանելիների գոյութիւնները կեանքի են կոչւել Աստծու ամենազօր հրամանով և Աստծուն ենք պարտական աշխարհի բովանդակ բարիքի համար: Ոչ մի երկնային մարմին, ոչ մի բանական արարած, ոչ մի կենդանի և ոչ մի չնչին արարած անգամ Աստծու արարչական հրամանից դուրս չի ծագել, ըստ որում նաև այնտեղ որոշւում է կիրակի օրւայ, ամուսնութեան, ամուսինների փոխադարձ յարաբերութեան սկզբունքները (Ծննդ. Բ 2-3, 23, 24, Հմմտ. Ա Կորնթ. ԺԱ 3-12, Եփես. Ե 25, Մատթ. ԺԹ 3 և այլն): Ուստի և մեր հաւատքի, մեր աստուածճանաչութեան հիմքն այն գիտակցութիւնն է, որ մենք և ամբողջ աշխարհը Աստծու ստեղծածն ենք և ամեն արարած մարդու համար է: Այդ պատճառով և Ս. Գրքում երկիրն իբրև մարդու բնակարան, կամ մարդն արարչութեան կենտրոն է նկատւում: Այնպէս որ երկրի կլոր լինելը, որ յայտնագործեց Պիւթագորասը (500 թ. Ն. Ք.), որ այն պտտւում է իր առանցքի

[1] Հմմտ. Մեկն. ժամ., էջ 203:

շուրջը, ինչպէս ընդունում էր Պլատոնը (348 թ. Ն. Ք.), որ այն պտտւում է Արեգակի շուրջը, ինչպէս 100 տարի յետոյ պէտք է ասէր Արիստարխ Սամոսացին և ապա հաւաստէր Արքիմեդը[62*] և այլն. այդ բոլորը դուրս է Ս. Գրքի նպատակից[1]:

Եւ չորրորդ՝ հէնց սկզբում ասած է, թէ՝ «Եւ Աստծու հոգին շրջում էր ջրերի վրայ», որի հետ միասին յիշւած է և Աստծու ամենազօր խօսքը: Ըստ այսմ Աստծու Հոգին և Աստծու Խօսքը ամենից առաջ են և նրանց գործունէութեամբ է այս աշխարհը թէ՛ լոյս, և թէ՛ ամենայն մարմին գոյութիւն ստանում, կարգաւորւում և իր բնականոն ընթացքի մէջ մտնում: Այդ սկսւում է նրանով, որ շփոթը (թոհ ու բոհը), խառնակ վիճակը վերանում է, և դրա հետ լոյս է իջնում երկրի վրայ[63*], առանց որի չի կարող կարգաւորութիւն լինել խաւարի մէջ[2]:

Ահա այս չորս կէտերում է արտայայտւած քրիստոնէական արարչաբանութիւնը աշխարհի ստեղծման վերաբերեալ: Բոլոր ազգերն էլ ունեն արարչագործութեան աւանդութիւնը, և բոլորն էլ գրեթէ միանման են պատմում, որոնցից Ս. Գրքի պատմութեանն ամենամօտիկը փիւնիկեցիների և բաբելացիների աւանդութիւնն է[64*]: Սակայն եթէ հեթանոսական աշխարհի այդ աւանդութեան ամենազարգացած տեսութիւնը յոյների մէջ ծաղկած համարենք, կը տեսնենք, որ յոյն իմաստասէրներն էլ չեն կարողացել այդ չորս կէտերի դէմ չմեղանչել: Այսպէս Քրիստոսից 500 տարի առաջ Քսէնոփոնէս յոյն փիլիսոփան, նկատելով երկրի, մանաւանդ, սարերի շերտերում քարացած կենդանիներ և նրանց նմանութիւնը ծովայինների հետ, ասում էր, թէ աշխարհը տիղմից է կազմւել. ոմանք էլ այդ վերագրում են բնութեան ուժին, ոմանք՝ ջրհեղեղի, և ուրիշները՝ մի նախնական արարչութեան[65*]: Եւ մենք տեսնում ենք, որ յոյների թէ՛ կրօնական և թէ՛ իմաստասիրական տեսութիւնները հանգում են մի կէտի, այն է, որ նրանք աշխարհը նկատում են միայն իբրև բնութիւն և ոչ իբրև արարած, կամ թէ համարում են եղած նիւթից ստեղծւած (երկուականութիւն՝ դուալիզմ- Պղատոն, Արիստոտէլ, Զրադաշտ)[66*] Նրանք ներկայացնում են աշխարհն իբրև սկզբնական սաղմեր կրող շփոթից (քաոս) առաջ եկած, լոյսը խաւարից բխած,

[1] Տե՛ս Հարց., էջ 180-189, 202, 219, ուր մէկտեղւում են այժմ ևս գիտութեան մէջ ընդունւած շատ կարծիքներ ու գիտեր. նաև՝ Բարսեղ Մեծն. Վեցօրեայ, Թ:
[2] Տե՛ս և Հարց., 192, Խոսր. Անձևացի, Մեկն. ժամ., 193:

հոգիները սեփական զօրութեամբ բնութեան կոյր ուժերի դէմ կուելով ազատւած մի իրողութիւն և այլն: Այս առասպելաբանութիւններն անշուշտ մեծ զարկ էին տալիս նրանց կրօնական գեղարուեստի զարգացմանը, որին դարձեալ անկում էր կանխորոշում նրանց կոյր ճակատագիրը: Հին աշխարհում նոյնպէս տարածւած էր թէ՛ աստւածեան (դէիստական) տեսութիւնը, ըստ որի Աստւած ստեղծելով աշխարհը՝ մի կողմ է քաշւել, ինչպէս մեքենապետը մեքենան մէկընդմիշտ լարելուց յետոյ, այլևս չմասնակցելով նրա ընթացքին, թէ՛ համաստւածեան (պանթէիզմ) տեսութիւնը, որի համաձայն աշխարհը ծագում և զարգանում է առանց Ոգու ներգործման, և թէ՛ նիւթապաշտական տեսութիւնը, որ ժխտում է ճշմարիտ Աստծու գաղափարը՝ նիւթը համարելով գոյութեան ու զարգացման միակ պայման (Եպիկուրոս, Լուկրեցիոս, Դեմոկրիտես)[67*]:

Այս տեսութիւնների հակառակ բևեռը հրէական արարչաբանութիւնն է, որ շեղւելով Ծննդոց գրքի պատմութեան ոգուց, աշխարհին նայում էր իբրև լոկ արարած: Նա ուսուցանում էր, թէ աշխարհը ստեղծւած է լոկ Աստծու փառքի համար, և չունի ոչ մի ինքնուրոյնութիւն և ոչ մի բնական ընթացք, այլ միայն մի կենդանի մեքենայ է իր բացարձակ մեքենապետի առաջ[68*]:

Քրիստոնէական վարդապետութիւնը հիմնովին մերժում է թէ՛ հեթանոսութեան բնապաշտական ուղղութիւնը և թէ՛ հրէութեան բռնապետական տեսութիւնը՝ արհամարհելով երկուսի միակողմանիութիւններն էլ, որոնք պարզ ասած խոտելի են և չեն մտնում Աստծու իմաստուն արարչութեան մէջ: Որովհետև Աստւած անսահման կեանք, սէր և իմաստութիւն լինելով՝ ստեղծեց ոչ թէ մի անկենդան և ինքնուրոյնութիւնից կատարելապէս զուրկ աշխարհ, այլ մի աշխարհ, որ իր սահմանափակ զօրութեամբ ու կենդանութեամբ ազատ ընթացք ունի, և հետևաբար այդպէս ու միայն այդպէս է ներկայացնում իր Արարչի ամենիմաստուն կարողութեան ու սիրոյ յայտնութիւնը: **Աստւած ստեղծեց ոչ լոկ բնութիւն և ոչ սոսկ արարած. աշխարհն Աստծու բնական արարչագործութիւնն է:** Աշխարհի սկիզբը մէկն է, և այդ սկզբնաւորութիւնը գերբնական է, որով նա Աստծու արարչական ստեղծագործութիւնն է, սակայն աշխարհն ունի և իր բնական սկզբնաւորումը, որի մէջ ծաւալւում են աշխարհի բոլոր երևոյթների և զգայարանական սաղմերի աճումն այն արարչական զօրութեան ներգործութեամբ, որ նրանք ստանում են գերբնական սկզբից: Աստծու

արարչական կամքն աշխարհի գերբնական սկիզբը դնելով՝ բազմազան սկիզբներ է առաջացնում, աճեցնում ու բազմաւորւում, սակայն բոլորի բնական ընթացքը միութեան մէջ է մնում շնորհիւ գերբնական սկզբի միութեան, իսկ այդ գերբնական սկիզբն էլ Բանն-Աստծով է սկսւել, որ սկզբից Աստծու մօտ էր, առանց Նրա ոչինչ չի եղել և ամենայն ինչ նրանով է եղել ու ստեղծւել (Յովհ., Ա 1-6): «Որովհետև ոչնչից սկիզբը դրեց մէկով, և Աստուած իւրաքանչիւրից մինչև հազարներն ու բիւրաւորը, որպէսզի լաւութեան հանդէսով առաքինանան»[1]: Աստծու արքայութեան զարգացումը ցորենի կամ մանանեխի հատիկից է (Մատթ., ԺԳ 31, Մարկ., Դ 31, Ղուկ., ԺԳ 19, Ա Կոր., ԺԵ 37), բայց այդ հատիկն էլ ունի իր գերբնական վերջը[69*]: **Քրիստոնէական վարդապետութիւնը ոչ լոկ հասկ է ճանաչում, ոչ լոկ հատիկ, այլ երկուսը միասին. և երկուսի աճումը արարչական գերբնական սկզբից է.** ահա մի օրինակ աշխարհի ստեղծման սկզբունքի: Ուստի և մեր բնագիտական հետազօտութիւնը լոկ բնութեան գիտութիւն լինելով՝ շարունակում է իր գործը միմիայն մինչև հատիկը, միմիայն մինչև գերբնական սկիզբը և ոչ դէնը: Մենք ստեղծւած ենք, ժամանակն էլ ստեղծւած է, որ մեր ճանաչողութեան հիմքն ու պայմանն է, իսկ արարչութեան հետազօտութիւնը մեր սահմանից դուրս է, որի ճանաչելու համար պէտք է ոչ թէ ստեղծւած լինենք, այլ՝ Արարիչ, ուստի և այն ճանաչում ենք միմիայն Աստծու յայտնութեան ուսումնասիրութեամբ:

Աշխարհն ստանալով իր ընթացքը՝ ձգտում է դէպի իր նպատակը, և այդ ձգտման ճիւղաւորութիւնն իր բազմազանութեամբ ու հատ-հատ զարգացմամբ կազմում է ժամանակի գաղափարը: Քանի որ Աստծու արարչական կամքի մէջ աշխարհի ստեղծագործութեան գաղափարն անփոփոխ է՝ Աստծու արարչութիւնը ևս յաւիտենական է: Մինչդեռ այդ արարչական կամքն իր գործունէութեամբ առաջ է բերում աշխարհի արարածական ընթացքը, որ դիմում է դէպի նպատակ և ժամանակային է: Իսկ այդ ժամանակային ընթացքը իր լրումին կը հասնի նպատակին հասնելով, այն է՝ Աստծու արքայութեան վերջնական իրագործմամբ. այդ էլ կը լինի յաւիտենականութեան մէջ, որում կը վերանայ վախճանականութիւնը՝ անվախճան կեանքի լրմամբ:

[1] Ցաճախ., Է 26:

Այս առաջադիմութիւնը կատարելապէս նոյն կրօնական սկզբունքով է ընթանում, որ արտայայտւած է եօթնօրեակի մէջ: Աշխարհի կեանքի ընթացքը կամ տիեզերական պատմութիւնը այնպէս է առաջ գնում, ինչպէս ստեղծագործութիւնն իր եօթնօրեայ կարգով, ըստ որում իւրաքանչիւր մաս իր ընթացքն է ստանում նախընթացի աւարտից յետոյ: **Իւրաքանչիւր վեց շրջանի աւարտով լրանում է մի ժամանակ և ապա կրկին սկսւում է այսպէս ասած արարչական մի նոր օր, որ նախընթացի նմանօրինակ դրոշմն է կրում աստուածային ներգործութեամբ:** Ստեղծագործութիւնը մինչև մարդու ստեղծումն ամբողջացաւ մարդու ստեղծմամբ, իսկ տիեզերական կեանքի կամ պատմութեան առաջընթացն իր մարդկային հոգևոր ընթացքով շարժւում է դէպի յաւիտենականութիւն, որում կը լինի հոգևորի կատարելութիւնը: Իւրաքանչիւր նոր շրջան ընթացք է ստանում գրեթէ այնպէս, ինչպէս արարչագործութեան մէջ է լինում Աստծու «եղիցի լոյս» խօսքով[1]: Այսպիսով ժամանակի շրջանները ևս հեռաւոր նմանութեամբ կրկնւում են և դէպի առաջ գլորւում. «Անցնում են ժամերը, օրերը, տարիները և ձգտում առաջ ընթանալ» (Ցաճախապատում): Այս շրջանների ընթացքի վրայ էին նաև մարգարէները հիմնում իրենց աստուածատուր յայտնութիւնները՝ ցոյց տալով Արարչի տնօրինած կեանքն ու առաջադիմութիւնը դէպի ժամանակի վերջնական լրումը՝ յաւիտենական կեանք: Եւ այս հիման վրայ էին կառուցում հին աստղաբաշխներն իրենց 28 ամեայ (4x7) շրջանի գուշակութիւններն ապագայ տարիների պտղաբերութեան, խաղաղութեան, խռովութեան ու դժբախտութեան վերաբերեալ: **Աշխարհի վեց շրջանները լրացան Քրիստոսով, և այժմ մենք գտնւում ենք եօթնօրեայ շրջանի մէջ, որ պէտք է լրանայ Քրիստոսի երկրորդ գալուստով**[2]:

[1] «Բոլոր մարմնաւոր կենդանիների սերմը ջուր է, որ գոյանում է Աստծու Հոգու զօրութեամբ»: Եւ Աստուած ասաց. «Թող լինի լոյս»: Աստծու այս առաջին խօսքը եղաւ առանց շուրթերը շարժելու, առանց լեզուի տատանման, առանց ատամների կափկափման և առանց ձայն արձակելու, որովհետև ոչ թէ պէտք է կարծել, թէ Աստուած գործիք ունէր և օդը շարժող բան, այլ Գիրքը այսպէս է վարւում մեր օրինակով մեզ սովորեցնելու համար: Եւ դու տես, որ նախ «ստեղծեցն» է դնում և յետոյ «ասացը»՝ գործը ցոյց տալու նպատակով, որպէսզի յայտնի դարձնի Արարչի ամենազօր և անաշխատ լինելը, որովհետև միայն կամենալով հրամանը՝ կատարեց գործը»: Ցայսմաւուրք[70*]:
[2] Ագաթ., էջ 387:

Այսպիսով աշխարհի բնական ու պատմական ընթացքը առաջ է գնում Աստծու գերբնական ու բարձր ներգործութեամբ, սակայն իր իսկ դրած բնական կարգաւորութեամբ ու հաստատած անշեղ օրէնքով (Ծննդ., Ը 22): Այդ օրէնքի աստուածային պահպանութեամբ է պայմանաւորուած ուրեմն աշխարհի առաջադիմութեան կանոնաւոր ընթացքը, իսկ Աստծու արարչական ներգործութեամբ մի աւելի բարձր զարգացման աստիճանաւորութիւն է սկզբնաւորւում ցածր աստիճանից, ըստ տնօրինական ներգործութեան: Այդ է պատճառը, թէ որտեղ Աստծու արարչական ներգործութեան հետևանքն ենք նկատում՝ սքանչանում ենք, և մեր առաջ մի հրաշալիք տեսնում, իսկ որտեղ օրինաւորութեան պահպանութեանն ենք հասու լինում, սկսում ենք զննել ու ճանաչել, թէ ի՞նչ օրէնք կարելի է դուրս բերել նմանօրինակ երևոյթներից: Այդ օրէնքների պահպանութեան աղբիւրը և արաչական ներգործութեան բարձրութիւնը ճանաչելը մեր հաւատքի հարստութիւնն է:

Թ

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Աստծու ստեղծագործութեան ընթացքը ցոյց է տալիս և իր յայտնութիւնն ասում է, որ մարդն է Աստծու արարածների կենտրոնը, գլուխը և նպատակը: Այդ պատճառով և բոլոր արարածները ստեղծուեցին մարդուց առաջ և բոլորի արարումից յետոյ միայն ստեղծուեց մարդը: Ուստի և մարդու մարմնաւոր կեանքի մէջ պատկերանում է ամբողջ աշխարհը, իսկ հոգին Աստծու պատկերն է: Մարդու այս մեծ նշանակութիւնն առաւել ևս բարձրանում է, երբ նկատում ենք, որ նրա համար են ստեղծուած մինչև անգամ այն հոգևոր էակները, որոնք մարդու պէս բանական են[1] և կոչւում են հրեշտակներ: Նրանք ստեղծուել են առաջին, այսինքն՝ երկուշաբթի օրը՝ լոյսի հետ[2], և «որ բոլորն էլ կարևոր հոգիներ են, որոնք ուղարկւում են ի սպասաւորութիւն նրանց, որ ժառանգելու են փրկութիւնը» (Եբր., Ա 14, Բ 16, Յաճախ.., ԺԵ 150):

[1] Եղիշէ, էջ 27:
[2] Կող., Ա 16, Յովբ., ԼԸ 7, Շար., էջ 583, Տաթ., Հարց., 642:

Ուրեմն նրանք բնական բարձր կարողութիւններով օժտուած (Մատթ., ԻԴ 36, Բ Թես., Ա 7, Պետր., Բ 1, Կող., Ա 16, Սաղմ., ՃԽԸ 1-3) սպասաւոր զուտ հոգիներ են, մարմնի ու տարածութեան հետ կապուած չեն մարդու պէս և ծառայում են Աստծու արքայութեան նպատակներին[1]: Ուստի և դրանք հրեշտակ անունն են կրում, այն է՝ դեսպան, պատգամաբեր (մալեաքիմ, անգելոս): Նրանք երկնաբնակ են (Յուդ., 6), մանկութիւն ու ծերութիւն, սեռ, ծնունդ ու սեփական պատմական զարգացում չունեն[2], և միայն իջնելով ու մարդկանց գործերին մասնակցելով՝ մտնում են ժամանակի մէջ: Եւ եթէ թևաւոր են կոչւում «ոչ թէ մարմնաւոր թևաւորներ, այլ՝ թևաւորներ են միայն նմանութեամբ, որոնք լինելով հրեշտակներ, ամենևին մարդու պէս չեն»[3]:

Նրանք ներկայացնում են Աստծու՝ այսպէս ասած բազմաթիւ զօրքը (Բ Օր., ԼԳ 2, Սաղմ., ԿԷ 18, Դան., Է 10, Յայտ., Ե 11) և Աստծու ամենակարող որևիցէ մասնաւոր կողմը՝ համաձայն փառաբանութեան: Նրանք ունեն իննաստիճան դասակարգութիւն, որ է՝ Աթոռներ, Քերովբէներ (Զօրաւորներ) և Սերովբէներ (Գլխաւորներ) Տէրութիւններ, Զօրութիւններ և Իշխանութիւններ, Պետութիւններ, Հրեշտակապետեր և Հրեշտակներ (Յուդ., Թ 1, Ա Տիմ., Ե 21, Ա Թես., Դ 16, Հռ., Ը 38, Ծննդ., Գ 24, Ա Թագ., Դ 4, Սաղմ., ԺԷ 11, Հթ., 2, Ես., ԼԷ 16, Զ 26, Եփ., Ա 21, Գ 10, Կող., Ա 16, Ա Պետր., Գ 22)[4], և փառաբանում են Աստծու մեծութիւնը մշտապէս (Սաղմ., Ը 1, 2-ը, 8, Ես., Զ 3): Հրեշտակները յիշւում են նաև յատուկ անուններով՝ ըստ իրենց այն դիրքի կամ նշանակութեան, որով ծառայել են աստուածային տնօրինութեան, այդպէս են՝ Գաբրիէլ (Պատկեր Աստծու), Միքայէլ («հզօր Աստծու»), Ռափայէլ («բժշկութիւն Աստծու»), Անայէլ («լրումն Աստծու»), Ուրիէլ («տեսումն Աստծու»), Բարաքիէլ («ինքն աստուածային»), Ադոնիէլ, Փանուէլ, Երեմիէլ, Սաղաթէլ և այլն (Տե՛ս Դան., Թ 21, Ժ 13, 21, ԺԲ 1, Ղուկ., Ա 19, 26, Տովբ., ԺԲ 15, Դ Եզր., Դ 1, Ե 16)[5]: Նրանք նոյնպէս կոչւում են պահապան հրեշտակներ, որոնք հովանաւորում են արդարներին (Մատթ., ԺԸ 10, Ղուկ., ԺԵ 10, Ծննդ., ԻԸ 12, Յովհ., Ա 51) և

[1] Եզնիկ ԻԳ:
[2] Մատթ., ԻԲ 30, Ղուկ., Ի 35-36, Եզնիկ, էջ 97, 101, 102, 287:
[3] Ագաթ., ԼԱ:
[4] Ընդհ., 412, Շար., էջ 536-540:
[5] Հարց., էջ 119, 130, 134, 144:

ընդհանրապէս մարդկանց և այդպիսով ծառայում են Աստծու արքայութեան հաստատմանը՝ երկրի վրայ առանձին գործելով (Յաճախ.., ԺԲ 25): Թերևս այստեղից է ծագել և դրանց պաշտամունքը մանաւանդ հեթանոսների մէջ (Բ Օր., ԼԲ 8, 9)[1]:

Թէ՛ Ս Գրքում (Սղմ. ՃԳ 3, 4, Յովհ. Ե 4) և թէ՛ ժողովրդական կեանքում, երբեմն բնական զօրութեան, մտաւոր շնորհքի ու մասնաւոր ոգեկանութեան մէջ տեսնելով աստուածային ազդեցութիւնը՝ դրանք համարում են հրեշտակային անձնաւորական յատկութիւններ[2]: Այդ է, որ առանձնակի զարգացում ունեցաւ նաև առասպելաբանութիւններում, իսկ իմաստասիրութեան մէջ գաղափար անունը ստացաւ: Սակայն Աստծու հրեշտակները բնոյթով տարբեր են դրանցից. նրանք հոգի են և ունեն գիտակցութիւն, այսինքն՝ նրանք ունեն մարդու հոգևոր էութեան բոլոր յատկութիւնները՝ մի առաւելութեամբ հանդերձ, որ նրանք մարմնից անկախ են: Հրեշտակների և առհասարակ հոգու գոյութեան հակառակ էին անհաւատ սադուկեցիները (Գործք., ԻԳ 6-8, Ե 17, Մատթ., Զ 11, ԻԲ 23-34, Մարկ., ԺԲ 18, Ղուկ., Ի 36)՝ Սադոկ քահանայապետի ժառանգները, որոնք մեղքի և արդարութեան մէջ ամփոփած համարելով հատուցումը, ժխտում էին մեռելների յարութիւնն ու հոգևոր էակների գոյութիւնը, սակայն Քրիստոս և իր առաքեալները հաստատեցին ճշմարտութիւնը: Որքան հեռու է մեզանից երկնքի ընդարձակութիւնը, նոյնքան և այդ աներևոյթ (Կող., Ա 16, նաև «Հաւատամք») էակներն իբրև հոգիներ անմատչելի են մեր մտքին, ուստի և պատշաճապէս ասում ենք աղօթքում՝ «եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի»:

Բայց հրեշտակներն իրենց լուսաւոր էութեամբ ու բարձրութեամբ հանդերձ ցածր են մարդուց, որովհետև նրանք սպասաւորելու համար են ստեղծուած, և մարդը բնական գոյութիւն ու գործունէութիւն ևս ունենալով՝ օժտուած է աւելի մեծ հնարաւորութիւններով, քան հրեշտակը: Եւ մարդու այս մեծ առաւելութիւնն արտայայտւում է նրանով, որ Աստծու Որդին ոչ թէ հրեշտակացաւ, այլ մարդացաւ (Եբր., Բ 16), ուստի և Աստծու սուրբերը հրեշտակներին անգամ դատում են (Ա Կոր., Զ 3): Այն փառքը, որին հրեշտակները կարօտ են, Աստուած շնորհեց մարդկանց Իր Որդու միջոցով (Ա Պետ., Ա 12, Եփ., Գ 10): Սիրոյ և

[1] Յաճախ., ԺԵ 150, Եզնիկ., ԻԶ:
[2] Յաճախ., Ը 240, Եղիշէ, էջ 370:

խորհրդաւոր հաղորդութիւնն Աստծու հետ, միութիւնն ու բանական պաշտամունքը միմիայն մարդկանց բաժինն է. հրեշտակները զուտ հոգի լինելով՝ միմիայն աստուածային փառքի լոյսին են մասնակից՝ մշտահայեաց[1] և պաշտող[2]:

Ուստի և հրեշտակները սպասաւորեցին թէ՛ Քրիստոսի մարդեղութեան տնօրինական իրողութիւններին, և թէ՛ քրիստոնէութեան տարածմանն ու մարդկանց մէջ փրկութեան իրականացմանը: Որտեղ Քրիստոս է կենսագործում իբրև ճշմարիտ միջնորդ Աստծու և մարդկանց մէջ, որտեղ Քրիստոսի անունն է քարոզւում, այնտեղ հրեշտակները ծառայում են Աւետարանի ու եկեղեցու ծաւալմանը (Յովհ., Ա 52): Նրանք հոգևոր զօրութիւններ են, որոնք մարդկային կեանքում սպասաւորում են աստուածային տնօրինութիւնների ընթացքին: Նրանք մարդկանց առաջնորդում են բնական ճանապարհով դէպի փրկութիւն՝ բանալով նրանց առաջ այն ամենը, ինչ յարմար է նրանց տեսողութեանը լոյս տալու համար: Այլև նրանք հանդերձեալ կեանքում Աստծու որդիների ժողովման մշակները կը լինեն (Մատթ., ԻԴ 31, Մարկ., Ը 38) ու նրանց կեանքի ընկեր, ինչպէս և սկզբից ներկայացնում են բնակութիւնն այն հոգևոր կեանքի, որ ժառանգում են մարդկանց հոգիները (Հմմտ., վարը., գլ. Ժ):

Ժ

ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Երկրի ստեղծագործութեան վերջում Աստուած ստեղծեց մարդուն, որ Աստծու արարչագործութեան նպատակն է և նրա բոլոր աքանչելիքների մէջ ամենաբարձր տեղն է գրաւում: Ուստի և հոգեղէն հրեշտակները, բարձր կարողութիւններով օժտուած լինելով հանդերձ, նշանակուած են մարդկանց փրկութեան համար սպասաւորելու: Սակայն հրեշտակների բարձր կարողութիւնն էլ միմիայն նրանց հոգևորութեան մէջ է, մինչդեռ մարդը բնութեան հետ միացած լինելով՝ առաւել փառաւոր է իր հոգևոր հաստատութիւններով[3], ինչպէս տեսանք

[1] Հարց., էջ 144:
[2] Յաճախ., Թ 24-50:
[3] Յաճախ., ԻԴ 4:

նախորդ բաժնում: Այս արտայայտում է և Ս. Գրիգոր Լուսաւորիչն ասելով. «Սրանց մէջ է երևում Աստծու սէրը մեր նկատմամբ, որովհետև յանուն մեզ արարեց երկինքն ու երկիրը և նրա մէջ եղած արարածներին»[1]: Ուստի և մինչդեռ ամբողջ կենդանական աշխարհն ու նրանց կենդանի շունչը կամ ոգին մի պարզ հրամանով են առաջանում հողից (Ծննդ., Ա 21, 24, Ղև., ԺԷ 11), Ս. Գիրքը հանդիսաւորութեամբ պատմում է, որ Աստուած ստեղծեց մարդուն հողից, փչեց[2] կենդանի շունչ, «հոգիացրեց» և կենդանի հոգով (ոուահ) մարդ դարձրեց՝ «ըստ իր պատկերի և նմանութեան» (Ծննդ., Ա 26, 27, Բ 2, 7): «Ուստի անմահ Աստծու անմահ պատկերը մարդն է»[3]: Աստուած հոգի է և ուրեմն այս պատկերն ու նմանութիւնն էլ հոգևոր է, այսինքն՝ Աստծու՝ իբրև ամենակարող Արարչի սահմանափակ նմանութիւնն ենք մենք իբրև որոշ կարողութիւններով օժտուած արարածներ: Աստծու իսկական պատկերը կամ նկարագիրը Քրիստոս է, որ Աստծու Բանն է: Այն մեզ ստեղծեց «ի պատկեր իւր», «մարդակերպ երևաց Ադամին ստեղծելիս»[4] և ժամանակի աւարտական փուլում մեր այն պատկերն ընդունեց, որով երևաց նահապետներին և առաջին արդարներին (Յովհ., ԺԴ 9, Եբր., Ա 3)[5]: Հետևաբար մենք ևս մեր բանականութեամբ ենք Աստծու նման, ըստ որում «բանական է միայն մարդը և հրեշտակը, իսկ Աստուած վեր է երկնքից և երկրից»[6]: Այդ բանականութիւնն արտայայտւում է մեր մէջ երեք կարողութիւններով, որոնք են՝ մեր մտածողութիւնը, ազատ կամեցողութիւնն ու ճշմարտութեան ու սրբութեան զգացողութիւնը (խղճմտանք): Այդ պատճառով մինչդեռ մարմնով կապուած ենք աշխարհի հետ, նրա մի անդամն ենք ու նրա մէջ ենք աճում, միևնոյն ժամանակ աշխարհից ազատ ենք ու նրանից անկախ:

Հին հեթանոսական հայեացքով մարդը միայն աշխարհից, անասունների աճման ընթացքով է առաջ գալիս, ինչպէս այդ արտայայտւում է առասպելական սֆինքսների մէջ: Բայց Աստծու յայտնութիւնը քարոզում է, որ նա մարմնով

[1] Յաճախ., Ա:
[2] «Փչելը» պէտք է հասկանանք ոչ թէ Նրանից դէպ նա [իմաստով], այլ իր փչելը հոգիացրեց նրան, ինչպէս անգոներին գոյացրեց, ինչպէս անոգիին հոգիացրեց (Եղիշէ, 372, 373):
[3] Եղիշէ, էջ 222:
[4] Յայսմաւուրք[71*]:
[5] Ընդհանր., էջ 14:
[6] Եղիշէ, էջ 27, Հարց., էջ 271, 273:

աշխարհի ամենաստոր գոյութիւնից է, այն է՝ հողից, իսկ հոգով նա Աստծուց է[1]: Մարդու ստեղծման որպիսութիւնը հասկանալ մեզ նոյնքան անմատչելի է, որքան առհասարակ Աստծու ողջ ստեղծագործութիւնը, որովհետև մենք արարած ենք և արարուած սամանափակ միտք ունենք. չտեսածը մեր տեսածի պէս ըմբռնելու կարելիութիւն չենք կարող ունենալ: Իսկ մեր հաւատքի լոյսը բաց է անում մեր մտքերն այնպէս, որ մենք հոգով «Աստծու զարմն ենք» (Գործք., ԺԷ 29), մինչդեռ մարմնով երկրից ենք, ուստի և միջնորդ ենք Աստծու և բնութեան մէջ: Իբրև Աստծու կողմից՝ մարդու կոչումն է բնութեան տէրը լինել (Ծննդ., Ա 28, Թ 1-3, Սաղմ., Ը 7, Իմաստ., Թ 1-3, Սաղմ., ՃԺԳ 24), միայն թէ Աստծու արարչական կամքի միջնորդ լինելով աշխարհում, նա միևնոյն ժամանակ իր ազատութիւնը վայելում է Աստծու հաղորդակցութեամբ միայն[2]: Նրա աշխարհային կեանքն Աստծու կեանքով է կեանք, և նրա աշխարհային բոլոր նպատակների նպատակը Աստծու արքայութիւնն է: Հետևաբար նրա միտքը և կամքի ազատութիւնը այս աշխարհում խղճի ձայնակցութեամբ են հաշտուում և աշխարհի վրայ նրան ազատ տէր դարձնում: Կարճ ասած՝ **մարդ տեր է աշխարհի՝ միմիայն աշխարհի վերջնական նպատակի, այսինքն՝ Արարչին ծառայ լինելով**: Աստուած մարդուն իր պատկերը դարձնելով՝ բարութեան հակման շնորհք ու ձիրք է տուել երկիրը տիրելու և մշակելու, մարդն էլ ազատապէս պէտք է ձգտի լինել այն, ինչ Աստուած է որոշել, ինչպէս և սկսեց ըստ Աստծու կամքից կենդանիներին անուն դնելով կամ ճանաչելով (Ծննդ., Բ 19): Ըստ այսմ, մեր մարմնաւոր ձգտումները պայմանաւորուած են մեր հոգևոր ձգտումներով, և երկու ձգտումները միանում են մեր կոչման մէջ, այնպէս որ մենք Աստծուն ծառայելով և աշխարհը տիրելով փառաւորում ենք Աստծու անունը: Այս է արտայայտում առաքեալի խօսքը. «Փառաւորեցէք Աստծուն ձեր մարմինների մէջ և հոգիների մէջ, որ Աստծունն է» (Ա Կոր., Զ 20): Այս պատուէրը կատարելու համար պէտք է ձգտենք դէպի մեր կատարելատիպը՝ Քրիստոս, որի մէջ է Բանի և մարդկութեան ճշմարիտ միութիւնը[3]:

[1] Եղիշէ, 370:
[2] Յաճախ., Գ 190, 172:
[3] «Ես իմ կենդանի պատկերը մարդու կենդանի դէմքի վրայ նկարեցի, և աշխարհում ոչ ոք չի կարող նմանուել Աստծուն, բայց միայն մարդը, Աստուած ոչ մէկին չի երևում, բայց միայն մարդուն, երկրի վրայ Աստուած ոչ մէկին չի սիրում, բայց միայն մարդուն: Միայն Աստուած

Մարդու ժառանգական բնական սերումն էլ պայմանաւորուած է կնոջով, որ ստեղծուած է տղամարդուն հաւասար պատուով: Աստծու յայտնութիւնը կատարելապէս դիւրահասկանալի է դարձնում այդ հաւասարութիւնը նրանց կողակցութեան գաղափարով, որ միևնոյն ժամանակ պարունակում է իր մէջ հաւասարութեան հիմնաքար միութիւնը (Ծննդ., Բ 21, Մատթ., ԺԹ 4, Գործք., ԺԷ 26): Ըստ որում կինը տղամարդու կողակիցը լինելով՝ նրա հետ մէկ է և հաւասար, այսինքն՝ ոչ ոտքից է, որ ստրուկ լինի, ոչ գլխից է, որ գլխաւոր լինի, և ոչ էլ այլուստ է, որ օտար լինի, այլ սիրալիր օգնական է: Սակայն կինը ըստ տղամարդու առաջնութեան (Ծննդ., Բ 21) և ըստ իր դիւրախաբութեան (Գ 7-16), նրա տէր լինելը պէտք է ընդունի, միայն թէ սիրոյ սկզբունքի հիման վրայ, ինչպէս հակիրճ արտայայտում է աւետարանիչը. «Իւրաքանչիւր ոք իր կնոջն այնպէս սիրի, ինչպէս իր անձը, և կինը երկնչի իր ամուսնուց» (Եփ., Ե 33):

Նախամարդ զոյգից սկսւում է մարդու բազմանալը[1] ծննդաբերութեամբ. հարկաւ այս էլ բանական է և մարդկութիւնը գոյանում է ծնողների մարմնից, բայց արդեո՞ք նրա հոգևոր, մարդկային էութիւնը ծննդաբերւում է՝ ըստ պնդման ոմանց, ստեղծւում է կամ նախագոյացած է՝ ըստ այլոց: Եղել են ծննդաբերութիւնը հաստատողներ, եղել են նաև հակառակը պնդողներ օտար վարդապետների մէջ, սակայն Հայաստանեայց ս. Եկեղեցին թէև այդ հարցով չի զբաղւել, այնուհանդերձ առիթ է ունեցել այդ մասին խօսելու իր մաքառման ասպարէզում[2]: Ժառանգական, մարմնաւոր ու հոգևոր առանձնայատկութիւններն

է մարդասէր և միայն մարդն է աստուածասէր: Աստուած մարդունն է և մարդն Աստծունն է: Յանուն մարդու է Աստուած մարդացել և յանուն Աստծու մարդն աստուածացել». Եղիշէ, էջ 293, 320, Եզնիկ, էջ 93-95:

[1] Արդէն իսկ բնագէտների ճշմարիտ կարծիքն է (մինչդեռ հին ազգերը, հէնց Արիստոտելը, Պլատոնը, յոյներից տարբերելու համար, ուրիշ ազգերին բարբարոս էին կոչում), որ մարդկութիւնը ցրւել է մէկ բնօրրանից, ուստի և ցեղագրական տարբերութիւնները բոլոր ցեղերի մէջ խառն են ու սերակցութիւնն՝ ընդհանուր և ոչ թէ անկարելի է, ինչպէս բարձր կարգի անասունների մէջ: Իսկ գոյնը լոկ արտաքին պայմանների հետևանք է, քանզի բոլոր ադամորդիներն էլ նոյն գոյնը ունեն խոշորացոյցով դիտելիս: Բոլոր մարդիկ բանական են, կրօնական, քաղաքակրթող, ընկերակեաց, բարոյական, խօսուն և կամքով ազատ: Իսկ լեզուաբաժանումն առաջացել է ժողովրդի ցրումից (Ծննդ. ԺԱ 1-9, Ժ 25.Բաբէլ. սեպագիր արձանագրութ.): Ս. Գիրքը յիշում է միմիայն Աստծու տնօրինութեան հետ կապ ունեցող ժողովուրդներին. Ծննդ. Ժ 1-ԺԱ 9, Եզնիկ ԼԷ, ԼԲ 17:

[2] «Արարատ», 1893, Հարց., էջ 254, 257:

ազգերի, ընտանիքների ու ցեղերի մէջ պարզապէս ցոյց են տալիս, որ ծննդաբերութիւնը հիմնական պայմանն է այս խնդրում: Սակայն որովհետև մարդն Աստծու պատկերն է և առանց աստուածային կամքի ու հաղորդակցութեան նա դառնում է սոսկ մարդու պատկեր (Ծննդ., Ե 3), ուստի բնական ծննդաբերութիւնը մի միջոց է, որով մարդ աստուածային արարչական կամքի մի նոր յայտնութիւն է դառնում: Մարդը բնականապէս հոգով ու մարմնով իր նախորդների ժառանգն է, իսկ էապէս՝ Աստծու արարչական գործունէութեան հետևանք. ապա թէ ոչ՝ եթէ նա լոկ ժառանգը լինէր իր ծնողների, շղթայի մի կախեալ օղակ կը դառնար առանց ազատութեան և առանձնայատկութիւնների, իսկ եթէ միմիայն ստեղծուելով դառնար մի նոր Ադամ, ազատ պէտք է լինէր ժառանգականութեան օրէնքից հակառակ իրականութեան: Ուստի և Ս. Գիրքը մի կողմից ժառանգականութիւնն է շեշտում (Սաղմ., ԾԱ 7, Յովհ., ԺԶ 21), միւս կողմից՝ Աստծու արարչական կամքի նշանակութիւնը[1]. ըստ որում և իւրաքանչիւր մարդ թէ՛ կատարեալ բնութիւն է և թէ՛ կատարեալ արարած՝ աստուածատուր նոր ձիրքով, հանճարով և այլ առանձին յատկութիւններով, որոնք որոշակի ժամանակի և պատմութեան որոշակի պարագաների կամ կարգի ոգու արտայայտիչն ու առաջնորդողն են: Մարդու ժառանգականութիւնը յիշեցնում է իր նախորդներին և նրանց ժամանակը, ուստի և նիւթ է տուել հեթանոսներին և նրանց մերօրեայ հետևորդներին (Շելլինգ, Բենեկէ, Ֆիխտէ, Հուլ. Միլլէր)՝ նիւրելու հոգու նախագոյութեան ցնորքին[72*]: Մարդն Աստծու պատկեր լինելով՝ բնականաբար իր հոգու ծագումով կախուած է Աստծուց և նրա դիմումն էլ առ Աստուած է, ինչպէս և երանութիւնն Աստծու հետ է (Մատթ., Ժ 28, Ա Կոր., Զ 20, Ե 3, Է 34): Ուստի և մարդու ճշմարիտ զարգացումն ու առաջադիմութիւնը ոչ թէ ինքնուրոյն է, այլ հիմնուած է Աստծու արարչութեան սկզբունքի վրայ և սերտ կապուած է Նրա յայտնութեան ու շնորհների հետ:

Սակայն քանի որ մարդու էութիւնն ու կոչումը որոշւում է նրա հոգևոր բնոյթով, արդեօք ինչի՞ց է երևում նրա հոգևոր բարձրութիւնն անասնական աշխարհի հանդէպ: Ահա՛ մի հարց, որ ինչքան էլ հակառակ է իւրաքանչիւրի ինքնաճանաչութեանը, այնուհանդերձ երբեմն ծագում է մարդկանց մէջ: Որ

---

[1] Սաղմ., ՃԼԸ, Երեմ., Ա 5, Եղիշէ, էջ 369, 374:

մարդու հոգին տարբեր էութիւն է նրա մարմնի մէջ, այդ պարզապէս երևում է նրա հոգու երեք կարողութիւններից՝ մտածողութիւնից, զգացողութիւնից ու կամեցողութիւնից:

Հոգին պարզ և անհիւթական է[73*] (Եփես., Դ 12, Ղուկ., ԻԴ 39), նա գոյացութիւն է (substantia), նա է մարդու իմացումները գիտակցութեան հասցնում, գաղափարներ կազմում, դատում, և բարու, ճշմարտի ու գեղեցիկի մասին գաղափար ստանում : Աչքը նայում է, ականջը լսում է, բայց տեսնողը, ընկալողն ու դատողը հոգին է. լոկ մարմնաւոր զգայութիւնը չի կարող ճանաչել, որովհետև մարմինը բարդ է, և եթէ մարմինն ինքը ճանաչէր, պէտք է նրա իւրաքանչիւր մասը առանձին ճանաչողութիւն ստանար, որից չէր կարող ճանաչողութեան միութիւն լինել: Վերացական միութիւն գոյութիւն չունի կենդանու համար, ուստի և նա անկարող է թուել ու հաշուել, որի համար զուգորդութիւն է պէտք, իսկ այդպիսի զուգորդութիւնն առանց ներքին հոգևոր իւրացման չի կարող գոյանալ:

Մարդն ամենայն ինչ ժամանակից ու տարածութիւնից վերցանում է և բաժանուած մասերը մի գաղափարի մէջ ամփոփում: Նա իր հասողութեամբ բարձրանում է տարածականի ու բաժանականութեան, նիւթի ու զգայականութեան վրայ և հասնում բոլորի հիմքին, բոլորի ճշմարտութեանը, այլև մէկի, պարզի, անփոփոխի գաղափարն է կազմում, որ անկարելի է նիւթական ուղեղով իրականացնել:

Հոգին ինքնագիտակցութիւն ունի և ըստ ինքեան տարբերւում է ամեն ոչ-ես-ից: Նա նոյն է անցեալ յիշատակների և ապագայի զարգացման նկատմամբ, որոնց մէջ իր ինքնագիտակցութեամբ չի փոխւում ու իր անցեալ եսը ներկայից և ապագայից տարբեր համարում: Նրա գիտակցութիւնը մէկ է և ամփոփ թէ՛ իր բովանդակ գործունէութեան, և թէ՛ արտաքին բազմաթիւ ըմբռնումների մէջ: Նա է զուգորդում, վերարտադրում և դասաւորում. անտարածական մտապատկերներից և անժամանակական յիշողութիւններից հոգին կազմում է մի աշխարհ տարածութեան և ժամանակի մէջ, և ուրեմն ինքը վեր է բարձրանում ժամանակի ու տարածութեան վրայ իր ամբողջ գործունէութեամբ:

Հոգին գործում է ինքնընտրութեան և ներգործում ինքն իսկ թէ՛ իր, և թէ՛ արտաքին աշխարհի վրայ:

Համեմատելով արտաքինը ներքինի հետ, տեսնում ենք, որ հոգևոր գործերը մարմնաւոր ու տարածական չեն. գեղեցիկի, ճշմարտի ու բարու գաղափարը մարմնաւոր զգայութիւններով է գոյանում: Հոգին է կազմում այդ գաղափարները, այլև՝ թէ՛ դրանք և թէ՛ զգայութիւններով ստացած մտապատկերները վերարտադրում է ու դատում բոլորովին ինքնուրոյնաբար: Ուսողական, տրամաբանական, բնազանցական ու բարոյական հարցերը միմիայն հոգու գործերն են, որոնք չէին կարող իրականանալ առանց հոգու անհիւթականութեան: Միմիայն հոգու համար կայ կատարելատիպ, յաւիտենականութիւն, կրօն ու լեզու:

Ընդունելով, որ հոգու գործողութիւնների մասին այսքան հաստատուն հասկացողութիւն ունենք, այսուհանդերձ չգիտենք հոգու էութիւնը , բայց չգիտենք իսկապէս և մարմնի էութիւնը, ուստի չգիտենք նաև դրանց կապը: Հոգին մարմնի մէջ մէկ տեղում չէ, այլ՝ ամեն տեղում, որտեղ ներգործում է և որտեղ կեանք կայ, և փոխադարձօրէն ներգործում են իրար վրայ: Երբեմն արիւնն էին հոգու տեղը համարում, երբեմն սիրտը, երբեմն ուղեղը, բայց բոլորն էլ սխալուած են: Դրանք, մանաւանդ ուղեղը, հոգու ամենաանհրաժեշտ զգայարաններն են միայն, որոնք իրենց կազմութեամբ զարմացնում են մեզ, սակայն «գովաբանում է քնարը, բայց լոկ քնարահարի ձեռքում»[1]: Մարդկանց հոգու հարստութեան, հանճարի և ընդունակութիւնների հետ ոչ մի յարաբերութիւն չունի ուղեղի մեծութիւնն ու կազմութիւնը, որովհետև եթէ 30-40 տարեկանում է ուղեղի զարգացումը և ապա դէպի անկումն է գնում, մինչդեռ շատ ծերունիներ իսկ մինչև մահ հոգու թարմութիւն են ունեցել և արդիւնաբեր են եղել:

Ուղեղը բարդ է, ուստի և չի կարող գիտակցութեան միութիւն ունենալ, եթէ հոգի չլինէր: Հոգևոր, մանաւանդ կամքի հիւանդութիւնը, լինում է նաև առանց մարմնաւոր հիւանդութեան և յետոյ է մարմնական զեղծում առաջ բերում:

Հակադիր իմաստով այդպէս է նաև հաւատքի ներգործութիւնը մարմնի վրայ կամ զանազան հիւանդութիւնների բժշկման գործում: Դրանից ծագած ներշնչման եղանակով մարդու հիւանդութիւնների վրայ ազդելու բժշկական

[1] Եղիշէ, էջ 370:

հնարքը մի-մի ապացոյց են հոգու անհիւթականութեան: Ըստ որում առանց հոգու անկարելի է հասկանալ նաև մարդու կենդանութիւնը:

Հոգու անհիւթականութեան մի երկրորդ ապացոյց է տալիս նրա միւս կարողութիւնը՝ կամքը: **Մարդ ազատ կամք ունի, ձգտում է դէպի ճշմարիտը, գեղեցիկն ու բարին. նա մեծ բաւականութիւն է զգում, երբ առաջադիմում է հոգևոր հետազօտութիւնների մէջ, նա մինչև անգամ նահատակւում է ճշմարտութեան համար:** Այս ամենը նիւթականի կամ մարմնի կարողութիւնից շատ բարձր է: Նա տիրապետում է մարմնի վրայ, շարժում է կամեցած ջղերը և ունենալով ինքնուրոյն տրամադրութիւն ու ներքին ցաւեր՝ ազդում է մարմնի վրայ կա՛մ քայքայիչ, կա՛մ զօրացուցիչ կերպով:

Կամքն ըստ ամենայնի կախւած է մեր հոգու օրէնքներից. նա ունի ազատութիւն մեր բնութեան, մարմնի հակառակութեան և ամեն անհրաժեշտութեան դէմ: Հոգին ազատապէս տիրապետում է առհասարակ բնական օրէնքներին: Մենք բնութեան մէջ նիւթականի մեզ անյայտ մի յատկութիւնը զօրութիւն ենք կոչում: Այն ունի իր անհրաժեշտ ու բնական ընթացքը, համաչափ գործում է ժամանակի ու տարածութեան մէջ սահմանափակւած, և երբեք իբրև ամբողջութիւն և անհատ չի ներկայանում: Մինչդեռ հոգին այսպիսի զօրութիւն չէ, նրա մտածողութիւնն ու կամեցողութիւնն ունեն իրենց սեփական օրէնքները, որոնք ազատութեան օրէնքներն են և ոչ թէ անհրաժեշտութեան: Բայց եթէ հոգին նիւթ լինէր, ինչպէ՞ս կարող էր պարզութեան, ներդաշնակութեան, պատճառականութեան և ուժի պահպանութեան օրէնքներին հակառակ ընթանալ: Չէ՞ որ այդ օրէնքները նրա մէջ ևս պէտք է գոյութիւն ունենային, և մարդը կը դառնար մի ճախարակ՝ բնութեան հզօր անիւի վրայ պտտւելիս:

Հոգու այս բոլոր առանձնայատկութիւնների պսակն է խիղճը կամ խղճմտանքը, այսինքն՝ բարու և անգնահատելիի, ճշմարիտի և արդարութեան, գեղեցիկի և ներդաշնակութեան զգացողութիւնը. խղճի խայթն ու խղճահարութիւնը բնաւ մարմնի գործ չէ:

Այս բոլորից պարզապէս արդէն հետևում է, որ **Աստծու պատկեր և ինքնուրոյն օրէնք ու կեանք ունեցող հոգին անմահ է, և այս ճշմարտութիւնը կրօնի էական սկզբունքն է, որ ընդհանուր է հին ազգերի մէջ իսկ:** Աստծու

պատկերը չի կարող կորչել անհետ, որովհետև նրա համար է փրկութիւնը: Եւ երբ մարմինը քայքայւում է, հոգին գնում է առ Աստւած և այն ժամանակ «ինքն իրեն իմանում է, ինքն իրեն հանգստանում է, ինքն իրեն աւելանում է, ինքն իրեն ուրախանում է, ինքն իրեն տրտմում, ինքն իրեն շարժւում»[1]: Եւ արդար հոգիները կենդանի և մարմնի մոլոր կաշկանդումից ազատ լինելով, օրհնում են Աստծուն (Ես., ԼԸ 11, 18-20, Սաղմ., ՃԺԴ 17)՝ իրենց կենդանի նախնեաց հետ (Ծնն., ԻԵ 8, ԽԹ 32, Սաղմ., ՃԺԶ 15): Հոգու անմահութեանը հաւատում էին թէ՛ եբրայեցիները և թէ՛ եգիպտացիները, թէ՛ փիւնիկեցիները, թէ ասորեստանցիներն ու բաբէլացիները, որոնց գերեզմանները, արձաններն ու յուշարձանները վկայութիւնն են այդ իրողութեան: Եւ այս հաւատքը ո՛չ կարելի էր ստութեամբ ընդհանրացնել, և ո՛չ էլ վերացնել. մեռնողը միշտ զգում է իր մահը և պատրաստւում է նոր կեանքի մէջ մտնելու: Ուստի արդէն հին իմաստասէրները ապացոյցներով մասնայատուկ ուշադրութիւն են դարձրել հոգու անմահութեան գաղափարի վրայ, ինչպէս Պլատոնն ու Կիկերոնը[74*]: Նոր գիտնականները ևս նորանոր հետազօտելով այդ ճշմարտութիւնը, ոչ միայն անհերքելի են ճանաչում այն, այլև՝ ապացուցելի[75*]. ըստ որում նորանոր փաստերով աշխատում են նորոգապէս հաստատել և նոյնիսկ փորձնականապէս հոգու արտաշողում նկատելով՝ գործիքներ ստեղծել, չափել նրա ուժն ու լուսանկարել նրա կերպարանքը[2]:

Հոգին ձգտում է հասկանալ աստւածային ճշմարտութիւնները և երբեք այդ ձգտումներից մարմնի պէս չի յոգնում ու չի հանգչում, նա առաջադիմում է բարոյական ու մտաւոր զարգացմամբ և երբեք չի կարող ներկայով բաւարարւել: Նա դիմում է շարունակ դէպի կատարելութիւն և բնաւ չի կարող անկատարելութեան մէջ ոչնչանալ, և այս բոլորը կարող է հաշտւել միմիայն հոգու անմահութեան հետ: Որքան ուզում ես նրան յետ մղիր, արգելք եղիր նրա առաջադիմութեանը, այդուհանդերձ չես կարող նրան հանգցնել, որքան էլ յետ

---

[1] Եղիշէ, էջ 371:

[2] Տե՛ս պրոֆ. դ-ր Շիլտով, Հոգու անմահութիւնը (ռուսերէն), Բ տիպ. 1898, և նոյն խորագրով Գ. Տայխմիլլերի, ինչպէս նաև Կարոյի աշխատութիւնները, որոնք վերջերս հրատարակւեցին Յուրհում և Խարկովում: Հիմնաւոր ուսումնասիրութեան համար հարկ է կարդալ նաև նրանց յիշատակած աղբիւրները. Հմմտ Դ-ր Լորան, Մեդիցինա դուշի (ռուսերէն, Ս. Պ. 1896. թրգմ. Վոլֆսոնի):

մղես նրա աստուածանմանութիւնը, ստեր ձգես Աստծու պատկերի վրայ, այդուամենայնիւ չես կարող եղծել այդ պատկերը և նրա առաջադիմական ընթացքը դէպի աստուածանմանութիւն: Ծածկի՛ր նրանից ճշմարտութիւնը, յուսահատեցրու նրան երջանկութիւնից ու երանական վիճակից, սակայն և նա ի վերջոյ կը ձգտի դէպի ճշմարտութիւն և երանութիւն, ինչպէս մի լար, որ ծալելով պահում ես, բայց վերստին արձակելով՝ ձգւում է դէպի աջ ու ձախ կամ դէպի վեր: Նա պէտք է հասնի երանութեան, պէտք է հասնի ճշմարտութեան և արդարութեան. այս հոգու ներքին պահանջն է և անկողոպտելի համոզմունքի հետևանքը: Ճշմարտութիւնը, առաքինութիւնը, խիղճը, արդարութիւնն ու հատուցումը միմիայն հոգու անմահութեան հետ գոյութիւն ունեն և հոգու անմահութեամբ են որոշւում մարդու աստուածանմանութիւնն ու կոչումը:

Հոգու անմահութեան վերջնական ապացոյցը Քրիստոս աստուածամարդն է, որ ճշմարտութեան ու արդարութեան յաղթանակի դրօշակը վեր պարզեց՝ ամեն չարչարանք ու տանջանք յանձն առնելով մարդու երանութեան համար:

Արդ, մարդ իր մարմնով հողից է և դէպի հողն է դառնում, իսկ հոգով Աստծուց լինելով՝ վերստին գնում է առ Աստուած՝ նրանից ըստ իր ձգտման և արժանիքի երանութիւն վայելելու[1]: Ըստ այսմ «Եղէք կատարեալ, ինչպէս երկնաւոր Հայրն է կատարեալ» (Մատթ., Ե 48), այս է նրա հոգու էութիւնն ու կոչումը[2]: «Աստուած լինել շնորհքով՝ Աստծու հետ միաւորւելով». այս է մարդու կեանքի նշանաբանը, և այս է մեր ծառայելը կամ պաշտելն Աստծուն[3]:

---

[1] «[Սուրբ] Գրքի սովորութիւնն է մարդուն աշխարհ կամ հող անուանել, ինչպէս և հրեշտակներին՝ երկինք, որովհետև «Ադամը» հող է թարգմանւում, և իմաստասէրները մարդուն փոքր աշխարհ (միկրոկոսմոս) ասացին[76*]: Իսկ եկեղեցու վարդապետները «մեծ աշխարհ» անուանեցին մարդուն՝ իր բանականութեան և Արարչի պատկեր լինելու պատճառով» (Խոսր. Անձևացի, Մեկն. Ժամ., 180):

[2] Եղիշէ, էջ 372, 374, 375, Յաճախ.., Գ 68. Սաղմոսերգուն լաւ հասկանալով, որ մարդու ստեղծելը հողից և հողում տակաւին անհասանելի է մարդկային սահմանափակ մտքին՝ երգում է. «Պիտի խոստովանեմ քեզ, Տէ՛ր, որովհետև սքանչելիօրէն արարուեցի, սքանչելի են Քո գործերը, և իմ անձը լաւ իմացաւ: Իմ ոսկորը չթաքնուեց Քեզնից, որ գաղտնօրէն ստեղծեցիր, երբ գոյացայ երկրի խորքերում» (Սղմ. ՃԼԸ 14, 15, ըստ եբրայերէն բնագրի)[77*]:

[3] Հմմտ. Ես., ԽԳ 7, Առ., ԺԶ 4, Գաղ., Բ 19, Փիլ., Ա 21, Բ 8, Բ Կորնթ., Բ 15, Ա Կոր., Ժ 31, Գ 23, Հռովմ., ԺԲ 11, ԺԴ 6, Կող., Գ 17, 23, Եփես., Զ 5, Հռովմ., ԺԱ 36, Կող., Ա 16, Եբր., Բ 6:

ԺԱ

ԱՍՏԾՈՒ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆԸ

Աստծու արարչութեան սկզբունքից բխում է և նրա նախախնամութիւնը կամ տեսչութիւնը (Իմաստ.,ԺԴ3,ԺԷ2), որ անմիջապէս հետևում է ստեղծագործութեանը: Ինչպէս որ առանց ստեղծագործութեան չէր կարող ոչինչ գոյութիւն ստանալ, նոյնպէս և ոչ մի արարած չի կարող առանց Աստծու նախախնամութեան կենսունակ լինել ու յարատևել: «Որ զարմանալի է ոչ միայն նրանով, որ չգոյութիւնից գոյութեան է կոչում անգոյ բաները և ցոյց է տալիս չեղած բաների ինչ լինելը ոչնչից, այլև անարատ և անխափան է պահում եղածներին, որոնց և սկզբից աննախանձ կերպով կենդանութիւն տուեց իր բարերարութիւնը ցոյց տալու նպատակով»[1]

Աստուածային այս նախախնամութիւնը գեղեցկապէս բացատրուած է Քրիստոսի քարոզութեամբ (Մատթ., Զ 25-34, Ղուկ., ԺԲ 22-30), ըստ որում մենք ամենայն ժամ պէտք է ուշադիր լինենք այն դիպուկ խօսքին, որ Նա ասաց Աստծու նախախնամութիւնից դուրս ամեն ինչ հոգալ կամեցողներին. «Ձեզանից ո՞վ կարող է հոգալով իր հասակի վրայ մի կանգուն աւելացնել»: Ինչպէս որ Արարչի գործունէութիւնն անհրաժեշտ էր ստեղծագործութեան համար, այնպէս և անհրաժեշտ է աշխարհի կառավարութեան ու պահպանութեան համար (Իմաստ., Զ 7, Մատթ., Ժ 29-31, Ղուկ., ԻԱ 18, Գործք., ԻԷ 34): Եւ Աստծու նախախնամութեան անբաղդատելի մեծութիւնն իրականանում է մեր մտառութեան սահմանից շատ աւելի ընդարձակ ծաւալով նաև մեր նկատմամբ, որովհետև ոչ միայն տալիս ու տնօրինում է այն, ինչ որ մենք արդարապէս կամենում ենք ու խնդրում ստանալ, այլև յաճախ այն, ինչ որ մենք մինչև անգամ չենք էլ կարող մտածել Նրանից խնդրելու. «Մինչև ձեր Նրանից խնդրելը՝ ձեր Հայրը գիտէ, թէ ինչ է ձեզ պէտք» (Մատթ., Զ 7-8, Ա Պետ., Ե 7): «Աստուած գիտակցաբար է բաշխում իւրաքանչիւր օգուտը, և ոչ թէ զլանալով և խափանելով արգելում է իւրաքանչիւրի հասանելիքը» (Ս. Սահակ): Եւ մենք էլ

---

[1] Եզնիկ, էջ 7:

այնքան անձիշխանութիւն ունենք, որ կարողանում ենք ճշմարիտ կեանք վարելով՝ նոյնիսկ Աստծուն կատարել տալ մեր կամքը. «Տե՛ս՝ որքան իշխան է մարդը, որովհետև Աստծուն [իսկ] բերում է իր կամքին[78*]՝ բարիք գործելով»[1]:

Աստծու նախախնամութեան էութիւնն այս է, որ **Նա ստեղծելով աշխարհը՝ կամենում է կառավարել ու հասցնել իր բարի նպատակին:** Բայց որովհետև այդ բարի նպատակին հասնելը միայն ազատութեամբ, ազատութեան սկզբունքով պէտք է կատարուի, ուստի Աստծու նախախնամութիւնը յայտնւում է մարդկային պատմութեան մէջ: Պատմութեան մէջ էլ մարդիկ դեր են խաղում իբրև անձինք, իբրև անհատներ, որոնք պէտք է բարին իւրացնեն, իբրև էական անդամներ առաջադիմեն և Աստծու արքայութիւնն իրականացնեն: Սակայն բարու իւրացումն էլ հիմնւած է մարդու ազատ կամքի վրայ[2] և կամքն էլ՝ ազատ ընտրութեան: Հետևաբար Աստծու արքայութեան իրականացմանը միտող մարմնի բաղկացուցիչ անդամների մէջ կարող են լինել թէ՛ նպատակին առանձնապէս ձգտող գործիչներ, և թէ՛ շեղւողներ: Պարզ է ուրեմն, որ Աստծու նախախնամութիւնը պէտք է մարդկանց տանի դէպի այդ արքայութեան իրականացումը՝ ոչ թէ լոկ պահպանութեամբ ու կառավարութեամբ, այլև տնօրինական փրկագործութեամբ:

Աստծու նախախնամութիւնն ունի ևս մի յատուկ ուղղութիւն: Կամքի ազատութեան պատճառով աշխարհում բազմաթիւ ինքնուրոյն, տարընթաց ազդեցութիւններ են լինում, իրար են բախւում զանազան շարժառիթներ և պատճառներ: Այդ բազմատեսակութեան և բազմազանութեան մէջ մէ՛կ նախախնամութիւն է գործում, մէ՛կ արարչական կամքի մէկ յայտնութիւն, սակայն այդ կամքը թէ՛ իբրև կենդանի կամք ունի իր անթիւ արտայայտութիւնները, և թէ՛ ազատ կամքի աշխարհում գործելով՝ անհամար ու բազմակողմանի կերպով է յայտնւում: Ըստ որում Աստծու «բազմապատիկ իմաստութիւնը» (Եփ., Գ 10, Հռովմ., ԺԱ 33) այնպէս է նախախնամում, որ մարդկային ազատ կամքն իր բազմազան գործերով դիմում է դէպի նպատակի մի կէտ: Այլ խօսքով ասած՝ մարդու կամքը կատարելապէս ազատ է, սակայն այդ ազատութեան կոչումն Աստծու տնօրինութիւնն է, այնպէս որ մարդն իր ազատ կամքով կարող է կա՛մ

[1] Յաճախ., Է 243, 265, Ի 435:
[2] Յաճախ., Ի 490:

ընկնել, կա՛մ բարձրանալ, միայն թէ երկու դէպքում էլ նա ծառայում է այդ տնօրինութեան իրագործմանը[1]: Ընդսմին մարդու ազատ կամքի շեղումը, գայթակղութիւնն ու հակառակութիւնը ծառայում են ճշմարտութեանն ու սրբերի զօրացմանը և արիացմանը (Ղուկ., ԺԷ, 1 Յայտ., ԺԳ 10):

Նախախնամութեան այս նշանաւոր ուղղութիւնը նայողին կարող է առերևոյթ հակասական երևալ, սակայն իրապէս պարզ է և ճշմարիտ: Ամբողջ արարւած աշխարհը բնականապէս կախւած է Աստծուց, որովհետև Աստւած է բոլորի կենսատուն ու զօրացուցիչը, օրինադրողն ու կարգադրիչը, գոյութեան հիմքը, բաշխողն ու կերակրողը (Գործք., ԺԷ 25, Սաղմ., ՃԳ 29, 30): Այդ բնական կախումից զատ մարդը բարոյական ու կրօնական կախում ևս ունի Աստծուց, որի համեմատ նա պարտաւոր է իր կոչումն իրագործել, այսինքն՝ Աստծու պատւիրանից ու ճշմարտութիւնից դուրս չգալ, ինչը պատշաճում է մարդու էութեանն իսկ: Սակայն այս երկու կախման հետ միասին Աստւած շնորհել է մարդկանց նաև ազատութիւն՝ գործելու ըստ իրենց կամքի: Յայտնում է նրանց իր կամքը, թէ նրանց շարժող խղճմտանքով ու թէ արտաքին միջոցներով, որոնք են մարգարէներն ու քարոզիչները, այլև՝ աւետիքն ու սպառնալիքը, յորդորն ու պատիժը, լոյսն ու խաւարը, յաջողութիւնն ու հակառակութիւնը, բախտն ու դժբախտութիւնը, բարիքն ու հարւածը, յաղթութիւնն ու փորձութիւնը: «Յորդորում է բոլոր մտքերը՝ գործակցելու բարերար կամքին»[2], քանի որ նա Աստւած է և ուրեմն նրա կամքն է՝ բարձրացնել մարդուն: Սակայն այս բոլոր միջոցների հիմքն էլ աւետիքն է, սպառնալիքը և հատուցումը. աւետիքը մխիթարող ու քաջալերիչ է, սպառնալիքը զարթուցիչ (զգուշացուցիչ), իսկ հատուցումը Աստծու արդարութեան և արդար օրինաց խրատական դրսևորումն է[3]: «Բայց երբ ասւում է Աստծու ցասում, բարկութիւն կամ սպառնալիք՝ օրէնքի իրաւունքի համար է ասւում»: «Եթէ հակառակն ենք գործում,- քանի որ նա մեր Տէրն է, դատում է, խրատում և բերում ճշմարիտ ուղու վրայ»: Իսկ «երբ մեր անօրինութիւնները

[1] Հռովմ. Գ, Մատթ., ԻԶ 24, Յաճախ., Զ, Է 214, Ագաթ., էջ 325:
[2] Յաճախ., Ե 219, Ս. Յովհ., Մանդ., 154-164:
[3] Յաճախ., ԺԷ 11:

շատանում են, այնժամ պատուհասները թափւում են մեր վրայ», ըստ աստուածային արդար և անշեղ օրէնքների[1]:

Բայց մարդիկ իրենց խորհուրդներով, գործերով, աշխարհային ընթացքով սկզբունքորէն այլ կեանք են ապրում, ինչը շատերին բնականոն է թւում (Ես., ԾԵ 8, Սաղմ., Բ 1-3, Հռովմ., Ա 18, Եփ., Զ 16): Մինչդեռ Աստուած այնպէս է տնօրինել իր սուրբ կամքը, որ աշխարհն անշեղապէս ընթանում է դէպի իր նպատակը առանց մարդու կամքի ազատութիւնը խախտելու ու խափանելու[2]: Հետևաբար մարդ իր ազատ կամքով կարող է բոլորովին հակառակ, Աստծու և աշխարհի ճշմարիտ ընթացքին աններդաշնակ գործ կատարել, սակայն Աստուած իր իմաստուն կամքով ոչ թէ արգելում է նրան, այլ ընդհակառակը՝ մարդկային ծրագրերից շեղւող այնպիսի զարգացում է ընթացքի մէջ դնում բնական կարգով, որ ի վերջոյ այդ հակառակատենչ մարդկանց արածները ներդաշնակորէն ծառայում են աշխարհի ուղիղ ընթացքին[3]

Ըստ այսմ բանական արարածները, որոնք ազատ կամքով են օժտւած, ազատորէն գործում են աշխարհի վրայ, մէկը դրականապէս, միւսը՝ բացասականապէս, բայց երկուսն էլ մի ընթացքի են ծառայում: Այդպէս և Աստծու քաջալերական ու պատժական վարձատրութիւնը դէպի մի նպատակ է տանում: Իսկ գործերի և երևոյթների բոլոր ճիւղաւորութիւնները միանում են միմիայն Աստծու արքայութեան մէջ, որտեղ Աստծու որդիները գիտակից ու գործակից են Աստծուն (Յովհ., ԺԵ 15, Ա Կոր., Գ 9, Յաճախ.., Ե 219, 47) և փառաւորապէս դասակցում են հրեշտակներին, որովհետև «երկու կողմերն էլ՝ վերին զօրքերն ու մարդիկ, արբանեակներն ու աշակերտներն են միևնոյն բարերար կամքի», և երկուսն էլ ստեղծւել են աշխարհի առաջադիմութեանը ծառայելու համար[4]:

Եւ որովհետև ամենայն ինչ ծառայում է Աստծու կամքի իրագործմանն ու աշխարհի ուղիղ ընթացքին, արդէն իսկ դրանով ճշտորէն իրագործւում է Աստծու նախատնօրինութիւնը և հաստատւում է Նրա կանխատեսութիւնը: Աստծու

[1] Յաճախ., Է 183-215, Ը 204-250, Եղիշէ, էջ 306, Եզնիկ, էջ 78-84, Ընդհ., էջ 410, 406-409:
[2] Յաճախ., Դ 44, Եզնիկ, էջ 54-58, 147-149, Ղուկ., ԺԵ, Հռովմ., ԺԱ 32-36:
[3] Յաճախ., ԴԿԿ. Եզնիկ, էջ 54-58, 147-149, Ղուկ. ԺԵ, Հռովմ. ԺԱ 32-36:
[4] Յաճախ., Գ 116, Դ 220, 44, 90:

նախատնօրինութիւնը հասկանալի է, քանի որ Նա մի որոշ նպատակի համար ստեղծած լինելով աշխարհը, Իր իմաստուն նախախնամութեամբ ևս տանում է դէպի այդ՝ մարդու ազատ կամքի միջոցով: Իսկ կանխատեսութիւնը բնաւ չի հակասում մարդկային կամքի ազատութեանը, քանի որ Աստուած բնականաբար կանխագէտ է իր նախատնօրինածին, բայց միևնոյն ժամանակ իբրև ամենուրեք և ամենակալ զօրութիւն՝ կանխագէտ է մարդու կամքի բոլոր միտումներին: Նա չի կարող կանխագէտ չլինել, որովհետև ոչ թէ դրսից է վարում, այլ ամենուրեք է և աշխարհի ամբողջ ընթացքը ուղղորդում է դէպի մի նպատակ: Սակայն իր այդ կանխագիտութեամբ չի վերացնում մարդու կամքի ազատութիւնը, քանի որ Աստծու համար ոչ մի նորութիւն չի կարող լինել, և մեր ազատ ընտրութիւնն ու կամքը բնաւ կախւած չէ ինքնըստինքեան Աստծու գիտութիւնից, ինչպէս օրինակ մի մարդու գուշակութիւնը ուրիշի անելիքի վերաբերեալ տակաւին արգելք չի լինում նրա գործառնութեանը այդպէս կամ այլապէս իրագործելուն: Այս առաւել ևս նկատառելի է Աստծու պարագային, որովհետև Աստուած ամենից առաջ է, ամենքի մէջ է և ամենքի հետ ըստ ամենայնի: «Որովհետև նրանով կանք, նրանով ենք շարժւում և նրանով ենք միշտ դէպի առաջիկայ բարիքն ընթանում յանուն բարի լուրի և անսուտ խոստումների»[1]:

Այս ամենի վրայ լաւ ուշադրութիւն դարձնելով կը նկատենք, որ Աստծու նախախնամութիւնը երբեմն ընդհանուր է և երբեմն յատուկ: Աստուած ընդհանուր նախախնամութեամբ պահպանում է ամբողջ աշխարհը, պահպանում է նիւթերն ու իրերը, ուժերն ու բնական օրէնքներն իրենց գոյութեան և ընթացքի մէջ[2], որոնց կարգով տալիս է ամենքի պէտքերը, ամենքին կեանք է բաշխում, ամենքին ապրելու միջոցներ է մատակարարում[3] և խնամում է ոչ միայն արդարներին, այլև

[1] Յաճախ., Ի 456, 473, Եզնիկ, էջ 163-175, Սաղմ., ՃԼԹ:
[2] Յաճախ., ԻԲ 41:
[3] «Մի՞թէ հարուստներին և աղքատներին, իբրև եղբայրների հաւասարապէս չբաժանեց. բոլորին նոյն աչքը, նոյն ձեռքն ու ոտքը, բոլորս էլ հաւասարապէս վայելում ենք արեգակը, օդը և անձրևները, բոլորս էլ հողից ենք և Ադամից, բոլորիս ընծայւած է Քրիստոսի նոյն մկրտութիւնը, շնորհը մարմինն ու արիւնը: Ահա սրանք են աստուածային բաները... բայց ոմանց հարստութիւնը անդուլ աշխատանքից, և ոմանցը՝ հայրենական ժառանգութիւնից» (Յովհ. Մանդ., 71):

մեղաւորներին և անաստուածներին[1]: Ուրիշ է յատուկ նախախնամութիւնը: Յատուկ նախախնամութեամբ ոչ թէ Աստծու պահպանութիւնն է յայտնւում, այլ՝ Նրա արարչական ղեկավարութիւնը: Աստուած յատուկ նախախնամութեամբ մեզ հասկանալի կամ երբեմն անհասկանալի կերպով այնպէս է դասաւորում և յարակցում հանգամանքներն ու գործերը, որ աշխարհի ընդհանուր ընթացքը հրաշալիօրէն իր ուղիղ զարգացումն է ունենում, կամ անցեալ շեղմանը վերջ տալով կամ մի նոր դարագլուխ կազմելով: Այստեղ արդէն յայտնւում է Աստծու առանձին ներգործութիւնը կամ ազդեցութիւնը, որ երևում է մանաւանդ իբրև պատմական կամ բնական հրաշք և կամ միաժամանակ թէ՛ պատմական և թէ՛ բնական հրաշք, ինչպէս եղաւ Աստծու փրկագործական տնօրինութեան իրագործման մէջ: Արդ, այս հրաշքի նպատակն է ցոյց տալ, որ Աստուած տէրն է թէ՛ պատմական, և թէ՛ բնական կեանքի և ամենայն ինչ տանում է դէպի իր անփոփոխ նպատակը:

Յատուկ նախախնամութեան այս յայտնութիւնն է Քրիստոս, որ եզրափակում է անցեալը, սկզբնաւորում ներկան և ապագան և հաւատացեալներին ներկայացնում աշխարհի վախճանը: Իսկ անհաւատ մարդկութիւնը չի կարող ո՛չ ետ նայել, ո՛չ առաջ, ո՛չ նոր սկիզբ ունի և ո՛չ պատմական կեանքի ամբողջութիւն: Յատուկ նախախնամութեամբ Աստուած վերջացնում է անցեալը և նոր սկիզբ է դնում, շնորհներ բաշխում, մարդկութիւնը կրթում և անդամներ պատրաստում Իր արքայութեան համար՝ թէ՛ զարկ տալով, թէ՛ զարգացնելով Իր խօսքի, շնորհների և իրագործումների ազդեցութեամբ: Քրիստոսով է աստուածային յատուկ նախախնամութիւնը գործում թէ՛ մարդկութեան և թէ՛ իւրաքանչիւր անհատի մէջ, և այդպիսով մարդն իրապէս ճանաչում է իր ազատութիւնը, կոչումն ու բարձր նշանակութիւնը եւ իր գործակցութիւնն Աստծու հետ, ըստ որում դիմում է ճշմարիտ ճանապարհով դէպի տնօրինական նպատակը և Աստծով աշխատում: Աստծով աշխատանք կամ աշխատանք և աղօթք - այս է մարդու ճշմարիտ ճանապարհը: Աստուած էլ

[1] «Այցելում նաև անարժաններին, թէպէտև [նրանք] չեն զգում [այդ], որովհետև խաւարել է նրանց առաջնորդական միտքը, և չեն տեսնում իրենց մէջ եղած լոյսը» (Յաճախ., ԻԱ 24, Իմաստ., ԺԱ 21, Յովբ., ԼԸ 5, ԻԸ 25, Ա Կոր., ԺԴ 33, Սաղմ., ՃԽԸ 89, Երեմ, ԼԳ 20, հմմտ. Սարկ., վ. Աղօթք, էջ 16, 90):

«բոլոր տարրերը ընթացքի մէջ է դնում մարդկային հանճարի արուեստով աշխարհի շինութեան համար», և մարդու կոչումն է իր ճանապարհի վրայ ծառայել այդ շինութեան կամ անձամբ կատարելով Աստծու պատուիրանները և բաղկացուցիչ անդամ դառնալով Աստծու արքայութեան և կամ նաև, ըստ կարելւոյն, խօսքով ու գործով ընդհանուր ընթացքի վրայ ներգործելով (Մատթ., ԻԸ 20): Իւրաքանչիւրը պէտք է իր քանքարը շահեցնի (Մատթ., ԻԷ 14), որպէսզի ոչ թէ ընկնի իր մարդկային արժանիքից ու կոչումից, այլ օրըստօրէ առատանայ հոգևոր զարգացմամբ և գիտակցաբար գործակցի Աստծուն: Ամենքիս Աստուած իր գործակիցներն է դարձրել, և մենք պէտք է ծառայենք մեր գործունէութեամբ նրա սքանչելի նախախնամութեանը, որ ամենայն ինչ մեր կամքով իսկ դիմի դէպի աւարտ, և մենք առաջ ընթանանք. «Աստուած քեզ ինչ շնորհ որ տալիս է, կարօտեալների համար ծառայեցրու, որպէսզի շնորհներն աղբիւրանան, և դու փառաւորես»[79*]: Ըստ որում ինչպէս որ շնորհն ի վերուստ է բաշխւում, այնպէս էլ մեր այս երկիրն է վարժարան, որի մէջ օրըստօրէ վարժւում ու կրթւում ենք և աստուածային գործ կատարում Աստծու նախախնամութեան տակ. «Որովհետև Աստուած այս աշխարհը կարգեց իբրև դպրոց, որպէսզի արարածները սովորեն Աստծու խնամքը՝ պատրաստել և յօրինել՝ բժշկելով Նրա նախախնամութեամբ...»[1]:

Հետևաբար Քրիստոսով բացւում է իւրաքանչիւր անձի ուղիղ ճանապարհը և Քրիստոսով որոշւում է նրա նախընթաց և յետընթաց ժամանակը իր սկզբով, ընթացքով և վերջով, ըստ որում նախընթացը կոչւում է նախապատրաստութիւն, իսկ յետընթացը՝ կատարում:

ԺԲ

ՉԱՐՆ ՈՒ ՉԱՐԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Աստծու արարչագործութիւնն ըստ ամենայնի բարի է թէ՛ իր հիմքով, թէ՛ գոյութեամբ և թէ՛ նպատակով: Չարը չի եղել և ամենաբարի Աստծու

[1] Յաճախ., Է 23:

արարածների մէջ չէր էլ կարող լինել (Ծննդ., Ա 4, 8, 10, 12, 18, 21, 31, Ժող., Գ 11, Առ., Ը 31, Ա Տիմ., Դ 4): Բայց Աստուած իր արարածների մէջ ազատ կամք շնորհեց բանաւոր անձանց, որոնք են մարդիկ ու հրեշտակները, ըստ որում այդ ազատ կամքի էութիւնն այն է, որ կարող է նպատակաուղղուել թէ՛ առ բարին, և թէ՛ առ չարը: Թէ՛ մարդն ու թէ՛ հրեշտակը իշխանական կամք ունեն և կարող են կամ աստուածահաճ ճանապարհ բռնել և կամ շեղուել[1]: Ազատ կամքը բնականաբար թէ՛ բարու, և թէ՛ չարի ծնունդ կը լինի. ոչ թէ չարը ինքնըստինքեան ստեղծուել է, այլ «բարուն ցանկալը բարի է և չարին՝ չար և ցանկութիւնն էլ՝ նոյնը»[2]: «Բարերար Արարչից որևէ չար բան չի լինում, և չկայ բան, որ բնութեամբ չար լինի, և կայ ոչ թէ չար բաների, այլ՝ բարիների արարիչ, ըստ որում «իրերն այն ժամանակ են լինում չար, երբ կարիքները չեն բաւարարում օրէնքով»[3]:

Եւ ահա քանի որ Աստծու առաջին բանաւոր արարածները հրեշտակներն էին, նրանցից եղան և չարի ծնողները թէ՛ իրենց, և թէ՛ մարդկանց մէջ: Չար կամքից չարութիւն երևաց, և չարը սկզբունք դարձաւ աշխարհում: Եւ որովհետև այդ չարը սկսուեց այդ հրեշտակների աստուածանալու կամ իրենց դիրքից բարձրանալու ձգտումով[4], այսինքն՝ ամբարտաւանութեամբ, դրանից էլ բխեց աշխարհի վրայ չար կամքով, հակառակութեան միտումով տիրելու ձգտումը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ աստուածանալու հակում[5]: Ուստի և իբրև Աստծու ճանապարհից շեղողներ, կոչեցին սատանայ, այսինքն՝ Աստծու արքայութեան հակառակորդ, որ ինքնակամութեամբ էր չարացել և ոչ թէ գոյութեամբ (ինչպէս Պարսից Ահրիմանը): Դրանք ընկան փառքի պատուից, այնուհետև համարուեցին մարդասպան և սկզբից մեղանչողներ, հին օձ, Բելիար, այսինքն՝ զգուելի, փորձիչ, մահուան իշխան և ամենայն չարիքների պատճառ, Բեհեղզեբուղ, բանսարկու և ստախօս[6]: Ամբողջ խմբի մէջ սկզբնապէս մոլորուածը գլխաւոր է նկատուում:

[1] Ցաճախ., Դ 230-237:
[2] Ցաճախ., Ե 383, 369, Ժ 77:
[3] Եզնիկ [աշխարհ. թարգմ., էջ 33]:
[4] Բ Պետր., 4, Յուդ., 6, Ցաճախ, ԺԴ 106
[5] Գ Կորնթ., 16, Ցաճախ, Բ 467, Հարց., 146-152:
[6] Յուդ., 6, Բ Պետ., Բ 4, Ծննդ., Գ 15, Եփես., Զ 12, 16, Կող., Բ 15, Ա Յովհ., Գ 8, Յովհ., Ը 44, 47, Ցայտ., ԺԲ 9, Ի 2, Բ Կորնթ., ԺԱ 3, Ա Կոր., Զ 15, Եփ., Զ 11, Մատթ., ԺԲ 25, ԺԳ 39, ԺԷ 41, Եբր., Բ 14, Իմաստ., Բ 24, Գործք., Ժ 38, Բ Կոր., Դ 4, Եփ., Բ 2, Զ 12, Ա Յովհ., Ե 19, Ղուկ., ԺԱ 15, 19, Զաք., Գ 1, Եզնիկ, 52-53, 113:

Դրանց իշխանութիւնը մեղաւոր կամ հեթանոս աշխարհի վրայ է և կոչւում է «իշխանութիւն խաւարի», իսկ դրանց գլխաւորը՝ «իշխան աշխահիս այսորիկ», որոնք և իրենց չարագործութիւնների համար Աստծու դատաստանին կենթարկուեն[1]: Ուստի և ամբարտաւանութիւնը համարւում է սկիզբը մեղաց (Սիր., Ժ 15), և Պօղոսը զգուշացնում է Տիմոթէոսին եպիսկոպոսութիւն չտալ մանկահասակներին, որ ամբարտաւանութեան մէջ չթևակոխեն հրեշտակի պէս (Ա Տիմ., Գ 6), որ արուսեակ էր և գահավիժեց (Ես., ԺԴ 12-15): Ըստ որում սատանան ամեն կերպ գործում է Աւետարանի և Եկեղեցու դէմ (Մատթ., ԺԳ 19, Մարկ., Դ 15, Ղուկ., Ը 12, Բ Կոր., Դ 4, Ա Տիմ., Է 15, Բ Տիմ., Բ 26, Ա Պետր., Ե 8, Ցայտ., Ի 8)՝ իր արբանեակների միջոցով, և խորտակւում է Քրիստոսի զօրութեամբ ու հաւատքով:

Այս ամենից պարզապէս երևում է, որ սատանան ոչ թէ ինքնըստինքեան չարութիւն է. ինքնըստինքեան չարը գոյութիւն չունի[80*], այլ սատանայի կամքն է չար, որից դուրս է գալիս չարի սկզբունքը: Ըստ որում և չարն ունի իր սերմանողը, իր մարգարէն, իր դեսպանը և իր մունետիկն այս աշխարհում: Կամ պէտք է ազատ կամքը գոյութիւն չունենար, որ չարը հետևէր, և կամ բարու ընտրութիւնը չարութեան առկայութեամբ միայն կարող է գովելի լինել: Հետևաբար և բարին, Աստծու արքայութեան ընթացքն ու նրա մշակները կուելու արիութիւն ունեն սատանայի դէմ (Եփես., Զ 12), որ ներկայանում է հեթանոսութեան, հրէութեան և առհասարակ խաւարի ու տգիտութեան մէջ: Եւ այդ բոլոր հակառակ ուղղութիւնների ու երևոյթների մէջ ոչ թէ սատանան է անպատճառ անձամբ գործում, այլ՝ ամենայն չար սկզբունք, չար ընթացք, նոյնիսկ մարդու ներքին կեանքում տեղի ունեցող զեղծում ու եղծում սատանայական է կոչւում, քանի որ սատանան է «սկզբնաչարը»[81*] և նա նկատուում է զանազան անունների տակ ևս (յաւերժահարսն, քաջք, ալք և այլն)[2]: Եթէ սատանան իր էութեամբ իրապէս չար արարած լինէր, անշուշտ պէտք է միշտ ներկայ լինէր այնտեղ, որտեղից չարը ելնում է. այդպէս է պարսկական երկուութիւնը, որ ընդունում է մի ինքնուրոյն չար գոյութիւն: Այդպէս է առհասարակ հեթանոսաց մէջ չարի գաղափարն իր

[1] Բ Կոր., Դ 4, Մատթ., ԻԵ 4, 41, ԺԲ 26, Յովհ., ԺԲ 31, ԺԴ 30, ԺԶ 11, Բ Կոր., Դ 4, Եփ., Բ 2, Զ 12, Յուդ., 6, Բ Պետ., Բ 4:
[2] Տե՛ս Հարց., 150, Ցաճախ., Թ 316:

գոյութեամբ, որը և մեր մէջ յայտնի է «դև» չաստուած անուամբ: Մինչդեռ սատանան, բարոյապէս չար լինելով կարող է գրաւել, հրապուրել դէպի չարը և ոչ թէ բռնութեամբ վարել: «Դևերը ոչ թէ բռնութեամբ են մէկին տանում դէպի կորուստ, այլ մեղքը քաղցր են դարձնում մարդու կամքին, և շողոքորթութեամբ անուսումներին որսում են դէպի խաբէութիւն, ինչպէս շատ մարդիկ իրենց ընկերներին (մղում են) գողութեան և աւազակութեան»[1]:

Ուստի և ճշմարիտ աստուածապաշտից պահանջւում է զգուշանալ չարից և չարակամ անձնաւորութեան կամ սատանայի խարդաւանքներից՝ հակառակ համաստուածութեան (պանթէիզմի), որի մէջ ընդհանրապէս տեղ չունի չարը: Ըստ որում և մկրտող քրիստոնեայից Հայաստ. Ս. Եկեղեցին նախ պահանջում է «Հրաժարիմք ի սատանայէն» ասել[2]: Դէպի չարն ու չար անձն ունեցած վերաբերմունքով ու հաստողութեամբ է որոշւում մեր բարի կամքն ու տրամադրութիւնը, վճռականութիւնն ու հաստատամտութիւնն՝ առ Աստուած: Սատանային ճանաչելով՝ հաւաստիանում ենք, որ նա մեզ դրսից է գրաւում, և մեր մէջ չարը գոյութիւն չունի, այլ մեր կամքն է դէպի չարն ուղղւում՝ հրապուրելով: Սատանան անիծուած է, ուստի և չարութեան վրայ իշխանութիւն ունի և կարող է խորամանկութեամբ ու խաբէութեամբ, ստախօսութեամբ և աշխարհի ամենահրապուրիչ միջոցներով քաշել անհեռատես և անխելահաս մարդկանց դէպի իր խաւարը[3]:

Այսպիսով ուրեմն սատանան ուզում է տիրել մարդկանց, տիրապետել աշխարհը, դէպի չարը վարել ամենայն ինչ՝ հակառակ Աստծու տնօրինութեան. նա ուզում է Քրիստոսի տեղը զբաղեցնել, ուստի և «նեռ» է կոչւում կամ «հակաքրիստոս»: Նա փոխանակ Աստծու դեսպանը լինելու, ճշմարտութեան մշակ դառնալու և լոյսին ծառայելու, ինքն է կամենում ճշմարտութեան լոյս աղբիւրի տեղը զբաղեցնել (Բ Կոր., ԺԱ 14) և դրա համար իր ձգտման գործիք է դարձնում աշխարհը և այդ աշխարհի հրապոյրով խաբում մարդկանց: Եւ ահա նա

[1] Եղիշե, էջ 29:
[2] «Հրաժարւում ենք սատանայից և նրա ամեն տեսակ խաբէութիւնից, նրա պատրանքներից, նրա խորհուրդներից, նրա ընթացքից, նրա կամքից, նրա չար հրեշտակներից, նրա չար պաշտօնեաներից, նրա չար կամակատարներից, և ամեն տեսակ չար զօրութիւնից՝ հրաժարւելով հրաժարւում ենք» (Ժամագիրք):
[3] Յաճախ., Ի 383:

մտնում է աշխարհի մէջ և միանում է նրա հետ ընդդէմ Աստծու[82*]: Սատանայի մէջ ուրեմն անձնաւորուած է աշխարհային սկզբունքը: Այդ պատճառով և առաքեալը սատանային աշխարհի աստուած է անուանում. «Եւ եթէ մեր Աւետարանը ծածկւած իսկ է՝ ծածկւած է կորստեան մատնւածների համար, որոնց այս աշխարհի աստուածը կուրացրեց, որպէս անհաւատների սրտեր, որպէսզի նրանց մէջ չծագի Քրիստոսի Աւետարանի փառքի լոյսը, որ պատկերն է աներևոյթ Աստծու» (Բ Կոր., Դ 4): Սատանայի և Աստծու հակառակութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ աշխարհի և Աստծու հակառակութիւնը, որ ծագում է մարդկային կամքով աշխարհի սոսկական ընթացքին հետամուտ լինելուց: Եւ այս ընթացքի մէջ սատանան իշխանութիւն է ձեռք բերում արդէն իսկ նրանով, որ իր հոգևորութեամբ միանում է նրա հետ: Իսկ եթէ նա ինքնուրոյնաբար լինէր Աստծու հակառակորդ և աշխարհից դուրս, այն ժամանակ նա մի այլ աստուած կը նկատւէր, իսկ այդ տեսակէտն է մանիքէական աղանդի, որ ընդհանրապէս ջնջում է Աստուածութեան ճշմարիտ գաղափարը, որովհետև Աստուածութեան ամենակարողութիւնից դուրս է երկաստուածութեան հնարաւորութիւնը[83*]: Հետևաբար սատանայի իշխանութիւնն ու զօրութիւնը միմիայն աշխարհի հետ միանալով է և կամ մարդու մէջ բնակւելով ու նրան դաշնակցելով: Նա առանձին գոյութիւն ունենալ չի կարող, ուստի և դաշնակցում է մարդուն, որպէսզի իր գոյութիւնը պահպանի. մարդու միջոցով է նա ապրում, յարատևում ու սնւում: Նա ամեն միջոցներով տարածում է կեղծ իմաստութիւն, թանձրացնում է մարդկանց սրտերը և բթացնում նրանց հոգու զգայարանը՝ Աստծու խօսքը չընդունելու և հակառակ գործելու համար, և այդպէս է հաստատում իր իշխանութիւնը հեթանոսութեան մէջ՝ Քրիստոսի դէմ[1]: Այդ պատճառով և Քրիստոսին չհետևողը յանձնւում է սատանային՝ հեթանոս աշխարհի կեանքով (Ա Կոր., Ե 5): Պարզ է, որ սատանան խաւարի ու խաւարամիտ անհատների և քայքայւած անձանց մէջ է կարողանում բնակւել՝ իր գոյութեան պահպանութեան համար: Նրա կամքի համեմատ բնակատեղի են յիշւում խաւարը (Եփ., Բ 2, Զ 12), որտեղ լոյս չկայ, և խոզերը, որոնց մէջ անսրբութիւն ու կատարեալ մարմնասիրութիւն է տիրում (Մատթ., Ը 32): Այդտեղից նա ձգտում է առիւծի պէս յարձակւել, խաւար,

[1] Մատթ., Դ 5, 7, Տովբ., Զ, Յովբ., Ա-Բ 7, Բ Կոր., ԺԲ 7, ԺԱ 14, 3, Դ 4, Եփես., Բ 2, Ա Կոր., ԺԲ 2, Բ Տիմ., Բ 26, Յովհ., Ը 44, Մատթ., ԺԳ 19, Ա Յովհ., Բ 18:

անսուրբ ու մարմնասէր մարդկանցով կերակրել ու նրանց մէջ պաշտել[1] (Ա Պետր., Ե 8, Եզնիկ, 149-153):

Արդ, որովհետև սատանան իր գոյութիւնը պահպանում է միմիայն աշխարհի սկզբունքը դառնալով, կամ աշխարհի միակողմանիութեանը միանալով, ուստի ո՛չ սատանան, և ո՛չ էլ նրա չար կամքն աստուածային տնօրինութեան համար անհրաժեշտ չեն. անհրաժեշտ է միմիայն աշխարհը, որը և Աստուած ստեղծել է, ուստի և սատանան անհրաժեշտի հետ միանալով է ապրում: Այդպէս էլ կամքի ազատութեան գաղափարի մէջ կայ բանական արարածին փորձելու հնարաւորութիւնն ու չարի մտածողութիւնը, սակայն ո՛չ այդ բանական արարածի անկումը, և ո՛չ էլ բանականօրէն չար մտածողութիւնն անհրաժեշտ չեն Աստծու տնօրինութեան իրագործման համար, թէև չեն էլ կարող խափանառիթ լինել:

Բայց գիտենք, որ Աստծու նախախնամութիւնն ամենայն ինչ ծառայեցնում է Իր տնօրինութեան իրագործմանը, ըստ որում և սատանան իր հակառակութեամբ իսկ գործիք է դառնում դրա համար: Ուրեմն սատանայի նշանակութիւնն այն է, որ նա, թէև ակամայից, գործիք է դառնում Աստծու արդարութեան յայտնելուն մեղքի նկատմամբ: Սատանան մահւան իշխանութիւն ունի մարդկանց վրայ, որովհետև մարդիկ մահւան երկիւղով ծառայում են սատանային ու նրա խաւարին (Եբր., Բ 14-15): Այս պատճառով Աստուած տալիս է իր արդարութեան յայտնութիւնը մեղքի ու մահւան իշխանութեան դէմ: Ըստ որում և սատանայի աշխարհային կամ մահւան իշխանութիւնը, հաստատելով մարդկանց եսապաշտութեան և աշխարհապաշտութեան վրայ, մի սոսկալի պատիժ է դառնում այն մարդկանց գլխին, ովքեր նւիրւել են սատանային կամ աշխարհային սկզբունքին:

Այսպէս էր մինչև Քրիստոս: Քրիստոսով ընկաւ սատանայի իշխանութիւնը «և մեր Փրկչի երևալով քանդուեց նրա բռնութիւնը՝ մարդկանց որդիների վրայից, [նրա], որ տիրում էր մեղքով»[2], ինչպէս Քրիստոս էլ ասում է՝ «այս աշխարհի իշխանը դատապարտուած է» (Յովհ., ԺԲ 31, ԺԶ 11): Բայց Քրիստոս ոչ թէ

[1] «Արդ, միթէ դևին պաշտպանողը, դևի աչքերն ու բերանն է՞ համբուրում, ոչ. այլ դևերի հրամանները կատարելն է իսկական դիւապաշտութիւն» (Մանդ., 193):
[2] Յաճախ., Բ 489:

սատանային, այլ նրա իշխանութիւնը ոչնչացրեց, ուստի և այժմ սատանան ոչ թէ բռնութիւն է, ոչ թէ բախտի ծանրութիւն, ոչ թէ մեղանչման անշեղ դաշնակից, որից հաւատացեալը չի կարող հեռանալ, այլ՝ փորձիչ, փորձութեան զօրութիւն, և նրա դէմ մարդ պէտք է արթուն լինի, աղօթի Աստծուն և Ս. Հոգով յաղթանակ տանի, ինչպէս պատւիրում է Քրիստոս: Այդպիսով սատանան ազատ կամքի բարի ուղղութեան նախանձն է բորբոքում, բայց նրա խայթոցը այլևս չի ներգործում, որովհետև մարդիկ ճանաչում են մեղքի գարշութիւնն ու տանջանքը, չեն փնտռում սատանայի դաշնակցութիւնը, որ կարող են[1], այլ ձգտում են դէպի Աստծուն ու Նրա փրկութեան դուռը: «Այժմ իւրաքանչիւր ոք փորձւում է իր ցանկութիւններից հրապուրւած և խաբւած: Ապա այնուհետև ցանկութիւնը յղանալով մեղք է ծնում և կատարեալ մեղքն էլ մահ է ծնում»[2]: Սատանայի փորձութիւնը կարող է ամրացնել հաւատացեալին և Աստծու Հոգու մէջ զօրացնել. նա ստեր է և աւելի մեծապէս նկատելի է դարձնում մարդկանց առաջ Աստծու լոյսի փառաւորութիւնը: Նա ոչ թէ անհրաժեշտ է փրկագործութեան խորհրդի իրագործման համար, այլ նա իր ստերական հակառակութեամբ հանդերձ, ճշմարտութեան յաղթանակն է փառաւորում: Ուստի և նա չի կարող հանդերձեալ կեանքում ինքն իրեն արդարացնել, ըստ Պօղոսի եզրակացութեան. «Արդարև, եթէ իմ Աստծու ճշմարտութիւնը ստութեան մէջ աւելանում է ի փառս Նրա, էլ ինչի՞ համար եմ ես դատւում իբրև մեղաւոր» (Հռովմ., Գ 7): Նա այդ չի կարող ասել, որովհետև այդպէս չի ստեղծւած, այլ իր ազատ կամքով հակառակ է եղել Աստծուն, ուստի և նզովւած է յաւիտեան: Քրիստոսով էլ նա ջախջախւած է, և խաւարի իշխանութիւնը կայ միմիայն նրա համար, ով Քրիստոսի լոյսը թողնելով դէպի խաւարն է ուղևորւում: Ճշմարիտ հաւատացեալը յաղթող է, որովհետև աստուածային պատերազմը մարմնաւոր չէ, այլ՝ հոգևոր, և աշխարհային սկզբունքի դէմ նա յաղթող է թէ՛ այստեղ, և թէ՛ հանդերձեալում[3]:

[1] Գործք., ԻԶ 18, Բ Կոր., Բ 11, Ա Տիմ., Ե 15, Եփես., Բ 1-8, Եզնիկ, 87, 89:
[2] Յակ., Ա 4, Ա Պետր., Ե 8-9, Բ Կոր., ԺԲ 7, տե՛ս և Փարպ., 358:
[3] Եփես., Զ 11, Յովհ., ԺԲ 31, Ա Կոր., ԺԷ 24-26, Յայտ., ԺԲ, Գ 9, 10: «Դևերը գիշերն աւելի համարձակ են, որովհետև խաւարասէր են և դարանակալ. որով միշտ պատերազմում են մարդկանց դէմ, մանաւանդ, որոնց նկատմամբ հնար են գտնում իրենց դառը թոյնը սերմանել մտքով, խօսքով և գործով» (Մեկն. Ժամ., 389):

ԺԳ

ՄԱՐԴՈՒ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՊԱՏԻՒՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ

Մարդու հոգևոր և մարմնաւոր արարած լինելը բնականաբար ցոյց է տալիս, որ նա իր մարմնով յարատևում է հողի հետ կապակցուած, իսկ հոգով կենդանի է Աստծու հաղորդակցութեամբ: Հոգով նա Աստծուց է, ուստի և նրա հոգևոր կեանքը ներկայացնում է մեզ մի պատմութիւն, թէ նա իր կամքով և ինքնագիտակցութեամբ ի՞նչ դիրք զբաղեցրեց Աստծու կամքի և յայտնութեան նկատմամբ: Աստուած ինչպէս մարդու մարմնի գոյութեան և բարեվայելուչ կեանքի համար նրան դրեց երկրաւոր երջանկութեան դրախտի մէջ. նրա հոգու կենդանութեան ու զօրաւորութեան համար ևս երանական վիճակ շնորհեց, այսինքն՝ արժանացրեց նրան Իր ամենամօտիկ հաղորդակցութեանը, որի կատարեալ իրականացումը միմիայն աշխարհի վերջում պէտք է լինի: Դէպի այդ վերջնական նպատակը պէտք է մարդ դիմէր երկրի վրայ ապրելով և Աստծու կամքի յայտնութեանը տեղեակ լինելով: Սակայն նա ստեղծուած էր ազատ կամքով, որով պայմանաւորուած էր նրա այդ ընթացքի ճշմարիտ ուղղութեան ընտրութիւնը. «Հրեշտակներն ու մարդիկ անձնիշխան կամք ունեն, որ պատուի է արժանանում է Աստծու կողմից, որպէսզի, ովքեր նրանց մէջ ընտիր են, երևան»[1]: Հետևաբար նա թէ՛ կամքի կատարեալ ազատութեամբ վայելում էր Աստծու առատ շնորհները, և թէ՛ գիտէր Աստծու սուրբ կամքը, արարածի ինքնագիտակցութիւն ունենալով հանդերձ: Ուրեմն մարդու թէ՛ մարմնաւոր, և թէ՛ հոգևոր կեանքը սկիզբ է առնում այդ վիճակից և այդ վիճակը պէտք է ժառանգաբար շարունակուէր սերնդէ սերունդ: Այդ սկզբնական վիճակն այնպէս զօրաւոր էր, որ կարողութիւն ունէր առաջադիմելու և մարդուն իր կոչման իրականացմանը հասցնելու: Այդ վիճակում մարդը ոչ թէ լիովին կատարեալ էր, ինչպէս որ հանդերձեալ կեանքում է լինելու, այլ նա ունէր իր մէջ առաջադիմելու և իր կոչման իրականացմանը հասնելու միջոցի, կարողութեան

[1] Յաճախ., [Բ 20]:

սկզբնաւորութիւնը: Մարդն այդ վիճակում ոչ թէ կատարեալ սուրբ կամք ունէր, այլ նա անմեղ էր, մեղք չգիտէր և կարող էր սուրբ կամքով առաջնորդուել (Ա Կոր., ԺԷ 45-47)՝ իր կոչման իրականացման համար: Նա կենդանի հաղորդակցութիւն ունէր Աստծու հետ, որով ազատապէս կարող էր երանութիւն վայելել կամ այլ կերպ ասած՝ դրախտում երջանիկ լինել: Աստուած նրան ամեն հնարաւորութիւն տուել էր դրախտի բնակիչ լինելու և կատարելագործուելու:

Ուրեմն մարդը կարող էր այդ դրախտային վիճակը վայելել, եթէ միայն կամենար, որովհետև Աստծու տուածը, Աստծու պատկեր լինելու երանութիւնը ոչ թէ միշտ կարելի էր ունենալ առանց աշխատանքի, այլ՝ պահպանելով ու կատարելագործելով: Այլ կերպ ասած՝ մարդու կոչումն էր Աստծու շնորհածով ձգտել դէպի աստուածադիր նպատակը, որով նա թէ՛ իր մէջ սկզբնաւորուածը կը զարգացնէր, և թէ՛ երանութեան մէջ կը լինէր: Այդպէս պէտք է լինէր, որովհետև նա ազատ կամք էր վայելում: Մարդու ճշմարիտ կոչումն էր հրեշտակների կարգաւորութեան մէջ մտնելու, ըստ Աստծու հրաւէրի և ըստ աստուածասիրական արժանիքների[1]:

Բայց մարդու աշխատանքն ու ձգտումը, ազատ կամքի ճշմարիտ ուղղութիւնը երևան կը գար միմիայն փորձութեան հանդիպած ժամանակ, իսկ այդ փորձութիւնը հնարաւոր էր այն պատճառով, որ բացի Աստծուց կար մարդու հայեցողութեան առաջ մի գրաւիչ աշխարհ: Այդ աշխարհը կարող էր հրապուրել մարդուն և մինչև անգամ Աստծու տեղը զբաղեցնել՝ նայելով, թէ մարդն իր աստուածային պատկեր լինելը կը դիտէր համաձայն իր հոգևոր էութեան, թէ՞ իր աշխարհային պատկեր լինելը կը դիտէր ըստ իր մարմնաւոր գոյութեան: Հետևաբար մարդ, եթէ բռնել էր իր հոգևոր կոչման ճանապարհը, չէր հրապուրի աշխարհային սկզբունքով, իսկ եթէ մարմնաւորի ընթացքին ուշք դարձնէր, կարող էր ենթարկուել զանազան գայթակղութիւնների:

Ահա այս վիճակը նկարագրուած է Ս. Գրքում պատկերաւոր կերպով: Դրախտի մէջ գտնուող կենաց ծառը աստուածային կենդանութեան խորհրդապատկերն էր, մինչդեռ «բարու և չարի գիտութեան» ծառը, որից արգելուած էր ուտել, հրապուրում էր ընկնելու բարի և չար մտածողութեան

[1] Յաճախ., Ե 55, Շար., էջ 634, Եզնիկ., էջ 41-44:

ընդհարման կամ մի ճգնաժամի մէջ[1]: Բարին և չարը դրուած էր նրա առաջ, և նա կարող էր ընտրել իր կամեցածը՝ կա՛մ Աստծու կամքը, կա՛մ արտաքին հրապոյրը: Եթէ նա մնար բարու մէջ՝ կը յարատևէր իր երանութեան մէջ, իսկ եթէ կամենար չարը ճանաչել, չարի համն էլ ճաշակել, արտաքին հրապոյրն էլ փորձել, կը ճաշակէր նաև մահը: Չարի մասին նա պէտք է միայն այնքան գիտենար, թէ օտար է, խորթ է, և ինքը պէտք է միշտ յաղթող լինի նրա նկատմամբ՝ տեսնելով, բայց չընդունելով իր մէջ, իսկ եթէ ընդունի իր մէջ, ճաշակի, կընկնի իր կոչումից և, փոխանակ իր կոչման համաձայն աշխարհից ազատ լինելու, նրան կենթարկի:

Ուտելով բարու ու չարի գիտութեան ծառի պտղից, որ բովանդակում էր իր մէջ աշխարհի գրաւիչ հրապոյրը, նա Աստծու պէս էր դառնալու, քանի որ իր ազատութեամբ հասկանալու էր, թէ ինքն աշխարհի ինքնուրոյն տէրն է: Մինչդեռ ուտելով կենաց ծառի պտուղը, ինչն Աստծու շնորհների պտուղն էր, միշտ համոզուած կը լինէր, որ ամենայն ինչ վայելելու էր իբրև Աստծու շնորհ: Արգելուած պտղի մէջ մարդուն հրապուրում էր աշխարհային սկզբունքը, աշխարհի ընդդիմադիր, ինքնուրոյն դիրք բռնելն Աստծու դէմ կամ սատանայի իշխանութիւնն՝ իր բոլոր հրապոյրներով, որոնք տեսանելի են դառնում մարդուն (Եւային) օձի կերպարանքով, օձի արտայայտութեամբ: Պտուղը ներկայանում է, որպէսզի մարդը ձգտի նրա հրապուրիչ գոյութիւնն ինքնուրոյնաբար վայելելու, իսկ օձը զարկ է տալիս մարդու լոկ մարմնաւոր, աշխարհային գրգիռներին ու ձգտմանն ընդդէմ Աստծու, նախ զարթեցնելով նրա մէջ անհաւատութիւն դէպի Աստծու սիրոյ ու արդարութեան հանդէպ և ապա վառելով նրա մէջ կեղծ ինքնուրոյնութիւն կամ անկախութիւն: Պտուղը գրգռում է մարդու զգայական կողմն ու վառում նրա ագահութիւնը, իսկ օձը՝ սատանայի տեսանելի արտայայտութիւնը, խաբում և ներշնչում է մարդու մէջ կեղծ ազատութիւն Աստծուց կախեալ վիճակից և ինքնուրոյն խաբուսիկ տիրապետութիւն աշխարհի վրայ: Այսօրինակ իրավիճակում է յայտնւում մարդը ամեն մի մեղանչական փորձութեան մէջ նաև այժմ, երբ հասուն տարիքում նրա մտածողութիւնն ու անձնաւորութիւնը զօրանում է, և մարդ սկսում է քննդատական դիրք բռնել ու

[1] Ծնն., Բ 16, Յաճախ., 109-125, Ընդհ., էջ 333, Հարց., 223, 220:

տատանուել աշխարհի հրապոյրի ու ժամանակաւորի և աստուածայինի, յաւիտենականի ու հոգևորի մէջ:

Մարդը սկզբում հնազանդ մնաց, սակայն յետոյ հրապուրուելով պտղից ու սատանայից[1], եօթնեակ մեղք[2] գործեց, այսինքն՝ անհնազանդութեամբ գնաց ագահութեան ճանապարհով դէպի ամբարտաւանութիւն. ինքը մարմնով ու հոգով Աստծու ստեղծածն էր և պէտք է Աստծուց կախեալ լինելով երկրի վրայ տէր լինէր, բայց նա կամեցաւ ինքն իրեն աստուածացնել և արհամարհել Աստծուց ունեցած կախումը[3]: Ահա այդ ժամանակ նա բաժանուեց Աստծու հաղորդակցութիւնից, «կորցրեց անմահութեան փառքը, որ ունէր»[4], կորցրեց մտքի տեսութեան պայծառութիւնն ու իր մանկական անմեղութիւնը, և օտարացաւ Աստծուց[5]: Այսինքն՝ նախ անհաւատութեամբ տրամադրուեց Աստծու նկատմամբ ու բաժանուեց նրանից, ապա ինքնասիրութեամբ բորբոքուեց ու կամեցաւ աստուածանալ, և վերջապէս այդ ամենի հետևանքն այն եղաւ, որ գլորուեց կատարեալ աշխարհասիրութեան մէջ: Ուստի և հետզհետէ հակւելով դէպի չարը, ընկաւ նեղութիւնների մէջ, կորցրեց նաև իր երջանկութիւնն ու երկպառակութիւն ընկաւ նրա մտքի, կամքի ու խղճի մէջ: Ապա իսկապէս բացուեցին նրա աչքերը, ըստ պատմածի, և սկսեց զգալ իր մերկութիւնը[6]: Այս մերկութեան զգացումն էլ ոչ միայն մարմնաւոր էր, այլև հոգևոր, որովհետև պատուիրազանցութեամբ մարդ անհաւատ գտնուեց Աստծուց զատուելով, ամբարտաւան իր անձով և համակուեց աշխարհասիրութեամբ: Սրանք հիմնական մեղքերն են, որոնցից բխում են ամեն տեսակ մեղքեր ու չարիքներ, որովհետև մարդու մեղանչումը լինում է նրա՝

[1] Յովհ., Ը 44, Յայտ., Բ 9, Եղիշէ 28, Եզնիկ, 46-51:
[2] Հարց., էջ 279:
[3] «Ոչ թէ մեծ էր Ադամի գողութիւնը, այլ (ընդամենը) մի մրգի քաղելն էր, բայց արդ, տես պատուհասների, անէծքների և մահերի բիւրաթիւ բազմութիւնը, որ եկաւ ոչ միայն Ադամի, այլև Ադամի բոլոր ծնունդների վրայ, որովհետև ոչ թէ մրգերի գողութեան պատճառով պարտապան եղաւ, այլ Արարչի հրամանները և նրա բերանի խօսքը [անտեսելու հետևանքով]» (Մանդ., 115: Հմմտ. Սարկ. վարդ. Աղօթք, (5-7):
[4] Ս. Հարք. առ Եղիշէ, էջ 28:
[5] Ընդհ., էջ 406, 412:
[6] «Սկզբից Ադամը դրախտում Եւայի հետ մերկ էր, սակայն (մերկ) անդամների պատճառով դրախտի համար խոտան չգտնուեցին, քանզի ոչ թէ մարմիններն են մեղքի պատճառը, այլ նրանք, որ մարմինը չարաչար տանում են դէպի կորուստ» (Ս Կիւրեղ. Կոչ. ընծ., էջ 155):

Աստծու, իր անձի և աշխարհի հանդէպ ունեցած սխալ վերաբերմունքից: Թէև մարդը այդ սխալ վերաբերմունքով Աստծու պէս դարձաւ, այսինքն սկսեց զգալ, թէ ինքն աշխարհի տէրն է, սակայն Աստուած նրան զգալ տուեց, որ խաբուած է՝ դուրս անելով նրան դրախտից և հրեղէն սրի արգելքը դնելով մուտքի վրայ: Աստուած նրա խաբուած լինելը զգալ տուեց նաև այն բանով, որ թոյլ տուեց նրան ընկնել իր մեղքի հետևանքների մէջ, որովհետև ինչպէս որ արդարութիւնն ու սրբութիւնն են անբաժան Աստծուց, այնպէս էլ մեղքն ու տանջանքը (պատիժը) անբաժան են մարդուց՝ նրա պատուիրազանցութեան հետևանքով: Մարդու՝ աշխարհի նկատմամբ ունեցած սխալ վերաբերմունքից առաջացաւ այն, որ նա Աստծուց կտրուած լինելով՝ ոչ թէ ինքնուրոյն տէր դարձաւ աշխարհի վրայ, ըստ իր սպասածի, այլ ընդհակառակը՝ նրա գերին, նրանից ակամայ կախուածը, նրա մէջ անմխիթար տանջուողը, անյոյս հառաչողը:

Աստուած էր աշխարհը ստորադրել մարդուն. մարդն էլ Աստծուց տարանջատուելով չէր կարող տիրել աշխարհին, այլ ենթարկուեց նրան. նա իր անհաւատութեամբ սկսեց ձգտել ոչ թէ դէպի Աստուած, այլ դէպի աշխարհը, ուստի ոչ թէ բարձրացաւ, ինչպէս սպասում էր, այլ ընկաւ անասնական աշխարհի խորխորատը (Յուդ., 10, Բ Պետր., Բ 12):

ԺԴ

ՄԵՂԱՆՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Մարդու սկզբնական վիճակի երանութիւնը կախուած էր նրա դիրքից, որ նա բռնելու էր Աստծու և աշխարհի նկատմամբ: Եթէ նա իր հաւատքը, յոյսն ու սէրը ամուր խարիսխով զօրացնէր Աստծու անուան վրայ՝ աշխարհի տէրը կը լինէր և աստուածատուր երանութիւնը կը վայելէր, իսկ եթէ աշխարհի վրայ հաստատուէր, աշխարհի հետ կը կապուէր և նրա անողոք ընթացքին կը ենթարկուէր: Նայելով, թէ ո՞րը կը կամենար, ըստ այնմ և կը որոշուէր նրա գոյութեան եղանակը: Նա ընտրեց աշխարհային ճանապարհն ու մեղանչեց, ուստի և շեղուեց իր աստուածադիր կոչումից, առաւել ևս ծանր եղաւ դրա հետևանքը: Նա մերժելով Աստծուն, հեռացրեց իր միջից սուրբ սկզբունքը և մեղանչելով ամրացրեց իր մէջ

աշխարհային սկզբունքը: Նա ընկաւ և այնուհետև զարգանում էր ոչ թէ իբրև տէր իր Տիրոջով, այլ իբրև ծառայ՝ աշխարհի տիրապետութեան տակ (Հռ., Ե 12): Այդ բարոյական անկումն ազդեց, ներգործեց մարդու կազմուածքի ու բնական կեանքի վրայ, եղծելով նրա հոգևոր կեանքն ըստ հոգեբանական անխոտոր օրէնքի[1]:

Թէ ինչպիսի՞ վիճակի մէջ ընկաւ մարդն իր գոյութեամբ, կարելի է որոշել ճշտութեամբ՝ միմիայն համեմատելով նախնական և մեղանչական վիճակներն իրար հետ: Համաձայն Կաթոլիկ եկեղեցու աստուածաբանութեան, նախամարդն ունեցել է բնական պակասութիւններ ևս, որոնք այժմ էլ կան, միայն թէ նա այն ժամանակ գտնուում էր մի արտաքին «Գերբնական շնորհաց ձիրքով» օժտուած արդարութեան մէջ, և այդ ձիրքը պահպանում էր նրան: Մեղք գործելով՝ նա միայն զրկուեց այդ «Գերբնական շնորհաց ձիրքից», իսկ նրա բնական ընդունակութիւնները մնացին, ինչպէս էին: Այս տեսակէտը հետզհետէ զարգացաւ Ե դարից Պելագեան վէճերով (տե՛ս ներքևում գլ. ԻԶ) ու օրինակարգուեց Տրիդենտեան ժողովով՝ 1854թ.-ին:

Ուրեմն Կաթոլիկ եկեղեցին նախ ընդունում է, որ հոգին է բարի, իսկ մարմինը՝ չար իր բնութեամբ՝ հակառակ Ս. Գրքի վկայութեան, թէ՝ «ետես Աստուած, զի բարի է» (Ծննդ., Ա 31), և հակառակ Աստծու ամենաբարութեան, որից ոչ մի չար կամ չար արարած չի առաջացել:

Երկրորդ՝ եթէ այդպէս է, նախամարդու հոգու ու մարմնի մէջ կռիւ կար և ուրեմն, ըստ Պելագիոսի[84*], մահն ու ցաւը կային նրանում: Հետևաբար մարդը, կորցնելով այդ գերբնական ձիրքը, վնաս չկրեց, իսկ այս հակառակ է առողջ դատողութեանն անգամ, քանի որ Աստծու դէմ մեղանչելը չի կարող անհետևանք լինել մեղանչող մարդու գոյութեան համար, որի կոչումն Աստծու հաղորդակցութեամբ է պայմանաւորուած:

Երրորդ՝ եթէ մարդիկ մեղանչական ծնուելով, ոչ մի ապականութիւն չունեն, այլ են, ինչպէս դրախտում, այս պարագային ինքնին իմաստազրկում է փրկութեան, Քրիստոսի փրկագործութեան, Ս. Հոգու շնորհաբաշխութեան գաղափարը. միթէ՞ միայն մի անտարբեր «գերբնական շնորհաց ձիրք» տալու համար: Զէ՞ որ լոկ արտաքին իրաւական մեղանչումը պէտք չունի էական ներքին

[1] Գաղ., Զ 7, 8, Յակ., Ա 15, Եզեկ, ԻԲ 31, Ովս., Ժ 12-13:

վերանորոգման, այլ սոսկ մի պատիժ կը վերականգնի արդարութիւնը: Եւ եթէ այդպէս է, ապա կամ այդ ձիրքն է յետոյ թուլացել և մեղանչման պատճառ եղել և կամ նախամարդուն թողել է անօգնական, և այդ էլ ուրեմն՝ Աստծու հրամանով, այնպէս որ մեղանչման պատճառն Աստուած է դառնում: Այսպիսի անտեղի մեկնաբանութեան հետ միասին Կաթոլիկ եկեղեցին խեղաթիւրում է փրկագործութեան վարդապետութիւնը նմանապէս՝ ուսուցանելով, որ իբր թէ մենք կարող ենք լոկ մեր արտաքին գործերով վերստին ձեռք բերել այդ ձիրքը:

Սրան հակառակ Բողոքականները հետամուտ եղան ոչ թէ ճշմարտութեան բացայայտմանը, այլ ընկան հակառակ ծայրայեղութեան մէջ, ասելով, որ նախամարդու արդարութիւնը ոչ թէ ըստ շնորհների էր, այլ բնական էր: Նրա բոլոր ուժերը ներդաշնակ էին ու նրա անկումը կատարեալ ապականութիւն եղաւ ըստ ամենայնի, և փչացան նրա բոլոր ուժերն ու բարի կողմերը: Ուստի նա, իբրև մի անընդունակ արձան, չի կարող բարոյապէս գործել, եթէ մինչև անգամ կամենայ, ու նրա փրկութիւնը լիովին միայն Աստծով է: Նա ստանում է շնորհ միմիայն հաւատքով. բարի գործերը ոչինչ են և Աստծու շնորհքով մարդ ոչ թէ փոխւում է, այլ մնում նոյնը և միայն Աստծու առաջ է արդար ճանաչւում՝ առանց իր բարոյական մասնակցութեան: Սակայն Ս. Գիրքը պարզապէս ասում է, որ մեղանչումից յետոյ եղել են մարդիկ, որոնք արժանացել են Աստծու ձայնին, ուխտի աւետիք ստացել, ինչպէս օրինակ Աբրահամը, Իսահակը, Յակոբը կամ Ենովքը, Մաթուսաղան և ուրիշներ ու ձգտել երանութեան, և ոչ թէ մարդը միանգամից սատանայ է դարձել: Բայց եթէ նախամարդն ամեն առումով կատարեալ է եղել, ինչպէ՞ս մեղանչեց և մինչև անգամ ապականւեց, մի՞թէ Աստուած եղաւ պատճառ, կամ մի՞թէ այդպիսի կատարելութիւն կը լինի, որը վերստին կորչում է: Հարկ չկայ այս ընկալման վրայ երկար խօսելու, որովհետև բողոքականներն իրենք սկսեցին հետզհետէ վերացնել իրենց հայացքները, և միայն Կալւինականները նոյնը պահեցին՝ դաւանելով միայն մարդու նախասահմանուածութեան գաղափարը (տե՛ս ստորև):

Այս հակոտնեայ տեսութիւններն աւելի ևս պարզում են մեր առաջ մարդու նախնական ու մեղանչական վիճակի որպիսութիւնը: Հայաստ. ս. Եկեղեցին, խորշելով այս երկու ծայրայեղութիւններից, բնաւ չի շեղւում Ս. Գրքի վարդապետութիւնից: Քանի որ մարդ Աստծու պատուիրանի ճանապարհով էր

ընթանում, ոչ մի նեղութիւն, վիշտ և ապականութիւն չէր կարող նրան յաղթել, իսկ երբ Աստծու դէմ մեղանչեց, ապստամբեց, նոյն ժամանակ սկսեց և մեղքն իր բողբոջը տալ, մարդն էլ ընկաւ մահւան և ապականութեան լծի տակ և փոխանակ սէր տածելու առ Աստուած՝ երկիւղով բռնեց Նրա նկատմամբ: Մարդն ինքը գնաց դէպի անկում, «ինքնակամութեամբ և բանսարկուի խաբէութեամբ», ուստի և ժառանգեց մահն ու ապականութիւնը: Եւ եթէ համեմատենք նախնական ու մեղանչած Ադամին, կը տեսնենք, որ նա «որքան դիւրաշարժ էր մեղքի նկատմամբ, աւելի դիւրաշարժ էր բարու նկատմամբ, ինչպէս և այժմ ապականութեան մէջ մխրճւած՝ կեանքում վտանգի ենք ենթարկւում այս երկու կողմերի հակառակութեամբ՝ դիւրաշարժ լինելով մեղքի նկատմամբ և դիւրաթեք լինելով դէպ առաքինութիւնը[1]» կամ ըստ ս. Ներսէս Շնորհալու բացատրութեան. «Մեղքի պատճառով մեռանք և մեռելութեամբ կորցրեցինք յաւերժական փառքը».- «Մեր բնութիւնը սկզբից ոսկեղէն էր և առանց ապականութեան և այժմ մեղաւորւեց, մեղքին խառնւեց նաև ապականութեան ժանգը»[2]: «Մեր նախահայր Ադամը քաղցր պտղի հետևանքով կորցրեց աստուածային փառքը, անմահական կեանքը և դրախտի վայելչութիւնը, և դրանց փոխարէն ընդունեց փշաբեր հողը, տրտմական, ախտալից և դաժան կեանքը, և վերջում՝ մահը»[3]: «Որովհետև եթէ պահքի պատուիրանը պահէր՝ անխախտ, անմահ և անմեղ կեանք կը ժառանգէր, նաև երկնքում՝ երկնային բարիք»[4]:

Մեր Ս. Հայրերի այս գեղեցիկ խօսքերից հետևում է, որ մարդու միտքը, կամքն ու խիղճը մոլար ընթացք էին ստացել մեղանչական վիճակում: Միտքը յափշտակւած էր ոչ թէ Աստծով, այլ՝ աշխարհով, կամքն առաւելապէս հակւել էր դէպի չարը, իսկ խիղճը ժանգոտւելով՝ ցոլացնում էր իր մէջ ոչ թէ աստուածայինը, այլ՝ առաւելապէս աշխարհայինը: Դրա հետևանքն էր, որ մարդը մարմնապէս ևս զրկւեց յաւերժական աստուածային փառքի վայելքից և ապականացու կեանքի կերակուր դարձաւ: Դա կորստական վիճակ էր, որի հիմնական հետևանքն էր մահը՝ «մեղաց թոշակը» (Հռ., Զ 23), որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հոգու բաժանւելը

---

[1] Յովհ. Իմաստ., էջ 69-70:
[2] Ընդհան., էջ 321, 412:
[3] Ագ., 406, Եզնիկ, էջ 71-77:
[4] Մանդ., 31:

կենդանութիւն ու երջանկութիւն տուող Աստծուց և անկումը մարմնաւոր ցաւերի ու ապականութեան մէջ (Բ Կոր., ԺԱ 3, Տիմ., Բ 14):

Առաքեալը ներկայացնում է այդ վիճակի հակասականութիւնը նաև հակառակ վերոյիշեալ ծայրայեղութիւնների՝ ասելով. «Որովհետև ոչ թէ ինչ կամենում եմ, որ բարին է, այն եմ կատարում, այլ ինչը չեմ կամենում՝ չարը, այն եմ գործում: Ապա այն, որ չեմ կամենում և կատարում եմ, ոչ թէ ես եմ կատարում, այլ ինձանում բնակող մեղքը»: Եւ այս հակասական վիճակի լուծումը մահն է (Հռ., Է 19): Մարդու մտքերը խաւարել էին ու չէր ճանաչում Աստծուն, ուստի աշխարհին նուիրելով՝ իր ընտանիքով ու որդիներով էր մխիթարւում (Ծննդ., Դ 1, 25). նրա սիրտը թանձրացել էր, չէր զղջում ու սիրով չէր վառւում առ Աստուած, որովհետև նրան չէր ճանաչում, որ սիրէր (Ա Յովհ., Դ 8, 18), այդ պատճառով էլ վախենում էր Նրանից (Ծննդ., Գ 10): Վերջապէս շեղուել էր նաև նրա կամքը առաւել դէպի չարը՝ հակառակ Աստծու, որովհետև Նրան չէր ճանաչում ու չէր սիրում, որ կատարելապէս հակէր դէպի Նրա կամքը[1], ուստի և ոչ թէ իրեն էր դատապարտում, այլ իր արածի համար մեղադրում էր Աստծու ամենաբարի արարչութիւնը (Ծննդ., Գ 12, 14): Հետևաբար նա իր մեղանչման ընթացքի մէջ Աստծուն հակառակ դիրք էր բռնել և դէպի մարմնաւորը, աշխարհայինը հակւել: Այս պատճառով և Աստուած մերժեց նրան իր հաղորդակցութիւնից ու նետեց աշխարհի անողոք ճախարակի պտոյտի մէջ:

[1] «Երբ նախահայրը ստեղծուեց Արարչից, զարդարուած լինելով խօսքով և իմաստութեամբ, իր բնութեան մէջ ունենալով գիտութիւն և բարու նախանձախնդրութիւն և Տիրոջ երկիւղը, որը և կեանքի պատճառ է, և այլ նման բաներ, որոնք դէպ Աստուած առաջնորդող բարի շարժում են, որովհետև ասում է, թէ ամեն ինչ որ Աստծուց է, բարի է, քանզի մարդուն ստեղծեց արդարութեան մէջ և նրան կարգեց կեանքի և մահուան միջասահմանին և իբրև կառավար նրան տուեց անձնիշխանութիւն, որպէսզի գնայ որ կողմ որ ցանկանայ, կամքով բաժնեկից դառնալով կեանքի կամ մահուան: Իսկ երբ համաձայն իր ախորժակի շեղուեց աստուածային պատուիրանապահպանութիւնից՝ զրկուեց փառքից, հոգևորը մարմնաւոր եղաւ, յանցանքի պատճառով պատժի պատուհասը միասնաբար կրեց՝ թափուր լինելով Հոգու իմաստութիւնից, գիտութիւնից, հանճարից, խորհրդից և զօրութիւնից, աստուածապաշտութիւնից, ընկնելով օտարի երկիւղի տակ, արհամարհելով Տիրոջ պատուիրանները՝ զրկուեց [Ս.] Հոգու շնորհներից, լսելով կնոջ խրատը՝ կորցրեց տիրական վեհ իմաստութիւնը՝ ոտքին հնազանդեցնելով գլուխը և իբրև Աստծու պատուիրանից աւելի գեղեցիկ ու քաղցրագոյն մի բան տխմարութեամբ կերաւ մահաբեր պտուղը ու տարագիր եղաւ անմահական վայելքից՝ տգիտութեամբ կորցնելով բոցաճաճանչ լուսափայլ զարդարանքը». Ստեփանոս Սիւնեցի, Թուղթ առ Գերմանոս[85*]:

Այդ անկման մէջ նախամարդը քանի գնում ընկնում էր, որովհետև զօրանում էր նրա մէջ հպարտութիւնն ու մեծամտութիւնը, և նա կարծում էր, թէ ինքը կարող էր աշխարհում ամենայն ինչ գիտենալ և իր բախտը կռել. նա դեռ չգիտէր՝ «Եթէ մէկը կարծում է, թէ բան գիտէ, տակաւին չգիտէ իսկ, թէ ինչպէս պէտք է գիտենալ: Բայց ով սիրում է Աստծուն, նա ճանաչուած է Նրանից» (Ա Կոր., Ը 2): Չգիտէր, որ չսիրելով Աստծուն, կտրւում էր նրա ամենաառատ իմաստութիւնից և մարմնաւոր աշխարհի մի օղակը դառնում: Այդ տգիտութեան հետևանքն էր, որ նախամարդը թաքնւում էր ամենագէտ և ամենատես Աստծուց (Ծննդ., Գ 10):

Եւ նա այս միակողմանի ու շեղուած ընթացքին նուիրելով կարծում էր իր կոչմանը հասած լինել առանց Աստծու պատկերի և առանց հոգու խաղաղութեան, լոկ աշխարհայինով, մարմնաւորով. ահա և մարմնաւորը պէտք է ունենար իր տանջանքն ու սպառումը, և հետևաբար մահը խորտակէր նրա սին յոյսերը: Նա իր երկպառակուած և անկատար հոգու կարողութիւնների ծայրայեղ լարմամբ, չկարողացաւ վերացնել բնական կեանքի այն բոլոր տանջանքներն ու իր մարմնի նուաղումը, որոնք հետևանք էին իր հոգու տկարութիւնների: Վերջապէս նա չպէտք է կարողանար խոյս տալ իր սիրած մարմնի ու մարմնականի լուծումից-մահից: Ուրեմն, թէ՛ մարմինն ու թէ՛ աշխարհը նրան չափազանց սիրելի լինելով հանդերձ, նա չպէտք է կարողանար վայելել, որովհետև իր մեղքով ու հոգու խանգարմամբ նա չար ընթացք էր որդեգրել դէպի աշխարհը, որ խանգարում էր նրա ընթացքի այն կանոնաւորութիւնը, ինչը պէտք է հաստատուն մնար՝ մարդու կոչմանը համերաշխ գործունէութեամբ (Ծննդ., Գ):

Մեղանչական մարդը չէր կարող անմահութիւն վայելել իր միակողմանի և Աստծուն հակառակ կեանքի ու գործունէութեան մէջ: Նախամարդու կեանքի այս ամբողջ ընթացքը ճշմարտապէս ներկայանում է Ս. Յովհան Մանդակունու խօսքերի մէջ, որոնք են. «Աստուած մարդուն արարեց և դրեց դրախտի փափկութեան մէջ՝ բոլոր զգայութիւնները դնելով նրա բնութեան մէջ: Արդ, երբ լսեց նրան, ով խաբեց իրեն, այնժամ վերցրեց բոլոր ախտերը և իսկոյն զրկուեց իր մեծ ու չքնաղ փառքից, որպէսզի մարդ իմանայ, որ կան ախտեր, որ նրան

հեռացնում են Աստծուց, որպէսզի աղաչի բարերար Աստծուն, որ օգնի նրան, և յետոյ կարողանայ իրենից հեռացնել ամեն տեսակ ախտ»[1]:

ԺԵ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՄԵՂՔԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Նախամարդու մեղանչումը, ինչպէս տեսանք, ապականիչ կերպով ներգործեց նրա ամբողջ գոյութեան վրայ թէ՛ հոգեպէս, և թէ՛ մարմնապէս: Նա գոյութեան սկիզբ պէտք է լինէր ամբողջ մարդկութեան, ըստ որում իր մեղքի հետևանքներով ևս աւերիչ սկիզբ եղաւ իր ժառանգների համար: Նրանով բոլոր մարդիկ գոյութիւն ստացան և նրանով նրանք իրենց նախահօր մեղքը ժառանգեցին (Հռ., Ե 12): Ամբողջ մարդկութեան զարգացման ու յարատևութեան ընթացքը խանգարուեց, մարդու կոչման իրագործումը այլակերպուեց և, փոխանակ աստուածային սուրբ սկզբունքի, աշխարհային սկզբունքը տիրապետող եղաւ նրանց վրայ. սատանայի կեանքը եղաւ նրանց շաւիղը:

Բարոյական ու բնական ժառանգականութեան օրէնքն իշխում է մարդկային սերմի մէջ թէ՛ ըստ հոգու, և թէ՛ ըստ մարմնի, ուստի որքան էլ իւրաքանչիւր անհատ Աստծու արարածը լինի, այսուհանդերձ նա իր նախորդի ու նախահօր պատկերն է, իր ցեղական հանգամանքների ծնունդն է, և նրա բնութիւնը ունակ ու բնածին է: Բոլորն էլ ներկայացնում են ադամային տիպարը և մոլար զարգացման ընթացքի մէջ գնալով՝ աւելի ու աւելի են հեռանում Աստծուց, ու նրանց հոգու և մարմնի մէջ երկպառակութիւնը զօրանում է (Հռ., Է, Գաղ., Ե 17): Նախամարդու մեղքը թունաւորեց նրա ժառանգներին ու սոսկ նրանց մարմնականը զօրացրեց: Եւ որովհետև «մարմնից ծնուածը մարմին է» (Յովհ., Գ 6), ուստի և Ադամի մեղանչական մարմինը մեղանչական ծնունդներ տուեց, իր սերնդին թողնելով մեղքի հետևանքը (Ծննդ., Ը 21, Սաղմ., Ծ 7, Եփ., Բ 3, Հռ., Ե 12, 18): Նախամարդը որդիներ էր ունենում «ըստ իր կերպարանքի և ըստ իր

[1] Մանդ., էջ 188:

պատկերի» (Ծննդ., Ե 3): Մարդու բնական ընթացքի մէջ տիրապետում էին աշխարհային ձգտումներն ու ագահութիւնը: Աստծու և նրա արքայութեան նկատմամբ բացակայում էր նուազագոյն իսկ հակում: Նրա հոգևոր կեանքը լեցուած էր միայն աշխարհով, որի տէրն էր կարծում իրեն: Աստծու անունը նա ձգտում էր դուրս մղել իր գիտակցութիւնից և չճանաչել Նրա իշխանութիւնը: Նրա միջից չքացել էր թէ՛ Աստծու անունը և թէ՛ բարու զգացողութիւնը: Այսուհանդերձ նա կատարելապէս չար չէր դարձել, այլ ժառանգել էր նաև նախամարդու երբեմնի երանելի վիճակի և բարու առաւելութեան գիտակցութիւնը, որ առաջացել էր Աստծու դէմ ապստամբելուց: Նա հեծութեամբ նայում էր դէպի ետ, ուզում էր վերադառնալ դէպ իր բնական վիճակը կամ դրախտային կեանքը, սակայն չէր կարողանում, որովհետև գերի էր դարձել աշխարհին, ստրուկ՝ իր մարմնաւոր հակումներին, և իր միակողմանի ընթացքից չէր կարողանում ետ դառնալ: Նրա մէջ աշխարհային սկզբունքի տիրապետութիւնն աւելի զօրեղ էր, քան սուրբ սկզբունքի, աստուածային ճանաչողութեան զգացողութիւնը, և նրա կամեցողութեան զօրութիւնը շղթայուած էր աշխարհի հետ: Այս մի վիճակ էր, որ շատ անգամ մեր մէջ ևս զգում ենք, երբ աշխարհայինը տիրական ներգործութիւն է ունենում մեզ վրայ. «Վարանում եմ և ապուշ կտրած՝ միտքս յամառում է, որովհետև ճանաչում եմ բարին և [սակայն] կատարում չարը, ճանաչում եմ արդարութիւնը և գործում եմ անօրէնութիւն, խօսում եմ արդարութեան, [բայց] մտածում անիրաւութեան մասին»,- ասում է Ս. Յովհան Մանդակունին[1]՝ հետևելով առաքեալին (Հռ., Է 19):

Մարդկանց մէջ զարգանում էին գիտութիւն և արուեստ, երևում էին նշանաւոր հանճարներ, առանձին ձիրքով օժտուած անձինք, սակայն չէին կարողանում բարձրագոյն բարին առաջ բերել և ոչ մի կարողութիւն չունէին դէպի բարձր կատարելատիպը ձգտելու, որովհետև թուլացած ու մխրճուած էին միակողմանի ընթացքի հետևանքով գոյացած ապականուած խաւարում: Բարու զգացումը չունէր համապատասխան կամք, և նրա կամքը հետամուտ էր աշխարհային նպատակների: Նրա բարձրանալու հիմնական պայմանը կամքի ազատութիւնն էր, մինչդեռ նա այժմ գերի էր դարձել արտաքինին՝ աշխարհին ու

[1] Մանդ., էջ 14-16:

իր մարմնին: Նրա ինքնագիտակցութիւնը շփոթել էր և աշխարհի գիտակցութեան հետ միացել ու նրա մէջ սուզուել: Մարդը ձգտում էր քաղաքականութեան, գեղարուեստի և արտաքին իմաստասիրութեան զարգացման, որոնք աշխարհային էին և չէին կարող ուղղակի նպաստել մարդու հոգևոր աճին: Նա մոռացել էր աստուածապաշտութիւնը, Աստծուն չէր որոնում, այլ ամենուրեք իր անձին էր հետամուտ և իր եսն էր պաշտում, ըստ որում զգացականը, մարմնասիրութիւնը և ամբարտաւանութիւնը տիրում էր նրա մէջ. նա իր կեանքի քաղցրութիւնը հեշտասիրութեան մէջ էր գտնում: Եւ այս աւերիչ հոսանքն իշխում էր և մարմնանում թէ՛ ամբողջ մարդկութեան, թէ՛ ամբողջ ազգերի, թէ՛ հասարակութեան, թէ՛ ընտանիքի և թէ՛ մանաւանդ իւրաքանչիւր անհատի մէջ: Մարդու եղծուած բնոյթը, միակողմանի խառնուածքը և անկիրթ բնաւորութիւնը նրան տանում էին զարգացման սխալ ընթացքով, և դրանց մէջ խեղդուում էին նրա մարդկային նկարագիրն ու աստուածատուր ճշմարիտ հակումները: Մարդն իր էութեան և այլակերպութեան հակասական վիճակում էր, որ երկրորդն աւելի զօրաւոր էր, քան առաջինը: Նա աշխարհի որդի էր, և ոչ՝ Աստծու:

Բայց մարդը ստեղծուած էր աշխարհի տէրը լինելու համար, և աշխարհը ստեղծուած էր մարդու համար, հետևաբար մարդու անկումով փոխուեց նաև աշխարհի վիճակը: Աշխարհը կեղծ ինքնուրոյնութիւն էր ստացել մարդու նկատմամբ, որի առաջ նա երևութապէս աւելի մեծ արժէք էր դարձել: Աշխարհի կեանքի ու զարգացման ընթացքը նենգափոխուել էր, այնպէս որ մարդը յայտնուել էր աշխարհի իշխանութեան տակ: Աշխարհի արարուած լինելու գաղափարը ժխտուած էր. հեթանոս աշխարհն Աստծուն իբրև Աստուած չէր ճանաչում (Գործք., ԺԴ 14-16): Նա միայն աշխարհն էր ճանաչում և այն բացարձակեցնելով՝ միակը համարում: Նա իր կրօնական առասպելների մէջ իրապէս ներկայացնում է աշխարհի պատկերը: Աշխարհը նրա համար դառնում է տիրապետող. նրա մէջ զարգանում է ամեն ինչ առանց Աստծուն ստորադրելու: Աշխարհի զօրութիւնները աստուածային չէին ճանաչում, և համաստուածութիւնը (պանթէիզմը) տիրում էր մարդկանց մտքի և հոգու վրայ: Այսպիսով մարդու և աշխարհի յարաբերութիւնը մոլորուած էր ու կեղծուած:

Ըստ այսմ, թէ՛ մարդը անարդար վերաբերմունք ունէր աշխարհի նկատմամբ, և թէ՛ աշխարհը՝ մարդու: Անարդար էր այս վերաբերմունքը, որովհետև անարդարութիւն է այն ամենը, ինչի գոյութիւնը և ընթացքը չի համապատասխանում աստուածադիր օրէնքին և իրաւունքին: Աշխարհի և մարդու գոյութեան օրէնքն ու իրաւունքը այստեղ յեղաշրջուել էր և չէր համապատասխանում ո՛չ մարդու կոչմանը և ո՛չ Աստծու նպատակին: Աշխարհում մարդկային բոլոր նպատակները դուրս էին Աստծու հաղորդակցութիւնից. մարդը, ազգերը և ամբողջ մարդկութիւնը իր բովանդակ քաղաքակրթութեամբ և առաջադիմութեամբ, գիտութեամբ և արուեստով եսապաշտական էին: Մարդը շեղուել էր Աստծու արքայութիւնից: Աշխարհում այնուհետև տիրում էր թշնամութիւն. թշնամութիւն հոգու և մարմնի մէջ, տարբեր ձգտումների և հակումների մէջ, տարբեր ազգերի այլամերժ ոգու հակառակութեան մէջ: Մարդկային կեանքում նպատակները բացարձակ դրութիւն էին ստանում, և իւրաքանչիւր ազգ ձգտում էր այլոց ոչնչացնելով՝ հասնել իր ուզածին: Ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը հիմնուում էին աշխարհասիրութեան ու փառասիրութեան վրայ, որի աստառը եսապաշտութիւնն էր: Եսապաշտութեամբ էին նիւրուում նաև քաղաքակրթութեանը, գիտութեանը և արուեստին. մարդասիրութիւնը, բարձրը, վեհը, ազնիւն ու բարին գոյութիւն չունէր նրանց մէջ: Իրաւունքի գաղափարը փոխուել էր ուժի գաղափարի և ենթարկուել նրան: Ուստի և Աւետարանում «այս աշխարհը», «այս ժամանակը» տարբեր իմաստ ունի իսկական աշխարհի և իսկական ժամանակի հանդէպ, որովհետև իսկական աշխարհն իր իսկական ժամանակում պէտք է ունենայ աստուածադիր ճշմարիտ կեանք և ճշմարիտ զարգացում, մինչդեռ այս աշխարհում ա՛յլ ժամանակ էր՝ շեղուած կեանք ու զարգացում: Կռիւ, երկպառակութիւն, աննպատակ կամ կեղծ նպատակի ձգտումներ, աշխատանք ու տանջանք, իրաւունքի խախտում և այլն, իրար հետ սերտ կապակցուում էին ու շղթայուում այս աշխարհում: Չկար խաղաղութիւն, ուստի և միութիւնն ու կեանքի գործունէութիւնը խանգարուած էին, աւերուում էին ու չէին առաջադիմում ըստ օրինի: Այդպիսի խառնակութիւնն ու շփոթութիւնը չէր կարող նպատակ ու կանոնաւորութիւն ունենալ, որովհետև ճշմարիտ սկիզբ չէր ճանաչում և Աստծու արքայութիւնը նրա նպատակը չէր: Մարդկանց աչքին ամեն ինչ նոյնական էր և ինքնստինքեան կարծում էին, թէ մի

տեսակ ծիրի մէջ են անվերջ պտտւում: Մեռնելը նրանց համար նոյնն էր, թէ կրկին ծնւելը, ծնւելը՝ կրկին մեռնելու համար էր միայն. այլևս ոչ մի նպատակ չէր ճանաչւում. ամենայն ինչ ունայն էր համարւում (տե՛ս Բանք ժողովողին) և ոչինչ նոր (հմմտ. նաև Բ Պետր., Գ 3-4): Մարդը չգիտէր ու չէր հասկանում ո՛չ իր ծագումը, ո՛չ ծագման պատճառը, ո՛չ կենդանութիւնը, ո՛չ մահը, ո՛չ կոչումը, ո՛չ կեանքի որպիսութիւնն ու էութիւնը, և ո՛չ էլ ամենայնի նպատակը: Նա իր գլուխը կորցրել էր, արածը չէր հասկանում, անելիքը չգիտէր և ոչ մի բան գոհութիւն չէր պատճառում: Հեթանոսական յուսահատութիւնը նրան շպրտում էր աշխարհի անողոք հոսանքի պտոյտների մէջ՝ անվերջ պտտելու և յոգնելու համար: Ըստ որում անկեալ վիճակից ելնելով՝ դարձող և Աստծու անունը կանչողներ էլ էին լինում (Ենովս, Ենովք նահապետները), հետևաբար նրանց մէջ մեռած չէր աստուածգիտութեան կայծը, սակայն մարմնական ընթացքով խեղդում էին այդ և կորստեան մատնւում աշխարհային հաճոյքների և մարմնասիրութեան խաւարի մէջ: Իշխանութիւն ունէին աշխարհի վրայ, բայց ոչ կատարեալ, և կարծում էին, թէ կը կարենային առանց Աստծու իշխել, և ստրուկ էին դառնում[1]:

[1] «Վարդապետներն ասում են, թէ Աստուած պատւեց մարդուն և նրան պարգևեց երեք կարգ, այսինքն՝ անձնաւորական, բնութենական և պատւիրանական: Կարգն անձնաւորական է, որովհետև հոգին տէր է, իսկ մարմինը ծառայ, որին պարտ է հնազանդութեան մէջ լինել: Կարգը բնութենական է, որովհետև ցանկութիւնը գտնւում է ցասմնականի ներքոյ, իսկ ցասումն էլ մասն է խօսքի, որովհետև խօսքը միշտ իշխան է, և ցանկութիւնը միշտ իշխանութեան տակ է, այսինքն ցանկութեան իշխանն է և իշխւում է խօսքի կողմից: Եւ պատւիրանական կարգն այն է, որ մարդը հնազանդւի Աստծու օրէնքին: Եւ այս երեք բարեկարգութիւններն ունէր մարդը՝ նախքան դրախտում յանցանք գործելը: Իսկ երբ անձնիշխան կամքով այս երեք կարգերը փոխեց՝ մարմինը տէր եղաւ հոգուն, և բանականը հնազանդւեց ցասմնականին և ցանկութեանը, և ինքը թողեց Աստծու պատւիրանը: Այնժամ, յիրաւի ամեն տեսակ տարրերը անկարգութեան փոխւեցին, և գազաններն ու անասուններն անհնազանդ եղան մարդուն և նրան՝ թշնամի». Ս. Գր. Տաթևացի:
«Եւ ինչպէս զգալի կենդանիներս, եթէ չճաշակեն օդի տուրևառը՝ կը մեռնեն, այնպէս էլ իմանալի, հոգևոր էակները, եթէ մէկ ժամ իսկ չընդունեն Աստծու շնորհներից, կը մեռնեն» ([Խոսրով Անձ.] Մեկն. Ժամ., էջ 324):

ԺԶ

ԱՍՏԾՈՒ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ ՇԵՂԻԱԾ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Աստծու արդարութիւնը և աստուածադիր օրինաց անվրէպ սկզբունքն անշուշտ պէտք է անթեղւած մնար նախամարդու մեղանչական բնութեան ընդերքում: Աստծու օրինական և արդար պատիժը հետևանք էր նախամարդու սխալ ընթացքի: Միւս կողմից այդտեղ փայլում է Աստծու նախախնամութիւնը, որը տալիս էր ինքն իր խրատական պատիժն ու աւետիքը: Աստծու այդ պատիժը (թէ՛ որդեծնութեան նեղութիւնը, թէ՛ քրտինքով հաց գտնելը, թէ՛ դրախտից արտաքսւելը և թէ՛ մահը), ինչպէս առհասարակ Աստծու ամեն մի պատիժը, դաստիարակութեան համար է: «Մեր մեղքերը «սովորեցնում» են Աստծուն, և նա մեզ խրատում է պատժով»[1]: Մարդը պէտք է նեղութիւնների մէջ հեծէր, որ զգար իր մեղքի ծանրութիւնը և դիմէր Աստծուն իր ազատ կամքով, որով մեղանչել, ապստամբել էր Աստծու դէմ:

Ադամային մեղքի հետևանքն ամբողջ մարդկութեան մեղսական վիճակն էր, և այդ մեղքը մարդկութեան իւրաքանչիւր անդամի բնածին յանցանքն է համարւում, որովհետև մարդիկ իրենց կամքով համերաշխ են նախահօր հետ (Հռ., Ե 12): Մարդու կամքն այլևս չէր կատարում աստուածային սուրբ օրէնքի պահանջները. նրա կամքը մեղանչական էր, Աստծուն չէր պաշտում, այլ Նրա արարածին (Հռ., Ա 20), ուստի և հեթանոսները կոչւում են «որդիք բարկութեան», «որդիք ապստամբութեան» (Եփես., Բ 2-3): **Մարդիկ չէին ծառայում իրենց կոչմանը, չէին ձգտում լինել այն, ինչ պէտք է լինէին, այլ դառնում էին այն, ինչ կարելի էր լինել կամ կարողանում էին լինել:** Մի խօսքով «որովհետև բոլորն էլ մեղք գործեցին և զրկւեցին Աստծու փառքից» (Հռ., Գ 23):

Բայց մարդն ինքն իր մէջ չի ծնել մեղքի գաղափարը, ինչպէս սատանան (Յովհ., Ը 44), այլ դրսից է գայթակղութիւն ստացել ու հրապուրւել: Նա ոչ թէ ինքն էր մեղք ու մեղքի աղբիւր դարձել, ինչպէս սատանան, այլ դրսից էր մեղքի

[1] Յաճախ., Բ 273, Եղիշէ, էջ 319:

հրապոյրը նրա մէջ մտել, և ինքն իր ազատութեամբ կամ ինքնիշխանութեամբ միայն չէր ընդդիմակայելու: Մարդու մէջ դեռևս կար մի բան, որ հակառակում կամ հակաճառում էր մեղանչականութեանը, ինչպէս Պօղոս առաքեալն է ասում. «Քանի որ չեմ իմանում ինչ որ գործում եմ, ոչ թէ այն եմ անում, ինչ ուզում եմ, այլ գործում եմ այն, ինչ ատում եմ: Ապա եթէ անում եմ այն, ինչ չեմ կամենում, դրանով իսկ վկայում եմ, թէ օրէնքը բարի է... Հաճելի է ինձ Աստծու օրէնքը՝ ներքին մարդու տեսակէտից, բայց իմ մարմնի անդամների մէջ տեսնում եմ այլ օրէնք, որ պայքարում է իմ մտքի օրէնքին հակառակ և ինձ գերի է դարձրել մեղքի օրէնքին, որ չկայ իմ մարմնի անդամներում» (Հռ., Ե 12, Է 7-15, 16-23, Ա Կոր., Բ 14, հմմտ. Ծննդ., Գ 7-23): Ուրեմն մարդու ներքին ձայնը հակառակ է մեղքին և շարունակ յանդիմանում է մարդու չար գործերը, ըստ որում «նրանք ցոյց են տալիս, թէ Աստծու օրէնքի պահանջները գրած են իրենց սրտերում՝ իրենց խղճի վկայութեամբ և իրենց խորհուրդների մէջ մէկ մէկու մեղադրելով կամ արդարացնելով» (Հռ., Բ 15): Այսպիսով մարդու մէջ կենտրոնացած էր մէկ ձգտում առ Աստուած և գիտէր իր մեղքի ծանր հետևանքները: Նրա մէջ դեռևս հաստատ էր աստուածային պատկեր լինելու գիտակցութիւնն ու համոզմունքը[86*], միայն թէ մեղքի ու նրա հետևանքների տակ թուլացած և ընկճած էր (Ծննդ., Զ 38, Ը 21, Թ, Ե Յակ., Գ 9): «Սա յօժար կամքով գլորուելով ապականուեց և անձամբ չէր կարողանում ոտքի կանգնել»[1]:

Այս ամենն աստուածային խրատական պատժի հետևանքներ էին, և այս ամենի պատճառով մարդիկ ոչ միայն պատժի էին արժանի, այլև Աստծու ողորմածութեան առարկայ էին: Այդպէս և Քրիստոս Երուսաղէմի վրայ Աստծու դատաստանի մասին յայտնելով՝ ցաւում է նրա վրայ (Ղուկ., ԺԹ 41) ու լաց լինում: Մարդը թէև մեղանչել էր, սակայն իր բնոյթով չէր ծնել մեղքը, թէև մեղքը ճաշակել էր, սակայն մեղքի սոսկական աղբիւր չէր դարձել, թէև ընկել, սակայն գիտէր իր անկման թշուառութիւնը, թէև իր յանցանքն էր այդ մեղքը, սակայն նաև իր ժառանգական վիճակն էր. նա ուզում էր հասնել վերստին երանութեան: Նա սատանայի պէս վերջնական կորստի չէր կարող մատնուել. նա խղճալի էր (Հռ., Է 24): Նա խղճալի չէր լինի, եթէ ոչ մի կերպ չկամենար Աստծու օգնութիւնը, ոչ մի

[1] Ս. Հայրերի խօսքը. տե՛ս Եղիշէ. էջ 25, հմմտ. Մատթ., ԺԵ 19, Յովհ., Գ 6, Ա Յովհ., Ա 8, Եղիշէ էջ 325-326:

կերպ չկամենար Աստծու փրկութիւնը, այլ գահավիժէր մեղքի խորխորատը և մերժէր Աստծու շնորհները, ինչպէս երբեմն անում են զանազան անհատներ: Այդպիսիք միմիայն աստուածային դատաստանի և միմիայն պատժի են արժանի և ոչ արգահատութեան: Մարդկութեան ընդհանուր վիճակը խղճալի էր, և Աստուած ողորմեց:

Բայց Աստուած ողորմելով խղճալի մարդկութեանը, ոչ թէ միանգամից նրան տուեց իր տնօրինած փրկութիւնը, այլ նախ մշակեց մարդկանց ընդունակութիւնն ու նախապատրաստեց Աստծու այդ մեծահրաշ շնորհների ընդունելութեան համար: Մարդիկ պէտք է ճշմարիտ ճանաչողութիւն ունենային թէ՛ մեղքի, թէ՛ իրենց վիճակի, և թէ՛ դրանց հետ կապած բոլոր հանգամանքների մասին, որ սրտանց ու կամաւորապէս խոնարհուէին աստուածային այդ մեծ ողորմութեան առաջ և նուիրուէին նրա միակ օգնութեանը: Մարդկութիւնը մեղքի ծանրութեան ու տանջանքի տակ հեծելով՝ պէտք է մեղքից զզուէր և սիրով հակուէր դէպի Աստծու սէրն ու ողորմութիւնը: Նրան նախապատրաստողը պէտք է լինէր ոչ թէ նեղութիւնն ու տխրութիւնը՝ ըստ աշխարհի, որ տանելու էր դէպի մահ, այլ «ըստ Աստծու», որ տանում է դէպի կեանք (Բ Կոր., Է 10):

Այս նշանաւոր նախապատրաստութեան սկզբունքները հետևեալներն են.

Նախ և առաջ մեղանչած և աշխարհին ենթարկուած մարդը պէտք է գիտենար Աստծու տնօրինութիւնը, որ Քրիստոս գալով փրկելու էր մեղքի հետևանքների մէջ հեծող մարդկութիւնը: Այդ մի հաստատ յոյս էր, որ մարդու առաջ մի առատ լոյս էր բաց անում, որպէսզի աշխարհի անողոք հանգամանքների մէջ բոլորովին չընկճուէր, անմխիթար տառապէր և դէպի Աստուած ձայն հանէր: Նրա մէջ պէտք է միշտ հնչէր Աստծու մեծ ողորմութեան յոյսը, չլռէր խղճի ձայնը և չկորցնէր իր գոյութեան գաղափարն ու կոչմանը հետամուտ լինելը: Նա ինչ էլ որ փորձէր աշխարհի մէջ իր երջանկութեանը հասնելու համար, ինչ միջոցների ու նորահնար բաների դիմէր, պէտք է ի վերջոյ ոչ թէ յուսախաբուէր, այլ պէտք է հեռաւոր ապագայում մի աստուածային անզեղջ յոյսի տեղ ունենար: Եւ երբ իր սեփական, աշխարհային բոլոր միջոցների ու հնարների ունայնութիւնը տեսնէր, ոչ թէ յուսահատուէր և անսփոփ մորմոքուէր, այլ նոր յոյսի լոյսով նորից դէպի առաջ ընթանար: Ահա այս պատճառով Աստուած նոյնիսկ նախամարդուն աւետեց պատժելուց անմիջապէս յետոյ, որ կնոջ զաւակը

կը ջախջախի խաբող ու հրապուրող օձի գլուխը՝ վերջնականապէս ընկճելով հակառակ իշխանութիւնը (Ծննդ., Գ 15, տե՛ս նաև բնագիրը)[87*]: Աստուածային այս մեծ աւետիքի անհրաժեշտութիւնը յայտնում է և Պօղոս առաքեալը շատ դիպուկ կերպով (Հռ., Ժ 13-17). «Որովհետև ամենայն ոք, որ Տիրոջ անունը կանչի, կը փրկուի: Իսկ ինչպէ՞ս կանչեն նրան, ում չհաւատացին, կամ ինչպէ՞ս հաւատան, ում մասին չլսեցին, կամ ինչպէ՞ս լսեն առանց մէկի քարոզելուն, կամ ինչպէ՞ս քարոզեն, եթէ չառաքուեցին»:

Երկրորդ՝ մեղքի մէջ թաւալուած մարդը պէտք է իր պարտքի, իր յանցանքի, իր մեղքի ճանաչողութիւնն ունենար. նա պէտք է լիովին ըմբռնէր մեղքի էութիւնը և հասկանար նրա վատութիւնն ու կործանարար հանգամանքները: Իսկ այդ չէր կարող լինել, եթէ մարդը օրէնքի ճանաչողութիւն չունենար, որովհետև որտեղ օրէնք չկայ, այնտեղ էլ մեղք չկայ, որտեղ օրէնքի զգացողութիւն չկայ, այնտեղ էլ չի լինի մեղքի զգացողութիւն (Հռ., Գ 20, Է 7): Մարդը ոչ թէ մի պատուիրան ու մի պատուիրազանցութիւն պէտք է համեմատէր, որ օրէնքը և մեղքը հասկանար, այլ պէտք է իւրացնէր օրէնքի ոգին, օրէնքի գաղափարը և իմանար, որ ընդհանրապէս օրէնքն ու մարդու կոչումը անբաժան են իրարից: Այդ պատճառով երկար ժամանակ մարդկութեան մէջ օրէնքը հաստատուեց ամենածանր խստութեամբ և այդ հաստատումը եղաւ կա՛մ յատկապէս, ինչպէս հրեաների մէջ, և կա՛մ ընդհանրապէս, ինչպէս հեթանոս աշխարհում: Սակայն օրէնքի ճանաչողութիւնը ևս չի կարող կենդանի հաստատութիւն ստանալ, եթէ մարդկութեան մէջ և նրա աչքի առաջ չմարմնանար օրէնքը, արդարութիւնը և անմեղութիւնը, ու մի կենդանի օրինակ չդառնար: **Այդ պատճառով մեղքի գիտակցութիւնը, մեղքի լիակատար ճանաչողութիւնը այն ժամանակ եղաւ, երբ երևաց Քրիստոս, որ օրէնքի լրումն ու կատարումն է և արդարութեան ու սրբութեան մարմնացումը:** Նրա շնորհների ու ճշմարտութեան լոյսը, լուսաւորելով մարդու սիրտը, միշտ վանում էր աշխարհի իշխանութեան խաւարը և մեղքի գաղտնի խայթոցը: Այդ երկրորդ նախամարդու (Ադամի) մէջ երևաց մարդկային անմեղութեան կենդանի ու ճշմարիտ օրինակը և ճշմարտութեան իրականացումը. տեսնողն ու հաւատացողն էլ նկատեց, որ մեղքը ճշմարիտ կեանքի խանգարիչն է, ու դարձաւ դէպի Աստուած: Հրեաները օրէնքով ճանաչեցին մեղքի ծանրութիւնը, և Քրիստոսով թէ՛ կատարեալ գիտակցութիւն ստացան, և թէ՛ իմացան, որ զուրկ

են արդարութիւնից: Հեթանոսները ևս ներքին ձայնի օրէնսդրութեամբ կրթուելով՝ պէտք է հասնէին մի ժամանակի, երբ Քրիստոսով պիտի տեսնէին, թէ մեղքը տգիտութիւն է, խաւար է և հին յանցանք: Հեթանոս աշխարհում տիրող պատիժների անասելի ծանրութիւնը և խստութիւնը պարզապէս ցոյց է տալիս, որ մեղքը, յանցանքը գրեթէ աներեւելի մի երևոյթ է համարուում, և մարդը միմիայն մահով կարող է իր մեղքը քաւել:

Երրորդ՝ ճանաչելով իր յանցանքն ու մեղքը և գիտակցելով իր աշխարհային մեղանչականութիւնը՝ մարդը պէտք է միևնոյն ժամանակ հասկանար Աստծու արդարութիւնը, որ Աստուած ամեն մի մարդու և ամեն մի յանցանքի արդար հատուցումն է տալիս այս աշխարհում՝ ի զգուշութիւն և ի խրատ: Հանդիպելով տանջանքի և անյաջողութիւնների, նոյնպէս և իր կոչմանը հակառակ իրավիճակների, մարդ պէտք է նկատէր այդ ամենի մէջ աստուածային արդարութեան յայտնութիւնը (Հռ., Ա 18) և զգուշանար մեղքից: Նա պէտք է այդ նեղութիւնները ոչ թէ մի բնական անհրաժեշտութիւն համարէր՝ տգիտութեամբ ու կուրութեամբ, այլ պէտք է բորբոք խղճմտանքով զգացողութիւն ունենար՝ հասու լինել դրանց բարոյական նշանակութեանը, **քանի որ աշխարհում ամեն ինչ Աստծու ճշմարտութեան և արդարութեան յայտնութիւնն է, որ տանում է դէպի Նրա արքայութեան իրականացումը:** Նա պէտք է լաւ ըմբռնէր, թէ իրական աշխարհի և իր մարդկային ճշմարիտ առաջադիմական ձգտումների ու կատարելատիպի մէջ եղած հակասութիւնները առաջանում են իր իսկ մեղանչումից: Այս զգացողութիւնը ընդհանրացաւ մարդկութեան մէջ, սակայն պարզ ճանաչողութեան չհասաւ: Հեթանոսներն ամեն մի դժբախտութիւն չաստուածների պատիժ էին համարում, հրեաները՝ օրինազանցութեան հետևանք, մինչդեռ արդարութեան և մեղքի գաղափարը մտաւոր պարզ տեսութիւն չդարձաւ: Մարդկային մեղանչականութեան գաղափարը իրենց մէջ արիւն ու մարմին չդարձաւ: Միմիայն քրիստոնէութեան մէջ պարզուեց այդ սկզբունքը, որ նեղութիւնները մարդկութեան վրայ գալով, աւելի ծանրապէս կարող են իջնել այս ու այն ժողովրդի և այս ու այն անհատի վրայ ևս (Ղուկ., ԺԳ 2-5): Մարդիկ պէտք է գիտենային, որ Աստուած այդպիսի պատիժներով ոչ միայն հատուցում է մարդկանց գործերը, այլև ի վերջոյ խրատում է նրանց փորձութեան բովի մէջ, կրթում է հայրական սիրով, բուժում է և Իր անսահման բարերարութեամբ տանում

է դէպի ճշմարիտ նպատակը: «Որովհետև Տէրը ում սիրում՝ խրատում է, տանջում է բոլոր այն որդիներին, ում ընդունում է» (Եբր., ԺԲ 5-12, Յայտ., Գ 10): Այդ ամենով Աստուած յայտնում է Իր փրկարար գործերը և աստուածային իսկական փրկութիւնը, որպէսզի իւրաքանչիւր ոք փորձութեան մէջ իսկ աչք դարձնի դէպի Աստուած (Յովհ., Թ 3): Նայելով, թէ մենք ինչպիսի բարոյական վիճակում ենք գտնուում, ըստ այնմ աստուածային պատիժները ծառայում են կա՛մ ի զգուշացումն և ի խրատ յանցանաց և կա՛մ ի յայտնութիւն աստուածային ճշմարիտ գործերի և ի զօրացումն հաւատքի: Եւ մեր խիղճը իսկոյն այդպիսի հանգամանքներում վկայում է մեզ, թէ դրանցից ո՞րն է մեզ համար նշանակուած: Յաճախ միևնոյն պատիժը, սպառնալիքն ու աւետիքը ծառայում է մէկին իբրև պատիժ, միւսին՝ իբրև խրատ, երրորդին իբրև զգուշացում, չորրորդին իբրև հաւատքի զօրացում և ամբողջ ժողովրդին՝ իբրև մի մեծ բարերարութիւն առաջադիմութեան համար: Իսկ երբ մարդ մեղքի ծառայ է դառնում (Յովհ., Ը 34) և չի ուզում ելնել անկեանք վիճակից դէպի հաւատքի լոյսը, Աստուած նրան թանձրացնում է և կուրացնում՝ ոչինչ չլսելու, չտեսնելու և չհասկանալու համար, որպէսզի իր մեղքի ճանաչողութեան մէջ սուզի և ապա դառնայ: Ուրեմն **Աստծու պատիժը շատ անգամ ծառայում է մեղքի գիտակցութեան համար միայն, որ ամեն մի անհատի, ազգի և ամբողջ մարդկութեան առաջադիմութեան հիմնաքարն է:**

Չորրորդ՝ աշխարհում ապրելու հանգամանքները ճանաչելով՝ մարդ պէտք է չմոռանայ, որ մի օր էլ աշխարհից բաժանուելու է և պէտք է հասկանայ այդ բաժանման որպիսութիւնը: Այդ բաժանումը կենսաբանական մահն է, որ մեղքի հետևանքն է ու պատիժը կամ մեղքի հատուցումը (Հռ., Ե 12, Զ 23, Յակ., Ա 15): Բայց հոգևոր մահ է, երբ մեղաւորը մարմնապէս ապրում է Աստծուց հոգով բաժանուած, մահ է, երբ մարդ հոգեպէս ինքն իր մէջ երկպառակուած է և խռովուած, մահ է հիւանդութիւնն ու մարմնի ակնյայտնի քայքայումը և վերջապէս մահ է վերջնականապէս հոգու և մարմնի բաժանումը, որով մարդ դադարում է այս աշխարհում գոյութիւն ունենալուց: Եւ այդ մահը համարւում է մարդու առաջ այն «յետին թշնամին» (Ա Կոր., ԺԵ 26), որից ամենասոսկալի սարսափ է զգում մարդը: **Որքան էլ մահը մարդու աչքում բնական իրողութիւն է նկատուում, այդուհանդերձ ոչ մի կերպ հնար չկայ համոզելու, որ մահը բնական օրէնք է: Որքան էլ մահը բնական է բնութեան մէջ, մենք չենք կարողանում ընդունել, թէ**

մարդկային անձնաւորութեան համար ևս բնական է: Մեզ միշտ տանջում է մի հարց, թէ ինչու՞ է ծննդեան ժամանակ հոգին միանում մեր մարմնի հետ, երբ պէտք է բաժանուի, և ինչու՞ է բաժանւում, երբ վերստին մեռելների յարութեան ժամանակ պէտք է միանայ: **Մեր մեղանչական մարմինն առաւ Քրիստոս ու մեռաւ, որպէսզի ըստ ամենայնի մեզ պէս լինի, և համաձայն ցորենի օրինակի, մահուամբ արդիւնք տայ** (Յովհ., ԺԲ 24, Հռ., Ը 3): Հետևաբար Քրիստոսի մահն ուրիշ նպատակ ունի և չի հաստատում մեր մահուան անհրաժեշտութիւնը: Մեր մահը միայն մեր մեղքի հետևանքն է, և եթէ նախամարդը մեղանչած չլինէր, մարդիկ մեզ պէս ցաւագար վախճան չէին ունենայ, ապականացու մահով չէին մեռնի, սոսկումով ու սարսափով չէին վախճանի և երկրաւոր կեանքից փոխուելն այսքան դառը չէր լինի, ինչպէս տեսնում ենք և աստուածահաճ Ենովքի փոխումից (Ծնն., Ե 24, Եբր., ԺԱ 5):

Մարդու մեղանչումով փոխուեց մահուան կնճիռը և իբրև դառնութիւն ծանրացաւ մեզ վրայ, դառնացաւ և զարհուրելի դարձաւ, ըստ որում և «մահուան խայթոցը մեղքն է» (Ա Կոր., ԺԵ 56): Ու թէև հեթանոսները աշխատեցին մահուան սարսափը վերացնել ու նրա ճիրանները քնքուշ փայփայանք դարձնել, թէև անհաւատներն էլ աշխատում են մահը մի բնական օրէնքի հետևանք համարել ու նրա զարհուրանքն ու դառնութիւնը քաղցրացնել, այսուհանդերձ քրիստոնէութիւնը բաց է անում մահուան իսկական նշանակութիւնն ու պատճառը մեր առաջ: **Քրիստոնէութեան լոյսի մէջ մահը զարհուրելի է այն մարդու համար, որի մէջ մեղքն անբաժանելի թոյն է դարձել, մինչդեռ ճշմարիտ հաւատացեալի համար այն մարմնաւոր կեանքի խաղաղ աւարտն է:**

Վերջապէս հինգերորդ՝ մարդն ինքն իր վրայ նայելուց ու իր մեղանչական վիճակը ճանաչելուց յետոյ, պէտք է նայի և իր վրայ տիրող աշխարհին ու նրա վիճակը ևս ճանաչի: Նա պէտք է իմանայ, որ նրա մեղքով աշխարհի մէջ ևս սողոսկել են հակառակութիւններ, և չարը ներս է սպրդել նրա ընթացքի մէջ: Մենք նկատում ենք, որ բնութեան երևոյթների ու նրա վերջնական նպատակի մէջ մասնաւոր հակասութիւններ են պատահում. նրա ուժերը ոչ թէ կանոնաւորապէս զարգանում են, այլ յաճախ խանգարւում են և ետ մղւում: Հարկաւ տարբեր կարգի վայրիվերումներն ու աններդաշնակութիւնները՝ բնական աղէտներ, մահտարաժամեր և այլն, անհրաժեշտ չեն: Դրանք կարող են և չլինել, թէև

բնագիտական տեսակէտից բացատրում են, որովհետև դրանք յաճախ աւերում, տակն ու վրայ են անում մարդու այդ գեղեցիկ գործերը, որոնք ըստ աստուածային օրինաց աշխարհի շինութեանն են ծառայում: Ինչպիսի բացատրութիւնն էլ գտնենք դրանց հակասութիւնը լուծելու համար, այնուհանդերձ կը գանք միևնոյն մտքին, որ այդպիսի աւերածութիւններն աշխարհի ճշմարիտ ընթացքին խորթ են: Այս է պատճառը, որ ապականութեան ենթարկուած ադամորդին բարոյապէս հակուած է դէպի փրկութիւն (Հռ., Ը 19-22): Այս առաւել ևս ակներև է դառնում, երբ յիշում ենք, որ մարդու մեղանչումով մեր յարաբերութիւնն աշխարհի հետ փոխուած է. նա տիրում է մեղանչող մարդուն, և Աստծու փառքի ու կամքի ճշմարիտ յայտնութիւնը չի լինում նրա հոգու մէջ: Ուստի և չփրկուած մարդուն վիճակակից է և աշխարհը, որ իբրև մի ամբողջութիւն չի ծառայում իր նպատակին, այլ պառակտուած է տիեզերական բնականոն ընթացքից: **Մարդկութեան երկպառակութիւնը աջակից է աշխարհի պառակտմանը, որովհետև բարոյական ուղիղ ընթացքը պայմանաւորուած է մարդկութեան և աշխարհի ճշմարիտ յարաբերութեան վերականգնումով միայն, որ Քրիստոսի փրկութեամբ է լինում:** Այս բացատրում է գեղեցկապէս Ս. Գրիգոր Լուսաւորիչը ասելով. «Քանի դեռ մարդը հնազանդ էր Աստծու օրէնքին, թունաւոր գազաններն էլ հնազանդ էին մարդուն՝ իբրև տիրոջ և թագաւորի... Բայց երբ նրանք ապստամբեցին Աստծու պատուիրաններից, բոլոր շնչաւոր և անշունչ արարածները հակառակեցին, հողն էլ իր տունկերով և բոյսերով շրջեց դէպի ապականութիւն»[1]: Մարդ պէտք է այսպիսի հայեացք ունենայ աշխարհի ընթացքի վրայ: «Երբ մի անգամ պատուիրազանց գտնուեցին, ընկան իշխանութիւնից, որ սկզբից ունէին, իսկ անկումից յետոյ լոկ նրանց պէտքերի համար որոշ բաների վրայ իշխանութիւն տրուեց, որոշ բաների վրայ՝ ոչ, որպէսզի յետոյ գոնէ յետին բաների վրայ իշխելով՝ իմանանք (մեզ տրուած) շնորհը և չիշխելով՝ Ամենատիրոջ տէրութիւնը ճանաչենք», ասում է Ս. Ներսէս Մեծը[2]:

Ահա սրանք են այն սկզբունքները, որոնց վրայ հաստատուած է Աստծու տնօրինութեան ընդհանուր ուղղութիւնը՝ շեղուած մարդկութեան մէջ, որով նախախնամող կամքը տանում է իր արարածներին դէպի Իր արքայութեան

[1] Յաճախ., Դ 180, 185:
[2] Բուզանդ. 70:

իրականացումը Փրկչի միջոցով: «Ո՞վ մեր բնութեամբ կենաց մահու պատերազմ մղեց մահուան դէմ և կամեցաւ վերացնել մահուան իշխանութիւնը, և երկիրն ու տարերքը նորոգելով [հասցրեց] առաջին հրաշափառութեանը[1]»:

ԺԷ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ, ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԼՐՈՒՄԸ

Աստծու տնօրինութեան ընդհանուր ուղղութիւնից և դրա սկզբունքներից տեսանք, որ մարդը, տառապելով, պէտք է նախապատրաստուէր փրկութեան, ազատապէս կամենար և գիտակցութեամբ ընդունէր: Այդ նախապատրաստութիւնը պէտք է լինէր, որպէսզի մեղքը տարածուէր, մեղքի ամբողջ քաղցրութիւնը փորձուէր և մարդն այդ փորձառութեամբ հասունանար, սարսափէր մեղքերից ու ընդունակ դառնար փրկութեան (Հռ., Ե 20, ԺԱ 30): Այսպիսով հարկաւոր էին Աստծու նախախնամութեան միջոցները. թէ՛ աւետիք, թէ՛ սպառնալիք, թէ՛ պատիժ, թէ՛ շնորհներ, թէ՛ դաստիարակութիւն ու թէ՛ երկար ժամանակ մինչև Քրիստոսի գալուստն ըստ յաւիտենական տնօրինութեան: «Քրիստոս չեկաւ աշխարհի մանկութեան ժամանակ, որովհետև մանուկներին կաթ էր անհրաժեշտ և ոչ թէ պինդ կերակուր, և ոչ էլ երիտասարդական եռանդի ժամանակ, երբ մոլեգնում էր դիւապաշտական մոլորութիւնը: Այլ նախ կրթեց քարոզութեամբ և մարգարէներով, իբրև կաթով և ապա եկաւ տալու կատարեալ վարդապետութիւնը, իբրև պինդ կերակուր»:[2] Ըստ որում, ինչպէս որ մարդու կրթութիւնը մանկութիւնից պատանեկութիւնը և երիտասարդութիւնը մի որոշ աստիճանաւորութիւն ունի, այնպէս էլ՝ ամբողջ ժողովրդի, ազգի և ամբողջ մարդկութեան կրթութիւնը: Այլև ընդհակառակը. ինչպէս որ Աստուած որոշ նախապատրաստութեամբ կրթեց ու կրթում է մարդկութիւնը Քրիստոսով իր կատարելութեանը հասցնելու համար, այնպէս էլ կրթում է իւրաքանչիւր ազգի, ժողովրդի, անհատի. նոյն նախապատրաստութիւնը, նոյն ընթացքը, նոյն

[1] Մամբրէ Վերծ. [էջ 82]:
[2] Եզնիկ 23, տե՛ս նաև Ա Կորնթ., ԺԳ 11:

հասունացումն ու կատարելությունն է սպասում իրաքանչիւրին, սակայն իր բնութեամբ, իր հարստութեամբ, իր պատմական կեանքով իրաքանչիւրին էլ վիճակւած է առանձնայատուկ ընթացք:

Աստծու նախապատրաստությունը մարդկութեան մէջ երկու ընթացք ունեցաւ, մէկը՝ յատուկ կամ դրական, և միւսն ընդհանուր կամ բացասական: Առաջինն իրագործուեց ընտրեալ ժողովրդի՝ այն է՝ Իսրայէլացիների մէջ, իսկ երկրորդը հեթանոս աշխարհում (Յովհ., Ժ 1, ԺԷ, Հռ., Ա 18-21, Գործք, ԺԷ 26): Դրականի նշանակությունը այն է, որ ընտրեալ ժողովուրդը աստուածային դաստիարակութեամբ ընտելանար ճշմարտութեանը և Քրիստոսով լոյսի հնոց դառնար աշխարհի համար, իսկ բացասականի նպատակն է, որ աշխարհի ու մարդկային ուժերի միակողմանի զարգացման ունայնությունը բացորոշ կերպով երևան հանէր:

Հեթանոս աշխարհը նախապատրաստւում էր փրկութեան համար Աստծու նախախնամութեան ընդհանուր ուղղութեան համեմատ (Գործք., ԺԷ 27): Նրա մէջ տիրում էր բաբէլական խառնակությունն, ըստ որում բազմալեզու ժողովուրդներն իրար չէին հասկանում և Աստծու հոգուց օտարացած լինելով՝ չունէին միութեան ոչ մի կենտրոն ու ոգի: Աստծու նախախնամութեան հիմունքը եղաւ աշխարհային զարգացումը, որ անհրաժեշտութեան օրէնքով է առաջադիմում. հեթանոս աշխարհն ինքնահոսի էր թողնւած (Գործք., ԺԴ 15), որպէսզի Աստծու ընդհանուր նախախնամութեան տակ իր բոլոր ուժերի ծաւալումն ունենար ու մի վերջնակէտի հասնէր: Հեթանոսներն ենթարկւած էին բնական օրէնքին. նրանց ներքին աշխարհը վայրենի կրօնի հարստութեամբ էր միայն բեղմնաւորւում. հեթանոս աշխարհը մի վայրի ձիթենի էր միայն (Հռ., ԺԱ 17): Ուստի և նրա բոլոր պտուղները՝ սկսած կրօնի արդիւնքներից, այն է՝ առասպելաբանությունից մինչև քաղաքակրթութեան վերջին արգասիքը, ամբողջապէս վայրի էր և լոկ մարդկային, որ կարօտ էր Աստծու մշակութեանը: Նրա մէջ տիրում էր աշխարհային սկզբունքը, ինչը զօրանում և արտայայտւում էր հանճարների միջոցով: Աշխարհային մտքերը, աշխարհային հարստությունները, գեղեցկությունն ու հանճարը, ուժն ու փառքը Աստուածութեանը պատիւներ էին ստանում և չաստուածների ծննդաբերություն համարւում աշխարհայինով կուրացած մարդկանց առջև: Հեթանոսն իր ողջ հոգևոր կեանքով սուզւած էր

աշխարհայինի մէջ՝ փոխանակ աշխարահայինն իր հոգու օրէնքներին ենթարկելու ու դատելու: Նրա միտքը երազի մէջ էր, և նրա գիտակցությունը ցրւած է առասպելների մէջ, որոնց միությունն աշխարհային սկզբունքն է: Նա երազի մէջ պտտում էր աշխարհի բոլոր անկիւնները, նոր գոհացուցիչ բան որոնում և գտնելով՝ աստուածացնում էր, թէև շուտով վերստին նրանից ևս յուսահատելու համար: Նա մերթ բոյսերի, մերթ աստղերի, մերթ կենդանիների և մերթ նոյնիսկ մարդկանց մէջ էր որոնում աստուածային խորհուրդ, Աստծու յայտնություն, բայց ոչ մի տեղ չէր կարողանում գոհացում տալ իր հետաքրքրասիրությանը: Սակայն նա այդ ընթացքում թափառելով՝ ցածրից բարձրին էր հասնում և ի վերջոյ ինքն իրեն աստուածային նկատում[88*]: Ապա իր մէջ խորասուզւելով՝ տեսնում էր, որ իր անձնաւորությունը ևս աստուածային չէ, իսկ իր անձնաւորությունից բարձր ոչինչ չգտնելով աշխարհում, Աստծուն է ուզում գտնել, և խաւարի մէջ խարխափելով գնում է «անծանօթ Աստծու» յետևից[89*]: Բայց քանի որ նա, աշխարհով բռնւած, կուրացած էր, պէտք է «անծանօթ» Աստւած Ինքը նրան յայտնէր Իր Որդով:

Այս նախապատրաստությամբ հեթանոսները պէտք է նախապէս իրենց բոլոր ուժերը փորձէին, աշխարհի բոլոր միջոցները ճաշակէին, որպէսզի տեսնէին իրենց սեփական միջոցների և ամբողջ աշխարհի ինքնուրոյնության ունայնությունը: Աշխարհը պէտք է իր ամբողջ փառքով ու հրապոյրով բացւէր մարդու առջև և իր ունայնությամբ յուսահատեցնէր մարդուն, որն իր նկրտումների բոլոր կարելիությունները փորձելուց յետոյ պիտի տարակուսանքի մատնւէր: Այն ժամանակ նա աշխարհից կտրւելով կը սուզւէր իր ներքին աշխարհի մէջ, ականջալուր կը լինէր, կը լսէր իր խղճի ձայնը և Աստծու անարգւած լոյսի շողը կը նկատէր, ինչպէս անառակ որդին յիշեց իր հօր տունը (Ղուկ., ԺԵ 11-32), գտաւ ճանապարհը և եկաւ իր հօր ոտքը՝ խնդրելով ներում ու հոգացողություն: Այստեղ նկատում ենք Աստծու իմաստությունն ու արդարությունը, որ Նա թոյլ է տալիս անարդարությամբ գնացող մարդուն արդէն իսկ անարդար ճանապարհի պտուղներով դատապարտւելու և արդար դատաստանը ճանաչելու: Հեթանոսը, աստուածացնելով մարդկայինը, բայց ապա մարդու մահը տեսնելով՝ պէտք է վերջապէս ըմբռնէր, որ մահը մեղքի վարձն է: Նա յուսահատում էր իր աստուածներից և նրանց նկատմամբ դառնում անհաւատ: Նրա հետ աշխարհային հարստությունները ևս իմաստազրկւում են:

Միւս կողմից հեթանոսները զարկ տալով սոսկ մարդկային քաղաքակրթութեան զարգացմանը՝ այսուամենայնիւ գիտակցում էին, որ այդ քաղաքակրթութեան յաջողութիւնները չեն կարող հոգևոր խաղաղութիւն և երջանկութիւն պարգևել զգայական արժէքներին փարուած մարդուն առանց Աստծու հետ հաղորդակցութեան: Եւ երբ վայրենի կրօնները չկարողացան ո՛չ հաստատուն հիմք լինել ժողովրդի առաջադիմութեան համար, և ո՛չ հովանի լինել, այն ժամանակ մարդկութեան բոլոր ուժերը փշրուեցին, և ամենքի խղճմտանքից ևս ձայն ելաւ, որ առանց Աստծու հաղորդակցութեան չեն կարող երջանկութիւն գտնել և ելնել անդունդից (Հռ., Բ 14-16, Ա 25, 31, ԺԱ 32, Եփ., Բ 12, Դ 17-19): Այս էր թէ՛ կրօնի, և թէ՛ մարդու հոգու պահանջը: Խղճմտանքի այս ձայնը որքան էլ աղօտ լինի, այնուհանդերձ ցոյց է տալիս հեթանոսների ակնկալութիւնն Աստծու օգնութեան նկատմամբ: Պարսիկները սպասում էին չարի յաղթելուն և աշխարհի նորոգութեանը, Հնդիկները մի մարմնացեալի, որ պէտք է ոչնչացնէր չարիքը, Չինացիները արևելեան մեծ սուրբին, որ կատարելութեան ճանապարհը պէտք է ցոյց տար և այլն: Մինչև անգամ քաղաքակրթուած Յոյները տածում էին այդ յոյսը, որի արտայայտութիւնն է Պրոմէթէոսեան առասպելը, թէ Արամազդի տիրապետութիւնը խորտակելու է մի աստուածորդու գալստեամբ: Այդպէս և հին իմաստասէրները, խղճի ձայնը զետեղելով մտքի երևակայութեան մէջ, նկարագրում էին ակնկալած անձնաւորութիւնը, ինչպէս Պլատոնն իր Հասարակապետութեան մէջ: Նրա արդարութիւնը, հալածելը, զուր դատապարտելը և չարչարելը գրեթէ ըստ Եսայէի ԾԳ: Այս հայեացքն էին խոստովանում և՛ Սոկրատէսը, և՛ Արիստոտէլը, այս են յիշում և՛ Կիկերոնը և՛ Սենեկիոսը և այլն: Բանաստեղծներն էլ աղօտ նախատեսութեամբ այդ ամենը սպասում էին այս ու այն պետից, ինչպէս օր. Օգոստոսից, որը և դրանց հաւատալով ինքն իրեն «Փրկիչ աշխարհի» էր կոչում[1]:

Այս ակնկալութեան ձայները անկման մէջ յուսահատուած մարդկութեան քաջալերող աւետիքն էին, որ հնչում էին բոլոր ժողովուրդների մէջ (Թիւ., ԻԴ 17, Դան., Բ 44, Մատթ., Բ 1-3): Այս ձայնն առաւել ևս զօրանում էր, երբ ընտրեալ ժողովուրդը Աստծու պատմական տնօրինութեամբ սփռուում էր և Աստծու

[1] Հմմտ. Ես., ԺԱ 6-9, ԽԵ 17-25, Եզեկ, ԼԶ 29:

աւետիքն ու մարգարէների ձայնը տարածում մարդկութեան այդ բացասականապէս նախապատրաստող ու յուսահատուած բաժնում:

Ընտրեալ ժողովուրդը նախապատրաստուում էր Աստծու յատուկ նախախնամութեամբ: Հեթանոսների մէջ իշխում էր բնական օրէնք, իսկ այստեղ սրբութեան օրէնք, որ Աստուած շնորհեց նրանց, որպէսզի Նրա լծի տակ դաստիարակելով՝ կարողանային ուրախութեամբ ընդունել Քրիստոսի քաղցր ու փոքրոգի լուծը: Այստեղ չկայ խարխափանք, այլ ինքը՝ Տէրն է, որ յայտնուում է նրանց և իր հրամանները տալիս: Այստեղ տիրում է Աստծու երկիւղը, և Իսրայէլը մտնում է Աստծու առանձին ուխտի մէջ: Իսրայէլը գիտէր, որ Աստուած է աշխարհի ստեղծողը, տեսնում էր Աստծու ճշմարտութիւնն ու աշխարհի մէջ իբրև մի ականատես վկայ ապրում: Նա չէր ձգտում ոչ քաղաքական կեանքի, ոչ գիտութեան, ոչ քաղաքակրթութեան. այդ իր կոչումը չէր, այլ՝ հեթանոսների: Նա չէր կարող իր գործերով պարծենալ, որովհետև մեծ գործեր չէր արել, սակայն բարձր դիրք ունէր իբրև Աստծու ճշմարտութեան վկայ, ճշմարտութեան այգի (Ես., Ե), կրօնական կոչումով՝ վկայ: Եւ նրա կոչումն էր դրականապէս լինել այն, ինչ որ պէտք է լինէր ամբողջ մարդկութիւնը Աստծու փրկութեան հանդէպ, և ինչ որ պէտք է դառնար բացասականապէս հեթանոս աշխարհը: Հեթանոսները նուիրուած էին աշխարհին և աշխարհի համար էին կուում, իսկ Իսրայէլը նուիրուած էր հաւատքին և հաւատքի համար էր կուում աշխարհի դէմ, կռապաշտութեան ու խաւարի դէմ: Նրա կռիւը ճշմարտութեան կռիւ էր, Աստծու արքայութեան հաստատման կռիւ էր և մաքառում ի պաշտպանութիւն Աստծու օրէնքի: Նրա մաքառման սկզբունքն էր՝ Աստուած է ամենքի արարիչը, և Նա պէտք է բոլորի վրայ իշխի, ովքեր հակառակում են ու ապստամբում: Սուտ աստուածները կամ աշխարհի ապստամբ պետութիւնները պէտք է ընկճեն և Իսրայէլի վկայութիւնը լսեն, ինչպէս որ հեթանոս մարդն ընկճելով պէտք է դիւրալուր դառնար իր խղճին: Ինչպէս խիղճն էր մարդու մէջ, այնպէս էլ Իսրայէլն է իր ազգային յատկութիւններով և, Աւետեաց երկրի դիրքով, աշխարհի սիրտն էր: Ինչպէս որ խիղճը պէտք է մարդու մէջ մի անձկութիւն, տենչանք ու փափագ զարթեցնէր դէպ Աստծու փրկութիւնը, այնպէս էլ Իսրայէլը պէտք է մարդկութեան մէջ մարգարէական ձայնով նախապատրաստէր այն բոլոր պայմանները, որոնցով պէտք է գար Փրկիչը մեր մէջ: Իսրայէլը կտրուած էր աշխարհից, բայց Աստծու

ընտրածն էր, աշխարհից անյայտ էր, բայց աշխարհի համար էր, և նրանով էր աշխարհի փրկութիւնը (Յովհ., Դ 22): Ուստի և քողարկուած հասունանալուց յետոյ Իսրայէլը սփռուեց աշխարհի վրայ թէ՛ նախապատրաստութեան ճշմարտութիւնը քարոզելու, և թէ՛ հեթանոս աշխարհի բացասական կեանքից օրինակ վերցնելու համար:

Ուստի և Իսրայէլի մէջ է յատկապէս գործում Աստուած, ըստ որում Նրա պատմութիւնը հրաշալիք է, և նրա զարգացումը ոչ թէ մի բնական զարգացում է, ինչպէս հեթանոսներինը, այլ աստուածային հրաշք է: Իսրայէլը կտրւում է իր բնական զարգացման ընթացքից հէնց Աստծու ընտրութեամբ՝ մի այլ երկիր հեռացուելով (Ծննդ., ԺԲ 1-2): Ուխտի առաջին անձնաւորութեան՝ Աբրահամի յարաբերութիւնն Աստծու հետ տիրող է դառնում ամբողջ ժողովրդի վրայ: Հեթանոսների մէջ ազգայինը տիրում էր անհատի վրայ, իսկ այստեղ Աստուած Աբրահամի Աստուածն է, և Աբրահամն Աստծու օգնութեամբ պէտք է օրհնութիւն բերի բոլոր ժողովուրդներին: Եւ Աստուած Աբրահամին ընտրեց իր տնօրինութեան համար (Ծննդ., ԺԷ 7, ԻԲ 18), որովհետև նա հաւատաց. նա ունէր կրօնական տրամադրութիւն, նա էր պահում այն սուրբ աւանդութիւնը, ինչը նախամարդուց սկսած աւանդուեց սերնդէսերունդ: Եւ որովհետև այդ կրօնական հակումը դեռ բաւական չէր, որովհետև կարող էր ճնշուել աշխարհային ազդեցութիւններով և հեթանոսական ներգործութիւններով, այդ պատճառով Աստծու մարդիկ և աստուածային զօրութիւնը յատկապէս գործում է դրանց մէջ և ի վերջոյ յաղթող դառնում իսրայէլացիների բնական ընթացքում:

Բայց որպէսզի Աստծու գալիք արքայութիւնը կատարելապէս մի անընմբռնելի իրողութիւն չլինի, Աստուած տնօրինեց, որ իսրայէլացիների կրօնական կեանքը ներկայացնի Աստծու արքայութեան պատկերը կամ նախատիպը, ինչ որ ապագայում պէտք է լինէր, այն հաստատուեց Իսրայէլում իբրև մի նախատիպ սաղմ, որ կրկնուելով պէտք է նպաստէր ապագայի շնորհների ընդունելութեանը: Այն օրինակները, որոնք Քրիստոս վերցնում էր բնութիւնից՝ Աստծու արքայութեան բացատրութեան համար, ցոյց է տալիս, որ արդէն իսկ բնութիւնը լիքն է հոգևորի նախատիպ հանդիսացող նմանութիւններով: Դեռ աւելին, պարզապէս իսրայէլացիների պատմութիւնն է հանդերձեալ կեանքի նախատիպեր բովանդակում (Ա Կոր., Ժ 11): Եւ այս մեզ ևս հասկանալի է, երբ

յիշում ենք, որ իւրաքանչիւր ազգի առասպելաբանութիւնն իսկ ներկայացնում է նրա ապագայի պատկերը գոնէ աղօտ կերպով: Իսրայէլացիների կրօնական բոլոր կարգերն ու հաստատութիւնները նախատիպ էին աստուածային ապագայ շնորհների (Եբր., Ժ), ինչպէս և նրա մէջ ի յայտ եկած նշանաւոր անձնաւորութիւնները և դէպքերն այսպէս թէ այնպէս նախատիպն են Փրկչի ու փրկագործութեան: Եւ որպէսզի աստուածային ճշմարտութեան մաքառումը առաջ ընթանայ, և հին ուխտի բոլոր կարգերի նախատիպ նշանակութիւնը[1] միշտ յիշւի, երևան է գալիս մարգարէութիւնը, որ միշտ վառ է պահում հին ուխտի նախապատրաստութեան և նոր ուխտի փրկութեան գիտակցութիւնը ժողովրդի մէջ: Այսպիսով մարգարէական նպատակի իրագործմանը ծառայող մի սուրբ շարք է յայտնւում իսրայէլացիների ամբողջ պատմութեան մէջ (Եբր., ԺԱ), որ սկսւում է հաւատքի հայր Աբրահամով (Հռ., Դ) և վերջանում ականատես և աստուածընկալ Սիմէոնով (Ղուկ., Բ 30): Հաւատք, օրէնսդրութիւն, թագաւորութիւն, տաճար և մի շարք մարգարէներ, որոնց միջոցով պահպանւեց նահապետներին ոգևորող Մեսիական յոյսը մինչև վախճանն ու լրումը. դրանք բոլորն էլ աստուածադիր նախատիպեր էին, ինչպէս և զոհը՝ Քրիստոսի, քաւութեան արեան սրսկումը՝ Քրիստոսի արեան հեղման, Երուսաղէմը վերին Երուսաղէմին էր նախատիպ և այլն: Այդպէս և իսրայէլացիների մէջ աստուածառաք մարգարէութիւնը, աստուածակարգ քահանայութիւնը և աստուածահաստատ թագաւորութիւնը յար և նման նախատիպ էր իսկական Մարգարէ, ճշմարիտ Քահանայ և յաւիտենական Թագաւոր Քրիստոսի: Այս ամենն աստուածային սքանչելիք է Աստծու յատուկ նախախնամութեան մէջ: Ուստի և բոլոր մարգարէները, պտտելով աստուածպաշտութեան և թագաւորութեան շուրջը, մարդկային երջանկութեան բոլոր պարագաներն ու պէտքերը Քրիստոսից են ակնկալում, և աշխարհի բոլոր թշւառութիւններն ու տանջանքները մի առ մի նկարագրելով երանական շնորհների հետ Քրիստոսից են սպասւում (Ես., Բ 3, ԾԱ 3, ԺԱ, Եր., ԼԳ 15, Եզնիկ ԼԷ, Միքիէ Ե, Սաղմ., ԻԱ և այլն): Ըստ այսմ Քրիստոս, որի ծագումը յաւիտենից է (Միք. Ե), պէտք է միացնի հեթանոս աշխարհը և իսրայէլացիներին Իր իսկ վրայ, իբրև յաւիտենական որթի,

[1] Տե՛ս Ընդհ. 367, Զգօն 258:

և պէտք է վերջնական փրկութիւն շնորհելով նրանց՝ օրհնութիւն և ամենայն բարիք բաշխի ամենքին, որոնք հեծում էին նեղութիւնների մէջ (Ես., Զ 10-13, Ովս., Գ 5, Յովէլ., Գ 6): Նրանք պէտք է յաւիտենական արքայութեան մէջ մտնէին և աստուածային օրհնութիւն և խաղաղութիւն վայելէին (Ես., Բ 4, Թ 7, ԺԱ 6-9, Ամ., Թ 13-15)՝ ունենալով ճշմարիտ աստուածապաշտութիւն ու սրբութիւն (Եր., ԼԱ 31-34, Յովհ., Գ 1, Զաք., ԺԲ 10, ԺԳ 1): Այդ արքայութեան մասնակից պէտք է լինէին բոլոր ազգերը (Ես., Բ 2-3, ԽԹ 6, Զաք., Ը 20, ԺԴ 9), իսկ այդ արքայութեան թագաւորը՝ Քրիստոս, պէտք է կոչուէր Որդի Դաւթի, Որդի Աստծու, Որդի մարդու և Քահանայապետ՝ ըստ կարգի Մելքիսեդէկի[1]:

Այս մարգարէութիւնները «փոքր ի շատէ» կատարուելով (Ա Կոր., ԺԳ 9)՝ զարգացան ըստ իրենց ժամանակի, պատմական հանգամանքների և ժողովրդի մտաւոր վիճակի, այնպէս որ նա միշտ իբրև նախատիպ է հանդէս գալիս ապագայի նկատմամբ, և **եթէ մի մարգարէութիւն նոյնիսկ իր մարգարէական շրջանում կատարւում էր, այդ կատարածը ևս ծառայում էր իբրև նախատիպ աւետիք Քրիստոսի գալստեան, կեանքի, գործերի քարոզութեան ու շնորհների:** Այսպիսով մարգարէութիւնները ո՛չ հեթանոսական պատահաբար կատարուող հմայութիւններ էին, ոչ խղճի ձայնի արտադրած տարակուսական գուշակութիւններ, այլ ժամանակի ոգու դիտողութեամբ արուած նախատիպ կանխասացութիւններ էին Աստծու յայտնութեան հիման վրայ, որոնք վերաբերում էին միմիայն Աստծու փրկագործական տնօրինութիւններին: Մարգարէութիւնների նպատակն Աստծու արքայութեան նախապատրաստութիւնն էր, և մարգարէները լաւ գիտէին, որ ժամանակի լրմամբ ու Քրիստոսի գալստեամբ վերջանալու էր իրենց կոչումը: Ուստի և վերջին մարգարէ Յովհաննէս Կարապետը իր գործը վերջացած է համարում Քրիստոսի գալով, երբ ասում է. «Նմա պարտ է աճել և ինձ մեղմանալ» (Յովհ., Գ 30): Մարգարէութեան ընթացքը յուսադրական նախապատրաստութիւնն էր, իսկ կատարումը Քրիստոսի և նրա առաքեալների մէջ է սկսւում իրականանալ: Ահա և նայելով Քրիստոսի կեանքի նախատնօրինական ընթացքին, տեսնում ենք, որ այդ հիմնապէս նախասացած է Հին Կտակարանի մարգարէութիւնների մէջ, ըստ

[1] Ես. Թ 6, ԺԱ 1, Եր., ԻԴ 5, Միք., Ե 1, Սաղմ., Բ 7, ՃԹ՝ Դան., Է 13-14 և այլն:

որում «օրէնքի և մարգարէների կատարումը Քրիստոս Ինքն է» (Մատթ., Ե 17, 18, Հռ., Ժ 4): Այդ պատճառով Քրիստոսի դէմ մոլեգնած և օրէնքի կատարման ու մարգարէներին ձևականապէս նախանձախնդիր հրեաներին պապանձեցնում է առաքեալն՝ ասելով. «Այս Աստուած, ինչպէս սկզբից բոլոր մարգարէների բերանով պատմեց Քրիստոսի չարչարելը, այդպէս էլ կատարեց» (Գործք., Գ 18, 22): «Եւ բոլոր մարգարէները Սամուէլից սկսած, և յետոյ, խօսեցին և պատմեցին այս գրերի մասին», և «բոլոր մարգարէները նրան են վկայում՝ մեղքերի թողութիւն ստանալ նրա անուամբ բոլորին, ովքեր կը հաւատան նրան» (Ժ 43, տե՛ս և Հռ., Ա 2, Գ 21 և այլն): Պօղոս առաքեալը գեղեցկապէս բնորոշում է այդ ամբողջ նախապատրաստութիւնը մի հակիրճ արտայայտութեամբ՝ անուանելով Հին Ուխտը իր բոլոր կարգերով «ստուերներ», իսկ նորը՝ «իրերի կերպարանքներ» կամ Քրիստոսին «մարմին»՝ մարմնացումն (տե՛ս Կող., Բ 17, Եբր., Ժ 1): Ըստ որում հրեաների քահանայապետերն ու դպիրները Քրիստոսի կեանքի հանգամանքներն իմանալու համար դիմում էին անմիջապէս և վստահաբար մարգարէական գրութիւններին (Մատթ., Բ 4-7): Քրիստոս ևս չհաւատացող և իր փրկչական խօսքերը հասկանալ չկամեցող փարիսեցիներին ու դպիրներին և օրինականներին խստիւ յանդիմանում էր և հրամայում կարդալ մարգարէների նախասացութիւններն Իր մասին, քննել ամբողջ Հին Կտակարանն ու ստուգել իր վերաբերեալ եղած ակնարկները:

Այսպէս ընթացաւ հազարաւոր տարիներ շարունակ մարդկութեան նախապատրաստութիւնը մասնաւոր և ընդհանուր նախախնամութեամբ կա՛մ դրականապէս՝ հրեաների ու նրանց քարոզութեամբ շրջակայ յուսահատուող ազգերի, կա՛մ բացասականապէս՝ հեթանոսների մէջ իբրև օրինակ այն ազգերի, որոնք բացասականով կը հրապուրէին: Այս մեծահրաշ նախապատրաստութեան վախճանն է ժամանակի լրումը, երբ եղաւ Քրիստոսի Գալուստը: «Երբ կատարուեց ժամանակի լրումը, Աստուած առաքեց Իր Որդուն, որ կնոջից եղաւ» (Գաղ., Դ 4): Նրա գալստեան ժամանակը լրացած ժամանակն էր, որովհետև նախապատրաստութիւնը վերջացած էր և դրական ու բացասական բարձրութեան հասած մարդկութիւնն ի վերուստ էր ակնկալում իր փրկութիւնը: Ակնկալող մարդկութեան ներկայացուցիչն է Սիմէոն Աստուածընկալը, որ առնելով մանուկ Յիսուսին իր գիրկը՝ ասաց առ Աստուած. «Արդ, արձակիր Քո ծառային,

Տէր, խաղաղութեան մէջ, ըստ Քո խօսքի, որովհետև իմ աչքերը տեսան Քո փրկութիւնը, որ պատրաստել ես բոլոր ժողովուրդների առաջ, լոյս, որ կը լինի յայտնութիւն բոլոր հրեաներին, և փառք Իսրայէլի Քո ժողովրդի համար» (Ղուկ., Բ 29)[1]

Հին աշխարհի մարդկութեան ալեծուփ մտածողութիւնը հանգեց մի եզրափակիչ հարցի, այն է՝ «Ի՞նչ է ճշմարտութիւնը» (Յովհ., ԺԸ 38), նոր աշխարհի սկիզբը դրեց Քրիստոս՝ պատասխանելով. «Ես եմ ճանապարհը և ճշմարտութիւնը և կեանքը» (ԺԳ 6, Ը 32):

[1] Տե՛ս և Սարկ. վարդ. Աղօթք ԺԶ:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԱՍՏԻԱԾՈՐԴՈՒ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

ԺԸ

ՄԻԱԾՆԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆԸ

Քանի որ անկեալ մարդկութիւնն անձամբ կամ մի որևիցէ մարդու օգնութեամբ անկարող էր վերստին դառնալ իր սկզբնական վիճակին, քանի որ ինքն իսկ լինելով մեղանչողն ու մեղքի մէջ սուզուողը՝ չէր կարող սրբել ու բարձրացնել իր անկեալ մարմինն ու հոգին և հաշտեցնել Աստծու հետ, պարզ է, որ Աստծու կողմից միայն պէտք է լինէր դրա համար անհրաժեշտ օգնութիւն: Այդ օգնութեանն էր ակնկալում մարդկութիւնը և այդ օգնութիւնը բերող Փրկիչն Աստծու Միածին Որդին է, որ եկաւ Հօր Աստծուց, իջաւ մարդկութեան մէջ աստուածային փրկագործական տնօրինութիւնը կատարելու համար: Նրա գալուստն ու յայտնուելը պարզապէս ցոյց է տալիս, որ նա յաւիտեաններից էր, Հօր մօտ էր, բայց և աշխարհում էր, և աշխարհը Նրանով է եղել (Յովհ., Ա 4, 10): Նա բացարձակ Բանն է և արարուած ամեն բանականութեան աղբիւրը. Նրանից է սկիզբ առնում օրէնքը և աւետիքը, լոյսն ու ճշմարտութիւնը: Նա ծնուած է Հօրից ոչ թէ ժամանակի մէջ, այլ յաւիտեաններից առաջ: Այդ ծնունդը արարուած ծնունդ չէ, այլ ինչպէս «լոյս ի լուսոյ», ըստ որում թէ՛ էութեամբ, ու թէ՛ բնութեամբ Հօր հետ համագոյ է, և ինչպէս Հայրը միշտ եղել է, այնպէս էլ եղել է Որդին նրանից անբաժան (Յովհ., ԺԷ 5, 8, 24, Ժ 30) և ունի աստուածային բոլոր կատարելութիւնները: Այդ ենք ասում Հաւատամքի երկրորդ մասի սկզբում, ըստ որում և «ի մի Տէր» ու «Հայր Աստծուց Ծնուածը միածին է, այսինքն՝ Հօր էութիւնից է» և «նոյն Ինքը Հօր էութիւնից է» խօսքերով արտայայտում ենք, որ Միածինը բնութեամբ է Որդի և ոչ թէ որդեգրութեամբ կամ ուրիշ սովորական մտքով, որովհետև աննիւթական հոգին չի կարող բնութեամբ և էութեամբ տարբեր լինել ծնողից:

Այս աշխարհից բերուած օրինակի շնորհիւ՝ «լոյսը լոյսից» բառերով, մեր սահմանափակ մտքի առջև պարզւում է Միածնի ծննդեան խորհուրդը նմանապէս: Այս կապակցութեամբ դիպուկ է Ս. Ներսէս Շնորհալու բացատրութիւնը: «Որդու անօրինակ ծննդեան օրինակը ոչ այլ ինչ է, քան խօսքը, որ մեր մտքի ծնունդն է, թէպէտ այս օրինակը ոչ ամբողջապէս է համապատասխանում ճշմարտութեանը: Խօսք է ասւում ծննդեան անապական լինելու պատճառով»[1]: Նրա բացատրութեան համար հիմք է ծառայել Ս. Գրիգոր Լուսաւորչի խօսքը թէ՝ «Այս պատճառով խօսք անուանուեց, որովհետև ինչպէս խօսքն է ասողի բերանում, նոյնպէս և Հօր կամքի ամեն տեսակ հրամանները դուրս են գալիս Որդու բերանից»[2]: «Խօսք է կոչւում Որդին, որովհետև Հօր կամքի ծանուցիչն է, ինչպէս խօսքն է ծանուցիչը խօսողի կամքի...»[3]:

Լինելով յաւիտեաններից առաջ՝ Միածինը պէտք է նախապատրաստութիւնից յետոյ գար լրացած ժամանակում և Իր պատմական միջնորդութիւնը յանձն առնէր այն շեղուած մարդկութեան փրկութեան համար, որ դարձեալ Իրենով էր ստեղծուել: Նրանով ստեղծուեց աշխարհը, նա յայտնուեց մարգարէների քարոզութեամբ նախապատրաստուող ժողովրդին, Նա Իր պատկերը մասամբ ցոլացրեց սրբատենչ հանճարների ու ժողովրդի ընտրեալ ուսուցիչների մէջ և նրանցով զարկ տուեց Իր գալստեան նախապատրաստութեանը: Եւ ի վերջոյ նա առաւ Իր ստեղծած մարդու պատկերը, որ նրան վերստին Իր պատկերին հասցնէր: Այդ աստուածային օգնութիւնն անհրաժեշտ էր ընկած մարդկութեանը և այդ օգնութիւնն է, որ կոչւում է փրկութիւն:

Փրկութիւնը պէտք է լինէր նախ՝ մեղքի ծնունդ աստուածամարտ խորհուրդների արտաքսումով, և երկրորդ՝ մեղքի պատճառով նահանջած աստուածային բարիքների վերստին հաստատումով և զօրացումով: Ուրեմն Փրկչի կոչումն է երկրորդ Ադամ լինել (Հռ., Ե 12-21, Ա Կոր., ԺԵ 21, 22, 45-49): Մարդկանց այն զարգացումը, որ տանում էր նրանց դէպի մեղք ու մահ, պէտք է ընդհատուէր, նրա փչացրածը բարւոքուէր և Աստծու կամեցած զարգացումը, որ

[1] Ընդհան. էջ 13:
[2] Ագաթ. էջ 244:
[3] Տե՛ս և Ս. Ներսէս Մեծի ճառը Բուզ., էջ 68-74:

պէտք է տանէր մարդուն դէպի սրբութիւն ու երջանկութիւն, նորոգուէր: Մարդու կորստեան վայրէջքը պէտք է կասեցուէր, քանի որ Փրկիչը պէտք է հաշտեցնէր նրան Աստծու հետ և մեղքի պատիժը վճարելով անմեղութեամբ՝ ոչնչացնէր մարդու մեղքի պատիժը[1]: Իսկ բարւոքումը պէտք է լինէր նրանով, որ այդ Փրկիչը պէտք է մտնէր մեր վիճակի մէջ, մեզ նման փորձութեան մէջ ընկնէր (Եբր., Դ 15), չարչարակից լինէր մեզ և Իր անմահական կեանքով ներկայացնէր մարդկութիւնն իր բոլոր կատարելութեամբ նախ Իր անձի և ապա մեր՝ Իրեն հաղորդակից անձերի մէջ: Այդպիսով Նա իբրև մեր գլուխ ու տէր կը ձգէր մեզ դէպի ինքը՝ մեր հաւատքով, և իր կատարելութեան մասնակից կը դարձնէր (Եփ., Ա 22, Բ 5, Դ 15, Մատթ., Բ 6, Եբր., Բ 10): Նա պէտք է լինէր մարդ, ըստ ամենայնի մեզ նման, բայց առանց մեղքի և ուրեմն կուսական ծննդով (Փիլ., Բ 7, Եբր., Բ 17, Դ 15), որպէսզի ոչնչացնէր մեր մեղքերը, և մեր մեղանչականութիւնը սրբելու համար մեղքի պատիժը, այն է՝ չարչարանքն ու մահը կարողանար իր վրայ առնել մարմնով և արեամբ (Եբր., Բ 14, 17) և մեզ ազատէր նրանցից: Նա կատարեալ մարդ լինելով՝ պէտք է լինէր և կատարեալ Աստուած, որպէսզի նրա չարչարանքն ու մահը սեփականէր, որոնք և իբրև մարդկանց համար չարչարանք ու մահ՝ Աստծու առաջ վերջնական արժէք ստանային, այլև՝ որպէսզի նրա Աստուածութիւնը սրբէր մարդու բնութիւնը, զօրացնէր և ընդունակ դարձնէր զարգացման և գնալու իսկական աստուածային ճանապարհով և կատարելութեան ձգտելու: Հին մարդն ամբարտաւանութեամբ աստուածանալ էր կամենում, բայց ընկաւ: Փրկիչը պէտք է խորտակէր այդ ամբարտաւանութիւնը, հեզութեան օրինակ տար, որ մարդիկ ընդունակ լինէին Աստծու շնորհներին ու բարձրանային: Հին աշխարհի գիտակցական ամբարտաւանութիւնը[2] պէտք է խորտակուէր Միածնի հեզութեամբ՝ մարդու փրկութեան համար[3]: Հնգեակ զգայարաններով մեղանչած ու հետևաբար բնութեամբ փչացած մարդու բնութիւնն առնելով՝ պէտք

[1] «Քանզի մահ սպառնաց Ադամին, եթէ ճաշակի պտղից, և քանի որ յանցաւոր գտնուեց պատուիրանի հանդէպ՝ մեղքի և մահուան մէջ յայտնուեց, իր զաւակների հետ: Եւ չեղաւ մարդկանցից մէկը, որ անմեղութեամբ մահուան պարտքը վճարէր: Եղաւ Ադամի Որդին՝ Որդին Աստծու՝ մեղքերից անպարտը, մեղաւորներիս և պարտապաններիս փոխարէն մեռաւ, ապա իշխանութիւն հաստատեց մահուան վրայ՝ խորտակելով նրա դռները, և այնտեղից հանելով բանտարկեալներին» Խոսր. Անձ. 36, հմմտ. Սարկ. վարդ. Աղոթք, Դ:
[2] Արիստոտել, Էթիկա. IV, Գ 24, Ե 5
[3] Տե՛ս Յովհ. Իմաստ էջ 98:

է սրբէր, մաքրէր ու զտէր և կրկին աստուածային բարձրութեան մէջ դնէր[1], որպէսզի նոյն այդ մեղանչական բնութեան մարդը կարողանար միացուցիչ Քրիստոսով և Քրիստոսի մէջ ներկայանալ Աստծու առաջ ու ողորմութիւն գտնել[2]:

Ահա և Աստուած Իր յաւիտենական տնօրինութեամբ ուղարկեց Իր Միածին Որդուն, որ Նա մարդանար, իբրև ճշմարիտ մարդ ապրէր երկրի վրայ, կրկին բարձրացնէր մարդու անկեալ բնութիւնն իր առաջւայ վիճակին, չարչարուէր մարդկային մեղքերի փոխարէն, հաշտեցնէր այդպիսով մարդուն Աստծու հետ և աստուածային բարձրութեան մէջ դնելով՝ իբրև Աստուած՝ ամենքին, որոնք Նրան կը հաւատային, շնորհէր այդ վսեմ պատիւը, սրբութիւնը, աստուածային պատկերն ու միութիւնն Աստծու հետ[3]:

Ուրեմն ըստ Աստծու տնօրինութեան և Ս. Ուխտի, ըստ հինաւուրց ակնկալութեան (Մատթ., ԺԳ 17) և դարաւոր մարգարէութեան «Էութիւնն Աստուած մարդու կերպարանք ստացաւ»[4] և ծնեց ս. Կոյսից, առանց ժառանգական մեղքի, սակայն մեղանչական մարդու կերպարանքով (Հռ., Ը 3): Նա միացրեց Իր Աստուածութիւնն Իր մարդկութեան հետ անշփոթ և անբաժան միաւորութեամբ[5], ըստ այսմ և իրաւամբ կոչում ենք Նրան Աստուածամարդ: Այս միաւորութեամբ աշխարհի մարդը դառնում է Աստծու Բանի յայտնութիւնը, ըստ որում և Քրիստոս Ինքն Իրեն կոչում է թէ՛ Որդի մարդու, և թէ՛ Որդի Աստծու: Նա Որդի մարդու է կոչւում իբրև մարդկային սկզբնական մաքուր բնութիւն, որ անձնաւորուած է իր մէջ և երկրորդ Ադամ է, իսկ Որդի Աստծու է իբրև «փառքի

[1] «Մեր հողեղէն բնութիւնը հագաւ և խառնեց անխառն Աստուածութեան հետ, որպէսզի մեզ տայ Իր անմահութիւնը, անվշտութիւնը և անչարչարութիւնը: Մեր ապականացու բնութիւնը խառնեց աստուածութեան անապականութեան հետ, որպէսզի մեր բնութիւնն անապական դարձնի»: «Արդ, ինքը յօժարակամ իջաւ, որպէսզի սիրեցեալներին խառնի Աստուածութեանը» (Ագաթ. 259, 339, 342, 344):

[2] Ա Տիմ., Բ 5, Կող., Գ 3, Ա Յովհ., Բ 1, Գաղ., Գ 19, Եբր., Ը 6, Թ 15, ԺԲ 24:

[3] Ագաթ. 55, Գր. Արշ., էջ 87,88[1*]:

[4] Ս. Ղևոնդ, Եղիշէ 86

[5] «Եթէ մարդկանցի՞ց ունենք ինչ-որ վկայութիւն, չէ՞ որ մեծ է Աստծու վկայութիւնը, որ վկայեց Իր Որդու համար, եթէ՝ «Դա է իմ սիրելի Որդին, որին հաւանեցի, դրան լսեցէք»: Եւ չբաժանեց երկու բնութեան, երկու անձի, երկու մտքի, այլ «դա» և «դրան» ասելով՝ միութիւնը յայտնի դարձրեց» (Սեբէոս 125):

լոյս և Հօր էութեան նկարագիր»[1]: Ուստի և ասում է, որ ինքն ունի ամենայն իշխանութիւն թէ՛ երկնքում, և թէ՛ երկրում, ինքն է իմաստութիւնը, սրբութիւնը (Մատթ., ԺԲ 6), աշխարհի Փրկիչն ու Եկեղեցու փեսան (Մատթ., Թ 15): Նա է մեղքի թողութիւն տուողը, Ս. Հոգու ուղարկողը, որ միշտ ներկայ է Իր անուամբ հաւաքւածների մէջ (Մատթ., Թ 6, Յովհ., ԺԵ 26, Մատթ., ԺԸ 20), ըստ որում և Ինքն է թէ՛ աշխարհի Դատաւորը և թէ՛ Իրենով է աշխարհի բովանդակ կոչումն իրականանում (Մատթ. ԻԴ, Ղուկ. ԻԱ), որովհետև վերջում Ինքը գալու է, ինչպէս և յաւիտենից եղել է Հօր մօտ (Յովհ., ԺԷ 5): Ըստ որում Մատթէոս, Մարկոս և Ղուկաս աւետարանիչները շեշտում են առաւելապէս այս, որ Քրիստոս է աշխարհի Փրկիչը և Դատաւորը, և յաւիտենական լինելու է Իր փառքով, իշխանութեամբ ու զօրութեամբ, մինչդեռ Յովհաննէսը շեշտում է նաև Քրիստոսի յաւիտեաններից առաջ լինելը, որովհետև յաւիտենականը չի կարող սկիզբ ունենալ: Հետևաբար աւետարանիչները իրար լրացնում են՝ խօսելով Քրիստոսի յաւիտենական ծագման և յաւիտենական իշխանութեան մասին: Ուստի և ամբողջ Նոր Կտարակարնում սովորական են այսպիսի վկայութիւնները՝ «Մարդու Որդի, որի էութիւնը երկնքում է», «Աստծու Որդի», «Փառքի լոյս և Նրա էութեան նկարագիր», «Ես և Իմ Հայրը մէկ ենք», «Հայրը իմ մէջ է, և Ես՝ Հօրս մէջ», «Ես Աբրահամից առաջ եմ», «Հօրից ելայ և աշխարհ եկայ», «Այսօր ձեզ Փրկիչ ծնեց, որ օծեալ Տէր է», և այլն:

Ուրեմն Քրիստոս Աստուած է և մարդ, ուստի և Նրան ընծայում ենք այնպիսի որակումներ, որոնք յատուկ են մարդուն, և այնպիսի որակումներ, որոնք միմիայն Աստծուն են յատուկ, որովհետև նա ճշմարիտ միաւորութիւնն է Աստծու և մարդու[2]: Թէև իսրայէլացիները հաւատում էին, որ Աստծու և մարդու հոգու մէջ հաղորդութիւն է լինում, ինչպէս պատահում էր մարգարէների ու սրբերի մէջ, այլև Աստուած մարդու կերպարանքով երևում է ս. մարդկանց, սակայն նրանց համար մի նորութիւն էր տեսնել Արարչի և արարածի իրական միութիւնը: Նրանք

[1] Եբր., Ա 3, Յովհ., ԺԷ Գ 13, Մատթ., ԺԸ 20, ԺԱ 21, Ղուկ., Ժ 32, Յովհ., Զ 46, Ը 40, 95, Ժ 15:

[2] Խաչիկ կաթողիկոսը բազմաթիւ վկայութիւններ բերելով՝ ասում է. «Երանելի հայրերի մօտ տեսա՞ր անբաժանելի միաւորութեան մասին, ուր չկայ ոչ բնութեան, ոչ կրքի, ոչ ներգործութեան, ոչ կամքի զանազանութիւն, այս մասին ոչինչ չեն ներմուծում, այլ խոստովանում և երկրպագում են հաւատքով, և չեն քննում» (Ասողիկ 225):

չգիտէին, որ Աստծու և մարդու հոգու հաղորդութիւնը և Աստծու՝ մարդկային կերպարանքով երևալը մի նախապատրաստական օրինակ էր գալիք մարդեղութեան, ուստի և հայհոյութիւն էին համարում, երբ Քրիստոս մարդ լինելով հանդերձ՝ Ինքն Իրեն Աստուած էր անուանում (Յովհ., Ժ 33): Հեթանոսներն էլ ծանօթ էին աստուածամարդութեանը, ինչպէս գիտենք նրանց առասպելներից և աստուածմարդկային կատարելատիպերից, սակայն Աստծու մարդանալը նոր էր, սովորաբար մարդուն էին աստուածացնում: Աստծու և մարդու միութիւնը նրանց մէջ երևակայական էր և ոչ իրական, բանաստեղծական էր և ոչ պատմական: Բայց և նրանք չգիտէին, որ իրենց մէջ սովորական այդ տեսութիւնը մի ստուերական նախապատրաստութիւն էր իսկական գալիք մարդեղութեան: Ուստի և որքան էլ Քրիստոսի աստուածամարդութիւնը ըստ նրանց առասպելների և իմաստասիրութեան ընդունելի էր, այնուհանդերձ մի յիմարութիւն էր համարում, երբ լսում էին, թէ Աստուած մարմնացել ու մարդացել է, թէ մարդը Աստծու յայտնութիւնն է և էապէս նրա հետ միացած, որով սրբութիւնն ու արդարութիւնը յայտնւում է և Որին հաւատալով կարելի է երջանկութիւն վայելել, իսկ չհաւատալով՝ նզովք: Առաւել ևս յիմարութիւն էր նրանց աչքում Քրիստոսի խաչելը մարդկութեան մեղքի համար, որովհետև ճշմարիտ Աստուած նրանց մէջ դեռևս անծանօթ Աստուած էր:

Սակայն իսկապէս Աստծու և մարդու միութիւնն անհասկանալի չէ մարդու համար. բաւական է յիշել միայն, որ մարդու մարմինը նոյնպէս բոլորովին անբացատրելի կերպով միաւորուած է նրա հոգու հետ[1]. ճիշտ այդպէս է և սքանչելի խորհրդաւորութեամբ միացած Աստուածային բնութիւնը մարդկային բնութեան հետ և մէկ դարձած: Սուրբ Հայրերը աւելի ևս ըմբռնելի օրինակ են բերում նոյնիսկ անշունչ աշխարհից. շիկացած երկաթը ո՛չ երկաթ է սոսկապէս, և ո՛չ հուր, մինչդեռ անբաժան միացած են թէ՛ երկաթը, և թէ՛ հուրը[2]: «Անապական

[1] Ընդհան., էջ 141, 119:

[2] Ընդհ. 341. «Ոչ թէ Բանը թանձրացել է՝ [վերածուելով] ոսկրի և մարմնի, և ոչ էլ մարմինը նոսրացել է Բանի բնութեան պարզութեան մէջ, ինչպէս փայտն է վերանում բոցի ու ծխի մէջ, այլ Բանը մարմնացել և մնացել է, նոյնպէս էլ մարմինն աստուածացել և չի փոփոխուել անմարմնութեան: Եւ պատշաճ է ասել. ոչ փոխուած և ոչ փոփոխուած, որովհետև անփոփոխելի լոյսի ճառագայթը փոփոխելի նիւթով է փայլատակում, նա մի նոյնակերպ կայծակ է, որ նոյնագործ Բանի հետ հրաշաբուսելով է տեղի ունենում, երկու կատարեալ բաները մէկ կենդանութեան մէջ են կազմում, նրանք անճառելի խառնումով են

խառնումով մեր կերպարանքն առաւ մարմնով, ինչպէս հոգին և մարմինը, ոսկին և կրակը և կամ, աւելի պարզ ասած, լոյսը օդը[2*]՝ չփոփոխուելով և չանջատուելով»[1]: Բայց իհարկէ այս շօշափելի օրինակների լուսաբանութիւնը չի կարող վերացնել Աստուածորդու մարդեղութեան հրաշալիքը, որ վեր է ամեն տեսակ օրինակից և միշտ կը մնայ մեր հաւատքի համար մի սքանչելի խորհուրդ (Ա Տիմ., Գ 16): Ուրեմն իզուր է թերահաւատ հրեաների ձգտումը, որ նրանք ջանում էին մարդեղութեան վարդապետութիւնից իրենց գայթակղեցնող կողմերը վերացնել, ուստի և Քրիստոսին սկսեցին համարել ամենամեծ մարգարէ, ամենահանճարեղ մարդ և մինչև այժմ եղածների մէջ ամենակատարեալը: Բայց սա քրիստոնէական վարդապետութիւն չեղաւ, այլ ամենազարգացած հրէութիւն, որ ոչ մի կերպ չէր կարող քրիստոնէական փրկագործութեան խորհուրդը դառնալ և չէր կարող փրկութիւն տալ մարդկանց: Ընդհակառակը, հեթանոսական իմաստասիրութիւնը, հետամուտ լինելով իր որդեգրած ուղղութեանը, Քրիստոսի մարդեղութիւնը երևակայական և առերևոյթ համարեց և Քրիստոսի պատմութիւնը վերածեց սովորական առասպելաբանութեան, որով մարդկանց փրկութիւն ստանալը նոյնպէս երևակայական դարձաւ: Ըստ այդ իմաստասիրութեան, կարող էր լինել լոկ երևակայական միութիւն Աստծու և մարդու միջև: Արդ, քրիստոնէութիւնը դառնում է ամենակատարեալ առասպելը հեթանոսութեան մէջ, **մինչդեռ մեղքն և Աստծու ու մարդու հակադրութիւնը իրողութիւն է, որ չի կարող երևակայութեամբ վերացուել:** Հետևաբար հրեաների եբիոնեան կոչուած մոլորութիւնը անկարող է դարձնում փրկագործութիւնը[3*], իսկ հեթանոսների երևութական (դոկետ) կամ գնոստիկական կոչուած աղանդը (մանիքէցիներ, ապողինարեաններ)[4*] չկայացած երևակայութիւն է համարում աստուածային իրողութիւնը: Երկու հիմնական աղանդներ, որոնցից նորանոր սնունդ են ստանում նորագոյն գիտութեան ներկայացուցիչներից շատերը, որոնք ատելութեամբ և անհաւատութեամբ ձգտում են լոկ մարդկայնօրէն ըմբռնելի դարձնել աստուածային փրկագործութեան մեծ խորհուրդը:

միաւորում, ինչպէս ձայնը խօսքի հետ և խօսքը գրի հետ, լոյսը օդի հետ և կրակը երկաթի հետ, ինչպէս տեսնելն աչքի հետ, թրծումը պողպատի հետ, հոգին մարմնի հետ, ու նաև նոր և օտար խառնումով մի բնութիւն է, և անշփոթ է» (Վարդան վարդ. ի խնդրոյ Կոստ. Կաթող. Դաւանութիւն)[5*]:

[1] Ս. Գրիգոր Նարեկացի, Աղօթամատեան, Բան ԼԴ:

Հայաստ. Ս. Եկեղեցին, մերժելով այս երկու աղանդաւորական միակողմանիութիւնները, դաւանում է, որ Քրիստոս Տէր Աստծու Որդին է, Հօրից ծնւած Միածին է, այսինքն՝ Նրա էութիւնից է, ճշմարիտ Աստծու ծնունդ Աստւած է և Աստծու բնութիւնից, Նրանով են եղել երկնքի ու երկրի վրայ տեսանելի և անտեսանելի արարածները, և Նա է մեր Տէրն ու Փրկիչը: Ապա խոստովանում ենք՝ «Որ մեզ՝ մարդկանց համար, և մեր փրկութեան համար իջաւ երկնքից, մարմնացաւ, մարդացաւ, կատարելապէս ծնեց սուրբ Կոյս Մարիամից՝ Սուրբ Հոգով: Որով առաւ մարմին, հոգի և միտք և ամենայն ինչ, որ կայ մարդու մէջ՝ ճշմարտապէս և ոչ թւացեալ» (տե՛ս և Գ 2, 6): Ուստի և ըստ Հայաստ. ս. Եկեղեցու վարդապետութեան, որքան էլ հասկանալի ու մատչելի դարձնենք մեր մտքի համար Քրիստոսի մարդեղութիւնը իբրև մի աստուածային բարիք մեր իսկ փրկութեան համար, այնքան էլ անմատչելի է, որովհետև նոյնպէս անմատչելի է մեզ մեր հոգու ու մարմնի միութիւնն իսկ և մանաւանդ անմատչելի է այդ խորհուրդն իբրև Աստուածային սքանչելիք: Այլև, ըստ մեր հաւատքի, Քրիստոսի մարդեղութիւնը սքանչելի խորհուրդ պէտք է մնայ, որովհետև մարդեղութիւնը ոչ մեր կամքով, այլ Աստծու ողորմածութեամբ է տնօրինւել, այդ մի աստուածային շնորհ է անկեալ և անօգնական մարդկութեան համար[1]: Իսկ մարդկութիւնը կարող է միայն ընդունել այդ ամենաբարձր բարիքը: Այդ է պատճառը, որ Քրիստոս ոչ թէ մարդկային կամքով է ծնւում, այլ ընդունւում է ս. Կոյսից և ծնւում է Ս. Հոգով (Յովհ., Ա 13): Քանի որ մարդ անարժան է այդ բարձր շնորհներին, հետևաբար թէ՛ կամքով, թէ՛ խորհրդով և թէ՛ մտածողութեամբ չի կարող մասնակից լինել այդ տնօրինութեանը: Վաղնջական անհնազանդութեան և անհաւատարմութեան փոխարէն նա պէտք է իր բովանդակ էութեամբ ու հաւատքով նուիրի Աստծուն, որպէսզի Նրա ողորմածութեամբ փրկւի: Իսկ եթէ մենք կամքով ու մտքով մասնակից լինէինք այդ փրկչական տնօրինութեանը, չէինք կարող փրկւել, որովհետև մարդկային կամքը, մտածողութիւնն ու զգացողութիւնն Ադամային անկումով ընկած և ապականւած էր աշխարհի իշխանութեան ներքոյ: Որքան ընկած էր մարդը, այնքան մեծ և սքանչելի եղաւ

[1] «Տե՛ս, թէ Աստծու նկատմամբ սէրն ինչքան համարձակութիւն ունի, որ նոյնիսկ Աստծու նման է դարձնում մարդուն: Որովհետև Աստւած Իր սիրով մարդկանց նման եղաւ, և ցոյց տւեց, որ մարդիկ էլ իրենց սիրով Աստծու նման են լինելու» (Մանդ. 214):

շնորհը (Հռ. Ե 20) և այնքան մեծ, որ երբեք մարդկային միտքը չէր կարող մի այդպիսի բարձր խորհուրդ յղանալ և ծնել: Մարդկութեան համար այդպիսի բարձր շնորհի ընդունելութեան ճշմարիտ օրինակ եղաւ ս. Կոյսը, որ ոչ մի այլ փափագ ու պատիւ չունեցաւ, բացի այն, որ ինքը Տիրոջ մայրը և Տիրոջ աղախինը դարձաւ (Ղուկ., Ա 44, 38)՝ կատարեալ հաւատքով ու հեզութեամբ:

Այսպէս ուրեմն Քրիստոս թէ՛ մեզանից մէկն է, և թէ՛ մեզանից տարբեր ծնունդով և էութեամբ և այդպէս միայն նա դառնում է մեր Փրկիչն ու մեզ Իրեն նմանեցնում: Նա է մարդկութեան կատարելութիւնն ու կատարելատիպը, որ արտայայտւում է «Որդի Մարդոյ» խօսքով[1], և մարդկութիւնը պէտք է ձգտի միանալ Նրան: Նա իբրև Քրիստոս՝ իսրայէլացիների հետ դրւած աստուածային ուխտի և նրանց յոյսերի կատարումն է, իբրև Փրկիչ՝ նախամարդուն աւետւած զաւակն է, իսկ իբրև Աստւածորդի և Որդի Մարդու՝ մարդկութեան յոյսերի իրականացումն է և մարդկային պատմութեան միջակէտն ու նպատակը: Նա Որդի Դաւթի է և Որդի մարդկութեան, որովհետև նա «հագաւ մէկ մարդու մարմին և մէկ մարդու [միջոցով է] ընդգրկում բովանդակ մարդկութիւնը»[2]: Նրանով է սկսւում նոր ժամանակը և նոր պատմութիւնը, Նա է մարդկանց Տէրն ու Նրա մէջ է իւրաքանչիւրի մխիթարութիւնը, ամենքի միութիւնը և այն ամենի կատարումը, որ անհրաժեշտ է մարդուն[3]:

Արդ, Քրիստոս է աստուածային կատարեալ սիրոյ ապացոյցը, մարդու կատարեալ հաւատքի ճանապարհը դէպի Աստուածութիւն և մարդ-Աստւած հաղորդակցութեան բարձրագոյն իրականացումը, որ ճշմարիտ կրօնի պսակն է: Մարդու կոչումն է տեսնել առ Աստւած և միանալ նրա հետ, ըստ որում մեր կոչման կատարեալ իրականացումն է Քրիստոս: Նրա մարդեղութեան վեհ խորհրդի մէջ իրականանում է մարդու մարմնաւոր ու հոգևոր միաւորութեան հակասութեան լուծումը և Աստծու ու մարդու կատարեալ հաշտութիւնն ու հաղորդակցութիւնը[4] իբրև մարդու կոչման իրագործման ճշմարիտ հաւաստիք:

[1] Նոր Կտակարանում 88 անգամ յիշւում է այդ անունը, հմմտ. Դան., Է 13-14, Աս., Թ 6, Բ Թագ., Է 12-16:
[2] Եղիշէ, էջ 318:
[3] Մատթ., ԺԶ 13, 16, Յովհ., ԺԲ 34, Հռ., Ե 12, Ա Կոր., ԺԵ 45, Մատթ., ԺԱ 29, ԻԸ 19, Ընդհան. 390:
[4] «Բանը դուրս գալով Հօրից և միաւորւելով մարմնի հետ՝ արեգակի նման փայլելով՝ ցրեց մարդկային ողջ բնութեան գիշերը» (Մամբ. Վերծ. 64): «Լինելութեան սկիզբը

Այս է, որ ամփոփելով ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը. «Եւ ինչպէս Աստծու Որդին եղաւ Մարդու Որդի և մեր բնութիւնը հագաւ ու կատարեց բովանդակ արդարութիւնը հոգով ու մարմնով, այդպէս էլ մենք հագնենք ճշմարտութիւնը և կատարենք բովանդակ արդարութիւնը Քրիստոսի մէջ, որպէսզի Աստծու որդիներ լինենք և սիրոյ (միջոցով)՝ աստուածներ: Որովհետև Աստծու Որդին մարմնացաւ յօժար կամքով և յանձն առաւ մարդկանց բոլոր կրքերը, բացի մեղքից: Այդպէս էլ մեզ է հարկ աստուածային զօրութեամբ բոլոր կրքերի միջով անցնել առանց յանցանքի, որպէսզի կարողանանք հասնել «հաւատքի կատարեալ միութեանը և Աստծու Որդու ճանաչմանը՝ կատարեալ մարդու աստիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը» (Եփես., Դ 13)[6*] : «Որովհետև հողեղէն բնութեամբ կենդանակերպւեցինք և հողեղէնից հոգեղէն պատկեր հագանք»[7*] (Մամբրէ Վերծ.):

ԺԹ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏԻԱԾՈՒԹԵԱՆ ՈՒ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Սուրբ Եղիշէն ասում է, որ իւրաքանչիւր մարդ հաւատալով Աստծուն, միանում է նրա հետ. «Աստուած միշտ Ինքն Իր մէջ է, ով հաւատացեալ է՝ Աստուած նրա մէջ է» կամ «Եւ Աստծուն տեսնելով՝ հէնց նոյն պահին միացաւ Նրա հետ»[1]: Այս սկզբունքը հասկանալի է, քանի որ մարդու կոչումն էլ Աստծուն հաղորդակից լինելն է, իբրև Աստծու պատկեր՝ նրա իմաստութեանը, արդարութեանը, սրբութեանը և սիրուն մասնակից լինելն է, հետևաբար Աստծու հետ միանալն է:

միաշաբաթն է, որովհետև այնտեղից է սկիզբ առնում երկնքի և երկրի արարչագործութիւնը: Արդ, որովհետև առաջին աստուածավայելուչ իրագործումն ապականեց նախահօր յանցանքի պատճառով՝ յանցաւորի կերպարանք առաւ և իբրև յանցաւոր իր անձը դատապարտութեան յանձնեց: Եւ դատողներին թոյլ է տալիս իրեն դատապարտել, որպէսզի առաջին մարդու դատապարտութիւնը փոխհատուցի: Եւ մարդացած Աստուած պարտաւորութիւն է ընդունում, և փոխանակ մեղքի դիմաց Հօրը տրելիք հատուցման՝ աստուածացած մարմնի մէջ մեղք է ընդունում կամաւորապէս ու յանցաւորապէս, և Իր մարմնացած Աստուածութեամբ վերացնում է հին մարդու բովանդակ յանցաւորութիւնը» (77)[8*]:

[1] Եղիշէ, էջ 326, Ս. Յովհ. Մանդ. 214:

Եւ երբ մարդիկ միանում են Աստծու հետ, այդպէս կազմւում է Աստծու արքայութիւնը (Գաղ., Բ 20, Հռ., Զ 10, Բ Կոր., Զ 16, ԺԳ 4):

Այս միութիւնը Քրիստոսի Աստուածութեան ու մարդկութեան միութիւնը չէ, ինչպէս երևութական (դոկետական) աղանդաւորութեամբ մոլորւում են քրիստոնեայ միստիկները[9*]. Աստուածութիւնը միացած է Քրիստոսի մարդկութեան հետ ոչ թէ այդպիսի խորհրդաւոր մտքով, այլ էապէս, մարդկութեան մէջ չեղած եղանակով և իրապէս[1]: Քրիստոս կարող է հաշտութեան միջնորդ լինել Աստծու և մարդկանց մէջ միմիայն այն ժամանակ, երբ Ինքն Իր մէջ կատարեալ միութիւնն ունենայ իր մարդկութեան և Աստուածութեան, երբ իր մէջ մարդկութիւնն ու Աստուածութիւնը միացած լինեն, որով և կարողանայ կապել մարդկանց Աստծու հետ: Նա, լինելով մարդկութեան մի անդամը, պէտք է և աստուածային բարձրութիւն ունենայ, որ մեղքից ազատ լինելով՝ տայ մեղաւոր մարդկանց այն ամենն, ինչ որ պէտք է ընդունեն Աստծուց, որ երջանիկ լինեն[2]:

Բայց մարդիկ ամենայն ինչ Աստծուց ստանալու համար պէտք է միանան նրա հետ, ուստի և նրանց ամենայն ինչ տուող Յիսուս պէտք է իրապէս և կատարելապէս միացած լինի Աստծու հետ, իբրև կատարեալ միջնորդ Աստծու և մարդկանց մէջ, իբրև մարդկանց և Աստծու յարաբերութեան հաշտ և կարող կապ: Եւ իբրև այդպիսի կապ, նա պէտք է Աստծու առաջ ներկայացնի

[1] «Կարելի չէր սոսկ Աստծու շարչարելը, կարելի չէր և մեռնելը. արդէն Աստուած եկաւ և մարդ եղաւ և մեռաւ ու փրկեց արարածներիս: Արդ, Նրա նման արարիչ, փրկիչ, պահպանիչ ոչ եղել է, ոչ կայ և ոչ էլ կը լինի, բայց միայն՝ Միակը, Միածինը, Կոյսից ծնւած Աստուածը, որ մարդ եղաւ: Որովհետև մարդկանցից շատերը աստուածածանօթներ, աստուածատեսներ, աստուածախօսներ են, բայց ըստ բնութեան մարդիկ են կոչւում և ոչ Աստուած: Ոմանք մարմնով երկինք բարձրացան, սակայն այնտեղ էլ համաձայն իրենց բնութեան մարդիկ են կամ հրեշտակներ, բայց ոչ թէ Աստուած: Այսպէս էլ Աստծու Բանը երկիր գալով և մարդ լինելով, մեռաւ իբրև մարդ, սակայն ըստ էութեան Աստուած է կոչւում և ոչ մարդ և համաձայն տնօրինութեան Աստուած մարդացաւ և ոչ թէ մարդն աստուածացաւ: Մարդը երկնքում և երկրում նոյնը լինելով միացած է միաւորեալ մարմնով և Աստուածութեամբ» (Մանդ. 212):

[2] «Ով տիեզերքում մահւան իշխանութիւնն էր վերացնում և յարատևող աստուածային կենդանութեամբ բոլորին անխորտակելի կեանք էր պարգևում: Եւ որովհետև մարդկային բնութիւնը խաղաղւում էր մարմնով՝ քանզի այն Աստուածութեան հետ խաղաղւեց առանց անջատւելու Նրանից»: «Ով մարդկանց անհնազանդութիւնը միաւորում է Աստծու Բանի հնազանդութեան հետ և հնազանդւում է աստուածախառն մարմնով բոլորի Հօրը և՝ Ադամի անհնազանդութեան փոխարէն, իսկ համաձայն Աստուածութեան Հօր հետ ընդունում է հրաբան զօրքերի բարեբանութիւնը» (Մամբ. Վերծ. 60, 55):

ամենամաքուր մարդկութիւնն իր բովանդակ ընդունակութեամբ, միևնոյն ժամանակ նոյնն Ինքն իսկ պէտք է հաղորդ լինի մարդկութեանը, այլև՝ աստուածային սիրոյ ճշմարիտ յայտնութիւնը հանդիսանայ: Նա Իրեն պէտք է յայտնի, որովհետև սկզբից իսկ Ինքն է եղել կեանքը, լոյսը և մարդիկ հասու չեն եղել. այն, որին հասու չեն եղել, այժմ պէտք է կատարելապէս յայտնուի ի փրկութիւն: Եւ քանի որ միշտ ամբողջ մարդկութիւնը պէտք է միջոց ունենայ Աստծու հետ ճշմարիտ հաղորդակցութիւն ունենալու, Քրիստոս տալիս է այդ միջնորդութիւնը՝ կատարելապէս միացնելով Իր մէջ մարդկութիւնն ու Աստուածութիւնը: Նա յայտնապէս միջնորդ է Աստծու և մարդկանց մէջ և, իբրև այդպիսի միջնորդ, մարդկութեան Փրկիչն է: Աստծու արքայութեան մէջ ամեն մարդ յարաբերական միութիւն ունի Աստծու հետ, սակայն իւրաքանչիւր հաւատացեալ իր մեղանչական վիճակից ելել և այդ միութեան մէջ է մտել միմիայն այն կատարեալ միութեան միջնորդութեամբ, որ է Քրիստոս[1]: Այդպէս և Աստծու արքայութիւնը կատարեալ միութիւն է Աստծու հետ, սակայն այդ կատարեալ միութիւնը, որին մասնակից է իւրաքանչիւր անդամ, հիմնուում է այն միութեան վէմի վրայ, որի վրայ հաստատուած է մարդկութիւնը և լիապէս յայտնուած Աստուածութիւնը: Աստծու արքայութեան բազմանդամութիւնը միանում է Աստծու հետ Քրիստոսի այն կատարեալ միութեամբ, որով Աստուած իր բոլոր կատարելութեամբ յայտնուում է մարդկային բազմութեանը: Միւս կողմից քանի որ մարդու սկզբնական կոչումն է գոյութեամբ, իր ամբողջ էութեամբ միանալ Աստծու հետ ու Նրա տաճարը դառնալ, Աստուած ինքն է մարմնանում և սկզբնաւորում մարդու կոչման իրագործումը: Հետևաբար Քրիստոս Իր անձով միացնում է Աստծու նպատակը մարդկութեան հետ և Իր միակ միջնորդութեամբ մէկ ճանապարհ հարթում իւրաքանչիւրի համար: Քրիստոսով է աշխարհի փրկութիւնը և Քրիստոսով է աշխարհի վախճանը (Եփես., Ա 10-12), որովհետև Քրիստոս է ամենայն ինչ եղել ու հաստատել (Կող., Ա 15-16), Նա է եկեղեցու գլուխը (18-20) և Նրանով միացած մարմինն «աճում է Աստծու աճումով» (Բ 19):

[1] «Իջաւ աջ Աթոռից, ամփոփուեց, փոքրացաւ և Կոյսից մարմնացաւ, մարդացաւ, անձը նաստացրեց և մարդ լինելով՝ յօժարակամ վիշտ կրեց, մեռաւ ու յարութիւն առաւ և բոլորին հաւասարապէս կենդանացրեց, բարձրացաւ և նստեց Իր բնութեան Աթոռին, Իրեն ծնող Հօր աջ կողմում» (Ս. Ներսէս Մեծի խօսքը. Բուզանդ, էջ 68):

Մարդը տէր է աշխարհի վրայ, և բոլոր արարածները նրանով են մի միութիւն նկատուում ու Նրա առաջնորդութեամբ մշակուում, այդպէս էլ ամբողջ մարդկութեան բազմազանութիւնն ու տարամետ գործունէութիւնը միանում է մի գլխի՝ Քրիստոսի ներքոյ: Մարդը մէկ անդամն է արարածական աշխարհի և իբրև նրա գլուխը՝ միջնորդ է նրա և աստուածային ս. նպատակի մէջ. այդպէս էլ Քրիստոս մարդկութեան մի անդամ է, բայց և ներկայացնելով ամբողջ մարդկութիւնը, Նրա գլուխն է և միջնորդ է մարդկութեան և Աստծու մէջ: Նա մի վէմ է, որի վրայ հաստատուում է ամբողջ մարդկութիւնն Աստծու հետ, Նա մի սանդուղք է, որով մարդիկ բարձրանում են դէպի Աստուած. Նա միջնակէտ է, որի շուրջը շրջանաձև տեղաւորուում են բոլոր անհատները իրենց դիրքով, իրենց այն կոչման մէջ ճշտելու համար, որով լրանում է Աստծու արքայութիւնը: Ուստի և Քրիստոս թէ՛ բոլոր արարածների անդրանիկն է, և թէ՛ բոլոր արարածների գլուխը (Կող., Ա 15, Բ 10, 19), որովհետև նա է Աստուած-Բանի յայտնութիւնը, «որով եղաւ», և նա է աշխարհի միութիւնը, որով պէտք է կատարուի ամենայնի լրումը:

Ահա ուրեմն Քրիստոս ճշմարիտ միջնորդ[1] լինելու համար միացած աստուածամարդ է (Էմմանուէլ=ընդ մեզ Աստուած, Ես., Է 14): Նա արարիչ լինելով՝ միացած է իր արարողի հետ և անփոփոխ մնալով ծնուում է որպէս աստուածամարդ[10*] (Եբր., Բ 14, 17, Գ 15): Նա անփոփոխ լինելով իբրև Աստուած, ինքնամսեայ ժամանակով աճում է, ծնուում է ս. Կոյսից իբրև մարդ և Որդի Աստծու կոչուում (Ղուկ., Ա 35), ըստ որում սուրբ էր, որ պէտք է ծնուէր: Նա Բանն Աստուած է և յայտնուում է իբրև մարդ, ուստի և ասում է՝ «Ես և իմ Հայրը մէկ ենք» (Յովհ., Ժ 30, Ղուկ., ԻԲ 42), բայց երբեք չի ասում՝ «Ես և Բանն Աստուած մէկ ենք», քանզի նրա «ես»-ը վերաբերում է ոչ թէ Բանին միայն կամ մարդկութեանը, այլ դրանց անբաժան միութեանը, այդ պատճառով և ասում է, որ ինքն աշխարհի լոյսն է և

[1] «Հայրենի բնութիւնը միացաւ մարդկային բնութեանը անփոփոխելի միութեամբ: Եւ ծնուեց մի տեսակ Աստուած և մարդ, ինչպէս Տարսոնացի ճրագն (Պողոսն) է ասում. «Մէկ է Աստուած և մէկ է Աստծու և մարդկանց միջնորդը» (Ա Տիմ., Բ 5, Գաղ., Գ 20): «Իսկ միջնորդը մէկ կողմից չէ, այլ երկու կողմերի միութիւնն է, ինչպէս Աբրահամից և Սառայից ծնուած Իսահակը միաբանութեամբ է [եղել]: Այսպէս էլ Սուրբ Հոգուց և Մարիամից ծնուած Քրիստոս մէկ բնութիւն է՝ անբաժանելի և անշփոթ միութեամբ» (Է դարի ժողով., Սեբէոս., էջ 125):

կեանքը և ճշմարտութիւնը և ճանապարհը (Յովհ., Ը 12): Եւ Աստուած լինելով՝ Նա խոնարհուեց, Իր արարածի, Իր ծառայի կերպարանքն առաւ և մարդ դարձաւ (Փիլ. Բ 6-7): Այդպէս խոնարհելով նա յայտնուեց Իր ծառայի կերպարանքով, ըստ որում և սիրոյ թագաւորութեան մէջ Իր մարդեղութեամբ Փրկիչ ու հաշտեցնող է և Տէր ու գլուխ՝ ի փառս Հօր Աստծու (Բ 11), Նա իբրև Աստծու Որդի յաւիտենապէս Աստծու արարչական կամքի և յայտնութեան միջնորդ է և այժմ յայտնւում է իբրև ճշմարիտ միջնորդ սիրոյ և շնորհի արքայութեան համար, ուստի և միացնելով ու իրացնելով մարդկային բնութիւնը՝ սիրոյ թագաւորութեան տէրն է, որովհետև սիրոյ և շնորհների արքայութեան մէջ տէր լինել չի նշանակում բռնակալ լինել, այլ Իր մարդկային կեանքով ապրելով՝ նրա դրութեան մէջ լինել և այդպէս նրա տկարութեան Փրկիչը դառնալ: Այդպիսի կեանքն ինքնին խոնարհում է, ինչը, սակայն, նրա կատարեալ փառքն է, որ աստուածային սիրոյ կատարեալ յայտնութիւնը լինելով՝ իր յանձն առած խոնարհութեամբ բարձրացնում է մարդկանց և Իր աղքատութեամբ նրանց հարստացնում (Բ Կոր., Ը 9): Այդ խոնարհութեամբ իրագործւում է աստուածային սէրը լրիւ կերպով, և երբ նա իրացնում, սեփականում է մարդկութիւնը, Տէր էլ է դառնում իբրև ճշմարիտ սիրոյ իրագործող, որովհետև տէրութիւնը յաղթութեամբ է, իսկ Քրիստոսի յաղթութիւնը կատարւում է աստուածային սիրոյ իրականացմամբ (Ես., ԾԳ 12): Այս պատճառով և Քրիստոսի վերստին առ Հայր գնալն առաւել մեծ փառքով է, քան Նրանով աշխարհի ստեղծելը, քանի որ յաղթութեամբ Իր արքայութեան որդիներին տանում է առ Հայրը (Եբր., Բ 13) այն փառքով, որ ունէր աշխարհից առաջ (Յովհ., ԺԷ 1, 5): Ինքը գնալով առ Հայրը՝ բաց է անում դէպի Աստուած տանող դուռն Իր փրկած մարդկութեան համար և, շնորհների արքայութիւնը, փրկութիւնն ու կատարումն իրագործելով, մնում է նոյնը, ինչպէս միշտ և յաւիտեան (Յովհ., Ը 58, ԺԷ 5): Ուստի և առաքեալը գրում է. «Զեզանից իւրաքանչիւրը թող խորհի այն, ինչ որ կայ Քրիստոս Յիսուսի մէջ, որն Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հաւասար չլինելը յափշտակութիւն չհամարեց, այլ Իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց Ինքն Իրեն՝ հնազանդ լինելով մինչև մահ և այն էլ մահւան՝ Խաչի վրայ: Դրա համար էլ Աստուած նրան առաւել բարձրացրեց և Նրան շնորհեց մի անուն, որ վեր է, քան ամեն անուն, որպէսզի

Յիսուս Քրիստոսի անունով խոնարհի ամեն ծունկ՝ լինի թէ՛ երկնաւորների, թէ՛ երկրաւորների և թէ՛ սանդարամետականների և ամեն լեզու խոստովանի, թէ Յիսուս Քրիստոս Տէր է ի փառս Հայր Աստծու» (Փիլիպ., Բ 5-11):

Այս բոլորից պարզապէս երևում է, որ Քրիստոս մէկ է. Նա Աստուած է և մարդ. Նրա մէջ է կատարեալ Աստուածութիւնը, Նրա մէջ է և կատարեալ մարդկութիւնը. ո՛չ Աստուածութիւնն է գերիշխում մարդկութեան վրայ, և ո՛չ Նրա մարդկութիւնն է ոչնչանում Նրա անսահման Աստուածութեան մէջ, Նրա մէջ յայտնւում է աստուածային իմաստութիւնն ու ամենուրեքութիւնը, Նրանն է երկնքի ու երկրի իշխանութիւնը (Մատթ., ԻԸ 18). Նրան տեսնողը տեսնում է Հայր Աստծուն, Նա Աստուածորդի է և Աստուածամարդ (Յովհ., ԺԴ 9, Մատթ., ԻԸ 18), Նրանով ամենայն ինչ Աստծու արքայութեանն է ծառայում, և Նա է Աստծու ճշմարիտ յայտնութիւնը: Որովհետև Նա կատարեալ Աստուած և կատարեալ մարդ է, ո՛չ Նրա Աստուածութիւնն է Իր մարդեղութեամբ փոխւում կամ սահմանափակւում, և ո՛չ մարդկութիւնն է ոչնչանում աստուածային զօրութեան մէջ, այն նոյնը, որ Աստուած է, նոյնը և մարդ է, անշփոթ, որովհետև Աստուած անշփոթելի է և անբաժան, քանզի մարդեղութեան խորհուրդն Աստուածութեան և մարդկութեան միութիւնն է: Քրիստոս ոչ թէ տաճար է Աստուածութեան, ինչպէս կարող է լինել հաւատացեալը, այլ Նա Ինքն է Աստուած և մարդ. Բանն Աստուած Ինքը մարդացաւ, և մենք մարդացեալ Աստծով բարձրանում ենք դէպի Աստուած. Նա աստուածային սրբութեան, սիրոյ և հեզութեան յայտնութիւնն է մեր մէջ, որով մարդը կատարեալ հաւատքով, հնազանդութեամբ և անձնուիրութեամբ ներկայանում է Աստծուն: Նա երկնքից է և միշտ երկնքում է (Յովհ., Գ 13), որովհետև Աստծուց է ելած (ԺԷ 27), ուստի և ասում է. «Արդ, ոչ ոք երկինք չի ելել, եթէ ոչ Նա, որ իջաւ երկնքից՝ մարդու Որդին, որ երկնքից էր» (Յովհ., Գ 13): «Ես և իմ Հայրը մի ենք» (Ժ 30): Հետևաբար թէ՛ երևութական աղանդով սնուած Եւտիքեան մոլորութիւնը, որ ոչնչացնում է Քրիստոսի մարդկութիւնը և միայն Աստուածութիւնը դաւանում, և թէ՛ Եբիոնեան ծնունդ Նեստորականութիւնը, որ երկուութիւն ձգելով Քրիստոսի մարդկութեան և Աստուածութեան մէջ՝ ջնջում է մարդեղութեան իրողութիւնն ու մի դաշնակցութիւն մտցնում Քրիստոսի Աստուածութեան ու մարդկութեան մէջ, երկուսն էլ հաւասարապէս մեղանչում են

աստուածային փրկագործութեան նպատակի և մարդկութեան փրկութեան հաւատքի դէմ[1]:

Քրիստոս ճշմարիտ միութիւն է Աստուածութեան և մարդկութեան՝ առանց մէկի տուժման և միւսի խախտման. «Եթէ մարմին հագաւ ըստ մէկ մարդու»[2]. «Նրա մարդեղութեան խորհրդի էութիւնը մէկի համրանքով ենք ներկայացնում»: «Միութիւն և ոչ երկութիւն, և այսուհետև որպէս մէկ ենք ճանաչում Աստուածութիւնը, որ աշխարհից առաջ էր, նոյնը է և այսօր»[3]: «Աստծու մարմնացած Բանի մէջ մարմնաւոր բնութեան կամ կամքի կամ ներգործութեան թիւ չմնաց[13*]»,- ասում է Ստեփաննոս Սիւնեցին առ Գերմանոս գրած թղթում նաև Խաչիկ կաթողիկոսն [973-992] է նկատում: «Արդարև, միայն մէկ է միայնակից՝ երկրպագւած մէկի յաւիտենական փառակցութեամբ»: Բարբառում է Ս. Գրիգոր Նարեկացին նմանապէս՝ միութիւնը շեշտելով[4]: Դարձեալ «Ամենակատար էութեանը համասնունդ անանջատ միութիւնը Աստուածութեան փոխթափանցական միախառնութեամբ շնչիս գոյութեան ոգին կազմեց հրաշալի կերպով[5]»: եւ վերջապէս բարձրաբարբառ հնչում է Գրիգոր Մագիստրոսի խօսքը հայր Անանիային յղած թղթում: «Զշփոթելով սակայն մէկ դարձած միակը առնւածի [մարդեղութեան-Յ. Ք.] հետ մահացած [բայց և] յաւէտ կենդանի [Աստուածութեան հետ], և նոյն ինքը լինելով կենդանի՝ առաջին նոյն մահացու բաժակն ընդունեց, քանզի միակն [մէկը=մին] իր անձի մէջ տրոհում չի առաջացնում, որովհետև ստուգութեան պատճառ եղածը չի համարւում՝ ընկնելով թւի [տրամաբանութեան] տակ[14*]»:

[1] «Նրանց, որ մարմնին հաւատացին, ծանուցեց Իր Աստուածութիւնը, և նրանք, որ մարմնով գայթակղեցին, ուրացան Նրա բնութիւնը: Որովհետև մարմնին միաւորեց բնութեամբ և մարմինը խառնեց Աստուածութեան մէջ: Ովքեր հաւատացին Նրան, վայելելու են անպատմելի բարիք, իսկ ովքեր վրիպեցին այս հաւատքից՝ օտար և անընտել ընթացքով զարտուղի գնացին, իրենց ցանկապատեցին անկարկատ խրամատով և շատերին շեղեցին ճշմարիտ հաւատքից: Կարծեցին, թէ մի բան գտան, բայց ոչինչ չգտան: Որովհետև աշխատանքի նպատակը գտնելն է, իսկ առանց գտնելու աշխատանքը, որ սուտ վարդապետութիւն է, կռապաշտութեան է հասցնում» (Ագաթ. 215):
[2] Եղիշէ, էջ 318:
[3] Ս. Հայրեր. Եղիշէ, էջ 30:
[4] Նարեկ, Բան ԼԴ:
[5] Նարեկ Բան ՀԵ:

Արդ, փրկագործութեան հիմնաքարը Քրիստոսի միութիւնն է: Մարդկային բնութիւնը հրապուրելով՝ օտարացել էր, մոլորւել դէպի չարը և ապականւել. Աստուածութեան և մարդկութեան միութեամբ Քրիստոս սրբեց այդ բնութիւնը և գերահրաշ հնազանդութիւն բխեց այդ միութիւնից: Մարդկային կամքի մէջ չարահակ ընթացք է սպրդել: Քրիստոս միացրեց այդ կամքն իր կամքի հետ և ճշմարիտ կամքի ուղղութիւնը հաստատեց: Մարդկային հոգին ու միտքը բռնւել էր մեղքի մէջ և աշխարհին ստորադրւել՝ կորցնելով իր ինքնագիտակցութիւնն ու ճանաչողութիւնը. Քրիստոս միացրեց այդ միտքն ու հոգին Իր Աստուածութեան հետ և ճշմարիտ ինքնագիտակցութիւն, աստուածճանաչութիւն և աշխարհաճանաչութիւն իրականացրեց: Ընկել էր մեղանչած մարդը, ապականացու էր նրա կամքն ու ներգործութիւնն Իր կոչման մէջ և «Ինքն իր անձին չէր կարող սատար լինել»: Քրիստոս խոնարհւեց, միացրեց ընկած մարդկութեան խոնարհութիւնն իր բարձրութեան հետ և մարդկային կոչման համաձայն՝ ներգործութիւնը զօրացրեց: Նա խոնարհւեց, մարդը բարձրացաւ[1]. Նա մեղանչական մարդու կերպարանք առաւ և մեղսաթաւալ մարդկութիւնը սրբեց. Աստուած մարդացաւ և մարդն աստուածացաւ[11*]. Նա անմեղ էր, մեղքի մէջ մտաւ և մեղքը վերացրեց: Մարդու մեղքի հետևանքն էր ապականութիւնը. Քրիստոս մտաւ մեղքի և ապականութեան մէջ և անմեղ և անապական դարձրեց. «Որովհետև ապականութիւնը մեղքի ծնունդ է, ով մեղք չգործեց, նրան չտիրեց և ապականութիւնը»: «Աստուած իր Որդուն ուղարկեց մարմնի մեղքի նմանութեամբ և յանուն մեղքի դատապարտեց մեղքն այդ մարմնում»[2]:

Քրիստոսի մէջ է ճշմարիտ մարդու իրագործումը, Նրա մէջ է իսկական կամքը, իսկական բնութիւնը և իսկական ներգործութիւնը, որոնցով պէտք է Աստծու որդիներ լինենք: Նրա բոլոր գործունէութիւնը բխում է միացեալ

[1] «Որդին մեր բնութեանը նմանւելով և Իր բնութեամբ քաւարանը լինելով մեր բնութեան, ազատելով մեր բնութիւնը տանջանքներից՝ մի մահւամբ զանազան մահերի կնիքը դրեց և գրի շնորհին յաջորդեց Հոգին, և Ինքը՝ Բանը, եղաւ ամեն ինչ ամեն ինչի մէջ: Հողեղէններիս հետ հողեղէն, օրէնքը ճոխացնող, գիրը վերացնող, ոգին քննող, աններևոյթ Հօր պատկերը, բոլոր մարդկանց զօրութիւնը և իմաստութիւնը, բոլորի արարիչը, փակւած դրախտի բացողը, դէպ Հայրը տանող վերագնաց ճանապարհ, երկրորդ երկինք մտնողների երկրորդ դուռը...» (Սահակ Կաթող. Զորափորեցի, Ճառ, էջ 188)
[2] Հռ., Ը 3, Եբր., Դ 15, Ընդհ. 139, 140, 328, 330, 341:

բնութիւնից և ոչ թէ նա Իր Աստուածութեամբ բռնանում է մարդկութեան վրայ և ճշմարիտ գործ վարում[1]: Նրա կամեցողութիւնն իրականանում է միացեալ կամքից և ոչ թէ Նա Իր Աստուածութեամբ ճնշում է Իր մարդկութեան կամեցողութիւնը[2]: Այսպիսով նա բարձրացնում է մարդուն: Իսկ եթէ նա երկու բնութիւն ունենար, բռնութեամբ պէտք է ետ մղէր մարդկայինը, այլև տիրաբար պէտք է հնազանդեցնէր մարդկային կամքը, եթէ երկու կամք ունենար: Եւ եթէ երկու անձն ունենար, տարբեր գիտակցութիւնների խռովութիւնը պէտք է կրէր: Այսպիսի երկուութիւններով փրկագործութիւն չէր լինի[3], որովհետև նոյն բռնութեամբ, նոյն ճնշմամբ և նոյն խռովութեամբ կարելի էր նաև առանց մարդեղութեան վարել մարդկանց դէպի մի նպատակ, իսկ այդ հակառակ է ազատ կամքի Արարչի տնօրինութեանը: Մարդկութեան փրկութիւնն ու բարձրացումը միմիայն Քրիստոսի Աստուածութեան ու մարդկութեան միութեամբ է իրականանում: Ուստի և Հայաստանեայց ս. Եկեղեցին, ընդդէմ բոլոր մոլորութիւնների, դաւանում է ընդարձակ Հաւատամքի մէջ[12*]. «Կատարեալ Աստուած եղաւ կատարեալ մարդ՝ հոգով, մտքով և մարմնով մի անձ, մի դէմք և միաւորուած մի բնութիւն՝ Աստուած մարդացեալ առանց փոփոխման և առանց այլայլութեան» (յօդուած 6)[4]:

---

[1] Ընդհան., էջ 171, 321:

[2] «Յիսուս կցորդ եղաւ նրանց սգին, որպէսզի մարդիկ մխիթարեն Աստծով: Կամ մռնչեց սատանայի վրայ, ինչպէս առիւծն իր որսի վրայ, որովհետև նրա վրայ ստուգապէս անկարող էին տրտմական բաները, ինչպէս մեզ յաղթահարում են մարմնի շարժումները: Քանի որ աստուածային բնութիւնն անարատ է և անտրտում է, ուստի խռովքը նշանակում է, թէ կարգադրեց տրտմութեանը գալ և կամաւորաբար արտասուք բխել: Ցոյց է տալիս, թէ երբ կամենում էր, դրանք իջեցնում էր մինչև բնական կրքերը: Ցայտնելով ճշմարիտ մարդեղութիւնը, որովհետև թէպէտ Աստուած միացաւ մարմնի հետ, բայց թոյլ չտուեց, որ մարմինը շարժի բնական կրքերով, սակայն երբ թոյլ էր տալիս իջնում էր մինչ կերակուրը, ըմպելիքը և քունը, իսկ երբ կամենում էր, յաղթահարում էր բնութիւնից գերիվերոյ բաները, Ինքն իրեն պահում էր աստուածային բնութեամբ» (Մամբրէ Վերծ. 47):

[3] «Աստծու Բանը երկիր գալով մարդ եղաւ և մեռաւ իբրև մարդ, բայց ըստ էութեան Աստուած է կոչւում և ոչ մարդ, և ըստ տեսչութեան մարդացած Աստուած է, և ոչ թէ աստուածացած մարդ: Երկնքում և երկրում մարդ՝ նոյն ինքն միաւորուած լինելով մարմնով և Աստուածութեամբ, սուրբ Կոյսից ծնւած Հօր կամքով [Հօր] միտքն ու խօսքը, որ Հօր կամքով սկզբից ստեղծեց ամենայն ինչ և վերջում երևաց մարդկանց լինելով երկնքի և երկրի Տէրն ու տեսուչը» (Մանդ. 213):

[4] Տե՛ս և Ընդհան. 170-172, 119-124, 129-137, 175, Ագաթ. 220-224, Պօղ. Տար., էջ 26, Ղազար Ճահկեցի 88-282:

Ի

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏԻԱԾՄԱՐԴԿԱՑԻՆ ԿԵԱՆՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Իսկ գերազանցեց և սքանչելի միաւորութեան համար ոչինչ արգելք չեղաւ միութեանը՝ բոլորին Քրիստոսի մէջ խոստովանել մէկ դէմք, մէկ անձ և մէկ բնութիւն, որովհետև Հօրից դուրս եկած անմարմին Բանը սուրբ Կոյս Մարիամից, այսինքն՝ մեր մարդկային բնութիւնից մարմին հագաւ և նոյնը միաւորելով Իր դէմքին և բնութեանը մէկ դէմք և մէկ բնութիւն անեանեց մարմնի հետ միասին» (Ս. Յովհ. Իմաստասէր, Ճառ 51):

«Մենք՝ հայաստանցիներս, աներկբայօրէն և ճշմարիտ խոստովանութեամբ հաւատացինք Քրիստոսին՝ իբրև մէկ բնութիւն և հաստատեցինք մէկ ճշմարիտ հաւատքի վրայ և կանք անպարտելի և անսասանելի ամեն տեսակ հերձուածողների [հանդէպ] և սուրբ ու անբիծ հաւատքով բարձրացած են Քրիստոս Յիսուսի մէջ» (Պօղ. Տար. 40, 76):

«Այս ճշմարիտ և պատուական հիմքի վրայ կառուցեց մեր եկեղեցին և հաստատ մնաց մինչև մեր ժամանակները՝ չունենալով ոչ արատ և ոչ սպի և չհալածելով խղճից և հիւանդութիւնների [պատճառով] ախտերի մէջ ընկնելով և անզգայ դառնալով» (Գրիգոր Գ կաթող., տե՛ս Արարատ, 1892, դեկտ.)[15*]:

«Եւ արդ, ընդարձակ խօսքերով ասենք մեր դաւանութիւնը, ըստ որում Քրիստոսի համար ասենք, որ մէկ բնութիւն ունի, ինչը և բոլորին յայտնի է»: «Արդ, մեզ համար թող օրինակ լինի մարդը, ինչպէս սրա վերաբերեալ ասում ենք, թէ ինչ որ պատշաճ է՝ մարմնինն է և ինչ որ [պատշաճ է] հոգունն է, բայց մարմնի համար չի ասում, թէ երկու բնութիւն, այլ մէկ: Իսկ եթէ մէկը հակառակելով ասի, թէ՝ Քրիստոս երկու բնութիւն ունի, ապա երեքը կը հաստատի՝ երկուսը մարդկային և մէկը՝ աստուածային» (Սահակ վրդ. Մռուտ հրամանաւ Աշոտ իշխանաց իշխանի)[16*]:

«Անճառելիօրէն և անփոխարկաբար Մարիամից մարմնացած Որդին, նոյն Ինքը ճշմարիտ Աստուած և կատարեալ մարդ, ցոյց տալով Աստուածութեան զօրութիւնը իբրև Աստուած մարդկային բաները որպէս մարդ կրելով առանց մեղքի մէկ բնութեամբ» (Խոսր. Անձ. Մեկն. ժամ. 15, 32):«Մնաց Միածինն մի Որդի, մի անձ, մի Քրիստոս, և ճշմարտապէս երկուսը միացած մէկ բնութեան մէջ, մէկ կամք, մէկ ախորժակ, մէկ գործ, մէկ ծնունդ կուսութեամբ, մէկ մայր առանց Հօր, որը և յաւիտենականութիւնից առաջ ծնւած առանց մօր» (Դաւանութ. տե՛ս Կիր. 190)[17*]:

«Ահա սրանք են Բանի և մարմնի բնութիւնների միաւորութեան եղական գոյի հետ անեղ էութեան անքակտելի ձուլման [պայմանները]՝ լինելու համար մի էութիւն, մի դէմք, մի բնութիւն, որի կամքը, կիրքը և գործը նմանապէս մի է, որովհետև մի բնութիւնը չունի զանազան կամք, այն էլ հակառակ միմեանց, մէկն անխախտ և աստուածային և միւսը ախտաւոր և մարդկային. քաւ լիցի, որովհետև սա անկարելի է, որ լինի, այլ՝ մի կամք, մի գործ, որովհետև երբ կամենում էր՝ խոնարհութեամբ թոյլ էր տալիս բնութեանը կրել մարմնական բաները, որպէսզի առաչոք (կեղակարծ) չթւայ մարդեղութիւնը և չունայնանայ Բանը...» (Ստեփ. Օրբէլեան, Ջեռնարկ հաւատքի):

«Այլ մեզ համար մի է մեր Տէր Յիսուս Քրիստոս, համաձայն առաքելի՝ Աստուած և մարդ՝ երկուսը միացած և միութիւնից յետոյ ոչ երկու, այլ՝ խոստովանութեամբ մէկ՝ առանց ապականութեան. մէկ Որդի և մէկ բնութիւն և մէկ կամք և մէկ ներգործութիւն՝ փառաւորած Հօր և Սուրբ Հոգու հետ յաւիտեանս. Ամէն» (Մովսէս վրդ. Երզնկացի, (+ 1323), տե՛ս նաև իմ Հայաստանեայց եկեղեցին և Բիւզանդական ժողովոց պարագայք, Մոսկւա, 1892, էջ 90-226):

Քրիստոսի մարդեղութեամբ սկսում է և Նրա աստուածմարդկային կեանքը, և որովհետև Նա Աստուածութեան ու մարդկութեան միութիւն է, ուստի և թէ մարմնանալը և թէ ծնունդը հրաշալիք է և միանգամայն մարդկային: Հրաշալիք է և մարդկային այն պատճառով, որ Քրիստոս նոր մարդկութեան նախամարդն է, որի մէջ պէտք է անհետացած լինի մեղքն ու նրա յիշատակը և միևնոյն ժամանակ մարդկութիւնը պէտք է նրա մէջ ներկայանար, և ուրեմն Քրիստոս պէտք է մարդկային ծնունդ լինէր և ոչ թէ մի նորաստեղծ մարմին առնէր[1]: Պարզ է, որ նա մի նորութիւն պէտք է լինէր մարդկային սերունդի մէջ և միանգամայն մարդկային սերունդից՝ Դաւթի ցեղից (Եբր., Է 3, Յովհ., Է 42, Հռ., Ա 3): Այս նշանակում է, որ մեղանչական մարդկութիւնն իր կամքով ու գործունէութեամբ չպէտք է մասնակցէր Քրիստոսի մարդեղութեան խորհրդին, այլ միայն ընդունող պէտք է լինէր աստուածային այդ մեծ շնորհներն յանձին խոնարհ սուրբ Կոյսի: Այդ պատճառով Քրիստոս, ինչպէս տեսանք, ծնւում է ոչ մարդու և ոչ մարմնական կամքով, այլ Ս. Հոգով, աստուածային տնօրինական կամքով, ինչպէս դաւանում ենք Հաւատամքում: Ըստ որում ընտրեալ ազգից ընտրւում է Մարիամ ս. Կոյսը, որովհետև Աստծու փրկութիւնն ընդունելու համար ընտրեց այդ ազգը և նախապատրաստեց, այնպէս որ նրա նախապատրաստութեան լրումը եղաւ Մարիամ ս. Կոյսը: Տիրամայրը ամբողջ մարդկութեան համար օրինակելի պատրաստակամութեամբ և լիակատար անձնուիրութեամբ Աստուածորդու ընդունարանը դարձաւ: Նրա մէջ ներկայանում է Իսրայէլի և ամբողջ մարդկութեան հաւատքն ու փրկութեան ակնկալութիւնն Աստծու առաջ և նրանով Աստուածորդին մտնում է մարմնաւոր կեանքի մէջ՝ Իր շնորհները տալու համար: Այսպէս Քրիստոս դառնում է Նոր-Ադամ նոր մարդկութեան համար և կատարեալ աստուածամարդ է հակառակ կարծական (երևութական) և Եբիոնեան աղանդների, որոնց մէկի մէջ տիրապետող է աստուածային կամքը, հրաշքը, իսկ միւսի մէջ մարդկային մեղանչական կամքը:

Այսպիսի ծննդեան հետևանքն էլ այն է, որ Քրիստոս կատարելապէս ազատ է մեղքից (Յովհ., Ը 46, Եբր., Դ 15), որովհետև եթէ մեղք ունենար, կը վնասէր նրա աստուածային սրբութիւնը, մինչեռ մեղք չունենալով ներկայացնում է

[1] «Մեր բնութեանը հաղորդ արարչական միաւորութեամբ մարմնապէս երևաց մեր տեսակի մէջ» (Մամբրէ Վերծ., էջ 59):

այն կատարելատիպը[1], որ իսկական միջնորդ է Աստծու և մարդու մէջ և իսկական չափօրինակ մարդու համար: Եւ եթէ համեմատենք ընկած մարդուն Քրիստոսի հետ, կը տեսնենք, որ մեղանչական մարդու մէջ գերակշռում է աշխարհայինը և աշխարհային գիտակցութիւնը սրբութեան, աստուածճանաչութեան և ինքնաճանաչութեան հանդէպ, մինչդեռ Քրիստոսի մէջ աշխարհայինը և աշխարհային գիտակցութիւնն անկարող են գերագահ լինել[2]. այնպէս որ Քրիստոս կատարեալ միութիւն է պահպանում Հօր Աստծու հետ: Լինելով աշխարհում և գիտակցելով աշխարհը՝ ոչ թէ ենթարկւում է աշխարհին, այլ մի լինելով Հօր հետ՝ գիտէ, որ Ինքն աշխարհի Փրկիչն է: Ուստի և մեղքը, որ աշխարհի գերիշխանութեան և աշխարհային գիտակցութեան հետևանքն է և կանոնաւոր ընթացքի ու զարգացման խափանիչը, միշտ օտար էր Քրիստոսին: Քրիստոսի աճումը իր ամբողջ կեանքում սուրբ էր և կանոնաւոր, աշխարհային ոչ մի միակողմանի ազդեցութիւն չէր կարող նրա ինքնագիտակցութեան և աստուածային կոչման վրայ շեղիչ կամ խանգարիչ ներգործութիւն ունենալ (Ղուկ., Բ 52, Ա 80): Այս առանձնապէս շեշտում է աւետարանիչն ասելով. «Մանուկն աճում և զօրանում էր հոգով»: Եւ այդ ինքնագիտակցութիւնն ու սրբութիւնը միշտ կենդանի էր Նրա մէջ, ինչպէս տեսնում ենք Նրա տասներկու տարեկան հասակից իսկ (Ղուկ., Բ 40, 46-49), ընտրեալ շրջանում պայծառացած: Կատարեալ լինելով իբրև Աստուած, բնական կատարելութեան համար աճում էր իբրև մարդ (Եբր., Ե 8), որովհետև կցորդ էր մեր մարմնին Իր մարմնի նմանութեամբ, նաև՝ մարմնաւոր կատարելութեամբ, անշուշտ (Հռ., Ը 3, Եբր., Բ 14, Սաղմ., ԽԴ 3): Մեղքը Նրա վրայ չկարողացաւ տիրել, որովհետև նա յաղթող եղաւ աշխարհի փորձութիւնների մէջ՝ հակառակ ադամային փորձութիւնների պարտութեան (Ես., ԽԲ 1-4, Եբր., Դ 15): Նրա փորձութիւնը մասնաւոր փորձութիւն չէր, այլ

[1] «Սկզբից, երբ Աստուած ստեղծում էր արարածներին, վերջում ստեղծեց մարդուն՝ նրա մէջ ժողովելով իր տեսանելի և անտեսանելի զօրութիւնները: Եւ այսպէս բոլոր կարողութիւնները հաստատելով՝ ձուլեց արարածներիս, որ ստեղծեց իր պատկերի կերպարանքի նմանութեամբ, և նրան դարձրեց իր կամքի վրայ անձնիշխան տէր: Բայց սատանայի նախանձի պատճառով (մարդու կամքը) ապականելով հնացաւ բանսարկու խարդախութեան պատրանքներով: Իսկ Տէրն ի խնդիր կորստեան մատնուածի մարդու կերպարանքով խաղաղութիւն հաստատի երկնքում և երկրում և իրեն ծնող Հօրը հաշտեցնի Իր արարածների հետ, որպէսզի մերժուած արարածները կանգնեն աներևոյթ Աստծու առջև» (Ս. Ներսէս Մեծի խօսքը., Բուզանդ, էջ 70):

[2] Մատթ., ԺԱ 29, Յովհ., ԺԳ 15, Ա Պետր., Բ31:

հիմնական կեղծ մեղսականութեամբ պարուրված սատանայի փորձութիւն. ուրեմն Քրիստոս լիակատար չարիքի դէմ պէտք է յաղթող դուրս գար (Մատթ., Դ 1-11): Եւ Քրիստոս միշտ յաղթող էր իր երկրաւոր կեանքի ընթացքում փորձիչ հակառակորդի նկատմամբ (Ղուկ., Դ 13): Այս փորձութեան սկզբունքն էլ այն է, որ Քրիստոս ադամորդու նման աշխարհային փորձութիւնների կեանք ունէր, կուում էր ամեն տեսակ թշնամիների դէմ և Իր Փրկչական ինքնագիտակցութիւնը չէր կորցնում, այլև ըստ մարդկային և աստուածային ազատ կամքի ընտրում է ճշմարիտը և ոչ հրապուրիչը: Ըստ այսմ Քրիստոս սիրոյ կատարեալ միութիւն պահելով մարդկութեան հետ՝ իրագործում է հակառակ բոլոր թշնամութիւնների Իր բարձր կոչումը, այն է՝ Աստծու և մարդու միջնորդութիւնը: Ամենամեծն էր Նրա մաքառումը և ամենափառաւորը՝ Նրա յաղթութիւնը, որովհետև Նա ոչ միայն իբրև Աստուած կուեց խաւարի զօրացող իշխանութեան դէմ, այլև՝ աճելով իբրև Աստուածամարդ, հնազանդելով չարչարանքներին ու Իր դէմ հրահրուած թշնամութիւնների նկատմամբ տարած յաղթանակը խաչի վրայ միայնակ պսակելով (Եբր., Ե 8-9)[1]: Այս մի աքանչելի խորհուրդ է, որ մարդկային ազատութեան ընթացքով, Քրիստոսի միացած կամքը մարդապէս յաղթող է հանդիսանում և ոչ թէ ըստ երկակամեաց՝ մարդկային կամքով, բայց աստուածային կամքի բնութեամբ[18*]:

Արդ, ուրեմն Քրիստոս Իր երկրաւոր կեանքի ժամանակ խոնարհութեան մէջ է եղել (Մատթ., ԺԹ 17), բայց առանց մեղքի. թէև Հօր հետ էապէս մէկ էր, սակայն Նրա կեանքը պատմական էր և կուում էր հակառակութեան դէմ: Նա պատմական կեանքով խոնարհութեան մէջ էր, որի իրականացմամբ ու յաղթութեամբ փառքի բարձրացաւ, նստելով Հօր աջ կողմն իբրև գլուխ Իր եկեղեցու (Փիլ., Բ 8-9): Եւ Նրան Իր իսկական փառքի մէջ տեսնելու ենք Նրա երկրորդ գալստեամբ (Ա Յովհ., Գ 2, Ընդհ. 176): Սակայն Նրա կեանքի խոնարհութիւնը ևս մարդկային չէ, այլ աստուածմարդկային. նա խոնարհ էր, ինչպէս մարդ, բայց հրաշք էր գործում, ինչպէս Աստուած. շրջում էր ինչպէս մարդ,

[1] «Մարդկանց [պարագային] մեռելներից է նեխահոտ գալիս, իսկ Աստծու՝ մեղաւորից: Բովանդակ աշխարհն ընդհանրապէս նեխած էր, [սակայն Քրիստոս] չգարշեց և Իր երեսը չդարձրեց և ոչ մէկից, այլ Իր անուշահոտութեամբ համեմեց բոլորին: Մշակը նեխած հոտ չունի նեխած սերմի պատճառով, այլ իր միտքը լի է խնդութեամբ, եթէ զմայլւելու է անդաստանների հոտով» (Մամբրէ Վերծ. 27):

պայծառակերպւում ինչպէս Աստուած, Նա հակառակութեան էր պատահում, իբրև մարդ, մէկ խօսքով հիւանդ էր առողջացնում, ինչպէս Աստուած: Քաղցում էր որպէս մարդ, բիւրաւորների կերակրում, ինչպէս Աստուած, ննջում նաւի վրայ որպէս մարդ, սաստում ծովը, ինչպէս Աստուած, քացախ ճաշակում ինչպէս մարդ, ջուրը գինի դարձնում որպէս Աստուած. ծաղրւում խաչի վրայ ու մեռնում, որպէս մարդ, Ղազարոսին և այլոց յարութիւն տալիս որպէս Աստուած[1]: Սակայն թէ՛ մարդկային և թէ՛ աստուածային բոլոր գործերը նա կատարեց խոնարհութեամբ և ոչ աստուածային բարձրութեամբ, ուստի և մարդկանցից ոմանց համար պատճառ դարձաւ գլորման և ոմանց՝ կանգնելու (Մարկ., Զ 3, Ղուկ., Բ 34): Մարդուն է մնում ազատապէս հաւատալ նրան ու փրկւել: Նա ոչ թէ բռնութեամբ գործեց, այլ քաղցրութեամբ ու հեզութեամբ, ուստի և իր ճշմարտութիւնն ու փրկութիւնը տալիս է մարդկանց ոչ թէ ուժով ու սաստելով, այլ միայն հաւատքով: Փառքն ու խոնարհութիւնն էլ իրար դիմաց պէտք է լինեն, որ մարդու հաւատքն ունենայ իր արժէքը և ազատ ընտրութեամբ իւրացնի փրկութիւնը: Ըստ այսմ մէկը գայթակղւում է Քրիստոսի արտասուքով, իսկ միւսը հաւատքով զօրանում է, երբ տեսնում է, որ նոյն Քրիստոս յարութիւն տալով Ղազարոսին՝ սրբում է նրա քոյրերի արտասուքն ու մխիթարում: Այսպիսի հակադրութեան դրոշմ է կրում Քրիստոսի կեանքի ամեն մի դրւագը մինչև խաչի վրայ վերջին վայրկեանը, երբ համբերութեամբ ու սրբութեամբ ամեն տնօրինութիւն իրագործելուց յետոյ բացականչեց. «Ամենայն ինչ կատարեալ է». և նոյնիսկ այդ վայրկեանում չարչարանքների մէջ կատարած հրաշքներով ցոյց տւեց, որ Ինքը տէր է բնութեան վրայ: Եւ ահա հառնելով ու համբառնալով բարձրացրեց Իր հետ մարդկութիւնն աստուածային փառքի մէջ, որով վերստին պէտք է իշխանաբար գայ աշխարհը դատելու համար (Ղուկ., ԻԱ 27):

Այսպէս, Քրիստոս իբրև Աստուածամարդ ծնւեց, իբրև Աստուածամարդ աճեց ու զարգացաւ, իբրև Աստուածամարդ կատարեց աստուածային տնօրինութիւններ և

[1] «Արդ, Միածինը հաւասարապէս նստեց երկնքում քերովբէների վրայ, երկրում՝ կենդանիների մէջքին. այնտեղ արարչաբար և համապատիւ կերպով, այստեղ՝ մեզ նման, աստուածացած կերպով և Հօրից ու բովանդակ Երրորդութիւնից առանց անջատւելու՝ առանց զատւելու երկրից»: Այնտեղ իմանալի տեսութեամբ և բովանդակ աստուածութեամբ երևում է սերովբէներին, այստեղ շօշափւում է զգալի բնութեամբ, և ամեն ինչ է ամեն ինչում և լցնում է բովանդակ շրջակայ ոլորտը և երկինքը չափում թզով ու երկիրը քիլով» (Մամբրէ Վերծ. 63, 71, Հմմտ., Ընդհ. 173-175):

իբրև Աստուածամարդ մեռաւ ու յարութիւն առաւ. Նա իբրև Աստուածամարդ պէտք է գայ երկրորդ անգամ: Նրա մարդկութեամբ խոնարհեցաւ է Աստուածութիւնն և Աստուածութեամբ բարձրացաւ է մարդկութիւնը. ըստ որում Նրա մարդկութեամբ գայթակղողը կընկնի, իսկ աստուածութեանը հաւատացողը կը բարձրանայ (Ղուկ., Բ 34): Քրիստոնէութեան հիմքն ու էութիւնը կազմում է այս ճշմարտութիւնը, որ Քրիստոս է Աստծու մարդացեալ Որդին: Առանց այս հաւատքի չի կարող քրիստոնէական եկեղեցի լինել, և եթէ մի համայնք կարծում է քրիստոնեայ լինել՝ ճանաչելով Քրիստոսին լոկ իբրև մեծ հանճար, նա աղանդ է և ոչ եկեղեցի: Առանց այս հաւատքի չի կարող մարդ քրիստոնեայ լինել և Աստծու կենդանի տաճար դառնալ, և եթէ մէկը մարմնական դատողութիւնների ենթարկելով՝ կարծում է նաև առանց այդ հիմնական հաւատքին քրիստոնեայ համարուած լինել, սխալւում է, նա աղանդաւոր է և ոչ քրիստոնեայ: Չկայ ոչ ճշմարտութիւն, ոչ ճշմարիտ հաղորդակցութիւն Աստծու հետ և ոչ ճշմարիտ բարոյականութիւն առանց այդ հաւատքի, որ Քրիստոս Աստուածամարդ է (Մատթ., ԺԶ 16, Յովհ., Թ 28): Ուստի և առաքեալն ասում է դիպուկ կերպով. «Ով չի խոստովանում Յիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, նա մոլորեցնող է և նեռ» (Բ Յովհ., Ա 7, Ա Յովհ., Դ 2-3, Գաղ., Դ 4): Ըստ որում և Պօղոս առաքեալը գրում է. «Ոչ ոք չի կարող ասել «Յիսուս Տէր է», եթէ ոչ՝ Սուրբ Հոգով» (Ա Կոր., ԺԲ 3, Հռ., Ը 16, Ա Յովհ., Դ 13, Ե 6): Այս է, որ Քրիստոս էլ ասում է. «Ոչ ոք չի կարող գալ ինձ մօտ, եթէ այդ իմ Հօրից տրուած չէ նրան» (Յովհ., Զ 65, ԺԵ 26): Հետևաբար այդպիսիների համար դեռևս անհրաժեշտ է նախապատրաստութիւն (Հմմտ. վերը. գլ. ԺԷ), հուգու տեսողութեան ու լսողութեան բացում և մղում դէպի Աստուած՝ լիապէս լուսաւորուելու համար (Սաղմ., ՃԽԴ 18, Գործք., ԺԷ 27, Ես., ԾԵ 6):

ԻԱ

ՔՐԻՍՏՈՍԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Քրիստոս եկած լինելով մեղանչական մարդու փրկութեան համար, բնականաբար ոչ միայն հաշտութեան միջնորդ պէտք է լինէր Աստծու և մարդու

միջև, այլև մի նոր յարաբերութիւն ու նոր ուխտ պէտք է հաստատէր նրանց մէջ: Եւ որպէսզի շեղուած և ընկած մարդկութեան մոլար ու խոտոր զարգացումը վերացնելով՝ քաւէր մեղքերից ու նոր զարգացման սկիզբ դնէր, պէտք է նրանց մէջ հաստատէր ճշմարիտ աստուածաճանաչութիւն և վայելուչ կեանք: Այս վեհ նպատակն ու միջնորդութիւնը Քրիստոս իրագործեց Իր եռակի, այն է՝ մարգարէական, քահանայապետական և թագաւորական պաշտօնով, որովհետև ինչպէս մարդը եռակի կոչում ունի՝ մարգարէաբար ճանաչելու աստուածային մտքերն ու գործերը, քահանայաբար մեր կեանքն Աստծուն նուիրելու և թագաւորաբար աշխարհը տիրելու, այնպէս էլ Իսրայէլն իր նախատիպ կեանքի նախապատրաստական ընթացքում եռակի նախապատկեր է ներկայացնում իր մարգարէութեամբ, քահանայութեամբ և թագաւորութեամբ, որոնք միջնորդութեան պաշտօններ էին Աստծու և ընտրեալ ժողովրդի մէջ: Եւ ահա ինչպէս մեր մեղքով ընկաւ մեր կոչումը և Իսրայէլի պատմութիւնը նախատիպ դարձաւ իր հիմնական կէտերով, Քրիստոս այդ երեք պաշտօններով վերականգնում է մարդու կոչումը և տալիս է այն ամենը՝ լրիւ ու կատարեալ, ինչ որ դրանք պէտք է տային միմիայն իբրև նախատիպ ու նախապատրաստութիւն: Թէ մեր կոչումն ու թէ իսրայէլացիների նախապատրաստութիւնը գտել է իր իրականացումն ու կատարումը Քրիստոսի մէջ. Նա է ճշմարիտ Մարգարէն, իսկական Քահանայապետը և յաւիտենական Թագաւորը: Ինչպէս որ Հին Ուխտում մարգարէն երևան էր գալիս ճշմարտութիւնը վկայելու, քահանայապետը զոհաբերում էր ժողովրդի մեղքերի քաւութեան համար և թագաւորը դատում, պաշտպանում և պահում էր Աստծու ժողովուրդը, այդպէս և միջնորդութեան այդ երեք մեծ պաշտօնները լրանում և իրենց իսկական լրումն են ստանում Քրիստոսի՝ իբրև ճշմարիտ Օծեալի մէջ: Նա իբրև ճշմարտութիւն Նոր Ուխտ է հաստատում Աստծու և ժողովրդի միջև, իբրև հաշտութեան աքանչելի զոհ՝ վերջնականապէս քաւում է ժողովրդի մեղքը և հաշտեցնում Աստծու հետ, և իբրև յաւիտենական Թագաւոր հաստատում է Իր անպարտելի ու յաղթական թագաւորութիւնը: Այդ է արտայայտում և Նրա Քրիստոս անունը, որովհետև Քրիստոս նշանակում է Օծեալ և օծւում էին մարգարէները, քահանայապետները և թագաւորները (Ղևտ., Դ 65, 16, Ա Թագ., Ժ 1, Գ Թագ., ԺԹ 16, Ա Թագ., ԻԴ 7, 11, Սաղմ., Բ 2):

Քրիստոսի գործունէութեան խորհուրդն ամփոփ արտայայտւում է մի կարճ շարականում[1]:

Տէր, Քո ողորմութեամբ աշխարհ իջար
Եւ մեր մեռած բնութիւնը կեանքի փոխարկեցիր
Տէր, Քո մօտ փառքով երկինք բարձրացար
Եւ առաքեալներին իբրև մխիթարիչ Սուրբ Հոգին ուղարկեցիր
Տէր, այսօր բացեցիր Քո երկնային գանձդ
Եւ իմ աղքատ բնութեանը բաշխեցիր առատ պարգևներ:

ԻԲ

1. ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԸ

Մարգարէի առաջին գործը քարոզութիւնն է, խօսքն է, որով նա ոչ թէ մի տրուած բան, մի պատրաստի յայտնութիւն է ուսուցանում, այլ նոր բան է տալիս, նոր յայտնութիւն ծանուցանում, որով իր չար ժամանակի ու խոտոր պատմութեան վրայ Աստծու դատաստանն է հրապարակում, ճշմարիտ ճանապարհը ցոյց տալիս և ժամանակն ուղղում: Նա կանգնում է դէպի սխալ նպատակ վազող ժողովրդի առաջ, զարթեցնում է նրա մտքերը, ուշադրութեան է հրաւիրում, մոլորութեան վրայ անհազանգ է հնչեցնում և յայտնում Աստծու տնօրինութեան կատարումը: Այս նպատակով ժողովրդին համոզելու համար մատնացոյց է անում այն անցեալ իրողութիւնները, որոնք իրագործել են իր ժամանակ և ապագայի նկատմամբ տեսիլներով մի առ մի ազդարարում է այն ամենն, ինչ որ կատարելու է: Իսկ յիշել անցեալը, գիտենալ ապագան և ըստ այնմ խոհեմութեամբ ընթանալ պատմական ճանապարհը՝ միակ միջոցն է մի ժողովրդի համար, որ կամենում է պատմական արդար ընթացքով կորստից ազատել: Հետևաբար մարգարէն ժողովրդի ազատութեան և երջանկութեան ծառայող մի աստուածառաք գործիչ էր, որ իր ազգօգուտ նպատակի իրագործման համար դիմում էր ոչ միայն աստուածատուր շնորհների օգնութեանը և առաջնորդւում Ս. Հոգու ներշնչմամբ,

[1] Շարական, էջ 397:

այլև ուսումնասիրում էր Աստծու յայտնութիւնը, Աստծու տւած օրէնքները, ժողովրդի պատմութիւնն ու նրա կեանքը և ապա ճշմարիտ գործունէութեամբ հրապարակ ելնում:

Քրիստոս իբրև մարգարէ պէտք է քարոզէր Աստծու տնօրինութիւնն ու կամքը, որոնք Հին Ուխտի օրէնքի ու մարգարէութիւնների միջոցով միմիայն իբրև նախապատրաստութիւն են տրւել առանց այն կատարելու և կատարելութեան, որ Աստծու Որդով էր սպասւում: Համեմատելով հին մարգարէների հետ՝ տեսնում ենք, որ Քրիստոս յայտնում է մի նոր տնօրինութիւն, որ ոչ նախապատրաստութիւն է և ոչ կատարման է սպասում, այլ Ինքն իսկ գլուխն է այդ տնօրինութեան և Իրենով է կատարումը: Նա ոչ թէ ժողովրդի ընթացքի առաջ է կանգնում և նոր ժամանակ քարոզում, այլ վերջնականապէս կատարում է անցեալի ընթացքը, փակում է լրացած ժամանակը, բացարձակ նոր ժամանակ է յայտարարում և մարգարէութեան վերջնական կատարումը յայտնում, ըստ որում Իրենով վերջանում է մարգարէութիւնը:

Հին մարգարէները տեսնելով, որ ժողովուրդը ժամանակի ընթացքում մոռանում է Աստծու օրէնքի էութիւնն ու միտքը և տառապաշտութեամբ լոկ արտաքուստ էր կատարում այն, շարունակ նոր ի նորոյ քարոզութեամբ կենդանացնում էին օրէնքի ոգին նրանց մէջ. այդպէս և Քրիստոս քարոզելով օրէնքը և Աւետարանը՝ հարւածում էր կեղծ փարիսեցիներին ու դպիրներին, օրէնքի ոգին էր յայտնում և ցոյց տալիս, որ Ինքը ոչ թէ լուծանում է այդ օրէնքը, այլ կատարում, և Ինքն է օրէնքների ու մարգարէութիւնների լրումը (Մատթ. Ե 17) թէ՛ գործով, թէ՛ անձամբ ու թէ՛ խօսքով (Հռ. Ե 18, Գաղ., Դ 4, Ա Պետ., Բ 21, Յովհ., ԺԶ 13, Ղուկ., ԻԴ 27):

Հին մարգարէները ծանուցանելով Աստծու օրէնքը՝ աւետիք էին տալիս և ապագայի մասին, Աստծու ապագայ շնորհների մասին. այդպէս և Քրիստոսն է անում՝ միայն յայտնելով, որ Իրենով վերջանում է օրէնքը և Իրենով ամբողջանում է մարգարէական աւետիքը: Եւ որովհետև հին մարգարէները վկայում էին Քրիստոսի գալստեան մասին, Քրիստոս իբրև իսկական մարգարէ վկայում է Ինքն Իր մասին: Քրիստոս վկայում է, որ Ինքն է Աստծու և մարդու միջնորդը և ամենայն շնորհների լրումն Իր մէջ է ամենքի համար (Մատթ., ԺԱ 28): Նա վկայում է, որ Ինքն է օրինաց լրումն ու վախճանը, որովհետև ոչ ոք չի կարող Իր

մէջ մեղք գտնել (Հռ., Ժ 4), քանի որ «արդարների համար օրէնքներ չկան» (Ա Տիմ., Ա 9, Հռ., Զ 14): Ուստի և նա քարոզում է, որ մարդիկ իրենց երջանկութեան համար պէտք է հաւատան իրեն, որպէսզի մտնեն Իր արքայութեան մէջ՝ «որ այս աշխարհից չէ» (Յովհ., ԺԸ 36): Իսկ այդ արքայութեան մէջ մտնել փափագողները պէտք է աշխարհի բոլոր նպատակները հարկաւոր դէպքում պատարաստ լինեն զոհելու (Մատթ., ԺԳ 45-46): Աստծու արքայութիւնը մտնել տենչացողը պէտք է աչք չունենայ հրապոյրների վրայ, որովհետև հոգու փրկութիւնն ու աշխարհասիրութիւնը իրար հակառակ բևեռներ են (Ղուկ., Թ 59-62, Մատթ., ԺԶ 23, Մարկ., Գ 31, Յովհ., Զ 66):

Հին մարգարէները ներկայացնում են ապագան յայտնութեան տեսիլներով. Քրիստոս նաև յայտնում է ապագան, միայն թէ ցոյց է տալիս, որ ապագան Իր իսկ շուրջն է պտտւում և Ինքն է գալու դատաստան կատարելու համար: Այդ քարոզութեան ամենաբարձր իրականացումն է Քրիստոսի այն յայտնութիւնը, որով գեղեցկապէս նկարագրում է այդ ապագան (Մատթ. ԻԴ, Մարկ. ԺԳ, Ղուկ., ԺԷ 21): Նա ցոյց է տալիս, որ աշխարհն ունի իր զարգացման վախճանը, որից յետոյ կը լինի հանդերձեալ կեանքը: Աստծու արքայութիւնը խմորի պէս կաճի այս աշխարհում, սակայն ոչ թէ խաղաղ և առանց հակառակութեան, այլ աշխարհային հակումների դէմ մի ընդհանուր մաքառմամբ և այդ մաքառմանը պէտք է մասնակցի իւրաքանչիւր ադամորդի, ամենայն հոգի ու զօրութիւն (Մատթ., ԺԲ 30, Ժ 34): Քանի գնայ, այնքան աւելի զօրանալու է այդ հակառակութիւնը, ինչը և պայմանաւորում է Աստծու արքայութեան ընթացքը: Հետևաբար երկրում ոչ թէ մի երևակայական խաղաղութիւն կը տիրի, այլ Աստծու արքայութեան զարգացման նպատակը կը լինի ծայրայեղ մաքառում, որին կը հետևի վախճանն ու աստուածային խաղաղութիւնը: Այս ամենը նա մարգարէանում է՝ սկսելով Իր անձի վրայ գալիք բոլոր հանգամանքներից և որոշելով աշխարհի ամբողջ կեանքի հիմնական ընթացքը մինչև նրա վախճանը: Նա ճշտիւ գիտէր մարդու սիրտը (Յովհ., Բ 24, 25), ճշտիւ գիտէր արարածական աշխարհի ընթացքն իբրև Տէր և անդրանիկ ամենայն արարածների, և ճշտիւ գիտէր, որ աշխարհի շրջաններն ու դարաշրջանները նոր ի նորոյ երևան են հանելու հակառակ ուժեր, որոնք նոր ի նորոյ կը ստեղծեն գայթակղութիւն և մաքառում, և այդպիսով այդ շրջանները մի-մի պատմական ընթացք լինելով, կը

ծառայեն ընդհանրապէս աշխարհի զարգացմանը: Բացատրելով թէ Իր եկեղեցու, թէ աշխարհի և թէ նոյնիսկ բնութեան հիմնական պատմութիւնը, Քրիստոս միջոց է տալիս Իր հաւատացեալներին՝ հասկանալ և դիմել դէպ հանդերձեալն իրենց երկրաւոր կեանքի իրագործմամբ: Եւ այս ամենը նա դիւրամատչելի է դարձնում ժողովրդի համար առակներով և օրինակներով (Մատթ., ԺԱ 25): Բայց և նրանց ընդունակութեան համեմատ անօրինական շատ ճշմարտութիւններ ևս թողնում է առաջադիմութեան ընթացքում Ս. Հոգով ըմբռնելու (Յովհ., ԺԶ 12-14):

Հին մարգարէները քարոզում էին խօսքի առանձին զօրութեամբ[1]. այսպէս և Քրիստոս է քարոզում, սակայն ոչ միայն զօրութեամբ, այլև իշխանութեամբ (Մարկ., Ա 22), որովհետև քարոզութեան և Աստծու յայտնութեան իսկական աղբիւրը և իրականացումը ոչ թէ Ս. Հոգու ներշնչումն է, ինչպէս լինում էր մարգարէների մէջ, այլ՝ Միածնի մարդեղութիւնը: Մարգարէները գտնւում են մեղանչական վիճակում և դեռ պէտք է Ս. Հոգով աստուածային խորհուրդների մէջ մտնէին, որ տեսնէին իրենց ասելիքը. այլև պէտք է հրով սրբէին նրանց կեղծ շրթունքները, որ կարողանային Աստծու սուրբ կամքը քարոզել (Ես. Զ): Այդպիսի մարգարէ չէր Քրիստոս, այլ սկզբից Հօր հետ էր և Հօր մօտ և միմիայն Ինքն է ճանաչում Հօրն ու ճանաչեցնում՝ ում կամենում է. նա է միայն տեսել Հօրը և յայտնել մարդկանց (Մատթ., ԺԱ 27, Ղուկ., Ժ 22, Յովհ., Ա 18): Ուրեմն նա աստուածային իշխանութեամբ էր խօսում և ոչ թէ այն մասնակի շնորհներով, որոնցով խօսում էին մարգարէները: Նրա իշխանութիւնը ևս ոչ թէ բռնադատական էր, որով կարող էր ստիպել իր խօսքն ընդունելու. ոչ, այլ ազատ կամքի Արարիչը ազատութիւն է տալիս ամենքին, որ ազատ ընտրութեամբ ընդունեն Իր խօսքերը, քաղցեն ու ծարաւեն արդարութեան համար, որ երջանիկ լինեն (Մատթ., Ե 6), կամենան Աստծու կամքը կատարել, որ հասկանան, թէ Քրիստոսի քարոզն ու խօսքը Աստծու խօսքն է (Յովհ., Է 17): Ուրեմն Քրիստոսի խօսքը բռնադատական իշխանական խօսք չէ, այլ ասուած է մի այնպիսի իշխանութեամբ, որն ընդունւում է յօժար կամքով. այն խօսուած է բացարձակ

[1] Երեմ., ԻԶ 12, Եզեկ, Գ 17:

հեղինակութեամբ. Նրա «Ամէն ամէն ասեմ ձեզ»-ը արտայայտում է բացարձակ ճշմարտութիւն և հաւաստիութիւն:

Հին մարգարէները հաստատում էին իրենց քարոզութեան ճշմարտութիւնը թերահաւատ ժողովրդի առաջ, երբեմնական կամ անցողակի հրաշագործութեամբ ըստ Աստծու իւրաքանչիւր անգամ եղած տչութեան: Քրիստոս Ինքը բնութեան սքանչելիքը լինելով՝ յարաժամ բխում է Իր անձից ամեն տեսակ հրաշալիք: Նրա անձի, նրա մարդեղութեան մեծ սքանչելիքի յայտնութեան երկու կողմերն են՝ նրա խօսքն ու գործը. ուստի և իրեն ճանաչելու համար, պատւիրում է տեսնել ու լսել (Ես., ԿԱ 1, Ղուկ., Դ 18, Է 21, Մատթ., ԺԱ 4): Նրա ամեն մի խօսքն ու գործը մի-մի նշաններ են Իր Աւետարանի ճշմարտութեան և նրա անձից բխած իւրաքանչիւր հրաշք ոչ թէ ինքնըստինքեան հրաշքի նպատակ ունէր, այլ ներգործական հեռագնայ նպատակի ծառայող հրաշք էր: Ուստի և նա մերժում է մարմնաւոր հրաշքը, որ կարող է նաև սխալ ու գայթակղեցուցիչ կերպով հասկացւել նրանց մէջ, որոնք Քրիստոսի հրաշալի խօսքերն էլ թիւրիմացութեամբ են լսում և ըմբռնում (Յովհ., Դ 48), քանի որ չունեն Աստծու սիրոյ ձայնն իրենց մէջ (Ե 36-44): Նմաններին կը սթափեցնէին լոկ ժամանակի նախապատրաստական նշանները, Իր մարգարէութիւնների կատարումը, երբ հրաշքների հրաշքն անգամ՝ Քրիստոսն Ինքն Իր խօսքով, բազում հրաշքներով չէր ներգործում նրանց թանձրացած սրտերի վրայ:

Ուրեմն՝ Քրիստոսի անձի մէջ իսկ ամփոփւում է թէ՛ մարգարէութեան նպատակը, թէ՛ բոլոր միջոցները, թէ՛ աղբիւրը և թէ՛ մարգարէութիւնը՝ լրիւ: Նա վերջ տալով անցեալին, սկիզբը դնելով ապագայի և կազմելով պատմութեան միջնակէտը, միացնում է Իր մէջ Իր հաւատացեալի կոչումը: Ըստ որում և **անցեալ մարգարէութեամբ նախապատրաստւած հաւատացողը գիշերւայ ճրագից մտնելով ցերեկւայ լոյսը** (Բ Պետ., Ա 19), **այլևս չի կարօտում նոր մարգարէի, քանի որ ունի լուսատու Քրիստոսին, որի մէջ ներկայ են մարդու ճանապարհը, լոյսն ու աւարտը:**

ԻԳ

2. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆՆ ՈՒ ՊԱՏԱՐԱԳԸ

Քրիստոս իրականացրեց իր մարգարէական գործունէութեան նպատակը քահանայապետաբար մատուցած պատարագով: **Քահանայապետական պաշտօնի գաղափարն ու հիմունքն Աստծու և մարդու միջև հաշտութիւնն է, որ արտայայտւում է ամենայն քահանայութեան և նրա զոհաբերութեան մէջ:** Արդ, որովհետև մարգարէութեան վերջն ու լրումը Քրիստոս է, հետևաբար քահանայութիւնն ու զոհը ստանում է իր իսկութիւնը Քրիստոսի մէջ: Եւ քանի որ ոչ մի արարած, մանաւանդ մեղանչական արարած չի կարող Աստծու և մարդու միջև հաշտութեան միջնորդ լինել, հաշտութեան զոհ լինել, պարզ է, որ Քրիստոս է իսկական քահանայապետն ու իսկական զոհը: Իբրև Աստծու Որդի և Մարդու Որդի և իբրև Նոր Ուխտի հաստատող, Քրիստոս այն քահանայապետութեան և զոհի կատարումը և իսկութիւնն է, որ բացարձակ նշանակութիւն ունի թէ՛ մարդու և թէ՛ Աստծու առաջ:

Այս բացարձակ նշանակութիւնը հաստատւած է Քրիստոսի մարդկութեան և Աստուածութեան իրական միութեան վրայ: Մեղանչական մարդկութիւնն իր մեղքով բաժանւած էր Աստծուց, այնպէս որ մեղանչող մարդը չէր կարող իր անսահմանափակ ուժերի անվստահութեամբ մօտենալ Աստծուն ի խնդիր միութեան և ոչ էլ Աստւած Իր ամենաբարձրութեամբ կարող էր միանալ ու հաշտւել մեղքում ընկղմւած մարդկութեան հետ: Բայց Աստւած յաւիտենական սէր լինելով չպէտք է թողնէր մարդկութիւնն իրենից բաժանւած. Նրա կատարեալ սիրուց բխում է այն նախատնօրինւած աստուածպաշտութեան անհրաժեշտութիւնը (Եփ., Ա 5, Պետ., Ա 20), որով միայն կարող էին մարդիկ վերստին հաշտ միութեան մէջ մտնել Աստծու հետ բազմադարեան բաժանումից յետոյ: Աստծու անստեր անփոփոխութիւնը չի կարող իր արքայութեան իրականացման համար ստեղծւած սեփական աշխարհը վերջնականապէս մերժել. ըստ որում Իր սեփական աշխարհը փրկում է, որպէսզի մարդկութիւնը կարողանայ համարձակապէս մտնել իր սուրբ սիրոյ միութեան մէջ՝ առանց Իր բացարձակ

արդարութեան ու սրբութեան տուժման: Եւ այդ պատճառով է, որ Աստծու սիրուց բխում է հաշտութեան անհրաժեշտութիւնը, բայց և միաժամանակ Նրա սրբութիւնից չքանում է մեղքը, իսկ նրա արդարութեանը հետևում է աստուածային ցասումն ու պատիժը: Ուստի և մարդկութիւնն իր մեղանչական վիճակում կոչում էր «որդիք բարկութեան»: Աստծու բարկութիւնը բխում է Նրա սրբութիւնից և արդարութիւնից, և քանի որ Նրա սէրը քաւութիւն է պահանջում ու փրկութիւն, յայտնի է, որ Նրա բարկութիւնը Նրա սիրոյ հետևանքն է, որով պէտք է ողորմի Իր արարածներին (տե՛ս վերը. Գլ. ԺԱ): **Աստծու սրբութեան, արդարութեան և ողորմածութեան այդ իրականութիւնն իրագործում է Քրիստոսի գերահրաշ պատարագով**[1]:

Պատարագի կամ զոհի կարևորութիւնը բխում է հաշտութեան սկզբունքից: Աստծու դէմ մեղանչական մարդը չի կարող որևէ հատուցում տալ իր մեղքերի քաւութեան համար. արդարութեան տեսակէտից նայելով՝ մեղանչածը պէտք է մեռնի և նորից ծնի առանց այն մեղքի, որի մէջ է ընկել մեղանչումով: **Մեռնելու անհնարութեան գաղափարից ծագել է զոհը, որ անելով՝ մարդ ներքին զղջմամբ բարոյապէս մեռնում է այդ զոհի հետ և Աստծու առաջ սրբւած համարւում:** Բայց այսպիսի զոհը, որ ընդհանրացած է հին ազգերի մէջ, նախատիպ ու կրթիչ նշանակութիւն ունէր և ոչ մի իրական հիմք չէր մեղքի թողութեան համար: Առաւել ևս ամբողջ մարդկութեան համար անհնար է մի որևիցէ կենդանու և իրի զոհով արդարանալ ու սրբւել մեղանչական վիճակից: Մարդկութիւնը կարող էր մաքրագործւել միմիայն այն ժամանակ, երբ իսկապէս կարողանար զոհել իր մեղանչական էութիւնը կամ երբ մեռնէր նրա մեղանչական եսը, անձը և վերստին ծնւէր իբրև հնազանդ որդի: Սակայն ամբողջ մարդկութիւնը չէր կարող իր մեղանչական էութեամբ կամ անձով մեռնել, որովհետև մեռնելուց յետոյ կրկին վերածնւել կարելի է միմիայն Աստծու օգնութեամբ ու հաղորդակցութեամբ, մինչդեռ մարդկութիւնն իր մեղքով կտրւած էր Աստծուց և ուրեմն առանց Նրա չէր կարող կրկին կենդանանալ: Եւ քանի որ մարդու մեռնելն ու կենդանանալը անկարելի էր առանց Աստծու հաղորդակցութեան, հետևաբար և ոչ մի ուրիշ զոհ չէր կարող մարդուն արադարացնել կամ նրա խիղճը հանգստացնել (Եբր. Թ):

[1] Եղիշէ, էջ 267-273:

Այլև իր բարոյական ազատութիւնից զրկւած ու մեղքում թաւալւած մարդը չէր էլ կարողանում որևիցէ կերպով Աստծուն նիւրւել և անձը զոհել իր մեղքերի համար: Ուրեմն մարդն ինքն ազատապէս չէր կարողանում որևիցէ կերպով իր մեղանչումը ոչնչացնել և վերստին մտնել սրբութեամբ և արդարութեամբ աստուածային սիրոյ և հնազանդութեան մէջ: Այս պատճառով Աստւած է անում այդ Իր մեծ ողորմութեամբ, որովհետև եթէ մարդ կամենար էլ ազատապէս իր մեղանչումը ոչնչացնել և մտնել արդարութեան, սրբութեան և աստուածային սիրոյ ու հնազանդութեան մէջ, նա պէտք էր և կարող էր միմիայն Աստծու գործակցութեամբ անել այդ, որպէսզի հաշտութիւնն Աստծու կողմից կայացած լինէր: Ահա և մարդու այդ կամեցողութիւնը և Աստծու գործակցութիւնն իրականանում է Աստւածամարդ Քրիստոսի մէջ (Բ Կոր., Ե 19):

Աստւած էլ, ըստ Իր կանխագէտ տնօրինութեան և Իր շնորհների ու սիրոյ առատութեան տւեց Իր Որդուն մարդկանց փրկութեան համար: Նրա Որդին խոնարհւելով հնազանդութեան ու հեզութեան մէջ, հակառակ Ադամի ամբարտաւանութեան և անհնազանդութեան, չարչարւեց ու զոհւեց՝ իբրև ամբողջ մարդկութեան զոհ և այն, ինչ որ մարդկութիւնը սոսկապէս անել չէր կարող, իրագործեց Քրիստոս՝ Իր մէջ միացնելով, մէկ դարձնելով մարդկութիւնը և Աստւածութիւնը: Նրա մէջ է իրականանում Աստծու սիրոյ և շնորհների ողորմութիւնն ու միաժամանակ ամբողջ մարդկութեան սրբացման գործը, որովհետև Քրիստոսով իջնում է Աստւած մարդկութեան մէջ, իսկ մարդկութիւնը հաղորդակից է դառնում աստուածային արդարութեանը: Ըստ այսմ Քրիստոս դառնում է նոր մարդկութեան նախամարդը, որ վերջացնում է հին մարդկութեան և Աստծու միջև բաժանումը, սրբում է մարդկութիւնը և Աստծու սիրոյ շնորհները վերստին բաշխում մարդկութեանը: Աստւածային տնօրինութեամբ Քրիստոս դառնում է նախամարդ, որի հետ միանալով իւրաքանչիւր հաւատացող դառնում է նոր մարդ, այսինքն՝ ինչպէս որ մեղանչած Ադամի միջոցով բոլոր մարդիկ մեղանչական վիճակը ժառանգեցին, այնպէս էլ արդար ու սուրբ Ադամի, այն է՝ Քրիստոսի միջոցով արդարութիւն են ժառանգում: Նոր Ադամը մեռաւ հին մարդկութեան համար, ուրեմն և նրանով հին մարդկութիւնը մեռաւ, բայց նոր Ադամը յարութիւն առաւ. Նրա հետ յառնում են և հաւատացեալները, ուրեմն Հին Ադամով մահ էին ժառանգում, իսկ նոր Ադամով՝ կենդանութիւն. մի մարդով մահ

եղաւ և մի մարդով յարութիւն մեռելներից. «Ինչպէս Ադամով բոլորը մեռնում են, նոյնպէս և Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան» (Ա Կոր., ԺԵ 21, 22, Բ Կոր., Ե 14, 15):

Քրիստոսով կատարւում է մարդկութեան զոհը և ուրեմն մարդ հաշտւում է Աստծու հետ, բայց և Քրիստոսով փրկւում է մարդկութիւնն իր մեղքերից, ըստ որում Նա տալիս է մարդուն նոր կեանք և հաստատուն հաղորդակցութիւն Աստծու հետ: Հետևաբար Աստծու արդարութիւնն իրականանում է և Աստուած հաշտւում է մարդու հետ, իսկ մարդը սրբւում է և Աստծու բարիքները վայելում Նրա հաղորդակցութեամբ: Այնուհետև իւրաքանչիւր անհատի փրկութիւնն իրագործւում է նրանով, որ հաւատում է Քրիստոսին, հաւատալով միանում Նրա հետ և այդպիսով մտնում է Նրա փրկագործական բարիքի մէջ: Կը հաւատաս՝ կը միանաս Քրիստոսի հետ, Նրա շնորհների տակ Նրա ճանապարհով կը գնաս և Նրա փրկութիւնը վայելելով՝ կը բարձրանաս Նրա հետ. չես հաւատայ՝ կոտրանաս նրա բոլոր շնորհներից, կընկնես վերջնականապէս և կը մեռնես իբրև հին Ադամի ժառանգ՝ ադամային կեանքի բոլոր ձախորդութիւնների ու հեծեծանքների մէջ: Եւ այս պարզ է, որովհետև Հին Ադամը մեղանչելով՝ չկարողացաւ իրագործել իր կոչումը, ընկաւ և աշխարհին ենթարկւեց. նրա շաւիղի մէջ էին և նրա բնական ժառանգները: Իսկ Նոր Ադամն Իր կատարելութեամբ իրականացրեց մարդու կատարեալ կոչումը և ամեն տեսակ փորձութիւնների նկատմամբ յաղթանակ տանելով՝ յաղթեց աշխարհին: Նրա ճանապարհով են գնում և Նրա հաւատացեալ ժառանգները: Առաջին Ադամը խախտեց արդարութիւնն ու օրէնքը. երկրորդ Ադամը կատարեց ամենայն օրէնք և արդարութիւն իբրև մարդկութեան բնութիւն, մարդկութեան կատարելատիպ և իրական-էական ներկայացուցիչ: Հետևաբար մեր նոր նախամարդու կամ Քրիստոսի օրինակատարութիւնը, արդարութիւնն ու յաղթանակը մեր օրինակատարութիւնն է, մեր արդարութիւնն է և մեր յաղթանակը (Մատթ., Գ 15, Ե 17, Եբր., Ժ 7, Յովհ., ԺԶ 33): **Աստուած էլ Քրիստոսով է նայում մեզ վրայ և Նրա բոլոր վաստակները մերն է համարում, որովհետև Նա մեր գլուխն է, և մենք Նրա անդամները, Նա մեր նախահայրն է, և մենք Նրա ժառանգները: Նա գլուխ է՝ ոչ ինչպէս մի Հայկ, մի Արամ, մի Աշոտ, մի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, մի Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ, որոնց շնորհներն ու վաստակները մերն ենք համարում,**

նրանց համեմատ պարծենում և պարզերես լինում, այլ՝ իբրև յաղթապանծ, գերապանծ ու շնորհատու կատարելատիպ: Որովհետև Քրիստոս մեզ ոչ թէ մի որևիցէ վաստակ է շնորհում, այլ՝ ամենայն վաստակ ու շնորհ, քանի որ սրբել է մեզ մեղքերից, արթնացնում մեղքի ճանաչողութիւնը մեր մէջ, առաջնորդում է դէպի Իր աստուածային կեանքի վայելումը և իրեն հետևողներին Աստծու Որդիներ դարձնում (Ա Կոր., Ա 30, Յովհ., Ա 12): Նա տալիս է ամենայն բարիք և կենդանութիւն իրապէս, որովհետև ոչ թէ արտաքուստ է միայն պարգևում, այլ Ինքն իսկ կենդանութիւն է տալիս մեզ՝ անձամբ մեր մէջ բնակւելով և մեզ իրեն չարչարակից ու խաչակից անելով՝ յարութեան շնորհները բաշխելու համար (Գաղ., Բ 20):

Մենք էլ պէտք է հաւատքով Քրիստոսի չարչարանքին ու մահուան հաղորդ լինենք, որ Նրա կեանքին ևս կցորդ դառնանք, որովհետև Նա ինքը ևս մեր չարչարանքի ու մահուան մէջ մտաւ՝ մեզ կեանք շնորհելու համար. «Որովհետև Նրան, Ով մեղքը չէր ճանաչել, Աստուած մեզ համար մեղաւոր դարձրեց, որպէսզի մենք Նրանով Աստծու արդարութիւնը լինենք» (Բ Կոր., Ե 21): Այսինքն՝ նա մեզ համար յանձն առաւ մեղանչական մարդու պատիժը: **Մեղանչական աշխարհը մեղքի գագաթնակէտին հասաւ, երբ մարմնացեալ Արդարութիւնը բարձրացրեց խաչի վրայ:** Աշխարհի երկու ներկայացուցիչները՝ հրէութիւնն ու հեթանոսութիւնը միացան՝ արդարութիւնը պատժելու համար, մինչդեռ դրանք պէտք է արդարութիւնը հաստատէին երկրի վրայ: **Տառապաշտ և անհաւատ հրէութիւնը մի կողմից և կայսրապաշտ պետութիւնը միւս կողմից ամենայն ճշմարտութիւն գտնում էին իրեն ինքնաստուածացման հասցրած բռնատիրութեան մէջ և միանալով, այդ մեղանչական ձգտմամբ խաչեցին Քրիստոսին:** Ուստի և այդ խաչելութիւնը դարձաւ մեղքի գագաթնակէտը հների համար և կեանքի գագաթնակէտը նորերի համար: **Խաչի վրայ Քրիստոս նրանց մեղքը Իրը համարեց, որ մենք ևս Նրա կեանքը մերը համարենք** (Բ Կոր., Ե 21, Ա Պետ., Բ 24, Ես., ԾԳ 4): Նա պատիժ կրեց, որ խաղաղութիւն տայ մեզ: Նա խաչի վրայ անէծք առաւ, որ մենք օրհնութիւն ստանանք: Նա ցաւեց, չարչարւեց մարդկային մեղքի համար՝ գիտակցելով այդ մեղքի սոսկալի ծանրութիւնը[1], որով մեղքի

[1] Ծարական, էջ 270:

բարձրագոյն գիտակցութիւնն ու ցաւը իրականացրեց: Նա յանձն առաւ մարդկութեան մեղքի ծայրայեղութիւնն ու Իր մէջ ոչնչացրեց խաչի վրայ՝ մեզ այդ ծայրայեղութիւնից ազատելու համար (Հռ., Գ 25, Բ Կոր., Ե 14, 15): Նա ազատապէս յանձն առաւ մեղքի ցաւն ու պատիժը և մեղքի բոլոր հետևանքների կենտրոնացումը, այն է՝ մահը: Ինքը մեղք չունէր և մեղաւորի մահը յանձն առաւ. Ինքն անմահ է և մահկանացուի մահը իւրացրեց ու խաչի վրայ բևեռեց մահուան խայթոցը, որ մեղքն է, խաչի վրայ գամեց: Սակայն Քրիստոս Աստուած է և անմահ, իբրև մարդ ու մահկանացու մեռաւ և յարութեամբ կենդանութիւն տուեց մահկանացու մարդուն, ըստ որում Նա ոչնչացրեց մահն ու մահուան խայթոցը փշրեց[1]: «Երկինքն ու երկիրը միաբանեցին Աստծու Միածնի մահով»[2], այսինքն՝ երկիրն իրականացրեց իր մեղքի ծայրայեղութիւնը, իսկ երկինքն աստուածային ողորմածութեան ամենաբարձր շնորհը տուեց. երկուսն էլ Քրիստոսով խաչի վրայ բարձրացան, առաջինը ոչնչացաւ, իսկ երկրորդը շնորհուեց հաւատացողին: Այդտեղ մեռնում է մարդու միակողմանի կամքը և այն ամէն աշխարհային, քաղաքական, երկրաւոր երանութիւնը, արհեստական վայելքը և փառքը, որոնց մէջ մարդը որոնում էր իր երջանկութիւնը: Այդ բոլորը միակողմանի, սին փառքերը Քրիստոսով զոհաբերւում են աստուածային շնորհներին: Նրանով ընկաւ աշխարհայինը և թագաւորեց աստուածայինը: Ուստի և Ս. Գրիգոր Նարեկացին, ոգևորուելով այդ մեծ խորհրդով, բացականչում է՝ դիմելով Քրիստոսին. «Որ միայն Դու մարմնացար յանուն մեզ մեր նման, որպէսզի մեզ անես Քեզ նման յանուն Քեզ»[3]:

Բայց ինչո՞ւ Քրիստոսի սքանչելի պատարագը խաչով իրագործուեց: Այս հարցի հիմնական պատասխանը տալիս է մեզ Պօղոս առաքեալը իր «Խաչի ճառ»-ի մէջ: Նա, խօսելով անհաւատութեամբ կորածների և խաչով փրկուածների մասին՝ ասում է. «Իսկ որովհետև հրեաները նշան են հայցում, և հեթանոսներն իմաստութիւն են փնտռում, մենք քարոզում ենք խաչուած Քրիստոսին՝ ի գայթակղութիւն հրեաների և ի յիմարութիւն հեթանոսների, բայց նրանց համար, որ կանչուած են՝ հրեաներ, թէ հեթանոսներ, Քրիստոս Աստծու զօրութիւնն ու Նրա

[1] Եբր., Բ 15, Եղիշէ, էջ 31:
[2] Եղիշէ, էջ 286:
[3] Նարեկ, Բան ԺԹ 43:

իմաստութիւնն է» (Ա Կորնթ., Ա 22-24): Առաքեալը գեղեցկապէս պարզում է խաչի մեծ խորհուրդը: Խաչը մի ամենախիստ պատժական գործիք էր հին ժամանակ և հաւանօրէն Փիւնիկէից է տարածուել շրջակայ երկրները: Խաչից աւելի ծանր ու տանջալի պատիժ դեռ չի հնարուած մարդկութեան անգութ շրջանում, ըստ որում խաչի վրայ բևեռուած մարդը ամենասոսկալի չարչարանքներն էր կրում 12 ժամից մինչև երեք օր՝ թէ վէրքերի անտանելի կսկիծներից և թէ արեան շրջանառութեան վնասուելուց: Թէ՛ հրէից և թէ՛ հին քաղաքակրթուած ազգերի մէջ խաչն ամենածայրայեղ ստորացումն էր. Մովսիսական օրէնքն այդ է արտայայտում՝ անիծելով խաչից կախուողներին (Բ Օր., ԻԱ 23): Ուստի և հրեաները, որոնք հպարտանում էին իրենց նախահայրերի վայելած աստուածային Ուխտով և, իբրև ընտրեալ ժողովուրդ, սպասում էին մի փառաւոր Մեսիայի, որ գար ամեն տեսակ հրաշքներով ու մի մեծ պետութիւն հաստատէր. նրանց համար խաչուող Մեսիան մի մեծ գայթակղութիւն էր: Միւս կողմից մարդկային տրամաբանութեանը և հեթանոսական իմաստութեանը հակասող մի բան էր՝ տեսնել Աստծու Որդուն խաչի վրայ ու Նրանից փրկութիւն սպասել:

Սակայն մենք արդէն տեսանք, որ Աստծու շնորհած փրկութիւնը չէր կարող ըստ մեր իմաստութեան լինել. իմաստութիւն էր շնորհել Աստուած Իր ստեղծած մարդուն, մինչդեռ սա Իր իմաստութեամբ խաբուեց, արհամարհեց Աստծուն ու զրկուեց բոլոր բարիքներից: Հրեաները հպարտանում էին իրենց ընկած դրութեամբ հանդերձ, հեթանոսներն էլ իրենց փրկութիւն չբերող, միակողմանի իմաստութեամբ, և երկուսն էլ կարծում էին, թէ անձնական վաստակով պէտք է փրկութեան հասնել: Խաչի վրայ խորտակւում է հրէական հպարտութիւնը, ծաղրւում է հեթանոսաց իմաստութիւնը, ուրեմն ի չիք է դառնում ընկած մարդկութեան ակնկալութիւնն ու միևնոյն ժամանակ միմիայն Աստուած է փրկութիւն պարգևում նրանց, որոնք այդ կը զգան և իրենց յոյսը Նրա վրայ կը դնեն[1]: Խաչով մարդկութիւնը պէտք է տեսնի, որ ոչ մի կերպ չի կարող

[1] «Իսրայէլը կոծելու (սգալ) է, որովհետև անջատուեց ճշմարիտ Աստծուց, հեթանոսները կոծում են, որովհետև անջատուեցին իրենց սուտ աստուածներից... և ոմանց կոծը կը դառնայ անգտանելի կորուստ և ոմանց համար՝ կորստից դարձ դէպի անանց լոյս» (Եղիշէ 278):

բարձրանալ առանց Աստծու և ոչ մի սոսկական մարմնաւոր աշխարհային փառքով չի կարող առանց Աստծու մեծանալ ու յարատևել: Նա պէտք է իմանայ, որ նախամարդու անկման ծառի փոխարէն բարձրացման խաչը հաստատուեց, մահացու պտղի փոխարէն՝ կենդանարար հաղորդութիւն, ինչպէս և երգում ենք. «Ձեռքերը տարածելով ձեռքերի փոխարէն, ոտքերը ընթացող ոտքերի փոխարէն, փայտը դառը պտղի փոխարէն՝ մահը կեանքի փոխարկելով»[1]:

Այսպիսով խաչը դարձաւ աշխարհիս նեղութիւնների գերակատար օրինակը և նեղութիւնների մխիթարութիւնը, մեղքի խորտակումը և արդարութեան յաղթանակը: Խաչը եղաւ հին մեղանչական աշխարհի համար պարտութեան և ամօթի նշան, նոր ու նորոգ աշխարհի համար մխիթարութիւն ու փառք[2]: Խաչի վրայ է յայտնւում Աստծու սրբութիւնը, արդարութիւնն ու սէրը. այստեղ է Աստծու դատաստանը կատարւում մեզ նրանից բաժանող մեղքի նկատմամբ և մեզ Նրա հետ միացնող սէրը փայլում: Այս է դաւանում հայը՝ «չարչարեալ, խաչեալ, թաղեալ» ասելով իր «Տէր Յիսուս Քրիստոսի» մասին. այս է դաւանում և փառաբանելով. «Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ», ինչպէս երգում է Հայաստ. ս. Եկեղեցում աւանդաբար՝ ըստ Յովսէփ Արեմաթացու և համաձայն առաքեալների վարդապետութեան[3] Ե դարից սկսած[4]:

Խաչի ճառով զատորոշւում է երանութիւնն ու անէծքը, հաւատքը և անհաւատութիւնը, ում համար քաղցր է մարմնաւորը, անձնականը, նա չի կարող հաւատալ և կը գնայ դէպի կորուստ՝ «որովհետև այս աշխարհի իմաստութիւնը Աստծու առաջ յիմարութիւն է» (Ա Կոր., Գ 19), իսկ ում համար այս աշխարհը մարմնաւոր միջոց է Աստծու արքայութեան ձգտողների առաջ, նա կը հաւատայ և Աստծու երանական փրկութիւնն ու միութիւնը կը վայելի յաւիտեան: Նրա խաչի

[1] Մեկն. ժամ., էջ 255-257, նաև Շար. տե՛ս և 306 Գր. Արշար., էջ 35:
[2] Յովհ. Իմաստ., էջ 98-100:
[3] Ա Կոր., Բ 8, Փիլ., Բ 8, Եբր., Զ 6, Թ 12, Յովհ., Գ 16, Հռ., Բ 9, 10, Թ 5, Կող., Ա 18, Բ 9, Գործ., Թ 28, հմմտ. Հռ., Ե 9, 10, Բ Կոր., Ե 18, Գաղ., Դ 4, Գ 13, Ա Յովհ., Ա 7, Բ Կոր., ԺԳ 4, Յովհ., Ե 27, Կող., Բ 3 և այլն. «Աստծու հետ հաշտեցինք Նրա Որդու մահով», «Աստուած չխնայեց Իր Որդուն, այլ յանուն մեր բոլորի նրան մատնեց», «Հովուել Տիրոջ ժողովուրդը, որին փրկեց Իր արեամբ», «Փառքի Տիրոջը խաչը հանեցին»:
[4] Ընդհան. 188, Ստ. Սիւն. թուղթ, Քերթողահօր, Դաւթի Անհ. Ներբ. Խաչի, Գր. Արշ. 61, 113, Շարական, էջ 485, 491, Ս. Յովհ. Իմաստ. 89-90, 112, Անանիա Սանահնեցի, Ընդդէմ երկաբն[20*], և այլն:

վրայ նայելով՝ պէտք է յիշենք, թէ մեր անկումը մեր անհնազանդութեամբ և մեր բարձրանալը՝ Քրիստոսի հնազանդութեամբ ու մեր հաւատքով[1]: Խաչով պէտք է մտաբերենք մեղանչական մարդկութեան մեղքի ծայրայեղութիւնը և Աստծու սիրոյ պարգևի մեծ փառքը: Մեր երեսին էլ խաչ հանելով պէտք է ներշնչենք մեր հոգու մէջ խաչի ճառը[2], որ մեր գործունէութեան հիմնաքար դառնայ խաչի խորհուրդը: Այս նշանակում է, որ նախ մեր մարմնաւոր կեանքը պէտք է գործադրենք Աստծու արքայութեան համար, և երկրորդ՝ պէտք է յիշենք մեր մեղքի զազրութիւնն ու Աստծու փառքը, ըստ որում և «թող ոչ մի մարմին չպարծենայ Աստծու առջև», այլ «ով պարծենում է, թող պարծենայ Տիրոջով» (Ա Կոր., Ա 20, 31):

Այս ճշմարտութիւնն է երգաբանւում շարականի մէջ՝ կարճ և ազդու[3]:

«Քո խաչելով սպանեցիր մահը
Եւ Քո Խաչի աղբիւրով տիեզերքին անմահութիւն շնորհեցիր»:
«Քո՝ Խաչի վրայ բարձրանալով
Մեզ երկինք բարձրացրեցիր[19*]
Հոգիներին հանեցիր բանտից»:

ԻԴ

3. ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԸ ԵՒ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ

Խաչելութիւնն ու թաղումը ամենածանր խոնարհութիւնն է, որի մէջ իջնելով Քրիստոս մխիթարեց անկեալ մարդուն[1] և մասնակցելով նրա մեղանչական

[1] «Ովքեր լոկ նիւթական աչքերով չեն, որ տեսնում են մարմինը, այլ մարմնի մէջ նաև աներևոյթ Աստուածութիւնն են իմանալի աչքերով տեսնում՝ Խաչի վրայ բևեռած, նրանք չեն մեռնի երկմտութեամբ մշտնջենաւոր մահով, այլ մեզ հաւասարելով՝ կասեն, թէ Խաչեալն Աստուած է, և Խաչեալի հետ յարութիւն կառնեն, ինչպէս և Նա յարութիւն առաւ երեք օրից»: «Իսկ ովքեր չեն ախորժի Քրիստոսի մարմինը Երրորդութեան փառքին բարձրացնել և չեն ասի, թէ խաչւածն Աստուած է, այլ՝ սոսկ մարդ, և Յիսուսին կազատեն Քրիստոսից և երկու անձեր մատնացոյց կանեն՝ մէկը չարչարելի և միւսը՝ անչարչարելի, և չեն ասի, թէ Աստծու Միածին Որդին Իր միաւորած մարմնով է խաչել, չարչարել, մեռել, յարութիւն առել և նստել Հօր աջ կողմում՝ նա այն չէ, որ յորջորջելով կոչւում է, այսինքն՝ քրիստոնեայ» (Ս. Յովհ. Իմաստ., Խոստով., էջ 20-28):
[2] Եղիշէ 53, Փարպ. 365, Մանդ. 122:
[3] Շարական, էջ 592, 706, տե՛ս և Եղիշէ 211:

կեանքի ամենավերջին վիճակին, յարութեան փառքով բարձրացրեց նրան: Քրիստոսի անձնաւորութիւնն ու գործունէութիւնը փառաւորապէս յայտնւում է նրա յարութեամբ: Եւ ինչպէս որ նա իբրև մարդ խաչւեց ու թաղւեց և մտաւ մարդկային անկման խոնարհութեան մէջ, այնպէս էլ նա Իր յարութեամբ իբրև Աստուած՝ մասնակից արեց մարդուն Իր աստուածային բարձրութեանը, որովհետև Քրիստոս հաւասարապէս Աստուած է և մարդ: Նա Իր յարութեամբ հաստատում է յաւիտենական արքայութիւն, ըստ մարգարէութեան (Դան., Բ 44): Նրա շնորհների թագաւորութեան մէջ պէտք է մտնի հոգևոր ու մարմնաւոր աշխարհը և այդպէս կը լինի Նրա փառքերի թագաւորութիւնը: Նա յաղթեց և այժմ Նրա թագաւորութիւնը յաղթական է և ինչպէս որ մարգարէները մարգարէանալով Քրիստոսի չարչարանքները, մխիթարում էին հեծող ժողովրդին, այնպէս էլ յաճախագոյն ևս նրա յաղթութեան կանխասացութեամբ ոգևորում էին նրան: Այդ մխիթարութիւնն ու ոգևորութիւնը իրագործւում է նրանով, որ Քրիստոս իջաւ դժոխքը, խորտակեց խաւարի իշխանութիւնը և ազատեց Իր վրայ յուսացող հոգիներին:

Քրիստոսի մահն ու թաղումը կատարելապէս մեր մահւան ու թաղման նման չէր լինի, եթէ Նա հոգով, ըստ մեղանչական մարդու վիճակի, դժոխք չիջնէր: Բայց քանի որ Նրա հոգին անբաժան է Իր Աստուածութիւնից, հետևաբար և Նրա հոգու դժոխք իջնելն աստուածային յաղթութեամբ եղաւ, որով մեղքի իշխանութեամբ պահւած հոգիներին ազատութիւն շնորհեց (Ա Պետ., Գ 19, Եփ., Բ 9, Փիլ., Բ 10): Այս ազատութիւնը պէտք է տայ Քրիստոս նաև հոգիներին, որովհետև Փրկիչն է ոչ միայն Իր ժամանակակիցների, այլև անցեալ և ապագայ մարդկութեան, ըստ որում և այն մեռածների, որոնք կամ փրկութեան յոյսով և աւետիքով և կամ անտեղեակութեամբ են հեռացել այս աշխարհից[2]: Դժոխքի մէջ իջնելով Քրիստոս ցոյց տւեց, որ ինքը Փրկիչն է հոգիների և մարմինների և շնորհատուն է ոչ միայն այս կեանքի, այլև՝ հանդերձեալի: Նրա թագաւորութիւնը տարածւում է ամենուրեք, ուստի և ոչ մի ժամանակ ու տեղ, ոչ մի տարածութիւն ու վիճակ չի բաժանում մարդուն իր թագաւորից, բացի գիտակցական

[1] Շարական, էջ 284, 306:
[2] Շար. 125, 272, 338, 678, 697, 723, Եղիշէ 297, 304, Ս. Յովհ., Իմաստ. 103:

անհաւատութիւնից: Այս թագաւորական յաղթութիւնը Ս. Ներսէս Շնորհալու գողտրիկ բանաստեղծութեամբ երգաբանում ենք շարականում.

«Որ ներքին դժոխք իջար՝
Մահւան և խաւարի բանտ
Կապելով մահածին իշխանին
Հոգիներին հանեցիր բանտից»[1]:

Արդ, ազատութեան յոյսի նշոյլներով միայն մխիթարւող հոգիները այժմ խնդութեան մէջ են մտնում Քրիստոսի յարութեան առատ ճառագայթների տակ: «Այսօր մեծ աւետիք տրւեց Ադամ նախաստեղծին. «Արի, որ ննջում ես, քեզ լուսատու եղաւ յարուցեալ Քրիստոս»[2], որովհետև նա երրորդ օրը յարութիւն առաւ և վերջնականապէս յայտնեց Իր փառքի թագաւորութիւնը:

Բայց Քրիստոսի յարութիւնը ոչ միայն հոգիներին և բոլոր հաւատացեալներին փրկութիւն ու բարձրացում պարգևեց, այլև մարդու հանդերձեալ յարութեան երաշխիքը տւեց: Յարութեամբ Քրիստոս հաստատեց մարդու բարձրագոյն կոչումը և Աստծու արքայութեան վերջնական իրականացումը, երբ մարմնաւորն ու հոգևորն իրենց վերջնական հաշտութեան մէջ են մտնում և մարդկային բնութիւնը Ս. Հոգու տաճար դառնալով՝ Աստծու որդիութիւնը և ազատութիւնն է ժառանգում: Նրա յարութեամբ ճշմարտւում է, որ բնականի ու հոգևորի հակասութիւնը կը վերանայ և երանական միութիւն կը տիրի փառքի թագաւորութեան մէջ, ինչպէս այդ իրագործւեց Քրիստոսի մէջ և Քրիստոսով[3]: Քրիստոսով յայտնւում է մարդկային յարութեան հաւաստիքը, այլև Քրիստոսի յարութեամբ սկսւում է հանդերձեալ յարութիւնը, որովհետև մահը նրանով փշրւում է և մարդկութիւնը հոգեպէս ու մարմնապէս ելնում է մեռելութիւնից դէպի յարութեան կենդանարար լոյսը, որ սփռւում է եկեղեցու

[1] Շարական, էջ 272, Տե՛ս Ագաթ. 215: «Իջնելով մահւան ստորին վայրերը...», «Այրում էր դրանք և առանց իր մահւան, ինչպէս կարողացաւ Ղազարոսին, բայց չկամեցաւ միայն իշխանութեամբ փրկել, այլև իրաւապէս»: «Մարդկային հոգին աւանդելիս՝ Քրիստոս՝ նրա մարմինը կենդանի էր աստուածութեամբ, որովհետև Աստծու մարմին էր՝ միացած Աստծու հետ և ոչ խառնումով գոյացած, և կամենալով յարութիւն առնել՝ Ինքն Իրեն յարութիւն տւեց...» (Խոսրով Անձ. Մեկն. ժամ., էջ 35, 36, 51):
[2] Շարական, էջ 284:
[3] Ագաթ., էջ 45, Եղիշէ, էջ 288, 293, 306, Իմաստ., էջ 101:

իսկական գլխից ու թագաւորից դէպի բոլոր անդամները: Նրանից է ծագում ամեն տեսակ լոյս, որովհետև Նրանով եղաւ անցեալի աւարտն ու ներկայի սկիզբը, ուստի և Նրանով կը լինի ապագայի լրումը. այնպէս որ Քրիստոս նախապատրաստական մարգարէութիւնների լրումն է և կատարուելիք մարգարէութեան սկիզբը, հիմունքը և հաստատութիւնը:

Ինչպէս որ Քրիստոսի յարութիւնը երաշխիք է ու հաւաստիք հանդերձեալ կեանքի ու յարութեան, այնպէս և հանդերձեալ կեանքն ու յարութիւնը հիմնւում է Քրիստոսի յարութեան վրայ: Այս երկու ճշմարտութիւնները սերտ կապւած են իրար հետ և մէկն առանց միւսի չի կարող լինել: Այլև այդ երկու ճշմարտութիւնները կազմում են քրիստոնէական Եկեղեցու հաստատութեան հիմքն ու էութիւնը, նոյնպէս և քրիստոնէական հաւատքի սկզբունքը: Առանց այդ ճշմարտութիւնների չկայ ոչ եկեղեցի և ոչ հաւատք (Ա Կոր., ԺԵ 14):

Քրիստոսի յարութեամբ նոր ժամանակ է սկսւում, որ տանում է դէպի հանդերձեալը, ուստի և կոչւում է վերջին ժամանակ, ինչպէս յաճախ շեշտւում է նաև մեր ս. Հայրերի գրւածքներում (Ա Պետր., Ա 20): Որքան մեծ է Քրիստոսի յարութիւնը մեր կեանքի համար, այնքան փառաւոր ու մեծափառ է նրա Ս. յարութեան տօնը՝ **Զատիկը ճշմարիտ քրիստոնեայի աչքում ու սրտում և միշտ պէտք է կենդանանայ ու զօրացուցիչ լինի կիրակի օրւայ տօնի մեծ նշանակութեամբ** (=օր Տեառն), որ արարչութեան օրը լինելով՝ նոր արարածների առաջին տօնն է դառնում: Քրիստոսի ս. յարութեան հաւատքն է մեր կեանքի սկիզբն ու երաշխիքը, ուստի և եկեղեցական իմաստուն կարգաւորութեամբ, իւրաքանչիւր տարին մի անգամ և աշխատանքի իւրաքանչիւր եօթնեակի մի օրում նոր ի նորոյ պէտք է յիշենք ու զօրանանք: Նոյնիսկ Քրիստոսի առաքեալները, որոնք Նրա չարչարանքից ու խաչից փախան ու ցրւեցին, Նրա յարութեամբ վերստին ժողովւեցին և հաւատքով զօրացած՝ պատրաստւեցին իրենց յարուցեալ Տիրոջ ընթացքին հետևելու: Իսկ այդ հաւատքը զօրացաւ նրանց մէջ, երբ համոզւեցին, որ Քրիստոս ճշմարտապէս յարութիւն է առել (Գործք., Բ 32, 36), մանաւանդ իրենց աչքով տեսնելով Նրան և մինչև անգամ բևեռատեղերը շօշափելով (Ղուկ., ԻԴ 21, Յովհ., Ի 13, 25, 27-29, Ա Կոր., ԺԵ 6, 17, 18): Իր փառաւոր յարութեան մեծ նշանակութիւնը յայտնեց և Քրիստոս, երբ նշան խնդրող անհաւատներին ասաց, թէ նրանց ոչ մի նշան չի ցոյց տայ, բացի Իր

թաղման ու յարութեան սքանչելի նշանից, որով միայն մնում է սպասել անհաւատի հաւատալուն:

Յարութիւնից յետոյ Քրիստոս 40 օր շարունակ երևալով և Իր հաւատացեալների հաւատքը զօրացնելով, հանդիսաւորապէս համբարձւեց «և նստեց Հօր աջ կողմում» (Մարկ., ԺԶ 19): Երկրում լինելով՝ նա Հօր մօտ էր (Յովհ. Գ 13), սակայն այժմ Իր փառաւոր յաղթանակով թողնում է երկիրն ու գնում Հօր մօտ (Յովհ., ԺԶ 26), որ իր փառաւոր թագաւորութեամբ լինի ամենուրեք և թագաւորի: Նա համբարձւեց երկինք, այսինքն՝ այնտեղ, որտեղ Նրա կեանքը, գոյութիւնն ու էութիւնը կատարելապէս իրար համապատասխանում են, ըստ աստուածային մեծութեան: Այնտեղ նա Հօր հետ է և հաւասարապէս փրկւած մարդկութեան մէջ (Յովհ., ԺԷ 12, ԺԲ 32) իբրև ճշմարիտ Փրկիչ ու Թագաւոր յաւիտենական. ուստի և ասւած է՝ «նստեց Հօր աջ կողմում», այսինքն Հօր զօրութեան մէջ, թագաւորական իշխանութեան մէջ, որ փառաւորւած է փրկութեան կատարմամբ և վերջնականապէս պէտք է յայտնւի աշխարհի վախճանով: Նա Թագաւոր լինելով՝ ոչ թէ դադար է առնում, այլ շարունակում Իր թագաւորական գործունէութիւնը (Յովհ., Ե 17) մշտաբարբառ բարեխօս լինելով մեր փրկութեան համար, ինչպէս և պէտք է գայ «ոմանց ի յարութիւն կենաց և այլոց՝ ի յարութիւն դատաստանաց»:

Քրիստոսի մեր մէջ լինելովն է ապահովւում ճշմարտութիւնն ու ճշմարիտ առաջադիմութիւնն Իր եկեղեցում, որտեղ մարդիկ գործում են ազատապէս և հաւատքով: Ընդհանրապէս **Քրիստոս ներգործում է Իր համայնքի վրայ ոչ միայն իր ներկայութեամբ, այլև Իր սուրբ խօսքով ու սուրբ խորհուրդներով, որոնցով ամրացնում է Իր եկեղեցում ճշմարտութիւնն ու ճշմարիտ հաղորդակցութիւնն Իր հետ:** Այսպիսի հաստատուն ճանապարհով աճում է եկեղեցին ու բարձրանում դէպ քրիստոսադիր կատարելութիւնը, որի համար գործում են ու կը գործեն Քրիստոսի պաշտօնեաներն ու ընտրեալ անօթները. «Մինչև բոլորս հասնենք հաւատի կատարեալ միութեանը և Աստծու Որդու ճանաչմանը, կատարեալ մարդու աստիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը» (Եփ. Դ 11-16): Նրա աստուածային ամենուրեքութիւնն ապահովում է մեր եկեղեցու աճումն ու զարգացումը սրբութեան, արդարութեան և ճշմարտութեան տարածման ասպարէզում: Եւ որ Քրիստոս ներկայ է և ներկայ պէտք է լինի, խոստացաւ իսկ,

երբ այդպիսի գործունէութեամբ հրաման տուեց «և ահաւասիկ ես ձեզ հետ եմ բոլոր օրերում մինչև աշխարհի վախճանը» (Մատթ., ԻԸ 18-20): Եւ ոչ միայն այսքան, այլև նա ներկայ է այնտեղ, որտեղ ժողովւում են երկու կամ երեք հաւատացեալ, միայն եթէ ժողովւում են «յանուն» Քրիստոսի խորհելու և գործելու ճշմարտութեամբ (Մատթ., ԺԸ 20): Նա նստած լինելով Հօր աջ կողմում, ամենուրեք իբրև գլուխ Իր եկեղեցու, «որ Նրա մարմինն է ու լրումը, նրա, ով ամեն ինչ լցնում է ամեն բանի մէջ» (Եփ., Ա 23), սակայն որտեղ ժողովւում են իր անւամբ, այնտեղ Նա յատկապէս ներգործում և աջակցում է, «որովհետև այն է ճշմարիտ արքայութիւնը, ուր Աստուածութիւնն է երևում»[1]:

Երկաբնակութեան դաւանանքի հետ չի հաշտւում Քրիստոսի ամենուրեքութիւնը, ուստի և Լութերականները մեկնաբանութիւններ տալով՝ մոլորւում են, վարդապետելով, որ իբր թէ Քրիստոսի մարմինը ևս էապէս ամենուրեք է թէ՛ հոգևոր աշխարհում, թէ՛ մարմնաւորում, թէ՛ երկնքում ու թէ՛ բնական աշխարհում, ամեն անհատի և ամեն մի կտոր հաղորդութեան մէջ: Այդ արդէն պարզապէս եւտիքական մոլորութիւն է, որ կատարելապէս անհետացնում է Քրիստոսի մարմինը Նրա Աստուածութեան մէջ: Եթէ այդպէս լինէր, Քրիստոսի մասին հրեշտակը չպէտք է կարողանար ասել իւղաբեր կանանց. «Այստեղ չէ, որովհետև յարութիւն առաւ» և կը գնաք կը տեսնէք նրան Գալիլիայում (Մատթ., ԻԸ 6):

Այս մոլորութիւնից զերծ մնալու համար լութերականութեան նորոգիչները Քրիստոսին վերագրում են մի այնպիսի ամենուրեքութիւն, որ ոչ թէ իրական է, այլ բարոյական, այսինքն՝ Քրիստոս ամենուրեք է Ս. Հոգու ներգործութեամբ և իր շնորհներով Եկեղեցու մէջ: Հետևաբար սրանք էլ ժխտում են Քրիստոսի տիեզերական նշանակութիւնը, որովհետև Նրան սահմանափակում են եկեղեցու բարոյական ու կրօնական նշանակութեան մէջ, Քրիստոսին անջատած են համարում բնական աշխարհից, Նրան գրեթէ մի տեղ են յատկացնում ըստ Աստուածութեան՝ երկնքի մէջ և Նրա ամենուրեքութիւնը հասկանում են միմիայն իբրև մի նշանային ներգործութիւն և ուրիշ ոչինչ: Ուրեմն և Քրիստոս աշխարհի վախճանը չի կարող լինել, նաև չի կարող Փրկիչը լինել բոլոր արարածների

[1] Եղիշէ, էջ 215:

հոգիների և մարմինների: Եւ ուրեմն այս աղանդաւորները վերստին ընկնում են Եբիոնեան մոլորութեան մէջ:

Միակողմանի այս երկու մոլորութիւններից խուսափելով՝ երկաբնակ դաւանութիւնը չի կարող հաշտւել Քրիստոսի ամենուրեքութեան հետ, որովհետև մարդկային տարորոշ բնութիւնն ինչպէ՞ս կարող է ամենուրեք չլինելով՝ Քրիստոսի աստուածութեան ամենուրեքութեան կցորդը լինել և ամենագիտութեան մասնակիցը: Մինչդեռ դրա բացակայութիւնը բաժանում է մտցնում Քրիստոսի աստուածային ու մարդկային գործունէութեան մէջ: Այս հակասութիւնից խոյս տալ չեն կարող արևմտեան եկեղեցիները:

Հայաստ. ս. Եկեղեցին, ամուր պահելով Քրիստոսի Աստուածութեան ու մարդկութեան միութիւնն և այդպէս՝ մի բնութիւն, մի կամք ու մի ներգործութիւն դաւանելով, այստեղ ևս հաւատարիմ է մնում ճշմարտութեանը: Քրիստոս Ինքն իսկ երկրում լինելով, ասում էր, որ երկնքում է և Իր կեանքում գործով միշտ հաստատում էր Իր ամենագիտութիւնը: Այդպէս և յարութիւնից յետոյ Նա գործում է իւրաքանչիւր սուրբի մէջ (Գաղ., Բ 20) **և իւրաքանչիւր հաւատացեալ ոչ թէ ինքն է կենդանի, այլ Քրիստոս է կենդանի իր մէջ:** Նա գործում է թէ Իր եկեղեցու ու թէ պատմութեան մէջ, ըստ որում և Նրա ներգործութիւնը մենք նկատում ենք աշխարհի ընթացքից, որի մէջ սխալ ուղղութեան պարագային հարւածում է և զարկ տալիս ճշմարտութեանը Իր փրկչական ու թագաւորական զօրութեամբ՝ հաստատելով ու հովանաւորելով սրբութիւնն ու արդարութիւնը: Ժամանակի նշանները մեզ միշտ մատնացոյց են անում այնտեղ, ուր Քրիստոս է անձնապէս գործում մեր մէջ, այնպէս որ ոչ ժամանակն ու ոչ տեղը Նրան արգելք չեն լինում: **Նա գործում է թէ եկեղեցում, թէ իւրաքանչիւր հաւատացեալի մէջ և թէ ամբողջ աշխարհում,** իւրաքանչիւրում ըստ իր ընդունակութեան ու բնական հանգամանքների և ամենքին առաջնորդում է դէպի իր արքայութեան իրականացումը: Նա ամենուրեք է և ամեն տեղ գործում է. ոչ ոք է նրանից դուրս և ոչ մի տեղ Նրա առաջ փակ չէ, «այլ Քրիստոս ամեն ինչ է ամեն բանի մէջ» (Կող., Գ 11): Եւ որովհետև Նա Իր Աստուածութեամբ ու մարդկութեամբ մէկ է, ուստի չենք կարող ասել, թէ մարմնո՞վ է ամենուրեք արդեօք, թէ՞ Աստուածութեամբ, քանի որ միութիւնն այդպիսի տարորոշութիւն չի ճանաչում: Նրա մարմինը ծանր բնութեամբ չէ, այլ աստուածային պայծառացեալ մարմին է. նա Աստուած է, բայց

առանց մարմնի չէ: Նա իբրև Աստուած անճառ է, անճառելի է և Նրա մարմինը: Նա ամենագէտ է և ամենուրեք, Նրա մարմինն էլ Նրա հետ անբաժան է: «Յիսուս Թագաւորը, որ թագաւորում է համաձայն արարչական, զօրութեան երկնքի և երկրի, Թագաւոր է ըստ մարմնի, որ միացրեց արարչական բնութեան հետ», ասում է Մամբրէ Վերծանողը[1]: Եւ որ մարդկային բնութիւնը մէկ է Նրա հետ, այդ մեզ երաշխիք է, որ մենք՝ Քրիստոսի ժառանգորդ եղբայրներս, պէտք է մասնակցենք նրա երանութեանը[2]:

Նրանով եղել ենք, Նրանով փրկւել և Աստծու հետ հաշտւել ենք. այժմ կարողանում ենք «հաւատքով ճանաչել Նրան և Նրա յարութեան զօրութիւնը» (Փիլ. Գ 10): Նա յաղթեց մեղքն ու խաւարի իշխանութիւնը և թագաւորաբար նստելով փառքի բարձրութեան վրայ[3], ճշմարիտ ազատութիւն է պարգևում մեզ՝ աճելու ու զարգանալու նրա անսպառ շնորհների տակ[4], որովհետև Քրիստոս է մեր անզուգական Թագաւորն ու Նրան հաւատացողներս ենք Նրա յաղթական արքայութեան որդիներն ու ժառանգները: Նա թագաւորաբար կառավարում է Իր հոտն Իր Ս. Հոգով, Նրա անւամբ են խոնարհւում բոլոր ծնկները[5] (Փիլ., Բ 10) և

[1] Մամբրէ Վերծ., էջ 69:
[2] Եղիշէ, էջ 306:
[3] Մատթ., ԻԲ 44, Մարկ., ԺԲ 365, ԺԶ 19, Կող., Գ 1, Եբր., Ա 3, Ը 1, Ժ 12:
[4] Յովհ., Ա 17, Ը 32, 36, Գաղ., Դ 31:
[5] «Որովհետև Քրիստոս ոչ սոսկ մարդկութեան անունն է և ոչ էլ լոկ Աստուածութեան, այլ ասում է Աստուած և մարդ, այսինքն՝ երկուսը միացած անշփոթաբար և անճառապէս: Ոչ թէ իբրև ջուր գինու հետ խառնւած, շփոթւած և երկուսն էլ իրենց բնութիւններից զրկւած, որովհետև խառնւածը ոչ ջուր է և ոչ գինի, այլ աստուածային բնութիւնը մարմնի հետ միաւորւելիս երկուսի յատկութիւններն անշփոթ պահեց, ինչպէս մարդու հոգին է մարմնի մէջ, թէպէտ և տիրապէս ապացուցելի չէ: Որովհետև Աստծու Բանի մարմին լինելը մտքի հասողութիւնից վեր է. [այն] չքնաղ և զարմանալի խառնումն է: Ինչպէս ասում է Մեծն Գրիգոր Աստուածաբանը. «Ով նոր խառնումն, ո՜վ սքանչելի խառնւածք»[21*]: Բանից և մարմնից ճշմարտապէս մի Քրիստոս է, ինչպէս մարդն է [բաղկացած] հոգուց և մարմնից, ինչպէս առաքեալն է ասում. «Մեզ համար մէկ է Հայր Աստուած, որից է ամենայն ինչ և մէկ է Տէր Յիսուս Քրիստոս, որով կայ ամեն բան»: Թող ամաչեն երկաբնակները, որովհետև ինչպէս առաքեալը Հօրը մէկ Աստուած անւանեց առանց մարմնի, այդպէս էլ մէկ Տէր Յիսուս Քրիստոսին Որդի՝ մարմնով: Որով յայտնի է, թէ անճառելի միաւորութիւնից յետոյ մէկ է և երկու չի ասւում: Եւ եթէ առաքեալը մէկ է ասում՝ ո՞վ է, որ պիտի յանդգնի երկուսի բաժանել: Եւ Տէրը Նիկոդէմոսին ասաց. «Ոչ ոք երկինք չի բարձրացել, եթէ ոչ Նա, որ իջաւ երկնքից՝ Մարդու Որդին, որ երկնքից էր (Յովհ., Գ 13): Պարզ է, որ Մարդու Որդի Բանին անւանեց, որովհետև երկնքից Բանն իջաւ և ոչ թէ մարմինը: Եւ Հայրը վկայում էր Հորդանանում և Թաբոր լերան վրայ. «Դա է իմ սիրելի Որդին», ինչը ցոյց է տալիս միութիւնը և յանդիմանում երկու ասողներին: Որովհետև երբ Հայրն Աստուած Իր եզակի անունով «գայ» է ասում, ինչը մէկ բնութեան

Նրա թագաւորութեանը հաղորդ լինելով կարող է ամենայն ոք և ամենայն ինչ այս աշխարհում յարատևել[1]: Եւ այժմ իւրաքանչիւր հաւատացեալ, որ խոնարհւում է Նրա անզուգական Պատարագի ու Խաչի առաջ, բարձրանում է և Նրա թագաւորական փառքերի տեսութեանը, որի իսկական հայացքին պէտք է արժանանանք, երբ մեր փրկութիւնն իրագործողը թագաւորական փառքով գայ և ամենայն ինչի վերջնական վախճանն ազդարարի:

ԻԵ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏԻԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԻՔԸ

Քրիստոսի Աստուածութեան ու փրկչութեան վերաբերեալ հաւատիքը արդէն բերեցինք Նրա մարդանալուն նախընթաց գրեթէ բոլոր ժամանակների մարգարէութիւններից: Սակայն որպէսզի մեր հաւատքի հաստատութիւնը կատարեալ լինի, պէտք է առաջ բերենք նաև Նրա ժամանակների վկայութիւնները: Առհասարակ անձի վերաբերեալ փաստեր կարող են նկատել թէ՛ իր վկայութիւնները, թէ՛ իր խօսքերը, թէ՛ իր կեանքը և գործերը, թէ՛ ուրիշների ասածները և թէ նրա գործունէութեան արձագանքները: Քրիստոսի Աստուածութեան վերաբերեալ մենք ունենք այդ բոլոր տեսակի վկայութիւնների ապացոյցները:

1- **Անձի վկայութիւնը** պէտք է անշուշտ համապատասխանի այն մարգարէութիւններին, որոնք դարեր շարունակ ծանուցել են Փրկչի մասին: Այդ նկատմամբ Քրիստոս Ինքն ասում է. «Մի կարծէք, թէ օրէնքը կամ մարգարէներին ջնջելու եկայ. չեկայ ջնջելու, այլ լրացնելու: Ճշմարիտ եմ ասում ձեզ. մինչև որ երկինք ու երկիր անցնեն, մի յոտ (ամենափոքր չափով) իսկ, որ մի նշանախեց է, օրէնքից և մարգարէներից չի անցնի, մինչև որ այս բոլորը կատարւի» (Մատթ., Ե 17): Ուրեմն Նա յայտնում է, որ թէ՛ Իր մէջ պէտք է

ակներև ցուցիչն է՝ ո՞վ է, որ կը յանդգնի երկու ասել: Եւ ով կամենայ սովորել՝ Քրիստոսի մէկ բնութեան վկայութիւնները բազում են Ս. Գրքում» (Խոսր. Անձևացի, Մեկն. ժամ., էջ 177, 354-357):
[1] Յովհ., ԺԸ 36, Եբր., Բ 16, ԺԳ 28, Մատթ., ԻԸ 18, Զաք., Թ 9-17, Ե., Թ 5, Ա Պետ., Բ 9, Եփ., Ա 20, Յայտ., Ա 4:

կատարուէր բովանդակ մարգարէութիւնը և թէ՛ Ինքը պէտք է լրացնէր բոլոր բարոյական և աստուածային օրէնքները: Նա լրացնելով այդ օրէնքները, պէտք է այնպէս հաստատէր, որ յաւիտեան մնային և ոչ մի փոփոխութեան չկարօտէին. իսկ մարգարէութեան լրացումը կամ կատարումն իրականացնում է մարդկութեան սպասողական յոյսը: Մարգարէութիւնների կատարման մի էական կէտն էր, որ Քրիստոս լինէր այն, ինչ Աստուած յայտնել էր նրանց միջոցով: Որ այդ իսկապէս եղել է, վկայում է Քրիստոս՝ ասելով. «Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը և կեանքը» (Յովհ., ԺԴ 6): Պօղոս առաքեալն էլ այդ բացատրում է նկատելով, որ Քրիստոսի մէջ «ծածկուած են իմաստութիւն և գիտութեան ամեն տեսակ գանձեր» (Կող., Բ 3): Ըստ այսմ Քրիստոս է լոյսի և ճշմարտութեան անստեղծ և յաւիտենական աղբիւրը, որից բխել են աշխարհի բոլոր ճշմարտութիւնները, որոնք երևացել են թէ՛ Հին և թէ՛ Նոր Կտակարանում և թէ՛ հեթանոս աշխարհում: Բայց որովհետև աստուածային բոլոր ճշմարտութիւնները միանգամից անկարելի էր շնորհել, քանի որ Քրիստոսի շրջապատողները չէին կարող հասունացած լինել այդ ամենն ընդունելու համար (Յովհ., ԺԶ 12, 13), ուստի և Քրիստոս չի կամենում զրկել մարդկանց ճշմարտութիւնը գտնելու միջոցներից և ասում է. «Երբ որ գայ Նա՝ Ճշմարտութեան Հոգին, ամենայն ճշմարտութեամբ կառաջնորդի ձեզ» (ԺԶ 13): Առաքեալները չէին կարող ճշմարտութեան մանրամասնութիւններն իմանալ առանց Ս. Հոգու լուսաւորութեան, իսկ Ս. Հոգին պէտք է լուսաւորէր նրանց միայն փրկագործութեան իրականացումից յետոյ (ԺԶ 7):

Քրիստոսի բովանդակ կեանքն ու գործերը ցոյց են տալիս, որ մարգարէութիւնները կատարուել են՝ ինչպէս Ինքն իսկ կամեցել է ճշտիւ: Մարգարէութեան հիմնական կէտն է, որ Քրիստոս պէտք է Աստուած լինի. այս մասին Քրիստոս տալիս է իր վկայութիւնը: Նրա ամբողջ գործունէութեան ու փրկագործութեան հիմքը Նրա Աստուածութիւնն է, առանց որի նա իրագործումը չի լինի մարգարէութիւնների: Քրիստոս տալիս է և նշան, թէ ինչով պէտք է ճանաչենք Նրա Աստուածութիւնը. Նա ասում է, թէ մարդիկ պէտք է նայեն ու տեսնեն, որ Ինքը գիտի, թէ որտեղից է եկել և ուր է գնում, որ հէնց Հայր Աստուած է իր մէջ և իր մասին է վկայում և թէ Իր գործերն էլ ապացոյց են Իր խօսքի ճշմարտութեան (Յովհ., Ը 14, Ե 31, 32, 36): Այս բացատրութիւնը Քրիստոս յաճախ է տալիս և բոլորն ի մի ամփոփելով՝ վճռաբար ասում է. «Հաւատացէք

ինձ, որ ես Հօր մէջ եմ և Հայրը՝ իմ մէջ, իսկ եթէ ոչ՝ գործերի համար հաւատացէք ինձ» (Յովհ., ԺԴ 11): Ուրեմն Նա կարող է ամենքի առաջ վկայութիւն տալ Իր անձի մասին, քանի որ Նա յայտնապէս ասում է, թէ ո՞ր վկայութիւնն է ճշմարիտ: Նա բացարձակ հարցնում է ամենքից. «Զեզանից ո՞վ կը յանդիմանի ինձ մեղքի համար» (Ը 46, Է 17, ԺԴ 30) և բոլորի առաջ յայտնում է, որ ինքն է Աստծու Միածին Որդին (Գ 16, Ե 18, Ժ 33), որի համար մոլեռանդ հրեաներն ուզում էին մինչև անգամ քարկոծել Նրան: Այդպէս և շատ յաճախ վկայում է Քրիստոս «Ես և Իմ Հայրը մի ենք» (Ժ 30). «Ով տեսաւ ինձ՝ տեսաւ Հօրը», ասում էր Փիլիպոսին, որ խնդրում էր ցոյց տալ Հօր Աստծուն (ԺԴ 9). «Որովհետև, ինչպէս Հայրն Ինքն Իր մէջ կեանք ունի և կեանք է տալիս, նոյնպէս և Որդուն տուեց՝ Ինքն Իր մէջ կեանք ունենալ և տալ» (Ե 26): «Սակայն Հայրը ոչ մէկին չի դատում, այլ ամեն դատաստան տուել է Իր Որդուն, որպէսզի ամենքը պատուեն Որդուն, ինչպէս պատուում են Հօրը» (Ե 22): Այսպիսի օրինակներ տեսանք և առաջ: Քրիստոս նախքան իր մահն էլ վկայեց Իր Մեսիա լինելու մասին քահանայապետի առջև (Մատթ., ԻԶ 64): Այլև ասաց, որ Իր համբարձումից յետոյ էլ Տէր է ամենքի վրայ. «Ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն Իմ անունով, այնտեղ եմ Ես, նրանց մէջ» (Մատթ., ԺԸ 20): «Ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (ԻԸ 20): «Ինձ է տրուած ամեն իշխանութիւն երկնքում և երկրի վրայ» (ԻԸ 18): Այսպիսով Քրիստոսի անձի վկայութիւնը կատարելապէս հաստատում է Իր Աստուածութիւնը:

2- Քրիստոսի խօսքերը վերաբերում են մարդկութեան փրկութեանը և Աստծու արքայութեան իրականացմանը. ինչ որ Աստուած տուել էր հեծող մարդկութեան ընտրեալ մասին իբրև աւետիք, Քրիստոս այդ ամենն իրագործեց: Նա պէտք է փրկէր մարդկութիւնը, միացնէր Աստծու հետ, վերահաստատէր Աստծու արքայութեան մէջ և ինքը բժշկէր նրանց ու խնամէր. «Քանի որ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տուեց, որպէսզի ով Նրան հաւատայ՝ չկորչի. այլ ընդունի յաւիտենական կեանք» (Յովհ., Գ 16): Ինքը Քրիստոս էլ ասում է. «Առողջներին բժիշկներ պէտք չեն, այլ՝ հիւանդներին: Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ՝ մեղաւորներին՝ ապաշխարութեան» (Ղուկ., Ե 31-32): Նա ցոյց է տալիս, որ Ինքն է ճշմարիտ խնամողն ու հովիւը հոտի. «Ես եմ քաջ հովիւը, քաջ հովիւն իր անձը տալիս է ոչխարների համար» (Յովհ., Ժ 11):

Ըստ որում և յայտնում է, որ Ինքն է ճշմարտութիւնը, ճանապարհն ու կեանքը (ԺԴ 6), աշխարհի լոյսը (Ը 12, ԺԲ 46), կենդանի հացը (Զ 35) և որ Ինքը մարդկանց համար չարչարելու է ու մեռնելու, որպէսզի յարութեամբ էլ կեանք տայ ամենքին (Մարկ., Ը 31, Յովհ., Գ 14, Մատթ., ԺԲ 40), որ ինքը պէտք է թաղուի և յառնի Յովնան մարգարէի նշանի նմանութեամբ և նրան նայելով մարդիկ պէտք է փրկուեն, ինչպէս անապատում կոտորուողները Մովսէսի օձին նայելով ազատւում էին մահից: Նա յայտարարում է, որ Ինքն Իր արիւնը թափելու է մարդկանց մեղքի համար (Յովհ., Զ 51, Ժ 15) և որ Ինքը եկել է ոչ թէ «ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու և Իր անձը տալու որպէս փրկանք շատերի փոխարէն» (Մատթ., Ի 28):

Քրիստոս Իր վարդապետութեամբ լրացրեց բարոյական օրէնքը և պահանջեց ապաշխարութիւն և հաւատք (Մատթ., Դ 17, Մարկ., Ա 15). ըստ որում նա ուսուցանում էր, որ էապէս միանանք իր հետ (Մատթ., Ժ 37, ԺԶ 24, Յովհ., ԺԵ 5) և շեշտում էր. «Առանց ինձ ոչինչ չէք կարող կատարել»: Հաղորդակցութեան միջոց ևս տուեց, այն է՝ ջրով և հոգով հաղորդութիւն կենդանարար մարմնին և արեանը (Յովհ., Գ 3-6, Յովհ., Զ 53, 55): Իրենով դէպի փրկութիւն դիմողին Քրիստոս տալիս է Աստծու արքայութիւնն ու երջանկութիւնը. այդ երկնային շնորհների էութիւնը Նա ամենապարզ կերպով բացատրեց հասկանալի առակներով, որպէսզի մարդիկ լաւ ըմբռնեն և երբեք չմոռանան: Առ Աստուած չդիմողին և երանութիւնն աշխարհի նիւթի մէջ որոնողին էլ Քրիստոս յիշեցրեց այդ ձգտմանը հետևող պատիժը, այլև խոստացաւ ու յայտնեց, որ Աստծու արքայութիւնն ամբողջ մարդկութեան համար է (Յովհ., ԺԹ 30, Ի 16, ԻԱ 43): Ուրեմն Քրիստոս իր վարդապետութեամբ ևս ցոյց է տալիս, որ Ինքն իբրև Աստուած փրկութիւն է պարգևում հաւատացող մարդկութեանը և իբրև ճշմարիտ դատաւոր պատժում է անաստուածներին: Նրա վարդապետութիւնն իր կատարելութեամբ մի բարձրաձայն ապացոյց է նրա Աստուածութեան. Նա տալիս է այն ամենն, ինչ որ պէտք է տայ մի ճշմարիտ աստուածային յայտնութիւն, այսինքն՝ թէ՛ անցեալը լրացնելով, թէ՛ ներկայի ճանապարհը հարթելով ու լուսաւորելով և թէ՛ հանդերձեալը պարզ ու որոշ իբրև ճշմարիտ մարգարէ մեզ տեղեկացնելով: Ըստ որում Նրա քարոզութիւնը մարդկային չէր, այլ աստուածային. ուստի և Նրա վրայ զարմանում էին, որ ամեն ինչ գիտէր, թէև չէր սովորել (Յովհ., Է 15-19) ամեն ինչ բացատրում էր խօսքով ու համապատասխան

գործով և ուսուցանում էր ոչ ինչպէս դպիրները, այլ՝ իշխանութեամբ և խօսքի մի առանձին զօրութեամբ փայլելով:

3- Քրիստոս իր կեանքով էլ կատարելապէս համապատասխանում է Իր Աստուածութեանը: Նա լրացնում է օրէնքն ու մարգարէութիւնը ոչ միայն խօսքով, այլև գործով ու կենցաղով և այս մեծապէս զանազանում է Նրան բոլոր մարգարէներից: Նա պահանջում է, որ բարոյականութիւնը ոչ թէ կեղծ փարիսեցիների ասածի պէս լոկ արտաքուստ ցոյց տրւի, այլ՝ մարդու ներքին աշխարհից, ճշմարիտ համոզմունքից բխի: Եւ որպէսզի Իր այդ պահանջը լիապէս ստիպողական դառնայ, Ինքը ևս Իր կեանքով ու վարքով ամենակատարեալ օրինակն է տալիս Իր ասածների իրագործման, այնպէս որ Քրիստոս ոչ միայն կատարելութեան իսկական տիպար է, այլև օրինակ է ամենքի հետևողութեան համար (Հռ., Ե 18, Գաղ., Դ 4, 5, Ա Պետ., Բ 21): Եւ մենք տեսնում ենք, որ Նրա կեանքի մէջ մի փոքրիկ ստուեր անգամ չկայ: Նրա սուրբ և առաքինի կեանքի ապացոյցները շատ են. Նա Ինքն է դիմաւորում Իրեն ձերբակալողներին և ասում. «Ո՞ւմ էք փնտռում».- «Ես եմ»: Նա դատաստանի առջև հաստատում է Իր այն ասածները, որոնց համար Նրան դատապարտում էին, իսկ իրեն չարչարողների ու խաչողների համար ասում է. «Հայր, թող դրանց, որովհետև չգիտեն, թէ ինչ են անում» (Ղուկ., ԻԳ 34): Առաքինութիւնը, հեզութիւնն ու խոնարհութիւնը մարմնացած էր Քրիստոսի մէջ և ինչպէս որ Ինքն ասում էր՝ «Իմ արքայութիւնն այս աշխարհից չէ», այնպէս էլ Նրա պաշտօնը և ամբողջ կեանքը մեղքի կամ աշխարհային իշխանութեան կատարեալ հակապատկերն է ներկայացնում (Յովհ., ԺԵ 18-19, հմմտ. Ա Յովհ., Բ 15-17, Գ 1-13): Նրան հալածում էին սրբութեան համար, բայց Նա խոնարհւում էր, հայհոյում էին ողորմածութեան համար, բայց Նա առատանում էր իր բարերարութիւններով. Նրան չարչարում, խաչում էին, բայց Նա օրհնում էր իր թշնամիներին նոյնիսկ խաչի վրայ, դառը կսկիծների մէջ: Նրա ամեն մի գործը, ամեն մի քայլը, կեանքի ամեն հանգամանքի իւրաքանչիւր մանրամասը և ամբողջ ընթացքը համակ աստուածային գործ ու կեանք էր: Կատարեալ ներդաշնակութիւն Նրա ներքին կեանքի մէջ, ներդաշնակութիւն մտքի, զգացմունքի ու կամքի մէջ, առանց տարաձայնութեան ու վրդովմունքի և առանց որևիցէ հակասութեան. **ահա մի աստուածային բնաւորութիւն, որին ադամորդին երբեք չի կարողանում**

հասնել: Վեհութիւն ու պարզութիւն, ճշմարտութեան խստութիւն ու հայրական քաղցրութիւն, հեզութիւն ու արիութիւն, խոնարհութիւն ու հաստատամտութիւն, կարեկցութիւն ու սէր, արդարութիւն, աստուածասիրութիւն և ընկերասիրութիւն, և այս ամենը թէ՛ գիտունների ու թէ՛ տգէտների, թէ՛ բարեկամների ու թէ թշնամիների մէջ փայլում է Քրիստոսի վրայ աստուածապէս[1]: Կատարեալ ներդաշնակութիւն, կատարեալ վեհութիւն, կատարեալ աստուածութիւն՝ «Յիսուս Քրիստոս, երէկ և այսօր նոյնն է և յաւիտեան» (Եբր., ԺԳ 8):

4- Քրիստոսի գործերը պերճախօս վկան են Նրա Աստուածութեան, որոնք և կատարեալ են թէ՛ մարգարէութեամբ ու թէ՛ հրաշագործութիւններով: Ինչ որ հին Ուխտում ծիսական մի նախատիպ էր ներկայացնում և կամ նախագծում մարգարէութիւնների մէջ, այդ ամենը Քրիստոս իրականացրեց ճշտիւ և մի առ մի Իր կեանքով ու գործերով, Իր անձի մէջ: Հին Ուխտի ծիսական օրէնքը լոկ ստուեր էր բարիքների, իսկ քրիստոնէութիւնը՝ բարիքների էութիւնը, բացարձակ բարիքը. այնպէս, որ իրականի երևալով՝ ստուերականը վերանում է: Դրա ամենագեղեցիկ օրինակը տաճարն է, որ անձնաւորւում, անհատականանում է Քրիստոսով, երբ Տէրը բարձրացնում է իսկական տաճարը, որտեղ «ճշմարիտ երկրպագուները Հօրը կերկրպագեն հոգով և ճշմարտութեամբ» (Յովհ., Դ 23) և ամէն ոք կարող է մօտենալ Աստծու Աթոռին (Եբր., Դ 16), այլև լինել «կենդանի Աստծու տաճար» (Ա Կոր., Գ 16): Ինքն էլ հաշտութեան ճշմարիտ զոհ դարձաւ և Իր արեամբ սրբեց Իրեն հետևողներին՝ ամեն կերպ իրագործելով Հին Ուխտի գործնական արդարութիւնը, ըստ որում և տաճարի վարագոյրի պատռումով վերջ տուեց նախատիպ աստուածապաշտութեանը և վաստակաւոր զոհին:

Քրիստոսի գործերից ամենանշանաւոր վկայութիւնն Իր Աստուածութեան մասին տալիս են Նրա հրաշագործութիւնները: Առաջին մարդն Աստծուց նշանակւած էր՝ տէր լինել աշխարհի վրայ (Ծն. Ա 26-28), սակայն Նա իր մեղքով կորցրեց այդ տիրապետութիւնը մինչև անգամ իր մարմնի վրայ: Քրիստոս իբրև երկրորդ Ադամ պէտք է այդ տիրապետութիւնը վերականգնէր կատարելապէս, այսինքն՝ յաղթելով բոլոր այն ընդդիմութիւնները, որոնք պատահում են բնութեան մէջ: Ընկած մարդը ոչ մի կերպ այս անել չէր կարող, իսկ Քրիստոս իբրև

[1] Հմմտ. վերը, գլ. Թ:

կատարեալ մարդ պէտք է այդ տիրապետութիւնը ցոյց տար գերբնական, աստուածային զօրութեամբ: Ահա և աստուածային այդ զօրութեանը յաղթաբար տիրապետելու կարողութիւնը, որով առաջին մարդը բնութեան տէրն էր: Ադամի ժամանակ հոգու տիրապետութիւնը մարմնի վրայ որոշւած էր Աստծուց և սովորական էր, իսկ երբ մարդկութիւնը թուլացաւ, այդ էլ գերբնական դարձաւ և այդ գերբնական զօրութիւնը Քրիստոսի գործերի մէջ որակւում է իբրև հրաշք, ըստ որում այժմ մարդկային թուլութիւնը բնական է, իսկ տիրապետելու զօրութիւնը՝ գերբնական տուրք: Քրիստոսից ելնում է թէ՛ գործի հրաշք և թէ՛ գիտութեան. նա բնութեան մէջ կատարում է այն, ինչ կամենում է և գիտէ ապագան, հեռուն, ներկան և մարդկանց սրտերը, և ոչ մէկի տեղեկութեան կարօտ չէր. «Որովհետև կարիք չունէր, որ մէկը վկայի մարդու մասին, որովհետև Ինքն իսկ գիտէր, թէ ինչ կայ մարդու ներսում» (Յովհ., Բ 25): Եւ այդ ամէնը երևում էր Նրանում ոչ թէ լոկ իբրև Աստծու, այլ իբրև կատարեալ աստուածամարդու մէջ (Մարկ., ԺԳ 32, Փիլ., Բ 6, 7):

Մարգարէները և առաքեալները նոյնպէս հրաշքներ են գործել, սակայն հրաշագործութեան այդ զօրութիւնը տրւում էր մի րոպէի համար և նրանց մէջ գործում էր այդ միանգամայն անցողաբար, մինչդեռ Քրիստոսի մէջ հրաշագործութիւնը նրա էութիւնից էր բխում, ուստի և երբեք չէր ընդհատւում, մշտապէս կատարւում էր, այն էլ լոկ խօսքով, որովհետև ծագում էր Նրա Աստուածութեան ու մարդկութեան միութիւնից: Նրա հրաշագործութիւնն իշխանական էր, իսկ մարգարէներինը և առաքեալներինը՝ ի վերուստ տրւած և ժամանակաւոր:

Հին Կտակարանում հրաշքները տրւում էին ցոյց տալու համար, որ մարգարէներն ուղարկւած էին Աստծուց. այդպէս էլ Քրիստոս հրաշքներ էր գործում Իր Աստուածութեանը հաւատացողների համար. «Այլ ես ունեմ մեծ վկայութիւն, քան Յովհաննէսինը. գործերը, որոնք Հայրը տուեց ինձ, որպէսզի կատարեմ դրանք, նոյն գործերը ինչ գործում եմ, վկայում են իմ մասին, թէ Հայրը առաքեց ինձ» (Յովհ., Ե 36, Ժ 37, 38, ԺԴ 11, 12): Սակայն Քրիստոս միմիայն դրա համար չէր հրաշք գործում, որպէսզի ցոյց տայ, թէ Ինքն է Մեսիան, այլ նրա համար միայն, որ հրաշքը պատկանում էր ուղղակի իր փրկչական գործունէութեանը: Արդարև մարդու մեղքով էին մտել հիւանդութիւնները,

թշուառութիւններն ու մահ, որոնք առաջացել էին աշխարհի մէջ մուտք գործած աններդաշնակութիւնից: Ահա Քրիստոս պէտք է վերահաստատէր հոգու և բնութեան խափանուած ներդաշնակութիւնը: Բայց հարկաւ, մարդիկ այդ երկնային տուրքը կարող են կատարելապէս ձեռք բերել այն ժամանակ, երբ Քրիստոսի շնորհած կեանքը լիովին իւրացնեն, իսկ այդ կը լինի միմիայն այս աշխարհի վախճանին, մինչդեռ այժմ միմիայն այդ փրկութեան սկզբնաւորութիւնն իբրև երաշխիք ունենք մեր հաւատքով:

Քրիստոսի անօրինակ (Մատթ., Թ 33, ԺԷ 16, Մարկ., Է 36) հրաշագործութիւնները մի կարևոր չափով բխում են Նրանից փրկագործութեան համար և ծառայում են առհասարակ հաւատացեալների օգտին[1]. **Նա ոչ մի անգամ հրաշք չի գործում, երբ ժողովուրդը կամենում է տեսնել ու լոկ զարմանալ** (Մատթ., ԺԲ 38, ԺԶ 1, Ղուկ., ԻԳ 8): Նա միշտ հրաշագործում էր թշուառներին ազատելու, հիւանդներին բժշկելու և օգնելու համար և որտեղ հաւատք կամ հաւատքի պատրաստութիւն չէր գտնում, այնտեղ երբեք հրաշք չէր գործում (Մատթ., ԺԳ 38, Մարկ., Զ 5): Այդ է պատճառը, որ Քրիստոս երբեմն բժշկում է և յետոյ Իր մասին յայտնում (Յովհ., Ե 13, Թ 36), երբեմն հրամայում է բժշկւածին կատարուածի մասին չյայտնել այլոց (Մատթ., Թ 30, ԺԲ 16, ԺԶ 20, Մարկ., Ա 44, Գ 12), երբեմն պատուիրում է յայտնել (Մարկ., Ե 19) և երբեմն հիւանդի հաւատացող ազգականի խնդրանքով էր բժշկում (Մատթ., Թ 2, Է 13, ԺԵ 28, Մարկ., Բ 5, Թ 22, Ղուկ., Ե 20, Է 10)՝ նայելով թէ իւրաքանչիւրի հաւատքը զօրացնելու համար ո՞րն է անհրաժեշտ: Մէկին հրամայում էր լռել, որ հեռու մնայ մտքերը ցրելուց և փրկութեան խօսքը իր մէջ մարմնացնի, սուզւելով իր հոգու մէջ. միւսին հրամայում է յայտնել, որ չմոռանայ շնորհակալ լինել իր ստացած շնորհների համար:

Քրիստոս իր առաջին հրաշքը գործադրեց բնութեան նկատմամբ՝ ջուրը գինի դարձնելով (Յովհ. Բ): Այս հրաշքը ոչ թէ ստեղծագործական էր, այսինքն՝ ոչնչից ստեղծելն էր, այլ ամենակարողութիւնն էր ցոյց տալիս արդէն ստեղծուած երկրի վրայ: Ջուրը միշտ գինի է դառնում միայն որթի միջոցով, իսկ այստեղ

[1] Յովհ., Ժ 25, 37-38, ԺԵ 24, ԺԴ 4, Մատթ., ԺԱ 5, 21-26, Ղուկ., Է 22, ԺԳ 32, Գործք., Բ 22, Հռ., ԺԵ 18-19, Բ Կոր., ԺԲ 12, Ա Կոր., ԺԲ 10, 26, Գ 5, նաև Յովհ., Զ 14, Է 31, Մատթ., ԺԲ 23, 28:

Քրիստոս Իր աստուածային հրամանով մի ակնթարթում առանց որթի է գինի դարձնում: Այդ զօրութիւնն աւելի մեծապէս է երևում 5.000-ին և 4.000-ին կերակրելով[1]: Այսպիսի հրաշքներ են և ծովի հանդարտեցումը լոկ «սաստեաց» հրամանով, առատ ձկնորսութիւնը, թզենու անիծումը և այլն[2]: **Բնութեան այդ կատարեալ տիրապետութիւնը Նա ցոյց տուեց մանաւանդ ջրի վրայ գնալով,** որի իրաւունքը տուեց նոյնիսկ Պետրոսին՝ հաւատքով միայն կատարելու: Եւ մենք տեսնում ենք, որ այդ հրաշքի հետևանքը մի խոստովանութիւն է լինում՝ «Արդարև Որդի Աստծու ես դու»:

Երկրորդ տեսակի հրաշքներն են հիւանդներին խօսքի շնորհիւ բժշկելը: Հիւանդութիւնն անշուշտ մարդու անկման հետևանքն է: **Մարդու հոգին իր իսկ մարմնի հետ ներդաշնակութիւն չպահելով կորցրել է իր կենդանացուցիչ ազդեցութիւնը:** Քրիստոս այստեղ էլ պէտք է ցոյց տար կատարեալ իշխանութիւն, ինչպէս և նոյն իշխանութեամբ յարութիւն էր տալու: Պարզ է ուրեմն, որ հիւանդը պէտք է հաւատայ բժշկելու համար, և ոչ միայն ինքը, այլև շատ անգամ իր ազգականները ևս, ըստ որում նախ պէտք է հոգով բժշկեն, որպէսզի հոգևորն ազդի մարմնի վրայ: Այդ պատճառով Քրիստոս միշտ նախ հաւատք էր պահանջում, եթէ այդ պակասում էր: Նա մի զօրութեամբ ազդում էր հիւանդի վրայ ու բժշկում (Ղուկ., Զ 19, Ը 46, Մարկ., Զ 5) և այդ ազդումը լինում էր կամ երկրաւոր իրի միջոցով կամ շօշափելով և կամ լոկ խօսքի ներգործութեամբ, նայելով թէ ո՞րն էր յարմար հիւանդի հոգևոր դրութեանը[3]: Այս հրաշագործութեան բարձր աստիճանն է մեռեալներին յարութիւն տալը, որ երաշխիք է վերջին կատարեալ յարութեան:

Հոգու խանգարման չար հետևանքներից գլխաւորն էր դիւահարութիւնը, որ Քրիստոսի ժամանակ, երբ պէտք է սատանայի իշխանութիւնը բոլորովին

[1] Մատթ., ԺԴ 13, ԺԵ 32, Մարկ., Զ 30, Ը 1, Ղուկ., Թ 10, Յովհ., Զ 1:
[2] Մատթ., Ը 23, Մարկ., Դ 36, Ղուկ., Ը 22, Մատթ., Դ 18, ԻԱ 18, ԺԴ 22, Մարկ., Զ 45, ԺԱ 12, Ղուկ., Զ 16, Ե 1, Յովհ. ԻԱ:
[3] Հմմտ. կոյրերի բժշկումը. Յովհ. Թ, Մատթ., Թ 27, Թ 29, Մարկ., Ը 22, Ժ 46, Ղուկ., ԺԸ 35 կաղերը գնում են, Մատթ., Ը 5, Թ 1, Ղուկ., Է 2, Ե 18, ԺԳ 11, Մարկ., Բ 1, Յովհ. Ե: Բորոտները սրբւում են. Մատթ., Ը 1, Մարկ., Ա 40, Ղուկ., Ե 12, ԺԷ 11: Խուլերը լսում են. Մարկ., Է 31: Զանազան հիւանդներ բժշկում են. Մատթ., Ը 14, Թ 20, Մարկ., Ա 29, Ղուկ., Դ 28, Յովհ., Դ 17, Մարկ., Ե 25, Յովհ., Ը 43, Մատթ., ԺԲ 9, Մարկ., Գ 1, Ղուկ., Զ 6, Յովհ., ԺԴ 1, Ղուկ., ԻԲ 50, Մատթ., ԻԶ 51, Մարկ., ԺԴ 47, Մատթ., Թ 18, Մարկ., Ե 22, Ղուկ., Ը 41, Ղուկ., Է 11, Յովհ., Դ 11:

խորտակէր, աւելի քան սոսկալի էր: Ինչպէս որ զանազան վարակիչ հիւանդութիւններն ու թոյնը քայքայում են մարմինը, այնպէս էլ հոգին ենթարկւում է մեղքի մէջ տիրող սատանայական ներգործութեանը և աւերում մարդու գոյութիւնը[1]: Այդ դիւահարութիւնը ոչ մի կերպ չէր բժշկւում և Քրիստոս որ եկել էր սատանայի խաւարն ու նրա առաջ բերած մեղքի հետևանքները վերացնելու համար, գլխաւոր տեղ պէտք է տար դրա բժշկութեանը (Ա Յովհ., Գ 8), լոկ հրամայելով, որ դևերը թողնեն դիւահարներին: Այս բժշկութիւնը շատ յաճախ է լինում և ապացոյց է Քրիստոսի աստուածային իշխանութեան նաև սատանայի վրայ[2]: Բոլոր այդ հրաշքները բխում էին Քրիստոսից իբրև աստուածամարդուց և ապացոյցներ էին, որ նա վերացնում է հոգու ու մարմնի աններդաշնակութիւնը և տալիս է հոգուն իշխանութիւն բնութեան ու մարմնի վրայ:

5- Քրիստոսի ժամանակ ամբողջ ժողովուրդը տեսնում էր, որ Նրա մէջ աստուածային մեծ զօրութիւն է գործում, որքան էլ նրանք չէին հասկանում, այնուհանդերձ վկայում էին, որ Քրիստոս «նրանց սովորեցնում էր իշխանութեամբ և ոչ թէ դպիրների նման» (Մարկ., Ա 22): Նրանք զարմանում էին Քրիստոսի այդ իշխանական զօրութեան վրայ (Մատթ., ԺԳ 54, Մարկ., Ա 27): Նրանք չէին տեսել այդպիսի մարդ, ուստի և նրանցից շատերը մարգարէ էին համարում նրան, իսկ ոմանք ուղղակի Քրիստոս ճանաչելով՝ փառաբանում էին Աստծուն և շատերը հաւատում էին (Յովհ., Է 40, 41, 46): Շատերն էլ գալիս էին, որ ուժով տանեն Նրան ու թագաւոր կարգեն, սակայն Քրիստոս խոյս էր տալիս և առանձնանում լեռները (Յովհ., Զ 15): Այդ պատճառով էլ լոկ մարմնաւոր, նիւթական և աշխարհային շահերին հետամուտ ժողովուրդը խիստ գրգռւում էր Նրա դէմ և կամենում էր ոչնչացնել: Իսկ փարիսեցիները տեսնելով, որ նա իր աքանչելի վարդապետութեամբ գրաւում էր ժողովրդին, չգիտէին, թէ ինչ կերպ մեկուսացնեն նրան:

Եւ ահա տեսնում ենք, որ Քրիստոսի թշնամիները Նրա դէմ մի բան անգամ չեն գտնում դատապարտելու. այսպէս վկայում է Պիղատոսը (Մատթ., ԻԷ 24,

[1] Տե՛ս Եզնիկ, էջ 179-180:
[2] Մարկ., Ա 23, Ղուկ., Դ 33, Մատթ., Ը 28, Մարկ., Ե 1, Ղուկ., Ը 26, Մատթ., Թ 32, Ղուկ., ԺԱ 14, Մատթ., ԺԲ 22, Մատթ., ԺԵ 21, Մարկ., Է 24, Մատթ., ԺԷ 14, Մարկ., Թ 17, Ղուկ., Թ 37:

Ղուկ., ԺԴ 14, 15), նրա կինը (Մատթ., ԻԷ 19), և մինչև իսկ նրա թշնամիները ասում էին. «Վարդապետ, գիտենք, որ ճշմարտախօս ես, և Աստծու ճանապարհը ճշմարտութեամբ ես ուսուցանում և ոչ մէկից չես քաշւում ու ոչ մի մարդու աչառութիւն (կողմնակալութիւն) չես անում» (Մատթ., ԻԲ 16): Խաչահաններն անգամ վկայեցին, թէ «Արդարև, սա Աստծու Որդի էր»[1]: Վկայում են նոյնպէս և Յուդան (Մատթ., ԻԷ 3-40), Նիկոդիմոսը (Յովհ. Գ) և ուրիշներ: Նրա յարութեան մասին վկայում են ոչ միայն բազմաթիւ տեսնողներ, այլև առաքեալներն ու աւետարանիչները, որոնք գրեթէ բոլորն էլ Քրիստոսի հալածանքի ժամանակ փախչում էին և աղքատ ու տգէտ դասից էին: Նրանք Քրիստոսի խաչելութեան պահին հեռացան (Մատթ., ԻԶ 56, Մարկ., ԺԴ 50) և նոյնիսկ հին զբաղմունքի վերադարձան (Յովհ., ԻԱ 3), ուստի և Եղիշէն գեղեցկապէս ասում է. «Տեսնո՞ւմ ես՝ որքան է մտքի թանձրութիւնը. չէին ըմբռնտանում՝ Տիրոջ կողմից այնքան խրատւած և ուսուցւած, Սուրբ Հոգով յղկւած և թրծւած լինելով, տակաւին հատու չէին, ուրեմն՝ հարկ էր սրել նրանց»[2]: Այդ տգէտ, կոշտ ու կոպիտ մարդիկ Քրիստոսի յարութիւնը տեսնելով միայն հաւատացին[3] և ապա ըստ նրա պատուէրի հաւաքւեցին և Սուրբ Հոգին ընդունելով՝ քաջահրաշ քարոզիչներ դարձան, որոնք դիմում էին դէպի չարչարանք ու մահ[4], ասելով. «Իսկ մենք չենք կարող ասել, ինչ որ տեսել ենք և լսել» (Գործք., Դ 20): Այլև նրանց աղաղակող տգիտութիւնն իսկ ակներևօրէն վկայում է Քրիստոսի Աստուածութեան մասին, որ վառեց զինավառեց նրանց աստուածային բարձրագոյն ճշմարտութիւնով, իսկ նրանց հասած բանական ու գործնական արդիւնքով զարմացրեց աշխարհի բոլոր իմաստուններին, որոնց մէջ նրանք հրապարակով ու բացարձակ քարոզում էին ու լոյս տարածում[5]: Դրանցից շատերը մինչև անգամ Քրիստոսի յարութիւնից յետոյ հեթանոս էին, սակայն վկայում էին նրա Աստուածութեան մասին, ինչպէս Մարկոսը, Ղուկասը, Պօղոսը և այլն: Վերջինս Քրիստոսի աստուածային գործերը թարկելուց յետոյ՝ խօսքն ուղղելով թերահաւատ կորնթացիներին, գրում է. «Եւ

[1] Մատթ., ԻԵ 54, Մարկ., ԺԵ 39, Ղուկ., ԻԳ 47, Հմմտ. Եղիշէ, էջ 263:
[2] Եղիշէ, էջ 329, 336, 337:
[3] Հմմտ. և Ղուկ., Ե 8, Ա Պետր., Բ 22, Գ 18, Ա Յովհ., Բ 29, Գ 57, Կոր., Ե 17, 21, Գործք., Գ 14, Դ 27, 30, Եբր., Դ 14, Է 26:
[4] Եղիշէ, էջ 341:
[5] Մատթ., Ե 10, Եղիշէ 334, 348, 350:

երևաց Կեփասին և ապա Տասներկուսին, ապա երևաց միանգամից աւելի քան հինգ հարիւր եղբայրների, որոնցից շատերը կան մինչև այժմ, ոմանք էլ ննջեցեալ եղան: Եւ ապա երևաց Յակոբոսին, ապա բոլոր առաքեալներին: Ամենից յետոյ երևաց և ինձ՝ անարգիս» (Ա Կորնթ., ԺԵ 5-8):

Քրիստոսի աստուածային հեղինակութեան մասին վկայում են մինչև անգամ հեթանոս գրողներ: Յովսէփոս Փլաւիոս հրեայ պատմիչն էլ ասում է իր՝ 94 թւին գրած «Հնախօսութիւն Հրէից» գրքում[1]: «Այն ժամանակներում էր Յիսուս իմաստուն մարդը, եթէ արժանի է նրան մարդ կոչել, որովհետև սքանչելագործ էր և ուսուցիչ էր նրանց, ովքեր հաճութեամբ հնազանդւում էին ճշմարտութեանը: Հրեաներից ու հեթանոսներից շատերը հետևեցին նրան և հաստատուեց, որ Նա Քրիստոսն է, և երբ Պիղատոսը մեր իշխանների նախանձի պատճառով խաչել տուեց նրան, այնուհետև էլ հաստատ մնացին իրենց ողջ սիրոյ մէջ, որոնք մինչ այդ էլ սիրում էին նրան, որովհետև երրորդ օրը ողջ երևաց նրանց. նրա մասին մարգարէների գրքերն էլ աւետել էին այս ամենը և ուրիշ հրաշալի բաներ ևս, և մինչև այսօր նրա անւամբ կոչւած քրիստոնեաների ազգը չպակասեց»: Այս է վկայում նաև հրէական Թալմուդը, որն ըստ ամենայնի, Քրիստոսին հակառակ է խօսում[22*]:

Նոյն ժամանակից է Մարայի ասորերէն թուղթը[2] յղւած իր որդուն՝ Սերապիոնին (73թ.): Մարան յոյն դասական իմաստասիրութեամբ կրթւած մի անձ էր, որ գոհ չմնալով այդ ուսմունքով, աքսորից գրում է, մխիթարում ու խրատում իր Որդուն՝ փառաբանելով Քրիստոսին իբրև իմաստուն թագաւորի, որին սպանելով՝ հրեաներն արագացրին իրենց պետութեան անկումը, սակայն Նա Իր նոր օրէնքով յաւիտեան կապրի[23*]:

Վերջապէս երբ Քրիստոսի առաքեալները սկսեցին Անտիոքում քրիստոնեայ կոչւել (Գործք., ԺԱ 26), Քրիստոսի անունով պարծենալ (Ա Կոր., Գ 23) և հեթանոսները ևս սկսեցին նրանց քրիստոնեայ անւանել (Ա Պետ., Դ 16), այնուհետև քրիստոնէութիւնը նոյնիսկ հեթանոսների մէջ պայծառութեամբ փայլեց: Նրա հաստատումը և յաղթական ու փառաւոր տարածումը յիշում են

[1] ԺԸ 3, տե՛ս 1, Եւս. պատմ. Եկ., Ա 11:
[2] Cureton, Spic. Syriacum. Lond. 1855:

Տակիտոսը (54-119)[1], Սուետոնիոսը (75-160)[2], Պլինիոս կրտսերը, Բիւթանիայի բդեշխն էր Տրայանոս կայսեր յղած թղթով (112թ.), հակաքրիստոնեայ Կելսոսը (Բ դար), Լուկիանոսը (մեռ. 200-ին), Պորփիւրոս փիլիսոփայական (մեռ. 304) և այլք[24*]:

6- **Քրիստոնէութեան տարածումն ու հետևանքն** էլ հզօր փաստ է նրա աստուածայնութեան: Նա ոչ բռնութեամբ, ոչ ճարտարութեամբ, ոչ արտաքին գրաւչութեամբ և ոչ գիտութեան զէնքով, այլ հալածանքների, նեղութիւնների մէջ, ուժի և բռնութեան դէմ, տգէտ ձկնորսների. մարդկային ճարտարութիւնից զուրկ քարոզիչների աւետարանելով, հալածելով ու մեռնելով է տարածւել հզօր ու կռապաշտ պետութիւնների մէջ իսկ: Տարածւելով այդպիսի հանգամանքներում քրիստոնէութիւնն ունեցաւ իր բարերար լոյսի ներգործութիւնն ամեն դասի ու խաւի, ամեն գիտութեան ու քաղաքականութեան և կեանքի բոլոր անկիւնների վրայ: Անձինք ու ազգեր, հասարակութիւններ ու պետութիւններ, ընտանիք ու մարդկութիւն՝ ամենքն էլ սկսեցին կերպարանափոխւել ու բարեկարգւել նրա լոյսի շողերի տակ: Նա տուեց պետութիւններին այն ամրութիւնը, որ հեթանոսները սպասում էին իրենց կրօնից ու հիասթափւում, և մտցրեց հասարակական կարգեր: Աշխատանքի խթանումով (Բ Թես., Գ 10, Ա Տիմ., Ե 4, Ը 16) գիտութիւն, արուեստ ու տնտեսութիւն, բարեգործական ամեն հաստատութիւն, դպրոց, հիւանդանոց, անկելանոց, աղքատանոց, որբանոց՝ վանքերի մօտ, որոնք ծառայում են մարդկանց դարմանումին ու բարեկեցութեանը, նոր ընթացքով, նոր կազմակերպութեամբ ու նոր ոգով զօրացան և ակնյայտնի արդիւնքներ արձանագրեցին քաղաքակրթութեան պատմութեան մէջ[3]: Ամենայն ինչ նոր եղաւ, նորոգւեց ու նոր արարած դարձաւ (Գաղ., Զ 15, Եփ., Դ 24, Բ 10), ընդմիշտ թօթափելով և վերացնելով անհաւասարութիւնն ու ստրկութիւնը: Հաւատքը, յոյսը, սէրը և ըստ այդմ հաւասարութիւնն ու խոնարհութիւնը դարձան առաքինութեան ու բարոյականութեան անսասան հիմնաքարեր, որոնք հեթանոս աշխարհում անծանօթ սկզբունքներ էին: Բարոյական այդ սկզբունքները կենդանութիւն և արիութիւն տալով մարդուն և դաստիարակելով թէ՛

[1] Տարեգ., ԺԵ 44:
[2] Կենս. Կղոդ., ԻԷ Ներոնի ԺԶ:
[3] Տե՛ս Մեծն Ներսէսի գործերը Բուզանդի Պատմութեան մէջ:

տղամարդուն, թէ՛ կնոջը և թէ՛ մանուկներին, նրանց բարձրացրին իսկական արժանաւորութեան ու առաջադիմութեան աստիճանի վրայ: Ուստի և հին աշխարհի հալածանքի հզօր ներկայացուցիչ ծերակոյտի գիտուն անդամ Գամաղիէլը, յիշելով մարդկային գործի անցաւորութիւնը, ասաց մարգարէաբար. «Արդ, այժմ ասում եմ ձեզ, հեռու մնացէք այդ մարդկանցից և բաց թողէք նրանց, որովհետև եթէ այդ խորհուրդը կամ գործը մարդկանցից է, կը քանդուի, իսկ եթէ Աստծուց է, չէք կարող դրանք ձախողել. միգուցէ աստուածամարտ էլ դառնաք» (Գործք., Ե 38-39): Մի խորհուրդ, որին լսեցին այն ժամանակի քրիստոնէութեան կատաղի թշնամիներն իսկ և պէտք է լսեն յաւիտեան:

ԻԶ

ՓՐԿԶԱԲԱՆԱԿԱՆ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաւատամքի մէջ արտայայտուած պարզ դաւանանքը ճշտիւ արձանագրում է, որ Քրիստոս կատարեալ մարդ է և միանգամայն կատարեալ Աստուած, այսինքն՝ ճշմարիտ Աստուածամարդ: Այդ դաւանանքն արդէն բաւական պէտք է լինէր, ճշմարիտ հաւատացեալի համար, սակայն գտնուեցին այնպիսի անձինք, որոնք զանազան մոլորութիւններ յարուցեցին հաւատացեալների մէջ և սկսեցին Աւետարանին բոլորովին հակառակ հայեացքներ տարածել: Այդ մոլորութիւնների տարածմանը նպաստեցին հին հեթանոսական հայեացքներն ու գիտութիւնը, երբ դրանց քաջատեղեակ անձինք քրիստոնեայ դառնալով՝ սկսեցին իրենց մտաւոր պաշարի ու տեսութեան համեմատ հասկանալ ու ձևակերպել քրիստոնէական ճշմարտութիւնները: Այդպիսի մոլորութիւնները մի անգամ ծագելով՝ հետզհետէ զարգացան և մեծամեծ վէճեր առաջացրին քրիստոնեաների մէջ, ըստ որում և այդ վէճերը սնունդ առան հետևեալ նորանոր պատճառներից:

Նախ՝ այդ մարդիկ զանազան վիճաբանութիւնների մէջ ընկնելով՝ ոչ թէ Ս. Գրքով ու ս. հայրերի գրուածներով էին բացատրում ու պաշտպանում եկեղեցու ճշմարիտ դաւանանքը, այլ առաւել զարկ էին տալիս իրենց միակողմանի մտածողութեանը:

Երկրորդ՝ դրանք այդ վէճերի մէջ անձնական շահեր ունէին. այնպէս որ իրենց հայեացքների ընկնելով կամ բարձրանալով որոշւում էր և իրենց պաշտօնն ու վիճակը:

Եւ երրորդ՝ իրենց շահերն աւելի բարձր դասելով՝ երբեք չէին քաշւում Ս. Գրքին բոլորովին խորթ, հեթանոսական և լոկ անձնական վարդապետութիւններ քարոզելուց:

Պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդպիսի մոլորութիւնները սկսւել են բոլորովին փոքր թիւրիմացութիւններից և հասել մեծամեծ այլանդակութիւնների: Եւ որովհետև մոլորեցուցիչները ճանաչւել են աստուածային ճշմարտութիւնների ու եկեղեցու խաղաղութեան հակառակ մարդիկ, ուստի Ս. Հայրերը բանադրել են դրանց ի տեղեկութիւն և ի զգուշութիւն իրենց հօտի:

Այդ մոլորութիւններից ոմանք ժխտում են Քրիստոսի Աստուածութիւնը, ոմանք՝ մարդկութիւնը, ոմանք խախտում են Ս. Երրորդութեան դաւանանքը, ոմանք՝ փրկագործութեան խորհուրդը, ոմանք տրոհում են Քրիստոսի Աստուածութիւնն ու մարդկութիւնը, այնպէս որ դրանք աշխարհային տրամաբանութեան թելադրանքով թերահաւատ հրեաների պէս ընկնում են ծայրայեղ մոլորութիւնների մէջ (Մատթ., ԺԶ 13-16):

Առաջին երեք դարերում քրիստոնեայ հայրերը հազիւ կարողացան ջատագով լինել քրիստոնէական ճշմարտութիւնների, որովհետև հզօրների հալածանքները թոյլ չէին տալիս ազատ շունչ քաշել[25*]: Այդ ժամանակ Ս. Հայրերը ստիպւած էին ընդհանրապէս դիմակայել յունական գնոստիկութեանը, հրէական եբիոնիտութեանը, պարսից մանիքէութեանը և առհասարակ դրանց շփոթ տեսութիւններին[1]: Առաւել յարատևեցին յունական գիտութեամբ խմորուած աղանդաւորները, որոնք սնունդ տուին նաև հետագայ դարերի համար ու մեծամեծ կռիւների ու խռովութիւնների պատճառ եղան: Այդ աղանդաւորների գլխաւոր մոլորութիւնը վերաբերում էր Ս. Երրորդութեան անձանց առնչութեանը, ըստ որում այն յեղեղւելով Գ դարի սկզբից (Պրաքսեասի քարոզութեամբ), ձևակերպւեց յետոյ Սաբէլականութեան մէջ: Սաբէլ Լիբէացին ասում էր, թէ Աստուած մի միութիւն է բացարձակապէս և Իր մէջ ոչ մի տարորոշութիւն չունի,

[1] Մարկիոնի աղանդի մասին տե՛ս Եզնիկ, Դ[26*]:

բայց նա աշխարհը ստեղծելու համար գործում է և ապա աշխարհի զարգացման ընթացքում մարդկանց փրկութեան համար ներկայանում է յաջորդաբար երեք կերպարանքով: Նա նախ՝ ներկայանում է իբրև օրէնսդիր, յետոյ մարդեղութեամբ ներկայանում իբրև Որդի, համբարձւում է և վերջապէս վերստին յայտնւում իբրև Ս. Հոգի՝ հաւատացեալներին սրբագործելու և իր միութեան մէջ վերադառնալու համար: Սակայն այս մոլորութիւնը մերժուեց նախ Աղեքսանդրիայի (261-ին) և յետոյ Հռոմի (262) ժողովներով:

Սաբէլական գաղափարները այլ տարազով և ձևակերպութեամբ մուտք գործեցին Ասորիքի Անտիոք քաղաքում գործող Պօղոս Սամոստացու մոլոր վարդապետութեան մէջ, ըստ որի Որդին և Ս. Հոգին Հօր Աստծու ստորոգութիւնն են: Նա ուսուցանում էր, թէ Քրիստոս լոկ մարդ էր, միայն թէ Իր յատուկ գերազանցութեամբ բարձրացաւ և աստուածային պատուի և անուան հասաւ կամ արժանացաւ: Այս ծայրայեղ մոլորութեան դէմ ելան Ասորոց եպիսկոպոսները, հրաւիրեցին նաև հարևան երկրներից եպիսկոպոսներ ու 264-269 թուերի ընթացքում երեք մեծ ժողովներ գումարելով՝ հրապարակ հանեցին Պօղոս Սամոստացու մոլորութիւնները և բանադրեցին նրան:

Այս մոլորութիւնները պարզապէս հերքւում են Ս. Երրորդութեան երեք անձանց միաժամանակեայ յայտնելով Յիսուսի մկրտութեան միջոցին, Քրիստոսի պատուիրանով, որ հրամայում է մկրտել յանուն Հօր և Որդու և Սուրբ Հոգու, և բազմաթիւ վկայութիւններով, որոնք արդէն յիշել ենք նախընթացում. «Հօրից ելայ և աշխարհ եկայ, դարձեալ թողնելու եմ աշխարհը և գնալու Հօր մօտ» (Յովհ., ԺԶ 28), «Ճշմարտութեան Հոգին, որ Հօրից է դուրս գալիս» (ԺԵ 26), «Մխիթարիչ Սուրբ Հոգին, որ Հայրը ուղարկելու է իմ անունով» (ԺԴ 26) և այլն[1]:

Հակառակ Քրիստոսի և առաքեալների պարզ ու մէկին վարդապետութեանը, Սաբէլի և Սամոստացու մոլորութիւնը չանհետացաւ: Այսպէս, հեթանոսամիտ Լուկիանոսի աշակերտ Արիոսը, որ Աղեքսանդրիայում 313 թւից երէց էր, սկսեց հրապարակապէս քարոզել, թէ Որդին ամեն ժամանակից առաջ էր, բայց ի յաւիտենից չէ, և ստեղծուել է Հօր կամքով ոչնչից, որպէսզի նրա միջոցով աշխարհը ստեղծուի, բայց որովհետև նա Հօր Աստծու

[1] Տե՛ս Յովհ., Ը 23, Գ 17, Ը 42, Զ 38, 51, ԺԶ 27, ԺԷ 4-5, Ե 17, Ժ 24, 30, ԺԹ 7, Մարկ., ԺԴ 61-62, Մատթ., ԻԶ 63-64, Եղիշէ 306:

արարածական կատարելագոյն պատկերն է և Աստծու արարչական տնօրինութեան կատարողն է, ուստի կարելի է նրան ոչ իսկական մտքով Աստուած և Բան կոչել: Արիոսն իր այս ուսմունքի համար ապացոյց էր բերում Քրիստոսի խօսքը թէ՝ «Հայրը ինձանից մեծ է» (Յովհ., ԺԴ 28), մինչդեռ այդ խօսքը վերաբերում է Աստուածորդու՝ Հօրից ծնուած, Հօրից ուղարկուած լինելուն, մարդանալուն և ոչ թէ Նրա էութեանը, ինչպէս երևում է նաև առաքեալների խօսքերից (Եբր., Բ 7-9): Քրիստոս Ինքն էլ շատ յաճախ վկայում է ասելով. «Հայրը, որն առաքեց Ինձ, Իմ մէջ է», «Ես և Իմ Հայրը մէկ ենք», «Հայրը Իմ մէջ է, և Ես Հօր մէջ», «Ով տեսաւ ինձ՝ տեսաւ Հօրը», «Ոչ ոք չգիտէ Հօրը, բայց միայն Որդին և ոչ ոք չի ճանաչում Որդուն, բայց միայն Հայրը». «Այս բանը ցոյց է տալիս միակամութիւնն ու մէկ բնութիւնը և ոչ թէ աւագութիւնն ու կրտսերութիւնը»[1]: Պօղոս առաքեալն էլ գրում է. «Նրա մէջ է մարմնապէս բնակւում Աստուածութեան բովանդակ լրումը» (Կող. Ա 19, Բ 9 և այլն): Նոյնպիսի շատ վկայութիւններ արդէն տեսել ենք: Արիոսը դատապարտուեց Նիկիոյ ժողովի 318 հայրապետների վճռով 325 թւին. նրանց թւում էր և Ս. Արիստակէսը[2]:

Նիկիոյ ժողովի վճիռը հաստատագրուեց Ալեքսանդրի (+328) հեղինակութեամբ և նրա սարկաւագ Աթանասի բացատրութեամբ: Այս անձանց և Ալեքսանդրիայի աթոռի դէմ եղած հակառակութիւնը բաւական էր արդէն, որ արիոսականութիւնը դեռ յարատևէր: Ոմանք այս վէճերում վերստին ընկան Սաբէլականութեան մէջ, ինչպէս Մարցելլուս Անկիւրացին և նրա աշակերտ Փոնտիոսը, սակայն հերքուեցին ու մերժուեցին: Այս և նման հերձուածողների դէմ անտեղիտալի պայքար մղեց Աղեքսանդրի յաջորդ Աթանաս հայրապետը (+373): Արիոսականութիւնը վերջնական ջախջախիչ հարուած ստացաւ Կ. Պոլսի ժողովով 381 թւին[27*]:

Նախընթաց վէճերից դեռևս մտքերը չպարզուեցին: Ս. Աթանաս Ալեքսանդրացին 362 թւին մի ժողովով գումարեց հաստատելով Քրիստոսի աստուածամարդութեան դաւանանքն Արիոսի և Մարցելլոսի մոլորութիւնների դէմ: Սակայն շուտով դուրս եկաւ Ապողինար Լաւոդիկեցին (+390) և սկսեց ուսուցանել, որ Քրիստոս կատարեալ մարդկութիւն չի ունեցել, այլ առել է միմիայն մարդկային

[1] Մամբրէ Վերծ. [էջ 43]:
[2] Հմմտ. Հարց. 36-48:

կենդանի մարմին առանց բանական հոգու, որի տեղը իբր թէ բռնել է աստուածային Բանը: Այս ակնյայտ մոլորութիւնը, որ խախտում է փրկագործութեան էութիւնը, բանադրուեց իր ուսուցողի հետ Կ. Պոլսի 391 ժողովում:

Ապողինարի մոլորութիւնը նոր մեծ վէճի պատճառ եղաւ, որ Ալեքսանդրիայի մեծ դպրոցին հակառակ դուրս բերեց Անտիոքի դպրոցը: 428 թւին Կ. Պոլսի պատրիարք դարձաւ Անտիոքի վանականներից Նեստորը, որ հետևելով Ապողինարի հակառակորդ Դիոդոր Տարսոնացուն (+394), ու նրա աշակերտ Թէոդորոս Մոպսուէստացուն (+429), այլև զինուելով Ալեքսանդրիայի նախաթոռութեան դէմ, սկսեց իր քարոզութեամբ հակառակ ընթանալ այդ դպրոցին: Նեստորը հրապարակ ելաւ՝ չուզենալով Ս. Կոյսին Աստուածածին անուանել, այլ պնդում էր, որ նրան Քրիստոսածին կոչեն, որով ուսուցանում էր, թէ Քրիստոս եղական արարած է, որ Մարիամից ծնուելուց յետոյ միայն, ստանալով աստուածային շնորհ, դարձել է Աստուած: Նա մինչև անգամ իր վարչական ժողովում նզովեց իր ուսմունքի հակառակ վարդապետութիւնը, բայց երբ նրա դէմ դուրս եկաւ Ալեքսանդրիայի Կիւրեղ պատրիարքը, նա սկսեց հետզհետէ մեղմացնել իր մոլորութիւնը: Կիւրեղը գրեց 12 նզովքներ, բանադրելով նրանց, ովքեր կը քարոզեն կամ կը դաւանեն ի Քրիստոս երկու անձ կամ երկու բնութիւն, որոնք Մարիամ ս. Կոյսին Աստուածածին չեն անուանի[28*]: Նեստորն էլ նրա դէմ ընթացաւ 12 հակառակ նզովքներով, որոնք և սարսափելի աղմուկ բարձրացրին: Խռովութիւնն այնքան սաստկացաւ և ժողովրդին տակնուվրայ արեց, որ Նեստորը հանեց իր մոլորութեան խիստ արտայայտութիւններն ու խոստովանեց. «Բնութիւններից իւրաքանչիւրը բարձրագոյն և անշփոթ կապակցութեամբ պատուում են մէկ անձնաւորութեան մէջ»: Սակայն վերջնականապէս նա չհրաժարուեց իր մոլար դաւանանքից: Կիւրեղի կողմն էին բիւզանդական պետութեան բոլոր եկեղեցականները, բացի Նեստորի աջակիցներից: Ի վերջոյ Կիւրեղը 431 թւին գումարեց Եփեսոսի ժողովն ու բանադրեց Նեստորին և նրա մոլորութիւնը: Նրան հետևող «Նեստորականները» մնացին Միջագետքում ու Քուրդիստանում և «Թոմաեանները» Հնդկաստանում:

Նեստորը դաւանելով երկու բնութիւն, դրանով չի կարողանում ազատուել իր մոլորութիւնից. նա երկու անձը մէկ անձ դարձնելով՝ իսկապէս մէկ անձ չի

դաւանում, որովհետև բնութիւնը, որ ամեն գործունէութեան ու գիտակցութեան աղբիւրն է, չի կարող անանձնաւոր լինել: Անանձնաւոր բնութիւն ասել՝ միևնոյն է թէ բնութիւն հասկացութիւնը ջնջել: Հետևաբար, քանի որ ըստ Նեստորականութեան, Քրիստոսի անձնաւորութիւնն աստուածային է, պարզ է, որ Քրիստոսի մէջ ջնջւում է մարդկային բնութիւնը կամ մեր բնութիւնից բոլորովին տարբեր ու նեղ բնութիւն է դառնում և իբրև մի մեքենայ ծառայում աստուածային անձի ձեռքում, և ուրեմն Նեստորն ինքն ընկնում է եւտիքականութեան կամ ապողինարութեան մէջ: Իսկ եթէ ընդունում է, որ մարդկային բնութիւնը Քրիստոսի մէջ անփոփոխ է մնացել, յայտնապէս դաւանում է և երկու անձ նրա մէջ, որովհետև իւրաքանչիւր բնութիւն ունի և իր անձնաւորութիւնը, իր եսը, իր ինքնագիտակցութիւնը: Բնականաբար և պէտք է դաւանի երկու կամք ու երկու ներգործութիւն, քանի որ երկու բնութիւններից իւրաքանչիւրն ունենալով իր անձնաւորութիւնը, իր եսը, իր ինքնագիտակցութիւնը, անհրաժեշտապէս կունենայ և իր կամքն ու ներգործութիւնը[1]: Բայց եթէ Քրիստոսի մարդկային բնութիւնն անձ չէ, այն ժամանակ երկու կամք ու երկու ներգործութիւն էլ չունի և ուրեմն Նեստորը հակասութեան մէջ է ընկնում մի անձ, բայց երկու կամք ու ներգործութիւն քարոզելով: Այսպիսով Քրիստոսի մէջ երկու բնութիւն, երկու կամք ու երկու ներգործութիւն ու մի աստուածային անձ դաւանելը հանգեցնում է եւտիքականութեան ու երևութականութեան՝ ջնջելով Քրիստոսի մարդկութիւնը, և կամ երկուսութեան սկզբունքին հաւատարիմ մնալով՝ պէտք է խոստովանի նաև երկու անձ և ընկնի մարդապաշտութեան (Նեստորականութեան) և Արիոսականութեան մէջ: Նեստորը, մաքառելով ինքն իր մէջ, նախ ընկաւ մարդապաշտութեան (եբիոնականութեան), Սաբէլականութեան և Արիոսականութեան մէջ, և ապա հալածելով և ուշքի գալով՝ իսկապէս մի

[1] «Երկու բնութիւնը առանց հակառակութեան միասին չի կարող լինել», ինչպէս Պօղոսն է ասում. «Մարմինը ցանկանում է հակառակ հոգու և հոգին՝ մարմնի», ուրեմն՝ պարզ է, որ երկու բնութիւնները ցոյց են տալիս Քրիստոսի մէջ երկու կամք, և երկու կամքը՝ երկու որդի. մէկը կամակից Հօրը և միւսը՝ հակառակ Հօրն ու Հոգուն, որով Երրորդութիւնը չորրորդութիւն է լինում և ոչ հաւասարութիւն, որովհետև մէկ Որդին չի կարող երկու բնութիւն և երկու կամք ունենալ: Իսկ եթէ ասեն, որ մարմնի կամքը միացրեց Բանին, ապա նա, որ միացրեց կամքը, որպէս Տէր միացրեց նաև բնութիւնները» (Մովսէս Եղանկացի):

բառախաղութեամբ գլորուեց եւտիքականութեան և երևութականութեան մէջ. երկաբնակութիւնը չազատեց նրան[29*]:

Քրիստոսի մէջ չի կարող որևիցէ կերպով երկուսութիւն դաւանուել և դրանով Աստուածութեան ու մարդկութեան մէջ բաժանում առաջանալ, որովհետև դրանով արդէն փրկագործութեան խորհուրդը քանդւում է: Այդ խորհուրդն իրագործուել է հէնց նրանով, որ չարչարուողը, թաղուողը, մեռնողը և միանգամայն յարութիւն առնողն ու կեանք պարգևողը միևնոյն Աստուածն ու մարդն է, որ Իր միութեամբ մտնում է ադամային անկեալ վիճակն ու բարձրացնում մարդկութիւնը: Քրիստոնէական եկեղեցին երբեք որևիցէ երկութիւն չի վարդապետել Քրիստոսի մէջ: Ս. Հայրերը միշտ շեշտում էին՝ «Ասում ենք մէկ է Որդին, և ինչպէս հայրերն ասացին. Մէկ է Աստծու մարմնացած Բանի բնութիւնը»[1]: Եփեսոսի ս. ժողովն էլ այդ ճշմարտութեան հիման վրայ հաստատեց Կիւրեղի նզովքը[2], որ «Եթէ մէկը նոյն Քրիստոսին միանալուց յետոյ բաժանի երկու դէմքի և ասի, թէ նրանք լոկ ճոխութեամբ ու զօրութեամբ են և ոչ թէ բնութեան միութեամբ, նզովեալ լինի»:

Ուրեմն Քրիստոսի անձն ու բնութիւնը մէկ է. նա Աստուածամարդ է . այդ է պատճառը, որ Ս. Կոյսն էլ կոչւում է Տիրամայր (Ղուկ., Ա 43) և ոչ թէ Քրիստոսամայր, կոչւում է նոյնպէս Աստուածածին, որովհետև նրանից ծնողը միանգամայն Աստուած է: Մարդկային և աստուածային բնութիւնը չի կարող մարդկային բնութեան հետ շփոթուել, այլ խորհրդաւոր կերպով է միացած, ուստի և թէ՛ մարդկային և թէ՛ աստուածային ստորոգելիներ են ընծայւում միևնոյն Քրիստոսին: Այսպիսով ասւած է. «Նա, որ իջաւ երկնքից՝ Մարդու Որդին» (Յովհ., Գ 13), «Երկրորդ մարդը՝ երկնքի Տէրը», «Եթէ ճանաչէին, միթէ՞ փառքի Տիրոջը խաչ կը հանէին», «Ես երկնքից իջայ... կը տեսնէք մարդու Որդուն, որ բարձրանում է, ուր սկզբում էր», «Տիրոջ ժողովրդին, որին Նա փրկեց Իր արիւնով» (Գործք., Ի 28): «Աստծու հետ հաշտուեցինք Նրա Որդու մահւամբ» (Հռովմ., Ե 10, Փիլիպ., Բ 8) և այլն: Եւ մենք տեսնում ենք, որ Ինքն իսկ Իրեն կոչում է երբեմն Որդի Մարդու և երբեմն Որդի Աստծու, Միածին: Իսկ եթէ Քրիստոսի մէջ մի երկութիւն լինէր, այն ժամանակ նրա Աստուածութեան փառքը չէր վերաբերւի մարդկութեանը և չէր փրկագործի մարդուն, այսինքն՝ ոչ կը սրբէր

[1] Առ. Սեկունդոս, տե՛ս Գիրք Պարապմանց, Թ, էջ 409:
[2] Անդ., էջ 472:

մարդուն մեղքերից, ոչ կը բարձրացնէր իր առաջւայ բարձրութեանը, ոչ նրա մեղանչման պատիժը կրած կը լինէր և ոչ Իր յարութեամբ նրան կեանք տւած կը լինէր, մինչդեռ այս ամենը կազմում է փրկագործութեան էութիւնը, առանց որոնց Քրիստոսի մարդանալը չէր համապատասխանի իր նպատակին[1]:

Նեստորի մոլորութեան մի հակառակ ծայրայեղութեան մէջ ընկաւ Կ. Պոլսի վանականներից Եւտիքէսը՝ հետևելով Մանիքեցիների աղանդին և ասելով՝, թէ Քրիստոսի մարմինը երկնաւոր ծագում ունի կամ առերևոյթ կամ թէ մեր մարմնի պէս չէ էութեամբ, այլ նրա Աստուածութեան մէջ կորել է, ինչպէս մի կաթիլ մեղրը անսահման ծովի մէջ, այնպէս որ Քրիստոս ոչ թէ կատարեալ մարդ է և միանգամայն կատարեալ Աստուած, այլ միմիայն կատարեալ Աստուած է և ունի սոսկ մէկ աստուածային բնութիւն: Այս մոլորութիւնը աննկատելի չէր կարող մնալ, ուստի և Ալեքսանդրացի Դիոսկոր պատրիարքը, որ բիւզանդական կայսրութեան մէջ աւանդաբար նախաթոռ և առաջնակարգ դիրք ունէր, գումարեց Թէոդոս կայսեր հրամանատարութեամբ Եփեսոսի Բ ժողովը 449 թւին և նզովեց նրա վարդապետութիւնը: Այսպիսի մի մոլորութիւնը բոլորովին ժխտում է մարդու փրկութիւնը, որովհետև եթէ Քրիստոսի մէջ չկայ կատարեալ մարդկութիւն, այն ժամանակ արդէն ոչ մեղքերի սրբում, ոչ յարութիւն և ոչ բարձրացում ու փրկութիւն կը լինի մարդու համար, ճիշտ այնպէս, ինչպէս արդէն ասացինք Նեստորի մոլորութեան պարագային: Այս մեծ մոլորութիւնն իր հետևողների ձևակերպութիւններով ու վերոյիշեալ հակառակ ծայրայեղութիւններով հանդերձ ընդարձակօրէն բացատրւած ու հերքւած է Ս. Յովհան Իմաստասէրի «Ընդդէմ երևութականց» խորագրով ճառի մէջ[2]: Այլև նոյն հայրապետի ժողովական նզովքը միացնելով այդ մոլորութիւնն Ապողինարեան մոլորութեան հետ, ասում է.

[1] Հմմտ. Եղիշէ, էջ 253, 256, 259, 279:
[2] «Ոչ թէ մի բնութիւն է, համաձայն բնութեան նոյնութեան, որովհետև թէպէտ ասում ենք. Մէկ է մարմնացած Բանի բնութիւնը, սակայն [այդ ասում ենք] ոչ թէ խելայեղ, վայրիվերոյ մտածողութեամբ, իբր թէ՝ մէկը միւսին բացառելու և կամ մէկը միւսի մէջ լուծելու [իմաստով], ինչպէս խոնաւ բնութիւնները, որից ստացւում է ոչ մի բնութիւն, այլ, առանց բաց թողնելու, ինչ որ էր, եղաւ այն, ինչ որ չէր, և այսպէս բարձրագոյնին հաղորդ դարձրեց խոնարհութիւնը՝ մնալով բարձրութեան մէջ և Ինքն Իրեն գտնելով խոնարհութեան մէջ, ինչպէս սուրբ Գրիգորն է ասում «Թէպէտ և յանուն մեր իջաւ անարգութեան մէջ, բայց գտնւում է Իր բարձրութեան վրայ», ինչպէս և Ինքն ասաց. «Ես նոյնն եմ և չեմ փոփոխւում: [Սրանով] յայտնի եղաւ նաև մեր մեծութիւնը. ունենալով ծառայի պատկերը՝ հագանք երկնաւորի պատկերը» (Յովհ. Իմաստասէր 50, 59):

«Եթէ մէկը չխոստովանի Աստծու Բանին ս. Կոյսից ճշմարտապէս մարմնացած, այսինքն՝ մեր բնութիւնը [ստացած]՝ նրանից առնելով հոգի և մարմին և միտք առանց ապականութեան, [այլ] ասի, թէ Քրիստոս երևաց կեղակարծօրէն (կասկածամտութեամբ) և նմանութեամբ՝ նզովեալ լինի»[1]:

Եւտիքէսին հետևող Եւտիքականները կամ Յակոբիկները (Զ դարում նրանց միացնող Յակոբ Բարադայի անունով)[30*] Զուլամերիկի կողմերում են բնակւում[31*]:

Քաղաքական հանգամանքների պատճառով Եւտիքեան մոլորութիւնը յեղեղուեց բովանդակ կայսրութեամբ մէկ, մթնոլորտը գնալով շիկացաւ, իսկ մոլար տոմարի պաշտպանութեան նպատակով վէճի մէջ մտաւ Հռոմէական եկեղեցու քահանայապետը (Լևոն Ա)[32*]: Միակ ելքը ժողովն էր, և յունաց կայսրը այն գումարելով Քաղկեդոնում 451-ին, կարծեց թէ կը կարողանար լուծել այդ խնդիրը: Այդ տոմարը քարոզում էր, թէ երկու բնութիւնները, յարելով միմեանց մի անձի մէջ, առանձին-առանձին կրում են թշնամանքն ու փառքը: Ըստ որում մէկը միւսի հաղորդակցութեամբ կատարում է այն, ինչ որ յատուկ է Իրեն, այսինքն՝ բանը կատարում է այն, ինչ որ իրենն է և մարմինն էլ իրենն է կատարում, որպէսզի «Աստծու և մարդկանց միջնորդը՝ Յիսուս Քրիստոս, կարողանայ մեռնել մէկով և անկարող լինի մեռնել միւսով», մէկ բնութիւնը խաչւի ու կախւի խաչափայտի վրայ, իսկ միւսը՝ ոչ[2]: Խնդիրը չլուծուեց, վէճերն էլ չվերջացան, այլ շարունակուեցին նաև հետագայ դարերում ու երբ դուրս եկան կայսրեր, որոնք երկու բնութեան դաւանանքի վէճերը կամեցան մեղմացնել՝ մէկ կամք ու մէկ ներգործութիւն քարոզելով, այդ միջոցները ևս մերժուեցին և վերջնականապէս դրանց մէջ հաստատուեց դաւանել ի Քրիստոս մի անձն, բայց երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն:

[1] Տե՛ս Սամուէլ Անեցի, էջ 287, Ընդհան. 207:

[2] Մանրամասն համեմատութիւն է տալիս Սահակ վարդապետն Աշոտ իշխանաց իշխանի հրամանով գրած թղթում, նոյնպէս և Ստեփ. Օրբէլեանն իր ձեռնարկի մէջ[33*]. տե՛ս և Պող. Տար., էջ 134-136, Յովհ. Իմաստ. ճառ ընդդէմ դաւ. «զմի Քրիստոս յերկուս բնութիւնս» Ս. Էջմիածին 1896, Աբրահամ կաթուղիկոս ի միտքը տես Ուխտանես, էջ 134-136, նաև Ընդհան. 344-349, Ս. Գր. Տաթ. Հարց. 34-35, 66-101, 84-92, 176, 475-479: «Դաւանութիւն հաւատոյ» Կ. Պոլիս 1713, Կիւրեղ Աղէքսանդրացի, Գիրք Պարապմ. եւ լուծմունք, Կ. Պոլիս, 1717, Թուղթ Կոստ. կաթուղիկոսի, «Արարատ» 1892, Նոյեմբեր. տե՛ս եւ իմ գրուածքը. Հայաստ. Եկ. եւ բիւզ. ժող. պար. Մոսկւա 1892 եւ նախընթացում յիշուածները, Գլ ԺԹ:

Արդ, դարերի ընթացքում Քրիստոսի Աստուածութիւնն ու մարդկութիւնը այսպէս կամ այնպէս ուրացուելով՝ դաւանական ձևակերպութիւններ ստացան զանազան մոլորեցուցիչների վարդապետութեան մէջ, և եկեղեցին շարունակ կուռեց դրանց դէմ ու ձգտեց ուղիղը տարածել: Այդ մոլորութիւններն իրաւացիօրէն կոչւում են իրենց հիմնադրողների անւամբ, իսկ բնութեան թւի նկատմամբ՝ «երկբնակութիւն» ու «միաբնակութիւն» յատկորոշումներն իսկապէս ցոյց են տալիս երկու բնութեան ու մի բնութեան դաւանանքը մարդացեալ Քրիստոսի նկատմամբ:

Հայաստ. Ս. Եկեղեցին դաւանական հիմնական կէտերում ոչ մի կերպ չի ուզում շեղւած կամ տարբերւած լինել Առաքելական վարդապետութիւնից. այդ սկզբունքն անբաժանելի է նրանից: Ըստ այդմ նա դաւանում է և վարդապետում, որ Քրիստոս կատարեալ աստուածամարդ է, այսինքն՝ կատարեալ Աստուած է և միանգամայն կատարեալ մարդ[1]: Այսպէս դաւանելով նա 1.600 (այժմ 1700) տարի շարունակ քարոզել է, որ Քրիստոսի մէջ ոչ մի զանազանութիւն նկատել չենք կարող, որովհետև երկուութիւնն ու երկուութեան զանազանութիւնը, ինչպէս և ինչ եղանակով ուզում է ձևակերպւած լինի, տարբերում, զատորոշում, անջատում է աստուածային մեծութիւնն ու փառքը մարդկային խոնարհութիւնից և անկումից, իսկ այդ անկարելի է դարձնում մարդու բարձրանալն ու փրկւելը[2]: Երկուութեան հետևանքը կամ երկու երեք անձ է կամ անակատար ու կորած մարդկութիւն կամ ըստ այդմ Աստուածութիւնը ոչինչ չի տալիս մարդկութեանը և կամ մարդկութիւնը լոկ գործ է ածւում իբրև մեքենայ աստուածային անձի ձեռքում, բայց և պաշտւում է նրա հետ հաւասարապէս, առանց ուրեմն նրա հետ մի ճշմարիտ միութիւն դառնալու: Եւ քանի որ այդպիսով ոչ լոկ Բանն Աստուած է իրացնում մարդկութեան նսեմութիւնը և ոչ մարդկութիւնն է իրացնում Աստուած - Բանի

[1] «Միաւորեալ մէկ բնութիւն է, և [այդպէս էլ] ասւում է, և Սուրբ Երրորդութեան մէջ չմտան երկու բնութիւն, երկու կամք և երկու այլևայլ բաներ... և թող կուլ չգնանք այլոց բամբասանքին, այլ գնալով մեր կուռ և անխոտոր ճանապարհով՝ ապագայ բարիքին հասնենք Յիսուս Քրիստոսով» Վանական Վարդապետ, «Բան հաւատալի»[34*]:

[2] «Այդ պատճառով երկու բնութիւն կը լինի երկու կամքից, և երկու խորհուրդներն ու երկու տէրերը, թագաւորութիւններն իրենց մէջ բաժանւած լինելով աւերւում են, որովհետև բնութիւնը հակառակ է բնութեանը, մարտակից են իրար կամ մէկը տէր է, իսկ միւսը՝ ծառայ, և եթէ երկու բնութիւն է, ապա Աստուած մարմնի մէջ կռիւ ունի, ինչպէս ընկերը ընկերոջ դէմ՝ ինչպէ՞ս նա կարող է մէկ ուրիշին տալ խաղաղութիւն, որ Ինքը չունի» *Տիրան վրդ. առ Սեմերերիս*[35*]:

վսեմութիւնն երկութեան պատճառով, պարզ է և ակնյայտ, որ մարդկութեան խորհուրդն այդպէս անկատար է մնում, այսինքն՝ մեղքը սրբութեան միութեամբ չի մաքրում, անկումը բաձրութեան միակցութեամբ չի վերանում, եղծումն անեղծութեամբ չի բարձում, և մահը կեանքի միաւորութեամբ չի ոչնչանում: Այլև երկութիւնը հնարաւոր է դարձնում նաև երեքութիւնը մարդկային հոգու լինելով[1], նոյնպէս և երկութեամբ հասկանալի է դառնում մի սոսկ մարդու միջոցով առանց Աստծու իջման փրկագործութիւնը: Հետևաբար Հայաստ. Առաքելական Ս. Եկեղեցին երբեք չի կարող Քրիստոսի մէջ որևիցէ երկութիւն դաւանել: Եւ երբ նրա առաջ դնում են երկու բնութեան, երկու կամքի ու երկու ներգործութեան նոր վարդապետութիւնը, «նա ի վերայ լերինն բարձու» հռչակում է, որ ինքը դաւանում է մէկ բնութիւն, մէկ աստուածմարդկային կամք ու մէկ աստուածմարդկային ներգործութիւն, այսինքն՝ որ մարդացեալ Աստուածը մէկ բնութիւն, մէկ կամք ու մէկ ներգործութիւն ունի, միութիւն և ոչ երկութիւն, ապա թէ ոչ Ս. Երրորդութեան մէջ երկու բնութիւն կը դաւանուի և Արիոսութիւնը նորաձևաւած կը նորոգուի:

Ուստի և Ե դարում տեղի ունեցած Արտաշատի մեծ ժողովն արձանագրում է. «Աստուած, որ ստեղծեց այս աշխարհը, նոյնը եկաւ և ծնեց սուրբ կոյս Մարիամից. ինչպէս առաջուց գուշակել էին մարգարէները, առանց մարմնաւոր կարգի որևէ պատճառի: Ինչպէս որ ոչնչից ստեղծեց այս մեծամարմին աշխարհը, այնպէս էլ առանց որևէ մարմնական միջնորդի, [իր] մարմինն առաւ անարատ Կոյսից ճշմարտապէս մարդ դարձաւ. ո՛չ մարդ դառնալիս Աստուածութիւնը կորցրեց, և ոչ էլ Աստուած մնալիս՝ աղաւաղեց մարդկութիւնը, այլ [մնաց] միևնոյնը: Բայց որովհետև չէինք կարող տեսնել անտեսանելիին և մերձենալ անմերձենալուն, ուստի եկաւ մեր մարդկութիւնն ընդունեց, որպէսզի մենք էլ Նրա Աստուածութիւնից [բաժին] ընդունենք: Ամենևին անարգանք չհամարեց իր ստեղծած մարմինն առնելը, այլ մեծարեց նրան իբրև Իր աստուածաստեղծ գործը: Ոչ թէ քիչ-քիչ շնորհեց սրան անմահութեան պատիւն ինչպէս անմար հրեշտակներին, այլ միանգամից զգեցաւ ամբողջ բնութիւնը մարմնով՝ շնչով և հոգով, և միացրեց Աստուածութեան հետ. միութիւն և ոչ թէ երկութիւն, և

[1] Եղիշէ 311-312, Եզնիկ 101:

այսուհետև մենք ենք ճանաչում Աստուածութիւնը, որ կար այս աշխարհից առաջ, նոյնը և այսօր»[1]:

Այս հիմամբ ս. Մովսէս Խորենացու անմահ շարականում երգում ենք. «Կոյսից ծնեցիր անճառ միութեամբ և միշտ անբաժանելի լինելով՝ չզատեցիր հայրական ծոցից»:

Վերջապէս ս. Յովհան Իմաստասէրի ժողովական նզովքը հնչում է. «Եթէ մէկը չխոստովանի մարմնացած Աստուած Բանին մէկ բնութիւն, համաձայն Աստուածութեան մէջ, Աստուածութիւնից և մարդկութիւնից եղած անճառ միաւորութեան, այլ կամ ըստ բնութեան մի բնութիւն և կամ ըստ շփոթութեան և ըստ փոփոխման մի բնութիւն՝ [դաւանի] նզովեալ լինի»:[2]

Նոյն ժամանակներում դուրս եկաւ Պելագիոս վանականը, որ սկսեց մոլորութիւն քարոզել փրկագործութեան վերաբերեալ: Նա ասում էր, որ մարդ մահկանացու է ստեղծուել և պատուիրազանցութեամբ ժառանգել է ոչ թէ երկրաւոր, այլ յաւիտենական մահն առանց իր անձի կամ իր ժառանգների մէջ փոփոխութիւն առաջ բերելու: Մարդ ծնւում է առանց մեղքի և առաքինութեան, միայն թէ իր կատարեալ ազատութեամբ կամ դէպի մեղք է գնում կամ դէպի

[1] Եղիշէ, էջ 30[36*], Հմմտ., էջ 308. «Ցարութիւնն էր մարդու և Աստծու. մարդու՝ համաձայն բնութեան, Աստծու՝ համաձայն օտար բնութեան, [յարութիւնն էր] միացեալ երկուսի, բայց ոչ թէ երկու առանձին էութիւնների, այլ՝ միասնական-միակ գոյութեան». տե՛ս նաև էջ 66, 214, 222, Ագաթ., ԼԷ, ԼԹ, Խ, ԿԵ, ՀԵ, ՀՁ, Հմմտ., Ընդհանր., էջ 338, Շար. 262, Սամուէլ Անեցի, էջ 255-261, տե՛ս նոյնպէս Եփեսոսի ժողովի պատմութիւնն ու սահմանումը Ցայսմաւուրքի մէջ[37*]:

[2] Տե՛ս Սամ. Անեցի 288 Դ, Է: Մամբրէ Վերածնողը, ճառելով Ղազարոսի յարուցման ժամանակ Քրիստոսի՝ Հօրն ուղղած խօսքի մասին, ասում է. «Ամաչիր Թէոդորէտոս և աչքերդ երկինք մի բարձրացրու Նեստորիոս, որովհետև կոյր էք միասնական Սուրբ Երրորդութիւնը [տեսնելու համար]: Ցանուն ձեր կորստեան միաբանուեցիք՝ պատմելով ձեր ամօթալի ուսմունքը, [ըստ որի]՝ մէկը «ամէն» է գոչում, միւսը «ամէն» է լսում, մէկն աղաչում է, միւսն աղաչւում է, մէկը թախանձում է, միւսը՝ շարժւում այդ թախանձանքից, իբրև թէ [քանի որ] իշխանութիւն չունի յարութեան վրայ՝ մեռեալի պատճառով Հօրն է օգնութեան կանչում: Որքան արհամարհելի են այս մարդկանց խօսքերը ոչ միայն իմաստունների աչքում, այլև՝ ովքեր չափազանց յիմար են ս. Եկեղեցու մէջ»: «Բոլորս ընկած ենք ծանր մեղքերի տակ, բայց անքաւելի մեղքի տակ են ընկած բոլոր նրանք, ովքեր բաժանում են անբաժանելի բնութիւնը, և կարծէք այնտեղ անկարող լինելով խռովութիւն մտցնել՝ իրենք իրենց մէջ խռովքի են մատնւում և հայհոյելով մարդկանցից ու դատապարտելով Աստծուց՝ ընկնում օտարութեան մէջ և ջնջւում կեանքի դպրութիւնից» (էջ 28-29, տե՛ս նաև Խորենացի Պատմ. III, ԿԱ և իմ աշխատութիւնը. Հայաստ. Եկ. և Բիւզ. ժող., էջ 50-89:

առաքինութիւն, սակայն հրապուրելով վատ օրինակից ու սովորութեամբ՝ մեղքի մէջ է ընկնում, թէև կան բոլորովին անմեղ մարդիկ ևս: Աստծու շնորհը հեշտացնում է մարդուն իր կոչումը ձեռք բերելու, . այդ շնորհն անհրաժեշտ է միմիայն այն պատճառով, որ մեղքն ընդհանրացել է: Աստուած իր շնորհով այս է անում միայն, որ լուսաւորում է յայտնութեամբ, թողնում է մեր մեղքերն ու գրգռում մեր բարոյական զօրութիւնն արտաքին միջոցներով: Մարդն էլ ինքն է աշխատում արժանանալ այդ շնորհներին, իսկ **Քրիստոս մարդացել է, որպէսզի Իր կատարեալ վարդապետութեամբ և Իր կեանքի օրինակով շարժի մարդու բարի նախանձը:** Նա մեզ համար օրինակ է միայն, ուստի և չմկրտուած մեռնողները միմիայն քիչ երանութիւն կը վայելեն: Աւետարանին կատարելապէս խորթ այս ուսուցումն իր աղանդաւոր ուսուցողի ու նրա հետևողների հետ բանադրուեց Եփեսոսի 431-ի ժողովում, թէև այս մոլորութեան ձևակերպութիւնը յարատևեց արևմտեան եկեղեցում և նորանոր մոլորութիւնների սնունդ մատակարարեց:

Հռոմէական կաթոլիկ եկեղեցին ազդուելով Պելագեան մոլորութիւնից[38*] սկսեց Թ դարում մի նոր մոլորութիւն ընդհանրացնել, այն է՝ օրինակարգել Ս. Կոյսի անարատ յղութիւնն ու ծնունդը Յովակիմից և Աննայից: Այս մոլորութիւնը հետևանք էր Ադամի մեղքի մասին Պելագեան մոլորութեան, որ մտաւ Հռոմէական եկեղեցու մէջ: Առաջին քարոզողը եղաւ Պ. Ռադբերդը, որին հովանաւորեցին Հռոմի մի քանի քահանայապետեր, սակայն Բերնարդ Կլերուոսացու գործ դրած ճնշման պատճառով նահանջեցին իրենց մոլորութիւններից: Բայց և այնպէս 1854 թւին Պիոս Թ ընդունեց այդ մոլար դաւանանքը, ըստ որում Հռոմ. եկեղեցին վարդապետում է, թէ Ս. Կոյսը թէև բնականապէս Յովակիմից և Աննայից, սակայն ըստ շնորհների առաւելութեան՝ անարատ յղութեամբ է ծնել և ազատ է մնացել ադամային մեղքից, ուստի և Աստուածածինն աստուածուհի է, որին պէտք է հաւատալ, նրան աղօթել և մեր և Աստծու մէջ միջնորդուհի ճանաչել՝ գրեթէ Քրիստոսին հաւասար[39*]:

Հռոմ. եկեղեցին իր այդ մեծ մոլորութիւնը հիմնում է Ծննդ., Գ 15-ի վրայ, որ միայն Եւայի զաւակի՝ այսինքն Քրիստոսի ու սատանայի (օձի) աստուածամայր թշնամութեանն ու Քրիստոսի յաղթութեանն է վերաբերում: Նա յենւում է նաև Ղուկ., Ա 28-ի վրայ, որ յայտնում է, թէ Ս. Կոյսը մասնակից է լինելու աստուածային շնորհներին՝ աստուածամայր դառնալով: Ուրեմն այդ վկայութիւններն իսկապէս ոչ

մի կռուան չեն տալիս այդ մոլորութեան, ըստ որում և Պօղոս առաքեալն ասում է. «Ինչպէս որ մէկ մարդով մեղքը աշխարհ մտաւ, և մեղքով էլ՝ մահը, այնպէս էլ բոլոր մարդկանց մէջ տարածուեց մահը, որովհետև բոլորն էլ մեղանչեցին» (Հռ., Ե 12, Գաղ., Գ 13, Ա Յովհ., Ա 7, Ա Տիմ., Բ 5-7): Եւ Պետրոսն ասում է, որ Քրիստոս «Նա է, ով մեղքերն Իր մարմնով բարձրացրեց խաչափայտի վրայ, որպէսզի մենք, զերծ լինելով մեղքերից, ապրենք արդարութեան համար» (Ա Պետ., Բ 24): Ուրեմն Քրիստոս առել է Ս. Կոյսից իսկական ադամային մարմին և ոչ թէ մի նոր տեսակ մարմին, ապա թէ ոչ մեր մեղանչական՝ ըստ կարգի, Ադամի և Եւայի մարմինը սրբած ու փրկած չէր լինի (տե՛ս նաև Հռ., Զ 9-10), «Այս իմացէք, որ մեր միջի հին մարդը խաչուեց նրա հետ, որպէսզի քայքայուի մեղքի մարմինը, և այլևս մենք չծառայենք մեղքին» (Հռովմ., Զ 6)[1]:

Այսպէս և Մեծ պահոց շարականում երգում ենք. «Որ առաքուեցիր հայրական ծոցից, [դու]՝ Հօր մեզ յաւիտենապէս ծածկուած խորհուրդդ մեղուցեալ նախաստեղծի մարմինն առար»: «Խաչի վրայ գամեցիր մեր մեղքերը և մահուանը տոկալով՝ գերեզման իջար, կենդանութիւն շնորհեցիր խաւարի մէջ նստածներիս և զօրութեամբ յարութիւն առար»[2]:

Ս. Ներսէս Շնորհալին էլ գրում է. «Եւ կոյս Մարիամը, որից մարմին առաւ Քրիստոս, Ադամի մեղանչական բնութիւնից էր»[3]: Ուստի և Ս. Յովհան Իմաստասէրը նզովք է դնում. «Եթէ մէկը չասի, թէ Աստծու Բանը մեր մեղանչական և մահկանացու բնութիւնից է մարմին առել, այլ՝ անմեղ, անմահ և անապական բնութիւնից, որ նախաստեղծն ունէր նախքան յանցանքը, նզովեալ լինի»:

Փրկագործութեան մեծ խորհուրդն ի նկատի ունենալով Հայաստ. Եկեղեցին, համաձայն Ս. Գրքի վարդապետում է, որ Ս. Կոյսը ծնել է ադամային մեղքով, բայց աստուածային մեծ ուխտի կատարման համար վայելել է առանձին շնորհ (Ղուկ., Ա 30), **որովհետև մայր պէտք է լինէր «անդրանիկին ամենայն արարածոց»** (Կող., Ա 15, Ծննդ., ԺԷ 15-20, ԺԸ 10-12, ԻԱ 1): Եւ ինչպէս որ Աստուածածին լինելու համար այդ շնորհը վայելում էր, այնպէս և սրբուեց Ս. Հոգով

---

[1] Հմմտ. Պող Տար., էջ 72:
[2] Շարակնոց, էջ 306:
[3] Ընդհ. 120, 319, հմմտ. Եղիշէ, էջ 209-210:

ու Քրիստոսի մարմնառութեամբ, ուստի և նա ինքն ասաց. «Որովհետև Նա Իր հայեացքը դարձրեց իր աղախնի խոնարհութեան վրայ: Եւ ահա այսուհետև բոլոր սերունդները ինձ երանի կը տան» (Ղուկ., Ա 48): Նա պանծացաւ իր հաւատքով ու խոնարհութեամբ գեր ի վերոյ բոլոր սրբերից իբրև Աստուածամայր, սակայն մեր Փրկիչն ու միջնորդը միմիայն Քրիստոս է և ոչ թէ Աստուածածինը, որ լոկ ընդունարան եղաւ իբրև օրինակ բոլոր հաւատացեալների և Քրիստոսի յարաբերակցութեան: Եւ որովհետև նա սկզբից մինչև վերջը Աստծու շնորհների տակ է գտնւել, ուստի տօնում ենք նրա կեանքի նշանաւոր դէպքերը՝ յղութիւնը, ծնունդը, ընծայումն ի տաճարն, աւետիքն ու վերափոխումը, այլև նրա բարեխօսական աղօթքին առաջին տեղն ենք տալիս մեր սուրբ հաւատակիցների մէջ[1]:

Նախընթաց բոլոր մոլորութիւնների դէմ, ամփոփելով նաև հոգեմարտ Մակեդոնի մոլորութիւնը, նզով է դրուած մեր այն գեղեցիկ հաւատամքի վերջում,

[1] Վերոյիշեալ մոլորութիւնների ու նրանց յարակից հերձուածների թարկումն ու հերքումը գտնում ենք նաև Կոմիտաս կաթողիկոսի թղթում (Ցաճախ., 1896, էջ 306-309) և Գրիգոր Վկայասէրի մի գեղեցիկ գրութեան մէջ. Արարատ 1893[40*], տե՛ս նմանապէս Ընդհ., էջ 336-345, 383, 385: Գրիգոր Արշարունի Մեկն., էջ 103, 139, 192, Կոչումն Ընծայութեան, էջ 101-123, Պօղ. Տար. 111-126: Խոսրովիկի նոյնպէս և Յովհաննէս քահանայի «Ցաղագս երկաբնակաց» և այլ գրուածները[41*]: Մ. Գօշ «Ցաղագս միութեան մարդացելոյ Բանի Աստուծոյ»[42*]: Ստեփ. Սիւնեցի «Ընդդէմ հերետիկոսաց եւ թուղթ առ վարդ. Աղուանից»: Ստեփ. Օրբէլեան «Զեռնարկ հաւատոյ ընդդէմ երկաբնակաց»: Եսայի Նչեցի «Հակաճառութիւն ընդդէմ ֆռանկաց» և այլն:
Ս. Յովհան Իմաստասէրը փրկչաբանական մոլորութիւնների դէմ խօսելով՝ ասում է. «Ի մտի ունենալով սրանց օտարութիւնը և ուղղափառ աւանդներից յաւիտենապէս լքւած լինելը ու խզւած հանդիսանալով եռահիւսակ երեք սուրբ ժողովներից, որ կատարուեցին բիւթանացիների Նիկիա քաղաքում, Կ. Պոլսում և Եփեսոսում և մտախաբ իմացութեամբ տրոհողների կողոպտածի և բարուց շեղւողների նման հակաճառում են ընդդէմ ճշմարտութեան, համաձայն նեստորականների իմացութեան, Բանի և մարմնի անճառելի միաւորութիւնից յետոյ մէկ Տէր Յիսուս Քրիստոսին բաժանաբար սահմանազատում են երկու բնութիւնների, երկու կամքի և երկու ներգործութիւնների, չեն խոստովանում մարդացած Աստծու՝ սուրբ Կոյսից [մարդկային] կրքեր [ստանալը], այսինքն՝ Բանը, աշխարհի համար մահը բացառապէս մարդուն են [ընծայում], և թէ՝ չարչարանքը և խաչւածը Տէր չէ»: «Քանզի ճշմարիտ անմարմին Աստուած երևում է մարմնով՝ կատարեալ ճշմարտութեամբ և աստուածային կատարելութեամբ՝ ոչ թէ երկու դէմք, երկու բնութիւն, որովհետև անհնար է փառքը երկրպագելով՝ ասել, [թէ այն] Աստծունն է, Աստծու Որդունը, մարդունը և Սուրբ Հոգունը: Այս պատճառով էլ սրբերից մէկը նզովում է այսպէս ամբարշտողներին, որ մարդուն աստուածային փառաբանութեան մէջ են դնում»: Այսպէս, մարմնացած Բանի մէկ բնութիւնը երկու բնութեան մէջ են խոստովանում բոլոր աստուածասէր հոգիները, ընդ որում և մարդու միտքը չի բաժանւում իր մարմնից, այլ մէկ դէմք է, մէկ բնութիւն է բովանդակ մարդը»[43*]:

որ ընդհանրապէս արտայայտում է Հայաստ. ս. Եկեղեցու հաւատալիքը հակիրճ ու բազմախորհուրդ կերպով (տե՛ս. «Իսկ ովքեր ասում են»... վերը):

Այս ամենից յետոյ յիշելու է, որ թէ՛ հռոմէական և թէ՛ բողոքական ասպարէզում ու գիտնական աշխարհում պատահած կամ պատահող փրկչաբանական մոլորութիւններն ու տեսութիւնները սնունդ են առնում այդ հին մոլորութիւններից՝ զանազան գոյն ու զարդ ստանալով ու ձևակերպւելով: Դրանք երբեք նոր բան չեն տալիս և ուրեմն յիշատակութեան արժանի լինել չեն կարող, ըստ որում լաւ գիտենալով վերոյիշեալ մոլորութիւնների անհեթեթութիւնը, միշտ կը զգանք ու կը հասկանանք նորանոր նմանօրինակ ուսմունքների անզօրութիւնը Հայաստանեայց ս. Եկեղեցու առաքելական նախնաւանդ վարդապետութեան սրբութեան առաջ[44*]:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ԻԷ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Սիրոյ յարաբերութեան կենսագործողը Ս. Երրորդութեան մէջ և Հօր կամքն իրագործողը, Որդու գործունէութեան ներքին կազմակերպողն ու զարդարողն է Ս. Հոգին, ինչպէս տեսանք Ս. Երրորդութեան բացատրութիւնից: Ս. Հոգին կատարեալ Աստուած է և կատարեալ անձնաւորութիւն, ինչպէս կատարեալ Աստուած ու կատարեալ անձնաւորութիւններ են՝ Հայրը և Որդին: Ս. Հոգին կոչւում է նաև Հոգի Աստծու և մինչև անգամ Հոգի, միայն թէ «Սուրբ» ստորոգելին կամ «Աստծու» յատկացուցիչը միշտ յիշւում է Հոգու հետ, որպէսզի հասկացւի, որ խօսքը Ս. Երրորդութեան անձնաւորութեան մասին է: Այլև Նա Ինքը Ս. Հոգի է կոչւում, որով տարբերւում է աշխարհային հոգիներից, որոնք թէ մեղքից ազատ չեն, թէ տարբեր նպատակներ ունեն: Աշխարհային իրավիճակներում մենք գործածում ենք հոգի բառը շատ դէպքերում, ինչպէս գիտական և արուեստի հոգի, պետական հոգի, ազգային հոգի, եկեղեցական հոգի և այլն, որոնք միջոցներ են մարդկային գործերում և ծառայում են այս կամ այն գիտութեան և հաստատութեան զարգացմանն ու ծաւալմանը՝ իւրաքանչիւրն իր ծառայութիւնը սպաս դնելով այն գաղափարին, որի համար որոշած է: Ընդհակառակը Ս. Հոգու համար այդ բոլոր հաստատութիւններն ու շրջանները լոկ միջոցներ են, իսկ Իր նպատակն է սուրբերի արքայութեան հաստատութիւնը կամ իւրաքանչիւր հոգու փրկութիւնը: Նրա գործը մարդու էութեան հետ է և ոչ թէ մարդու այս կամ այն սեփականութեան, սեռի ու տեսակի և այլն (Բ Կոր., ԺԲ 14): Ս. Հոգու նպատակն է, որ իւրաքանչիւր մարդ լինի Աստծու տաճարը (Բ Կոր., Զ 16) և ծառայի «Ի շինած մարմնոյ Քրիստոսի» աճելով, առաջնորդւելով ու կատարելագործւելով:

Որովհետև Ս. Հոգին աստուածային մի կատարեալ անձնաւորութիւն է, ուստի և Հաւատամքի մէջ Նրան վերաբերող դաւանանքը Հօրից և Որդուց

անմիջապէս յետոյ է տեղ գտնում: Այդ մասում նախ խոստովանում ենք Ս. Հոգու անձնաւորութեան Աստուածութիւնը և ապա, որ Նա կատարեալ և անեղ է, այսինքն՝ արարածական չէ, ինչպէս ասում էր Մակեդոն հոգեմարտը, (որ դատապարտուեց Կ. Պոլսի 381 թւի ժողովում), այլ կատարեալ անձնաւորութիւն է նոյն կատարելութիւններով, որոնք յատուկ են նաև Հօրը և Որդուն[1]:

Արարչութեան պատմութեան մէջ յիշւած է, որ «Աստծու հոգին շրջում էր ջրերի վրայ» (Ծննդ., Ա 2): Ինչպէս ստեղծագործութեան մէջ Ս. Հոգին Իր առանձին ներգործութիւնն ունէր, այնպէս էլ մարդկութեան նախապատրաստութեան ժամանակներում Բանն Աստուած Իր փրկութեան աւետիքը և արշալոյսն էր սփռում մարդկանց մէջ Ս. Հոգով, որի խօսուն միջնորդներն էին կոչւած լինել մարգարէները: Ապա և Քրիստոսի նոր Ադամ լինելուց ու նոր արարչութիւն հաստատելուց յետոյ, նոյն Ս. Հոգու գործունէութեամբ մարդկային մեղանչական բնութիւնը ընդունակ է դառնում արարչական ներգործութեան: Ս. Հոգու այդ գործունէութիւնը սկսւեց այն ժամանակ, երբ «հովանի եղաւ» Ս. կոյսի վրայ և ընդունակ դարձրեց Աստծու մարմնառութեան և ծննդեան: Ծնւեց Քրիստոս և Նրա բովանդակ աշխարհային կեանքն էլ Ս. Հոգով էր (Յովհ., Ա 32-34, Ղուկ., Գ 21):

Ըստ այսմ, եթէ Քրիստոս փրկագործում է մարդկութիւնը, ապա Ս. Հոգին մարդկանց բազմազանութիւնը ժողովելով՝ միացնում է Քրիստոսի փրկական միութեան մէջ: Ս. Հոգով Քրիստոսի փրկագործութիւնը կամ նոյն Ինքը Քրիստոս հաստատւում է իւրաքանչիւր դարձողի հոգու մէջ և Աստծու արքայութիւնն իրականանում է աշխարհում: Ս. Հոգին մարդկանց դարձնում է կենդանի Աստծու տաճար, անհատների միացնում է մի Ս. եկեղեցու մէջ, միահաւատ ու միալեզու, միածէս ու միապաշտօն հայերին կապում է, մի ամբողջ ազգ դարձնում և նոյն այդ ազգը ներդաշնակ անդամ է հաստատում ի Քրիստոս միացրած հաւատացեալ մարդկութեան: Ուրեմն Ս. Հոգով առանձին անհատները միանում կազմում են համայնք և Ս. Հոգով համայնքը դառնում է եկեղեցի, իբրև իր գլուխ ճանաչելով Քրիստոսին, որ իբրև փառաց Թագաւոր ուղարկում է նրա հաստատութեան և ուսուցման համար առաքեալներ ու նրանցով վարդապետներ

[1] Շար. էջ 404:

և պաշտօնեաներ: Եւ ինչպէս որ Ս. Հոգով անհատները համայնք են դառնում, համայնքը եկեղեցի, այնպէս էլ իւրաքանչիւր եկեղեցի Աստծու արքայութեան բաղկացուցիչ մի տարր է դառնում, այլև Աստծու արքայութիւնը նոյն Ս. Հոգով հաստատւում, իրականանում է ամեն հաւատացեալի մէջ:

Բայց մեղանչական մարդկութիւնը չէր կարող արժանանալ Աստծու փառքերի լիակատար յայտնութեանը, ըստ որում ինչպէս որ Որդին մարդեղութեամբ է յայտնւում, այնպէս էլ Ս. Հոգին մշտապէս յայտնւում է փրկւող մարդկութեան կամ Քրիստոսի արքայութեան մէջ: Քրիստոս լինելով մեր Փրկիչը և մեզ Աստծու հետ հաշտեցնողը, Նա միայն պէտք է տար մեզ Ս. Հոգուն: Ս. Հոգին նրանով է մեզ վրայ իջնում, ուստի և Քրիստոս ասում է. «Ես կաղաչեմ Հօրը, և այլ Մխիթարիչ կը տայ ձեզ, որպէսզի ձեզ հետ բնակւի յաւիտենապէս ճշմարտութեան հոգին»: «Իսկ Մխիթարիչ Ս. Հոգին, որ Հայրը կուղարկի իմ անունով, նա կը սովորեցնի ձեզ ամեն ինչ», «Եթէ ես չգնամ, Մխիթարիչը չի գայ ձեզ մօտ»[1]: Այս խօսքերից հետևում է, որ Քրիստոսի մարդեղութեամբ սրբւում է մարդկային բնութիւնն ու հաշտւում Աստծու հետ, ապա դրանով հաստատւում է Նրա թագաւորութիւնը, ու Ս. Հոգին այդ ժամանակ գործում է այդ թագաւորութեան մէջ: Նա բնակւում է մեր մէջ ինչպէս տաճարում և մենք միանում ենք Աստծու հետ ու Նրա որդին դառնում, սակայն այդ միանալը և Աստծու որդի դառնալը յար և նման չէ Քրիստոսի որդիութեանը: Այլ մինչդեռ Քրիստոսի մարդեղութեամբ Աստուածութիւնն ու մարդկութիւնը միանում, մի աստուածմարդկային բնութիւն են կազմում, մեր մէջ ընդակառակը՝ մեր մարդկային բնութիւնը Ս. Հոգու տաճար դառնալով հանդերձ՝ պահում է իր ինքնուրոյնութիւնը, աշխարհի հանդէպ իր ինքնաբաւ լինելը: Եւ մինչդեռ Քրիստոս բնութեամբ է Աստծու Որդի և Իր մարդեղութեամբ Իր մարդկութիւնն էլ իր աստուածային որդիութեանը մասնակից ու միակից դարձրեց, մենք Քրիստոսի միջոցով կատարւած որդեգրութեամբ ենք Աստծու որդի[1*], և Ս. Հոգին է մեզ կատարելագործում՝ նմանեցնելով Քրիստոսին: Եւ ինչպէս որ Քրիստոսի մարդկութիւնն անբաժանելի և անշփոթ միութիւն է նրա Աստուածութեան հետ, այնպէս էլ նա երաշխիք է, որ մենք մեր հաւատքի ամրութեամբ երբեք չենք

[1] Յովհ., ԺԴ 15-17, 26, ԺԶ 7-13, Եղիշէ, էջ 317:

բաժանւի Ս. Հոգուց և մեր մէջ կենդանի կը լինի Քրիստոս: Այդ պատճառով և առաքեալը յորդորում է յաղթել աշխարհային թշնամուն ու հրապուրչին. «Դուք Աստծուց էք, որդեակներ, և յաղթեցիք նրանց, որովհետև Հոգին, որ ձեր մէջ է, աւելի մեծ է, քան նա, որ կայ աշխարհի մէջ» (Ա Յովհ., Դ 4-6): Ս. Հոգին տանում է իւրաքանչիւրին դէպի ճշմարտութեան ճանապարհը, նա ճշմարտութեան հոգի է և ճշմարտութիւն է ուսուցանում հաստատապէս, յանդիմանում է և յաղթահարում աշխարհը և աշխարհի հակառակութեան խաբէութիւնն ու առաջնորդում է ճշմարտութեամբ և իմաստութեամբ, որովհետև Աստուած է և իւրաքանչիւր հաւատացող անպատճառ Նրանով կունենայ իր փառաւոր յաղթանակը: «Որովհետև ինչ որ է զգալի բաների [համար] արեգակը, նոյնն է հոգևորների [համար] Աստուած, որ լուսաւորում է ամեն ինչ» , ասում է Գրիգոր Լուսաւորիչը[1]:

Եւ քանի որ Ս. Հոգին ուղարկւեց Քրիստոսով Իր արքայութեան մէջ, ուստի նա գործեց նախ Աւետարանի քարոզութեան մէջ ու միջոցով՝ պահելով Նրա սրբութիւնը, հարազատութիւնը և անաղարտութիւնը, ըստ Քրիստոսի կենդանի աւանդածի: Երկրորդ՝ նա կատարեց, լուսաւորելով առաքեալների և հաւատացեալների մտքերը և հաստատելով Քրիստոսին ու Նրա ճշմարտութիւնը նրանց մէջ, և երրորդ յիշեցնելով ու պատմելով նրանց Քրիստոսի յայտնութիւնը, խօսքն ու պատուէրը և այն ամենը, ինչ որ առաջ իմանալու պատրաստ չէին (Յովհ., ԺԴ 26, ԺԶ 14-22):

Հետևաբար Ս. Հոգին իբրև Աստուած ներգործում է և լուսաւորում մարդկանց հոգիները, բայց և իբրև Քրիստոսով Հօրից ուղարկւած, նա Քրիստոսի մարդեղութեան կամ փրկագործութեան խորհրդին վերաբերող մասը Քրիստոսին է վերապահում ու ներշնչում հաւատացեալներին: Իբրև աստուածային Անձ Նա լուսաւորող կենդանացնող է, իսկ իբրև փրկութեան մէջ գործող՝ առնում է Քրիստոսից և տալիս ադամորդիներին: Նա լուսաւորում ու կենդանացնում է մարդկանց հոգիները, որոնք յոյսով տեսնում են Քրիստոսի փրկութեան ճշմարտութիւնն ու դիմում դէպի Նա: Ուստի և Ս. Հոգին ազատութեան հոգի է: Եւ քանի որ ազատ յոյսով նա տանում է դէպի Քրիստոս, ուստի Ս. Հոգով Քրիստոս հաստատւում է իւրաքանչիւր սրտի մէջ և Քրիստոսով Ս. Հոգին, որ ուղարկւում է

[1] Յանախ., ԺԲ 180:

Հօրից, ինչպէս ուղարկուել է և Որդին, միայն թէ մէկն իբրև Ս. Հոգի, իբրև բխումն, իսկ միւսն իբրև Որդի, ծնունդ:

Ահա այսպէս է Ս. Հոգին գործում իր եկեղեցում՝ մի կողմից զօրացնելով նրա կենդանի առաջադիմութիւնը առաքելական հաստատութեան վրայ, զարգացնում նրա աստուածապաշտութիւնն ու վարդապետութիւնը, նրա լոյսի ճառագայթները սփռում ու քրիստոնէական կեանքը բեղմնաւորում Քրիստոսի յաւիտենական թագաւորութեան ներքոյ, միւս կողմից պատժելով մեղքը, պաշտպանելով արդարութիւնը և մխիթարելով թէ՛ եկեղեցին ու թէ՛ իւրաքանչիւր անհատի քրիստոնէութիւնը՝ յաղթական ընթացքի մէջ քաջալերելու համար (Յովհ., ԺԶ 8): Նրա մխիթարութեան ու զօրացման մեծ հաւաստիքն ու երաշխիքն այն աւետիքն ու յոյսն է, որ միշտ հաստատագրում է, թէ Քրիստոս կենդանի է և յաւիտենական, յաղթող ու հզօր Թագաւորն ու փառքերի Տէրն է[1]:

Ս. Հոգին ամենայն ինչ տալիս է մեզ՝ առնելով Քրիստոսից, իսկ մենք դիմում ենք Քրիստոսին դարձեալ Ս. Հոգով (Ա Կոր., ԺԲ 3): Այս է արտայայտում Հայաստ. ս. Եկեղեցին, դաւանելով, որ կենդանարար Ս. Հոգին անհատաբար բխում է Հօրից և առնում է Որդուց: Շնայելով, որ այս պարզ դաւանանքը որոշապէս տալիս է մեզ Ինքը՝ Քրիստոս, այսուհանդերձ Հռոմ. եկեղեցին այս դաւանանքով ևս բաժանուեց՝ Հաւատամքի մէջ աւելացնելով «բղխումն ի Հօրէ և յՈրդւոյ»՝ թերևս կամենալով շարունակ տարբերուել Առաքելական եկեղեցուց: Այս մոլորութիւնը տարածուեց Ը դարից Սպանիայում ու Ֆրանսիայում, ինչը տարաձայնութեան պատճառ եղաւ ու Կարլոս Մեծը պահանջեց մտցնել այդ նորութիւնը հաւատամքի մէջ: Լևոն Գ (+816) մերժեց այդ պահանջը, սակայն Կարլոսը ինքնակամութեամբ այդ մտցրեց իր պետութեան եկեղեցիներում: Յովհան Ը էլ դատապարտեց այդ մօտեցումը, բայց իզուր: Նրանից յետոյ Ադրիան Գ ընդհանրացրեց այդ մոլորութիւնը: Հապա դուրս եկաւ Կ. Պոլսի Փոտ պատրիարքը, մաքառեց այդ նորամուծութեան դէմ, սակայն ապարդիւն: Այդ նոր դաւանանքը (Ֆիլիոքէ)[2*] վերջնականապէս հաստատուեց Հռոմում 1014 թուին Բենեդիկտի կարգադրութեամբ[2]:

[1] Տե՛ս և Հարց. 51-60:
[2] Անդ 60-61:

Քրիստոսի խօսքերը հիմնովին տապալում են այս մոլորութիւնը. այսպէս նա ասում է. «Բայց երբ գայ Մխիթարիչը, որին ես ձեզ կուղարկեմ Հօրից, Ճշմարտութեան Հոգին, որ ելնում է Հօրից, նա կը վկայի իմ մասին» (Յովհ., ԺԵ 26): «Նա ինձ պիտի փառաւորի, որովհետև ինչ որ առնում է ինձանից, կը յայտնի ձեզ: Ամէն ինչ որ, Հայրն ունի, իմն է, դրա համար ձեզ ասացի, թէ ինչ որ առնում է ինձանից, կը յայտնի ձեզ» (ԺԶ 14-15): Արդ, պարզ է՝ եթէ Ս. Հոգին բխէր Հօրից և Որդուց, Քրիստոս պէտք է ասած լինէր «Ճշմարտութեան հոգին, որ մեզնից է» կամ թէ «Հօրից և Ինձանից է դուրս գալիս» և այլն: Հռոմէական եկեղեցին իր մոլորութիւնը հիմնում է նախ «ի Հօրէ ելանէ» խօսքի վրայ, աւելացնելով, որ Որդին համագոյ է Հօր և ուրեմն Ս. Հոգին ելնում է նաև Որդուց: Սակայն «ի Հօրէ» ասուածը նշանակում է աստուածային մի անձնաւորութիւն և ոչ թէ երեք անձանց մէկ բնութիւնը, ապա թէ ոչ Որդու ծնունդն էլ Հօրից և Ս. Հոգուց կը նկատէր, որ չարաչար մոլորութիւն է և Սաբէլականութեան առաջին աստիճանը: Նրանք հիմնւում են նոյնպէս «ես առաքեցից» խօսքի վրայ, որ իբր թէ Իրենից է ուղարկում, բայց չէ՞ որ Որդու առաքումն էլ յիշւում է, թէ Հօրից և թէ՛ Ս. Հոգուց (Ես., ԿԱ, ԽԸ 10, Ղուկ., Դ 18) և միևնոյն ժամանակ Որդին յաւիտենից ծնած է միմիայն Հօրից (Սաղմ., Բ 7, 6, Թ 3, Յովհ., Ա 14-18, Գ 17, Ա Յովհ., Ե 20, Հռ., Ը 32): Իսկ Քրիստոսի «ես կառաքեմ» խօսքը յետոյ բացատրած է «առնում է ինձանից» խօսքով և նշանակում է, որ ինքը համագոյ լինելով Հօրը՝ իրենից է առնում Ս. Հոգին փրկագործական տնօրինութեան շարունակութիւնը, որովհետև Քրիստոս Իր փրկագործութեամբ միջնորդում է Ս. Հոգու առաքումը փրկագործական շնորհների համար (Յովհ., Է 39): Ուստի «կառնի» է ասած նախապէս, և ապա՝ «առնում է ինձանից և կը յայտնի ձեզ»:

Հետևաբար Հռոմէական եկեղեցին Ս. Հոգու բխումը «Հօրից և Որդուց» դաւանելով կամ չորրորդութիւն է դարձնում՝ բխման երկու աղբիւր ընդունելով, կամ Հօր ու Որդու անձնաւորութիւնը շփոթում է իրար հետ և երկուսին յիշելով՝ մէկ անձնաւորման աղբիւր է հասկանում:

Երկրորդ՝ այդ իսկ պատճառով նա Ս. Երրորդութեան անձանց տարբերութիւնը վերացնում է՝ շփոթելով բնութեան միութեան հետ, քանի որ ասում է, թէ Հօր ու Որդու բնութեան նոյնութիւնը ապացոյց է այդ գաղափարի:

Երրորդ՝ Ս. Երրորդութեան մէջ երկու աստուածային աղբիւր կամ անսկզբնական պատճառ է ճանաչում:

Չորրորդ՝ նա շփոթում է Ս. Հոգու յաւիտենական բխումը Քրիստոսի փրկագործական առաքման հետ:

Եւ հինգերորդ՝ նա Ս. Երրորդութեան մէջ նախորդութիւն ու յետնորդութիւն է մտցնում, քանի որ Քրիստոս պէտք է նախապէս ծնուէր, որպէսզի յետոյ նրանից ևս բխէր Ս. Հոգին. իսկ այս արդէն նզովւած է Հաւատամքում[1]:

Արդ, Հայաստ. ս. Եկեղեցին դաւանում է ըստ ս. Հայրերի ևս, որ Ս. Հոգին ի յաւիտենից բխում է Հօրից և մեր փրկութեան ու լուսաւորութեան համար առնում է Որդուց: Ի յաւիտենից բխում է Հօրից իբրև անսկզբնական ակունքից և ուղարկւում է, որ մենք նրանով իրագործենք Քրիստոսի փրկութիւնը, ուստի և առնում է Որդուց. և ինչպէս տեսանք Քրիստոսի խօսքերից, Աստուած նոյնիսկ Իր էակից Որդու՝ մեր Փրկչի միջոցով է մեզ Ս. Հոգի տալիս (Յովհ., Է 39): Այսպիսով Հայաստ. ս. Եկեղեցու դաւանանքը քրիստոնէական եկեղեցու հին դաւանանքն է, ինչը և լաւ կարգորոշւած է Ս. Ներսէս Շնորհալու Ընդհանրականի մէջ[2], որ խոյս է տալիս նաև յունական մի ձևից, որ իբր թէ Ս. Հոգին բխում է միմիայն Հօրից և հետևաբար առնչութիւն չունի Որդու հետ կամ ըստ յոյների դառնում է Հոգի առանց իմաստութեան: Ուստի դրանից ևս խուսափելով վարդապետում է. «Սուրբ Հոգին բխում է Հօրից և երևում Որդու միջոցով»[3]: Այսպէս էլ երգում ենք. «Սուրբ Հոգիդ հայրաշարժ աղբիւրից Տիրոջ վայել կերպով նախապէս անընդմէջ բխեցիր Որդու միջոցով»: Եւ «Հայրաշարժ աղբիւրից դու՝ անհատահոս վտակ, կենդանարար Սուրբ Հոգիդ»[4]: Այս բխումը նոյնը չէ հիարկէ Որդու ծննդեան հետ, ուստի և Ս. Հոգին Որդի չէ, այլ նա Հօր Հոգի և Որդու Հոգի էլ է կոչւում ըստ համագոյ միութեան: Այս է լրիւ երգւում մի այլ շարականի մէջ[3*].

Նոյն և նման Հօր և Որդւոյ
Հոգիդ անեղ և համագոյ.
Բխողումն Հօր անքննաբար,
Առող յՈրդւոյ անճառաբար:

[1] Տե՛ս Հարց. 62-66, Պօղ.,Տար. 84-86, Ղազար Ճահկ. [Դրախտ.] 283-304:
[2] Ընդհան., էջ 75♠
[3] Կիրակոս, էջ 189:
[4] Կանոն Հոգեգալստեան:

Մամբրէ Վերծանողը ևս ասում է. «Հօրից են Որդին և Ս. Հոգին, բայց երկուսը չեն կոչւում եղբայրներ կամ որդիներ»: Ս. Գրիգոր Լուսաւորիչը նմանապէս ասում է. «Աստուածութեան Հոգին, որ փառաւորում է Որդուն, Որդուց է առնում և պատմում Իր սիրելիներին»: «Միածին Որդին, որ ծնւել է Հօրից և Նրա Հոգին, որ Նրա էութիւնից է»: «Միածին Որդին, որ Հօր մէջ է և Հօր հետ և Սուրբ Հոգու մէջ և Նրա էութիւնից»[1]:

ԻԸ

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ ԵՒ ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Քրիստոս վերջնականապէս հաստատելով Իր արքայութիւնը, նրա տարածումը ևս յանձնեց Իր առաքեալներին, որոնք սակայն պէտք է իրենց գործունէութիւնն այն ժամանակ սկսէին, երբ Ս. Հոգին իջնէր իրենց հոգու մէջ: Աստծու արքայութեան տարածումը պէտք է լինէր եկեղեցի հաստատելով, որով մարդիկ ևս պէտք է վերածնւէին ու Քրիստոսի փրկութեան մէջ մտնէին: Հետևաբար եկեղեցու գործունէութեամբ մի իրական կեանք պէտք է սկսւէր՝ ըստ ամենայնի հաստատ ու որոշ, գիտակցական և աստուածահաճոյ: Իսկ այդպիսի մի կեանքը չէր կարող լոկ պատահական ընթացք ունենալ և կամ անհատական կամքից ու սահմանափակ մտքից կախւած լինել, եթէ այդպէս լինէր, եկեղեցին կը սկսէր խարխափել, աջ ու ձախ շեղւել և ուրեմն մի մասնաւոր դպրոց կը դառնար կամ մարդկային մի հաստատութիւն՝ անորոշ և մշտափոփոխ: Այդպիսի մի հաստատութիւնը չէր կարող Աստծու յայտնութեան աւանդատունը լինել և բոլոր ժամանակներում մարդկութեան փրկութիւնն ապահովել: Այդպիսի մի հաստատութիւնը կախւած կը լինէր մարդկութիւնից և ոչ թէ՝ մարդկութիւնն իրենից, կախւած կը լինէր պատմութիւնից և ոչ թէ պատմութիւնը կենթարկէր իր ազդեցութեանը: Մինչդեռ Քրիստոսի եկեղեցով պէտք է մի նոր իրական կեանք

[1] Տե՛ս Մամբրէ Վերծ. 70, Ագաթ., ՃԲ 436, ԻԳ, ԼԷ Ս. Գր. Նարեկ., էջ 487, Կանոն երրորդ աւուրն, էջ 384, 383, 393, 400, 401, 540, 693, Գր. Արշարունի մեկն. 172, Նարեկ., ԼԴ, ԽԸ, ՃԵ, ՂԲ, հմմտ. Ագաթ. 211, 411, 153, 436, Խոսր. Անձևացի, Մեկն. ժամ., էջ 188-193:

սկսուէր ու տանէր ամեն կերպ հաստատ ու որոշ ընթացքով դէպի փրկութիւն՝ գիտակցական և աստուածահաճոյ կարգով: Եւ ինչպէս որ Քրիստոս գալով միանգամից վերջ դրեց անցեալին և նոր ժամանակ հաստատեց պատմութեան մէջ, նոր արարած դարձրեց աշխարհի էութիւնը, նոր գլուխ եղաւ իր համար հասունացած արարածների վրայ, այնպէս էլ նրա եկեղեցին պէտք է ընդհատէր անցեալի կրօնական հաստատութեան ընթացքը, նոր ժամանակի նոր պատմութեան վերջնական զարգացման սկզբնաւորումն ամփոփէր և դէպի վախճան առաջնորդէր: Այս մի նոր արարչագործութիւն էր, մի հոգևոր արարչագործութիւն, որ պէտք է իր մէջ ունենար հոգևոր զօրութեան լիակատար լրումն ամբողջ ապագայի զարգացման համար, որպէսզի այլևս ոչ մի արգելք ու խանգարմունք չկարողանան նրա առաջ խոչ ու խութ լինել, թող թէ շեղել կամ ետ մղել:

Այդ հոգևոր զօրութեան լրումը, որ իջաւ Քրիստոսի եկեղեցու հիմնադրութեան վրայ, ոչ թէ լոկ բարոյական զօրութիւն էր և ոչ էլ լոկ ներքին զգացողութեան բորբոքում, այլ՝ աննման և ապահով իրողութիւն: Այդ Ս. Հոգին է, որ իրապէս իջաւ և վերջնականապէս ապահովեց իր եկեղեցին յաւիտենական ընթացքի համար: Արդ, ըստ մարգարէութեան, արտակարգ էր և աստուածային հրաշք, որ երբ առաքեալները ժողովուած էին վերնատան մէջ, յանկարծ իջաւ նրանց վրայ Ս. Հոգին և նրանց լեզուներով խօսեցրեց (Գործք., Բ 3, Յովէլ, Դ 28): Առաքեալները սքանչացած՝ կտրեցին իրենց առաջայ հոգևոր վիճակից և մի նոր հոգևոր վիճակի մէջ մտան՝ հոգևոր զօրութիւններով օժտուած ու վառուած վիճակի մէջ, որի բնական ուժգին արտայայտութիւնն էր այդ լեզուախօսութիւնը (Ա Կոր., ԺԴ 2-4): Այդ վիճակում առաքեալներն իրենց բովանդակ գոյութեամբ ենթարկուած էին Ս. Հոգուն և չէին կարողանում իսկոյն հասու լինել իրենք իրենց: Այդ մի զօրաւոր վերածնութիւն էր, որով Աստծու յայտնութեան գիտակցութիւնը և իմաստութիւնը կերպաւորուեց ու հաստատուեց նրանց մէջ, նրանց հոգու կրօնական ուժերը զօրացան և իսկոյն մտան աւետարանչական ու մարգարէական գործունէութեան մէջ, Քրիստոսի անունը քարոզելու համար: Նրանց խօսքի մէջ այնուհետև տիրապետում էր կատարեալ ողջամտութիւն ու ճշմարիտ գիտակցութիւն Աստծու յայտնութեան փառքի տակ՝ իրենց ամբողջ կեանքի ու հիմնադրած գործի մէջ (Ա Տիմ., Ա 13, Տիտ., Բ 2):

Ս. Հոգու այդ հրաշալի հեղումը, որով պայմանաւորուեց այդ նոր ժամանակի ամբողջ շրջանը մինչև վախճանը, ենթարկուեցին ոչ միայն առաքեալները, այլև ուրիշները նաև յետոյ[1]: Սակայն ամէն դէպքում Ս. Հոգին իջնում է ըստ իր անհասանելի նպատակի, ընդունողի կարևորութեան և ընդունակութեան: Ուստի և Ս. Հոգու լրիւ հեղումը եղաւ առաքեալների մէջ, որոնք իրենց եռամեայ աշակերտութեամբ բարեյարմար գործարան էին դարձել աստուածային այդ սքանչելի տնօրինութեան համար և ճշմարտութեան յաջողակ առաջամարտիկներ: Ըստ որում և Քրիստոս նրանց խոստացաւ Ս. Հոգու առաջնորդութեան, ուսուցման ու յիշեցման հրաշալի օգնականութիւնը: Հետևաբար առաքեալները մի այլ առանձնայատուկ կապ ունէին Ս. Հոգու հետ, մի այլ կախումով էր պայմանաւորուած նրանց բովանդակ գործունէութիւնը և այդ կապն ու կախումը թէ՛ լիակատար կախում էր Ս. Հոգուց և թէ՛ լիակատար ազատութիւն: Ս. Հոգուց կախուած լինելը յիշում է նաև Քրիստոս ասելով. «Որովհետև ոչ թէ դուք էք, որ պիտի խօսէք, այլ ձեր Հօր Հոգին, որ պիտի խօսի ձեր միջոցով» (Մատթ., Ժ 20): Ուրեմն աստուածային ճշմարտութիւնը հաստատ էր նրանց մէջ և առանց մարդկային մտքերի մթին ստուերականութեան: Սակայն այդպիսի կախման մէջ նրանք չեն կորցնում իրենց անձնաւորութիւնը, իրենց հոգևոր առանձնայատկութիւններն ու բնաւորութիւնը, որոնցով նրանցից իւրաքանչիւրն առանձնայատուկ կերպով փայլեց առաքելական սքանչելի գործունէութեան մէջ իբրև ճշմարիտ նահատակ: Այլև Ս. Հոգին լուսաւորեց նրանց մտքերը, զարգացրեց նրանց ուժերը, սփռեց նրանց բոլոր հոգևոր յատկութիւններն իրենց առանձնայատկութիւնների մէջ իսկ և պայծառեցրեց նրանց ազատութիւնը, միաժամանակ տալով աստուածային այն յայտնութիւնը և օգնութիւնը, որ անհրաժեշտ և կարևոր էր լինում նրանց գործունէութեան ընթացքում: Նայելով թէ՛ եկեղեցու հիմնադրութեանը, ծաւալմանը, աճմանը, ծաղկմանն ու զարգացմանը որքան էր օգտակար աստուածային յայտնութիւնը, այնքան էլ տալիս էր Ս. Հոգին (Ա Կոր., ԺԲ 7): Նրանց առաքելական գործունէութեան մէջ Ս. Հոգին շարունակ տալիս էր իր յայտնութիւնն ու վճիռը թէ՛

[1] Գործք., ԺԹ 6, Ը 17, Ժ 45, «Ինչպէս Որդին հագաւ մարդկութիւն, նոյնպէս և մարդկութիւնը հագաւ Ս. Հոգի, որպէսզի Սուրբ Հոգու միջոցով հագնենք որդեգրութիւն և հայրութիւն» (Եղիշէ, էջ 317):

ճշմարտութեան վարդապետութեան և թէ՛ արդէն իսկ եկեղեցու կազմակերպութեան համար (Գործք., ԺԵ 10), թէև միւս կողմից նրանց մտքերը լուսաւորելով ու պայծառանալով՝ տալիս էին ճիշտ դատողութեամբ նոյն վճիռը: Այս է պատճառը, որ առաքեալները յիշում են թէ՛ Ս. Հոգու վճիռ և թէ՛ իրենց դատողութիւնը միաժամանակ, օրինակ՝ ասելով. «Հաճոյ թւաց Սուրբ Հոգուն և մեզ» (Գործք., ԺԵ 28, Զ 5, ԺԵ 22, 25):

Այսպէս իւրաքանչիւր առաքեալ, ունենալով իր մէջ Ս. Հոգու անմիջական օժանդակութիւնը, կարողանում էր հիմնադիր լինել Քրիստոսի եկեղեցու և Աւետարանի լոյսը տարածել անկախ միւս առաքեալներից ու միաժամանակ՝ միաբան ու միաձայն նրանց հետ: Ամենքն էլ միաբան էին, որովհետև նոյն Ս. Հոգին էր խօսում նրանցով աստուածային յայտնութեան վկայութիւնը. ամենքի մէջ գործում էր նոյն Ս. Հոգին, թէև իւրաքանչիւրի շնորհը տարբեր էր: Ամենքն էլ տարբեր եղանակով էին քարոզում, սակայն ճշմարտութիւնը մէկ էր: Տարբեր մարդկանց տարբեր գործունէութիւնը միանում էր մէկ Ս. Հոգով, մէկ Բանով ու մէկ ճշմարտութեամբ: Եւ երբ Ս. Հոգին տալիս էր Իր յայտնութիւնը իւրաքանչիւր առաքեալի, տալիս էր ճշմարտութեան գիտակցութիւնը նրանցից ամեն մէկին: Առաքելական գիտակցութեամբ արտայայտելով աստուածային ճշմարտութիւնն ու վճիռը՝ նրանցից իւրաքանչիւրը ոչ թէ մի ինքնուրոյն վարդապետութիւն էր տալիս, այլ բոլորի վարդապետութիւնը միասին ու միահամուռ միութեամբ կազմում էր Ս. Հոգու աստուածային ճշմարտութեան լիակատար յայտնութիւնը: Այդ լիակատար յայտնութեամբ էր կառավարում եկեղեցին, ճանաչում իր հաղորդակցութիւնն Աստծու հետ և վերաբերմունքն իր և աշխարհի հանդէպ[1]: Նրանց վրայ է հաստատւում եկեղեցին և նրանց միասնական վարդապետութեամբ պէտք է կառավարի միշտ, և որպէսզի առաքելական եկեղեցու կառավարութիւնը ապահովւած լինէր նաև առաքեալների մահից յետոյ, Ս. Հոգին տալիս է Իր յայտնութիւնն ու ճշմարտութեան գիտակցութիւնն Իր եկեղեցու այն անձնէր

[1] «Պենտակոստէի ժամանակ Սիոնում և Վերնատան մէջ եղած հողմից և շառաչիւնից առաքեալների տրոհւած լեզուները՝ հրեղէն լեզուները ազգերին յղւած կոչի նշանակն էին: Եւ իրապէս. Սիոնից ընդունեցին խաղաղութիւնը և բազմաստւած վրդովմունքից տիեզերքը խաղաղեցրին և արարածներին հաշտեցրին Հայր Արարչի հետ. եկեղեցու հիմքը դրեցին նոյն Սիոնից»: «Իսկ Սիոնի դուստրը, որ այսպիսի շնորհների ծնունդն ու պտուղն է, եկեղեցին է, որովհետև առաքելական վարդապետութիւնը Սիոնում սկիզբ առաւ» (Մամբրէ Վերծ. 68):

գործիչներին, պաշտօնեաներին ու վարդապետներին, ովքեր ամեն աշխատութիւն ու նեղութիւն յանձն առնելով՝ աստուածային նախանձախնդրութեամբ ճգնում են իրենց եկեղեցու առաջադիմութեան համար, իրենց ընթացքը հաստատում են առաքելական հիմքի վրայ և յոյսը խարսխում են Ս. Հոգու ամրութեան վրայ: Ուստի և ինչպէս Քրիստոսի առաքեալների մէջ արտափայլեց Ս. Հոգու շնորհն Իր բովանդակ լրութեամբ, այնպէս էլ ճիւղաւորւեց ընտիր անձանց մէջ մանաւանդ առաքեալներին յաջորդած ժամանակներում: Պօղոս առաքեալը յիշում է Ս. Հոգու այն շնորհները, որոնք իջնելով մարդու բնական ձիրքի վրայ, ներկայանում են աստիճանաբար բնականից մինչև գերբնականը, առաջ են մղում և զօրացնում սրբանուէր գործիչներին եկեղեցու առաջադիմութեան համար[1]: Ս. Հոգու շնորհների ինքնեակ պարգևները, որոնցով նա կարևոր անձանց[2] պարգևատրում էր Իր տնօրինութիւնների համար, յիշւում են Ա Կորնթ., ԺԲ 4-11, 28 և ըստ տեսակի բաժանւում են երեք կարողութիւնների՝ մտքի, կամքի և զգացողութեան: Դրանք են.

Ա. Վարդապետական, այն է՝ ա) իմաստութիւն, բ) ճանաչողութիւն և գ) հոգիների ընտրութիւն:

Բ. Աւետարանչական՝ ա) հաւատքի լրութիւն, բ) բժշկութիւն և գ) հրաշագործութիւն:

Գ. Հոգեկրական՝ ա) մարգարէութիւն, բ) լեզուախօսութիւն և գ) թարգմանութիւն[3]:

Վարդապետական այս շնորհների մէջ, որոնք լիալրում են մտաւոր լուսաւորութեան շրջանը, առաջին տեղը զբաղեցնում է իմաստութիւնը: Իմաստութիւնն է այն աստուածատուր ձիրքը, որով մենք կարողանում ենք ուղիղ միջոցներ գործադրել կեանքի ճշմարիտ նպատակներին հասնելու համար: Բայց իմաստութեան կատարելութեան համար անհրաժեշտ է և ճանաչողութիւն, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ կարողութիւն՝ ճանաչելու և իմանալու աստուածային իմաստութիւնն ու խորհուրդները: [Այստեղ է, որ առաջնահերթութեան կարգով

[1] Եղիշէ, էջ 320:
[2] Անդ., 316♠
[3] Տե՛ս և Մարկ., ԺԶ 17, Գործք., Բ 4, Ժ 46, ԺԹ 6, Հռովմ., ԺԲ 6-8, Ա Կոր., ԺԴ 22-32, Յաճախ., Ե 44-109, 263-290, 365:

կարեւորում է երրորդ շնորհը, որով եւ հոգիների ընտրութիւնը եւ դա այն է, որ տալիս է՝ Աստծու կողմից ուղարկված ճշմարիտ մարգարէներին, կեղծ մարգարէներից, ինչպէս եւ] Աստծու յայտնութիւնն ու ճշմարտութիւնը մարդկային հնարաբանութիւնից ու կեղծիքից տարբերելու կարողութիւնը, որ մանաւանդ շատ անհրաժեշտ էր առաջին դարերում: Վարդապետական այս մեծ շնորհներն առանձնապէս զինավառում են այն անձանց, որոնք կոչված են ժողովուրդ դաստիարակելու, բարձրացնելու և ղեկավարելու համար:

Աւետարանական շնորհների առաջինը հաւատքի լրութիւնն է, որ աստուածային գործունէութեան և առաքինական գոտեմարտի մէջ մարդուն առանձին ամրութիւն և արիութիւն է տալիս: Այդ շնորհով ամբողջապէս օժտված էին առաքեալները, որոնց մէջ մեծամեծ գործունէութեամբ փայլեց Պօղոս առաքեալը, ուստի և նա ասում է. «Ամեն ինչ կարող եմ Նրանով, որ զօրացրեց ինձ» (Փիլ., Դ 3): Սակայն այդպիսի գործունէութեան մէջ հարկաւոր է նաև ներքին կարողութիւնների արտաքին դրսևորում, ինչը և երևում է հիւանդների և ախտաժէտների բժշկութեան, այլև դևեր հանելու, մեռեալ կենդանացնելու և այլ նոյնպիսի մարմնաւոր կամ հոգևոր հրաշագործութիւնների մէջ: Այս ամենը ծառայում է փրկագործական տնօրինութեան իրագործմանը, ըստ որում Հին Ուխտի մէջ այդ շնորհները հանդէս են գալիս մարգարէական նախապատրաստութեան, իսկ Նորում առաքելական գործունէութեան մէջ: Բայց Աստուած միշտ ասպարէզ է հանում նման անձանց, ըստ եկեղեցու կարևորութեան, որոնք յայտնի են դառնում իրենց անվեհեր, հոգեբոյժ, մխիթարիչ և տարբեր ուղղութիւնների վայրիվերոյ ընթացքը հանդարտեցնող կարողութեամբ: Դրանք իրենց նոյն աւետարանական դերն են կատարում, ինչ որ նախկին աւետարաններն իրենց ժամանակին ունենալով հաւատքի լրութեան և հոգևոր հրաշագործութեան շնորհը:

Հոգեկան շնորհների մէջ մարգարէութիւնը երևան է եկել Հին Ուխտում աւետեաց կանխասացութեան մէջ, իսկ նորում հոգեկիր անձինք բացատրում էին աստուածային յայտնութեան խորհուրդները Ս. Հոգու յատուկ ներգործութեամբ, բայց նաև մտքի ծայրայեղ լուսաւորութեամբ (Ա Կոր., Բ 13, ԺԹ 32)[1]:

[1] Շարակ. 517♠

Առաքեալների ժամանակ մի առանձին շնորհ էր նաև լեզուախօսութիւնը, որով օժտեց նրանց Ս. Հոգին՝ թէ՛ խօսելու, թէ՛ Աստծուն աղօթելու և փառաբանելու մեծահրաշ փրկագործութեան համար (Գործք., Բ 4, 7, 11, Ա Կոր., ԺԴ 15-17): Ըստ այսմ, ինչպէս որ Բաբելոնի լեզուամոռացութիւնը ցրեց բոլորին, այս լեզուախօսութիւնը պէտք է ժողովէր հաւատացեալներին ի մի Քրիստոս[1]: Եւ որովհետև լեզուախօս առաքեալը խօսում էր ու քարոզում ոչ բոլոր լեզուներով (Ա Կոր., ԺԴ 18), ուստի կար մի երրորդ շնորհ ևս, այն է՝ թարգմանութիւնը, որով թարգմանիչը թարգմանում էր նրա ասածները ժողովրդին: Բայց եկեղեցին իւրաքանչիւր ժամանակի համեմատ ևս ունի հոգեկիր գործիչներ, առաւել ևս պատմական կարևոր շրջաններում, երբ նա առանձին զօրացման կարիք է ունենում: Այդպիսի ժամանակներում երևում են անձինք, որոնք մարգարէական աչքով հասկանում են ժամանակի խորհուրդն ու պահանջները, ըստ անցեալի և ապագայի, աստուածային ազդու ձայնով ու լեզուով միացնում են սրտերը մի ճանապարհի վրայ, ճշմարտութեան ծածկված խորհուրդը ներշնչում ամենքի մէջ լուսաւոր պայծառութեամբ: «Թէպէտև մարգարէութիւնը տեսալ ժամանակի համար չէ, բայց Աստծու իմաստութիւնը ճանաչել է տալիս...», ասում է ս. Ներսէս Շնորհալին[2]:

Այս հրաշալի շնորհները բաշխում են թէ՛ եկեղեցու պաշտօնեաների ու գործիչների և թէ առհասարակ հաւատացեալ անդամների մէջ զանազան աստիճաններով[3] ըստ անհրաժեշտութեան և ըստ իւրաքանչիւրի կարողութեան, ընդունակութեան և անձնուիրութեան, որքան և ինչպէս հաճոյ է Աստծուն Իր եկեղեցու կանոնաւոր առաջադիմութեան և զօրացման համար[4]: Ուրեմն Ս. Հոգու

[1] Շարակ. 389:
[2] Ընդհան. 157:
[3] «Եթէ այս հուրը երկաթէ թանձրութեան մէջ մտնելով՝ նրան կրակի նման է դարձնում ներքուստ և արտաքուստ, և այն, որ սառն էր սկզբից, հիմա կրակի պէս է լինում և այն, որ սև էր սկզբից, այն կարմիր լինելով՝ շողարձակում է: Արդ, եթէ հուրն անմարմին է և մտնելով երկաթի մարմնի մէջ այդպէս ներգործում է անսպառ կերպով՝ ինչո՞ւ է զարմանում, եթէ Ս. Հոգին, մարդկանց մարմնի մէջ մտնելով, այնչափ շնորհներով լիալիր է դարձնում այն» (Կոչ. ընդ. 330):
[4] «Մաքրիր ամանդ, որպէսզի կարողանաս բազմատեսակ շնորհներ ընդունել: Քանզի մեղքերի թողութիւն առհասարակ տրւում է բոլորին: Իսկ Ս. Հոգու հաւասարութիւնը բաշխւում է համաձայն ընտրութեան չափի, ըստ իւրաքանչիւր հաւատքի: Եթէ քիչ աշխատես՝ քիչ կընդունես և եթէ շատ աշխատես՝ շատ վարձ կընդունես քո անձի մէջ» (Կոչ. ընդ., 13, 303-319):

շնորհաբաշխութիւնը լինում է ընդհանուր և յատուկ: Ընդհանրապէս Ս. Հոգին աստուածային փրկագործութեան համար իր շնորհներով իւրաքանչիւր հաւատացողի յղում է դէպի փրկութիւն՝ օգնելով և առաջնորդելով նրան, իսկ յայտնապէս նոյն այդ փրկագործական նպատակի համար բարեզարդում է իր եկեղեցու պաշտօնեաների ու գործիչների շնորհագործութիւնը, որպէսզի այդ շնորհագործութիւնը միջոց դառնայ հաւատացեալների փրկագործութեանն ու եկեղեցու առաջադիմութեանը: Հետևաբար այդ եռակի շնորհները ծաւալւում են Ս. Հոգու շնորհաբաշխութեան իւրաքանչիւր միջնորդի և փրկութիւնը իրացնողի մէջ՝ համաձայն եկեղեցու զարգացման ու առաջադիմութեան աստուածային նպատակի արդիւնաւորելով ու պտղաբերելով[1]:

Ս. Հոգու շնորհաբաշխութեան աւանդարանն է Եկեղեցին, աւանդման կարգն են ս. խորհուրդները, իսկ միջոցներն են պաշտօնեայի օրհնութիւնն ու ս. միւռոնը:

ԻԹ

ԵԿԵՂԵՑԻ

Արդէն տեսանք, որ Ս. Հոգով անհատներն Աստծու տաճար են դառնում, Աստծու հաւատացեալներ են լինում. երկրորդ՝ այդ հաւատացեալներից սիրոյ համայնք է կազմւում, երրորդ՝ այդպիսի համայնքներից աստուածպաշտական միասիրտ, միահոգի և միաձայն ու միալեզու եկեղեցի է կազմակերպւում, և չորրորդ՝ իւրաքանչիւր եկեղեցի ճանաչելով, որ Քրիստոս է իր փառքերի թագաւորը՝ դառնում է նրա թագաւորութեան կամ արքայութեան մի տարրը, մի մասը, սակայն մի այնպիսի մասը, որ ներկայացնում է իր մէջ Աստծու արքայութեան ամբողջութիւնը[2]: Այստեղից պարզապէս հետևում է, որ **ինչպէս Աստծու արքայութիւնը սկսւում է իրականանալ այս աշխարհում և իր լրումին է**

[1] Ցաճախ., Ե 263-265, 345:
[2] Տե՛ս Ա Կոր., ԺԱ 16, 22, Գաղ., Ա 13, Ա Տիմ., Գ 5, 15, Գործք., Ի 28 և Ա Կոր., ԺԲ 28, Եփ., Ա 22, Գ 10, Ե 22-32, Փիլ., Գ 6, Կող., Ա 18, 24, մանաւանդ Գործք., Թ 4, Գաղ., Ա 13, Ա Կոր., ԺԵ 19, Ա Տիմ., Գ 15 և այլն:

հասնելու հանդերձեալում, այնպէս էլ իւրաքանչիւր եկեղեցի անում զարգանում է այս աշխարհում, որպէսզի իր կատարումը ստանայ հանդերձեալ կեանքում: Եւ ինչպէս որ Աստծու արքայութիւնն իրականանում է հաւատացեալ անհատի սրտում ու եկեղեցի դարձնում նրան[1] և ապա ճշմարիտ հաւատացեալի վրայ հիմնւում է իւրաքանչիւր եկեղեցի՝ ինչպէս իւրաքանչիւր առաքեալի և աւետարանչի վրայ[2], այնպէս էլ Աստծու արքայութիւնը հաստատւում է երկրում նախ եկեղեցու մէջ իրագործելով և ապա իւրաքանչիւր եկեղեցու վրայ հաստատւում է հանդերձեալ փառքի արքայութիւնը: Ուստի և Ս. Գրիգոր Նարեկացին յարմարապէս համեմատում է մարդուն իր եկեղեցու հետ. «Իմանալին իբրև հոգու խորհուրդ և շօշափելին իբրև մարմնի պատկեր»[4*]: Ինչպէս իւրաքանչիւր հաւատացեալ անհատ թէ՛ բաղկացուցիչ և թէ՛ գործունեայ անդամ է իր եկեղեցում (Ա Կոր., ԺԴ 12, Բ Կոր., ԺԲ 12), այնպէս էլ իւրաքանչիւր եկեղեցի բաղկացուցիչ և գործունեայ տարր է Աստծու արքայութեան: **Անհատով է իրականանում եկեղեցին և եկեղեցով է իրականանում Աստծու արքայութիւնը:** Ինչպէս չի կարող եկեղեցի լինել առանց անհատների, այնպէս էլ չի կարող Աստծու արքայութիւնը լինել առանց եկեղեցիների: Անհատը մօտենում է Աստծուն, հաղորդակից է լինում Նրան, ստանում է Քրիստոսի փրկութիւնը, վայելում է աստուածային շնորհները և աստուածային կեանք վարում միմիայն եկեղեցով: Ըստ այսմ և եկեղեցին ներկայացնում է Աստծու արքայութիւնն իր մէջ, Աստծու արքայութեան մասն է կազմում, տարածում է Քրիստոսի փրկութիւնը, բաշխում է աստուածային շնորհները և աստուածային կեանք է ընդհանրացնում միմիայն եկեղեցով: Այդպէս և Աստծու արքայութիւնն իրականացնում է մարդու կոչումն իր եկեղեցով: Ուրիշ խօսքով՝ եկեղեցին միացնում է իր բոլոր հաւատացեալներին՝ գլուխ ունենալով Քրիստոսին, և դարձեալ Քրիստոսի հաստատութիւնը լինելով՝ տարածում, սփռում է աստուածային շնորհներն Իր բազմաթիւ որդիների մէջ: «Տէրը ոչ թէ աշխարհի միայն մէկ մասի համար եկաւ, այլ՝ աշխարհի բոլոր մասերի համար: Մի մասին բժշկեց, որպէսզի մէկ մասի միջոցով բոլոր մասերը սովորեն գնալ նոյն բժշկի մօտ», ասում է Եղիշէն (Ա Կոր., ԺԴ 23): **Այս է նաև մարդկային պատմութեան բնական ընթացքը, ըստ որում**

[1] Ս. Յովհ. Իմաստ. 143, Հարց. 613-614, Ընդհան. 374:
[2] Ս. Յովհ. Իմաստ. 119, 130, Հարց. 531, 532, 613:

միացեղ, միալեզու, միաբնոյթ և պատմական առումով միակենցաղ անհատներից կազմւում է ազգը, որ առաջ է գնում անհատների աշխատանքով և որի շնորհները վայելում է իւրաքանչիւր անհատ: Ապա որոշ ազգերից կազմւում է ամբողջ մարդկութիւնը, որն առաջադիմում է ազգերի առաջադիմութեամբ և որի առաջադիմութեան արդիւնքները վայելում են և առանձին ազգերը: Հետևաբար աշխարհի ընթացքը անհատական հիմքի վրայ է հաստատւած: Այդպէս է և Աստծու արքայութիւնը, որի հիմքը կազմող անհատը հաւատացեալն է ու իւրաքանչիւր եկեղեցի: Արքայութեան շնորհները անհատը ստանում է իւրաքանչիւր եկեղեցիով: Ազգութիւնն ու եկեղեցու ազգայնութիւնը անխզելի տարրեր են տիեզերական կեանքի մէջ:

Այս ամենից ինքնըստինքեան բխում է և եկեղեցու գաղափարը: «Եկեղեցի» յունարէն է և բառացի նշանակում է ժողով, իսկ ըստ գործածութեան նշանակում է միաբանութիւն Քրիստոսի այն ճշմարիտ հաւատացեալների, որոնք հաստատւած «առաքեալների և մարգարէների հիմքի վրայ» մի հաւատքով, մի մկրտութեամբ, մի հոգով՝ պաշտում և դաւանում են Ս. Երրորդութիւնն որպէս մի Աստւած և մի Տէր, ու միացած են իրար և Աստծու հետ մի անկեղծ սիրով ու երկրաւոր կոչման մի հաստատուն յուսով (ԵՓ., Դ 3): Եկեղեցին մեզ ցոյց է տալիս, թէ Աստծու պատուիրանը ոչ թէ քարից և փայտից է շինւած, այլ՝ հաստատուն վէմի վրայ հաւատքով շինւած մարդկանց: «Ապա ուրեմն եկեղեցին ճշմարիտ հաւատն է, որ մեզ հաւաքում և կառուցում է Աստծու Որդու գիտութեան միաբանութեան մէջ», ասում է Ս. Սահակը[5-6*]: Ուրեմն այս գաղափարի մէջ էական տեղ զբաղեցնողը ճշմարիտ, կենդանի հաւատքն է: Այն եկեղեցի կազմողը և դէպի ամեն կողմ յոյս ու սէր ծաւալողը, այնպէս որ ըստ Ս. Գրիգոր Լուսաւորչի՝ «Ե՛ւ հաւատքի յօժարութիւնը, և՛ սուրբ սիրոյ հաւասարութիւնը, որ կողմ յորդորում է՝ բոլոր յօժարողներին մէկտեղում է Քրիստոսի մէջ»[1]: Հաւատքն է միացնում ամենքին և հաւատքն է մի հոգի ու մի հօտ դարձնում Աստծու առաջ, այլև հաւատքն է ամեն տեղ եկեղեցիներ կառուցում և ամեն ազգի իր եկեղեցին միալեզու ու միախորհուրդ հաստատում: Այս է պատճառը, որ Ասուծոյ Հին Ուխտով միացած ժողովուրդն էլ կոչւում է եկեղեցի՝ սկզբից միայն Նահապետական և ապա

[1] Ցաճախ., ԺԱ 172:

Իսրայէլական եկեղեցի: Մովսէսի ժամանակինն էլ կոչւում է ընդօրինական (նախատիպ) եկեղեցի, որի մարմնացումը և իսկութիւնը Քրիստոսի եկեղեցին է, որովհետև օրէնքի եկեղեցին իր առաւել զգալի ձևակերպութեամբ հաւատք և աւետիք էր միայն ներշնչում, մինչդեռ Քրիստոսի իսկական եկեղեցին հաւատք է վառում և շնորք տալիս փրկութեան լոյսի մէջ: Ըստ որում և «Եկեղեցին եռում է աստւածային Հոգու կրակով, որ մեղքերի կիզիչն է և Քրիստոսի հաւատացեալների հոգիների ոռոգիչը»[1]:

Եւ որովհետև անհատն է Աստծու արարչական գործի նպատակը, Աստծու արքայութիւնն է այդ նպատակի իրագործումը և դարձեալ անհատն է նրա սկզբնաւորութեան հիմքը, ուստի հաւատքն է, որ անհատին թէ՛ հիմք է դարձնում, թէ՛ նպատակ և թէ՛ նրա կոչումն է իրագործում մինչև վախճանը: Բայց մենք գիտենք, որ Քրիստոս է Իր արքայութեան սկիզբն ու կատարածը, այբն ու ֆեն, Իր եկեղեցու հիմքն ու գլուխը, վէմն ու կատարը, կեանքն ու փրկութիւնը[2]: Ահա և անհատը եկեղեցու հիմք, վէմ ու նպատակ է դառնում միանալով իր հաւատքով Քրիստոսի հետ (Ա Պետ., Բ 5): Հաւատքով անհատի մէջ է բնակւում Քրիստոս և Ինքն իսկական վէմ լինելով՝ վէմ է դարձնում նրան Իր եկեղեցուն[3] և նոյն անհատին տանում դէպի նրա կոչման իրականացումն Իր արքայութեան մէջ[4]: Հաւատքով անհատը դառնում է Աստծու տաճարը. հաւատքով անհատները մարմնական միութեան պայմանների մէջ մէկտեղւում են և դառնում Աստծու եկեղեցին և հաւատքով իւրաքանչիւր եկեղեցի դառնում է Աստծու արքայութեան գործունեայ և կենդանի տիպարն ու տարրը, ըստ որում «Մենք թէպէտև մարմնով երկրում ենք, բայց հաւատքով շինւած ենք երկնքում», ասում է ս. Վարդան Մամիկոնեանը[5]: Եւ որովհետև Եկեղեցու վէմը Քրիստոս է, եկեղեցին Քրիստոսի մարմինն է և եկեղեցու գլուխը դարձեալ Քրիստոս է, ուստի և մենք հաւատքով

[1] Գր. Արշար 48, Ս. Յովհ. Իմաստ. 132-135:
[2] Կող., Ա 18, Գ 15, Եփ., Ա 22, Ե 23-31, Փարպ. 143, Յովհ. Իմաստ. 130:
[3] Տէրը «սրա հիմքերը դրեց ոչ թէ պատուական շափիւղայ, սուտակ քարերով, այլ Ինքը անկիւնաքար եղաւ և սրա հիմքում դրեց առաքեալներին և մարգարէներին: Եւ սրա աշտարակները կանգնացրեց ոչ թէ յասպիս քարից, իսկ պարիսպները՝ ընտիր-ընտիր պատուական քարերից, այլ հրեշտակների բիւրաւոր զօրութիւնները սրան շրջանաձև պարիսպ դարձրեց նաև սրբերի լուսազգեցիկ համաժողովը» (Ս. Յովհ. Իմաստ. 130):
[4] Եղիշէ 328, 348:
[5] Անդ., 79:

հաստատելով այդ վէմի վրայ, այդ մարմնի մի անդամը դառնալով և այդ գլխի տակ կառավարելով՝ անվրդով և անշարժելի ենք դառնում այս աշխարհի բոլոր հեղեղների ու հողմերի մէջ, անխոտոր է դառնում մեր կեանքը և անշեղ ընթացքը՝ դէպի փառքերի արքայութիւնը:

Այդպէս և եկեղեցին հաստատուն է այդ վէմի վրայ, որ է Քրիստոս, սնունդ է առնում իր աճման ու զարգացման համար մի որթից, որ է Քրիստոս, և իր ամբողջ կեանքում և ընթացքում ներդաշնակւում ու պատշաճւում է աշխարհի բոլոր պատմական հանգամանքների մէջ Քրիստոսով տրուած Ս. Հոգով: Եկեղեցու այսպիսի ապահով կեանքը պայմանաւորուած է միմիայն այն կարգադրութեամբ, որ արեց Քրիստոս, այն է՝ Ս. Հոգու ներգործութեամբ Նրա առաքեալների նախանձախնդիր յուզավառումով (Գործք., Ա 4, Ղուկ., ԻԴ 49), նրա առաքելոց եկեղեցու հիմնադրութեամբ և կազմակերպութեան շնորհագործութեամբ: Նրա առաքեալներից իւրաքանչիւրի ստացած մեծ շնորհներով է աճել իւրաքանչիւր եկեղեցի և Նրա իւրաքանչիւր առաքեալի ստացած շնորհների աճումով է պայմանաւորուած իւրաքանչիւր եկեղեցու ամբողջ կեանքն ու ապագան: **Ոչ մի ժողով չի կարող ճշմարիտ եկեղեցի կոչւել, եթէ կազմակերպութիւն չի ստացել առաքելական աղբիւրից. ոչ մի եկեղեցի չի կարող ճշմարիտ եկեղեցի կոչւել, եթէ չի հաստատւել առաքելոց վրայ. ոչ մի եկեղեցի չի կարող ճշմարիտ եկեղեցի կոչւել, թէ չի ունեցել իր առաքեալների միջոցով շնորհաբաշխ հոգեգալուստը և ոչ մի եկեղեցի չի կարող հաստատութիւն ունենալ, եթէ հաստատուած չէ միակ վէմ Քրիստոսի վրայ և մի գլուխ Քրիստոսի ներքոյ:** Եկեղեցին սկսւում է Քրիստոսով, հիմնւում է Ս. Հոգու գալստեամբ առաքեալների մէջ[1], հիմնադրւում է իւրաքանչիւր առաքեալի ձեռքով և իր ճշմարիտ զարգացման ընթացքն է ստանում ամեն մի առաքեալի ճշմարիտ ու շնորհաւէտ յաջորդութեամբ: Ահա այս է ճշմարիտ եկեղեցու ծագման, աճման, ծաղկման և զարգացման ընթացքն ու ուղղութիւնը: «Սրա որովայնի արգանդը կենդանարար աւազանն է, սրա հարսանիքի շուրջպար [բռնողները]՝ առաքեալները» (Ս. Գրիգոր Նարեկացի)[7*]:

[1] Տե՛ս Գոծք., Բ 42, Ա 13, Բ 1, Դ 31, ԺԲ 11, Ա Կոր., ԺԱ 18, ԺԴ 19, 34, 35, Գործք., Ի 7, Ա Կոր., Ժ 16, Եբր., ԺԳ 10, Գործք., Դ 31, Ե 3, 9, Զ 5, Է 55, Ը 15, ԺԳ 1-3:

Եկեղեցու հիմնադրութեան և կեանքի այդ սկզբունքից պարզապէս հետևում է, որ Նրա էութեան անխախտութիւնը ևս ապահովւած է Ս. Հոգու խնամածութեամբ[1]: Կեանքի հանգամանքներն ու մարդկային մոլորութիւնները կարող են զանազան պարագաներով բարդել եկեղեցու վիճակը, նրա ժամանակային ու տեղական պայմանները, մինչև անգամ թիւր ձևակերպութիւնների մէջ դնել, սակայն դրանով Քրիստոսի եկեղեցու էութիւնը չի խորտակւում: Յաճախ կրկին թիւրութիւններ ու մոլորութիւններ, մանաւանդ, որ դրանք ազատ կամքի հետևանք են, ինչպէս տեսանք նախընթացում, և ինչպէս էլ լինեն կը ծառայեն հաւատացեալների ու ճշմարտութեան կազդուրմանն ու զօրացմանը, կամ աստուածային գործի մշակների շատանալուն զարկ կը տան, այլև այն ժամանակի ու տեղի պարագայով, որոնց թելադրանքով դրանք առաջացել են, Քրիստոս դարձեալ ճշմարտութեան ձայնը կը բարձրացնի և մոլորութիւնն իր զարգացման ծայրին հասցնելով՝ բնականապէս կը խորտակի: Հետևաբար աշխարհի բոլոր անողոք խառնաշփոթութիւնների մէջ Քրիստոսի Եկեղեցին յաղթող դուրս կը գայ և կը գնայ դէպի իր աւարտը: «Ինչպէս արեգակի ճառագայթները սկզբից ծագում են, յետոյ ծաւալւում, այդպէս էլ անփոփոխ իսկութեան էութեան ճշմարտութիւնը»[2]: Աստուած սրբութեան հետ է, ուրեմն Նա նրա հետ է, ով միանում է ճշմարտութեան ու սրբութեան հետ և կուում խաւարի, տգիտութեան և անսրբութեան դէմ: Այս այնքան ակներև է, որ անհաւատ պարսիկներին անգամ ծանօթ էր, երբ Վահան Մամիկոնեանն ասում էր. «Ես և արդարութեան ուխտապահութիւնը կուում ենք միասին, իսկ դու և ուխտագնացութեան ստութիւնը միասին էք: Եւ արդ, դու ինձ ինչպէ՞ս կարող ես յաղթել»[3]:

Ասացինք, որ եկեղեցին ինքն իր մէջ Աստծու արքայութեան իրականացումը լինելով, միանգամայն և իրականացնող հաստատութիւն է: Ըստ այսմ Քրիստոս Իր եկեղեցուն է յանձնել Ս. Հոգու շնորհների բաշխումը, ս. խորհուրդների արժանացումն ու նրանց միջոցով առաջացրած նորոգ կեանքի հոգատարութիւնը, խնամածութիւնն ու քաջալերութիւնը: Բնականաբար

[1] Գործք., ԺԵ 28, ԺԶ 6, ԻԱ 1, Ա Կոր., ԺԲ 4-6, Եփ., Դ 4:
[2] Յաճախ., Գ 83:
[3] Ղազար Փարպ. Պատմ., էջ 475:

Քրիստոսի եկեղեցու նպատակն է տարածել ու զարգացնել Աստծու արքայութիւնը ներքուստ և արտաքուստ, այսինքն՝ աստուածային սերմը սերմանել մարդկանց սրտերում, շահեցնել ու շահեցնել տալ Քրիստոսի վստահած տաղանդը, աշխատելով, որ դրանք մէկին հարիւր ու հազար պտուղներ տան, ու ձգտել արմատախիլ անել աշխարհի չարութիւնները: Ուրեմն եկեղեցու գործունէութիւնը պատերազմական է, ըստ որում նա մարդկանց ծննդագործում է դրականապէս, Աստծու որդիներ դարձնում, շնորհագործում դէպ ճշմարիտ կեանք ու տանում դէպ փառքի արքայութիւն, իսկ բացասականապէս կռւում է սատանայի իշխանութեան դէմ, հալածում է խաւարը, չքացնում է չարութեան արմատն ու մտցնում ճշմարտութեան ազատութիւնը մարդկանց սրտերի մէջ՝ խորտակելով մեղքի գերութիւնը:

Այս պատերազմական գործունէութեան պատճառով եկեղեցին կոչւում է զինուորեալ, որ զինւած է Ս. Հոգու զէնքով զանազան փորձութիւնների, սխալանքների ու թուլութիւնների դէմ, որ ղեկավարւում է Իր ամենազօր Թագաւորի պաշտպանութեամբ և առաջնորդւում է պատերազմի դաշտով դէպի յաղթանակ տարած հանգուցեալ սրբերն էլ հրեշտակների հետ կոչւում են Անդրանկաց կամ Յաղթական Եկեղեցի, որ վայելում է երկրաւոր փառքի խնդութիւնն ու խաղաղութիւնը[1]: Անդրանկանց եկեղեցին բաժանւած է զինուորեալից միմիայն մարմնապէս, ըստ որում նոյն հաւատքը և նոյն անցեալը դրանց կապում է միութեան մէջ, այնպէս որ ճշմարիտ եկեղեցին ոչ առանց զինուորեալի է և ոչ առանց յաղթականի: Այլև **յաղթական եկեղեցին զինուորեալի յաղթութեան երաշխիքն է, իսկ զինուորեալ եկեղեցին յաղթականի դրսևորումը:** Դրանցից մէկի կամ միւսի չլինելը ժխտում է եկեղեցու էութիւնը և այլ փրկագործական ընթացքը, որով եկեղեցին տանում է մարդուն դէպի հանդերձեալը իր անհատ ճանապարհով և ապահովութեամբ:

Զինուորեալ եկեղեցին ևս իբրև Աստծու արքայութեան իրականացում, իր անդամների մէջ որևիցէ խտրութիւն չի դնում, այլ ամենքը մէկ են և իւրաքանչիւրն

[1] Եբր., ԺԲ 23, Եղիշէ 224, 371, 375, Յաճախ.., ԺԹ 317, «Ինչը մարտում կռւողների համար դժւարին պատերազմ է թւում, երբ յաղթում՝ բաւական ուրախանում են, առաւել մեծ է հոգևոր անձանց ուրախութիւնը, երբ նրանք յաղթում են (հոգևոր) պատերազմում» (Յաճախ., Ժ 342):

իր առաւելութիւնը ստանում է Աստծու առաջ միմիայն իր կենդանի հաւատքի զօրութեամբ ու պայքարով: Իւրաքանչիւրն ըստ իր չափի կարողութեան շահեցնելով իրեն յանձնւած քանքարը, փայլում է միմիայն աստուածային այլ շնորհքով, որին ինքն ընդունակ է դառնում և արդիւնաւորել է կարողանում[1]: Որի մասին և Ս. Հայրերն ասում են՝ խօսքն ուղղելով Աստծուն. «Գոհանում ենք Քեզնից, Փրկիչ, որ սուրբ Գրիգորի հօտից շատ աւելի ոչխարներ ստեղծեցիր, քան բանական հովիւներ, և ժողովրդից շատ աւելի աշակերտներ յօրինեցիր, քան գիտուն վարդապետներ»[2]: Սակայն զինուորեալ եկեղեցին Աստծու արքայութիւնն իրականացնող հաստատութիւնը լինելով՝ ունի և իր պաշտօնատար կամ ուսուցանող անդամներին, որոնք սկզբից իսկ զանազան անուններ են կրել, ինչպէս են՝ առաքեալ, աւետարանիչ, տեսուչ կամ եպիսկոպոս, վարդապետ, երէց, սրբութեան պաշտօնեայ, հովիւ, Աստծու կամ Տիրոջ ծառայ, Քրիստոսի պատգամաւոր, եկեղեցու հրեշտակ, պատգամաւոր, Աստծու խորհուրդների կամ շնորհների տնտես կամ հազարապետ, Աստծու այր, ճրագ, աղ[3] և այլն, որոնցից իւրաքանչիւրն արտայայտում է հոգևոր պաշտօնեայի մի պարտաւորութիւնը կամ նշանակութիւնը: Դրանք առաւելագոյն շնորհ են ստանում ըստ կոչման և ըստ ձեռնադրութեան, ուստի և ենթակայ են առաւելագոյն պարտաւորութեան ու պատասխանատուութեան[4]: Նրանք հոգացող են ոչ միայն իրենց անձանց, այլև այն ամենքին, որոնց բարեկեցութեան պատասխանատուութիւնը ստացել են Աստծուց[5]: Խօսքը վանական միութեան մասին է, որ մարմնացնելով իր մէջ ճշմարիտ եղբայրութիւնը, նւիրւում է ժողովրդի կրթութեան և կարօտեալների ու տանջւողների օգնութեան, մխիթարութեան և ամոքման գործին:

[1] Տե՛ս Հռ., ԺԲ 1, Ա Կոր., ԺԲ, Ա Թես., Ե 19, Յակ., Գ 1, Յաճախ., Դ 250-258, Փարպ., 147, «Քանզի մէկ մէկու անդամ ենք Աստծու սիրով հաստատւած հաւատքի շինութեան» Ս. Սահակ:

[2] Փարպ. 271:

[3] Բ Կոր., Ե 18, Ա Կոր., ԺԲ 28, ԵՓ., Ա 22, Ա Թես., Ե 10, 12, Բ Տիմ., Ա 11, Ա Կոր., ԺԶ 15, Հռովմ., ԺԲ 8, Կող., Դ 17, Փիլիմ 2: Հմմտ. և Յովհաննէս Սարկաւագ վարդապետ, Յաղագս քահանայութեան (Սուփերք Գ):

[4] Ս. Ներսէս Շնորհալի Ընդհանր., էջ 291, 453:Ա Կոր., ԺԲ 12-31, Հռովմ., ԺԲ 5, Գաղ., Գ 28, Գ, Գործք., Բ 14, ԺԴ 22, ԺԳ 1, ԺԱ 30, ԺԵ 26, 22, 23, ԻԱ 18, Թ 28 և այլն:

[5] «Հովւապետի՝ հովւական խնամքի մէջ [թերանալը] և հօտը թողնել լքելը և գայլերից գառների յափշտակւելը տեսնելը և անտեսելը անհաւատութեան նշան է»: Ընդհան. 9, 11: Տես., և Ա Կոր., ԺԴ 3, 24, Եփ., Գ 5, Դ 11, Ա Թես., Ե 10, Հռ., ԺԲ 6, Ա Պետր., Բ 25, Ե 4:

Նրանց հոգացողութեան յանձնուած մասն էլ ժողովուրդն է, որ կոչւում է հօտ, ոչխարներ, գառներ, եղբայրներ, Տիրոջ ժողովուրդ, արքայութեան որդիներ, Աստծու որդիներ և այլն: Այդ անուններից ամեն մէկն արտայայտում է այն վերաբերմունքը, որ պէտք է ունենայ ժողովուրդը Քրիստոսի և աստուածային պատուիրանների նկատմամբ: Սակայն այս մի կտրական բաժանում չէ, այլ թէ՛ պաշտօնակատար դասը և թէ՛ ժողովուրդը կազմում են Քրիստոսի հօտը: Դրանք իրարից տարբերւում են նրանով, որ առաջինն ունի ձեռնադրութիւն և ըստ ձեռնադրութեան՝ որոշ պաշտօն եկեղեցում, մինչդեռ միևնոյն են նրանով, որ երկուսի կոչումն էլ նոյնն է, այսինքն՝ ըստ իր կարողութեան աշխատանքի ու գիտութեան և ընդունած շնորհների՝ ուսումնասիրել ճշմարտութիւնը, գործակցել Աստծուն և տարածել ու զարգացնել Աստծու արքայութիւնը: Այսպէս և առաքեալները վճռական իրավիճակներում իրենց հաւատացեալների ժողովի հետ հոգու միութեամբ էին գործում (Ա Կոր., Ե 4):

Եկեղեցու էութիւնն ու մեծ նշանակութիւնը խոստովանւում է դռնբացէքի հանդէսին՝ փրկութեան դռան բացումը խնդրող ժողովրդի կողմից. «Սա մեզ համար անարատ մայր է. սրանից ենք ծնւում մենք իբրև լոյսի և ճշմարտութեան որդիներ. սա է մեր կեանքի յոյսը և սրանով ենք գտնելու հոգիների փրկութիւն, և որովհետև սա մեզ համար արդարութեան ճանապարհ է՝ սրանով ենք բարձրանալու Քրիստոսի՝ մեր երկնաւոր Հօր մօտ»[1]: Ըստ որում և եկեղեցին իր ամբողջ գոյութեամբ ներկայացնում է Աստծու երկնաւոր արքայութիւնը երկրի վրայ, այնպէս որ Ս. Յովհան Իմաստասէրը իրաւամբ գրում է . «Քահանայապետը, որ սրա մէջ է և բաշխում է ճշմարիտ շնորհներ, մեծ Քահանայապետի օրինակն է, որից բխող անմահութեան վտակը՝ Սուրբ Հոգին, կեանք և անմահութիւն է բաշխում մարդկանց: Եւ սրանից զատուած [հոգևոր] պաշտօնեաների դասերը, երկնաւոր դասերի տարբեր կարգերի և պաշտօնների զօրութիւնն են խորհրդանշում»[18*]:

[1] «Աղօթքի տաճարը և մեր խնդրուածքների վայրը ամենքի նաւահանգիստն է, որ սովոր ենք յարանունաբար եկեղեցի անուանել՝ ըստինքեան նրա մէջ առաջնորդ ունենալով նաւապետին՝ տեսուչ եպիսկոպոսին, որպէսզի [սա] խնամոտ և արդիւնատար կամքով հաստատուն պահի իր կարգի սահմանը: Այս պատճառով առհասարակ Քրիստոսին հաւատացողների համար ապաւէն և ապաստան է սուրբ Եկեղեցին, որովհետև արդարների և մեղաւորների նաւահանգիստն է և մեր փրկութեան յուսոյ վայրը...» Ս. Սահակ[9*]:

Լ

ՃՇՄԱՐԻՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ

Քանի որ իւրաքանչիւր եկեղեցի Աստծու արքայութեան մի բաղկացուցիչ ու գործունեայ տարրն է և միանգամայն ներկայացնում է իր մէջ Աստծու արքայութիւնը կամ Քրիստոսի թագաւորութիւնն՝ ազգայնութեան բնական հիմքերի վրայ հաստատուած, հետևաբար իւրաքանչիւր եկեղեցի կրում է այն ազգի կրօնական ներքին կեանքի և դրա արտաքին արտայայտութիւնների դրոշմը, որի փրկարանն է ինքը: Ներքին և արտաքին կեանքի արտայայտութիւնը հաւատքի վարդապետութիւնն է և հոգեբուխ աստուածապաշտութիւնը: Այդ երկու արտայայտութիւնների մէջ անշուշտ կը փայլի ազգային հոգին, որպէսզի հաւատքը և աստուածպաշտութիւնը բնական լինեն և հետևաբար՝ թէ՛ Աստծուն հաճելի և թէ՛ ճշմարիտ հաղորդակցութեանը նպաստող: Ակնյայտ է, որ իւրաքանչիւր եկեղեցի տարբեր դրոշմ կրելով, տարբեր կերպ կը ձևակերպւի, իսկ այդ հանգամանքից կառաջանան թէ՛ հերձւածողներ (հերետիկոս), այսինքն՝ ճշմարիտ եկեղեցու վարդապետութեան այս ու այն դաւանական հիմքը փոփոխողներ և փոխողներ, թէ՛ աղանդաւորներ, այսինքն՝ այս ու այն դաւանական վարդապետութիւնը ուղղակի և հիմնովին ժխտողներ ու մերժողներ: Ուստի և հարկ է իմանալ այն նշանները, որոնցով ճանաչւում է ճշմարիտ եկեղեցին:

[1] «Տեսնո՞ւմ ես եկեղեցու ներդաշնակութիւնն ու բարձրութիւնը. սուրբ և անբիծ հաւատքի համար եմ ասում, որի նաւավարները առաքեալները, մարգարէները և վարդապետներն են՝ իրենց վրայ նաւապետ ունենալով մարմնացած և մարդացած Աստծու Բանին, և իսկապէս նրանք են խոստովանում մեր հաւատքը՝ անուանելով ի Քրիստոս հաւատացեալների Մայր Եկեղեցի, որովհետև նաւի նման բոլորին իր մէջ ամփոփելով՝ կարող է ամեն տեսակ աշխահային ալեկոծումից զերծ պահելով փրկել, եթէ աներկբայ ցնծութեամբ պահենք մեր հաւատքը, որով կառուցեցինք իբրև բանական և մտաւոր եկեղեցի առաքեալների և մարգարէների հիմքի վրայ» Ս. Սահակ[10*]:

Աստծու արքայութեան մէջ իւրաքանչիւր անհատի էական նշանակութիւն ունենալը պարզապէս ցոյց է տալիս, որ ոչ եկեղեցու անդամների բազմութիւնը, ո՛չ արտաքին շուքը և ո՛չ աշխարհային որևիցէ ուժ ու մեծութիւն չեն կարող եկեղեցու ճշմարտութեան նշան ծառայել: Մէկ ճշմարիտ հաւատացեալը Աստծու արքայութեան համար առաւել մեծ նշանակութիւն ու տեղ ունի, քան թէ բիւր թերահաւատներ ու մոլորեալներ, որոնք դեռ նոր ի նորոյ կարօտ են դարձի[1]: Ըստ այդմ և ընկած մարդկութեան բազմութեան մէջ Աստծու եկեղեցի է հանդիսանում մի Նոյ՝ իր ընտանիքով, մի Աբրահամ՝ իր զաւակներով, մի Եղիա 7.000 աստուածապաշտներով (Գ. Թագ., ԺԹ 18), և երկնաւոր ուրախութիւնն անհամեմատ է մէկ մեղաւորի դարձով (Ղուկ., ԺԵ 7, 10, Հռ., ԺԱ 2-8): Եւ Քրիստոս իւրաքանչիւր հաւատացեալի, հետևաբար և իւրաքանչիւր եկեղեցու ճշմարտութիւնը ճանաչելու համար յայտորոշող նշան է համարելու նրա պտուղը կամ արդիւնքը (Մատթ., Է 15), իսկ այդ արդիւնքն ակներևօրէն որոշւում է այն յարաբերութեամբ, որ պէտք է ունենայ ամեն եկեղեցի Քրիստոսի նկատմամբ և այն կենսական ընթացքով, որ ստացել է իւրաքանչիւր ճշմարիտ եկեղեցի հէնց Քրիստոսից: Այս հիմնական յարաբերութիւնից և ընթացքից բխում են ճշմարիտ եկեղեցու չորս էական նշանները, այն է՝ միութիւն, սրբութիւն, Ընդհանրականութիւն և առաքելականութիւն, որոնք և դաւանում ենք հաւատամքի մէջ:

1- Եկեղեցին Մի է, որովհետև մի է նրա միացուցիչ գլուխն ու Տէրը, մի է նրա առաջնորդող Ս. Հոգին և մի է մեր ս. խորհուրդների փրկագործութիւնը, մեր կոչման յոյսն ու մեր հաւատքը, ըստ բարոյական ու դաւանական վարդապետութեան[2], որովհետև նաև մենք, իբրև Քրիստոսի մի մարմինը, մի ենք

[1] «Առանց սուրբ և ուղղափառ հաւատքի ազգերի բազմութիւնը ընդունելի չէ Աստծու համար: Որովհետև ինչպէս գլուխն է խաւար առանց լոյսի, այնպէս էլ ազգն է պիղծ առանց սուրբ հաւատքի: Արդ, աւելի լաւ է մէկ ոչխար [լինի] Աստծու փարախում, քան հազար գայլ, աւելի լաւ է մէկ գառ այգում, քան՝ հազար աղուէս: Դարձեալ աւելի լաւ է զոյգ աղաւնի նուիրել Աստծու, քան հազար ագռաւ: Աւելի լաւ է դիտանոցում մի սրատես մարդ, քան հազար կոյր: Աւելի լաւ է ճշմարտութեան համար մէկ վկայ, քան՝ հազար բիւր թշնամի: Աստծու համար աւելի լաւ է խոստովանող մէկ մարդ, քան՝ հազար բիւր ուրացող: Եւ լաւ է պատարագող մի ճշմարիտ քահանայ, քան՝ հազար բիւր շնացող» (Պօղ. Տար. անդ. հմմտ. Զգօն 293-295):

[2] Յովհ., Ժ 16, ԺԷ 11, Կող., Ա 18, Բ 10-19, Եփես., Դ 3-16, Ա Կոր., Ա 10, Գաղ., Ա 8, Տիտ., Գ 10, Հռ., ԺԶ 17, Բ Կոր., Զ 14, Բ Յովհ., 10, Մատթ., ԺԸ 17: Հարց. 540:

կամ մի մարդկութիւն ենք կազմում: Այս միութեան որոշումից արդէն հետևում է, որ եկեղեցու միութիւնը հոգևոր է, սակայն հոգևոր միութիւնը կարող է միմիայն բազմատեսակութեան մէջ յայտնուել[1], ըստ որում և ինչպէս Ս. Հոգին բազմատեսակ է շնորհաբաշխում և Քրիստոս իր փրկութիւնը ոչ թէ մէկ, այլ՝ շատ առաքեալներով է տարածում, այնպէս էլ իւրաքանչիւր մարդ և իւրաքանչիւր ազգ առանձին հոգևոր աշխարհ ներկայացնելով իր մէջ՝ առանձին կերպով է հաղորդակից լինում Աստծու հետ և փրկութիւնը իրացնում: Աստծու և մարդու այս փոխադարձ յարաբերութեան առանձնայատկութիւնից ելնելով կազմակերպւում են և առանձին եկեղեցիներ, ըստ տեղական հանգամանքների, ամեն մի ազգի հոգեբուխ արարողութիւնների, կենսակից ծէսերի, բարեյարմար կարգերի ու կանոնների և բնայատուկ լեզուի: Ինչպէս որ իւրաքանչիւր անհատ մանկութիւնից ի վեր կրթելով իր եկեղեցու ծոցում՝ ընթանում է դէպի քրիստոնէական կատարելութիւն առանց կորցնելու իր անհատականութիւնը, այնպէս էլ իւրաքանչիւր ազգ փրկւում է իր եկեղեցում ազատապէս և իւրայատուկ կերպով, այսինքն՝ դարձեալ պինդ պահելով իր անհատականութիւնը: Վերացնել մի ազգի և իր բնակից եկեղեցու անհատականութիւնը միևնոյն է, թէ քրիստոնէութեան էութիւնը խորտակել և միանգամայն հակառակ ընթանալ Աստծու նախախնամութեան օրէնքի ազատութեան սկզբունքին: Իսկ այսպէս ոչ Աստուած է վարուել, ոչ Ինքը՝ Քրիստոս և ոչ իր առաքեալներն ու նրանց հետևողները, ըստ որում վերջիններս ամեն տեղ քարոզել են Աւետարանն ազգային լեզուով և հաստատել են եկեղեցիներն ըստ տեղական հանգամանքների՝ ազգային հիմքերի կազմակերպութեամբ ու հաստատմամբ: Ուստի և պատարագի, ժամասացութեան, իրաւունքի ու կարգերի մէջ առաքելական և ամենահին հայրերն իսկ պահպանել են ու ջատագովել ազգային ինքնուրոյնութիւնը: Ոչ Հին Ուխտի նախապատրաստութիւնը միանման եղաւ

[1] «Այստեղ աշտարակից ցրուած ազգերին մեր Տէրը հոգևոր համաձայնութեան բերեց, և Իր մարմինը շինեց իբրև հզօր հաստաբետ վէմերով մի աշտարակ՝ սուրբ Կաթողիկէ [եկեղեցին]՝ առաքելաւանդ հաւատքի անսասանելի հաստատութեան վրայ...»: «Այն աշտարակը մեր լեզուն բազում մասերի տրոհեց և չար միաբանութիւնը յաւիտենապէս բաժանեց իրարից, իսկ այս աշտարակը բաժանուածներին և անջատուածներին իրար միացրեց՝ բոլորին դարձնելով համաշունչ ու միախորհուրդ՝ Քրիստոսի նոյն յոյսին ակնկալու» (Յովհ. Իմաստասէր 136):

ազգերի մէջ, ոչ Քրիստոսի եկեղեցու քարոզութիւնը միանման կատարուեց զանազան երկրներում զանազան առաքեալների միջոցով, ոչ միևնոյն կազմակերպութիւնն ունեցան հաստատուած եկեղեցիները տարբեր ազգերի կեանքում և ոչ էլ միևնոյն առաջադիմութեամբ զարգացան, այլ աստուածային այդ ամեն մի գործն ու տնօրինութիւնը յատուկ սկիզբ և ընթացք բռնեց ամեն մի ազգի մէջ, ուստի և բնածին ու բնակից և ճշմարիտ առաջնորդող ու փրկարար դարձաւ իւրաքանչիւրի համար:

Աստուածային այս իմաստուն տնօրինութեան նպատակն էլ այն է, որ նախ իր ստեղծած իւրաքանչիւր ազգ ու նրա անդամ իր հոգուն ու կեանքին հաւատարիմ կերպով դիմի Աստծուն[1]: Երկրորդ՝ փրկութիւն ստանայ ամեն ոք բնականապէս և ոչ իբրև մի օտարոտի նորութիւն ու խորթութիւն. և երրորդ՝ որ իւրաքանչիւր ազգ իր աստուածաստեղծ առանձնայատկութեամբ աշխատի իրականացնել իր կոչումը կամ Աստծու արքայութիւնն այս աշխարհում, որովհետև իւրաքանչիւր[2] հանճար միմիայն իր լեզուի մէջ է կարող, իւրաքանչիւր հոգի էլ իր կրօնում. այդպէս և իւրաքանչիւր անհատ նախքան քրիստոնեայ դառնալը մի ազգի անդամ է ծնւում իր ազգային առանձնայատկութիւններով ու լեզուով: Հետևաբար քրիստոնէութիւնը, որքան մի ազգի կատարեալ սեփականութիւնը դարձած լինի և նրա բնութեանը ընտելացած, այնքան կը համապատասխանի իր կոչմանն ու Քրիստոսի մեծ հօտի առաջադիմութեան մի տարրը կը դառնայ հաստատապէս (Յովհ., Ժ 16): Բայց որովհետև իւրաքանչիւր եկեղեցի թէ՛ Քրիստոսի արքայութեան մի գործօն տարրն է և թէ՛ ներկայացնում է իր մէջ Քրիստոսի արքայութիւնն իրապէս, ուստի և ունի թէ՛ անհատականութիւն, որով տարբերւում է միւս եկեղեցիներից և թէ՛ նոյնն է բոլորի հետ: Իբրև տարր՝ իւրաքանչիւր եկեղեցի մէկ է այլոց հետ, ունենալով մի գլուխ ու Տէր Քրիստոսին, մի Ս. Հոգի, ս. խորհուրդների մի փրկագործութիւն, մի յոյս, մի հաւատք, այլև նոյն անդամը լինելով Քրիստոսի մարմնի: Իսկ իբրև Աստծու արքայութիւնն իր մէջ անհատականապէս ներկայացնող իւրաքանչիւր եկեղեցի պէտք է ունենայ

[1] Տե՛ս Ծննդ. ԺԱ Յովհ. Իմաստ., էջ 136:
[2] Մարկ., ԺԲ 17, Ա Պետր. Բ 17, Հռովմ. Թ 3, «Ես ինքս երդումով փափագում էի նզովուել Քրիստոսից իմ ազգակից եղբայրներից և համաձայն մարմնի ազգականներից», ասում է Պողոս առաքեալը:

անհատական միութիւն՝ իբրև պատկեր Քրիստոսի եկեղեցու, այսինքն՝ մի վարչութիւն, մի առաքելական փոխանորդ, քրիստոնէական հաւատքի մի առանձնայատուկ վարդապետութիւն, մի արարչական ու ծիսական ազգային կազմակերպութիւն, մի աստուածապաշտական լեզու և աստուածապաշտական կարգ և մի եկեղեցական կեանք: Այսինքն՝ քրիստոնէական եկեղեցին մարդկութեան մէջ մէկ է այն ամենով, ինչ որ ընդհանուր է մարդկութեան համար, իսկ ազգային եկեղեցին մէկ է այն ամենով, ինչ որ ընդհանուր է իր ազգութեանը՝ թէ՛ բնախօսական և թէ՛ պատմական առումով: Իսկ այս աստուածային տնօրինութեան նպատակն է, որ հոգեպէս պառակտուող անհատի մէջ միութիւն հաստատի և նա հաղորդ լինի Աստծու հետ, նրա ամբողջ ազգը միացած ներկայացնի Աստծու արքայութիւնը, որպէսզի նրա սիրոյ աղօթքը լսի ու փրկութիւնը նրա մէջ իրագործի իր միակից, յաղթական ու զինուորեալ անդամների միաձայն աղօթակցութեամբ, իսկ ամբողջ մարդկութիւնը հոգեպէս միացած կազմի Քրիստոսի յաւիտենական արքայութիւնը[1]: Իր ազգային միութեան մէջ անհատը կարող է բովանդակ ուժով սիրոյ ինքնազոհ արդիւնքներ տալ[2] և այդ սիրոյ շնորհիւ քրիստոնէական սիրով վառուել մարդկութեան հանդէպ: Հետևաբար ոչ մի վարչական ու տեսանելի միութիւն չի կարող ու չպէտք է լինի Քրիստոնէական Եկեղեցիների մէջ, այնպէս որ ընդհանուր քրիստոնէական հաւատքի, սիրոյ ու յուսոյ միութիւնից կամայականօրէն խորթացողը հերձւածող է[3], հիմնովին խուսափողը՝ աղանդաւոր, լիովին թողնողը՝ անհաւատ, իսկ մարմնաւոր, այսինքն՝ վարչական ու տեսանելի միութեան ձգտողը նեռ կամ դերաքրիստոս: Հռոմէական եկեղեցին այդ միութիւնը տեսնում է իր քահանայապետի միապետական իշխանութեան և եկեղեցիների ներքին և արտաքին միակերպութեան մէջ, իսկ բողոքականները ոչ մի միութիւն չեն ճանաչում, բացի այն, որ իւրաքանչիւրն ըստ իր կարողութեան բողոքող է

[1] Ս. Գրիգոր Տաթևացի, Հարց. 532-533:
[2] Գաղ., Զ 10, «Այսուհետև, քանի դեռ ժամանակը մեր ձեռքում է, բարիք գործենք բոլորին, մանաւանդ՝ հաւատակիցներին»:
[3] Մատթ., Է 15, Ա Տիմ., Դ 1, Բ Տիմ., Բ 17, Ա Յովհ., Բ 19, Բ Պետր., Բ 1. «Որդեակներ, վերջին ժամանակն է, և ինչպէս լսեցինք, թէ Նեռը գալու է և արդէն իսկ բազում նեռեր են եկել, որով կարող ենք իմանալ, թէ վերջին ժամանակն է: Մեր միջից ելան նրանք, բայց մեզանից չէին, որովհետև, եթէ մեզանից լինէին, ապա մեր մէջ կը մնային: Բայց մեզնից ելան, որպէսզի յայտնի լինէր, թէ նրանք ամենքը մեզնից չեն»:

Հռոմէական եկեղեցու դէմ: Այնտեղ մի անհատ տիրում է ամենքի վրայ, այստեղ անհատն է ինքնագլուխ տէր, այնտեղ ամբարտաւան աշխարհակալութիւն, այստեղ ամբարտաւան եսապաշտութիւն:

2- Եկեղեցին Սուրբ է, որովհետև ունի սուրբ գլուխ, որ է Քրիստոս, սուրբ կոչում ունի, այսինքն՝ նրա կոչումն է սրբել ու սրբագործել ամենքին, և սուրբ է իր ամբողջ վարդապետութեամբ, խորհուրդներով, բոլոր կարգերով, սրբանուէր հայրապետներով և անձնազոհ նահատակներով կամ մի խօսքով՝ եկեղեցին սուրբ է, որովհետև սրբւած է և սրբարար[1]: Եկեղեցին սուրբ է, քանի որ նա սուրբ է ոչ թէ իբրև աշխարհի, այլ որպէս Աստծու արքայութեան գործօն, Նա սուրբ է, որովհետև Նրա սկիզբն աշխարհից չէ, և «եթէ սկիզբը սուրբ է, ապա և նրանք, ովքեր նրանից են ստանում իրենց զարգացումը, սրբւում են»[2], որովհետև նրա նպատակն աշխարհը չէ, այլ՝ երկնաւոր փրկութիւնը, իսկ դէպի այդ նպատակը տանող ճանապարհը ևս Քրիստոս է, Աստծու Որդին: **Բայց սրբարարութեան գաղափարը պարունակում է իր մէջ Եկեղեցու պատերազմական գործունէութիւնը, այնպէս որ սրբութիւնն ու սրբարարութիւնը լրացուցիչ հիմքեր են Եկեղեցու սրբութեան մէջ:** Ըստ որում Եկեղեցին իր մէջ թէ՛ ընդհանրութիւն և թէ՛ անհատներ ունենալով՝ սրբութիւնը ոչ թէ մէկի կամ միւսի մէջ է ճանաչում, այլ թէ՛ ընդհանրութեան և թէ՛ անհատների մէջ[3]: Նա ձգտում է սուրբ անդամներ վերածնել, սակայն ոչ թէ բաւականանում է նրանց սրբութեան սկզբնառութեամբ, այլ շարունակ կրթում, դաստիարակում է նրանց քրիստոնէական ճշմարիտ կենցաղի համար. քաւում է նրանց մարդկային սխալները և դէպի յաղթութիւն առաջնորդում. **այս ընթացքի ապացոյցը և երաշխիքն են նրա քաջ նահատակները, հաւատքի ախոյանները, ճշմարիտ վկաները, յաղթող սրբերը կամ յաղթական եկեղեցին:** Նա ձգտում է եկեղեցին ամբողջապէս սուրբ պահել իր սուրբ անդամների աշխատութեամբ, որոնք յատկապէս սրբութեան են նւիրւած. այդ նւիրագործւած սուրբ կարգն է՝ ս. հայրապետներից սկսած մինչև

[1] Յովհ., Ժ 36, ԺԷ 17, Մատթ., Ե 48, Զ 9, Եփես., Ա 4, Ե 25-27, Ա Պետ., Ա 15:
[2] Ս. Եղիշէ, էջ 327:
[3] Ա Կոր., Ա 2, Բ Կոր., Ա 1, Եփ., Ա 4, Կող., Ա 2, Գործք., Թ 13, 41. «Օրհնեալ է մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը և Հայրը, որ մեզ օրհնեց ամեն տեսակ հոգևոր՝ Քրիստոսի մէջ եղած երկնաւոր օրհնութեամբ: Ինչպէս աշխարհը լինելուց առաջ մեզ նրանով ընտրեց՝ Նրա առջև սիրով լինել սուրբ և անարատ»:

սարկաւագներն ու դպիրները: Այդ սուրբ կարգի իւրաքանչիւր անդամն ըստ իր շնորհների ձգտում է պահպանել ընդհանրութեան և եկեղեցու բովանդակ դրութեան ու կեանքի սրբութիւնը[1]: Այս ձգտման ապացոյցն ու երաշխիքը այն քաջ հայրապետների և վարդապետների շարքն է, որ ոչ մի կերպ չի թոյլատրել, որ մի արատ կամ բիծ անգամ մտնի եկեղեցու մէջ և համակ նւիրումով, անձնուրացութեամբ մաքառել է ապականութեան ու խաւարի դէմ:

Ահա այս երկու ձգտումների փոխադարձութեամբ ապահովւած է եկեղեցու թէ՛ անհատների և թէ՛ ընդհանուրի սրբութիւնը, որտեղ մեղանչում է անհատը, այնտեղ հանդէս է գալիս ընդհանուրը, համայնը, եկեղեցին իր զինւորեալ ամբողջ գործունէութեամբ կռւում է խաւարի դէմ, իսկ որտեղ ընդհանուրն է դէպի խարխափում գնում, այնտեղ երևան է գալիս նոյն եկեղեցուց սքանչելի հայրապետների ու վարդապետների, հանճարների խաչավառ ու հաւատավառ առաջնորդութիւնը դէպի լոյս: Եւ այս սրբութեան ու սրբարարութեան ընթացքը հովանաւորւում է հզօր թագաւոր Քրիստոսով, շնորհատու Սուրբ Հոգով: **Ճշմարիտ եկեղեցին պէտք է անպատճառ ունենայ իր իւրաքանչիւր անդամի և ընդհանուրի այս փոխադարձ յարաբերութիւնը սրբութեան համար:** Մինչդեռ Հռոմէական եկեղեցին առաւելապէս ճանաչում է ամբողջութեան սրբութիւնն ու չքացնում է անհատի յարաբերութեան նշանակութիւնը, իսկ դրան հակառակ, բողոքականները գրեթէ աստուածային բարձրութեան են հասցնում անհատին և չքացնում եկեղեցու իբրև ամբողջութեան նշանակութիւնը. երկուսն էլ մեղանչում են եկեղեցու այս ճշմարիտ նշանի դէմ: Ուստի և Հռոմէական եկեղեցին իր էութիւնը գտնում է միմիայն իր վարչութեան մէջ և կուելով միմիայն արտաքին թշնամիների դէմ, դուրս է ձգում իր միջից իրեն տհաճ անհատներին և մինչև անգամ խարոյկի վրայ բարձրացնում (այստեղից են գալիս հաւատաքննութեան ահռելի ոճիրները). և այդ պատճառով այս եկեղեցին դարձել է աշխարհային պետութիւն կամ մի արքայութիւն, որ «այս աշխարհից է»: Ընդհակառակը՝ բողոքականները, ամեն ինչ ամփոփելով անհատի մէջ, հասնում են այնպիսի

[1] «Հեռու վանէք ձեզնից հին մարդուն իր նախկին կենցաղով. այն, որ ապականւած է խաբէապատիր ցանկութիւններով, նորոգւեցէք ձեր մտքով և հոգով ու հագէք նոր մարդը, որ ստեղծւած է ըստ Աստծու՝ արդարութեամբ և ճշմարիտ սրբութեամբ: Ուստի դէն գցէք ստախօսութիւնը. իւրաքանչիւրը թող իր ընկերոջն ասի ճշմարտութիւնը, որովհետև միմեանց անդամներ ենք» (Եփես., Դ 22-25, Հռ., Զ 19, Ա Թես., Դ 3, 7):

ծայրայեղութեան, որ անհատն ինքն իրեն կատարեալ է համարում և ոչ մի կարիք չի զգում եկեղեցու փրկարարութեանն ու սրբարարութեանը դիմելու, նրա աչքում ոչնչանում է սուրբ եկեղեցու բարձրութիւնն ու նշանակութիւնը, հակառակ առաքեալների քարոզածին, որ է. «Քրիստոս սիրեց եկեղեցին և Իր անձը մատնեց նրա համար, որ սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով, որպէսզի Նա Իր առաջ փառաւոր կերպով կանգնեցնի եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղութիւն կամ նման բաներից ոչինչ չունենայ, այլ լինի սուրբ և անարատ»[1] (Եփ., Ե 25-27):

3- Եկեղեցին Կաթողիկէ կամ Ընդհանրական է, քանի որ պէտք է քարոզւի ամբողջ աշխարհում ու բոլոր ազգերի մէջ և պէտք է մնայ, յարատևի մինչև աշխարհի վախճանը: Այս է հրամայում Քրիստոս. «Գնացէք ուրեմն, աշակերտեցէք բոլոր հեթանոսներին, նրանց մկրտեցէք Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցէք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի: Եւ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը»[2]: Այս արդէն բխում է եկեղեցու կոչումից, որովհետև ինչպէս որ մարդու կոչումն է ճշմարիտ քրիստոնեայ լինել և եկեղեցու կոչումն է՝ Աստծու արքայութեան իրականացումը լինել աշխարհում, այնպէս որ այդ կոչումից է բխում նրա ընդհանրականութիւնը,

[1] «Այն պատճառով է սուրբ կոչւում, որովհետև սուրբ Աստծու բնակարանն է և սուրբ հրեշտակների բնակատեղին և կատարեալ արդարների երկնքից երկիր երթևեկութեան իջնանավայրը: Որովհետև սրա մէջ վերանում է ամեն տեսակ խտրութիւն, երկիրն ընդունում է երկնայիններին և երկնայինները միանում են երկրայիններիս, նաև՝ ննջեցեալ սուրբերը՝ հաւատացեալ ողջերիս հետ եթէ հաւատանք, որ եկեղեցին Աստծու տունն ու բնակարանն է, ինչպէս և Ինքն իսկ ասաց» (Խոսրով Անձևացի Մեկն. Ժամ. 133): «Դարձեալ ասում եմ, որ սա երկնայինների վայրն է՝ իրենց Թագաւորով հանդերձ: Սա սուրբ ազգակիցների հետ մեր համախառնումն է: Սա բովանդակ երկրի բոլոր հաւատացեալների մայրն է..: Սա երկրից երկինք բարձրանալու սանդուղքն է» (134):

[2] Մատթ., ԻԸ 19, Մարկ., ԺԶ 14, Գործք., Ա 8: Ես., ԺԱ 10, ԽԵ 22, 23, ԽԹ 46, ԾԵ 1-5, ԿԶ 1-8, 66, Մաղ., Ա 11: «Կաթողիկէ եկեղեցում Ս. Հոգու շնորհքը վկաների և քահանաների մէջ բխեցնելու է մկրտութեան աղբիւր՝ լուանալու հոգիների աղտերը մարմինների հետ միասին», Տեսիլ Ս. Գր. Լուսաւորչի, Ագաթ. 437, հմմտ. Փարպ. 78, 87, թէ այս և թէ Ս. Սահակի տեսիլը յիշւում է նաև Շահապիւանի ս. ժողովի կանոններում[11*]: «Աստծու կենարար Որդու գալստեամբ բացւել է Նրա ողորմութեան շնորհի դուռը բոլոր նրանց, ովքեր սիրում են Նրան և պահում Նրա հրամանի խօսքը, որի մէջ ծագելով լուսաւորում է Նրա վարդապետութեան փառքի լոյսը». Ս. Սահակ (Փարպ. 88): «Կոչւում է նաև Կաթողիկէ*, ինչը հնազանդութեամբ մէկտեղւած բոլոր ազգերի համաժողովն է, որ սաղմնաւորւած և ծնւած է սրբարար հոգու [միջոցով] Աստծու ժառանգութեան համար՝ աւազանի լուսաւոր մկրտութեան մէջ» (Յովհ. Իմաստասէր 152):

այսինքն այն, որ նա պէտք է ճշմարտութիւնը քարոզի ամենուրեք, և Աստծու արքայութիւնը հաստատի աշխարհի վրայ: Այլև ընդհանրական է, որովհետև իւրաքանչիւր մարդ, առանց որևիցէ խտրութեան, կատարեալ հնարաւորութիւն և անհրաժեշտութիւն ունի նրա մէջ մտնելու ու նրա շնորհները ազատապէս վայելելու, մանաւանդ՝ վայելելու ոչ թէ ըստ իր արժանիքների, դիրքի ու պաշտօնի, այլ ըստ իր կենդանի հաւատքի: «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտուեցիք, Քրիստոսով զգեստաւորուեցիք. ուրեմն խտրութիւն չկայ ոչ հրեայի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ էգի, որովհետև դուք ամենքդ մէկ էք ի Քրիստոս Յիսուս»[1]:

Հետևաբար երկու եկեղեցիների ընդհանրականութիւնը հիմնւում է նրա միութեան վրայ, որովհետև ընդհանրական կարող է լինել միմիայն այն, որ մէկ է: Ընդհանրական է նա իր մէկ գլխով, մէկ Ս. Հոգով, ս. խորհուրդների մէկ փրկագործութեամբ, մէկ յոյսով ու սիրով, և իբրև Քրիստոսի մէկ մարմին, քանի որ հաւատացեալներն այդ ամենն են դաւանում ու ճանաչում որպէս իրենց միաւորող ու միաժամանակ իբրև քրիստոնէական եկեղեցու էութիւն: Սրանք ամբողջ քրիստոնեայ մարդկութեան մէջ ընդհանուր ու մէկ են, որովհետև իրենց մէջ մարդկային ոչ մի տարր չեն պարունակում, այլ՝ աստուածային պարգևներ: Մինչդեռ, եթէ մարդկային տարր ևս պարունակէին, անտարակոյս անհատականութեան կամ առանձնութեան ձև կը ստանային: Այս պարզ է, **որովհետև ինչ որ տեսանելի կամ զգալի է, այն մասնաւոր սեփականութիւն է այս կամ այն ազգի, իսկ ամբողջ մարդկութեան մէջ ընդհանուրը միմիայն հոգևոր է, և միմիայն աստուածային, հոգևորն ու հոգևորի խորհրդաւոր կարգադրութիւնը պարտաւորիչ ու միացուցիչ անհրաժեշտութիւն ունի և ընդհանրականութիւն: Ազգային տեսանելի կարգերն ու օրէնքները չեն կարող պարտաւորիչ ընդհանրականութիւն ունենալ ամբողջ մարդկութեան մէջ:**

Սակայն ազգային Եկեղեցին ևս իրապէս ներկայացնում է իր մէջ Քրիստոսի Եկեղեցին, Քրիստոսի արքայութիւնը, ուստի և ունի քրիստոնէական եկեղեցու ընդհանրականութեան յիշեալ տարրերից զատ նաև սեփական մասնաւոր տարրեր, որոնք իր համար միացուցիչ և ընդհանրական են. դրանք են՝

[1] Գաղ., Գ 28, Հռ., Գ 22, Ժ 12, Կոչ. ընծ. 366-369:

մի վարչութիւն, մի առաքելական փոխանորդ, քրիստոնէական հաւատքի մի առանձնայատուկ վարդապետութիւն, մի աստուածպաշտական կարգ ու լեզու և մի եկեղեցական կեանք[1], այսինքն՝ այն ամենն ինչ որ նրա մէջ հաստատապէս մէկ է և պէտք է լինի[2]: Ազգային Եկեղեցու այդ բաղկացուցիչ տարրերը ևս պէտք է անպատճառ ընդհանրական լինեն ամբողջ ազգի մէջ, որպէսզի եկեղեցին իր մասնաւոր ընդհանրականութեամբ կարողանայ կենդանի ընդհանրականութիւն ունենալ նաև ամենուրեք: Ինչ որ ընդհանրականութեան տարր է մի համայնքի մէջ միայն, այն չի կարող ընդհանրական լինել նաև ամբողջ գաւառում և ապա՝ ամբողջ ազգի մէջ, ինչպէս օրինակ տեղական եկեղեցու շինութեան տօնը. հետևաբար եկեղեցու ընդհանրականութիւնը մի համայնքի մէջ աւելի տարրեր ունի, քան մի գաւառում, մի գաւառում աւելի, քան ամբողջ ազգի մէջ և մի ազգի մէջ աւելի, քան դաւանակիցների, ապա՝ ամբողջ մարդկութեան մէջ: Որքան ընդարձակւում է Եկեղեցու ընդհանրականութեան շրջանը, այնքան հոգևոր է դառնում նրա պարունակութիւնը և աւելի դիւրին է տարածւում Աւետարանի լոյսը մարդկանց մէջ. ուստի և քրիստոնէութիւնն է ճշմարիտ մարդկային կրօնը, որ ամենքինն է և միանգամայն կարող է իւրաքանչիւր ազգի յատուկ սեփականութիւնը դառնալ: Ընդանրական լինելով մարդկութեան մէջ իր աստուածային բովանդակութեամբ, նա փրկարար է բոլորի համար հաւասարապէս, բայց և ընդհանական լինելով յատկապէս մի ազգի մէջ. նա փրկարար է իր աստուածային բովանդակութեան իսկական կազմակերպութեամբ նոյն այդ ազգի ու նրա բոլոր հարստութիւնների համար: Ըստ որում և այն Եկեղեցին մի ժողովրդի ճշմարիտ փրկարանն է, որ իր աստուածային էութեամբ մարդկային ընդհանրականութիւնը պահելով հանդերձ, ունի նաև ազգային ընդհանրականութիւն հաստատապէս և առանց հակասութեան: Այդպիսի

[1] «Սատանայական հրապուրանքի պատճառով ցրուածներիս միախուռն յորդորմամբ անյապաղ քո գաւթում հաւաքելով դարձրեցիր մէկ հօտ՝ ընտրուած և ազատուած, միասիրտ, միալեզու, հաւատարիմ՝ երկնաւոր հովուապետին և տիեզերքի Փրկչին՝ Յիսուսին». Ան. Նարեկ. Ճառաքաղ, 330, տե՛ս նաև Ս. Գր. Նարեկ. Բան ՀԵ:

[2] Եկեղեցին վերին Սիոնի դուստրն է, և անմահ Արքայի քաղաքը և երկնանման կառուցեց երկրի վրայ, որպէսզի անվրէպ կերպով երկրայինների և երկրի չորս ծագերի օրինակը լինի. խորանով՝ երկնքի երկինքը, ուր հանգստանում է Աստուածութիւնը, և տաճարով՝ իր մաքրութեամբ ու իր ձևի յարմարութեամբ՝ հրեշտակական կայանները: Իսկ գաւիթը երկրի շրջակայ բնութեան կազմուածքն ունի» Եսայի Նչեցի[12*]:

եկեղեցու կոչումն է ընդհանրացնել Աւետարանի ճշմարտութիւնն ու լոյսը ոչ միայն հեթանոսների, այլև իր հաւատացեալ անդամներից իւրաքանչիւրի մէջ, որովհետև քրիստոնեայ որդիները ևս ենթարկւած են ժամանակի և աշխարհային կեանքի խանգարիչ ու եղծիչ ներգործութեանը: Առանց լոյսի մշտաշող ճառագայթների հաւատացեալը չի կարող նոր ի նորոյ խանդավառւել, ինքնագործունէութիւն ունենալ և ինքն էլ ներգործական դիրք բռնել Եկեղեցու մէջ: Եկեղեցու գործն ու պարտքն այստեղ մեծ է և մշտական և նա պատասխանատու է ամեն մի հաւատացեալի համար, որ անուշադրութեան մէջ թմրում է:

Եկեղեցու ընդհանրականութեան դէմ մեղանչում է Հռոմէական եկեղեցին, որովհետև ձգտում է ընդհանրացնել մարդկութեան մէջ նաև իր ազգային ընդհանրականութիւնը, այն է՝ վարչութիւն, աստուածապաշտական կարգեր, իրաւական կանոններ, իր յատուկ կեանքը, մի վարդապետութիւն, մինչև անգամ մի լեզու և այլն: Այս աշխարհային ձգտմամբ նա փոխում է քրիստոնէութեան էութիւնն ու քրիստոնէական եկեղեցին դարձնում է առաւելապէս ազգային շահերի և դրոշմի առանձնարան, որով բռնանում է աստուածային լոյսի ներքոյ ստրկութեան շղթայով կապել Աստծու որդիներին[1]: Ընդհակառակը բողոքական եկեղեցին էլ մաքառելով նրա դէմ, վերացական է դարձնում քրիստոնէութեան ճշմարիտ ընդհանրականութիւնը: Ըստ որում և դրանց մէջ եկեղեցին խորթանալով ժողովրդի միաբանական ոգուց՝ չի դառնում իսկական եկեղեցի, ամբողջ ժողովրդին իր մէջ պարփակող կենդանի միաբանութիւն, այլ դառնում է լոկ մի ժողովարան և կամ լոկ մի մեռեալ հաստատութիւն:

4- Եկեղեցին Առաքելական է, որովհետև հաստատւած է Քրիստոսի առաքեալների հիմնադրութեամբ ու նրանց աւանդութեան և աւետարանական վարդապետութեան վրայ: Եկեղեցու առաքելականութիւնը հիմք է կազմում ընդհանրականութեան, որովհետև միացնում է այն բոլոր տարբերութիւնները, որոնք բնականապէս հետևում են եկեղեցու ընդհանրականութիւնից ըստ նախընթաց բացատրութեան: Ուստի և առաքեալների հիմնադրութիւնը, աւանդութիւնն ու վարդապետութիւնը կազմում են քրիստոնէական եկեղեցիների այն էութիւնը, որ ամենքի մէջ պէտք է մէկ լինի: Առաքելական հիմնադրութիւնն

[1] Հմմտ. Միշոյ. Հռովմ. եկ. ոչ ևս է կաթ. եկ: Թարգմ. Գաբրիէլ արքեպ. Այւազեանց, Ս. Էջմիածին 1878:

անհրաժեշտ է իւրաքանչիւր ազգային եկեղեցու համար, քանի որ առաքեալների վրայ իջաւ Ս. Հոգին ու շնորհագործեց նրանց թէ՛ քարոզութեան ու թէ՛ եկեղեցիների հաստատութեան համար[1], որպէսզի նրանք աւանդէին այն ամենն շնորհները, որոնք կարևոր էին եկեղեցու զարգացման ու ծաւալման համար մինչև աշխարհի կատարածը: Նրանք հիմքեր էին մէկ վէմ Քրիստոսի վրայ և ամբողջ շինութեան պահողը, և ուռ էին մէկ որթ Քրիստոսի վրայ, որից սնունդ պէտք է տային ապագայ ծաղկման համար, այլև նրանք Ս. Հոգու շնորհների աւանդման միակ միջնորդներն էին քրիստոնէական եկեղեցիների համար: Պարզ է, որ իւրաքանչիւր նորահաստատ եկեղեցի ևս անպատճառ պէտք է ճիւղաւորուէր միմիայն մի առաքելական եկեղեցուց և ոչ թէ՝ ինքնուրոյն ծագմամբ, ինչն անհնարին է[2]: «Այս է եկեղեցու խորհուրդը. սրան սովորեցինք անուանել Կաթողիկէ, Առաքելական եկեղեցի, որովհետև բովանդակ տիեզերքում Քրիստոսին հաւատացողները եկեղեցին առաքելական են յորջորջում նրանց յղուած տէրունական հրամանի պատճառով, թէ «Գնացէք բովանդակ երկրով մէկ» (Ս. Սահակ)[13*]:

Առաքեալները, հիմնադիր լինելով, պէտք է անշուշտ աւանդէին և այն ամենը, ինչ որ նպաստում է եկեղեցու աճմանը, դրանք են՝ նախ հիմնական օրէնքներ կամ կանոններ ապագայ կեանքի իրաւական զարգացման համար:

Երկրորդ՝ Աստուածպաշտութեան էական կարգերը, որոնցով հաւատացեալ մի ազգ կարողանար իր կեանքի բոլոր հանգամանքների և իր բնական բոլոր առանձնայատկութիւնների մէջ ուղիղ և նպատակայարմար հաղորդակցութիւն ունենալ Աստծու հետ առանց հեթանոսաբար շեղելու:

Երրորդ՝ Ձեռնադրութիւն, որով պէտք է աւանդէին Ս. Հոգու շնորհներն իրենց յաջորդներին և այլ եկեղեցական պաշտօնեաներին, որպէսզի թէ եկեղեցու պաշտօնն ու թէ առաքելական գործունէութիւնն անհատաբար շարունակի և միանգամ իջած Ս. Հոգին բնականաբար առաքելական յաջորդութեան շարքով շնորհաբաշխի ու իր շնորհները սփռի եկեղեցու մէջ:

[1] Գործք., Ա 4, Ղուկ., ԻԴ 49, Մատթ. Ժ:
[2] Մատթ., ԺԶ 19, ԺԸ 18, ԻԸ 18, Ժ 40, Ղուկ., Ժ 16, ԻԲ 19, ԻԴ 47-53, Յովհ., Ի 21-23, ԺԷ 18-19, Ա Տիմ., Ա 18, Գ 15, Դ 14, Ե 17-22, Բ Տիմ., Ա 6, Տիտ., Ա 5:

Չորրորդ՝ Առաքելական յաջորդութիւն, որ պէտք է պահէր առաքեալների աթոռներն անխախտ և անշարժ իբրև Ս. Հոգու շնորհների աղբիւր, քանի որ առաքեալները ոչ թէ ժամանակաւոր պաշտօնի ու դիրքի համար էին նշանակուած, այլ նրանց մեծ պաշտօնն ու մեծ դիրքը պահանջում են և համապատասխան յարատևութիւն:

Սակայն այս ամենի համար անհրաժեշտ եղաւ նաև մի չափ կամ կանոն տալ, որպէսզի արդէն իսկ առաքեալների ժամանակ պաշտօնեաների անձնական քմահաճութիւնը չխառնուէր նրանց աւանդածի և Ս. Հոգու շնորհների հետ: Այդ ևս առաքեալների վաղապետութիւնն է[1], որ աւանդուեց թղթերով և քրիստոնէական եկեղեցում ժողովուեց ու պահուեց մինչև մեր օրերը իբրև հաստատուն և ամփոփ ժողովածու այն վարդապետական հիմնական սկզբունքների ու հիմունքների, որոնց երբեք չպէտք է հակասեն առաքելական աւանդութիւնները ոչ մի տեղական և ազգային եկեղեցում:

Ուրեմն առաքելականութիւնն այն առաջին պայմանն է, որից բխում են իսկապէս նախընթաց երեք նշանները և **առանց առաքելականութեան չի կարող լինել ճշմարիտ եկեղեցի**[2]: Այս պատճառով Պօղոս առաքեալն էլ ասում է. «Եթէ նոյնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ աւետարանի ձեզ աւելին, քան այն, որ մենք աւետարանեցինք ձեզ, նզովեալ լինի: Ինչպէս աւելի առաջ էլ ասացինք, հիմա էլ դարձեալ ասում եմ. «Եթէ մէկն աւետարանի ձեզ աւելին, քան ինչ որ դուք ընդունեցիք, նզովեալ լինի» (Գաղ., Ա 9): Ճշմարիտ եկեղեցու վարդապետութիւնը, կարգերի ու կանոնների բովանդակութիւնը, պաշտօնեաների դասն ու յաջորդականութիւնը և մինչև անգամ արարողութեան ու ծէսերի էութիւնը պէտք է անպատճառ առաքեալներից աւանդուածը լինեն և առաքեալների աւանդածին չհակասեն: Եկեղեցիներն իրենց բոլոր էութեամբ պէտք է «շինուած լինեն առաքեալների ու մարգարէների հիմքի վրայ»[3], այլև

[1] «Սա Առաքելական ենք անուանում, համաձայն կանոնուած հաւատքի, որովհետև ոչ թէ հասարակ ձևով է այս հաւաքոյթը կոչւում Կաթողիկէ եկեղեցի, այլ՝ ովքեր առաքեալների հետ միասին կենսաբաշխ Հոգու հրաւէրքով հաւաքուած են հոգևոր պաշտամունքը սպասաւորելու համար, և որդեգրուած են երկնային քաղաքացիութեան անդրանիկների մէջ» (Յովհ. Իմաստասէր)[14*]:
[2] Ա Յովհ., Բ 3-19, Եբր., Ժ 24, Գաղ., Ա 6, Բ Պետր., Բ 1-22, Բ Տիմ., Բ 18, Յայտ., ԻԲ 19:
[3] Եփես., Բ 20, Յայտ., ԻԱ 14, Տես և Գործք., Զ 2, Ը 14, Թ 27, ԺԵ 6, 22, 28, Գաղ., Բ, Ա 1, Հռ., Ա 1, Բ Կոր., Ե 20, Գ 4, ԺԳ 3, Ա Կոր., Դ 1, Բ 10:

հաւատքի նոյն հիմքի վրայ պէտք է հաստատի իւրաքանչիւր հաւատացեալ իր կեանքն ըստ առաքելի՝ «ճգնեցիք հաւատքի համար, որ մի անգամ աւանդուեց սրբերի կողմից»[1]:

Քրիստոնէական ճշմարիտ Առաքելական եկեղեցին հրապարակապէս իր առաքելականութիւնը խոստովանում է այն հաւատամքով[2], **որ կազմուեց ըստ առաքելական աւանդութեան և համաձայն Ս. Գրոց. Նիկիոյ ս. ժողովում, և որ ընդունուեց բոլոր քրիստոնէական եկեղեցիներում** և առաքեալների ժամանակ ու նրանց բաւական մօտիկ յաջորդների մէջ: Դաւանելով յարաժամ այդ հաւատամքը, իւրաքանչիւր քրիստոնեայ եկեղեցի երդումով խոստանում է հաւատարիմ մնալ նրա բովանդակութեանը՝ իր ազգային բոլոր հանգամանքներով և առանձնայատկութեամբ: Հռոմէական եկեղեցին, շեղուելով այդ առաքելական խոստովանութիւնից, բաժանում է[3], իսկ առաքելական աւանդութիւնը մերժող բողոքականները կտրում են առաքելական յաջորդութիւնից և հետևաբար իբրև աղանդ են ճանաչում քրիստոնեայ աշխարհում կամ իբրև քրիսոնէական եկեղեցուց պոկուած ու փշրուած մի կտոր: Ուստի և մինչդեռ մի կողմից քրիստոնէական եկեղեցիները մաքառում են Հռոմ. եկեղեցու հերձուածողական ընթացքի դէմ ու նրա միջից իսկ «Հին կաթոլիկ» կոչուած եկեղեցին աշխատում է թօթափել Հռոմի գրեթէ հեթանոսական լուծը, միւս կողմից բողոքական աշխարհում շատերը, ինչպէս եպիսկոպոսական եկեղեցին, ձգտում են վերստին դառնալ առաքելականութեանը: Եւ եթէ հին եկեղեցիներից ոմանք վիճայարոյց խնդիրների կամ մոլորութիւնների կողմը զբաղեցնելով և քաղաքական հանգամանքներին ենթարկելով են շեղուել քրիստոնէական եկեղեցու ճշմարիտ առաքելականութիւնից, բողոքականներն անհատին աստուածացնելով և բացասական ընթացքի աւերիչ ճանապարհն

[1] Յուդա 3, Գործք., Բ 42, Բ Թես., Բ 15, Հռ., Զ 17, ԺԶ 17, ԺԵ 18, Բ Կոր., ԺԱ 4, Գաղ., Ա 11, Փիլ., Ա 27, Կող., Բ 7, Ա Թես., Բ 13 «Եւ որովհետև բոլոր դաշտերը երկնագոյն երևացին, այսինքն՝ այս երկիրը երկնքի նման է լինելու՝ հրեշտակների և մարդկանց խառնուրդ» (Տեսիլ Ս. Գրիգոր Լուսաւորչի, Ագաթ. 437):

[2] Տես վերը:

[3] Կրօնական յեղափոխութեան ժամանակ Մարտին Լութէրն ու իւրայինները դեռևս աշխատում էին հաւատարիմ մնալ առաքելականութեանը (Հարնակ. Պատմ. դաւ. Գ 724-734): Սակայն երբ յետոյ յանդիմանեցին իբրև առաքելական յաջորդութիւնից կտրուածներ, սկսեցին ճարահատած մերժել նաև դրա նշանակութիւնը:

ընդլայնելով, բեկորել են և շուրջ 300 աղանդների բաժանուել, ոմանք մի տասնեակ դրամատէրերի միաբանութեամբ: Այլև եթէ հին եկեղեցիներից մէկն ու միւսը նորահնար վարդապետութեամբ խորթացել է քրիստոնէական միութիւնից, առաքելական ճշմարտութիւնը մնացել է գոնէ որևիցէ վիճախոյս և հեռաբնակ եկեղեցում. մինչդեռ բողոքական եկեղեցու հիմքն այլևս դարձել է ոչ թէ հաւատքը, ոչ թէ առաքելական աստուածճանաչութիւնը, այլ միայն անհատական վարդապետութիւնը կամ ուսմունքը:

Հայաստանեայց ս. Եկեղեցին արեան գնով պինդ պահելով իր առաքելականութիւնը, հետևաբար և իր ընդհանրականութիւնը, սրբութիւնն ու միութիւնը, ոչ մի կերպ չի ձգտում մազաչափ իսկ շեղուելու վերոյիշեալ սկզբունքներից: Նրա վարդապետութեան իսկութիւնը տեսանք մինչև այստեղ, կը տեսնենք և յետոյ, նրա իշխանութեան ու ձեռնադրութեան ճշմարտութիւնը կուսումնասիրենք հետզհետէ, իսկ աստուածպաշտութեան և կանոնական սկզբունքի մանրամասնութիւնները պաշտօնաբանութեան (կարգ աստուածպաշտութեան) և եկեղեցական իրաւաբանութեան մէջ պէտք է ընդարձակօրէն ճանաչեն: Եւ որպէսզի նրա առաջ մշտապէս առաջնորդող նշանաբան լինեն այդ չորս նշանները, Հայաստ. ս. Եկեղեցին ոչ միայն Հաւատամքում է դաւանում, այլև աղօթում է առ Աստուած. «Աղաչենք ամենակալ Աստծուն յանուն մէկ, սուրբ, կաթողիկէ և առաքելական եկեղեցու»:

Ըստ այսմ նրա բովանդակ կեանքը, աստուածպաշտութիւնն ու վարդապետութիւնը հաստատում է առաքելական մի սուրբ հիմունքի վրայ, և այդպէս մի բնից ճիւղաւորում է դէպի ամեն կողմ և ընդհանրանում: **Այն, ինչ որ հակասում է առաքելական վարդապետութեանը, առաքելական սկզբունքին և առաքելական կարգերին՝ այն բացէիբաց մերժում է Հայաստանեայց ս. Եկեղեցու գաւթից.** լինի այդ դաւանանք թէ բարոյականք, կանոն թէ կարգ, ոգի թէ կարգաւորութիւն չի կարող Հայաստ. ս. Եկեղեցում տեղի ունենալ ու յարատևել: Եւ այդ իսկ պատճառով ամեն ժամանակ աղաչում ենք ամենակալ Աստծուց «յանուն մէկ, սուրբ, կաթողիկէ և առաքելական եկեղեցու», որպէսզի

անխախտ պահի իր հզօր հովանաւորութեամբ իր ճշմարիտ եկեղեցու իրականութիւնը և մեզ ևս յարաժամ յիշեցնի մեր պարտաւորութիւններն՝ առ այդ[1]:

[1] «Կաթողիկէ եկեղեցու պատիւը մեծ և բարձր է, քան բոլոր սրբերինը. կամարները, որոնք իրար են կապում սիւները Կաթողիկէ Եկեղեցու միաբանութեան հաւասարութիւնն են [ցոյց տալիս]: Իսկ Խորանը օրինակն է վերին քաղաքի՝ երկնքի արքայութեան միաբան ժողովարանի: Եւ որովհետև քեզ երևացին վկաները, իմացիր, որ «մահը ժամանակաւոր է», ասում է, և նրանց կենդանութիւնը՝ յաւիտենական՝ Աստուածորդու փառքով փառաւորուած: Այս պատճառով էլ նրա Խաչի օրինակը դրոշմած է նրանց անձերում»[15*]:

ԼԱ

ՃՇՄԱՐԻՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա- Եկեղեցու չորս նշաններով կարելի է լիովին ճանաչել ոչ միայն նրա ճշմարտութիւնը, այլև նրա էութիւնն ու յատկութիւնները, որոնց վրայ ըստ երևոյթին հարկ չկայ առանձնապէս խօսելու: Սակայն որպէսզի ճշմարիտ Եկեղեցու էութիւնը կատարելապէս պատկերանայ հաւատացողի հոգու մէջ, անհրաժեշտ է գէթ մի ակնարկ ձգել նաև նրա յատկութիւնների վրայ:

1- Եկեղեցին մշտական յարաբերութեան մէջ լինելով Քրիստոսի ու Ս. Հոգու հետ, այլև իր էութեամբ պայմանաւորուած լինելով նրանց հետ, ոչ միայն անտեսանելի է, այլև միանգամայն՝ տեսանելի: Եթէ եկեղեցին միայն տեսանելի լինէր, չէինք ասի «հաւատում ենք միմիայն Ընդհանրական և Առաքելական ս. Եկեղեցուն», որովհետև տեսանելին այլևս հաւատալի չէ: Բայց որովհետև եկեղեցին նաև անտեսանելի է, ուստի և նիւթ է դառնում հաւատամքի մէջ խոստովանելու: Եկեղեցին անտեսանելի է, որովհետև ժամանակով ու տարածութեամբ, դիրքով ու կարգով իրարից բաժանուած հաւատացեալները առաքելական հաղորդակցութեան մէջ մտնելով Քրիստոսի հետ, դառնում են նրա մարմինը. անտեսանելի է, որովհետև նրա անդրանիկները ևս մեզ անտեսանելի լինելով հանդերձ՝ մի անբաժանելի միութիւն են կազմում մեզ հետ[1], անտեսանելի է, որովհետև նրա Գլուխը՝ Քրիստոս այժմ տեսանելի է և եկեղեցու մէջ գործող աստուածային զօրութիւնն ու շնորհն անտեսանելի է: Սակայն եկեղեցին միաժամանակ և տեսանելի է, որովհետև տեսանելի է իր հաւատացեալներով, իր առաքելական յաջորդականութեամբ, գործերով ու կարգերով. տեսանելի է, որովհետև Աստծու արքայութեան տեսանելի հաստատութիւնն է այս աշխարհում, տեսանելի է, քանի որ Աստծու զօրութիւնն ու շնորհը տեսանելի կարգով բաշխւում է հաւատացեալներին: Եւ այս բնական է, որովհետև մարդ ինքը, որ փրկւում է եկեղեցու մէջ, թէ՛ տեսանելի է և թէ՛ անտեսանելի. տեսանելի է իր

[1] «Այս պատճառով Փրկիչը առաքեալներին ասաց՝ ուրախանալ. «Ուրախացէք, որովհետև ձեր անունները գրուած են կենաց գրքում և անապականութեան մէջ», որի սկիզբը դրուած է երկրում. որ անցնելու է, և աւարտը երկնքի բարձրութեան կատարին է» Ս. Սահակ[16*]:

մարմնաւոր գոյութեամբ, բայց անտեսանելի է իր հոգևոր կեանքով և հաւատքի նախաձեռնութեամբ: Հետևաբար Եկեղեցին թէ՛ տեսանելի է և թէ՛ անտեսանելի. ոչ թէ ունի անտեսանելի մաս և տեսանելի ուրիշ մաս, այլ այն, որ տեսանելի է, միանգամայն և անտեսանելի է. տեսանելի է իր առանձնական և արտաքին դրութեամբ, իսկ անտեսանելի է իր ընդհանուր ու ներքին յատկութեամբ:

2- Եկեղեցին անսխալական է: Քանի որ Եկեղեցու ղեկավարութիւնը Ս. Հոգով է և նրա կեանքը Ս. Հոգու շնորհաբաշխութեամբ, բնականաբար նա չի կարող սխալուել հաւատքի վերաբերեալ բոլոր բարոյական ու դաւանական խնդիրների որոշման մէջ: Եւ **եթէ եկեղեցին անսխալական չլինէր, չէր կարող անխախտ յարատևել ոչ նրա միութիւնը, ոչ սրբութիւնը, ոչ ընդհանրականութիւնը և ոչ առաքելականութիւնը:** Հետևաբար և եթէ եկեղեցին շեղուի այդ չորս նշաններից, հարկաւ չի կարող պահել և իր անսխալականութիւնը, որ պայմանաւորուած է առաքեալների յաջորդութեամբ ու հաստատութեամբ միայն: Սակայն հարց է առաջ գալիս, թէ քանի որ աստուածային ճշմարտութիւնները մի անգամ ընդմիշտ շնորհուած են եկեղեցուն, այլևս ի՞նչ կարիք պէտք է լինի անսխալականութեան. մի՞թէ կարող են նոր վճիռներ ու փոփոխութիւններ առաջ գալ, որոնց համար կարևոր լինի և անսխալականութիւնը: Այս հարցն ինքնըստինքեան կը լուծուի, եթէ ի նկատի ունենանք հետևեալը:

Եկեղեցու մասին խօսելիս՝ պարզեցինք, որ թէև առաքեալների քարոզածն ու աւանդածը մէկ է և անփոփոխ իր բոլոր հիմքերով ու սկզբունքներով, այսուհանդերձ իւրաքանչիւր առաքեալի հիմնադրած եկեղեցին, **իր տեղում իր ազգին փրկարար լինելու համար ազգային է դառնում իր բոլոր դրսևորումներով:** Այլապէս նա չի կարող կապել ազգը Աստծուն և բնականապէս հաղորդ դարձնել փրկութեանը: Սակայն իւրաքանչիւր եկեղեցի ունի իր ազգի հետ իր պատմական կեանքը, և նա նոյնպէս զարգանում է ըստ մարդկային առաջադիմութեան, որին ձգտում էին նաև առաքեալներն՝ աշխատութեամբ ու նահատակութեամբ (Եփ., Դ 13, Կող., Ա 10, Բ Պետ., Գ 18): Բայց որովհետև աստուածային յայտնութիւնը և առաքելական կարգերը եկեղեցու մէջ անփոփոխելի և անքակտելի են, ուստի նրա այդ զարգացումը վերաբերում է ոչ թէ իրեն, այլ այն յարաբերութեանն ու ներգործութեանը, որով նա դաստիարակում ու կրթում է իր ժողովրդին: Այսպէս, տեսնում ենք, որ առաքեալների թղթերն իսկ

ըստ ժամանակի, ընթերցողների և գործերի ընթացքի տարբեր ձև ու ոճ ունէին, այսինքն՝ Աստծու յայտնութիւնն ու իրենց կարգերը տալիս են այն ձևով ու ոճով՝ առանց շեղուելու առաքելական սահմանից: Իսկ ընդհակառակը՝ **նոր ժամանակը դարձնել հին կարգերի վրայ, յետադիմել դէպի յետ և ոչ թէ հինը դարձնել նորի վրայ,** ըստ աստուածային յայտնութեան ուղիղ տրամադրութեան՝ այդ արդէն մի ներքին ծայրայեղութիւն է, որի մէջ է բողոքականութիւնը (ինչպէս խոստովանում են Դոռները և ուրիշներ):

Եկեղեցին չի փոփոխուում, այլ զարգանում է ներուժով և իր ժողովրդի մէջ արիւն ու մարմին դառնում ըստ ժամանակի: Նրա մէջ հերձուած է առաջանում, որպէսզի ընտիրները նորոգապէս երևան (Ա Կոր., ԺԱ 19): Նրա հաւատամքն անփոփոխ է, սակայն «Քրիստոնէական վարդապետութիւնը» զարգանում է գիտութեան առաջադիմութեան միջոցներով. նրա աստուածպաշտութիւնն անփոփոխ է, սակայն ըստ ձևի ու եղանակի կատարելագործուում է (ձայնագրութիւն և այլն). նրա ձեռնադրութիւնը միշտ նոյնն է, **սակայն պաշտօնեաները պէտք է ժամանակի գիտութիւնը ևս ունենան.** նրա կանոնադրութիւնն անքակտելի է, սակայն դաստիարակչական միջոցն ու եղանակը ձևակերպւում է ըստ պատարագների ու հանգամանքների կամ ըստ ժողովրդի պատրաստութեան ու հասկացողութեան[1]:

Արդ, ինչպէս պէտք է այս ամենի մէջ պահպանուեն եկեղեցու չորս նշանները. Անշուշտ նրա անսխալականութեամբ: Այդ խոստացաւ Քրիստոս, տալով իր եկեղեցուն ճշմարտութեան Ս. Հոգի[2]: Ուրեմն և Քրիստոսի շնորհիւ ու Ս. Հոգու մշտական ղեկավարութեամբ եկեղեցին անսխալ է իր առաքելական յաջորդականութեամբ: Եկեղեցու այդ վճիռը, որ տեղի է ունենում առաքելական յաջորդականութեան հիմունքով, նրանց վարդապետութեան և աւանդութեան հաւատարմութեամբ և յանուն Յիսուս Քրիստոսի ժողովական միաբանութեամբ, **անսխալ է հաստատապէս,** որովհետև Ս. Հոգին միմիայն այդպիսի միաբանութեան մէջ է աջակից[3]: Արդարև, անսխալական է միմիայն Աստուած.

---

[1] Եբր., Ե 11-13, Յովհ., ԺԶ 12, Մատթ., ԺԳ 10, Ա Պետր., Գ 15, Ա Կոր., Թ 19-23, Ս. Յովհ. Իմաստ. 81:

[2] Յովհ., ԺԴ 16, 26, ԺԵ 26, Ղուկ., ԻԴ 48, Մատթ., ԻԸ 19-20, ԺԶ 16, Գործք., Ա 8, Ա Տիմ., Գ 15, Յաճախ. Ի:

[3] Գործք., ԺԵ 28, Ա Կոր., Է 40, Բ Կոր., Բ 17, ԺԳ 3, ԺԲ 9:

անսխալական է միմիայն այդ գործն ու խօսքը, որ միաբան եկեղեցին կատարում է Աստծու առաջնորդութեամբ: Հետևաբար անսխալականութեան երաշխաւորութիւն է տալիս Քրիստոս Իր եկեղեցուն միմիայն այն գործերի մէջ, որոնք կը կատարուեն ժողովով (մինչև անգամ երկու կամ երեք հաւատացեալների միաբանութեամբ), բայց յանուն Իր, այսինքն՝ երբ գործեն Քրիստոսի անուան փառաւորութեան համար և Նրա ու Իր առաքեալների պատուիրանների ու կարգերի համաձայն («ով լսում է ձեզ՝ ինձ է լսում»), **առանց որևիցէ անձնական, կուսակցական և նիւթական և որևիցէ այլ շահախնդրութեան:**

3- Եկեղեցին միակ փրկարար է, այսինքն՝ «արտաքոյ Եկեղեցւոյ չիք փրկութիւն»: Ինչպէս որ փրկութեան ուխտը դրուեց Քրիստոսի աւետիքով, այնպէս էլ հաստատապէս յայտնուեց, որ միակ փրկութիւնն Աստծու այդ ուխտով է[1]: Նախապատրաստուող ժողովրդի մէջ միմիայն Սիոնն էր փրկարանը, որ կատարուեց Քրիստոսի մէջ և այդպիսով **Քրիստոսի իսկական Սիոնը դարձաւ հաւատացեալի միակ փրկարանը:** Ուստի և Քրիստոս սկզբից իսկ որոշեց, **որ միմիայն նա կը փրկուի, ով կը հաւատայ Իրեն, կը մկրտուի և ապա կը հաղորդուի կենարար մարմնին և արեանը**[2]: Փրկութեան այդ հիմնաքարը պահեցին և առաքեալներն իրենց բովանդակ քարոզութեան մէջ[3]: Աւետարանելով ժողովրդին, նրանք առանձնացնում էին հաւատացեալներին անհաւատներից և ապականութիւնից ու խաւարից տանում էին դէպի կեանք ու լոյս: Եւ որովհետև նրանք այս աշխարհից չէին և Քրիստոսինն էին, ուստի ամենքից ատւում էին, **արտաքսւում էին ժողովարանից և մինչև անգամ նրանց սպանելը մի աստուածահաճոյ գործ էր համարւում հրեաների մէջ**[4]: Սակայն դրանք մեծ մեղքի մէջ էին, որովհետև Աստծու Որդին Ինքն էր արդէն քարոզել նրանց մէջ ճշմարտութիւնը, բայց և այնպէս չէին հաւատում (Յովհ., ԺԵ 22): Ուստի և նոր

[1] Եր., ԺԹ 5, Սաղմ., ՃԲ 17, Բ Օր., ԺԷ 2-5, ԻԹ 21, Հես., Է 11, Ես., Կ 11:
[2] Մարկ., ԺԶ 16, Յովհ., Գ 18, 36, Ժ 7, 9, ԺԴ 6, 7, Ի 31:
[3] Գործք., Դ 11, ԺԶ 31, Հռոմ., Գ 23, Է 25, Ժ 9, Ա Տիմ., Բ 5, Եբր., Ժ 19, Ա Պետր., Ա 3-5, Գ 20, Յակ., Ա 21, 25:
[4] «Եթէ աշխարհը ձեզ ատում է, իմացէք, որ նախ ինձ է ատել: Եթէ այս աշխարհից լինէիք, աշխարհն արդէն, որպէս իրենը, ձեզ սիրած կը լինէր. բայց որովհետև այս աշխարհից չէք... դրա համար աշխարհը ձեզ ատում է»: «Իրենց ժողովարաններից դուրս պիտի հանեն ձեզ. մինչև իսկ ժամանակը կը գայ, երբ ով ձեզ սպանի, պիտի համարի, թէ Աստծուն պաշտամունք է մատուցում» (Յովհ., ԺԵ 19, ԺԶ 2):

հօտ է կազմւում ճշմարիտ ու քաջ հովւի ներքոյ, որի միջոցով իւրաքանչիւր հաւատացեալ փրկութիւն էր գտնում հաստատ ու ապահովապէս: Եւ մինչդեռ առաջ հրեաների մէջ էր սրբութիւնը և սուրբ պէտք է լինէին Իսրայէլը, քահանաները, զգեստներն ու անօթները, տեղն ու խորանը և ամբողջ ժողովուրդը[1]. այնպէս և այժմ սուրբ են միմիայն Քրիստոսի ընտրեալները[2], իբրև Քրիստոսով սրբւած և արդարացածներ[3], որոնք մկրտութեամբ թօթափում են հինը և զգենում նորը[4]: Այսպիսով Քրիստոսի եկեղեցին յայտնում է Աստծու յայտնութիւնը, հաւատացեալներին ընտրում է բազմութիւնից, մաքրում է մկրտութեամբ, շնորհք բաշխում և քրիստոնէական գործունէութեան համար նոր կեանքի մէջ դնում: Ուրեմն և եկեղեցին, Աստծու հաստատածը լինելով ու ճշմարտութիւն ու շնորհ պարգևելով, առաջնորդւում է Ս. Հոգով ու հաւատացեալների մէջ սրբութիւն ու փրկութիւն իրականացնում. հետևաբար եւ նա է միակ փրկարարը (Եփ., Ե 23-27): **Միմիայն նրանով կարելի է հաստատուել կենդանի և աստուածային վէմի վրայ, հոգևոր տաճար դառնալ, անարատ քահանայութիւն ունենալ, սուրբ ժողովուրդ լինել ու սեփական ազգ, նուիրուել Աստծուն ու Նրան հաճելի լինել կեանքով, գործով և աստուածապաշտութեամբ**[5]:

[1] Ել., ԺԹ 6, Ղև., Ի 26, Ես., ԻԶ 12, Բ Օր., Է 6, ԺԴ 2, ԻԶ 18, Դան., Է 18:
[2] Ա Կոր., Ա 4-9, Փիլ., Ա 3, Հռովմ., Ը 29:
[3] Ա Կորնթ., Զ 11 «Բայց լուացուեցիք, մաքրուեցիք, արդարացուեցիք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով և մեր Աստծու Հոգով»:
[4] Հռ., Զ 3-5, Ը 12, Տիտ., Գ 4-6, Ա Կոր., ԺԵ 50, Գաղ., Ե 16, Կող., Ա 21-29, Եփես., Դ 22-25:
[5] Ա Պետ., Բ 2-10, «Որպէս նորածին երեխաներ, միշտ փափագող եղէք բանական և անխարդախ կաթին, որպէսզի նրա միջոցով աճէք փրկութեան համար, քանի որ արդէն ճաշակել էք, որ քաղցր է Տէրը: Մօտեցէք նրան՝ կենդանի Վէմին, որը, թէպէտ, մարդկանցից անարգւած, բայց Աստծու առաջ ընտրեալ և թանկագին է: Եւ դուք, իբրև կենդանի վէմեր, կառուցւում էք որպէս հոգևոր տաճար, որպէս անարատ քահանայութիւն, որպէսզի Յիսուս Քրիստոսի միջոցով մատուցէք հոգևոր պատարագներ, որոնք հաճելի լինեն Աստծուն, քանզի Գրքում էլ կայ, թէ «Ահաւասիկ ընտիր վէմ եմ դնում Սիոնի մէջ, թանկագին անկիւնաքար. և ով նրան հաւատայ, ամօթով չպիտի մնայ»: Ուրեմն, ձեզ՝ հաւատացեալներիդ համար, թանկագին վէմ, իսկ անհաւատներին՝ «Այն վէմը, որն անարգեցին շինողները, այն եղաւ անկիւնաքար», ինչպէս նաև՝ «Վէմ գլորման և վէմ գայթակղութեան», որով գայթակղւում են խօսքին անհնազանդ եղողները, և նրանք հէնց այդ բանի համար էլ սահմանւած էին: Բայց դուք ընտիր ցեղ էք, թագաւորութիւն, քահանայութիւն, սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդ, որպէսզի ձեր առաքինութիւնները նուիրէք նրան, ով խաւարից ձեզ կանչեց Իր սքանչելի լոյսին: Դուք, որ մի ժամանակ ժողովուրդ չէիք, բայց այժմ Աստծու ժողովուրդն էք, դուք, որ ողորմութիւն չէիք գտել, այժմ ողորմութիւն գտաք»:

Հետևաբար և եկեղեցին Աստծու միակ փրկարանն է աշխարհիս վրայ մարդկանց համար, որով ամեն ոք կարող է Աստծունը լինել և Աստծու բոլոր շնորհները վայելելով՝ հանդերձեալ փառքի արժանանալ:

Սակայն նախընթաց երկու գլուխներում տեսանք, որ Քրիստոսի եկեղեցին իրականանում է աշխարհում անհատականապէս և իրականացնում է Քրիստոսի փրկութիւնն իր ազգի մէջ, ըստ նրա դարաւոր ու բնական կեանքի, պատմութեան և զանազան հանգամանքների: Տեսանք, որ **քրիստոնէութիւնը միմիայն այդպէս իւրաքանչիւր մի ազգի սեփականութիւնը դառնալով է նրա կեանքի ու փրկութեան հիմնաքարը դառնում,** այլև իւրաքանչիւր եկեղեցի ներկայացնում է Քրիստոսի եկեղեցին և Աստծու արքայութիւնը, ուստի և **իւրաքանչիւր եկեղեցի կարող է իւրայիններին ասել, որ իրենից դուրս չկայ փրկութիւն**[1]: Իւրաքանչիւր եկեղեցի ձգտելով և աշխատելով պինդ պահել իր առաքելականութիւնը, սրբութիւնը, միութիւնը և ընդհանրականութիւնը, ըստ առաքեալների աւանդութեան և յաջորդութեան, մրցման մէջ է անշուշտ այլ եկեղեցիների հետ և հաւատքով ջատագովում է իր պատմական ճշմարտութիւնը, հակառակ այլոց ոտնահարութիւնների: Նա բարեզարդում է իր աստուածպաշտութիւնը, պայծառացնում իր հոգևոր կարգը բարոյապէս և ուսմամբ, բազմացնում իր ճշմարտութիւնը քարոզողների թիւն իր հօտի բոլոր խաւերի մէջ՝ ամէն աստիճանով ու վիճակով, զարգացնում է իր վարդապետութիւնն ըստ ամենայնի և մատչելի դարձնում ամենքի մտքին, քաղցրացնում է իր դաստիարակութիւնն ու ամենքին առաջնորդում դէպի մի նպատակ և տարածում է իր լոյսը, որքան ընդարձակութիւն ու սահման է գտնում իր շուրջը: Այս ամենով նա ցոյց է տալիս, որ ինքն Աստծու արքայութեան իրականացնող գործօնն է, կենսունակ է և իր հաւատացեալների միակ փրկագործողը անսայթաք ընթացքով: Միմիայն այսպէս կարող ենք ճանաչել մեր ճշմարիտ ճանապարհը, ընթացքը, նպատակն ու զարգացումը[2]:

---

[1] Հմմտ. Ս. Լուսաւորչի տեսիլը. «Իսկ նրա վրայ եղած լուսաւոր խաչը ժողովրդի մէջ հաստատուած մեծ քահանայապետութիւնն է, որ օրինակն է Քրիստոսի մարմնաւոր քահանայութեան՝ Աստուածորդու օծութեան: Եւ այն վայրը (Ս. Էջմիածին) լինելու է Աստծու տաճար և բոլոր հաւատացեալների խնդրուածքների աղօթատուն և քահանայութեան աթոռ». Ագաթ. 434:

[2] «Այնպէս որ այսուհետև չլինենք երեխաներ, որոնք տարուբերուում ու քշւում են վարդապետութեան բոլոր հողմերից, մարդկանց խաբեբայութեամբ, որոնք

Սխալ ու մոլար կը լինի, երբ մի եկեղեցի ոչ թէ այս մտքով, այլ ինքն իրեն բացարձակեցնելով լոկ իրեն է փրկարար ճանաչում և ուրանում այլոց եկեղեցիների փրկարարութիւնն իրենց ժողովուրդների համար: Այս արդէն բխում է եկեղեցու էութեան և մարդու հաւատքի մասին թիւր կարծիք ունենալուց, որի հետևանքն է և քրիստոնեայ Առաքելական եկեղեցիների փոխադարձ կրկնամկրտութիւնը, որ անհերելի է, ըստ Աւետարանի պատուէրի: **Թէ՛ Հռոմէական եկեղեցին ու թէ՛ բողոքականները**[1] **հաւասարապէս մեղանչում են, որ քարոզում են, թէ միմիայն իրենց վրդապետութիւնն է փրկարար:** Ըստ Լութերի և ըստ կալվինականների իշխանները պէտք է ուժով տարածէին իրենց քարոզութիւնը: Ճիշտ սրա նման Հռոմէական եկեղեցին հաւատաքննութեան արհաւիրքները հնարեց մարդորս միսիոնարների միջոցով, նիւթական խոստումներով և մարդկային հաճոյքները շահելու հնարներով դաւանակիցներ է որսում հակառակ Քրիստոսի Աւետարանի ճշմարիտ ազատութեան սկզբունքի և հոգու:

Հայաստ. Ս Եկեղեցին՝ իբրև հազար վեց հարիւր տարուայ պատմական կեանքի եզրակացութիւն ճանաչելով, որ իրենից դուրս չկայ փրկութիւն հայի համար, երբեք նեղմտութիւն չի ունեցել ժխտելու ուրիշ եկեղեցիների փրկարարութիւնն իրենց հաւատացեալների համար[17*], **թէև արիաբար կուել է նրանց մոլորութիւնների դէմ, երբ դրանք սպառնացել են մտնել իր սուրբ փարախը**[2]: Մինչև անգամ Հայաստ. ս. Եկեղեցու քաջամարտիկ ախոյաններից մէկը, խորտակելով իր հակառակորդին, աւելացնում է. «Եւ ինչ օգուտ ունի հաւատացեալներին բանակով կուի մէջ մտնել իրար դէմ և հակառակել հաւատքի խնդրում: Այլ մեզ այս էր օգուտ՝ հաւատալ և խոստովանել. փառաւորել և երկրպագել լռութեամբ և բովանդակ յօժարութեամբ»: «Եւ մենք մերը չգրեցինք

խորամանկութեամբ, խաբելով մոլորեցնում են, այլ ճշմարտութեամբ ապրելով սիրոյ մէջ, ամէն բան աճեցնենք նրա մէջ, որ գլուխն է՝ Քրիստոս: Նրանից է կախուած ամբողջ մարմինը՝ իրար ամրօրէն միացած զանազան յօդերով, այնպէս որ, երբ մարմնի իւրաքանչիւր մասը գործում է ինչպէս որ պէտք է, ամբողջ մարմինը աճում է և կառուցւում սիրոյ մէջ» (Եփես., Դ 14-16):

[1] Տե՛ս Լութերի երկերը Էրլանգեն 28, 144, Հարնակ. Պատմ. Դաւ., Գ 636, 737, 363, 368, 375, 391:

[2] Տե՛ս Խաչիկ կաթողիկոսի թուղթը, Ասողիկ 203, 204, 227, Ընդհան. 135, 180, 160, 183, հմմտ. Ա Կոր., Ը, Ժ, ԺԱ 19:

հակառակութեամբ, այլ [ցանկացանք] սիրայօժար կերպով ծանուցել եկեղեցու հաւատացեալներին և ցոյց տալ աստուածաշունչ գրքերի պատուիրանները: Որովհետև դուք որքան հայհոյանք սերմանեցիք՝ մենք առաւելագոյնս հաստատուեցինք ուղղափառութեան մէջ և օգնեցինք սուրբ եկեղեցու հաւատացեալներին՝ ի պայծառութիւն Հայաստան աշխարհիս սուրբ և ուղղափառ հաւատքի, որպէսզի ամրանալով հաստատուեն ս. Գրիգոր Լուսաւորչի անշարժ հաւատքի հիմքի վրայ, ինչպէս նաև՝ նրա զաւակների, որոնք արևելեան տան լուսատուներն են»[1]:

4- Քանի որ եկեղեցին միակ փրկարար հաստատութիւնն է, որով Քրիստոս տանում է մարդկանց դէպի իր փրկաւէտ փառաց կեանքը, պարզ է, որ նա յաւիտենական և աննուազելի է, այսինքն՝ պէտք է յարատևի ու փրկագործի մինչև աշխարհի վերջը: Այս ինքնըստնքեան հետևում է թէ՛ նրա չորս նշաններից ու թէ՛ նրա էութիւնից և անսխալականութիւնից, որովհետև դրանց վրայ է հաստատուած Եկեղեցու կոչումը, այն է՝ Աստծու արքայութիւնը լինել այստեղ և իր հաւատացեալներին արժանացնել Աստծու արքայութեան խաղաղական փառքի վայելմանը: Այս յաւիտենականութիւնը մարգարէացել է նախքան Քրիստոս[2], և նոյնը հաստատեց Քրիստոս իր աշակերտների մէջ (Մատթ., ԻԸ 16):

Առաքեալներին անհրաժեշտ էր լսել այս ապահովացումը հէնց Քրիստոսից, որովհետև իրենց գործունէութեան մէջ հանդիպելու էին մեծամեծ նեղութիւնների ու հակառակութիւնների, որոնցից նախազգուշացրեց նրանց դարձեալ Քրիստոս, բացատրելով և դրանց կարևորութիւնը ճշմարտութեան զօրացման համար[3]: Նրանք գիտէին այս և իրենց կողմից զգուշացնում էին հաւատացեալներին՝ յիշելով, որ հերձուածն անհրաժեշտ է ընտիրների պայծառութեան համար[4], որովհետև ընտիրները պէտք է աշխատեն նրանցից

[1] Պօղոս Տարօնեցի անդ. 79, 80:
[2] Ղուկ., Ա 30, «Մի վախեցիր, Մարիամ, որովհետև Աստծուց դու շնորհ գտար: Եւ ահա դու կը յղիանաս և կը ծնես մի Որդի և Նրա անունը Յիսուս կը դնես: Նա մեծ կը լինի և Բարձրեալի Որդի կը կոչի: Եւ Տէր Աստուած նրան կը տայ նրա հօր՝ Դաւթի աթոռը, և նա յաւիտեան կը թագաւորի Յակոբի տան վրայ, ու Նրա թագաւորութիւնը վախճան չի ունենայ» (Հմմտ. Բ Թագ., Է 13, 16, Եսայի, Թ 6, Դան. Է 14, Միք. Դ 7):
[3] Մատթ., Ժ 23, ԻԳ 34, Յովհ., ԺԵ 20, Մատթ. ԻԴ, Ղուկ., ԺԷ 1:
[4] Ա Կորնթ., ԺԱ 18, 19, Բ Տիմ., Գ 1-9, Բ Պետ., Բ 1. «Այս բանն իմացիր, որ վերջին օրերին չար ժամանակներ պիտի գան, երբ մարդիկ պիտի լինեն անձնասէր, փողասէր, հպարտ, ամբարտաւան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհակալ, անմաքուր,

հեռանալ, զգուշանալ, ճշմարտութեան համար գործել[1], և ճանաչել ճշմարտութեան ու սրբութեան բարձր արժանիքը: Հետևաբար թէ՛ հերձուածը, թէ՛ ուրացութիւնը, թէ՛ հակառակութիւնը եւ ամէն տեսակ թշնամութիւն ու հալածանք չեն կարող երբեք վնասել Քրիստոսի եկեղեցու զօրութեանն ու անարատութիւնը: Ներոններ, Յուլիանոս Ուրացողներ, հեթանոս պետութիւններ, աստուածուրաց ամբոխն ու այս աշխարհի գիտունները (Ա Կոր., Ա 20, 25, 17) չկարողացան և չեն կարող իրենց հնարած արհաւիրքները զգալի դարձնել Քրիստոսի անյաղթելի Եկեղեցու համար: Ընդհակառակը մարդկային մտքի այդ բոլոր հնարներն ու աշխարհային հակառակութեան ընդհարումները նոր ի նորոյ ապացոյցներ են մատակարարում, որ աշխարհի իշխանութիւնը մարդու երջանկութեան համար չէ. այն հակառակ է Աստծուն և չի կարող բնաւ յարատևել: Ուստի եւ միմիայն Քրիստոսի եկեղեցին է Աստծու արքայութիւնը, մարդու երջանկարանն ու յաւիտենական փրկարանը:

. Ճշմարիտ Առաքելական եկեղեցին կունենայ և յիշեալ չորս յատկութիւնները, որոնց հաստատութեան հիմքն է կազմում առաջին յատկութիւնը: Ինչպէս որ ճշմարիտ առաքելականութիւնից բխում են եկեղեցու միութիւնը, սրբութիւնն ու ընդհանրականութիւնը, ինչպէս որ նրանից բխում են եկեղեցու չորս յատկութիւնները, այնպէս էլ նրա անսխալականութիւնը, փրկարարութիւնն ու յաւիտենականութիւնը բխում են նրա տեսանելի և միանգամայն անտեսանելի լինելուց: Եթէ մի եկեղեցի առաւելապէս նպաստում է իր տեսանելիութեանը, և ամենայն ինչ նրա վրայ է հաստատում, նա ընկնում է

անհաշտ, անգութ, բանսարկու, անժուժկալ, դաժանաբարոյ, անբարեսէր, մատնիչ, յանդուգն, մեծամիտ, աւելի շատ հեշտասէր, քան աստուածասէր, մարդիկ, որ ունեն աստուածապաշտութեան կերպարանք, սակայն ուրացել են նրա զօրութիւնը: Նաև խորշիր նրանցից, քանզի նրանց մէջ կան այնպիսիք, որ մտնում են տնից տուն և գերում են մեղքերով ծանրաբեռն կանանց, որոնք տարուած են պէս-պէս ցանկութիւններով, կանայք, որ միշտ ուսանում են, բայց երբեք չեն կարող հասնել ճշմարիտ գիտութեանը: Եւ ինչպէս Հանէսն ու Համրէսը հակառակեցին Մովսէսին, այնպէս էլ սրանք հակառակում են ճշմարտութեանը. ապականուած մտքով մարդիկ, անպէտք՝ հաւատքի մէջ: Բայց նրանք աւելի առաջ գնալ երբեք չեն կարող, քանի որ իրենց յիմարութիւնը յայտնի կը լինի բոլորին, ինչպէս որ նրանցը եղաւ»:
[1] Հռոմ., ԺԶ 17, Տիտ., Գ 10, Եփես., Դ 14, Ա Թեսաղ., Բ 3, Մատթ., Է 6, ԺԸ 17, Ա Յովհ., Բ 18-29, Դ 1-6. «Որովհետև մեր մխիթարութիւնը ո՛չ մոլորութիւնից է, ո՛չ պղծութիւնից և ո՛չ էլ նենգութեամբ է: Այս ինչպէս Աստծու կողմից ընտրուեցինք՝ հաւատարիմ լինել Աւետարանին, նոյնպէս էլ խօսում ենք ոչ թէ մարդկանց հաճոյ լինելու համար, այլ՝ Աստծուն, որ քննում է մեր սրտերը»:

աշխարհային ընթացքի մէջ և պետական կազմակերպութիւն ստանում՝ կենտրոնացնելով իշխանութիւնն ու գործունէութիւնն իր պաշտօնեաների ձեռքում՝ հակառակ ժողովրդի, իսկ եթէ լոկ անտեսանելիութեան է նպաստում, ընկնում է աւերի, խառնաշփոթի, կամայականութիւնների մէջ: Առաջինը մի նուիապետութիւն է և ոչ մի եկեղեցի, որտեղ ամեն գործ իշխանութեան և մանաւանդ իշխանապետի ձեռքումն է և ժողովուրդը ներգործական մասնակցութիւն չունի Աստծու արքայութեան գործում, այլ միայն կրաւորական դեր է կատարում, իսկ երկրորդն անհատական մի ազատ դաշնադրութիւն է, որտեղ իւրաքանչիւր անհատ իշխան է և իր գործի ու կամքի տէրն է, ըստ իր քմահաճոյքի՝ Աստծու արքայութեան համար աշխատելու կապակցութեամբ: **Առաջինը Հռոմէական եկեղեցին է, իսկ երկրորդը՝ Բողոքականներն են:**

Հռոմ. եկեղեցին դարձել է գրեթէ մի աշխարհային թագաւորութիւն իր ոչ թէ հոգևոր, այլ մարմնաւոր թագաւորով, որ Հռոմի քահանայապետն է: Ըստ այսմ և ամբողջ եկեղեցական վարչութիւնն աշխարհական կառավարութիւն է և ժողովուրդն անպայման հպատակութեամբ ստորադրուած է նրա «նուիրապետութեանը»: «Նուիրապետութեան» ձգտումն է՝ կառավարել ժողովրդին խիստ հետևելով նրա ընթացքին՝ գերադասելով պատժական միջոցները: **Այս ձգտման սոսկալի արտայայտութիւնն է հաւատաքննութիւնը, որ միշտ սարսափեցրել է հաւատացեալներին և շարունակ գրգռել ժողովրդի հակառակութիւնը:** Այս իհարկէ յայտնի մոլորութիւն է և կատարելապէս հակառակ Աստծու արքայութեանը, որ հոգով ու ճշմարտութեամբ, առաքինութեամբ և ապաշխարութեամբ է, Քրիստոսի հաւատքով ու սիրայօժար անձնուիրութեամբ է իրականանում ու հաստատւում ժողովրդի մէջ և ոչ թէ՝ բռնութեամբ ու մարմնապէս, կռւով ու հալածանքով: Այսպիսի մարմնաւոր կազմակերպութիւնը կամ նուիրապետութիւնն արհամարհեց Քրիստոս արդէն իսկ այն ժամանակ, երբ անարդարութեամբ Նրան դատում ու խաչ էին բարձրացնում. «Իմ արքայութիւնն այս աշխարհից չէ, եթէ Իմ արքայութիւնն այս աշխարհից լինէր Իմ հետևորդները կը մարտնչէին արդէն, որպէսզի հրեաների ձեռքը չմատնեմ. բայց արդ Իմ թագաւորութիւնն այստեղից չէ» (Յովհ., ԺԸ 36):

Բողոքական եկեղեցին էլ, խորշելով հռոմէականների այս դատապարտելի և ակնյայտ մոլորութիւնից, անկշռադատ և անկարող գտնւեց

խոտանը քերել և քրիստոնէականը պահել, այլ՝ ընդհակառակը, վրէժխնդրութեամբ ճշմարտութիւնն էլ արհամարհեց, մերժելով ոչ միայն պապական իշխանութիւնն ու նուիրապետութիւնը, այլև մինչև անգամ հոգևոր կարգն ու եկեղեցու էութիւնը: Այդպէս բողոքականները խորտակած համարելով հռոմէական բռնութիւնը, քարոզում են, որ իբր թէ եկեղեցին անտեսանելի է, ազատ է արտաքին ամեն տեսակ պայմաններից, և հաւատացեալներն առանց մի որևիցէ տեսանելի միջնորդութեան ստանում են Ս. Հոգուց աստուածային շնորհներ: Բոլոր հաւատացեալներն էլ հաւասար են և ոչ ոք չգիտէ, թէ ինչպէս է Ս. Հոգին շնորհներ բաշխում իր հաւատացեալներին, «Որովհետև քամին ուր կամենում՝ փչում է և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես, թէ որտեղից է գալիս և ուր է գնում, այսպէս էլ հոգուց ծնւած իւրաքանչիւրը» (Յովհ., Գ 8). իսկ այն եկեղեցին, որ տեսնում ենք, ոչ թէ եկեղեցի է, այլ մի պատահական ժողով է, որ լոկ մարդկային է:

Պարզ նկատելի է, որ բողոքականները ակներև հակասութիւնների մէջ են ընկնում, որովհետև չեն կարողանում ասել, թէ ի՞նչ է և ինչպէս է այդ երևակայական անտեսանելի եկեղեցին, ըստ որում և իսկապէս չկայ մարդկանց համար, քանի որ իւրաքանչիւր ոք միմիայն երևակայութեամբ կամ աներևութապէս է պատկանում այդ աներևոյթ եկեղեցուն և ոչ մի կերպ չի կարող իմանալ, թէ ինքը վայելո՞ւմ է Ս. Հոգու շնորհները, թէ՞ ոչ: Բայց նրանք ընդունում են և տեսանելի եկեղեցու արտաքին երևոյթները, այն է՝ Աւետարանը, մկրտութիւնն ու հաղորդութիւնը: Սակայն, երբ տեսանելի եկեղեցի չկայ, այլևս ինչպէս կարող են անտեսանելի եկեղեցու արտայայտութիւններ լինել: Կամ մի՞թէ սուրբ խորհուրդները կարող են լինել մարդկային պատահական ժողովում: Կամ ինչի՞ համար են դրանք, երբ մարդ ոչ արտաքին միջոցների կարօտութիւն ունի իր փրկութեան համար և ոչ կարող է իմանալ, որ ինքը փրկւած է, թէ՞ ոչ: Եւ եթէ եկեղեցին պատահական է՝ ինչպէ՞ս Քրիստոս թոյլ տւեց, որ Իր կարգադրած Ս. խորհուրդները պատահականութեան մէջ գործադրւեն: Բայց թողնենք այս հակասութիւնների թւարկումը:

Եկեղեցին ոչ լոկ տեսանելի է և ոչ սոսկ անտեսանելի, ինչպէս դաւանում է Հայաստ. ս. Եկեղեցին. **Նա թէ՛ տեսանելի է և թէ՛ անտեսանելի: Տեսանելի է, որովհետև Քրիստոս այդ հաստատեց մարդկանց փրկութեան համար տեսանելի**

կերպով, տեսանելի է նրա ս. խորհուրդների կատարումը, աստուածային քարոզութիւնն ու նրա հոգևոր Ս. Կարգը: Իսկ անտեսանելի է, որովհետև անտեսանելի է նրա կառավարիչ գլուխը՝ Քրիստոս, անտեսանելի է Ս. Հոգու կենդանարար շնորհաբաշխութիւնը, անտեսանելի են նրա երկնաւոր անդամները, անտեսանելի է Աստծու հրաշագործութիւնը մարդկանց հոգիների մէջ և անտեսանելի է փրկագործութեան ներքին խորհուրդը: Սակայն ոչ թէ առանձին-առանձին տեսանելի և անտեսանելի եկեղեցիներ կան, այլ միևնոյն եկեղեցին թէ՛ տեսանելի և թէ՛ անտեսանելի է: Մինչդեռ բողոքականները, մերժելով այս ճշմարտութիւնը, դուրս են գալիս եկեղեցու տարածքից և իւրաքանչիւր ոք ինքնուրոյն մտածողութեան մէջ է սուզւում ու ելիրում բանապաշտութեան. եկեղեցին այնուհետև կորցնում է իր նշանակութիւնը նրանց մէջ:

Բողոքականների մոլորութիւնը պարզ հակառակութիւն է նաև Քրիստոսի կարգադրութեան: Քրիստոս 40 օր շարունակ երևաց առաքեալներին, խօսեց իր արքայութեան մասին (Գործք., Ա 3): Թէ ինչպէս պէտք է կազմակերպէին, պատուիրեց իր առաքեալներին՝ քարոզել ժողովրդին, իր պատուէրները պահել (Մատթ., ԻԸ 19, 20) մկրտել նրանց (ԻԸ 19), հաղորդութեան ս. խորհուրդը կատարել (Ղուկ., ԻԲ 19) և առհասարակ առաջնորդել նրանց դէպի փրկութիւն (Յովհ., Ի 21): Ուստի և առաքեալներն ասում են, որ իրենց իրաւունքն է՝ քարոզել Աւետարանը, կատարել ս. խորհուրդները, առհասարակ Քրիստոսին ծառայել, ինչպէս և Քրիստոսի առաքեալ են կոչւում և Քրիստոսից են ստացել իրենց պաշտօնը, իշխանութիւնն ու եկեղեցիներին պատուէրներ տալու իրաւունքն առհասարակ[1]: Նրանք իբրև Նոր Ուխտի պաշտօնեաներ որոշ կարգեր դրին ու կազմակերպութիւններ հիմնակարգեցին Քրիստոսի հաստատութեան համար: Նրանք ըստ Քրիստոսի պատուիրանի[2] պէտք է այնպէս կարգաւորէին եկեղեցին, որ այն մնար յաւիտեան: Ուստի և նրանք, քարոզելով Փոքր Ասիայի քաղաքներում, հիմնում են եկեղեցիներ և ոչ թէ թողնում, որ նրանք ինքնիրեն կազմակերպուէին, այլ ձեռնադրում էին երէցներ եկեղեցիների համար, հեռանալիս էլ ձեռնադրում էին խելամիտ եպիսկոպոսներ՝ Տիմոթէոսին ու Տիտոսին՝

[1] Գործք., Զ 2, Ա Կոր., Թ 16, Դ 1, Բ Կոր., Ե 18, ԺԳ 10, Ա Թես., Դ 2:
[2] Բ Կոր., Գ 6, Մատթ., ԻԸ 18-20, Յովհ., ԺԴ 16:

պատուիրելով ձեռնադրութիւններ անել ու երէցներ կարգել եկեղեցիներում[1]: Այդ ձեռնադրուածներն էին հաւատացեալներին հոգ տանողներն ու կառավարողները, որոնց և հրամայուած էր քարոզելու, քահանայագործելու և հաւատացեալներին հովելու[2]: Թէև մենք բոլորս էլ քրիստոնեայ ենք և Քրիստոսով Աստծու պաշտօնեայ ենք մեր հաւատքի և առաքինութեան մէջ[3], այսուհանդերձ Քրիստոսի կարգադրութիւնն է, որ մեր փրկագործութիւնն իրականանայ Իր յատուկ պաշտօնեաների միջոցով կամ ծառայութեամբ: Նա պաշտօնեաներ դրեց «հաստատելու համար սրբերին իրենց պաշտօնի կատարման մէջ, ի շինութիւն Քրիստոսի մարմնի, մինչև որ մենք բոլորս հասնենք հաւատքի կատարեալ միութեանն ու Աստծու Որդու ճանաչմանը, կատարեալ մարդու աստիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը». ըստ Հին Ուխտի՝ նախատիպ քահանայական ազգի և առանձին պաշտօնեաների կարգի[4]: Այդ քրիստոնէական պաշտօնեաների գործակցութեամբ մենք կարողանում ենք նաև մեր անձի համար աղօթել Աստծու առաջ եւ սուրբ ու քահանայական ազգ դառնալ Քրիստոսի փրկարանում ու միանալ նրանց քահանայագործութեանն յարակից շնորհներով Քրիստոսի հետ[5]: Եւ Քրիստոս իբրև ճշմարտութիւն ասաց, որ Իր եկեղեցին պէտք է յաւիտեան անյաղթելի մնայ, ինքը միշտ կը լինի Ս. Հոգով նրա հետ յաւիտեան և եկեղեցին չի կարող ուրեմն կորցնել իր առաքելական կազմակերպութիւնն իր էութեամբ[6]: Ակնյայտ է, որ բողոքականները մոլորւում են առաքելական շաւղից, հակառակւում են Ս. Գրքի վարդապետութեանը, ուստի խաբէական աղանդ են ներկայացնում քրիստոնէութեան մէջ[18*]:

[1] Գործք., ԺԴ 23, Ա Տիմ., Ա 3, Տետ., Ա 5: «Ձեռքերդ շտապով որևէ մէկի վրայ մի՛ դիր և ուրիշների մեղքերին մասնակից մի՛ եղիր, քեզ մաքուր պահիր» (Ա Տիմ., Ե 22): «Դրա համար իսկ քեզ թողեցի Կրետէում, որպէսզի ինչ պակաս բան որ կայ, ուղղես և իւրաքանչիւր քաղաքում երէցներ կարգես, ինչպէս որ ես պատուիրեցի քեզ: Կարգես մի այնպիսի մարդու, որ լինի անբասիր, մէկ կնոջ մարդ, ունենայ հաւատացեալ որդիներ, որոնք անառակութեան մէջ ամբաստանուած կամ անհնազանդ չլինեն» (Տիտ., Ա 5-6):
[2] Ա Պետ., Ե 2, Ա Տիմ., Դ 14, Ե 22, Բ Տիմ., Ա 6, Բ 15, Դ 2, Տիտ., Ա 5, 9, Յակ., Ե 14:
[3] Ա Պետ., Բ 3-9, Յայտ., Ա 6-9, Ի 6:
[4] Եփես., Դ 11-14, Եզ., ԺԹ 6:
[5] Ա Պետ., Բ 3-9, Յայտ., Ա 9, Ի 6:
[6] «Եւ ես կաղաչեմ Հօրը և ուրիշ Մխիթարիչ կառաքի ձեզ, որպէսզի ձեզ հետ բնակի յաւիտեան՝ ճշմարտութեան Հոգին, որին աշխարհը չի կարող ընդունել, որովհետև չի տեսնում նրան և չի ճանաչում նրան, բայց դուք ճանաչում էք նրան, որովհետև ձեզ մօտ պիտի բնակի և ձեր մէջ պիտի լինի» (Յովհ., ԺԴ 16-17):

Գ- Խորշելով այս երկու ծայրայեղութիւններից էլ, Հայաստանեայց ս. Եկեղեցին հաւատարմութեամբ հետևում է իր առաքելական ընթացքին: Նա իր աստուածապաշտական մասին արտակարգ նշանակութիւն չի տալիս առանց էական ներքին խորհրդի, այլ նրա աստուածապաշտութիւնը պարզ և յատուկ արտայայտութիւնն է քրիստոնէական ազգային հարազատ խորհուրդների և զգացումների: Նա իր հոգևոր ս. կարգին բացարձակ մենաշնորհեալ դիրք չի ընծայում, այլ վերապահելով նրան առաքելական ձեռնադրութեան շնորհը, միաժամանակ չի զատում իր հոտից, այլև շնորհաբաշխական սահմանից դուրս ամեն մի եկեղեցական գործում հաւասարապէս ծառայեցնում է թէ՛ եկեղեցականին և թէ՛ աշխարհականին՝ փրկութեան և նրա սպասաւորութեան նպատակին: Նա իր կանոնական ու վարչական գործերում ևս ի նկատի ունի ոչ թէ լոկ իշխանութիւնն ու կանոնական սահմանը, այլ դրանց իրաւական անխախտելի պահպանութեամբ հանդերձ՝ դաստիարակում է իր ժողովրդին Աւետարանի քաղցր ձայնով: Ուրեմն նա լիակատար հաւասարակշռութիւն է պահում իր տեսանելի և անտեսանելի էութեան բոլոր պարագաների մէջ՝ ըստ առաքելական ճշմարիտ ընթացքի:

Քանի որ Հայաստ. Ս. Եկեղեցու էութիւնն ու կեանքը պայմանաւորուած է նրա սուրբ Հայրերի վարդապետութեամբ, անհրաժեշտութիւն է առաջանում որոշել այն ընդհանուր սկզբունքները, որոնք այդ վարդապետութեան հիմնական կէտերն են և բնորոշում են իր մեծ Եկեղեցու յատուկ ընթացքը:

Ինչպէս տեսանք, Հայաստ. Ս. Եկեղեցին ոչ լոկ մարմնաւոր է և տեսանելի, և ոչ լոկ հոգևոր է և անտեսանելի, այլ երկուսի միութիւնն է, ըստ որում և նրա առաջին սկզբունքն է, որ նրա ներքինն ու արտաքինը իրար համապատասխան լինեն: Այս նշանակում է, որ Հայաստ. Ս. Եկեղեցին իր ներքին կեանքով արտացոլւում է իր արտաքինի մէջ, իսկ նրա արտաքինը լիովին համապատասխանում է նրա ներքինին, այն է՝ վարդապետութեանը: Հետևաբար նրա թէ՛ աստուածապաշտութիւնը և թէ՛ վարչութիւնը, թէ՛ կանոնական կարգն ու թէ՛ կարգադրած կեանքը ըստ ամենայնի դրսևորումն է նրա վարդապետական սկզբունքների: Ներքինն ու արտաքինն այնպէս անբաժան ու միացած են, ինչպէս Քրիստոսի աստուածութիւնն ու մարդկութիւնը, ըստ երկնաւոր՝ և կամ մարդու հոգու և մարմնի միութիւնն, ըստ երկրաւոր օրինակի: «Իմանալին՝ հոգու

խորհուրդն է, իսկ շօշափելին՝ մարմնիս պատկերը», որոշարկում է և Ս. Գրիգոր Նարեկացին[1]:

Երկրորդ. Հայաստանեայց ս. Եկեղեցին չի ճանաչում որևիցէ արտաքին կեանք ու գործունէութիւն, որ ճշմարիտ հայ քրիստոնեայի գիտակցութիւնից դուրս լինի: Այլ նա քարոզում է, որ գիտակցութեամբ լինի ամեն մի գործ և ամեն մի կենցաղ, և իւրաքանչիւր հաւատացեալ, ըմբռնելով ու հասկանալով իր արածի ու անելիքի կարևորութիւնը, այնպէս առաջադիմի իր կոչման մէջ՝ իբրև ազատ կամքով, ըստ Աստծու պատկերի ստեղծուած անձնաւորութիւն: Ուստի և Ս. Գրիգոր Լուսաւորիչն ասում է. «Աչքի տեսածը հաւատքով է լուսաւորւում»[2]:

Երրորդ. պահանջելով կատարեալ հաւատք աստուածային տնօրինութիւնների ու Հայաստ. ս. Եկեղեցու փրկարար ճանապարհի հանդէպ՝ նա ոչ թէ թոյլ է տալիս, որ ամեն մի ճշմարիտ հայ քրիստոնեայի արժանիքն այդ տեսական վիճակով սահմանափակւի ու լոկ անձնական դառնայ, այլ նա պահանջում է, որ անհրաժեշտ հաւատքի համաձայն ևս գործունէութիւն ծաւալւի, ըստ վերոյիշեալ առաջին կէտի սկզբունքի: Ճշմարիտ հայը պէտք է ունենայ կենդանի հաւատք, որպէսզի նոր պտուղը, այն է՝ առաքինական, այսինքն՝ յուսոյ ու սիրոյ շքահանդէսն ինքնընստինքեան բխի ու ճառագայթի թէ՛ անհատի ու թէ՛ ամբողջ եկեղեցու առաջադիմութեան համար: Որովհետև «հաւատքը գործերով է զօրանում», ինչպէս նկատում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը[3]:

Չորրորդ. ինչպէս որ Հայաստ. ս. Եկեղեցին անհատի փրկութեան համար է աշխատում և ինքը ևս անհատով է իրականանում ու առաջադիմում, այնպէս էլ իւրաքանչիւր ճշմարիտ հաւատացեալ հայ թէ՛ Հայաստ. ս. Եկեղեցու մի անհրաժեշտ ու բաղկացուցիչ անդամն է և թէ՛ անձամբ իսկ եկեղեցի է, այլև՝ Քրիստոսի հետ հաւատքով միացած եկեղեցու վէմ ու հիմք[4] և նրա առաջընթացի նպատակ: Ըստ որում իւրաքանչիւր հայ հաւատացեալ թէ՛ իր եկեղեցով է փրկւած ու կենդանի և թէ՛ իր եկեղեցու իրականացման մի տարրն է: Իբրև այդպիսին նա

---

[1] Հմմտ. Նարեկ. ՀԵ. եւ Ս. Յովհ. Իմաստ. ճառք, էջ 143 եւ 134, «Ամեն ինչ, որ կայ եկեղեցում, երկնայիններին է խորհրդանշում»:
[2] Հմմտ. Նախընթաց առաջին երեք գլուխները:
[3] Հմմտ. Ս. Ներսէս Շնորհալի, Ընդհան. 11, 18, 20:
[4] Հմմտ. նաև Շարական, էջ 480, «Հաւատքի վէմի վրայ շինեցիր սուրբ եկեղեցին. սրան պահիր խաղաղութեան մէջ»:

թէ՛ տարբեր է նրանից և Աստծու ինքնուրոյն որդին է և թէ՛ միաժամանակ նրանով է միանում անդրանիկների հետ, Աստծու հետ հաղորդակցւում և աշխարհը տիրում, որովհետև հաւատքն է նրա գոյութիւնն ու փրկութիւնը: Ուստի և Հայաստանեայց ս. Եկեղեցու փառքերի վառքի ժամանակ՝ «Ամեն մարդ ինքն իր անձի մէջ եկեղեցի էր, ինքն իր համար քահանայ, իւրաքանչիւր մարմին սուրբ սեղան էր և նրանց ոգիները՝ ընդունելի պատարագ»[1]:

Հինգերորդ. Հայաստանեայց ս. Եկեղեցին, հաւատարիմ մնալով իր էութեան գաղափարին, որ բացատրւեց ԻԹ գլխում, ոչ թէ բաժանում է մտցնում իր պաշտօնեաների ու իր ժողովրդի մէջ, այլ նա վարդապետում է, որ երկուսն էլ մէկ են և միայն իւրաքանչիւրը պէտք է իւրովսանն իրագործի իր կոչումը Աստծու արքայութեան իրականացման համար՝ մէկն իբրև պաշտօնեայ, միւսն իբրև եկեղեցու մի անհրաժեշտ անդամ՝ իր աստուածատուր շնորհներով: Այս սկզբունքի իրական առհաւատչեան փայլում է հաւատքի շքահանդէսում. «Յօժարութեան նոյն սիրտն ունեն բոլոր տղամարդիկ, կանայք, ծերերն ու երիտասարդները և բոլոր Քրիստոսի մէջ միաբանւածները»: «Որովհետև բոլորը հաւասարապէս նոյն զինւորութեանը զինւորագրւեցին և տղամարդիկ ու կանայք Քրիստոսի պատիրանի հաւատքի ու ճշմարտութեան նոյն գօտով ամրացրին իրենց մէջքը»[19*]:

Վեցերորդ. ճանաչելով իր կոչումը՝ Հայաստ. ս. Եկեղեցին ոչ թէ աշխարհի և աշխարհայինի մէջ է գտնում իր կոչման իրագործման վայելքը, այլ՝ **աստուածահաճոյ գործունէութեան մէջ**, նա ոչ աշխարհն ու աշխարահայինն է իրեն նպատակ դնում, այլ՝ աստուածայինն ու երկնաւորը, որոնց պէտք է աշխարհը ծառայի իբրև միջոց: Ուստի և նա ոչ թէ աշխարհի վրայ տիրապետութիւն հաստատելը և **այլոց հայացումն է նպատակ դնում**, ինչպէս տեսնում ենք նրա առաքելական գործունէութիւնից Վրաստանում, Աղուանից, Պարսից, Հիւսիսային և այլ հարևան երկրներում, այլ մատնացոյց է անում այն ճանապարհը, որով նա պէտք է տէր դառնայ աշխարհին և ամեն ինչ ծառայեցնի Աստծու արքայութեան իրականացմանը: Որովհետև եկեղեցին երկրաւոր ու շահադիտական հաստատութիւն չէ, այլ «յուսապայծառ կերպով հոչակւած նոյն ինքը՝ երկրի վրայ [հաստատւած] երկինքների երկինքը» (Ս. Գրիգոր Նարեկացի):

[1] Եղիշէ, Է 97:

Վերջապէս եօթերորդ. Հայաստ. ս. Եկեղեցին ծանուցում ու հոչակում է, որ իր ժողովրդի համար դէպի Աստւած ու երանութիւն տանող միակ ճանապարհը, անցնում է բացառապէս իր հոգևոր տարածքով: Նրանով է թէ՛ մուտքը Աստծու արքայութեան մէջ, որ է Ինքն իսկ, և թէ՛ շաւիղը դէպի կատարելութիւն, որ իր մէջ է, ու թէ պսակումը ճշմարիտ ընթացքի, որ իրենով է երաշխաւորւած: Իսկ ճանապարհի միակ լուսատուն ու լուսաւորողն է Ս. Գիրքը, որ թէ՛ կրթում է Հայաստ. ս. Եկեղեցու զաւակներին ու թէ՛ աճեցնում ու զարգացնում Աստծու շնորհաբաշխ ձեռքի տակ. «Ովքեր ամենասուրբ Երրորդութեան պարգևներով, օրհնութեամբ և քահանայական խորհուրդներով իջնում են հոգևոր աւազանի արգանդը և ծնւում են Հոգով՝ Քրիստոսի մէջ լուսաւորւած», ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը[1]: Ուստի և սկզբից ի վեր ճշմարիտ հայի սկզբունքն է. «Մէկ է մեր մայր եկեղեցին, որ երկնեց մեզ, և մէկ է մեր Հայրը՝ Սուրբ Հոգին, որ ծնեց մեզ», դրոշմում է հայի ճակատին Սուրբ Յովսէփը: «Որպէս մեր Հայրը գիտենք Սուրբ Աւետարանը և մեր մայրը՝ Առաքելական Կաթողիկէ Եկեղեցին»[2], **գոչում են և հաւատավառ հայերն առմիշտ:**

[1] Յաճախ., Բ 402: Յովհաննէս Երզնկացի պերճախօս վարդապետը, ողբալով իր ժամանակի թշւառութիւնն ու հոգևորականների անհոգութեան, տգիտութեան և շահամոլութեան պատճառով Հայաստ. ս. Եկեղեցու անշքութիւնը, վերջում խօսքն ուղղում է նրան՝ ասելով. «Այլ մեծ ու գլխաւոր բարիքի մէջ երանելի ես և յոյժ խնդալի, որովհետև ուղղափառ հաւատքի լոյսը չնւազեց, ցորենի բարի սերմերի մէջ ապականող որոմը չխառնւեց, քո աւանդութիւնների յստակ աղբիւրը չպղտորւեց օտար վարդապետութիւնների դառնաղի ջրով, քո կենդանի հացի մաքրութեան և ճշմարտութեան մէջ չխառնւեց մեռելական խմորն ու քացախուտ չարութեան հերձւածը, անբիծ հաւատքի ոսկու և լուսատեսիլ խօսքի արծաթի մէջ տեղ չգտան ժանտահոտ պղինձն ու սևաթոյր կապարը: Եւ այս բոլորը քեզ շնորհւեց Քրիստոսի մեծ նահատակ ս. Գրիգորի խնդրւածքներով, որ գլուխն է ամեն տեսակ բարիքների և հիմքը յաւիտենական կեանքի» (Ճառ ի ս. Գրիգոր Լուսաւորիչն):

[2] Եղիշէ 51, 70, 132, հմմտ. Ընդհան. 5:

«Այս մայրը աւելի հոգևոր, երկնաւոր, լուսաւոր է, քան երկրաւոր, շնչաւոր, մարմնաւոր, ինձ գգւեց որդին, սրա ստինքների կաթը Քրիստոսի արիւնն է»: «Սրա հարսնութեան փեսան կենդանարար Աստծու Որդին է, սրա խնջոյքի օրիորդները՝ հայրապետների խմբերը, սրա որովայնի արգանդը կենդանարար աւազանն է, սրա հարսանեկան պարի մէջ՝ առաքելական դասերն են» «Նաև Աստւածներ է դարձնում որոշ եղականների (ադամորդիների) իբրև միակ Քրիստոս Աստծու մաքուր պատկերներ» (Ս. Գրիգոր Նարեկացի)[20-21*]:

ԼԲ

ԵԿԵՂԵՑՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա- Ամեն մի հաստատութիւն պէտք է ունենայ մի նպատակ, դէպի որը ձգտելու է կոչուած, և որոշ գործերի ընթացք, որոնք տանում են դէպի այդ նպատակը: Այս իրագործելու համար այդպիսի մի հաստատութիւնը պէտք է ունենայ բնականաբար որոշ կազմակերպութիւն՝ որոշ կանոնների և սկզբունքների համեմատ, հետևաբար և պաշտօնեաներ՝ գործերի կանոնաւոր ընթացքին ծառայելու համար և այդ գործերի ընթացքն ու պաշտօնեաների հաւատարիմ ծառայութիւնը հսկող ու վարող իշխանութիւն[1]: Մենք արդէն տեսանք, որ Հայաստ. ս. Եկեղեցին ևս իբրև մի ճշմարիտ աստուածային հաստատութիւն ունի թէ՛ իր որոշ նպատակը, թէ՛ որոշ կազմակերպութիւն, թէ՛ որոշ սկզբունքներ ու կանոններ և թէ՛ որոշ գործերի ընթացք, որոնց մասին դեռ մասնաւոր խօսելիք ունենք: Խօսքի կարգը մեզ առաջնորդում է դէպի եկեղեցու իշխանութեան խնդիրը, իսկ պաշտօնեաներինը նիւթ կը դառնայ ձեռնադրութեան ս. խորհրդի բաժնին:

Եկեղեցու իշխանութեան նկատմամբ Քրիստոս մի կտրուկ և ամփոփ պատուէր տուեց իր առաքեալներին և միանգամընդմիշտ սահմանեց այդ խնդրի լուծումը: Նա Իր կենարար յարութիւնից յետոյ հանդիպեց Գալիլիայի լերան վրայ ժամադիր առաքեալներին և ասաց. «Ինձ է տրուած ամեն իշխանութիւն երկնքում և երկրի վրայ, ինչպէս Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացէք, ուրեմն, աշակերտեցէք բոլոր հեթանոսներին, նրանց մկրտեցէք Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցէք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատուիրեցի: Եւ ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում մինչև աշխարհի վախճանը» (Մատթ., ԻԸ 18-20): Այս խօսքերով վերջացնում է նախագիր աւետարանիչը Տիրոջ բոլոր պատուէրները: Քրիստոսի այդ աստուածային պատուիրանն ուրեմն, ասում է վճռապէս, որ նախ եկեղեցու իշխանութիւնն Ինքը Քրիստոսն է թէ՛ երկնքում և թէ՛ երկրում. երկրորդ՝ Քրիստոս այդ իր Հայրատուր իշխանութեամբ

[1] Բ Թես., Գ 6, 14, 15, Ա Տիմ., Ա 10, Բ Տիմ., Գ 5, Բ Յովհ., Ժ 11, Բ Կոր., ԺԶ 1, Է 17, Բ 9, Ա Կոր., Դ 21, Բ Կոր., Ժ 5-8, ԺԳ 10:

ուղարկում է Իր աշակերտներին ժողովրդի մէջ ու նրանց իշխանութիւն է տալիս աշակերտելու, մկրտելու ու իր պատուէրներն ուսուցանելու. և երրորդ՝ Քրիստոս Իր հաւատացեալների հետ է ընդմիշտ մինչև աշխարհի վախճանը: Ուրեմն Քրիստոս, իբրև եկեղեցու միակ իշխան, որոշում է Իր առաքեալների իշխանութեան սահմանը, որն է՝ աշակերտել ու մկրտել, և ուսուցանել միայն այն ամենը, ինչ որ Ինքը պատուիրել է: Իր աշակերտներին Քրիստոս հասկացրեց, որ երբեք չպէտք է բարձր իշխանութեան ձգտեն իրար նկատմամբ, այլ պէտք է մանկան պէս անկեղծ, հեզ ու միամիտ, բայց խորագէտ լինեն՝ առաւել պատիւ ունենալու համար[1]: Այս պատուէրն անհրաժեշտ էր մանաւանդ մի այնպիսի ժամանակ, երբ ընդհանրապէս ժողովուրդը հռոմէական կայսրութեան ներքոյ տրամադիր էր մարմնապէս հասկանալու Քրիստոսի գալուստն ու փրկագործութիւնը: Մինչև անգամ Զեբեդէայի որդիները՝ Յակոբոսն ու Յովհաննէսը, կամեցան առաջնութիւն ձեռք բերել Աստծու արքայութեան մէջ, բայց Քրիստոս դատապարտեց նրանց այդ ձգտումը՝ ասելով. «Գիտէք, որ ազգերի իշխանաւորները տիրում են ազգերի վրայ, և մեծամեծներն իշխում են նրանց վրայ: Ձեր մէջ ևս չպէտք է այդպէս լինի, այլ ձեզնից ով կը կամենայ մեծ լինել, ձեր ծառան պիտի լինի, և ձեզնից ով կը կամենայ առաջինը լինել, ձեր ծառան պիտի լինի: Ինչպէս որ մարդու Որդին չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայելու և իր անձը տալու՝ որպէս փրկանք շատերի փոխարէն» (Մատթ., Ի 25-28)[2]:

Ակնյայտ է, որ առաքեալները համաձայնութեամբ ու հաւասարութեամբ պէտք է գործէին և ուսուցանէին իրենց միակ գլխի, այն է՝ Քրիստոսի իշխանութեան ներքոյ: Բայց որովհետև Քրիստոս ասաց, որ մարդիկ պէտք է լսեն իր առաքեալներին ինչպէս իրեն (Ղուկ., Ժ 16), ուստի հասկացրեց, որ բացարձակ իշխանութիւնը, բացարձակ ուսուցիչն ու վարդապետը, Տէրը և գլուխը միայն Ինքն է՝ ասելով. «Բայց դուք որևէ մէկին ուսուցիչ մի՛ կոչէք, որովհետև ձեր ուսուցիչը մէկ է, և դուք բոլորդ եղբայրներ էք: Եւ երկրի վրայ ոչ մէկին ձեզ հայր մի՛ կոչէք, որովհետև մէկ է ձեր Հայրը, որ երկնքում է: Եւ ուսուցիչներ չկոչուէք, որովհետև Քրիստոսն է ձեր Ուսուցիչը» (Մատթ., ԻԳ 8-10): Քրիստոս, մերժելով որևիցէ

[1] Մարկ., Թ 32, Ղուկ., Բ 46:
[2] Մատթ., Ի 20-28, Մարկ., Ժ 35-45:

գերիշխանութիւն, պատուիրեց իր առաքեալներին, որ գործեն միասին՝ սիրով ու հաւասարութեամբ միացած իրենց առաքող Տիրոջ հետ այնպէս, ինչպէս Ինքն էլ գործում էր միացած Իր առաքիչ Հօր հետ (Յովհ., ԺԴ 10, ԺԷ 22-26):

Առաքեալների թէ՛ աշակերտելու ու մկրտելու և թէ՛ ուսուցանելու գործունէութիւնն ընդհանրապէս երկու տեսակ էր, ըստ արձակման ու կապման պատուէրների, այն է՝ դրական ու բացասական: Դրական գործունէութեամբ նրանք պէտք է նախ եկեղեցիներ հաստատէին, որպէսզի փրկագործութեան շնորհները տարածէին հաւատացեալների վրայ: Այդ առաջին քայլով իսկ նրանք հաւատարիմ մնացին Քրիստոսի պատուէրին՝ ճանաչելով, որ եկեղեցու հիմքն ու գլուխը միմիայն Քրիստոս է: Հակառակ պարագային այն կը դառնար մարդկային հաստատութիւն: Ուստի և Պօղոս առաքեալն ասում է. «Որովհետև գործակից ենք Աստծուն, Աստծու պտուղն ենք, Աստծու կառոյցը: Որպէս իմաստուն ճարտարապետ, հիմքը դրեցի, ըստ Աստծու այն շնորհի, որ տրուած է Ինձ, բայց ուրիշն է, որ կառուցում է. սակայն իւրաքանչիւր ոք թող զգոյշ լինի, թէ ինչպէս է կառուցում, որովհետև ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրուած այն հիմքը, որ Յիսուս Քրիստոս է» (Ա Կոր., Գ 9-11): Ուրիշ տեղ էլ ասում է նա. «Եւ Նա է եկեղեցու մարմնի գլուխը. նա է, որ սկիզբն է, անդրանիկը մեռելների մէջ, որպէսզի Ինքը լինի ամէն ինչում նախապատիւը» (Կող., Ա 18): Նա եփեսացիներին ևս գրում է, որ Աստուած բոլոր իշխանութիւնների և պետութիւնների վրայ թէ՛ այս աշխարհում և թէ՛ հանդերձեալում «ամէն ինչ հնազանդեցրեց նրա (Քրիստոսի) ոտքերի տակ և նրան հաստատեց իբրև գլուխ եկեղեցու, բոլոր բաների վրայ, եկեղեցի, որ Նրա մարմինն է, լրումը Նրա, Ով ամէն ինչ լցնում է ամէն բանի մէջ» (Եփես., Ա 22-23): Հապա ևս ասում է. «Ապա այսուհետև օտար և պանդուխտ չէք, այլ՝ համաքաղաքացի սրբերին և ընտանի՝ Աստծուն՝ կառուցած առաքեալների և մարգարէների հիմքի վրայ, որի անկիւնաքարը Քրիստոս Յիսուսն է: Նրա վրայ ներդաշնակութեամբ հաստատուած ամբողջ կառոյցը Տիրոջով վերաճում է մի սուրբ տաճարի, որի մէջ դուք էլ նրա հետ կառուցւում էք որպէս Աստծու բնակարան՝ Սուրբ Հոգու միջոցով» (Բ 19-22):

Ըստ այսմ առաքեալները ճանաչելով, որ եկեղեցու վէմն ու գլուխը միմիայն Քրիստոս է, հիմնադրեցին այդ անշարժ վէմի վրայ ճշմարիտ եկեղեցին,

հաստատեցին նրա մէջ Աստծու և մարդու յարաբերութիւնը կամ աստուածպաշտութիւնը և, ձեռնադրելով եպիսկոպոսներ կամ տեսուչներ, քահանաներ ու սարկաւագներ, նրանց յանձնեցին թէ՛ պաշտամունքի կատարումը, թէ՛ ժողովրդի հովութիւնը: Այնուհետև եկեղեցին սկսեց հետզհետէ զարգանալ Աստծու խնամածութեան տակ. ամեն տեղ հաւատացեալները փրկութիւն և դաստիարակութիւն էին գտնում Քրիստոսի իշխանութեան ներքոյ՝ Նրա պաշտօնեաների հոգատարութամբ: Բոլորի կարգուկանոնը հետզհետէ բխեց Քրիստոսի Աւետարանից ու պատուիրաններից, ու ամենքը ճանաչում էին իրենց իշխանութեան այն սահմանը, որ գծել էր Քրիստոս, և աւանդեցին առաքեալները: Այս բոլոր կարգերի և ուղղութիւնների ձևակերպութիւնը կանոնաւորում էին առաքեալներ, այնքան հաւատարիմ մնալով Քրիստոսին ու նրա պատուիրաններին, որ մինչև անգամ երբեմն իրենց հնչող մասնաւոր կարգադրութիւնները, որքան էլ դրանք բխէին Քրիստոսի ասածներից, զատորոշում էին Տիրոջ պատուիրաններից (Ա Կոր., Է 12):

Գործունէութեան բացասական ուղղութեամբ առաքեալները պէտք է զերծ պահէին Քրիստոսի եկեղեցին զանազան մոլորութիւններից ու հերձուածներից կամ աշխարհային ազդեցութիւնից: Դրա համար նրանք նախ պէտք է թէ՛ իրար հետ և թէ՛ իրենց միակ գլուխ Քրիստոսի հետ կատարեալ միութիւն պահէին գործով ու քարոզութեամբ: Ըստ որում և Քրիստոս պատուիրել էր նախապէս առանձին խրատել այդպիսիներին «Իսկ եթէ քեզ չլսի, առ քեզ հետ մէկին և կամ երկուսին, որպէսզի երկու կամ երեք վկաների բերանով հաստատուի ամեն ինչ: Իսկ եթէ նրանց էլ չլսի, կասես հաւատացեալների ժողովում, իսկ եթէ նրանց էլ չլսի, թող նա քեզ համար լինի ինչպէս հեթանոսը և մաքսաւորը» (Մատթ., ԺԸ 16-17): Այսպիսի մի իշխանութիւն տալիս է նրանց Քրիստոս միմիայն նրանց միաբանութեան ու միութեան հիման վրայ, որին իբրև հիմնաքար կամ երաշխիք ծառայում է ժողովական միաձայնութիւնը, ուստի և անմիջապէս յետոյ ասում է. «Եթէ ձեզնից երկուսը միաբանեն երկրի վրայ որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն կը կատարուի նրանց համար Իմ Հօր կողմից, որ երկնքում է, որովհետև, ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած լինեն Իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մէջ» (ԺԸ 19-20):

Ուրեմն առաքեալներն իրենց գործունէութեան մէջ ունէին արդէն իշխանութեան մի սահման, այն է՝ Քրիստոսի պատուիրանները, իսկ վիճելի խնդիրների մէջ դիմում էին իրենցից բարձր հեղինակութեան, այն է՝ յանուն Քրիստոսի հաւաքած ժողովին: Առաքեալներն այդպէս էին վարւում, ինչպէս գիտենք, թէ՛ Պօղոսի գործունէութիւնից[1] և թէ՛ առհասարակ առաքեալների սկզբնական վճիռներից[2] ելնելով: Քարոզութեան մէջ նրանց անխախտելի սկզբունքն էր. «Եթէ նոյնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ աւետարանի ձեզ աւելին, քան այն, որ մենք աւետարանեցինք ձեզ, նզովեալ լինի: Ինչպէս աւելի առաջ էլ ասացինք. հիմա էլ դարձեալ ասում եմ. «Եթէ մէկն աւետարանի ձեզ աւելին, քան ինչ որ դուք ընդունեցիք, նզովեալ լինի» (Գաղ., Ա 8-9): Մինչդեռ վիճելի հարցերում յանուն Քրիստոսի միացած ժողովի մէջ գործում էր Ս. Հոգին, որ լուծում էր խնդրահարոյց վիճելի հարցերը: Հետևաբար դարձեալ միշտ Քրիստոս էր նրանց պատուէրներ տալիս ամենքին միասին և ոչ առանձին-առանձին (Մատթ., ԺԸ 19, 20):

Բ- Հռոմէական եկեղեցին շեղւում է Քրիստոսի այս վարդապետութիւնից և ձգտում է գերիշխանութիւն ձեռք բերել բոլոր քրիստոնեաների վրայ, մինչև անգամ քաղաքական իրաւունքներ և անսխալականութիւն վերագրելով Հռոմի քահանայապետին[22*]: Հռոմէական եկեղեցու հետևորդներին ասում են, որ Քրիստոս միմիայն իր երկրային կեանքի ժամանակ էր իր եկեղեցու տեսանելի գլուխը, իսկ այժմ անտեսանելի գլուխ է, մինչդեռ երկրում կարգել է իրեն փոխարինող Պետրոս առաքեալին՝ տալով նրան թէ՛ Իր բոլոր իշխանութիւնն ու թէ՛ անսխալականութիւնը: Նոյն եկեղեցական վարչութիւնը մնալով պէտք է հասնի աշխարհի վախճանին, ուստի և Պետրոսին յաջորդող պէտք է լինէր, որ և եղաւ և է Հռոմի քահանայապետը կամ պապը (հայրիկ)՝ Քրիստոսի «անմիջական փոխանորդը», «Աստծու մարմնացումն» աշխարհի վրայ, կամ ինչպէս Բելիարմինն է ասում՝ «փոխաստուածը» և «չափ չկայ Նրա իշխանութեանը», և Ս. Հոգու բոլոր շնորհները կամ մարդկանց փրկութիւնը միմիայն նրանով է իջնում բոլոր հաւատացեալների վրայ[23*]: Նա է տիեզերական եպիսկոպոս և բոլոր եպիսկոպոսները նրա փոխանորդներն ու դեսպաններն են: Մինչև անգամ

[1] Ա Կոր., Ե 4-5, Բ Կոր., Բ 6, Ա Տիմ., Ա 19, 20:
[2] Գործք., Ա 15, ԺԷ, ԻԱ 17:

տիեզերական ժողովներն էլ առանց նրա հաստատութեան ոչ մի նշանակութիւն չունեն: Ուստի բոլորն էլ պէտք է հաւատան պապին, որ առանց նրա չկայ փրկութիւն և իսկապէս միմիայն այդ է պահանջւում թէ՛ հոգևորականից ու թէ՛ աշխարհականից: Ամեն բանում պապի խօսքը պէտք է անցնի, նա է եկեղեցու էութիւնը, որովհետև եկեղեցին էլ «նրա ստրկութիւն» է, Աստծու արքայութեան բանալին էլ նրա ձեռքումն է և նա միայն կարող է բանալ ու գոցել: Մի խօսքով եկեղեցին կազմակերպւած է ինչպէս մի բուրգ, որի լայն տակը աշխարհականներ են, միջին մասը «նուիրապետութիւնը» և ծայրն ինքը՝ Հռոմի քահանայապետն է, որ ծանրանում է բոլորի վրայ և այլն:

Սակայն մենք տեսանք արդէն, որ այս վարդապետութիւնը կատարելապէս հակառակ է Քրիստոսի պատուիրանին: Ինքը՝ Քրիստոս, ասաց առաքեալներին. «Ինձ տրւած է ամեն տեսակ իշխանութիւն երկնքում ու երկրի վրայ... և անհաւասիկ ես ձեզ հետ եմ բոլոր օրերում, մինչև աշխարհի վախճանը», ուրեմն Իրենն է ամբողջ իշխանութիւնը, ինչը և ոչ ոքի չի տալիս և Ինքը երբեք բացակայ չպէտք է լինի իր եկեղեցուց: Ըստ այդմ և առաքեալները վարւեցին. ամեն ինչ ժողովով էին վճռում (Գործք., Ա 24, Զ 6), որոշումներ էին անում Ս. Հոգով միայն, որոնց հաւատարիմ մնացին և եկեղեցական հայրերը դարեր շարունակ: Ուրեմն ոչ մի առաքեալ ինքնուրոյն իշխանութիւն չի ունեցել հաւատքի գործերում:

Չնայելով այս ակներև ճշմարտութեանը, Հռոմէական եկեղեցու հետևորդները ճգնում են հաստատել իրենց մոլորութիւնը՝ հիմնւելով հետևեալ պատճառաբանութեան վրայ. «Եւ ես քեզ ասում եմ, որ դու Պետրոս (վէմ) ես, և այդ վէմի վրայ պիտի շինեմ Իմ եկեղեցին (Մատթ., ԺԶ 18): «Եւ քեզ պիտի տամ երկնքի արքայութեան բանալիները, և ինչ որ մի անգամ կապես երկրի վրայ, արձակւած պիտի լինի երկնքում: Եւ ինչ որ արձակես երկրի վրայ, արձակւած պիտի լինի երկնքում» (19): Նոյնպէս և Քրիստոսի հարցը. «Սիրո՞ւմ ես ինձ աւելի, քան դրանց» և յետոյ՝ «Արածեցրու իմ ոչխարներին» (Յովհ., ԻԱ 15, 17): Նաև՝ «Բայց ևս աղօթեցի քեզ համար, որպէսզի քո հաւատը չպակասի, և դու, երբ վերադառնաս ինձ, հաստատես քո եղբայրներին» (Ղուկ., ԻԲ 32): Վերջապէս Քրիստոսի մի քանի գործերը, որոնք յիշւում են (Գործք., Ա 15-26, Բ 14, Թ 32, Ժ,

ԺԵ 7-11): Այս բոլորից իբր թէ հետևում է Պետրոսի գերիշխանութիւնն առաքեալների և քրիստոնէական եկեղեցու վրայ[24*]:

Նախ և առաջ մենք տեսանք, որ վէմն ու հիմը միմիայն Քրիստոս է և եկեղեցին միմիայն նրա հաւատքի վրայ է հաստատուում[25*]: Այդպէս են հասկացել բոլոր եկեղեցական հայրերը, այնպէս որ հաւատքով իրաքանչիւր սուրբ կարող է վէմ դառնալ եկեղեցու համար և ոչ թէ միայն «տասներկու առաքեալներն են ճշմարտութեան վէմեր, և հողմերն ու հեղեղները նրանց չեն կարող շարժել»[1]: Այլև «Պետրոսը վերցրեց Տիրոջից խօսքը. այն ասաց բոլոր սուրբ վերակացուներին, ովքեր իրաւամբ ունեն ճշմարտութիւնը», ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը[2]: Ուրեմն եկեղեցին հաստատուում է ոչ թէ մարդու, այլ այն հաւատքի վրայ, որ դաւանում է Քրիստոսին ճշմարտապէս Աստծու Որդի, ինչպէս և բնականաբար այդ հետևում է եկեղեցու գաղափարից, և ոչ թէ Քրիստոս Ինքն է Իր եկեղեցիով հաստատուում մի առաքեալի վրայ: «Արդարև իսկ, հաւատքի ճշմարիտ դաւանութիւնը վէմ է», ասում է և Եղիշէն[3]: Այդ են ասում և բոլոր առաքեալներն և մինչև անգամ դատապարտում են այն մարդկանց, ովքեր ուզում էին մարդու վրայ հաստատել եկեղեցին ու նրանց անունով կոչել[4]: Ուստի և առաքեալները միմիայն Քրիստոսին են հիմն կոչում, ինչպէս տեսանք. «Մէկ ուրիշը չի կարող հիմք դնել, քան դրուածը, որ Քրիստոս է»: Ճշմարիտ է, առաքեալներն աւետարանիչ են և նրանց նահատակութեամբ հիմնուում է եկեղեցին «առաքեալների և մարգարէների հիմքի վրայ» (Եբ., Բ 20), ըստ որում «Եւ քաղաքի պարիսպն ունէր տասներկու հիմքեր.

[1] Այսպէս է հասկանում և ս. Սահակը իր կանոններում[26*]: Տե՛ս և Եղիշէ, 296, 328, Փարպ. 144, Ընդհանր. 2, 3, 16. Կանոն. համ. առաքելոց. «Աստուածային խորհուրդների հազարապետներ, երկնքի արքայութեան բացողներ: Աստծու առաքեալներ, Կաթողիկէ եկեղեցու հաւատի սիւներ»: «Աշխարհակիր Խօսքի բազուկների վրայ հաստատուած Սուրբ Սիոնի հիմքեր... հաւատքի հարազատ վէմեր՝ Պետրոս և Յովհաննէս... երկրի թագաւորներ, աշխարհի իշխաններ... Յակոբ Ալփեան, Յուդա Յակոբեան» (Կան. երկոտասան առաքելոց)[27*]:

[2] Յաճախ., ԺԷ 83:

[3] Ճառք 348, հմմտ. Շարակ. ձեռաց. ս. Էջմիածին, էջ 480, 716:

[4] «Եւ արդ, ասում եմ, ձեզնից իրաքանչիւրն ասում է՝ ես Պօղոսեան եմ, և միւսը, թէ՝ ես Ապօղոսեան եմ, եւ միւսը, թէ՝ ես՝ Կեփասեան և միւսը թէ՝ ես՝ Քրիստոսեան: Իսկ արդ, միթէ բաժանա՞ծ է Քրիստոս, միթէ Պօղո՞սը խաչւեց ձեզ համար կամ Պօղոսի՞ անունով մկրտուեցինք» (Ա Կորնթ., Ա 12-13) Հմմտ. ս. Յակովբ Մծբնայ, Զգօն, էջ 6-11. «Մեր բովանդակ հաւատքի հաստատուն և ճշմարիտ հիմքը Ինքը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսն է և այս վէմի վրայ է հաստատուած հաւատքը և հաւատքի վրայ՝ շինութիւնը, որ տևելու է մինչև իր վախճանը, բայց ամեն տեսակ շինուածքի հիմքը ի սկզբանէ Նա Ինքն է»:

նրանց վրայ՝ Գառան տասներկու առաքեալների տասներկու անունները» (Յայտ., ԻԱ 14), սակայն դրանց ևս Քրիստոս է իր հաւատքի վրայ հաստատում. «շինելու եմ իմ եկեղեցին», ասում է Նա և ոչ թէ «շինելու ես»:

Միւս վկայութեան մէջ յիշուած է բանալին, այսինքն՝ ոչ թէ մի նիւթական իր, այլ՝ մեղքեր թողնելը կամ կապելը: Քրիստոս այս խոստացաւ թէ՛ Պետրոսին և թէ՛ այլոց («կը տամ») և յետոյ տուեց ամենքին՝ ասելով՝ «ինչ կապէք երկրի վրայ կը կապուի երկնքում» (Մատթ., ԺԸ 18) և յարութիւնից յետոյ վերջնականապէս վաւերացրեց. «Խաղաղութիւն ձեզ. ինչպէս իմ Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ»: Երբ այս ասաց, նրանց վրայ փչեց և ասաց. «Առէք Սուրբ Հոգին: Եթէ մէկի մեղքերը ներէք, ներուած կը լինի, եթէ մէկի մեղքերը չներէք, ներուած չի լինի»[1] (Յովհ., Ի 21-22): Իսկ արքայութեան դուռն Իր իսկ Քրիստոսինն է, որ ունի մահուան և դժոխքի բանալիները (Յայտ., Ա 18) ու կապելու և արձակելու իրաւունքը տալիս իրաքանչիւր պաշտօնեայի, ինչպէս ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը. «Առաքեալները, մարգարէները և քահանաները՝ սրանք Տիրոջից իշխանութիւն առան և եղան ճշմարտութեան վերակացուներ: Եւ ինչ որ կապեն երկրի վրայ՝ կը կապուի երկնքում, և ինչ որ արձակեն երկրի վրայ՝ կարձակուի երկնքում: Այսպէս բոլոր սրբերին այս շնորհքը տուեց Փրկչից»[28*]:

Քրիստոսի երիցս «արածեա՛» ասելն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ Պետրոսի վերահաստատութիւնը իր առաքելութեան մէջ, որ ընկել էր երիցս ուրացմամբ հակառակ իր խոստումների[2]: Այս անգամ, երբ Քրիստոս հարցնում է՝ «Սիրե՞ս զիս», Պետրոսն այլևս չի պարծենում և խոնարհութեամբ Քրիստոսի ամենագիտութիւնն է յիշում. նա արդէն փորձել է: Վերջապէս Քրիստոս մարգարէացաւ, որ առաքեալները գայթակղելու էին, և մինչև անգամ ասաց Պետրոսին. «Սիմոն, Սիմոն, ահա սատանան ուզեց ձեզ ցորենի նման մաղել» (Ղուկ., ԻԲ 31): Նրա գայթակղութիւնը ծանր կը լինէր և կը դառնար վատ

[1] Տե՛ս նաև Ագաթ. 268, Մեկն. Մատթ. 387, Նարեկ. Ներբող. Առաք. Շնորհալի, Զափաբեր 402-403, 404, 433 և այլն:

[2] Պետրոսը պատասխանեց և ասաց նրան. «Թէպէտև ամենքը Քո պատճառով գայթակղուեն, սակայն ես չեմ գայթակղի»: Յիսուս նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, որ այս գիշեր, դեռ աքաղաղը չկանչած, երեք անգամ ինձ պիտի ուրանաս»: Պետրոսը նրան ասաց. «Թէ քեզ հետ մեռնել իսկ ինձ հասնի, քեզ չեմ ուրանայ»: Նոյնն ասացին բոլոր աշակերտները ևս (Մատթ., ԻԶ 33-35, Մարկ., ԺԴ 31, Հմմտ., ԺԴ 66-72, Ղուկ., ԻԲ 56-62, Յովհ., ԺԸ 25-27):

օրինակ, ուստի և Քրիստոս ասում է. «այլ ես աղաչեցի քեզ համար, որպէսզի չպակասի քո հաւատքը» (Ղուկ., ԻԲ 32). և ինչպէս որ նրա գայթակղութիւնը վատ օրինակ կը դառնար, այնպէս էլ աղօթում է, որ յետոյ դարձի գայ ու հաւատարմութեան օրինակ լինի. «և դու երբեւէ դարձի կը գաս և կը զօրացնես քո եղբայրներին» (Ղուկ., ԻԲ 31): **Պարզ է, որ այստեղ խօսք չկայ իշխանութիւն տալու մասին**[1]:

Այսպէս և առաքեալների սկզբնական գործունէութեան մէջ ոչ մի առաջնութիւն անգամ չի տրուած Պետրոսին: Նրանք բոլոր գործերը ժողովով են վարում ու վճռում, ընտրութիւնը միասին են անում (Գործք., Ա 15-26), վէճի լուծումը նրանից են խնդրում (ԺԵ 2), խորհրդից յետոյ Յակոբոսի կարծիքն են ընդունում, վճռի մասին էլ ասում է. «Այն ժամանակ առաքեալներին ու երէցներին, ամբողջ եկեղեցու հետ միասին, հաճելի թւաց», «հաճելի թւաց Ս. Հոգուն» (Գործք., ԺԵ 22, 28): **Եւ մենք տեսնում ենք, որ Պետրոսն ինքն էլ միտք չի ունեցել առաջնակարգ տեղ զբաղեցնելու, նա երէցներին «երիցակից» է կոչում** (Ա Պետ., Ե 1), **Պօղոսին՝ «սիրելի եղբայր»** (Բ Պետ., Դ 15), **Քրիստոսին միայն «վէմ»** (Գործք., Դ 10, Ա Պետր., Բ 2-10) **և «հովւապետ»** (Ա Պետ., Ե 4): Նոյնպէս և Պօղոսը տեսանելի գլուխ չի ճանաչում (Եփ., Դ 11, Ա Կոր., ԺԲ 27), Քրիստոսին է միակ գլուխ անւանում (Եփ., Ա 22, Դ 15, Ե 23, Կող., Ա 18), եկեղեցու սիւներ է կոչում ոչ թէ լոկ Պետրոսին, այլ Յակոբին, Պետրոսին ու Յովհաննէսին (Գաղ., Բ 9, Գործք., Զ 2-6): Յաճախ **Պետրոսը հնազանդւում էր առաքեալներին**, ըստ որում սրանք ուղարկեցին նրան Սամարիա մկրտութեան համար (Գործք., Ը 14-17), **մերժում էին նրա կարծիքը** (ԺԱ), **և մինչև անգամ նրա կեղծաւորութիւնը յանդիմանում** (Գաղ., Բ 11):

Բայց եթէ մինչև անգամ Պետրոսը կարծեցեալ գլխաւորութիւն ունեցած լինէր, **այդ էլ մի ապացոյց չի կարող լինել Հռոմի քահանայապետի գերիշխանութեան**: Պետրոսը չէր կարող 25 տարի եպիսկոպոսութիւն անել Հռոմում, որովհետև այդ հրամայւած չէր առաքեալներին: Նրանք իբրև առաքեալներ քարոզիչներ էին և եթէ եպիսկոպոսութիւնը լինէր նրանց տնօրինւած նպատակը, Պետրոսը եպիսկոպոսութիւն կանէր հրեաների մէջ, ուր

[1] Տե՛ս . Մխիթար Սկևռացի. Պատասխանիք՝ Յաղագս համապատութեան ԺԲ առաքելոց. Երուսաղէմ 1860. մանաւանդ էջ 57: «Դրախտ» 481-519:

ուղարկւած էր ժողովով (Գաղ., Բ 7). մանաւանդ, որ Երուսաղէմն աւելի նշանաւոր տեղ էր, ուստի և ի պատիւ աստուածակոխ տեղեաց միայն Յակոբոսը եպիսկոպոս կարգւեց (հմմտ. Եղիշէ 341): **Սակայն ոչ մի առաքեալ մի տեղի համար չէր, այլ ամբողջ աշխարհի համար**: Եւ թէ Պետրոսը Հռոմում եպիսկոպոս եղած լինէր, Պօղոսը հռոմէացիներին գրած թղթում կողջունէր նրան կամ թէ ինքն իսկ չէր գնայ այնտեղ եկեղեցի կազմակերպելու (Հռովմ., ԺԵ 20), կամ թուղթ էլ չէր գրի և եթէ գրէր, ինքը կը դառնար նրան գլխաւոր, ինչպէս երևում է այդ թղթի իշխանական ոճից[29*]: Սակայն նրանք ոչ մի տեղ եպիսկոպոս չդարձան, **այլ նշանակում էին եպիսկոպոսներ իբրև Քրիստոսի առաքեալներ: Ուրեմն Հռոմի քահանայապետները չեն կարող առաքեալի եպիսկոպոսական յաջորդները լինել**: Հռոմի եպիսկոպոսները չէին կարող գլխաւորութիւն ունենալ և Ա դարում, որովհետև այդ ժամանակ Յովհաննէսն ու Սիմէոն Կանանացին դեռևս կենդանի էին: **Հռոմի եպիսկոպոսներն էլ միշտ յիշել են, որ Երուսաղէմի եպիսկոպոսն է նախապատիւ: Միմիայն Բ դարից են եղել առաջնութեան ձգտումներ Հռոմէական պետութեան եպիսկոպոսների մէջ, սակայն այդ ևս դատապարտւել է թէ Հռոմի եպիսկոպոսների և թէ այլոց կողմից**: Իսկ եթէ լոկ հիմնադրութեամբ առաջնութիւն ձեռք բերուէր, Անտիոքը ևս կարող էր առաջինը դառնալ իբրև Պետրոսի գործունէութեան վայր և Երուսաղէմն իբրև աստուածակոխ մայր եկեղեցի Քրիստոսի անզուգական գերեզմանով (Գործք., Բ 38-41, Ժ, ԺԵ 7):

Այս ամենից յետոյ արդէն պարզ է, թէ հռոմէադաւանները ինչպիսի մոլորութիւնների մէջ են ընկնում, և ինչպիսի հակասութիւնների մէջ են խարխափում: **Նրանք չեն ձեռնադրում իրենց յաջորդին, օծումն էլ չունեն, այլ ծիրանաւորներն են ընտրում մէկին քահանայապետ**: Արդ, եթէ ընտրութիւնը տալիս է նրան քահանայապետական շնորհներ, ուրեմն մի խորհուրդ է և ուրեմն ընտրական ժողովը բարձր է նրանից, մինչդեռ պապերն այդ ժխտում են, սակայն ընտրողներն էլ չունեն նրա շնորհները, հապա որտեղից են նրան տրւում այդ շնորհները և ինչ միջոցով: Եւ եթէ տալիս են այդ շնորհները, ուրեմն կարող են և յետ առնել, դատել ու պատժել իբրև ստորադրեալի: Ահա, թէ ինչպիսի հակաւետարանական, հակառաքելական և հակասական մոլորութիւնների մէջ են ընկնում կաթոլիկ վարդապետները: Սակայն այդ ամենի վրայ դեռ աւելացնում են առաւել ևս մեծ մոլորութիւն, որ նախընթաց մոլորութիւնների հետևանքն է, այն է՝

պապական անսխալականութիւնը, մի դաւանանք, որ ինքնըստինքեան հակասական է[1]: Հռոմի նախնի քահանայապետերը շատ են փափագել այդպիսի անսխալականութիւն ու տիեզերական ուսուցչութիւն վերագրել իրենց, սակայն կամ չեն կարողացել և կամ բուռն հերքման են ենթարկուել եկեղեցական հայրերի կողմից: Նրանք ձգտում էին դրան, որովհետև պապական գլխաւորութիւնը կարող էին միմիայն այդպիսի կամայական իրաւունքով հաստատել, ըստ որում եթէ Հռոմի քահանայապետը Քրիստոսի փոխանորդն է, փոխաստուած է, պէտք է որ անսխալական էլ լինի: Ուստի և Պիոս Թ վերջապէս սիրտ արեց ու 1870-ին Վատիկանեան ժողովով իր երևակայեալ անսխալականութիւնը դաւանանք հրատարակեց իր եկեղեցու կոյր կամ կեղծաւոր հաւատացեալների մէջ, չնայելով «հին կաթոլիկ» հոչակաւոր եպիսկոպոսների և աստուածաբանների բողոքին[31*]: Նա անսխալական է ex cathedra, այսինքն՝ «Երբ Հռոմի քահանայապետը խօսում է իր գահից, այն է՝ երբ կատարելով իր պաշտօնն իբրև բոլոր քրիստոնեաների հովիւ և ուսուցիչ, որոշում է, որ եկեղեցին պէտք է այսինչ վարդապետութիւնն ունենայ հաւատքի ու բարոյականութեան վերաբերմամբ, այն ժամանակ նա ունի անսխալականութիւն, որ շնորհել է Փրկիչն Իր եկեղեցուն»: Բայց մի՞թէ նա կարող է տիեզերական ուսուցիչ լինել և նոր որոշումներ տալ հաւատքի ու բարոյականութեան վերաբերեալ, նա որ մի եպիսկոպոս է և ուրիշ ոչինչ, իսկ այդպիսի իրաւունքը միմիայն Քրիստոսինն էր, ուստի և առաքեալները ևս կատարում էին միմիայն Քրիստոսի կամքը: Նրանք ոչ թէ իրենք էին որոշումներ տալիս, այլ դժուար խնդիրներում ժողով էին անում, որովհետև քրիստոնէական եկեղեցու ժողովն էր անսխալականութիւն ստացել Քրիստոսից Ս. Հոգով և միմիայն Քրիստոսին հաւատարիմ եկեղեցին է անսխալական և ոչ թէ մի որևիցէ անհատ: Քրիստոսն էլ ոչինչ պակաս չի թողել, որ մի եպիսկոպոս լրացնի հաւատացեալների փրկութեան համար, մի եպիսկոպոս, որ իբրև մարդ չի կարող աստուածային կատարելութիւն ունենալ ոչ իբրև անհատ և ոչ ի պաշտօնէ (Ժող., Է 21, Ա Յովհ., Ա 5, Մատթ., Ե 48): Առաքեալն էլ ասում է. «Քանի որ բոլորս էլ շատ ենք մեղանչում» (Յակ., Գ 2): Ըստ որում եթէ ասենք. «Մենք ոչ մի մեղք չունենք» մենք մեզ ենք խաբում և ճշմարտութիւն չկայ մեր մէջ (Ա Յովհ., Ա 8):

[1] Տե՛ս Յանոսի (Դէօլինգեր), Յաղագս պապին եւ ժողովոյ նորա, թարգմ. Գաբրիէլ եպ. Ս. Էջմիածին 1871[30*]:

Այս մի ճշմարտութիւն է, որ հաստատում է նոյնիսկ Հռոմի պապերի պատմութեամբ, որովհետև շատ են ոչ միայն շատ սխալական, այլև հաւատքի ու բարոյականութեան մէջ ծանրապէս մեղանչած պապերը, ինչպէս Ալեքսանդր Զ-ն, Բորճեան կամ Լևոն ԺԲ-ն, այլև Լիբերոսը, Հոնորիոսը և այլք[1], որոնց մինչև անգամ բանադրել են յաջորդ պապերը[32*]: Սակայն Հռոմի քահանայապետերի համար նշանակութիւն չունեն ոչ իրենց մոլորութիւններն և ոչ էլ հակասութիւնները. բաւական է, որ աստուածային պատուով ճոխացած անսահման իրաւունքներ են վայելում՝ իրենց հաճոյքներն առաջ տանելու և սխալուած ժամանակ իրենց սխալն իբրև անձնական վրիպանք ծածկելու:

Այս դեռ բաւական չէ. Հռոմի քահանայապետերն իրենց մարմնաւոր ուժը զօրացնելու համար արգելեցին ԺԱ դարից իրենց բոլոր հոգևորականներին ամուսնանալու, որով ձեռք բերին ընտանեկան հոգսերից ազատ բազմաթիւ արբանեակներ ու հլու զինուորներ: Այդպիսով նրանք խլեցին հոգևորականներից այն ազատութիւնը, որ ունէին առաքեալներն անգամ, որոնցից ոմանք ամուսնացած էին, ինչպէս օրինակ Պետրոսն ու Փիլիպպոս սարկաւագը[2], և արատաւոր կեանքը նրանց մէջ տարածեցին: Զգտելով մարմնաւոր իշխանութեան, պապերը եպիսկոպոսներից, քահանաներից ու սարկաւագներից կազմեցին և իրենց դրան շքախումբը, անուանելով նրանց ծիրանաւորներ (կարդինալ) կամ «իշխանք եկեղեցւոյ», որոնք հակառակ ձեռնադրութեան սկզբունքի՝ բարձր են մինչև անգամ պատրիարքներից: Այլև նրանք մեծ զարկ տուին ճիզուիտական միաբանութիւններին, որոնք հետզհետէ դարձան Հռոմէական եկեղեցու վարիչները և իրենց տարօրինակ, առաձգական ու խաբէական վարդապետութեամբ բռնացին կաթոլիկների խղճի ու գործունէութեան վրայ[33*]: Վերջապէս կղերը դարձնելով բուն եկեղեցի, իսկ ժողովուրդը նրա ողորմութեան կարօտ մի կցւածք, միջին դարերից Հռոմի քահանայապետերը վերացրին նաև ժողովրդի ընտրական իրաւունքը՝ սկսելով քահանայապետի ընտրութիւնից՝

[1] Հռոմի Գրիգորիոս Մեծը գրում է. «Ով որ սրտի հպարտութեամբ իրեն ընդհանրական եպիսկոպոս է կոչում կամ ուզում է, որ ուրիշներն իրեն այդպէս անուանեն, նա Նեռի կարապետն է»: Գիրք Զ, թուղթ. 30, տե՛ս նաև Բայոնիս Տարեգիր 827 ի, 912, 955:
[2] Մատթ., Ը 14, ԺԹ 11, Գործք., ԻԱ 8-9, Ա Տիմ., Գ 2, 2.12, Նէօկես. Ա. Կան. Նիկիոյ ժող. Գ կան[34*].:

Հռոմում պաշտօն ունեցող ծիրանաւորների ժողովին (կոնկլաւ) վերապահելով այդ:

Բայց ինչպէս որ Հռոմէական եկեղեցին աշխարհական բռնակալութիւն է դարձնում եկեղեցու իշխանութիւնը և ոչ մի աշխարհական իշխանութիւն չի ճանաչում իրենից դուրս, այնպէս էլ բողոքականները ոչնչացնելով հոգևոր իշխանութիւնը, կատարելապէս ենթարկում են աշխարհական ընթացքին ու հլու ստրուկ դարձնում իրենց մարմնաւոր իշխանութեանը: Երկուսն էլ աշխարհական ձգտումներ են, որոնք, ինչպէս բազմիցս տեսանք, դատապարտելի են ոչ միայն որպէս առաքելական կարգին հակասող պարագայ, այլև՝ Քրիստոսի ակնյայտնի պատուէրին, թէ՝ «Կայսրինը կայսրին տուէք և Աստծունը՝ Աստծուն»[1]: Եւ Պօղոս առաքեալն ասում է իր հաւատացեալ ժողովրդին ու եկեղեցուն[2]. «Արդ, ինչպէս որ ընդունեցիք Քրիստոս Յիսուսին՝ Տիրոջը, այնպէս էլ ընթացէք նրանով՝ արմատաւորուած և կառուցուած նրա վրայ՝ հաստատ մնալով հաւատի մէջ, ինչպէս որ ուսանեցիք, որպէսզի աճէք նրա մէջ գոհութեամբ: Զգոյշ եղէք, չլինի թէ մէկը ձեզ գրաւի ճարտարամտութեամբ և սնոտի խաբեբայութեամբ. դրանք մարդկային աւանդութեան և բնութեան տարերային ուժերի վրայ են հիմնուած և ոչ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան վրայ, քանի որ նրա մէջ է բնակւում Աստուածութեան ամբողջ լիութիւնը մարմնապէս: Դուք էլ էք լցուած նրանով, որ գլուխն է ամեն իշխանութեան և պետութեան...»:

Ուրեմն ինչպէս Քրիստոս բերեց Աստծու արքայութիւնն աշխարհիս վրայ, այնպէս էլ այդ արքայութիւնը պէտք է առաջադիմի Քրիստոսի վարդապետութեամբ և Նրա առաքեալների հիմնադրած ու կազմակերպած եկեղեցիով: Եւ ինչպէս որ Քրիստոս եղաւ իր եկեղեցու հիմքն ու գլուխը և եկեղեցին դարձրեց Իր մարմինը[3], այնպէս էլ այդ եկեղեցին պէտք է իր գլխից անբաժան մնալով յաւիտենապէս յարատևի և իր կատարմանը հասնի: Հայաստ. ս. Եկեղեցին ճանաչելով, որ Քրիստոս է եկեղեցու հիմքը, վէմը, մարմինը, գլուխը և իսկական իշխանութիւնը[4], կամ Քրիստոս է Ա և Ֆ, պահում է առաքելադիր

[1] Մատթ., ԻԲ 21, Մարկ., ԺԲ 17, Ղուկ., Ի 25, Գործք., Դ 19:
[2] Կող., Բ 6-10, Գաղ., Ե 10:
[3] Եփես., Ա 22, 23, Դ 12, Ա Կոր., ԺԲ 27-31:
[4] «Այսօր ուրախացած ցնծում են երկնային բազմութիւնները ս. եկեղեցու նաւակատիքին, որովհետև մեզ յաւիտենական քահանայապետ շնորհեց՝ Կաթուղիկէ սուրբ եկեղեցին

կազմակերպութիւնը, աստուածապաշտութիւնը, կանոնադրութիւնը և առահասարակ վարդապետութիւնը և իր Ս. Կարգը: Նա քարոզում է, որ ինչպէս իրաքանչիւր եկեղեցու բարձրագոյն իշխանութիւնը նրա պաշտօնեաների ու հաւատացեալների անդամների լրման ժողովի մէջն է, որ կոչւում է ազգային ընդհանրական ժողով, այնպէս էլ քրիստոնէական բոլոր եկեղեցիների երկրաւոր իրաւական իշխանութիւնը գտնւում է Քրիստոսի անունով հաւաքած բոլոր քրիստոնեաների օրինաւոր, սիրալիր ու քրիստոսասէր ժողովի ձեռքում, համաձայն Քրիստոսի պատուիրանների (Մատթ., ԺԸ 5-17, Ա Կոր., Ե 4-5, հն): Իսկ իրաքանչիւր ազգի եկեղեցու մշտական կառավարչութիւնը կամ իշխանութիւնը յանձնուած է, ինչպէս տեսանք, առաքեալների յաջորդներին և սրանց ստորադրեալ պաշտօնեաներին: «Ըստ որում մարգարէները փոխարինեցին նահապետներին և մարգարէներին՝ առաքեալների և աւետարանիչների դասերն ու սրանց՝ նրանց հետևողները՝ իրաքանչիւր տոհմի և Աթոռի հայրապետներն ու եկեղեցու վարդապետները, որոնք, ըստ առաքեալի «սրբերին գօտեպնդելու, պաշտամունքի և Քրիստոսի մարմնի շինուածքի համար են»: Սրանցից են և մեր հայր, Հայաստանի Լուսաւորիչ Գրիգորիոսը, ինչպէս նաև՝ հոգու և մարմնի ծնունդ հանդիսացող աթոռակալ ժառանգները...»[1]:

ԼԳ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ոսկեդէնիկ դարի մեր սուրբ Հայրերը և հրեշտականման նահատակները, պատրաստուելով Հայաստ. ս. Եկեղեցու համար իրենց արիւնը թափելու,

լուսաւորելու համար, փա՜ռք Քո գալստեանը Տէր: Այսօր բարձունքներից մեզ հովանի եղաւ լոյսի սիւնը, որովհետև երկնաւոր Թագաւորը մտաւ սուրբ Եկեղեցի, և հրեշտակների զօրքը ծաւալելով տօնում են մարդկանց հետ» (Տե՛ս Շարակ. Կան. վերացմ. ս. Խաչին 497):
[1] Ներսէս Շնորհալի, Ընդհանր. 413, 417: «Օրէնքներն յայտնի են և հաստատուած են օրէնսդիր Մովսէսի և այլ մարգարէների ձեռքով, իսկ կանոնականներն առաքեալների ձեռքով գրուեցին և իշխանութիւն շնորհուեցին եկեղեցու վարդապետներին, որովհետև Մովսէսը և մարգարէներն ակնաղբիւր են, իսկ առաքեալները մարդկանց առողջ հաւատքով հաստատողները» (Եղիշէ, էջ 357):

փառաւորում էին Աստծուն, որ առաքինութեան այդ մեծասքանչ հանդէսն իրենց էր վիճակ հանել ասում էին. «Աստուած, գոհանում ենք Քեզանից, որ սուրբ առաքեալների քարոզութեան շնորհից շատերին առաքեալներ ծնեցիր և ճգնազգաց մարտիրոսների շնորհից շատերին անթիւ նահատակներ ծնեցիր, ինչպէս առաքեալ և խոստովանող տէր Գրիգորիոսը՝ ուղիղ գործերի ստեղծիչը, յստակ և փութեռանդ վարդապետութեան ուսուցիչը բոլորին յուզավառելով բարի նախանձի մէջ՝ վարդապետներ և անթիւ նահատակներ ծնեց»[1]:

Այս հրաշադէպ և հայրենաշունչ աղօթքի մէջ գեղեցկապէս բնութագրուած է Հայաստ. ս. Եկեղեցու հիմնադրութեան և կազմակերպութեան խորհուրդը: Քրիստոս հիմնեց Իր Եկեղեցին Երուսաղէմում և պատուիրեց առաքեալներին տարածել Աւետարանն ամբողջ աշխարհում, տալով նրանց մի հիմնական պատուէր ապագայ յաջողութեան համար: Ըստ այդ պատուէրի նրանք պէտք է հաստատ ու հաւատարիմ մնային Քրիստոսին, ինչպէս ուռը որթի վրայ. «Ոչ թէ դուք ընտրեցիք ինձ, այլ ես ընտրեցի ձեզ և դրեցի ձեզ, որպէսզի դուք գնաք և պտղաբեր լինէք և ձեր պտուղը մնայ, և ինչ որ Իմ Հօրից խնդրէք Իմ անունով, կը տայ ձեզ» (Յովհ., ԺԵ 16): Քրիստոս որթն է, իսկ առաքեալները ուռը, ըստ որում և Քրիստոսի եկեղեցին հիմնադրում և պտղաբեր է լինում որթի վրայ ուռի աճումով ու ծաղկումով[2]:

[1] Փարպ. 270, հմմտ. Շար. Ս. Ղևոնդեանց, էջ 574. «Դու, որ սկզբից սահմանեցիր Հայաստանցիներիս փրկութիւնը՝ մեզ համար հրաւիրակ շնորհելով սուրբ Գրիգորին՝ անմարմին զօրութիւնների հետ օրհնում ենք Քեզ, Ամենակալ Հայր: Դու, որ նոյն դաւանութեամբ Քեզ խաչակից ընտրեցիր քահանաների դասերին՝ շնորհաբաշխ օծութեամբ նրանց կարգելով հովիւներ և վարդապետներ, անմարմին զօրքերի հետ գովում ենք Քեզ, Որդիդ Միածին: Դու, որ աւազանի մաքրութեամբ, փրկական հաղորդութեամբ Քո անւանը զինուորագրուածներին՝ իրենց արեամբ պայծառացածներին յաղթահանդէսով պսակեցիր, անմարմին զօրքերի հետ բարեբանում ենք Քեզ, Հոգիդ Ճշմարիտ»:

[2] «Ես եմ ճշմարիտ որթատունկը, և Իմ Հայրը մշակն է: Ամեն ճիւղ, որ Իմ վրայ է և պտուղ չի տալիս, նա կտրում է այն և այն ամենը, որ պտուղ է տալիս, էտում է, որպէսզի առաւել ևս պտղաբեր լինի: Դուք արդէն իսկ մաքուր էք այն խօսքի համար, որ ձեզ ասացի: Մնացէք Իմ մէջ, և Ես՝ ձեր մէջ. ինչպէս ճիւղը, որ ինքն իրեն չի կարող պտուղ տալ, եթէ որթատունկի վրայ հաստատուած չլինի, նոյնպէս և դուք՝ եթէ Իմ վրայ հաստատուած չլինէք: Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճիւղերը: Ով բնակւում է Իմ մէջ և Ես՝ նրա մէջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետև առանց Ինձ ոչինչ անել չէք կարող: Եթէ մէկն Իմ վրայ հաստատուած չէ, նա ճիւղի նման դուրս կը նետուի և կը չորանայ, և այն կը հաւաքեն ու կրակը կը նետեն և կայրուի: Եթէ Իմ մէջ մնաք և Իմ խօսքերն էլ մնան ձեր մէջ, ինչ որ ուզենաք, խնդրեցէք Աստծուց, և ձեզ կը տրուի: Իմ Հայրը փառաւորուած կը լինի նրանով,

Եկեղեցու հաստատման մի այլ նմանութիւնն է շինութիւնը: Քրիստոս Ինքն Իրեն վէմ է կոչում, իսկ առաքեալներն իմաստուն շինողներ ու հիմքեր են[1]: Ամուր վէմի վրայ են հաստատւում այդ հիմքերը և նրանց գլուխն է դաձեալ Քրիստոս, որովհետև այն է կատարեալ վէմն ու հիմքը, ինքն է գլուխն ու վախճանը: «Ապա ուրեմն օտար ու պանդուխտ չէք, այլ՝ համաքաղաքացի սրբերին և ընտանի՝ Աստծուն՝ կառուցուած առաքեալների ու մարգարէների հիմքի վրայ, որի անկիւնաքարը Քրիստոս Յիսուս է: Նրա վրայ ներդաշնակութեամբ հաստատուած ամբողջ կառոյցը Տիրոջով վերածում է մի սուրբ տաճարի, **որի մէջ դուք էլ Նրա հետ կառուցւում էք, որպէս Աստծու բնակարան՝ Սուրբ Հոգու միջոցով**»[2]: Ուրեմն հաստատուն վէմի վրայ և ամենախնամ գլխի ներքոյ առաքեալները հիմնադրում ու կազմակերպում են Քրիստոսի ս. Եկեղեցին՝ իրենք իսկ հիմքը դառնալով իրենց աստուածային շինութեան[3]: Եւ ինչպէս որ աստուածային վէմի վրայ դրուած հիմքն ու կառուցուած եկեղեցին կոչւում է տաճար կամ շինուածք, այնպէս էլ նոյն գլխի ներքոյ կազմակերպուած եկեղեցին կոչւում է մարմին[4]:

որ դուք շատ պտուղ տաք և Իմ աշակերտները լինէք: Ինչպէս Իմ Հայրը Ինձ սիրեց, Ես էլ ձեզ սիրեցի. Իմ սիրոյ մէջ հաստատուն մնացէք: Եթէ Իմ պատուիրանները պահէք, կը մնաք Իմ սիրոյ մէջ, ինչպէս Ես Իմ Հօր պատուիրանները պահեցի և մնում եմ Նրա սիրոյ մէջ» (Յովհ., ԺԵ 1-10, Հմմտ. Ծննդ., ԽԹ 11, Մամբրէ Վերծ., Ճառք 69):

[1] Մատթ., Է 24-25, ԻԱ 42-44, Մարկ., ԺԲ 10, Ղուկ., Զ 48, Ի 17-18, Գործք., Գ 11, Ա Պետ., Բ 4-8, Ա Կորնթ., Գ 7-10, Ժ 4-11. «Այնպէս որ մի բան չէ նա, ով տնկեց, ոչ էլ մի բան է նա, ով ջուր տուեց, այլ՝ նա, ով աճեցրեց՝ Աստուած: Ով որ տնկեց և ջուր տուեց, մի են, բայց իւրաքանչիւր ոք իր վարձը կը ստանայ, ըստ իր վաստակի, որովհետև Աստծուն գործակից ենք, Աստծու այգին էք, Աստծու կառոյցն էք: Որպէս իմաստուն ճարտարապետ, հիմքը դրեցի ըստ Աստծու այն շնորհի, որ տրուած է ինձ բայց ուրիշն է, որ կառուցում է, սակայն իւրաքանչիւր ոք թող զգուշ լինի, թէ ինչպէս է կառուցում, որովհետև ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրուած այն հիմքը, որ Յիսուս Քրիստոս է»:

[2] Եփես., Բ 19-22, Բ Կոր., Զ 16:

[3] Ս. Եղիշէն խօսքն ուղղելով հրեաներին՝ նկատում է. «Բայց (Քրիստոս) իրաւամբ էր ասում, թէ՝ «քանդեցէք», որովհետև արդէն սկզբից իսկ միայն քանդել գիտէք և ոչ կառուցել: Ահա քանդեցիք արդարների ազգը և ես ձեր մէջ այլ արդաներ պիտի կառուցեմ... դուք անարգեցիք վէմը, որ անկեան գլուխն էր, և ես ուրիշ տասներկու վէմեր կանգնեցրի ձեր աշխարհում, որպէսզի ձեզ կառուցեմ անշարժ հիմքի վրայ, բայց չկամեցաք» Ճառք, էջ 257:

[4] Հռոմ., ԺԲ 4-8, Ա Կոր., Զ 15, 19, Ժ 17, ԺԲ 12, Եփես., Ե 30, Կող., Ա 18-24, Եփես., Ա 22, Բ 20, Ա Պետր., Բ 4-10, Ա Տիմ., Գ 15:

Պարզ է, որ առաքեալները հիմքեր պէտք է դառնային Քրիստոսի եկեղեցու համար և շինողներ պէտք է լինէին այդ եկեղեցին «յօդելու ու պատշաճելու» համար. այդպէս և Քրիստոսի գործիչ անդամները պէտք է լինէին նրանք, որպէսզի բոլոր հաւատացեալներին միացնելով մի հոգով Քրիստոսի մարմինը շինէին «Կատարեալ մարդ Քրիստոսի հասակի լրման չափով»: Երբ մի առաքեալ կատարում էր իր պարտքը, շինում էր հաստատուն վէմի վրայ և կազմակերպում Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին ու կազմում նրա կենդանի մարմինը, այնուհետև ապահովապէս վստահաբար ասում էր. «Այնպէս որ այսուհետև չլինենք հրեաներ, որոնք տարուբերուում ու քշուում են վարդապետութեան բոլոր հողմերից, մարդկանց խաբեբայութեամբ, որոնք խորամանկութեամբ, խաբելով մոլորեցնում են, այլ ճշմարտութեամբ ապրելով սիրոյ մէջ, ամեն բան աճեցնենք նրա մէջ, որ գլուխն է՝ Քրիստոս: Նրանից է կախուած ամբողջ մարմինը, իրար ամրօրէն միացած զանազան յօդերով, այնպէս որ, երբ մարմնի հիրաքանչիւր մասը գործում է ինչպէս որ պէտք է, ամբողջ մարմինն աճում է և կառուցւում սիրոյ մէջ» (Եփես., Դ 14-16):

Եւ ինչպէս որ այդ շինութիւնը բնակարան էր դառնում Աստծու և աստուածային գործերի ու հաղորդակցութեան, շնորհագործութեան և բարգաւաճման, այնպէս էլ մարմինն ունէր իր վարիչ ու գործիչ անդամներն ըստ նմանութեան աչքի, ականջի, ձեռքի, ոտքի և այլն, որոնց բոլորի կենդանացուցիչն է Ս. Հոգին: Ըստ որում «Նա (Քրիստոս) շնորհ տուեց ոմանց լինելու առաքեալներ, ոմանց՝ մարգարէներ, ոմանց՝ աւետարանիչներ, ոմանց՝ հովիւներ և ուսուցիչներ՝ հաստատելու համար սրբերին իրենց պաշտօնի կատարման մէջ, ի շինութիւն Քրիստոսի մարմնի»[1]:

Արդ, Երուսաղէմից առաքուեցին առաքեալները դէպի աշխարհի զանազան կողմերը, նախապէս արևելեան երկրներում հաստատելով իրենց աստուածային իշխանները: Նրանք ամեն տեղից սերտ յարաբերութիւն էին պահում Երուսաղէմի՝ իբրև Մայր Եկեղեցու հետ թէ՛ իրենց տուրքերով[2], թէ՛ յաճախակի այցելութեամբ և թէ՛ խորհրդական կամ ընդհանուր կառավարչական

[1] Եփես., Դ 10, Յաճ., Ի 328-352, Ընդհան. 16:
[2] Գործք., ԺԱ 28, Գաղ., Բ 10 և այլն. Հռոմ., ԺԵ 25-28, Ա Կոր., ԺԶ 1-4, Բ Կոր., Թ 1, Ը 10:

գործունէութեամբ[1]: Հիմնադրելով ու կազմակերպելով եկեղեցիները, նրանք հաստատում էին եպիսկոպոսական աթոռներ, շարունակ այցելելով կամ բանակցութեամբ վերահսկում էին և վերջապէս նահատակելով՝ իրենք իսկ հիմք էին դառնում իրենց առաքելական աթոռին և իբրև պտղաբեր ուռ՝ սնուցանում էին իրենց հիմնաւորած եկեղեցու ճիւղերը: Բնականաբար և բոլոր ճիւղաւորութիւնները ստանում էին իրենց սնունդը, իւրաքանչիւր առաքեալի նախահաստատ եկեղեցուց՝ իբրև վիմաշէն հիմքից և որթաբողբոջ տունկից: Այսպիսով և «հեթանոսները, որոնք ընկղմուած էին իրենց մեղաւոր գործերի մէջ, ելան մեղքերի ծովի անդնդից տասներկու առաքեալների ձեռքով, ովքեր ճշմարտութեան վէմեր են, և հողմերը, հեղեղները նրանց չեն կարող շարժել» (Եղիշէ):

Հայաստանին վիճակուեցին գլխաւորապէս չորս առաքեալներ, որոնցից Յուդա Յակոբեանը նահատակուել է Ուրմիայում, Սիմոն Կանանացին՝ Պարսկաստանում, մինչդեռ երկուսը բուն Հայաստանում են քարոզել, եկեղեցի հաստատել ու նահատակուել, այն է՝ ս. Թադէոսն՝ Արտազում և ս. Բարդուղիմէոսը՝ Տարօնում[35-36*]: Երկուսի հիմնած եկեղեցիներն էլ դարձան առաջնակարգ աթոռներ, ըստ որում Տարօնի եկեղեցին ևս Մայր Եկեղեցի է կոչւում Հայոց համար[2]: Նրանցից յետոյ նրանց յաջորդութիւնը սաստիկ հալածանքների դիմացաւ խուլ անկիւններում[3] և երբ Գ դարի վերջերում Տրդատը Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութեամբ ընդունեց և իր ամբողջ ազգի մէջ հաստատեց քրիստոնէութիւնը, **Հայ ազգը առաջին քրիստոնեայ ազգը դաձաւ և Ս. Գրիգորը գնալով Կեսարիա՝ Հայոց Ս. Թադէոս առաքեալի աթոռից ձեռնադրութիւն ստացաւ:** Այնուհետև Հայաստանեայց ս. Եկեղեցին իր վերջնական հաստատութիւնն ու կազմակերպութիւնը ստացաւ առաքեալների

[1] Գործք., ԺԸ, ԺԵ, Գաղ., Բ 1-10...
Մամբրէ Վերծանողը ճառելով Հոգեգալստեան հրաշքն ասում է. «Եկեղեցու հիմնադրութիւնը նոյն Սիոնում սկզբնաւորուեց: Այսպիսի նորագործ հրաշքի պատճառով մարգարէն հրամայում է բոլորից առաջ Սիոնի համար ուրախանալ»:
[2] Բիւզանդ. III, ԺԴ[37-38*]:
[3] Տե՛ս Ագաթ., էջ 85-87, Սամուէլ Անեցի, էջ 280-283, Եւսեբիոս եկ. պատմութիւն VI, ԽԶ[39*], Եղիշէ, էջ 45: Եօթանասունների և առաքեալների աշակերտներից սերող ս. Եղիշէն, ս. Եւստաթէոսը և ուրիշներ եղել են նաև եկեղեցու հիմնադիրներ:

հիման վրայ ս. Գրիգոր Լուսաւորչի ճգնութեամբ[1]: Նրանցից ծնեցին բազմաթիւ ս. Հայրեր ու նահատակներ՝ «ովքեր իրենց հաւատքով յաղթող եկեղեցու հաստատուն սիւները եղան» (Եղիշէ):

Բայց Քրիստոս մի հրաշալի տեսիլում երևաց Ս. Գրիգոր Լուսաւորչին, «արագաթև արծւի» պէս իջաւ Վաղարշապատ, ոսկի ուռամբ բախեց, դղրդեցրեց երկիրը և բացւած երկնքի տակ ու լուսաւորող աղբիւրի վրայ Կաթողիկէ ամենաառաջին եկեղեցին հաստատեց[2], այն է՝ Ս. Էջմիածինը, «որ հաւաքում է բովանդակ ժողովը հաւատքի միաբանութեան մէջ իր թևերի ներքոյ»[40*]: **Այդտեղ Քրիստոս հաստատեց նաև մեծ քահանայապետութիւնը ժողովուրդների մէջ Քրիստոսի պատկերի մարմնացումով հիմք ունենալով Աստուածորդու քահանայական օծութեան օրինակը[3]: Այդտեղ հայերը վերածնւելով իբրև լուսամիտ որդիք՝ պէտք է վայելեն բացւած երկնքի քրիստոսատուր շնորհները** և «Երկիրը երկնքի նման է լինելու, հրեշտակների և մարդկանց խառնուրդ, ըստ քրիստոսեան վճռի ու յայտնութեան»[4]: «Որովհետև Սիոնից պիտի դուրս գան

[1] «Մի՞թէ փոքր էր պատարագը, որի հոգով լցւեցին երկինքն ու երկիրը, և կենդանացան Հայկազեան տան զարմերն ու զաւակները՝ Արշակունիներն ու Պահլաւունիները: Մի՞թէ փոքր էր որդիների պարծենալը այդպիսի հօրով, որպէսզի նրա շաւղով գնան: Մի՞թէ թոյլ տւեց մէկ ուրիշ հօր՝ աւելի վեհ լինել իրենից, մի՞թէ սակաւ և չնչին չարչարանքով հայր եղաւ և որդիների բազմութիւնը առաջնորդեց փառքի...: Գրիգորիոս Հայոց Լուսաւորիչ, որովհետև ուրիշ ազգի առաջնորդ այդպիսի անուն՝ Լուսաւորիչ՝ չունի...» Վարդան վարդ., ճառ, (Սուփ., Ե 60, 78):
[2] Բուզանդ, 32:
[3] Ագաթ. ՃԲ, [745, 753], հմմտ. Փարպ. 78, 87, 116 և Շահապ. ս. ժող. կանոնք[41*]:
[4] Տե՛ս նաև Սիմէոն Կաթողիկոսի ճառերը. «Ի գովեստ Էջմիածնի եւ կաթողիկոսութեան» (գրչագիր). «Եկէք ուրեմն, ով դուք, որ նստած էք խաւարում, Գրիգորիոս Լուսաւորչի մօտ, որպէսզի ձեզ լուսատու լինի: Թող գան նաև հոգով և մարմնով աղքատները հարուստ և առատաձեռն գանձապահ Գրիգորիոսի մօտ, որպէսզի ընդունեն անուազելի բարիքը: Թող գան նաև նրանք, ովքեր ցանկանում են գեղեցկաբոյր վարդ Գրիգորիոսի մօտ [եղած] անուշահոտ ծաղիկներին, որպէսզի լցւեն անմահական Հոգով: Թող գան նաև Աստծուց հեռացածները միաւորող Գրիգորիոսի մօտ, որպէսզի սա շաղկապի Աստծու սիրուն ու երկիւղին: Թող սրան ու սրա սրբասնեալ ոտքերի սրունքներին դիմեն բոլոր նրանք, ովքեր շեղւած են ճշմարիտ հաւատքից, որպէսզի սա վերստին հաստատի հաւատքի վէմի՝ Քրիստոսի վրայ»: Խօսելով նաև Ս. Լուսաւորչի տեսիլքի մասին՝ Քրիստոսի նկարագրող էջը համեմատում է Նրա առաջին գալստեան հետ. «Արդ, սրանից մեծ ողորմութիւն և յատկապէս բարերարութիւն կա՞յ, որ Աստուած արեց մասնաւորապէս մեր Հայոց ազգի համար»: «Այդ արեգակնաշնորհ լոյսից յօրինւեց և կազմւեց ամենագեղեցիկ այս հրաշալի խորանը, հաւատքի մայրը, պարծանքի վայրը, ամենագովելի այս տաճարի մասին եմ ասում՝ Սուրբ Էջմիածնի, սրա մասին եմ ասում, որի անունը սքանչելի է, ձևն՝ անհամեմատելի և բովանդակ աշխարհում հնագոյնն ու աննմանը»:

օրէնքները և Տիրոջ խօսքը՝ Երուսաղէմից» (Միք., Դ 2). նոյնը եղաւ և հայերի մէջ[1]:

Այսպիսով Հայաստ. Ս. Եկեղեցին ու նրա քահանայապետութիւնը հիմնադրւեց ս. Թադէոս ու ս. Բարդուղիմէոս առաքեալների նահատակութեամբ և հաստատւեց Միածնի իջմամբ: Եւ երբ Հայրապետական Աթոռը Ս. Գրիգոր երկրորդ Լուսաւորչի յաջորդների քաղաքական աննպաստ դրութեան պատճառով շրջեց Հայաստանը մէկ դէպի Ս. Թադէոս առաքեալի և մէկ դէպի Ս. Բարդուղիմէոս վկայարանը, **իր արժանի դիրքը պահեց Սսում և Աղթամարում և Փոքր Կաթողիկոսներ թողեց իբրև տեղակալ համատարած Հայրապետական Աթոռի, մինչև որ բնականաբար Միածնի հաստատած Աթոռը գերագահ և նախամեծար դիրք ստացաւ արժանապէս[2]:**

Արդ, հայոց առաքեալների յաջորդութիւնը Հայաստանում ամփոփւեց Ս. Գրիգոր Լուսաւորչի մէջ և Միածինն էլ իջնելով՝ նրան պատւիրեց. «Զգոյշ եղիր այդ աւանդի վրայ, որ քեզ վստահւեց Տիրոջից՝ Յիսուս Քրիստոսից»[3]: **Ուստի և նրա սուրբ Աթոռի վրայ է հաստատւած Ամենայն Հայոց Հայրապետութիւնը,** որի իշխանութիւնը շնորհների և իրաւունքի լրումն է ամբողջ Հայաստանեայց ս. Եկեղեցում և որի իշխանութիւնն արտայայտւում է Ս. Գրիգոր Լուսաւորչի ս. Աջով, ըստ այնմ թէ՝ «Ահաւասիկ Աստուածութեան շնորհները

[1] Հմմտ. Սիմէոն Կաթողիկոս. անդ. «Ի՞նչ ելաք տեսնել այս երկրում և կամ ի՞նչ էք կամենում իմանալ մեր մօր՝ Ս. Էջմիածնի մասին. [կարծում էք] մարդու ձեռքով կառուցւած տո՞ւն է. ո՛չ. կամ մի հասարակ եկեղեցի է՝ կառուցւած մարդկային ճարտարութեամբ և երկրային նիւթով. ո՛չ: Եւ կամ ի՞նչ ելաք տեսնել ու իմանալ Վաղարշապատի դաշտում. մի գեղեցիկ շինա՞ծք և կամ ըստ մարմնական ու երևացող տեսութեան մի ազնիւ նկա՞ր, ո՛չ. ահաւասիկ, այդպիսիք աշխարհից են, և աշխարհից հնարակերտւած և աշխարհական բաներով պճնւած, այդ պատճառով և սոսկ մարմնական ինքնաբաւութեամբ առաջնորդւող և համաձայն մարմնական տեսութեան գովաբանւող: Արդ, ի՞նչ եկաք տեսնել և իմանալ. հոգևոր և աստուածային մի կերտւածք և կամ երկրի վրայ երևացող խորհրդաւոր մի երկի՞նք, այո՛, ձեզ ասեմ՝ առաւել քան մի երկինք...: Էջմիածինը փոքր տաճար է, բայց երկնքից աւելի մեծ: Էջմիածինը եկեղեցիների զարդն է, Հայաստանցիների պարծանքը, պայծառագոյն արեգակ է և մեր Արամեան տան լուսաւորողը: Էջմիածինը հոգևոր ծնող է, շնորհատու մայր, իմաստութեան համալսարան, գիտունների վարժարան և քարոզիչների առարկայ»:
[2] Տե՛ս և իմ Հայաստ. Եկեղ. Ս. Կարգը 1897, էջ 122, հմմտ. Մխիթ. Սկևռացի. անդ. 67, Միք. Ասորի պատմ., էջ 32, Ստեփ. Օրբ., Ողբ ի Ս. Կաթուղիկէ, Թիֆլիս, 1885, Թովմ. Մեծոփեցու Ցիշատակարանը, Թիֆլիս, 1892:
[3] Ագաթ., էջ 439, 145:

քահանայապետութեան ձեռքով պէտք է հասնի, որի ձեռքը բխելու է մկրտութեան աղբիւր, բազում մեղաւորների քաւութեան թողութիւն»[1]:

Հայաստ. ս. Եկեղեցու իշխանութիւնը հոգևոր սուրբ կարգ է և մերժում է որևիցէ «նիւրապետութիւն», որ բովանդակում է իր մէջ մարմնաւոր կամ աշխարհային իշխանութեան նմանութիւն և սկզբունք: Ըստ որում այդ ս. Կարգին ստորադրւում է իւրաքանչիւր հաւատացող հայ ազատապէս և ինքնաճանաչութեան համոզմունքով՝ առանց ենթարկւելու որևիցէ արտաքին հանգամանքների: Հայոց եկեղեցու իշխանութիւնը ևս նոյն քրիստոնէական հոգևոր սկզբունքով է հովւում իրեն հաւատացած հօտը և սոյն հոգևոր շրջանում ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեալ Տէր է[2]: Սակայն նա ևս իր գործունէութեան և իշխանութեան մէջ սահմանափակւում է առաքելական քարոզութեամբ և Հայաստ. ս. Եկեղեցու լրմամբ, այն է՝ Ազգային Եկեղեցական ժողովով[3], այդպիսի ժողովների կանոնադրութիւններով և Ս. Գրիգոր Լուսաւորչի[4]

[1] Տեսիլ Ս. Գրիգոր Լուսաւորչի անդ. 438, հմմտ. Փարպ. 160, 179-180, 387, 539. «Գրիգորիոսը «արթուն» կամ «հսկող» է կոչւել իր աւազանից՝ արթուն և սիրով ու հովւական խօսքով, իր բարբառումն անդադար հոգևորին ուղղելով, բացորոշ կերպով վանում էր անմարմին գազանին: Քանզի լինելով քաջ Հովւի քաջ ու ճշմարիտ աշակերտը՝ այժմ աղօթքն ուղղում է առ Քրիստոս և մերօրեայ ուսմունքների սխալներն [ուղղում] ձայնով ու գաւազանով՝ երբեմն կանչելով քաղցր ձայնով և երբեմն սաստելով՝ երկու [պարագայում էլ առաջնորդւելով Սուրբ] Հոգու խօսքերով» Յովհ. Սարկ. վարդ., ճառ 35:
Ս. Գրիգորը համապատիւ է մարգարէներին, զուգահաւասար՝ առաքեալներին, համանման՝ աստուածազգեաց սուրբ հայրերին: Այդ պատճառով հայր ենք անւանում, որովհետև մեզ ծնեց ճշմարտութեան խօսքով և սնեց Իր անբաղդատելի առատ գրութեամբ և աճեցրեց ուղղափառ հաւատքի դաւանութեամբ, որովհետև ինչպէս մէկ է մեր Հայրը, որ բովանդակ բարիքը դրոշմեց Իր անձի մէջ, այդպէս էլ մէկ է միակրօն հայոց ազգը և բոլորը գերազանց պարգևներով են մեծարւում» Յովհ. Սարկաւագ, Ճառի Ս. Գրիգոր Լուսաւորիչն, էջ 101-102:
[2] Տե՛ս և Ս. Գր. Տաթ. Հարց. Պրակ. Ե, Թ, Ժ 537, 546:
[3] Ընդհան., էջ 201, 220:
[4] «Որ մեր ծնողը եղաւ, համաձայն Աւետարանի և մեզ համար բացեց ճշմարիտ աստուածգիտութեան լոյսի դուռը, որի ճգնողական, անարատ աղօթքով ուղիղ մնաց մեր հաւատքը և ոչ մի կողմից հերձւածողների բռնութիւնը չյաղթեց. ո՛չ հայրապետը կարողացաւ մի նորաձև կարգ դնել, ո՛չ թագաւորը և ոչ էլ մէկի օտար ձայնը լսեցինք: Փոքր փարախում սակաւ է մեր հաւատքը, բայց այն անփոխելի է մնացել գայլերի համար, համաձայն երանելի Աստուածաբանի: Որովհետև մենք ինչ որ լսեցինք և սովորեցինք մեր Լուսաւորչից նոյնը պահեցինք և պահում ենք հաստատուն և ուղղափառ հաւատով... և մեզնից ոչինչ չաւելացրինք...» Ստ. Սիւնեցի, «Թուղթ առ պատրիարքն Անտիոքայ»[42*]:
«Մեր Լուսաւորիչ սուրբ Գրիգորիոսը օգտակար խրատներից ոչ մի բան թերի չթողեց, որ մեզ ցոյց չտար, թէ ինչպէս կարող ենք փրկւել տանջանքներից և անվախճան կեանքի

ու մեր եկեղեցում տօնւող սրբագումար Հայրապետների ու վարդապետների ուսուցմամբ ու կարգադրութիւններով, որոնք ամփոփւած են մեր ծիսարաններում և առհասարակ մեր եկեղեցական գրքերում, կանոնագրքում և վարդապետական գրւածքներում: Ինչպիսի իշխանութիւն ևս լինի Հայաստանեայց ս. Եկեղեցում, նա չի կարող իր գործունէութեամբ նոր վարդապետութիւն քարոզել[1] կամ նոր հիմք դնել նոր ընթացքի համար, այլ նա պէտք է ամեն ինչ կառուցի «առաքեալների ու մարգարէների հիմքի վրայ», ըստ մեր անզուգական նախնեաց պարզ ու վճիտ հաստատութեան, որ միշտ նոր է ու նոր կը մնայ[2]: Ուստի և նրանց սուրբ

ժառանգորդը լինել: Արդ, եղբայրներ, մեզ անհրաժեշտ է նրան ընդունել որպէս առաքեալի և պատւել մագարէների հետ, և անձկալի սրտով սիրել որպէս նահատակի և իբրև աշակերտներ ունկնդիր լինել [նրան որպէս] վարդապետի և հրամայւածից աւելին չիմանալ նրանից ի կորուստ մեր անձերի և բազում ուրիշների, որովհետև նրա խօսքերը կենդանի են, և այսօր ովքեր կամենան սիրով լսել և հաւատով ընդունել՝ բազում շահ կը գտնեն նրա խօսքերից: Որովհետև և մեր Տէրը նրա սիրոյ պատճառով մինչև օրս և յաւիտեանս խնամք է տանում մեզ, և նրա աղօթքով անդրդւելի պահում Հայաստան աշխարհը հերետիկոսների դառն հերձւածներից». Գրիգոր Սարկաւագապետ, ճառ (Սոփ., Դ 156):
[1] Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախքան օծումը հանդիսաւորապէս երդում է. «Ապաւինելով Բարձրեալի շնորհների օգնութեանը՝ խոստանում և ուխտում եմ Ս. Սեղանի և աստուածընկալ ս. նշանների առջև՝ յանձն եմ առնում Հայաստանեայց եկեղեցու եպիսկոպոսապետութեան այս պաշտօնը և բոլորապտուղ նիւրումով իմ անձը ընծայել աստուածադիր օրէնքների և կաթողիկոսական պարտքի անվթար կատարմանը և Հայոց ազգիս առաջնորդել ըստ քրիստոսական կրօնի ուղղափառ վարդապետութեան, ըստ մեր եկեղեցու դաւանութեան, ըստ հայրապետական կարգերի և աստուածպաշտութեան կանոնների՝ ամեն ինչում անսխալ և անխոտոր ընթանալով ս. Թադէոս և ս. Բարդուղիմէոս առաքեալների արժանաժառանգ յաջորդների լուսաշաւիղ հետքերով և մեր ս. հօր երկրորդ Լուսաւորիչ Գրիգորի՝ Հայաստանեայց Մայր Աթոռի համար [սահմանած] իրաւունքների զգուշաւոր պահպանութեամբ» (Մաշտոց)[43*]: Տե՛ս և մանրամասն վկայութիւններ ս. Հայրապետների ու վարդապետների գրւածներից իմ աշխատութեանս մէջ «Հայաստ. Եկ. Սուրբ Կարգը», էջ 21-70: Հմմտ. և Առաքելական ԺԹ կանոնը. «Առաքեալները կարգեցին և հաստատութեամբ տւեցին, թէ քահանայապետը, երէցը կամ եկեղեցու որևէ առաջնորդ իրաւունք չունի առանց իր պաշտօնակիցների որևէ բան անել եկեղեցու մէջ, բայց միայն բոլորի կամքով և միաբանութեամբ անեն այն, ինչ որ կամենում են, որպէսզի իրենց մէջ տրտմութիւններ և բաժանումներ չլինեն»[44*]: Ուստի տարին երեք անգամ մեր ս. հայրապետները ժողով էին անում եկեղեցու վիճակին լաւ ծանօթանալու համար:
[2] «Եկեղեցիները արքաների ընծաներ չեն և ոչ էլ ճարտարութեան արւեստ, ոչ իմաստունների գիւտեր, ոչ զինւորների քաջութեան աւար, ոչ դևերի պատիր խաբէութիւններ, նաև առհասարակ երկրաւորների մասին ինչ էլ որ ասես՝ կամ վեհ բաների կամ վատթարների՝ նրանցից և ոչ մէկը եկեղեցուն չի պատշաճի: Այլ մեծ Աստծու շնորհն են...: Նրա հիմքերը դրւած են հաստատուն վէմի վրայ, ոչ ստորինները կարող են շարժել և ոչ էլ վերինները՝ ցնցել: Եւ նրան, որին երկինքն ու երկիրը չի դողդողեցնում, թող

սկզբունքն է եղել. «Մեզ ցոյց տանք իբրև Քրիստոսի մէկ մարմին . մէկ հոգի՝ յիշելով սուրբ առաքեալներին, սուրբ եկեղեցու քարոզը, ուր մէկ սիրտ կար և մէկ հոգի»[1]:♠

ԼԴ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ

Քրիստոս Իր անզուգական զոհով քաւեց մարդկութեան մեղքերը . Իր փառաւոր յարութեամբ կեանք շնորհեց իր հաւատացեալներին: Սակայն մարդիկ էլ չեն կարող վայելել այդ շնորհները, եթէ չկարողանան ընդունակ դառնալ դրանց. Քրիստոս տալիս է ընդունողին, իսկ մարդ պէտք է կարողանայ ընդունել այդ շնորհներն ու իրացնել:

Փրկութիւնը իրացնելու համար մարդ պէտք է ունենայ գործունեայ հաւատք, այսինքն՝ պէտք է ուրախութեամբ և բովանդակ մտքով, սրտով և էութեամբ ընդունի, սիրի ու նիւրի Քրիստոսին. «որովհետև առանց հաւատքի ամեն ինչ անվաւեր է ու նման է աւազաշէն տան, որ չունի հաստատութիւն, քանզի հաւատքն ամեն տեսակ բարեգործութեան հիմքն է»[2]: Բայց որովհետև այդպիսի անձնուիրութիւնը պէտք է կատարեալ համոզմունքով զօրացած լինի, ուստի պէտք է ձեռք բերել կենդանի հաւատքի պայծառութիւն ու հաստատութիւն: Եւ ահա ինչպէս որ Քրիստոս ժողովեց իր հաւատացեալներին իր խօսքի ուժով, նախ ուսուցանեց և ապա փրկագործեց, այդպէս էլ մարդ հաւատք ձեռք բերելու և փրկութեան հասնելու համար պէտք է լսի, ըմբռնի և իր մտածողութեան նիւթ դարձնի Քրիստոսի Աւետարանը: Այդ է պատճառը, որ Քրիստոս հրամայեց իր

մարդկանցից և ոչ մէկը չհամարձակւի յաղթել». Սուրբ հայրեր, տե՛ս Եղիշէ, էջ 36, 79, Փարպ. Պատմութ. էջ 133:

[1] «Քո գերակայ կայանում, որ նկատելի է բարձրահայեաց բանականներիս, հրեղինակերպ բազմայոյլ (հրեշտակաց) դասերի մէջ բազմազան լոյսով լրալիր տեսնում ենք արևելեան քաջ և մեծ նահատակին, աշխարհը լուսաւորող լուսերանգ և զարթաշատ աստղին, բոլորից առաւել, յաւէտ գերազանց փառքով փայլող Գրիգորիոսին, որի քաղցահայեաց լոյսին ենք փարւում սրբի յիշատակի օրը», Յովհ. սարկաւագ, անդ. էջ 86. Հմմտ. Մաշտոցի թուղթը. Յովհ. Կաթողիկոս. [Դրասխ] Պատմ. 83-87:

[2] Մեկն. ժամ. 392, Յովհ., ԺԴ 21-24:

աշակերտներին քարոզել Աւետարանը բոլոր մարդկանց, ըստ որում «հաւատքը լսելուց է և լսածը՝ Քրիստոսի խօսքից» (Հռովմ. Ժ 17), մանաւանդ, որ մարդկանց մէջ ընդհանրապէս տարբերութիւն չկայ Աստծու առաջ, այլ «բոլորը ծնունդով հաւասարապէս մտնում են այս երկիր և մահով դուրս են գալիս այստեղից», ասում է Ներսէս Շնորհալին[1]:

Սակայն «ինչպէս տեսնում ենք մեր բնութեան մէջ մեղքի հին ախտերը թոյլ չեն տալիս, որպէսզի նոր կեանքի եկամուտ [տարրերը] փութով ներս թափանցեցին»[2]: Ուստի և փրկութիւնն ինչպէս որ տրուած է պատմականապէս, մարդ ևս պէտք է պատմութեան նոյն ճանապարհով մօտենայ նրան, այսինքն՝ բնական և ազատակամ զարգացմամբ: Այս ընթացքով անհատը ձգտում է մի բաձր զօրութեան՝ զգայարաններ դառնալ, նրա պէս զօրանալ և իր փրկութիւնը ձեռք բերել[3]: Մի կողմից մարդն է կռւում աշխարհի հակառակ ներգործութեան դէմ, ելնում է խաւարից և հոգու աղքատութեամբ, քաղց ու ծարաւով (Մատթ., Ե 6), փափագում աստուածային շնորհին, իսկ միւս կողմից Աստծու ողորմածութիւնը հանգչում է նրա վրայ ու իր շնորհները պարգևում: Մարդը լսում է Աստծու ձայնը և ոչ թէ փակում է իր սրտի ճանապարհը Աստծու առաջ, այլ բաց է անում, պատրաստում և ուղղում, ըստ այնմ թէ՝ «Մերձեցէք Աստծուն և կը մերձենայ ձեզ»: Եւ որովհետև երբեք մարդ չի կարող կատարելապէս ընդունակ դառնալ աստուածային շնորհներին, ուստի Աստուած ողորմածաբար ըստ Իր իմաստութեան ընտրում է բաւարար ընդունակին և արժանացնում Իր շնորհներին[4]:

Երբ արդէն մի անգամ ելնում ենք անկեալ վիճակից և մտնում շնորհների տակ, այնուհետև Ս. Հոգին աջակցում է մեզ մեր նոր կեանքի մէջ գործունեայ լինելու համար: Այդ նոր գործունէութեան մէջ մենք աշխատում ենք ոչ իբրև ստրուկներ, այլ իբրև Աստծու ազատ որդիներ ու Քրիստոսի բարեկամներ[5], որպէսզի վերջնականապէս արժանի դառնանք յաղթական երանութեանը: Այսպիսով մարդու փրկութիւնը երեք աստիճան ունի. մէկ՝ որ նախքան շնորհների տակ մտնելը ամեն կերպ չարչարւում է ապականութեան մէջ, ուզում է ելնել, բայց

[1] Ընդհան., էջ 95:

[2] Եղիշէ, էջ 213:

[3] Յովհ., Գ 6, Փիլ., Ա 6, Բ 12:

[4] Մատթ., Գ 3, Եբր., Գ 15, Յակ., Դ 8:

[5] Յովհ., Ա 12, Հռովմ., Ը 14-16, Յովհ., ԺԵ 15:

ինքն «անձամբ անձին» չի կարողանում: Երկրորդ՝ որ ձգտելով դէպի Աստծու ողորմութիւնը, ստանում է Նրա շնորհները և նիւրւում Ս. Հոգու աջակցութեանը: Եւ երրորդ՝ որ ազատապէս ծառայում է իր կոչման իրագործմանը Ս. Հոգու շնորհով, բայց կուում է աշխարհային խոչնդոտների դէմ և միմիայն հանդերձեալ կեանքում հասնում իր կոչման յաղթանակին:

Այս երեք աստիճանում հաւատացեալը մի բնական զարգացում ունի, այնպէս որ՝ ոչ կարող է յոյսը միմիայն իր ուժերի վրայ դնել ու նպատակին հասնել և ոչ էլ առանց աշխատանքի Աստծու շնորհները վայելել: Այլ տեղ կայ, երբ նա պէտք է սպասի հունձքի հասնելուն (Մարկ., Դ 27), **բայց հասած հունձքը ջանքի է կարօտ Աստծու գործին օգտակար դառնալու համար.** ուստի և Քրիստոս պատուիրում է. «Ջանացէք մտնել նեղ դռնով», և «Խնդրեցէք և կը տրուի ձեզ, հայցեցէք և կը գտնէք և կը բացուի ձեզ»[1]: Տեղ էլ կայ, որ պէտք է փորձութիւններից զգուշանանք, ըստ այնմ թէ՝ «Արթուն մնացէք, աղօթք արէք, որպէսզի չընկնէք փորձութեան մէջ»: Իսկ այս ամենն իրագործած կը լինենք այն ժամանակ, երբ կաշխատենք անմնացորդ ջանասիրութեամբ, բայց և մեր յոյսն Աստծու ողորմութեան վրայ կը դնենք[2], ոչ թէ մեր անկատար ջանքի ու կամքի, **այլ Աստծու առատ գթութեան համեմատ կուզենանք ստանալ: Քրիստոնէական բնաւորութեան իսկական հաւասարակշռութիւնն այս է, որ պասկուում է:** Իսկ այս հաւասարակշռութիւնը խանգարուում է այն ժամանակ, երբ մարդ կամ աշխատանքն է աչքից գցում և կամ՝ Աստծու ողորմութեան յոյսն ու հաւատքը: Միմիայն նիւրեալ սեփական ուժերին և Աստծուն մոռանալ՝ նոյնքան անհամապատասխան է մարդկային կոչման, որքան՝ հեռանալ աշխատանքից ու լոկ ճգնութեան անձնատուր լինել: Սակայն նկատելի է, որ այդպիսի ծայրայեղութիւնը երկար տևել չի կարող. ըստ որում աստուածանուէր մարդու կեանքում ևս մերթ աստուածային աշխատանքի ընթացքն է գերիշխում, մերթ աստուածային շնորհների նիւրեալը. այդպէս էին Յովհաննէս և Պօղոս առաքեալները[3]. այդպէս էին և Հայաստանեայց ս. Եկեղեցու հոչակաւոր

[1] Ղուկ., ԺԳ 24, ԺԱ 9, Մատթ., Է 7:
[2] Մատթ., ԻԶ 41, Փիլ., Բ 12, Հռովմ., Թ 16, Յակ., Դ 3:
[3] Մարկ., Ժ 37, Ղուկ., Թ 24, Գաղ., Ա 17, 18, Գործք., Թ 26, 27:

գործիչները՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչը[1], Ս. Սահակը, Ս. Եղիշէն, Ս. Տրդատը, և այլք, որոնք երբեմն ճգնական կեանքին նիւրելով զօրանում էին և առաւել մեծ ուժով ու ոգևորութեամբ գործում աստուածային անդաստանի մէջ կամ ներգործում ժողովրդի վրայ իրենց անձնազոհութեամբ: Մի խօսքով՝ «որոնց կամքը շարժւում է վկայութիւններով՝ կամ դէպի բարին կամ դէպի չարը, ըստ այդմ էլ հատուցւում են»[2]:

Այսպիսով մարդու կամքը հիմնական դեր է կատարում նրա փրկութեան գործում թէ՛ նախքան փրկութիւնը, և թէ՛ փրկութեան ընթացքում[3]: Սակայն փրկութիւնը հէնց Աստծու պատկեր-մարդու կոչումն է, և ճշմարիտ ազատութիւնը միմիայն փրկութեան մէջ է. ուստի և Աստծու տնօրինութիւնն է բոլոր մարդկանց փրկութիւնը[4], որ իրագործուում է ազատապէս, այսինքն՝ մարդու կամաւոր հաւատքով միայն: **Կանչւած են ամենքը, միայն թէ ընտրուում են ընդունակներն ու հաւատացողները,** որոնք և Աստծու շնորհով աճում են և դառնում այն, ինչ որ Աստուած յարմար և պատշաճ է նկատում նրանց կարողութեանն ու ձիրքին՝ բնական զարգացմամբ[5]: Քրիստոս կանչում է մեղքով բռնուածներին, որոնք յոգնել են իրենց վիճակից դուրս գալու ճիգերից (Մատթ., ԺԱ 28). ով կը կամենայ՝ կը դառնայ ու կը փրկուի, իսկ չդարձողը դատապարտւում է իր վիճակում[6], քանի որ իր կոչումը չի իրագործում, չի դառնում այն, ինչ որ ստեղծուած է լինելու և չի արձագանքում Աստծու օգնութեան ձայնին՝ դէպի լոյս դիմելու համար: Այդպիսիք

[1] Պատմութիւնն ասում է, որ Ս. Գր. Լուսաւորիչը Հայաստանը լուսաւորելուց և 430-ից աւելի եպիսկոպոսներ կարգելով իր դարձի բերած երկրներում հաւասարապէս, գնաց Գլակայ վանքը, սակայն այնտեղ թոյլ չտուին, ասելով. «Վեր կաց գնայ մի ուրիշ բնակավայր, որպէսզի չափից աւելի չփառաւորուես մարդկանցից»: Նա էլ գնաց Սեպուհ լեռը, ճգնեց ու երբեմն-երբեմն իջաւ իր եկեղեցին վերադիտելու և Ս. Արիստակէսին առաջնոդելու համար: Հայոց դարձից 17 տարի յետոյ քրիստոնէութիւնը ընդունեցին եւ Յոյները, իսկ երբ Նիկիոյ ժողովը եղաւ, Ս. Գրիգորը ուղարկեց Ս. Արիստակէսին և իր հօրաքեռորդի ս. Յակոբ Մծբնայ հայրապետին այնտեղ: «Եւ դարձեալ այնտեղից ս. Արիստակէսը բերեց մեր հաւատքի դաւանութեան սահմանումը, ինչը մեծ ուրախութեամբ ընդունեց մեր Լուսաւորիչ ս. Գրիգորը և իր խօսքն այսպէս կնքեց. «Իսկ մենք փառաւորելու ենք...»: Եւ դրանից յետոյ մարդկանց այլևս չերևաց, այլ մեծ ճգնութեամբ շրջում էր Դարանաղեաց լեռան վրայ՝ մնալով մի քարայրի մէջ»[45*]:
[2] Յաճախ., Ե 355:
[3] Յաճախ., Ի 490, 495:
[4] Յովհ., Գ 16, Ա Տիմ., Բ 4:
[5] Մատթ., ԺԳ 3-9, Մարկ., Դ 26-28, Հռովմ., Թ 21:
[6] Մարկ., ԺԶ 16, Ղուկ., ԺԴ 17, Յովհ., Ե 40, Մատթ., ԻԳ 37, Գործք., Թ 5, 6:

դեռևս պէտք է ապականութեան մէջ իրենց կատարեալ ընթացքն անցնեն, որոնք և բացասական կերպով ևս Աստծու նախախնամութեանը ծառայելով՝ ի վերջոյ կուներնան դարձի ճգնաժամը[1]:

Ինչպէս անհատը, այնպէս էլ ամբողջ ազգը կարող է իր պատմական կեանքով ու բնական վիճակով և ձիրքով աւելի շուտ ընդունակ դառնալ շնորհների, Աստծու ձայնին արձագանք տալ և Ս. Հոգու զգայարանը լինել: Այդպիսի ազգն անշուշտ իր հոգևոր հարստութիւններով և պատմական կեանքի բարեյաջող ընթացքով առանձնայատուկ կերպով վայելել է աստուածային նախախնամութիւնը և ուրեմն բնականապէս դիմել է դէպի փրկութիւն: Մինչդեռ ուրիշները զուրկ են այդ բոլոր հանգամանքներից, իրենց լոկ աշխարհային ձգտումների պատճառով[2]: Այդպիսիք ևս դեռ կարօտ կը լինեն ժամանակի, որ հասունանան աշխարհայինի մէջ կատարելագործելով, ունենան իրենց ժամանակի լրումը և ապա զատորոշուեն աշխարհի ընթացքից և Աստծու ժողովուրդը դառնան[3]: Մինչև որ մի ազգ իր բնական ընթացքով չգայ ու չհասունանայ, նա չի կարող զօրաւոր լինել աստուածային նոր կեանքի համար, ուստի և չի կարող փրկութեան մէջ թեակոխել. նա դեռ գտնուում է Աստծու ընդհանուր նախախնամութեան ներքոյ, կամ այն նախապատրաստութիւնն է անցնում, որ կարևոր էր մինչև Քրիստոսի գալն իսկ: Ոչ մի ժողովուրդ չի կարող Քրիստոսին ընդունել, մինչև որ նա այդ նախապատրաստութիւնը չանցնի և այնքան չհասունանայ, մինչև որ կարողանայ իր լեզուով լսել Աստծու խօսքը, իր լեզուով պաշտել Նրան և իր հոգով ու սրտով նուիրել Նրան ու Նրա գործը կատարել, այսինքն՝ խմոր լինել ճշմարտութեան աճման և միւս ժողովուրդների փրկութեան համար: Իսկ այդպիսի ժամանակ ունի ամեն մի ժողովուրդ. բաւական է, որ մի ժողովուրդ պատմական ազգ է դառնում՝ նրա ժամանակը լրացած է[4] և նա քրիստոնեայ է դառնում ու սկսում իր յատուկ դերը կամ կոչումը կատարել Աստծու արքայութեան մէջ անհատների փրկութեան համար: Ընտրեալ ազգն աշխատում է իր ամեն մի անդամի լուսաւորութեան համար, մանաւանդ, որ

[1] Հռովմ., Թ 22, Ժ, ԺԱ:
[2] Յովհ., Զ 44, ԺԴ 6, ԺԶ 6, 7:
[3] Հռ., Է 15-23, Ղուկ. ԺԵ, Հռ., ԺԱ 32, Ե 8, Գործք., ԺԶ 9, Մատթ., Ի 1-16:
[4] Մարկ., ԺԲ 34, Գործք., Բ 39:

աշխարհից անարգուածը բարձր է, ըստ Աստծու[1]: Եւ այդ աստուածային իմաստութիւնն անհասանելի է, որովհետև նա է միայն քննում մարդկանց սրտերը և գնահատում է նրանց, ովքեր հալածւում են աշխարհից՝ ճշմարտութեան և Աստծու անուան համար[2], և որոնք ձգտում են տալ «զկայսերն՝ կայսեր, և զԱստծոյն Աստծոյ»[3], կամենալով Աստծուն հաճոյ լինել և ոչ մարդկանց[4]. «վայ ձեզ» ասում է Քրիստոս, «երբ որ բոլոր մարդիկ լաւ խօսեն ձեր մասին, որովհետև նրանց հայրերը սուտ մարգարէներին այդպէս էին անում» (Ղուկ., Զ 26):

Հետևաբար և նա, ով իր ձիրքով, ըստ իր կեանքին և աստուածային շնորհների աւելի շուտ է Աստծու ընտրեալը դառնում՝ լինի նա անհատ, թէ ազգ՝ առաւել մեծ պարտք է ստանձնում Աստծու գործը կատարելու նաև այլոց փրկութեան համար, ըստ կարողութեան և չափի և Աստծու շնորհների վայելման[5]: Ամեն մի այդպիսի ընտրեալ պէտք է լոյս լինի լերան վրայ և աղ ամեն մի անկիւնում (Մատթ., Ե 13-16), քանզի ժամանակի լրմամբ և հանգամանքների բերմամբ նրա մէջ է աստուածային լոյսը ցոլանում, ինչպէս մի գոգաւոր ապակու մէջ, և նրա մէջ է աստուածային աղը ազդու մնում, ինչպէս հովանու տակ. բնաւորութեան գործուն հոսանքները նրա մէջ են բարեյաջող կերպով բաղադրուել: Սակայն ամենայն ոք, փրկութեան մէջ մտնելով, կարող է այդպիսին լինել իր շրջանում[6] և պարտաւոր է իր պարտքը կատարել, որպէսզի առաջինը դարձած լինելով ժամանակի մէջ, վերստին վերջինը չդառնայ: Նա պէտք է գործուն հաւատքով իր քրիստոնէական կեանքը պսակի, որ արժանանայ հանդերձեալ յաղթական փառքերի՝ անցնելով իր փրկութեան երրորդ աստիճանի ընթացքը:

Ուրեմն արձագանք տալ Աստծու կանչին, զօրանալ Ս. Հոգով, յարատևել նրա շնորհների տակ և կենդանի հաւատքով քայլել կեանքում. ահա այս է այն

[1] Մատթ., ԻԱ 31, Ա Կոր., Ա 27:
[2] Հռ., ԺԱ 33, Մատթ., Ե 11:
[3] Մատթ., ԻԲ 21, Գործք., Ե 29, Ա Թես., Բ 4: «Եկեղեցի սիրողներ, առաքեալների որդիներ, Քրիստոսի արեամբ գնուածներ, ձեր ոգիները մի ծառայեցնէք մարդկանց երկիւղին. Կայսրինը կայսրին տուէք և Աստծունը՝ Աստծուն: Աստծուն օրհնեցէք եկեղեցիներում և Տիրոջը՝ Իսրայէլի աղբիւրներում: Ահա, սիրեցէք եկեղեցին, սիրեցինք եկեղեցուց, եկեղեցին մեղմացրեց թագաւորներին, ընտելացրեց գազաններին, գայլերին գառներ դարձրեց, ձեզ պայծառացրեց, ճշմարտութեան թշնամիներին ամաչեցրեց» տե՛ս Փարպ. 551:
[4] Հռ., Ը 8, ԺԲ 1, ԺԵ 3, Գաղ., Ա 10, Փարպ., 139, 149, 230, 551, 552:
[5] Գաղ., Ա 15, Հռ., Թ 20:
[6] Մատթ., ԻԵ 15, Բ Պետ., Ա 10:

ուղիղ ճանապարհը, որ տանում է մեզ Քրիստոսով դէպի Նրա փառքի ժառանգումը[1]: «Արդարև, ով հաստատուած է Քրիստոսի սիրոյ մէջ և պահում է նրա պատուիրանները՝ նա տնապէս հոգ է տանում աշխարհի խաղաղութեանն ու եկեղեցու զօրութեանը, անձն ու ընկերների փրկութեան համար, նոյնը հանապազ խնդրում է Քրիստոսից: Որովհետև ով սիրում է Աստծուն՝ կամենում է, որ իւրաքանչիւր ոք Նրա նման լինի»[2]:

Հռոմէական եկեղեցին ընդունելով, որ նախամարդն իր մեղանչումով միմիայն զրկուել է «գերբնական շնորհաց ձիրքից» և դրանով միմիայն խանգարուել է մարմնի և հոգու յարաբերութիւնը՝ փրկութեան իրացման մէջ նմանապէս առաջնորդւում է Պելագեան մոլորութեամբ: Նրա ասելով անկեալ մարդուն մնում է նախ ջնջել մեղքն Աստծու առաջ կամ գնել, և երկրորդ՝ վերստին ստանալ այդ ձիրքը, որ վերականգնի առաջւայ վիճակը: Ըստ նրա վարդապետութեան՝ այդ երկուսն էլ կատարեց Քրիստոս, ուստի և մարդկանց մնում է իրացնել Քրիստոսի վաստակներն ու ս. խորհուրդներով օգտուել գերբնական շնորհքից: Ամեն մարդ կարող է կատարել այս ինքնուրոյնաբար բարի գործեր անելով, որոնցից առաջ է գալիս և հաւատքը, և այսպիսով ձեռք կը բերի կորցրած շնորհքը կամ մարդ վերստին արժանի կը դառնայ իր առաջւայ գթութեանը: Սակայն մարդ, կատարելով Աստծու պատուիրանները, կարժանանայ այդպիսի փրկութեան և միևնոյն ժամանակ կարող է աւելի շատ բարիքներ էլ գործել պահքով, աղօթքով, ողորմութեամբ և այլն (առհասարակ ըստ կղերական որոշման), ինչը աւելին է, քան պահանջւում է, և այդ կը լինի յաւելեալ վաստակ (opera supereroqationis): Այդպէս գործողները բարձր կատարելութեան հասած սրբեր ու երանելիներ են, որոնց յաւելեալ, այսինքն՝ Աստծու և իրենց համար անկարևոր վաստակներից կազմւում է «եկեղեցական գանձարան վաստակոց» (thesaurus meritorum), որոնցից Հռոմի քահանայապետը կարող է բաժին հանել մեղաւոր մարդկանց, ուստի և ծախում է թողութեան թղթեր: Մարդու այդ գործերով էլ առաջնորդւում է ճիզուիտական բարոյաբանութիւնը, որ նշանաւոր է մանաւանդ հինգ մոլորութիւններով, որոնք են.

[1] Մատթ., Է 2, ԹԵ 35, Հռ., Բ 6, Բ Կոր., Ե 10, Յակ., Բ 20, Ընդհանր. 47:
[2] Մեկնութիւն ժամագրոց, էջ 343:

1- Չափով ու կշռով հաշուարարութիւնը. ինչպէս օրինակ՝ որքա՞ն, տարին քանի՞ անգամ, որտե՞ղ և ինչպէ՞ս պէտք է սիրել Աստծուն, կամ այս ու այն բարութիւնն անել և այլն:

2- Ապաշխարութեան անկարօտ մեղքերի տեսութիւն, որով ներելի են համարում որոշ մեղքեր և անապաշխարելի, ինչպէս օրինակ՝. ծուլութիւնը, շատակերութիւնը, որոշ չափի դրամի գողութիւնը, և այլն:

3- Երկդիմութեամբ ու երկմտութեամբ խաբէութեան ներելիութիւն, այսինքն՝ որ կարելի է սուտ չասել, բայց երկմտութեամբ ու երկդիմութեամբ խօսել, և այլն:

4- «Նպատակն արդարացնում է միջոցը», այսինքն՝ բարի նպատակի համար ամենայն չար միջոց ներելի է:

5- Ճշմարտանմանութեան օրէնք, որով ամեն մի յանցանքի մէջ սոփեստօրէն մի ճշմարտութիւն որոնելով՝ արդարացնում են մեղաւորին:

Այս ամենի համեմատ Հռոմէական եկեղեցին ԺԲ դարից սկսած ունի մի տեսակ երկրաւոր ատեան, որտեղ իր վաստակաւորների շարքից առաւել աչքի ընկնողները դասւում են սրբերի և երանելիների շարքը ու դառնում պաշտելի (canmisition)[1]: Ըստ այսմ առաջարկւում է սրբացնել շատ հին վախճանուածների և Հռոմի քահանայապետը առաջարկուածի դէմ «սատանայի փաստաբանի» առարկութիւնը լսելուց յետոյ, առաջ բերուած նրա արտակարգ հրաշքների և առաքինութիւնների հիման վրայ, սուրբ է անուանում և ամբողջ եկեղեցում պաշտելի է յայտարարում: Սրբացման արժանանալու առաջին աստիճանն է «երանացումը», որով կանոնւում է, թէ առաջարկուածը պաշտելի է ոչ թէ ամբողջ եկեղեցում, այլ մի կողմում ու գաւառում: Զարմանալի է միայն, որ «երանելի» կանոնուածը յետոյ նորից առաջարկւում է սրբացման համար, երբ ներկայացնում են նրա կեանքից նորանոր առաքինութիւնների վերաբերեալ տեղեկութիւններ այն քահանայապետին, որ առաջ միայն երանութեան էր արժանացրել տուեալ անձին:

Ուրեմն մարդ ինքն է փրկութիւն վաստակում իր գործերով, մարդ ինքը վերացնում է իր և Աստծու միջև առկայ գրեթէ իրաւաբանական հաշիւները. մարդ մինչև անգամ աւելի գործեր կարող է կատարել, քան Աստուած կարողանում է

[1] Տե՛ս Մխիթար Սկևռացի, էջ 23:

պահանջել, կամ թէ մարդ կարող է կատարեալ դառնալ և մի փոքր էլ աւելի արժանիքներ գանձել այլոց համար. վերջապէս մարդ կարող է կատարեալ դառնալ և մեղաւորը ոչ թէ Քրիստոսով է փրկւում, այլ՝ ուրիշի աւելորդ վաստակով և մանաւանդ Հռոմի քահանայապետի դատով ու հրամանով: Այս հիմամբ Հռոմի եկեղեցին մոլորութեան մէջ է ընկնում վարդապետելով, որ իր պաշտօնեաները կղեր՝ այսինքն ժառանգաւորներ են, իսկ ժողովուրդը մի տեսակ կցւածք, երկրաւոր ողորմելիներ են, որոնք լոկ նրանց փշրանքներին են կարօտ: Հռոմի քահանայապետը, դնելով իր գլխին ակնազարդ եռակի խոյր, որի վերև ամրացւած է մի ոսկի երկրագունդ, քարոզում է, թէ իրենն է իրաւունքը երկնքում՝ մարդկանց սուրբ կոչելու, իրենն է իրաւունքը նաև քաւարանում՝ նրա տանջանքներից թողութեան թղթերով ազատելու, և իրենն է իրաւունքը երկրի վրայ, որ արտայայտում է բանադրանքով. ինքն արեգակն է և իրենից են լոյս ստանում նոյնիսկ թագաւորները, որոնք լուսին են: Եկեղեցին կղերն է և Քրիստոսի՝ իբրև թէ հաստատած՝ երկու սրերը (Ղուկ., ԻԲ 38) ներկայացնում են եկեղեցական ու պետական իշխանութիւնը. եկեղեցին հոգևորն է գործադրում, իսկ մարմնաւորը, եկեղեցու համար է կիրարկւում:

Բողոքականներն էլ, որոնք միշտ առաջնորդւել են Հռոմէական եկեղեցուն ընդդիմադիր սկզբունքով, բոլորովին հակառակն են վարդապետում (թերևս յենւելով Օգոստինոսի մի թիւր կարծիքի վրայ): Նրանք ասում են. մարդ անընդունակ է աստուածային շնորհներին գործակցելու, այլ Աստծուց մխիթարւում և արդար է հռչակւում, երբ նա լսում է Աստծու խօսքը և ընդունում Ս. Հոգուն: Նորոգւած քրիստոնեան, անկարող լինելով իր փրկութեան համար գործակցել Աստծուն՝ պէտք է շնորհակալութեան և հնազանդութեան զգացմունքով բարին գործի, միայն թէ այդ գործերը ոչ մի նշանակութիւն չունեն նրա փրկութեան համար, ըստ որում դրանք չեն յիշւելու յաւիտենական փրկութեան արժանանալու համար: Յաւիտենական կեանքը ոչ թէ բարեգործութեամբ է տրւում, այլ՝ միմիայն հաւատքով:

Ըստ այսմ բողոքականները մերժելով Հռոմ. եկեղեցու արտաքնայարդար փրկագործութիւնը, ձգտում են այն դարձնել ներքին իրողութիւն, սակայն չկարողանալով ճշմարտութեան մէջ մնալ, ընկնում են հակառակ ծայրայեղութեան մէջ: Այս ուսմունքը հակասութիւնների մէջ է ընկնում, երբ

հաւաստում է, թէ մարդ չի կարող իր փրկութեան համար գործակցել Աստծուն, բայց և ասում է, թէ պէտք է հաւատքով միանայ Աստծու հետ, որ փրկւի. քրիստոնեան պէտք է բարի գործի, բայց և այնպէս նրա գործերը նշանակութիւն չունեն փրկութեան համար: Թերի է այս ուսմունքը, որովհետև հաւատքը դարձնում է լոկ մի մտասեւեռում՝ առանց զգացմունքի ու կամքի, այնպէս որ բաւական է քրիստոնեային մտածել Քրիստոսի մասին ու կը փրկւի նա: Ուրեմն փրկութիւնն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անձնական գիտակցութիւն, թէ ինքը փրկւել է, մի համոզունք, թէ ինքը փրկւել է ըստ գնոստիկեան սկզբունքների: Այնուհետև մարդուն մնում է ինքնաստուածացման և ինքնագոհութեան ընդարձակ ասպարէզ (այսինքն՝ հակառակ Հռոմ. եկեղեցու)՝ առանց կարիք զգալու եկեղեցու, հոգևորականութեան և ս. խորհուրդների: Այլև որովհետև մարդու համակրութիւնից կամ ուշադրութիւնից է միայն կախւած նրա փրկութիւնը, հետևաբար նա կարող է մի դիւրին ինքնակենտրոնացումով շահել փրկութիւնն իբրև մի գաղափար կամ մի գիտական տեսութիւն: Ուրեմն դարձեալ հակասութիւններ. մարդ ոչինչ է, բայց և այնպէս նրա փրկութիւնն իր մի ինքնահաճ ուշադրութիւնից է կախւած. նրա փրկութիւնը կատարւում է միտքը կենտրոնացնելով Աստծու վրայ, բայց և նա չի կարող գործակցել Աստծուն. նա դառնում է մի մեքենայ փրկագործութեան տակ, բայց և ինքը գիտէ՝ փրկւած է թէ՞ ոչ, և այլն և այլն: Այդ ամենը ծագում է նրանից, որ բողոքականների քարոզած հաւատքը իսկապէս մեռեալ է, բխում է միմիայն մտքից և ոչ թէ մարդու հոգու բոլոր կարողութիւններից կամ լրումից: Սակայն չէ՞ որ առաքեալն ասում է. «Դու հաւատո՞ւմ ես, որ մէկ է Աստուած. լաւ ես անում: Դևերն էլ են հաւատում և դողում» (Յակ., Բ 19, 24, Մատթ., Է 21, Հռ., Բ 6, 13), որոնց սակայն փրկութիւն չկայ: Այսպիսով Հռ. եկեղեցին աստուածացնում է իր քահանայապետին և մարդու փրկութիւնը նրանից կախեալ դրութեան մէջ է դնում, իսկ բողոքական եկեղեցին անհատին է աստուածացնում և ամենայն ինչ նրան ենթարկում: Այնտեղ չկայ հաւասարութիւն և կղերը իր հօտի տէրն է և ոչ պաշտօնեան, իսկ այստեղ չկայ սիրոյ միութիւն և առաջնորդութիւն, և ժողովուրդը ցրւում է ամենուրեք ու գահավիժում: Այնտեղ խաբւում է հաւատացեալը՝ իր փրկութիւնը եռապետից ստացած համարելով, այստեղ զառանցում է ինքնախաբէութեան մէջ ընկած

պահանջել, կամ թէ մարդ կարող է կատարեալ դառնալ և մի փոքր էլ աւելի արժանիքներ գանձել այլոց համար. վերջապէս մարդ կարող է կատարեալ դառնալ և մեղաւորը ոչ թէ Քրիստոսով է փրկւում, այլ՝ ուրիշի աւելորդ վաստակով և մանաւանդ Հռոմի քահանայապետի դատով ու հրամանով: Այս հիմամբ Հռոմի եկեղեցին մոլորութեան մէջ է ընկնում վարդապետելով, որ իր պաշտօնեաները կղեր՝ այսինքն ժառանգաւորներ են, իսկ ժողովուրդը մի տեսակ կցւածք, երկրաւոր ողորմելիներ են, որոնք լոկ նրանց փշրանքներին են կարօտ: Հռոմի քահանայապետը, դնելով իր գլխին ակնազարդ եռակի խոյր, որի վերև ամրացւած է մի ոսկի երկրագունդ, քարոզում է, թէ իրենն է իրաւունքը երկնքում՝ մարդկանց սուրբ կոչելու, իրենն է իրաւունքը նաև քաւարանում՝ նրա տանջանքներից թողութեան թղթերով ազատելու, և իրենն է իրաւունքը երկրի վրայ, որ արտայայտում է բանադրանքով. ինքն արեգակն է և իրենից են լոյս ստանում նոյնիսկ թագաւորները, որոնք լուսին են: Եկեղեցին կղերն է և Քրիստոսի՝ իբրև թէ հաստատած՝ երկու սրերը (Ղուկ., ԻԲ 38) ներկայացնում են եկեղեցական ու պետական իշխանութիւնը. եկեղեցին հոգևորն է գործադրում, իսկ մարմնաւորը, եկեղեցու համար է կիրարկւում:

Բողոքականներն էլ, որոնք միշտ առաջնորդւել են Հռոմէական եկեղեցուն ընդդիմադիր սկզբունքով, բոլորովին հակառակն են վարդապետում (թերևս յենւելով Օգոստինոսի մի թիւր կարծիքի վրայ): Նրանք ասում են. մարդ անընդունակ է աստուածային շնորհներին գործակցելու, այլ Աստծուց մխիթարւում և արդար է հռչակւում, երբ նա լսում է Աստծու խօսքը և ընդունում Ս. Հոգուն: Նորոգւած քրիստոնեան, անկարող լինելով իր փրկութեան համար գործակցել Աստծուն՝ պէտք է շնորհակալութեան և հնազանդութեան զգացմունքով բարին գործի, միայն թէ այդ գործերը ոչ մի նշանակութիւն չունեն նրա փրկութեան համար, ըստ որում դրանք չեն յիշւելու յաւիտենական փրկութեան արժանանալու համար: Յաւիտենական կեանքը ոչ թէ բարեգործութեամբ է տրւում, այլ՝ միմիայն հաւատքով:

Ըստ այսմ բողոքականները մերժելով Հռոմ. եկեղեցու արտաքնայարդար փրկագործութիւնը, ձգտում են այն դարձնել ներքին իրողութիւն, սակայն չկարողանալով ճշմարտութեան մէջ մնալ, ընկնում են հակառակ ծայրայեղութեան մէջ: Այս ուսմունքը հակասութիւնների մէջ է ընկնում, երբ

հաւաստում է, թէ մարդ չի կարող իր փրկութեան համար գործակցել Աստծուն, բայց և ասում է, թէ պէտք է հաւատքով միանայ Աստծու հետ, որ փրկւի. քրիստոնեան պէտք է բարի գործի, բայց և այնպէս նրա գործերը նշանակութիւն չունեն փրկութեան համար: Թերի է այս ուսմունքը, որովհետև հաւատքը դարձնում է լոկ մի մտասեւեռում՝ առանց զգացմունքի ու կամքի, այնպէս որ բաւական է քրիստոնեային մտածել Քրիստոսի մասին ու կը փրկւի նա: Ուրեմն փրկութիւնն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անձնական գիտակցութիւն, թէ ինքը փրկւել է, մի համոզունք, թէ ինքը փրկւել է ըստ գնոստիկեան սկզբունքների: Այնուհետև մարդուն մնում է ինքնաստուածացման և ինքնագոհութեան ընդարձակ ասպարէզ (այսինքն՝ հակառակ Հռոմ. եկեղեցու)՝ առանց կարիք զգալու եկեղեցու, հոգևորականութեան և ս. խորհուրդների: Այլև որովհետև մարդու համակրութիւնից կամ ուշադրութիւնից է միայն կախւած նրա փրկութիւնը, հետևաբար նա կարող է մի դիւրին ինքնակենտրոնացումով շահել փրկութիւնն իբրև մի գաղափար կամ մի գիտական տեսութիւն: Ուրեմն դարձեալ հակասութիւններ. մարդ ոչինչ է, բայց և այնպէս նրա փրկութիւնն իր մի ինքնահաճ ուշադրութիւնից է կախւած. նրա փրկութիւնը կատարւում է միտքը կենտրոնացնելով Աստծու վրայ, բայց և նա չի կարող գործակցել Աստծուն. նա դառնում է մի մեքենայ փրկագործութեան տակ, բայց և ինքը գիտէ՝ փրկւած է թէ՞ ոչ, և այլն և այլն: Այդ ամենը ծագում է նրանից, որ բողոքականների քարոզած հաւատքը իսկապէս մեռեալ է, բխում է միմիայն մտքից և ոչ թէ մարդու հոգու բոլոր կարողութիւններից կամ լրումից: Սակայն չէ՞ որ առաքեալն ասում է. «Դու հաւատո՞ւմ ես, որ մէկ է Աստուած. լաւ ես անում: Դեւերն էլ են հաւատում և դողում» (Յակ., Բ 19, 24, Մատթ., Է 21, Հռ., Բ 6, 13), որոնց սակայն փրկութիւն չկայ: Այսպիսով Հռ. եկեղեցին աստուածացնում է իր քահանայապետին և մարդու փրկութիւնը նրանից կախեալ դրութեան մէջ է դնում, իսկ բողոքական եկեղեցին անհատին է աստուածացնում և ամենայն ինչ նրան ենթարկում: Այնտեղ չկայ հաւասարութիւն և կղերը իր հօտի տէրն է և ոչ պաշտօնեան, իսկ այստեղ չկայ սիրոյ միութիւն և առաջնորդութիւն, և ժողովուրդը ցրւում է ամենուրեք ու գահավիժում: Այնտեղ խաբւում է հաւատացեալը՝ իր փրկութիւնը եռապետից ստացած համարելով, այստեղ զառանցում է ինքնախաբէութեան մէջ ընկած

անհատը, երևակայելով, որ իր ինքնահնար «հաւատքով» կամ տեսական մտածողութեամբ աներկբայօրէն փրկուած է:

Ցուինգլին ու Կալուինն էլ ընդունելով բողոքական այն սկզբունքը, թէ մարդը մեղանչումով բոլորովին ընկաւ ու զրկուեց ոչ միայն բարի գործելու կարողութիւնից, այլև՝ կամեցողութիւնից, տրամագծօրէն հակառակ լութերականների սկսեցին քարոզել հետևեալը. մարդ անընդունակ է բարեգործութեան, նա կարող է միմիայն հաւատքով փրկուել, իսկ այդ հաւատքն Աստծու տուրքն է, շնորհն է և ոչ թէ մարդու կամքով է: Եւ որովհետև փրկւում են ոչ բոլոր մարդիկ, այլ միայն նրանք, ում ընտրում է Աստուած, ուստի մարդու փրկութիւնը նախասահմանուած է: Աստծու համար չկայ ոչ մի սահմանափակութիւն և Նրա կամքը թագաւորում է բոլոր գործերում և ամեն մարդու վրայ, ըստ որում մարդու կամքը ոչինչ է Նրա առաջ: Եւ որովհետև նա այդ կամքի հետ ունի և ամենագիտութիւն, հետևաբար Նա յաւիտենից գիտէր կատարուելիքը և թէ ո՞վ պէտք է փրկուի և ո՞վ՝ ոչ: Ուրեմն Աստուած նախասահմանել է մէկին կորուստ, միւսին փրկութիւն. մէկին տալիս է իր շնորհը, միւսին՝ անէծքը և երկուսն էլ չեն կարող ընդդիմանալ Աստծու կամքին, այլ ուզեն չուզեն՝ պէտք է այդպէս լինեն: Ամեն մարդ ծնւում է ճակատագրով կամ իբրև չար կամ իբրև բարի՝ ըստ Աստծու կամքի: Հաւատացեալը կարող է խաղաղ ու հանգիստ լինել, լաւ գիտենալով, որ ինքն անպատճառ փրկութիւն է ստանալու: Մի խօսքով այս տեսութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հին հեթանոսական մոլորութիւն այն տարբերութեամբ, որ այնտեղ բարին Աստծուց էին համարում, իսկ չարն՝ անհրաժեշտապէս դևից:

Այսպիսի ակներև աղանդաւորութեամբ անարգւում է թէ՛ Աստծու սրբութիւնը, արդարութիւնը և ամենաբարութիւնը և թէ մարդ այլևս չի ճանաչւում բարոյապէս ազատ, ըստ Աստծու պատկերի ստեղծուած: Աստուած դառնում է մարդու չարութեան պատճառը: Եւ այս տեսութիւնից նրանք չեն խորշում, հիմնուելով իրենց այն մոլորութեան վրայ, թէ Աստուած դուրս է Իր ստեղծած օրէնքներից իսկ, չարի պատճառ լինելով՝ Նա ոչինչ չի անում, այլ սոսկ մեղադրում է չարագործ մարդուն, որ օրինազանց է գտնւում: Այս արդէն սկզբունքօրէն անընդունելի է, քանի որ Աստծու մասին պնդում է, որ Նա Իր բարոյական օրէնքներից դուրս է, մէկի համար ամենաբարի է, միւսի համար

զարհուրելի, մէկն աշխարհ է գալիս հաճոյքի, միւսը՝ տանջանքի համար միմիայն այն պատճառով, որ Աստուած այդպէս է կամենում: Այսպիսով այս յիշեցնում է մեզ հեթանոսների ճակատագիրն ու նրանց անարդար Աստուածը, որ ըստ իր քմահաճոյքի, ում ուզում է՝ բարիք է անում, ում ուզում է՝ չարիք՝ կատարեալ կամայականութեամբ: Ուրեմն և մարդիկ չպէտք է մտածեն իրենց մասին և Աստծուց էլ չպէտք է երկիւղեն, քանի որ լինելու են այն, ինչ որ նախասահմանուած է, և չունեն ոչ մի բարոյական ազատ կամք և կոչում ու կոչման ձգտում, բաներ, որոնք պարզ ու որոշ բացատրուած են Ս. Գրքում հակառակ այդ աղանդի[46*]:

Ս. Գիրքը հիմնովին տապալում է այդ հակաքրիստոնէական կամ հեթանոսական աղանդը: Մարդն ինքն է պատասխանատու իր գործերի համար, ուստի և Աստծու դատաստանը պէտք է լինի, նրա շնորհն ամենքի համար է և փրկուելու կամքը մարդինն է[1]: Այդ աղանդաւորները հիմնւում են Հռ., Թ 11-13, 15, 18 տեսլեների վրայ, որոնք իսկապէս այդպէս առանձին վերցրած էլ չեն օժանդակում այդ կարծիքին, որովհետև լաւ կարդալով կը տեսնենք, որ առաքեալը երբեք այդպիսի միտք չի հաստատում: Առաքեալն առհասարակ խօսում է մարդու կոչման և ընտրութեան մասին (Եփ., Ա 4), որ կախուած է Աստծու շնորհից և ողորմածութիւնից (Բ Տիմ., Ա 9) և ոչ թէ Մովսէսի օրէնքները կատարելուց, ինչպէս քարոզում էին քրիստոնեայ դարձած հրեաները, որոնք ուզում էին աստուածային փրկութեան շնորհը միմիայն իրենք սեփականել: Առաքեալը սրանց հակառակ քարոզում է, որ Աստուած ամենքին է կանչում դէպի փրկութիւն, նա ազատ է և կարող է տալ Իր շնորհը ում կամենայ, ինչպէս տուեց Յակոբին, Մովսէսին և այլոց, բայց զրկեց Եսաւին և Փարաւոնին, որոնք իսկապէս իրենք զրկուեցին Աստծու ողորմութիւնից, մինչդեռ Աստուած Հայր է ամենքի և կամենում է փրկել բոլորին, որոնց և կանչում է դէպի փրկութիւն[2]: Ուրեմն Նա իր ողորմութեամբ է կանչում մարդկանց, որոնք առանց այդ շնորհների պէտք է կորչէին և եթէ մէկին փրկութիւն է շնորհում ու միւսին կորուստ արդէն իսկ ծննդից, այդ ևս նա անում է ըստ Իր կանխագիտութեան, արդարութեամբ պատժելով նրանց, որոնք չեն լսում Աստծու ձայնը և հակառակւում են Նրա բարերար կամքին՝ առանց օգտուելու Նրա երկայնամտութիւնից (Հռ., Թ 14-22): Առաքեալն

[1] Մատթ., ԻԵ 34-36, 41-43, Տիտ., Բ 11-12, Ել., ԿԶ 4, Գործք., Է 51, Եբր., Գ 11:
[2] Մատթ., Զ 9, Հռ., Գ 29-30, Ը 29, Թ 24, Ա Տիմ., Բ 4:

ուրեմն շեշտում է Աստծու նախագիտութիւնը, նախատեսութիւնը և ոչ թէ նախասահմանումը, ըստ որում Աստուած ամեն մէկի ծննդից գիտի՝ արդեօք փրկուելո՞ւ է, թէ՞ կորչելու, և ոչ թէ սահմանել է, որ անպատճառ այդպէս լինի: Մարդու ազատ կամքը, Աստծու արդարադատութիւնն ու սրբութիւնը ոչ մի կերպ չեն կարող հաշտուել նախասահմանման մոլորութեան հետ և այս ակներև երևում է աշխարհի բազմաթիւ փորձերից: «Բայց յիմար մարդիկ չեն նայում տեղի չունեցածին, այլ երբ մի բան պատահած են տեսնում՝ այն վերցնելով ընդհանրացնում են և բոլորի ականջին հասցնում», ասում է ս. Յովհան Մանդակունին: Եւ եթէ տեղի ունեցած զանազան դէպքերի թիւր և թերի վիճակագրութեամբ կարելի լինի նախասահմանութիւն հաստատել, ապա հեթանոսամիտ հները ևս իրաւացի կը լինեն, որ չորեքշաբթին և ուրբաթը չար օր էին համարում, հաւատում էին դիւթերին, ճանաչում սատանայի իշխանութիւնը, հաւատում չարի յաւիտենական լինելուն և այլն[47*]: Սակայն Ս. Յովնան Մանդակունին ի դէպ ասում է. «Մի՞թէ բոլոր օրերը Տիրոջը չեն, և [այն] բոլոր օրերում, որ բարիք ենք գործում՝ մեր յօժարութեամբ և Աստծու կամքով ենք [գործում], իսկ երբ չարիք ենք գործում՝ մեր չարութեամբ և Աստծուն հանդուրժելով ենք [գործում], և բարիք գործողը Աստուած է ու չարիքի իշխանը մենք ենք»[48*]: Ուստի և մերժելով նախասահմանութիւնը կամ ճակատագիրը՝ ս. Հայրը յորդորում է. «Եւ արդ, նայենք Աստծու պատուիրաններին և կատարենք այնտեղ գրուածները, և հեթանոսների նման չմոլորուենք բախտի, ճակատագրի և նախասահմանումների մէջ: Քանզի նախասահմանումի մասին [հերիւրանքները] տարածւում են բովանդակ երկրով մէկ և ցնդաբանելով սուտ են խօսում, թէ մարդ կանխասահմանումով է ընթանում և գործում: Եթէ այդպէս է և կանխասահմանումով է մարդ գործում, ապա պարզ է, որ դատւում է ոչ թէ մեղքերի համար, որովհետև նրա կանխասահմանումն ենք կատարում, ուրեմն նաև վարձատրւում ենք ոչ թէ արդարութեան համար, որովհետև մեր կամքով ենք գործում բարին, այլ՝ նրա կանխասահմանումով, ակամայից: Հետևաբար թագաւորները պարտաւոր չեն պատժել գողերին, պոռնիկներին և տանջել մարդասպաններին, որովհետև ոչ թէ իրենց կամքով են գործում, այլ կանխասահմանումն են կատարում»[49*]:

Հայաստանեայց ս. Եկեղեցին մերժելով մերժում է այդ մոլորութիւնները և վարդապետում, որ մարդը մեղանչումով ընկաւ ապականացու կեանքի մէջ և անկարող դարձաւ ինքնուրոյնութեամբ փրկութիւն ձեռք բերել: Նա ինչպես որ Քրիստոսի փրկագործութեամբ վերստին մօտենում է Աստծուն, այնպէս էլ Աստծու ողորմութեամբ ստանում է Աստծու Աւետարանը, որով պէտք է զգայ իր ինքնուրոյն ճիգով փրկելու անկարողութիւնը, ապաշխարի ու փրկութիւն հայցի հաւատքով, յոյսով ու սիրով: Հաւատքով նա պէտք է նուիրի Քրիստոսին ու Նրա Աւետարանին իբրև ճշմարիտ Աստծու մարդացեալ Որդուն ու Նրա Ձայնին: Յոյսով պէտք է ընդունի, որ Քրիստոս ամենակարող է և Իր Խաչով մեզ յաւիտենական փրկութիւն ու կեանք է պարգևելու՝ ի կատարումն իր բոլոր խոստումների, և որ նա կը տայ մեզ Ս. Հոգու զօրաւոր օգնութիւն և կը տանի դէպի ճշմարտութեան յաղթանակ: Սիրով, այսինքն՝ բովանդակ էութեամբ, մտքով, զգացմունքով ու կամքով մարդ պէտք է միանայ Քրիստոսի հետ և մտածի Նրա ճշմարտութիւնները, զգայ ու գործի իր աստուածահաճոյ կենցաղում[1]: **Ուրեմն ճշմարիտ քրիստոնեան պէտք է կենդանի հաւատքով վառի, յուսով ամրանայ ու սիրով բարեզարդուի Ս. Հոգու շնորհների տակ և իբրև Հայաստ. ս. Եկեղեցու հաւատարիմ որդի առաջադիմի իր կենցաղավարութեամբ:** Եւ եթէ հաւատացեալն իր հաւատքով, սիրով ու յուսով խանդավառ անձնազոհ նահատակ է դառնում՝ իր Եկեղեցուն հաւատարիմ մնալով՝ Քրիստոսի անուան համար, **այդպիսին և՛ սուրբ է և՛ տօնելի է զինուորեալ եկեղեցում,** որովհետև անդրանիկների երանական տարածքում է: Նա պէտք է հաւատք ունենայ, բայց ոչ մեռեալ հաւատք, այլ նա պէտք է հաւատաբուխ գործերով կենդանի լինի[2]: Եւ այն ժամանակ նա կը փրկուի կամ փրկութիւնը կը իրացնի Քրիստոսի ամենողորմ շնորհով. այն շնորհուած է վաստակով, որ մեզ համար բովանդակ հաւատքից և առաքինութիւններից գեր ի վերոյ է: Քրիստոսի տուածը շնորհ է, որովհետև **մենք**

---

[1] «Սէրը հնում էլ էր քարոզւում, այլ հիմա Քրիստոս հրամայում է ոչ միայն սիրելիներին սիրել, այլ նաև թշնամիներին սիրել և անձն իսկ դնել յանուն սիրելիի, և Նա իր անձը դրեց թշնամիների և սիրելիների համար, որպէսզի սիրոյ պատուիրանը ոչ թէ լոկ խօսքով, այլ նաև գործով մեր մէջ հաստատի: Այդ պատճառով էլ մենք պէտք է Աստծուն սրտով սիրենք և Նրա պատուիրանները երկիւղով պահենք, և նրա պատուիրաններն այս են, որ ճշմարտութեամբ սիրենք մէկմէկու, և ամէն ոք, ով ճշմարտութեամբ է սիրում իր եղբօրը՝ նա պահում է Նրա պատուիրանները» (Ս. Յովհ. Մանդակունի [էջ 87]):

[2] Ա Տիմ., Դ 3, Զ 18, Բ Կոր., Թ 8, Ե 10, Կող., Ա 10, Գաղ., Զ 10, Տիտ., Գ 1, Յակ. Բ:

չենք կարող ոչ արժանապէս հաւատալ և ոչ արժանապէս բարեգործ լինել. նրա շնորհը ստանում ենք մեր ձգտման և ընդունակութեան համեմատ, ըստ Աստծու իմաստուն տնօրինութեան: Քրիստոս մեր ճշմարիտ կամքի իրագործման օգնականն է և իր տուած Ս. Հոգով մեր տկարութեան դարմանիչը, ըստ որում և կատարեալ փրկութեան կը հասնենք Նրա շնորհով: Ուստի և Քրիստոս պատուիրում է՝ նմանուել կատարեալ Հօրը (Մատթ., Ե 48), այնպէս որ երբեք չենք կարող հասնել մեր նպատակին առանց այդ շնորհի, և ուրեմն ոչ ոք էլ չի կարող աւելի վաստակներ ունենալ, ինչպէս խոստովանում է Պօղոս առաքեալի պէս՝ հաւատքի՝ ախոյեանն իսկ[1]: Ճշմարիտ քրիստոնեայի փրկութեան իրագումն արտայայտւում է Պօղոս առաքեալի կեանքի նշանաբանով. «Ուշադիր վազում եմ աստուածային կոչմանս նպատակակէտին՝ Քրիստոս Յիսուսով»[2]: Ընթանում է և յոյս ունի, որ կը հասնի, սակայն այդ ևս Աստծու իմանալիքն է և Նրա ողորմածութիւնից է կախուած. այդ պէտք է թելադրի մեզ մեր հաւատքը[3]: Երբեք չպէտք է մոռանանք Քրիստոսի պատուէրը, որ վերջնական կնիք է Հայաստ. ս. Եկեղեցու ուղիղ վարդապետութեան. «Նոյնպէս և դուք, երբ կատարէք այն բոլորը, որ ձեզ հրամայւած է, ասացէք, թէ՝ «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք անել, այն արեցինք»[4]: Սակայն մենք պէտք է մեր կարողացածն անենք, «որովհետև մեղքերի թողութիւնն աւազանով միայն Աստծու [շնորհն] է, իսկ մկրտութեան շնորհի պահպանումը՝ մեր ճիգով է լինում»[5]:

Նոյն սկզբունքը պահում է Հայաստանեայց ս. Եկեղեցին նաև իր հաւատացեալներից սրբեր ճանաչելու դէպքում: Ամենքի քրիստոնէական

[1] Փիլ., Գ 8-14, Գաղ., Բ 2, Կոր., ԺԲ 8, Ա Կոր., Թ 24, Հռ., Թ 16:
[2] Փիլ., Գ 14, Բ Տիմ., Դ 7:
[3] «Որովհետև ինչպէս Աստուած Ինքը հրամանի տակ գտնուող ծառայ չէ, այլ ազատ և կամքով՝ ինքնիշխան, այդպէս էլ համաձայն Իր նմանութեան մարդուն տէր, ազատ և անձնիշխան ստեղծեց, ընդունակ՝ բարու և չարի: Եւ եթէ յօժար մտքով բարիք գործենք՝ արքայութիւն խոստացաւ մեզ և չար՝ դժոխք: Աստուած ընդունակ և կատարող է բարու, և չի կամենում մեղաւորի մահը, բայց և անձնիշխանութիւնն էլ չի վերացնում մեզանից, քանզի այս է [ակնարկում] «Եթէ կամենաք, կը լսէք ինձ» [խօսքը] (Մանդ. 206):
[4] Ղուկ., ԺԷ 10, Ընդ. 11, 18-23: Երբ ս. Արիստակէսը գնաց Նիկիայ «յոյները նրան խեղճ կերպարանքով տեսան և, ի լուր սրբի, ծաղրելով անարգեցին նրան՝ ասելով. «Արէ՛ք տեսէք Հայոց առաջնորդին, որ արժանի է լինել մանկալ մշակ»: Այս լսելով ս. Արիստակէսն ասաց. «Իրաւացի էք, որովհետև արժանի եմ մշակ լինել, բայց՝ Ամենակալ Տէր Աստծու» (Հմմտ. Մեկն. ժամ., էջ 197-200):
[5] Գրիգոր Արշարունի. անդ, էջ 13, տե՛ս և Գրիգոր Սարկ. (Սոփերք. Դ) 141-155:

բարեպաշտութիւնը երևում է հաւատքից, սակայն ամենքին չի վիճակւում հաւատքի պտուղը գերագոյն օրինակով ցոյց տալ: Ուստի սուրբ են ճանաչւում միմիայն նրանք, ովքեր իրենց հաւատքի գերագոյն չափօրինակն են, այն է՝ Քրիստոսի վկաներն ու նրա եկեղեցու համար անձնազոհութեամբ դէպի մահ գնացողները: Այդպիսի անձինք այլևս պէտք չունեն առանձին քննադատութեան ենթարկւելու և ապա սրբոց կարգը դասւելու, այլ դրանց մահը հաւատքի համար կամ կենդանի մահանւէր գործունէութիւնը Հայաստ. ս. Եկեղեցու համար ակներև և անհերքելի ապացոյց է, որ նրանք սրբւում են իրենց որևէ մարդկային մեղքից և Քրիստոսին խաչակից ճանաչւում Աստծու առաջ: Այդ իրողութիւնը գեղեցկապէս բացատրում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը իր Վարդապետութեան մէջ, երբ յաճախ խօսում է Տրդատի նահատակած օրիորդների մասին: Սուրբ են նրանք, որովհետև իրենց հաւատքի գերագոյն զոհի օրինակով հաճելի են դառնում Աստծու և սրբւում տարբեր մեղքերից: Սուրբ են նրանք, որովհետև դրանց նահատակութեան գործը լոկ մարդկային ուժերով անկարելի է, սակայն նրանք իրենց հաւատքով ստանում են աստուածային զօրութեան շնորհը և դէպի մեծ գործ ընթանում[50*]: Իսկ մի անձ, որի մէջ այդպիսի աստուածային շնորհ է փայլում Քրիստոսի անունը վկայելու համար, անշուշտ սուրբ է Աստծու առաջ[1], սուրբ կը կոչւի նաև ամբողջ Եկեղեցում իբրև նոյն Եկեղեցու կենդանութեան պտուղ: Բաւական է միայն թերթել Հայաստանեայց ս. Եկեղեցու պատմութիւնն Ա դարից այսինքն՝ Ս. Թադէոսից ու Ս. Բարդուղիմէոսից ու նրանց նահատակակիցներից սկսած մինչև մեր օրերը, և մենք կունենանք մի հաստատուն ապացոյց, որ սրբութիւնը ոչ թէ մարդկային քննադատութեամբ ու վճռով է տրւում մարդկանց, այլ աստուածային գործով է հռչակւում մարդու մէջ, առանց որևիցէ մարդկային օժանդակութեան կարօտելու: Ամբողջ Եկեղեցու լրումը իբրև մի մարմին ու հոգի, միանգամից սկսում է ճանաչել այդպիսի սուրբին որպէս իր Անդրանիկների ընկերակից, իսկ Եկեղեցու իշխանութիւնը միայն օրինական յայտարար է դառնում այդ միաձայնութեան:

Այս նկատմամբ Ս. Գրիգոր Լուսաւորչի որդի Սուրբն Վրթանէսն ասում է իր ժամանակի քաջերին. «Մխիթարւեցէք Քրիստոսով, որովհետև նրանք, որ

[1] Սաղմ., ԻԱ 4, ԿԵ 36, ՃԺԵ 15. «Տիրոջ առջև պատւական է Իր սրբերի մահը». Փիլ., Ա 20-23, Ա Կոր., ԺԵ 30-32, Բ Կոր., Դ 10-12, ԺԱ 23, ԺԲ 9-12:

մեռան, մեր աշխարհի, եկեղեցիների և աստուածատուր հաւատի համար [մեռան], որպէսզի մեր աշխարհը չգերւի, քարուքանդ չլինի, սուրբ եկեղեցիները չպղծւեն, նահատակները չանարգւեն, [եկեղեցական] սպասքները պիղծ և անհաւատ մարդկանց ձեռքը չանցնեն, սուրբ ուխտը չաղաւաղւի, մկրտւած ժողովուրդը գերի չգնայ ու չմատնւի անհաւատների պաշտամունքի զանազան պղծութիւններին: Եթէ թշնամիները մեր աշխարհը գրաւեն, այստեղ կը հաստատեն իրենց անօրէն, անհաւատ, անաստուած կարգերը, որ յուսանք, թէ երբեք լինելու չէ: Իսկ մեր բարեպաշտ նահատակները այս բանի համար պատերազմ մղեցին և չարիքը մեր աշխարհից հալածելով ու հեռացնելով՝ մեռան, որպէսզի անհաւատութիւնը այս աստուածապաշտ ու աստուածասէր աշխարհը մուտք չգործի և չարի կամքին ծառայ չդարձնի, ու շատ հոգիներ, որ ջերմեռանդ, անկեղծ սիրով իրար հետ կապւած են, միմեանցից չբաժանի, չքայքայի: Իսկ սրանք մինչ կենդանի էին, արդար ջանքով չարչարւեցին այս բանի համար և մեռնելիս հաստատ պահեցին իրենց հաւատարմութիւնը ու իրենց անձերը զոհեցին աստուածային ճշմարտութեան համար, եկեղեցիների, նահատակների, կրօնի սուրբ ուխտի, հաւատի կարգերի համար քահանայական ուխտի և Քրիստոսի անունով անթիւ նոր մկրտւածների ու աշխարհի բնիկ տիրոջ համար և նրանք, որ իրենց կեանքը չխնայեցին այս բոլորի համար, պէտք է մեծարւեն Քրիստոսի համար զոհւածների հետ: Ուրեմն չողբանք նրանց, այլ արժանապէս պատւենք նահատակների հետ, մշտական կարգ սահմանենք մեր ամբողջ աշխարհում, որ ամեն ոք անխափան կատարի սրանց բարի յիշատակը՝ ինչպէս Քրիստոսի նահատակների: Իսկ մենք տօն կատարենք և ուրախ լինենք, որ Աստուած սրանցով մեզ հետ հաշտ լինի ու այսուհետև խաղաղութիւն շնորհի»[1]:

ԼԵ

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՆՈՐ ԿԵԱՆՔ

Քրիստոսի փրկութիւնը շնորհւում է իւրաքանչիւր հաւատացեալի Եկեղեցու սուրբ խորհուրդների միջոցով, իսկ այդ փրկութեան իրականացումը

[1] Փաւստոս Բիւզանդ, Պատմ. III ԺԱ:

լինում է մի նոր ընթացքով, որ կոչւում է վերածնութիւն ու նոր կեանք: Նախքան ս. խորհուրդների մասին խօսելը հարկ է մի համառօտ ակնարկով ճանաչել, թէ ինչպէ՞ս կամ ինչպիսի՞ աստիճաններով է կատարւում վերածնութիւնն ու նոր կեանքի կարողութիւնը:

Վերածնութիւն է կոչւում այն նորոգ ծնունդը, որով անհատը կտրւում է ադամային ժառանգականութիւնից և ապա աստուածային շնորհների և ճշմարիտ ազատութեան հարստութեամբ մի նոր անձ դառնում, ըստ որում վերածնեալը ոչ թէ Ադամի որդին ու պատկերն է լինում, այլ ճշմարիտ Աստուածամարդ Քրիստոսի եղբայրն ու պակերը[1]: Վերածնութեամբ ոչ թէ մարդու բնութիւնը փոխակերպւում է էապէս, ոչ թէ նրա «եսը» էապէս ուրիշ «ես» է դառնում, այլ նրա այլակերպւած բնութիւնը վերստին ստանում է իր աստուածադիր իսկութիւնն ու նրա «եսը» դառնում է իսկական ինքնագիտակցութիւն, որով նա աստուածային շնորհների մի ազատ զգայարան է դառնում՝ աշխարհի տէրը լինելու համար: Այնուհետև նա կտրւում է մեղանչական ընթացքից, սուրբ կեանքի ընթացք է որդեգրում և թէև իբրև աշխարհում ապրող, աշխարհի ու մեղքի ազդեցութիւնից զերծ չի մնում, սակայն կարողանում է յաղթող լինել իր նոր ընթացքով: Այնուհետև նոր կեանքի վէմը Քրիստոս է[2], զօրութիւնը Ս. Հոգին է, ճանապարհը Քրիստոնէական սրբութիւնն է, կատարելատիպն է Աստուած, գործարանն է հոգին, իսկ զգայարանն է հաւատքը: Ըստ որում «Ճշմարիտ հաւատքի հաստատութիւնը սուրբ սիրոյ զետեղարանն է, [որ հրահանգում է] յոյսի մէջ անսասան մնալ», ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը[3]:

Վերածնութեան ընթացքի մէջ առկայ են չորս աստիճաններ. դարձ, զղջում, քաւութիւն և զօրացում[51*]: Դարձն է մարդու կեանքի ուղղութեան այն ընդհատումը, որով նա խորտակում է իր ծառայական կապանքներն աշխարհի բռնութիւնից: Այդ էր պահանջում և Ս. Գր. Լուսաւորիչը կռապաշտ Հայերից. «Եթէ արմատախիլ չանէք վաղնջական սովորոյթները՝ չէք կարող ընդունել

[1] Յովհ., Գ 5, Բ Կոր., Ե 17, Յակ., Ա 18, Յաճախ., Բ 396, Մամբրէ Վերծ., էջ 66, Եղիշէ, Ճաք, էջ 202:
[2] «Քաւ լիցի ինձ յուսալ մարդուն կամ պարծենալ մարդով, այլ՝ միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի Խաչով», ասում է Վահան Մամիկոնեանն իսկ (Փարպ. 464):
[3] Յաճախ., ԺԱ 154:

սերմը, որ ձեզ օգտակար պտուղ է տալու»[1]: Շատ անգամ մարդ նախապատրաստած լինելով՝ մօտիկ է լինում դարձի, սակայն քաջութիւն չի ունենում դառնալու կամ թէ յետաձգում է իր վճռական քայլը (Ղուկ., ԺԳ 3, 6-9): Բայց դառնալով նա դեռևս չի կարողանում պահպանել իր անձն իր իսկ ազատութեան մէջ. նա դեռևս պէտք է օգնութեան դիմի Քրիստոսի շնորհներին, որի քաղցն ու ծարաւը զգալով՝ նա ոգևորւում է Քրիստոսի փրկութեան յուսով և զղջմամբ ցաւում է իր անցեալ կեանքի կորստական հարուածների համար. նա տրտմում է ու սգում կորցրած աշխատանքների և օրերի վրայ, նա զգում է, որ ինքն աղքատ է հոգևոր առաքինութիւններից և զզւում է իր անցեալից (Բ Կոր., Է 9): Ապա նա զգում է մի մխիթարութիւն՝ տեսնելով Քրիստոսի փրկութեան շնորհների փառքն ու պայծառութիւնը, որոնց լուսաւոր շողերն արդէն սկսում են շողալ նրա խաւար հոգու լուսամուտներից ներս: Ուրեմն զղջումը մի ներքին տխրական զգացում է, որով մարդ ցնցւում ու զարհուրում է՝ տեսնելով այն մեծ հակասութիւնն ու պառակտումը, որ կայ իր առաջւայ կամքի ծառայական ուղղութեան և նոր ճանապարհի պայծառ կատարելատիպի մէջ: Նրա հոգու մէջ պատկերանում է հին Ադամը աշխարհի տիղմի մէջ շաղախւած, իսկ նրա դիմացը՝ նոր Ադամը՝ փառաց լոյսով ճառագայթւած: Երկու հակասութիւններ, որոնց մէջ հեղեղւում է անհատը և ձգտում «հինը թօթափել և նորը զգենուլ»: Նա զգում է, որ այդ իր ուժից վեր է, սկսում է ապաշխարել (զղջմամբ սգալ անցեալի վրայ)՝ մխիթարութեան սպասելով իր Փրկչից: Հարկաւ, այս դարձն ու զղջումն ամեն անհատի մէջ տարբեր կարգով, ուժով ու ճգնաժամով է լինում[2]:

Ինչպէս որ դարձն ու զղջումը մարդու որոշ նախապատրաստութեան լրանալուց և հոգեբանական որոշ վիճակից յետոյ է լինում (Գործք., Թ 5), այնպէս էլ զղջումից յետոյ մարդու փրկագործութիւնը որոշ կարգ ունի: Նա դարձնում է իր սիրտը դէպի Փրկչի կոչը, և հաւատալով, որ Նա է մարդկութեան և իր Փրկիչն ու Աստծու հետ հաշտեցնողը, հայցում է արդարութիւն, որպէսզի Աստուած արդար համարի և որդիացնի[3]. «Ուր հաւատքն է, այնտեղ է և Աստուած, և ուր Աստուած է՝ ամեն ոք այնտեղ է», ասում է ս. Եղիշէն: Քրիստոս մօտենում է հաւատացեալին և

[1] Ագաթ., էջ 298:
[2] Տե՛ս զօրօր. Ղուկ., Է 37, Ժ 39, Եղիշէ 333:
[3] Հռ., Գ 28, Ե 1, Ը 15, Եբր., Ժ 22, Գաղ., Բ 20:

օգնութեան, մխիթարութեան ձեռք մեկնում: Ապա դարձողը մկրտուելով՝ իր հնութեամբ մեռնում է և վերածնւում իբրև նոր մարդ. նա քաւութիւն է ստանում իր մեղքերի և նոր արարած դառնում: Քաւութիւնն է ուրեմն մարդու այն նոր ընթացքի սկզբնաւորումը, որով նա ազատւում է ապականացու վիճակից և նոր կեանքի շէմի վրայ դրւում: Սակայն հին կեանքի կապերից կտրուելով՝ մարդ կարօտ է զօրացման, որ կարողանայ նոր կեանքի մէջ աճել, զարգանալ ու ճշմարտութեան զինուոր լինել: Դրա համար նա պէտք է մտնի մտերիմ հաղորդակցութեան մէջ Քրիստոսի հետ, որ այլևս ոչ թէ ինքն ապրի, այլ՝ Քրիստոս իր մէջ և միութիւն հաստատի իր հետ (Գաղ., Բ 20): Ահա այստեղ Ս. Հոգին աջակցում է նրան, քաւում, մաքրում է Քրիստոսի հետ սերտ միութեան մէջ դնելով՝ կեանքի նոր սկզբունք հաստատում նրա մէջ (Եբր., Ժ 22, Կող., Բ 13): Այդ մեծ փոփոխութեամբ սկսւում է նոր կեանք զօրացած ընթացքով, որ այլևս ոչ թէ աշխարհին ծառայել է, այլ աշխարհի ծառայացումն է և ենթարկումն է աստուածահաճոյ կենցաղին մարդկային ճշմարիտ կոչման իրականացմանն ի խնդիր: Հետևաբար զօրացումն աստուածային այն ներգործութիւնն ու աջակցումն է, որոնց շնորհիւ դարձի եկողը կարողանում է ճշմարիտ կեանքի ճանապարհով ընթանալ դէպ յաղթութեան պսակը: Սա հոգևոր կեանք է, «որովհետև ամեն ոք, ով ճշմարիտ հաւատքով է մօտենում Ս. Հոգուն՝ Նրա նման էլ հոգիանում է», ասում է ս. Եղիշէն[1]: Այսպիսին մեռնում է մեղքի համար և կենդանանում է արդարութեան համար[2]:

Հաւատացողը, սկսելով իր նոր կեանքը, ճշմարիտ յարաբերութեան մէջ է մտնում Աստծու հետ և ճշմարիտ դիրք զբաղեցնում աշխարհում. նրա հաւատքը դառնում է այն գիտակցական զգայարանը, որով նա սերտ միութիւն է հաստատում Աստծու հետ և Աստուած այդ հաւատքի վրայ է հաստատում նրա ապագայ երանութիւնը (Հռ., Ը 1): Եւ այդ հաւատքից ճառագայթելով բխում են մարդու բոլոր մտքերն ու գործերը և լուսաւորում նրա կեանքի բոլոր հանգամանքները, ինչպէս այդ արտայայտւում է նախարարների մի խօսքի մէջ. «Մեր գործն ու աշխատանքը երկրաւոր վայելքի, կնոջ և որդու համար չէ... այլ՝

[1] Տե՛ս Մատենագր., էջ 343:
[2] Ցաճախ., Բ 410:

մեր մեծ և պատուական հաւատքի խորհրդի...»[1]: Հաւատացողը նորոգապէս է աճում, նոր բնաւորութիւն է դառնում, այլ տեսակէս խորհելով հոգևորի մասին՝ անհաղորդ է դառնում մեղքի նկատմամբ, որովհետև այժմ հաւատքով նա ընդունում է Ս. Հոգու շնորհները և այդ շնորհների տակ զարգանում նոր կեանքի համար՝ միտելով դէպի կատարելութիւն[2]: Նրա կեանքի նշանաբանն է սրբութիւն և միևնոյն ժամանակ աստուածային գործունէութիւն աշխարհի վրայ: Նրա բնական ձիրքերը Ս. Հոգու շնորհով ազնւանում են ու պայծառանում, մտքերը լուսաւորւում են, կամքն արիանում, սրտի հարստութիւնները բացւում են և միաժամանակ հետզհետէ վերանում են եսապաշտութիւնն ու թմրութիւնը: Ս. Հոգին շարունակ զարթեցնում է նրա հոգու ուժերը, որոնք աճում են և ծաւալւում մարդու ազատ աշխատանքով: Որքան առաւել են այդ շնորհները, այնքան և անհրաժեշտ են մարդու աշխատանքն ու գործունէութիւնը, որպէսզի կարողանայ շնորհների համեմատ վառել և իր ձիրքերը[3], իսկ այդ գործունէութիւնը, որ բխում է իւրաքանչիւր հաւատացեալի հաւատքից, փայլում է ընդհանրութեան մէջ, այսինքն՝ սիրով (ա Կոր., ԺԳ): Եսականօրէն միմիայն իր համար առանձնական կեանք ապրողը ոչ այլ ինչ է, եթէ ոչ եկեղեցու կամ ժողովրդի հիւանդ անդամը[4]. ճշմարիտ հաւատացեալի նոր կեանքի նշանաբանն է հասնել «հաւատի կատարեալ միութեանն ու Աստծու Որդու ճանաչմանը, կատարեալ մարդու աստիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը» (Եփես., Դ 13): Այս ամբողջ ընթացքը կատարւում է Աստծու խօսքով և Եկեղեցու Ս. խորհուրդների միջոցով, իսկ մարդու կողմից՝ աղօթքով և անձնուէր աշխատանքով. «Ինչպէս անդամներով հասակն է բարձրանում, այդպէս էլ բարի գործերով հաւատքն է բարձրանում և հաւատքով ստուգւում է յոյսը և յոյսով՝ քաջութիւնը»[5]:

Բայց ոչ բոլոր վերածնեալներն են հաւասարապէս Ս. Հոգու գործարան ու գործակից դառնում. ամեն մէկը նոր արարած է և նոր մարդ մի կենսունակութեամբ, սակայն ամենքի մէջ էլ տարբերութիւններ կան, ըստ

[1] Փարպ., էջ 450:
[2] Բ Կոր., Զ 16, Հռ., Ը 15-10, Զ 4:
[3] Տե՛ս Ա Տիմ., Դ 14-16:
[4] «Ով իր եղբօրը տեսնում է և տխրում է՝ նա պարտւած է կեղծաւորութիւնից, իսկ ով նստում է մենակ և ուրախանում՝ գերւած է սատանայից» Եզնիկ, [Խրատ]:
[5] Յաճախ., Զ 362, Ընդհ. 33:

իւրաքանչիւրի բնական ձիրքի և կարողութեան, ընդունակութեան ու զարգացման: Ընդհանրապէս ոմանք Ս. Հոգու առանձին զինուորներն են դառնում և աստուածային գործի քաջ ախոյեաններ ու նահատակներ, իբրև «ընտրութեան անօթներ», «ճշմարտութեան այգու մշակներ»[1], **ոմանք անձնուէր գործիչներ են դառնում և աստուածային կեանքի ընթացքը տալիս որոշ համայնքի, շրջանի կամ հասարակութեան մէջ,** իսկ ոմանք անձնապէս հաւատարմութեամբ կենդանի պահպանողներ ու պահողներ են լինում Եկեղեցու աստուածային կարգերի, սրբազան աւանդութեան և կրօնական կեանքի առաջադիմութեան: Սակայն որովհետև մարդ սխալական է, ուստի ճշմարիտ քրիստոնեան իր կեանքում շարունակ աշխատում է սրբւել Աստծու շնորհով, ուղղւել և կատարելագործւել: Նա շարունակ ձգտում է լինել Աստծու խօսքի սթափեցնող ազդեցութեան տակ և նոր ի նորոյ ստանալ Ս. Հոգու զօրացուցիչ ու կազդուրիչ շնորհները (ապաշխարութիւն ու հաղորդութիւն), որոնցով դառնում է Քրիստոսի արարած և Ս. Հոգու տաճար: Իսկ եթէ վերածնեալը դուրս է գալիս կամ դուրս է մնում և կամ անհոգ է գտնւում աստուածային այդ շնորհագործութեան նկատմամբ և ինքն իրեն նւիրւում ու իր վրայ է դնում իր խաբուսիկ յոյսը, այն ժամանակ նա կամ թմրութեան մէջ է ընկնում ու թառամում և կամ մի առանձին մոլութեան է մատնւում ի կորուստ:

Մոլութիւնը ստանում է դրական կամ բացասական ընթացք կրօնի նկատմամբ, ըստ որի և կարող ենք այն կրօնամոլութիւն անւանել: **Կրօնամոլութեան վտանգը լինում է ամեն մարդու մէջ, երբ զարթուցման ճգնաժամի մէջ է ընկնում,** ըստ որում նա զարթնելով կարող է ազատապէս կամ իր ուժերի վրայ յոյս դնել և կամ նւիրւել Ս. Հոգու առաջնորդութեանը, այսինքն՝ կամ լոյսն ընտրել և Աստծով նրա մէջ շրջել և կամ խաւարում խարխափել[2]: Այդպիսին, եթէ չի ձգտում վառել իր ճրագը, շարունակ շնորհների իւղ ձեռք բերելով, եթէ ծուլանում և մսխում է շնորհների ժամանակը, և եթէ ինքն է վերստին ուզում իր ուժերով իր կեանքը բարւոքել առանց Աստծու, ընկնում է կրօնամոլութեան մէջ: **Հետևաբար կրօնամոլութիւնն է այն բացասական կամ**

[1] Գործք., Թ 15, Ագաթ., 368. «Ճշմարիտ մշակների գործն այն է, որ պիտանի օգտակար պտուղը հաւաքեն շտեմարանի մէջ և փուշը կրակին տան»:
[2] Եղիշէ, էջ 330:

դրական կատաղութիւնը, որի մէջ մարդ իր անձնական համոզմունքներով, հայեացքներով ու կարողութեամբ է վերաբերւում կրօնին: Դրական կրօնամոլը կարծում է, թէ ինքն է Աստծու առաքեալը և ամբարտաւանութեամբ սկսում է իր մտքի զօրութեամբ Աստծուն ու նրա կարգերն ու պատուէրները փոխարինել իբրև մի նոր մարգարէ. նա սկսում է արհամարհել եղած կարգերը և օրէնքները և անձամբ հեղինակութիւն դառնալ իր նեղ մտքին ապաւինելով: Այդպիսիները ոչ այլ ինչ են, եթէ ոչ կրօնական խորին մտածողութեան և մարդկային հայեացքների շփոթութեան ու ցնորքի անօթներ (հնում այդպիսիք էին հրեաները, նոր ժամանակներում Ամերիկայի աղանդները՝ Մոնթանականները և ուրիշներ): Դրանք իրենց գլուխները կորցնում են և ոչ ճանապարհ ու ոչ նպատակ են ճանաչում[1], ըստ այնմ, թէ աւելորդ «սերտողութիւնից միտքն ընկնում է մոլորութեան մէջ և գժւեցնում է, ինչպէս [կը գժւացնէր] կատաղածին, և մարդուն անհաղորդ դարձնում ճշմարտութեանը»[2]:

Իսկ բացասական կրօնամոլն այն զարթնած, բայց շնորհների տակ չմտած ու չդաստիարակւած մարդն է, որ իր կեանքի բովանդակ խորհուրդն ու փրկութիւնը լոկ մարդկային ուժից է սպասում և ըստ ամենայնի աստուածային ճանապարհի արհամարհելը առաջադիմութեան դրօշակ համարում[3]: Նա իբրև մի անգամ ծնւած՝ երբեք բացարձակապէս չի ընկնում վերստին ադամային վիճակի մէջ, այլ խորտակւում է քրիստոնէական հաւատքով ու կեանքով, իրեն կամաւորապէս դնելով աշխարհային ազդեցութեան տակ, որովհետև իսկապէս վերածնւած ու Ս. Հոգու բնակարան դարձածը չի կարող վճռաբար մեղքի

[1] Խօսքն ուղղելով իր ժամանակի թոնդրակեցիներին՝ Գրիգոր Մագիստրոսն ասում է. «Գիտեմ, եղկելիներ, որ ոչ անէծքն էք մի բան համարում և ոչ էլ՝ օրհնութիւնը. այդ քաջ գիտենք, որ այդ չէք ընդունում և ոչ էլ որևէ մէկին, որովհետև մեզնից չէք»[52*]:

[2] Յաճախ., Դ 20:

[3] Հմմտ. Զգօն, էջ 183. «Խաւարը չի նախանձում աղջամուղջին և ոչ էլ թշնամութիւնն է նախանձում խռովութեանը և ոչ էլ նախանձն է պախարակում հակառակութեանը և ոչ դաւանութիւնն է ատում լեղի բանին, այլ չարերն են նախանձում բարիներին և ամբարիշտները՝ արդարներին և բարձրերը հպարտանում են խոնարհներին, և ստախօսներն արհամարհում են ճշմարտախօսներին և անմիտները քամահրում են իմաստուններին: Եւ ում մէջ ճշմարտութիւն չկայ, չի կամենում, որ առհասարակ ճշմարտութիւն լինի: Եւ ով բարձրամտութեամբ է զգեստաւորւած՝ խոնարհը նրան մարդասպան է թւում: Ում ձեռքերը պատրաստ են անօրինութեան համար՝ չի կամենում արդար մարդու: Եւ ում բերանը լի է ստախօսութեամբ՝ նրա աչքին ճշմարտութիւնը ատելի ու զազրելի է»:

ճանապարհը ընտրել և այն կամենալ՝ հակառակ իր կոչման գիտակցութեան[1]: «Բարիների բարութեան կառավարը աստուածասիրութիւնն ու եղբայրութիւնն է, իսկ չարերի կառավարը՝ անաստուածութիւնն ու եսասիրութիւնը», ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը[2]: Շնորհների տակ գտնւածը ու Ս. Հոգուն նւիրւածը շարունակ ջանք ու ճիգով ձգտում է օրըստօրէ առաջադիմել առաքինի պայքարի ասպարէզում, միշտ արթուն լինել և զգուշանալ փորձութիւնից (Ա Կոր., Թ 27)՝ լաւ գիտենալով, որ ճշմարիտ հաւատքը հեղհեղուկ կեանքի փորձութիւններում է երևում, և կատարելապէս հաւատացած է, որ եթէ ինքը կամենայ, երբեք Աստծու շնորհից չի վրիպի (Հռ., Ը 38): Մինչդեռ թեթևամիտ ու փոփոխամիտ (Մատթ., ԺԳ 5, 7), կամ թէ ձէթը պակաս (ԻԵ 3) հաւատացողները կամ վերածնեալները փոքր ինչ հաւատքով, յուսով ու սիրով վառւելով՝ ձէթ չեն ունենում պտղաբերութեան համար, ուստի և ընդհատւում են նոր կեանքի զարգացումից ու վերստին հնութեան մէջ գլորւում՝ չկարողանալով լուսաւորութեան դռնով մտնել յիմար կոյսերի նման: Այդպիսիք անշուշտ կրկին պատժի մէջ են ընկնում (Եբր., Զ 4): Առաւել ևս վատթար ընթացք են որդեգրում նրանք, ովքեր յոյսը դնելով լոկ մարդկային ուժերի վրայ, արհամարհում են արդէն ճաշակած շնորհների զօրութիւնը, որին անտեղեակ չեն, և սկսում չարակամութեամբ նոյնիսկ Ս. Հոգուն հակառակ գործել և սատանայի արբանեակը դառնալ: Դրանց համար է Քրիստոսի զգուշացուցիչ խօսքը. «Եւ ով որ մարդու Որդու դէմ խօսք ասի, նրան պիտի չներւի ոչ այս աշխարհում և ոչ էլ հանդերձեալում»[3]: Քրիստոս այս ասում էր կեղծ փարիսեցիներին, ովքեր ուրանում էին Նրա Աստուածութիւնը, այլև Ս. Հոգու հրաշագործութիւնը ժխտում. նրանց խղճմտանքն ըստ մարգարէութիւնների իսկ վկայում էր Ս. Հոգու աստուածային ներգործութեան մասին, սակայն թանձրացնում էին իրենց սիրտն ու բացայայտ խօսքերով

[1] Քրիստոս մեզ օրէնքներ տւեց՝ մեր հոգում գրւում, և Սուրբ Հոգով արձանագրեց որդերգրութեան փառքի մէջ» Գր. Արշարունի. անդ. 128: Ա Յովհ., Գ 9, Ե 18:

[2] Յաճախ., Ե 394:

[3] Մատթ., ԺԲ 32, Մարկ., Գ 29, Ղուկ., ԺԲ 10: Հմմտ. Ընդհ. 109. «Ով հաւատն է անարգում, ոչ թէ մարդու է անարգում, այլ՝ Աստծու, որովհետև ամեն աստուածապաշտի համար հաւատքը Աստւած է, և ով մկրտութիւնն ու մկրտող քահանային է անարգում՝ այդ անարգութեանը վերաբերում է Սուրբ Հոգուն, որովհետև մկրտողները նրանով են ծնւում աւազանի շնորհիւ, և ով մարդու հոգին և երեսն է անարգում՝ նոյն հայհոյութիւնը Աստծուն է վերաբերում, որովհետև հոգին Աստծուց դուրս ելած շունչն է, իսկ երեսը՝ Աստծու պատկերն է. նոյնը և բերանն է, որ ընդունողն է Քրիստոսի մարմնի և արեան»:

արհամարհում էին աստուածային գործը: Դա մի ապացոյց է, որ այդպիսի մարդը կատարելապէս Աստծու դէմ է և աստուածային կեանքն է ապաշնորհութեամբ արհամարհում, ուստի և նրա՝ իբրև կամովին չհաւատացողի՝ մեղքն աններելի է[1]: Աններելի է նաև այն մարդկանց մեղքը, ովքեր միանգամ Քրիստոսին ընդունած և Սուրբ Հոգու շնորհը ստացած լինելով, վերստին ուրանում են և սատանայական ճանապարհ բռնում հակառակ Աստծու, հակառակ Ս. Հոգու և հակառակ Եկեղեցու ու նրա բոլոր կարգերի, որոնց մէջ գործում է Ս. Հոգին Իր ճշմարտութեամբ ու շնորհներով: Ուստի և առաքեալը դրանց մասին ասում է. «Քանզի եթէ կամաւոր կերպով ենք մեղանչում ճշմարտութիւնն իմանալուց և ընդունելուց յետոյ, ուրեմն մեղքերի քաւութեան համար այլևս ուրիշ զոհ չի մնում, այլ մնում է դատաստանի ահեղ սպասումը և կրակի կատաղութիւնը, որ լափելու է Աստծու հակառակորդներին»[2]: Այդպիսիք ոչ միայն անձանց են կորուստ նիւթում, այլև՝ այլոց՝ ըստ իրենց կարողութեան ու դիրքի վնասաբեր ու վտանգաւոր լինելով[3]: Նրանք ոչ թէ մի դրական գաղափարով են մերժում Քրիստոսին ու Նրա ս. Եկեղեցու շնորհները, այլ նրանք ժխտում են մինչև անգամ Աստծու գոյութիւնը, որովհետև փախչում են աստուածային լոյսից, որ կարողանան իրենց չարութիւնները գործել խաւարի մէջ և ինքնարդարացմամբ: «Եւ այս իսկ է դատաստանը. որ լոյսը աշխարհ եկաւ, սակայն մարդիկ խաւարն աւելի սիրեցին, քան լոյսը, որովհետև իրենց գործերը չար էին, որովհետև ով չարիք է գործում, ատում է լոյսը և չի գալիս դէպի լոյսը, որպէսզի նրա գործերը չանդիմանեն» (Յովհ., Գ 19): Ըստ որում և Վահան Մամիկոնեանն էր ասում այդպիսիներին. «Ով խոստովանի ճշմարտութիւնը կը փրկուի գեհենից, իսկ ով սայթաքելով շեղուի ուղիղ ճանապարհից՝ անդառնալի կորստեան կը մատնուի: Եւ դուք, որ մտածում էք մարմնական երկիւղի և ծառայութեան մասին՝ ցանկացող էք մոլոր

[1] Տե՛ս Ա Տիմ., Ա 13, Եղիշէ 344-345:
[2] Եբր., Ժ 26-30, Ա Յովհ., Ե 16:
[3] Ընդհան., էջ 100: Այդպիսիներից էին զգուշանում և մեր Հայրապետները. «Մենք՝ ինչպէս որ ընկալել ենք՝ երկրպագութեամբ պատուել Սուրբ Երրորդութիւնը՝ այն պահպանում ենք առանց թերահաւատութեան և դրան [հաւատարիմ] կը մնանք մինչև յաւիտեան՝ խորշելով ամեն մի եղբօրից, որ կը շեղուի սրանից», Աբրահամ Կաթողիկոս տե՛ս Կաղանկ. Պատմ. 222:

բարբաջանքների, բնակւում էք խաւարի մէջ՝ արժանի չլինելով նայել արդարութեան արեգակ Քրիստոսին»[1]:

ԼԶ

ԱՍՏԾՈՒ ԽՕՍՔՆ ՈՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Փրկութիւնը տարածւում է քարոզութեամբ և իրագործւում ճանաչողութեամբ, իսկ ճանաչողութիւնը զարգացնում է մարդու հոգու մէջ գիտակցական հաւատք, որով նա մօտենում է այն փրկարար խորհուրդներին, որոնք տանում են հաւատացեալին դէպի Քրիստոսի հաղորդակցութիւնն ու Ս. Հոգու տաճար դարձնում նրան: Ուրեմն նախ պէտք է քարոզը լինի, որ հաւատքն էլ նրան հետևի: Բայց քարոզն էլ պէտք է Աստծու խօսքից բխի, որովհետև Աստծու շնորհների խորհուրդները միմիայն Աստուած կարող է ամենահաւատարիմ կերպով տալ. ինչ որ Աստուած չի տալիս ու լոկ մարդկային է, այն չի կարող մեր հոգու փրկութեանը ծառայել: Եւ քանի որ առաքեալները հրաման էին ստացել քարոզելու, պարզ է, որ Աստուած Իր խօսքը պիտի տար նրանց, անմիջապէս իր աստուածային լոյսով լուսաւորէր նրանց միտքն ու սիրտը, այնպէս որ նրանք իրենց քարոզութեան մէջ ազատ լինէին սխալներից և փրկութեան ճշմարիտ ճանաչողութիւն տային ամենքին: Առաքեալներն արդէն հէնց Քրիստոսից ստացել էին քարոզութեան կենդանի հիմունքներ: Նրանք ստացել էին կենդանի սերմեր, որոնք պէտք է հետզհետէ աճէին ու պտուղներ տային, սակայն նրանք այն ժամանակ միայն կարող էին կենդանարար վաղապետութեան պտուղներ տալ, երբ Քրիստոսի ուղարկած ճշմարտութեան՝ Ս. Հոգու հովանու տակ զարգանային: Առաքեալները պահում էին Քրիստոսի անմման խօսքերն իրենց հոգու մէջ, սակայն դեռևս չէին հասցրել կատարեալ գիտակցութեան և ինքնուրոյն

[1] Փարպ., էջ 386-387: «Աստուածապաշտութեան օրինակները հաստատուած են երկու կարգի հրամաններով, այսինքն՝ Աստուածութեան կամքով սահմանուած հրամանի խօսքով և բարի գործերով: Սակայն անձնիշխան հրամաններն առանց բարի գործերի ընդունելի չեն Աստծու առաջ և ոչ էլ հրամանակարգ հրահանգներն են ընդունելի Աստծուն առանց բարի գործերի: Որովհետև ինչ օգուտ է ճշմարտութեամբ իմանալ Աստուածային վարդապետութիւնը և չարաչար գործել: Նա՝ ի՞նչ օգուտ է բարետես զգաստութեամբ շրջել և սակայն [առանձին լինելով] ամբարշտութեամբ հայհոյել» Կոչ. ընդ. 57:

գործադրութեան: Նրանք պէտք է իւրացնէին այդ ամենը և իբրև լոյսի շողեր արձակէին, իսկ այդ այն ժամանակ կը լինէր, երբ Ս. Հոգին աճեցնէր այդ ամենն ու պայծառեցնէր արդիւնաւորութեան համար: Առաքեալները դեռ այնքան պատրաստ չէին եղել, որ Քրիստոս ամեն ինչ ասէր նրանց, ուստի և յայտնեց. «Դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց այժմ չէք կարող տանել: Երբ որ գայ Նա՝ ճշմարտութեան Հոգին, ամենայն ճշմարտութեամբ կառաջնորդի ձեզ, որովհետև ոչ թէ Ինքն Իրենից կը խօսի, այլ ինչ լսի, այն կը խօսի, և գալիք բաների մասին կը պատմի ձեզ: Նա ինձ պիտի փառաւորի, որովհետև ինչ որ առնում է ինձանից, կը յայտնի ձեզ» (Յովհ., ԺԶ 13-14): Նրանք միմիայն Ս. Հոգու հովանու տակ պէտք է հասկանային Քրիստոսի ասածներն ու վերստին յիշէին[1], այնպէս որ նրանց բոլոր քարոզածները լիովին նոյնանային Քրիստոսի քարոզածների հետ: Քրիստոս Ինքն ասում է նրանց. «Ով ձեզ լսում է՝ Ինձ է լսում և ով ձեզ անարգում է՝ Ինձ է անարգում...» (Ղուկ., Ժ 16): Թէպէտ առաքեալները գիտակցում էին այս խօսքի կարևորութիւնը, սակայն խոնարհաբար զանազանում էին իրենց խօսքն ու Քրիստոսի շուրթերից դուրս եկած խօսքը (Ա Կորնթ., Է 6):

Որքան էլ հրաշքներ գործեց Աստծու խօսքն առաքելոց՝ կենդանի քարոզութեան մէջ, այդուհանդերձ զանազան եկեղեցիների շահերը պահանջեցին բացակայող առաքեալների փոխարէն խրատական հրահանգներ ուղարկել հաւատացեալ համայնքներին և յիշեցնել նրանց բազմիցս ասուածները: Թէև դրուածքը չէր կարող երբեք կենդանի քարոզի կշիռն ունենալ այսուհանդերձ առաքեալները բարոյ համարեցին թղթերով նորոգել հաւատացեալների մէջ իրենց քարոզութեան հիմնական կէտերը կամ այն ամենը, ինչ որ անհնար կամ վտանգաւոր էր: Այդ թղթերը ժամանակի ընթացքում շատացան և ապա ամփոփուելով Հին Կտակարանի ժողովածուի հետ, պահպանուեցին եկեղեցում իբրև Աստծու Նոր Ուխտի հիմնական վարդապետութեան հարազատ արձանագրութիւններ:

Եւ ահա ինչպէս որ Ս. Հոգին դարեր շարունակ տուել է մեզ Աստծու խօսքը, Աստծու նախապատրաստական յայտնութիւնը մարգարէների բերանով[2],

[1] Յովհ., ԺԴ 16, 26, ԺԵ 26, Ա Թես., Բ 13, Բ Պետ., Ա 19, Բ Տիմ. Գ 15:
[2] Ելք., Դ 12, Ես., ԾԵ 10, 11, Բ Թագ., ԻԳ 2, Եր., ԻԳ 29, Եբր., Դ 12, Բ Տիմ., Գ 15, Յովհ., Ե 39, Ժ 35, Մարկ., Է 13, Մատթ., Ե 18. «Սուրբ Հոգին չի խօսում լեզուով, այլ կենդանութիւն է տալիս խօսել իմաստութեամբ եւ նոյնը ասել». Կոչ. ընծ 306:

միևնոյն Ս. Հոգին տուեց մեզ Աստծու կատարեալ յայտնութիւնը, Աստծու խօսքն Աստծու Աւետարանը[1] Ս. առաքեալների միջոցով: Ուստի և Պօղոս առաքեալը գրում է իր աշակերտին. «Որովհետև մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարող են իմաստուն դաձնել քեզ փրկութեան համար այն հաւատի միջոցով, որ Քրիստոս Յիսուսի մէջ է: Աստծու շնչով գրուած ամեն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու և արդարութեան մէջ խրատելու համար, որպէսզի կատարեալ լինի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» (Բ Տիմոթ., Գ 15-16): Այն, ինչ մարդ իր մարմնաւոր աչքով տեսնել չի կարող և ականջով լսել չի կարող. այն՝ որ աստուածային գաղտնիքներին է վերաբերում և աստուածային սրբութեան շրջանակին է պատկանում, այդ է, որ տուել են մեզ սուրբ հեղինակները Ս. Հոգով, ու միշտ շեշտել են, թէ՝ «Մենք Քրիստոսի միտքն ունենք» (Ա Կոր., Բ 16): Նրանք տուել են մեզ այն, որին բովանդակ մարդկութիւնն էր անձկագին սպասում: «Ուրեմն մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առանք, այլ՝ այն Հոգին, որ Աստծուց է, որպէսզի ճանաչենք այն, որ Աստծուց շնորհուեց մեզ: Եւ ինչ որ յայտնում ենք, ոչ թէ ճարտար խօսքերի մարդկային ուսուցումով է, այլ Հոգու վարդապետութեամբ. հոգևոր բաները հոգևոր խօսքերով ենք բացատրում», ասում է Ս. Պօղոսը (Ա Կոր., Բ 13): Արդարև, չնայելով առաքեալների այն շրջանին, որից նրանք դուրս են եկել, նրանք կատարեալ վստահութեամբ քարոզում են Աստծու խօսքը, ոչ մի դէպքում չեն տարակուսում և չեն տատանուում, որովհետև գիտեն, որ Սուրբ Հոգին է իրենց մէջ խօսում, ինչպէս խոստացել էր Քրիստոս, «Հաւատում ենք Սուրբ Հոգուն... որ խօսեց օրէնքների, մարգարէների և Աւետարանների մէջ, որ իջաւ Յորդանանի մէջ և քարոզեց առաքեալին...»:

Բայց Սուրբ Հոգու այս խօսելը մի մեքենայական թելադրութիւն չպէտք է համարել. ըստ Հռոմ. եկեղեցու մոլորութեան, ինչպէս նաև՝ հին բողոքականների, որ Ս. Գրքի բառերը, տառերն ու մինչև անգամ կէտերն ու ստորակէտները Ս. Հոգու թելադրած և հեղինակների ձեռքով մեքենայապէս գրուած են նկատում[53*]: Մենք արդէն տեսանք, որ առաքեալներն իրենց իսկ ասածները տարբերում են

[1] «Աստուած բազմապիսի ձևերով և այլազան օրինակներով նախապէս խօսեց մեր հայրերի հետ մարգարէների միջոցով, այս վերջին օրերին մեզ հետ խօսեց իր Որդու միջոցով, Որին ժառանգ նշանակեց ամեն ինչի, և որի միջոցով ստեղծեց տիեզերքը» (Եբր., Ա 1-2): Հմմտ. Հարց. 353:

Քրիստոսի հրամաններից, միւս կողմից կենսական զանազան պարագաներ, որոնք չեն վերաբերում Աստծու փրկութեան յայտնութեանը, չեն կարող Ս. Հոգու թելադրութիւնը լինել: Նոյնպէս և հեղինակների խօսքի ձևը, ոճերի տարբերութիւնը, բնաւորութեան յատուկ արտայայտութիւնը և այլն, բոլորովին զանազան են և նոր ապացոյց այդ մոլորութեան դէմ. Աստծու յայտնութիւնը նրա համար չէ, որ ոչնչացնի մարդու անհատականութիւնը:

Ի տարբերութիւն Հռոմ. եկեղեցու Բողոքականները Ս. Հոգու այդ խօսելը մի մասնաւոր ներշնչում են համարում, ասելով թէ՝ Ս. Հոգով է այն, ինչ որ հարկաւոր է անհատի երանութեանը: Սակայն Ս. Գրքում շատ բան կայ, որ անհատը չի կարդում, բայց իր հաւատքով երանելի է, կամ աւելի է ասած, քան անհրաժեշտ է անհատին: Ուրեմն հաւատացեալը չի կարող չափ լինել Ս. Գրքի արժանիքը որոշելու համար. իսկ եթէ այդպէս լինի, Ս. Գիրքը կենթարկւի անհատի քմահաճութեանը, ինչպէս այդ սովորական է բողոքականների մէջ, և ոչ թէ անհատը կենթարկւի Ս. Գրքին: Առհասարակ նկատւած է, որ արևմտեան թէ՛ Հռոմ. և թէ՛ Օրթոդոքս եկեղեցիները շեշտում են այն, թէ Ս. Գիրքը Աստծու խօսքն է, իսկ Բողոքականները այն, թէ՝ Ս. Գիրքը բովանդակում է Աստծու խօսքը: Մինչդեռ Հայաստ. Ս. Եկեղեցին պնդում է, որ Ս. Գիրքն Աստծու խօսքն է և բովանդակում է Աստծու խօսքը՝ ճանաչելով թէ՛ նրա միութիւնը և թէ՛ տարբերութիւնները, ըստ Քրիստոսի աստուածմարդկային բնութեան միութեան (Ա Կոր., Է 16): Ս. Գիրքն ուրեմն Քրիստոսի եկեղեցու վարդապետութեան հիմնական արձանագրութիւնն է կամ Ս. Հոգու ներշնչման աստուածային յայտնութեան հաւատարիմ ճշմարտախօսութիւնն է, ըստ Սուրբ Գրոց և առաքելական մտքի:

Բայց Հռոմ. եկեղեցին աւելի ևս առաջ գնալով շեղւում է քրիստոնէական փրկութեան սկզբունքից ևս, ըստ որում ԺԳ դարից սկսած նախ արգելեց Ս. Գիրքը կենդանի լեզուի թարգմանել (Տուլուզեան ժողովով). երկրորդ՝ Վուլգատա կոչւած լատին թարգմանութիւնն իբրև վաղնջական թարգմանութիւն՝ համարեց միակ բառացի ներշնչւածը (ԺԶ դար, Տրիդենտեան ժող.), երրորդ՝ նրա գրքերը կանոնական ճանաչեց[54*] և վերջապէս աշխարհականներին արգելեց Ս. Գիրք կարդալ առանց մասնաւոր թոյլտուութեան: Հռոմ. եկեղեցին ժողովրդի վրայ հոգևորականների բռնութիւնն ամուր պահելու նպատակով վնասակար է

համարում Ս. Գրքի ընթերցանութիւնը և միայն վստահելի մարդկանց է թոյլ տալիս: Այսպէս Պիոս Թ նախկին քահանայապետը մի չարիք է համարում Աստուածաշնչական ընկերութիւնները, որոնք մինչև այժմ մօտ 400 լեզուով Ս. Գիրք են տարածել[55*]:

Աւելորդ է մի առ մի խօսել այս ակներև մոլորութիւնների մասին: Հայաստ. ս. Եկեղեցին դատապարտելով կոյր հաւատքը և քաջալերելով գիտակցական ճշմարտասիրութիւնը, անհրաժեշտ է համարում հաւատացեալների համար Ս. Գրքի ընթերցանութիւնը և ուսումնասիրութիւնն[1], ըստ Քրիստոսի և Նրա սուրբ առաքեալների պատուէրի[2]: Ս. Գիրքը գրւած է Եկեղեցու ղեկավարութեան համար ի փրկութիւն իւրաքանչիւր հաւատացեալի[3]: Եւ որովհետև ընթերցողի համար սկզբունք է «ով ընթերցի՝ մտքում պահի», Հայաստ. ս. Եկեղեցին միշտ հարցնում է իր հաւատացեալ անդամից՝ «Հասկանո՞ւմ ես արդեօք, ինչ կարդում ես» և լսելով՝ «Ինչպէ՞ս կարող եմ, եթէ մէկը չառաջնորդի ինձ» (Գործք., Ը 30), առաջնորդում է նրան և բացատրում ըստ առաքեալների և Ս. Հայրերի ճշմարիտ սկզբունքների, քանի որ Աստծու խօսքի քարոզութեամբ պէտք է լինի փրկութիւն, լոյս ու առաջադիմութիւն, ըստ Հայաստ. ս. Եկեղեցու հիմնադրութեան աստուածային հրամանի ևս: Այդպէս որոշարկեց Ս. Գրիգոր Լուսաւորչի առաջնորդողը. «Քարոզութիւնը շատ ժամանակներ է աճեցնում և ծնւում են նորոգւած նոր ծնունդներ, և բազմացնում է մկրտութիւնը»: «Որպէսզի բժշկւեն խոցւածները, և քարոզութեան մէջ յաջողւածը օրըստօրէ տևապէս առաջադիմում է՝ հասնելու Քրիստոսի հաւատքի հասակի լրանալու չափին»[4]:

Ուրեմն ըստ Հայաստ. ս. Եկեղեցու իւրաքանչիւր ոք պէտք է կարդայ Ս. Գիրքը, որ անհատնում աղբիւր է մխիթարութեան ու քաջալերութեան, զօրացման ու դաստիարակութեան, ամեն իրավիճակի յարաբերութեան մէջ կեանքի մի ուղիղ շաւիղ է, երջանկութեան ուղեցոյց է և դաստիարակ՝ ամենայն ժամանակի ու

---

[1] «Իսկ մեր երանելի վարդապետները եկեղեցու բոլոր կտակարանները երեք և չորս անգամ Գրքի սկզբից մինչև աւարտը սովորեցնելուց յետոյ՝ մեզնից նոյնն էին պահանջում և մեզ հարկադրում էին պաշտել Դաւթի Սաղմոսի նման» Փարպ., էջ 605-606:
[2] Յովհ., Ե 39, Ա Պետ., Գ 15, Հռ., ԺԲ 2, Կող., Ա 9, Բ Տիմ., Գ 13-17, Ա Թես., Ե 21:
[3] Ղուկ., Ա 3, Մատթ., Բ 5, Գ 4, 6, 7, Մարկ., Թ 11 և այլն:
[4] Ագաթ. 438:

հասակի համար: Նա ընտանի է մեր հոգուն, բայց և որքան կարդում ենք՝ վերջնականապէս չենք կարողանում նրա բոլոր մտքերի խորութեան մէջ թափանցել, որքան հարստանում ենք աստուածային խորին մտքերով, դարձեալ մեծամեծ հարստութիւններ ենք գտնում նրա մէջ և եթէ սրտանց նւիրւում ենք նրան, մեր հոգևոր ամայութիւնը վերացնում ենք նրանով[1]: Նրա միջից ամեն դարում բխում է աստուածային նորանոր իմաստութիւն ու ճանաչողութիւն: Նրա իմաստութիւնն ու ճանաչողութիւնը քրիստոնէական ճշմարիտ կեանքի ամենապտղաբեր հարստութիւններն են եղել և քրիստոնէական եկեղեցին իր բովանդակ բարեզարդութեամբ կառուցել է նրա սկզբունքների վրայ, որոնցից երբեք չպէտք է շեղւի:

Ակնյայտ է առաքեալների աշակերտների Կղեմէս Հռոմայեցու, Իգնատիոս Անտիոքացու, Պողիկարպոս Զմիւռնիացու և այլոց գրւածքների իսկ զգալի տարբերութիւնները առաքելական թղթերի նկատմամբ: Ուստի որպէսզի մարդիկ լաւ տեսնեն Ս. Գրքի աստուածային աննման ծագումն ու յաւիտենական ճշմարտութիւնը, պէտք է թափանցեն նրա մանրամասնութիւնների մէջ, քննեն ու զննեն, համաձայն առաքելական մտքի, և կը տեսնեն, որ այդ ժողովածու գրւածքի մէջ Աստծու յայտնութիւնը կատարեալ միութեամբ, ներդաշնակութեամբ ու ճշմարտութեամբ ընթանում է սկզբից մինչև վերջ և ամեն ազգի, տեղի ու ժամանակի հաւատացեալներին տանում դէպի աստուածային իմաստութիւն: Ս. Գիրքն է մեր հաւատքի, առաքինութեան և աստուածահաճոյ կեանքի ուսուցիչը. նա է մեր մտքի, սրտի ու կամքի դաստիարակը, որի մի պարզ ընթերցանութիւնն անգամ ցոյց է տալիս նրա վեհութիւնն ու աստուածային բարձրութիւնը: Ըստ որում Նրա աստուածայնութիւնը նկատում ենք ոչ միայն ուրիշ գրւածքների համեմատութեամբ, այլև իր ներքին ուժով ըստ առաքեալի խօսքի՝ «Կենդանի է Աստծու խօսքը, ազդու և աւելի հատու, քան ամեն մի երկսայրի սուր, և կտրում անցնում է մինչև ոգու և հոգու, յօդերի և ողնուծուծի բաժանման սահմանը. նա

[1] «Աղաչում եմ, ուշադիր եղիր. երբ աստուածային գրքեր ես ձեռնամուխ լինում կարդալ և խօսքերի զօրութիւնը կամենում ես իմանալ՝ թող մի ձայնաւոր իսկ չվրիպի քո ուշադրութիւնից. բովանդակ շարադրանքը յղի է երկնաւոր իմաստութեամբ, և [դրանք] հոգևոր խօսքեր են ծնում իմաստուն մտքի մէջ՝ անհասկացողների մօտ ամլանում են, իսկ ուշիմ մարդկանց մէջ դառնում բազմորդի: Այդպէս էլ՝ իրաքանչիւր միտք լսելիքի մէջ, որոնց ականջի քիմքը առողջ է ըստ այնմ էլ մտքի համարում կերակուրներն են քաղցրանում» Մամբրէ Վերծ. 30:

քննում է սրտի մտածումները և խորհուրդները»: Նրա մէջ է Աստծու զօրութիւնը, սակայն ոչ թէ սոսկ խօսքն է զօրաւոր, «որովհետև Աստծու արքայութիւնը ոչ թէ խօսքով է, այլ՝ զօրութեամբ»[1]: Այս պատճառով և սկզբից ի վեր Հայաստանեայց ս. Եկեղեցու ժամասացութեան և ամեն կարգի մեծ մասը Ս. Գրքի ընթերցանութիւնն է կազմում[2]: Ըստ այսմ և իրաւամբ Ս. Գիրքը կոչւում է Աստուածաշունչ, որով և պարզապէս որոշւում է առհասարակ Ս. Գրքի նպատակը իրաքանչիւրի համար: Կամ ինչպէս Ս. Գրիգոր Նարեկացին է ասում. «Արդ, ինչպէս նրանք, ովքեր օտարանում են մօր կաթից և նրա սննդից, և [այդ պատճառով] մեռնում, այդպէս էլ նրանք, ովքեր օտարանում են եկեղեցուց, նրա ստինքներից, հոգևոր կերակրից՝ [Ս.] Գրքից, որ եկեղեցու ստինքն է, չփափագելով, չբաղձալով են մտնում ներս և նրա մէջ չեն կերակրւում Գրքով՝ չեն կարող ապրել, այլ՝ կը մեռնեն անմահ մահով»[3]: Հետևաբար իրաքանչիւր հայի համար մի սկզբունք պէտք է լինի. այն, որ Հայաստանեայց ս. Եկեղեցու հիմքում է

[1] Եբր., Դ 12, Ա Կոր., Դ 20, Բ 4, Ա 21, Բ 1, Ագաթ. 36, 70: «Քանզի աւելի ողորմելի բան չկայ նրանց համար, ովքեր զուրկ են Ս. Գրքի սիրուց և աստուածային պատուիրանների վերծանութեան փափագից: Աստուածասիրութիւնը մարդու մէջ ծնւում է Գրքից» Մեկ. ժամ.:

[2] Ժամագրոց մեկնութեան հեղինակը դատապարտելով իր ժամանակի տգէտ քահանաներին, որոնք ժամասացութիւնը կարճելու համար դուրս էին թողնում ընթերցւածքները, բացատրում է Ս. Գրքի մեծ նշանակութիւնը և ասում. «Եթէ մասնաւոր բաները զօրանում են իմաստունների խրատներով, ապա որքան աւելի՝ հոգևոր բաները Աստծու խօսքերով: Եւ եթէ պիղծ մարդկանց խօսքերը և սատանայից հնչած երգերը քաղցկեղի նման լափում և գերում են զգաստ մարդկանց միտքն ի կորուստ [նրանց], ապա որչա՞փ Սուրբ Հոգուց ներշնչւած խօսքերը ունկնդիրների ոգիները գերում Քրիստոսի հնազանդութեան մէջ: Եւ եթէ մարդկային բաները կարող են [փոխել] ոչ միայն մարդկանց, այլև՝ անասուններին. ինչպէս Գիրքն է ասում. «Եզան, ձիու, էշի և շան ծուլութիւնը վերածելով ջանասիրութեան», ապա ինչպէ՞ս չի կարող քրիստոսատուր խրատը եզան պէս անասունի նմանւող կամ էշի պէս անմիտ մի մարդու դարձի բերել չարից դէպ բարին: Այլև Միւռոնի, Խաչի և Եկեղեցու օրհնութիւնը, քահանայական ձեռնադրութիւնը, թագաւորների օծումը և քրիստոսական պատարագի բաշխումը Սուրբ Գրքով է կատարւում: Նաև քրիստոնէութեան հաւատքը, և մկրտութիւնը և օրինաւոր ամուսնութիւնը, մահը, կեանքը և այնտեղից էլ [յաւիտենական] կեանքի ծանօթութիւնը, երկնքի արքայութեան տեղակալը և աստուածգիտութիւնը և սկիզբն ու վախճանը մենք իմանում ենք Սուրբ Գրքով: Եւ չկայ մի հոգևոր գործառնութիւն կամ բարեկարգութիւն, որ առանց Գրքի լինի» Հմմտ. Մանդ. 204. «Եւ արդ, հարկ է գրւած պատուիրանները ոչ աւելացնել և ոչ պակասեցնել»:

[3] Մեկնութիւն Երգ երգոցի. Զ 8:

դրոշմած. «Մեր վարդապետները Գիրք են՝ նրանց միջոցով ընդունենք յաւիտենական Յոյսը, և նրանցով առաջնորդուենք աշխարհում»[1]:

ԼԷ

ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի սուրբ առաքեալները հրաման ստացան Տիրոջից Ս. Հոգով քարոզելու և եկեղեցիներ հաստատելու ու կազմակերպելու: «Ապա ուրեմն, հաւատքը լսելուց է և լսելն էլ՝ Քրիստոսի խօսքից» (Հռ., Ժ 17): Կենդանի քարոզութեամբ պէտք է նրանք վկայէին Քրիստոսի մասին, Աստծու պատգամաւորները և Աւետարանը յայտնէին՝ նրանց հաւատքը հաստատելու համար, Տիրոջ եկեղեցին հիմնադրէին և սերտ կապերի մէջ դնէին Քրիստոսի հետ: Քրիստոսի այդ հրամանը ոչ միայն փրկութիւնը տարածելու, այլ փրկուածներին իրենց հաւատքի մէջ խրատելու և ամրացնելու համար էր (Յովհ., Ը 31, Մարկ., ԺԶ 15): Եւ որովհետև կենդանի քարոզը միշտ պէտք է եկեղեցում անպակաս լինէր, ուստի և առաքեալների միջոցով Տէրն իսկ կարգում է աւետարանիչներ, հովիւներ ու վարդապետներ, որ նրանք թէ՛ աստուածպաշտութիւնը կատարեն և թէ՛ հաւատացեալներին ամրացնեն, Քրիստոսի մարմինը կառուցեն և ամենքին միաբան հասցնեն աստուածգիտութեան կատարելութեանը (Եփ., Դ 11-16): Այսպիսով Աստծու խօսքի կամ նրա պաշտօնեաների քարոզութեան ու ճշմարիտ գործառնութեան մէջ գործում է Քրիստոս Ինքը (Մարկ., ԺԶ 20): Նա միշտ ներկայ է Եկեղեցում Սուրբ Հոգով, ըստ Իր խոստման, ինչպէս տեսանք, ըստ որում Աստծու խօսքի կենդանի քարոզը Ս. Հոգու նոյն ուժով և Քրիստոսի ներկայութեան նոյն ներգործութեամբ ազդում է հաւատացեալների վրայ և նրանց մէջ հաստատում Քրիստոսին: Այդ քարոզութեամբ Աստծու սպասաւորը նրա «Խօսքի սպասաւորն է» (Ղուկ., Ա 2) և Ս. Հոգու շնորհով Քրիստոսի խօսքն է ներարկում հաւատացեալի սրտի մէջ՝ ուշադրութեամբ մտասևեռ լինելու և ճշմարտութիւն ընդունելու համար (Ա Կոր., ԺԴ 29): Ուստի և «Եթէ աստուածային խօսքերը խմեցնես ծարաւած հոգուդ՝ երբեք չես լցի ծանրութեամբ, այլ թեթևանալով դարձեալ դրան կը փափագես»[57*], ասում է մեղրածորան քարոզիչ ս. Եղիշէն:

Ահա ուրեմն ինչպէս Քրիստոս շնորհք ու ճշմարտութիւն տուեց Իր առաքեալներին (Յովհ., Ա 14, 17) փրկութիւն տարածելու համար, այնպէս էլ Ինքն է նրանց Ճանապարհը, Ճշմարտութիւնն ու կեանքը (ԺԴ 6) և ով էլ ճշմարտութիւնից է՝ կը լսի Նրա ձայնն ու կը հետևի Նրան (ԺԸ 37): Ինքը Քրիստոս գրաւոր ոչինչ չթողեց, այլ քարոզեց Աւետարանը բերանացի (Մատթ., Դ 23), բայց պահանջում էր, որ Հին Կտակարանը լաւ կարդան Իրեն հասկանալու համար: Բերանացի էր քարոզում, որովհետև կամենում էր կենդանի խօսքով ազդել ժողովրդի վրայ, քանի որ ճշմարտութիւնն ու կեանքն անբաժանելի են, մինչդեռ գրածքը ոչ կենդանութիւն ունի և ոչ էլ ընթերցողին հանում է եսականութիւնից դէպ ընկերային կեանք: Ուստի և Քրիստոս, որ յայտնող ու յայտնուող Աստուած է, բնականաբար պէտք է ճշմարտութիւնն Իր ամենազօր խօսքով քարոզէր, ըստ որում և այդ խօսքի ուժը ներշնչեց Իր առաքեալների մէջ, որոնք և նոյնը կատարում էին գիտակցութեամբ[1], մանաւանդ, որ նախ հալածանքների մէջ անհրաժեշտ էր ուժգին գործունէութիւն և ոչ թէ մեռեալ գիր առանց կենդանի ապացոյցի, և երկրորդ՝ պէտք է որ Հին Կտակարանը բացատրել, հասկացնել, նոյնպէս և իրաքանչիւր միտքն մասնայատուկ կերպով պարզել ու լուսաւորել ճշմարտութեամբ:

Ինչպէս որ կենդանի ներգործութեամբ պէտք է ճշմարտութիւն մտնէր հաւատացեալի մէջ, այնպէս էլ կենդանի կերպով էին տրւում շնորհները, ինչպէս տեսնում ենք աստուածապաշտութեան տեսանելի կարգերի օրինադրութեան մէջ[2]: Ուստի և սպասաւորներին պատուիրում էին զգոյշ լինել շնորհաբաշխութեան ժամանակ (Մատթ., Է 6): Առաքեալներն իրականացնում էին քրիստոնէական կեանքն ու ճշմարտութիւնը Եկեղեցու մէջ, որտեղ ամենայն ինչ համայնքի առաջ քարոզւում և կատարւում էր անմիջապէս առաքեալներից սովորած պաշտօնեաների միջոցով, ուստի կենդանի շփում ունեցող պաշտամունքի

---

[1] Ցաճախ., ԺԲ 232, Զ 220, Եղիշէ 333: Հմմտ. Կոչումն ընծայութեան 13. «Քո անձը պարսպիր Ս. Գրքով, որպէսզի Տէրը քեզ հոգևոր սեղան դարձնի»:

[1] Մատթ., ԻԸ 19, Մարկ., ԺԶ 15, Յովհ., ԺԶ 12, Ղուկ., ԻԴ 48, Գործք., Ա 8, Հռ., Ժ 14, Եփ., Դ 7-14, Եբր., Բ 1-4:

[2] Ա Կոր., ԺԱ 23, 2, ԺԴ 33, ԺԵ 1-3, Բ Թես., Բ 15, Գ 6, Հռ., ԺԶ 17, Փիլ., Ա 17, Կող., Բ 7:

մասնակիցները կարիք չունէին գրաւոր վարդապետութեան[1]: Առաքեալները պարտաւորում էին[2] իրենց ստորադրեալներին պահպանել իրենց աւանդածները, իսկ հետից, ինչպէս տեսանք, լրացնում էին իրենց ասածները կամ յիշեցնում գրով և ոչ թէ մի ամփոփ քարոզութիւն էին տալիս. այնպէս որ Քրիստոսի կեանքի գլխաւոր դէպքերն անգամ նրանք չշտապեցին գրի առնել, այլ՝ միայն շատ ուշ: Ի դէպ, Պօղոս առաքեալը նմանապէս ոչ թէ մի գրուածքից, այլ կենդանի խօսքով լսեց շատ մանրամասնութիւններ[3]: Այդպէս և Ղուկասն ու Մարկոսը գլխաւորապէս առաքեալների աւանդածը գրեցին:

Այսպիսով առաքեալները եկեղեցիներ էին հիմնադրում ոչ թէ գրաւոր կերպով, այլ կենդանի քարոզութեամբ և կենդանի քարոզութեամբ աւանդեցին իրենց նշանակած եպիսկոպոսներին ու քահանաներին այն ամենն, ինչ որ պէտք էր գիտենալ եկեղեցու կանոնաւոր ընթացքի, բարեզարդութեան, աստուածպաշտութեան, քահանայական գործունէութեան, կանոնական սկզբունքների և այլ նոյնպիսի եկեղեցական գործերի համար: Հետևաբար սրբազան աւանդութիւն են կոչւում առաքելական այն բոլոր հրահանգներն ու կարգերը, որոնք սկզբից յաջորդաբար մինչև մեր օրերը տրուել են Եկեղեցու պաշտօնեաներին յատկապէս Եկեղեցու տարածման, կարգաւորութեան, բարեզարդութեան և կառավարութեան համար:

Առաքեալների աւանդածներից կարող էին լինել այնպիսիները, որոնք զանազան առիթներով հարկաւոր լինէին գրելու ու յիշէին նրանց թղթերի մէջ (Յովհ., ԻԱ 25), սակայն նոյնիսկ նրանց գրուածքները, որպիսիք միմիայն մի քանի առաքեալներից են մնացել, աւանդութեամբ են պահուել, ամենայն հարազատութեամբ պահպանուել, տարածուել ու մեզ հասել, և մենք, նախքան դրանց կարդալն, առաքելական դարերի վկայութիւններից գիտենք, որ դրանք առաքեալների գրուածներն են ու մնացել են ամենայն հարազատութեամբ: Այդ գրուածներն էլ կոչւում են կանոնական, այսինքն՝ եկեղեցու համար չափորինակ,

[1] Տե՛ս և Հուստին. Զատագ., Ա 66:
[2] Բ Տիմ., Ա 13, 14, Ա Տիմ., Զ 20, Տիտ., Ա 9, Բ 1, 15, Գ 8:
[3] Բ Յովհ., 12, Գ Յովհ., 13, Յովհ., ԻԱ 25, Գործք., Ա 3, Ա Կոր., ԺԱ 23. «Բայց ուրիշ շատ բաներ էլ կան, եթէ մէկը մէկ առ մէկ գրած չլինէր, կարծում եմ, թէ աշխարհն իսկ բաւական չէր լինի պարփակելու այդ գրքերը, եթէ դրանք գրած չլինէին» (Յովհ., ԻԱ 25):

պարտաւորիչ վարդապետութիւն, ինչպէս և եղել են առանց կասկածի բոլոր քրիստոնէական եկեղեցիների մէջ առաջին դարերում, որոնք սկզբնապէս թարգմանուեցին հայերէնի («քսաներկու յայտնի գրքերը»[56*] և Նոր Կտակարանը)[1] ու այսօր կարդացւում են Հայոց Եկեղեցում:

Երկրորդ՝ Ս. Գրքի շատ տեղեր մեզնից հեռաւոր ժամանակների վերաբերելով՝ մեզ անհասկանալի են, ըստ որում դարձեալ հին աւանդութիւնները Ս. Գրքի հետ զուգընթացաբար մեկնում են կամ տեղեկութիւն տալիս այդ հասկացողութիւնների մասին, որ ժամանակին կենցաղավարել են և մենք էլ պէտք է ընկալենք համաձայն առաքեալների ու նրանց աշակերտների քարոզութեան:

Երրորդ՝ Ս. Գրքից յայտնի այն հաւատամքը, որ պարտաւորիչ է իւրաքանչիւր քրիստոնեայի համար, որպէսզի մի եկեղեցու անդամն ու շնորհների վայելողը ճանաչի, նոյնպէս և աւանդութեամբ է կազմուել ու մեզ հասել:

Չորրորդ՝ աստուածպաշտական կամ փրկարար արարողութեան այն կարգերի հրամանները, որոնք հարևանցիօրէն յիշւում են Ս. Գրքում, դարձեալ Սրբազան աւանդութեամբ ենք իմանում, թէ ինչպէ՞ս և ի՞նչ կանոնով պէտք է կատարուեն հաւատացեալների փրկութեան համար:

Վերջապէս հինգերորդ՝ Ս. Գրքի հեղինակներն ակնարկելով զգուշացնում էին ծանօթ ընթերցողներին այն մոլորեցուցիչներից ու մոլորութիւններից, որոնք

[1] Խորեն Պատմ. III ԺԳ. Դրանք են Ծննդոց, Ելից, Ղեւտացւոց. Թւոց, Բ Օրինաց Յեսուայ, Դատաւորաց, Հռութ, Ա-Դ, Թագաւորաց Ա-Բ Մնացորդաց, Եսթեր, Եզր (Բ), Նէեմի, Երեմիա եւ Ողբ, Դանիէլ, Եզեկիէլ, ԺԲ մանր մարգարէներ, Յովբ, Սաղմոս, Առակք, Ժողովող, Երգ երգոց, որոնք և յիշւած են Սիոն կաթուղիկոսի կանոնաց մէջ իբրև հաշտելիներ Հմմտ. Կոչ. Ընծայութեան 82-84:
Երկրորդականոն են կոչւում տեղ-տեղ և երբեմն-երբեմն կանոնական չհամարուածները, բայց այժմ Ս. Գրքի ժողովածուի մէջ եղածները, որոնք են Բարուք, Յուդիթ, Իմաստութիւն Սողոմոնի, Ա-Բ Մակաբայեցոց, որոնցից ունենք նաև ընթերցուածքներ մեր Եկեղեցում կանոնականաց շարքում:
Տարականոն են, այսինքն՝ կանոնից դուրս, բայց կարդալու համար օգտակար են Տովբիթ, իմաստ. Սիրաքայ, Գ Մակաբ. և Ա և Գ Եզր.
Նոր Կտակից երկրորդականոն են Եբրայ. Յակովբու, Բ Պետր. Յով. Բ ու Գ և Յուդայի թղթերը, բայց մեզ մօտ՝ կանոնականի հաւասար: Տարականոն են Յայտնութիւնը, Հանգիստ Յովհաննու, Գ Կոր. և թուղթ Կորնթացոց առ Պօղոս[57*].
Տարականոն են, այսինքն՝ կանոնից դուրս ու խոտելի են Կտակ 12 Նահապետաց, Պատմութիւն Յովսէփայ և Ասանէթին. մահ 16 մարգարէից. Մանկութիւն Յիսուսի Տօն Մարիամու և այլն[58*]:

այն ժամանակներում իսկ վտանգաւոր էին եկեղեցու բարեկարգութեան և հաւատացեալների փրկութեան համար: Դրանց մասին ևս աւանդութիւնն է մեզ մանրամասն տեղեկութիւններ տալիս:

Արդ, թէ որքան մեծ տեղ էր զբաղեցնում սրբազան աւանդութիւնը քրիստոնէական եկեղեցու մէջ, երևում է առաքեալների խօսքերից ևս. այսպէս Ս. Պօղոսն ասում է. «Գովում եմ ձեզ, որ յիշում էք ինձ ամեն ինչում և պահում էք աւանդած բաները, ինչպէս որ աւանդեցի ձեզ» (Ա Կորնթ., ԺԱ 2): «Այսուհետև եղբայրներ, հաստատ մնացէք և պինդ պահեցէք այն աւանդութիւնները, որ սովորեցիք թէ՛ խօսքով և թէ՛ մեր թղթով» (Բ Թեսաղ., Բ 14): «Ով Տիմոթէոս, պահիր աւանդը՝ հեռու մնալով պիղծ և նորահնար խօսքերից» (Ա Տիմ., Զ 20): «Ինչ որ լսեցիր ինձնից բազում վկաներով, աւանդիր այն հաւատարիմ մարդկանց, որ կարող լինեն ուրիշներին էլ ուսուցանել» (Բ Տիմոթ., Բ 2):

Հետևաբար սրբազան աւանդութիւնն պտնում է իր սկիզբն առաքեալներից թէ՛ ըստ իր էութեան և թէ՛ ըստ իր զարգացման. սուրբ աւանդարանն է եկեղեցին, որտեղ հաւատացեալը գտնում է այն ամեն կարգերը, որոնք նրան դաստիարակում ու տանում են դէպի փրկութիւն[59*]: Սակայն քրիստոնէական եկեղեցին ընդհանրապէս աւանդապահ է մեզ Հայերիս համար միմիայն, մինչև եկեղեցիների բաժանումը Քաղկ. ժողովով, այն է մինչև Ե դարի առաջին կէսը, իսկ այնուհետև մեզ համար աւանդատու է միմիայն Հայաստանեայց ս. Եկեղեցին թէ՛ առանձնապէս և թէ՛ հների գրուածները սեփականօրէն Ս. Հոգու ճշմարիտ հաստողութեամբ մեզ հասցնելով:

Սրբազան աւանդութեան մէջ կարող ենք զանազանել հետևեալ տեսակները.

1- Դաւանական- թէ ի՞նչ է դաւանանքը, ինչպէ՞ս և ի՞նչ ձևով ու ոճով պէտք է հայը խոստովանի Հայաստ. ս. Եկեղեցու հաւատարիմ զաւակը լինելու համար: Դաւանական աւանդութիւնները գտնում են հաւատոյ հանգանակներում, ժամագրքում, ծիսարաններում, Հայոց ս. Հայրերի գրուածներում և նիւթ են մատակարարում դաւանաբանութեան համար[60*]:

2- Շնորհաբաշխական, որով ստանում ենք փրկարար շնորհներ, ինչպէս ձեռնադրութիւնը, առհասարակ եօթը ս. խորհուրդների կատարումը, որոշ եկեղեցական ոգի, հաւատքի միութիւն, սէր և այլն: Այս սրբազան աւանդութիւնը

գտնում է յատկապէս եօթը խորհուրդների ծիսարանների (ձեռնադրութեան մաշտոց, խորհրդատետր և այլն) և նրանց մեկնութիւնների մէջ: Այս և (5) աստուածապաշտական աւանդութիւնները կազմում են աստուածապաշտութեան կարգ կամ պաշտօնաբանութեան նիւթը[61*]:

3- Վարդապետական, որով իմանում ենք Հայաստ. ս. Եկեղեցու բարոյական ու դաւանական ուսմունքները: Աղբիւրներ են Հայոց Եկեղեցու բոլոր եկեղեցական մատեանները: Այս աւանդութիւնը մտնում է դաւանաբանութեան և բարոյաբանութեան ուսումնասիրութեան մէջ:

4- Վարչական կամ կանոնական- այն բոլոր կարգերն ու կանոնները, որոնցով կառավարւում է Հայաստ. ս. Եկեղեցին և որոշւում են հոգևորականների և աշխարհականների պարտաւորութիւնները և իրաւունքները: Յատուկ աղբիւրներ են Հայոց Եկեղեցու կանոնագիրքը, ծիսարանները, վանական կարգերը. ս. գրուածները, կոնդակները, վարդապետական յաջորդութիւնը, կարգապահութիւնը և այլն. բնականաբար այստեղ հիմնական տեղ են զբաղեցնում Հայաստանեայց ս. Եկեղեցու ժողովների, ս. Հայրերի ու նրանց հեղինակութեամբ հաստատւած կանոնները: Այս նիւթով զբաղւում է եկեղեցական իրաւաբանութիւնը[62*]:

5- Աստուածպաշտական, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս պէտք է աղօթել, եկեղեցում կանգնել, բուրվառ տալ և այլն: Ուղեցոյց են ծիսարանները. Ժամագիրք, Ճաշոց, Յայսմաւուրք, Շարական, Տօնացոյց և այլն, նոյնպէս և գործնական պաշտամունքն ազգային եկեղեցիներում և մանաւանդ Ս. Էջմիածնի վանքում:

6- Պարագայական սրբազան աւանդութիւնը, որով իմանում ենք Հայաստանեայց ս. Եկեղեցու ճարտարապետութիւնը, անօթները, արդ ու զարդը, զգեստները և այլ պարագաները. սրանց աղբիւրներ են բոլոր եկեղեցական մատեանները և մանրանկարները, հին եկեղեցիների շինութիւնները, աւերակները, քանդակները, արձանագրութիւնները, ինչպէս նաև՝ զանազան հնութիւններ, անօթներ, զգեստներ և այլ իրեր[63*]: Այս ամենը ընդհանրապէս նիւթ է պաշտօնաբանութեան, և յատկապէս եկեղեցական հնախօսութեան:

Վերջապէս 7- պատմական, որով ծանօթանում ենք քրիստոնէական հին կեանքի և եկեղեցու յաղթական մարտահանդէսին և նրա մէջ փայլած

նահատակների ու քաջերի սխրագործութիւններին: Աղբիւրներ են հին յիշատակները, Յայսմաւուրքը, արձանագրութիւնները, գրչագրերի յիշատակարանները և այլն, որոնցով զբաղւում է եկեղեցական պատմութիւնը:

Վերոյիշեալ գրաւոր աղբիւրներով յատկապէս զբաղւում է եկեղեցական մատենագրութիւնը, իսկ և Ս. Գրքի աւանդութեան մասին կարևոր տեղեկութիւն է տալիս Ս. Գրոց ուսումնասիրութիւնը:

Պէտք է նկատի ունենալ, որ իբրև աղբիւր առաջնակարգ տեղ են զբաղեցնում աշխատութիւններն այն Ս. Հայրերի, որոնք տօնւում և յիշատակւում են[1] Հայաստանեայց ս. Եկեղեցում և իրենց աշխատութիւնների մէջ հաւաքել և արձանագրել են թէ՛ առաքեալներից ու թէ՛ յաջորդաբար նրանց աշակերտներից լսած ու սովորածները: **Դրանց հետևելիս պէտք է գերադասութիւն ու նախակարգութիւն տալ միշտ մեր Դ և Ե և ապա այդ դարերին մօտիկ ժամանակների աշխատութիւններին յաջորդաբար մինչև ԺԴ դար:**

Հռոմ. եկեղեցին իր աւանդութիւնը բարձր է դասում Ս. Գրքից, և այն համարում է հաւատքի աղբիւր ինչը և Ս. Գրքի հետ ձևակերպում է ըստ իր **քմահաճոյքի՝ հոգևորականներին ճանաչելով աւանդութեան բանաւոր աղբիւր:** Հռոմ. եկեղեցին պապական վճիռները նոյնպէս հաւատքի աղբիւր է ճանաչում **Ս. Գրքին հաւասար,** ուստի և թէ՛ կամաւոր ու երկրորդականոն գրքերը խառնում է իրար հետ, թէ՛ կամաւոր փոփոխութիւններ է մտցնում ինչպէս հին եկեղեցու երեք տիեզերական ժողովների կանոնների մէջ, այնպէս էլ ս. Հայրերի գրուածքներում: Ե դարից մինչև Թ դարը Յունաց եկեղեցու հետ միաբան լինելով հանդերձ նա դրժում է նաև այդ ժամանակի ընդհանուր աւանդութիւնների միութիւնը, փոփոխում է դրանք իր նպատակի համեմատ և հակառակ նրանց ընդունած 7 ընդհանրական կոչւող ժողովների թւի, 19 «տիեզերական» ժողով է ճանաչում:

[1] Մեր ս. Հայրերի մէջ հին քրիստոնէական հայրերից վարդապետ են ճանաչւում հետևեալները. Դիոնիսիոս Արիսպագացին և ընկերը Հռեթէոս վարդապետը, որոնք առաքելական հայրեր են, Սեղբեստրոսը (+314), Մեծն Աթանաս Ալեքսանդրացին (+389), Բարսեղ Կեսարացին (+379), Գրիգոր Նիւսացին (394), Կիւրեղ Երուսաղէմացին (Դ դարի սկզբում), Եփրեմ Խուրին (+380), Գրիգոր Աքանչելագործը (+270), Գրիգոր Աստուածաբանը (+389), Եպիփան Կիպրացին (Դ դար), Յովհան Ոսկեբերանը (+407), Կիւրեղ Ալեքսանդրացին (+444), Յակոբ Մծբնայ հայրապետը (Դ դար): Տե՛ս նաև Մաշտոց ձեռնադր. 34: «Եւ ինչպէս առաքեալների մէջ վեհապատիւ են չորս աւետարանիչները, այդպէս էլ տասներկու վարդապետների մէջ չորսն են գերափառ. Աթանասը, Կիւրեղը, Բարսեղը և Գրիգոր Աստուածաբանը» Յայսմաւուրք[64*]:

Այլև թոյլատրելով ժողովրդին կարդալ աւանդութեամբ վերապահւածները, սահմանափակում է այդ թոյլտուութիւնը միայն սեփական վկայաբանութիւնների մէջ և տարածում է այն միտքը, **թէ փրկութեան համար անհրաժեշտ է կուրօրէն խոնարհւել Հռոմ. հոգևորականութեան:**

Բողոքական եկեղեցին էլ, ձգտելով ընթանալ Հռոմ. եկեղեցու դէմ և տեսնելով, որ նա իր հեղինակութիւնը պահում է աւանդութեամբ ու մանաւանդ բանաւոր աւանդութեան ուժով և արգելելով Ս. Գրքի ընթերցանութիւնը, մերժեց որևիցէ աւանդութիւն ու միակ աղբիւր ճանաչեց Ս. Գիրքը, կամենալով զգալի հարուած տալ Հռոմի քահանայապետներին: Սակայն Ս. Գիրքն էլ պահւել է աւանդաբար քրիստոնէական եկեղեցում և մեկնւում է աւանդական սկզբունքներով ու եղանակով, ուստի և բողոքական այդ ձգտումը պատճառ եղաւ զանազան անձնահաճութիւնների, որով վարւում էին Ս. Գրքի հետ, ըստ քմաց կամ սոսկ բանական քմահաճ դատողութեամբ հասկանալով ու մեկնելով: Երբ բանապաշտական այս ուղղութիւնն ամրացաւ նրանց մէջ, **նրանք սկսեցին այնուհետև Ս. Գրքի այն գրուածքներն ընդունել, որոնք համաձայն էին իրենց բողոքական ձգտումներին,** այնպէս որ անձնականն առաջին տեղը զբաղեցրեց և հետզհետէ կազմւեց սեփական աւանդութիւն իրենց համար, որ ոչ թէ սուրբ աւանդութիւն է, այլ՝ մարդկային: Բողոքական եկեղեցին, կտրւելով սրբազան աւանդութիւնից, **ժխտում է նաև ձեռնադրութեան աւանդական կարգը և** այսպիսով հեռանում է առաքեալների ճանապարհից և ընկնում բազմաթիւ հակասութիւնների մէջ: Միայն Անգլիոյ Եպիսկոպոսական Բարձր եկեղեցին ձգտում է հաւատարիմ մնալ առաքելականութեանը: Կարող ենք նաև տարբերել **Լութերականներին,** որովհետև սրանք սկզբունքով ընդունում են այն աւանդութիւնները, որոնք Ս. Գրքին հակառակ չեն: Կարող ենք զանազանել նաև **Վերանորոգւածներին,** որոնք մերժում են Ս. Գրքում Բառացի չգտնւող ցանկացած աւանդութիւն:

Հայաստանեայց ս. Եկեղեցին, մերժելով երկու հակառակորդ եկեղեցիների ծայրայեղութիւնները, հաւատարիմ է մնում առաքեալների պատուէրներին՝ աւանդութեանը յատկացնելով իր արժանաւոր տեղը: Նա սրբազան աւանդութիւնը բարձր չի դասում Ս. Գրքից, այլ նրանից օգտւում է Ս. Գրքին հաւատարիմ մնալու համար առաքելական լայն պողոտայի վրայ և

հաւատարիմ է մնում երկուսին էլ իբրև առաքելական ճշմարիտ եկեղեցի: Նրա անշեղ սկզբունքն է՝ երբեք չընդունել այնպիսի աւանդութիւն, որ հակասի Ս. Գրքի վարդապետութեանը, ըստ որում Ս. Գրքի հարազատութեան ու իրաւ մատչելիութեան օգնականն է սրբազան աւանդութիւնը և սրբազան աւանդութեան ճշմարիտ հաստատիչն է Ս. Գիրքը: Ուստի և Ս. Ներսէս Շնորհալին հաստատելով իր փառաւոր Եկեղեցու աւանդութեան ճշմարտութիւնը՝ գեղեցկապէս ասում է. «Մեր եկեղեցու աւանդութիւնը, որ ունենք, հաստատած է Աստուածաշունչ Գրքի վկայութեամբ»[1]:

ԼԸ

ՄԱՐԴՈՒ ԽՕՍՔՆ ԱՌ ԱՍՏՒԱԾ ԿԱՄ ԱՂՕԹՔ

Ս. Գրքով ու նրա քարոզութեամբ Աստուած խօսում է մեզ հետ, յայտնում է մեզ Իր սուրբ կամքը, մեր երջանկութեան համար արած տնօրինութիւնը և հրաւիրում է մեզ կատարել իր պատուիրանները, մտնել իր պատրաստած երջանկութեան մէջ և մեր փրկութիւնը որոնել Իր ճշմարիտ հաղորդակցութեամբ: Մեր հաղորդակցութիւնը լիակատար չէր լինի Աստծու հետ, եթէ մենք ևս մեր կողմից հանապազ չխօսէինք Նրա հետ և մեր սիրտը չբանայինք Նրա առաջ ու մեր աղաչանքը չյայտնէինք: Արդ, առ Աստուած ուղղուած մեր խօսքը աղօթք է, որով մենք բարձրանում ենք հոգով դէպի Նա և հաղորդակցում Նրան[65*]:

Աղօթքով մենք ելնում ենք մեր Աստծու առաջ, պատասխանում ենք նրա խօսքին, միանում ենք մեր կամքով Աստծու կամքի հետ և յայտնում ենք, որ մենք պատրաստ ենք և փափագում ենք ընդունել Աստծու շնորհները: Հարկաւ զօրաւոր է այն աղօթքը, որ արւում է մարդկութիւնը փրկող ու նրա հաշտութիւնն իրագործող ու նրան երջանկացնող Աստուածորդու անունով և շնորհատու Ս. Հոգով (Յովհ. ԺԶ): Մենք աղօթում ենք Քրիստոսի անունով, իսկ այդ նշանակում է՝ աղօթել ոչ թէ մեր անունով, ոչ թէ մեր վաստակի, մեր ուժի և առաքինութեան զօրութեամբ ու երաշխաւորութեամբ, այլ Քրիստոսի փրկագործութեան հիման վրայ, Նրա տուած իրաւունքով ու կարողութեամբ, Քրիստոսի շնորհների տակ

[1] Ընդհան. էջ 222, նաև Հարց. 93:

պայծառացած կամ պարզերես եղած: Մենք իբրև Քրիստոսի մի անդամը պէտք է աղօթենք, որ մեր աղօթքը՝ Քրիստոսի աղօթքը համարւի: Աղօթողի սկզբունքն է՝ «Մեր արդարութեան պատճառով չէ, որ գութ ենք հայցում Քեզնից, այլ Քո անբաւ գթութեան պատճառով, Տէր» (Դան., Թ 18): Բայց այսպիսի մի աղօթքը մարդկային աշխարհասէր ձգտումներից չի բխում, ուստի և Ս. Հոգին օգնում է մեզ և սովորեցնում աղօթել (Հռ., Ը 15). նա միանում է մեզ հետ և մեր ձայնը միացնում է իր ձայնի հետ և կամ ինչպէս Պօղոս առաքեալն է ասում. «Նոյնպէս և Հոգին մեր թիկունքին է հասնում տկարութեան պահին, որովհետև մենք աղօթում ենք և չգիտենք, թէ ինչպէս է արժան աղօթել, բայց Հոգին Ինքը բարեխօս է լինում մեզ անմռունչ հառաչանքով» (Հռոմ., Ը 26): Պարզ է ուրեմն, որ Աստուած կը լսի անպատճառ Իր Որդու անւամբ ու վաստակով զօրացած աղօթքը, որի վրայ Իր շնորհն է տարածում Ս. Հոգին. ըստ որում երաշխաւորութիւն է տալիս մեզ Ինքն իսկ Քրիստոս, որ ասում է. «Եւ ինչ որ ուզէք իմ անունով, այն կանեմ, որպէսզի Հայրը փառաւորւի Որդու միջոցով» և կամ «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ինչ Իմ անունով Իմ Հօրից ուզէք, պիտի տայ ձեզ» (Յովհ., ԺԴ 13, ԺԶ 23):

Սակայն ամեն աղօթքի հիմքը պէտք է լինի հաւատքը. մարդու ամբողջ էութիւնը պէտք է միանայ Աստծու կամքի հետ, որ նրա սրտից ճշմարիտ աղօթք բխի: Աղօթքը՝ լինի այն փառաբանութիւն, թէ խնդրուածք, թէ բարեխօսութիւն, թէ գոհաբանութիւն[66*], միշտ պէտք է Աստծու կամքի հետ միացած սրտից բխի և այն ժամանակ այդ աղօթքը հրաշքներ կը գործի, ինչպէս ասում է Քրիստոս. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով այս լեռանն ասի. բարձրացիր և ծովն ընկիր և չկասկածի իր սրտում, այլ հաւատայ, թէ ինչ ասում է, լինելու է՝ ինչ էլ որ ասի՝ կը կատարւի: Այս պատճառով ասում եմ ձեզ. ամեն ինչ, որ աղօթքով խնդրէք և հաւատաք, թէ կը ստանաք՝ կը լինի ձեզ» (Մատթ., ԻԱ 21): Այս է պատճառը, որ դեռ աղօթքը մարդու բերանից չելած, Աստուած լսում է նրան, որովհետև նայում է նրա սրտին (Ես., ԿԵ 24) և ոչ թէ լոկ խօսքին, իսկ խօսքը, ինչպէս ասացինք, ճշմարիտ հոգևոր կեանքի գործունէութեան արտայայտութիւնն է, որի չլինելը վկայութիւն է հոգու խաւարման:

Աղօթողի կատարելատիպն է ինքը Քրիստոս, որ աղօթում էր ամեն գործի սկզբում ու վերջում (Ղուկ., Զ 12, 13), երբեք չէր թողնում աղօթքը նաև մեծ գործերի մէջ զբաղուելով (Ղուկ., Ե 15, 16). նա իր մկրտութեան ժամանակ իսկ

աղօթեց ու նրա վրայ իջաւ Ս. Հոգին (Գ 21, 22), այլև նա աղօթեց ու պայծառակերպուեց (Թ. 28, 29), ըստ որում աղօթքը պայծառացնում է ոչ միայն մարդու արտաքինը, այլև՝ ներքինը (Ելք., ԼԴ 29, 30): Քրիստոս պատուիրեց և իր աշակերտներին՝ արթուն մնալ և աղօթել, որ չընկնեն փորձութեան մէջ. նրանք ննջեցին ու չաղօթեցին, ուստի և փորձութեան մէջ ընկան: Իսկ Քրիստոս աշխարհի ամենամեծ փորձութեան առաջ աղօթեց և Իր յաղթական վճիռը գոչեց դէպի խաւարի իշխանութիւնը. «Այս է ձեր ժամը և խաւարի իշխանութիւնը» (Մատթ., ԻԲ 53): Նա աղօթեց և խաչի վրայ մինչև անգամ իր խաչողների համար: Նրա ճշմարիտ աղօթքից մեզ օրինակ է «Հայր մերը», որ կարճ ու գեղեցիկ ամփոփում է իր մէջ ուղիղ սրտի դիմումների սկզբունքները:

Աղօթքը չի լսւում Աստծու կողմից միայն այն ժամանակ, երբ հաւատքով և արդարասիրութեամբ չենք խնդրում, անիրաւաբար և միայն «ես»-ի համար ենք աղօթում, չենք հաւատում, թէ կը ստանանք, մեր յոյսը չենք դնում Աստծու վրայ, այլ երկմտում ենք, իսկ «Ով երկմիտ է, նման է հողմակոծ և տարուբերուող ալիքներին: Այդպիսի մարդը թող չակնկալի Աստծուց որևէ բան ստանալ, քանի որ երկմիտ մարդը իր բոլոր ճանապարհներում անհաստատ է» (Յակ., Ա 6): Ամեն անգամ, որ մարդ աղօթում է և չի ստանում իր խնդրածը, պէտք է լաւ յիշի առաքեալի խօսքը, թէ՝ «Խնդրում էք և չէք ստանում, որովհետև չարամտօրէն էք խնդրում, որպէսզի այն ծառայեցնէք ձեր ցանկութիւններին» (Դ 3): Սակայն Աստուած երբեմն էլ հետաձգում է կատարումը ուրիշ լաւագոյն նպատակի համար, ինչպէս օրինակ՝ մեզ ամրացնելու, փորձելու, մեր հաւատքը զօրացնելու և այլ այսպիսի մեզ անյայտ նպատակով, և կամ շատ անգամ էլ իսկոյն կատարում է աւելի գեղեցիկ կերպով, քան մենք ցանկացել ենք, միայն թէ մեր կարճատես աչքը այդ չի տեսնում, այլ իր ուզածն է միայն կամենում տեսնել: Եւ երբ մենք չենք ստանում մեր խնդրածը, պէտք է քաւենք մեր մեղքերը և աշխատենք արդար խնդիրներով աղօթել Աստծու, այն ժամանակ մենք կը ստանանք մեր խնդրածը: Եւ որովհետև ոչ մի մարդ չի կարող բոլորովին անարատ մնալ կեանքի փորձանքների մէջ, ուստի և աղօթքը պէտք է մեր հոգին տանի միշտ դէպի Աստուած, խօսեցնի Նրա հետ, սրբել տայ մեզ մեր առօրեայ յանցանքներից ու մեղքերից և ճշմարիտ ճանապարհի վրայ պահի ու պահպանի: Միայն այն մարդը գիտութեամբ չի ուզում աղօթել՝ գոնէ ճաշի նստելով և տօներին եկեղեցի գնալով,

ով կատարելապէս շաղախուած է մեղքերի մէջ, աչքերը չի բարձրացնում և ասում էլ է թէ աղօթքով ոչինչ չի ստացուում[1]: Մինչդեռ ճշմարիտ աղօթքը մի հովանի է մարդու բարեկեցութեան և մեղքից զգուշանալու համար, ըստ որում և այսպէս միայն կարող է մարդ ըստ ամենայնի առաջադիմել: «Աղօթքներն են, որ մարդկանց բարձրացնում են Աստծու մօտ և Աստծուն իջեցնում մարդկանց մօտ», ասում է ս. Ներսէս Շնորհալին[2]:

Աղօթողի համար էլ սկզբունք պէտք է լինի ըստ Քրիստոսի խօսքի՝ «Ոչ թէ լեզուն է օգուտ տալիս, որ բախւում է օդին առանց մտքին համընթաց լինելու, որովհետև սրտագէտ Աստուած սրտին և մտքին է նայում և ոչ բերանին: Այդ պատճառով արթուն մտքով և անզբաղ խորհրդով և կատարելիմաստ հոգով աղօթք մատուցէք Աստծուն, որպէսզի մեզ և ուրիշներին շահեցնենք և մենք էլ ուրիշների աղօթքից շահենք»[3]: Ուրեմն ոչ միայն սրտով պէտք է հաւատանք առանց խոստովանութեան և ոչ բերանացի աղօթենք առանց հաւատքի՝ «Քանի որ արդարանալու համար սրտով էք հաւատում և փրկութեան համար խոստովանում բերանով» (Հռոմ., Ժ 10), ըստ որում «Եւ մենք, հետևելով Աստուածաշունչ Գրքերին՝ մեր սրտերի անբիծ հաւատքը և շուրթերի մաքուր խոստովանութիւնը»[4]:

Վերջապէս աղօթքով հեռանում ենք առժամանակ աշխարհի մրրկածուփ զբաղմունքից, մեր հոգով սուզւում ենք ներքին սրբութեան մէջ, այնտեղ հանգստանում և նորոգւում հոգևոր ճշմարտութեամբ. մենք, թողնելով անցական աշխարհը, աղօթքով մտնում ենք բարձրագոյն աշխարհն ու նրա հովով զօրանում: Այդ է, որ ասում է Քրիստոս՝ «Այլ դու երբ աղօթես, մտիր քո սենեակը, փակիր քո դռները և ծածուկ աղօթիր քո Հօրը» (Մատթ., Զ 6): Եւ եթէ լաւ դիտենք՝ կը տեսնենք, որ ինչպէս անհրաժեշտ է մարմնաւոր կեանքի

---

[1] «Ինքդ քեզ սատանայացնում ես, և աղաչում փրկւել սատանայից: Դու յօժար կամքով դիւահարւում ես և խնդրում ես փրկւել դևերից»: «Աղօթքի համար ներսում ծունկ ես խոնարհեցնում, բայց միտքդ ցնորուած թափառում է այստեղ-այնտեղ». Մանդ. 43, 44, նաև Զգօն, էջ 62, 73, 75: «Սրտի սրբութիւնը մի աղօթք է, որ աւելին է, քան բոլոր աղօթքները, որ կատարւում են հնչող ձայնով. և յստակ մտքին խառնուած լռութիւնը աւելին է, քան այն, որ եթէ մէկը բարձրաձայն աղաղակէր» (Օրինակ աղօթից):

[2] Ընդհան. 307:

[3] Նարեկ. ԿԵ:

[4] Թովմաս Արծրունի. Պատմ. 165, 163:

ջանասիրութիւնը, անհրաժեշտ է և այդ հոգևոր գործունէութիւնը: Աշխատանք և աղօթք՝ ահա այն երկու հիմնաքարերը, որոնց վրայ հաստատւում է մարդու ճշմարիտ կեանքը: Ոչ աղօթք առանց աշխատանքի և ոչ աշխատանք առանց աղօթքի, այլ աշխատանք և աղօթք, լինել Աստծու հետ և Աստծու մշակը՝ այս է քրիստոնեայի հիմնական սկզբունքը[1]: Այս ընթացքի մէջ բացւում է հաւատացողի հոգու տեսողութիւնը և նա զօրանում է ու ճանաչում ու նկատում Աստծու բարեաց հրաշքները, ապա առաւել և առաւել հաւատքով աշխատում ու իր խնդիրն առ Աստուած ուղղում[2]:

Արդ, քանի որ աղօթքով միանում ենք Աստծու հետ, մեր կամքը միացնում ենք նրա կամքի հետ և մեր հոգու զգայարանքով՝ հաւատքով ստանում ենք Նրա զօրացուցիչ օգնութիւնը և աշխատանքում յաջողութիւն գտնում, պարզ է, որ ճշմարիտ աղօթքը կարող է միմիայն սուրբ սրտով և անկեղծ հաւատքով կատարել: Հետևաբար ճշմարիտ հաւատացեալի աղօթելու նախապատրաստութիւնը կամ աղօթքի առաջին քայլը ապաշխարական աղօթքն է, որով մենք զղջական տրամադրութեամբ դիմում ենք առ Աստուած, Նրա օգնութիւնը խնդրում մեր քաւութեան համար և աստուածատուր միջոցներ ձեռք առնում Աստծու տաճարը և բնակարանը դառնալու նպատակով: Այդ վիճակում մենք դեռևս չենք համարձակւում մեր կենսական պիտոյքների մասին խօսել Աստծու առաջ, մեր անձնական խնդրուածքներն ուղղել առ Նա, այլ մենք նայում ենք կարօտ աչքով միմիայն նրա գթութեան և ողորմածութեան վրայ, համոզւած լինելով, որ մեզ դեռևս անհրաժեշտ է քաւել մեր մեղքերը՝ Քրիստոսով որդիական համարձակութիւն ձեռք բերելու համար: Այդ է պատճառը, որ օրւայ առաջին

[1] «Հնազանդիր սիրով, աղօթիր յուսով, աշխատիր հաւատքով և կը պայծառանաս երկնային հարսանիքում» (Եզնիկ[67*]): «Ձեռք ունես, ոտք ունես, կարողութիւն ունես՝ գործիր, վարձիր, սպասաւորիր՝ և կուտես: Մարմինդ պահելու բազում հնարներ կան, եթէ կամենաս աշխատել: Որովհետև եթէ մրջիւնը, որ մի չնչին զեռուն է, ինքն իրեն կարողանում է կերակրել և մեղուներն իրենց նշխարները թագաւորների համար կերակուր են դարձնում. [նրանք] ոչ ձեռք ունեն և ոչ աշխատելու գործիք: Մինչդեռ Աստուած քեզ տուել է ձեռք և գործիք, նաև՝ բազմահնար միտք, անմեղութեամբ հաղորդակից եղիր այս կեանքի սնունդին» Մանդ. 69:

[2] «Հաւատքով խնդրենք, և մեզ կերակուր կը տրւի: Ի՞նչ է, մենք հրա՞շք ենք խնդրում. ո՛չ, հրաշքը թերահաւատներին է պէտք և չարերին՝ ուղղութեան բերելու համար: Իսկ մեր վերաբերութեամբ՝ Տէրը գիտէ մեր կարիքներն ու օգտակարը և ըստ այսմ կը պատրաստի, ինչ որ պէտք է մեզ» Ս. Ներսէս Մեծն. Բիւզանդ. 78. տե՛ս նաև Մանդ. 39:

աղօթքի մէջ եկեղեցում նախապէս ասում ենք. «Տէ՛ր, եթէ իմ շրթունքները բացես՝ իմ բերանը Քո օրհնութիւնը պիտի երգի» (Ժամագիրք): Այսինքն՝ իբրև ադամորդի՝ զգալով մեր մեղանչական վիճակը՝ նախ համարձակութիւն ենք խնդրում և ապա յիշելով Քրիստոսի փրկագործութեան շնորհների առատութիւնը մեզ վրայ, սկսում ենք մեր աստուածպաշտական աղօթքը[68*]:

Ուրեմն, ձգտելով նախևառաջ մեր մեղքի քաւութեանը՝ կամենում ենք մեզ ընդունարան դարձնել Ս. Հոգու և կամ ընդունակ դարձնել այն շնորհների, որ պէտք է խնդրենք Աստծուց մեր կեանքի յաջողութեան ու բարելաւութեան համար, որովհետև գիտենք, որ ոչ Ս. Հոգին և ոչ աստուածային որևիցէ շնորհք չի կարող իջնել մեղաւոր հոգու վրայ և չի կարող բեղմնաւորւել թանձրացած սրտում ու նրա խոպանացած անդաստանում[1]: Ուստի և դիմելով դէպ Աստծու տունը, բռնում ենք ապաշխարական ճանապարհը, որի խորհրդականն (տե՛ս ստորև գլ. ԽԳ) անցնելուց յետոյ՝ ճաշակում ենք Քրիստոսի սրբարար մարմինն ու արիւնը և ապա, համարձակութիւն ստացած, մեր որդիական աղօթքն անում: Այդ, որդիական աղօթքի ու խնդրուածքների մէջ արդէն՝ որքան սրտանց է եղել մեր զղջումն ու ապաշխարութիւնը, որքան հաւատքով և համոզմունքով է եղել մեր քաւութիւնը, այնքան զօրաւոր է լինում մեր աղօթքը և ապահով ենք լինում, թէ՝ մեր խնդրածը կը ստանանք Աստծուց: **Ճշմարիտ աղօթքը միութիւն է Աստծու հետ, որքան սերտ է այդ միութիւնը, այնքան շուտափոյթ է մեր խնդրուածքի կատարումը.** և այդ միութիւնն այնքան սերտ է, որքան յաջողում ենք սրբւել և անկեղծ լինել Աստծու առաջ: Սրբւեցինք թէ չէ, եղբայրանում ենք Քրիստոսին, եղբայրացանք թէ չէ, որդիանում ենք Աստծուն, որդիացանք թէ չէ՝ միանում ենք մեր կամքով, սրտով ու մտքերով նրա հետ. միացանք թէ չէ՝ ամեն մի աղօթք Աստծու կամքով կը լինի և կը կատարւի[2]: Եւ մեր աղօթքի հաստատութիւնն է Քրիստոս Ինքը, որ ամենայն

[1] «Տեսնո՞ւմ ես. մեզ պէտք են մեծ հաւատք, աղօթքներ, զգուշաւոր խնդրուածքներ և սրտի համակամութիւն, որպէսզի երկմտութեան հողմը ներխուժելով հաւատքի նաւը չաւերի, և պարգևի փոխարէն երկմիտ խնդրողն իր թերութեան պատճառով դատապարտութիւն կը կրի: Բայց ովքեր հաւատքի ղեկը ամուր են բռնում՝ երբեք չեն սասանի. այլ Տիրոջից կը լսեն, թէ՝ «Թող քեզ լինի համաձայն քո հաւատքի» Մեկն. Ժամ., էջ 184:

[2] «Ովքեր համերաշխ մտքով, անհենգ հաւատքով կաղօթեն Աստծուն և բարին կը խնդրեն՝ կը ստանան իրենց խնդրածները, ինչպէս ստացան մեր առաջին հայրերը»: «Որովհետև երբ անբիծ հաւատքով բովանդակ սրտով աղօթես Աստծուն՝ մեղքերի թողութիւն կը ստանաս և յանցանքների քաւութիւն, կը ստանաս երկնքի արքայութիւն և անբաւ բարութիւն... Այս է ճշմարիտ աղօթքի զօրութիւնը, ովքեր կամենան Աստծուն

ճշմարիտ խնդրուածք մարդկաբար կամենալով ու խնդրելով իր Հօրից, աստուածաբար կատարում էր: Նրա աստուածամարդութեան ճշմարիտ միութիւնից է բխում նրա կամքի անշեղ կատարումը, հետևաբար և եթէ մենք էլ կարողանանք հոգով միանալ Աստծու հետ մեր հաւատքի միջոցով, անշուշտ ամեն խնդիր կը հարթի:

Այս ամենը գեղեցկապէս ամփոփում է Ս. Յովհան Մանդակունին, պատուիրելով իր որդիներին. «Աղաչում եմ ձեզ, ընտրուածներ, [հաւատքի մէջ] հաստատուածներ, գայթակղութիւնից զերծ մնացածներ, ձեր աղօթքները մի՛ նմանեցրէք փարիսեցու [աղօթքին], թէկուզև ձեր անձերը բազում բարիքի պատճառ համարէք, այնուհանդերձ ասացէք, թէ «անպիտան ծառաներ էք», և առանց իւղ վերցնելու անմիտ կոյսերի հետ հարսանիք չգնաք՝ գուցէ դուռը փակ լինի և դրսում ամօթով մնաք»[1]:

ԼԹ

ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

«Խորհուրդը ծածկուած իրերի յայտնութիւնն է»[2], այսինքն այն՝ ինչը ծածկուած է մեր մարմնաւոր տեսութիւնից և ներկայացնում է մեզ իրական արտայայտութեամբ: Նոյնիսկ դաւանանքի և աստուածպաշտութեան մէջ, ինչպէս Ս. Երրորդութեան, մարդեղութեան, մարմնի հետ հոգու միաւորութեան, աղօթքի և

մերձենալ: Այս է հոգևոր, անարիւն պատարագը, որովհետև ամեն տեղ աղօթքն Աստծուն [ընծայուած] պատարագ է»: Մանդ., էջ 40-41:

[1] Փարպ., էջ 556. «Եւ Տէրը հրամայում է աղօթելիս շատախօս չլինել, և սրանով ոչ թէ շատ աղօթելն է արգելում, որովհետև Ինքն իսկ, մեզ խրատելու համար, բովանդակ գիշերը անցկացնում էր Աստծուն [յղած] աղօթքի մէջ: Եւ դարձեալ, թէ՝ «ամեն ժամ աղօթք արէք», այլ որպէսզի արգելի վայրիվերոյ, մարմնաւոր և անցաւոր խնդրուածքները, որոնք առանց մտքի սոսկ լեզուով են» Ս. Գրիգոր Նարեկացի Խրատ Աղօթքի եղանակի. Մեկն. ժամ. 408-420: «Բայց աղօթելիս ոչ թէ վայրիվերոյ խօսքով ճառենք՝ զանգերի նման լոկ ձայն արձակելով կամ կապիկների նման սովորական բաներ բերանում առնելով ու բղաւելով, այլ աղօթքի ժամին մեզ նախապատրաստենք հոգով ու սրտով ի հաճոյս Աստծու: Որովհետև, ով մարմնով աղօթքի վայրում է, բայց անկապ անասունի պէս, մտքով թափառում է դրսում, ոչ միայն աղօթքից վարձ չի ստանայ, այլև կը դատապարտուի անզգոյշ աղօթքի պատճառով» Մեկն. ժամ., էջ 114:

[2] Ս. Գրիգոր Տաթևացի Ամր. քարոզ 199, Ա Կոր., Դ 1:

այլ այսպիսի հաւատալիքների ու կարգերի մէջ խորհուրդ ենք նկատում, որ ոչ թէ կատարելապէս տեսանելի և ըմբռնելի է մեզ համար, այլ բացատրում, լուսաբանում է մեր մտքի առաջ իբրև հաւատքի մի խորհուրդ, որին հաւատքով կարող ենք հասու լինել: Սակայն եկեղեցու ս. խորհուրդ կոչում ենք Եկեղեցու վարդապետութեան այն արարողական մասը և աստուածպաշտութեան այն կատարեալ իրողութիւնը, որով իրապէս իւրաքանչիւր ոք նախ Քրիստոսի և եկեղեցու իսկական և միակից անդամն է ճանաչում ու իրեն խոստովանում, և երկրորդ՝ իրապէս թէ՛ իբրև անհատ և թէ՛ իբրև համայնքի մի անդամ մտնում է Քրիստոսի հետ ամենամտերիմ և էական հաղորդակցութեան մէջ և այդ կենսական հաղորդակցութեան մէջ մնում, ամրանում և շնորհներ վայելում (Ա Կոր., Է 17):

Եկեղեցական կամ աստուածպաշտական արարողութիւն է կոչւում Եկեղեցու այն աստուածպաշտական գործողութիւնը, որի մէջ կայ յարակից մի ներքին և արտաքին, տեսանելի և անտեսանելի, հոգևոր ու մարմնաւոր կողմ: Իսկ մեր Եկեղեցու արարողութեան գերագոյն կատարելութիւնը իրականանում է ս. խորհրդի մէջ: Ըստ այսմ ս. խորհուրդների արարողական մասը մենք տեսնում ենք մեր աչքերով, սակայն չենք տեսնում, թէ ինչպէս են այդ տեսանելի արարողութիւնները Ս. Հոգու անտեսանելի շնորհների միջոց դառնում և մեզ վրայ ներգործում: Ուրեմն, աստուածադիր ս. խորհուրդների մի առանձնայատկութիւնն այն է, որ Ս. Հոգու տեսանելի և աննիւթական շնորհներն ու պարգևները, ծածկուելով տեսանելի և նիւթական տարրերի մէջ, ընդունում են այդպէս մեր արտաքին զգայարանքներով, որպէսզի ոչ միայն հաւատքով, այլև զգայութեամբ համոզուած լինենք, որ ընդունում ենք աստուածային շնորհներ և Աստծու հետ մտերմական յարաբերութեան մէջ մտնում[1]:

Հասկանալի է, որ ս. խորհուրդները չեն կարող նշան կամ նշանակներ կոչուել (symbole), որովհետև նշանակը, ինչպէս բառն էլ ցոյց է տալիս, մի գաղափարի նշան է կամ պատկեր, որով մենք մի հեռաւոր և անտեսանելի բան կամ գաղափար ներկայացնում-յիշեցնում ենք նիւթական տեսանելի իրով կամ գործողութեամբ. այնպէս որ այդ գաղափարի և այդ նշանի մէջ իրական և էական

[1] Ա Կոր., ԺԳ 2, Դ 1, հմմտ. Ա Տիմ., Գ 16, Հռ., ԺԴ 24, Եփես., Ա 9, Գ 3-9, Կող., Դ 3, Ա Պետր., Ա 12:

միութիւն չի լինում: Մինչդեռ ս. խորհրդի մէջ նիւթականի և տեսանելի արարողութեան հետ սերտ կապած են անզգալի և անտեսանելի շնորհները և դրանք իրարից բաժան չեն բաշխուում, այնպէս որ ս. խորհրդի տեսանելի նիւթով և արարողութեամբ հաւատացեալները ստանում են իրապէս աստուածային փրկարար շնորհներ ու ներգործութիւն[69*]:

Աղօթքով և առհասարակ աստուածպաշտութեամբ ևս մենք մտնում ենք մի սերտ յարաբերութեան մէջ Աստծու հետ, սակայն այդ յարաբերութիւնը միմիայն ներքին է և անտեսանելի կերպով յարաբերութեան մէջ է մտնում մեզ հետ, օգնում է մեզ, բորբոքում մեր հաւատքը, մեզ զօրացնում, քաջալերում է և առաջ մղում ճշմարտութեան ճանապարհով: Այդպիսով Քրիստոս էական և կենսական հաղորդութիւն է հաստատում մեզ իբրև մեր հոգու և մարմնի փրկիչ: Ս. խորհուրդը մեր կոչման իրագործման հաստատութիւնն է, մեր այն կոչման հաստատութիւնն է, որ մեր վերջնական միութիւնն է Աստծու հետ աշխարհի վախճանի ժամանակ: Ս. խորհուրդը քրիստոնէական հաւատքի և վարդապետութեան ամենակատարեալ արտայայտութիւնն ու իրականութիւնն է, այնպէս որ Հայաստ. ս. Եկեղեցին իր ս. խորհուրդներով ներկայացնում է իր ամբողջ էութիւնն ու ճշմարտութիւնը: Ուստի և Քրիստոս ս. խորհուրդների կատարումը յանձնել է իր Եկեղեցուն յատկապէս նուիրած և ձեռնադրուած պաշտօնեաների (Մատթ., ԻԸ 18-20, Ղուկ., ԻԲ 19, ԵԲ., Դ 11):

Յայտնի է, որ ով ընդունում է ս. խորհուրդները հաւատքով ու երկիւղածութեամբ, նա ստանում է աստուածային օրհնութիւն ու շնորհ, մինչդեռ ով անհաւատութեամբ է վերաբերւում և ս. խորհուրդները լոկ արարողութիւն ու նշանակ է համարում, նա հայհոյում է Ս. Հոգուն և ուրեմն ոչ թէ օրհնութիւն ու փրկութիւն է ստանում, այլ՝ դատապարտութիւն և անէծք: Խորհրդաւոր արարողութիւններ ունեցել է և հին Իսրայէլը, սակայն դրանք լոկ մարգարէական են գալիքի նկատմամբ, այսինքն նախատիպ ու մարգարէութիւնն են եղել Քրիստոսադիր արարողութիւնների, մինչդեռ քրիստոնէական խորհուրդների արարողութիւններն այլևս ապագայի նախատիպ չեն, այլ բովանդակում են խորհուրդն ու շնորհն իրենց իսկ մէջ իբրև մարգարէութիւնների իսկական կատարում և իբրև Աստծու պարգևած անմիջական շնորհների հաստատութիւն: Ս. Հոգին շնորհագործում ու զօրացնում է առաւել նրան, ով իր անձը նուիրում է

Նրա առաջնորդութեանը և ոչ թէ իր սիրտը թանձրացնում է նրա ներգործութեան դէմ և Ս. Հոգու պատժապարտ հայհոյիչը դառնում: Ուրեմն Քրիստոսի փրկութիւնը ս. խորհուրդներով վայելելու համար պէտք է մտքով ու սրտով լսել Նրա խօսքերը, հոգով ու սրտով, կատարեալ վստահութեամբ ու երկիւղածութեամբ նուիրել Նրան ու Նրա բնակարանը դառնալ. այն ժամանակ ս. խորհուրդները մեզ համար օրհնութիւն կը լինեն, առատապէս կը վայելենք նրանց շնորհներն ու Ս. Հոգին կը լինի մեր փրկութեան ու երանելի յաջողութեան ճշմարիտ առաջնորդը: Ս. Հոգին չի շնորհաբաշխուում նմանապէս այն անձանց, ովքեր զուրկ են հաւատքից և հաւատքի թարմութիւնից ցամաքած: «Ինչպէս դժուար է ջրայինների համար ցամաքի վրայ լինել և ցամաքայիններին՝ ջրի մէջ, առաւել դժուար է առանց հաւատքի ընդունել Սուրբ Հոգու շնորհները», ասում է ս. Եղիշէն[1]: Հաւատքն է մեզ վերին շնորհների ընդունարանը դարձնում. հաւատքն է ուղղորդում մեր հոգին դէպի Ս. Հոգու նորոգող կենսագործութիւնը և հաւատքն է երկնայինն իջեցնում մեզ մօտ և մեզ Ս. Հոգով դէպ երկինք բարձրացնում[2]: Հաւատքը մեր հոգու զգայարանքն է[3]: Իսկ եթէ հաւատքը կենդանի չէ, այսինքն՝ կեանքի մէջ գործունեայ չէ, այդ կրկնակի դատապարտութիւն կը բերի Ս. Հոգու շնորհներն անարժանութեամբ շնորհագործողին, այլև՝ ընդունողին: Աստծու փրկարար շնորհներն ընդունելու և վայելելու համար պէտք է ճշմարտութեան գործարանը լինելու պատրաստութիւնն ունենալ: «Այն բաժակը խմեց Յուդա Իսկարովտացին և այրուեց, որովհետև նրա ծառը չորացած էր: Այն խմեցին առաքեալները և դալարեցին, և բովանդակ երկիրը լցրեցին քաղցր պտուղներով, նրանց ծաղիկների հոտը տարածուեց ամբողջ տիեզերքում: Այս բաժակը սովոր է այրել ապականուածներին և պահել սրբուածներին...», ասում է Ս. Գրիգոր

[1] Տե՛ս Մատենագրութիւն, էջ 319:

[2] «Ապա եթէ չհաւատաս՝ արդեօք ինչպէ՞ս թողութիւն և բժշկութիւն կը լինի և կամ մենք ինչպէ՞ս կը յանդգնենք յանդիմանել, համարձակւել ու խնդրել և կամ աղօթել նրանց համար, ովքեր ամենևին իսկ չէին ճանաչում Տիրոջը, որովհետև Տիրոջ բարկութիւնը կոչնչացնի նրանց, ովքեր ճշմարտութեամբ չեն խոստովանում Տիրոջը, և կամ մի յանդգնէք Նրանից բան խնդրել, եթէ չէք հաւատում Նրա պատուիրանների գիտութեանը և ի մտի չունէք Նրա պատուիրանները», ասում է Ս. Ներսէս Մեծն. Բիւզանդ 73:

[3] «Հաւատքի ճշմարտութեամբ է, որով արդարները աշխարհային կեանքի ծանրութիւնից բարձրանում են դէպ երկնային բնակութեան թեթևութիւնը», ասում է Ս. Սահակը. Փարպ., էջ 88:

Լուսաւորիչը[1]: Ս. Եղիշէն ևս բազմափորձ կեանքի օրինակները վերյիշելով՝ ասում է. «Առանց հաւատքի անհնար է ընդունել Սուրբ Հոգին... Եւ եթէ մէկը յանդգնի և կամենայ Հոգու զօրութեանը մերձենալ առանց հաւատքի, եթէ քահանայ է՝ Կայիափայի նման կը պատուի, և եթէ աշխարհական՝ Անանիայի և Սափիրայի [նման կը լինի]»[2]: Այսպիսի ուխտադրուժ հոգևորականների համար կանոնուած է «հրեղէն սրով» հատել եկեղեցու սպասաւորութիւնից[3]:

Այս բոլորից պարզ երևում է, որ ս. խորհուրդները փրկարար ներգործութիւն չեն ունենում անարժանների և անհաւատների վրայ, ինչպէս մոլորութեամբ կարծում է Հռովմ. եկեղեցին, որ ex opere operata կամ opus operatum (նիւթական գործողութեամբ) կոչուած վարդապետութեամբ դաւանում է ըստ Ալբերտ Մեծի, Թովմա Աքուինացու և այլոց, որ իբր թէ ս. խորհուրդը մի խողովակ է, որով քրիստոնեան ստանում է հակառակ իր արժանիքների ու հաւատքի ամեն բարիք, բաւական է միայն, որ նա որոշ աղօթք կամ խօսքեր արտաբերի և առհասարակ արտաքին որոշ կարգեր կատարի: Սակայն այս մեքենայական և նիւթապաշտական տեսութիւն է, որ իբրև կռապաշտական սկզբունք, ամբողջապէս խորթ է քրիստոնէական հոգևոր և ազատ փրկագործութեանը: Աստծու շնորհների տնօրինութիւնները բռնութեամբ չեն, այլ՝ ազատութեամբ. Աստծու շնորհը տրւում է միմիայն նրան, ով ազատ կամքով հաւատում և ձգտում է այդ վայելել. մարդ պէտք է կամենայ ու ձգտի, որ ստանայ: Քրիստոս ինքն իսկ ասում է. «Ով հաւատայ և մկրտուի՝ կապրի և ով չհաւատայ՝ կը դատապարտուի» (Մրկ., ԺԶ 16): Եւ առաքեալն ասում է. «Այսուհետև, ով որ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ այս բաժակն անարժանօրէն, պարտական պիտի լինի Տիրոջ մարմնին և արեանը: Թող մարդ նախ ինքն իրեն փորձի և ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից. որովհետև, ով ուտում և խմում է անարժանօրէն, իր իսկ դատապարտութիւնն է ուտում և խմում, քանի որ չի զատորոշում Տիրոջ մարմինը» (Ա Կոր., ԺԱ 27): Քրիստոսի այս ճշմարիտ վարդապետութիւնն անաղարտ կը պահի միմիայն այն եկեղեցում, որտեղ ազատութիւնն ու շնորհը

[1] Ագաթ. ԿԶ, ԿԷ:
[2] Եղիշէ, էջ 313, տե՛ս և էջ 261. 108-109, 314. 315, Ընդհան. 7, 66, 421, Յաճ., ԺԵ 28-35:
[3] Ընդհան., էջ 38, 62:

Աստծու տնօրինութեան հիմքերն են ճանաչում և ոչ թէ բռնութիւնն ու աշխարհակալութեան ձգտումները:

Բողոքականութիւնն էլ բնականաբար հակառակ ընթանալով հռոմէականների նիւթական տեսութեանը, վարդապետում է թէ՝ ս. խորհուրդները մի եկեղեցու պատկանելութեան պայմաններն են և յիշեցուցիչ նշանները, ինչպէս դաւանում է Ցւինգլին, կամ, ըստ Կալւինի, իբր թէ անտեսանելի շնորհների տեսանելի երաշխիքն են, որով հոգևորապէս և ոչ իրապէս միանում է հաւատացողը Քրիստոսի հետ, ինչպէս որ կարելի է համարում նաև աղօթքով նոյն հաղորդակցութիւնը ձեռք բերել: Լութերը ևս սա երաշխիք է համարում, միայն թէ նրանով հաղորդակցութիւնն իրական է ճանաչում և Քրիստոսին մարմնապէս ներկայ է համարում հաղորդութեան ամեն մի մասի մէջ և ոչ թէ մարմնաւոր աչքից ծածկուածի իրական արտայայտութիւն: Այսպէս թէ այնպէս բողոքականութիւնը պտտւում է ս. խորհուրդները նշանակ դարձնելու սկզբունքի շուրջը, քանի որ նա ս. խորհուրդները համարում է համոզմունքով չթուլանալու և անձի փրկութեան և Աստծու ողորմութեան յոյսով ուրախանալու միջոց: Սա մեծ մոլորութիւն է և կատարելապէս հակառակ Ս. Գրքին, որ ասում է, թէ մկրտութեան ջուրը Ս. Հոգու ազդմամբ մաքրում է մարդուն ու վերածնում, օծումը նորոգում է նոր կեանքի համար, ձեռնադրութիւնը տալիս է առանձին շնորհագործական շնորհ, Քրիստոսի մարմինն ու արիւնը հաղորդակից են անում Քրիստոսի հետ և արժանացնում յաւիտենական կեանքի և այլն[1]: Նրանք հակասութեան մէջ էլ են ընկնում, ասելով, որ առանց հաւատքի ս. խորհուրդը նշանակութիւն չունի, մինչդեռ եթէ ս. խորհուրդը լոկ նշանակ է, պէտք է նրա ներգործութիւնը կախուած չլինի ընդունողի հաւատքից, մանաւանդ, որ նրանք մկրտում են մանուկներին, որոնք հաւատք չունեն: Ուրեմն բողոքականները գլխովին ընկնում են հռոմէականութեան ստուերի մէջ: Եւ եթէ ս. խորհուրդները լոկ նշանակներ են, հապա ինչո՞ւ Պօղոս առաքեալը դատապարտում է անարժանութեամբ վայելողներին:

Բողոքականները մերժում են նաև ս. խորհուրդներից հինգը, որոնք նրանց վարդապետութեան սկզբունքներին չեն համապատասխանում, և ասում են, թէ Ս. Գրքում եօթը խորհուրդ չկայ: Բայց չէ՞ որ երկու էլ չի ասուած. բաւական է, որ

[1] Յովհ., Գ 5, Զ 54, Գործք., Ը 17, Ա Տիմ., Դ 14, Բ Տիմ., Ա 6, Ա Կոր., ԺԱ 29 և այլն:

դրանք յիշւում են Ս. Գրքում և եկեղեցական հայրերի գրուածներում, քրիստոնէական առաքելական եկեղեցին էլ պահել է աւանդաբար մինչև օրս և շնորհագործում է հաւատարմութեամբ: Կամ մի՞թէ հակասութիւն չէ դրոշմելը նախքան հաղորդութիւն տալը, բայց դրոշմը խորհուրդ չհամարել, մեղքն ու մեղքի զղջումը քրիստոնէութեան առաջին պայման դաւանելը, բայց ապաշխարութիւնը խորհուրդ չճանաչելը: Անշուշտ, չի կարելի անտեսել այսպիսի հակասութիւնները: Սակայն հարկ չկայ այս հակասական մոլորութեան վրայ երկար խօսել, քանի որ բողոքականների համար եկեղեցին անտեսանելի է և նրա «նշանակները» կարող է իւրաքանչիւր հաւատացեալ իրագործել հակառակ Պօղոս առաքեալի խօսքի. իսկ[1]: «Այսպէս մարդիկ թող համարեն մեզ իբրև սպասաւորներ Քրիստոսի և տնտեսներ Աստծու խորհուրդների» (Ա Կորնթ., Դ 1): **Եթէ բողոքականները գործ ունեցած չլինէին հռոմէական ծայրայեղութիւնների հետ, բնաւ չէին ընկնի հակառակ ծայրայեղութեան մէջ:** Եթէ նրանք ծանօթացած լինէին առաքելական եկեղեցիների կարգերին, կը տեսնէին, որ եկեղեցու ամբողջ կարգը, ամբողջ աստուածպաշտութիւնն իսկ խորհուրդ է, առաւել ևս խորհուրդ են այն կարգերը, որոնց միջոցով կատարւում է աստուածային շնորհաբաշխութիւնը: Մինչդեռ այս ամենը մերժելը լոկ հակառակորդին անպայմանօրէն դիմակայելու անհատական գրգռման արդիւնք է և կրօնական յեղափոխութեան ժամանակի հռոմէական եկեղեցու և նրա հակառակորդների փոխադարձ յարձակման ու թշնամանքի պատահական ծնունդ: Բողոքականութեան այս կեցուածքը յար և նման է Մովսէսի և Ահարոնի դէմ դուրս եկած Կորխի, Դաթանի, Աբիրոնի և նրանց համախոհների կեցուածքին. «Բաւական է, հասկացէք,- ասում էին ապստամբները,- որ ժողովուրդը մաքուր է, և Տէրը նրա մէջ է: Արդ, ինչո՞ւ էք ձեզ Տիրոջ ժողովրդից բարձր դասում» (Թուեր, ԺԶ 3), սակայն նրանք հրոյ ճարակ դարձան հրապարակապէս[2]:

Հայաստանեայց Եկեղեցու ս. խորհուրդները եօթ[3] են՝ մկրտութիւն, դրոշմ, ապաշխարութիւն, հաղորդութիւն, պսակ ամուսնութեան, կարգ հիւանդաց . կարգ **ձեռնադրութեան, և այս եօթ թիւը պահում են բոլոր հին եկեղեցիները, ըստ**

[1] Ա Կոր., Դ 1, Բ Կոր., Ե 18-21, Մատթ., Ժ, Ղուկ., Թ:
[2] Թիւ ԺԶ, հմմտ. Ել., ԻԴ 1.6-11, ԺԹ 3-6, ԼԳ 16, ԼԴ 10-16, Թիւ., ԺԲ 1-2:
[3] Տե՛ս Ճարական, էջ 386:

առաքելական աւանդութեան: Սրանցից իւրանաքնչիւրն ունի իր առանձին էական նշանակութիւնը, ըստ իր գլխաւոր խորհրդի: Մկրտութիւնը խորհուրդ է «եկեղեցի նոր մտածների» կամ ծննդեան, դրոշմը՝ «թշնամի սատանայի դէմ պատերազմողների» կամ զարգացման, հաղորդութիւնը՝ «պատերազմում վերստին զօրացածների» կամ սննդեան, ապաշխարութիւնը՝ «վերականգնածների, ովքեր ընկնում են մեղքերով և վերստին կանգնում ապաշխարութեան գործերով», կամ բժշկման, կարգ հիւանդաց-ը «այս կեանքից հեռացածների և պատերազմից զերծ մնացածների» կամ ամոքման, ձեռնադրութիւնը «այս խորհուրդները սպասաւորներին» և պսակը «նոր զինուորներ ներս տանելու». որոնցով ամփոփւում է մարդկային կեանքի խորհուրդը[1]:

Սրանցից առաջին վեցը քահանայական պաշտօնին են պատկանում, իսկ ձեռնադրութիւնը՝ եպիսկոպոսական: Անկրկնելի են մկրտութիւնը, դրոշմը և ձեռնադրութիւնն իբրև Ս. Հոգու անեղծանելի ներգործութեան այնպիսի փրկարար կնիք, որ միանգամ և ընդմիշտ սրբում, զինում ու շնորհագործում է[2]:

Մկրտութիւնը, դրոշմը, ապաշխարութիւնը և հաղորդութիւնն ամեն մի հաւատացեալի համար անհրաժեշտ խորհուրդներ են, իսկ **ձեռնադրութիւնն արժանաւորապէս Աստծու սպասաւոր լինել կամեցողների** և հիւանդների համար[3]:

[1] Ս. Գրիգոր Տաթ. Հարց., էջ 587: Տե՛ս և Ս. Յովհ. Իմաստասէր Աւանեցի 8. «Թէպէտ Հոգին մէկ է և Հոգու առհաւատչեայ իւղը նոյնն է, սակայն, համայն մեր փրկութեան կերպի, բազմաբնոյթ է և բազմօրինակ, և [ըստ այդմ] հրաշագործում է փրկութեան խորհուրդը, համաձայն դրա էլ զատորոշում ցեղերը, որոնցով փրկւում ենք, նաև՝ ցեղերի անունները: Ապա թէ՛ աղօթքը, և թէ՛ գործառնութիւնը միանման չէ որ մեզ է մատուցում փրկութեան պարգևը, և ոչ մէկն է փոխարինում բոլորին, և ոչ էլ մէկը միւսին փոխարինելով օգտամատոյց են լինում մեզ. այլ երախայութեան ժամանակ օծումն իրագործում է մեծարման դրոշմը, աւազանի օծումը, համաձայն Հոգու, ներդաշնակ է մեր վերստին ծննդեանը, իսկ մկրտութիւնից յետոյ եղող օծումը Աստծու որդեգրութեան շնորհի կոչն է մեզանում: Դարձեալ Սեղանը կերակրում է մեզ և չի ծնում, աւազանը ծնում է և չի կերակրում, Խաչը մարտնչում է մեր թշնամու դէմ և չի ծնում ու կերակրում, հիւանդութեան ժամանակ առողջ լինելու կարիքն ունենք, և ոչ թէ՝ այլ բանի: Սրանց նման հարկաւ և՛ աղօթքը, և՛ քարոզութիւնը, և՛ օծութիւնը զատ-զատ պատշաճում է իւրաքանչիւր խորհրդի»:
[2] Հռ., ԺԱ 29, Զ 9, Եղիշէ, Յիշ. մեռելոց [Մատեն., էջ 357-362, Նարեկ., ԼԲ, ՀԵ, Ամար. քար. ԼԲ]:
[3] Եկեղեցու խորհուրդներին եւ հաւատացեալների փրկութեան կատարման ու վերջին վիճակին են վերաբերում Հաւատամքի վերջին մասի խօսքերը:

Վերջապէս սուրբ ու սրբարար են հէնց այս խորհուրդները, սուրբ է և դրանց թիւը, ըստ որում Աստծու ամենաբարութեան տեսանելի արդիւնքները եօթ օրում են կատարուել, Նրա բոլոր կարգադրութիւնները իսրայէլացիների մէջ եօթը թւով են հիմնուել և եօթը թիւը պարփակում է իր մէջ թէ՛ աշխարհի չորս կողմերը և թէ՛ Ս. Երրորդութիւնն, որ տիրում և սրբում է աշխարհի բոլոր ծայրերը[70*]:

Խ

ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Նախընթաց բացատրութիւններից երևաց, որ մարդու երանութիւնը հաստատւում է Աստծու հաղորդակցութեան վրայ, իսկ այդ հաղորդակցութիւնն իրականանում է քրիստոնէական աստուածպաշտութեան մէջ: Տեսանք նոյնպէս, որ այդ աստուածպաշտութիւնը կատարւում է երկուստեք փոխադարձ յարաբերութեամբ, այսինքն՝ Աստծու կողմից յայտնութեամբ ու շնորհաբաշխութեամբ, իսկ մարդու կողմից՝ աղօթքով և աստուածահաճոյ գործունէութեամբ: Արդ, քանի որ Քրիստոսի փրկագործութիւնից յետոյ Նրա հաւատացեալն իր ծննդեան օրից իսկ մտնում է իր կեանքի բոլոր հանգամանքներով Աստծու շնորհների տակ, հետևաբար և նրա կեանքի իւրաքանչիւր նշանաւոր կամ աչքի ընկնող դէպք պէտք է աստուածապաշտական շնորհաբեր կարգով սկզբնաւորւի: Այն եկեղեցական կարգը, որով մենք մեր կեանքի իւրաքանչիւր նոր ու նշանաւոր քայլափոխի սկզբին դիմում ենք Աստծու հովանու տակ հաւատքով ու յոյսով զինւած և աղօթքով խնդրում ենք Աստծու ամենառատ շնորհները, կոչւում է օրհնութիւն:

Ինչպէս որ անբաժան է մարդուց Աստծու գաղափարը, այնպէս էլ անբաժան է նրանից օրհնութեան գաղափարը: Թէ՛ կեանքի ընթացքում և թէ՛ մահւան մահճում խնդրել Աստծու շնորհներն իր յաջորդների կամ որդիների վրայ, այդ սովորական էր ոչ միայն նահապետների, այլև իւրաքանչիւր հաւատացողի համար: Խնդրել Աստծու շնորհները նաև այն ամէն իրի, տեղի և հաստատութեան վրայ, որտեղից մարդիկ միմիայն Աստծու ողորմածութեամբ կարող են մշտապէս

բարիքներ ստանալ, նոյնպէս սովորական էր Հին Ուխտի ժողովրդի մէջ: Սակայն հաւատացեալի աստուածապաշտութիւնը հաստատւած լինելով մարդու և Աստծու ճշմարիտ հաղորդակցութեան վրայ, չի կարող լոկ մարդկային կարգադրութեամբ գոյանալ, որովհետև այն աղօթքն է Աստծուն լսելի, որ հաճելի է նրան, այսինքն՝ համաձայն է Նրա պատուիրաններին: Ուստի և ինչպէս որ աստուածպաշտութիւնը ճշմարիտ և ապահով լինելու համար պէտք է աստուածդիր էութիւն ունենայ և աստուածադիր հիմքեր, սկզբունքներ և նպատակ բովանդակի, այդպէս էլ այն օրհնութիւնն է ճշմարիտ և ապահով, որ կատարւում է Աստծու պաշտօնեայի միջոցով և աստուածադիր կարգով: Այդ է պատճառը, որ Աստուած իր Հին Կտակարանի պաշտօնեաներին պատուիրում է ոչ միայն օրհնութիւն կատարել, այլև տալիս է այն հիմնական կարգը, որով պէտք է օրհնէին յանուն Աստծու[1]: Քաջ գիտենալով այս ճշմարտութիւնը, իւրաքանչիւր հաւատացեալ թէ՛ Հին և թէ՛ Նոր Կտակարանում դիմում էր աստուածահաճոյ մարդկանց և մանաւանդ Աստծու պաշտօնեաներից էր օրհնութիւն խնդրում: Փրկւած հաւատացեալները դիմում էին ոչ միայն Քրիստոսին օրհնելու համար, այլև Նրա առաքեալներին: Ըստ որում և այս սկզբունքն ընդհանրացնելով Պօղոս առաքեալը պատմելով Աբրահամի օրհնելը Մելիքսեդէկից, ասում է. «Արդ, ամեն հակաճառութիւնից վեր է այն, որ օրհնողն աւելի բարձր է, քան օրհնւողը» (Եբր., Է 7): Այլև հասկանալով, որ Աստծու արարածների մէջ ամենայն ինչ բարի է և պէտք է Աստծու պատուիրանների համեմատ վայելել, յորդորում է չխորշել այդպիսի վայելքներից ու կարգերից, որոնք և սրբւում են «Աստծու խօսքով և աղօթքով» (Ա Տիմ., Դ 5): Որովհետև օրհնւող մարդը ստանում է Ս. Հոգու այն շնորհները, որոնք իր որոշ գործունէութեան համար անհրաժեշտ են[2]:

Որովհետև օրհնութեան հետևանքն է Աստծու կողմից բարիքների բաշխումը, իսկ մարդու կողմից զօրաւոր ընդունակութիւնը, ուստի և օրհնութեան կատարման սկզբունքները բխում են Աստծու խօսքից և մարդու աղօթքի պահանջներից: Այդ սկզբունքներն են. նախ որ ամենայն օրհնութիւն պէտք է անպատճառ կատարւի յանուն Աստծու և աղօթքները պէտք է ուղղւեն առ Ս. Երրորդութիւնը Քրիստոսի շնորհների համարձակութեամբ:

---

[1] Թւոց, Զ 22, Բ Օր., ԺԸ 5, ԻԱ 5
[2] Համմտ. Ա Թագ., Ժ 1, 9, 10, ԺԶ 13:

Երկրորդ պէտք է կատարուեն այն բոլոր պայմանները, որոնց համեմատ միայն կարող է զօրաւոր լինել աղօթքը, այսինքն՝ հաւատք, յոյս ու սէր պէտք է վառուի նախապէս շնորհներ խնդրողի մէջ, ըստ որում խնդրողը պէտք է պատրաստուի Աստծու պատուիրանների համեմատ պահքով, ապաշխարութեամբ և հսկմամբ:

Երրորդ՝ խնդրողի մէջ հաւատք ու յոյս բորբոքելու համար պէտք է կարդացուեն Ս. Գրքից այն ընթերցուածները, որոնք յարմար ու պատշաճ են խնդրուած յատուկ շնորհաբաշխութեանը:

Չորրորդ՝ օրհնութիւնը պէտք է կատարուի միաբանական աստուածպաշտութեան կարգով (տե՛ս վարը գլ. ԽԸ) և եկեղեցու շնորհաբաշխող պաշտօնեայի միջոցով:

Հինգերորդ՝ օրհնութեան կարգակատարութիւնը պէտք է արտայայտութիւնը լինի ճշմարիտ հաւատքի, յոյսի և սիրոյ:

Ուստի և վեցերորդ՝ օրհնութեան իմանալի խորհուրդը հաւատացեալների հոգու մէջ զգալապէս հաստատելու համար պէտք է իւրաքանչիւր խնդրող շնորհի համեմատ այն առաքելական զգալի կարգ ու միջոցներ ևս գործադրուեն, որոնք աստուածային շնորհաբաշխութեան ցոյցեր և աւանդիչներ են հանդիսացել:

Այս վեց սկզբունքներով որոշւում է Հայաստանեայց Ս. Եկեղեցու իւրաքանչիւր օրհնութեան կարգի վարդապետական էութիւնը:

Հայաստանեայց ս. Եկեղեցու աստուածպաշտութիւնն ունի օրհնութեան կարգեր իր հաւատացեալի կեանքի իւրաքանչիւր աչքի ընկնող և նշանաւոր դէպքի համար, որոնք և գտնւում են Մաշտոցում և որոնց գլխաւորներն են ս. խորհուրդների արարողութիւնները: Այդ կարգերը ճշտիւ համապատասխանում են վերոյիշեալ վեց սկզբունքներին, ըստ որում և իւրաքանչիւր միախորհուրդ օրհնութիւն և կամ եթէ կատարելի շնորհաբաշխութիւնը բարդ է՝ նրա բաղկացուցիչ իւրաքանչիւր տարր օրհնութիւնն իրագործում է նախ նախապատրաստական սաղմոսերգութեամբ, ապա Ս. Գրքից պատշաճաւոր ընթերցուածներով. երրորդ՝ լիայոյս բարեխնդրութեան երգերով. չորրորդ՝ որոշ շնորհների համար պաշտօնեայի աղօթքով, հինգերորդ՝ պաշտօնեայի միջոցով միաբանական աղօթքով և վեցերորդ՝ զգալի աւանդիչների շնորհաբաշխական գործադրութեամբ: Այս բոլոր մասերը իւրաքանչիւր կարգին ու խորհրդին յատուկ

ձևակերպութիւն են ստանում, մինչդեռ շնորհաբաշխութեան միջոցները մասամբ ընդհանուր են բոլոր կարգերի մէջ: Այդ միջոցներն են՝ նախ Աստծու շնորհների բուն աւանդիչները, այն է՝ Ս. Աւետարանն ու Ս. Խաչը և շնորհաբաշխ ձեռքը, և ապա զգալի նիւթերը՝ գինի, ջուր, բաղարջ ու ձէթ:

Ս. Աւետարանն աւանդիչ է այն շնորհների, որոնք բխում են Աստծու խօսքի բարձր զօրութիւնից (տե՛ս Գլ, ԼԶ): Ս. Խաչը պարգևում է Քրիստոսի խաչելութեան խորհրդի շնորհները (տե՛ս ԻԳ և ԻԴ): Եկեղեցու պաշտօնեայի ձեռքը Ս. Հոգու շնորհաց աւանդիչ է ըստ առաքելական յաջորդականութեան (տե՛ս Գլ. ԽԷ): Վերջապէս մարդկային երկրաւոր կեանքի ամենաանհրաժեշտ նիւթերը՝ գինին իբրև զօրացուցիչ, բաղարջն իբրև սննդատու, ջուրն իբրև մաքրող և ձէթն իբրև փտութիւնից պահող ու լուսաւորող նիւթեր էապէս համապատասխանում են երկնաւոր շնորհների խորհուրդներին և ըստ այնմ՝ մարմնապէս ազդում[1]: Ընդ սմին գինին ու բաղարջը, խորհրդաւորապէս դառնալով Քրիստոսի մարմինն ու արիւնը, սնուցանում են մեզ, ջուրն ի խորհուրդ Քրիստոսի կողմից բխած ջրի ծառայում է մկրտութեան խորհրդի փրկագործութեանը, իսկ ձէթը Ս. Հոգու կենդանարար շնորհների իջման խորհուրդն ունի:

Այս բոլոր շնորհաւանդները նիւթեղէն և մարդկային ձեռքի գործ լինելով՝ իրենց էութեան նախատիպի և բնատիպի զօրութիւնն ունենալու համար կարօտում են դարձեալ օրհնութեան, ըստ որում Ս. Գիրքն օրհնելով՝ Աստծու խօսքի զօրաւոր շնորհների աւանդիչն է դառնում, Ս. Խաչը, լինելով նիւթ և պատժական ձև, օրհնւում և Քրիստոսի խաչելութեան փրկարար շնորհատուն է լինում, Եկեղեցու պաշտօնեան ձեռնադրութեամբ օրհնելով Աստծու պաշտօնի մէջ՝ շնորհագործելու իշխանութիւնն ու զօրութիւնն է ստանում. ջուրը, գինին և բաղարջը, իւրաքանչիւր իր խորհրդակատարութեան ընթացքում օրհնելով դառնում է Քրիստոսի կողմից բխած ջուրը, արիւնն ու վերջապէս մարմինը[71*] : Սակայն բոլոր օրհնութիւնների մէջ հիմնական և էական նշանակութիւն ունի Ս. Հոգու շնորհաբաշխութիւնը, որի յատուկ և զգալի պարգևումը կատարւում է ս. Միւռոնի օծմամբ: Ուրեմն, ս. միւռոնով օծումը ամեն մի օրհնութեան հիմքը կամ

[1] «Գինին ուրախացնում, իւղը զարթացնում և հացը զօրացնում է մարդու սիրտը» Սաղմ., ՃԳ 15, Առակ., ԷԻ 9, Ժող., Ժ 19:

էութիւնն է դառնում զգալիապէս, հետևաբար և հարկ է առաջանում ի վերջոյ այդ մասին խօսելու:

Ս. Հոգու շնորհաբաշխական օծման զգալի տարրն է միւռոնը կամ՝ այդ յունարէն բառի հայերէն թարգմանութեամբ՝ «անուշահոտ իւղը», ինչպէս անուանում էր Ե դարում: Իւղը կամ ձէթն էր ընտրուած այդ նպատակի համար, որովհետև կակղեցուցիչ է, զարթարար, պարարտացուցիչ, վիրաբոյժ[1], փտումից պահպանող ու լուսաւորող, իսկ այդ զգալի յատկութիւններով համապատասխան է և յայտարար Ս. Հոգու իմանալի շնորհների բազմակողմանի ներգործութիւնների: Իւղը Հին Ուխտում և առանձնապէս պատրաստելով՝ ծառայում էր իբրև Ս. Հոգու շնորհաբաշխութեան միջոց թէ՛ պաշտօնեաների, թէ՛ թագաւորների ու մարգարէների օծման[2] և թէ՛ մինչև անգամ տաճարի անօթները սրբելու համար, ըստ որում և կոչւում էր «իւղ լուսոյ», «իւղ օծութեան» և «սուրբ իւղ»: Եւ ինչպէս որ Քրիստոսի փրկչական գործունէութեան տնօրինութիւնը Ս. Հոգու իջմամբ արտայայտելով՝ օծումն է կոչւում[3], այդպէս և Աստծու արքայութեան մէջ մտնելու լուսավառ հաւատքի անհրաժեշտութիւնը իւղ ունենալու նմանութեամբ է բացատրւում, «զի ձէթ գիշերոյ է լուծիչ», ասում է Մամբրէ Վերծանողը[72*] (Մատթ., ԻԴ 3):

Ս. մեռոնը կամ անուշահոտ իւղը[4] Ս. Հոգու շնորհաբաշխութեան օծման խորհրդի համեմատ ունի իր հանդիսաւոր օրհնութեան կարգը Հայաստանեայց ս. եկեղեցում: Նրա նիւթն է ձիթենու իւղը, որ ըստ կենաց ծառի պտղի նախատիպին՝ Ս. Հոգով կենդանացնող ազդեցութիւն պէտք է ունենայ «բարու և չարի գիտութեան» ծառի պտղի վայելքով ընկած մարդու համար: Մէկ փայտի պտուղն ապականարար է դարձել, միւս փայտինը Քրիստոսի խաչով շնորհւած

[1] Ես., Ա 6, Ղուկ., Ժ 34:
[2] Տե՛ս գլուխ ԽԷ:
[3] Ղուկ., Դ 18-21, Եբր., Ա 9:
[4] Ագաթ., ՃԺԸ. «Օծութեան իւղ» է կոչւում: Տե՛ս նաև Կորիւնի մօտ, ուր Ս. Սահակի մահը պատմելով ասում է, թէ այդ եղաւ «նաւասարդ ամսի աւարտին, երբ սովորաբար յիշում էին նրա ծննդեան տարելիցը, օրւայ երկրորդ ժամին, անուշահոտ իւղի պաշտամունքի ժամին»[74*]: Հմմտ. նաև նրա [ս. Սահակի] կանոնը. «Եւ մեր իշխանութեան բոլոր վայրերից, ամեն տարի ս. Զատկից յետոյ, քահանաներին անհրաժեշտ է, որ մկրտութեան իւղը բերեն մեզ և այստեղ մեզնից ընդունեն իւղի օրհնութիւնը»[75*], Տե՛ս նաև Սիոն կաթողիկոսի Պարտաւում գումարած ժողովի կանոնը. «Եպիսկոպոսները թող չօրհնեն մեռոն կամ մի բան աւելացնեն եղածի վրայ ու տան քահանաներին, այլ ամեն տարի պէտք է հայրապետանոցից առնեն, համաձայն ս. Հայրերի կանոնական հրամանի»[76*]:

փրկութեան օծանելիքն է դառնում: Սակայն քանի որ Ս. Հոգու շնորհները բազմաշող են, իսկ շուշմայի կամ քնջութի ձէթը[1] նոյնքան յատկութիւններ չունի և չի համապատասխանում հոգևոր հարստութեան ծաղկմանը և անուշահոտութեանը, այդ ևս լրացնելու համար նրա հետ խառնում են գինի, ձիթենու իւղ, 40 ընտիր ծաղիկների հիւթերը, որպիսիք են պալասանի տեսակներ, սմբուլ, զաֆրան, երիցուկ, նունուֆար, նարնջի ծաղիկ, մրտի, մուշկ, նարդոս, մատուտակ և այլն[73*]:

Միւռոնն օրհնում է մեծամեծ նախապատրաստութիւններից յետոյ պատարագիչ Կաթողիկոսը, իբրև Ս. Հոգու շնորհների բաշխողը տասներկու եպիսկոպոսներով, 12 սարկաւագներով և 12 բուրվառով ու քշոցով, ըստ Ս. Հոգու հիմնադրական շնորհաբաշխութիւնն աւանդող տասներկու առաքեալների: Օրհնութիւնը կատարւում է լիապէս, ըստ վերոյիշեալ սկզբունքների պատշաճաւոր սաղմոսերգութեամբ, ընթերցւածներով, շարականներով և աղօթքներով: Միւռոնի օրհնութեան հիմքը արտայայտում է Ս. Հայրապետն՝ ասելով. «Այս սուրբ իւղը, որ Քո իմաստութեամբ կարգեցիր, Յիսուս, օծում է և մարգարէներին, ստեղծում է նաև առաքեալներին, պատրաստում վարդապետներին, մեր մեղանչական բնութեան ծնունդներին վերստին Աստծու Որդի է դարձնում...»: Իսկ օրհնութեան կատարման համար այդպիսի խնդրանք է հայցւում. «Ողորմութեան Տէր և Լոյսի Հայր, որից են բովանդակ բարիքը և կատարեալ ընծաները, շնորհիր մեզ՝ քո անարժան ծառաներին, Քո շնորհները՝ սպասաւորելով Քո մեծ և կենարար խորհուրդներին. առաքիր Քո ամենազօր Հոգին առջևում դրւած այս միւռոնի մէջ, կարող դարձրու այն թագաւորական օծման, հոգևոր շնորհքի, մեր կեանքին կեանք պարգևելու. հոգու և մարմնի համար պահապան և սրբարար, ցնծութեան իւղ լինելու. որ մեզ առաջնորդեց օրէնքներում և պայծառացաւ Նոր Ուխտի մէջ: Այո, Ամենակալ Տէր, թող սրա մէջ իջնեն նաև Ս. Հոգուդ երկրպագելի շնորհները, որպէսզի սա լինի անապական զգեստ և կատարելութեան կնիք...»[77*]:

Եւ որովհետև Ս. Հոգու շնորհների պարգևումը տնօրինւում է Հոգեգալստից սկսած՝ աւանդւելով առաքեալների միջոցով, ուստի և օրհնութեան

[1] Շուշմայի ձէթը գործադրւում է և հնացած ու պնդւած մեռոնը լուծելու համար և երբեմն օրհնելով տրւում էր հետը խառնելու նպատակով:

միջոցին խառնում է թէ՛ հին միւռոնով, թէ՛ կենաց փայտով ու թէ՛ Ս. Լուսաւորչի Աջով, որովհետև հին միւռոնն աւանդաբար Հայաստանեայց ս. Եկեղեցու հոգեգալստեան շնորհն է մեզ հասցրել, կենաց փայտն ընկած մարդու կենդանացուցիչ ծառն է նոր դրախտում, իսկ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը Հայաստանեայց ս. Եկեղեցու բարեկարգութեան շնորհաբաշխ ձեռքն է: Ահա այսպէս է օրհնում այն ս. միւռոնը, որի օծմամբ է լինում Ս. Հոգու շնորհաբաշխութիւնը[1] և կամ Հայաստանեայց ս. Եկեղեցու փրկագործական ու սրբագործական կարգերի իմանալի խորհուրդների զգալի ներգործութիւնն ու իրագործումը: Ս. Միւռոնի օծմամբ է հաստատւում Եկեղեցու պաշտօնեան և Ս. Հոգու ձեռնադրական շնորհները ստանում, նրանով է մկրտողը Ս. Հոգու որդեգիրը դառնում և նրանով է շնորհունակ դառնում ամեն վայր (Եկեղեցի) և իր (անօթ, խաչ, Ս. Գիրք և այլն), որ մտնում է Ս. Հոգու շնորհների տակ և իր սկզբնատպի զօրութեան աւանդիչը դառնում[2]: Սակայն որովհետև արարածական աշխարհն անկման մէջ է Ադամով և վերստին բարձրանալով մեզ դրախտային ծառայութիւն է անում նոր Ադամով՝ Քրիստոսով, ուստի և այդ արարածական աշխարհից մի ձեռագործ իր այն ժամանակ է միայն աստուածպաշտութեան մէջ Աստծու առաջ անխոտելի և մեզ համար Աստծուն տրող սրբութիւն դառնում, երբ նախապէս լւացւում է ջրով ու գինով «ի նշան Կենարարի կողից բխած արեան», որոնցով սրբւում են արարածները. իսկ այնուհետև «կատարւում է օծումը ս.

[1] «Ինչպէս խաւարը լոյսից, ցաւն առողջութիւնից, գիշերը ցերեկից, և մահը կեանքից, այդպէս էլ այս տէրունական ընծայից ամեն տեսակ չար երևոյթները մերժւում են, հալածւում և անհետանում, որովհետև ինչպէս զազրելի ճանճերը, սարդերի փոքր զեռունները, և ականջ մտնող միջատները, իբրև մահաւոր դեղից, այս նիւթի ազդեցութեամբ սպառւելով պակասում են, այդպէս էլ օրհնութեան շնորհի լրումով զօրանալով այս իւղը վանում է չար հոգիներին. ոչնչացնում չարի մուրհակը, և պատռում մահաւոր վճիռը» Նարեկ. Աղօթք վասն սրբալոյս իւղոյն միւռոնի [Բան ՂԳ]:

[2] «Միւռոնը Սուրբ Հոգու զօրութեան խորհուրդն ունի, և եթէ մարմնացած Բանը, Հօր և Հոգու էակիցը, որ ոչ մի բանի կարիք չունէր, քանզի նրանն էր Հոգին ինչպէս և Հօրը, անպատշաճ բան չհամարեց կամ փոքրութիւն չնկատեց Իր Հոգու իջնելը աղաւնու կերպարանքով Յորդանանում, այլ նոյն Հոգով իսկ առաջնորդւում էր անապատում, և դարձեալ ասում էր թէ՝ «Ես Աստծու Հոգով եմ հանում դևերին», և երկրորդում էր իր մասին Եսայու գրածը, թէ՝ «Տիրոջ Հոգին իմ վրայ է. այդ պատճառով իսկ օծեց ինձ», ապա որքա՞ն պատշաճ է մեզ սոսկական նիւթը, որ վերցնում ենք նիւթականներից, օծել Նրա խորհրդով, որպէսզի նոյն Հոգու զօրութիւնը ստանայ», Ս. Ներսէս Շնորհալի, Ընդհ., էջ 376:

միւռոնով, որ օրհնութիւնների օրնութիւնն է և Սուրբ Հոգու մէջ շնորհների լիութիւնը» ըստ Քրիստոսի փրկագործական պարգևի:

ԽԱ

Ա. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Մկրտութիւնն է այն սրբարար խորհուրդը, որ սրբում է մեզ մարդկային նախնական մեղքից, վերստին ծնունդ է տալիս Ս. Հոգու շնորհած նորոգ կեանքով և Քրիստոսի Եկեղեցու մէջ ընդունում: Մկրտութեամբ, ուրեմն, Քրիստոս փրկում է մեզ և նորոգում, կամ ինչպէս առաքեալն է ասում՝ «Մեզ փրկեց վերստին ծննդեան աւազանի միջոցով և Սուրբ Հոգու նորոգութեամբ» (Տիտ., Գ 5): Մարդն էլ պէտք է նախ ծնւի «ի ջրոյ եւ ի Հոգւոյ», Աստծու տաճար դառնայ, ընդունւի Քրիստոսի մահւան՝ ըստ որում և կեանքի հաղորդակցութեան մէջ, կցորդ լինի նրա չարչարանքներին, դառնայ Աստծու որդի, ժառանգ ու Քրիստոսի ժառանգակից, որպէսզի մտնի յաւիտենական կեանքի ժառանգութեան մէջ[1]: Այս մի նոր ծնունդ է, որով ծնողական մարմնից ծնւած մարմինը ծնւում է Հոգուց և աստուածային ներգործութեամբ ելնում է ջրից կամ վերածնութեան աւազանից, մի նոր մարդ դառնում և Աստծու փրկագործական նոր Ուխտի մէջ մտնում:

Մարդ ծնւելով Ադամի ցեղից՝ ստանում է Ադամի պատկերն իբրև հին մարդ, բայց և ծնւելով վերստին ջրից ու Հոգուց՝ ստանում է Քրիստոսի պատկերն իբրև նոր մարդ և այնուհետև հնութիւնը թօթափած՝ նորոգապէս պտղաբեր է լինում և սկսում ապրել ազատ կեանքով. «Այսպէս ծնւում են Աստծու որդիները», ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը[2]: Այն նորոգ կեանքի կոչումն է, որ նոր արարածը կամ էապէս վերածնեալը զարգանայ և հասնի «կատարեալ մարդու աստիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը» (Եփես., Գ 13), որպէսզի տիրի հին մարդու վրայ, սրբագործի, դէն գցի «հին մարդուն իր նախկին կենցաղով, այն, որ ապականւած է խաբեպատիր ցանկութիւններով. նորոգւելով ձեր մտքով ու

[1] Յովհ., Գ 5, Հռովմ., Զ 3, 4, Մատթ., ԻԸ 18-20, Մարկ., ԺԶ 16, Հռ., Ը 17:

[2] Յանախ., Բ 423:

հոգով» (Եփես., Գ 22) և դառնալով նոր մարդ, «ըստ իր Արարչի պատկերի»: Ապա նա դառնում է նոր արարած հոգով ու բնութեամբ և իսկական աստուածպաշտութեան ու զարգացման սկիզբը դնում Քրիստոսի հետ՝ ճշմարիտ հաղորդակցութեան մէջ մտնելով: (Եփես. Դ. Կող. Գ.)

Որպէս մկրտութեան զգայական տարր կամ նիւթ ընտրած է ջուրը, որովհետև նրա բնական ներգործութիւնն ամենից լաւ համապատասխանում է մկրտութեան շնորհի գերբնական ներգործութեանը, ըստ որում ջուրն ունի ոչ միայն մաքրող, լւացող յատկութիւն, այլև՝ պտղաբերող, կենդանացնող[1] այսու աստուածային սրբարար ու կենդանարար շնորհները համապատասխան կերպով պարունակւում են նրա մէջ: Հասկանալի է, որ այդ ջուրը չէ, որ լւանում է մարդու մեղքը, այլ՝ Աստծու Բանը և ամենասուրբ Երրորդութեան հաւատքը, որի երեք անձանց իւրաքանչիւրի անունով առանձին երեխային մէկ անգամ՝ ուրեմն ընդամենը երեք անգամ՝ ընկղմում են ջրի մէջ ըստ Քրիստոսի պատգամի և սովորեցրածի[2]: Երեխան մկրտելով Քրիստոսի հետ թաղւում է աւազանի գերեզմանի մէջ, սրբւում և յարութիւն առնելով՝ ստանում է նոր կեանք Քրիստոսի յարութեամբ[3]: Որովհետև Քրիստոս Ինքն իր ծննդեան օրը մկրտելով Յորդանանում, խորտակեց սատանային[4] և ջրհեղեղեան մարդակորոյս ջուրը մարդակեցոյց և վերածնող դարձրեց, ինչպէս և նոյն ջուրը ամեն անգամ սրբարար է դառնում իւրաքանչիւր մկրտուողի համար Ս. Հոգով[5]:

Արդ, «Ով հաւատայ և մկրտուի, պիտի փրկուի և ով չհաւատայ, պիտի դատապարտուի», ասում է Քրիստոս (Մարկ., ԺԶ 15): Հետևաբար մկրտութեամբ

[1] Ծնն., Ա 2, 20, Բ 5, Յովբ., ԺԴ 9, Բ Պետր., Գ 5:
[2] ԵՓ., Ե 26, Մատթ., ԻԸ 19, Գործք., ԺԶ 3, ԺԵ 1-30, Գաղ., Բ 3, Ղուկ., Բ 21, Մատթ., Գ 13-15, Յովհ., Գ 22, Դ 1-2:
[3] Հռ., Ե 10, Զ 3-5, Կող., Բ 12, Գաղ., Գ 27, Եբր., Ժ 22, Ա Պետր., Գ 21, Գործք., ԻԲ 16, Բ 38, Սաղմ., Ծ 7: Ս. Յովհ. Իմաստ., 12, 86, Եղիշէ, 83, 213:
[4] Յովհ. Իմաստ., 12, Շարական., 409, Եղիշէ, 208, 344, Ագաթ., 238-239:
[5] «Սին հայեացքով լոկ ջուր մի համարիր աւազանում եղածը, այլ ջրի և շնորհքի շուրջը պտտւում է կենդանի Սուրբ Հոգին: Քանզի մարդն երկակի է՝ բաղկացած հոգուց և մարմնից. այս պատճառով սրբողը սրբում է այն, որ անմարմին է՝ անմարմին [զօրութեամբ] և որ մարմնաւոր է՝ մարմնով: Արդ, ջուրը սրբում է մարմինը, և ոգին դրոշմում է հոգին, որպէսզի ցողած սրտերով և սուրբ ջրով լւացւած մարմնով կարողանանք մօտենալ և կանգնել Աստծու մեծութեան Աստուածութեան առջև: Արդ, երբ իջնես այդ ջրի մէջ՝ սոսկ թեթև և պարզ ջուր մի՛ համարիր, այլ Հոգու զօրութիւնից եկող փրկութեանը սպասիր, որովհետև առանց երկիւղի քեզ անհնար է կատարեալ լինել» Ս. Կիւրեղ Կոչ. ընծայ. 42:

է մարդ ստանում Քրիստոսի կեանքի, չարչարանքների, մահուան ու յարութեան միջոցով իր փրկութիւնը, սակայն առանց հաւատքի մկրտութիւնն էլ չի օգնի: Մկրտուողը պէտք է շարունակի զօրանալ հաւատքով, որպէսզի կարողանայ աւելի ու աւելի վայելել Աստծու շնորհները: Բաւական է, որ մարդ նախ հեռանայ սատանայի իշխանութիւնից՝ աշխարհասիրութիւնից, ապա հաւատքով փրկութեան գիտութիւն ունենայ, այլև ձգտում ու տենչանք և անձկութեամբ ցանկանայ փրկւել, այն ժամանակ մկրտութիւնը շնորհաբեր ու երջանկացուցիչ կը լինի նրա համար: Եւ այսպէս նախքան մկրտութիւնը պէտք է հաւատքի արթնութիւն վառւի մկրտուողի մէջ, իսկ յետոյ երկնաւոր բարիքի բաշխումով, հաւատքը գործնական կենդանութիւն կը ստանայ այդ շնորհների ներգործութեան տակ: Ըստ այսմ Սուրբ Հոգին արթնացնում է նորածին մանկան միամիտ հոգու մէջ տրամադրութիւն դէպի փրկութիւնը, քրիստոնեայ և ուսեալ կնքահայրն էլ երաշխաւորում է նրա հաւատքի ապագայ դաստիարակութիւնն ու մանուկն էլ մկրտւում է իր ծնողների հաւատքով[1]: Ծնողների կամքն անշուշտ նորածնի կամքն էլ է. ինչպէս որ մանկան մարմնաւոր կեանքը ծննդից առաջ նոյնն է մօր մարմնաւոր կեանքի հետ և ծննդով ինքնուրոյն է դառնում, այնպէս էլ մանկան հոգևոր կեանքը ծննդից յետոյ նոյնն է ծնողների հոգևոր կեանքի հետ այնքան ժամանակ, մինչև որ նրա հոգևոր կեանքն ինքնուրոյն հասունութեան կը հասնի և պարզ ինքնագիտակցութիւն ձեռք կը բերի: Հաւատքի ճանաչողութիւնն ու փրկութեան գիտակցութիւնը պահանջւում է չափահաս ու հասունացած մկրտուածից, որպէսզի նա ձգտի և միանայ իր Փրկչի հետ, իսկ մանուկից այդ չի պահանջւում, այլ, քանի որ մկրտութիւնը նոր գիտակցութեան հիմնադրութիւն է, նոր ստեղծագործութիւն է և նոր անձի սկզբնաւորումն է, ուստի մանուկը մկրտւում է ծնողների հաւատքով, նրա կամքի տեղը զբաղեցնում է ծնողների կամքը, և հետևաբար նրանց վրայ են ընկնում նաև հաւատքի բոլոր պահանջները: Այսպիսով այդ պահանջները պէտք է մանկան համար բաւարարեն նախ ծնողները, ապա կնքահայրը և յետոյ այդ ամենի հոգատարն է ինքը՝ եկեղեցին: Առանց այդ բոլոր պահանջները կատարելու մանուկը չի կարող փրկւել, թէև մկրտութեամբ զարթնում է նա և նրա մէջ մի հաւատք ու բաղձանք է շարժւում դէպի իր փրկիչը, Ս. Հոգու շնորհագործութիւնն ու դէպի լուսամիտ կեանք:

[1] Հմմտ. Ս. Յովհ. իմաստ, Ճառք, էջ 9:

Ճշմարիտ վերածնութիւնը կատարելապէս իրագործւում է հաւատքի բոլոր պահանջների կատարմամբ, որով մարդ մտնում է Քրիստոսի հետ մի սերտ յարաբերութեան մէջ, գիտէ, որ եկեղեցու փրկիչ Քրիստոսը նաև իր փրկիչն է, արթուն կեանք է վարում և այլևս չի ընկնում հոգևոր քնի ու թմրութեան մէջ (Ա Պետ., Գ 21): Իսկ եթէ այդ պահանջները չեն իրագործւում, մկրտուածն ընկնում է հոգևոր քնի մէջ, թմրում է, և երբ այդ թմրութիւնը շուտով չի վերացւում, սուզւում է իսկական մահւան անդունդում: Բայց Քրիստոս առանձին սիրով կանչեց մանուկներին իր մօտ՝ իրապէս նրանցը համարելով Աստծու արքայութիւնը (Մատթ., ԺԹ 14, Մարկ., Ժ 14, Ղուկ., ԺԸ 16): Ուստի և Եկեղեցին ծննդեան սկզբից իսկ հոգում է իր անդամութեան կոչուածների համար, որպէսզի ճշմարիտ աստուածպաշտութեան ու կեանքի հիմքը դնի և ոչ թէ կոխան ճանապարհում սերմանողին նմանւի (Մատթ., ԺԳ 4) ցրելով իր հաւատացեալ զաւակներին և նրանց զրկելով նոր լուսաւոր կեանքից:

Հասկանալի է, որ երբ չափահաս մարդը կամենայ քրիստոնէութիւն ընդունել և մկրտւել Հայաստ. ս. եկեղեցում, նա պէտք է նախապէս լաւ դաստիարակւի, կրթւի, ճշմարիտ հաւատքով մկրտւի ու զօրանայ Ս. Հոգով: Այդպիսի կրթողները կոչւում են «երախայ», այսինքն՝ անչափահաս, ըստ Ս. Հոգու որդեգրութեան, դեռահաս, դեռ չհասած որդեգրութեան շնորհներին: Նրանք ընդունւում են եկեղեցում, հոգևորականների մօտ դաստիարակւում, լսում էին քարոզ, միայն թէ հաղորդութեան ժամանակ դուրս էին գալիս, երբ սարկաւագն ազդարարում էր. «Նորահաւատներից ոչ մէկը, թերահաւատներից ոչ մէկը, ապաշխարողներից և անմաքուրներից ոչ մէկը թող չմերձենայ աստուածային խորհրդին»[1]: Օրինաւոր կրթութիւնից և սատանայից հրաժարւելուց յետոյ խոստովանել էին տալիս Եկեղեցու հաւատալիքները, հերքում հեթանոսական մոլորութիւնները, և ապա մկրտելով՝ արժանացնում նաև ս. պատարագին: Ըստ այսմ, քանի որ հաւատը հիմնական տեղ է գրաւում մկրտութեան մէջ, անկարելի է մկրտել անդարձ հեթանոսին կամ անհաւատ ծնողների որդիներին[2]: Առաքեալները ևս մկրտում էին ամբողջ ընտանիքը միայն այն ժամանակ, երբ ծնողներն ու չափահաս անդամները դաստիարակւած էին

[1] Ա Կոր., Ժ 1-12, Ժամագիրք [տե՛ս Ս. Պատարագ]:
[2] Ընդհանր. 81.311-314, Ս. Յովհ. Իմաստ. 6:

լինում քրիստոնէական վարդապետութեամբ[1]: Այդպէս էին վարւում մանուկների հետ նաև առաքելական հայրերը, ինչպէս վկայում են Զմիւռնիայի եպիսկոպոս Պողիկարպոսն (+156)[78*] ու Որիգինէսը (+254): Իսկ եթէ հեթանոս ծնողների երեխաներին մկրտեն, կը դատապարտւեն թէ՛ մկրտուածները և թէ՛ մկրտողները[2], որովհետև այդպիսի վարմունքով ցուցաբերած կը լինեն հաւատքի գաղջութիւն և անզգայ վերաբերմունք աստուածային մեծ սրբութեան հանդէպ: Բացառութիւն են կազմում միայն այն երեխաները, որոնք ընկեցիկ են կամ ծնողներից զրկւած. այդպիսիք Հայաստ. ս. Եկեղեցու որբախնամ հաստատութեան սեփականութիւնն են կազմում և մկրտւում են քրիստոնեայ կնքահօր խնամատարութեանը յանձնւելով[3]:

Կնքահայրն էլ, ինչպէս բառն իսկ ցոյց է տալիս, կարող է միմիայն տղամարդը լինել, որպէսզի ճշտիւ համապատասխանի այդ ս. խորհրդի էութեանը: Եթէ կինը ստանձնէր այդ դերն ու կնքամայր դառնար, հակասութիւն կառաջացնէր, որովհետև կնքամայրը կամ մայրը միմիայն Եկեղեցին է, որ վերստին ծնում է մանկանն ի ժառանգութիւն և որդեգրութիւն երկնաւոր Հօր. մինչդեռ կնքահայրը ոչ թէ մայրական դերի խորհուրդն է ներկայացնում, այլ հայրական, այսինքն՝ Աւետարանի, յանձն առնելով ուսուցանել մանկանը ս. Աւետարանի ճանապարհով: Ճիշտ այդպէս էլ վկայելու մենաշնորհ ունի բացառապէս տղամարդը[4]: Ուստի և ինչպէս որ Քրիստոսի մկրտութեան միջոցին Տիրամօր կամ առհասարակ կանանց ներկայութիւնը չի յիշւում, այնպէս էլ նրանք սովորաբար բացակայում են ի նշան և ի յիշեցում, որ ներկայացուցիչ և սպասաւոր են մարմնաւոր ծննդեան, ըստ իրենց բնական կարգին և ոչ՝ վերածնութեան[5]:

[1] Գործք., Ժ 24, ԺԶ 15-33, ԺԸ 8, Ա Կոր., Ա 16:
[2] Մատթ., Է 6, Ընդհանր. 31. «Ասենք նաև ծննդեան պատճառով այլազգիներին մկրտելը, որ մի սովորութեամբ բերւած է հին ժամանակներից և հակառակ է Քրիստոսի հրամանին, որ ասաց սրբութիւնը չտալ շներին...»:
[3] Ս. Գրիգոր Տաթևացի, Հարց., էջ 591. Որբանոցներ, անկելանոցներ և այլ նման բարեգործական հաստատութիւնները կարգի դրեց Հայաստանում Ս. Ներսէս Մեծն, յանձնելով դրանց հոգատարութիւնը վանական միաբանութիւններին: Նոյն կարգերը մնացին և յետագայ դարերում, ինչպէս ցոյց են տալիս Դւինի և Պարտաւի ս. ժողովների կանոնները[79*]:
[4] Հարց. 591:
[5] Տե՛ս Բուն Մաշտոց, էջ 233. «Քանզի կանայք, որ սպասաւոր ու նպաստող են ախտաւոր ու մարմնական ցանկութեան, թող մօտիկ չլինեն հոգևոր և անխախտ ծննդեանը»: Ս. Սահակ Պարթևի կանոնում ասւում է. «Մկրտութիւնը կատարել երկիւղածութեամբ, և

Նրանց բացակայութեամբ մանուկը չի յիշեցնում մկրտութեան ս. խորհրդի կատարման ժամանակ հին Ադամից ժառանգած ախտաւոր մարմնական ծնունդը, այլ ամենքի մէջ ներշնչում է նոր Ադամի հոգևոր և անխախտ ծնունդը, որով մկրտողը վերածնւում, նորոգւում է նոր կեանքի համար լուսազարդուելով: Ուրեմն մարմնաւոր ծնողն ուղարկում է իր մանկանը արքայութեան ընտանիքի մօրը և վերստին ստանում է այդ հոգևոր ծնողից իր լուսազարդ սանիկին:

Մկրտութիւնը պէտք որ նախապատրաստութեամբ լինի: Քրիստոսին իսկական մկրտութեան նախապատրաստող եղաւ Յովհաննէս Մկրտիչը, որ օրինական լացողութեամբ ապաշխարել էր տալիս և Աստծու արքայութեան ճանապարհ բաց անում նրանց սրտերի մէջ, որպէսզի պատրաստ լինեն ընդունելու Քրիստոսի փրկութիւնն ու մկրտուելու Սուրբ Հոգով[1]: Ժողովուրդն էլ դիմում էր դէպի այդ ապաշխարական մկրտութիւնը, ըստ որում թլպատութեամբ ևս յիշւում էր միշտ Աբրահամի հետ դրած աստուածային հին Ուխտը, զատորոշում էր հեթանոս անհաւատներից և սպասում Օծեալի փրկագործութեանը: Նոյն կարգով պէտք է նախապատրաստի և չմկրտուածը, կամ եթէ մանուկ է՝ նրա ծնողը, որպէսզի ուղիղ և անսայթաք լինի նրա ընթացքը դէպի սրբութիւն ու վերածնութիւն: Ջերմեռանդ հաւատքով վերաբերմունքը պահանջ է թէ՛ մկրտողի և թէ՛ մկրտողի նկատմամբ: Նրանք պէտք է միշտ յիշեն ս. Հօր խօսքը՝ «Եթէ Սուրբ Հոգին չի մկրտւում մկրտողների հետ՝ մկրտութիւնը կատարեալ չի ասւում, այլ՝ [սոսկ] ջրի լացում»՝ կարօտ իսկական մկրտութեան[2]: Այդ է պատճառը, որ **քահանան պարտաւոր է անօթի կատարել մկրտութիւնը և ապա պատարագ մատուցանել սրբութեամբ**[3]: Այսինքն՝ ոչ միայն մկրտողը, այլև մկրտող պաշտօնեան պարտաւոր է բարեպաշտութեան զգացմունքներով և ջերմեռանդ հաւատքով զինւած մտնել այն խորհրդակատարութեան մէջ, որով

կանայք մկրտութեան պահին քահանաներին մօտիկ չկանգնեն, ինչպէս սովորեցին ոմանք յանդգնաբար կատարել և նրանց ներկայութեամբ մկրտել, այլ թող իրենց տեղում աղօթեն» Ս. Սահակ, կանոններ[80*]:

[1] Մարկ., Ա 4, Է 4-8, Եբր., Թ 9-10, Ս. Ներսէս Շնորհալի, Մեկն. Մատթ. 52:

[2] Եղիշէ, էջ 344:

[3] Ընդհանր. 80-81. Ս. Հայրը հրամայում է երկիւղածութեամբ կատարել մկրտութիւնը և ապա ասում է. «Եւ քահանաներից ոչ մէկը հաց ուտելուց յետոյ թող չհամարձակի առողջ մանուկների մկրտութիւնը կատարել, այլ միայն՝ մահւան երկիւղով, բայց նախ թող կատարի մկրտութեան գործը և յետոյ մատուցի սուրբ պատարագ, որին և հաղորդակից դարձնի մկրտուողին»:

պայմանաւորւած է մարդու բովանդակ աճումը, զարգացումը, առաջադիմութիւնն ու լուսաւոր կեանքը:

Ահա այսպիսի խորհրդաւորութեամբ է կատարւում այս ս. խորհուրդը. և որովհետև ճշմարիտ մկրտութիւնն իրագործելով յանուն Հօր և Որդու և Սուրբ Հոգու, միանգամ ընդմիշտ սրբում է մէկ սկզբնական մեղքը, միանգամ ընդմիշտ վերածնում է, միանգամ է իրականացնում ճշմարիտ հաշտութիւնը Քրիստոսի մահւան և յարութեան մէջ և դրոշմով միանգամ է հաստատագրւում անքակտելի կնիքը մկրտողի հոգու վրայ[1], հասկանալի է, որ այդպիսի մկրտւածը չի կարող կրկին անգամ մկրտւել: Կրկնել մկրտութիւնը նշանակում է մի այլ Երրորդութիւն դաւանել. ըստ որում և՝ մի այլ Քրիստոս, փրկչական մի այլ մահ, կրկնակի վերածնութիւն և մի այլ Ս. Հոգու, **իսկ այսպէս դաւանելը հերձւածողութիւն է:** «Մէկ Տէր, մէկ հաւատք, մէկ փրկութիւն», ասում է ս. առաքեալը (Եբ., Դ 5): Այնպէս որ Հօր և Որդու և Սուրբ Հոգու ճշմարիտ անունով և առաքելական կարգով մկրտւածը համարւում է մկրտւած ամեն մի քրիստոնէական և ճշմարիտ առաքելական Եկեղեցու համար: «Որովհետև մէկ անգամ մկրտւածների համար, որ ճաշակեցին երկնաւոր պարգևներից, հաղորդակից եղան Սուրբ Հոգուն, Աստծու գեղեցիկ խօսքի վայելքն ունեցան և գալիք աշխարհի զօրութիւնները ճանաչեցին, եթէ սայթաքեն, անհնար է երկրորդ անգամ ապաշխարութեամբ նորոգւել, որովհետև նրանք վերստին խաչն են հանում Աստծու Որդուն և դարձեալ խաղք ու խայտառակ դարձնում», գրում է Ս. Պօղոս առաքեալը[2]:

Սակայն Հայաստ. ս. Եկեղեցին **վերստին մկրտում է այն աղանդաւորների մկրտածներին** (արիոսեան , մակեդոնիան, նեստորական, սաբելեան և այլն), **որոնք չունեն Ս. Երրորդութեան ճշմարիտ դաւանութիւնը** և ուրեմն ճշմարիտ հաւատքով ու հաւատամքով չեն մկրտում յանուն Հօր և Որդու և Սուրբ Հոգու և կամ թէ որևիցէ կերպով շեղւում են առաքելական եկեղեցու մկրտութեան կարգից՝ էապէս ու խորհրդաւորապէս խախտելով այդ ս. խորհրդի կատարումը[81*]: Այսպէս

---

[1] Ս. Գրիգոր Տաթևացի, Հարց. 590:

[2] Եբր., Զ 4-6, Յովհ., Զ 3, Գաղ., Գ 27. Ս. Յովհան Իմաստասէր, Ճառք, էջ 5, 6, 7. «Հարկաւոր է հաւանութեամբ և հաւատքով գնալ բոլոր քրիստոնեաների յետևից և սեղանն ու աւազանը քարից անշարժ կերպով բոլոր եկեղեցիներում հաստատել»: «Որովհետև խորհրդին պատշաճող միայն այս նիւթն եմ յարմար տեսնում՝ իբրև մեր փրկութիւնը [կենսագործող] անսասան և հաստատահիմն իրողութիւն՝ կարծր և դժուարշարժելի հնարքով տնօրինւած»:

օրինակ, կայացած չէ այն մկրտութիւնը, որ կատարել է **մասնաւոր աշխարհական մարդու կամ մինչև անգամ սարկաւագի** և ոչ թէ քահանայական ձեռնադրութիւն ստացած հոգևորականի ձեռքով, ինչպէս գիտենք, թէ՝ առաքեալների կարգից, ուր Փիլիպպոս սարկաւագի քարոզութեամբ մկրտուածների փրկութիւնն իրագործուած չի համարւում, և թէ Ս. Նունէի պատմութիւնից[82*], որ Ս. Գրիգոր Լուսաւորչից քահանաներ խնդրեց Վրաց վերածնութեան համար[1]: Ըստ որում և եթէ մէկը վերահաս մահուան ճգնաժամին հաւատքով փափագում է մկրտուել, նա ոչ թէ կարող է աշխարհականի ձեռքով հասնել իր փափագին, այլ մկրտուած ու փրկուած է համարւում իր հաւատքով[2], **ինչպէս որ փրկութեան արժանացել են Քրիստոսի փրկագործութեան յուսով վախճանուած նահապետներն ու սրբերը Հին Ուխտում:** Եւ քանի որ մկրտութեան խորհրդի իրականացման համար նախ անհրաժեշտ է հաւատք և երկրորդ՝ սրբազնագործ արարողութիւն՝ ակներև է, որ այն չի իրագործւի առանց հաւատքի լոկ սրբազան արարողութեամբ և կամ հաւատքով, բայց կեղծ արարողութեամբ, **այլ վերահաս մահուան արգելքը լիազօրութիւն է տալիս հաւատքի փրկարարութեան համար:**

Մկրտութեան ս. խորհուրդը սկզբից մինչև վերջ գեղեցկապէս պատկերանում է իր աստիճանական ընթացքով և հիմքերով Հայաստ. ս. Եկեղեցու արարողութեան մէջ: Նախ նորահաւատի կողմից ասւում են Եկեղեցու դրան առաջ հինգ հատուած սաղմոսներ՝ ըստ հինգ զգայարանների, որոնցով խնդրւում է Աստծու ողորմութիւնը, առաջնորդութիւնն ու լուսաւորութիւնը դարձող և ի Տէր յուսացողի վրայ: **Դրա հետևանքն է լինում, որ սպիտակ ու կարմիր նարօտը ոլորւում է՝** «միաւորելով ու դառնալով մէկ՝ ի խորհուրդ կենարար արեան և ջրի, որ ելան Քրիստոսի տիգախոց կողից», մկրտողը պսակի յուսով մտնում է Քրիստոսի հովանաւորութեան ճանապարհը և երեք աղօթքից

[1] Գործք., Ը 12-18. «Եւ սարկաւագները թող չհամարձակեն մկրտութիւն կատարել, ապա եթէ կատարեն՝ պատժւելով կարգալոյծ կը լինեն սարկաւագութիւնից, որովհետև սարկաւագը քահանայ չէ, այլ քահանայի սպասաւոր» Ս. Սահակ կանոն[83*]:

[2] «Եթէ պատահի, որ նորահաւատները հիւանդանան, և քահանան հեռու լինի, և ընտանիքը գնայ քահանային կանչելու՝ ուր որ լինի քահանան, յանուն նորահաւատի, կարող է սկսել մկրտութեան կարգը: Եւ եթէ պատահի, որ նորահաւատը մեռնի, երբ քահանան գայ՝ սուրբ նշանով թող կնքի գլուխը և թաղի Քրիստոսի հետ մկրտուածներին: Այդ կանոնը թող կատարւի անսպասելի կատարուածի դէպքում» Սիոն կաթողիկոսի կանոն[84*]: Հմմտ. «Եթէ մէկը չմկրտւի՝ նրան փրկութիւն չկայ, բացի մարտիրոսներից, որոնք քաւութիւն են ստանում և առանց ջրի»[85*]:

յետոյ ասում է. «Հրաժարիմքը»: **Այս առաջին մասով մկրտուողը երես է դարձնում մեղանչական աշխարհից ու կեանքից:**

Երկրորդ մասում մկրտուողը դառնում է «ի լոյս աստուածգիտութեան», խոստովանում է «հաւատամքը», լսում է Աւետարանն ու **Հայոց դաւանանքը,** քահանայի աղօթքով խնդրում է հաւասարւել ճշմարիտ երկրպագուների հետ և ուրախութեան սաղմոսներով մտնում եկեղեցի ու շարականով դիմում դէպ աւազանը:

Երրորդ մասում կատարւում է բուն մկրտութիւնը, ըստ որում օրհնւում է ջուրը, որ Ս. Հոգով դառնայ «հոգևոր իմաստութեան սրբութեանը, նահատակութեան, հակառակամարտ (սատանային) յաղթելու, առաքինի գործերի պատուիրանապահութեան, աստուածպաշտութեան ամենակատարեալ հրահանգների և կրթութեան համար: Որպէսզի լուսաւորուած մտքով, առաքինասէր վարքով, կենցաղավարի այս աշխարհում՝ իր անձի փրկութեան, ամենասուրբ Երրորդութեան պատուի և փառքի համար: Որպէսզի արժանի լինի հասնելու սրբերի ժառանգութեան վիճակի լոյսին»: Այս օրհնութեան կարգը սաղմոսներով, ընթերցուածներով, աղօթքով ու ս. միւռոնով կատարելուց յետոյ, քահանան մկրտում է երեխային: **Այս լինում է չորրորդ մասը, որով մանուկը ստանում է վերածնութեան շնորհները Ս. Հոգով.** «Դուք, որ Քրիստոսի մէջ էք մկրտւել՝ Քրիստոսին էք հագել, որ Հօր մէջ էք լուսաւորւել՝ Սուրբ Հոգին կուրախանայ ձեր մէջ»[1]: **Եւ այս կարգից յետոյ կատարւում է դրոշմի ս. խորհուրդի արարողութիւնը[2]:**

Բայց որովհետև քրիստոնեայի զաւակն այլևս ոչ թէ Ադամի նման անէծքով է ծնւում, այլ՝ ըստ նոր Ադամի, աւետիքով և ուրախութեամբ, իբրև Աստծու և իր եկեղեցու ընծայ, ուստի և աստուածային օրհնութեան ուրախութիւնը

[1] Տե՛ս նաև Ս. Յովհ. Իմաստ., էջ 9, Ս Յովհ. Մանդակունի, էջ 122:

[2] «Թող մէկը **ծուլութեամբ չկատարի մկրտութիւնը,** ինչպէս լսեցինք, այլ՝ երկիւղով և զգուշութեամբ բուրվառով և ճրագներով և առագաստուած վարագոյրով, սուրբ աւազանի լուսաւորութեամբ, ինչպէս վայել է: Եւ աւազանը թող զետեղւի եկեղեցում կամ պաշտամունքի տան մէջ՝ քարից լինի, թէ այլ նիւթից՝ արժանի երկիւղածութեամբ, և գոհունակութեամբ, լուսաւորութեան (աւազանի) լայնութեամբ և խորութեամբ, **որպէսզի բաւարար չափով ջուրը ծածկի նորահաւատներին,** որ մկրտւում են: Եւ թող քահանաները մկրտութիւն չկատարեն շինականների տանը, բացի մահուան երկիւղի (պարագային), եթէ վտանգ լինի». Ներսէս Բ Կաթող. Կանոն Դւինի ս. ժողովի (551թ.)[87*]:

սկսւում է ծննդեան օրից, երբ քահանան գնում է տուն, «խորհուրդ մեծ» երգում, ըստ հրեշտակաց: Քրիստոսի Ծննդեան Աւետարանը կարդում և Ս. Կոյսի ողջոյնը տալիս ծննդկանին. «Ուրախացիր, ով շնորհընկալ, Տէրը քեզ հետ է, օրհնեալ ես դու կանանց մէջ և օրհնեալ է քո որովայնի պտուղը»[1]:

Եւ ինչպէս որ մկրտութիւնից ութ օր յետոյ քահանան գնում է նարօտը վերցնում և լողացնելով մանկանը, վերահաստատում նրա վերածնութիւնն ու սրբութիւնը և աւետում թէ՝ «Արդարացար, սրբեցիր, զօրացիր Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով». այնպէս էլ քառասուն օր լրանալուց յետոյ մայրը գալիս է եկեղեցի, նրան նուիրում իր մանկանը և աղօթքով ստանում է աստուածային «շնորհաց ու զօրութեան» հովանու տակ: Այս կարգով մայրը մոռանում է մարմնաւոր ցաւով ծնունդը և ընդունում սրբած, Աստծու ճշմարիտ երկրպագու և «աստուածգիտութեան լոյսը զգեցած» մանկանը, որ կոչւած է Քրիստոսի շաւղով նոր ճանապարհ ընթանալ (Ղուկ., Բ 22-39): Մի խօսքով թէ՛ մկրտութեան և թէ՛ նրա յարակից կարգերի խորհուրդն ու էութիւնը ցոյց են տալիս, որ մանուկը ծնւում է Քրիստոսի ծննդեան խորհուրդով, սրբւում է Քրիստոսով և աճում զօրանում է Քրիստոսի հետ, որպէսզի նրա խաչը կրի իր վրայ եկեղեցու առաջադիմութեան համար:

Հռոմէական եկեղեցին տարբերւում է առաքելական կարգից այս խորհուրդի թէ՛ գործողութեամբ ու թէ՛ բանաձևով: Հայաստ. ս. Եկեղեցու մկրտութեան բանաձևն է. «(Այս անունով) Աստծու ծառան նորահաւատութիւնից մկրտութեան գալով, մկրտւում է Հօր և Որդու և Սուրբ Հոգու անունով, մեղքի ծառայութիւնից գնելով Քրիստոսի արեամբ, ընդունում է երկնաւոր Հօր որդեգրութիւնը՝ ժառանգակից լինել Քրիստոսին և լինել Սուրբ Հոգու տաճար», որի մէջ էականը «Մկրտւում է Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով» խօսքն է: Այս էական մասը մնացել է առաքելների ժամանակից, սակայն Հռոմ. եկեղեցին ուժ տալով իր կղերի նշանակութեանն ու իշխանութեանը, այս ևս փոփոխել է մոլորաբար, ձևակերպելով այսպէս. «Ես մկրտում եմ (այս անունը) Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով. Ամէն»: Այսպիսով, նա թէ՛ առաքելական կարգն է խանգարում և թէ՛ մկրտողի անձին աւելի առաջնակարգ նշանակութիւն է

[1] Մաշտոց ձեռաց. 323, Ղուկ., Բ 8-21, Ա 39-56: Տե՛ս և ստորև գլ. ԽԲ: Ամբողջ ժողովրդին մկրտելու հրահանգը տե՛ս Ընդհանր., էջ 311-314:

վերապահում, քան Քրիստոսին՝ ի վնաս քրիստոնէական եկեղեցու առաքելական միութեան և հոգևոր նշանակութեան[86*]: Մինչդեռ մարդկային այդ ձգտումն է, որ դատապարտում է Պօղոս առաքեալը, քանի որ բացառապէս Քրիստոս է մկրտութեան իսկական կատարողը քահանայի ձեռքով[1]:

Հռոմ. եկեղեցին մկրտութիւնն էլ այլապէս է կատարում. ոչ թէ երիցս ընկղմելով, այսինքն՝ մկրտելով ջրի մէջ, այլ միայն ջուր սրսկելով երեխայի վրայ, ինչպէս երբեմն անում էին հին դարերում հիւանդներին: Նէոկեսարիայի ժողովը Գ դարում այդ մի արգելւած ու դատապարտելի գործ է համարում, մերժելով այդպէս մկրտւածներին հոգևոր աստիճանից (Կանոն ԺԲ)[88*]: Մինչդեռ Հռոմ. եկեղեցին ԺԳ դարում մտցրեց այդպիսի մոլար սովորութիւն, ինչպէս վկայում է Թովմա Աքւինացին իսկ: Այդպիսով նա չարաչար սխալւում է, որովհետև եղծում է երեքօրեայ թաղման խորհրդի արարողութիւնը, որին ենթարկւում է մանուկը զգալապէս և ելնելով, ուրեմն, Քրիստոսի հետ յարութիւն առնում նոր կեանքի համար:

Բողոքականներն էլ թէև ընդունում են մկրտութեան ս. խորհուրդ լինելը, սակայն ընկնելով մէկ այլ ծայրայեղութեան մէջ, հակառակ Հռոմ. եկեղեցու ուսուցանում են, որ իբր թէ մկրտութիւնը ոչ թէ Քրիստոսի հաւատացեալին վերջնականապէս սրբում է նախնական և անձնական մեղքերից. այլ միայն խորհրդանշան է այդ մեղքերի ներման, ըստ որում այդպիսով մարդ նոր յարաբերութեան մէջ է մտնում Աստծու հետ: Ուրեմն մկրտութեամբ մարդ դառնում է Աստծու որդի, յոյս է ստանում յաւիտենական կեանքի և աստուածային շնորհների, որոնք և ստանում է անտեսանելի և արտաքին որևիցէ պայմանից անկախ կերպով: Այս վարդապետութիւնն իր մէջ ակներև հակասութիւն է պարունակում, որովհետև եթէ Աստուած մկրտութեամբ չի սրբում մարդու մեղքերը, այլևս ինչո՞ւ է սահմանել այդ կամ ինչո՞ւ չի սրբում մկրտւածի մեղքերը, երբ նա իսկապէս մեղաւոր է: Եւ քանի որ Քրիստոս երկրորդ Ադամն է, չէ՞ որ նրանով նոր կեանք և արդարութիւն է տրւում մարդուն մկրտութեամբ: Այլև Քրիստոս սուրբ է, չէ՞ որ սուրբ է և նրա մարմինը՝ եկեղեցին կամ հաւատացեալը, չէ՞ որ նա փրկեց Ադամի մեղանչումով ընկած մարդուն և մկրտութեամբ բարձրացնում է. իսկ եթէ մարդը մնում է նոյն վիճակում և Քրիստոս Իր արդարութեամբ միմիայն ծածկում է

[1] Ա Կոր., Ա 10-17, Հարց. 588:

նրա մեղքը, այլևս այդ ինչ փրկութիւն է կամ նորոգութիւն, երբ մարդ դեռևս թաւալւում է մեղքի մէջ: Ակնյայտ այս հին մոլորութիւնը, որ Որիգինէսի աշակերտ Պրոկղը և ուրիշ հերետիկոսներ հնարեցին, բոլորովին հակասական է ու դատապարտելի, ըստ որում հակառակ է նաև Աւետարանի վարդապետութեանը, որ ասում է, թէ մկրտութեամբ մարդ ստանում է նոր կեանք, սրբւում է մեղքերից և նորոգւում նոր Ադամով (Յովհ., Գ 4-6, Գործք., Բ 38, Ա Կոր., Զ 11 և այլն):

Բայց Հայաստ. ս. Եկեղեցին ճանաչելով Քրիստոսի փրկագործութեան էութիւնը, որ ճշմարտապէս իրագործւում է իւրաքանչիւր մկրտուողի վրայ այս ս. խորհրդով, իր խորհրդակատարութեամբ ևս շատ անգամ է յիշում այս սկզբունքի հաստատութիւնը հակառակ վերոյիշեալ ծայրայեղութիւնների: Նա ամփոփում է մկրտուողի խնդրածը այսպէս. «Հաւատք, Յոյս, Սէր և Մկրտութիւն. մկրտել և արդարանալ, սրբել մեղքերից, ազատել դևերից, ծառայել Աստծուն»: Մկրտողն էլ խնդրում է աղօթքի մէջ. «Սրա վրայից թօթափիր մեղքի հնութիւնը և նորոգիր նոր կեանքի մէջ, լցրու Սուրբ Հոգուդ զօրութեամբ՝ քո մէջ Քրիստոսի փառքի նորոգութեան համար»: Եւ ապա մկրտելով ու յանձնելով կնքահօրը՝ յայտարարում է. «Դուք, որ Քրիստոսի մէջ էք մկրտւել, Քրիստոս էք հագել, ալէլուիա: Դուք, որ լուսաւորւել էք Հօր մէջ, Սուրբ Հոգին խայտալու է ձեր մէջ, ալէլուիա»: Այս ամենն արտայայտում է այն մեծ իրողութիւնը, որ կատարւում է նորոգ հաւատացեալի վրայ. նա ըստ նախընթացի մեռնում է իր հին մարդով Քրիստոսի հետ, և իբրև նոր մարդ յարութիւն առնում Քրիստոսով, որպէսզի դարձեալ Քրիստոսով ու Քրիստոսի հետ նոր կեանքի մէջ նորոգապէս յարատևի[89-90*]:

ԽԲ

Բ ԴՐՈՇՄ

Ս. Հոգուն միանալով մկրտուածը ուղղւում է դէպի նոր կեանք, զինւում է մեղքի իշխանութիւնը խորտակելու վճռականութեամբ և **ամրապնդւում քրիստոնէական ճշմարիտ վարքով** աստուածային հաղորդակցութեան մէջ: Իսկ Ս. Հոգին իջնում է մարդու մէջ դրոշմի ս. խորհրդով և այնուհետև առաջնորդում է

նրան հաւատքի միջոցով, ինչպէս ասում է առաքեալը. «Այս բանը գրեցի ձեզ, որպէսզի ոչ ոք ձեզ չմոլորեցնի: Իսկ այն օծումը, որ դուք ընդունեցիք նրանից, թող բնակւի ձեր մէջ, և կարիք չկայ, որ մէկը ձեզ ուսուցանի: Այլ եղէք այնպէս, ինչպէս, որ նրա օծումն ուսուցանում է ձեզ ամեն ինչի մասին...» (Ա Յովհ. Բ 26-27): Այսպէս և Պօղոս առաքեալն է գրում. «Որով նաև դուք լսեցիք ճշմարտութեան խօսքը՝ ձեր փրկութեան Աւետարանը, որին հաւատալով կնքւեցիք խոստացւած Սուրբ Հոգով, որ մեր ժառանգութեան առհաւատչեան է մինչև այն օրը, երբ կատարելապէս կը տիրանանք փրկութեանը՝ ի գովութիւն նրա փառքի» (Եփես., Ա 13-14):

Դրոշմը պարզապէս Ս. Հոգու որդեգրութեան կնիքն է և հաւատացեալի հոգեգալուստը, ուստի և դրոշմել բառի տեղ սովորաբար գործ է ածւում «կնքել», ինչպէս յիշւում է նաև առաքեալի խօսքերի մէջ: Ս. Հոգու ներգործութիւնը կամ դրոշմի ս. խորհուրդը գեղեցկապէս նմանեցւած է հրի յատկութեանը, որով տարբերւում է Քրիստոսի մկրտութիւնն ապաշխարական մկրտութիւնից[1]: Հուրն առհասարակ մաքրող ու փորձող է, ըստ որում այրում է ժանգը և մաքրում, իսկ եթէ այրուողի մէջ իսկութիւն կամ մաքրութիւն չկայ, ոչնչացնում է նաև նրան[2]: Հետևաբար Ս. Հոգու ներգործութեան այդ համեմատութիւնը շատ բնորոշ է: Նա փորձում է իր հրային նմանողական զօրութեամբ իր ներգործութեանը ենթարկւածին «ընտիր ոսկու նման, որպէսզի խոտանը չորանայ», «որպէսզի զտելով ընտիր դարձնի մարդկային բնութիւնը», ասում է ս. Եղիշէն[3], և մաքրելով իսպառ, ապա տալիս է իր մեծամեծ շնորհները վերածնեալին՝ իր նորաստեղծ ու նորոգ կեանքի համար: Այնուհետև նորածնեալը մտնում է Սուրբ Հոգու հովանու տակ իր աճման ու հաւատաւոր զարգացման ընթացքում և վայելում է նրա բարիքները՝ **ոտք դնելով Հայաստ. ս. Եկեղեցու զինւորեալ որդիների յաղթական հանդիսարանը:**

---

[1] Մատթ., Գ 11, Ղուկ., Գ 16, Գործք., Բ 3:

[2] Տե՛ս Ա Կոր., Գ 14. «Որովհետև ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրւած այն հիմքը, որ Յիսուս Քրիստոսն է: Եթէ մէկն այս հիմքի վրայ կառուցի ոսկով, արծաթով, թանկարժէք քարերով, փայտով, խոտով, եղէգով, իւրաքանչիւր գործը յայտնի կը լինի, որովհետև դատաստանի օրը այդ պիտի երևայ, քանի որ կրակով յայտնի պիտի լինի...»:

[3] Մատենագրութիւն, էջ 212:

Ս. Հոգու շնորհների կնիքը տրւում է Հայաստ. ս. Եկեղեցում ս. միւռոնով: Զէթը և օծութեան իւղն առհասարակ թանկագին միջոց էր բժշկութեան, մանաւանդ վէրքերի ու բեկումների համար, այլև նշանակն էր արթնութեան, լոյսի ու կենդանութեան և ընդհանրապէս իբրև զօրացուցիչ և մաքուր նիւթ՝ եփւում էր սուրբ օծութեան համար[1]: Ուստի և եփւած անուշահոտ, մաքուր միւռոնն ամենայատուկ նիւթն է Ս. Հոգու խորհրդաւոր իջման և բարերար ու սրբարար, շնորհագործող ու բարեզարդ ներգործութեան: Նա է մեզ հաստատում, կապում Քրիստոսի հետ, նրանով ենք ստանում Ս. Հոգու մեր մէջ բնակւելու առհաւատչեան և «Սուրբ Հոգին մեր մէջ ենք ընդունում Քրիստոսին միանալով»[2]: Ըստ որում և առաքեալն ասում է. «Եւ նա, որ հաստատեց մեզ, Աստուած է, որ մեզ կնքեց էլ և Հոգու առհաւատչեան դրեց մեր սրտերի մէջ» (Բ Կոր., Ա 21): Այսպիսով, ուրեմն, պտղով մեղանչած և Աստծուց օտարացած մարդը վերստին պտղի իւղով ընդունում է Ս. Հոգուն ու միանում. մահացուցիչ կերակրելով քաղցել ու նւաղել է նա, նրա պարարտութեամբ զօրանում է. և վերջապէս ապաշխարական մոխրատես կերպարանքը սրանով պայծառանում է և փրկութեան ուրախութեան մէջ մտնում[3]: Վասն որոյ և շարականում երգւում է, որ Ս. Հոգին «գգւում է սիրով աղաւնակերպ, մարդկանց ծնում աստուածակերպ»[4]: Հասկանալի է, որ դրոշմը պէտք է անմիջապէս մկրտութիւնից յետոյ տրւի, ինչպէս անում էին և առաքեալները ձեռք դնելով. այդպէս էին անում նրանք նաև ընտանիքներ մկրտելիս, որոնց մէջ լինում էին և մանուկներ[5]:

Հայաստ. ս. Եկեղեցում դրոշմը դնում է քահանան, որ կնքում է ճակատը խաչով և ասում. «Յիսուս Քրիստոսի անունով անուշ իւղը հեղւած է քո վրայ, երկնաւոր պարգևների կնիքը»[6]: Եւ այդ լրացնելու համար ինն անգամից կնքում է

[1] Մատթ., ԻԵ 3, 4, Սաղմ., ԻԲ 5, Ել., Լ 25, ա Թագ., ԺԶ 1

[2] Ս. Յովհ. Իմաստ. 7, Ընդհանր. 376: «Որովհետև ինչպէս որ Աւազանի լուսարանի յիշատակումով հաւատում ենք, թէ մարմնի լւացմամբ սրբութիւն ենք ստանում, այնպէս էլ յոյսով պարարուն իւղի օծումով առանց երկբայութեան համարում ենք, որ Հոգու զօրութիւնն ենք բովանդակ կերպով ստանում սրանով և սրա մէջ». Նարեկ. ՂԳ:

[3] Նարեկ., անդ. էջ 497, Յաճախ., Թ 70-80:

[4] Շարակնոց, էջ 385:

[5] Ա Կոր., 14-16, Գործք., ԺԹ 3-6, Ա Կոր., 16, Գործք., Բ 38, ԺԶ 15, 36:

[6] Հմմտ. Բ Կոր., 21-22, Եփես., Ա 13-14, Դ 30:

«Փրկութեան լոյսով պայծառացած այս իւղը՝ հեղւելով մեզ վրայ՝ օծում է մեր արտաքին խորանը, իսկ մեր ներքին մարդուն [օծում է] աներևոյթ կերպով՝ մտնելով նրա մէջ խորհրդաբար ի նորոյ կենդանածնում». Նարեկ., ՂԳ:

մանկան մարմնի վրայ տասներկու տեղեր և մաղթում Աստծու օրհնութիւնը[1]. այդ տեղերն են ճակատից յետոյ՝ աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, մէջքն ու ոտները: Այդ տեղերը դրոշմւելով մանուկն օրհնութեամբ ստանում է մտքի արթնութիւն, աչքերի լուսաւորութիւն փրկութեան, ականջների ունկնդրութիւն Աստծու պատւիրանների ընկալման համար, յաւիտենական կեանքի հոտառութիւն, բերանի պահպանութիւն, ձեռքի բարեգործութիւն, սրտի սրբութիւն և հոգու ուղղութիւն, ըստ Սաղմոսի (Ծ). մէջքի ամրութիւն չարեաց դէմ և ոտքերի ուղիղ գնացք դէպի յաւիտենական կեանք: Ապա հագցնում են նոր սպիտակ հանդերձ, որ է հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան, այսինքն՝ լուսաւոր վարք, պայծառ հաւատք և անմեղութիւն. կապում են նարօտը իբրև «Քրիստոսի կողից բխած արիւն և ջուր»[2], որ «շնորհների պսակ է և անխորտակ զէնք՝ ընդդէմ հակառակամարտի» (սատանայի), և երկու մոմ է յանձնւում կնքահօր ձեռքը, որպէսզի լոյսը լինի մանկան կեանքի առաջնորդը: Այնուհետև տանում են նրան սեղան, ուր և իբրև երկինք ելնելուց և սրբութիւններին երկրպագելուց յետոյ, մանուկը հաղորդւում է Քրիստոսի կենդանարար մարմնին և արեանը: Այդ կարգը վերջացնելուց և աղօթքներ ասելուց յետոյ համբուրում են նորոգ մկրտւածին, որով ընդունում են նրան եկեղեցու անդամակցութեան կամ եղբայրութեան մէջ:

Արդ, Հայաստանեայց ս. Եկեղեցում մկրտութիւնն ու դրոշմը կատարւում են միաժամանակ, ըստ Քրիստոսի օրինակի, որի մկրտւելուց անմիջապէս յետոյ Ս. Հոգին իջաւ նրա վրայ (Ղուկ., Գ 22): Այդ կարգի համեմատ էին վարւում նաև առաքեալները, որպէսզի զօրանայ նորադարձի մէջ Աստծու գիտութիւնը, նորոգւի, Աստծու որդեգիրը դառնայ, փրկութեան ժառանգութեան առհաւատչեան ստանայ և իբրև եկեղեցու զինւոր զինւի չարութեան դէմ պատերազմելու հաստատակամութեամբ[3]: Ս. Գրիգոր Լուսաւորիչը ևս Հայոց

[1] «Մի տրտմեցրէք Աստծու Սուրբ Հոգին, որով կնքւեցիք փրկութեան օրւայ համար» Եփես., Դ 30:

[2] Տե՛ս նաև Հարց. 594, Մաշտոց ձեռաց. 79:

[3] Գործք., Բ 4, Ը 15-18, ԺԹ 6, Հռ., ԺԵ 19, Եբր., Բ 14, Ա Կոր., ԺԲ 7, Բ Կոր., Ա 22, Հռ., Է 6, Ը 15, ԵՓ., Ա 13-14, Գաղ., Ե 16. «Ովքեր առաջնորդւում են Աստծու Հոգով, նրանք են Աստծու Որդիները, քանի որ չստացանք ծառայութեան հոգին վերստին երկիւղի մէջ ընկնելու համար, այլ ստացանք որդեգրութեան հոգին, որով աղաղակում ենք. Աբբա Հայր: Նոյն Ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, թէ Աստծու որդիներ ենք, և եթէ որդիներ

ազգը մկրտելիս, միաժամանակ թափեց օծութեան իւղը միանգամայն բոլորի վրայ. «Եւ օծութեան իւղը, որ սուրբ Գրիգորիոսը լցնում էր մարդկանց վրայ, գետի մէջ շրջան կազմելով, խայտում էր մարդկանց շուրջ»[1]: Իր քարոզութեան մէջ ամենքին հաւատարմացնում է, ասելով, թէ «Ինչպէս Ս. Հոգին Յորդանանի մէջ իջաւ Իր փառակցի վրայ, նոյնպէս և թող իջնի ուղղափառ հաւատով բոլոր մկրտուողների վրայ»:

Դրոշմը, իբրև Ս. Հոգու շնորհները հաղորդող խորհուրդի միջոց, այնքան մեծ նշանակութիւն ունի, որ Ս. Գրիգոր Նարեկացին ասում է. «Ինչպէս օրինակ ճարպի մէջ թաթախուած պատրոյգը, մինչև կրակով վառուելը, ցոյց չի տալիս լոյսի որևէ նշոյլ, այդպէս էլ մեր վրայ հեղուած լոյսի այս օծութիւնն ապագայում կը ջահավառի»[91-92*]: Բայց ոչ միայն հանդերձեալի, այլև ներկայի նկատմամբ ասում է նա. «Փայտեղէն անօթի պէս, որ օծուած չլինելով դիւրութեամբ ճեղքւում է, և անպէտք դառնալով, անարգւում, նոյնպէս և սրանով չօծուած մարդը հեշտութեամբ խորտակւում է, և Քեզնից անջատուած լինելով՝ չի լուսաւորում»: Ուստի և այդ սրբազան հայրը դարձնելով իր հաւատաբուխ խօսքն առ Փրկիչ, ասում է. «Յիսուս, սա քո մատն է, որով հրաշալի բաներ ես զարմանագործում»[93*]:

Մկրտութեան լրացուցիչը լինելով՝ դրոշմն անկրկնելի խորհուրդ է, սակայն եթէ Հայաստ. ս. Եկեղեցու ծոցն են մտնում այնպիսի աղանդաւորներ, որոնք դրոշմի խորհուրդ չեն ընդունում՝ ստանում են դրոշմ և ընդունւում, նոյնպէս և նրանք, ովքեր սկզբից մկրտւել են, իսկ յետոյ հեռու մնացել եկեղեցու ծոցից կամ ուրացել ու կամովին եկել ապաշխարանքի տակ մտել[2]:

Հռոմ. եկեղեցին մեծապէս մոլորւում է այս խորհրդի կատարման մէջ: Նախ նա վերապահում է այս խորհրդի կատարումը միմիայն եպիսկոպոսներին: Մենք գիտենք, որ սկզբում առաքելները ձեռք դնելով՝ տալիս էին Ս. Հոգու իջման դրոշմը, ուստի և միւռոնի օրհնութիւնը քրիստոնէական եկեղեցում վերապահւած էր միմիայն եպիսկոպոսին, ինչպէս գիտենք ժողովական

ենք, ապա և՝ ժառանգներ, ժառանգներ Աստծու և ժառանգակիցներ Քրիստոսի». Հռոմ., Ը 14-17:

[1] Ագաթ. ՃԺԸ:

[2] «Իսկ նրանցից, ովքեր սկզբից մկրտւած են եղել, հարկ է միայն խոստովանութիւն ընդունել, նրանց վրայ ապաշխարութիւն դնել, սուրբ միւռոնով ճակատը և զգայարանները դրոշմել՝ ասելով. «Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով» և ապա նրան խառնել Քրիստոսի հօտին», Ս. Ներսէս Շնորհալի, Ընդհան. 314:

կանոններից (318 թ. Կարթագինէի ժողովի Զ կանոն)[94*]: Իսկ դրոշմի խորհուրդը կատարում էին նաև երէցները, որոնց սակայն վերապահւած չէր ձեռնադրութեան իրաւունքը և այս մասին յիշւած է թէ՛ առաքելների կանոնների մէջ և թէ՛ եկեղեցու ս. հայրերի գրւածքներում, ուստի և Հռոմ. եկեղեցին գրեթէ միշտ քահանաներին էլ ի դէպ իրաւունք է տուել դրոշմելու, ինչպէս երբեմն անում է և այժմ:

Երկրորդ՝ Հռոմէական եպիսկոպոսները դրոշմելով հանդերձ ձեռք են դնում, մինչդեռ մենք գիտենք Դիոնիսիոս Արիսպագացու, Կիպրիանոսի և այլ եկեղեցական հայրերի ու մինչև անգամ Հռոմի քահանայապետերի վկայութիւններից, որ առաքելները ձեռք դնելու փոխարէն են կարգադրել միւռոնով դրոշմելը. իսկ երկուսը միասին կատարել նշանակում է՝ մէկն ու մէկի նշանակութիւնը բաւարար չհամարել, որ հակասութիւն է:

Երրորդ՝ Հռոմէական եկեղեցին միմիայն ճակատն է խաչաձև դրոշմում, մինչդեռ քրիստոնէական եկեղեցին սկզբից հիմք է դրել դրոշմելու այն բոլոր զգայարանները, որոնք ընդունում են աստուածային լուսաւորութիւն ու յայտնութիւն[1] և աչքի ընկնում սխրական գործունէութեամբ: **Այս մոլորութեամբ Հռոմ. եկեղեցին հակասում է իր այն վարդապետութեանը, որով պահանջում է արտաքին բարեգործութիւններ:**

Չորրորդ՝ Հռոմէական եկեղեցին ս. խորհրդի պէս այստեղ ևս հրահանգում է, որ դրոշմողն ասի. «Քեզ կնքում եմ Խաչի նշանով, քեզ դրոշմում եմ փրկութեան միւռոնով Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով. ամէն», որ սկսել են գործածել ԺԵ դարից և այդ խօսքերը Ս. Գրքից չեն, ոչ մի կապ չունեն ս. խորհրդի հետ և բոլորովին հակառակ են առաքելական եկեղեցու ոգուն[96*]:

Եւ հինգերորդ՝ Հռոմէական եկեղեցին դրոշմը տալիս է մկրտութիւնից շատ տարիներ յետոյ մինչև 12-14 տարեկան հասակը, որ բոլորովին նորամուծութիւն է, համաձայն նոյնիսկ Հռոմ. կաթոլիկ որոշ աստուածաբանների խոստովանութեան, և հակառակ է առաքելական կարգին ու ս. Հայրերի սովորութեանը[2]: Եթէ այդպէս են անում, որպէսզի երեխան հասկանայ այդ խորհուրդը, այն ժամանակ պէտք է մկրտութիւնն էլ մեծ հասակում կատարէին:

---

[1] Տե՛ս օրինակ Կ. Պոլսի ժողովի Զ կանոնը[95*]:

[2] Գործք., Ը 14-17, ԺԹ 5, Եփ., Դ 30:

Սակայն այլապէս չեն էլ կարող անել, չեն կարող մի մոլորութեան մէջ մնալով գոնէ միւսից խուսափել և հակասութիւնը վերացնել, քանի որ մոլորաբար եպիսկոպոսին են վերագրում դրոշմի կատարման իրաւունքը, մինչդեռ եպիսկոպոսը չի կարող ժամանակին հասնել իր ամբողջ թեմի մանկանց մկրտութեանը:

Բողոքականներն ուսուցանելով, որ իբր թէ ս. խորհուրդները խորհրդանշական արարողութիւններ են լոկ մեր փրկուած լինելու համոզմունքն ամրացնելու համար և թերևս Կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոսական յիշեալ պաշտօնը մերժելով, չեն ընդունում նաև դրոշմի ս. խորհուրդը և այդ աւելորդ են համարում մկրտութիւնից յետոյ: Ըստ այդմ նրանք կարծում են, թէ մկրտութեամբ մարդ մտնում է Ս. Հոգու շնորհների տակ, և թէ՛ քրիստոնէական բարեպաշտական կեանքը, որի համար ուժ է տալիս դրոշմով Ս. Հոգին, մարդու մէջ վարում է նոյն Ս. Հոգին, մկրտութեամբ բնակելով նրա մէջ: Ուստի և բողոքականները դրոշմը դարձրին մի բարեպաշտական արարողութիւն միայն, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հանդիսաւոր քննութիւն պատանու հաւատքի: Այս մոլորութիւնը պարզապէս հակառակ է ոչ միայն քրիստոնէական եկեղեցու կարգին, այլև Ս. Գրքին[1], ըստ որում առաքեալները ձեռք դնելով և Ս. Հոգի տալով, ոչ թէ արտակարգ շնորհներ էին տալիս նորադարձներին, ինչպէս հիմնաբանում են բողոքականները, այլ Ս. Հոգու դրոշմը տալիս էին բոլոր մկրտուողներին, որոնց մասին ասուած է. «առնուին Հոգի Սուրբ», մինչդեռ արտակարգ շնորհների տուչութեան մասին ասում է. «Սուրբ Հոգին եկաւ նրանց վրայ, լեզուներով էին խօսում և մարգարէանում[2]»:Ուստի բողոքականների այս զարտուղի ընթացքը ակնյայտ շեղում է քրիստոնէական եկեղեցու կարգից:

Հայաստ. ս. Եկեղեցին ոչ մի կերպ չի շեղւում առաքելական ընթացքից այս խորհուրդի թէ՛ կարգի և թէ՛ կարգակատարի վերաբերմամբ, որպէսզի նրա էութիւնը ևս այսպէս թէ այնպէս ծուռ արտայայտութեան մէջ դրած չլինի: Սրա խորհրդակատարութիւնը քահանայական պաշտօն է և քանի որ Հայաստանեայց ս. Եկեղեցին իր հովանու տակ է առնում իր նորածին ու վերածնեալ հաւատացեալին՝ անմիջապէս յետոյ է տալիս, ըստ առաքելական օրինակին և ս.

[1] Ա Յովհ., Բ 20, 27, Բ Կոր., Ա 21, 22 և այլն:
[2] Գործք., Ը 17, ԺԹ 6, Եբր., Զ 2, Յովհ., ԺԴ 16-17, Հռոմ., Ը 9:

լուսաւորչեան կարգին, որպէսզի մանկան նոր կեանքը ևս սրբութեամբ և Ս. Հոգով ընթանայ: Մինչդեռ դրոշմը դարձնել եկեղեցու մէջ ընդունելութեան և հաւատքի քննութեան մի խորհուրդ կամ նշան, այդ ոչ այլ ինչ է ցոյց տալիս, բայց եթէ այն, որ Մայր եկեղեցին պատասխանատու չէ իր վերածնեալ որդու կրթութիւնը հոգալու համար: Հայաստանեայց ս. Եկեղեցին իմանալով, որ իր իսկ պարտքն է սատար լինել մանկան կրթութեանը, վերածնում և անմիջապէս զինում է նրան Ս. Հոգով[1] մարդու զօրութիւնը պայմանաւորող 12 տեղերի դրոշմամբ, որ մանուկը կարողանայ ապահովապէս անցնել իր կեանքի ուղին: Ընդունելով մանուկներին հաւատացեալների խմբի մէջ իբրև հաւասար անդամների, Հայաստ. ս. Եկեղեցին ոչ մի խտրութիւն չի դնում մեծ ու փոքրի մէջ: Ըստ որում և քահանան աղօթքի մէջ ասում է. «Տէր, մաքուր դարձրու սրան քո ճշմարտութեամբ և Սուրբ Հոգու շնորհների լոյսով, որպէսզի Քո Աստուածութեան տաճարն ու բնակարանը լինի և կարողանայ գնալ արդարութեան բոլոր ճանապարհներով և համարձակութեամբ կանգնել Քո Միածնի՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ահաւոր բեմի առջև»:

Այս ս. Խորհուրդի էութեան համեմատ և քահանան աւետում է մանկան ժառանգաւոր դառնալը՝ հանդիսաւորութեամբ ասելով. «Խաղաղութիւնը քեզ հետ լինի, Աստծուց փրկուածդ խաղաղութիւնը քեզ հետ լինի, Աստծուց օծուածդ»: Այդ պատճառով և խնդրում է Աստծուց. «Այս երեխային սնիր և հասցրու կատարեալ հասակի չափին»: Նա Աստծու փրկեալն է և Աստծու օծեալն է և հետևաբար Եկեղեցու որդին է ու սանիկը, հեռու՝ խաւարից և լոյսի բնակիչ, ազատ մեղքի ցաւերից և զաւակ երկնաւոր բերկրանքի, «տաճար Աստծու կենդանուոյ» և ինքն իսկ՝ նորաշէն եկեղեցի: Այդ պատճառով ինչպէս որ մարմնաւոր ծնողը մարմնաւոր փաղքով իր մանկանը յանձնում է Եկեղեցու կենդանացմանը, այնպէս էլ Հայաստ. ս. Եկեղեցին հոգևոր փաղքով և սրբութեան բերկրանքի երգերով և աւետիքով բերում յանձնում է բնական սնուցանող մօր պահպանութեանը: Որովհետև մանուկն էլ պէտք է ճանաչի իր մարմնաւոր ծնողին, որ իր մարմնական կերակրողն է, և հոգևոր ծնողին, որ իր հոգևոր սնուցողն է ընդմիշտ և ըստ ամենայնի: Բայց մանկանը յանձնելիս մարմնապէս կերակրող մօրը յայտնում է

[1] Տե՛ս և Կոչումն ընծ. 9. «Սուրբ Հոգու գրաւականը ստանանք հաւատքի միջոցով, որպէսզի կարողանանք ընդունել յաւիտենական օթևանները: Մօտեցէք, ընդունեցէք խորհրդական հոգևոր դրոշմը, որպէսզի կարողանաք հաղորդ լինել Տիրոջ հօտին»:

թէ՝ «Ով այսպիսի մանուկներից մէկին ընդունում է Իմ անունով, Ինձ է ընդունում, և ով ինձ է ընդունում, ոչ թէ ինձ է ընդունում, այլ նրան, ով ինձ ուղարկեց» (Մատթ., Թ 36): Մարմնաւոր ծնողն ուրեմն այնուհետև պէտք է հոգայ իր մանկան համար ոչ միայն իբրև ծնող՝ ծնողական պարտաւորութեամբ կերակուր մատակարարելով, այլ մանաւանդ պէտք է իբրև Եկեղեցու յանձնակատար, իբրև Քրիստոսի պարտապան ուրախանայ նրանով, ճանաչի նրա մեծութիւնն Աստծու առաջ և ձեռքով եկածը չխնայի նրա կրթութեան և աճման համար: Մարմնաւոր ծնողը պէտք է իմանայ, որ այդ ժամից յետոյ իր մանկան երաշխաւորն ու հոգաբարձուն Քրիստոս է. նա պէտք է իմանայ, որ ինքը պատասխանատու է Քրիստոսի առաջ իր ամեն մի վերաբերմունքի համար, ըստ որում և պէտք է հաւատքով, յուսով ու սիրով բերկրի մանկան զարգացման վրայ[1]:

Այսպիսի խորհրդաւոր կարգով է քահանան յանձնում մանկանն իր մօրը և «Պահպանիչ» ասելով՝ ամենատես աչքի խնամքին թողնում[97*]:

ԽԳ

Գ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Հոգին տանում է մարդկանց դէպի Քրիստոս Աստծու խօսքի և ս. խորհուրդների միջոցով, որպէսզի մեղաւորը թողութիւն ստանայ իր մեղքերի համար, ու նորոգ կեանք առնելով՝ դիմի դէպի երանութիւն: Ուրեմն Ս. Հոգու առաջին գործն է, որ մեղաւորին բերում է փրկութեան ճանապարհի մէջ և ապա առաջնորդում դէպի իսկական փրկութիւն: Այդ փրկութեան ճանապարհը, որով մարդ հեռանում է իր մեղքերից, զգւում է նրանցից, ողբում է նրանց վրայ, թողութիւն հայցում Քրիստոսից և նորոգ կեանք խնդրում, կոչւում է ապաշխարութիւն, այսինքն՝ ապա աշխարումն (ողբալ) անցեալ մեղքերի վրայ:

Ս. Հոգին ամեն մարդու կանչում է Աստծու մօտ ս. խօսքով, յայտնում է Աստծու փրկարար տնօրինութիւնն ու յորդորում է՝ հաշտուել Աստծու հետ և հաղորդակից լինել Աստծու երանական արքայութեանը[1]: Այդ կոչումից յետոյ մնում է, որ մարդն ինքը բանայ իր հոգու տեսողութիւնն ու լսողութիւնը և սիրով ընդունի Ս. Հոգուն իր մէջ: Մեղաւորն այդպիսի մի տենչ ու ձգտում ունենալով, լոյս է ստանում իր մտքերի համար և տեսնելով իր մեղքերը, սկսում է թօթափել իրենից մեղք գործելու կիրքը: Իսկական դարձը լինում է այն ժամանակ, երբ մարդ նախ ապաշխարում է և ապա դիմում դէպի Աստուած և հաւատքով զօրանում:

Ապաշխարութիւնը զղջման հետևանք է. ապաշխարութեամբ մենք խնդրում ենք Ս. Հոգու օգնութիւնը, որով տեսնում ենք մեր մեղաւորութիւնն ու առաքինական անզօրութիւնը, և ապա Աստծու արդարութիւնն ու սրբութիւնը, այնուհետև ողբում ենք առաջինների վրայ ու դիմում դէպի երկրորդը: Ուրեմն ճշմարիտ ապաշխարողը պէտք է ճանաչի ու խոստովանի իր մեղքերը, որ դրանք անարժան ու դատապարտելի ապստամբութիւն են Աստծու դէմ, սրտանց հեռանայ դրանցից ոչ միայն իբրև չար հետևանք բերողներից, այլ գլխաւորապէս իբրև զզւելի և ինքնընտրեալ քստմնելի արարքներից և յետոյ միայն կատարեալ սիրով և անձկութեամբ շնորհ ու թողութիւն հայցի Աստծուց[2]: Այսպիսով մեղաւորը նախ պատրաստւում է և ապա աղաչանքով անցնում հաւատքի շրջանն ու զօրանում: Պարզ է, որ ապաշխարողն ու հաւատքով զօրացողը վճռում է այլևս երբեք չվերադառնալ այդ մեղքերի մէջ, ապա թէ ոչ նշանակութիւն չի ունենայ իր ապաշխարելը: Բռնադատուած զղջումն ու ապաշխարութիւնն անօգուտ է բոլորովին, իսկական զղջումը մարդու ներքին համոզմունքից պէտք է բխի և ապաշխարութեան մէջ փայլի: Իսկ եթէ մարդ ստիպողաբար կամ ցոյցի համար

---

[1] «Տես և զգոյշ եղիր, որպէսզի չլինի թէ Սիմոնի նման դու երկմտութեամբ մօտենաս մկրտութեանը և քո սիրտը չփնտռի ճշմարտութիւնը. մերը՝ ուխտելն է և քոնը զգուշանալը: Եթէ հաստատուն մնաս հաւատքի մէջ՝ երանելի ես, եթէ զրկուեցիր հաւատքից՝ այսուհետև ձերբազատիր քո թերահաւատութիւնից և ողջ եղիր: Որովհետև երբ մկրտութեան ժամանակ մօտենում ես՝ երէցների և սարկաւագների ձեռքով բաշխուող շնորհներն ընդհանուր են [դառնում]. թէ՛ գիւղերի, թէ՛ քաղաքների, թէ՛ տգէտների, թէ՛ գիտունների, թէ՛ ծառաների և թէ՛ ազատների մէջ, քանզի ոչ թէ մարդկանցից են շնորհները, այլ՝ Աստծուց, որ տրւում են մարդկանց ձեռքով: Դու մօտենում ես նրան, ով մկրտւում է, (բայց) դու մօտեցիր՝ ոչ թէ երեսին նայելով. [նրանք] որ քեզ երևում են, Սուրբ Հոգու անունով են, որի պատճառով այս ամենն աւեց: Որովհետև սա ևս պատրաստուած է՝ դրոշմել քո հոգուն և քեզ կնիք տալ, որից դողում են բոլոր դևերը: Այս պարգևը երկնաւոր և աստուածային է, ինչպէս և գրուած է. Ինչին որ հաւատացիք՝ դրոշմեցիք աւետեաց հոգին Սրբի մէջ, որ ձեր հոգու չափով է ընդունում և մարգարիտները չի նետում խոզերի առջև: Եթէ թերահաւատ ես, (ուրեմն) այժմ սոսկ մարդիկ են մկրտում քեզ, Սուրբ Հոգին չի մկրտում քեզ. իսկ եթէ հաւատքով մօտենաս՝ մարդիկ քեզ կը մատակարարեն տեսանելի բաները, իսկ Սուրբ Հոգին կը տայ այն, ինչը չի երևում», Կոչումն ընծ., էջ 347:

[1] Մատթ., ԻԲ 1-14, ԺԱ 28-30, Ղուկ., ԺԳ 16, Բ Կոր., Ե 19, 20:
[2] Սաղմ., Ծ 5, 6, 11, Եր., Գ 13, Բ Կոր., Է 10, Գործք., ԺՋ 30:

ապաշխարի, այդ միայն մի անընպատակ ձևականութիւն կը լինի: Ուստի և Աստուած Յովէլ մարգարէի բերանով ասում է. «Եւ արդ,- ասում է ձեր Տէր Աստուածը,- դարձէք ինձ ձեր ամբողջ սրտով, ծոմապահութեամբ, լալով ու կոծելով, ձեր սրտերը պատռեցէք և ոչ թէ ձեր հագուստները»: Այո, դարձէք ձեր Տէր Աստծուն (Բ 12-13):

Երբ մարդկանց դէմ յանցանք ենք գործում, դատաւորի առաջ արդարանում ենք՝ փոխարէնը տոյժ վճարելով. իսկ Աստծու առաջ այդպէս չէ., մենք ոչ մի բանով, ոչ մի գործով չենք կարող մեր արածի փոխհատուցումը կատարել և արդարանալ: Ինչ էլ անենք, այդ ամենը չի կարող մի մեծ գործ նկատուել Աստծու առաջ, այլ դրանով միմիայն մեր կամքն ու տրամադրութիւնն է չափւում, և միայն ըստ մեր կամքի ու հաւատքի է Աստուած մեզ ներում ու շնորհ անում: Ուստի և Քրիստոս ասում է. «Նոյնպէս և դուք, երբ կատարէք այն բոլորը, որ ձեզ հրամայւած է, ասացէք, թէ «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք անել, այն արեցինք» (Ղուկ., ԺԷ 10): Մենք միայն մեր պարտքը պէտք է ձգտենք կատարել և հաւատով խնդրել, որպէսզի Քրիստոս Իր պատարագով մեր մեղքերի թողութեան հատուցումն անի: Խոստովանելով մեր մեղքերը և ապաշխարելով, զգում ենք մեր ինքնարդարացման անզօրութիւնն ու մեր անկումը և մեր յոյսը դնում ենք Քրիստոսի վրայ, որպէսզի Նա մեզ վերստին ընդունի իբրև մոլորեալ անառակ որդու ու զօրացնի նորոգ կեանքի շնորհներով: Այստեղից հետևում է, որ մեղաւորը՝

Նախ պէտք է սրտանց զղջայ, զգւի իր մեղքերից և վճռի՝ վերստին չընկնել դրանց մէջ:

Երկրորդ՝ պէտք է դիմի առ Աստուած, խնդրի նրանից թողութիւն իր անարժանութեան և շնորհ և օգնութիւն հայցի ճշմարիտ կեանք վարելու համար:

Եւ երրորդ՝ պէտք է ձգտի օրսրստօրէ մաքրւել մեղքի հետքերից, ուղղի իր մարմինն ըստ աստուածային պատուիրանների, լսի Աստծու բոլոր խօսքերը, շարունակ զարդարի իր կեանքը աստուածային առաքինութիւններով ու գործերով և այդպէս միանայ Քրիստոսի հետ, իւրացնի Նրա շնորհած փրկութիւնն ու ապրի Նրանով[1]:

[1] Հռոմ., Բ 5, Եր., ԼԱ 19, Յովհ., ԽԲ 6, Մատթ., Է 13-14, Գաղ., Ե 24, Կող., Ա 24, Եփես., Դ 20-24:

Ապաշխարութեան հիմնական սկզբունքն է մեղանչականութեան խոստովանութիւնը. եթէ, ինչպէս ասացինք, մեղաւորը չխոստովանի, յանձն չառնի, չճանաչի ու չգիտակցի, որ ինքը մեղաւոր է, նա զղջած չէ և չի կարող թողութիւն ստանալ: Մինչև անգամ Հին Ուխտում, որտեղ Քրիստոսի իսկական քաւութեան ստուերն էր միայն, խոստովանութիւնը պարտաւորիչ էր, որով միայն մեղաւորները կարող էին զոհաբերել և թողութիւն ստանալ քահանայից[1]: Սակայն քանի որ մարդկութեան փրկութիւնը միմիայն Քրիստոսով է, թողութիւնը ևս կարող է լինել հաւատացողի համար միմիայն յանուն Քրիստոսի: Բայց որպէսզի հաւատացեալները ոչ միայն Աստծու առաջ առանձնակի բանան իրենց սիրտը, այլև իրենց սիրտը թեթևացնելու և ուղղելու համար երկնաւոր միջնորդ, աղօթող, ուսուցող, մեղքի ճանաչողութիւնը զարթեցնող ու ճշմարիտ ապաշխարութեան ճանապարհ ևս ցոյց տուող ունենան, Քրիստոս նշանակեց նաև պաշտօնեաներ Իր համբառնալուց առաջ՝ ասելով Իր առաքեալներին. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապէք երկրի վրայ, կապւած պիտի լինի երկնքում: Եւ ինչ որ արձակէք երկրի վրայ, թող արձակւած լինի երկնքում» (Մատթ., ԺԸ 18): Նրանց վրայ փչեց և ասաց. «Առէք Սուրբ Հոգին: Եթէ մէկի մեղքերը ներէք, նրանց ներւած կը լինի, եթէ մէկի մեղքերը չներէք, ներւած չի լինի» (Յովհ., Ի 22-23): Ուրեմն Ինքը՝ Քրիստոս, իսկական միջնորդ ու Փրկիչ լինելով մարդկութեան, պաշտօնեաներ նշանակեց, որ դրանք Իր անունով թողութիւն տան՝ դարձեալ Իր անունով Աստծու շնորհը խնդրողներին: Հաշտութեան այս պաշտօնը ոչ միայն մի հասարակ խոստովանահայրութիւն է, այլև ապաշխարութեան քարոզչութիւն, ուսուցում և առաջնորդութիւն դէպի ճշմարիտ կեանք ու հաշտութիւն Քրիստոսով Աստծու հետ[2]: Սա հոգևոր բժշկութիւն է, որը չի կարող իրագործւել, **եթէ մեղաւորը մտերմութիւն չունենայ իր հոգևոր Հօր հետ** և նրանից դեղ ու դարման չխնդրի, ինչպէս լինում էր առաքեալների ժամանակ (Գործք., ԺԹ 18):

«Ապաշխարութիւնն ինքն իրեն մեղադրելը և վնասակար բաներից ու չար ցանկութիւններից հրաժարւելն է, և իւրաքանչիւր չարութեան փոխարէն նրա դէմ արդարութիւն դնելն է, որպէսզի մեղքը խափանւի, և արդարութիւնն աճի սուրբ սիրով և արտասուալից աղօթքով», Յաճախ., ԺԹ 282:

[1] Ղևտ., Ե 4-10, ԻԲ 18-21, Յովբ., ԼԱ 33-34, Մատթ., Գ 6, Մարկ., Ա 5, Ղուկ., Գ 10-14:

[2] Գաղ., Զ 1, Բ Կոր., 18-20, Ա Տիմ., Դ 14, Յակ., Ե 15:

Խոստովանութիւնը լինում է առանձնական, որպէսզի կատարեալ մտերմութիւն պահպանի, և մեղաւորը կարողանայ իր սիրտը բանալ Քրիստոսի պաշտօնեայի առաջ, իսկ երբ մեղաւորի յանցանքը բացայայտ և ծանր էր լինում, այն ժամանակ քրիստոնէական եկեղեցում հրապարակապէս և՛ ապաշխարութիւն և՛ խոստովանութիւն էր պահանջւում, ըստ Քրիստոսի վարդապետութեան[1]: Այդ հրապարակական խոստովանութեան ցարդ կիրառւող մի գեղեցիկ օրինակն է Հայոց Եկեղեցում, որ քահանան նախքան պատարագ մատուցանելը թողութիւն է խնդրում ամենքից, որ ոչ ոքի հետ քէն ու խէթ չունենայ, համաձայն Քրիստոսի պատուիրանի[2], ըստ որում շեշտում է. «Աստծու առջև խոստովանում եմ... և ձեր առջև՝ հայրեր ու եղբայրներ, այն բոլոր մեղքերը, որ գործել եմ»: Սա մի սքանչելի կարգ է, որով Հայաստանեայց ս. Եկեղեցու անդամները իրար հետ հաւասարւում միանում են Աստծու առաջ արդարութիւն գտնելու նպատակով:

Ապաշխարողները չեն կարող նախքան թողութեամբ հանգստութիւն գտնելը, պատարագի հաղորդութեանը մերձենալ ու խաղաղութիւն խնդրել, որովհետև ինչպէս տեսանք, նախ զղջում և ապաշխարութիւն պէտք է լինի և ապա առաքինութեան ճանապարհով հաղորդութեան արժանանալը: Ուստի և նախքան հաղորդութեան բաշխումը սարկաւագը երգում է սեղանից. «Նորահաւատ չմկրտուածներից ոչ մէկը, թերահաւատներից ոչ մէկը, ապաշխարողներից և անմաքուրներից ոչ մէկը, թող չմօտենայ աստուածային խորհրդին, դռների մօտ գնացէք և հաղորդուէք»: Ապաշխարողները կարող էին լսել ժամերգութիւն, քարոզ, աղօթել Աստծուն, բայց ոչ հաղորդուել Քրիստոսի կենարար մարմնին և արեանը, որովհետև Քրիստոս չի բնակւում մեղաւոր սրտի ու հոգու մէջ մինչև նրա զղջալն ու դառնալը: Մեղաւորը գտնւում է ոչ թէ Աստծու հաղորդակցութեան ու նրա կենդանացուցիչ շնորհների վայելման մէջ, այլ Հայաստանեայց ս. Եկեղեցու դաստիարակութեան ու հովւութեան ներքոյ: Ուստի և նա լսում է միմիայն Աստծու խօսքն ու քարոզը հետզհետէ ուղղելու ու կրթելու համար և աղօթելով Աստծուն՝ իր այդ ապաշխարական ձգտման մէջ գթութիւն և օգնութիւն է հայցում նրանից[3]:

[1] Մատթ., ԺԸ 17, Ա Կոր., Ե 4-5, Ընդհ. 44:
[2] Հմմտ. Մանդ., էջ 168:
[3] Յաճախ., ԺԹ տե՛ս նաև Հարց. 601-603:

Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցին հաւատարիմ մնալով հաւատքի և խղճի ազատութեան աւետարանական սկզբունքին[1]՝ իր ուսուցչական առաքելութեան մէջ երբեք չի դիմում բռնի միջոցների, և խոյս է տալիս մարմնաւոր ստիպմունքներից կամ պատժանման ապաշխարանքներ նշանակելուց. «Որովհետև Աստուած կամաւոր որդեգրութիւնն է ընդունում»[2]: Նա կատարելապէս հակառակ է բռնադատութեանը, որովհետև բռնադատուած հաւատքն ու առաքինութիւնն իբրև մի կեղծաւորութիւն, որ միջոց է տալիս անարժանութեամբ վայելելու աստուածապարգև շնորհները, առաւել դատապարտելի է, քան նոյնիսկ անհաւատութիւնը: Դատաստանական գործի թուլութիւնը հին ժամանակ պատճառ եղաւ, որ հոգևորականները յանձնառու եղան ապաշխարական օրեր նշանակելով հանդերձ՝ երբեմն ծանր միջոցներ որոշել և այդպէս ուղղել մեղաւորներին ու չարագործներին, սակայն այժմ, քանի որ կայ օինաւոր դատաստան, որ տալիս է իւրաքանչիւրի արժանաւոր հատուցումը, Եկեղեցին գործ ունի միմիայն հոգևորի հետ[3]. ապաշխարել պահանջում է իւրաքանչիւրից, ցոյց է տալիս ճանապարհը և Աստծու պատուիրաններն ուղեցոյց դնելով նրանց առաջ, իրագործելը թողնում է իւրաքանչիւրի խղճին: Ճշմարիտ հաւատացողն ու Եկեղեցուց չզատուողը կատարելապէս կը հետևի այդ ամենայն առաքինութիւններին, իսկ չհաւատացողը, արդէն իսկ դատապարտուած է: Քրիստոսի առաջին քարոզն էր՝ «Ապաշխարեցէք, որովհետև մօտեցած է երկնքի արքայութիւնը», «Եթէ չապաշխարէք, ամենքդ էլ կը կորչէք»[4]: Ճշմարիտ քրիստոնեան էլ ձգտում է դէպի

[1] «Որովհետև Աստուած մեզ չի բռնադատում մեր կամքին հակառակ բարիք գործել, այլ (այն) թողնում է մեր կամքի անձնիշխանութեանը», Մանդ., էջ 117:
[2] Եղիշէ, 360-361, Յաճախ., ԺԹ 249, «Այն մեղքերը, որոնք կտակի նկատմամբ են, այսինքն՝ կանոնի տակ են (ընկնում), դրանց համար ժամանակներ են սահմանւում, նրանք զատւում են եկեղեցուց, ժողովրդից և սեղանից, քանզի մեծ վնասի պատճառով նաև մեծ ջանք և աշխատանք է պահանջւում: Իսկ որոնց սխալները քիչ են՝ բժշկւում են՝ արտասուքով սրբւելով: Իսկ որ սրտի խորքում է աղտը՝ ապականւած անդամներով՝ այնտեղ պահանջւում են արտասուքի վտակներ, կրակ, հոգու եռք, ինչը սրբում, հալում և վանում է (այդ մեղքերը): Իսկ ով ակամայ վրիպումով փոքր սխալներ ունի՝ նրան հարկ է զղջալ, հոգոց հանել և արտասուքով այնտեղ մաքրւել»:
Ապաշխարողների արձակման համար յատուկ օր ևս կայ նշանակւած, այն է՝ Աւագ Հինգշաբթի, տե՛ս Տօնացոյց, էջ 51, 53:
[3] Հմմտ. Բ Կոր., Դ 5, Սաղմ., Ծ 5, Մատթ., Թ 13, Յովհ., Զ 37, Մարկ., Բ 7:
[4] Յովհ., Գ 18, Հռ., ԺԴ 23, Մատթ., Դ 17, Մարկ., Ա 15, Ղուկ., ԺԳ 3-5, տե՛ս նաև Գործք., Դ 19-20, ԺԷ 30, ԺԱ 18, Բ Կոր., Է 10:

առաքինութիւն, սակայն միշտ մաքրելով ու զտելով ապաշխարանքի բովի մէջ, այսինքն՝ իր անցեալ սխալները և անյաջողութիւնների պատճառները քաւելով և այնպէս առաջադիմելով: Սխալական է և մեղանչական է մարդ իր գործունէութեան մէջ, ըստ որում միայն չի առաջադիմում նա, ով իր սխալանքն ու մեղքերը չի քաւում, սրբւում օրըստօրէ և զօրանում հաւատքով ու Ս. Հոգու շնորհներով: Ապաշխարութեան այս սուրբ խորհուրդն է, որ Ս. Հոգու ընդունակ է դարձնում մեր սիրտն ու նրանով դէպի նոր կեանք ու գործունէութիւն է առաջնորդում:

Սակայն Հայոց Եկեղեցին էլ չի կարող իր սրբութեան դէմ մեղանչել, ըստ որում իր դաստիարակչութեանը չհնազանդողին չի կարող ընդունել իր մէջ և աստուածային շնորհները մատակարարել նրան. այդ է հրամայում Քրիստոս՝ «Մի տուէք սրբութիւնը շներին և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի գցէք, որպէսզի դրանք ոտքի կոխան չանեն և դառնալով ձեզ չպատառոտեն» (Մատթ., Է 6). շուն է կոչում անսուրբ և անզգայ, իսկ խոզ՝ եղտոտ ու մարմնաբոյծ մարդկանց: Նմանապէս ս. առաքեալը հրամայում է. «Բայց արդ, ձեզ գրեցի, որ չխառնակուէք. եթէ եղբայր կոչուած մէկը պոռնիկ լինի կամ կռապաշտ, կամ ագահ, կամ բամբասող, կամ հարբեցող, կամ յափշտակող, այդպիսի մէկի հետ հաց էլ չուտէք» (Ա Կորնթ., Ե 11): Այսինքն՝ այն հաւատակից եղբայրը, որ անարգելով իր հաւատքը՝ վերստին ընկնում է հեթանոսական ախտերի մէջ, մերժելով պէտք է մերժի Եկեղեցուց և նրա հաւատարիմ անդամների բարեկամութիւնից, որպէսզի չզօրանայ չարութեան օրինակն ու փակի հաւատացեալների գայթակղութեան ճանապարհը[1]: Թոյլ տալ չարութեանը առաջ գնալ և անտարբեր աչքով նայել, երբ սրբութիւնն է անարգւում և հաւատքը ոտնակոխ լինում հրապարակով, վերջապէս ազատ թողնել, որ սրբապիղծ մարդիկ առանց որևիցէ սրբազգացութեան հաւասար տեղ զբաղեցնեն սրբութեան առաջ, ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ կատարելապէս անձամբ իսկ թերահաւատ և անհաւատ գտնել ու դատապարտել իբրև կեղծաւոր ու ճշմարտութեանն աննախանձախնդիր[2]: «Որովհետև քրիստոնեաները նրանք են, ովքեր մշտապէս

[1] Բ Թեսաղ., Գ 6, Մանդ. 149:
[2] Տե՛ս և էջ 154. «Սրբերը փնտռում են սրբերին, անօրէնները յարում են անօրէններին, որովհետև իւրաքանչիւր թռչուն, ասում է, իր երամի հետ է իջնում և մարդն իր նմանին է փնտռում», Մանդ.: «Ով չի ակնկալում իր փրկութիւնը, նա անխտիր անխնայ կերպով

պահում են Քրիստոսի հրամանները և կատարում»[98*], ասում է Ս. Յովհան Մանդակունին:

Այսպիսի դէպքում եկեղեցու պաշտօնեան դիմում է իր դաստիարակչական հնարներին. նա նախապէս քարոզում է և յանդիմանում, ապաշխարանքի ենթարկելով այսպիսի մարդուն և առժամանակ զրկելով հաղորդութեան ս. խորհուրդից, ըստ հրամանի. «Քանզի ձեզ համար ևս կան աններելի տանջանքներ. եթէ չարիքի մասին տեղեակ էք (և հանդուրժում էք որ) նա գալով յանդգնի (մօտենալ) Քրիստոսի սուրբ մարմնին, և վախենում էք խրատել, մերժել ու յանդիմանել նրան: Այլ ծուլութեան և աչառութեան պատճառով Քրիստոսի սուրբ մարմինը բաշխում էք անօրէններին և անարժաններին, և իբրև շների ու խոզերի, նրանց առաջ նետում (սրբութիւնը), և քանի՜-քանի՜ պատիժների և աններելի տանջանքների էք մատնում ձեզ, երբ տէրունական մարմնի մատնիչներն ու պարտապաններն էք դառնում»[99*], ասում է Ս. Յովհան Մանդակունին: Ուրեմն քահանայի պարտաւորութիւնն է չձգել իրեն վստահուած սրբութիւնն այդպիսի անօրէնի առաջ, այլ մերժել, յանդիմանել ու խրատել և դաստիարակել: Բայց երբ անարգողը չի հնազանդւում և յայտնապէս ելնում է հակառակ նրան և իր Եկեղեցու հաւատքն ու սրբութիւնը մերժում, այդպիսին արդէն նզովւում է, այսինքն՝ վերջնականապէս կտրւում է Եկեղեցու անդամակցութիւնից ըստ Քրիստոսի և առաքելական հրամանի՝ «Մի անգամ և երկու անգամ խրատելուց յետոյ, հերձւածող մարդուց հրաժարուիր. իմացիր, որ այնպիսին սխալւած է և մեղանչում է իր անձով՝ դատապարտելով անձը»: Ըստ որում Քրիստոս պատուիրում է նախ՝ առանձին, երկու վկայով և ապա եկեղեցու առաջ յանդիմանել և եթէ չդառնայ, հեռանալ նրանից ու «հեթանոս և մաքսաւոր» համարել[1]: Այդպէս վարւում էին նաև առաքեալները[2], բանադրելով ու դնելով այդպիսիներին Աստծու ընդհանուր նախախնամութեան տակ կամ թէ բացասական նախապատրաստութեան մէջ:

անձնատուր է լինում մեղանչումին, իսկ ուր բժշկելու յոյս կայ՝ իր անձը զերծ է պահում մեղանչելուց և թողնում է մեղքի ճանապարհը: Որովհետև նաև աւազակները, որոնք յուսահատ են և չունեն շնորհի ակնկալութիւն, առաւել յանդգնօրէն գնում են դէպի կորուստ. բայց երբ յոյս են տածում թողութիւն ստանալ, դառնում են դէպ ապաշխարութիւն», Կոչումն ընդ., էջ 22:
[1] Տիտ., Գ 10, Մատթ., ԺԸ 17, ԻԴ 50-51, Հարց.540:
[2] Ա Կոր., Դ 21, Ե 5-11, Բ Թես., Գ 6, Ա Տիմ., Ա 20: Տե՛ս նաև վերը գլուխ ԼԵ և ԼԹ:

Նզովելով դրանց, Եկեղեցին նպատակ ունի՝ նախ այդ վերջին միջոցով ուղղելու մոլորածին[1], և երկրորդ՝ հաւատացեալներին զգոյշ և ազատ պահելու գայթակղութիւնից և վատ օրինակից: Այդպիսիները կոչւում են Քրիստոսի թշնամիներ, որոնց համար ասում է Ս. Յովհան Մանդակունին. «Եթէ այդպիսին նոյնիսկ եղբայր լինի կամ քոյր, կամ որդի, կամ դուստր՝ պէտք է նզովւի, մերժւի սիրուց, խնամքից և բարեկամութիւնից, և այդպիսինի հետ անգամ հաց պէտք չէ ուտել», «որովհետև հարկ չէ բարեկամ լինել Աստծու թշնամիներին»: «Չէ՞ որ -աւելացնում է սուրբ հայրը-, կեղտոտ զգեստով մարդու հետ եթէ շփւէք՝ կը կեղտոտուէք. այդպիսիների հետ բարեկամութիւն չենք անում, ապա ինչպէ՞ս կարելի է հոգով անսուրբների հետ բարեկամութիւն անել»: **«Եւ արդ, այս բոլորը իմանալով հեռու մնացէք հրեաների, հեթանոսների և հերձւածողների բարեկամութիւնից...»**[2], սահմանափակելով մեր յարաբերութիւնները հեռաւորագոյն սահմանի մէջ ըստ ժամանակի հանգամանքների:

Շատ յաճախ է պատահում, որ մարդիկ այս վերջին ուղղիչ խրատին ենթարկւելով[3] կամ կեանքում և կամ մահնում զղջում են և թողութիւն ստանալով նոյն քահանայից արժանանում են քրիստոնէավայել թաղման, իսկ եթէ յամառելով իրենց անհաւատութեան ու անվայելչութեան մէջ մեռնում են, **գէթ բացասականապէս զգաստացնում են ուրիշներին**, ըստ որում և հաւատքով պարկեշտացողները չեն գայթակղւում և տեսնում են, որ Աստծու շնորհները միմիայն հաւատքով և վայելուչ կեանքով կարելի է ընդունել[4]:

[1] Տե՛ս նաև Փարպ., էջ 553-556:

[2] Մանդ., էջ 147-155. «Նա յորդորում է հեռանալ առաւել ևս նրանցից, ովքեր աղտոտւած են անզեղջ չարիքի մէջ, անօրէններից իսպառ հեռու մնացէք, որովհետև արդարի և անօրէնի մէջ միաբանութիւն չի կարող լինել, քանզի արդարութիւնը անօրէնութեան թշնամին է»: «Մեծ առաքինութիւն է, ովքեր նահատակւում և մերժւում են Աստծուն արհամարհողների կողմից, և լինում են Նրան (Քրիստոսին) թշնամի դարձածների թշնամին. նրանց համար կան մեծամեծ հատուցումներ, զանազան պարգևներ և պատիւներ Աստծու մերձաւորների հետ»:

[3] «Կայ նաև արդար ցասում և արդար բարկութիւն, երբ Սամուէլի և Փենեհեզի նման Աստծու պատիւրանների վրէժն ես խնդրում (Թւեր ԻԵ 7) կամ՝ զրկւած եղբօր վրէժխնդրութիւնը», ասում է ս. Յովհան Մանդակունին. Ճառք, էջ 106:

[4] «Ժողովրդից մէկը, որ զանազան սխալների պատճառով եպիսկոպոսից բանադրւած լինի, եթէ մահանայ՝ քահանան նրան չպէտք է թաղի և ոչ էլ չմկրտւածին մկրտի: Եւ եթէ յանկարծ այդ չմկրտւածը մեռնի՝ հարկ է, որ քահանան մկրտի չմկրտւածին և թաղի մեռեալին, և խօսքի այլ կարգերը անլուծանելի պնդութեամբ պահի». Կանոն Սիոն կաթողիկոսի[100*]:

Հայաստանեայց ս. Եկեղեցին հաւատարիմ մնալով իր սրբութեանը՝ վարւում է իր որդիների հետ նաև իբրև որդեգորով ծնող, տալով իր յանցաւոր որդուն ամենայն թեթևութիւն՝ սրտանց զղջալու և ազատապէս քրիստոնէական կեանք վարելու համար: Նրա սկզբունքն է. «Եթէ ձեր մեղքերն արեան պէս կարմիր են, ապա ես ձեան պէս ճերմակ կը դարձնեմ, եթէ որդան կարմիր լինեն, կը սպիտակեցնեմ ինչպէս բուրդ»[1]: Ուստի և մեր մեղրաշուրթ ս. հայրն հրամայում է[2]. «Ապաշխարութեան դիմելիս, մի՛ երկիւղիր մեղքերի բազմութիւնից, միայն ընկիր Աստծու առջև, [որովհետև Նա] դատաւոր չէ, այլ՝ բժիշկ, սպանող դահիճ չէ, այլ՝ գորովագութ Հայր: Նա ընդառաջ է դուրս գալիս քեզ, իբրև անառակ որդու, քո պարանոցն է ընկնում, որ դարձի ես եկել ապաշխարութեան, երկնաւոր Հայրն ի տես [ամենքի] բերանով համբուրում է քեզ, հրամայում է հագցնել քեզ առաջին (նախասկզբնական) անմեղութեան պատմուճանը, կօշիկով քեզ (ամրացնելով) զերծ է պահում միւս անգամ (սպառնացող) թշնամու (սատանայի) թոյնից: Պատարագով Աստծու Որդու մարմնից ես կերակրւում, Պատարագը քեզ հետ են վայելում ընտիր ծառաները և բոլոր սրբերը երգում ու պարում են անառակութիւնից քո դարձին»:

Ոչ մի ծանրութիւն, ոչ մի դժւարութիւն, այլ միայն զղջալ, հաւատքով զինւել և այդ հաւատքի համաձայն կեանք վարել[3]: **Ահա այս է պահանջում Հայաստ. ս. Եկեղեցին իր հաւատացեալից, որ ազատապէս կամենում է կրթւել նրա գրկում.** և այն ժամանակ այդպիսի հաւատացեալը կը ստանայ նրանից ամենայն շնորհ ու բարիքներ լիառատ ու ձրիապէս թէ՛ այս և թէ՛ հանդերձեալ կեանքի բարեզարդութեան համար:

Հռոմ. եկեղեցին զարկ տալով հոգևորականների ինքնուրոյն ու շահադիտական իշխանութեանը՝ ապաշխարութիւնը ծառայեցնում է այդ

[1] Եսայի, Ա 18, Նարեկ., 491, Մանդ., 27:

[2] Մանդ., էջ 28, հմմտ. Եղիշէ, էջ120, Յաճախ., ԺԹ, Դ 250:

[3] «Չլինի թէ երէկ ճգնես և այսօր ծուլանաս և կամ այսօր ջուր խմես և վաղը՝ գինի, մեղքերի պատճառով մի անգամ գնաս և դարձեալ զւարճանաս անհոգութեամբ: Որովհետև չկայ մէկը, որ երկու ոտքով կաղայ և դա յայտնի չլինի: Եւ ոչ մէկին կարելի չէ, որ մի աչքով երկինք նայի և միւսով՝ երկիր, և ոչ էլ երկնաւոր ու երկրաւոր սիրով հաճոյանայ Աստծուն: Որովհետև որեւէ կառուցում երբ մէկ էլ խորտակւում է չի կարող աւարտին հասնել: Քանզի այս [կեանքի] վախճանից յետոյ այլևս չկայ ապաշխարութեան դուռ». Մեկն ժամակ., 394:

նպատակին: Այս խորհրդի երրորդ կողմն է նա «համարում մեղքերի պատճառով Աստծու դէմ եղած թշնամանքի հատուցումը»: Հռոմ. եկեղեցու կարծիքով ապաշխարանքը ոչ թէ ուղղիչ և բարեզարդիչ միջոց է, որ քահանան նշանակում է դաստիարակչական նպատակով, այլ պատիժ է, որ մեղաւորը դեռ պէտք է կրի և բաւականութիւն տայ Աստծու անպատուած արդարութեանը: Նրանք պահանջում են այս հատուցումը, ասելով, որ թէև Քրիստոս փրկել է ամենքին յաւիտենական պատժից, սակայն նա չի ազատում ժամանակաւոր պատիժներից՝ ինչպիսիք են վիշտը, անյաջողութիւնը, հիւանդութիւնն ու մահը. ապաշխարութեամբ մեղաւորները չեն ազատւում այդ ամենից, այլ միայն յաւիտենական պատժից են թողութիւն ստանում, ըստ որում և որոշում են, որ նեղութիւնը «ներումն է ժամանակաւոր պատիժներից, որոնք մեղքերի թողութիւնից և յաւիտենական պատուհասից յետոյ մնում են քաւելի»: Իսկ հանդերձեալում մեղաւորը տանջանք է կրում իբրև պատիժ «քաւարանի» մէջ ու սրբւում: Ուստի քահանան նշանակում է զանազան հատուցումներ, որոնք մեղաւորը կարող է կամ ինքը վճարել կամ այլոց միջոցով կը հատուցի ու կը իրացնի Քրիստոսի ու նրա սուրբերի «աւելցուկ վաստակները»: Այս հատուցումը կարելի է տալ թողութեան թղթերով (Ինդուլգենցիա): Հատուցում չտուողները հանդերձեալում կընկնեն «քաւարանի» մէջ ու կը կրեն իրենց պատիժը: Հռոմէական եկեղեցին այս մոլորութիւնը հիմնում է Հին Կտակարանի մի քանի անհամապատասխան օրինակների վրայ, որոնք են. Ծննդ., Գ 17-18, Իմաստ., Ժ 1, Թուեր, Ի 11-12, 24, Բ Օրէնք, ԼԲ 49-51, Բ Թագ., ԺԲ 13-14 և Մատթ., Գ 7-8:

Սակայն Հռոմ. եկեղեցին ինքը շատ անգամ հատուցում չի նշանակում, ինչպէս օրինակ նորադարձներին, և ընկնում է հակասութեան մէջ, մինչդեռ պէտք է թէ՛ ամենքին, թէ՛ ամենայն մեղքի համար և թէ՛ իւրաքանչիւր մեղքի ճիշտ համեմատ հատուցում նշանակէր: Պատիժ տալիս էր միմիայն Հին Ուխտի օրէնքը, իսկ Քրիստոս ծանր լուծ չդրեց մեղաւորի վրայ, այլ թողնում էր իւրաքանչիւր հաւատացեալի մեղքն առանց պատժի, Նա այդպէս վարուեց միշտ և ուրեմն Հռոմէական եկեղեցու ապացոյցները ոչ մի ուժ չունեն Քրիստոսի առաջ: Մինչև անգամ Յովհաննէս Մկրտիչը ոչ թէ ապաշխարական պատիժ էր նշանակում, այլ միայն բարի գործեր, իբրև արտայայտութիւն ճշմարիտ զղջման: Ուստի և Քրիստոնէական եկեղեցին երբեք ապաշխարանքը հատուցում չի համարել, այլ

միայն դաստիարակիչ և արդարութեան վարժութիւն, ինչպէս տեսնում ենք ժողովրդական կանոններից և ս.Հայրերի գրուածքներից, որոնք ապաշխարանքը միայն զղջման հաստատութիւն են համարում և զղջմանն են առաջնակարգ տեղ տալիս: Հին Ուխտում օրէնքի տակ մեղաւորին պատժում էին ծանրապէս (Ել., ԾԳ 5), իսկ Քրիստոս գալով աշխարհ բոլոր մեղքերից ազատեց հաւատացեալ մեղաւորին ու փրկեց Իր սեփական չարչարանքով և արեամբ, ինչպէս ասում է առաքեալը (Հռ., Գ 25, Եբր., Է 23-25): Ուրեմն Հռոմէական եկեղեցին ընկնելով հակաւետարանական մոլորութեան մէջ, պէտք է ընդունի նաև, որ կամ Քրիստոսի չարչարանքն ու մահն է մեր փրկութեան համար անբաւարար և կամ Աստուած միևնոյն մեղքի համար երկու անգամ է բաւարարութիւն ստանում՝ մէկ Քրիստոսից ու մէկ էլ մեղաւորից: Իսկ սա մի ծայրայեղ մոլորութիւն է:

Հատուցման մոլորութիւնից Հռոմէական եկեղեցին հանել է և մի երրորդ մոլորութիւն, այն է՝ որ Հռոմի քահանայապետը կարող է, այսպէս ասած, թեթևացնել մեղաւորի պատիժն իր ներումով կամ բոլորովին թողնել, շնորհելով նրա հատուցման փոխարէնը «Եկեղեցուց աւանդուած Քրիստոսի և սրբերի վաստակի անսպառ գանձերից», որի մասին խօսեցինք նախընթացում: Այդ նա կարող է անել, երբ մեղաւորը կատարած լինի որոշ պահանջներ՝ կարդալով նշանակած աղօթքներ, ներկայ գտնուելով որոշ եկեղեցական արարողութիւնների, որոշ օրեր հաղորդուելով, ուխտի գնալով որոշ սրբերի ու նրանց մասունքներին, և այլն և այլն: Այդ ժամանակ Հռոմի հայրապետը տալիս է թողութեան թուղթ, ըստ որում այդպիսի թղթեր տալիս է թէ՛ կենդանիների, թէ՛ մեռելների և թէ՛ ներկայ ու ապագայ մեղքերի համար. ըստ որում և ոչ միայն փողով ծախում է այդ թղթերը, այլև իր աթոռակալութեան ու տարեդարձի տօներին իր ապարանքի պատշգամբից շաղ է տալիս ժողովրդի վրայ՝ իբրև ողորմութիւն աղքատներին[1]:

[1] Հեթանոսամիտ կախարդները մարդկանց փրկութեան համար գրեր էին տարածում՝ իբրև թէ «Աստծու մատով» գրուած. Ս. Յովհան Մանդակունին ամբարշտութիւն է անւանում «Քրիստոսի գալստից յետոյ Աստծու մատով մեզ գիր գրելը և տալը [նշանակում է] թէ այն միւս անգամ մեզ պէտք է գալու երկնքում, ուստի Քրիստոսի գալուստը թերի և անկատար է: Այդպէս չէ. այլ օրէնքները տրուեցին երկրի համար լիակատար հրամանով՝ Մովսէսի և Յիսուսի ձեռքով, դրանից յետոյ [լինելու է] տանջանք և արքայութիւն: Սակայն Աստծու մատով գրուած մի երկրորդ երկնատուր օրէնք չի առաքւում: Բայց սատանան ոմանց շեղում է աջ և ոմանց՝ ձախ. և ձախի մասին բոլորս գիտենք, որ շեղում է աստուածապաշտութեան կերպարանքով: Այս պատճառով

Եւ այս ամենն արդարացնում է Հռոմէական եկեղեցին՝ հիմնուելով այն խօսքերի վրայ, որոնք ասել է Քրիստոս իր առաքեալներին ու յետոյ կատարել[1]:

Մենք արդէն գիտենք, որ Քրիստոս իրաւունք տուեց բոլոր առաքեալներին ու նրանց յաջորդներին՝ թողնել դարձողի և ապաշխարողի մեղքերը. գիտենք, որ այդ կատարւում է միմիայն Քրիստոսի չարչարանքների վաստակով, ու նրա սրբերն այլոց համար աւելորդ վաստակ չունեն, այլ միայն բարեխօս են, ուստի և եկեղեցին չունի սուրբերի վաստակների գանձարան: Հարկ չկայ բացատրելու, որ քահանայապետերն իրաւունք չունեն մեռեալների մեղքերը թողնելու, ըստ որում, Քրիստոս ոչ մի այդպիսի իրաւունք չի տուել եկեղեցական պաշտօնեաներին և մեղաւորը, ինչպէս տեսանք, թողութիւն կը գտնի միմիայն զղջմամբ և Աստծու նիրուելով և ոչ քահանայապետի կամայականութեամբ: Եւ այս կամայականութիւնը չպէտք է խառնել ժամանակի դէպքերի հետ, երբ Պօղոս առաքեալը (Բ Կոր., Բ 6-7), նրանից յետոյ, և եկեղեցական հայրերը տեսնելով մեղաւորի ապաշխարանքի տակ ճնշուելով զղջալը, վերցնում էին ապաշխարանքը և նրան արդէն ուղիղ ճանապարհի վրայ համարում: **Այստեղ մեղաւորի զղջումն է դեր խաղում և ոչ թէ աւելորդ վաստակն ու մեղսագինը**, ըստ որում երբեմն էլ ապաշխարանքը ծանրացնում էին, եթէ մեղաւորը թեթև ապաշխարանքով չէր ուղղւում: Ուրեմն Հռոմէական եկեղեցին ոչ միայն չարութեամբ ձեռք բերած փողն Աստծու առաջ ողորմութիւն է դարձնում, որ դատապարտւում է Հին Ուխտում անգամ (Բ օր., ԻԳ 18, Մատթ., ԻԷ 6), ապաշխարողին էլ ոչ միայն այն հարուստի դրութեան մէջ է դնում, որի մասին ասւած է թէ հարստութեան վրայ վստահանալով Աստծու արքայութեան մէջ տեղ չեն գտել (Մարկ., Ժ 23-24), այլև սիմոնական մոլորութեամբ վաճառում է Ս. Հոգու շնորհ թողութիւնը (Գործք., Ը 18-24, Յովհ., Ի 22-23): **Մեղքի գինն ընդունելը և վարձ դարձնելը Քրիստոսի պատարագի հաշտութեան ամենասոսկալի ոճրագործութիւնն է:** Իսկ այս խաբէական գործն առաջ տանելու համար Հռոմէական եկեղեցին հնարել է այսպէս կոչւած՝ «առունկնճառ» (confessio oris) խոստովանութիւնը, որով քահանան իրաւաբանական կարգով առանց անձին տեսնելու հատուցման

հետևեալ պատէրը ստացանք. «Գրւած պատիրաններից մի շեղիր աջ կամ ձախ» (Ճառք, էջ 204):

[1] Մատթ., ԺԶ 19, ԺԸ 18, Յովհ., Ի 22-23, հմմտ. վերը, գլուխ ԼԲ:

կարգադրութիւններ է անում և **իր խցի մի փոքր անցքով յայտնում դուրսը** եկեղեցում նստած խոստովանողի դատաստանը:

Բողոքականները, մերժելով հռոմէական եկեղեցու բռնակալական ոգին, ապաշխարութեան ս. խորհուրդը ևս մերժեցին, թէև սկզբում տատամսում էին այդպէս վարուել, և միմիայն թեթևացրին այդ: Այս մոլորութիւնը ծագել է իսկապէս վերոյիշեալ հակահոգևորական ուղղութիւնից, երբ նրանք համակուելով հակառակ փաստեր գտնելու մարմաջով սխալ կարծիք կազմեցին, որ իբր թէ առաքեալների ժամանակ այդ խորհուրդը չի եղել: Սակայն այս ակներեև մոլորութիւնը հերքւում է ոչ միայն Քրիստոսի վերոյիշեալ պատուէրներով և օրինակով (Յովհ., Ի 21-23, Մարկ., Բ 7-11), այլև առաքեալների գործունէութեամբ, ըստ որում Պօղոս առաքեալը մի մեղաւորի մատնում է սատանային «նրա մարմնի կորստեան համար, որպէսզի նրա հոգին ապրի մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրում» (Ա Կոր., Ե 5): Մեղաւորները գալիս էին խոստովանում իրենց մեղքերն առաքեալների առաջ (Գործք., ԺԹ 14-20), ուստի և Յակոբոս առաքեալը հրամայում է ամենքին. «Ձեր մեղքերը միմեանց խոստովանեցէք և միմեանց համար աղօթք արէք, որպէսզի բժշկուէք, քանզի արդարի աղօթքը շատ ազդեցիկ է և օգնում է» (Ե 16):

Հայաստանեայց. ս. Եկեղեցին հաւատարիմ մնալով առաքելական կարգին, որով ապաշխարութիւնը դէպ փրկութիւն տանող հիմնական և առաջին քայլն է, ոչ մի կերպ չի շեղւում ս. Գրքի գծած ճանապարհից: Ըստ որում նրա հայրապետադիր սկզբունքն է. «Միայն ճշմարիտ դարձը և ուղիղ խոստովանութիւնն են բաւարար փրկութեան և արդարութեան համար»[1]: Այդ դարձն ու խոստովանութիւնը պէտք է կատարենք այստեղ՝ քանի կենդանի ենք ու մեր ձեռքումն է մեր մեղանչական ձգտումների գործիք և վառող մարմինը, և քանի որ դեռևս մեր մեղքը չի բարդուել օրըստօրէ մեղանչումներով. «որովհետև այն, որ քիչ ես համարում և չես շտապում ապաշխարել, նրանով կորստի է մատնում (սատանան)[2]», և «ով Աստծու թէկուզ մի պատուիրանը զանց է առնում՝ նա դառնում է բոլոր օրէնքների պարտապանը»[3]: Ըստ որում և ապաշխարելով

[1] Մանդ., 17, 25:

[2] Անդ., էջ 25. 114-117:

[3] «Որովհետև ինչ էր որ լինի մեղքերի վէրքերի վրայ և այն փոքր համարուի ու չապաշխարի, այդ է մահու չափ մեղքը: Բայց առաւելագոյնս մեղադրելի է նա, ով ոչնչի պատճառով արհամարհեց Աստծու հրամանը: Ով Աստծու պատուիրանն արհամարհում է

կարող ենք քաւել մեր մեղքերը Քրիստոսի ճշմարիտ քաւարանում, այն է՝ մեր Եկեղեցում:

Բայց ասացինք, որ «Ապաշխարութիւնն ինքն իրեն մեղադրելը և վնասակար բաներից ու չար ցանկութիւններից հրաժարուելն է. և իւրաքանչիւր չարութեան փոխարէն նրա դէմ արդարութիւն դնելն է, որպէսզի մեղքը խափանի»[1]: Ուրեմն ինչպէ՞ս պէտք է կատարի այդ խորհուրդը:

Ապաշխարութիւնը պէտք է բխի մարդու հոգուց և երկու ճանապարհ բանայ նրա համար, մէկ դէպի Աստուած և **մէկ դէպի իր անձը: Դէպի Աստուած տանում է աղօթքով և դէպ իր անձը՝ պահքով[2]: Ահա այն երկու ճանապարհները[3], որոնք միակն են և որոշած են Իր իսկ Քրիստոսից:**

Աղօթքով մենք մեր սիրտը վերուղղում ենք դէպ Աստուած և Նրա յայտնութեամբ ու կամքի ուսումնասիրութեանը նւիրուելով՝ նրա օգնութիւնն ու խնամքն ենք խնդրում աստուածավայելուչ կեանքի վերահաստատութեան համար: Այս մասին արդէն խօսել ենք նախընթացում: Իսկ պահքով, այսինքն՝ պահելով մեր անձն աշխարհային հրապոյրներից, հրապուրական գրգիռներից և չարահակում ընթացքից, քաւում պատրաստում ենք մեզ ընդունարան լինել Աստծու օգնութեան համար: Ըստ որում «իրենց անձերը սահմանափակում են կերակուրներից, որպէսզի սրբութիւնը, որ մտադրուել են պահել, դիւրութեամբ պահեն», ասում է Եզնիկը[4]: Պահքը սկսւում է արդէն իսկ ուտել-խմելու պահպանութիւնից, «որովհետև թանձրացած որովայնները չեն կարող ծնել սուրբ

փոքր բաների մէջ, եղկելի է ու թշւառական և արժանի բազում տանջանքների», Մանդ., էջ 115, 116:

[1] Յաճախ., ԺԹ 282, Մանդ. 27, Մաշտոց:

[2] Մատթ., ԺԷ 20, Ղուկ., Բ 37, Մարկ., Թ 15, 28, Գործք., ԺԳ 2, ԺԴ 22, Բ Կոր., Զ 4-10, ԺԱ 27. Կոչումն ընծայ, էջ 47. «Բայց դու տակաւին իժ մի՛ մնայ, որովհետև թէպէտև դու երբևէ իժից ծնուած ծնունդ էիր, արդ, այժմ դու ձերբազատուիր առաջին մեղանչական կեանքի արատից: Որովհետև բոլոր օձերը մտնելով մացառների և քարածերպերի մէջ, մերկանում են իրենց հին [զգեստից] և նեղութեամբ մերկանալով հնութիւնից նորոգում են իրենց մարմինը: Այդպէս էլ արի, մտիր և դու, ասում է, նեղ դռնով և անձուկ ճանապարհով (Մատթ., Է 13), քո անձը ճնշիր ամուր պահքով, ձերբազատուիր հին մարդուց՝ իր գործերով հանդերձ...»:

[3] «Ովքեր կամենում են գործել բանական անդաստանի մէջ, պարտաւոր են նախ խոստովանութեամբ մեղքի փշերը խլել և պահքով, աղօթքով կակղեցնել խոպանացած ու պնդացած (հողը, յոգնի) կուսութեան, անընչասիրութեան, ողորմութեան և մահու չափ չարչարանքների միջոցով», Մանդ., էջ 47:

[4] Եղծ. աղանդոց, էջ 286:

խորհուրդներ, այլ պահելով քողի տակ են պարուրում մարմնի զգայութիւնները: Եւ ովքեր ծառայում են որովայնին. անհնար է նրանց լինել Աստծու հաւատարիմ ծառայ»[1]: Ուստի և Ադամին հրամայած պահքը սկսւեց պտղարգելութեամբ, որ պահելով նա կարող էր ցոյց տալ իր տիրական վերաբերմունքն աշխարհի ու նրա հրապոյրի նկատմամբ՝ նւիրուելով Աստծուն ու Նրա խօսքին: Եւ մենք տեսնում ենք, որ այդպէս են պահում ոչ միայն Մովսէսը, Եղիան, Դանիէլը և այլ մարգարէներն ու աստուածպաշտները[2], այլ նոյն ինքը Քրիստոս (Մատթ., Դ 1.11). «Որովհետև առաջին սրբերը, երբ կամենում էին մերձենալ Աստծուն, սկզբից մաքրւում էին պահքով և յետոյ (միայն) մերձենում էին Մաքուրին և լինում աստուածատես»[101*], ասում է Ս. Յովհան Մանդակունին:

Սակայն պահք է ոչ միայն ուտելուց զգուշանալը. «որովհետև Աստծու արքայութիւնը կերակուր և ըմպելիք չէ, այլ արդարութիւն, խաղաղութիւն և խնդութիւն Սուրբ Հոգու մէջ», ըստ առաքեալի ամփոփ արտայայտութեան[3]: **Պահք է նաև բերանի պահելն անվայելուչ խօսքերից, մտքի պահելն անյարմար մտածողութիւնից, ականջը՝ չարի լսողութիւնից, ոտքը՝ չար ընթացքից, թէև ուտել-խմելն առաջին տեղն են զբաղեցնում, որովհետև դրանցով է զօրանում մարդու մարմնաւոր ցանկութիւնների ու կրքերի յղփութիւնը:** Բայց իհարկէ այդ միայն մի կողմն է, իսկ պահքի ամբողջութիւնը բոլոր զգայարանքների պահպանութիւնն է. լոկ մէկն ու մէկի պահպանութիւնը չի կարող նպատակի

---

[1] Ս. Յովհ. Մանդ., Ճառք, էջ 30:

[2] Հմմտ. Սաղմոս, ԼԴ 13, ԿԸ 11, Յովէլ, Ա 14, Բ 12-15, Դան., Թ 3 և այլն:

«Պահքը սանձն է ստահակների, ովքեր անարգել անհրաւութիւն են անում: Որովհետև ինչպէս ձիու սանձն է բերանը դրւում և բովանդակ մարմինը նւաճւում և ենթարկւում է երասանակալի կամքին, [այդպէս է] և հոգևոր պատերազմում: Իսկ որոնց միտքը վառւում է արդար և սուրբ խորհուրդներով՝ զգայարանները զօրացած են և պատիրանապահութեամբ: Մինչդեռ եթէ չունի պահքի պնդութիւն, մարտը սկսւելիս դիւրութեամբ է ձերբակալւում»: «Որովհետև գինին և հարբեցողութիւնը ապականում են կատարեալ, իմաստուն այրերի, իսկ մարմնով և մտքով անկատարների մասին ի՞նչ հարկ կայ ասել. որովհետև կրակի նման է այրում և վառում ցանկութեան բոցը, քանզի կրակը միայն մարմինն է այրում, իսկ միսը և գինին՝ հոգիները՝ ցանկութեան շարժումով: Եթէ կրակը մարւում է առանց նիւթի, ապա ցանկութիւնը՝ պահքով, իսկ եթէ մանկութեանն անարգել ուտում, խմում է և [կենցաղավարում] քմահաճոյքով՝ նա չի կարող ակնկալել, թէ ողջախոհ կը դառնայ սրբութեան մէջ, այլ ցանկութիւնը որովայնամոլութեամբ եռալով, հեղում է հոսանքը և այրում, ում որ գտնում է...», Յաճախ. Թ Հմմտ. Ծահապիւանի ս. ժողովի կանոնադրութեան վերջը[102*]:

[3] Հռոմ., ԺԴ, Ա Կոր., Ը, Ժ 11, Կող., Բ 16, Եբր., ԺԳ 9, հմմտ. Գործք., ԺԵ:

հասցնել: «Որովհետև այդպիսի պահքը չի սրբում և արդարացնում, այլ պղծում և կորստեան մատնում: Բայց եթէ միայն կերակուրից զգուշանայ, և այլ անդամներով չպահի՝ իզուր և ապարդիւն է ջանք թափում»: Այդպիսի պահողը կեղծաւորում է, ուստի և պատժի է արժանի, «որովհետև ամենագէտ Աստծուն անգէտ համարեց՝ չարաչար կրօնի կեղծաւորութեամբ»[1]:

Պահել բոլոր զգայարանքներն Աստծու պատւիրանին հակառակ ընթացքից՝ այս դեռևս պահքի բացասական կողմն է, որով բացասականապէս աշխատում ենք չորացնել մեր մէջ ամբարտաւանութիւնը, նախանձը, բարկութիւնը, ծուլութիւնը, ագահութիւնը, որկրամոլութիւնն ու բղջախոհութիւնը: Մինչդեռ այս եօթը մեղքերը չի կարելի միմիայն բացասական ներգործութեամբ ապաքինել և ամոքել: Անհրաժեշտ է նաև դրական ներգործութիւն, դնելով իւրաքանչիւր մեղքի դիմաց եօթը առաքինութիւնների զօրացումը, որով պէտք է պարարտանայ մեղքերի ցանկութիւնից չորացած հոգին: Այդ առաքինութիւններն են՝ հաւատք, յոյս, սէր, արիութիւն, խոհեմութիւն, արդարութիւն ու ողջախոհութիւն: Եւ եթէ ամփոփենք ս. հայրերի այս երկու դասակարգութիւնը, կը տեսնենք, որ բացասականապէս պէտք է մեզ պահենք չարութիւնից մեր բոլոր զգայարանքներով, և դրականապէս՝ մտնենք բարի գործունէութեան մէջ թէ՛ մեր անձի ու թէ՛ մեր ընկերոջ[2]: Դէպի մեր անձն այն է, որ պէտք է աշխատենք

[1] Մանդ., էջ 34, տե՛ս նաև Յաճախ. Թ, էջ 191. «Պահքը երևան է հանում մարմնի մէջ ծածկւած հիւանդութիւնը, ինչպէս մաղձի դեղը, ինչը ճաշակելիս մաղձը դուրս է գալիս և առողջութիւն տալիս, ճիշտ այդպէս էլ պահքը մեղքերն [է դուրս հանում], որովհետև կերակուրները նւազեցնելիս մարմինն էլ հանդարտւում և սրբւում է: Քանզի մարմնի հետ գնալը մարդուն կորուստ է բերում, իսկ հոգու [հետ գնալը]՝ Տիրոջ մէջ յաւիտենական կեանք»: Մտքի և զգայութիւնների չար ու դառը շարժմանը տեսական արգելումը պահքի լրումն ու կատարումն է, որը հասցնում է [յաւիտենական] կեանքի դռների մօտ»: Հմմտ. Զգօն, էջ 46, 51, 236: «Եթէ սրտի մաքրութիւն չկայ՝ պահքն ընդունելի չէ»: «Սիրելիս, տեսապէս եղիր չարից [զերծ պահող] պահքի մէջ, որովհետև սա առաւել է այն պահքից, որ պահում են հաց ու ջրից և առաւել է նրանից, ով խոնարհեցնում է իր անձը՝ իջեցնելով իբրև թէ երկաթէ օղակով ծանրաբեռն իր պարանոցը, և աւելին է, քան ցնցոտի հագնելը...»: Արդ, եթէ մարդ ամեն տեսակ միջոց օգտագործի և կերակուր ուտի, և այս անի ներդաշնակ կարգով՝ առանց յղփութեան վայելելով Աստծու արարածներին, և արդար ու կորովի հաւատով ընդունի Նրա պարգևները՝ նա մեղք և յանցանք չունի: Եւ եթէ օձի նման հող ուտի և այդ օձի թոյնը խառնւի նրա մէջ, դրանից շահ ու օգուտ չկայ: Որովհետև Աստծու բոլոր արարածները բարի են և նրանց մէջ խոտան և անարգ բան չկայ և սրբւում են Աստծու խօսքով աղօթքի միջոցով»:

[2] «Մի՛ ապաւինէք միայն պահքին, աղօթքին, կուսութեանն ու ճգնութեանը: Այլ եթէ կամենում ենք Աստծուց ողորմութիւն գտնել՝ ամեն ժամ ողորմութիւն անենք: Եւ

ցամաքեցնել չար հակումներն ու զօրացնել բարին, իսկ այլոց հանդէպ, պէտք է աշխատենք տիրապէս բարերար լինել և բարերարութեան մշակ, ըստ չափու կարողութեան[1]: Հետևաբար և թէ՛ բացասականապէս ու թէ՛ դրականապէս կարող է պահք պահել իւրաքանչիւր ոք այնպէս և այնքան, ինչպէս և որքան անհրաժեշտ է իր չար ցանկութիւնների վերացման ու իր առաքինութիւնների բարւոքման համար առանց ինքնախաբէութեան և կեղծաւորութեան[2]:

Հայաստանեայց ս. Եկեղեցին չափով, կշռով պարտաւորութիւններ չի սահմանել իւրաքանչիւրի համար և ելնել առաքելական պողոտայից, ըստ Հռոմէական մոլորութեան: Պահքի թէ՛ դրական ու թէ՛ բացասական կողմն այն ժամանակ կարող է արդիւնաւէտ լինել, եթէ միայն ի սրտէ լինի և ըստ կարողութեան: Եւ որպէսզի իւրաքանչիւր հայ յիշի նաև իր մեղքերի ապաշխարութիւնն ու առաքինական պատերազմը, դրւած են պահքի օրեր և շաբաթներ ի յուշ և հրեշտակ, իբրև օրինակ քրիստոնէական պահքի և առաքինութիւնների: Չարից ձերբազատւելը և ճշմարտութեամբ սպառազինւելը անհրաժեշտ է երբեք չմոռանալ (Եփ., Զ 10-19): Այս երկու կողմը գեղեցկապէս արտայայտում է Ս. Յովհան Մանդակունին. «Այլ պարտ է մանաւանդ պահքի օրերին, այն, ինչ արգելում ես որովայնի համար, տաս աղքատներին, որպէսզի դու քաղցես և քաղցածը հագենայ, և քո մեղքը քաււի»: Անշուշտ աղքատներին հագեցնելը ոչ թէ լոկ որովայնի համար է, այլ մանաւանդ հոգևոր է, այսինքն՝ այն ամենը, ինչ ծառայում է ի խնդիր ընկերոջ, ժողովրդի կամ Եկեղեցու

ողորմութիւնն առաջ է գալիս սիրուց և սէրը ճշմարտապէս Աստւած է, և ով ողորմութիւնից դուրս է՝ նա օտար է սիրուց, իսկ ով անհաղորդ է սիրուն, պարզ է, որ իր անձը հեռու է պահում Աստծուց, ապա յիրաւի, այնպիսին չի կարող ողորմութիւն գտնել Աստծուց»: «Իսկ ողորմութիւն պէտք է անել ոչ միայն նիւթով և ստացւածքով, այլև վարդապետական խօսքով, խրատական իմաստութեամբ: Որովհետև որքան ոգին մեծ է մարմնից, նոյնքան մեծ է ոգու ողորմութիւնը մարմնական [ողորմութիւնից]: Եւ Աստւած մարդուն ինչ որ շնորհում է՝ նոյնը պահանջում է նրանից կատարել», Մեկնութ. Ժամակարգ., էջ 321:

[1] «Ովքեր շատ ինչքն ունեն, նրանցից շատ ողորմութիւն է պահանջում և որոնց ինչքը սակաւ է, ընդունելի է և սակաւ ողորմութիւնը: - Որովհետև Աստւած նայում է ոչ թէ ինչքերի չափին, այլ թէ ինչ կամքով է [տրւում] տրւելիքը. մեծն ընդունում է մեծից իբրև մեծ, ընդունում է նաև սակաւը, սակաւից իբրև մեծ: Որովհետև ողորմութիւնն ընդունելի է ըստ եղածի: Եւ արդ, ինչպէ՞ս իմանանք, թէ ողորմութիւն չանողը մարդ է. քանզի աղբիւրը աղբիւր է աւում ջրի պատճառով և ճրագը լոյսի պատճառով է ճրագ աւում. նոյնպէս էլ մարդն է ողորմութիւնից իմացւում, թէ մարդ է», Մանդ., էջ 48, 55, 76:

[2] Անդ., էջ 36:

բարեզարդութեանը, լուսաւորութեանն ու առաջադիմութեան: Իսկ եթէ չքաւոր ես, դրա համար Ս. Յովհան Մանդակունին գրում է. «Դու պտուղ քաղիր քո անդամներից, որովհետև աչքի պտուղն է կոյրին առաջնորդելը և հարթ տեղ հանելը, ոտքերի պտուղն է կաղին ցուպ դառնալը և նրա ոտքերի նեղութիւնը տանելը, ձեռքերի պտուղն է անդամալոյծին առաջնորդելը, չորացած ձեռքերին օգնելը, լեզուի պտուղն է մոլորեալին ուսուցանելը, ծոյլին ամոքելը, լսելիքի պտուղն է փութով լսել (հոգևոր) եղբօր կարգադրութիւնը և խոնարհութեամբ հնազանդել նրա կամքին: Արդ, այս բովանդակ ողորմութիւնը հարկ է առանց ոսկու բաշխել բոլորին և աւելի շատ վարձ ընդունել, քան նիւթական բաներ ողորմելը»[103*]:

Ապաշխարելուց յետոյ հաւատացեալը գալիս է խոստովանում իր մեղքերը քահանային և ձրի թողութիւն ստանում[1]: Եթէ խոստովանութիւնն անձնական կամ առանձնական մեղքերի համար է, քահանան ըստ կարևորութեան հարկաւոր խրատներ է տալիս և Աստծու պարգևած իրաւունքով, բայց յանուն Յիսուսի Քրիստոսի թողութիւն շնորհում: Միայն թէ այնուհետև քահանան դարձեալ ներշնչում է նրա մէջ. «Եւ դարձեալ քեզ յանձնում եմ սուրբ եկեղեցու խորհուրդներին, որպէսզի ինչ բարիք որ գործես, քեզ համար բարեգործութիւն և հանդերձեալ կեանքում փառք համարի»: Այսպիսի մի վեհ խորհուրդ է պարունակում Ս. Գրիգոր Լուսաւորչի արտասանած «Ողորմեսցին»[2]:

Բայց երբ մեղաւորը հրապարակապէս մեղանչել է և եղբայրներին գայթակղութիւն պատճառել, հրապարակապէս ևս ապաշխարում է թէ՛ ուղղելու և թէ՛ գայթակղութիւնը վերացնելով՝ վերստին վերականգնելու իր եղբայրական անդամակցութիւնը Եկեղեցուն: Ապաշխարութեան այս կարգով դարձողը նախ սկսում է իր դարձի խոստովանութիւնը արդէն իսկ գաւթից և եօթը սաղմոսով ներկայացնում է՝ թէ ինչպիսի հոգևոր վիճակում է գտնուում (Սղմ., ԽԱ, ԾԶ, ՀԶ, ՃԼԷ, ՃԻԲ, ԼԷ, ՃԻԱ): Ապա քահանան աղօթում է Աստծուն՝ սրբել նրան ու Ս. Հոգու տաճար դարձնել, ըստ որում և կարդում է Հին ու Նոր Ուխտից Աստծու այն խօսքերը, որոնք հաստատում են դարձող մեղաւորի մեղքերի քաւութիւնն ու աւետիքը[1]: Յետոյ լսելով քաւութեան երանութիւնը (Սղմ., ԼԱ) և անառակ որդու առակով Աստծու գթութեան ձայնը՝ մտնում է եկեղեցի, ըստ որում և քահանան խառնում է նրան «արդարների լուսեղէն երամի մէջ և ձեզ ջահազգեստ դարձնելով՝ զարդարում է նորափետուր [զգեստով]»: Ապաշխարութեան այս երկրորդ մասը կատարւում է նախ քահանայի՝ «Հրաժարիմքը» երիցս ասել և յետոյ հաւատամքը դաւանել տալով. ի վերջոյ կարդացւում են Ս. Գրքից աստուածային թողութեան խօսքերը, հնազանդութեան, խոնարհութեան և Աստծու խնամածութեան սաղմոսները և Աստծու ուրախութիւնը դարձողի վրայ: Ըստ որում և քահանան աղօթելով առ Աստուած՝ ընդունել դարձողին իր պահպանութեան տակ, հանդիսաւորապէս բարեմաղթում է նրա մարմնի զգայարաններին և անդամներին դէպի բարի գործունէութիւն:

Ապաշխարութեան թողութիւն ստանալուց յետոյ հաւատացեալը դիմում է Քրիստոսի մեղսաքաւիչ ու կենդանարար մարմնի և արեան հաղորդութեանը, որով նա զինւում ու զինավառւում է ճշմարիտ պատերազմի ընթացքը վերսկսելու համար: Ըստ որում և թէ՛ ապաշխարութեան, թէ՛ հաղորդութեան և թէ՛ առհասարակ ս. խորհուրդների կատարման համար բացարձակապէս արգելւում է հոգևորականին վարձատրութիւն պահանջել, այնպէս որ հաղորդադրամ ու խոստովանադրամ առնող քահանաների մասին Ս. Գրիգոր Տաթևացին ասում է թէ «Քրիստոսի մեծ ատեանի ժամանակ իրենց անձերը դատաստան են ընդունելու»[2]:

Այսպիսով ապաշխարութեան ամբողջ կարգի ուղղութիւնն է՝ նախ զղջում առաջացնել մեղաւորի մէջ. երկրորդ՝ թողութիւն և քաւութիւն խնդրել Աստծուց. երրորդ քաւութեան հաւաստիք տալ դարձողին. չորրորդ՝ խոստումն ստանալ նրանից՝ հեռու լինելու մեղքից և հաւատարիմ լինելու Աստծու եկեղեցուն ու միաբանութեանը. և վերջապէս հինգերորդ՝ Աստծու զինավառութիւնը բարեմաղթել նրան ի նոր գործունէութիւն. որը և լրանում է ս. հաղորդութեամբ և միաբան եղբայրների հանդիսաւոր ուրախակցութեամբ:

---

[1] «Եւ քահանաները թող չհամարձակեն ապաշխարութիւնը տալ վաճառքով, այլ իբրև կարեկիցների թող նրանց հոգ տանեն դաստիարակութեամբ, որպէսզի փրկեն, և նրանցից թող հարկ չվերցնեն մաքսաւորի նման. (այլ) ձրի առնենք և ձրի տանք»: «Եթէ քահանաներից մէկը երբևէ ապաշխարողների ապաշխարութեան խօսքը յայտնի, թող նզովքով լուծարի և ամեն ինչի մէջ զրկի քահանայական ժառանգութիւնից». Կանոն Դունայ ժողովի[104*]:

[2] ժամագիրք. Մեկնութիւն. Ժամ. Ընդհանր. 22-23, 51, 140:

[1] Ես., Ա 16-21, Եզէկ., ԺԸ 20-24, Եփես., Զ 10:

[2] Հարց. 684:

Ապաշխարողի զղջման արտայայտութիւնն է այն գեղեցիկ խոստովանութիւնը, որ յայտնի է «Մեղայ» անունով և ներկայացնում է ամեն տեսակ մեղքերի գիտակցական զղջումն ու գարշանք նրանց հանդէպ այլևս չգործելու համար: Այդտեղ դարձողը նախ խոստովանում է, որ ինքը Աստծու առաջ ըստ ամենայնի մեղաւոր է. ապա թւում է իր հոգևոր մեղքերը. 3. մտքի չար գործերը. 4. մարմնի չար հակումները, 5. լեզուի պատուիրազանցութիւնները, 6. ձեռքի չարագործութիւնները, 7. եօթը մեղաց համեմատ մարմնաւոր ձգտումները[1], 8. թւում է եօթը մահացու մեղքերը, 9. ամփոփում է իր վերաբերմունքն Աստծու հրաժարելիք ու յանձնառական (բացասական ու դրական) պատուիրանների հանդէպ ու զգալով ի սիրտ և ի հոգի իր անօգնական լինելը՝ թողութիւն է խնդրում Քրիստոսից իր պաշտօնեայի միջոցով[2]:

Ահա ապաշխարութեան այս սուրբ խորհուրդը Հայաստանեայց ս. Եկեղեցում ըստ ամենայնի համապատասխանում է Աւետարանի սկզբունքներին և ուղղւում է ոչ միայն առ քաւութիւն և վերականգնումն մեղաւորի, այլև առ հաւաստիացումն, որ ճշմարիտ զղջացողը վերստին դառնում է Աստծու որդին և Քրիստոսի սիրելի եղբայրն ու հանդերձեալի ժառանգակիցը:

[1] Ուսումնասիրութեան համար պէտք է նկատի ունենալ՝ «վերամբարձ ոտնահարութիւն»- մարմնաւոր ձգտումն դէպի հպարտութիւն ու փառասիրութիւն. «վայրաքարշ մեղկութիւն»- մարմնի թաւալումն ձանձրութեան ու ծուլութեան մէջ. «յաջ և յահեակ խոտորել»- արծաթասիրութեան ու պոռնկութեան հնարների որոնումը. «առաջնոց մեղանչելն» է բարկանալը և ըստ այնմ յանդգնութեամբ վարուելը մեզ պատահողների հետ. «վերջնոց չար նշաւակ» լինելն է - առաջնորդ և օրինակ դառնալը յետնորդներին ու հետևորդներին: Եօթը զգայարանքների թւում են հեշտասիրութիւնը և որկորի զգայութիւնները: «Առաքինութիւնների վեց հակառակութիւնները վեցակի շարժմամբ կորստի են մատնում մարդկանց հոգիները, այսինքն՝ խորամանկութիւնը, տգիտութիւնը, յանդգնութիւնը, երկչոտութիւնը, շռայլութիւնը, բղջախոհութիւնը և անողորմ ժլատութիւնը». Հմմտ. Ս. Գր. Տաթևացու մի ճառը. Բուն Մաշտոց. 340, Հարց. 560, Մեկն. ժամ. 74, ս. Աթանասի ու Եփրեմ Ասորու խոստովանութիւնը, որի նմանութեամբ, բայց հակիրճ և առաւել գեղեցիկ է մերը. Աղօթ. Եփրեմ Խուրին Ասորու. Երուսաղէմ. 1848, էջ 87:

[2] «Իսկ ովքեր մահւան ժամին կը զղջան խոստովանութեամբ և արտասուքով, և յուսով կը հաղորդուեն վերջին հաղորդութեանը՝ նրանց կը գովեմ նաև ես համաձայն (Սուրբ) Գրքի, մանաւանդ նրանց, ովքեր (պատճառած) զրկանքները, յափշտակութիւնը մաքսապետ Զաքէոսի նման քառապատիկ կը վերադարձնեն, և իրենց ինչքերի կէսը աղքատներին ու եկեղեցուն կը բաշխեն՝ նաև մենք կասենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի խօսքը. «Այսօր փրկութիւն եղաւ այս տանը». Գրիգոր սարկաւագապետ (Սոփ., Դ 155):

ԽԴ

Դ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Հաւատացողի ճշմարիտ միաւորութիւնը Քրիստոսի հետ վերջնականապէս իրագործւում է Քրիստոսի կենդանարար մարմնի և արեան հաղորդութեամբ: Այդ պանծալի միաւորութեանը իրական հնարաւորութիւն տալու համար էր, որ Քրիստոս սահմանեց Եկեղեցու այդ ս. խորհուրդը: Ըստ որում հաղորդութիւնն է այն սուրբ խորհուրդը, **որով հացի ու գինու տեսակի տակ իսկ և իսկ հաղորդւում ենք Քրիստոսի մարմնին և արեանը**, յիշելով Քրիստոսի փրկագործութիւնն ու գոհանալով մեր փրկութեան ու նրա աննման շնորհների համար:

Աստուած անչափ աւելի է սիրում իր որդիներին, քան մայրը իր մանկանը (Ես., ԽԹ 15): Մենք տեսնում ենք, **որ մայրն իր մանկան աճումը և ամրութիւնը զօրացնելու համար կաթով սնունդ է տալիս նրան իր մարմնից և արիւնից: Առաւել ևս Փրկիչը իր հաւատացեալներին՝ իբրև իր Հոգուց ծնւած մանուկների՝ սնուցանում է իր մարմնով և արիւնով**, որպէսզի նրանք ամենքն էլ հասնեն «կատարեալ մարդու աստիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը» (Եփես., Դ 13) և միանան Իր հետ: Այս է, որ ասում է առաքեալը. «Որպէս նորածին երեխաներ, միշտ փափագող եղէք բանական և անխարդախ կաթին, որպէսզի նրա միջոցով աճէք փրկութեան համար, քանի որ արդէն ճաշակել էք, որ քաղցր է Տէրը» (Ա Պետր., Բ 2):

Մարդ, ընկնելով իր բարձրութիւնից, ապականւեց և կարօտ էր աստուածային փրկագործութեան: **Քրիստոս առաւ մեր ապականւած մարմինը և արիւնը**, ամեն կերպ մեզ նմանւեց, բայց սրբագործեց ու բարձրացրեց վերստին. ուստի և մենք պէտք է Նրան նմանւելու և Նրա հետ բարձրանալու համար ընդունենք Նրա մարմինը և արիւնը, որոնք Նրա մահով յաղթանակել են, յարութեամբ պայծառացել ու փառաւորւել և մասնակից եղել յաւիտենական բարձրութեանը աստուածային համբարձումով[1]: **Քրիստոսի տւած այդ կենդանարար սնունդը գերբնական կերակուր է, որ մեր բնական գոյութեանը նոր**

[1] Ա Կոր., ԺԱ 26, Ժ 17, Մատթ., ԻԶ 29:

կեանք ու զօրութիւն է պարգևում: Եւ որպէսզի մենք մեր զգայական բնութեամբ կարողանանք ընդունել այդ գերբնական բարձր բարիքները և բնականօրէն համոզւենք, թէ վայելում ենք, Քրիստոս իր ողորմածութեամբ տալիս է մեզ երկնաւոր կեանքի զօրութիւնը հացի ու գինու տեսակով[105*], որոնք երկնաւոր կեանք սնուցանող ու կազդուրող զօրութեան միջոցներ ու բարիքներ են՝ երկրաւոր կեանքի սնունդ Քրիստոսի ճշմարիտ հաւատքի շնորհիւ: «Որովհետև բոլոր նրանք, ովքեր հաւատքով և երկիւղով մօտենում են Քրիստոսին, լուսաւորւում են Սուրբ Հոգով և օրըստօրէ առաքինի գործերով վեր բարձրանում», ասում է Ս. Յովհան. Մանդակունին: Փրկչի այդ երկնաւոր ու գերահրաշ պարգևների երկրաւորապէս ջամբելը իր ստնդեայ մանուկներին արտացոլւած է Ս. Ներսէս Շնորհալու մի սիրուն ու գողտրիկ շարականի մէջ՝ պերճաձայն համեմատութեամբ.

«Ընդ բաղարջին հաց անխմոր
Եւ զմարմին իւր զերկնաւոր.
Զկուսածին անսերմնաւոր
Զանապական և զհոգևոր.
Ընդ ոչխարին արեան ուխտին
Եւ մեզ զարիւն իւր Ուխտ կրկին.
Եւ եղեգան դառնագունին
Փոխան զվարս աստուածային:
Թագաւորն արարածոց
Զհացն կենաց ետ քաղցելոց.
Եւ զբաժակն ուրախարար
Որք յԱդամայ տրտմեցելոց.
«Այս նոր Ուխտ է իմոյ արեան
Փոխան հնոյ Ուխտին արեանց.
Զոր յիշատակ իմ առնիցէք
Մինչև եկից ես միւս անգամ»:

Քրիստոս սահմանեց այս ս. խորհուրդը վերջին ընթրիքի «Բաղարջակերաց տօնի առաջին օրը, երբ զատկի գառն էին մորթում»[1]: Այդ տօներին բաղարջ պէտք է ուտէին, ինչպէս օրինադրւած էր. «Առաջին ամսւայ տասնչորսերորդ օրւայ երեկոյից սկսած բաղարջ հաց կուտէք մինչև ամսի քսանմէկերորդ օրւայ երեկոն»[2], ի նշան եգիպտական ծառայութիւնից ազատւելու և իբրև նախատիպ մեղանչական մարդկութեան փրկագործման, որ պէտք է կատարւէր Քրիստոսով[3]: Արդ, Քրիստոս առաւ բաղարջը, օրհնեց, տւեց աշակերտներին և ասաց.- «Առէք կերէք այս է մարմինն իմ»: Ապա առնելով անապակ գինու բաժակը՝ գոհացաւ տւաւ աշակերտներին եւ ասաց. «Խմէք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արիւնը, որ թափւում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար»[4]: Ըստ որում բաղարջը և անապական գինին շնորհւեց «ի խորհուրդ անապականութեան մարմնոյ և արեան Քրիստոսի»:

Այս պատւէրով Քրիստոս պարզապէս հասկացրեց, որ Իր հաւատացեալները միմիայն ճաշակելով Իր անմեղ և անապական մարմինն ու արիւնը կարող կը լինեն հաղորդակից լինել Իր հետ ու միանալ, այնպէս որ այդ հաղորդակցութեամբ ու միութեամբ նրանք կը մեռնեն մեղքի համար և Նրա մարմնի ու արեան անմեղութիւնն ու անապականութիւնն ընդունելով՝ կը մտնեն յաւիտենական կեանքի երջանկութեան և առաքինութեան ճանապարհը: Քրիստոսի մարմնի անմեղութիւնը սրբում է հաւատացեալի մարմնի մեղանչականութիւնը: Իսկ արեան անապականութիւնը թողութիւն ու քաւութիւն պարգևելով, արժանացնում է նրան աստուածատուր անապական կեանքի: Հետևաբար ս. հաղորդութեամբ է իրականանում քրիստոնէական ճշմարիտ փրկութիւնը իւրաքանչիւր անհատի մէջ, առանց որի քրիստոնեան Քրիստոսի հետ լինել չի կարող և փրկւած չի լինի: Այսպիսով կատարւում է նաև մարգարէութիւնն

[1] Մատթ., ԻԶ 17, Մարկ., ԺԴ 12, Ղուկ., ԻԲ 19, Յովհ., Զ 33, Ա Կոր., ԺԱ 29:
[2] Ելք., ԺԲ 18, Շար., 260, Ընդհանր. 177-184:
[3] «Եւ ասաց, որ այսպէս ուտեն նրան, գօտին մէջքին, կօշիկը՝ ոտքերին, ցուպը ձեռքին: Այս խորհուրդները յոյժ մեծ են: Քանզի ով ուտում է Քրիստոսից՝ ճշմարիտ Գառից՝ իր մէջքն ամրացնում է հաւատքով, իր ոտքերին հագնում Աւետարանի պահպանակ-կօշիկները և իր ձեռքում պահում (Սուրբ) Հոգու սուսերը, որ հէնց ինքն է՝ Աստծու խօսքը». Զգօն, էջ 261:
[4] Մատթ., ԻԶ 26-28, Մարկ., ԺԴ 22-25, Ղուկ., ԻԴ 30, Հարց. 547:

ու փոխանակ Իսրայէլացիների մասնաւոր ազատութեան զոհի՝ մարդկութեան փրկութեան ճշմարիտ պատարագն է մատուցանում հաւատացեալի համար[1]: Առաքեալները ևս այս լաւ հասկանալով, հաւատարմութեամբ հետևում էին Քրիստոսի պատուիրանին, միշտ կատարելով այդ սուրբ յիշատակը և հաղորդելով Քրիստոսի կենարար մարմնին և արեանը[2]: Նրանք այնքան բարձր էին համարում այդ վեհ և աստուածային խորհուրդի նշանակութիւնը, որ բացէիբաց արգելում են անարժանութեամբ վայելել. «Այսուհետև, ով որ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ բաժակն անարժանօրէն, պարտական պիտի լինի Տիրոջ մարմնին և արեանը: Թող մարդ նախ ինքն իրեն փորձի և ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից, որովհետև, ով ուտում է և խմում անարժանօրէն, իր իսկ դատապարտութիւնն է ուտում և խմում, քանի որ չի զատորոշում Տիրոջ մարմինը» (Ա Կորնթ., ԺԱ 27-29):

Սուրբ առաքեալը ճշտիւ որոշում է, թէ ո՞րն է արժանաւորապէս հաղորդելու ճանապարհը, այն է՝ նախ փորձել անձը, այսինքն ունենալ հաւատք Քրիստոսի փրկագործութեան ու փրկագործական տնօրինութեան հանդէպ. և երկրորդ՝ նախապէս զղջալ և ապաշխարել մեղքերը, մտնել Աստծու ճշմարիտ ճանապարհը[3], և ապա համարձակութիւն ստանալ մօտենալու առ քաւիչ սրբութիւնը:

Առաջին պահանջն այս է, որ հաղորդել կամեցողը լինի մկրտուած, դաւանի Հայաստանեայց ս. Եկեղեցու հաւատալիքը և հաստատապէս ընդունի, որ մօտենում է առ Քրիստոսի մարմինն ու արիւնը. «Որովհետև ոչ թէ տեսնելուց, այլ իմանալուց է հաւատալը, քանզի տեսնում է հաց և գինի, բայց իմացւում է Աստծու Որդու մարմինն ու արիւնը, և փրկական է կոչւում, որովհետև Նրանով փրկւեցինք և փրկում ենք ապրելիս ու մեռնելիս»[4]: Հարկաւ, եթէ մարդ չհաւատայ, այսինքն՝ չունենայ ճշմարիտ հաւատք թէ՛ առ Քրիստոս և թէ՛ առ Նրա տնօրինութիւնն, ու կեղծաւորաբար մարդկանց մօտ բարեպաշտ երևալու համար

[1] Եղ., Ա 10, Ես., ԿՋ 20, ԿԱ 5, Եղ., ԺԲ, ԺԳ, Եբր., Ժ 12, Ե:
[2] Ա Կոր., ԺԱ 21, ԺԳ, Գործք., Բ 42, 46, 47, Ագաթ., էջ 400:
[3] «Ով մօտենում է Տիրոջ մարմնին, և ընկերոջ հանդէպ թշնամութիւն ունի, (Դա) նրա համար կենարար մարմին չէ, այլ այրող կրակ, որովհետև իր անձի դատաստանի համար է ուտում և ըմպում»:
[4] Մեկ. ժամ., էջ 36:

մօտենայ ու հաղորդւի, նա կը դառնայ ոչ թէ Աստծուն պաշտող, այլ թշնամացող և անարգող, որովհետև Քրիստոսի մարմինը և արիւնը չի կարող հաշտուել մարդու պղծութեան ու մեղքերի հետ: «Որովհետև եթէ մի չար գարշահոտ դիպչէր քեզ՝ մի թագաւորի չէիր համարձակւի մօտենալ, բայց երկնաւոր Թագաւորին ընդունում ես նեխած հոգուդ մէջ, և չես պատկառում մեծ երկիւղով...: Երբ մարդու նկատմամբ է մեղանչում, ասում է, Աստծուն է աղաչում, իսկ երբ Աստծուն է մեղանչում՝ ո՞ւմ աղաչի, որովհետև ոչ թէ մարդու արեանն է պարտական, այլ Աստծու Որդու մարմնին և արեանը»[106*]: Ուստի և ժամանակաւորապէս, այսինքն՝ մինչև դառնալը զրկւում են հաղորդութիւնից **չմկրտուածները, թերահաւատները, հաւատացեալներին յանդգնաբար գայթակղեցնողները, խելագարները, հերձուածողները և ապաշխարողները**[1], **որոնք և պէտք է ելնեն եկեղեցուց, երբ սարկաւագը հրամայում է՝ «Մի՛ ոք յերախայից»**[107*] և այլն[2]: Այդպիսի անձինք դեռևս պէտք է դիմեն ապաշխարութեան ս. խորհուրդին և մաքրւելով համարձակութիւն ստանան կենդանարար մարմնին և արեանը մօտենալու[3]:

Հետևաբար երկրորդ պահանջն էլ այն է, որ հաղորդւել փափագողը նախապէս զղջայ իր մեղքերը, դիմի ապաշխարական միջոցների, աշխատի ճանաչել աստուածային ճշմարտութեան ճանապարհն ու ընթանալով այդ իսկ ճանապարհով, կարողութիւն ձեռք բերի ընդունելու իր մէջ դէպ ճշմարտութիւն առաջնորդող և զօրացնող Փրկչին: Եւ որովհետև այս ս. խորհրդին արժանանալու համար մենք խնդրում ենք Աստծուց՝ նախ գթութեամբ նայել մեր մեղանչականութեան վրայ և երկրորդ՝ ողորմածութեամբ սեղանակից անել մեզ իր Որդու պատարագին, ուստի մենք էլ մեր աղօթքը զօրաւոր դարձնելու համար

[1] Ա Կոր., Ե 5, Եղիշէ 358, 361:
[2] Պատարագիչը ևս նախ իր «Հաւատով հաւատամն» է խոստովանում և ապա կենդանարար մարմնից և արիւնից ճաշակում «ի կեանս» և «մեղքերի քաւութեան և թողութեան համար»: Այդպէս է և հաղորդողների կողմից. աւագ սարկաւագն ասում է. «Հաւատում ենք Սուրբ Հօրը՝ որպէս Ճշմարիտ Աստուած, հաւատում ենք Սուրբ Որդուն, որպէս ճշմարիտ Աստուած, հաւատում ենք նաև Սուրբ Հոգուն, որպէս ճշմարիտ Աստուած, խոստովանում և հաւատում ենք, որ դա է մեր Տիրոջ և Փրկչի Յիսուս Քրիստոսի ճշմարտապէս կենդանի և կենդանարար մարմինը, որ վերցնում է աշխարհի մեղքը»:
[3] Այդպէս և երբ սարկաւագը ձայնում է՝ «Դէպ դռները, դռները բովանդակ իմաստութեամբ և զգուշութեամբ վեր բարձրացրէք ձեր մտքերը՝ աստուածային երկիւղով»[108*] պէտք է չթողնեն անհաւատներին ներս մտնելու և ելումուտ անելու, կամ թէ այնժամ փակեն սրտերը մեղքերի առաջ և հոգով սլանան առ Աստուած:

նախ ցոյց ենք տալիս մեր գթութիւնը դէպի մեր շրջապատողներն ու մանաւանդ դէպի աղքատները, մեր արդար վաստակներից և յաջողութիւնից նրանց նպաստելով[1], և երկրորդ՝ սեղանակից ենք անում մեզ թէ՛ կարօտեալներին և թէ՛ եկեղեցու սպասաւորներին ի հաճոյս Աստծու[2]: «Բայց երբ դու ընդունելութիւն ես անում՝ կանչիր աղքատներին, խեղճերին, կաղերին, կոյրերին, և երանելի կը լինես, որովհետև նրանք ոչինչ չունեն փոխարէնը հատուցելու քեզ, և քեզ փոխարէնը կը հատուցի արդարների յարութեան ժամանակ». ասում է Քրիստոս: Ըստ որում և Ս. Յովհան Մանդակունին գրում է. «Որովհետև ով կերակրում է աղքատներին, կարօտեալներին, օտարականներին և հիւանդներին՝ ոչ թէ մարդու է ընդունում, այլ՝ Քրիստոսին, կերակրում Քրիստոսին, հագցնում Քրիստոսին, մխիթարում Քրիստոսին, ամոքում Քրիստոսին, հանգստացնում Քրիստոսին, և սպասաւորում Քրիստոսին, քանզի անսուտ է տէրունական խօսքը»[109*]:

Ահա, այս է պատճառը, որ նպատակ ունենալով ս. Պատարագին արժանանալ, պահքով և աղօթքով ապաշխարում ենք մեր մեղքերը և այդ ընթացքում աշխատում ենք ըստ կարողութեան ողորմութիւն անել կարօտեալներին և մեր ընկերասիրութիւնը գործով իրականացնել: Իսկ երբ ս. Հաղորդութեան ենք արժանանում, նոյն օրն էլ սեղան ենք պատրաստում չքաւորների, աղքատների և Եկեղեցու սպասաւորների համար, հարկաւ մեր ամենամօտիկ ազգականների հետ միասին: Սխալ կերպարանափոխութիւն է հիարկէ, երբ այդպիսի ժամահացին հրաւիրում ենք կարող, կշտափոր և ապահոված բարեկամների ու ծանօթների. այդպիսի հրաւէրը ոչ մի նշանակութիւն չունի մեր ու մեր ննջեցելոց հոգու փրկութեան համար, որովհետև փոխարէնն արդէն այստեղ ստանում ենք: «Եթէ կամենում ես քո մեծամեծներին պատուել՝ պատուիր. մարմինդ կերակրելու համար երեք հարիւր վաթսուն հինգ օր ունես, և նրանցից (գէթ) մէկ օրը հոգուդ նուիրիր: Արդ, ահա մի օր (իսկ) չես տրամադրում տալ հոգևորին և հոգուդ հրաւէրին (անսալ)»[110*]: Կանչել կշտափորներին, կերցնել ու խմեցնել փոխարինաբար, կեղծաւորելով, որ իբր թէ

[1] «Մի մտածիր հաւաքել յափշտակածը և յետոյ ողորմութիւն անել մեղքերի թողութեան համար, որովհետև երբեք կրակը չի հանգչի կրակով և ոչ էլ վէրքերով վէրք կը բժշկի, և ոչ էլ մեղքերով մեղքեր կը մաքրուեն և կամ անօրէնութեամբ անօրէնութիւններ կը քաւեն» Մանդ.,էջ 64:

[2] Մատթ., ԻԵ 31-46, ԺԴ 12-24:

այդ արւում է հոգու փրկութեան համար, ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ Աստծուն «խաբել» և գիտակցաբար աւելի ծանր մեղքերի մէջ ընկնել, առաւել պատուելով և աչառելով փոխահատոյց բարեկամներին, քան թէ աղքատներին կերակրելով[1]: «Եւ քո մեղքերի քաւարանն աղքատների խմբերն են, որ ներքևից վեր են նայում, և նրանց դատարկ սեղանները հոգոց են հանում, և նրանցից ոմանք նոյնիսկ դուրս են մնում իբրև արհամարուածներ: Արդ, Պատարագի օրը այսպիսի ընդունելութեան հրաւէրք չանես, որոնց ծախսերից անվարձ կը մնաս», ասում է Ս. Յովհան Մանդակունին, «Բայց եթէ կամենում ես քո մեղքերի համար թողութիւն խնդրել՝ կանչիր որբերին և այրիներին, նեղեալներին և տառապեալներին, խեղճերին և կոյրերին, կաղերին, կարօտեալներին և գերիներին, բոլոր քաղցածներին և անմխիթարներին. նրանց մխիթարիր, նրանց սփոփիր, նրանց կերակրիր, միայն նրանց սպասաւորիր, նրանց հետ շրջիր, նրանց յարմարուիր և քաղցր խօսքերով նրանց պատուիր, որպէսզի քո մեղքերին թողութիւն լինի և տանը՝ փրկութիւն»[111*]:

Մատա՞ղ ես անում՝ աղքատների համար արա, որ ինչպէս Քրիստոս զոհւում, պատարագւում է քո հոգևոր յագեցման համար, դու ևս զոհում ես քո ունեցւածքից աղքատների մարմնաւոր յագեցման համար: Ուրեմն ի՞նչ օգուտ քո զոհից կամ մատաղից, երբ առաւելապէս կուշտերն են կերակրւում, իսկ դու հոգով քաղցած և աղքատ ես ու դիմում ես դէպի Քրիստոսի ամենողորմ պատարագի սեղանը[2]: Արդեո՞ք ընդունելի կը լինի սեղանդ կամ մատաղդ: «Պատշաճ և ընդունելի չէ այդ հրաւէրքը. ոչ մէկը որոմը չի սերմանում ցորենի հետ և փուշը խաղողի որթի հետ տնկում, և քեզ վայել չէ քո խոնարհութեանը և մեղքերի ապաշխարութեանը խառնել կեղծաւորութիւն և սնափառութիւն, (որովհետև) սրանք մէկը միւսին խափանող են և ապականող: Քեզ անհնար է մի աչքով երկինք նայել և միւսով՝ երկիր, և այդպիսով հաւասարապէս հաճոյանալ թէ՛

[1] «Զգոյշ եղիր մարդահաճութեան ախտից և սնափառութեան դևից, որպէսզի քո բարութիւնը չարի չվերածեն և ոչ էլ քո լոյսը՝ խաւարի, որովհետև լոյսը, որ ասում է, թէ քո մէջ է, խաւար է, իսկ խաւարը որքա՜ն առաւել կը լինի, որովհետև եթէ քո ողորմութիւնը չարիք լինի, ապա որքա՜ն առաւել կը լինի չարիքը» Մանդ., էջ 62:

[2] «Որովհետև Տէրն Ինքը սիրեց մեզ և Ճշմարտութեան Հոգին ուղարկեց բնակելու մեր մէջ: Քանզի մեր իմանալի հոգիները սիրով կապակցեց Աստծու անիմանալի Հոգուն. և ինչպէս Նա սիրեց մեզ, նոյնպէս և մեզնից է պահանջում սիրել մէկմէկու: Բայց, արդ, իւրաքանչիւր ոք, ով սիրում է՝ ճանաչւում է Աստծուց և ինքը ճանաչում է Աստծուն: Եւ իւրաքանչիւր ոք, ով կարեկցաբար չի սիրում իր եղբօրը՝ օտար է Աստծուն և չի կարող ընդունել աստուածային շնորհներ... Մանդ., էջ 214, Ընդհանր., էջ 358-361:

մարմնաւորներին, և թէ՛ հոգևորներին»: Ծառայել թէ՛ մարմնաւորին և թէ՛ հոգևորին միաժամանակ անկարելի է. լինել միանգամայն մեծատուն աշխարհի վայելքների ու փառքի մէջ և դեռ արժանանալ էլ Աստծու արքայութեանն ու փառքին անհնարին է, ըստ որում ուղտն աւելի դիւրին կանցնի ասեղի ծակով, քան թէ մեծատունը կը մտնի Աստծու արքայութիւնն իր շալակած կամ գրկած հարստութեամբ հանդերձ[1]: «Եւ տունը, որից օրհնութեան պտուղներ դուրս չեն գալիս եկեղեցիներին, քահանաներին և եկեղեցու սպասաւորներին, աստուածային օրհնութիւնը չի մտնի այն տան մէջ, և ոչ էլ նրանց վաստակի մէջ և տևապէս նեազութեան մէջ կը լինի այն տունը»:

Ընկերասիրութեան ու եղբայրասիրութեան միւս կողմն էլ ննջեցելոց համար աղօթելն է և պատարագին նրանց հետ մօտենալը. որովհետև նրանք ևս աղօթակից են մեզ հանդերձեալում: Ուստի և երբ մեր հոգու փրկութեան ու կեանքի ճշմարիտ յաջողութեան համար մօտենում ենք մեզ համար մատուցած պատարագին, երբեք գերադասութիւն չենք տալիս մեր հոգու փրկութեանը, այլ ընդհակառակը մեր բոլոր եղբայրների համար ևս, այնպէս և ոչ միայն մեր, այլև բոլոր ննջեցելոց համար: Եւ այս պարզապէս երևում է արդէն իսկ Պատարագի արարողութեան սկզբի մասից, որում թէ՛ ներկայ, թէ՛ բացակայ, թէ՛ կենդանի և թէ՛ ննջեցեալ սրբերն ու հոգիները, պաշտօնեաներն ու միաբանները և ամենայն հաւատացեալները յիշատակւում և աղօթակից են կոչւում. բայց ո՛չ բարեխօս, «որովհետև Պատարագը Քրիստոսին դէմ յանդիման լինելն է, և կարիք չունենք բարեխօսի»: Այդ պատճառով և՝ ինչպէս յիշւեց, իւրաքանչիւր տարելիցին դիմում ենք սուրբ Պատարագին ի յիշատակ և ի փրկութիւն ննջեցեալների, քանի որ ամբողջ տարւայ հոգացողութիւնները մեզ են լինում նւիրւած, մինչդեռ մենք միութիւն ենք մեր եղբայրների հետ:

Ահա սրանք են այն հիմքերն ու ընթացքը, որոնցով մենք կարող ենք արժանանալ կենդանարար մարմնին և արեան հաղորդութեան, և ուրեմն բնակարան դառնալ Քրիստոսին, ապահովւելով մեղանչական խոտորումներից: «Ապականող գազանները, անտառի խոզերը մտնելով ապականում են այգին, որ պարիսպներ չունի, և ովքեր չեն պարսպւում խորհրդով, նրանց անձերը բնակարան են (դառնում) դևերի համար... Որովհետև քրիստոնէութիւնը հաւատք, մկրտութիւն և սուրբ խորհրդի վայելում է, և ով սրանից հեռու է և թերի, թերի է քրիստոնէութիւնից, քանզի ոչ նա է Քրիստոսի մէջ բնակւում և ոչ էլ Քրիստոս՝ նրա մէջ»: Վասն որոյ և ս. Հայրապետն ասում է, որ ոչ միայն քառասունքը պահելով պէտք է հաղորդւել զատկին և պատճառել, թէ անկարող ենք պատրաստ պահել անձը և հաղորդւել. այլ պէտք է տարւայ մէջ քանիցս հաղորդւել (Ծննդին, Զատկին, Ս. Խաչի տօնին) և աշխատել սուրբ մնալ: Ի՞նչ օգուտ է մի օր բժշկւել և ապա հիւանդանալ, մի օր սրից ազատւել, միւս օրը նրան մատնւել, մի օր թագաւորի հետ բազմել և միւս օրը՝ դահճի, մի օր գտնել ակներ և միւս օրը՝ կորցնել, մի օր Քրիստոսին լինել սեղանակից և միւս օրը՝ սատանային. «Որովհետև երկու ոտքով ես կաղում, երկու մտքերի մէջ նեղւում. կամ դևերին պաշտող եղիր կամ Քրիստոսին՝ խորհրդակից. մի օր օդի պէս ճերմակ ես երևում, և մի օր էլ այծի պէս սևաթոյր, այսօր խոստովանողների հետ ես և վաղը՝ դրսում, ուրացողների հետ...»[1]:

Բայց այս պարտաւորութիւններից ազատ չէ նաև պատարագիչ քահանան. վերոյիշեալ պարտաւորութիւնն ունի նա, սակայն իբրև Քրիստոսի շնորհների պաշտօնեայ առաւել պարտք ևս ունի: Նրանք նախ պարտաւոր են զղջալ իրենց մեղքերը, պահքով և աղօթքով մաքրւել և երկրորդ՝ թէ՛ առանձին ու թէ՛ բոլոր միաբանութեան առաջ խոստովանութեամբ թողութիւն ստանալ և ապա բարձրանալ սեղանը: Նա պարտաւոր է զօրանալ հաւատքով և արիանալ առաքինի վարքով ամեն ժամանակ, երբ պատրաստւում է պատարագ մատուցել, ողորմութիւնը և առաքինական պահքը պէտք է նախորդեն նրա պաշտամունքին: Ուստի և նոյն Ս. Հայրապետը հրամայում է. «Եւ դուք, քահանաներ և սպասաւորներ, սուրբ խորհրդի մատակարարներ, ահով մօտեցէք, երկիւղով պահեցէք (պահքը), սրբութեամբ սպասաւորեցէք և զգուշութեամբ մատակարարեցէք: Արքունական գանձ ունէք, (ուստի) մեծ երկիւղով զգոյշ եղէք պահպանութեան մէջ, քանզի ձեզ համար էլ անտանելի տանջանքներ կան, եթէ տեղեակ էք չարի մասին, և երբ [նա] գալով յանդգնում է (մօտենալ) Քրիստոսի սուրբ մարմնին՝ վախենում էք խրատելով մերժել և յանդիմանել նրան»[112*]:

Ուրեմն քահանան նախ դատապարտւում է, եթէ անարժանապէս է մատուցանում Պատարագը և երկրորդ՝ դատապարտւում է, եթէ

[1] Հարց., էջ 634:

[1] Մանդ. 166-173:

թերահաւատութեամբ մոլորուելով, մարմնաւոր շահի համար աչառութիւն ու երեսապաշտութիւն է անում և մեղաւորներին ու հրապարակական յանցաւորներին ու պիղծերին հաղորդում է՝ հակառակ Քրիստոսի պատուիրանին և ս. Հայրապետների ու ժողովների հրամանին[1]: Տալ սրբութիւնը «շներին ու խոզերին» անհամեմատ դատապարտելի է և գերագոյն անհաւատութեան նշան: Այդպիսիներին պէտք է քահանան դեռևս ապաշխարութեան կոչի, խրատի, ուղղի և յետոյ արժանացնի մեղսաքաւիչ ս. խորհուրդին: Ապա թէ ոչ՝ ինչպէ՞ս կարող է քահանան հաղորդել նրան, որ դեռ յայտնապէս կարօտ է ապաշխարութեան ու դարձի, և կեղծաւորութեամբ ու սրբապղծութեամբ ասել. «Մեր Տէր Յիսուս Քրիստոսի մարմինն ու արիւնը, թող քեզ փրկութիւն և առաջնորդ լինեն անվախճան կեանքում. ամէն»:

Վերոյիշեալ բոլոր սկզբունքներն ու կարգերը գեղեցկապէս ներկայանում են ս. Պատարագի արարողութեան մէջ, որում նախքան Պատարագի բուն արարողութիւնը խորհրդաւորապէս կատարւում է ամբողջ միաբանութեան թէ՛ արժանացման ու թէ՛ սիրոյ հաղորդակցութեան կարգը: Քահանայի զգեստաւորութեան միջոցին յիշեցւում է մաքրութեան անհրաժեշտութիւնը սաղմոսներով և 12 անգամ «տէր ողորմեա» կրկնել տալով: Ապա «Խորհուրդ խորին» գեղեցիկ շարականի մէջ ամփոփւում է Քրիստոսի փրկագործութեան խորհուրդը, յետոյ վերստին մաքրութեան սաղմոսն է ասւում (ԻԵ) և միայն այնուհետև ելնում է քահանան և թողութիւն խնդրելով պաշտօնակիցներից ու եղբայրներից, սեղան է բարձրանում: Եւ մինչդեռ մի կողմից խոստովանում է. «Մեծապէս ուրախացիր լուսոյ դուստր, Մայր Սուրբ Կաթողիկէ Սիոն քո մանուկներով՝ զարդարելով գեղեցկացիր պանծալի հարս, երկնանման լուսաճեմ խորան, որովհետև օծեալ Աստուածը՝ Էութիւնը առանց նւազելու էութիւնից միշտ քո մէջ է պատարագւում, ի հաշտութիւն Հօր և ի քաւութիւն մեզ բաշխում է Իր սուրբ մարմինն ու արիւնը»: Միւս կողմից յաճախ յիշւում է միաբանութեան

[1] «Արդ, նայիր քո մէջ, դու՝ քահանադ և ճանաչիր քեզ, թէ ի՞նչ է քո քահանայութեան արդիւնքը և ի՞նչ գործ է բաժին ընկել քեզ: Ոչ թէ քո ժողովրդի հերկողն ես և ոչ էլ արտը հնձողը և կալսողը, այլ կարգւեցիր ուսուցանելու և խրատելու, մերժելու և յանդիմանելու: Այս է քահանայութեան գործը և տևական պարտքը, ուստի նոյն պատճառով այդպիսի պատուով յարգւեցինք, և իշխում էք բոլորի վրայ, որովհետև այդպիսիներին էք քննում և յանդիմանելով մերժում», Մանդ., էջ 169:

ճշմարիտ հաւատքի մեծ նշանակութիւնն Աստծու առաջ. ինչպէս օր ննջեցելոց յիշատակի համար ասւում է. «Մանաւանդ, երբ հաւատքով ենք մատուցում Պատարագը, Աստուածութիւնը կը հաշտի և կը հանգստացնի նրանց հոգիները»[1]:

Այս ս. խորհուրդի հրաշալի բարձրութիւնն է պատճառը, որ Հայաստանեայց ս. Եկեղեցու ոչ միայն ամբողջ աստուածպաշտութիւնն էապէս նրա արարողութեան մէջ է ամփոփւում, այլև ամբողջ եկեղեցին իր յաղթապանծ անդրանիկներով, բոլոր պաշտօնեաներով և միաբաններով, սեռով ու հասակով իրենց հանապազօրեայ գոհաբանութիւններով, փառաբանութիւններով ու խնդրուածներով հանդիսաւորապէս ներկայանում են այստեղ և երկրպագում ու երկնային սրբասացութեանը երգակցում: Ս. Պատարագով երկինքն իջնում է երկրի վրայ և մեզ իր փառակցութեան մէջ ներգրաւում. որովհետև ս. Սեղանի վրայ Քրիստոս թագաւորաբար ու խորհրդաւորապէս բազմում է, ինչպէս Գողգոթայի վրայ, ըստ աստուածային յաւիտենական և ոչ ժամանակաւոր տնօրինութեան: Այնտեղ բաղարջ նշխարը և անապակ գինին քահանայի առ Հայր Աստուած աղօթելով և Քրիստոսի փրկագործական այս մեծ խորհուրդի տնօրինութիւնը պատմականապէս աղօթքի մէջ ամփոփելով՝ դառնում են Քրիստոսի մարմինն ու արիւնը, ըստ այնմ թէ՝ «օրհնութեան բաժակը, որ օրհնում ենք, միթէ՞ Քրիստոսի արեան հաղորդութիւնը չէ, հացը, որ բեկում ենք, մի՞թէ Քրիստոսի մարմնի հաղորդութիւնը չէ»[2]: Խորհուրդի կատարման համար քահանան նախ աղօթում է. «Սրա մէջ կատարիր Քո Միածնի մարմնի և արեան խորհուրդը, մեղքերի թողութեան դեղ պարգևիր այս հացը և բաժակը ճանաչողներին»: Ապա աղօթքի ընթացքում պատմում է խորհուրդի տնօրինութեան պատմութիւնը, ինչպէս պատմւած է Նոր Կտակարանում վերջին ընթրիքի Աւետարանում ու յայտնում է Քրիստոսի խօսքերի էութիւնը. «Առէք կերէք, այս է իմ մարմինը, որ յանուն ձեզ և շատերի բաշխւում է մեղքերի քաւութեան և թողութեան համար», և «բոլորդ խմէք սրանից, այս է Նոր Ուխտի իմ արիւնը, որ յանուն ձեզ և շատերի հեղւում է մեղքերի քաւութեան համար»:

[1] «Պատարագը վերաբերում է առաւելապէս ողջերին քան մեռեալներին, ինչպէս Պատարագի խօսքերն են սովորեցնում: Եւ այն յոյս և հաւատք ունեցողների համար է և ոչ թէ նա, ով դրսում է տալիս». Խոսրով Անձևացի Մեկն. Ժամ., էջ 418:
[2] Ա Կոր., Ժ 16, Հմմտ. Եղիշէ 204:

Յետոյ քահանան աղաչում է Աստծուց ուղարկել Իր մշտնջենակից Ս. Հոգուն «յառաջի եդեալ ընծայի» մէջ, երիցս աղօթում է մարմնի, երիցս արեան ու երիցս՝ մարմնի և արեան համար միասին՝ ասելով. «Որով այս հացն ու գինին օրհնելով (դրանք) ճշմարտապէս դարձնում ես մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի մարմինն ու արիւնը՝ Քո սուրբ Հոգով փոխարկելով»: Ըստ որում և Ս. Հոգու իջմամբ կատարւում է ս. խորհուրդը վերջնականապէս ու ճշմարտապէս: Այնուհետև Քրիստոսի մարմինն ու արիւնն ունենալով աստուածային զօրութիւն ու ներգործութիւն, ամենքիս համար լինում են ձերբազատում դատապարտութիւնից, «ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց» նաև սնունդ, հաղորդութիւն Քրիստոսի հետ ու զօրացումն աստուածպաշտական ճշմարիտ կեանքի մէջ: Եւ ինչպէս որ հաստատապէս այժմ Քրիստոսի հետ միանում ենք հաղորդութեամբ, սնւում ու զօրանում, այնպէս էլ համոզւած ենք, որ Նրա հետ կը լինենք և հանդերձեալում. ըստ որում և այդ հաւաստիութեան յայտարար է սեղանի անշարժ հաստատութիւնը ճշմարիտ վէմ Քրիստոսի վրայ[1]:

Հարկաւ այս փոխարկումը ոչ թէ տեսանելի, այլ խորհրդաւոր է, ուստի և Ս. Յովհան Մանդակունին գրում է. «Բայց ինչ տեսնում ես, սոսկ հաց և գինի մի՛ համարիր, քանզի ս. խորհրդի անհաւորութիւնը տեսանելի չէ, այլ իմանալի զօրութիւն է, որովհետև Քրիստոս մեզ ոչինչ տեսանելի չի աւանդել խորհրդի և մկրտութեան մէջ, այլ՝ իմանալի...: Եւ մենք ճշմարիտ հաւատքով իմանում ենք, որ Քրիստոս Ինքն է Սեղանի վրայ, որ Նրան ենք մօտենում, Նրան տեսնում, Նրան շօշափում, Նրան համբուրում, Նրան ենք առնում, ընդունում մեր մէջ և լինում Աստծու անդամներն ու որդիները»[113*]: Եւ ինչպէս տեսանք նաև ս. առաքելի խօսքերից, Նա «սրբութիւն սրբոց» է, անհաւոր է և անարժանութեամբ վայելողին պատժող, անարժանութեամբ մատուցանողին դատապարտող[2]. ըստ որում պէտք է միշտ յիշել ս. Հայրապետի խօսքը. «Երբ քո մտքի վկայութիւնը քո սրբութեան մասին չի վկայում՝ պարզ է, որ քո մերձենալը ս. խորհրդին համաձայն չէ Աստծու կամքին...: Եւ եթէ քո միտքը վկայում է սրբութեանդ մասին՝ քո մերձենալը համաձայն է Աստծու կամքին: Ուրեմն եթէ անմաքուր խղճով մերձենաս, իմացիր,

[1] «Ս. Սեղանի՝ սեան վրայ հաստատւած լինելը Տիրոջ՝ Խաչի վրայ բևեռներով գամւած լինելու օրինակն է և բեմից բարձր, սեան վրայ լինելը՝ դա Տիրոջ բարձրանալու նշանակն է, որպէսզի բոլորին դէպ Իրեն ձգի». Մաշտոց, Ս. Յովհան Իմաստ. Օձնեցի, էջ 5, 6, 7:
[2] Տե՛ս Պատարագամատոյց նաև Ընդհանր., էջ 135:

որ դատապարտւած դուրս կը գաս և բոլոր անօրէններից աւելի անօրէն կը լինես»[1]:

Այսպիսով իւրաքանչիւր հաւատացեալ վայելում է այն պատարագի շնորհը, որով Քրիստոս խորհրդաւորապէս պատարագում է իբրև «անարիւն զոհաբերութիւն» ս. սեղանի վրայ Իր մարմնով և արեամբ, ինչպէս արիւնալի զոհաբերութեամբ պատարագւեց խաչի վրայ: Այլև իւրաքանչիւր հաւատացող մասնակցում է այն տէրունական ընթրիքին, որին ներկայ էին միայն Քրիստոսի անձնուէր առաքեալները: Վերջապէս իւրաքանչիւր հաւատացող ընդունում է այն ս. խորհուրդը, որով ինքը մեռնում է մեղքի համար, նոր կեանք ստանում, միանում Քրիստոսի հետ և յաւիտենական կեանքի յարութեան լոյս ընդունում: Արդ, միութիւնը պինդ պահւում է Հայաստանեայց ս. Եկեղեցում, ըստ որում և քահանան բաշխում է թէ՛ մարմինն ու թէ՛ արիւնն այն բոլոր հաւատացեալներին, որոնք իրենց մեղքերը զղջալով և ապաշխարելով՝ զօրանում են հաւատքով ու մօտենում Քրիստոսին: Այդ միութեան փառաւոր հաստատութիւնն է, որ ըստ առաքեալի հրամանի քահանան Քրիստոսի միութեան օրինակով կարող է միմիայն մի անգամ մէկ նշխար և մէկ բաժակ պատարագել, որպէսզի ամենքս էլ միանանք ի մի Քրիստոս. «Որովհետև մի հաց, մի մարմին ենք բոլորս, քանի որ բոլորս էլ այդ միակ հացից ենք վայելում» (Ա Կոր., Ժ 17):

Հաղորդութեան խորհուրդի կատարման ու վարդապետութեան մէջ Հռոմ. Եկեղեցին չափազանց զանազանւում է մեզնից: Կաթոլիկներն ասում են, որ իբր թէ հացն ու գինին փոխարկւում են Քրիստոսի մարմնի և արեան այն ժամանակ, երբ քահանան ասում է Քրիստոսի խօսքերը «առէք» և այլն. ուստի և առաքելական պատարագամատոյցից բոլորովին դուրս են հանել Ս. Հոգու իջնումը խնդրող աղօթքը: Այս տեսութիւնը զարգացաւ նրանց մէջ գլխաւորապէս

[1] Մանդ., էջ 166, տե՛ս նաև Հարց. 339: Հաղորդութեան խորհրդաւոր բարձրութիւնը լաւ բնորոշւած է Ս. Ներսէս Շնորհալու թղթում. «Որովհետև, եթէ Աստծու կողմից Մովսէսին ասւեց (ոտքի) մահկանացու մաշիկով չկոխել այն վայրը, ուր երևաց Աստւածութեան հուրը, ապա որքան աւելի մեզ է անհրաժեշտ նախ վանել մեր միջից մեղքերի մեռելութիւնը և յետոյ միայն մերձենալ աստուածային խորհրդին, որովհետև մեր առջև ոչ թէ Աստծու հետ խօսելն է Մովսէսի նման և կամ Աստծու թիկունքը տեսնելը, այլ ձեռքով շօշափելն անշօշափելին և շրթունքներով համբուրել Սէրը և բերանով ճաշակել բոլորի Կերակրողին, ընդունել սրտի մէջ և հոգով միանալ Նրան և Աստւած լինել շնորհով ու միաւորւել Աստծու հետ». Ընդհանր. 74:

ԺԴ և ԺԵ դարում և ոչ մի արդարացուցիչ հիմք չունի: Մենք գիտենք, որ Քրիստոս «առէք»-ն ասելուց յետոյ պատուիրեց. «Այս արէք իմ յիշատակի համար» (Ղուկ. ԻԲ 19, Ա Կոր., ԺԱ 24, 25) և ուրեմն պէտք է Պատարագը կատարուի Քրիստոսի նմանողութեամբ, իսկ մեզ յայտնի է, որ Քրիստոս առնելով հացն ու գինին՝ նախ օրհնեց, յետոյ գոհացաւ և ապա հրամայեց ճաշակել՝ տալով աշակերտներին: Այդպէս էլ անում է Քրիստոնէական եկեղեցին առաքելական ժամանակներից սկսած, նախ աղօթելով առ Հայրն Աստուած[114*], ապա տալով Պատարագի կարգի պատմութիւնը, յետոյ աղաչելով Ս. Հոգու իջնումը և յետոյ միայն ժողովրդի փրկութեան համար նուիրելով: Այդպէս են թէ՛ բոլոր հին պատարագամատոյցները և թէ՛ եկեղեցական հայրերի՝ Կիւրեղ Երուսաղէմացու, Բարսեղ Մեծի, Յովհան Ոսկեբերանի և բազում ուրիշների վկայութիւնները[115*]:

Երկրորդ՝ Հռոմ. եկեղեցին ԺԲ դարից փոքր առ փոքր սկսեց և ԺԵ դարում Կոնստանցի, Բազելի ու Տրիդենտեան ժողովներով վերջնականապէս կարգ դարձնելով հակառակ է ընթանում Աւետարանին, երբ միմիայն Տիրոջ մարմինն է հաղորդում ժողովրդին, իսկ արիւնը վերապահում է միմիայն հոգևորականներին: Այս մոլորութիւնն ակներև է, որովհետև Քրիստոս, ինչպէս տեսանք, ոչ թէ միմիայն մարմինը տուեց, այլև արիւնը և պատուիրեց երկուսն էլ վայելել. այլև վերջնականապէս ասաց. «Եթէ չուտէք մարդու Որդու մարմինը և չըմպէք Նրա արիւնը, ձեր մէջ կեանք չէք ունենայ: Ով ուտում է Իմ մարմինը և ըմպում Իմ արիւնը, յաւիտենական կեանք ունի, և ես նրան վերջին օրը յարութիւն առնել պիտի տամ, քանի որ Իմ մարմինը ճշմարիտ կերակուր է և Իմ արիւնը ճշմարիտ ըմպելիք» (Յովհ. Զ 53-57, Ա Կոր., Ժ 15, 21, ԺԱ 23): Այս խօսքերի մէջ բազմիցս կրկնում է նոյն պատուէրը հակառակ Հռոմէական մոլորութեան: Նոյնն են հաստատում ոչ միայն եկեղեցական ս. Հայրերը, այլև Հռոմ. քահանայապետերը Ե դարում՝ Լևոնն ու Գելասիոսը. մինչդեռ հռոմէական եկեղեցու հետևորդներն իբրև մոլորութեան ապացոյց չունեն և ոչ մի վկայութիւն կամ հիմք, բացի անձնական բացատրութիւններից՝ թէ տաք երկրներում հիւանդները գինուց զզւում են և այլն[1]:

[1] Հմմտ. Հարց. 599. «Արիւնը յայտնապէս չէք տալիս և ծածուկ կերպով՝ մարմինը, որովհետև օրհնեալ մարմնից չէք տալիս, այլ՝ սոսկ հաց, որ բեմի վրայ է»: Տե՛ս. նաև Յակոբ պատրիարք. [Նալեան] Ճրագ ճշմարտութեան. Կ. Պոլիս, 1756:

Երրորդ՝ Հռոմէական եկեղեցու հետևորդները չարաչար մոլորուում են՝ զրկելով հաղորդութիւնից երեխաներին և թողնելով այդ նրանց գիտակցական հասակին: Այս մոլորութիւնը մտաւ այդ եկեղեցու մէջ ԺԲ դարից և եթէ նրանք կամենում են միմիայն գիտակցական հասատք ունեցողին հաղորդել, պարտաւոր են նոյնպէս միմիայն այդպիսիներին մկրտել և ոչ թէ նաև մանկանց: Եւ եթէ մանուկներն ըստ Աւետարանի (Ղուկ., ԺԸ 15) արժանի են մկրտութեան, անշուշտ արժանի են նաև Քրիստոսի մարմնի և արեան հաղորդութեանը, առանց որի նրանք «իրենց մէջ կեանք չունեն»: Զարմանալի է, որ հռոմէականներն իրենց մոլորութիւնը ծայրայեղութեան են հասցնում, արհամարհելով Քրիստոսի պարզ և ակնյայտ պատուէրն անգամ՝ «Սրանից ըմպէք բոլորդ» (Մատթ. ԻՁ 27)[1]:

Չորրորդ՝ Հռոմ. եկեղեցին Յունաց հետ համամիտ՝ թերևս երկու բնութեան վարդապետութեան ազդեցութեան տակ, սկսեց հաղորդութեան մէջ մի քանի կաթիլ գաղջ ջուր խառնել, իսկ յոյները մինչև իսկ բաղարջի փոխարէն խմորուն հաց գործածել: Սակայն Քրիստոս վերջին ընթրիքի ժամանակ ասաց՝ «Նոր ուխտի իմ արիւնը» և «այլևս որթատունկի բերքից չեմ խմի մինչև այն օրը, երբ ձեզ հետ կը խմեմ նորը իմ Հօր արքայութեան մէջ» (Մատթ. ԻՁ 28, 29, Մարկ. ԺԳ 25, Ղուկ. ԻԲ 18): Եւ այս խօսքերը պարզ ցոյց են տալիս, որ անապակ գինին կարող է նիւթ լինել Քրիստոսի անապական արեան: Իսկ Նրա կողից բխած վտակը արեան ու ջրի բաժանելով՝ տուեց մեզ մէկն իբրև նիւթ հաղորդութեան և միւսը, որ նշանակ էր Նրա մահուան, իբրև նիւթ մկրտութեան (Հռ. Զ 3): Այդպէս են ասում և եկեղեցական հին Հայրերը, ինչպէս Եփրեմ Խուրին, Գրիգոր Նիւսացին[116*], այլև Յովհան Ոսկեբերանը, որ գրում է. «Եկեղեցին շինեց երկու աղբիւրներից, որոնք դուրս եկան Տիրոջ կողից, քանզի ջրով ծնուում ենք վերստին՝ աւազանով և սնուում ենք արեամբ՝ ճաշակելով Նրան»[117*]: Այդպէս և երգում է Ս. Ներսէս Շնորհալին.

«Կրկնավտակ կողին աղբերք
Եկեղեցի իւր հաստատի.
Զրովքն մաքրի՝ զարիւնն ըմպէ՝
զՈրդի ընդ Հօր փառաւորէ»[2]:

[1] Տե՛ս նաև Փարպ., էջ 210:
[2] Հմմտ. Մեկն. Աւետ. Մատթ. Շար. 268, 272, Հարց. 341, Գրիգոր Արշար., էջ 10. «Կողի մէջ խոցեց և մեզ համար, յանուն մեր կեանքի, այնտեղից փրկութեան, ապաշխարութեամբ լուացելով մաքրելու (նպատակով), և Ինքը յանուն մեզ հաց եղաւ և

Այսպէս և խմորուն հացը Ս. Գրքում պիղծ է կոչուած և մեղքի նշան է համարուում[1], իսկ բաղարջ մաքուր հացը, որ ուտում էին հին Ուխտում իբրև նախատիպ Քրիստոսի սուրբ մարմնի, և դրւում է առաջաւորաց սեղանի վրայ, «որպէս Քրիստոսի մարմնի օրինակ», պատշաճ է «կուսածին և անախտական մարմնին»[2]:

Եւ հինգերորդ՝ շատ նշխարով, մի օրում մի քանի անգամ են պատարագում հակառակ Քրիստոսի միութեան օրինակի: Այդպէս և յաճախ Պատարագը ոչ թէ միաբանական աղօթքով է մատուցւում, այլ մի եկեղեցում մի քանի քահանաներ լռիկ պատարագում են, որ հակառակ է Քրիստոսի պատարագի խորհուրդին[3]:

Բողոքականները ևս հակառակ ընթանալով Կաթոլիկ եկեղեցու այն վարդապետութեանը, որով ս. խորհուրդն առանց մարդու հաւատքի նիւթականապէս ներգործող է ներկայացնում, ուսուցանում է մոլորաբար, որ թէև հաղորդութիւնը խորհուրդ է և յիշեցնում է մեզ Գողգոթայի պատարագը, սակայն չունի նոյն պատարագի նշանակութիւնը և բաղարջն ու գինին չեն դառնում Քրիստոսի մարմինն ու արիւնը: Այլ իբր թէ հաղորդութեան մէջ հացն ու գինին մնում են նոյնը սոսկ էապէս ու խորհրդաւորապէս, սակայն Քրիստոս աներևութապէս ներկայ է լինում իր մարմնով «հացի մէջ, հացի հետ ու հացի տակ», ըստ Լութերի: Ուրեմն հացը, ըստ նրանց, տեսանելի նշանակն է, որով

Իր արիւնը մեզ տուեց ըմպելու, որպէսզի մարմինը խառնւի մեր մարմնին և արիւնը՝ արեանը, որպէսզի Աստուածութիւնը միացնի մեր հոգիներին, մեզ՝ Սուրբ Հոգուն և վախճանին էլ մեզ Իր Աստուածութիւնը բնակակից անի» Ս. Ներսէս Մեծն (Բուզանդ, էջ 78): «Այնտեղից շուտ դուրս եկաւ սուրբ աւազանի լացման համար, և արիւն՝ որպէս Նոր ուխտի բաժակ, որպէսզի ջրով մաքրենք մեր անձերը մեղքերից, և արեամբ չարչարակից լինենք նրա Խաչի մահուանը». Եղիշէ 285. Տե՛ս նաև Դրախտ. 336-378, Պօղոս Տարօնեցի, անդ. էջ 183-212:

[1] Մատթ., ԺԶ 6, 11, Մարկ. Ը 15, Ղուկ., ԺԳ 21, Ա Կոր., Ե 7, 8, Ա Թագ., ԻԱ 4, Եղիշէ 245:

[2] Ընդհանր., էջ 133, 177-183. «Բոլորին ովքեր դուրս են գալիս եգիպտական անհաւատութիւնից և ճանապարհորդում աւետեաց վերին աշխարհը, օրինադրում է իրենց հետ չվերցնել մեղքի խմորը, այլ կերակրւել անապական և աստուածային հացով՝ զգալիով և իմանալիով, այսինքն՝ Աստծու մարմնով և խօսքով, որ դուրս է գալիս Նրա բերանից: Այլ նաև մանան, որ համաձայն Պօղոսի, օրինակն էր կենաց հացի, անապատում անխմոր էին ուտում և ոչ թէ խմորով». Տե՛ս նաև Դրախտ., Պօղ. Տար.:

[3] Մեր մէջ մի որևէ եկեղեցում սեղանների բազմութիւնը լոկ ճոխութեան համար է, որի դէմ բողոքում է Ներսէս Լամբրոնացին, Մեկն., էջ 108:

Քրիստոս հաղորդակցում է իր հաւատացեալների հետ: Սակայն ինչպիսի՞ նշանակ կը լինի, երբ Քրիստոս ներկայ է նրա մէջ. կամ Քրիստոս ինչպէ՞ս կարող է մարդկային բնութեամբ էապէս բողոքականների բոլոր հաղորդութիւնների մէջ ներկայ լինել: Եւ մի՞թէ այդ հակառակ չէ Աւետարանին[1], քանի որ բոլորովին խառնում է ու ծիծաղելի դարձնում Քրիստոսի մարդեղութեան խորհուրդը, մանաւանդ, որ հաղորդութիւնն էլ աւելորդ է դառնում, որովհետև ըստ այդմ իրաքանչիւր բողոքական հաց ուտելիս ու գինին խմելիս հաղորդւում է Քրիստոսի մարմնին և արեանը: Հետևաբար և հաղորդութիւնը ոչ միայն պատարագ չէ, այլև Գողգոթայի հետ կապ չունի, մեռնողներին հաղորդելու պէտք չկայ և մինչև անգամ չպէտք է երկրպագել հաղորդութեանը կամ թէ պէտք է հացն ու գինին միշտ երկրպագել, որոնք անբաժան են Քրիստոսից ըստ այդ մոլորութեան: Բայց նրանցից աւելի առաջ գնացին վերանորոգւած բողոքականները և սկսեցին ուսուցանել (Ցւինգլի ու Կալւին), որ Քրիստոս ներկայ չէ հաղորդութեան մէջ, այլ հաւատացեալները, և ոչ անհաւատները, ուտելով հացն ու ճաշակելով գինին, հոգևորապէս սնում են Քրիստոսի մարմնից և արիւնից, իսկ դրանք նշանակներ են և միայն յիշեցնում են մեզ Քրիստոսի պատարագը: Այս եզրակացութեան եկան այդ երկու աղանդաւորները իրենց վիճաբանութիւնից յետոյ:

Այս հերետիկոսութեան դէմ բաւական է, եթէ յիշենք Քրիստոսի այն խօսքերը, որոնք գայթակղեցնում էին հրեաներին. Նա ասաց. «Ես եմ հացն կենաց, որ երկնից իջեալ: Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ՝ կեցցէ ի յաւիտեան. և հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի»: Հրեաները վիճեցին, թէ ինչպէս կարելի է, որ Քրիստոս տայ իր մարմինն ուտելու, սակայն Նա հաստատեց իր ասածը[2]. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ չուտէք մարդու Որդու մարմինը և չըմպէք Նրա արիւնը, ձեր մէջ կեանք չէք ունենայ: Ով ուտում է Իմ մարմինը և ըմպում Իմ արիւնը, յաւիտենական կեանք ունի, և ես նրան վերջին օրը յարութիւն առնել պիտի տամ, քանի որ Իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, և Իմ արիւնը՝ ճշմարիտ ըմպելիք: Ով ուտում է Իմ մարմինը և ըմպում Իմ արիւնը, կը բնակւի Իմ մէջ, և ես՝ Նրա մէջ: Ինչպէս Հայրը, որ ինձ ուղարկեց, ապրում է, ես էլ ապրում եմ Հօր միջոցով, և ով ուտում է Ինձ, նա էլ

[1] Մատթ., ԻԸ 5-7, Մարկ., ԺԷ 6-7, Յովհ., Ի 17-19, Գործք. Ա 11, Գ 21:

[2] Յովհ. Զ 48-59:

կապրի Իմ միջոցով: Այս է հացը, որ երկնքից է իջած. ոչ այնպէս, ինչպէս մանանան, որ ձեր հայրերը կերան և մեռան. ով այս հացն ուտում է, կապրի յաւիտեան» (Յովհ. Զ 54-59): Այս խօսքերի համար աշակերտները գայթակղելով հեռացան և Քրիստոս հարցրեց 12 առաքեալներից թէ արդեօ՞ք նրանք էլ են ուզում գնալ, բայց նրանք չուզեցին հեռանալ: Եւ վերջին ընթրիքին սահմանեց Քրիստոս, որ հաւատացեալները միշտ հաղորդուեն իր մարմնին և արեանը, ինչպէս տեսանք: Ուստի և առաքեալը պատուիրում է անարժանութեամբ չճաշակել, որովհետև անարժանութեամբ ճաշակելը դատապարտութիւն է անձին (Ա Կոր., Ժ 16-21, ԺԱ 23-29): Թող ուրեմն նա դատապարտի նրանց «Օրհնութեան բաժակը, որն օրհնում ենք, արդարև հաղորդութիւն չէ՞ Քրիստոսի մարմնի: Ինչ որ հեթանոսները զոհում են, դևերին են զոհում և ոչ՝ Աստծուն: Չեմ ուզում, որ դուք դևերին հաղորդակից լինէք, քանզի չէք կարող խմել և՛ Տիրոջ բաժակից և՛ դևերի բաժակից: Եւ չէք կարող վայելել և՛ Տիրոջ սեղանից, և՛ դևերի սեղանից» (Ա Կորնթ., Ժ 16-21): Այսուհետև ով որ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ բաժակն անարժանօրէն, պարտական պիտի լինի Տիրոջ մարմնին և արեանը» (ԺԱ 27):

ԽԵ

Ե ՊՍԱԿ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ

Պսակը Եկեղեցու այն սուրբ խորհուրդն է, որով երկու հեռաւոր անձնաւորութիւններ՝ այր ու կին՝ ստանում են աստուածային օրհնութիւն, խորհրդաւորապէս միանում են իրար հետ, մի մարմին են դառնում և մշտական կենակցութեան ուխտի մէջ մտնելով, ըստ Քրիստոսի և իր Եկեղեցու միութեան օրինակին նուիրւում են միասին Աստծու արքայութեան առաջադիմութեան համար աշխատելուն և նրա բաղկացուցիչ ընտանիքը կազմելուն[1]: **Ուստի և պսակած ամուսնութիւնն ամենասերտ դաշն է, ամենասերտ կապն է, ամենասերտ ուխտն է,**

[1] Ծն., Բ 18, 24, Թ 1, Եփ., Ե 23, Ծն., Ա 28, Եփ., Զ 4, Ա Տիմ., Դ 1-5, Գործունեայ զոյգի այդպիսի մի օրինակ են Ակիւղայ և Պրիսկիղայ ամուսինները. Գործք., ԺԸ 2-26, Հռ., ԺԶ 3, Ա Կոր., ԺԶ 19, Բ Տիմ., Դ 19:

որ կարող են առհասարակ երկու մարդ ունենալ իրար հետ: Ոչ ազգականութիւնն ու ոչ բարեկամութիւնը երբեք չեն կարող այդ աստիճանի մտերմութիւն ներշնչել մի դաշնակցութեան կամ ուխտի մէջ: Մարդկային ոչ մի դաշն չի կարող տղամարդուն կամ կնոջն այնքան նեցուկ ու խրախոյս լինել աստուածային արքայութեան ընտանիք կազմելու գործի մէջ, որքան այն ամուսնութիւնը, որ Եկեղեցու այդ սուրբ խորհուրդով մտնում է Աստծու օրհնութեան վայելքների ու Նրա արքայութեան անդամակցութեան մէջ: Աստծու արքայութեան մշտական ընտանիքը լինելու համար անհրաժեշտ է, որ Աստուած ընդունի ամուսնացողներին Իր արքայութեան ընտանիք և առատապէս պարգևի նրանց Իր շնորհները, ապա թէ ոչ՝ ամուսնութիւնը կը դառնայ լոկ աշխարհային մի պատահականութիւն և անցողիկ գործ, չի ծառայի առաքինութեանն ու վեհութեանը, տևական նպատակներ չի ունենայ, մարմնականը կը տիրապետի և մարմնապէս առաւել ուժեղն իր քմահաճոյքներին կը ծառայեցնի ամուսնութիւնն ու իր հաւասարին կամ կողակցին: Ուստի Քրիստոս առանձնապէս շեշտում է աստուածային տնօրինութեան այս սուրբ խորհուրդը, ասելով. «Տղամարդը պիտի թողնի իր հօրը և մօրը ու պիտի գնայ իր կնոջ ետևից, և երկուսը մէկ մարմին պիտի լինեն: Ապա ուրեմն ոչ թէ երկու, այլ մէկ մարմին են: Արդ, ինչ որ Աստուած միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ., ԺԹ 5-6): **Ուրեմն իւրաքանչիւր տղամարդ բաժանելով իր ծնողներից, իր ազգային ընտանիքից, առնում է մի այլ կին, նրա հետ մի մարմին է դառնում Աստծու սուրբ խորհուրդով և օրհնութեամբ** ու հակառակ մարդկային բոլոր չար հակումների և անասնական չարակամութեան՝ մի նոր ընտանիք է դառնում երկնաւոր արքայութեան մէջ (Ա Տիմ., Դ 1-8, Եբր., ԺԳ 4):

Աստուած ստեղծելով Ադամին և Եւային, սահմանեց ամուսնութեան միութիւնը և ապա «Աստուած նրան օրհնեց և ասաց. «Աճեցէք և բազմացէք»[1]: Եւ քանի որ Աստծու ամբողջ ստեղծագործութեան կատարումը մարդով եղաւ, ամենայն ինչ մարդու համար ստեղծուեց, մարդը դարձաւ ամեն արարածների տէրն ու նպատակը և Աստծու Միածին Որդին մարդու համար եկաւ աշխարհ, պարզ է, **որ այր ու կին ևս Աստծու օրհնութեամբ պէտք է ընտանիք դառնան** և Աստծու արքայութեան տարր կազմելով՝ ծառայեն նրա զարգացմանը երկրի վրայ: Թերի կը լինէր քրիստոնէական եկեղեցու աստուածային շնորհաբաշխութեան շրջանը,

[1] Ծննդ., Բ 22-24, Մատթ., ԺԹ 13-15:

եթէ անհատին վերածնելուց յետոյ, ամեն շնորհներ տար մարդկանց հոգով սրտով առաջադիմելու աստուածային ճանապարհի վրայ ու նրա արքայութիւնը մտնելու, իսկ նոյն այդ արքայութեան անդամներ ընծայող դաշնակիցներին սրբութեամբ, աստուածային օրհնութեամբ ու ս. խորհրդով չդարձնէր Աստծու արքայութեան ընտանիքը և կամ սիրոյ միութիւնը (Յովհ., Բ 1-11): Աստուած սէր է և մեր երանութիւնը իրագործւում է սիրով Աստծու հետ միանալով. հետևաբար չկայ սէր, չկայ երանական միութիւն այնտեղ, որտեղ չկայ Աստծու օրհնութիւնը: Իսկ միութիւնը, որ սիրոյ և ճշմարտութեան միութիւն չէ, չի կարող Աստծու արքայութեան իրականացման տարր կազմել այս աշխարհում, չի կարող Հայաստանեայց ս. Եկեղեցու հիմնական պատկերը դառնալ: Ինչ անհատ խորթ է Աստծուց կամ Քրիստոսի հետ միացած չէ ու Քրիստոսի մարմինը չէ, նա կտրուած է Եկեղեցուց, նա կանգնած է առանձնակի իբրև եսապաշտ, որ դեռ կարօտ է Աստծու ընդհանուր նախախնամութեան դաստիարակութեանը: Ըստ այսմ, ինչպէս որ Քրիստոս վերջնականապէս ճշտեց ու սրբագործեց այն բոլոր ճանապարհները, որոնցով պէտք է մտնենք Աստծու արքայութիւն, այնպէս էլ հաստատուն, սուրբ և աստուածադիր հիմունքների և սկզբունքների վրայ հաստատեց այն ուխտը, որտեղից պէտք է Աստծու արքայութեան համար երկիւղած ու ճշմարտասէր հաւատացեալները, առաքինի ու աշխատասէր անձինք, Աստծու որդիներ դուրս գան, և կամ թէ որ պէտք է ներկայացնի Եկեղեցու տարր կազմող պատկերը, սիրոյ արտաքին իրականացումը: Այնպէս որ ամուսնութեան մէջ մարմնականը չպէտք է նպատակ լինի, այլ հոգևորը, սիրոյ իրականացումը, ինչպէս որ առաքեալն է ասում. «Նրանք, որ կին ունեն, այնպէս ապրեն, որպէս թէ՝ ունեցած չլինէին» (Ա Կոր., Է 29):

Այդ պատճառով և ս. Պօղոս առաքեալը խօսելով ամուսինների ճշմարիտ սիրոյ մասին, շեշտում է ամուսնական կապակցութեան մեծ նշանակութիւնն՝ ասելով. «Այս խորհուրդը մեծ է, բայց ես ասում եմ Քրիստոսի և եկեղեցու վերաբերեալ» (Եփ., Ե 32), այսինքն՝ նման է և փոքրիկ պատկեր է այն սերտ միութեան, որ կայ երկնաւոր փեսայ՝ Քրիստոսի և երկրաւոր հարսն՝ եկեղեցու մէջ: Ըստ որում «այս մարմնաւոր հարսանիքը հոգևոր հարսանիքի և Աստծու հետ մեր հոգիների միաւորելու խորհուրդն ունի, ինչպէս ասում է առաքեալը». գրում է Ս.

Գրիգոր Տաթևացին[1]: Այդ է պատճառը, որ բարձր առաքինութեան ձգտող հոգևորականը նիւրւում է Քրիստոսին և կուսակրօն կեանքով կապւում Հայաստանեայց Ս. Եկեղեցու հետ[2], որովհետև ինչպէս ասացինք, ընտանիքը սիրոյ իրականացումն է, որով Աստծու արքայութեան համար սպասաւորւում է կամ որդիներ պարգևելով, կամ սիրայորդոր գործունէութեամբ և կամ այդ կրկնակի արդիւնքով: Այնպէս որ, երբ մէկ հաւատացեալ կարողանում է գերագոյն առաքինութեան նիւրւել և Քրիստոսի եկեղեցու հետ միացած կամ Քրիստոսի հետ կապած եկեղեցու փեսայ դառնալով գործել Աստծու արքայութեան համար, նրան պէտք չէ ամուսնութիւն: Ուստի և Քրիստոս ասում է. «Բոլորն ընդունակ չեն այդ բանին, այլ նրանք, որոնց տրուած է»[3]: Կուսակրօնների գոյութիւնը Հայաստանեայց Ս. Եկեղեցում թէ՛ իրականացումն է Քրիստոսի պատուէրի, առանց որի կը զրկուէր նա բարձր առաքինութեան ճանապարհից և քրիստոնէական բարձր գաղափարն անիրագործելի կը դարձնէր, և եթէ միւս կողմից կուսակրօնութիւնը մի տեսանելի յարացոյց է, որ ընտանիքն Աստծու արքայութեան արտաքին տարր կազմող պատկերն է եւ սիրոյ արտաքին իրականացումը: Մինչդեռ ամուսնացած հոգևորականների գոյութիւնը Հայաստ. Ս. Եկեղեցում ակներեև ապացոյց է, որ ամուսնութիւնը ոչ թէ խոտելի է, այլ ընդհակառակը՝ աստուածային մի կարգաւորութիւն է և Աստծու առաջ հաճելի:

Այսպիսով Հայաստ. Ս. Եկեղեցին թէ օրհնութեամբ և թէ օրինակով հաստատում է սիրոյ արտաքին իրականացումը կամ ընտանիքը, որ ներկայացնում է իր մէջ մարդկային սիրոյ ամենասերտ կապակցութիւնը: Սակայն ընտանիքը միմիայն իր գոյութեամբ չի ծառայում սիրոյ նպատակին, այլև իր գործունէութեամբ: Ինչպէս որ եկեղեցին իր ընտանիքով է ներկայացնում սիրոյ արտաքին իրականացումը, այնպէս էլ ընտանիքի միջոցով է ընդարձակում սիրոյ շրջանը: Ըստ այսմ ընտանիքը թէ սիրոյ արտաքին իրականացումն է և թէ իրականացուցիչը: Իբրև սիրոյ իրականացուցիչ՝ ընտանիքը թէ սիրոյ կապերն է բազմացնում և ընդարձակում և թէ ինքը սիրոյ վարժարան է դառնում, բնականապէս սովորեցնելով մարդկանց և գործնականապէս վարժեցնելով սիրոյ

[1] Ամր. քարոզ., էջ 199, Ս. Գրիգոր Նարեկ. Մեկն. Երգ երգոցի [Մատենագր., էջ 280-366] [118*]:
[2] Մատթ., ԺԹ 11-12, Ա Կոր., Է 8, տես եւ վարը գլ. ԽՋ:
[3] Մատթ., ԺԹ 11, Ա Կոր., Է 1, 26, 28 Կող., Բ 18, Ա Տիմ., Դ 2-3:

զգացումներին համեմատ գործունէութեան մէջ: Այդպիսի վարժութիւնը սկսւում է նախ երկու ամուսինների, ապա ծնողների ու որդիների, յետոյ եղբայրների ու քոյրերի, այնուհետև ամուսինների և ազգականների, ընտանիքի և ազգականների մէջ և այլն և այլն, այնքան ընդարձակութեամբ, որքան նպաստում են հանգամանքների ու յարաբերութիւնների բարդութիւնները[1]: Ըստ որում ոչ մի տեսական բացատրութիւն չի կարող այնպէս պարզել ու հաստատել սիրոյ որպիսութիւնը մարդկանց հոգու մէջ, որքան ընտանեկան սիրոյ օրինակն ու վարժութիւնը: «Քո ընկերոջը սիրիր քո անձի պէս» խօսքն իսկապէս ընտանիքի մէջ է իր կատարումը ստանում և ապա ճիւղաւորւում դէպի դուրս:

Քանի որ ընտանիքն այսքան մեծ դեր ու մեծ նշանակութիւն ունի Հայաստանեայց Ս. Եկեղեցում, պէտք է անշուշտ Աստծու պատուիրանների համաձայն հիմնադրուի ու իր կենսունակութիւնը ստանայ, որպէսզի կարողանայ արժանանալ կամ վայելել աստուածադիր ս. պսակի օրհնութիւնը: Այս սկզբունքն արտայայտուած է նախամարդու ստեղծագործութեան մէջ. Աստուած ստեղծեց կնոջը, արտայայտելով իր կամքը՝ «նրա նմանութեամբ մի օգնական ստեղծենք նրա համար» (Ծննդ., Բ 18): Այդ ըմբռնեց և Ադամը, երբ ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ մարմնից»: Այս նմանութիւնը մի հիմնական սկզբունք էր, որից յետոյ Աստուած օրհնեց նրանց ասելով՝ «Աճեցէք և բազմացէք և լցրէք երկիրը և տիրեցէք դրան», այսինքն պատուիրեց «քրտինքով աշխատել»[2] և զաւակներով աճել ու տիրել[3]:

Աստծու որոշած հիմնական սկզբունքը, այսինքն՝ նմանութիւնը, կարող է լինել մարմնաւոր և հոգևոր, որոնցից բխում են բնականաբար երկու կարգի պայմաններ. նախ մարմնաւոր կանոնաւորութիւն 1. առողջութիւն, 2. հասունութիւն ու 3. չափահասութիւն, իսկ երկրորդ՝ հոգեկան կեանքի համեմատութիւն՝ 1. միահաւատութիւն, 2. ամուրիութիւն ու 3. փոխադարձ սերտ սէր:

Մարմնաւոր կանոնաւորութիւնն անհրաժեշտ է ամուսնական կապակցութեան համար և ինքնըստինքեան հասկանալի է, որովհետև

[1] Ղուկ., ԺԴ 12, ԻԱ 16, Հռ., Թ 3:
[2] Ծննդ., Գ 16, 17, Բ 15, Ա 26-28, Բ Թես., Գ 10:
[3] Ծննդ., Ա 28, Թ 1, 7:

առողջութիւնը պէտք է այնքան նպաստաւոր լինի, որ արգելք չդառնայ կենակցութեան, ինչպէս լինում է անբուժելի ցաւերի ժամանակ, որպիսիք են՝ հիւծախտը, խելագարութիւնը և այլն: Չափահասութիւնը նոյնպէս մի անհրաժեշտ պայման է, որ և զուգադէպ պէտք է լինի երկու ամուսինների մէջ, ըստ որում կինը պէտք է չափահաս լինի (17 տարեկան) և տղամարդն առաւել տարիներով (20-25)[119*]: Իսկ հասունութիւնը մի անհրաժեշտ պայման է թէ բժշկական առողջապահական, այսինքն՝ մարմնապէս ու հոգեպէս առողջ սերունդ ունենալու, և թէ սիրոյ ու բարոյականութեան գաղափարի հաստատութեան տեսակէտից, ինչպէս ասացինք վերը: Այս որոշուած է Ս. Գրքում արդէն իսկ ստեղծագործութեան ժամանակից՝ «Պիտի թողնի իր հօրն ու իր մօրը և պիտի գնայ իր կնոջ յետևից և երկուսը կը լինեն մէկ մարմին»: Մովսէսն էլ սահմանում է այս սկզբունքը գրեթէ մինչև հինգերորդ աստիճանը[1]: Նոյն սկզբունքը հաստատուած է և Նոր Ուխտի սրբագործմամբ[2]: Հայաստանեայց Ս. Եկեղեցում հաստատութիւնը սահմանուած է բնական ազգակցութեան մէջ եօթը պորտի շրջանում, այսինքն՝ կարող են ամուսնանալ երկու գծի ծոռնը առնի կամ մի զոյգի առնը կոռնի հետ թէև բժշկական տեսակէտից սրանք ևս չեն կարող ամուսնական վերստին կապակցութեան և ուրեմն որդեծնութեան համար բարենպաստ ու բարեյաջող համարուել: Որքան տարորոշ ընտանիքներից են ամուսնացողները, այնքան աւելի յուսալի է, որ միանման և միայար հիւանդութիւններ չեն հանդիպի իրար: Միւս կողմից՝ որքան հեռու ընտանիքներից են ամուսնացողները, այնքան բարեկամներով առաւել ևս ապահովուելու հնարաւորութիւն են գտնում: Եւ ինչպէս բնական ազգակցութիւնը, նոյնպէս և հոգևորը մեծ նշանակութիւն ունի, ուստի և խնամութիւնը թոյլատրւում է ազատապէս նոյն աստիճանների մէջ, աւազանի

[1] Ծննդ., Բ 24. «Որևէ մէկն իր արիւնակից հարազատին թող չմօտենայ», Ղևտ., ԺԸ 6-25, Բ Օր., ԻԲ 30, ԻԷ 21:
[2] Մատթ., ԺԹ 5, Մարկ., Զ 18, Ա Կոր., Ե 1: «Պատուիրէք նրանց, որպէսզի տհասները չխօսեն կանանց հետ, նաև՝ հասունացածներին՝ առանց իրար տեսնելու ցանկանալ մէկմէկու: Նաև դուք՝ քահանաներ, տհասների պսակն ամենևին չօրհնէք մինչև նրանք գան հասուն տարիքի: Չհամարձակուէք իրար չտեսած, քմահաճոյքի համար (ամուսնանալ ցանկացող) հասունացածների (պսակը օրհնել) առանց քննութեան ու նրանց հարցնելու. չլինի՞ թէ ծնողների ստիպողութեամբ, հակառակ իրենց կամքի լինի միաւորելը: Եւ այսպիսի հարսանիքները չհամարձակուէք յանձն առնել, որովհետև մինչև օրս այդպիսի անկարգութիւններից հոգևոր և մարմնաւոր բազում վնասներ եղան աշխարհում», Ս. Սահակ Պարթև[120*]:

ծննդեամբ արգելում են վեց աստիճանով, իսկ որդեգրութեամբ՝ չորսով: Ներելի հանգամանքներում կանոնադրական բացառութիւններ անելը՝ ապաշխարանք նշանակելով, **Հայրապետական իրաւունք է ու բարեհայեցողութեան առարկայ:**

Երկրորդ կարգի մէջ հոգեբանական տեսակէտից դատելով անտարակոյս անհրաժեշտ է փոխադարձ սէր, որպէսզի ամուսինները համաշունչ լինեն և ոչ թէ խորշեն ու միմիայն կենդանական կեանքի համար հանդուրժեն դէպի իրար՝ առանց յարատևութեան: Իսկ այդպիսի սիրոյ հիմքն է նախ միահաւատութիւնը, որովհետև հաւատքից է[1] բխում մարդու հոգեկան աշխարհի բովանդակ կեանքն ու հայեցողութիւնը, և երկրորդ՝ **անփորձ, կուսական քնքշութիւնը, որ կարող է նորապէս հակել, տրամադրել ու կապակցել սիրոյ նոր պահանջների կողակցութեան մէջ. և անխզելի միութիւն դառնալ իր կողակցի հետ:** Այսպիսի կանոնաւոր կապակցութեամբ միայն կարող են պսակողները լինել՝ «Մէկ մարմին՝ միաւորած հեզութեան հոգով, իրար սիրել պարկեշտ վարքով, անբիծ հոգով՝ առանց ամօթի, առանց լկտիութեան, պատրաստ լինել բարի գործերի համար», «սուրբ և անարատ միաշունչ և միախորհուրդ», որովհետև ինչպէս երկու ամուսիններն են հոգով ու մարմնով առանձին, այնպէս է լինում նաև նրանց կապակցութիւնն ու նրանց կազմած ընտանիքը: Ինչպէս նրանց հոգեկան կեանքն է, այնպէս արտայայտւում է նաև նրանց սիրոյ կապը և ամբողջ ամուսնական կենակցութիւնը: Միայն այդպիսի պսակողները կարող են ծառայել Աստծու դրած ամուսնական նպատակին, ըստ որում և միայն այդպիսիների վրայ Հայաստանեայց Ս. Եկեղեցին կարող է պսակ դնել և ուրախութեամբ երգել. «Ուրախ եղիր, ցնծա, հարսնացեալ ս. Եկեղեցի, պայծառացրու քո հաւատացեալներին՝ օրհնաբանելու դէպ քեզ լոյսի շող ծագեցնողին, Մայր Եկեղեցի»:

Սոյն այս բոլոր սկզբունքները թէ՛ սաղմոսներով, թէ՛ երգերով, թէ՛ ընթերցւածներով, թէ՛ աղօթքներով ու թէ՛ տեսանելի արարողութեամբ

[1] «Եւ միայն մեզնով չէ, որ Քրիստոսի անունը հաւատքով կրում ենք, այլ նաև նրանով, որ մէկ անգամ աշխարհի իրերը պաշտելով, եկեղեցուց դուրս եղած բաներն իսկ հաւատքով են կարգաւորում: Հաւատքով է նաև ամուսնութեան օրէնքը օտարներին կարգում միաբան հաւանութեան մէջ: Օտար մարդը օտարի հետ ամուսնութեան հաւասարութեամբ տէր է լինում բերդերի, գանձերի և գերդաստանների», Կոչումն ընդ., էջ 87:

ներգործում են այն հաւատացեալների վրայ, որոնք կամ պսակելով կամ ներկայ գտնելով մասնակցում են պսակի այս վեհ խորհրդին: Սակայն մարդու հոգևոր աշխարհի որպիսութիւնից ու նրա հայեցողութիւնից է կախւած՝ թէ նա ինչպիսի աչքով կը նայի իր կեանքի այդ մեծ քայլի վրայ և ինչպիսի՞ սրտով կը մտնի այդ վսեմ միութեան մէջ. արդեօ՞ք սուրբ և անկեղծ հաւատքով, հոգով և զգացմունքով, թէ՞ կեղծաւորութեամբ ու լկտութեամբ: Ինչպէս այդ քայլը կը լինի, այնպէս կորոշւի և նրա ապագան, և ինչպէս մարդու հոգեկան աշխարհն է, այնպէս կը ներկայանայ նրան ամուսնութեան նշանակութիւնը նմանապէս: «Ամեն ինչ մաքուր է խղճմտանքով մաքուր եղողների համար, բայց պիղծերի և անհաւատների համար ոչ մի բան մաքուր չէ: Եւ նրանց միտքն ու խղճմտանքը պղծւած են: Խոստովանում են, որ գիտեն Աստծուն, բայց իրենց գործերով ուրանում են նրան. պիղծ են, անհնազանդ և ամեն բարի գործի համար՝ անպէտք» (Տիտ., Ա 15):

Այժմ հարց է առաջ գալիս այրիների կրկնամուսնութեան ու պսակի անլուծելիութեան վրայ:

Պսակի ս. խորհրդի էութիւնն ու ամուսինների մի մարմին լինելը պարզապէս ցոյց են տալիս, որ **պսակը մի անգամ է կատարւում և ամուսնութիւնը մի անգամ է կայանում:** Պսակելիս ամուսինները խոստանում են իրար պատկանել ցմահ ըստ որում և ս. Աւետարանի պատուէրով տղամարդը խոստանում է սիրել իր կնոջն իր անձի պէս, որ նշանակում է թէ ամենայն ինչ պատրաստ լինել զոհելու նրա համար իբրև ճշմարիտ սրտակցի և մարմնակցի[1]: Սակայն արդէն իսկ ստեղծագործութեան պատմութիւնը ցոյց է տալիս, որ կնոջ յետոյ ստեղծելով գերադասութիւն է ստանում տղամարդը, այնպէս որ **առաջինը պէտք է փայլի իր պարկեշտութեամբ ու համեստութեամբ, իսկ երկրորդը՝ առնականութեամբ ու հոգատարութեամբ:** Կնոջ ու տղամարդու բնական խառնւածքն ու դիրքն անհրաժեշտապէս որոշում են այս երկու տեսակ յարաբերութեան որպիսութիւնը, ըստ որում և **կինը պսակելու ժամանակ խօսք է տալիս հնազանդ լինելու տղամարդուն ու երկնչելու կամ ակնածելու նրանից:** Իսկ այս հնազանդութիւնն ու երկիւղը ոչ թէ ստրկական է, այլ այն վերաբերմունքն է, որ սովորաբար ուրախութեամբ ունենում ենք անձնազոհութեամբ մեզ սիրող ու մեզ համար

[1] Ա Կոր., ԺԱ 7, Է 33, Ա Պետր., Գ 7, Կող., Գ 19:

ապրող ու շնչող ընկերոջ կամ մտերիմ մարդու հանդէպ: Նա՛, որ սիրում է՝ չի կարող բռնակալ լինել, իսկ նա, ով սիրում է, չի կարող չպաշտել, չհնազանդել իր անձնուէր սիրող կողակցին: Որքան էլ բարձր լինի տղամարդը, նա երդուելով Աստծու և ժողովրդի առաջ՝ սիրել իր կողակցին, չի կարող որևիցէ կերպով արհամարհել նրան կամ բռնանալ նրա վրայ. «Բայց եթէ իմաստուն էլ լինի, վայել չէ, որ իր օգնականին արհամարհի... որովհետև իմաստունները լսում են իմաստուններին և խոնարհները հնազանդում խոնարհներին: Որովհետև ովքեր ուղիղ կերպով մտքի աչքերով են նայում Աստծու պատուիրաններին և հոգևոր ընթացքով ու ազատաբարոյ բարքի հանդարտութեամբ են՝ նրանք շահում են սրտի քաղցրութիւն, ուստի հարկ չէ արհամարհել այդպիսի աղերսաբանութիւնը, քանզի երանելի Պօղոսն ասում է թէ՝ «Տղամարդիկ իմաստութեամբ թող բնակւեն իրենց կանանց հետ, որպէս տկար անօթների՝ պատիւ անեն կանանց»: Այսպէս է գրում Ս. Յովհան Մանդակունին, որ Մաշտոց ծիսամատեանի այս մասի հեղինակն է[121*]: Հետևաբար բռնութիւն և ստրկութիւն չկայ ամուսինների մէջ այլ կատարեալ սէր և հաւասարութիւն, անձնուիրութիւն ու հնազանդութիւն, միութիւն ու միասրտութիւն, որով ուխտում են ցմահ իրար պատկանել: Պօղոս առաքեալն, առանձնապէս շեշտելով տղամարդու ու կնոջ հաւասարութիւնը, մեծ ուշադրութիւն է դարձնում այս յարաբերութեան վրայ ասելով. «Հնազանդեցէք միմեանց Քրիստոսի երկիւղով: Կանայք իրենց տղամարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդեն Տիրոջը, որովհետև տղամարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոսն է գլուխը եկեղեցու, և Ինքն է Փրկիչը այդ մարմնի: Եւ ինչպէս եկեղեցին հնազանդում է Քրիստոսին, նոյնպէս և կանայք թող հնազանդեն իրենց մարդկանց ամեն ինչում: Տղամարդիկ, սիրեցէք ձեր կանանց, ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար, որ սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով, որպէսզի նա իր առաջ փառաւոր կերպով կանգնեցնի եկեղեցին... Նոյն ձևով տղամարդիկ պարտաւոր են սիրել իրենց կանանց իբրև իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում, որովհետև ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում և խնամում է այն, ինչպէս որ Քրիստոս՝ եկեղեցին, քանզի անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից և նրա ոսկորներից: «Դրա համար մարդը պիտի թողնի իր հօրն ու մօրը և պիտի գնայ կնոջ յետևից և երկուսը պիտի լինեն մէկ մարմին»: Այս խորհուրդը

մեծ է, բայց ես ասում եմ Քրիստոսի և եկեղեցու վերաբերեալ: Դուք էլ նոյնպէս ամեն մէկդ նոյնը արէք, որպէսզի իւրաքանչիւր ոք իր կնոջն այնպէս սիրի, ինչպէս իր անձը, և կինը երկնչի իր մարդուց» (Եփես., Ե 21-23):

Ս. առաքեալի խօսքերը, որոնք մենք մասնաւոր նկատառումով առաջ բերեցինք, պարզ ցոյց են տալիս, թէ որքան սերտ է ամուսինների միութիւնը, և որքան սիրալիր ու անձնուէր: Ինչպէս Քրիստոս վերաբերւում է իր եկեղեցու նկատմամբ, այնպէս պէտք է վարուի տղամարդն իր կնոջ նկատմամբ. և ինչպէս եկեղեցին վերաբերւում է Քրիստոսի հանդէպ, այդպէս էլ պէտք է վարուի կինն իր ամուսնու հանդէպ: Ուստի և ինչպէս որ եկեղեցին ու Քրիստոս անբաժանելի են իրարից, այնպէս էլ ցմահ կապուած են իրար հետ այր ու կին, ըստ որում թէ Քրիստոս ու թէ առաքեալները[1] բացէիբաց մերժում են պսակի լուծումը, իսկ իրարից հեռացող ամուսիններին իրաւունք չեն տալիս վերստին ամուսնանալու: Այս այնքան դժուար թւաց Քրիստոսի աշակերտներին, որ իսկոյն արտայայտեցին ու պատասխան ստացան. «Իր աշակերտները Նրան ասում են, եթէ տղամարդու և կնոջ համար այդպիսի վնաս կայ, աւելի լաւ է չամուսնանալ: Եւ նա ասում է. բոլորը չէ, որ կարող են այդ, այլ միայն նրանք, որոնց տրուած է»: Այս խօսքերով Քրիստոս վերջնականապէս կապեց որևիցէ ելք: Թողնել ամուսնուն և ուրիշին առնել՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ շնութիւն, որովհետև միանգամ իրականացած միութիւնը խախտել անկարելի է:

Բայց չէ՞ որ մէկի մեռնելով՝ մի ամուսինը մնում է միայնակ: Այս դէպքում ևս արգելւում է կենդանի մնացածի կրկնամուսնութիւնը, և ճշմարիտ՝ միանգամ սիրածը և հոգով ու մարմնով միացածը, եթէ ճշմարտապէս և ազնութեամբ է մտել այդ կապի մէջ, չի կարող մի նոր միութեան մէջ մտնել, որովհետև սուրբ սէրն անշիջանելի է: Այդ պատճառով և Ս. Պօղոս առաքեալը պարզապէս յայտարարում է, որ այրին պէտք է մնայ սրբութեամբ (Ա Կոր., Է 18-40): Սակայն որովհետև «լաւ է ամուսնանալ քան տուփալ»[2], ուստի Հայաստանեայց ս.

[1] Մատթ., Ե 28-32, ԺԹ 3-11, Հմմտ. Բ Օր., ԻԲ 13-21, ԻԴ 1-3, Երէմ, Գ 8, Եսայի Ծ 1, Մարկ., Ժ 2-12, Ղուկ., ԺԶ 18, Ա Կոր., Է 10-27, Հռ., Է 3:

[2] «Ովքեր միակին են երկու կին ունեցողներին թող բամբասելով չմեղադրեն, որովհետև շատ լաւ է սրբութիւնը և սքանչելի, սակայն առանց մեղադրանքի է և երկրորդ հարսանիքը, որպէսզի տկարը պոռնկութիւն չանի: Շատ աւելի լաւ կը լինէր նրանց համար, ասում է առաքեալը, եթէ լինեն և մնան ինձ պէս, ապա եթէ չեն կարող

Եկեղեցին ըստ առաքելի որոշման ներելով թոյլատրում է երկրորդ ամուսնութիւնը, թողնելով ամուսնացող այրերի վրայ իրենց սիրադրուժ նոր կեանքի մեղանչական հիմքի քաւութիւնը: Այդ պսակի համար կայ և մի առանձին կարգ, որում այս սկզբունքներն առաքելի ասածի համեմատ որոշւում են[1]: Ըստ որում այրին միմիայն այրու հետ կարող է ամուսնանալ և ոչ կոյսի հետ: Իսկ երրորդ ու չորրորդ ամուսնութիւնը, որ այժմ միջին դարերից սկսած թոյլատրւում է՝ իբրև եռակի մեղանչում՝ բացառութիւնների բացառութիւն է. այնպէս որ Ս. Գրիգոր Տաթևացին կրկնամուսնութիւնը ներումն է կոչում և ոչ օրէնք, բայց հինգերորդը՝ պոռնկութիւն[2]:

Քանի որ մէկի մահով միւսն ազատւում է ամուսնական կապից ու նորից ամուսնանում, բնական է, որ կարող են լինել այնպիսի դէպքեր, որոնք նման են մահւամբ բաժանելուն: Այդպիսի մի դէպք յիշւում է Ս. Պօղոսի մի թղթում, այն է՝ երբ հեթանոս ամուսինը թողնում հեռանում է քրիստոնէութիւնն ընդունած ամուսնուց (Ա Կոր., Է 12) և առաքելը թոյլատրում է քրիստոնեայ ամուսնուն այսպիսի հանգամանքներում ազատ թողնելու հեթանոս կողակցին: Քրիստոնեան առաւել ևս պարտաւորւում է մահւան չափ հեռու լինել անբարոյական ու փուչ կողակցից՝ ըստ Քրիստոսի և ըստ առաքելոց պատուէրի[3]: Ուրեմն կայ և մի հոգևոր մահ, որով դարձեալ կենդանի ամուսինն ազատւում է ըստ բնական մահւան սկզբունքի, որով ներողամտաբար թոյլատրւում է կենդանի ամուսնու կրկնամուսնութիւնը:

Ահա վերոյիշեալ հիմքերի վրայ Հայաստանեայց ս. Եկեղեցին երկու կարգի սկզբունքներով կանոնադրել է շնորհազուրկ ամուսնութիւնների լուծումը: Առաջին կարգին են վերաբերում այն պսակները, որոնք իսկապէս կայացած չեն անվաւերութեան պատճառով: Այդպիսի պատճառներն են. 1. չհասութիւն, 2. անբուժելի տկարութիւն կամ անկարողութիւն, 3. բռնութեամբ կայացածը, 4. պոռնկութիւն պսակից առաջ[1], 5. մարմնաւոր անհաւասարութիւն, 6. օտարահաւատութիւն[2]: Այսպիսի ամուսնութիւնները լուծւում են և կարող ամուսիններն ապաշխարելով թոյլտութիւն են ստանում օրինաւոր ամուսնութեան մէջ մտնելու:

Երկրորդ կարգին են պատկանում այն ամուսնութիւնները, որոնցում մէկը մահացած է բնականապէս կամ բարոյապէս. դրանք են. 1. Ուխտաւորութեան ու կրօնաւորութեան նուիրելով՝ երկուսն էլ կրօնաւորւում են, 2. Երբ մէկ անահաւատ է, այսինքն՝ մերժում է Հայաստանեայց ս. Եկեղեցու հաւատը, 3. Խելագարութիւն, այսահարութիւն և անբուժելի անկարողութիւն, 4. Անբուժելի գողութիւն և նոյնպիսի հիւանդութիւններ, 5. Անդարձ անջատում կամ աքսոր, 6. Կորստական պոռնկութիւն և մահ[3]:

Ահա վերոյիշեալ հանգամանքներում Հոգևոր իշխանութեան բարձր ժողովները կամ Վեհափառ Հայրապետի ստորադրեալ ատեաններն ու պաշտօնեաները քննելով դէպքի բոլոր պարագաները լրջօրէն, օրինաւորապէս ու պատշաճաւոր անձնաւորութիւնների կամ հաստատութիւնների կայուն երաշխաւորութեամբ, առաջարկում են ի տնօրինութիւն Նորին Օծութեան, որ և կոնդակով յիշատակում է բոլոր հիմքերը և ըստ այնմ կարգադրում: Հոգևոր իշխանութեան առաջնորդող գաղափարն այն է, որ պսակն իբրև ս. խորհուրդ՝ իր հիմքերն ու պայմաններն ունի. այդ հիմքերն ու պայմաններն այնպիսի սկզբունքներ են, որոնք կազմում են Ս. Գրքի վարդապետութեան հիմունքները և

հանդարտւել, թող տղամարդկանց տրւեն, որովհետև աւելի լաւ է ամուսնանալ, քան տոփալ» Կիւրեղ Երուս. Կոչումն ընծ., էջ 76:

[1] Ա Կոր., է 9, 39, Հռ., Է 2-3, Մաշտոց ձեռաց. 184-185, Սեբէոս. 131, 132:

[2] Ս. Յովհ. Իմաստ. 11, Հարց. 613:

[3] Մատթ., Ե 29-30, ԺԸ 17, Ա Կոր., Ե 9-11, Զ 9-16, Եբր., ԺԳ 4: Մովսիսական օրէնքով շնացող կինը կամ տղամարդը կամ նախքան ամուսնութիւնը պոռնկացած աղջիկը քարկոծւում է. Թիւ., Ե 12-31, Ղևտ., Ի 10, Բ Օր., ԻԲ 13-22, Եզէկ., ԺԶ 38-40, ԻԳ 43, Ծնն., ԼԸ 24, հմմտ. Բ Ըր., ԻԴ 1-3: Ամուսինը կարող էր արձակել այն կնոջ, որին առնելով՝ գտնում էր նրա մէջ «իրս անարգութեան». Բ Օր., ԻԴ 1-3, Եփրեմ., Գ 8, Ես., Ծ 1: Ընդհանրապէս արձակման սկզբունքը մերժւում էր, Բ Օր., ԻԲ 19, 29, Մաղ., Բ 15:

[1] Տես Բ Կոր., Զ 14 և ԺԴ Կան. Ներսէս Բ.-ի, ԺԱ Կան. Սիոնի[122*]. Մանդ. 152-153, Ուխտանես II 80, 86, 136. Մովս. Կաղանդ. II, ԽԷ Յովհ. Իմաստ. կանոն ԻԹ, ԼԲ, Ընդհանր. 81-82:

[2] Ոմանք Քրիստոսի «Իւրաքանչիւր ոք, ով արձակի իր կնոջը ոչ պոռնկութեան պատճառով և ուրիշին առնի, շնանում է» (Մատթ. ԺԹ), հասկանում են պսակից առաջ պղծութիւնը: Սակայն հմմտ. Եզնիկ, էջ 37:

[3] Տե՛ս նաև Ս. Գրիգոր Տաթևացի. Հարց. 610, 401, Մեկնութիւն Մատթ. գրչագիր: «Երկակի է պսակի շաղկապը, երկակի է և մահը՝ հոգևոր և մարմնաւոր: Հոգևոր մահով արձակւում է հոգևոր շաղկապը, այն է՝ երբ մարդ մեռնում է այս աշխարհին՝ մտնելով կրօնաւորութեան մէջ: Եւ մարմնաւոր շաղկապն արձակւում և բաժանւում է մարմնաւոր մահով. այդ պատճառով վայել չէ բաժանել օրինաւոր պսակը. քանի ողջ են»: Ըստ որում Տաթևացին թւում է յիշեալ կէտերը. Տես իմ «Պսակի ս. խորհուրդը» 66-74. Օրթոդոքս եկեղեցին ճանաչում է միայն չորս պատճառներ՝ աքսոր, անկարողութիւն, շնութիւն և կրօնաւորութիւն:

ուրեմն առանց դրանց չի կարող ս. խորհուրդը կայանալ, իսկ առանց այդ ս. խորհուրդի իրականացման ոչ ոք չի կարող ամուսնական կեանք վարելով՝ Հայաստ. ս. Եկեղեցու անդամը լինել: Քրիստոսի վարդապետութիւնը պահանջում է երկու ամուսինների մարմնաւոր ու հոգևոր ներդաշնակութիւն ըստ իրենց անկեղծ ընտրութեան, որպէսզի նրանք Աստծու առաջ իբրև մի միութիւն ճանաչեն և կապւեն: Ամուսնութեան կապն իրօք չի կայանում, եթէ այդ վեհ սկզբունքների դէմ մեղանչել են և ուրեմն ամուսնութիւնը կարող է այն ժամանակ միայն խախտի, նախ՝ երբ յիշեալ պայմաններն անտեսւած են, և երկրորդ՝ երբ տեղի ունենայ մի ամուսնու բնական մահը և կամ աստուածային սուրբ ճշմարտութիւնից և Հայաստանեայց ս. Եկեղեցուց օտարացում: Ըստ որում ինչպէս որ բնական մահով միմիայն մի ամուսինն է կրկնամուսնութեան թոյլտուութիւն ստանում, այնպէս էլ բարոյական մահով. որովհետև նա, որ դրժել է Աստծու, նրա սրբութեան ու բոլոր հաւատացեալների առաջ տւած խոստումը, չի կարող մի նոր վստահութիւն ու հաւատք գտնել ոչ եկեղեցու մէջ և ոչ որևիցէ հաւատացեալից: «Ինչպէս որ քահանայի օծումը յաւիտեան չի բաժանւում հոգուց, նոյնպէս և պսակի օրհնութիւնը, որ մարմնի մէջ է, մարմնից չի բաժանւում մինչև մարմնի մահը: Եւ եթէ մէկն է պատճառը՝ տղամարդը կամ կինը թող առանց ամուսնութեան մնայ և միւսը թող ամուսնանայ ուրիշի հետ, որ պատճառ չունի»[1]: Երբեք չպէտք է մտահան անել այն, որ երկու ամուսնացողները Աստծու և ժողովրդի առաջ ուխտում են և իրար ազնիւ ու հաւատաբուխ խօսք տալիս՝ ցմահ միասին ապրելու, իրար սիրելու և գործակից ու կենակից լինելու, չընկճւելով ոչ մի հիւանդութեան ու նեղութեան տակ: Նրանք յանձն են առնում, որ այրը սիրալիր տէր է, իսկ կինը սիրող հնազանդ, սակայն երկուսն էլ միութիւն լինելով՝ իրար հաւասար են իբրև մի մարմին, մի միտք, մի կամք ունեցող ամոլներ[2]: Նրանք ընդունում են, որ միայն մահը կարող է բաժանել նրանց. ըստ որում բնական մահը ճանաչում է ինքնըստինքեան՝ անջատելով մէկի մարմնաւոր կեանքը միւսից, իսկ հոգևոր մահը ճանաչում է Աստծու առաջ Հայաստանեայց ս. Եկեղեցու ընդհանրական Հայրապետի վճռով:

[1] Հարց. 401:
[2] Եփ., Ե 21-23, Կող., Գ 18, Եբր., ԺԳ 4, Ա Պետ., Գ 1:

Ուրեմն, երբ մի զոյգ իմանալով այս ամենը, հաւատքով ու ճշմարտութեամբ գալիս է ու մտնում Աստծու օրհնութեան տակ և Պսակի ս. խորհուրդով նոր կեանք սկսում, անշուշտ արդար կեանքի ընթացքում ևս պէտք է հնազանդւի միմիայն այն սկզբունքներով, որոնք բխում են Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետութիւնից: Ուրիշ պայմաններ մտածել կամ անձնական քմահաճոյքով կամենալ ուխտազանց լինել, նոյն է թէ արհամարհել եկեղեցին և այն հաւատքը, որով ամուսնացողն օրհնութեան է փափագել: Մինչև անգամ ամլութեան համար կնոջ հետ գժտւելն արգելւում է, և Ս. Յովհան Մանդակունին գրում է. «Բայց եթէ որդի չունենալու պատճառով մէկն ատում է իր ամուսնուն՝ դա չար է Աստծու առաջ: Ի՞նչ օգուտ է որդի խնդրել և անիրաւ ատելութեամբ հոգին կորցնել, որովհետև Աստծու համար ոչ թէ որդիներ խնդրելն է (կարևոր), այլ անարատ հոգիներ»[1]:

Հռոմէական եկեղեցին մոլար ընթացք է որդեգրում, որովհետև պսակը ս. խորհուրդ համարելով հանդերձ՝ նախադասում է կուսութիւնն ամուսնական կեանքից և խոտելի դարձնում հոգևորականների համար: Սա մի դառը հակասութիւն է, որովհետև այն, որ խոտելի է եկեղեցականների համար, չի կարող և ս. խորհուրդ լինել կամ ս. խորհուրդով իրականանալ: Սա Քրիստոսի վարդապետութեան մի թիւր հասկացողութիւնն է, ըստ որում ոչ կուսութիւնն է ինքնըստինքեան բարձր առաքինութիւն ճանաչւում, այլ կուսութեամբ ամենայն աշխարհային հոգսերը թողնելը և Քրիստոսի յետևից գնալով՝ Աստծու արքայութեան համար աշխատելը, ուստի և ոչ Քրիստոս և ոչ էլ առաքեալները չեն մերժում նաև ամուսնացած գործողներին, որոնք նոյնպէս նւիրւում էին եկեղեցական ծառայութեանը:

Երկրորդ՝ Հռոմէական եկեղեցին մոլորւում է, երբ ամուսնութիւնն ըստ ամենայնի անլուծելի է ճանաչում՝ իբր հետևանք այն մոլորութեան, որով ուսուցանում է, թէ խորհուրդը կատարւում է հաւատացեալի վրայ նրա հաւատքից և արժանիքից անկախ: Չլուծելով ամուսնութիւնը, նա ժխտում է հոգևոր մահւան կարելիութիւնը՝ հակառակ Քրիստոսի վարդապետութեան, քաջալերում է պիղծ կենակցութիւնը և վերջապէս արդար ամուսնուն ստրկացնում է մեղաւորին: Նա նպաստում է այս երեք մոլորութիւններին առաւել ևս այն թիւր

[1] Ճառ վասն կնաթողաց. 138-141, տե՛ս նաև Բուն Մաշտոց 229-233:

վարդապետութեամբ, որով բաժանում է այդպէս գժտուած ամուսիններին «սեղանով և անկողնով» և ստիպում այդպէս բաժանուած ապրել: Մինչդեռ, ինչպէս տեսանք, թէ՛ Քրիստոսի վարդապետութիւնը, թէ՛ առաքեալների քարոզութիւնը ճանաչում է որոշ հանգամանքների մէջ մի ամուսնու բարոյական մահը և հետևաբար արդար ամուսնու կրկնամուսնութեան զիջողութիւնը[1]: Արդար ամուսինը կարող է հաշտուել միմիայն այնպիսի ամուսնու հետ, որ մեղանչել ու զղջացել է իր մեղքի համար և ոչ թէ բարոյական մահուան մատնուել ընկածի հետ:

Այս մոլար ընթացքը բաւարար առիթ էր, որ Բողոքականները մերժեցին պսակի ս. խորհուրդը և ամուսնութիւնը լոկ մարմնաւոր, եկեղեցու հետ կապ չունեցող իրողութիւն համարեցին, կարծելով թէ այդպէս վերջնական հարուած կը տան Հռոմէական եկեղեցու զարտուղի ընթացքին: Սակայն դրա հետևանքը եղաւ ընտանեկան կեանքի անկումը թէ՛ բարոյական ու թէ՛ կրօնական տեսակէտից: Ըստ որում այսպիսի վարդապետութեամբ նախ ընտանիքը դառնում է եկեղեցու լոյսից դուրս շրջան. երկրորդ՝ հակասութեան վրայ է հաստատւում, որովհետև ընտանիքը ծնողը լինելով եկեղեցու անդամների՝ ինքը ս. խորհուրդով չի հիմնւում, մինչդեռ իր ծնունդը ս. խորհուրդի վայելող է դառնում. երկրորդ. սիրոյ գործնական իրականացումը վերանում է, ուստի և ամուսնութիւնը մօտիկ ազգականների մէջ անգամ սովորական է դառնում, որ աւերում է ընտանեկան սրբութիւնը, չորրորդ՝ բողոքական եկեղեցին լոկ մարմնական համարելով ամուսնութիւնը, ժխտում է մարդու հոգևոր նշանակութիւնն ու առաւելութիւնը հակառակ Ս. Գրքի վարդապետութեան, ըստ որում մարդ «կենդանի Աստծու տաճար» լինելով՝ սիրոյ ամենասերտ կապի մէջ սոսկ մարմնական է դառնում այդ եկեղեցում: Եւ վերջապէս հինգերորդ՝ այդ եկեղեցին բացէիբաց հակառակ է ընթանում Ս. Գրքի վարդապետութեանը, որ ամուսնական սիրոյ միութիւնը նոյնացնում է Քրիստոսի և իր եկեղեցու միութեան ու արժանիքը պարզաբանում[2] նրան համեմատ:

Հայաստանեայց ս. Եկեղեցին ոչ լոկ արտաքին է համարում ամուսնութիւնը, ոչ մասամբ խոտելի, բայց և՝ սուրբ խորհուրդ, և ոչ էլ հեռացնում է

[1] Տե՛ս և Նէօկէս Ը, Կարթագինէի ԺԺԵ, Բարսեղ Կես., Թ, ԻԱ, ԼԹ, ԽԸ և այլ ժողովների կանոնները[123*]:
[2] Ա Կոր., Զ 19, Գ 16, 17, Է 37, Եփ. 22-32, Ա Թես., Դ 2, Հմմտ. Մատթ., Թ 15, ԻԵ 1-10, Ղուկ., Ե 34, Մարկ., Բ 19, Յովհ., Գ 29, Յայտ., ԻԲ 17, և այլն:

իրենից իբրև միայն մարմնաւոր դաշնակցութիւն, այլ համարում է թէ՛ մարմնաւոր և թէ՛ հոգևոր միութիւն ու սիրոյ իրականացումը, որ Աստծու հաճելի մի կարգ է ժողովրդի և Եկեղեցու սպասաւորների մէջ իսկ: Ինչպէս որ չկայ նրա մէջ լոկ մարմնաւոր ձգտումների յարացոյց, այնպէս էլ նա իր լուսոյ շրջանում չի ճանաչում այնպիսի կեանք, որ սոսկ մարմնաւոր լինի և միևնոյն ժամանակ գործօն դառնալով Աստծու արքայութեան իրականացման համար, իր ս. խորհրդակատարութեամբ չհիմնւի և աճելով զարգանայ: Այն, որի արդիւնքում ու գործունէութիւնը Աստծու արքայութեան համար են, իր հիմքն ու բարգաւաճումն էլ պէտք է Աստծու արքայութեան մէջ և Աստծու օրհնութեամբ ստանայ: Ուստի և ընտանիքն էլ իբրև այդպիսի մի նշանաւոր գործօն, փառաւոր խորհրդակատարութեամբ է ստանում իր օրհնութիւնը:

Պսակը կատարւում է Հայաստանեայց ս. Եկեղեցում նրա հաւատացեալների վրայ և նրա քահանայի, եպիսկոպոսի ու Կաթողիկոսի ձեռքով առաւօտուանից մինչև կէսօր. բայց ոչ լոյս տէրունական տօներին, պահքին ու Մեծ պահքին և Զատկից յետոյ մինչև Հոգեգալուստ, որովհետև Պահքի օրերը աղօթքի և հոգևոր կարգերով մխիթարելու կամ թէ ապաշխարելու օրեր են, այսինքն՝ «սգոյ և տրտմութեան, Տիրոջ չարչարանաց խորհրդի և ոչ թէ գինարբութեան և ուրախ հարսանիքների»: Իսկ հինունքը և տէրունական տօները ներկայացնում են երկնաւոր փեսայի և հարսի՝ եկեղեցու հարսանեաց օրերը հանդերձեալում, որում միանում են հաւատացեալները հրեշտակների հետ: Ուստի և այդ օրերում, քանի որ հանդերձեալ կեանքը երկրաւոր ամուսնութիւն չունի, արգելւած է՝ «այս մարմնական հարսանիքները կատարել, որ ախտաւոր և ծննդկան է», և ուրեմն անհնար է երկնաւոր հարսանեաց օրերի շնորհը տարածել երկրաւորի վրայ[1]: Քահանայի պարտաւորութիւնն է՝ նախ քննել և հաւաստիանալ, որ ամուսնացողներն ըստ ամենայնի համաձայն են Հայաստանեայց ս. Եկեղեցու սկզբունքներին և ապա կանոնաւորապէս պսակ կատարել[124*]:

[1] Ս. Ներսէս Շնորհալի, Ընդհան. 85-87, Ս. Յովհ. Իմաստ. կան. Գ, Դ, Ե:

ԽԶ

Զ ԿԱՐԳ ՀԻՒԱՆԴԱՑ

Եկեղեցին իր փրկարար խորհուրդները և աստուածպաշտութեան շնորհները գործադրում և բաշխում է ոչ միայն իր սուրբ գաւիթը ոտք դնող հաւատացեալներին, այլև նրանց, որոնք մարմնաւոր ցաւերի պատճառով անկողին են ընկնում և չեն կարողանում անձամբ դիմել դէպ աստուածային սրբարար, ըստ որում և, փարատող և ապաքինող պարգևները: Այն ս. խորհուրդը, որով եկեղեցին աստուածային շնորհներ է մատակարարում իր հիւանդ հաւատացեալների ապաքինութեան ու կազդուրման համար, կոչւում է **կարգ հիւանդաց**: Քանի որ Աստուած այցելում է ամենքին, մխիթարում է Իր օգնութեանը դիմողներին և թողութիւն է տալիս սրտով զղջացողին, պարզ է, որ այս կարգի հիմնական նպատակն է՝ յորդորել հիւանդին զղջալու իր մեղքերն ու դէպի Աստուած դարձնել նրա հոգին, որպէսզի նա լցի հաւատքով, յոյսով ու սիրով, զօրանայ քահանայի աղօթքով և օրհնութեամբ և Ս. Հոգին ընդունելով՝ հոգեպէս նորոգւի ու նոր ոգի ստանայ:

Քրիստոս Ինքն հաստատեց այս ս. խորհուրդը, ըստ որում հիւանդներից միմիայն հաւատք էր պահանջում և Իր աստուածային ազդեցութեամբ՝ խօսքով կամ ձեռք դնելով բժշկում նրանց[1]: Այդպէս էլ Նրա պատուէրի համաձայն կատարում էին առաքեալները, հետևելով Տիրոջ օրինակին[2]: Քրիստոսի խօսքերն ու բժշկութիւնները ցոյց են տալիս, որ առհասարակ հիւանդութիւնը՝ լինի նա մարմնաւոր թէ հոգևոր՝ առաջանում է մեր մեղքերից, Աստծու պատուիրաններին հակառակ ապրելուց, **որի հետևանքներն արձագանք են գտնում մինչև անգամ ժառանգաբար աւանդելով որդուց որդի**: Աստծու կամքն է, որ մարդիկ ճանաչեն Իր պատուիրանները և բաւականաչափ հասողութիւն ձեռք բերեն վայելչապէս ապրելու աշխարհի զանազան պարագաների մէջ: Այդպէս ապրելու ձգտողին աջակից է ինքն՝ Աստուած, ըստ որում մեր կենդանութիւնը և բարեյաջողութիւնն Աստծուց ստանալով, անշուշտ կենսունակ կը լինենք միմիայն այն ժամանակ, երբ

[1] Մատթ., Ը 8, 13, ԺԴ 35, Թ 28, Ղուկ., Դ 41, Մարկ., Ե 34, Զ 5, Ժ 52:
[2] Մատթ., Ժ 1, Մարկ., Զ 13, ԺԶ 18, Գործք., ԻԸ 8, Թ 12, Յակ., Ե 14:

սրբութեամբ ապրենք և Աստուած մեզ հետ լինի: Այդպիսի խելահաս մարդը հիւանդութեան ծանր դէպքերի ու նեղութիւնների մէջ չի ընկնի. և ո՞վ չգիտէ, որ մարդկային բոլոր նեղութիւնները ծագում են աստուածային ճանապարհից շեղուելուց և զանազան սխալներից: «Աստուած աշխարհը կարգաւորեց իբրև դպրոց, որպէսզի արարածները (նիւթ) վերցնելիս և պատրաստելիս իմանան Արարչի՝ (իրենց հանդէպ տածած) խնամքը, և միշտ Նրա նախախնամութեամբ նորոգւեն. [նախախնամութեամբ], որ երևում և որ չի երևում», ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը[125*]: Ուրեմն մենք պէտք է, աստուածային լոյսով լուսաւորուած, սովորենք ըստ Աստծու ապրելու, առողջապահիկ ու մեր կեանքն Աստծու պատուիրանների համեմատ վարելու միջոցներ գտնել և այն ժամանակ մեր հոգու առողջութիւնն իր ճառագայթները կը սփռի նաև մեր մարմնի վրայ. «Արարչի խնամակալութեան շնորհիւ մարդը դառնում է հնարագէտ՝ իր փրկութեան և անձնիշխան կամքով բարիքը վայելելու համար», ասում է նոյն Ս. Հայրը: **Որքան քրիստոնէական լոյսով բարեկարգւել ու բարւոքել են քրիստոնեայ երկրները, այնքան առաւել կրճատւել են հիւանդութիւնների տարածումն ու բարդութիւնը և այնքան աւելի դիւրացել են բժշկութեան միջոցները՝ քրիստոնէական անձնազոհութեամբ վառած գիտնականների հետազօտութիւններով ու գիւտերով**: Այլև որքան էլ ազգերի անկումով ժանտախտն ու ժանտամահը իբրև սոսկալի պատիժներ հարւածել են Աստծու լոյսից խորթացած երկներում, **այնքան ևս քրիստոնեայ ազգերի հոգևոր բարգաւաճումով փակւել է դրանց մուտքը լուսաւորած աշխարհում և օգնութեան հզօր ձեռքեր են կարկառւել դէպի տառապեալներն ու զոհւողները**: Հասկանալի է, որ Աստծու պատուիրանի դէմ մեղանչողի կենսական հաւասարակշռութեան խանգարումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մարդ իր անձն անընդունակ է դարձնում Աստծու կենդանարար շնորհներին, իր մտքերով խաւարում, սրտով թանձրանում, կամքով մոլորւում, և այդպէս իր կեանքի ուղիղ և յաջող ճանապարհը կորցնելով՝ գահավիժում մեղքի խորխորատը: **Այդպիսի մարդը կարողութիւն չի ունենում հանգստութեամբ ուղիղ դատելու, ծառացած հանգամանքները կշռադատելու և ըստ այնմ նպատակայարմար միջոցներ ընտրելով՝ իր կեանքը կազմակերպելու**: Եւ ուրեմն վերստին այդ խաթարումները վերացնելու և մարդու մտքի, զգացմունքի ու կամքի համերաշխ գործունէութիւնը կենդանացնելու միակ ճանապարհն է՝ հոգեպէս

ամրացնել հիւանդին և կապել Աստծու շնորհների հետ, որպէսզի նա լուսաւորի ու զօրանայ:

Հոգևոր այս վերակենդանացման համար պէտք է հիւանդին նախ զղջալ տալ իր մեղքերը, որոնք նրան բաժանել են Աստծուց, երկրորդ՝ Աստծու շնորհների ընդունելութեան զգայարանքը՝ հաւատքն արթնացնել և սիրով ու յուսով բորբոքել, որ նա դիւրալուր և դիւրազգաց դառնայ դէպ Աստծու լոյսն ու ձայնը, և երրորդ՝ պէտք է Աստծու ողորմութիւնն ու օգնութիւնը խնդրել, որ առատապէս հեղելով Իր շնորհները հիւանդի հոգու վրայ, հզօրապէս ներազդի նրա ապաքինութեան ու կենսունակութեան համար: Ահա այս ամենն իրագործելու ամենազօր միջոցներն են ապաշխարութիւնը, հաղորդութիւնը և աղօթքը, որոնք իրենց կարգով լիապէս կարող են փարատել հաւատացող հիւանդի մեղքերն ու ցաւերը, զօրացնել հաւատքով, ընդունակ դարձնել աստուածային շնորհների և սպառազինել Ս. Հոգով:

Բայց հիւանդի հաւատքն արթնացնելու և սիրով ու յուսով բորբոքելու համար հարկաւոր են նաև այնպիսի միջոցներ, որոնք համապատասխան ներգործութիւն ունենալով նրա արտաքին զգայարանքների վրայ, զուգընթացաբար կենդանացնեն նրա հոգու մէջ ճշմարիտ հաւատքի աճման ու զարգացման բոլոր սերմերը, բողբոջն ու առատ պտուղները: Այդպէս ազդում էին հիւանդի վրայ առաքեալների թաշկինակները (Գործք., ԺԹ 12), Եղիսէ մարգարէի ոսկորները (Դ Թագ., ԺԳ 21), այլև իւղը[1] (կամ ձէթը, պալասանը, ռետինը), որ վիրաբոյժ և ամոքող ազդեցութիւն է ունենում (Սաղմ., ԻԲ 5), յաճախ ծառայում էր իբրև մի միջոց հիւանդի հոգու վրայ ազդելու համար: Վերջապէս Նոր Ուխտում գործադրուող հզօրագոյն միջոցներն են շնորհաբաշխ ձեռքը, Ս. Խաչը և Ս. Գիրքը դնելը հիւանդի վրայ, որոնցից սուրբ ձեռքն ու ս. Խաչը Ս. Հոգու շնորհագործութեան աւանդիչ միջոցներն են, իսկ Ս. Գիրքն որպէս աստուածային փրկարար յայտնութիւնը բովանդակող՝ ունի իր համապատասխան ներգործութիւնը: Մինչդեռ միւս միջոցները ներգործում են միայն անուղղակի. այսպէս իւղը ներգործական միջոց է դառնում աղօթքի զօրութեամբ, որովհետև հաւատացեալը միանգամ արդէն դրոշմի խորհուրդով Ս. Հոգու վերածնող ու կենդանարար շնորհը ստացած լինելով, այլևս պէտք չունի այդ շնորհների իջման

[1] Ես., Ա 6, Մարկ., Զ 13, Ղուկ., Ժ 34, Եր., Ը 22, ԽԶ 11, ԾԱ 8:

կրկնութեանը և ուրեմն իւղը չի կարող նորից այն դերը կատարել, ինչ որ կատարել է ս. մկրտութեան միջոցին: Սուրբ նահատակի ոսկորներն էլ ներգործում են մարդու վրայ այն աստուածային զօրութեամբ, որ հրաշապէս երևացել է նրա մէջ և աստուածային ճշմարտութեան յաղթանակը հաստատագրել, և որովհետև այն ս. նահատակն իր հաւատքով է կարողացել աստուածային զօրութեան հանդիսակիրը դառնալ, բնականաբար նրա ոսկորները ևս այդ ս. անձի կեանքի յիշեցնողը լինելով, կարող են հիւանդի մէջ նոյնպէս հաւատք արթնացնել: Հետևաբար անուղղակի միջոցներից ևս սրբոց ոսկորներն իսկ գերադաս են իւղից: Այդ է պատճառը, որ Յակոբոս առաքեալն էլ յիշելով իւղի գործածութիւնը, որ երբեմն գործադրում էին հիւանդների ամոքման համար, ըստ Հրեաների՝ մարմինն օծելու և կաշին քնքշացնելու՝ առօրեայ սովորութեան, նկատում է. «Եւ հաւատքով եղած աղօթքը կը փրկի հիւանդին, և Տէրը նրան ոտքի կը կանգնեցնի: Եւ եթէ մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներուի: Ձեր մեղքերը միմեանց խոստովանեցէք և միմեանց համար աղօթք արէք, որպէսզի բժշկուէք, քանզի արդարի աղօթքը շատ ազդեցիկ է և օգնում է» (Յակ., Ե 15): Եւ այս թուղթը մեկնող Սարգիս Շնորհալին առ այդ ասում է. «Ոչ թէ իւղն է առողջութիւն տալիս հիւանդին, այլ՝ Տիրոջ անունը»[1]:

Քրիստոս իւրաքանչիւր հիւանդի հոգու վրայ ներգործելու յարմարագոյն միջոց ընտրելով, յաճախ գործադրում էր նաև կողմնակի պարագաներ, ինչպէս մինչև անգամ թուքն ու ցեխը և զգեստի քղանցքը[2], սակայն մշտապէս Նրա բժշկութեան յատուկ միջոցներն էին ուղղակի խօսքն ու սուրբ ձեռքը[3], որոնք յատուկ աւանդողներ են Աստծու շնորհների և զօրութեան: Իր առաքեալներին ևս Քրիստոս ուղարկելով քարոզելու և բժշկելու, ոչ թէ մի որևիցէ ուրիշ միջոց է յիշեցնում նրանց, այլ ուղղակի տուեց նրանց «իշխանութիւն ու զօրութիւն»՝ որ Իր անուամբ ու ձեռք դնելով բժշկեն[4]: Ըստ որում և առաքեալներն իրենց Տիրոջ օրինակին ու հրամանին հետևելով՝ ընդհանրապէս այդ յատուկ միջոցներն էին գործադրում. իսկ իւղը, որ ինչպէս ասացինք, Հրեայ ժողովրդի կեանքում տօթից, ճանապարհ գնալուց և անմաքրութիւնից վնասած մաշկին քնքշութիւն տալու

[1] Մեկն. Կաթուղ. [էջ 166], տե՛ս նաև Մեկն. ժամ., էջ 172:
[2] Մարկ., Է 33, Ը 23, Յովհ., Թ 6, Ղուկ., Ը 44, 46:
[3] Մարկ., Զ 5, Է 32, Ղուկ., Գ 41, Զ 41, Զ 19, Թ 43, ԺԴ 4, ԻԲ 51, Յովհ., Ե 11 և այլն:
[4] Մատթ., Ժ 1, 8, Ղուկ., Թ 1, Մարկ., ԺԶ 18:

համար էին գործածում, չափազանց բացառիկ դէպքերում է յիշատակւում[1] և չի ընդհանրանում:

Հայաստանեայց ս. Եկեղեցու մէջ այդ ս. խորհուրդը կատարւում է ըստ Քրիստոսի օրինակի ու պատուէրի և առաքելական կարգով: Կարգակատարութիւնը ևս կոչւում է «Կանոն գիշերային ժամու աղօթից», որ արտայայտում է հիւանդի վիճակը և այդ ս. խորհուրդի էութիւնը: Ամբողջ կարգը կատարւում է սաղմոսերգութեամբ, աղօթքներով և Աւետարանի ընթերցումով, որոնց ընթացքում նախապէս խնդրւում է Աստծուց առաքել Իր «լոյսն ու ճշմարտութիւնը» հիւանդին առաջնորդելու համար և ասւում է «Ողորմեա՛ ինձ Աստուած» ապաշխարական հրաշալի սաղմոսն՝ այն ևս խորհուրդի էութեան կարգում՝ եօթն անգամ, այսինքն եօթը մահացու մեղքերի փոխադիպութեամբ: Հիւանդը միմիայն խոստովանելով ու զղջալով իր մեղքերն ու հաւատքով, յուսով ու սիրով զօրանալով, դիմում է քահանայի աղօթքի ուժին, որ խնդրում է Աստծուց նայել հիւանդին «որպէսզի մեղքերից փրկւելով, Քո մէջ արդարանայ՝ հագնելով մեր Տէր Յիսուս Քրիստոսին»: Արդարացած հիւանդը հագնելով Քրիստոսին և Ս. Հոգու տաճարը դառնալով, նորոգւում է «ի նորոգութիւն մտաց», պատրաստում է իր մարմինը «պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստծու»[2], և քանի որ արդէն «օծութիւն ունի առ 'ի սրբոյն»[3], նորոգւում է և մտնում երջանկութեան մէջ ըստ այն խօսքի թէ՝ «Երանի նրան, ում մեղքերին թողութիւն տրւեց և ում բոլոր յանցանքները ծածկւեցին»[4]: Այսպիսով Քրիստոս, որ բարի հովիւ է և փնտռող մոլորեալ ոչխարի, հովանաւորում է իր հիւանդին և քահանայական աղօթքով ընդ նմին և ս. Աւետարանի և օծւած՝ շնորհագործ ձեռքի հպումով՝ առնում իր խնամքի տակ: Խորհուրդի այդ էական կատարումն արտայայտւում է այսպէս. «Եւ արդ, ես՝ Քո տկար ծառան, իմ ձեռքը դնում եմ այս հիւանդի վրայ, և դիմում Քո անեղ Աստուածութեանդ և խնդրում եմ Քո առատ բարերարութիւնդ: Առաքիր Քո ամենակարող զօրութիւնդ և բժշկիր Քո այս ծառայի ախտերն ու

[1] Հռոմ., Գ 3, Յուդիթ., Ժ 3, Եսթ., Բ 12, Եզէկ., ԺԶ 9, Գ Թագ., Ժ 10, Ես., ԾԷ 3, Ամովս., Զ 6, և այլն. ըստ որում և այդ իւղերը երբեմն հոտ խառնելով էին պատրաստում իւղագործներն ու ստրկուհիները, Ել., Լ 35, Նեէմի, Գ 8, Ա Թագ., Ը 13, թանկագին էր նարդեանը, Երգ., Ա 2, Մարկ., ԺԴ 3:
[2] Հռովմ., ԺԲ 1, Մաշտաց ձեռոց 277:
[3] Ա Յովհ., Բ 20, 27, Մաշտ. 286:
[4] Սաղմ., ԼԱ 1, Մաշտ. 287:

հիւանդութիւնները՝ Քո Խաչի ամենայաղթ նշանով, որով վերցրեցիր մարդկային ցեղի տկարութիւնը և դատապարտեցիր մեր կեանքի ու փրկութեան թշնամուն»: Ըստ որում և հիւանդին հաւատքի մէջ հոգեպէս կրթելու համար կարդացւում է Բժշկութեան Աւետարանը:

Քրիստոսի խօսքերը ևս երաշխաւորում են մեզ[1], որ հիւանդն ըստ իր հաւատքի զօրութեան և ըստ իր մարմնաւոր ու հոգևոր հաւասարակշռութեան կարող է ապաքինւել ու նորոգապէս վերստին մտնել քրիստոնէական կեանքի մէջ: Բայց եթէ հիւանդը հակառակ հանգամանքներում լինելով՝ մահանայ, այն ժամանակ նա մինչև այդ վերահաս հրաժեշտի վայրկեանը **կամքի և կը զօրանայ** հոգով իր մեղքերը զղջալու և Փրկչի շնորհը խնդրելով՝ արիաբար առ Նա դիմելու: Իսկ այս խորհուրդի համար կայ առանձին կարգ, որ լրացումն է վերոյիշեալի և կոչւում է՝ «Կանոն հաղորդ տալոյ», որում քահանան խոստովանեցնում է հիւանդին մեղքերն ու ճշմարիտ հաւատքը և աղօթելով խնդրում Աստծուց՝ արժանացնել նրան «շնորհների վերջին վարձատրութեանը», տալիս է Քրիստոսի մարմինը և արիւնը՝ «մեղքերի քաւութեան և մարմնի բժշկութեան համար»: Յետոյ շրջապատողների ու հիւանդի մէջ սիրոյ հաշտութիւն հաստատելով՝ **քահանան արժանացնում է նաև նրա վերջին կամքը (կտակ), բարեգործական ուղղութիւն տալիս այդ կամքին և հիւանդի աչքերն ուղղում դէպի յաւիտենական կեանքի քաղցրութիւնը**: Արդ, բժշկութեան և բոլորի գալիք ճանապարհը ձգելու համար ուրոյն կարգեր ունենք, ըստ որում մինչդեռ «Հաղորդ տալու» կարգում վերջին վարձատրութիւնն է շեշտւում, հիւանդաց կարգի նպատակն էլ, սաղմոսներից յետոյ անմիջապէս, նախքան բուն խորհրդի կատարումը, որոշում է այսպէս. «Ու նաև այս հիւանդի համար, որ յոյս ունի գոչել Տէր Աստծու անունը, նոյնպէս Նրա զօրութեանը՝ իր հոգու և մարմնի օգնութեան և բժշկութեան նպատակով, որպէսզի փրկւի և մնայ ու վերստին նորոգւի ձեր քահանայական աղօթքով և Աստծու կարողութեամբ, Տիրոջն աղաչենք»: Նոյն նպատակը յայտնապէս պարզւում է և հիւանդաց կարգի յատուկ ձևակերպութիւնների մէջ, որպիսիք են «Կանոն դժւարածին յղի կնոջ» և «վասն այսահարաց և լուսնոտից»:

[1] Մատթ., ԺԷ 17-20, Թ 22-29, ԺԷ 19 և այլն:

Հռոմ. եկեղեցին իր մարմնասիրական ուղղութեան համեմատ գրեթէ առաւել մեծ նշանակութիւն է տալիս այս խորհուրդին, քան ս. Հաղորդութեան հիւանդի համար: Հակառակ Նոր Կտակարանի բոլոր վկայութիւնների, որոնք մի առ մի յիշեցինք վերը, նա այս խորհուրդը ոչ թէ բժշկութեան և ապաքինութեան խորհուրդ է համարում, այլ «վերջին օծման», որ և կատարում է մեռնող չափահաս հաւատացեալի վրայ՝ օծմամբ աչքերի, ականջների, ձեռքերի, քթի, բերանի, ազդրների ու ոտքերի՝ «վասն մահացու հիւանդաց»[125ա]: Նրա այս ծանր մոլորութիւնը ԺԲ դարից հին չէ. այն ոչ մի ապացոյց չունի Ս. Գրքից և միևնոյն ժամանակ վերացնում է ս. Հաղորդութեան խորհուրդի բացառիկ նշանակութիւնը, որով միայն կարող է հաւատացեալը սրբուել և առ Աստուած դիմել մահւան մահճից, ինչպէս կանոնուած է Նիկիայի ս. ժողովի ԺԳ կանոնով[126*]: Հիւանդաց կարգին այսպիսի գերադաս նշանակութիւն տալով, Հռոմ. եկեղեցին օգտւում է հիւանդների նեղ վիճակից և իր կղերի միջոցով հարուստ վախճանուածներից շահ կորզում: Ալբերտ Մեծն ու Թովմա Աքւինացին ասում են, որ իբր թէ մկրտութեան և ապաշխարութեան ներգործութիւնից դուրս են մնում հակումը դէպի չարը, որ արգելք է մեռնողի փրկութեանը, իսկ այդ միայն օծմամբ է ոչնչանում: Իսկ եթէ հիւանդը յանկարծ լաւանում է, պարտաւորւում է բոկոտն չքայլել և ամուսնութիւնից հեռու մնալ:

Երկրորդ՝ Հռոմ. եկեղեցին այս խորհուրդի մէջ էական նշանակութիւն է տալիս ոչ թէ աղօթքին, այլ իւղին, որը և պէտք է եպիսկոպոսն օրհնի և քահանայի գործադրութեանը յանձնի: Բայց մենք տեսանք, որ նախ Նոր Կտակարանում իւղի գործածութիւնը կապւած էր լոկ Հրեայ ժողովրդի առօրեայ սովորութեան հետ և շատ անգամ հազւադէպ է յիշւում, և երկրորդ՝ ոչ մի տեղ ասւած չէ, որ այդ իւղը եպիսկոպոսի օրհնութեան կարիքն ունենայ, որովհետև այդ իւղը երկրորդական նշանակութիւն ունի, և երբեք չի կարող այն նշանակութիւնն ու հիմքը ստանալ, ինչ որ ունի Ս. Հոգու շնորհաբաշխութեան միջոց հանդիսացող իւղը դրոշմի մէջ: Այսպէս և Օրթոդոքս եկեղեցին էական նշանակութիւն է տալիս իւղին, սակայն իւղի օրհնութիւնը վերապահում է քահանային և այս խորհուրդը վերջին օծում չի համարում:

Իւղի նշանակութիւնը բարձրացնելով՝ մարմնաւոր բժշկութեան համար ևս նա այնքան բազմացրել է նիւթական միջոցները, որ հիւանդներն առաւել

գերադասում են մեծամեծ զոհաբերութեամբ ճանապարհորդել, դիմել դրանց երևակայւած փրկարարութեանը, քան թէ բժիշկների խորհուրդներին: Այդպիսին են զանազան սրբերի զգեստները, սուրբ տեղերից վարդարանները, ամեն ժամանակ և ամենուրեք գտնւող անյայտ սրբերի ոսկորները, որոշ աղօթքների մեքենայական կրկնութիւնը և այլն, որոնք իրենց յատուկ էութեամբ փրկարար են քարոզւում ժողովրդի մէջ: Այս մոլար ուսմունքը պատճառ եղաւ, որ Եւրոպայի հռչակաւոր բժիշկները հնարեցին «ներշնչման» տեսութիւնը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հոգևոր ներգործութիւն հիւանդի վրայ և համոզում, թէ ինքը կը բժշկւի այսպէս կամ այնպէս: Հիւանդն էլ, եթէ ենթարկւում է բժշկի այդ ներգործութեանը և հաւատում, բժշկւում է: Բայց որովհետև բժիշկներն անձամբ չեն կարողանում ներշնչել այդպիսի հաւատք, յաճախ ուղարկում են դարձեալ այն վայրերը, որտեղ ժողովրդին շահագործում է կղերը: Ուրեմն դարձեալ ժողովրդի հաւատքն է դեր խաղում և այն էլ, դժբախտաբար, հեթանոսական ուղղութիւն ստանալով:

Այս մարմնաւոր ուղղութիւնը բաւական էր, որ դարձեալ բողոքական յեղափոխականների կողմից դիմադրութեան հանդիպէր և հիւանդաց կարգն ուղղակի լոկ սովորութիւն համարւէր ու մերժւէր: Նրանց կարծիքով բաւական է միայն հաւատք հիւանդի համար, իսկ այս խորհուրդն աւելորդ է: Արդ, Նոր Կտակարանի՝ գլխաւորապէս Յակոբոսի խօսքերը, որքան էլ բողոքականներն ուզում են սխալ բացատրութեամբ նպաստաւոր դարձնել իրենց գաղափարների համար, չեն կարողանում: Նոր Կտակարանի պատւէրը ոչ մի սովորական բժշկութեան չի վերաբերում, որովհետև այդ բժշկութիւնն առաքեալների աղօթքով և ձեռք դնելով էր կատարւում և ոչ իւղի զօրութեամբ, ոչ ուղղակի ներգործութիւն էր, որովհետև պահանջւում էր հիւանդների մեղքերի զղջում ու հաւատք. նոյնպէս և բժշկութիւնը չէին կատարում առանձին շնորհով օժտւած անձինք (Ա Կոր., ԺԵ 7-11), այլ քահանաները, չէին կատարում մի որևիցէ լոկ տեսանելի միջոցով, և առանց այդ քահանայական խոստովանութեան չէր իրականանում, որովհետև այդ մի սուրբ խորհուրդ էր: Այսպիսով Հռոմ. և Բող. եկեղեցիները շեշտակի իրար հակառակ ծայրայեղութիւնների մէջ են ընկնում, մէկը զարկ տալով մարմնաւոր միջոցներին ու նրանց մեծ նշանակութիւն վերագրելով, իսկ միւսը մերժելով այդ մարմնաւոր միջոցների հետ միասին նաև

քրիստոնէական աղօթքի, հիւանդի հոգու քաւութեան և քահանայի շնորհաբաշխ ձեռքի նշանակութիւնը նրա բժշկութեան համար:

Քրիստոսի օրինակին և առաքելական շաւղին հաւատարիմ մնալով՝ Հայաստ. ս. Եկեղեցին զերծ է երկու այդ ծայրայեղ մոլորութիւններից: Թէ Նոր Կտակարանից ու թէ այս կարգի խորհրդակատարութիւնից բերուած վկայութիւններն արդէն ակներև ցոյց են տալիս, որ այս խորհուրդը ոչ թէ մեռնողների վրայ է կատարւում, որոնց համար կայ «Հաղորդ տալոյ» կարգն, այլ ծանր հիւանդների բժշկութեան համար է. երկրորդ՝ խորհուրդի կատարման հիմքը հիւանդի զղջումն է ու հաւատքը. երրորդ՝ այս ս. խորհուրդն իրականանում է քահանայի աղօթքով, պատշաճաւոր ընթերցւածքով և ձեռք, խաչ ու Աւետարան հիւանդի վրայ դնելով. և չորրորդ՝ բժշկողն աստուածային զօրութիւնն է և կարողութիւնը, իսկ տեսանելի միջոցներից միմիայն նրանք են ընդունւում, որոնք յիշեցինք և որոնք Աստծու շնորհաբաշխութեան յատուկ միջոցներ են ընդհանրապէս[1]:

Երկրորդական ու նշանակութիւն չունեցող միջոցներից փոքրիշատէ հանդուրժւել է իւղն իբրև հրէական կեանքի սովորութիւն և առաքելոց տեսած ու չարհամարհած նիւթ: Ուստի և Հայոց հայրապետները երբեմն-երբեմն թոյլատրել են քահանաներին օրհնել իւղը, ինչպէս լինում է ոտնալուայի երեկոյին ոտներ օծելու համար, և այդ արել են նրանք, երբ հեթանոսական մոլորութիւնների դէմ կուելով հարկ են համարել վնասակար միջոցների փոխարէն այդ դնել և ժողովրդի հրէական ու հեթանոսական սովորութիւնները հետզհետէ վերացնել: Այսպէս և Ս. Յովհան Մանդակունին մաքառելով գիր առնելու, հարցուկների, բախտի ու ճակատագրի, օրերի խտրութիւնների, դիւթերի, հմաների, թովիչների, կախարդների, ձկների ու սողունների ոսկորներից կազմւած ծրարներին ու բժժանքներին հաւատալու դէմ, ասում է. «Ինքակամութեամբ մոլորւած են նրանք, ովքեր թողնելով Աստծու շնորհը, աղօթքը և օծման իւղը, որոնք պատւիրանքները սահմանել են հիւանդների համար, ինքնակամութեամբ մոլորւում են հուլունքների ու գրերի [կախարդանքի] մէջ»: «Արդ, ահա [սրանով] լուծարում ես Աստծու շնորհն ու սուրբ Խաչի զօրութիւնը, պահքը և աղօթքները, որոնք սահմանել են

[1] Տե՛ս նաև Ս. Գրիգոր Նարեկացի. Աղօթք վասն բժշկութեան.[Նարեկ. Բան ԼԵ], Մաշտոց 823:

պատւիրանքները, և օգտագործում ես պահապան գիրը, դիւթողների հուլունքները, որոնք Աստծու պատւիրաններից չեն, այլ սատանայի գաղտնի նետերն են՝ [արձակւած] դիւթերի ձեռքով»: Ս. Հայրապետը լաւագոյն է համարում աղօթքն ու պահքը և մերժում է հեթանոսական ժժմունքներն ու մինչև անգամ «պահապան գրերը»:

Արդ, Հայաստանեայց ս. Եկեղեցին ոչ մի նիւթի ինքնըստինքեան փրկարար նշանակութիւն չվերագրելով, այստեղ ևս կատարելապէս հետևողականօրէն է վարւում՝ մերժելով այս ամենն, ինչ որ Աստծու շնորհաբաշխութեանը յատուկ ու մշտական միջոց չէ իր բովանդակ աստուածպաշտութեան մէջ, և աւանդիչ լինելով Աստծու շնորհների ու զօրութեան, կարող է իր էութեան հետ կապել ժողովրդի հաւատքը: Այդպէս և գործածութեան մէջ չի դնում իւղը, որ ոչ Քրիստոս է գործադրել կամ պատւիրել գործադրելու և ոչ առաքեալներն են անհրաժեշտ միջոց դարձրել: Մերժելով իւղի ինքնանպատակ գործածութիւնը, չի թոյլ տալիս, որ մեղքերի զղջումը, Ս. Աւետարանով կրթւելը, հաւատքի զօրացումը, աստուածային մշտական շնորհաբաշխութեան ձեռքը և աղօթքի զօրութիւնը նիւթի փոխարինւի և հիւանդները չմոռանան խոստովանութիւնը՝ «այն բանին ապաւինելով, թէ վերջին օրը օծւելու ենք բալասանի ձէթով և արդարանալու»: Ըստ այսմ հիւանդը պէտք է համոզւի, որ «[աւելի] անհրաժեշտ է խոստովանել, քան օծւել»[1]: Ուստի և որոշապէս գծւած է այս ս. խորհուրդի կատարման էութիւնը Մաշտոցի մէջ. «Այնժամ քահանաների մի կէսը կանգնելով հիւանդի աջ կողմը և միւս կէսը՝ ձախ, և աւագերէցը գալով Աւետարանը դնում է հիւանդի գլխին և աղօթք ասում»: Ուրիշ որևիցէ պարագայ չի յիշւում այս կարգի մէջ:

Այս ս. խորհուրդի պաշտօնը պատկանում է քահանայական աստիճանին, նպատակն էլ ցոյց է տալիս, որ կրկնելի է:

ԽԷ
Է ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա- Ժողովրդին ապաշխարութիւն քարոզելու, Քրիստոսով փրկութիւն շնորհելու ու նոր կեանք պարգևելու և ս. Հոգով նրան այդ նոր կեանքի մէջ

[1] Հարց. էջ 604. տե՛ս նաև Դրախտ., էջ 379-390:

առաջնորդելու համար անհրաժեշտ են այդ բոլոր տալիք շնորհները լրապէս ստացած ու Ս. Հոգով սպառազինուած ընտրեալ պաշտօնեաներ: Այդպիսի պաշտօնեաները կարող կը լինեն ծառայել իրենց կոչմանը միմիայն այն ժամանակ, երբ նախ հնարաւորութիւն ունենան ստանալու Աստծուց այն բոլոր շնորհները, որոնք կամ որոնցից պէտք է բաշխեն հաւատացեալներին, և երկրորդ՝ պէտք է միջոց ունենան որոշ կարգով աւանդելու իրենց ունեցածը: Ստանալ Աստծու շնորհները լոկ մարդահնար միջոցով անկարելի է, որովհետև շնորհ տուողն Աստուած է և շնորհների էութիւնն Աստուած միայն գիտէ և ուրեմն միայն Նա կարող է էապէս իր շնորհների էութեան համապատասխան կարգ սահմանել: Աւանդել Աստծու շնորհները դարձեալ լոկ մարդահնար կերպով անկարելի է, որովհետև թէ այս դէպքում շնորհաց էութեան համեմատ կարգը միմիայն Աստուած կարող է որոշել ու թէ էապէս միմիայն աստուածային կարգով աւանդածը կարող է ընդունող հաւատացեալի համար հաւաստիութիւն ունենալ: Ահա այն ս. խորհուրդն, որով Աստծուն ընծայուածը և հաւատքով կոչուածը Ս. Հոգու շնորհաբաշխութեան պաշտօնեայ է դառնում, ձեռնադրութեան կամ քահանայութեան ս. կարգն է[1]:

Ինչպէս որ Աստծու արքայութեան հաստատութիւնը սկսուեց Հին Ուխտով և իր լրումը ստացաւ Նորի մէջ, այնպէս և այս աստուածադիր քահանայութիւնն իբրև նախատիպ սահմանուեց Մովսէս մարգարէի միջոցով և իսկական հաստատութեան հասաւ Քրիստոսով: Հին Ուխտում քահանայապետն Աստծու յայտնութեան և Սրբութիւն Սրբոցի անմիջական պաշտօնեան էր, քահանան ստորադրեալ էր և սպասաւորում էր Սրբութեան մէջ, և ստորին սպասաւորներն էին Ղևտացիները: Թէ քահանայապետ ու թէ քահանայ անունները բովանդակում են քահանայ բառի իմաստը, որ է Աստծու առաջ կանգնող սպասաւոր[127*], ըստ որում թէ քահանայապետն ու թէ քահանան՝ իւրաքանչիւրն իր պաշտօնի համեմատ Աստծու և մարդկանց միջնորդն էր, որ զոհաբերում, աղօթում և քաւում էր մարդկանց մեղքերն Աստծու առաջ, և միւս կողմից ուսուցանում էր և Աստծու կամքը յայտնում ժողովրդին: Աստծու այդ սպասաւորները գործունէութեան էին

[1] Ցաճախ., ԺԱ, էջ 755:

կոչում որոշ կարգով և որոշ կարգակատարութեամբ ու նուիրում Աստծու տան պաշտօնին, ծառայում Երուսաղէմում տաճարի մէջ[1]:

Նոր Ուխտում ևս այդ նախատիպն իրագործուեց առաքեալների ու նրանց կարգած պաշտօնեաների յաջորդութեամբ, ըստ որում Քրիստոս Ինքն իսկական Քահանայապետ ու հաշտեցուցիչը լինելով Աստծու և մարդու մէջ, ընտրեց առաքեալներ Իր եկեղեցու հաստատութեան և սպասաւորութեան գործի համար և առաջնորդ տուեց նրանց Ս. Հոգուն Իր համբարձումից յետոյ՝ Հոգեգալստեան տօնին: Հունձը շատացաւ և առաքեալները ևս նորանոր պաշտօնեաներ սպառազինեցին, որպէսզի ամենուրեք քարոզուի Աւետարանը և տարածուի Աստծու արքայութիւնը. «Առաքեալները հրաման առան սրբերին կարգել Աստծու եկեղեցու սպասաւորութեան մէջ, որպէսզի Քրիստոսի պատարագի սպասաւորը հաղորդակից լինի հրեշտակներին»[2]: Ըստ այսմ առաքելական եկեղեցիներն ունեն քահանայապետներ, առաքեալների փոխարէն, այլև եպիսկոպոսներ, քահանաներ ու սարկաւագներ, որոնք սկիզբ են առել այն ժամանակից, երբ առաքեալներն ընտրելով իրենց հասուն ու հաւատազօր աշակերտներից, ձեռնադրում էին[3] յիշեալ պաշտօնների համար: Նրանք հաստատելով ձեռնադրութեան ս. Կարգն ու ձեռնադրութեան իրաւունք տալով իրենց յաջորդներին, այնպէս տնօրինեցին, որ եկեղեցու ընդարձակուելուն համընթաց զգացուած կարևորութեան չափով ընտրեալ պաշտօնեաներ ևս ձեռնադրուեն ամենուրեք: Այսպիսով ոչ թէ միայն Երուսաղէմն է դառնում երկրպագութեան տեղ, այլ ամբողջ տիեզերքը (Յովհ., Դ 20), որտեղ յիշւում է Աստծու Միածին Որդու անունն ու մատուցւում է անարիւն պատարագ: Ոչ թէ միմիայն Ահարոնեան ցեղն է սպասաւորում Աստծու փրկագործութեան ս. խորհուրդին, այլ քանի որ իսկական քահանայապետն է Քրիստոս, «ըստ կարգին Մելիքսեդեկի», որ թէ՛ պատարագում է ու թէ՛ պատարագւում (Եբր. Ե), այժմ ամեն մի ճշմարիտ հաւատացեալ՝ նուիրելով Նրան և Նրա առաքելական յաջորդութեամբ ձեռնադրական շնորհ ընդունելով՝ կարող է լինել Աստծու այդ Ս. Ուխտի սպասաւորը: Փոխուեց քահանայութիւնը, փոխուեց և սրբագործութեան օրէնքը, ըստ

[1] Ել., ԻԸ 40-41, Լ 30, Խ 15, Ղևտ., Ը 12, Է 36, Ժ 7, Թիւ., Գ 3:
[2] Ցաճախ., ԺԱ 49, Ընդհան. 417, 413, Ղուկ., Զ 13, Գործք., Ի 28, Եփ., Դ 11, Պետ., Ե 1, Ցայտն., Ե 8-11:
[3] Գործք., Զ 6, ԺԴ 22, Եփ., Դ 11, Ա Տիմ., Դ 14, Բ Տիմ., Ա 6-14:

ճշմարիտ նախատիպի իրագործելով (Եբր., Է 12). եղաւ «երկինք նոր և երկիր» (Ես ԿԶ), համաձայն մարգարէութեան, և Ս. Հոգով նոր քահանաներ են հաստատւում փրկական ճշմարիտ սպասաւորութեան համար: Այժմ ոչ թէ միմիայն ընտրեալ ժողովուրդն է վայելում Աստծու արքայութեան շնորհները, այլև իւրաքանչիւր հաւատացեալ մտնում է այդ արքայութեան մէջ, վայելում է եկեղեցու ս. խորհուրդների փրկարար շնորհները, Աստծու շնորհագործած պաշտօնեաների միջոցով՝ սակայն իր հաւատքի կատարեալ համարձակութեամբ: Այլև այժմ ոչ թէ միմիայն մի ընտրեալ ցեղի է վերապահւում Աստծու պաշտամունքն ու սպասաւորութիւնը, ինչպէս էր Հին Ուխտում Ղևիի ցեղը, այլ իւրաքանչիւր հաւատացեալ անձնապէս ոչնչով չի տարբերւում հոգևորականից և ինքը ևս կարող կոչում զգալով մտնել աստուածային տան յատուկ սպասաւորութեան գործի մէջ (Ա Պետ., Բ 8-10):

Բ- Ձեռնադրութեան ս. Կարգի խորհուրդի կատարումը իրագործւում է՝ նախ նիւրեալի ընտրութեամբ ու նրա արժանիքների վկայութեամբ իր և եկեղեցու կողմից. երկրորդ՝ աղօթքով առ Աստուած. երրորդ՝ Սուրբ Գրքից ընտրուած պատշաճ հատուածների ընթերցանութեամբ. չորրորդ՝ ձեռք դնելով. հինգերորդ՝ օծմամբ. վեցերորդ՝ պաշտօնի յայտարար իրը (սկիհ, բանալի, գաւազան և այլն) յանձնելով նիւրեալին, և եօթներորդ՝ նիւրեալի դաւանական խոստովանութեամբ ու պարտքի յանձնառութեամբ: Այս եօթը կէտերի մէջ ս. խորհուրդի էութիւնը կազմում են աղօթքն ու ձեռք դնելը. իսկ մնացած կէտերը դրանց պարագաներն են, կամ թէ շնորհաբաշխութեան արտայայտութիւնը, ինչպէս օծումը քահանայական աստիճանից սկսած: Ըստ որում բուն հոգևոր պաշտօնի առաջին աստիճանն իսկապէս դպրութիւնն է, որ նոյնպէս ձեռք դնելով է լինում, մինչդեռ բուն հոգևոր կարգը սարկաւագութիւնն է, որում ս. խորհուրդի կատարման արտայայտութիւնն ըստ վերադաս աստիճանաւորութիւնների է կատարւում, որ է այս.

«Աստուածային և երկնային շնորհը, որ միշտ յագեցնում է Առաքելական եկեղեցու սուրբ սպասաւորութեան պէտքը, կոչում է (այս անուանը) դպրութիւնից սարկաւագութիւն, համաձայն իր անձի և բովանդակ ժողովրդի վկայութեան»: Եւ անմիջապէս յետոյ.

«Ես ձեռքս դնում եմ սրա վրայ, դուք բոլորդ աղօթք արէք, որպէսզի սա արժանի դառնայ սարկաւագութեան աստիճանին՝ անարատ կերպով պաշտելու Աստծու սուրբ սեղանի առջև»:

Ձեռք դնելն այն արտաքին միջոցն է, որով առաքելական յաջորդականութեամբ նիւրեալին աւանդւում է Աստծու շնորհը: Այդ կար նաև Հին Ուխտում[1] իբրև ստուերական նախատիպ: Նոր Ուխտում առհասարակ աստուածային շնորհների աւանդման եղանակն է ձեռք դնելը, որ գործ էր ածում նաև Քրիստոս, իսկ առաքեալները՝ մկրտութեան ժամանակ՝ Ս. Հոգին աւանդելու համար: Սակայն ձեռնադրութիւնը մի անհրաժեշտ միջոց էր, որով առաքեալներն ընտրեալ ընծայացուներին աւանդում էին այն շնորհը, որ պահանջւում է Աստծու պաշտօնեայ դառնալու համար: Նրանք թէ՛ ձեռնադրութեամբ աւանդեցին և թէ՛ պատուիրեցին իրենց յաջորդներին այդպէս անել[2]: Այդ արտաքին միջոցով ընծայացուն ստանում էր Ս. Հոգու շնորհն իր նոր պաշտօնի համար[3]: Ուրեմն ձեռք դնելով և աղօթելով աւանդւում է նիւրեալի այն շնորհը, որ խնդրում է Աստծուց և որ ստացել է ձեռնադրողն առաքելական յաջողութեամբ աւանդաբար: Իսկ օծումը, լինելով Ս. Հոգու իջման բուն արտայայտութիւնը, քահանայական աստիճանից սկսած իբրև լրումն ձեռնադրութեան ս. միւռոնի օծմամբ է կատարւում պաշտօնի բարձրութեան համեմատ: Կաթողիկոսն էլ, որ շնորհաց լրումն ունի իբրև առաքելական փոխանորդ, ստանում է գագաթի իսկական օծումը 12 առաքելոց համեմատ 12 եպիսկոպոսների ձեռքով «ճառագայթակերպ խաչի» ձևով, որովհետև ըստ Ահարոնեան օծման օրինակի[4] Ս. Հոգու շնորհների զեղումը թափւում է առաքեալների յաջորդի գլխին և ճառագայթում խաչակիր հաւատացեալների վրայ:

Ինչպէս որ առաջին դարերում կային առաքեալներ, տեսուչներ կամ եպիսկոպոսներ ու երէցներ, այլև՝ սարկաւագներ և ստորին սպասաւորներ, այնպէս էլ Հայաստանեայց ս. Եկեղեցին ունի առաքելական փոխանորդներ, եպիսկոպոսներ, քահանաներ ու սարկաւագներ իրենց երկրորդական ստորադաս աստիճանաւորութիւններով և սպասաւորներով: Ստորադաս բարձր

[1] Ծննդ., ԽԸ 14, Թիւ, ԻԷ 23, Բ Օր., ԼԴ 9:
[2] Գործք., Զ 6, ԺԳ 3, ԺԴ 23, Ա Տիմ., Դ 14, Ե 22, Բ Տիմ., Ա 6:
[3] Գործք., Զ 10, հմմտ. Ը 29, ԺԳ 2, Եփ., Գ 2, Ա Տիմ., Դ 14, Բ Տիմ., Ա 6:
[4] Ել., ԻԹ 4-9, 29, Ղևտ., Դ 3, 5, 16, Զ 13, 15, Ը 12, Սաղմ. ՃԻԲ:

աստիճանաւորութիւններն են մասնաւոր կաթողիկոսներ (Սիսի և Աղթամարի), պատրիարքներ կամ Հայրապետական փոխանորդներ (Եղուսաղէմի ու Կ. Պոլսի) և արքեպիսկոպոսներ, որոնք բոլորը ևս ճիւղաւորութիւններն են: Ընդհանրական Հայրապետն ունի Ս. Հոգու պարգևելի բոլոր շնորհները, որոնք և նա բաշխում է իր ձեռնադրութեամբ կամ օրհնութեան Կոնդակով իր ստորադրեալ պաշտօնեաներին: Բոլորի իրաւունքներն ու պարտականութիւնները սահմանւում են ըստ շնորհների[1] յիշւում են ձեռնադրութեան աղօթքների կամ թէ Կոնդակի մէջ և ուրեմն ոչ ոք չի կարող իր եկեղեցական իշխանութեան սեփականութիւն դարձնել այնպիսի իրաւունքներ, որոնք պատահաբար ձեռք են բերւում քաղաքական հանգամանքների մէջ: Եկեղեցականները ստորադրւում են իրար և գործադրում են իրենց իշխանութիւնը միմիայն, ըստ շնորհների պարգևի, ըստ Աւետարանի վարդապետութեան և ըստ Հայաստ. ս. Եկեղեցու կանոնական սկզբունքների: «Ձեր հաւատի վրայ չենք իշխում, այլ գործակից ենք ձեր այդ շնորհներին, որովհետև հաւատով հաստատուն էք», ասում է Պօղոս առաքեալն իր հաւատացեալներին (Բ Կոր., Ա 23): «Նոր հովիւներին պարտ է. հեզութեամբ ու հանդարտութեամբ հովւել ժողովրդին, ինչպէս հովիւները՝ հօտին և ոչ թէ այս աշխարհի իշխանների նման՝ ճոխութեամբ և սաստկութեամբ», ասում է Ս. Ներսէս Շնորհալին. այնպէս որ նոյնիսկ յանցաւորների հանդէպ պէտք է ըստ շնորհների «յանդիմանութիւն կիրառել»[2]: Եւ որովհետև հոգևորականը ձեռնադրութեամբ միմիայն այդքան է ստանում, որքան յիշւում է ձեռնադրութեան միջոցին, բնականաբար այս սկզբունքից շեղողը զրկւում է իր իշխանութիւնից, իբրև հեռացողը ս. Հոգու այն շնորհներից ու ներգործութիւնից, որոնց ենթակայ է նա միմիայն արժանապէս: Այդպիսի հոգևորականը դատապարտւում է ըստ Քրիստոսի վարդապետութեան[3] և մերժւում է իւրաքանչիւր հաւատացեալից:

Բոլոր ձեռնադրողների համար երաշխաւոր է կաթողիկոսը, որի ընդհանուր պարտաւորութիւնն է՝ անխախտ պահել Հայաստանեայց ս. Եկեղեցու

[1] «Քահանաները թող գահասիրութեամբ չհակառակւեն իրարու, որովհետև այն, որ Աստծու շնորհն ընտրեց նախ քահանայութեան մէջ, այն է նախադասելին եկեղեցու մէջ». Կանոն Դունայ (551թ).[128*]:

[2] Ընդհան. 62-63, տե՛ս նաև Եղիշէ 143, Հարց. Պրակ. Ջ, էջ 538:

[3] Մատթ., Ի 20-28, Մարկ., Ժ 35-45, տե՛ս և վերը գլ. ԼԲ, ԼԳ և իմ Հայաստ. Եկ. Ս. Կարգը:

վարդապետական, դաւանական ու վարչական աւանդական հարազատութիւնը. այդ պատճառով և նա ընտրւում է ամբողջ Եկեղեցու լրումից և օծւում է տասներկու եպիսկոպոսներից, այն է՝ իբրև առաքելոց լրումից և եկեղեցու ներկայացուցիչներից: Նա հանդիսապէս ուխտում է հաւատարիմ մնալ Հայաստ. ս. Եկեղեցու առաքելական ու հայրապետական կարգին ու իրաւունքին: Այնուհետև թէ՛ միւռոնի՝ այն է՝ Ս. Հոգու շնորհների աւանդման միջոցի՝ և թէ՛ եպիսկոպոսների ձեռնադրութիւնն ինքն է կատարում և ստորադրեալ բոլոր պաշտօնեաների շնորհագործութիւնը ճիւղաւորում: Ուստի և նա կոչւում է նոյնպէս Եպիսկոպոսապետ, Քահանայապետ, Ընդհանրական Հայրապետ ու ծայրագոյն Պատրիարք: Նա իր պաշտօնեաների միջոցով զարկ է տալիս Հայաստանեայց ս. Եկեղեցու քարոզչական, դաստիարակչական և ուսուցչական առաջադիմութեանը և պահպանում է մոլորութիւններից ու զեղծումներից[129*]:

Ինչպէս Ամենայն Հայոց Կաթողիկոսն ամբողջ Եկեղեցու գլուխն է և պատասխանատու է Աստծու և Հայաստանեայց Եկեղեցու ս. Հայրերի ու նրա աւանդական հաստատութեան առաջ, այնպէս էլ վիճակաւոր առաջնորդը գլուխ է իր վիճակի ու պատասխանատու է թէ՛ դրանց և թէ՛ Կաթողիկոսի առաջ, նոյնպէս և քահանան գլուխ է իր համայնքի և պատասխանատու է թէ Աստծու, Հայաստանեայց Եկեղեցու ս. Հայրերի ու նրա աւանդական հաստատութեան և թէ իր եպիսկոպոսի ու Կաթողիկոսի առաջ: Բոլորի իրաւունքներն ու պարտականութիւններն էլ հաստատուած են առաքելական կանոնադրութեամբ ու ձեռնադրութեան կարգով և սահմանուած են Հայաստանեայց ս. Եկեղեցու ս. Հայրերի հնաւանդ առաքելական ու ժողովական կանոններով: Եւ ինչպէս որ կաթողիկոսը ձեռնադրում է հոգևորականներ, առհասարակ բոլոր վիճակների համար, այնպէս էլ առաջնորդը քահանաներ, սարկաւագներ ու սպասաւորներ է ձեռնադրում, ըստ ընտրութեան պատշաճաւոր համայնքի և ըստ Հայրապետական տրամադրութեան: Ընդ սմին իւրաքանչիւր հոգևորականի իրաւունքն ու պարտականութիւնը հաստատւում է մի սկզբունքի, մի հիմունքի վրայ, այն է՝ որ նրա իշխանութիւնը սահմանւում է ձեռնադրութեան միջոցին՝ և նա պատասխանատու է բոլոր վերադաս հոգևորականների առաջ, այլև այն ամենքի առաջ, որոնց առաջ պատասխանատու են այդ վերադաս հոգևորականներն իսկ:

Ձեռնադրութեան ս. կարգում կայ օրհնութեան և ապա բուն ձեռնադրութեան աստիճան. օրհնութեան աստիճանը սկսւում է Եկեղեցու սպասաւորական ամենաստորին դիրքից, ըստ որում օրհնւում են նախ սաղմոսերգուն և աւելածուն, յետոյ դռնապանը, որ է ս. Կարգի առաջին աստիճանը. Բ ընթերցողը, Գ երդմնեցուցիչը և Դ ջահընկալը: Իսկ բուն ձեռնադրութիւնը սկսւում է Ե դպրութիւնից կամ կիսասարկաւագութիւնից, որը և տրւում է եպիսկոպոսի ձեռնադրութեամբ: Այս աստիճանին հետևում են՝ Զ սարկաւագութիւնը, և Է քահանայութիւնը: Սակայն Հայաստանեայց Եկեղեցու ս. Կարգի իրական դասակարգութիւնն է. Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, Բ Փոքր կաթողիկոսներ, Գ Արքեպիսկոպոսներ (պատրիարք), Դ Եպիսկոպոսներ, Ե Վարդապետներ՝ մասնաւոր ու ծայրագոյն իշխանութեամբ, որ ուսումնական աստիճան է և տրւում Է առանձին ձեռնադրութեամբ, Զ Աբեղաներ ու քահանաներ, Է. Սարկաւագներ, Ը Դպիրներ, Թ Սպասաւորներ: Սրանք ամենքն էլ վերոյիշեալ աստիճանական կարգով են ձեռնադրւում և աստիճան առ աստիճան բարձրանում կամ միանգամից (ինչպէս Մեծն Ներսէս և Զաքարիա կաթողիկոսը) կամ հետզհետէ ժամանակի ընթացքում արժանանալով:

Գ- Քանի որ ձեռնադրողը պէտք է ունենայ որոշ պատրաստութիւն և ընդունակութիւն ս. Հոգու շնորհներով սպառազինելու համար, պարզ է, որ այդ շնորհների համեմատ էլ իւրաքանչիւրը պէտք է հակառակ չլինի համապատասխան կատարելութեան պայմաններին: Կատարելութեան այդ պայմաններն են.

1- Մարմնի ու չափահասութեան կատարելութիւն, որպէսզի թէ իր հոգևոր կատարելութիւնը ցոլացնի նաև արտաքուստ՝ ժողովրդի վրայ ոչ միայն լսողութեամբ, այլև տեսողութեամբ ազդելու համար և թէ այրական հաստատամտութիւն ունենայ իր գործունէութեան մէջ, մանաւանդ որ մարմնական թերութիւններն ու տղայական փոփոխամտութիւնը ծաղրական կը դարձնեն լրջութեան ու ճշմարտութեան պաշտօնեային (Բ Տիմ., Դ 9): Այս սկզբունքը կար Հին Ուխտի նախապատրաստական եկեղեցում, առաւել ևս պահելի է Նոր Ուխտի իսկական եկեղեցում (Ղևտ., ԻԱ 17-23): Նոյնպէս և ազատ տղամարդը կարող է քահանայ դառնալ, որովհետև «այրն է տիրական» և ոչ կինը և ծառան կամ

ճորտն ու ստրուկը[1]: Այդպէս և ընծայացուն պէտք է լինի օրինաւոր ու բարոյական կեանքի ժառանգ, որպէսզի նրա մարմնի և չափահաս լինելու կատարելութիւնը ժառանգականութեան օրէնքի հայեցակէտից ևս հաւաստի լինի ժողովրդի համար:

2- Մտաւոր ու բարոյական պատրաստութիւն, որովհետև առանց ժամանակի պատշաճաւոր գիտութեան, առանց աստուածաբանական ուսման և առանց վայելուչ կեանքի տրամադրութեան ոչ ոք չի կարող ընդունարան լինել ս. Հոգու շնորհների, ինչպէս տեսանք նախընթացում, և ոչ էլ կարող է այդ շնորհների համեմատ գործիչ լինել, ուստի և պատշաճ գիտութիւն ու վարք է պահանջում Ս. Գիրքը և դատապարտում է տգիտութիւնն ու չար վարքը[2] «Սնւիր հաւատքի խօսքերով և բարի ուսուցմամբ, որի հետ իսկ եղար», «հաւատացեալներին օրինակ եղիր խօսքով, սիրով, հաւատքով, սրբութեամբ», հրամայում է իր ձեռնադրածին Պօղոս առաքեալը: Ուստի և հրաման տալիս Տիմոթէոսին. «Ձեռքերդ շտապով որևէ մէկի վրայ մի դիր և ուրիշների մեղքերին մասնակից մի՛ եղիր, քեզ մաքուր պահիր» (Ա Տիմ., Ե 22): Այդպէս և Մաշտոցում որոշւած է. «Աստուածային իշխանութիւնը անարժանների վրայ չի հանգչում»: Չէ՞ որ Քրիստոս էլ ամբողջ երեք տարի սովորեցրեց իր աշակերտներին և ապա ս. Հոգի տւեց: Մաշտոցում գեղեցկապէս պատւիրւում է եպիսկոպոսին. «եթէ տգէտ է, չձեռնադրել նրան, որովհետև տգիտութիւնն անբաններին է վայել. իսկ անբանը չի կարող քահանայ լինել: Այդ պատճառով մարգարէն ասում է. «[Արդարև] քահանայի շրթունքները զգոյշ պիտի վարեն գիտութեան հետ... քանի որ նա է Ամենակալ տիրոջ պատգամաբերը»[3]: «Արդ, ինչ որ Ամենակալի բերանից է ասւած՝ անհրաժեշտ է իմանալ քահանային և ապա յորջորջել նրա (Աստծու) բերան»[4]: Այս են պահանջում ս. Թադէոս առաքեալից սկսած Հայաստանեայց ս. Եկեղեցու բոլոր առաքելական ու ժողովական կանոնները[5]. այս է ասում և Ս.

---

[1] Հարց. 589:
[2] Ա Տիմ., Դ 13-16, Բ Տիմ., Բ, Դ, Տիտ., Ա 7-11:
[3] Մաղ., Բ 7:
[4] Բուն Մաշտոց 251-254, 277-279, Ս. Գր. Տաթևացու. Վարդան վարդապետի և Առաքել վարդապետի յորդորները: Հմմտ. Ընդհան. 79:
[5] Տե՛ս օր. Նիկիոյ ժողովի կանոնները, որոնք հաստատեց Ս. Գրիգոր Լուսաւորիչը. «Այս պատճառով ովքեր մատաղահասակ են, մտքով՝ խակ, ուսմամբ՝ տխմար, կարգերին՝ անիրազեկ, օրէնքներին՝ անտեղեակ, խօսքով՝ խառնիխուռն, ընթացքով՝ անհաստատ,

Սահակը, խստութեամբ դատապարտելով տգէտ հոգևորականներին[130*]: Այսպէս և Ս. Յովհան Մանդակունին խստիւ արգելում է կաշառքով ձեռնադրել տգէտներին և շնորհավաճառ լինել՝ մեղադրելով[1] Սիմոնականութեան մէջ: Ուստի և ձեռնադրութեան ժամանակ եպիսկոպոսը հարցնում է ոչ միայն հաւատքի, վարքի, առաքինական ձգտումների և անձնուիրութեան մասին, այլև հարց է տալիս. «Քահանայական գիտելիքներ ունի՞ կատարելապէս, և՝ աստուածային օրէնքների իմացութիւն: Որովհետև ով չունի Սուրբ Գրքի իմացութիւնը, նա չունի և Աստծու զօրութիւնը, որ նրա մէջ է, որպէսզի չլինի թէ (քահանայագործելիս) մեղք գործի»: Հայաստանեայց ս. Եկեղեցին բարձրացնում է ուսման վարկը

նաև գինեմոլ, նրանց աճապարանքով չմօտեցնել սարկաւագութեանը: Սա եղաւ սուրբ ժողովի կամքը: Նաև եթէ օտարական է, ուրիշ թեմից՝ քո կողմից չսնուցուած և չուսուցանուած՝ այդպիսիներին թող չմօտեցնեն օծմանը, համաձայն առաքելի, որ ասում է. «Ձեռքերդ շտապով որևէ մէկի վրայ մի՛ դիր և ուրիշների մեղքերին մասնակից մի՛ եղիր...»[131*]:

[1] «Արդ, ես սա ասում եմ, ըստ իմ հասկացածի, եթէ մէկը քահանայ ձեռնադրի նրան, ով տգէտ, տխմար մանուկ է, որ ի լուր ժողովրդի բեմից չի կարողանում կարդալ Աւետարանը, և չի սովորել քահանայական կարգի բովանդակ ուսուցումը՝ նրա քահանայ դառնալու պատիժը նա է կրում, ով ձեռնադրել է նրան, որովհետև հասուններն ու ուսեալներն իրենք են տալու իրենց մեղքերի պատասխանները: Բայց սահմանուած է, որ գիտունին և հասակաւորին արժանացնել այս շնորհին, ովքեր կարող են փրկել իրենց անձը և առաջնորդել ժողովրդին: Այս պատճառով մեծն Պօղոսի ձայնարձակ խօսքը բողոքելով ասում էր Տիմոթէոսին. «Ձեռքդ շտապով որևէ մէկի վրայ մի դիր և ուրիշների մեղքին մասնակից մի եղիր» և դարձեալ՝ «Մատաղահասակին մի կարգիր (քարոզիչ), որպէսզի հպարտանալով սատանայի դատաստանի մէջ չընկնի»: «Բայց, ասում է, պարտ է, որ քահանան անարատ լինի, իբրև Աստծու տնտես, լինի խօսքի վարդապետութեան հաւատարիմ վերակացու: Արդ, ինչպէս Պօղոսը Քրիստոսին դնում է իբրև Աստծու և մարդկանց միջնորդ, նաև՝ բովանդակ աշխարհի փրկութեան երաշխաւոր, արդ մի՞թէ այս օրինակով հարկ չէ քահանային ամենայն անարատութեամբ լինել առաջնորդ և Աստծու ժողովրդի մեղքերի քաւութեան փրկագինը: Արդ, եթէ մեծն Մովսէսի մասին Գիրքն ասում է, թէ հեզ, խոնարհ և հանդարտ էր բոլոր մարդկանցից առաւել, սովորել էր եգիպտացիների բովանդակ իմաստութիւնը, և եթէ հեզը, հանդարտը, իմաստունը, անբիծը և Աստծու հաւատարիմ պատգամաւորը ու ժողովրդի մտերիմ տեսուչը չկարողացաւ ժողովրդին զերծ պահել մեղքերից և փրկել նրանց Աստծու հարուածներից և նրանց ժառանգութիւն տալ պարգևական երկիրը, ապա տգէտ, արատաւոր քահանաներն ինչպէ՞ս կարող են փրկել ժողովրդին մեղքերից. ովքեր իրենց անձերն իսկ չեն կարող զերծ պահել մեղքերից, էլ ուր մնաց լինել Աստծու ժողովրդի առաջնորդը և դէպ Աստծու արքայութեանն առաջնորդելու երաշխաւորը: Որովհետև գրուած և պատուիրուած է, թէ «ո՛չ աջ խոտորուիր և ոչ էլ ձախ»: Այս պատճառով Եկեղեցու առաջնորդներին պատուիրում եմ զգուշանալ տգէտներին ձեռնադրելուց և արծաթի կաշառքով մէկին առաջ չքաշել եպիսկոպոսութեան, կամ քահանայութեան, կամ սարկաւագութեան կամ այլ աստիճանի, ինչպէս Փրկիչն ասում է սուրբ Աւետարանի մէջ, թէ «Ձրի առէք, ձրի տուէք»[132*]. Կանոնագիրք Հայոց:

մանաւանդ նրանով, որ ուսման աստիճան էլ ունի և նրան մեծ նշանակութիւն է տալիս, այդ է վարդապետութիւնը, որի մասնաւորութիւնը չորս աստիճան է, իսկ ծայրագունութիւնը՝ տասնչորս և այս աստիճանը քարոզչական իշխանութիւն ունի և այդ ծայրագոյն իշխանութիւն ունեցող հոգևորականն է կոչւում վարդապետ[1] և հոգևոր ուսման (բնագիտական, դաւանաբանական, պատմական աստուածապաշտական և գործնական) ընթացքի որոշ ծրագիր ևս կար «ըստ կարգի ժամանակին», որ ճշտիւ պահպանւում էր այդ վարդապետների մէջ[2]: Սակայն ինչ էլ որ լինի ծրագիրը, էական է նրա սկզբունքը, այն է, որ ընծայացուն ունենայ իր կոչման, պաշտօնի և հովւական ասպարէզում պահանջուող իմացութիւնը՝ «կատարելապէս տիրապետել քահանայական գիտելիքներին և աստուածային օրէնքների իմացութեանը» բնականաբար ըստ ժամանակի աստուածաբանական գիտութեան առաջադիմութեանը, Հայաստանեայց ս. Եկեղեցում[133*]: Այս լաւ հասկանալով՝ մեր ս. հայրապետները գրեթէ միշտ շեշտել են նոյն ծրագիրը ընդհանուր որոշմամբ, և երբեք ժամանակի հետ հակասութեան մէջ չեն ընկել: Բայց և չեն թողել, որ լոկ արտաքին (աշխարհիկ) գիտութիւններին նուիրուած միակողմանի մարդիկ եկեղեցու այդ սրբութեան մէջ մտնեն, և ոչ էլ քաջալերել աշխարհիկ գիտութիւնների տգիտութիւնը, որքան կարելի է եղել ժողովրդի միջոցների հանգամանքներում:

3- Աստուածային կոչումը, ըստ որում «ոչ թէ նա է ընտրեալ, ով ինքն իրեն է գովաբանում, այլ՝ նա, ում Տէրն է գովում»[3], այնպէս որ Աստուած Ինքը պէտք է շարժի մարդուն դէպի այդ ս. գործը և մարդը պէտք է հաւատքով զգայ մի ներքին

[1] Տե՛ս վարդապետաց ցանկը ս. Մեսրոպից սկսած. Մաշտոց ձեռն. վերջում, Բուն Մաշտ. 335-337, Դրախտ. էջ 621-649, տե՛ս և իմ գրուածները. «Հայաստ. Եկ. Ս. Կարգը» և «Աստուածաբան գիտութիւն» գլ. 29:

[2] Տե՛ս Բուն Մաշտ. 337-342, Ս. Գր. Տաթ. կազմածը: Ե դարի հոգևորականների մասին ասուած է, թէ նրանք «սովորեցին ուսումնականը, թուաբանականը, բնաբանականը, երկրաչափականը, երաժշտականը, աստղաբաշխականը, քերականականը, քերթողականը, գործնական և տեսական իմաստասիրութիւնն ու նրա մասերը, որ թուով տասներկուսն են»: Ուսում ստանալով նրանք եկան դարձան ժողովրդի սպասաւորը՝ իրենց հետ ունենալով շահաւէտ և արդիւնարար բեռներ, գեղեցիկ մարգարիտներ, պատուական ակներ, խորհրդածական, հրապարակախօսական, ներբողական, աստուածաբանական՝ զարդարելով աշխատողների ճիգն ու ջանքը, պանծալի իմաստասիրութեան այս բաները արմատացնելով նրանց մէջ և շատերին տեղեակ պահելով գիտութեանը». «Պատմութիւն Ս. Սահակայ և Մեսրոպայ» տե՛ս Սոփերք Բ [Վենետիկ, 1853, էջ 16]:

[3] Բ Կոր., Ժ 18, Եբր., Ե 4:

մղում դէպի աստուածային սպասաւորութիւն և ոչ թէ լոկ հացի խնդրի կամ դիրքի ու պատուի, կամ աշխարհային որևիցէ ձգտմամբ ու նպատակով դիմի դէպի պաշտօնը[1]: «Արդ, քահանայ, նայիր քո մէջ և ճանաչիր քեզ՝ ի՞նչ է քո քահանայութեան արդիւնքը և ի՞նչ գործ ես կատարում: Ոչ քո ժողովրդի հողագործն ես, ոչ արտը հնձողն ու կալսողը, այլ կարգուեցիր սովորեցնելու և խրատելու, մերժելու և յանդիմանելու: Այս է քահանայութեան գործը և ամենօրեայ պարտականութիւնը...», գրում է Ս. Յովհան Մանդակունին[134*]: Ահա այս նպատակով ոգևորուած պէտք է կոչում զգայ ընծայացուն: Այս պատճառով և նախքան ձեռնադրութիւնը հարցնում է եպիսկոպոսը, արդեօք կամաւորապէս է յանձն առնում Քրիստոսի լուծը և արդեո՞ք թողել է աշխարհային հոգսերը, ընտանիք ու սովորական կեանք. «Որովհետև չէք կարող երկու տէրերի ծառայել, քանզի ով չթողնի այս բոլորը և չառնի իր խաչը և գայ Իմ յետևից՝ արժանի չէ Ինձ»:

Կոչման գեղեցիկ օրինակներ տալիս է Ինքը՝ Քրիստոս. «Մէկը նրան ասաց. «Կը գամ քո յետևից, ինչ տեղ էլ գնաս»: Յիսուս նրան ասաց. «Աղուէսները որջեր ունեն և երկնքի թռչունները՝ հանգստանալու տեղ, բայց մարդու Որդին գլուխը դնելու տեղ չունի»: Մի ուրիշի էլ ասաց. «Արի իմ ետևից»: Եւ սա ասաց. «Տէր հրաման տուր ինձ՝ գնալ նախ թաղել իմ Հօրը»: Յիսուս նրան ասաց. «Թող որ մեռածները թաղեն իրենց մեռելներին, իսկ դու գնայ քարոզիր Աստծու արքայութիւնը»: Մէկն ուրիշն էլ ասաց. «Քո ետևից կը գամ, Տէր, բայց նախ թոյլ տուր ինձ, որ հրաժեշտ տամ իմ տանը»: Յիսուս նրան ասաց. «Ոչ ոք իր ձեռքը մաճի վրայ կը դնի և ապա ետ կը նայի, եթէ յարմար է Աստծու արքայութիւնը»[2]: Մէկն ուզում է նուիրել, բայց առաջիկայ դժուարութիւնների պատճառով ետ է մղում[3]: Վերջինն էլ չի կարողանում լիովին նուիրել աստուածային պաշտօնին, այլ

[1] Ս. Յովհան Մանդակունին օրինակ բերելով ս. նահատակներին, որոնք իրենց հօտի համար ամենայն ինչ զոհեցին, յորդորում է. «Բոլոր քահանաներին և վարդապետներին հարկ է այս աշխատութեան մէջ լինել և մանաւանդ նրանց, ովքեր ինքնայօժար կամքով վերակացութիւն ստացան, ինչը գովելի է, [և այս անկարելի կը լինէր], եթէ չիմանային իրենց կեցութեան պատճառը և չզօրանային Հոգով՝ մտնելու հոգևոր մշակութեան գործի մէջ յանուն շատերի փրկութեան» [Ճառք, էջ 80-81]:
[2] Ղուկ., Թ 57-62, Մատթ., Ը 19-22:
[3] Տե՛ս և Մատթ., ԻԶ 33, 35, Ժ 23:

ետ է նայում դէպի աշխարհայինը[1]. մինչդեռ միայն երկրորդն է իսկապէս նուիրում, որ Քրիստոսի աշակերտն է և արիութիւն ունի ամեն ինչ Քրիստոսի համար թողնելու[2]:

4- Երբ կոչումը ճշմարիտ է և սրտանց, այն ժամանակ Աստուած կը յաջողեցնի ժողովրդի ինքնեկ ընտրութիւնը, նրանցից բարի վկայութիւն և սիրայօժար խնդիր առաջացնելով յօգուտ ընծայացուի: Այս անհրաժեշտ է, որովհետև քահանայի պաշտօնը հիմնուում է ժողովուրդի և քահանայի փոխադարձ յարաբերութեան ու սերտ կապի վրայ, հետևաբար հակումն ու յօժարութիւնը պէտք է երկուստեք լինի, որ քահանան իմանայ, թէ ինքն այդ հօտի հովիւն է և այդ հօտը ճանաչի իր հովիւին իբրև նրա խոնարհ ու հաւատարիմ հօտը: Հօտն ու հովիւն իրար հետ «խուժ և դուժ» չպէտք է լինեն, և այդ իսկ պատճառով Հայաստանեայց ս. Եկեղեցին գերադասել է ընտրական սկզբունքը, որովհետև որին ընտրում ես՝ պարտաւոր ես յարգել նրա իրաւունքները: Հովիւը լինելով իր հօտի միջից, մի ընտանիք է կազմում նրա հետ՝ իբրև հայր իր ազատակամ որդիների հետ սիրալիր ուխտի մէջ մտնելով: Այդ պատճառով էլ ձեռնադրութեան սկզբում իսկ խնդրուում է ձեռնադրուողից, «Մեր մայր սուրբ եկեղեցին քեզնից խնդրում է ձեռնադրել (այս անուն) սարկաւագներին, որ նուիրել են քեզ, քահանայութեան աստիճան»: Խնդրում է եկեղեցին՝ այսինքն ոչ թէ լոկ ժողովուրդը և ոչ թէ միմիայն հոգևորականութիւնը, այլ՝ եկեղեցին, որ ինչպէս տեսանք նախընթացում, կազմում է այդ երկուսի միութիւնից: Հետևաբար ժողովուրդն ընտրում է կամ պէտք է ընտրի այնպիսի ընծայացու, որ Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետութեան, կարգերին ու կանոններին համապատասխանի. իսկ այդպիսի ընտրեալն անպատճառ ընտրեալ է նաև հոգևորականութեան համար և չի կարող մերժուել: Այն ընծայացուն, որ այսպէս չի ընտրուում, իր կեանքի ամենամեծ քայլը մեղքով է անում և չի կարող անպատիժ մնալ:

5- Դիմելով դէպի ձեռնադրութիւն՝ նա պէտք է յանձնառու լինի և պատրաստ՝ հոգով սրտով ուսումնասիրել ու տոկալ միշտ ս. Առաքեալների, Հայրապետների և առհասարակ Հայաստանեայց ս. Եկեղեցու կանոնների,

[1] Հմմտ. Մատթ., Ե 3, Յովհ., Զ 66:
[2] Հմմտ. Մատթ., Դ 19, Ղուկ., Ժ, ԺԴ 26, Մատթ., Ժ 37, ԺԲ 48, Բ Օր., ԼԳ 9:

աւանդութեան և այլ կարգերի մէջ, երբեք չշեղուելով այդ ամենից: Նա պէտք է այդ ամենը սիրի և հաւատքով բարձր դասի իր կեանքի բոլոր նպատակներից, որպէսզի կարողանայ ունենալ այն, ինչ որ կամ որից պէտք է բաժին հանի իր հաւատացեալներին, իր հօտին և իր հետևողներին: Ուստի և ձեռնադրութեան ժամանակ պահանջւում է ընծայացուից հաւատքի ուղիղ դաւանութիւն, մերժում 159 հերձուածողների ու հերետիկոսների և խոստում ըստ ամենայնի հնազանդուել ս. առաքեալներին, ս. Հայրապետներին և Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետութեանն ու աւանդութեանը: Եւ այս այնքան էական է, որ հոգևորականին ոչ մի պակասութեան համար, իրաւունք չի տրւում ժողովրդին դատել ու դատապարտել, մինչդեռ անահաւատ կամ հերետիկոս հոգևորականի վրայ ամեն ոք իրաւունք է ստանում իր քարը նետելու: Ըստ որում և ս. Յովհան Մանդակունին արգելելով ուրիշի մեղքը՝ մանաւանդ հոգևորականի մեղքը քննել, ասում է. «Բայց եթէ հաւատքի մէջ անպիտան է և թիւր բաներ է սովորեցնում, փախիր նրանից, մի՛ մօտեցիր և մի՛ ճաշակիր և մի՛ հաղորդուիր նրան, մօտիկ մի եղիր, որովհետև քանի որ նրա հաւատքը թերի է՝ կարող է և թիւր բաներ սովորեցնել, եթէ Պօղոս իսկ լինի կամ՝ հրեշտակ մի՛ հաղորդուիր նրան (Գաղ, Ա 8), քանզի առանց զգուշութեան հաղորդուելն անպատիժ չի մնայ. որովհետև քեզ հասնում է նախ (նրան) քննել հաւատքի համար և Աստծուն՝ դատել վարքի համար»[135*]: Եւ այս պարզ է, **որովհետև քահանայի պաշտօնը հաւատքով է տրւում, իսկ մեղքը կապւած չէ նրա պաշտօնի հետ, այլ վերաբերում է նրա սխալական մահականացու անձին և պատասխանատու է նա Աստծու առաջ:** Այդ պատճառով և Մաշտոց ծիսամատեանի կանոնը հրամայում է ձեռնադրողին՝ նախքան ձեռնադրելը պահանջել ընծայացուից մոլորութիւնների նզովում և ճշմարիտ դաւանութեան խոստովանութիւն. «Քանզի Սուրբ Հոգին Աստուած՝ շնորհների բաշխողը իջնում է այնպիսի Սուրբ Սեղանի և ուղղափառ դաւանողների վրայ և հանգչում այն օծեալի վրայ, ով ճանաչում, (զանազանում) է օտարն ու ընտանին»:

6- Հոգով հաւատի մէջ տոգորուելով ձեռնադրուողը պէտք է նւիրւած լինի

աստուածային գործունէութեանը[1] թէ՛ խօսքով ու թէ՛ գործով: Նա պէտք է առաքելական ոգով վառւած, Ս. Գրքով և Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետութեամբ և աւանդութեամբ առաջնորդուի իր ամեն ընթացքում և **անխոնջ ջանասիրութեամբ գործի հաւատացեալների մէջ Աստծու արքայութիւնը հաստատելու համար:** Նրա սկզբունքը պէտք է լինի. «Արդ, թէ՛ ուտէք և թէ՛ խմէք և թէ՛ ինչ էլ որ անէք՝ ամեն ինչ Աստծու փառքի համար արէք՝ Աստծու եկեղեցում խտրութիւն չդնէք հրեաների և հեթանոսների մէջ: Ինչպէս որ ես ամբողջապէս հաճոյ եմ լինում բոլորին, իմ անձի օգուտը չեմ փնտռում, այլ՝ շատերի, որպէսզի փրկւեն» (Ա Կորնթ., Ժ 32): Ըստ որում և ձեռնադրուողը խոստանում է՝ «Առանց ձանձրանալու ամենայն զգաստութեամբ մնայ Աստծու պաշտամունքի մէջ և **Աստծու գործը մի՛ փոխարինիր մարմնաւոր գործերով,** այլ քո մէջ ուխտիր գնալ Քրիստոսի հետքերով, յանուն Քրիստոսի յանձն առնել աղքատութիւն, քաղց, ծարաւ, վշտեր, հալածանքներ, նախատինքներ, չարչարանքներ»: Այս պահանջն անհրաժեշտ է, որովհետև քահանայական պաշտօնի էութիւնը հէնց այս է, որ **ընծայացուն ուխտում է գերադասել աստուածային պաշտօնը,** աստուածային գործը և իր հօտի հոգատարութիւնն ամեն անձնական, ընտանեկան, ազգակցական և շահադիտական գործերից և զբաղմունքներից, և ոչ թէ նւիրւելով այդ ուխտին՝ վերստին գլորուելով աշխարհասիրութեան մէջ և կրկնակի պատժի արժանանալով մէկ իբրև մեղանչող, մէկ իբրև ուխտազանց և մէկ այդ վարմունքով գայթակղեցնող:

7- Այս պայմանների վրայ հաստատւած ընծայացուն կարող է հաւատքով դիմել և Հայաստանեայց ս. Եկեղեցու եպիսկոպոսական ձրի ձեռնադրութեամբ ընդունել Ս. Հոգուն, զինւել Նրանով, մտնել պատերազմի դաշտը և յաղթաբար յարատևել հաւատքի գործունէութեան ու ճշմարտութեան այգու մշակութեան մէջ: Միմիայն յիշեալ բոլոր պայմաններին համապատասխանողը կարող է յուսալ, որ Հայաստանեայց ս. Եկեղեցու առաքելական աւանդական ձեռնադրութեամբ կը ստանայ Ս. Հոգի, կը զօրանայ նրա շնորհներով և լուսաւորութիւն կը ծաւալի հաւատացեալների մէջ: Միմիայն այդպէս ձեռնադրուողը հաստատապէս

[1] «Անիրաւութիւն է և բոլորովին անպատշաճ ոչ ըստ (հոգևոր) իշխանութեան գնալ նւիրագործելու կամ ծուլութեամբ շարժւելու ու անհոգ լինելու նրան, ում վստահւած է հոգաբարձութիւնը». Սարկաւագ վրդ. Յաղագս քահանայութեան, 10:

համոզված կը լինի ու կը հաւատայ, որ իր մէջ Ս. Հոգին է գործում, առաջնորդում ու զինավառում: Նա որ ոչ թէ արժանապէս, այլ Սիմոնականութեամբ է ուզում ապրուստի պաշտօն դարձնել այդ սուրբ կոչումը (Գործք., Ը 18-23), չի հասնի և ոչ մի նպատակի, որովհետև շնորհը դրամով չի ստացւում, այլ՝ հաւատքով: Իր այդպիսի ձեռնադրեալին էր ասում Պօղոս առաքեալը. «Ուստի յիշեցնում եմ քեզ, որ վերարծարծես Աստծու շնորհը, որ տուի քեզ՝ իմ ձեռքերը դնելով քեզ վրայ, որովհետև Աստուած մեզ երկչոտութեան ոգի չտուեց, այլ՝ զօրութեան, սիրոյ և զգաստութեան: Ուստի ամօթ մի՛ համարիր վկայել մեր Տիրոջը...: Որպէս օրինակ ունեցիր այն ողջամիտ խօսքերը, որոնք ինձնից լսեցիր՝ այն հաւատով և սիրով, որ ունեն Յիսուս Քրիստոսին միացած հաւատացեալները: Զգոյշ եղէք ինքներդ ձեր և ամբողջ հօտի համար, որի վրայ Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝ հովւելու համար Տիրոջ ժողովրդին, որին նա փրկեց իր արիւնով»[1]: Հետևաբար Աստծու ճշմարիտ պաշտօնեան լինելու համար ամենամեծ պայմանն այն է, որ ընծայողն ամուր հաւատքով և հաստատամիտ համոզմունքով վստահ լինի այն շնորհների աստուածայնութեան վրայ, որոնք ինքն է ստացել, կամ յայտնապէս իմանայ, որ իր հաւատաւոր գործունէութեան մէջ Ինքը՝ Ս. Հոգին է գործում: Առանց այդ հաւատքի ու լուսաւոր համոզմունքի ընծայւածը չի կարող կատարել իր տուած խոստումները և ամեն մի քայլափոխում աշխարհասիրութեան վտանգի մէջ կը լինի ու չի կարող ճշմարիտ մշակ ու գործիչ լինել Աստծու արքայութեան համար[2]:

[1] Բ Տիմ., Ա 6-14, Գործք., Ի 18-35, Յաճախ., Ե 170-200:

[2] «Արդ, դուք յիշեցէք ձեր կեանքի և փրկութեան առաջնորդին, խորհէք աստուածագութ հօր, հոգիների լուսաւորչի, Քրիստոսի ճգնաւոր նահատակ սուրբ Գրիգորի անտանելի չարչարանքների մասին...: Արդ, նայէք նրա ընթացքի վախճանին, թէ ինչպէս ապրեց աշխարհում և կամ ինչ արդիւնք տուեց նրա ընթացքը, որովհետև այն է հովութեան յանձնւած ոչխարների դուռը, որով նա մտաւ, չարչարանքով հաստատեց իր ժողովրդին, մարմնի և կողերի ոսկորների քերումից դուրս յորդող արեամբ կառուցեց Աստծու այս եկեղեցին, ինչպէս որ Տէրն Իր կողահոս արեամբ՝ ազգերին և բովանդակ աշխարհը. իր գեղեցիկ գառների համար կրակի տոչորմամբ խորովւեց, անտանելի տանջանքներով չարչրկւեց կախաղանի վրայ և [սակայն] աղօթում էր իր հաւատացեալ հօտի համար, խաւար վիրապում և չար օձերի մէջ տասներկու տարի մնաց մեր՝ մեղքերի վիրապում լինելու, օձերի խայթոցներին ենթարկւելու և թունալի ախտերի մէջ ընկղմւած լինելու պատճառով: Այս է հոգևոր հովութեան դուռը, և ով այս դռնով չմտնի՝ գող և աւազակ է: Այս է օրինակը, որով սեփական է դառնում ժառանգութիւնը և ոչ թէ արեան ազգակցութիւնը, որով տիրում են Քրիստոսի հօտին: Այս է Քրիստոսի գառների գինը և ոչ թէ արծաթի շատութիւնը, որպէսզի խոտելի դառնան նրանք, ովքեր ընտրւած են արծաթով» Յովհաննէս վ. Երզնկացի, էջ 158:

Ամենավնասակար հոգևորականը նա է, որ մտնում է այդ կոչման մէջ և ընդունում ձեռնադրութիւնն առանց հաւատալու, որ այդ կոչումն աստուածային է և ձեռնադրութիւնը տալիս է նիւրեալին Ս. Հոգու շնորհները լիուլի: Ս. Յովհան Մանդակունին խօսքն ուղղելով նիւրեալին ասում է. «Պօղոսն ասում է. «Նմանողներ եղէք ինձ, ինչպէս որ՝ Քրիստոսին: Ահա դու նոյն ինքը Պօղոսն ես, որ քարոզում ես, և ժողովուրդն է, որին ուսուցանում ես: Եւ ահա նա էլ մարդ էր քեզ նման, Կիլիկիա գաւառի Տարսոն անունով քաղաքից, և քեզանից աւելի բան չունէր, բայց միայն յօժարութիւն և այն վաստակը, որով Ս. Հոգու շնորհներն ընդունեց: Քո առաջ նմանապէս արգելք չկայ, միայն թէ յօժար ես, աշխատես և Ս. Հոգու շնորհները ստանաս»[1]: Ըստ որում հաւատքով և արժանիօրէն ձեռնադրւողը դառնում է Ս. Հոգու ճշմարիտ սպառազէնն ու քաջ պաշտօնեան այլև փութեռանդ գործիչը:

Սակայն շնորհաբաշխութեան համար նշանակութիւն չունի քահանայի արժանիքը, եթէ շնորհք ստացող հաւատացեալը հաւատքով է մօտենում ս. խորհուրդներին: Աստծու շնորհը նաև անարժան քահանայի շնորհագործութեամբ իջնում է հաւատացեալի վրայ. ուստի և յարգւում է ոչ թէ քահանայի անձնաւորութիւնը, այլ նրա պաշտօնը. «Որովհետև ամեն ոք, ով պատւում է քահանային՝ Աստծուն է փառաւորում ու պատւում, և ով արհամարհում է՝ Աստծուն է թշնամանում»[2]: Ուստի և ոչ մի մարդ չի կարող կապտել

115

[1] Մանդ., էջ 84:

[2] «Քո քահանաներին մեծարիր և քո ժողովրդի իշխաններին մի՛ արհամարհիր: Որովհետև թէկուզ և քահանան անպիտան մէկը լինի, բայց Աստուած տեսնում է, որ յանուն Նրա մեծարում ես նաև անարգ բանը, քանզի սրբից ակնածում ես յանուն սրբութեան: Իսկ յանուն Աստծու պատիւն այն է, որ մեծարում ես անարգ բանը, բայց անարգ չէ, այլ քահանան Ամենակալ Տիրոջ հրեշտակն է: Եւ եթէ արհամարհես՝ Աստծու մեղանչած կը լինես, որ տուեց նրա ձեռնադրութիւնը և նրանով Ինքն է կատարում խորհուրդն ու մկրտութիւնը: Թէկուզև նրանք արժանի չլինեն մերձենալու ահեղ խորհրդին, բայց յանուն ժողովրդի փրկութեան չի արգելում Ս. Հոգու շնորհի [ներգործութիւնը]: Որովհետև եթէ էշով և Բաղամի դիւթանքով խօսեց յանուն ժողովրդի փրկութեան (Թուեր ԻԲ), ապա որքա՞ն աւելի անարժան քահանայի միջոցով Ինքն է գործում յանուն մեր փրկութեան: Նաև դու՝ եթէ սրբութեամբ հաղորդւես սուրբ խորհուրդին՝ քահանայի պղծութիւնը քեզ չի վնասի, նոյնպէս եթէ մէկը պղծութեամբ մերձենայ՝ քահանայի սրբութիւնը չի օգնի: Բայց եթէ համարես, որ արատաւոր քահանայի պատճառով Հոգու շնորհները չեն իջնում Պատարագին և ոչ էլ Աստուած է նրա միջոցով գործում, ապա յիշիր, որ խափանում ես եկեղեցու կարգը և քո քրիստոնեայ անունը». Մանդ., էջ 92, Հմմտ. Յովհ., Ը 7:

հոգևորականի ձեռնադրությունն ու վերստին նրան աշխարհական դարձնել[1]: Հոգևոր իշխանությունը ևս միմիայն ապաշխարանքի է ենթարկում, իսկ վերջնականապես զրկում է ձեռնադրության շնորհից միմիայն այն ժամանակ, երբ հոգևորականն արհամարհում է Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետությունն ու կարգերը և ուրեմն նրա համար մահանում ամեն մի հաւատացեալի առաջ[2]:

Դ- Ինչպես որ բուն ձեռնադրությունն սկսում է դպրության կամ կիսասարկաւագության աստիճանից, այնպես էլ աշխարհից հեռու մնալն իր ունեցած վիճակով, նոյնպես և ըստ ամենայնի Աստծու նուիրելը սկսում է այդ աստիճանից, որովհետև բուն այդ ձեռնադրությամբ են նրանք սկսում Ս. Հոգու սպառազէն պաշտօնեան դառնալ: «Եթէ մէկն ինձ մօտ գայ և չնախընտրի Ինձ իր Հօրից ու մօրից, կնոջից ու որդիներից, եղբայրներից ու քոյրերից, նոյնիսկ իր անձից՝ չի կարող իմ աշակերտը լինել»[3]: Հետևաբար իրաքանչիւր ոք ինչպես մտնում է ս. կոչման մէջ, այնպես էլ պէտք է միմիայն իր կոչումը ճանաչի և ոչ թէ նորից ետ նայի աշխարհի վրայ: Ուստի և ամուսնացած հոգևորականը չի կարող կնոջ մահից յետոյ նորից նայել աշխարհի վրայ և կրկին ամուսնանալ[4]: Այլև ամուսնության ս. Ուխտը հաստատում է մի անգամ ամուսնանալու և հաւասարության սկզբունքի վրայ, ըստ որում և ամուսնացած հոգևորականն իր ամուսնական կեանքով ևս օրինակելի պէտք է լինի ժողովրդի մէջ: Այդպէս և նա

[1] Փարպ. պատմ. 208, 348: Հմմտ. Մաշտոցի թուղթը Յովհ. [Դրասխ.] Պատմ., էջ 83-87:
[2] Կարգալուծման կանոններ ունենք սկզբից ի վեր. Նիկիայի ս. ժողովը կարգալոյծ է անում կաշառքով և անարժանապէս ձեռնադրուածին, ինչպես և սրբությունն ու եկեղեցական կարգերը չպահող անզեղջ հոգևորականին[136*]: Նոյնանման հրաման են տալիս և՛ Ս. Սահակն ու Շահապիւանի, և՛ հետագայ դարերի գրեթէ բոլոր ժողովները[137*]: Մինչև անգամ ուրիշ եկեղեցու յարած հայ հոգևորականի համար որոշուած է Դուինի 607թ. ժողովով. «Ովքեր հաղորդակից չեն մեզ հաւատքով և օտար են այս միաբանության համար, և եթէ ինչ որ պէտքի պատճառով այդպիսի եպիսկոպոսներ ու քահանաներ լինեն մեզ մօտ, թող մէկը չհամարձակի նրանց հաղորդակցել և նրանց մեծարել քահանայական պատուով, այլ իբրև աշխարհական նրան ընդունեն հիւրընկալությամբ և այլ կարգերով»: Տե՛ս նաև Եղիշէ, էջ 43. «Հարազատ եղբօր ձեռքը թող բարձրանայ իր մերձաւորի վրայ, որ խախտել է Աստծու պատուիրանի ուխտը, և թող հայրը չխնայի իր որդուն և թող որդին չակնածի հօր պատից: Կինը պէտք է կուի ամուսնու դէմ և ծառան դիմադարձ լինի իր տիրոջը: Աստուածային օրէնքները թող թագաւոր լինեն բոլորի վրայ, և ըստ օրինի մեղաւորները պէտք է ենթարկուեն դատապարտության և պատժի»[138*]:
[3] Ղուկ., ԺԴ 26-35:
[4] Ա Կոր., Թ 3-6, Է 9, Ա Տիմ., Գ 1-13, Ե 9, Տիտ., Ա 5-8:

չի կարող այրու հետ ամուսնացած լինել, որ նոյնիսկ Հին Ուխտում արգելուած էր[1]: «Եթէ քահանան մեռնի՝ կինը չի կարող ամուսնանալ և ոչ էլ քահանան կին առնել»[139*]. հրամայում է Շահապիւանի ս. ժողովը[2]: Ամուսնական միությունն և այր ու կնոջ հաւասարությունն, այլև քրիստոնէական ճշմարիտ սիրոյ իրականացման հաստատությունը միմիայն միանգամ ամուսնանալով է և ոչ թէ կրկնամուսնությամբ կամ բազմակնությամբ, ինչպէս տեսանք: Իսկ այսպիսի ուխտի իրականացումը պէտք է միշտ լինի եկեղեցում կանոնական կարգով, ապա թէ ոչ՝ Եկեղեցին ուսուցանելով մի ճշմարտություն և այն չկատարելով՝ թերի կը լինի իր կատարման ընթացքում, ըստ որում և երկու անգամ ամուսնացածը չի ընդունուում հոգևոր կոչման մէջ:

Բայց Քրիստոսի խօսքերից տեսնում ենք, որ կայ մի կատարեալ առաքինություն ևս, այն է՝ ամենայն ինչ թողնել միմիայն Աստծու արքայությունը տարածելու համար[3]: Հայաստանեայց ս. Եկեղեցին Աստծու արքայության իրականացումը լինելով, պէտք է այդ բարձր առաքինության իրականացումը ևս ունենայ՝ կանոնական հաստատուն կարգով, ուստի և բացի ամուսնացած հոգևորականներից, ունի նաև կուսակրօն հոգևորականներ, որոնք իրենց սակաւության պատճառով կարող են հրաւիրուել ժողովրդի միջից: Այս առաքինական հրաւէրքը թէ՛ այրիացած հոգևորականների ու թէ՛ ամուրիների համար հնարաւոր է և կարգ է[4]: Կուսակրօն հոգևորականները, որոնց բարձր աստիճաններն են՝ վարդապետը և եպիսկոպոսը և դրանց լրումը հանդիսացող Կաթողիկոսը, ընծայւում են Քրիստոսին իբրև այն հրաւիրուածները, որ թողնում են

[1] «Քահանաները պոռնիկ կամ պղծուած կին չպէտք է առնեն: Չպէտք է առնեն նաև ամուսնուց բաժանուած կին, որովհետև քահանան սուրբ պէտք է լինի իր Տէր Աստծու համար և պիտի մաքրի իրեն». «Աւագ քահանան իր ժողովրդի միջից կոյս աղջիկ պիտի առնի: Այրի, ամուսնալուծուած կամ պոռնիկ կին չպիտի առնի, այլ իր ժողովրդի միջից մի կոյս աղջիկ պիտի առնի որպէս կին» (Ղևտ., ԻԱ 7, 13):
[2] «Իսկ պոռնկորդներից և նրանցից, ովքեր [պոռնկորդիներից] հաշուած նրանց երրորդ ծնունդից են, համաձայն առաջին կանոնների, նրանք թող հեռու մնան կարգից և շնորհներից, որպէսզի պարկեշտ և սուրբ և հանգիստ լինի Աստծու պաշտօնեաների ուխտը»[140*]: «Երկրորդ կին ունեցող քահանայ եղբայրները պէտք է հեռացուեն եկեղեցական կարգից, բաժին չունենան եկեղեցուց, որովհետև մարմնասէր եղան», Մանդ., էջ 218-219:
[3] Մատթ., ԺԹ 11-12, Ա Կոր., Է 1, 8, 25, Յաճ., Ժ 246, 264, Եբր., ԺԱ 37, ԺԲ 1, Ընդհ., 24-25, 29, 35:
[4] Կող., Բ 20-23, Ա Կոր., Է 32-34, Ա Տիմ., Դ 3, Յայտն., ԺԴ 4, Ընդհանր., էջ 91:

ամենայն ինչ, կրում են Քրիստոսի խաչը և առանց ետ նայելու՝ ժողովրդի անձնուէր հովիւներ ու քարոզիչներ և Հայաստանեայց ս. Եկեղեցու շահերի անձնազոհ պաշտպաններն են դառնում[1]: Այդ մասին ամփոփ բացատրութիւն է տալիս նաև Եզնիկը[2]: Այսպիսի կարգի հիմքը սկսելով առաքեալներից Հայաստանեայց ս. Եկեղեցում ևս որոշ կանոնաւորութիւն ստացաւ ս. Գրիգոր Լուսաւորիչով, որ քահանայապետական աթոռ բարձրանալիս՝ թողեց իր կնոջը՝ Մարիամին վանքում կրօնաւորելու, իսկ իր որդիներից ս. Արիստակէսն աբեղայացաւ, մինչդեռ ս. Վրթանէսն ամուսնացաւ, քահանայացաւ և յետոյ կաթողիկոսութեան հասնելով՝ հօր օրինակին հետևեց: Այդպէս արեցին առհասարակ ս. Գրիգոր Լուսաւորչի որդիներն ու թոռները[3]:

Ակնյայտ է, որ ոչ թէ սոսկական կուսակրօնութիւնն է ինքնըստինքեան բարձր առաքինութիւն, ինչպէս մոլորաբար ուսուցանում է Հռոմ. Եկեղեցին, այլ դա անձնազոհութեան բարձր աստիճանն է, որով պէտք է փայլի Աստծու արքայութեանը կատարելապէս նուիրուածը[4] և այդ կոչման մշտական յարացոյցն է կուսակրօնների միաբանութիւնը, որոնք անձնական ոչինչ չունենալով և աշխարհային ամենայն հոգսերից հեռանալով՝ հոգով, սրտով միանում են, մի ընտանիք են կազմում և նուիրում ժողովրդին քարոզելու, ամեն կերպ օգնելու, աղքատներին ու խեղճերին խնամելու և պատսպարելու վսեմ գործին[5]: Եւ որ

[1] Ա Կոր., Է 32, Յակ., Ա 26, 27:

[2] «Նաև սուրբ եկեղեցու կուսակրօնները ոչ թէ այն պատճառով են պահում իրենց կուսութիւնը. որովհետև Աստծու կողմից տրուած ամուսնութիւնը պղծութիւն են համարում, ինչպէս Մարիկիոնը, Մանին և մծղնէականները, որովհետև եթէ այդ մտքով ուխտած լինէին, ապա կուսութիւնն էլ պատշաճ կուսութիւն չէր լինի, այլ Աստծուն առաւելագոյն չափով սիրելու պատճառով, հրաժարւում են Աստծու սովորական արարածներին նմանուելուց և նմանւում են Աստծու հրեշտակներին, ուր ոչ արու կայ և ոչ էգ, երկրի վրայ էլ նոյն առաքինութիւնն են ցոյց տալիս, ըստ այն խօսքի, թէ՝ «կան ներքինիներ, ովքեր իրենց անձերը ներքինի դարձրեցին երկնքի արքայութեան համար՝ յարութեան ժամին հրեշտակներին նմանուելու համար» (Մատթ., ԺԹ 12): Եւ առաքեալը «հաւատարիմ այր» է անւանում կոյսերին, բայց նայելով բնութեանը՝ բացորոշ չի կարգադրում, այլ ակնարկելով է յօժար դարձնում, ինչպէս և Տէրն ակնարկում է, բայց չի ստիպում»[141*], Տե՛ս նաև Եղիշէ, էջ 40, 149:

[3] Տե՛ս մանաւանդ Փաւստոս Բիւզ. IV ԺԴ, Եղիշէ, էջ 35, Փարպ., էջ 34, 72-74, Նիկիոյ. ժողովի Գ կանոն և այլն[142*]:

[4] Հմմտ. Ա Տիմ., Դ 1-3, Գանգրայի ժողովի Ժ կանոնը[143*]:

[5] «Եթէ մէկը կամենում է հաւատքի մէջ մնալ կամ ցանկանում է միայնակեաց լինել, պահել կուսութիւնն ու սրբութիւնը և հասնել յաւիտենական կեանքին՝ թող ճշմարիտ և միաբանակից ընկերների մէջ մնայ . թող իրար շահեն Քրիստոսի սիրով...: Թող

կուսակրօնութիւնն ոչ թէ ինքնանպատակ առաքինութիւն է, այլ՝ միայն բարձր անձնազոհութեան և անձնուիրութեան միջոց. այդ յայտնապէս երևում է, երբ տեսնում ենք, թէ ինչպէս Ս. Ներսէսը 2040 է հասցնում վանքերի թիւը յիշեալ նպատակով. յայտնի է նաև, որ եղած ճգնաւորական վանքերն անգամ իրենց նպատակը քարոզելն էին համարում[1], մինչդեռ կանանց վանքեր գրեթէ բնաւ չենք տեսնում և Հռոմ. պետութեան մէջ այդպիսի վանքերի բազմութիւնը ոչ մի ազդեցութիւն չի թողնում Հայոց կեանքի վրայ: Այլև Հայաստանեայց ս. Եկեղեցին՝ երբեք չընդունեց կուսակրօն աշխարհականներ, որի դէմ թիւր քարոզութիւն էլ կար[2] և կուսակրօնութեան վեղարն այդպիսի հոգևորականութեան յատուկ զգեստ դարձրեց:

Ե- Չնայելով, որ հոգևորականներն աստիճանների տարբերութիւններ ունեն, դրանով հանդերձ բոլորի պարտքն էլ ընդհանրապէս մէկ է: **Հոգևորականի պարտքը տարածւում է նրա վարքի, գործի ու խօսքի վրայ:**

Վարքով՝ հոգևորականը պէտք է իր կենցաղավարութեան ընթացքում թէ՛ անձնապէս, թէ՛ ընտանիքի, թէ՛ եկեղեցու և թէ՛ ժողովուրդի մէջ հաւատարմութեամբ հետևի Աստծու պատուիրաններին: Նա միշտ պէտք է

սովորութիւն չլինի միայնակ մնալ. այդ դէպքում ինչպէ՞ս կարող են իմանալ հաւատքի կարգն ու պայմանը, իրենց յանցանքները յիշել և ընկերների հանդէպ ցուցաբերել կամ հնազանդութիւն կամ սէր. այդպէս են գազանները լեռներում. քանի դեռ մէկը չի մօտենում՝ խաղաղ են: Բայց կատարեալ և ճշմարիտ հաւատքն այս է. հնազանդութիւն ընկերների և սէր մէկմէկու և Քրիստոսի հանդէպ՝ մարդկանց մէջ լինելով օրինակ և նախատիպ, որպէսզի մէկմէկու շահելով և նախանձելով բարի գործերում, տեսնեն և Աստծուն փառաւորեն երկնքում, և անարգ ու սխալաշատ եղբօրը հոգևոր խրատի միջոցով պատուիրանքին հասցնելով կոչեն Աստծու բերան». Կանոն Շահապիւանի ս. ժողովի[144*]:

[1] Ս. Սահակը յիշելով վանական միաբանութիւնների ընդհանրականութիւնն, ասում է. «Ինչը և երիցս երանեալ Քրիստոսի քաջ նահատակ Գրիգորիոսը կատարեց՝ Սուրբ Հոգուց նրան շնորհուած լինելով հիւրընկալութեան օգուտը, քանզի այն միաբանների համար բազմապատիկ շահի առիթ է և հաստատուն ճշմարտութեան սիւն, որովհետև յորդորում ու նախանձախնդիր է դարձնում հոգևոր հրահանգների մէջ...: Այս պատճառով ճշմարտօրէն և պատշաճապէս վանք դրեց անունը, որպէսզի առանց տրտունջի, ում անհրաժեշտ է տրի: Եւ ոչ միայն օտարներին է օգուտ այնտեղ յաճախելը, այլ առաւելապէս գիւղին, ուր կառուցած է, որովհետև նրանց սահմանուած է սփոփել հիւանդներին, մխիթարել սգաւորներին: Եւ ամուսնացած քահանաները բազմիցս զբաղւում են մշակութեամբ և հաճոյանում իրենց կանանց, ինչպէս առաքելական խօսքն իսկ ճշմարտում է»[148*]:

[2] Ներս. Լամբ. Մեկն. էջ 45-53: Տե՛ս նաև Մեկն. Ժամ. 74. «Շեղում է և՛ կուսութեամբ պարծենալը, և՛ ամուսնութիւնը մերժելը»:

իմանայ, որ եթէ իր վարքով յանցաւորւում է և չի զղջում, ապաշխարում ու խոստովանում իր մեղքերը նախքան իր պաշտօնը կատարելը[1], կրկնակի և եռակի մեղք է գործում, մէկ՝ իր հոգու նկատմամբ, մէկ՝ աղօթքով անլսելի դառնալով Աստծուն, և մէկ էլ՝ գայթակղեցնելով իր ծխին: Ըստ որում և Քրիստոս ասում է. «Եւ ով որ Ինձ հաւատացող այս փոքրիկներից մէկին գայթակղեցնի, նրա համար լաւ կը լինի, որ նրա պարանոցից էշի երկնաքար կախուի, և նա սուզուի ծովի խորքը» (Մատթ., ԺԸ 6), այսինքն՝ աւելի լաւ է, որ այդպիսին իր վզից կապի երկնաքարը և գլորուի ծովի յատակը, որպէսզի անհետ լինի և իր մարմնով անգամ գայթակղութիւն չպատճառի: Իսկ գայթակղեցնելն այնքան ծանր յանցանք է, որ Պօղոս առաքեալն ասում է. «Այդ պատճառով, եթէ կերակուրը գայթակղեցնում է իմ եղբօրը՝ յաւիտեանս միս չեմ ուտի, որպէսզի եղբօրս չգայթակղեցնեմ»[2]: Հետևաբար հոգևորականը պէտք է նախ հեռու պահի իրեն այն ամեն շեղումներից, որոնք աշխարհականների մէջ իսկ դատապարտելի են, և աւելի ևս պէտք է առաքինութեան ձգտի: «Եւ եթէ մէկը սովորեցնում է խօսքով՝ նախ պարտ է գործով կատարել, որովհետև անօգուտ է խօսքն առանց գործի. «Յիսուս սկսեց կատարել և յետոյ ուսուցանել», և «Ով ինքը կատարի և այլոց սովորեցնի՝ նա մեծ պիտի կոչւի երկնքի արքայութեան մէջ»: Ի մտի ունեցիր, որ ճրագները վառած ճրագից են լուսաւորւում և ոչ թէ՝ խաւար, և ժողովուրդները որբերի ձեռքերով են սրբւում և ոչ թէ մեղքով ապականուածների, որովհետև քահանան ժողովրդի մէջ [այնպէս է], ինչպէս աչքը մարմնի վրայ», գրում է ոսկեգրիչ ս. հայրը[3]:

Գործով էլ հոգևորականը պէտք է նախ իր պաշտօնը ճշմարտութեամբ և խղճի մտոք կատարի եկեղեցում, ըստ սահմանուած կարգերի, և երկրորդ՝ իբրև հովիւ սիրով և անձնազոհութեամբ աշխատի իր հօտի ու նրա իւրաքանչիւր անդամի համար: Հոգևորականն իր ժողովրդի մէջ իր պաշտօնը կատարելով՝

[1] Տե՛ս և Բուն Մաշտոց էջ 341. «Եւ արդ, ո՞վ է, որ մշուշապատուած յանցանքներով և անօրէնութեան խաւարազգեստ վարքով յանդգնի այլոց սովորեցնել և կամ մեղքերով հիւանդացածը յանդգնի այլոց բժշկել, մեծ յանդգնութիւն է մեղքերով ծանրացածին համարձակել այլոց թեթևացնել և պակասամիտներին՝ ցանկալ այլոց վարդապետ լինել և կամ ինչպէ՞ս անօրինութեան մոլուցքով բռնուածը համարձակւում է այլոց առաջնորդել». Մանդ., էջ 79:
[2] Ա Կոր., Ը 13, տե՛ս և Ծնորհ. ընդհան. 78-79:
[3] [Յովհ. Մանդ.] Ճառք 82, հմմտ. Մատթ., Ե 19, Գործք., Ա 1, Մատթ., Զ 22:

պէտք է անշահասէր լինի, այսինքն՝ երբեք շնորհագործութեան համար վարձ չպահանջի, որովհետև շնորհը ձրի է, ըստ այնմ թէ «ձրի առէք և ձրի տուէք»: Իսկ ժողովուրդը նուէրներով է ընդունում այդ շնորհները, այսինքն՝ ըստ կարողութեան մաս հանելով Աստծու պաշտօնեայի և եկեղեցու պահպանութեան համար. որովհետև «Ո՞վ երբևէ զինուորութիւն կանի իր ծախսով: Ո՞վ այգի կը մտնի և նրա պտղից չի ուտի: Ո՞վ հօտ կարածեցնի և հօտի կաթից չի խմի», ասում է Պօղոս առաքեալը[1]:

Երկրորդ՝ հոգևորականը պէտք է իբրև քաջ հովիւ գնայ իր մոլորեալ ու կորչող ոչխարի հետևից, նրա համար հոգայ ամեն կերպ միջոցներ գտնելով և երբեք իր վերջին ոչխարն անգամ գայլերին չմատնի: Նա պարտաւոր է վարձկան չլինել, այլ անձնազոհ քաջ հովիւ, անուն առ անուն ճանաչել իր ամեն մի հաւատացեալին ու իր անձը քաղցր ու ճանաչելի դարձնել նրան ճշմարտութեան ճանապարհը, փրկութեան ուղին, ինչպէս որոշում է Քրիստոս[2]:

Երրորդ՝ հոգևորականը պէտք է ամեն կերպ իւրաքանչիւր անհատի և ընտանիքի բարեկամն ու մտերիմը լինի՝ նրան կարեկից, խորհրդատու, օգնական, խրատող և նեղ օրում նեցուկ դառնալու համար: Նա չպէտք է միմիայն պաշտօն կատարելու համար հանդիպի իր ծուխերը, այլ նաև նրանց կարեկցելու, մխիթարելու և կարևոր օգնութիւն հասցնելու համար. ըստ որում իր հօտի կարողների միջոցներով պէտք է միշտ օժանդակի անկարողներին: «Մենք, որ ուղիղ ենք հաւատի մէջ, պարտաւոր ենք թոյլերի տկարութիւնը տանել և միայն մեզ համար հաճելի չլինել, ապա մեզնից իւրաքանչիւր ոք թող ընկերոջը հաճելի լինի ի շինութիւն բարի գործերի», ասում է ս. առաքեալը[3]: Իսկ այս իրագործել տուողը, իրագործելու ճանապարհ ցոյց տուող և յարմարեցնող պատշաճողն է քահանան:

Վերջապէս խօսքով՝ հոգևորականը պէտք է միշտ Աստծու բարբառը վայելչապէս լսելի անի իր հօտի ականջում[4], Նրա լեզուն պէտք է քարոզութեանը

[1] Ա Կոր., Թ 7: Հմմտ. Ընդհ. 68, 81, Ս. Սահակի կանոնները[146*] և այլն:
[2] Տե՛ս օրինակ. Փարպ. 59-61, Խորենացի III ԿԳ, Ընդհանր 88. Ա Կոր., Զ 1: Տե՛ս և մանրամասնօրէն Եզէկ. ԼԴ և Յովհ. Ժ:
[3] «Եւ արդ, ամեն ոք, ով ունի քահանայական վերակացութիւն պարտաւոր է մեծ ջանք և անդադար աշխատանք ցուցաբերել իր հօտի փրկութեան համար» Մանդ., էջ 81:
[4] Տե՛ս նաև Ընդհանր. 45:

ծառայի թէ՛ եկեղեցում, թէ՛ տանը, թէ՛ ամեն մի հանդիպած տեղում՝ առթելով ճշմարտութեան ձայնը անխափան հնչեցնել ամենքի սրտում, որպէսզի միշտ զգուշանան: Ըստ որում և երբեք չպէտք է տատամսի՝ յանդիմանելու առանձին, խրատելու և կարևոր դէպքում նոյնիսկ շատերի ներկայութեամբ, եթէ այդ է պահանջում անհատի առանձնայատկութիւնը: «Բայց զգոյշ եղիր, միշտ բողոքիր, աղաղակիր անդադար, քննիր և լսիր ամեն ինչ, փութով կանչիր ու խրատիր ոմանց՝ սաստով, ոմանց՝ աղերսանքով, ոմանց՝ փափագելի արքայութեան երանութեամբ յորդորիր, ոմանց սարսափեցրու հանդերձեալ չար տանջանքների երկիւղով, ոմանց խրատիր եկեղեցու մէջ, որ ուրիշները սովորեն, ոմանց առանձին յանդիմանիր, որ չլինի թէ ուրիշներից ամաչելով ուրանան իրենց մեղքերը և ձեր յանդիմանութիւնն արհամարհեն»[147*]: Ահա այսպիսի հրահանգ է տալիս սուրբ Հայրապետը և յետոյ ասում. «Դեռ ես՝ աղաղկիր, տեսուչ ես՝ սիրով հոգայ, առաջնորդ ես՝ հետևիր եկեղեցում, հովիւ ես՝ արածեցրու ուղիղ հաւատքի մէջ, բժիշկ ես՝ բժշկիր մեղքերի վէրքերը, նաւապետ ես՝ նաւդ փրկիր ալեկոծութիւնից: Աւանդ ես ստացել հաշուետու ես վերադարձնել՝ թէկուզև մի փոքր ծուլանաս»[148*]:

Բնականաբար հոգևորականը ոչ միայն իբրև Աստծու պաշտօնեայ պէտք է իր դիրքի համեմատ պարտքը կատարի, ոչ միայն իբրև ժողովրդի բարօրութեան հոգացողութիւնը ստանձնող՝ **պէտք է պարզերես դառնայ իր պատասխանատուութեան մէջ,** այլև ձեռնադրութեամբ անհամար քանքարներ ստանալով՝ **պէտք է հարիւրապատիկ և հազարապատիկ արդիւնաւորի** ըստ Տիրոջ առակի (Մատթ., ԻԵ 15-28): Նա պէտք է գիտենայ, որ եթէ հաւատացեալը պարտական է հարիւր դահեկան, ինքը պարտական է բիւր քանքար իր Աստծու առաջ (մատթ., ԺԸ 24). **ինքը պէտք է արդիւնաւորի և Աստծուն հատուցի, որ ժողովուրդն էլ արդիւնաւորելով իրեն հատուցի իբրև Աստծու պաշտօնեայի:** Իսկ դրա համար հոգևորականը պէտք է իր կարգակիցների մէջ ևս ճշմարիտ և օրինակելի եղբայր լինի և ոչ թէ կուարար, հայհոյող, անհաշտ ու յափշտակող[1]:

[1] Ս. Ներսէս Շնորհալին յիշելով, որ քահանաները, մանաւանդ տգէտ ու վայրենաբարոյ պաշտօնեաները, շահասիրութեամբ ու փառասիրութեամբ, նախանձով և ատելութեամբ ամեն տեսակ խռովութիւններ են յարուցում իրար մէջ, գրում է. «Իսկ եթէ ընկերոջ հետ անհաշտ քահանաներից մէկը սիրուց աւելի ատելութիւնը սիրի, խաղաղութիւնից աւելի խռովութիւնը և չվերացնի տրտմութեան պատճառը և չհաշտուի իր ընկերոջ հետ, երբ դիմացինը խոնարհւում և հաշտութիւն է խնդրում՝ նա չպէտք է յանդգնի քահանայութիւն անել, քանի դեռ տրտմութեան ու բարկութեան դևին իր մէջ է բնակեցնում, որովհետև ի՞նչ

Պարտաճանաչութիւն առ Աստուած, առ ընկերը, առ հօտը և առ սեփական անձը - ահա հոգևորականի կեանքի նշանաբանը: Լինել մի կողմից Աստծու որդի, սրբութեան պաշտօնեայ ու եկեղեցու զինուոր, և միւս կողմից՝ **իր հօտի ճշմարիտ հովիւ, սրտագորով հայր և ամեն մի հայի եղբայր** – ահա հոգևորականի կոչումը[1]:

Զ- Բացի վերոյիշեալ երեք ընդհանուր պարտաւորութիւններից իւրաքանչիւր հոգևորական ըստ իր աստիճանի ունի նաև մասնաւոր իշխանութիւն, որից բխում են մասնաւոր պարտաւորութիւններ և իրաւունքներ, որովհետև պարտաւորութիւնը միևնոյն ժամանակ և իրաւասութիւն է:

Ընդհանրական Հայրապետի իշխանութիւնն է.

1- Որ ինքն է Հայաստանեայց ս. Եկեղեցու առաքելայաջորդ միակ ընդհանրական գլուխը և հոգևոր տէրը, որպէս և յիշւում է բոլոր եկեղեցիներում:

2- Պահպանել Հայաստանեայց ս. Եկեղեցու աւանդական անարատութիւնը թէ՛ դաւանական, թէ՛ բարոյական, թէ՛ կանոնական մասում և թէ՛ իր ծայրագոյն իշխանութիւնն ու հեղինակութիւնը:

3- Եպիսկոպոսներ ձեռնադրել և հոգևորականների ձեռնադրութիւնը կարգադրել Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետութեանը:

4- Միւռոն օրհնել ու բաշխել:

5- Եպիսկոպոսներին ու վարդապետներին խրատել ու պատժել, նոյնպէս և պարգևատրել կամ աւանդութիւն տալ:

6- Ուխտազանց եկեղեցականներին կարգալոյծ անել ու բանադրել, նոյնպէս և համայնքներ նզովել կամ ներել:

հաղորդակցութիւն կարող է լինել լոյսի ու խաւարի միջև, ասում է առաքեալը կամ Քրիստոսի և Բելիարի միջև: Որովհետև գրած է, թէ ով սէր ունի՝ իր մէջ Աստծուն է բնակեցնում, քանզի Աստուած սէր է, նոյնպէս՝ ով ատելութիւն ունի՝ սատանային է իր անձի մէջ զօրացնում, որովհետև նրա կերակուրը ատելութիւնն է, ինչպէս և՝ ամեն տեսակ չար գործերը»[149*]:

[1] «Եթէ հիմքն ու գլուխը հաստատուն է, ապա միջամասն էլ աւազի վրայ չի լինի. հարբած կառապանի կառքը քմահաճ կընթանայ, քնած նաւավարի նաւն արագութեամբ ծովի ալիքին կուլ կը գնայ, ծոյլ խաշնարածի խաշները վնասակար խոտ կուտեն: Որովհետև եթէ օրէնքի առաջնորդները հաստատուն և ճշմարիտ են, ապա նրանց հետ կարգաւածների մեծ մասը չի սայթաքի և եթէ խարիսխն անշարժ լինի, շինուածքը չի գահավիժի, եթէ հովիւը քաջ լինի, հօտը գազանակուր չի լինի, եթէ պահակը զգոյշ ու արթուն լինի, ապա զօրքը խաղաղութեան մէջ կը լինի և ոչ սրատուած: Որովհետև դուք՝ վարդապետներդ, ժողովրդի պահակն էք՝ աշխարհի համար օրինակ, ձեզ նայելով են ձեր վարդապետութեամբ առաջ գնում, ուստի զգոյշ եղէք» Շահապիւանի ս. ժողովի կանոն[150*]:

7- Ազգային եկեղեցական ընդհանուր ժողով գումարել:

8- Կարևոր դէպքերում եկեղեցականներին տեղափոխել:

9- Վանքերում կարգադրութիւններ անել:

10- Փոքր կաթողիկոսներին ու պատրիարքներին իրաւական, խրատական, զգուշացուցիչ, գոհութեան, յորդորանքների օրհնութեան և պարգևատրական կոնդակներ ուղարկել, նոյնպէս և առհասարակ բոլոր հօտին:

11- Նոր վիճակներ հաստատել, նոյնպէս և առաջնորդներ նշանակել և արձակել:

12- Վերադիտել ու հսկել բոլոր եպիսկոպոսներին և առհասարակ հոգևորականներին Հայաստանեայց ս. Եկեղեցու հաւատարմութեան, պարտաճանաչութեան ու նախանձախնդրութեան նկատմամբ:

13- Ծանրակշիռ բողոքների համար տնօրինութիւններ անել:

14- Եկեղեցական կարգերի ու կարգապահութեան հրահանգներ տալ:

15- Ժողովներ ու խորհուրդներ կազմել արտակարգ հարցերի համար:

16- Այցելել վիճակները կամ նուիրակներ ու պատուիրակներ ուղարկել դիտելու կամ քննելու և կամ վարդապետ քարոզիչներ առաքել բոլոր վիճակները:

17- Բաշխումներ, ներումներ, առանձնաշնորհումներ, նոյնպէս և օրինական բացառութիւններ անել, ըստ Հայաստանեայց ս. Եկեղեցու ոգու:

18- Վարդապետական (դաւանական, բարոյական, պաշտամունքային և այլ) վճիռներ տալ:

19- Կրօնական գրքեր թոյլատրել, արգելել կամ հերքել ու ջատագովել տալ, Հայաստանեայց ս. Եկեղեցու ճշմարտութեան ձայնը հնչեցնելու համար:

20- Դպրոցական ու կրօնաուսուցչական վերահսկողութիւն սահմանել, տնօրինութիւններ ու կարևոր կանոնական կարգադրութիւններ անել:

21- Վերադիտել Հայ ժողովրդի կրօնական-բարոյական կեանքը և միջոցներ ձեռք առնել ճշմարիտ կենցաղի զարգացման համար ընդհանրապէս, մասնաւոր տեղեկութիւններ ևս ստանալով իբրև բարձրագոյն խոստովանահայր:

22- Վարձատրել ու քաջալերել Հայոց Եկեղեցու ջատագովներին ու հաւատարիմներին ու ետ մղել վնասակարներին:

23- Քարոզչական առաքելութիւն հաստատել հեթանոսների մէջ:

24- Արտաքին ու ներքին հաղորդակցութիւն ունենալ կառավարութիւնների, եկեղեցիների ու հաստատութիւնների հետ, Հայոց Եկեղեցու շահերի պաշտպանութեան ու բարեզարդութեան համար:

25- Պսակի օրինազանցութիւնների ու լուծումների վճիռներ տալ Ս. Սինոդի և Կ.Պոլսի կրօնական ժողովի քննութիւններից յետոյ:

26- Վճիռներ տալ այն խնդիրների վրայ, որոնք որևիցէ կերպով կապ ունեն Հայոց Եկեղեցու դաւանական, բարոյական, պաշտամունքային եօթը ս. խորհուրդների ու կանոնների հետ:

27- Պայծառացնել Հայաստանեայց ս. Եկեղեցու միութիւնը, սրբութիւնը, ընդհանրականութիւնը և առաքելականութիւնը յայտարարող բոլոր նշանները:

28- Բարձր պահել հաւատքի նշանակութիւնը Հայաստանեայց ս. Եկեղեցու համար ամեն մի անցական պատուից ու հարստութիւնից:

Վիճակաւոր Առաջնորդի իշխանութիւնն է.

1- Ցիշել իր վիճակի եկեղեցում վերափառ Հայրապետի անունից յետոյ և աթոռ նստել և գաւազան բռնել իբրև վիճակի տէր:

2- Ձեռնադրել իր վիճակի համար քահանաներ ու հոգևոր սպասաւորներ ըստ Հայաստանեայց ս. Եկեղեցու կանոնների ու կարգերի:

3- Կանոնաւորել իր վիճակի եկեղեցիների դրութիւնը:

4- Պահպանել ու պահել տալ Աստծու պատուիրաններն ու Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետութիւնը, կարգերը, պաշտամունքն ու կանոնները:

5- Այցելու լինել կարօտեալներին և անօգնականներին, օգնել հայրաբար, տարին երիցս շրջել վիճակը, հովւել, խնամել ու խրատել իր հօտը, ըստ Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետութեան ու կանոնների:

6- Հնազանդութիւն արծարծել ժողովրդի մէջ իր Հայրապետի ներքոյ և հաւատարմութիւն առ Հայաստ. առաքելական ս. եկեղեցին:

7- Պատարագ մատուցանել և աղօթել ժողովրդի համար:

8- Օրհնել ու սրբել «ձեռամբ և բութիւ» այն ամենն ինչ որ հակառակ չէ Հայոց ս. Եկեղեցու վարդապետութեանը[1]:

9- Դիտել, վիճակաւոր խոստովանահայրութեամբ տեղեկանալ, խրատել, պատժել օրինազանցներին և ուխտազանցներին:

10- Պահպանել ժողովուրդը գայթակղեցուցիչներից և օձտողներից (պառակտիչներից), հատանել մեռեալ անդամներին և քաջալերել հաւատարիմ մշակներին:

11- Ժողովրդի նիւրաբերութիւնը և եկեղեցական արդիւնքները սրբութեամբ ծառայեցնել Հայոց Եկեղեցու համար, հսկելով նաև վիճակի վանքերի բարեկարգութեան վրայ:

12- Խստիւ հսկել վիճակի ժողովրդական կեանքի ու կրօնական կրթութեան վրայ թէ՛ դպրոցներում և թէ՛ ամենուրեք, զարգացնելով եկեղեցասիրութիւնը և առաջ վարելով ճշմարտութիւնն ու լոյսը:

Վերջապէս քահանայի իշխանութիւնն է.

1- Հաւատով ու երկիւղածութեամբ կատարել իր եկեղեցական պաշտօնը՝ բնաւ չշեղուելով Հայաստանեայց ս. Եկեղեցու կագերից:

2- Գործով կատարել և խօսքով ուսուցանել ս. Աւետարանն ու Հայաստանեայց ս. Եկեղեցու վարդապետութիւնը:

3- Կապել և արձակել իբրև խոստովանահայր՝ ձգտելով ամենքին ուղղել դէպի ճշմարտութիւն:

4- Բժշկել հոգեպէս ու մարմնապէս, քարոզութեամբ և օրհնութեամբ:

5- Մկրտել ու դրոշմել և պսակել:

6- Ս. Պատարագը մատուցանել հաւատքով, երկիւղածութեամբ և ջերմեռանդութեամբ:

7- Այցելու և օգնական Հայր լինել իւրաքանչիւր ծխականի, և օրինակով ու քարոզով մխիթարել և առաջնորդել ամենքին թէ՛ ընտանիքներում, թէ՛ դուրսը, թէ՛ հաստատութիւնների մէջ և թէ՛ հիւանդանոցներում ու բանտերում:

[1] «Եպիսկոպոսները չանդգնեն քորեպիսկոպոսներին կամ քահանաներին սեղան հաստատելու կամ եկեղեցի օրհնելու [իրաւունք] տալ». Կանոն Սիոնի[151*]:

Ահա սրանք են[1] ընդհանրական Հայրապետի, վիճակաւոր եպիսկոպոսի և ծխատէր քահանայի իրաւասութիւնները, որոնք բոլորը միասին ամփոփւում են առաջինի իշխանութեան մէջ և ճիւղաւորւում են միւսների վրայ: Եւ ինչպէս որ եպիսկոպոսական աստիճանի վրայ կաթողիկոսական կոնդակով կամ թէ վարդապետական ձեռնադրութեամբ կարող են աւելանալ ուրիշ այլ և այլ իրաւասութիւններ, ըստ աւագութեան կամ ուսման, նոյնպէս և քահանայի (կամ աբեղայի) իշխանութեան վրայ կարող են ձեռնադրութեամբ կամ հայրապետական շնորհաբաշխութեամբ բարեզարդուել աւագութեան, մասնաւոր իրաւունքների և ուսումնական շնորհների աստիճաններ (քահանային՝ մագիստրոսութիւն, իսկ աբեղային վարդապետութիւն), իւրաքանչիւր աստիճան իր գերադաս կարգի սպասաւորն է, ինչպէս և բոլորին սպասաւոր է քահանայագործական պաշտօնի համար սարկաւագը, որ իր մէջ ամփոփում է ստորին սպասաւորների աստիճանն ու գլխաւորութիւնը և թերևս ունի իր աւագութիւնը սարկաւագապետութեան մէջ, որպիսիք էին Ս. Սահակի Երեմիա և Ս. Ներսէսի Մուրիկ սարկաւագապետները:

Է- Հռոմ. եկեղեցին տոգորուած նիւրապետական ոգով, Գ դարից ձգտում էր վերացնել իր ամբողջ կղերի ամուսնութիւնն ու կուսակրօնութիւն հաստատել նրա մէջ, որ և վերջնականապէս հրատարակեց Գրիգոր Է-ն[2] ԺԱ դարում, թէև այդ նորութիւնը հազիւ ընդհանրացաւ 3-4 դար յետոյ: Այս հակաւետարանական ընթացքով Հռոմ. եկեղեցին արհամարհում է ամուսնութիւնը, եկեղեցականին անպատշաճ դարձնելով, և միևնոյն ժամանակ՝ ամուսնացած մարդուն կատարելապէս արգելք է լինում եկեղեցուն ծառայել: Յայտնի է, որ Պետրոս

[1] Յովհաննէս Սարկաւագ վարդապետը ամփոփում է հոգևորականի պաշտօնները հետևեալ անունների մէջ. «բժիշկ, հրեշտակ, քաւիչ, վարդապետ, դաստիարակ, հայր, դայեակ, աւետարանիչ, հովիւ, զօրագլուխ, մարգիչ, լոյս, քարոզ, տնկագործ մշակ, գլուխ գլխից յետոյ, առաջնորդ, տեսուչ, հրաւիրակ, յանդիմանող որսորդ, տաճարապետ, հարսնածու, հաւատարիմ ծառայ, պահապան, գանձակալ, կերակրիչ, մատուակ, զգեստաւորող, նիւրագործող, միջնորդ դատաւոր, հազարապետ, տնօրէն, հանդիսապետ, վճռող, կամք Աստծու, պաշտօնեայ, պահակ, ժառանգաւոր, կատարիչ, խորհրդածու. որոնցով մէկ անգամ, նաև որոնց շնորհիւ լրանում է աստուածպաշտութեան խորհուրդը և Քրիստոսի եկեղեցին գեղեցիկ ու վեհազնիւ կարգերով է մատակարարւում և մնում անխաթար»[152*]:

[2] Գրիգոր Է-ը պոռնկութիւն է անուանում ամուսնութիւնը: Սակայն ս. Թովմաս Աքւինացին անգամ ԺԳ դարում նկատում է, որ պէտք է թոյլատրել քահանայի ամուսնութիւնը, որովհետև ժողովրդի մէջ դրանց յարաբերութիւնը այդ է պահանջում:

առաքեալն ու Փիլիպպոս սարկաւագն անգամ ամուսնացած էին (Մատթ., Ը 14, Գործք., ԻԱ 8-9), տեսանք, որ թէ՛ Քրիստոս և թէ՛ Պօղոս առաքեալը չեն պահանջում, որ ամենքն էլ կուսական կեանքով նուիրուեն եկեղեցական գործին. և մինչև անգամ վերջինս ասում է, թէ քահանան ու սարկաւագը պէտք է «մի կնոջ այր» լինեն (Ա Տիմ., Գ 2, 4, 12): Կուսակրօնութեամբ Աստծու գործին նուիրուելը բարձր առաքինութիւն էր և ոչ թէ պարտաւորիչ, ըստ որում ամուսնացած քահանային էլ թոյլատրւում էր այդ նպատակով համաձայնել իր ամուսնու հետ ու վանք մտնել ըստ առաքելական կանոնի: Սակայն յանցանք էր թողնել կնոջը, եթէ նա չէր համաձայնում: Երբ Եգիպտոսի եպիսկոպոս Պափնուցիոսը հարց բարձրացրեց Նիկիոյ ս. ժողովում կուսակրօնութեան մասին, ժողովը վճռեց չպարտաւորեցնել բոլոր հոգևորականներին կուսակրօն լինել[1]:

Արդ, կուսակրօնութեան նուիրող այդքան հոգևորական գտնել՝ բոլորովին անհնարին է և հետևաբար հոգևոր պաշտօնեայի կեանքն անհրաժեշտապէս մատնւում է մեղանչականութեան: Բայց և այնպէս Հռոմի եկեղեցին չի խորշում այդ վտանգից, որովհետև պապական աշխարհային ձգտումները պսակւում են այդ իսկ կերպով, որ իր կուսակրօն կղերով ձեռք է բերել ընտանեկան, ազգային և հասարակական կապերից ազատ, հաւատարիմ ու հլու հպատակների մի հհագին բանակ, որոնցով Հռոմի քահանայապետը յաջողապէս վարում է իր քաղաքականութիւնը:

Երկրորդ՝ Հռոմ. եկեղեցին շփոթում է ձեռնադրական շնորհաբաշխութիւնը և կամայականօրէն ստորադրում է ըստ շնորհաց մեծին իրենից փոքրի ներքոյ: Հռոմի քահանայապետը կամենալով թագաւորական շքախումբ կազմել՝ ստեղծել է ծիրանաւորների (կարդինալ) մի խումբ, որոնք կոչւում են «իշխանք եկեղեցւոյ». սրանք բարձր են նոյնիսկ արքեպիսկոպոսներից, թէև եպիսկոպոսական, քահանայական և սարկաւագի աստիճաններ միայն ունեն: Եպիսկոպոս կարդինալը, քահանայ կարդինալը և սարկաւագ կարդինալը աւելի մեծ են, քան արքեպիսկոպոսները, քան պատրիարքները և պապից յետոյ երկրորդ են, հետևաբար նրանց ստացած ձեռնադրութիւնը ոչ մի նշանակութիւն չունի և կամ իսկապէս և էապէս յատուկ իշխանութիւն չի տալիս ձեռնադրողին:

[1] Տե՛ս Նէոկեսարիոյ Ա եւ Նիկիոյ Գ կանոնը[153*]:

Ձեռնադրութեան ս. խորհուրդն անգամ ծառայեցնում են պապական փառասիրութեանը:

Այս բռնակալական և շնորհաբաշխութեանը կամայական ընթացք տուող ձգտման հակառակ՝ բնական էր, որ Լութերը միւս ծայրայեղութեանը դիմէր: Այդպէս էլ արեց. ինքն էլ լոկ քահանայական ձեռնադրութիւն ստացած լինելով և ուրեմն անկարող լինելով առաքելական յաջորդութեան ձեռնադրութիւն ընձեռել իր նորաշէն եկեղեցու սպասաւորների համար, մերժեց մինչև անգամ ձեռնադրութեան կարևորութիւնը: Այսպիսով բողոքական եկեղեցու սպասաւորներն աշխարհական դիրք ստացան և սպասաւորութեան են կոչւում լոկ հրապարակական մի կարգադրութեամբ. նրանք ոչնչով չեն տարբերւում աշխարհականներից, այլ միայն պաշտօն ունեն ուսուցանելու, մկրտելու ու հաղորդելու, ինչպէս իւրաքանչիւր հաւատացեալ իսկ: Սակայն այս պարզապէս հակառակ է ոչ միայն Պօղոս առաքեալի խօսքերին, որոնց համաձայն ձեռնադրութեամբ է տրւում քահանայական շնորհը (Ա Տիմ., Դ 14, Բ Տիմ., Ա 6), ինչպէս տեսանք և վերը, այլև Գործք առաքելոցում յայտնապէս պատմւած է թէ ինչպէս առաքեալները երէցներ էին ձեռնադրում փոքր Ասիայի եկեղեցիների համար և թէ ինչպէս ձեռնադրեցին եօթը սարկաւագներ, որոնց ընտրեց ժողովուրդը և որոնք լի էին «Հոգով Սրբով և իմաստութեամբ» (ԺԴ 23, Զ 3-6, Թ 28):

Այս ամենը, ինչպէս վերն էլ տեսանք, ցոյց են տալիս, որ Բողոքականները թէ՛ հակառակ են ընթանում առաքեալների կարգերին ու վարդապետութեանը և թէ՛ վերացնելով շնորհաբաշխական աւանդական կարգը, ի չիք են դարձնում եկեղեցու կոչումն անգամ և իւրաքանչիւր անհատի կամայական ինքնագլուխութիւն վերապահում: Այստեղից էլ ծագում է եկեղեցու անտեսանելիութեան մոլորութիւնը և անհատների ինքնափրկումը: Հռոմ. եկեղեցու աշխարհային բռնապետութեան փոխարէն բողոքականների մէջ թագաւորում է աշխարհային եսականութիւնն ու կամայական հաւասարութիւնը:

Հայաստանեայց ս. Եկեղեցին խորշելով բռնակալական և աշխարհային ոգուց, ազատ է այդ ծայրայեղութիւններից, նա ճանաչում է թէ՛ առաքելական ձեռնադրութեան բարձր նշանակութիւնը, թէ՛ շնորհաբաշխական յատուկ կարգը, թէ՛ իր եկեղեցականների պաշտօնական դիրքը, ըստ աւանդական շնորհների և

աստիճանական կարգն ըստ առաքելների որոշումների և թէ՛ կատարեալ միութիւն ու հաւասարութիւն պահելով իր հօտի մէջ, միմիայն շնորհների առաւելութեամբ է տարբերում իր պաշտօնեաներին ծխի անդամներից: Ինչ որ չունի ոք, չի կարող և աւանդել. հոգևորականը ստանում է ձեռնադրութեամբ այն աստուածային շնորհները, որոնց իշխանութեամբ պարգևում են և իրենց հաւատացեալներին աստուածային փրկարար շնորհներ:

Ը- Ձեռնադրութեան ս. խորհուրդն անկրկնելի է (Եբր., Զ 2) և կատարւում է Կաթողիկոսի ու եպիսկոպոսի ձեռքով ու ս. միւռոնով կամ թէ օրհնութեամբ, ըստ իւրաքանչիւր աստիճանի կարգի: Քանի որ Կաթողիկոսից է իջնում ձեռնադրութեան շնորհաբաշխութիւնը բոլոր եկեղեցականների վրայ, բնականաբար բոլոր աստիճանները կարող է ստացել նրա ձեռքով. սակայն սովորաբար Կաթողիկոսը ձեռնադրում է միմիայն եպիսկոպոսներին և կարևոր դէպքում (վարդապետ՝ եպիսկոպոսի չեղած ժամանակ) նաև ծայրագոյն վարդապետութիւնն ինքն է տալիս: Մինչդեռ եպիսկոպոսը շնորհաբաշխութեան սկզբունքի համեմատ կարող է ձեռնադրել միմիայն նրանց, որոնց տալիք աստիճաններ ունի և ինքը լրիւ, այսինքն՝ քահանայից սկսած մնացած ստորին սպասաւորներին: Ուրեմն և նա չի կարող ուսման աստիճան տալ վարդապետին, եթէ ինքը ևս ծայրագունութիւնը չունի, այլ միայն պարզ եպիսկոպոս է[1]:

Վախճանւած քահանաների թաղման կարգի մէջ կատարւում է նաև նրանց ճակատի և աջ ձեռքի օծումը ս. միւռոնով, որպէսզի աստուածային զօրութեամբ զինւեն նրանց ոսկորները և հանդերձեալ կեանքում նրանք յաղթական գահը բազմեն ճշմարիտ հովիւների շարքում իբրև սրբութեան պաշտօնեաներ և Քրիստոսի պաշտօնակիցներ[2]: Ս. Գրիգոր Տաթևացին ևս ասում է. «Նրանց օծում ենք իբրև ըմբիշի, որպէսզի մարտի մէջ մտնեն օդի չար դևերի դէմ»[154*] և այդ օծումը լրումն է առաջին օծման և նշանակում է թէ նոյն օծութեան մարտի մէջ ճգնել է, խաչակից է եղել Քրիստոսին և կատարման վախճան ընդունել, կամ ուրիշ խօսքով քահանայ էր և քահանայ մնում է և Ս. Հոգին միշտ նրա հետ է: Թաղման ամբողջ կարգն էլ այս սկզբունքի արտայայտութիւնն է պարունակում, ըստ որում և նրա աղօթքների մէջ ամփոփ

[1] Տե՛ս Մաշտոց ձեռնադր.
[2] Տե՛ս Քահանայաթաղ, էջ 69, 70:

խնդրւում է Աստծուց՝ կատարումն տալ այն ամենին, ինչ որ կազմում է քահանայի պաշտօնի ու ճշմարիտ գործունէութեան էութիւնն իր եկեղեցու բարգաւաճման ու բարեզարդութեան համար:

Ձեռնադրութեան կանոնների դէմ մեղանչելուց են առաջ գալիս եկեղեցական կարգերի և հոգևորական դասի զեղծելն ու անկումը, ինչպէս պատահել է արդէն իսկ Ե դարի վերջում: Անկման մէջ բնական է եղել խելահաս հայրերի ողբն ու հառաչանքը: Մի այդպիսի վհատեցուցիչ պատկեր է ներկայացնում մեզ Յովհաննէս Սարկաւագ վարդապետը՝ նկարագրելով այն վիճակը, որ հանրագումարն է կեղծ փարիսեցիութեան և սադուկեցիութեան, այսինքն՝ մի ժամանակ, երբ հոգևորականը ոչ թէ արտաքուստ բարեպաշտ է և ներքուստ՝ մեղաւոր, այլ ուղղակի ներքուստ և արտաքուստ այլանդակւած ի վնաս անձի, եկեղեցու և ժողովրդի: Առաջ բերենք մի կտոր.

«Որովհետև, եթէ մարմնական բաների մէջ և աշխարհային ատեաններում արգելւում է կաշառք առնելը, ապա որքան աւելի եկեղեցում և մանաւանդ ժառանգաւորներին պարտ է [այն] մերժել և ամբարշտութիւն համարել: Հոթորը խրատ էր տալիս Մովսէս մեծ մարգարէին՝ ժողովրդի վրայ կարգել իմաստուն, արդարակորով այրեր, ովքեր կատեն կաշառքը՝ իմանալով, որ կաշառքը կուրացնում է համարձակահայաց մարդկանց աչքը և սրանք Աստծու տան մէջ կուռքեր կը կանգնեցնեն, որպէսզի ոչ թէ Աստծուն, այլ մամոնային ծառայեն, և Աստծու պարգևները, որոնց արժանի չեն, նիւթով ստանան և ստանալ տան, որի մէջ և կորչելու են: Տգէտ և ռամիկ ժողովրդի վրայ [պարտ է կարգել] արդար և կաշառատեաց ոստիկաններ՝ [սատար լինելու] նրանց իրաւունքներին և պէտքերին և [արդար] դատել, մինչդեռ հաւատացեալների և Քրիստոսի եղբայրների վրայ՝ կարգւած են յափշտակող, գողերին գողակից մարդիկ, որպէսզի ուրիշները լուռ մնան: Մեր վրայ կարգւեցին դրամաշահութեան միջոցներ փնտռող իշխաններ, վերակացուներ, անկարգ, կեանքից անտեղեակ, տկարամիտ ծառաներ՝ ստրկական անարժանութեան պատճառով տնից և վայելքից արտաքսւած, ովքեր ուղտ են կուլ տալիս և չեն սիրում մժեղ քամել, ամանի և բաժակի արտաքնակողմը չեն սրբում, իսկ ներսն էլ լի է նեխահոտով և գարշելի դժւարլւացւելիք ախտով: Կիրի ճերմակութիւնն ամենևին չի փայլում, մահը [նրան] կուլ տւեց անդունդի խորքերն ու սահմռկելով շրջում է խաւարի մէջ

և [այնտեղից] փչում է գարշելի ապականութեան հոտը: Գիտութեան լոյսը մերժուած է նրանց խաւար երեսների տգիտութիւնից, ատում են ցերեկը և չեն շրջում ցերեկով, քանզի սնդի աճը և ցերեկւայ վախճանը գիշերւայ մէջ արւեստագործւեց: Այս լսելիս թող չտրտմեն սրբերը, եկեղեցու լուսաւորիչներն ու խօսքի վարդապետութեան ճշմարիտ համառօտողները, ովքեր գեղեցիկ կարգաւորութեամբ պայծառացնում են այն և հովւում Սուրբ Հոգու իմաստութեամբ, այլ մանաւանդ բովանդակ զօրութեամբ զգուշանում են մեր դարանակալ ոսոխից, որ մռնչալով շրջում և փնտռում է կլանել նրանց, ում արթուն չի գտնի»[1]:

ԽԸ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՏԻԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Մարդը ժողովրդի մի անդամն է. նա ստեղծւած է ոչ թէ միայնութեան, այլ ընկերութեան համար. բացարձակ միայնութիւնն անտանելի ու խորթ է մարդուն: Սէրը, ընկերութիւնը նրա կեանքի հիմնաքարն է, որի ամենազօրեղ տեսակն է այն սէրն ու հաղորդակցութիւնը, որ նախապէս հաստատւում է մարդու և Աստծու մէջ և ապա սփռւում դէպի ընկերական կեանքը[156*]: Քրիստոս էլ ոչ թէ մի անհատի, այլ ամբողջ մարդկութեան փրկութեան համար եկաւ աշխարհ և Նա իւրաքանչիւր մարդուց պահանջում է ոչ միայն հաւատք ու յոյս, այլև սիրոյ առաքինութիւն. ըստ որում և մարդ Քրիստոսին ճշմարտապէս հաւատում է միայն այն ժամանակ, երբ ընկերոջ հանդէպ սիրով լցւած՝ իր գործունէութեամբ ծառայում է ժողովրդի առաքինութեան բարգաւաճմանն ու ամրութեանը: **Աստծու, այլև մարդկանց առաջ ատելի է եսապաշտութիւնը, որովհետև այդ ծայրայեղ աստիճանն է ամբարտաւանութեան, այսինքն՝ ինքնաբարձրացման, որ տանում է դէպի ինքնաստւածացում,** իսկ դա այն մեղքն է, որով ընկան ոչ միայն առաջին մարդիկ,

[1] Յաղ. քահ. 19-20, հմմտ. Մովս. Խոր. Ողբ. և Բ, ՂԲ, Սոփերք Բ, Պատ. Ս. Սահակի և Մեսրոպի [էջ 5-42], Ընդհան., [տպ. «Գանձասար», Եր., 1991, էջ 80-103], նաև իմ Միջին դարերի աղմուկները, «Արարատ», 1893[155*]:

այլև՝ հրեշտակները: Ուստի և Քրիստոս բազմիցս հրամայում է. «Այս եմ պատւիրում, որ սիրէք իրար» (Յովհ., ԺԳ, ԺԵ և այլն): Պօղոս առաքեալը ևս սէր չունեցող և մինչև անգամ հրեշտակային բարբառով օժտւած մարդուն նմանեցնում է պղնձի, որ հնչում է և ծնծղայի, որ ղօղանջում է (Ա Կոր., ԺԳ):

Ամբողջ Աւետարանի քարոզութեան առանցքն այն հաւատքն է, որ զարդարւած է սիրով. այն գործն ու կեանքն է, որ հիմնւած է սիրոյ վրայ, և այն ձայնն ու խօսքն է, որ բխում է սիրուց: Առանց սիրոյ ոչ մարդու կեանքն է աստւածահաճոյ, ոչ առաջադիմութիւնն է դէպի Աստւած և ոչ աղօթքն ու աղաչանքն է Աստծուն լսելի: Այդ պատճառով և Քրիստոս՝ թէև շեշտում է միշտ հաւատքը, սակայն չի ճանաչում անսէր հաւատք, չի ճանաչում մեռեալ հաւատք առանց սիրոյ շողերի, և յատկապէս ասում է. «Ուր երկուսը կամ երեքը հաւաքւած են իմ անունով, ես այնտեղ եմ, նրանց մէջ» (Մատթ., ԺԸ 20): Եթէ երկրի վրայ ձեզնից երկուսը միաբանւեն ամեն բանի համար, ինչ էլ, որ խնդրեն՝ նրանց կը տրւի Իմ Հօրից, որ երկնքում է»: Ուրեմն հաւատացեալ միաբանութեան խօսքի և աղօթքի ուժը աւելի և աւելի զօրեղ է Աստծու առաջ, **արդէն իսկ հաւատացեալ մարդու համար եկեղեցու կամ հաւատացեալ բազմութեան ձայնը վերջնական կշիռ ունի** և այդ ձայնը մերժողը համարւում է «հեթանոս և մաքսաւոր»[1]: Այս հիման վրայ և կազմւած է ժողովրդական առածը՝ «Ձայն բազմաց-ձայն Աստծու», այսինքն՝ «ձայն բազմաց հաւատացելոց»: Եւ ահա տէրունական աննման աղօթքն էլ, որ իբրև ճշմարիտ աղօթքի նմուշ աւանդւած է Տիրոջից ոչ թէ մի անհատի, այլ ժողովրդի կողմից է ասւում և ժողովրդի կամ միաբանութեան դերանուն «մենք»-ը այդ փոքրիկ աղօթքի մէջ ութ անգամ կրկնւում է՝ աղօթողի մտքերն ու զգացմունքները սիրոյ վրայ հաստատելու և նրա ձայնը Աստծու առաջ որդիական կամ եղբայրական ձայն դարձնելու համար: Պարզ է, որ ճշմարիտ և աստւածահաճոյ աղօթքը այն մարդու աղօթքն է, որ ոչ թէ միայն ինքն է ուզում Աստծու որդիութեան շնորհները վայելել, այլ աղօթում է եղբայրութեան կողմից և իր եղբայրների համար ևս հաւասարապէս: Այդպէս և Պօղոս առաքեալը հրամայում է. «Միաբանութեամբ և միաբերան փառաւորենք Աստծուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը» (Հռոմ., ԺԵ 6):

[1] Մատթ., ԺԸ 15-17, Ա Կոր., Ե 4:

Ս. Գիրքը բազմաթիւ փաստեր է տալիս այդ զօրաւոր ճշմարտութեան հաստատութեան համար: Այդպէս արեց հաւատացեալների հայր Աբրահամը՝ բարեխօսելով նոյնիսկ ընկած սոդոմացիների համար (ԾՆ. ԺԸ) և Աստուած իսկ ասում է նրան. «Եթէ Սոդոմում յիսուն (նոյնիսկ տասն) արդար գտնուի այդ քաղաքում՝ յանուն նրանց չեմ կործանի»: Այդպէս էին աղօթում իսրայէլացիները ազգային օրհասի, նեղութեան ժամանակ: Այդպէս արեց Եզեկիա թագաւորը և լսելի դարձրեց իր աղօթքն Աստծուն: Այդպէս արեց և Յոբն իր որդիների համար: Իր ժողովրդի համար աղօթում էր և Պօղոս առաքեալը: Այդպէս և ժողովուրդն աղօթում էր՝ Պետրոս առաքեալի ազատութիւնը խնդրելով: Իրեն չարչարող և սպանող թշնամիների մեղքերի թողութիւն էր խնդրում նաև քարկոծուող Ս. Ստեփաննոս նախավկան[1]: Այդպէս միաբանական ժողովով Քրիստոսի առաքեալներն ընդունեցին Ս. Հոգուն և միշտ այդպիսի եկեղեցական ժողովով էին աղօթում առ Աստուած[2]:

Ուստի և ինչպէս որ Քրիստոս պատուիրեց իր հաւատացեալներին. «Սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին, բարիք գործեցէք ձեզ ատողներին, աղօթք արէք նրանց համար, ովքեր չարչարում են ձեզ և հալածում». այդպէս և առաքեալը պատուիրում է ճշմարիտ միութեամբ ու սիրով աղօթել թէ իրար համար, թէ իր համար և թէ «վասն ամենայն սրբոց», «վասն ամենայն մարդկան»՝ լաւ իմանալով, որ ամենքն էլ հաւասար եղբայրներ են և Աստծու համար կողմնապահութիւն չկայ[3]: Իսկ այս պատուէրը կատարեալ յուսով է զինավառում մեզ, երբ տեսնում ենք, որ Քրիստոս ոչ միայն իսրայէլացիների, այլև հեթանոսներից մէկի խնդրանքով օգնում էր միւսին, ինչպէս միամօր վրայ գթալով՝ յարութիւն պարգևեց նրա որդուն (Ղուկ., Է 13), Մարիամի Մարթայի աղաչանքով յարութիւն տուեց Ղազարոսին, հարիւրապետի խնդրանքով բժշկեց նրա ծառային[4] և այլն և այլն:

[1] Բ Մնաց., Լ 18, Յովբ., Ա 5, Եփ., Գ 14, Գործք., ԺԲ 5, Լ 59:
[2] Գործք., Բ, Գ 1, Ե 25, Հռ., ԺԶ 4, Ա Կոր., ԺԶ 19, Կող., Դ 15, Ա Կոր., ԺԳ 8, Գաղ., Զ 10, Ա Տիմ., Ե 8, Ա Յովհ., Գ 18, Բ Մակ., ԺԲ 43-46:
[3] Մատթ., Ե 44, Ղուկ., Զ 28, Բ Կոր., Ա 11, Թ 14, ԺԴ 9, ԵՓ., Ա 16, Զ 8, 18, Յակ., Ե 14-16, Ա Տիմ., Բ 1-2, Բ Տիմ., Ա 3, Հռ., ԺԵ 30, Ա Թես., Ե 25, Բ Թես., Գ 1, Կող., Դ 3, 12, Եբր., ԺԳ 18, Փիլիմ. 22 և այլն:
[4] Մատթ., Ը 5-13, Ղուկ., Է 2, Ե 20:

Բ. Բայց հաւատացեալի սէրն եկեղեցու ամբողջ լրման հետ պէտք է լինի. և քանի որ հաւատացեալ ննջեցեալների հոգիները, որոնք կենդանի են Աստծու առաջ (Մատթ., ԻԲ 32), նոյնպէս սպասում են հանդերձեալ հատուցման և Հայաստանեայց ս. Եկեղեցու անդամները հոգևոր առաջադիմութեան մէջ լինելով՝ անընդհատ կապ ունեն բուն հոգևոր կեանքի հետ պարզ է, որ մի անխախտելի միութիւն կայ նրանց ու մեր մէջ: Եկեղեցին չի կարող կտրուել, զատուել իր յաղթող անձնազոհ անդամներից, անդրանիկների եկեղեցուց, ապա թէ ոչ անկատար և առանց սիրոյ ու յոյսի կը լինի նրա յաղթական ընթացքը և նրա միութիւնը լոկ մարմնաւոր միութիւն կը դառնայ առանց հոգևոր միութեան[1]: Մինչդեռ այդ հոգևոր միութեան ապացոյցը նրա այն սերտ կապն է, որ ունի իր անդրանիկների եկեղեցու հետ[2]: Բայց միութիւնն էլ չի կարող առանց յարաբերութեան կամ հաղորդակցութեան լինել. միութիւնը պահում ենք Աստծու հետ, աղօթելով նրան ու լսելով նրա խօսքը. այդպէս էլ մեր սրբերի և առհասարակ մեր անջատուած անդամների հետ միութիւն ենք պահում աղօթելով նրանց համար և շահելով նրանց աղօթքը մեզ համար[3]: Ինչ որ անում ենք բարեպաշտութեամբ մեզ համար, նոյնը ևս ճշմարիտ սիրով անում ենք նրանց հոգու համար. աղօթք, հոգեհանգիստ, պատարագ, ողորմութիւն, բարեգործութիւն և այն անելով նրանց յիշատակին, մենք կատարում ենք մեր քրիստոնէական եղբայրասիրութեան ճշմարիտ պարտականութիւնը[4]: Մենք չենք կարող աղօթել միայն վճռապէս աստուածուրացիների, Ս. Հոգուն հայհոյողների և այլ սուտանուն քրիստոնեաների համար[156*ա], որովհետև ճշմարիտ հաւատացեալը

[1] Ս. Վրթանէսի խօսքը տե՛ս Բուզանդ., էջ 24, Ծար. 605-648:
[2] Եբր., ԺԲ 23, Եփ., Ա 10, 20-23, Ե 30, Գ 9, 10, Ա Թես., Ե 16-25, Հռոմ., ԺԴ 9:
[3] Տե՛ս Հաւատամք Գ 5 և Երկրորդ մասը:
[4] Տե՛ս նաև Եղիշէ, էջ 358-361. «Ցիշիր, ով սիրելի, որ եթէ ննջեցեալ հոգիների համար ասենք, թէ նրանք հասկանում կամ չեն հասկանում, ապա ոչ հանգուցեալ (ողջանդամ) հոգիների համար սրանից աւելի տխմար բան չկայ. որովհետև Աստուած է, որ ընդունողն է պատարագների և կատարողը ուխտերի, լսում է ողջերի աղօթքը և թեթևացնում է յոյսով ննջեցեալ մեռելների հոգիները: Այս է սովորեցնում և Սուրբ Գիրքը. ինչպէս օրինակ Եղիսէն, որ ոչ թէ մանկանը լսեց, այլ՝ մօր աղաչանքը, կենդանացրեց մանկանը և յանձնեց մօրը: Ասում է, թէ մեր Տէր Աստուածը խղճաց այրի կնոջը և յարութիւն պարգևեց միամօր որդուն: Նաև առաքեալների ժամանակ այրիների արտասուքը և հառաչանքը յարութիւն տուեցին Տաբիթային և նրանց յանձնեցին: Արդ, եթէ ողջերի աղօթքով աստուածային զօրութիւնը գիտէ մահից կենդանութեան կոչել, առաւել ևս կարող ենք հաւատալ, թէ մեղքերի թողութիւն կը տրուի յոյսով ննջեցեալներին. երբ ողջերը կը խնդրեն յանուն նրանց»: Աբրահամ եպս. Մամիկոնէից. թուղթ[157*]:

դրանց հետ ոչ մի կապ չունի և մեր աղօթքը միմիայն հաւատացեալի թեթև յանցանքների համար է լսելի լինում. հաւատքն է էականը, և ուրեմն չի կարելի անհաւատի համար յանուն Յիսուս Քրիստոսի աղօթել[1]:

Ինչպէս որ մենք աղօթում ենք մեր մեկնած եղբայրների համար, այնպէս էլ նրանց հոգիները կարող են մեզ համար աղօթել և եթէ Աստուած հանգուցելոց հոգիների ձայնը կամ նրանց համար ողջերի աղօթքը չլսէր, այդ բանից կը հետևէր հոգիների ատելի վիճակը Աստծու առաջ, որ անկարելի է: Աստուած ինքն ասում է, որ մարդիկ աղօթել տան սուրբերին իրենց համար և լսում է նրանց աղօթքը, ինչպէս լսեց արդար Հաբէլի ձայնը, որի մասին Պօղոս առաքեալն ասում է, թէ «Դեռ խօսում է»[2]. Երեմիայի բերանով ևս Աստուած ասում է, որ Մովսէսն ու Սամուէլը բարեխօսում էին իր առաջ և կայ դէպք, երբ նրանց չի լսել: Յոբի բարեկամներն էլ յիշեցնում են Յոբին, թէ նրա ձայնը չեն լսել սուրբերն իբրև ամբարշտի ձայն: Նաև Մովսէս մարգարէն Աստծու շնորհն է խնդրում ի սէր Աբրահամի, Իսահակի և Յակոբի, ինչպէս և Սողոմոնն Աստծուն աղաչելով՝ լսել է տալիս իր ձայնը Դաւիթ մարգարէի անուամբ. այլև ինքն աղօթում էր իր հօր հոգու համար[3]: Ըստ այսմ և Քրիստոս ոչ միայն միջնորդութիւնն է յիշում, որ մենք վայելում ենք, այլև՝ Մովսէսի խօսելը, որ բացատրում է նաև առակով[4]: Եւ որովհետև աղօթք կամ բարեխօսութիւն անում են և հրեշտակները, ուստի Քրիստոս ասում է. «Ասում եմ ձեզ, որ այսպէս ուրախութիւն կը լինի երկնքում մի մեղաւորի համար, որն ապաշխարում է»[5]: Իր ուրախական աղօթքով միանում է մեզ հետ յաղթական եկեղեցին, որ չի կարող Աստծու առաջ հանոյ լինել, եթէ իր հաւատքի և յուսոյ հետ վառած չպահի նաև աստուածային ճշմարիտ սէր իր երկնաւոր անդամակիցների նկատմամբ: Եւ ինչպէս որ մեր բարեպաշտութեամբ, աղօթակցութեամբ և հաւատքի կենդանութեամբ նրանք ուրախանում են, այնպէս էլ ճշմարիտ հաւատացեալի հոգուն են ուրախութեամբ հանդիպում:

[1] Բ Պետր., Բ 22, Եբր., Զ 6, Տիտ., Ա 16, Հռ., Բ 20, Բ Տիմ., Զ 1, Ա Յովհ., Ե 16, Ա Կոր., Զ 1, 6, Յաճախ. ԺԳ:
[2] Յոբ., ԽԲ 8-9, Ծննդ., Ի 7, Դ 10, Եբր., ԺԱ 4, ԺԲ 24:
[3] Եր., ԺԵ 1-19, Յոբ., Ե 1, Բ Օր., Թ 27, Բ Մնաց., Զ, տե՛ս և Բ Մակ., ԺՍ 43-46, Տովբ., Դ 17, 18, Ա Թագ., ԼԱ 13, Բ Թագ., Ա 12, Գ 35:
[4] Յովհ., Ե 45, Ղուկ., ԺԳ 6-9, ԺԶ 27-31, Մատթ., ԺԸ 10, Ղուկ., ԺԵ 10, Դան., Ժ 11, Տովբ., ԺԲ 12, Զաք., Ա 12, Յայտ., Ե 8, Ը 3, Զ 9, ԺԲ 10:
[5] Մատթ., ԺԸ 10, Զաք., Ա 12-13, Յոբ., Ա 6, Բ 1, Դան., Ժ 12-13, 20, Ղուկ., ԺԵ 7, 10:

«Հրեշտակները և սուրբերի հոգիներն ընդառաջ են գալիս սուրբ և արդար հոգիներին, և սաղմոսներով, օրհնութեամբ, հոգևոր երգերով նրանց տանում են Աստծու առաջ»[1] [158*]: Քրիստոս առանձնապէս շեշտում է հոգիների այդ հոգացողութիւնն իրենց երկրաբնակ եղբայրների հանդէպ (Ղուկ., ԺԶ 27):

Սակայն բացի հաւատացեալների՝ իրենց մեկնած եղբայրների հետ փոխադարձ յարաբերութիւնից, ամբողջ զինուորեալ եկեղեցին ևս մի միութիւն է անդրանիկների եկեղեցու հետ և ուրեմն նրա հետ ունի փոխադարձ յարաբերութիւն և հաւատացեալներն իբրև մի ամբողջութիւն դիմում են առ Աստուած: Ըստ որում և նրա իւրաքանչիւր ս. նահատակ՝ իբրև «մաքրուած սուրբ տաճար, երկնաւոր Թագաւորի տէրութեան օթևան» անձամբ իսկ բարեխօսութիւն է Աստծու առաջ ամբողջ Եկեղեցու համար: Այս է ասում և ս. Գրիգոր Լուսաւորիչը. «Աստուած մեծ, հզօր և փառաւորեալ, սուրբերի լուսաւորիչ և սուրբերի մէջ նստած, սուրբ առաքեալների ճգնութիւնը Քեզ ուղղուած բարեխօսութիւն ենք դարձրել»[2]: Իւրաքանչիւր ս. նահատակ մի ապացոյց է ամբողջ եկեղեցու առաքինութեան, և եկեղեցին իր սուրբ նահատակներով արիութիւն է ստանում թէ՛ գործելու և թէ՛ Աստծու առաջ հաճութիւն գտնելու համար: Ուստի և սրբոց բարեխօսութիւնն առհասարակ ոչ թէ մեզ նման խօսքային աղօթք պէտք է հասկանալ, այլ նրանք իրենց հաւատալից անձամբ իսկ մշտամռունչ բարեխօսութիւն են մեզ համար, Աստծու առաջ նրանց ճգնութիւնը կամ խաչակրութիւնն է բարեխօսութիւն մեզ համար: Ըստ որում սրբոց նախատօնակին ասում ենք՝ «Սուրբ ճգնաւորներով աղաչենք Տիրոջը», այսինքն՝ ինչպէս որ կեանքի պատերազմի մէջ նրանք մեր առաջնորդն են եղել, այնպէս էլ նրանց յիշելով մեր առաջ, աղօթում ենք[3]:

Ուրեմն «Հաւատացեալ ժողովրդի համար սուրբերի բարեխօսութիւնն այսպէս պէտք է հասկանալ. [սուրբերն] իրենց բոլորանուէր ճգնութեամբ երկրի վրայ իրենց մարմինների անուշ բուրումով պատարագուեցին յանուն Աստծու անուան, և նրանց սուրբ հոգիները հոգևոր բարեխօսութեամբ շարժում են Աստծու [գութը]՝ ողորմելու աշխարհը»[159*]: Նրանք նահատակելով Քրիստոսի անուան

[1] Տե՛ս նաև Ս. Ղևոնդի խօսքը Եղիշէ 84, 88, 128:
[2] Ժամագիրք. 300, տե՛ս նաև Սաղմ., ՃԺԴ, Եզնիկ 84, 90, Եղիշէ 78, Փարպ. 17, 90, Յաճախ., ԺԲ 237, Շարական. 582:
[3] Տե՛ս Տօնացոյց, էջ 119: Ժամագիրք ձեռաց. 338:

համար թողել են իրենց վաստակները Հայաստանեայց ս. Եկեղեցում, ուրախանում են՝ տեսնելով այդ վաստակների զարգացումը և հետևաբար նրանց սիրող Աստուած արդէն նրանց սիրոյ համար չի թողնի, որ ընկճեն այդ վաստակների նախանձախնդիր մշակներն ու նրանց անդամակիցներն ամօթ բերեն սրբութիւնը պաշտողներին: Պարզ է, ուրեմն, որ սրբոց հոգիներն անձամբ իսկ բարեխօս են զինուորեալ եկեղեցու և նրա իւրաքանչիւր նախանձախնդիր հաւատացեալի համար: Այդպէս են նրանք բարեխօսում մեզ համար և այդ բարեխօսութիւնն ենք յիշում և մենք մեր աստուածպաշտական կարգերի մէջ, որով և պահում ենք կենդանի կապ և՛ զինուորեալ, և՛ անդրանիկների եկեղեցու մէջ. այլև դրանով զօրացնում ենք հաւատացեալ եղբայրներին նոյն նախանձախնդրութեամբ տոգորելու և նոյն ճգնութեանը պատրաստ լինելու համար: «Այլև սուրբ առաքեալների, մարգարէների, մարտիրոսների յիշատակը Քրիստոսի պատարագով է կատարւում՝ սուրբ նահատակների նահատակութիւնը խորհրդածաբար վկայակոչելով՝ ի յորդորումն աստուածասէրների և ի գովեստ ամենասուրբ Երրորդութեան, որ յաղթութեան շնորհ տուեց Իր բոլոր սրբերին: Որովհետև երկնաւոր զօրքերի համար ուրախութիւն է սրբոց յիշատակի [կատարումը], ովքեր յաղթեցին բռնաւորներին և հրեշտակացան», ասում է ս. Գրիգոր Լուսաւորիչը[160*]:

Գ- Եկեղեցու մասին խօսելիս՝ ասացինք թէ՛ նրա սկզբնաւորութիւնը և թէ՛ ճիւղաւորութիւնները հաստատւում են ճշմարիտ վէմ Քրիստոսի հետ միացած նահատակների հիմք դառնալով, ըստ որում ինչպէս որ հաւատքը նրանց ժառանգ է դարձնում երկնաւոր կամ անդրանիկների եկեղեցուն, այնպէս էլ նրանց հաւատահանդէս ոսկորների հիմք դառնալը զինուորեալ եկեղեցու հաստատութեան համար ճշմարիտ երաշխիք է այն կատարեալ միութեան, որ կայ այս և այն եկեղեցիների մէջ: Եւ ահա ինչպէս որ սուրբերի ոսկորները հիմք են կազմում նոր եկեղեցի կամ մի ճիւղաւորուած եկեղեցի զինուրելու, այնպէս էլ նրանց այդ նշխարները տեսանելի երաշխաւորութիւն են զինուորեալ և յաղթական եկեղեցու սերտ միութեան և պսակաւոր կատարման: Այդ է պատճառը, որ առաքելական եկեղեցիներն արդէն իսկ առաքեալներից սկսած ոչ թէ բաւականացել են եկեղեցի շինելով յաղթող նահատակների վրայ, այլև նրանց նշխարները պահել են նաև եկեղեցում, որպէսզի այդպիսի տեսանելի

կապակցութեամբ կենդանի և զգայուն պահեն զինուորեալ հաւատացեալներին իրենց հանդիսապսակ սուրբերի հետ: Ժողովրդի հաւատքն այդ նշխարների ներկայութեամբ բնականաբար զօրանում է դէպ աստուածային այն մեծ շնորհը, որ այդպէս յաղթող է հանդիսացել մարդու տկար բնութեան մէջ, ուստի և Աստուած ժողովրդի հաւատքի համեմատ և ի պատիւ այդ ս. նահատակների կատարում է եկեղեցու այն խնդրուածքները, որոնք ուղղւում են Իրեն այդ ս. նահատակների նշխարների հիման վրայ և նրանց հաւատքով զինուած: Որովհետև «ուր էլ որ լինեն սուրբերի նշխարները՝ նրանց առընթեր է աստուածային շնորհքը, որ լսում է հայցողների խնդրուածքները և հատուցում համաձայն իւրաքանչիւրի պէտքի, քանզի արարչական է այդ զօրութիւնը», «և աստուածային շնորհքը հանգչում է նրանց ոսկորների մէջ նահատակութեան ժամին», մանաւանդ, որ «ամեն տեսակ արարածական բնութիւնը (միայն կարող է) բարեխօսել. նա չունի քաւութիւն պարգևելու իշխանութիւն», գրում է Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսը[161*]: Այս ասաց և ս. Գրիգոր Լուսաւորիչը ժողովրդին, երբ նա հաւաքեց և ամփոփեց ս. կոյսերի ոսկորները. «Նրանց մարմիններն ու նրանց ոսկորները ձեր մէջ Աստծու տաճար են», «Աստուած ձեզ յայտնուեց նրանց ոսկորների միջոցով», «Քրիստոս կենդանի է նրանց ոսկորների մէջ»[1]: Ըստ որում Աստուած արդէն իսկ իր սուրբերի ոսկորները ծառայեցնում է մարդկանց հաւատքի զօրացմանը, և առաքեալը պարզ ցոյց է տալիս ճշմարիտ հաւատքի մեծ նշանակութիւնը մարդու մարմնի վրայ թէ՛ երկրում և թէ՛ վախճանի ժամանակ[2]: Եւ այդ հիմամբ կեանքի ամեն մի մեծ գործի քայլափոխում Հայաստ. ս. Եկեղեցին ոչ թէ լոկ իր զինուորեալ անդամներով էր հանդէս գալիս կամ առ Աստուած աղօթում, այլ իր սուրբերի նշխարների հետ միասին, ի նշան այն բանի, որ սերտ և անբաժան է իր անդրանիկներից և նրանց հետ ու նրանցով է իր ընթացքը կատարում և առ Աստուած դիմում[3]: Բնականաբար ս. Գրիգոր Լուսաւորչի նշխարներն ամբողջ եկեղեցու առաջնորդութեան գործում առաջնակարգ տեղ են զբաղեցնում[4]: Ըստ այսմ հաւատացեալն իր աղօթքի մէջ ապաւինելով ս. նշխարին, այսինքն՝ ոչ թէ իր

---

[1] Ագաթ. 324, 345, 336, 435:
[2] Դ Թագ., ԺԳ 21, Ա Կոր., Զ 15, 19, ԺԵ 52:
[3] Տե՛ս Եղիշէ 97, 120, 123, 139, 147-149, Փարպ. 160, 539, 312, 350, Ս. Սահակի նշխարները, էջ 105:
[4] Տե՛ս վերը գլ. ԼԳ:

արժանիքով աղաչելով Աստծուն, այլ այն հաւատքով, որ տկար մարմնին խաչակից է դարձրել Քրիստոսին ու պսակել, նա անշուշտ կը ստանայ իր արդար խնդրի կատարումը: «Արդ, եթէ մէկը հաւատքով Աստծու առջև ընկնի, աղաչանքներով ապաւինի նահատակներին՝ կը ստանայ ցաւերից բժշկութիւն, ախտերից ձերբազատում, փրկութիւն դևերից, մեղքերի թողութիւն», ասում է ս. Յովհան Մանդակունին: Եւ ինչպէս որ ողջոյնի համբոյրով միաբանակցում ենք մեր կենդանի եղբայրներին, այնպէս էլ եղբայրական համբոյրով մօտենում ենք առ ս. նշխարները և հոգեկից դառնում մեր անջատուած եղբայրներին մեր աստուածպաշտութեան մէջ:

Մեր աղօթքն, ուրեմն, առ Աստուած է ուղղուած, գէթ այն սուրբի հաւատակցութեամբ, և մեր երկրպագութիւնն Աստծուն է՝ գէթ այդ սուրբի նշխարների հիմամբ. և մենք խնդրում ենք Աստծուց՝ գէթ մեր ապաւինած սուրբի ձայնակցութեամբ[1]: Աստուած էլ կատարում է այդպէս ապաւինողի խնդիրը. «Եւ նրանց ոսկորների նշխարները փրկութեան շնորհք են պարգևում հաւատացեալների խմբին, ինչպէս բոլորին է յայտնի, որպէսզի նրանց նշխարներում բնակող Աստծու սէրը երևայ և հրաշքներով յայտնի դառնայ երկրի վրայ», ասում է ս. Գրիգոր Լուսաւորիչը[162*]: «Բայց ամենասուրբ Երրորդութեան պաշտամունքն ու փառաբանութիւնը երկրպագութեամբ մատուցենք ի յիշատակ Աստծու բոլոր սրբերի վախճանի»[2]: Ահա այս գեղեցիկ կարգով «սրբերի խմբին կը հաղորդակցւենք», որով կատարեալ է դառնում Հայաստ. ս. Եկեղեցու լրումն իր սկզբնաւորութիւնից մինչև այսօր իր երկնաւոր ու երկրաւոր անդամներով: Այսպիսի լրմամբ ենք մեր աստուածպաշտութեան մէջ ներկայացնում Աստծուն և աղօթում, և այս լրմամբ ենք լցւում և արտայայտում մեր հաւատքը: Ըստ որում և ինչպէս որ աստուածպաշտութեան ժամանակ քահանայի կամ սարկաւագի բերանով հրամայւում է (կամ խնդրւում) բոլոր եղբայրներին՝ «Աստծուն երկրպագենք», «Տիրոջն աղաչենք» և այլն, այնպէս էլ մեզ հետ անբաժան միութիւն կազմող անդրանիկների եկեղեցու անդամները հրաւէր են ստանում՝

[1] «Նաև հրեշտակները, իմանալի բնութիւն լինելով՝ Աստծուն առաքւած օրհնութիւնների մէջ երբեք զգալի ձայներով չեն ներակայանում, և մենք, եթէ այստեղ գործում ենք ի հանոյս Աստծու, ապա ողջերի (յաւիտենական) բնակավայրում իմանալի ձայներով նրանց ձայնակից կը լինենք՝ Աստծուն օրհնելու» Մեկն. ժամ. 328:
[2] Յաճախ. ԺԶ:

«Բարեխօսեցէք», «բարեխօս լերուք»: Այդպէս և պատարագի միջոցին, երբ Քրիստոս ինքն է խորհրդաւորապէս ներկայ, ոչ մի բարեխօսութիւն չի յիշւում, ինչպէս և սեղանի վրայ սրբոց մասունք չենք դնում, որովհետև այդ ժամանակ միմիայն Քրիստոս է մեր բարեխօսն ու միջնորդը:

Դ- Միաբանական աստուածպաշտութեան բնական կատարումը հիմնւում է արտաքին պարագաների վրայ: Որպէսզի հաւատացեալները կարողանան միաբանական հաղորդակցութիւն ունենալ Աստծու հետ, պէտք է անշուշտ ունենան նաև ընդհանրական տեղ, ժամանակ, պարագայական սարքեր և աստուածպաշատական կարգեր: Այդ ամենը ծառայում է աստուածպաշտութեան լրիւ իրականացմանը, որովհետև մարդ հոգևոր ու մարմնաւոր գոյութիւն լինելով չի կարող աստուածպաշտութեամբ բարեզարդւել կամ լոկ հոգևորապէս և կամ սոսկ մարմնաւորապէս, այլ անշուշտ երկուսով հաւասարապէս պէտք է Աստծու առաջ խոնարհւի ու Նրան պաշտի և շնորհները վայելի: Հոգևորի թուլացումից առաջանում է կեղծաւորութիւն ու ցուցամոլութիւն, որ խաբէական է, մինչդեռ մարմնաւորի կասեցումը բերում է սառնութիւն և եսապաշտութիւն: Ըստ որում երկու տեսակ միակողմանիութիւններն ոչ այլ ինչ են, եթէ ոչ մարդու գոյութեան թերակատար խոնարհումն Աստծու առաջ: Մեր կեանքը ոչ լոկ արտաքին է և ոչ սոսկ ներքին, և հետևաբար լիակատար կեանքով պէտք է Աստծուն պաշտենք իբրև ըստ ամենայնի Նրա ստեղծածներն ու Նրա երկրպագուները: Աստծուց է գալիս մեր հոգևոր հարստութիւնն ու կեանքը, մեր հոգևոր կեանքի բովանդակ հարստութեամբ ևս պաշտում ենք Նրան: Աստծուց է գալիս նաև մեր մարմնաւոր մեծութիւնն ու գոյութիւնը, մեր մարմնաւոր գոյութեան բովանդակ մեծութեամբ ևս համաձայն և համերաշխ ենք ընթանում մեր աստուածպաշտութեան մէջ, չերկպառակւելով և իբրև մի միութիւն ներկայանալով Աստծու առաջ:

1- Աստուածպաշտութեան միաբանական տեղը եկեղեցին է, որ ունի ըստ Հին Ուխտի խորանի[1] նախատիպին ընդհանուր ստուերագիծ և ազգային պատմական զարգացման պահանջին համապատասխան ձև[163*]: Հայոց եկեղեցին իր ստուերագծով նաւաձև, կազմով խաչաձև շինւածք է՝ չորս սիւների վրայ ամրացւած վեղարաձև կաթուղիկէով կամ գմբէթով, որ և համապատասխանում է Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլում նկարագրւած՝ Ս.

[1] Գործք., Գ 1, Ե 25, Հռ., ԺԱ 4, Ա Կոր., ԺԶ 19, Կող., Դ 15, 33:

Էջմիածնի տաճարին[164*]: Եկեղեցու ճակատամասը արևելահայեաց է, որտեղից է իսկական արեգակ Քրիստոսի գալուստը՝ անցական արեգակի ելքի նմանութեամբ: Իսկ մուտքն արևմուտքից է, որովհետև հեթանոսական խաւարից ենք գալիս դէպի աստուածային լոյսը[165*]:

Եկեղեցու մի տեսակն է վանքը, որն իր միաբանական եղբայրութեամբ ներկայացնում է Հայաստ. ս. Եկեղեցու միաբանական ուխտի փոքրիկ պատկերը: Այդպիսի պատկեր լինելով՝ վանքն իրականացնում է իր մէջ քրիստոնէական բարոյականութեան և առաքինութեան սկզբունքները: Վարդապետական միաբան եղբայրութիւնը նրա մէջ ունի այդ սկզբունքների համեմատ գործունէութիւն, այն է՝ ուսման տարածում, ճշմարտութեան քարոզութիւն շրջակայ բնակչութեան մէջ, որբերի և անօգնականների պատսպարում, պանդուխտներին հիւրընկալութիւն և վտանգուածներին ապաստարանի տրամադրում: Վանքերի այս մեծ նպատակն է պատճառը, որ Ներսէս Մեծն առանձին ուշադրութիւն դարձրեց Ս. Լուսաւորչի վանքերի վրայ, դրանց թիւը հասցնելով 2040-ի, ըստ որում և Ս. Սահակն այդ մեծազօր նահատակի հիմնական կանոնադրութիւնը մշակելով՝ կարգորոշում է վանքերի գործունէութիւնը: «Այս պատճառով անհրաժեշտ է վանքերում և այլ արժանաւոր վայրերում կանոնաւոր վիճակում պահել դպրոցները, որպէսզի բոլորը լուսաւորուեն Աստծու պատուիրանների լոյսով, որովհետև երբ միաբանները, որ (Աստծու) եկեղեցու գլուխն են, ընտիր և պիտանի են լինում՝ առաւել ևս ժողովուրդն է [լինում այդպիսին], իսկ եթէ ժողովրդից մէկը վարքով ծուլանայ՝ դիւրին կը լինի նրան ճիշտ ճանապարհի բերել»[166*]: Թէ՛ ս. Ներսէսի ու թէ՛ ս. Սահակի ամփոփ կարգադրութիւնները պարզապէս յատուկ ընթացք են տալիս վանքերին, այն է՝ վանական միաբանութիւն և ապա հոգևոր ու մարմնաւոր հոգացողութիւն թէ՛ ամբողջ շրջակայքի և թէ՛ իր գիւղի ժողովրդի բարօրութեան ու բարգաւաճման համար: Կարճ ասած՝ այն դերը, որ պէտք է կատարի Ս. Էջմիածնի միաբանութիւնն ամբողջ Հայաստանում թէ՛ կրթելով, թէ՛ քարոզելով, թէ՛ մխիթարելով, թէ՛ օրինակ լինելով ժողովրդին և թէ՛ հոգատար լինելով ամենքի համար, նոյն դերը պէտք է կատարի իւրաքանչիւր վանք իր գաւառում:

Սակայն աստուածպաշտական կարգերը կապուած են իւրաքանչիւր հայի հաւատքի հետ և ուրեմն ըստ հարկի որոշ կարգեր կատարւում են նրա մօտ իբրև Աստծու տաճարի վրայ: Այս սկզբունքով Հայաստ. ս. Եկեղեցու գաւիթն է նաև

գերեզմանատունը, որ եթէ մատուռ էլ չունենայ իր մէջ՝ եկեղեցական կարգի և աղօթքի սուրբ վայր է, որովհետև իր մէջ է ամփոփում Ս. Հոգու տաճար հաւատացեալների նշխարները: Այդ նշանակութեանը համապատասխանում է և «գերեզման», այսինքն՝ «երկինք» բառը, որ յիշեցնում է անդրանիկների եկեղեցին, և «հանգստարան» բառը, որ իսկապէս ցոյց է տալիս գերեզմանի՝ երկրաւոր հոգսերի յարաբերութեամբ ունեցած նշանակութիւնը: Թաղւում են նաև եկեղեցու բուն գաւթում կամ բակում, սակայն միմիայն Հայաստանեայց ս. Եկեղեցու շինութեան ու բարեզարդութեան համար տքնող անձնազոհ աշխատաւորները[1]:

Վերջապէս Հայաստանեայց ս. Եկեղեցու մի գաւիթն է նաև իր հաւատացեալի տունը, քանի որ ընտանիքն Աստծու արքայութեան բաղկացուցիչ տարրն է: Այդ է պատճառը, որ հայ ընտանիքի մէջ իւրաքանչիւր մի նոր երևոյթ օրհնութեամբ է աստուածային շնորհների տակ մնում և մանաւանդ՝ եկեղեցու հաստատութեան հիմքը կազմող երկու նշանաւոր դէպքերի օրերը՝ Աստծու պաշտօնեան մտնում է և աւետիքով օրհնում իւրաքանչիւր տուն: Զատկին օրհնում է, որովհետև Քրիստոս Յարութիւնից յետոյ մտաւ վերնատուն և օրհնեց աշակերտներին, օրհնում է և Ս. ծննդեանը, որովհետև այդ օրը մարդանալով՝ երևաց Բանն Աստուած այրի մէջ: Ուստի և Նրա խաչն ու Աւետարանը տանելով՝ քահանան լոյս ու աւետիք է տալիս և օրհնում Քրիստոսի արքայութեան ընտանիքն ու նրա բնակարանը[2]:

2- Հարկաւոր է նաև ժամանակ, որպէսզի աստուածպաշտութիւնը միաբանական ու միաձայն լինի: Այդ նպատակով օրինադրուած են վարդապետական-առաքելական որոշ սկզբունքների վրայ հիմնուած տօներ ու

---

[1] Որոնց համար և աղօթում ենք. «Աղաչենք և խնդրենք նաև հանգուցեալ հոգիների համար: Առաւել ևս մեր հանգուցեալ ռաբունապետների համար և այս սուրբ եկեղեցին կառուցողների համար և նրանց, ովքեր հանգչում են նրա հովանու տակ» Ժամագիրք, էջ 743: Շարքային հանգուցեալներին թաղել եկեղեցու մօտ բացարձակապէս արգելւում է. «Անառակ սովորութիւն է եղել քահանաների և նրանց կանանց գերեզմանը եկեղեցու մօտ անել և սուրբ վայրերում. սրանից յետոյ առաջւայ նման թող չհամարձակւեն, այլ ժողովրդի հանգստարանների մէջ թող լինեն նաև քահանաների հանգստարանները, որպէսզի սուրբ վայրը պարկեշտութեամբ յարգւի». Ս. Սահակ[167*]: «Զլանդգնեն եկեղեցում գերեզմաններ անել, իսկ եթէ գտնւի մէկը, որ արած լինի, թող չհամարձակւեն այդ եկեղեցում Պատարագ մատուցել, մինչև տեղը չմաքրեն». Ներսէս Բ Կաթ. Կանոն Դւինի ժողովի[168*]:

[2] Տե՛ս Հարց., էջ 683:

ժամեր, որոնք մասամբ արդէն իսկ առաքեալների կարգածներն են և մասամբ ազգային եկեղեցական յիշատակներ[1]: Աստուածպաշտական ժամերի յստակութեամբ կապւում ենք աստուածային տնօրինութիւնների ու խորհուրդների հետ, ինչը և սկսում ենք կէսգիշերին, որովհետև Քրիստոսի յարութեամբ է մեր աղօթական համարձակութիւնը բացւում Աստծու առաջ, և շարունակում ենք ինը բաժիններով ըստ հրեշտակների ինը դասի, բայց երեք կարգի մէջ: Իսկ տօներով կապւում ենք թէ՛ Քրիստոսի, թէ՛ առաքեալների և թէ՛ եկեղեցու կեանքի նշանաւոր դէպքերի յիշատակների հետ, որոնցով և միութիւն ենք կազմում թէ՛ իրար ու թէ՛ մեր նախնեաց հետ:

Այդպէս և կարգւած են պահքերը, որոնք դարձեալ ընդհանրական լինելով՝ միջոց են տալիս ամբողջ հայ ազգին միաժամանակ, միաձայն ու միասիրտ աղօթելու և ողորմութիւն խնդրելու Աստծուց: Դրանք ևս, որոնք ապաշխարելու համար ջերմեռանդութեան, ողջախոհութեան և զգաստութեան միջոցներ են, սկիզբ են առել առաքեալների թէ՛ նախնի և թէ՛ յետագայ ժամանակներից[2] և ոչ միայն ըստ աստուածպաշտական և արդարութեան նպատակի, այլև բնաւորութեան զարգացման, կամքի զօրացման, մարմնաւոր[3] սննդառութեան բարեխառնութեան և տնտեսական հիմքերի վրայ են հաստատւած: Տարւայ կէսը պահք է, բայց բաժանւած է օրապահքերի՝ ի յիշատակ Քրիստոսի դէմ դատավճռի, մատնութեան և չարչարանքների[169*], շաբաթապահքերի՝ մասամբ մեր վերածնութեան մեծ պատճառների յիշատակով և մասամբ լոկ իբրև ամսի պահք, և քառասունքի[4] ի յիշատակ մեր

[1] Գործք., Ի 7, Ա Կոր., ԺԶ 2, Յայտ., Ա 20, Ս. Վրթանէսի խօսքը. տե՛ս Բուզանդ 24, նաև Եղիշէ 79, 93, Ընդհ. 184-187:
[2] Մարկ., Բ 18, Ղուկ., ԺԸ 12, Մատթ., Թ 15, Գործք., ԻԷ 9, ԺԳ 22, Բ Կոր., Բ 5, ԺԱ 27, Հռոմ., ԺԴ նաև Առաքելական կանոններ:
[3] Յաճախ., Թ 149-372, Ընդհանր., էջ 134:
[4] Մեծ պահքը պահելու երկու կարգ ենք ունեցել. «Բայց ս. Քառասնորդաց պահքի մէջ շաբաթ և կիրակի օրերը պահքը պահելը կամ լուծարելը պէտք է թողնել իւրաքանչիւրի կամքին՝ միայն գոհանալով Աստծուց՝ առանց խղճի դէմ գնալու և հակառակութեան, առանց ընկերոջը բամբասելու. ինչ որ նա կամենայ՝ թող անի պարկեշտութեամբ. երկուսն էլ ընդունելի են Աստծու առջև և Քրիստոսի եկեղեցու աւանդութեան կողմից». Ս. Յովհաննէս Իմաստասէր, էջ 25: Ս. Ներսէս Շնորհալին յիշում է, որ ս. հայրապետները մի բացառիկ ներում են արել՝ ասելով. «Շաբաթայ հինգ օրերը սրբութեամբ պահէք ամեն տեսակ պարարտ կերակուրներից և խմիչքներից. բայց շաբաթ և կիրակի օրերը ձեր թուլութեան պատճառով այլ և այլ բաներ՝ ձուկ և հաւկիթ կերէք». Ընդհանր., էջ 134[170*]:

վերակենդանութեան: Այդ նշանակւած ժամանակների խորհուրդի համեմատ մենք մեզ զերծ ենք պահում դէպի չար ճանապարհ ու փորձանք տանող վայելքներից ու հանգամանքներից և աշխատում ենք սրբել հոգով ու ձգտել դէպի աստուածային կեանքը, գործն ու մտածողութիւնը: Ըստ որում մենք գիտենք, որ ուղղելու և բարի ու յաջող ճանապարհ ընթանալու համար անհրաժեշտ է. մէկ՝ մեզ խանգարող ներքին ու արտաքին պատճառները վերացնել, և երկրորդ՝ ճշմարիտ հաղորդակցութիւն հաստատել Աստծու հետ՝ Նրա օգնութիւնը ստանալու համար. և երրորդ՝ անցեալի խրատով խոհեմութեամբ և զգաստութեամբ վառւել նորոգ և ուղղւած կեանք վարելու համար:

3- Աստուածպաշտական կարգերը, որոնք կազմւում են արարողութիւնների որոշ կերպաւորութիւններից, աղօթքից, երգերից և ընթերցւածներից, նոյնպէս և ընդհանրական են Հայաստ. ս. Եկեղեցում՝ ծառայելով մի նպատակի և բխելով որոշ վարդապետական սկզբունքներից: Դրանց միջոցով բոլոր հայրերը միապէս, միախորհուրդ և միաբարբառ դիմումով ընդունելի են դառնում Անդրանիկների եկեղեցու հետ Աստծու առաջ: Այդ կարգերը սկիզբ են առել մասամբ Հին Ուխտից, մասամբ առաքեալների հալածանքների միջոցին[1] և զարգացել են այն ժամանակից, երբ առաքեալները եկեղեցիներ հաստատեցին և հիմնական կարգեր աւանդեցին: Հայաստ. ս. Եկեղեցու այդ կարգերն այնպէս են կանոնաւորւած, որ կազմում են մի ամբողջութիւն և գրեթէ՝ մի աղօթք ու մի պաշտօն: Հաւատարիմ մնալով իր ոգուն և հետևելով Ս. Հոգու կենդանարար առաջնորդութեանը՝ Հայաստ. ս. եկեղեցին իր պատմական կեանքում ընթացել է առաքելական վարդապետութեան շաւղով և իր կենդանութեան արտայայտիչ դէպքերը ևս հիւսել իր հրաշալի պաշտամունքի մէջ: Այդ է պատճառը, որ այսօր ներկայ գտնւելով Հայոց Եկեղեցու աստուածպաշտական արարողութիւններին և պաշտամունքներին, այնքան ընտանի և հարազատ ենք զգում, որ կարծէք թէ գոյակցել ենք նրանց հազար եօթ հարիւր տարի:

Վերջապէս՝ 4- Հայաստ. ս. Եկեղեցին ունի և եկեղեցու սարքեր, որոնցից մոմավառութիւնն ու խնկարկութիւնն աստուածպաշտական որոշ խորհուրդներ են

[1] Գործք., Բ 47, Կող., Գ 16, Հռոմ., ԺԶ 16, Ա Կոր., ԺԶ 20, Ա Տիմ., Ե 17, Եփ., Ե 13:

արտայայտում՝ լոյս և անուշահոտութիւն ներկայացնելով[1], անօթներն ու զանազան սպասներն աստուածպաշտական արարողութիւնների անհրաժեշտ պարագաներ են. իսկ զգեստները[2] ծառայում են եկեղեցական պաշտօնի վեհ խորհուրդը բոլորին տեսանելի դարձնելու համար. ըստ որում խոնարհութեան վերարկուն (սքեմը) սկիզբ է առել արդէն իսկ Քրիստոսից և իր աշակերտներից, մտնելով նաև մեր մէջ Հայաստանեայց ս. Եկեղեցու հիմնադրումից ի վեր, մինչդեռ պաշտօնական զգեստները կազմուել են ազգային ոգով հին ժամանակի արքայական հանդերձներից առնուելով և ձևակերպուել են Ե դարից սկսած:

Բոլոր սարքերն էլ, ինչպէս և խաչն ու պատկերները, ընդհանուր են, բխում են քրիստոնէական-կրօնական ճշմարիտ սկզբունքներից, սրբուած են օրհնութեամբ և օծմամբ, պարունակում են Սուրբ Հոգու օծման շնորհների զօրութիւնը և ծառայում են թէ՛ մեր մէջ առաքինի մտքեր, բարեկիրթ կամք և հաւատաբուխ զգացմունքներ արթնացնելու և ամրացնելու և թէ՛ մեր աստուածպաշտական մտքերի, աստուածավախ կամքի ու քրիստոսահաճոյ հաւատքի արտայայտիչ լինելու համար: Եւ որպէսզի հասկանալի լինի, թէ այդ ամենը կամ ծառայող պարագայ է և կամ հոգևոր նշանակութիւն ունի և ոչ թէ իբրև նիւթ է պաշտուում[171*], Հայաստանեայց ս. Եկեղեցու աւանդութիւնը միմիայն օրհնելով ու սրբելով է ընդունում դրանք Աստծու տաճարի մէջ[3]: Դրանք ևս սկիզբ են առել Հին Ուխտից[4], կարգաւորուել են առաքեալների հիմնադրութեամբ և վսեմացել են մարդկային արուեստի առաջադիմութեամբ, մանաւանդ, որ մարդկային արուեստն ու գիտութիւնն էլ ըստ յարմարութեան պէտք է ծառայեն Աստծու անունը ճշմարտապէս և արժանապէս փառաւորելուն:

Հայաստանեայց ս. Եկեղեցում այդ բոլորի մէջ պատկերները կատարելապէս յատուկ սկզբունքով են միայն ընդունուում: Հայաստանեայց ս. Եկեղեցին նախևառաջ մերժելով մերժում է գոգաւոր կամ դրօշեալ կամ կուռքի որևիցէ նմանութիւն ունեցող հեթանոսական պատկերները, որոնց դէմ Աստծու խօսքը բացէիբաց իր տհաճութիւնը և արհամարհանքն է յայտնում և պատուիրում

[1] Եղիշէ. 41, 49, 60, 52-53:
[2] Բուզանդ, ԺԴ, Դ, Յանախ., ԺԱ 622, Եղիշէ 40, 49, Փարպ. 345, Ընդհանր. 37, 70 և այլն:
[3] Ընդհան., էջ 375:
[4] Ելից, ԻԵ, ԻԶ, ԻԷ, ԻԸ, Եզէկ., Խ, ԽԱ, Ղևտ., ԻԴ 1-4, Գործք., Թ 8 և այլն:

իր հաւատացեալներին՝ մահու չափ հեռու լինել այդ ամենից[1]: Վկայութեան խորանը լիքն էր զանազան սպասներով և այլ սարքերով, որոնք նշանակած լինելով աստուածային նպատակի համար՝ բարձր սրբութեան մէջ էին պահուում, սակայն իսրայէլացիները պէտք է զգուշանային երկրպագելուց այն ամեն ձեռագործ բաները, որոնք ոչ թէ Աստծունն էին, այլ մարդկային արարածականութիւնն էին ցոյց տալիս: Ուստի և Հայաստանեայց ս. Եկեղեցին վարդապետում է երկրպագել միմիայն Աստծուն. «Արարածներիս անհրաժեշտ է երկրպագութիւն ընծայել միայն Արարչի, Փրկչի պատկերուած նկարին, մինչդեռ Աստծու մտերիմ ծառաների (այն է՝ սրբերի) պատկերներին և անուններին, ովքեր բնութեամբ ծառայակից են մեզ, հարկ է լոկ պատուել և յարգել՝ համաձայն իւրաքանչիւրի արժանաւորութեան և նրանց վարքի առաքինութեան՝ իրենց պատկերի տեսքով՝ իւրաքանչիւր պատկերից մեզ համար բարութեան օրինակ ընդունելով, յիշելով ճշմարտութեան համար Նրանց կրած զանազան ճգնութիւնները», գրում է ս. Ներսէս Շնորհալին[2]:

Հետևաբար սուրբերի պատկերները, բացի իրենց նահատակութիւնից ուրիշ ոչինչ չյիշեցնելով՝ յարգելի են մեզ, որովհետև կրթիչ են և կապուած են նրանց աստուածահաճոյ վարքի հետ: Իսկ երկրպագելի է միմիայն Փրկչի պատկերն ըստ այնմ թէ «Յիսուս Քրիստոսի անունով պիտի խոնարհուի ամեն ծունկ»[3]: Քրիստոսի անունն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի նշան, մի պատկեր, մի ձայն, մի գրութիւն, որ մեր հոգու մէջ արտայայտիչ է դառնում Նրա աստուածային մեծութեան ու փառքի[4] և բորբոքում մեր հաւատքը: Միմիայն Աստծուն պէտք է պաշտել և Աստծու անունը երկրպագել, ըստ որում Աստուած անտեսանելի լինելով՝ միմիայն Իր անունմբ է տեսանելի ու պաշտելի[172*]: Ամենայն պատկեր, որ Աստծուն է ներկայացնում, չի կարող երկրպագուել[5], ինչպէս պատուիրուած է Ս. Գրքում բոլոր մարգարէութիւնների մէջ անգամ, սակայն Քրիստոս է «աներևոյթ Աստծու պատկերը» (Կող., Ա 15), Աստծու էութեան նկարագիրն ու ճշմարիտ յայտնութիւնը, որ երևացել են մեր մէջ ու երկրպագուել իր հաւատացեալներից՝

[1] Բ Օր., Դ 16, Ելից, Թ 3-5, Ես., ԽԲ 8, Մատթ., Դ 10, Յայտ., ԺԹ 10:
[2] Ընդհան., էջ 192:
[3] Փիլիպ., Բ 10, Հռոմ., ԺԴ 11:
[4] Հմմտ. Ընդհանր. 191:
[5] «Պատկերներն երկրպագում են դևերի խաբէութեամբ». Խոր., Գ, ԺԳ:

յաւիտեան երկրպագելու համար: Նա միայն է երկրպագելի, Նրա պատկերն է պաշտելի, ինչպէս և Նրա անունը, և բացի Նրանից ամենայն երկրպագութիւն եսապաշտութիւն է: Այսպէս է ասում Ս. Գրիգոր Լուսաւորիչը. «Եւ քանի որ մարդիկ սիրեցին երկրպագել մեռելների անշունչ պատկերները՝ Ինքը խաչի վրայ մեռեալի պատկեր եղաւ, մեռաւ ու անշնչացաւ, որպէսզի ընտանի եղանակով նրանց արագ-արագ հասցնի իրենց պատկերին»: Ուստի և բացէիբաց արգելում է ուրիշ երկրպագութիւն[173*]. «Աստծու տրուելիք պատիւն ու պաշտամունքը վայել չէ ուրիշ մէկին տալ»[1]: Այդպէս է հրամայում և Ս. Յովհան Իմաստասէրը. «Ով պատուում է Քրիստոսի Խաչը և Նրա պատկերը, Քրիստոս երկրպագում է նրա կողմից իսկ»: «Մենք միայն Աստծու Միածին Որդու պատկերն ու յաղթութեան նշանն ենք պաշտում»[2]:

Ե Հռոմ. եկեղեցին իր աշխարհային ձգտման համաձայն ուժ տալով արտաքինին և իր իշխանութեանը, աշխատում է արտաքին միջոցների աստուածացմամբ հրապուրել ժողովրդին: Ստեղծելով «եկեղեցական գանձարան վաստակոց» յորջորջած երևակայական բաշխարանը և սուրբերի վաստակից կախեալ վիճակում դնելով ժողովրդի փրկութիւնը՝ նա երկրպագելի ու միջնորդ է դարձնում թէ՛ հրեշտակներին ու սուրբերին, թէ՛ նրանց պատկերներն ու թէ՛ սուրբերի ոսկորները: Ըստ այսմ ժողովուրդը դիմում է դրանց ու փրկութիւն սպասում: Նա նոյնիսկ Քրիստոսի երկրպագութիւնը նիւթական ձևակերպութեան է ենթարկում, օրինակ՝ նկարելով իբր Քրիստոսի սիրտը և երկրպագութիւն սահմանելով դրա նկատմամբ: Մասունքները գտնւում են ամենուրեք, երևան են գալիս անյայտ սուրբեր, դրօշեալ պատկերներ են դրւում նոյնիսկ անտառներում ու զանազան բացօթեայ տեղերում և մոմավառութեամբ ու երկրպագութեամբ յարգւում, աղօթքներ են կազմւում լոկ սուրբերի անուններից, որոնց դիմելով հաւատացեալը փրկութիւն է խնդրում, սուրբերի գերեզմանի ջուր կամ բխող ձէթ է պաշտօնապէս տրւում դիմողներին ի բժշկութիւն և ի թողութիւն մեղքերի, և այլն, բաներ, որոնք կատարելապէս հեթանոսական ընթացք են տալիս հաւատացեալների աստուածպաշտութեանը: Այդպէս և Հռոմ. եկեղեցին, ինչպէս և յոյները, դրօշեալ պատկերներ դնելով իրենց տներում, մոմավառութեամբ յարգում են ու նրանց երկրպագելով իբր տնային աստուածպաշտութիւն կատարում[174*]: Այսպիսի հեթանոսական ուղղութեամբ Հռոմ. եկեղեցին ոչ միայն հակառակ է ընթանում Աստծու պատուիրաններին, այլև նախ զարկ է տալիս ձևականութեանը, հակառակ փրկարար հաւատքի զօրութեանն ու պատուիրանապահութեանը, երկրորդ՝ կապելով հաւատացեալներին նիւթականի հետ՝ շեղում է նրանց հակաքրիստոնէական մոլեռանդութեամբ, և երրորդ՝ Աստծու ազատ որդիներին ստրկութեան լծի տակ է դնում ծուռ ու մոլար ճանապարհի վրայ առանց նրանց փրկութեան երաշխաւորութեան:

Բողոքականներն էլ խորշելով այդ ծայրայեղութիւնից և խոյս տալով Հռոմէական ամեն մի կարգից, վերացնում են ոչ միայն սուրբերի նշխարների նշանակութիւնը եկեղեցու համար, այլև ուրանում են ու կտրում սուրբերի շօշափելի կապը իրենց եղբայրների հետ և Անդրանիկների եկեղեցու կենդանի յարաբերութիւնն ու ձայնակցութիւնը Ջինւորեալ եկեղեցու հետ: Բայց ոչ միայն այսքան. Բողոքականները Հռոմ. եկեղեցուց տարբերուելու համար վերացրել են մինչև անգամ երեսին խաչ հանելը[1], որ ըստինքեան խաչակցութիւն է Քրիստոսին, խաչի երկրպագութիւնը և առհասարակ երկրպագութիւնը ու կենդանի աստուածպաշտութիւն հակառակ արդէն իսկ Քրիստոսի ճշմարիտ օրինակի[2], և մինչև անգամ «Հայր մեր»-ի տնային գործածութիւնը և այլն և այլն: Ակնյայտ է, որ

---

[1] Ագաթ. 56, 43, 40, 138, Ընդհան. 131:

[2] Ճառք. 45, 35, 40, տե՛ս նաև ս. Մովս. Խոր. Պատմ. II, ԶԶ:
Հայաստանեայց ս. Եկեղեցու քառաթև խաչի վերևը յիշեցնում է մեզ երկնքի բացումը, ներքևինը՝ դժոխքի աւերումը, աջը՝ շնորհների բաշխումը և ձախը՝ մեղքերի թողութիւն. ըստ որում այդ չորս թևերի աստուածային ողորմութիւնը մեր մէջ պէտք է զարթեցնի սէր՝ ոգու հարստութեամբ, խոնարհութիւն՝ մեղքի զղջմամբ, հնազանդութիւն Աստծու պատուիրանների և համբերութիւն աշխարհի փորձութիւնների հանդէպ: Դարձեալ՝ «Մտքի իմանալի տեսութեան համաձայն Խաչի բունը, որ վերից վար է իջնում, աստուածութեան օրինակն է ցոյց տալիս, իսկ հորիզոնականը՝ մարդկութեան, մեխը՝ սիրոյ շաղկապաւածութեան, որ Աստծուն կապեց մարդկանց հետ»: «Եւ սրա ձևն ակնարկում է մահը, իսկ սրա զօրութիւնը՝ կեանքը[175*]»: Դաւիթ Անյաղթ, Ներբող խաչին [Մատենագ., էջ 103-119], Ընդհանր. 136, 190, Հարց. 493, Շարական 498, 503. «Եկէք քրիստոսեան ժողովուրդներ, երկրպագենք աստուածային ս. Նշանին՝ գամելով Նրա վրայ և թագաւորելով Նրա հետ» (481) Հմմտ. «Երկրպագում ենք Քո Խաչին, Քրիստոս, և մեծարում Քո թաղումը», էջ 488:

[1] «Այսուհետև ամօթ չհամարենք Քրիստոսի Խաչը, ու թէպէտ մէկը քողարկի՝ դու բացայայտ կերպով ճակատիդ վրայ դրոշմիր, որպէսզի դևերը արքունական նշանը առջևում տեսնելով ահուդողով փախուստի մատնուեն: Բայց այդ նշանը միշտ դիր. երբ ուտում ես, երբ խմում ես, ամեն տեսակ նպատակի դէպքում, ամեն տեսակ բաժակի վրայ անպակաս արա, թէ՛ նստելիս, թէ՛ կանգնելիս, թէ՛ խօսելիս, թէ՛ շրջելիս, թէ՛ անկողին մտնելիս». Կոչումն ընծ., էջ 68:

[2] Ղուկ., Զ 12, Մատթ., ԺԴ 23, Յովհ., ԺԷ 1, Ղուկ., ԻԲ 4, Մատթ., ԻԶ 39, Զ 9-13:

Բողոքականները այսպէս թէ այնպէս հակառակ են ընթանում ոչ միայն եկեղեցու էութեանն ու գաղափարին, վերացնելով նրա երկնաւոր ճանապարհն ու նշանակութիւնը, այլև՝ Քրիստոսի վարդապետութեան և առաքեալների կարգին, որ պարզիպարզոյ տեսնում ենք Նոր Կտակարանում: Իսկ այդպէս վարելով նրանք նախ եղծում աւերում են միաբանական աստուածպաշտութեան կապն ու կարգը. երկրորդ՝ զինուորեալ եկեղեցին կտրում են յաղթականից և ուրեմն՝ հանդերձեալ կեանքից, ուղղելով հաւատացեալների աչքը լոկ դէպի աշխարհի նիւթական վայելքը. և երրորդ՝ վերացնում են եկեղեցու աստուածպաշտական կարգից հաւատացեալի բարեպաշտութեան կրթիչ ու զարթուցիչ կողմերը կամ բարեզարդութիւնը:

Երկու ծայրայեղութիւնները ևս անշուշտ մերժելի են և այդպիսի ծայրայեղութիւնները մշտապէս անխուսափելի են ամեն ժամանակ, երբ ոգևորուելով կամ լոկ հոգևորով և կամ լոկ մարմնաւորով, թափ են առնում մի ուղղութեամբ և ուրանում կամ մոռանում մարդու հոգևոր ու մարմնաւոր բնոյթից բխած աստուածպաշտական երկսայրի պահանջը: Թերակատար է այն աստուածպաշտութիւնը, որ կտրուած է մարդու մարմնաւոր կեանքի ընթացակցութիւնից և այդպիսի աստուածպաշտութիւնն ոչ կրթական զօրութիւն ունի և ոչ էլ ամրութեան յարատևութիւն, որովհետև զուրկ է արտայայտութիւնից, արտաքին կենդանացումից և կենսունակ վարժողութիւնից: Ընդսմին և կեղծաւոր է այն աստուածպաշտութիւնը, որ լոկ արտաքին է և զուրկ է հոգևորի կենդանութիւնից և այդպիսի աստուածպաշտութիւնն ոչ հաւատքի արժանաւորութիւն ունի և ոչ էլ կենսունակ գործունէութիւն, որովհետև կապուած չէ մարդու էութեան հետ, ներքուստ պայծառութեան սնունդ չի ստանում և Աստծու հաղորդակցութեան հիմքից չի բխում: Առաջինն ինքնաբաւականութեամբ գնում է դէպի եսամտութիւն, ինքնասոյզ եսապաշտութիւն, իսկ երկրորդը՝ ցուցամոլութեամբ գնում է դէպի մեծամտութիւն և ամբարտաւանութիւն: Առաջինը նախ կեղծաւորում է Աստծու առաջ, և ապա մարդկանց առաջ, իսկ երկրորդը՝ կերծաւորում է նախ մարդկանց մօտ և ապա Աստծու ամենատեսութեան տակ: Մէկը եսապաշտական կեղծաւորութիւն է, իսկ միւսը՝ ամբարտաւան կեղծաւորութիւն. երկուսն էլ խոտելի են ճշմարիտ առաքելական եկեղեցու առաջ:

Հայաստանեայց ս. Եկեղեցին միանգամ ընդմիշտ ընտրած լինելով առաքելական ճշմարիտ ճանապարհը, միաբանական աստուածպաշտութեան մէջ ևս նոյն ճանապարհով է ընթանում: Նա ոչ արտաքինն է ժխտում ու ներքինին ինքնահաւանութիւն տալով՝ իւրաքանչիւրին ազատ թողնում փրկուելու առանց եկեղեցական միութեան, և ոչ ներքինի նշանակութիւնն է սքողում և կորչելու վտանգի մէջ դնում արտաքին շլացուցիչ շուքի միակողմանիութեան տակ: Նրա քարոզած սկզբունքն է՝ ոչ լոկ հոգևոր և ոչ սոսկ մարմնաւոր աստուածպաշտութիւնը, այլ արտաքինը՝ որպէս հոգևորի պարզ ու ճշմարիտ արտայայտութիւն, ըստ հոգու և մարմնի միութեան օրինակի: Ուստի և նա ոչ կտրում է իր աստուածպաշտութիւնն իր ժողովրդի պատմական և առօրեայ կեանքից և ոչ էլ թողնում է, որ առաքելական կարգին ու վարդապետութեանը հակառակ հեթանոսական սովորութիւններ և կամ նորահնար քմահաճութիւններ ներս սպրդեն իր սրբազան աստուածպաշտութեան մէջ: Այդպէս վարելով նա թէ՛ աստուածային ճշմարտութիւնն է պահում, թէ՛ հաւատարիմ է մնում առաքելական նախնի կարգերին և թէ՛ կենդանի յարաբերութեան ու մտերմութեան մէջ է մնում իր ժողովրդի արտաքին կեանքի հետ:

Հաւատարիմ մնալով այս սկզբունքներին, Հայաստանեայց ս. Եկեղեցին թէ՛ աստուածպաշտական ընդհանրական կարգերով ու պարագաներով և թէ՛ այն կենդանի յարաբերութեամբ, որ պէտք է ունենայ Զինուորեալ եկեղեցին Անդրանիկների եկեղեցու ու նրա անդամների երկրաւոր կեանքի յիշատակների հետ, հարուստ՝ բայց պարզ, շքեղ՝ բայց որոշ է պահում իր ընթացքը: Այդ է պատճառը, որ մինչդեռ տօներ ու պահքեր ունի սահմանած, սակայն դրանց միակողմանի՝ առանց հաւատքի՝ պահպանութեան փրկարար նշանակութիւն չի ընծայում. ունի աստուածպաշտական կարգեր, սակայն այդ ամենի կեղծաւորական կատարման պարագային արդարութիւն չի վերագրում ո՛չ վարդապետութեամբ ու ո՛չ գործնականապէս: Իր մէջ ունի յաղթական կեանքի յիշատակութեան ծառայող պատկերներ, սակայն միմիայն չափաւոր է պահում դրանց թիւը, այլև երկրպագութիւնը, պաշտելը միմիայն Քրիստոսի պատկերին ու խաչին է վերապահում: Ըստ այսմ սուրբերի պատկերները յիշեցնում են իւրաքանչիւր եղբօր սրտում այն սխրագործութիւնները, որոնք Աստուած կատարել է զինուորեալ եկեղեցու ընտրեալ անդամակիցների միջոցով. և իւրաքանչիւր եղբայր աղօթում է

առ Աստուած իր բաժանուած հաւատակիցների առաւել մտերիմ միաբանակցութեամբ, քան թէ կարողանում է աղօթակցել իր զինուորեալ եղբայրներին արժանապէս: Յայտնի է, որ Հայոց աստուածպաշտութեան մէջ առանց որևիցէ միակողմանիութեան ներկայանում են բոլոր եղբայրներն, ու իրար ձայնակցում:

Ահա այս առաքելական կարգերի ճշմարտութիւնն անխախտ պահպանելու համար շեշտւում է, որ մինչև անգամ Խաչը ոչ թէ նիւթով ունի նշանակութիւն, այլ իր սրբագործեալ հոգևոր զօրութեամբ, ըստ նախատիպի. «Պէտք է ոչ թէ նիւթին պաշտամունք և երկրպագութիւն մատուցել, այլ սրա մէջ անբաժանելիօրէն միացած Աստծու զօրութեանը», որովհետև աստուածային զօրութիւնն օրհնութեամբ և օծմամբ ներկայ է Իր խաչի, Իր պատկերի ու Իր անուան մէջ[1]: Ուրեմն երկրպագւում են միմիայն Քրիստոսի խաչը և տէրունական պատկերները, որոնց օրհնելով և օծելով աստուածային զօրութիւն ու շնորհ է իջնում հաւատացեալների մէջ. բայց «երկրպագելի է միայն Արարչի պատկերը և ոչ արարածի»[2]: «Անունն ու պատկերն առանց էութեան երկրպագելի է և ո՛չ սուրբի և ո՛չ անսուրբի պարագային: Որովհետև միայն Արարիչը կարող է Իր էութեամբ լինել ամեն տեղ, որով և երկրպագւում է Նրա աներևոյթ էութիւնը Նրա տեսանելի պատկերի և անուան մէջ»:

Ուստի և պատկերի օրհնութեան ժամանակ քահանան աղօթում է. «Տէր Աստուած բարերար, որ արժանի դարձրեց Քո հաւատացեալներին Քեզ եղբայր անուանել և յանուն Քո անուան վախճանուածների մահը պատուական համարեցիր, ընդունիր այս պատկերը և սրբիր ու սրա մէջ ցոյց տուր Քո սուրբի զօրութիւնը, ինչպէս Եղիայի շնորհի զօրութիւնը ցոյց տուեցիր նրա թիկնոցի վրայ, որպէսզի սա Քո վկայի յիշատակը լինի և համագոյ Երրորդութեան երկրպագութեան պատճառ»:

[1] Ս. Յովհան Իմաստ. 42, 43, 45, Ընդհանր., էջ 191, 192, 375, 377-379: Տե՛ս և 187. «Մեր եկեղեցին հներից աւանդած սովորութիւններն անփոփոխ պահեց [բայց] չգիտենք՝ երկրի հեռաւորութեան թէ՞ բաժանուած լինելու պատճառով ատելութեան ախտը ներս մտաւ»:

[2] Փրկչի պատկերն օրհնելիս քահանան աղօթում է. «Այս պատկերը ստեղծեցինք, ոչ թէ սրա նիւթը պաշտելով և ոչ էլ արուեստագէտի գործի վրայ զարմանալով, այլ ստեղծեցինք Քո Միածին Որդու անունով»[176*], և ապա յարում է ս. Գրիգոր Լուսաւորչի խօսքերը, որոնք վերը մասամբ վկայակոչեցինք:

Կամ. «Սուրբ ես Տէր և սրբերի մէջ ես բնակւում, սրանով սրբիր Քո վկաների պատկերները, որոնք այժմ մենք ստացանք պատկերագրութեամբ՝ ի յիշատակ նրանց, ի պայծառութիւն Քո սուրբ եկեղեցու, ի պատիւ և երկրպագութիւն Սուրբ Երրորդութեանդ»:

Առհասարակ ինչ պատկեր էլ օրհնւում է, միշտ շեշտւում է աղօթքի մէջ, որ Աստուած այդ պատկերը դարձնի «համագոյ Երրորդութեան պատճառ» և ոչ թէ երկրպագելի: Միմիայն Փրկչի պատկերի համար է ասւում. «Օրհնի՛ր այս պատկերը և սրան շնորհ տուր՝ լինել անկեղծ պատկերիդ յիշատակարանը: Քեզանից զատ ուրիշ մէկին չգիտենք և Քո անունն ենք հանապազ տալիս և Քո պատկերը երկրպագում»[177*]:

Խաչի օրհնութեան ժամանակ էլ քահանան աղօթում է առ Աստուած. «Եւ արդ, մենք՝ Քո ծառաները և Քեզ հաւատացողները այս Խաչը ստեղծեցինք ոչ թէ սրա նիւթը պաշտելով և ձեռագործ բաները աստուածներ անուանելով, այլ սա Քո սուրբ Խաչի նշանը դարձրինք, որի վրայ Քո բազուկները տարածեցիր, մեր Տէր Յիսուս Քրիստոս Միածին Որդի: Ուրեմն ընդունիր սա մեր ձեռքերից և օրհնիր ու սրբիր սա՝ արժանի լինել կոչելու աստուածային նշան և պատճառ Հօր, Որդու և Սուրբ Հոգու համագոյ իշխանութեան երկրպագութեան»[178*]:

Արդ, ուրեմն, միաբանական աստուածպաշտութեան մէջ ամենայն ինչ պէտք է ըստ իր էութեան և նշանակութեան միջոց դարձնենք մեր բարեպաշտութեան համար և ոչ թէ աչքաթող անենք մեր բարեպաշտութեան հոգևոր լինելը ու լոկ նրա արտաքին արտայայտութեան վրայ դարձնենք մեր ուշադրութիւնը: Հոգի ենք ու մարմին և ուրեմն մեր բոլոր զգայարանքները պէտք է թէ՛ բարեպաշտութեան գրգիռներ ստանան և թէ՛ մեր հոգու երկիւղածութիւնն ու ջերմեռանդութիւնը մեր զգայարանքներով արտայայտուեն աստուածպաշտութեան մէջ, որպէսզի թէ՛ մեր աստուածպաշտութիւնը լիակատար լինի և թէ՛ կրթիչ: Ըստ այսմ Հայաստանեայց ս. Եկեղեցում հաւաքւում են բոլոր հաւատացեալ Հայերը, տեսնում են Աստծու զօրութեան միևնոյն յայտարարները, խոստովանում են միևնոյն ճշմարիտ հաւատալիքները, հնչեցնում են միաբանօրէն և մէկմէկու համար միևնոյն խնդրուածներն ու փառաբանութիւնները Աստծու անուան: **Եւ այդպէս մի հոգով գնում են ամենքն իբրև միևնոյն Հօր որդիներ ու միևնոյն արեամբ գնուածներ դէպ ամենախնամ Աստուած:**

ԽԹ

ԵԿԵՂԵՑՈՒ ԼՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ, ԱՅՍՏԵՂԻՑ ՓՈԽԱԴՐԻԵԼԸ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցին փրկագործելով մարդկանց, մաքառմամբ իրականացնում է Աստծու արքայութիւնը, սկսելով այս կեանքից և տանելով փրկութեան ճանապարհով դէպի յաւիտենական կեանք: Այս ճանապարհի մէջ Աստծու խոստմամբ հաստատուած յոյս ունենալով՝ ադամորդին յաղթապանծ ընթացք ունի իր հոգևոր թշնամու՝ այն է՝ մեղքի, նոյնպէս և բնական թշնամու՝ այն է՝ մահուան դէմ: **Թէև այդ երկու թշնամիների նկատմամբ յաղթանակը տարուած է Քրիստոսով,** սակայն այդ յաղթանակը իրագործելու համար պէտք է կարողանալ միշտ միացած ու հաղորդ լինել Քրիստոսին կամ ճշմարտութեանը: Ըստ որում արդէն յաղթական դիրք ստացած լինելով՝ մնում է մեզ նոյն դիրքի մէջ անշեղապէս յարատևել և ընթանալ դէպի յաղթանակի կատարումը, որ է հանդերձեալ կեանքի երանութիւնը: Եւ մենք լուսամիտ հաւատքով լիայոյս ենք, որ Քրիստոսի հետ լինել նոյնն է, թէ՝ այդ հանդերձեալ կեանքում ենք, ինչը ոչ ոք չի կարող մեզնից խլել: «Եւ երբ այս երկրաւոր կեանքը մահուան ձեռքով իր աւարտին է հասնում՝ հոգիները գնում են Աստծու մօտ, որ տուեց նրանց և մարմինները՝ դէպ հող, որից ստեղծուեց Արարչի կողմից: Եւ սուրբ, արդար հոգիներին ընդառաջ են դուրս գալիս հրեշտակները՝ սուրբերի հոգիները, և տանում Աստծու առաջ»[1]: Այս է պատճառը, որ մեզ համար **մահը չարիք չէ, այլ այս կեանքի աւարտը,** ուստի և մեր սիրելիի բաժանումը մեզնից միայն անցական սուգ է առթում և ոչ՝ անվերջ լաց ու կոծ, ըստ հեթանոսների: Հանդերձեալ կեանքը հաւատացեալի մէջ համոզմունք է՝ «որովհետև ով տեսնում է սկիզբը, նա տեսնում է նաև վախճանը», ասում է Մամբրէ վերծանողը[179*]:

Հեթանոսները հառաչանքով նայում են դէպի իրենց ոսկեդարը, դէպի այն անցեալը, որից վերջնականապէս զրկուել են, **իսկ մենք դադարել ենք արդէն ետ նայելուց, այլ ետ նայելու հառաչանքից մտել ենք ապագայի փառքի ցնծութեան մէջ:** Հեթանոսները դեռևս զբաղուած են աշխարհի ծագման հետախուզութեամբ

[1] Ցանախ., ԺԲ, էջ 118, 136-170:

միայն և նրա վերջի մասին չեն մտածում[1]: Իսկ մենք մեր աչքի առաջ ունենք աշխարհի ու մեր անձի վախճանը, որ լինելու է Եկեղեցու վախճանով[2]: Ահա այդ վախճանն արտայայտում ենք այն ճշմարտութիւններով, որոնց առարկան են Քրիստոսի գալուստը, մեռելոց յարութիւնը, դատաստանը և յաւիտենական կեանքը[180*]: Մեր առօրեայ մտածողութեան դրօշակի վրայ գրուած է. «Ինչը մահ է անուանում, նոյնը քուն է ասում, **և ինչը կեանքի վախճանն է՝ այն էլ սկիզբն է կեանքի**». ըստ որում «այս մահը ժամանակաւոր է» և ուրախութիւն է իբրև ժամանակաւոր կեանքի վախճան ու յաւիտենականի սկիզբ[3]:

Երկրաւոր կեանքի ընթացքը յաղթաբար անցած ենք լինում այն ժամանակ, երբ պատերազմի դաշտից յաղթական պսակով, այսինքն՝ հաւատքի, յոյսի և սիրոյ մարտահանդէսի պայծառութեամբ փոխադրուում ենք այստեղից: Այդ փոփոխումը լինում է մեր հոգու մարմնից բաժանուելով. հոգին ուրեմն մտնում է մի նոր կեանքի կամ վիճակի մէջ, որ բոլորովին հակառակն է երկրաւոր կեանքին և որ կարող ենք կոչել մի տեսակ խաղաղական վիճակ առանց որևիցէ գործունէութեան, կամ թէ այս կեանքի համեմատութեամբ կոչելի է՝ գիշեր (Յովհ., Թ 4): Այնտեղ չկայ գործունէութիւն ու խօսք, որովհետև դրանց համար անհրաժեշտ պայմանները չկան այնտեղ: Հոգին այդտեղ ներքին կեանք ունի,

[1] «Նախնիների սովորութիւնն էր մեծ ճիգ ու ջանքով ամրացնել իրենց գերեզմանները, որովհետև նրանցից հեռու էր յարութեան յոյսը. միայն այս կեանքի մասին գիտէին և միւսը դառը մահ էր նրանց համար, մեռեալի յիշատակը գերեզմանն էին համարում, ասում էին շիրիմը նրանց յիշատակն է, և մեռեալի անունը փորագրում էին [գերեզմանի] դռան վրայ, յարութեան ակնկալութիւնը բոլորից անտեսուած էր» Մամբրէ Վերծանող, էջ 25:

[2] Հռոմ., Ը 18-24, Փիլ., Գ 20-21:

[3] Ս. Յովհ., Իմաստ. 77, Ագաթ. 295, Յովհ. Մամիկ. 174-181. տե՛ս նաև Մուշեղ Մամիկոնեանի ճառը.

Փաւստոս Բուզանդ, Ե ԽԴ «Ամբողջապէս մերկ էիր աշխարհում և քանի դեռ աշխարհում էիր՝ բարձրացար համաձայն այս աշխարհի պէտքերի, իսկ երբ դուրս կը գաս այստեղից՝ ոչինչ չես կարող տանել քեզ հետ, այլ ինչպէս եկար, այնպէս էլ կը գնաս: Եղիշէ, էջ 307: «Եւ անբաւ են յաւիտենական բաները, [իսկ] երկրաւոր բաները՝ պատրանք ու երազ, նաև՝ սիրելի, բայց սարդոստայնից աւելի տկար»: «Աստծով և ջերմագին քրիստոնէութեամբ ապրածիս համար հեթանոսների նման վայրիվերոյ կոծ ու ողբով մէկը թող չճանապարհի ինձ: Որովհետև ովքեր մի անգամ յարութիւն առնելու յոյսի ակնկալութիւնն ունեն Քրիստոսի կենդանութեան և գալստեան համար՝ նրանց վրայ հարկ չէ լաց լինել... մի վախեցէք մահուանից և պատերազմից, ուր ես չմեռայ, որովհետև առանց Աստծու ոչինչ չի լինում» Վահան Մամիկոնեանի խօսքը. տե՛ս Ղազար Փարպեցի, էջ 170, 423, 428, 361-364, 358, Մանդ., էջ 174-181:

սուզում է իր մէջ, կատարելապէս յիշում է իր անցեալ պատերազմը, զբաղում է իր ներքին կեանքով և մտաբերում իր անցեալ կեանքի բոլոր գործերը: Արտաքին աշխարհի բոլոր հանգամանքները, աղաղակներն ու փոփոխութիւններն այստեղ չկան. երկրաւոր կեանքի ու հանդերձեալի հակասական մտածողութիւնները վերանում են և այժմ յաւիտենականութեան մէջ խղճմտանքի ձայնն այլևս ոչ թէ խեղդում է աշխարհի շփոթութիւններով, այլ շարունակ հնչում է իւրաքանչիւր հոգու մէջ: Հոգին այդ ձայնի ներքոյ՝ գտնւում է մի տեսակ ինքնադատութեան մէջ, որով նա իր բովանդակ անցեալը դնում է իր առաջ. նրա բոլոր գործերը դառնում են նրա մխիթարութիւնը կամ տառապանքը[1]: Այդ գործերի յիշողութիւնն անընկճելի է. հոգին չի կարողանում մոռացութեան տալ դրանք, նա չի կարողանում դրանց միահամուռ ներկայութիւնը մտահան անել, երբ դրանք խղճմտանքի ճշմարիտ ձայնին հակառակ են և սառսուռ, մորմոք ու դատապարտութիւն են վառում նրա մէջ: Աստուածային ճշմարտութեան յայտնութիւնն, ինչպէս մի լուսավառ տեսիլ, շարունակ երևում է հոգիներին, որոնք արդարներին երանութեան ցնծութիւն են պատճառում, իսկ մեղաւորներին՝ սրտաճմլիկ մորմոք: Արդարի համար այդ «երկնաւոր բնակութեան զգեստը» փառք է և ցնծութիւն, իսկ մեղաւորի համար խաւար ու տխրութիւն (Բ Կոր., Ե 2-4): «Եւ մեղաւորները պիտի տեսնեն փառքը և յաւիտենական տխրութեան ու ամօթի մէջ կորանալով պիտի հալչեն, ովքեր այս աշխարհում իրենց աւելի մեծ են համարում, քան արդարները, որովհետև հպարտութիւնը նրանց թոյլ չի տալիս տեսնել, թէ ովքեր են այս արդարները, և ովքեր՝ մեղաւորները: Բայց վախճանից յետոյ երևում է արդարների փառքը և մեղաւորների յաւիտենական ամօթը», գրում է ս. Գրիգոր Լուսաւորիչը:

Այս վիճակը բացատրում է և Ս. Յովհան Մանդակունին այսպէս. «Այդ պատճառով ոչ ոք չի կարող այնտեղ ուրանալ չար գործերի պղծութիւնը, այլ կապւում է չարախօս լեզուն, ծեփւում է անօրէն բերանը, դողում յանցաւոր մարմինը, որովհետև իւրաքանչիւր մեղք ինքնին վկայում է կատարւածի մասին՝ առանց ձայն արձակելու, այլ ինչպէս ոչխարների հօտի մէջ է երևում այծերի սևութիւնը, այնպէս էլ մեղաւորների հոգիները լուսազարդ հրապարակներում պիտի երևան խաւարով զգեստաւորւած ու պատւած: Որովհետև, ինչպէս օրինակ

[1] Եբր., Թ 27, Ղուկ., ԺԶ 23, Յայտ., ԺԴ 13:

մարդու ստւերը անբաժանելի է իրենից, նոյնպէս և մեղքն անբաժանելի կերպով գնում է հոգու հետ և պարզորոշ կերպով մեղքերի բազմութեան կերպարանքն է ցոյց տալիս բովանդակ հրապարակով»[181-182*]:

Այսպիսով մեղաւորների հոգիները մնալով իրենց երկնաւոր կայաններում «բացորոշ կերպով հոգևորապէս տեսնում են արդար դատաստանի հատուցումը, անշէջ հուրը, արտաքին խաւարը, աչքերի լացը, ատամների կրճտոցը: Այս բոլորի պատճառով մեղաւորների հոգիները ահով տրտմում ու տխուր սպասում են Քրիստոսից լինելիք ընդհանուր յարութեանը»: Այսպէս և արդարները ուրախութեամբ լցւած սպասում են փառաւոր հատուցմանը և լաւ գիտեն, որ ստանալու են Քրիստոսի խոստացած երանութիւնը, ուստի և այդ լոյսի շնորհներով երջանիկ են[1]:

Եւ քանի որ Քրիստոս դժոխքն ու մահւան խայթոցը ոչնչացրել է իր հաւատացեալի համար և իր հաւատացեալի հետ է ամենուրեք, ուստի և հաւատացեալը լաւ գիտի, որ մեռնելով կորստեան չի մատնւում, այլ արժանանում կեանքի (Փիլ., Ա 21): Այդ պատճառով, երբ ճշմարտութեան ճշմարիտ զինւորը կատարում է իր երկրաւոր ընթացքն առաքինութեամբ, այն ժամանակ ոչ թէ մահից վախենում է, այլ բացականչում. «Որովհետև ինձ համար կեանքը Քրիստոս է և մեռնելը՝ շահ» և «Քրիստոսի հետ լինել», կամ «առաւել ևս հաճելի է մեզ դուրս գալ այս մարմնից և մտնել Աստծու մօտ: Ուստի հոգ ենք տանում, որ մնանք, թէ դուրս գանք, հաճելի լինենք միայն Նրան»[2]: Ըստ այսմ խաղաղական վիճակը կամ անդրանիկների եկեղեցին հաւատացեալի համար մի մեծ հանգստութիւն է ի Տէր և ցանկալի, առ որ ձգտում էր պատերազմական յաղթութեամբ հասնել, մանաւանդ, որ երկրաւոր կեանքում միշտ վտանգ կայ փորձութեամբ խորթանալու Տիրոջից. մինչդեռ աշխարհին նուիրւած մարդը սոսկում է մահից և այդ վիճակի արհաւիրքներից[3]:

[1] Յաճախ., ԺԵ 100, ԺԲ 61, 76, 237-279, 280-310, ԺԳ 178, ԺԵ 41, 64, 162:
[2] Փիլ., Ա 21-25, Բ Կող., Ե 8-10:
[3] Մանդ. 175, 178, Եղիշէ Բ «Որոնց ոգիները տկարացած (հեռացած) են երկնաւոր առաքինութիւնից՝ նրանց մարմնի բնութիւնը զարհուրելի ահի տակ է, ամեն տեսակ հողմերից շարժւում է, ամեն ինչից խռովքի է մատնւում, ամեն բանից դողում, այդպիսին իր կեանքում հետամուտ է ունայն բաների և իր մահւան ժամին կը գնայ դէպի անդառնալի կորուստ: Ինչպէս մէկն ասաց հնում. «Չգիտակցւած մահը մահ է,

Հետևաբար թէ՛ նախքան Քրիստոս մեռածների, թէ՛ Նրան յուսացածների, թէ՛ չհաւատացողների ու թէ՛ հակառակորդների վիճակներն այդ ժամանակ բոլորվին տարբեր են ըստ իրենց գործերի խղճմտանքի աստեղ ձայնի: Ուրեմն, Քրիստոսի յուսացողները և հաւատացեալներն ունեն մի լուսաւոր կայանատեղի, ըստ իւրաքանչիւրի արժանիքների, որ և Աւետարանում «գոգ Աբրահամու» կամ արքայութիւն կամ դրախտ է կոչում, իսկ միւսներինը խաւար կայանատեղի կամ դժոխք[1]: Եւ ինչպէս որ իրենց յիշողութեամբ կապած են իրենց անցեալի հետ, այնպէս և ներքին կեանքի խորհուրդով կապած են իրենց երկրաւոր եղբայրակիցների հետ այն ամենով, ինչի համար որ նրանք ևս այս կեանքում գործել ու մաքառել են: Դեռևս նրանք գտնւում են խղճմտանքի ձայնի ներքոյ, հետևաբար և յարաբերութեան մէջ են մեզ հետ, որովհետև մենք մեր ներքին կեանքով չենք բաժանւում նրանցից: Ուրեմն ինչպէս որ նրանց կեանքը պատկերանում է մեր հոգու մէջ իր պայծառ կամ խաւար կողմերով, այնպէս էլ մեր կեանքը, մեր եկեղեցին պատկերանում, ցոլանում է նրանց մէջ: Ահա այսպէս միութեան մէջ ենք մնում, մանաւանդ որ նրանց մօտ տանող մեր ճանապարհը ևս մէկ է ու միացուցիչ և նրանց վիճակը մեր եկեղեցու ու մեր անձի սխրական լրումն է: Անկարելի է, որ պատերազմող եկեղեցին կտրուած լինի իր լրումը հանդիսացող եկեղեցուց, ապա թէ ոչ, նա չի կարող պատերազմող լինել ու չի կարող լրումն ունենալ, և ուրեմն եկեղեցի չի լինի իսկապէս: Պատերազմի աւարտի լրումը պսակն է[2], եւ որ եկեղեցու գաղափարից կատարելապէս անբաժան է և որի վերջնական լրումը յաւիտենական կեանքն է (Յայտն., Զ 9-11):

Մեր արդարների կամ անդրանիկների եկեղեցին մեր եկեղեցու լրումը լինելով՝ այն առաքինական ցնծութեան մէջ է գտնւում, որ մեր երկրաւոր պատերազմի փառքն է եղել նրանց փառակցութեամբ: Նրանք իրենց ներքին խորհուրդով մասնակից են մեր ամեն մի նման գործունէութեան

գիտակցած մարը՝ անմահութիւն: Ով չգիտի մարը՝ վախենում է մահւանից, իսկ ով գիտի մարը՝ չի վախենում նրանից»[183*]:

[1] Ա Պետ., Գ 19-20, Ղուկ., ԻԳ 43, ԺԶ 23:

[2] «Այս կեանքը վաճառատեղի է. ով ինչ վաճառեց այստեղ՝ հոգու տքնութեամբ (եղած) աշխատանքի արդիւնքը՝ նոյնն իր հոգու համար հանդերձեալ կեանքում կը գտնի պատրաստ վիճակում՝ թէ՛ բարի և թէ՛ չար: Գալիս ենք աշխարհ և գնում աշխարհից, և գործերն են [միայն] հետամուտ մեզ, և մոռացւում ենք այս կեանքում և հանդերձեալ կեանքի հոգսն է լոկ նորոգւում» Մեկն. Ժամ., էջ 128:

մարտահանդէսին, ինչպէս և մենք հոգով խորհդաւորապէս նրա ցնծութեան կցորդն ենք: Եւ ինչպէս որ նրանք իբրև առաքինութեան նահատակներ իրենց անձամբ իսկ լռիկ աղօթք ենք անում ու բարեխօսում Աստծու առաջ մեզ համար, այնպէս էլ մենք նրանց համար աղօթող ու նրանց յիշատակը առաքինապէս և արիաբար պահող ենք այս կեանքում: Նրանց աղօթքն սկսւեց նրանց փոխելով այստեղից, իսկ մերը՝ այն օրից, երբ անջատման ոգով և հաւատքի ու յոյսի փառաբանական ուրախութեամբ յուղարկաւորեցինք նրանց մարմինը դէպի գերեզման: Այնուհետև մեր աստուածպաշտութիւնը մշտական կապ է դառնում նրանց ու մեր մէջ, իսկ անդրանիկների եկեղեցում՝ լռիկ ու մշտալոյս հայեացքը դէպ աստուածային փառքը[1]: Մենք աղօթում ենք նրանց համար թէ՛ մեղքաւիչ պատարագով և թէ՛ աղքատներին ողորմութիւն անելով, իսկ նրանք մեր սուրբերի խմբի մէջ աղօթում են մեր յաղթութեան ու մեր բարեյաջող գործունէութեան համար:

Եթէ մենք նրանց համար չաղօթենք ու նրանց չյիշենք՝ թերի կը լինենք մեր քրիստոնէական բարեպաշտութեամբ ու սիրով և ճանաչած էլ չենք լինի մեր եղբայրների ու փառաւոր նահատակների կենդանութիւնն այն կեանքում և այն քրիստոսատուր անխզելի միութիւնը, որ իրագործւում է մեր մէջ Քրիստոսի եկեղեցով: Իսկ եթէ նրանց աղօթական վիճակը ժխտենք, ինչպէս ասում են որոշ բողոքականներ, այն ժամանակ ժխտած կը լինենք հանդերձեալ կեանքի հաւատքը և սադուկեցիների նման՝ մեռելների յարութիւնը. հետևաբար և ուրացած կը լինենք հոգու անմահութիւնն ու գոյութիւնը կամ հակասութեան մէջ ընկած, որով և հաւատացեալների հոգիների խաղաղական կացութեան հաւատքը մերժած կը լինենք հիմնովին: Առաքելական ճշմարիտ եկեղեցին բաժանւած չէ իր մեկնած հաւատացեալներից ու կտրուած չէ այն ընթացքից, որ անընդհատաբար տանում է դէպի հանդերձեալ կեանք: Այսպէս և հասկանալի է, որ նախքան ընդհանուր յարութիւնը նրանք պէտք է սպասեն իրենց կայաններում մինչև վերջին դատաստանը, ըստ որում դատապարտուածները կը մնան և այն ժամանակ կը

[1] «Աստուած, որ Պատարագ ընդունող և ուխտ կատարող է, լսում է ողջերի աղօթքը, ընդունում պատարագը և թեթևացնում յոյսով ննջած մեռելների հոգիների բեռները, ինչը և մեզ ուսուցանում են Սուրբ Գրքերը» Աբրահամ եպս. Մամիկոնեան (Մովս. Կաղանկատուացի, էջ 65), ս. Վրթանէսի խօսքը տե՛ս Բուզանդ, էջ 24, տե՛ս նաև Հարց. 685-689:

ստանան իրենց պատիժը ընկած հրեշտակների կամ սատանաների հետ[1]: Իսկ արդարները նոյնպէս և Քրիստոսի փրկագործութեան աւետիքով ապրածները և այլ յուսացողները կընդունեն իրենց փառաւոր վարձը. «Եւ սրանք ամենքը հաւատի մէջ վկայած լինելով հանդերձ, չընդունեցին խոստումը: Աստուած մեզ համար աւելի լաւն էր նախատեսել, որպէսզի առանց մեզ դրանք չկատարուեն» (Եբր., ԺԱ 39-40): Ամենքն էլ ընդհանուր յարութեան ժամանակ միայն ստանալու են իրական հատուցումը. «Բայց ինչ որ առաքեալն է ասում, մենք էլ նոյնն ենք ասում, թէ իւրաքանչիւր ոք իր վարձը պիտի ստանայ ընդհանուր յարութեան ժամանակ՝ ինչ որ արել են՝ թէ՛ բարի և թէ՛ չար», ասում է ս. Գրիգոր Լուսաւորիչը[2]: Այստեղ ցանածն այնտեղ պէտք է հնձենք. այն էլ՝ միասին և ոչ թէ առանձին-առանձին: Այս պատճառով և անդրանիկների եկեղեցու ցնծութիւնը մեզ արգելում է մեր հանգուցեալին սգալ հեթանոսական անյուսութեամբ կամ լաց ու շիւան բարձրացնելով «որ անմիտ կանայք են անում ի ցոյց կեղծաւորութեան, և կռապաշտութեան գործ են անում քրիստոնեաների վրայ»[3], որովհետև այդ անարգանք ու թշնամանք է «հոգեկիր և քրիստոսազգեաց» մարմնի դէմ: Այդպէս անողները մերժւում են եկեղեցուց իբրև հեթանոսներ և թոյլատրող քահանաները ևս պատժւում են: «Բայց արդարի մահը համակ ցնծութիւն և ուրախութիւն է» լուսեղէն հանգստութեան մէջ, ուստի և յուղարկաւորում ենք այն ճանապարհը, որ ամենքս էլ գնալու ենք. «մեր վախճանուածների հոգիները սաղմոսներով և օրհնութեամբ յուղարկաւորում ենք»[4] դէպի կեանք և որպէս ընծայ նուիրում Աստծուն: Այդ հաւատքն ու յոյսը փորձնականապէս արտայայտում ենք թաղման օրից. սպիտակ պատանքով ենք պատանում նրան, այսինքն՝ որ վախճանուածը թողնում է աշխարհն ու իր գործերը հագնում. քթի մէջ խունկ ենք դնում ու երեսին՝ բամբակ՝ ի նշան անուշահոտ վարքի ու պայծառ հաւատքի, որով Աստծու մօտ է գնում. ադամային անիծեալ հողն օրհնում լցնում են վրան՝ ծածկելով օրհնեալ հողով. երկրորդ օրը կանայք գնում են այցելու գերեզմանը, ըստ իւղաբեր կանանց. երրորդ օրը տօնում ենք ըստ Քրիստոսի յարութեան, կատարում եօթնօրէքը, ըստ եօթը շնորհների և առաքինութիւնների, ու քառասունքն ըստ

[1] Մատթ., ԺԳ, ԻԵ, Բ Պետ., Բ 4, Յուդ., 6, Բ Պետ., Բ 9, Գ 7, Ա Պետ., Դ 6:
[2] Յաճախ., ԺԵ 128, Հարց. 691-694:
[3] Մանդ. 136, 175, 177, Ա Թես., Դ 12:
[4] Մանդ., էջ 180:

Քրիստոսի համբարձման, և վերջապէս ամեն տարի ագապ կամ հոգեհանգստի մատաղ անելով աղքատների համար, պատարագով հաղորդակից ենք լինում մեր հանգուցեալի աղօթքին ու կամքին: Այդպէս և ամենայն մեռելոցի օրհնել տալով գերեզմանը, յարգում ենք և աստուածային օրհնութիւն խնդրում մեր սիրելիի նշխարների վրայ: **Իսկ մեր անցական տրտմութիւնն ու սուգը միմիայն մարմնապէս բաժանուելու կսկիծն է**, ուստի և աղօթում ենք. «Եւ սրանց չափաւոր արտասուքներն ընդունիր ի հաճոյս Քեզ և ոչ թէ զայրանալու համար, և մխիթարելով սփոփիր սրանց յուսալքած սիրտը Քո շնորհի գալստեամբ և զօրացրու սրանց տարակուսած հոգիները Սուրբ Հոգուդ առաքմամբ»[1]:

Հռոմ. եկեղեցին այստեղից փոխուողների պարագային ևս չարաչար մոլորւում է՝ դաւանելով, որ իբր թէ մի ինչ որ առանձնական դատաստանով հոգիներն ընդունում են իրենց գործերի հատուցումը և վերստին ընդհանուրի յարութեան ժամանակ վարձատրւում. այլև իբր թէ մեղաւորների համար կայ առանձին քաւարան, որտեղ նրանք պէտք է իրենց ներելի մեղքերի փոխարէն այս աշխարհում (հաւատաքննութեամբ) չկրած ու եկեղեցական թողութեամբ հետաձգած պատիժները տուժեն, որ այդ մեղքերից ազատուեն կամ քաւեն կրակով:

«Առանձնակի դատաստանի» այս մտացածին դաւանանքը յայտնապէս մի թիւրիմացութիւն է, որ յօրինել է Հռոմ. եկեղեցին՝ չհասկանալով հոգիների ապագայ հատուցման նախազգացութիւնը ըստ իրենց խղճմտանքի ներքին ձայնի[183*ա]: Այդ բացատրւեց նախընթաց շարադրանքում, ուստի առանձին հերքման կարիք չկայ: Իսկ քաւարանը, որ այդ թիւրիմացութեան հետևանքն է կամ պատճառը, ուղղակի հակառակ է փրկագործութեան խորհրդին և իսկապէս մի խաղալիք է դարձնում ճշմարիտ աստուածային դատաստանի հատուցման

[1] Հմմտ. Սիր. Է 37, Յովհ., ԺԱ 35, Գործք., Ը 2. «Եւ ձեզ անհարժեշտ է գոհանալ Աստծուց, որովհետև ձեր վախճանուածներին երկրից երկինք տեղափոխեց, մարդկանցից՝ հրեշտակների մօտ, մահից դէպի կեանք փոխադրեց, աղքատութիւնից՝ թագաւորութիւն, աշխատանքից՝ հանգիստ, այս աշխարհի տաղտուկից դէպ երկնային ուրախութիւն, մեղքից՝ արդարութիւն, հողեղէններից դէպ լուսեղէններ, և հրեշտակներին դասակից դարձրեց: Այս պատճառով վայել չէ քրիստոնեաներին սուգ անել մեռեալների վրայ, այլ թող լացեն հրեաները և ողբան թերահաւատները, որովհետև նրանք են արժանի կոծի և ողբի», Մաշտոց, էջ 683, Հմմտ. Մանդ., անդ:

լրջութիւնը[1]: Նախ որ Ս. Գրքում ոչ մի յիշատակութեան նշոյլ չկայ քաւարանի մասին և Հռոմ. եկեղեցու փաստերն ուղղակի վերաբերում են[2] այն ներելի մեղքերին, որոնց վրայ աստուածային գթութեան ու ողորմութեան յոյս ունենալով՝ հանգուցեալը վախճանել է, և մենք էլ, կատարելով նրա կամքը, նոյն գթութիւնը հայցում ենք աղօթքով ու պատարագով: Իսկ իւրաքանչիւրի ճշմարտութիւնն ու արդարութիւնը ըստ Ս. Գրոց միմիայն վերջին դատաստանի օրում կը յայտնուի ինչպէս ոսկի (Ա Կոր., Գ 12-15):

Երկրորդ՝ **մեղաւոր ապաշխարողները չպէտք է անպատճառ իրենց մեղքերի պատիժը կրեն մեռնելուց յետոյ.** քանի որ Քրիստոս ամեն պատիժ յանձն առաւ Իր գերահրաշ Պատարագով բոլոր հաւատացեալների համար, և մարդիկ պէտք է միմիայն իւրացնեն Նրա վաստակները: Զղջացողը, եթէ ճշմարիտ հաւատքով զղջում է, նա անպատճառ թողութիւն է ստանում արդէն իսկ Քրիստոսի վաստակով:

Երրորդ՝ **ոչ մի քաւարանական կրակ չի կարող մեղաւորին քաւել մեղքերից,** որովհետև մեռնելուց յետոյ այլևս չկայ ապաշխարութեան ու քաւութեան ընթացքը, **այլ միակ ապաշխարութեան տեղն այս կեանքն է[3] և միակ քաւարանը՝ եկեղեցին.** «Այս տունը աղօթքի տուն է և մեղքերի քաւարան»[4] : Զարմանալի է սակայն, որ Հռոմի քահանայապետները մարդկանց մեղքերի թողութիւնը նաև հանդերձեալում իրենց «իրաւունքներին» վերապահելով ու **թողութեան թղթեր ծախելով,** ոչ թէ քրիստոնէական սիրով ամենքին էլ ազատում են մեղքերից, այլ ընդհակառակը՝ դեռ քաւարանի կրակի մէջ էլ են ձգում, **նրանց մեղքի փոխարէն դեռևս ազգականներից էլ բազմապատիկ վճար պահանջելով:** Դա մեծ հակառակութիւն է և ոչ այլ բան, քան եկեղեցու փրկարարութեան վերացումը[5]:

[1] «Առաւել ևս երկնայինների համար այս Սեղանը Խաչ է, ինչը և երկնայինների ու երկրայինների կողմից խոստովանւում է որպէս ճշմարիտ քաւարան» Դաւիթ Անյաղթ[184*]:
[2] Բ Մակ., ԺԲ 42, Մատթ., ԺԲ 32:
[3] «Բայց այստեղ է պարտ լալ և այստեղ է պարտ ողբալ, տնքալ և հառաչել, աղաչել և մաղթել ու թողութիւն խնդրել, որովհետև այստեղ է արտասուքի շահը և աղօթքի օգուտը, ողորմութեան սերմը և ապաշխարութեան պտուղը» Մանդ., էջ 17:
[4] Տե՛ս Հիմնարկէքը[185*]:
[5] Տե՛ս Դրախտ 443-480, Հարց. 432-433:

Հայաստանեայց ս. Եկեղեցին մերժելով այդ հակասական մոլորութիւնը, աղօթել է տալիս իր որդիներին՝ «Ճշմարիտ լոյս Քրիստոս, արժանաւոր դարձրու իմ հոգուն՝ կանչելու օրը ուրախութեամբ տեսնելու Քո Փառքի լոյսը և բարու յոյսով հանգչելու արդարների օթևաններում մինչև Քո գալստեան մեծ օրը»[1]: Այս է խնդրում նաև Քրիստոսի խաչակից զղջացող աւազակը. «Տէր, յիշիր ինձ, երբ գաս Քո արքայութեամբ»[2]:

Ս. Գրիգոր Լուսաւորիչը ևս յիշելով, որ բոլորի յարութեան ժամանակ են հոգիները հատուցում ստանալու, յարում է. «Եւ, մարգարէն ասում է, չլուսալ իշխաններին, որովհետև իրենց իշխանութեամբ մեծամտացածները վերանալու են երկրի երեսից և մարելու է հպարտ կամքը: Այլ, ասում է, պարտ է Աստծուն յուսալ, որ անմահ է և մահուան ու կեանքի յաւիտենական իշխանն է»[3]:

Ծ

ՎԱԽՃԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ

Աստծու արքայութիւնը փրկագործելով մարդկանց և տանելով դէպի առաջ, անշուշտ մի ժամանակ պէտք է ստանայ իր լրումը: Եկեղեցու այս լրումն է, որ պէտք է իրականանայ աշխարհի վախճանին և ամենայնի վախճանն ու կատարումը լինի: Այդ կատարման ժամանակն ըստ Աստծու իմաստուն տնօրինութեան բոլոր արարածներից, մարդկանցից ու հրեշտակներից անյայտ է (Մարկ., ԺԳ 21, 33): Այս անյայտութիւնն է պատճառը, որ բնապաշտ

[1] Տե՛ս [Ներսէս Շնորհալի] Հաւատով խոստ. և «Որ ընտրեցեր»:
[2] Ղուկ., ԻԳ 42, Տե՛ս և Կան. Հանգստ. և Կան. Մարտիր. ԴԿ. «Հանգչեցրու Քո ծառայի հոգին լոյսի վայրում և հանգստեան վայրում, որտեղից հալածած են ամեն տեսակ ցաւ, տրտմութիւն և հեծութիւն», Կանոն մեծի թաղման [Մաշտոց], էջ 474, 489, 490, 682, Հարց. 698-705:
[3] Ցանախ., ԺԵ 131. «Ինչպէս որոշ անմիտներ են ասում, թող ոչ ոք չխաբուի, թէ մի վայր կայ, որ Արքայութեան ու դժոխքի մէջտեղում է, թէ մէկը, որ արքայութեան մէջ չէ նաև՝ դժոխքում չէ՝ պէտք է նրանց մէջտեղում լինի: Այս կարծիքը սուտ է, թող մէկը չհաւատայ: Ինչպէս մահուան և կեանքի մէջտեղում ոչինչ չկայ. այնպէս էլ արքայութեան և դժոխքի մէջտեղում ոչինչ չկայ: Ով հանգիստ չի գտնում ցամաքում, կընկղմւի ծովում, և ով արքայութեան մէջ չէ՝ տանջանքում է: Ցիմար կոյսերը, որ զրկւեցին արքայութիւնից, այլ վայր չգտան մնալու համար, բայց միայն Տիրոջից լսեցին, թէ «Հեռացէք ինձանից, անիծեալներ, դէպի յաւիտենական կրակը». Մեկն.Ժամ., էջ 200:

մտածողներն արդէն իսկ առաքեալների ժամանակ սկսեցին թերահաւատել՝ ասելով. «Ո՞ւր է նրա գալստեան խոստումը, որովհետև նախահայրերի ննջելուց յետոյ ամեն ինչ այն նոյն ձևով է մնում, ինչպէս իր արարչագործութեան սկզբից» (Բ Պետ., Գ 4):

Սակայն մի՞թէ կարող է յաւիտենական լինել այն հակասութիւնը, որ նկատում ենք մեր հոգևոր ձգտումների և բնութեան մէջ. մի՞թէ կարող է աշխարհը յաւիտենական բարու և չարի, ճշմարտութեան ու ստութեան մի խառնակութիւն, մի շփոթութիւն մնալ. մի՞թէ կարող է աշխարհի ընթացքը շարունակ լոկ անկում ու բարձրացում, կատարելութիւն ու անկատարութիւն, առաջադիմութիւն ու յետադիմութիւն, լուսաւորութիւն ու ապականութիւն լինել առանց ճշմարտութեան, կատարելութեան, լոյսի, բարձրացման ու առաջադիմութեան վերջնական յաղթանակի: Մի՞թէ կարող է մեր առաջադիմութիւնն ու լուսաւորութեան զարգացումը առանց կատարելութեան և առանց վախճանի լինել իբրև մի խաբուսիկ երևոյթ մեր աչքի առաջ: Անշուշտ, տիեզերական պատմութիւնը հաստատում է, որ աշխարհը պէտք է իր վախճանն ունենայ և ճշմարտութիւնն իր յաղթանակը տանի ու նպատակին հասնի: Պատմութիւնն էլ հասնում է իր վախճանին ու իր դատաստանն է անում ստութեան ու խաւարի դէմ. սակայն այդ վախճանն ու դատաստանն անում է միմիայն աշխարհի վերջում, երբ միայն ճշմարտութիւնն ու լոյսը պէտք է թագաւորի անվիճելի կերպով, որին և ձգտում ենք պատմական ամեն մի դատաստանի վիճելի կացութիւնից յուսահատելով: Ուստի և առաքեալները զգուշացնում են յուսահատողներին, յորդորելով, որ միշտ մտքում պահեն Քրիստոսի մօտալուտ գալուստը, իսկ այդ գալստեանն ակնառոյց և սակայն արդէն անհոգացած սպասողին յիշեցնում են դեռ աշխատել[1]:

Այս պարզ է, բայց ե՞րբ կը լինի այդ վախճանը: Թէև երկրաւոր արարածի համար այդ անորոշ է և հաւատացեալները չպէտք է ժամանակն ու ժամը իմանան[2], այսուհանդերձ աստուածային մարգարէութիւնները բաւական ակնարկներ են պարունակում, որով նրանք կարող են դատել ժամանակի նշանները և այդ վախճանին հասնելը նկատել[3]: Այդ նշանները ընդհանուր

[1] Ա Թես., Դ 15-18, Փիլ., Դ 6, Ա Կոր., ԺԶ 22, Ա Յովհ., Բ 18:
[2] Գործք., Ա 7, Մարկ., ԺԳ 32:
[3] Մատթ., ԺԶ 31, ԻԴ 32, 33:

պայմաններ են, որոնք նախագուշակներ են և դրանց հետ է կապած աշխարհի վախճանը: Իհարկէ այդ կախուած է Աստծու ամենակարող կամքից, բայց մարդիկ ևս իբրև նրա գործակիցներ՝ որոշ դեր են կատարում դրա նկատմամբ, նայելով, թէ որքա՞ն եռանդով ու շուտով կը տարածեն Աւետարանն ամբողջ աշխարհում[1]: «Եւ արքայութեան Աւետարանը քարոզուելու է բովանդակ տիեզերքով մէկ իբրև վկայութիւն բոլոր հեթանոսների, և յետոյ գալու է վախճանը»: Բոլոր հեթանոսների մէջ փրկութիւն մտցնելուց յետոյ Իսրայէլը ևս վերջին տեղը զբաղեցնելով՝ փրկուելու է, մինչդեռ սկզբում առաջինն է եղել (Հռոմ. , ԺԱ 25): Այսպէս պէտք է լինի, «որովհետև Աստուած կամենում է, որ բոլոր մարդիկ ապրեն և գան ճշմարտութեան իմացութեանն» ու Քրիստոսով փրկուեն[2]:

Սակայն ոչ մի յաղթանակ չի կարող արժանիք ունենալ, եթէ օրինաւոր պատերազմում չստացուի. յաղթանակն այնքան բարձր է, որքան հակառակորդը զօրեղ է, ուստի և խաւարի իշխանութիւնն աշխարհում դեռ պէտք է նախապէս զօրանայ, որպէսզի յաղթութիւնն իր վերջին կէտին հասնի: Եւ քանի որ մարդիկ դիւրութեամբ չեն ընդունում փրկութիւնը, Աստուած նրանց վրայ մոլորութիւններ է բերում՝ ստութեան վախճանն իրականացնելու ու նրա գարշութիւնը զգալի դարձնելու համար (Բ Թես., Բ 11): Մոլորութիւնը, խաւարը պէտք է կատարեալ դառնայ, որ երևայ նրա այլանդակութիւնը և անզօրութիւնը, զարգանայ իր բովանդակ ուժով և հասունանայ վերջին դատաստանի համար: Հաւատացեալների առաջ պէտք է լեռնանայ մեղքի աշխարհն իր

[1] Գործք., Ա 7, Մատթ., ԻԴ 14:
[2] Ա Տիմ., Բ 4, Բ Պետ., Գ 9, Գործք., Դ 12, Ա Յովհ., Բ 2. «Ժամանակ կայ, որ սերմանելու համար է, ժամանակ կայ՝ հնձելու համար, տակաւին սերմերը սերմանւում են, բոյսերը բուսնում, պտուղները հասունանում, նոր բաներ են ի յայտ գալիս, Հայրը գալիս է հաշտութեան համար, Որդին [գալիս է որպէս] աղաչող, Հոգին [որպէս] բարեխօս: Երբ բովանդակ աշխարհը սպառուի, այնժամ առանց մեր կանչելու Տէրն ինքնըստինքեան Իր Հայրենի սկզբնատիպ փառքով, Հոգին իր արարող զօրութեամբ, Հրեշտակների բազմութեամբ, անձեռագործ փողերի ձայներով երկնքից կիջնի երկիր, աթոռները կընկնեն, ատեանները կուղղուեն, գրքերը կը բացուեն, կենդանի ձայները կը հնչեն, երկինքները կը գալարուեն, լուսատուները վայր կը թափուեն, գետինը կը ցնցի, ժայռերը կը ճեղքուեն, գերեզմանները կաւերուեն, մեռելները յարութիւն կառնեն, այն ժամանակ մեր մէջ կերևայ նաև յարութիւն առած Ղազարոսը: Միախառնուած վերինններին ու ներքինները իրարից կը զատուեն, հաւատակիցները կը բաժանուեն, արդարների կողմը կը բարձրանայ Տիրոջ առջև, անմահ [հոգիների] անուշահոտ օդի վրայով, փափուկ և կակուղ գարշապարներով մարդիկ իրենց անտրոհելի, անբաժանելի կեանքով կը միաբանուեն հրեշտակների խմբերին» Մամբրէ Վերծանող[186*]:

ապականութեամբ թէ՛ ժողովրդի կեանքում ու քաղաքակրթութեան, թէ՛ երկրաւոր ձգտումների ու հոգսերի և թէ՛ կեղծ մարգարէութեան ու նեռի դիւականութեան մէջ: Եւ այս ամենի նկարագրութիւնն ունենք Քրիստոսի խօսքերի մէջ[1], մի նկարագրութիւն, որ դէպքերի մի շարք է կազմում և որի իւրաքանչիւր մի օղակը կարող է նաև մեր կեանքում իրականանալ, սակայն աշխարհի կատարածը կը լինի շարքի բոլոր մասերի միահամուռ աղէտով, երկրի ու երկնաւոր մարմինների հրկիզութեան բռնկմամբ հանդերձ (Բ Պետ., Գ 10): Ստութեան ու խաւարի վախճանը կը լինի եկեղեցու յաղթանակը փառաւորելու և ճշգրտելու համար, ըստ որում եկեղեցին այդ յաղթանակով իր նեղութեան վիճակից կը հասնի իր բարձրութեանը, ինչպէս սահմանուած է արդէն իսկ Քրիստոսի այդ յաղթանակի նախատիպար կեանքով: Ուրեմն այդ նեղութեան ու մոլորութեան բարձր զարգացումը պէտք է վրայ հասնի նախքան վախճանը, ըստ որում ոչ միայն մարմնաւոր նեղութիւններ և իրարանցումներ պէտք է լինեն (Մատթ., ԻԴ 7), այլև «բազում սուտ մարգարէներ պիտի բարձանան և շատերին պիտի մոլորեցնեն: Եւ անօրէնութիւնների բազմացման հետևանքով շատերի սէրը պիտի ցամաքի»: Այդ նեղութեան մէջ ոչ միայն հակառակութիւնը կը սաստկանայ քրիստոնէութեան դէմ, այլև նեռն է երևան գալու, ինչպէս ասացինք, որ մոռանալով և ուրանալով Աստծուն, նստելու է գահ, հպարտանալու և իր անձն Աստծու տեղ է դնելու[2]: Խաւարի ու մոլորեցուցչի այդ զօրացումն ու սոսկալի հակառակութիւնը ծայրայեղութեան է հասնելու, ինչպէս բանաստեղծական մարգարէութեամբ նկարագրուած է Յայտնութեան մէջ[3]: Եւ որովհետև հակառակութիւնը սաստկապէս լարուելու է, ընդհանուր նեղութիւն ու շփոթութիւն է տիրելու, և խաւարի պաշտպանները ձգտելու են Աստծու ընտրեալներին ճանապարհից ձգել, Քրիստոս ևս չի թողնելու, որ շատ երկար տևի այդ նեղութեան ժամանակը: Եւ երբ խաւարի մարդն իր բոլոր գործերով ամենաբարձր զարգացման հասնի, այն ժամանակ «կը տեսնեն Մարդու Որդուն եկած երկնքի ամպերի վրայ՝ զօրութեամբ

[1] Մատթ., ԻԴ, Մարկ., ԺԳ, Ղուկ., ԺԷ 21:
[2] Ա Յովհ., Բ 18, Բ Թես., Բ 3, 4, 9, 10:
[3] Յայտն., ԺԱ 7, ԺԲ 6, ԺԳ 7-11, Մատթ., ԻԴ 21-22:

և բազում փառքով»[1]: Եւ այդ ժամանակ նեռին «Տէր Յիսուս կը սատկեցնի իր Հոգու բերանով և Իր գալստեան յայտնութեամբ կը խափանի»[2]:

Սակայն Երկրորդականոն Յայտնութեան մէջ, որ ձգտում է մեր իմացութիւնից ու բնութիւնից դուրս հանդերձելն իր որոշ բնական կողմով հանդերձ բանաստեղծօրէն նկարագրել, յիշում է մի հազարամեակ, որում սատանան կապւում շղթայւում է և ապա Քրիստոս թագաւորում է այդ միջոցում իր յարուցեալ սուրբերի հետ (Յայտ. Ի): Այս յայտնապէս փոխաբերական խօսքերը սխալ հասկանալով՝ հին Հայրերից ոմանք[187*] կարծեցին, թէ այդ ժամանակ 12 առաքեալներն աթոռ պէտք է նստեն ու դատեն Իսրայէլի 12 ցեղերին, ըստ որում հեզերն էլ կը ժառանգեն երկիրը: Ապա վերստին կարձակւի սատանան, կը լինի վախճանը, Քրիստոսի գալուստն ու վերջին յաղթանակը[3]:

Այս հազարամեակի մասին արդէն իսկ հին ժամանակ զանազան կարծիքներ կային[4], որոնց բոլորի հիմունքը Քրիստոսի մարմնաւոր-նիւթական թագաւորութիւնն է հակառակ Աւետարանի քարոզութեան և համաձայն Հրեաների սպասածին: Ոմանք էլ հոգևորապէս միառժամանակեայ տիրապետութիւն են պատկերացնում աշխարհի վրայ, նախքան կատարածն իբրև մի երկրաւոր յաղթութիւն չարի ու սատանայի նկատմամբ: Ըստ այսմ հազարամեակը պէտք է լինի քրիստոնէութեան կատարեալ զարգացումն ու տիրապետութիւնն աշխարհի բոլոր կարողութիւնների վրայ, նախքան դատաստանը և ուրեմն մի տեսակ կիրակմուտ է կիրակիից առաջ: Սակայն որքան էլ այս կեղծ, անհիմն ու անհաւանական բացատրութիւնները ընդունելութիւն են գտնում բողոքականների մէջ, այնքան էլ նկատելի է դառնում հազարամեակի մասին եղած այդ կարծիքների անհիմն լինելը: Մենք գիտենք առաքեալի խօսքերից[5], որ հազար տարին խորհրդանշական իմաստ ունի և Աստծու համար ժամանակային սահմանափակում չկայ ու չի կարող լինել, որովհետև Աստուած մի օրում աւելի մեծ զարգացում ու յաղթանակ կարող է արձանագրել, քան մենք

[1] Մատթ., ԻԴ 30, Յայտ., ԺԹ 11:
[2] Բ Թես., Բ 8, Յայտ., ԺԹ 20, Ի 12:
[3] Տե՛ս Մատթ., ԺԹ 28, Ե 5, և Յայտնութեան մասին դատողութիւններ տե՛ս Հարց. 710-768:
[4] Տե՛ս Հարց., էջ 705, Ուռհ. պատմ. ԽԸ:
[5] Բ Պետ., Գ 8:

նախագծում ենք 1000 տարուայ համար, ինչպէս և ըստ Իր անհասանելի իմաստութեան յաճախ երկարաձգելով հասցնում է հազար տարիների այն, ինչ որ մենք մեր կարճամտութեամբ մի օրուայ կամ տարուայ համար ենք սահմանում: Այս լաւ չհասկանալով՝ մարդիկ շատ յաճախ ընկնում են սխալի մէջ՝ վերապահելով իրենց գերադասած նախագծերին մի առանձնակի շրջան ու թագաւորութիւն արդէն իսկ աշխարհի ընթացքում, որպիսի օրինակ են և ընկերպաշտական ու հասարակավարական ձգտումները:

Հայաստանեայց ս. Եկեղեցին չի ընդունում հազարամեակի այդպիսի թիւր գաղափարը, այլ մերժելով այդ սխալ ըմբռնումները, ճշմարտապէս վարդապետում է, որ **խորհրդանշական իմաստով հազարամեակ է կոչում Քրիստոսի առաջին գալստից մինչև երկրորդ գալուստը**, որի մէջ պէտք է լինի Աստծու արքայութեան կատարեալ իրականացումը: Այս անունն էլ ծագել է շաբաթուայ համեմատ ժամանակը եօթնեակի բաժանելուց, ըստ որում նախքան Քրիստոսի գալը վեցհազարեակ է կոչում, իսկ ապա՝ հազարամեակ[1]: «Մեծ պահքի այս վեց շաբաթները նշանակն են վեց հազար դարերի, քանզի այս եօթներորդ շաբաթը մեր բնութեան յարութիւնն ու դատաստանն [է ակնարկում], որի պատճառով և Երուսաղէմ գնալն ու քաղաքի դղրդիւնը մեռելների յարութիւնն է ցոյց տալիս, ինչպէս և Պասեքի շաբաթ օրուայ ճրագալոյցը՝ մեր Աստծու Քրիստոսի [յարութիւնը], որովհետև գիշերուայ յարութեան մասին է պատմում և դեռ յարութիւն չեղած գուշակում է յարութիւնը: Նմանապէս սրանով ցոյց է տալիս բոլոր մարդկանց յարութիւնը, որ լինում է կիրակի օրը»[188*]: Այսպէս է գրում ս. Մամբրէ Վերծանողը:

Ուրեմն Քրիստոս թոյլ տալով, որ աշխարհի վերջում չարիքը զօրանայ և նեռն իր ուժերի վերջին լարումն ունենայ, վերջնական յաղթութիւն է հաստատելու իր եկեղեցու մէջ, իր հաւատացեալների ձեռքով և ապա այդ վերջին փորձութեան բովով զտուած ու յաղթաբար դուրս ելած սուրբերին կը շնորհի վերջնական վախճանը: Այդ ժամանակ արդէն կատարեալ կը լինի յաղթանակը[2], որ մոլորութիւնների ժամանակ հակառակորդների աչքում անյուսալի էր համարւում. ամեն ոք կը տեսնի ճշմարտութեան բարձրացումը և շատերն էլ ծունր կիջնեն

[1] Տե՛ս օր. Ագաթ., Ղ, Հարց., էջ 706:
[2] Մատթ., ԻԷ 52, 53:

անմահ Թագաւորի առաջ, և կը յաղթանակի մեռելների յարութիւնը, որի սկիզբն արդէն եղել է Քրիստոսի յարութեամբ:

Այսպիսով մինչդեռ քրիստոնէական կեանքի ընթացքում Քրիստոս միշտ այցելել է Իր եկեղեցին, միշտ եկել է հակառակութիւնները վերացնելու և հաւատարիմներին զօրացնելու, թշնամիներին ջարդելու և իսկական հաւատացեալ զինուորներին առաջ մղելու համար, այդ ժամանակ Քրիստոս ոչ միայն հաւատացեալներին, այլ ընդհանուրին տեսանելի երևմամբ յանկարծակի կը գայ (Ա Թես., Ե 2): «Որովհետև ինչպէս կայծակը, որ դուրս է գալիս արևելքից և երևում մինչև արևմուտք, այնպէս պէտք է լինի Մարդու Որդու գալուստը»: «Յանկարծակի պիտի վրայ հասնի սատակումը» բոլոր արհամարհողների և ճշմարտութիւնն այպանող հակառակորդների վրայ: Երկինքն ու երկիրը զարհուրելի կը դառնան նրանց համար, ընդհանուր տագնապ և յուսահատութիւն կը տիրի անաստուածների վրայ և մինչդեռ ուրախութեամբ կը լցուն Քրիստոսի հաւատացեալներն ու հաճութեամբ կը սպասեն Նրա գալստեանը, կը գայ Քրիստոս և «մեծ փողով կուղարկի Իր հրեշտակներին և չորս կողմերից կը հաւաքեն Նրա ընտրեալները, երկնքի ծայրից մինչև նրա միւս ծայրը»[1]: Կենդանի հաւատացեալներն այդ ժամանակ կելնեն նրա դիմաց և մեռեալները յարութիւն կառնեն այդ տիեզերական մեծ յեղափոխութեան միջոցին: Եւ այս յաղթական աստուածային մեծ գործն այնպէս յանկարծակի կը լինի, որ ոչ մի կարգաւոր նկարագրութեան չի կարող ենթարկուել. և այս պատճառով Այգուցի կարգում աղօթում ենք առ Աստուած. «Եւ այժմ աղաչում ենք Քեզ. Տէր, մեզ՝ բոլոր Քեզ հաւատացողներիս, արժանի դարձրու այս անհաւոր և սոսկալի օրուան, այն տեսապէս տպաւորիր մեր աչքերի առջև, և մեր միտքն ու զգայանները պատսպարիր ամեն տեսակ զգայական և պատրանքային կենցաղավարութիւնից: Տէր, մեր աչքերի առջև պատկերիր Քո աներկբայ գալուստը»[2]:

[1] Մատթ., ԻԴ 27-31, Ա Թես., Ե 3, Ղուկ., ԻԱ 25, 26, Յայտ., ԻԲ 17, 20, Ա Թես., Դ 16, 17, Բ Պետ., Գ 10, Յայտ., Ի 21:
[2] Մաշտոց., էջ 580:

ԾԱ

ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական հաւատքի հիմնական դաւանանքների անմիջական հետևանքն է մեռելների յարութիւնը: Թէ՛ Քրիստոսի Աստուածութեան ու Մարդկութեան միութիւնը, թէ՛ քրիստոնէական աստուածպաշտութիւնը, թէ՛ Քրիստոսի փրկագործութիւնը, թէ՛ մկրտութեան ու հաղորդութեան ու թէ՛ ապաշխարութեան և առհասարակ քրիստոնէական եկեղեցու խորհուրդը պարզապէս ցոյց է տալիս, որ հաւատացեալներն ունեն հանդերձեալում մի նոր կեանք և երանութիւն: Թուելով այն բոլոր հիմունքները, որոնք հաստատում են մեռելների յարութիւնը, կունենանք հետևեալ ամփոփումները:

1- Մարդը ստեղծուած է ըստ Աստծու պատկերի և նրա էութիւնը ոչ միայն աստուածային հոգու նմանութիւնն է, այլև այն, որ նա Աստծու յարութիւնն ընդունող մի զգայարանք է: Եթէ ըստ համաստուածեանների Աստուած անձնաւորութիւն չէ, նրա ստեղծած մարդն էլ լոկ մի տեսակ անմահութիւն կունենար, հետևաբար այդ Աստուածը նրա վրայ ժամանակաւորապէս կազդէր: **Մինչդեռ քրիստոնէական Աստուածը անձ է և Նա Իր յայտնութիւնն ու հաղորդակցութիւնը կարող է տալ միմիայն Իր նման անձնաւորութեան.** իսկ մարդ այդպիսի անձնաւորութիւն չի լինի, եթէ անմահական չլինի և չլինի ըստ Աստծու պատկերի:

2- Աշխարհի ստեղծագործութեան ժամանակ մարդու երևան գալը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հանդերձեալ կատարելութեան մէջ յառնելու նախատիպը. ինչպէս հաստատուն է առաջինը, նոյնպէս հաստատուն է և երկրորդը. առաջինի կատարելութիւնն արդէն իսկ այն է, որ նրա մէջ ամփոփուած է հանդերձեալ կատարելութեան սաղմն ու պատկերը, կատարելութիւնն ու հաւաստին: «Ադամը, որ սերմանուած չէր, բուսնեց, որ յղացուած չէր, ծնուեց, այժմ նրա ծնունդները սերմանուած են և սպասում են անձրևի, և բուսնում են. անհաւասիկ հողը յղի է բազմութեամբ և մօտիկ է նրա ծննդեան ժամանակը»[1]:

[1] Զգօն. 160-161: Արարածական աշխարհի այդ նախատիպութեան մասին ս. Կիւրեղ Երուսաղէմացին ասում է. «Իսկ արդ, եթէ արմատից կտրուած ծառը միւս անգամ աճում և

3- Աստուած սէր լինելով՝ սիրոյ հաղորդակցութիւն ունի իր ստեղծած մարդու հետ. իսկ եթէ հաղորդութիւնը ժամանակաւոր և առանց ցանկութեան լինէր, նա չէր կարող իր յաւիտենական սիրուն մասնակից անել իր հաւատացեալներին կամ իր եկեղեցուն: Ուստի և երբ սադուկեցիները չէին ընդունում մեռելների յարութիւնը և մինչև անգամ ծաղր ու ծանակ էին շինում, Քրիստոս խստիւ յանդիմանեց այդ անհաւատներին՝ ասելով. «Եւ մեռելների Աստուածը չէ, այլ ողջերի, որովհետև բոլորը Նրա համար ողջ են» (Ղուկ., Ի 38): Աստծու առաջ ամենքը կենդանի են, մինչդեռ համաստուածների աստծու համար ամենքն էլ մեռեալ են ու մեռնում, անհետանում են:

4- Այսպէս կամեցաւ Աստուած ու տնօրինեց, ըստ որում ամբողջ աշխարհը մարդու համար ստեղծելով և նրանց կոչումը դարձնելով աստուածային կատարելութեան ձգտելը (Մատթ., Ե 48) իր նպատակն իրագործած չէր լինի, եթէ մարդկանց անցողիկ կեանք պարգևէր: **Մարդկանց կոչումն է առաջադիմութիւնը, իսկ առաջադիմութիւնը ոչինչ ու դատարկ կը լինէր նաև՝ աննպատակ, եթէ իր կատարելութիւնը չունենար և այս աշխարհի սահմանափակ դրութեան մէջ վերջանար:** Մարդկային լուսաւորութեանն ու առաջադիմութեանը հաւատացողն անհարժեշտապէս կը հաւատայ և այդ առաջադիմութեան կատարեալ պսակին:

ծաղկում է՝ մի՞թէ մարդը չի ծաղկելու միւս անգամ: Եւ սերմանուած սերմերը միւս անգամ՝ աճելով և հնձուելով պատրաստում են կալի և մեռած մարդը միւս անգամ չի՞ պատրաստուի կալի: Այգիներից և այլ ծառերից քաղուած կամ կտրուած ոստերը ուրիշ տեղ տնկուած լինելով՝ նորից աճում են միւս անգամ և մարդն այս բոլորով հանդերձ, եթէ հող մտնի, մի՞թէ չի կենդանանալու միւս անգամ: Այս բանը կշեռքի վրայ դիր և տես, թէ ո՞րն է մեծ. նոր ստեղծել ամենևին չստեղծուածին, թէ՞ ընկածին ու կործանուածին վերստին ձուլել և ստեղծել Նոր պատկեր: Եւ արդ, եթէ Աստուած իր շնչով է արարել մեզ՝ մի՞թէ չի կարող ստեղծուածին և ընկածին վերստին յարութիւն պարգևել: Որովհետև Աստուած գիտէր քո թերահաւատութիւնը, որի պատճառով ամենայն ինչի երևումով ամեն տարի վերյառնում պարգևեց, որպէսզի դու տեսնելով այս անշունչ և անմռունչ բաների վերյառնումը՝ հաւատաս շնչաւոր և բանական էակների յարութեանը: Եւ արդ, ջուրն ընկած և խեղդուած ճանճը կամ մեղուն քիչ ժամանակ անց ոգի ստանալով կենդանանում են, նաև տեսակ-տեսակ առնէտները ձմեռն անշարժ են, և գարնանը արթնանում են. այս չքոտիներով ձեզ առակաւոր օրինակ եմ մատուցում: Իսկ արդ, ով անմռունչ անասուններին և անարգ (չքոտիներին-ոչնչութիւններին) կենդանութիւն է պարգևում՝ մի՞թէ մեզ, յանուն որոնց ստեղծուած է այս բոլորը, առաւելագոյնս չի կենդանացնելու». Կոչումն ընծայութեան, էջ 353-354:

5- Փրկագործութիւնը բարու, ճշմարտի և արդարութեան յաղթանակն էր, որ ամենքի համոզմունքն է, սակայն այդ յաղթանակը երբեք չի կարող այս աշխարհում լրիւ լինել և իր էութեանը համապատասխանել: Հետևաբար, եթէ մեռելների յարութիւն չլինի, սուտ ու խաբուսիկ կը լինեն և այդ բոլոր հաւատալիքներն ու գաղափարները, հետևաբար և խաբւում են ճշմարտութեան նահատակներն ու վկաները. իսկ այդ պնդել, նոյն է, թէ նախընթաց երեք կէտերը մերժել: Բայց «Իր անձի յարութիւնը մեր ճշմարիտ յարութեան օրինակը դարձրեց»[1]:

6- Մեռելների յարութիւնը կազմում է կրօնի ու հաւատքի էութիւնը, և ժխտել առաջինը, նոյն է թէ ժխտել և երկրորդը և առհասարակ՝ մարդկային կեանքի մէջ ամեն տեսակ համոզմունք ու ճշմարտութիւն[2]: Ըստ որում ամենահին ազգերն անգամ առանձին հոգատարութեամբ պահպանում էին մարմինները և թանկագին նիւթերով զմռսելով՝ պատրաստ էին թողնում յարութեան համար, այլև իրենց յիշատակների գրութիւններով և արձաններով անմահացնում[3]: Այդպէս և արուեստն ու արձանագործութիւնը մի տեսակ նախաստուեր են յարութեան:

7- Յարութիւնը հաստատւում է նաև հոգու էութեամբ ու պարզութեամբ, որոնք բացատրուեցին[4], այլև հոգին իր ուժերն այս աշխարհում ծաւալել չկարողանալով՝ պէտք է վերջապէս հանդերձեալում ծաւալի և իր ինքնաբաւութիւնը գտնի՝ այսպէս ասած՝ վերջնականապէս ստրի ինքն իր կարողութիւններով, իբրև ճշմարիտ Աստծու պատկեր: **Մինչև անգամ նիւթապաշտական տեսութեամբ՝ մարդու գիտակցական ու բանական էութիւնն ու կեանքը չի կարող ոչնչանալ, որովհետև համաձայն նրանց ուսուցման հիմունքների՝ նիւթն ու իր յատկութիւնը յաւիտենական է:**

8- «Ով կարող է մէկ մեռեալի յարութիւն տալ՝ կարող է նաև՝ բոլոր ննջեցեալներին, ու եթէ այլոց մահը հալածեց՝ առաւել ևս ձերը [կը հալածի]», ասում է Մամբրէ Վերծանողը[189*], և քանի որ Քրիստոս շատերին յարութիւն տուեց

[1] Եզնիկ., 265, Եղիշէ. Գ:
[2] Եզնիկ., Դ 289-296:
[3] Տե՛ս Հերոդոտ., Դ 94:
[4] Տե՛ս վերը գլ. Ժ:

իր քարոզութեան ժամանակ, այդ ամենը երաշխաւորում է իւրաքանչիւր հաւատացեալի հանդերձեալ յարութիւնն ու կեանքը[1]:

9- Վերջապէս մահաքունը (լետարգիա), որ յայտնի էր ամենահին ժամանակներում ևս և տևում էր ամսից աւելի էլ, նոյնպէս այժմեան հնդկական ու չինական ձեռնածուների ամբողջ ամսով քնածութեան մէջ ընկնելը կամ ըստ նրանց և այժմեան բժշկական քնացումը մի-մի ստուերական ապացոյցներ ու հաւաստումներ են յարութեան կարելիութեան՝ թերահաւատ մարդկանց համար անգամ:

Քանի որ անհատի հանդերձեալ կեանքը նախապատրաստւում է այս աշխարհում իսկ՝ իր աշխատութեամբ ու գործերով, ուստի և յարութիւնը պէտք է լինի ոչ միայն հոգու, այլև՝ մարմնի: Ինչպէս որ առաջին Ադամի մեղանչումով մահաւան մատնուեցինք, այնպէս էլ երկրորդ Ադամի շնորհով յարութիւն կառնենք ու կեանք: «Մեղքի վայրը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ յաւիտենական կեանք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով» (Հռ., Զ 23, 10): Մահւամբ հոգին բաժանւում է մարմնից, որ հետևանք է Աստծու դէմ մեղանչելու, իսկ յարութեամբ միանում է հոգին մարմնի հետ, որ փոխադարձաբար հետևանք է Աստծու հետ՝ մարդու հաշտութեան Քրիստոսի փրկագործութեան շնորհով: Եւ ինչպէս որ Քրիստոս յարութիւն առաւ պայծառացած մարմնով իբրև անդրանիկ ի մեռելոց, այնպէս էլ բոլոր հաւատացեալները պէտք է յարութիւն առնեն մի այնպիսի հոգևոր մարմնով, որ իբրև Ս. Հոգու տաճար համապատասխանի իր գաղափարին[2]: Միայն թէ յարուցեալ մարմինն էապէս նոյնն է լինելու մեր այստեղ ունեցած մարմնի հետ, նոյնը և ոչ թէ տարբեր իր անհատականութեամբ է յառնելու՝ պայծառացած իր գերագոյն կերպաւորութեամբ: Եւ սա պարզ հետևանքն է հոգու ու մարմնի խորհրդաւոր միութեան, որովհետև ոչ ըստ հոգեպաշտների՝ մարմինը հոգու բանդն է և ոչ էլ ըստ բնապաշտների՝ անբաժանելի միութիւն ու գրեթէ նոյնութիւն, այլ խորհրդաւոր միութիւն է, որ չկայ կենդանիների ու բոյսերի մէջ

[1] «Երբ զէնքով զինավառածները պարգևներ են ակնկալում, սկզբից իրենց անձը նախապատրաստում են պատերազմի և մէկը չկայ, որ զինուոր լինի անիրաւ թագաւորի, որը չի հատուցի նրանց աշխատանքը, ովքեր սիրայօժար կը պատրաստուեն մեռնել յանուն նրա, այնպէս էլ բոլոր հոգիները, ովքեր չեն հաւատայ յարութեանը՝ կորստի կը մատնուեն...» Կոչումն ընծայութեան, էջ 349:
[2] Ա Կոր., ԺԵ 20, 21, 42-44:

միայն: Մարդու մարմինն իր հոգու զգայանքն է և հոգին նրա մէջ ազատապէս գործում է, թէ ըստինքեան տարբերելով նրանից և թէ յարաբերութեան մէջ անկախ ու միաժամանակ կախեալ ճանաչում: Իսկ այդպիսի մի հոգու համար առանձին և յարուցեալ վիճակ կատարելապէս հնարաւոր է: Նոյնիսկ կեանքում յաճախ զգում ենք այդպիսի վիճակ, չտարբերելով մեր մարմնում կամ նրանից դուրս լինելը, ինչպէս զգացել է և Պօղոս առաքեալը (Բ Կոր., ԺԲ 2-4): Այս յարութեան նման օրինակն է Քրիստոսի յարութեան ժամանակ եղած շատերի յարութիւնը, որի վերաբերեալ Ս. Եղիշէն ասում է. «Նմանութիւնն ու օրինակն էին յարութեան մեծ օրայ, ովքեր պէտք է յարութիւն չառնեն մէկ առ մէկ և ոչ էլ՝ մասնակի. այլ՝ բոլորը միանգամից, առանց թի և անւանակոչութեան»:

Քրիստոսով ենք փրկւելու և Քրիստոս է յաղթանակ տարել մահուան նկատմամբ և մեզ իր մարմնի անդամը դարձնելով՝ ձգում է իր մարմնի հետ դէպի կեանք: Նա նորոգեց մեզ, «որպէսզի առաջին ստեղծուածը, որ անապական էր. մեռելների հանդերձեալ յարութեան ժամանակ փառքով երևայ»[1]: Մարդ հող էր և հող է դառնում[2]. սակայն ինչպէս որ ցորենը սերմանուելով մեռնում է և ապա հասնում ու կենդանանում, այնպէս էլ մարդ մեռնելով սերմանւում է, որ յետոյ կենդանանայ[3]: «Այսպէս է նաև մեռելների յարութիւնը, սերմանւում է ապականութեամբ և յարութիւն առնում առանց ապականութեան. սերմանւում անարգութեամբ և յարութիւն առնում փառքով. սերմանւում տկարութեամբ և յարութիւն առնում զօրութեամբ. սերմանւում է շնչաւոր մարմին և յարութիւն առնում հոգևոր մարմին. եթէ կայ շնչաւոր մարմին, կայ նաև հոգևոր»[4]: Երկրաւոր կեանքում ուտում ենք Քրիստոսի մարմինն ու արիւնը, իսկ վերջում Քրիստոս յարութիւն շնորհելով մեզ, ինչպէս արեգակը՝ ցորենին, կերպարանակից է անելու մեզ Իր փառքին[5]: Սակայն յարութիւն առնելու են ոչ միայն արդարները, այլև

[1] Մաշտոց. 552:
[2] Ծննդոց., Գ 10:
[3] Յովհ., ԺԲ 24, Ա Կոր., ԺԵ 36:
[4] Ա Կոր., ԺԵ 36-40, Բ Կոր., Ե 1, Հարց. 720:
[5] Ա Կոր., ԺԵ 40, 49, Փիլ., Գ 21: Այդպէս ասում է և Այգուցի աղօթքի մէջ. «որովհետև Քո ամենակարող զօրութեամբ բոլոր արմատները պահում են եղեամով պատուած և ձիւնի տակ թաղուած, և հողի մէջ թաղուած սերմերը մեռնում են ու գարնանային որոտընդոստ վերյառնումի ժամանակ զարթնանալով պայծառանում են... Իսկ մենք՝ բանական կենդանիներս անկորուստ պահելով՝ Քո Աստուածութեան խնամածութեամբ

մեղաւորները[1] և «սուրբերը հագնելու են անստուեր լոյս»: Այս ճշմարտութեան երաշխիքն է ոչ միայն Քրիստոսի պայծառակերպութիւնը, Մովսէսի ու Եղիայի հետ նրա երևալը[2], այլև Նրա յարութիւնը: Եւ այդ առաւել ևս հաստատուն հաւատք է մեզ համար, որովհետև վայելում ենք ոչ թէ միայն Քրիստոսի խօսքերի կենդանարար ազդեցութիւնը, այլ նրա յարութեան շնորհները[3]: Առանց բացառութեան է այդ յարութիւնը, միայն թէ «ովքեր բարի գործեր են արել՝ կեանքի յարութեան համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի յարութեան համար»[4]: Այսինքն՝ Քրիստոսից կտրուած ամբարիշտ և անաստուած մարդիկ յառնելով՝ չեն վայելի Քրիստոսի հետ կապուած շնորհները, կերպարանակից չեն լինի Նրան, և ուրեմն չեն ստանայ Քրիստոսի պարգևած երանութեան պայծառացեալ մարմինը, այլ «տանջանք ու խաւար, որ Քրիստոս «որդ և հուր» է անւանում»[5]: Այլապէս ասած՝ «իւրաքանչիւր ոք իր մարմնով պիտի ընդունի այն, ինչ որ կատարել է՝ թէ՛ բարի և թէ՛ չար»[6]:

Բայց կը լինեն նաև կենդանի մարդիկ, որոնք և իբրև լոկ մարմին և արիւն չեն կարող Աստծու արքայութիւնը ժառանգել, իբրև երկրաւոր և ապականացու գոյութիւններ չեն կարող կապւել անապական բարիքի յաւիտենականութեան հետ[7]: Արքայութեան համար պէտք է մարդ նախ ապականութիւն և անմահութիւն ունենայ, ուստի և երբ մեռեալները յանկարծակի յառնեն առանց ապականութեան,

դարձեալ մեզ յարութիւն ես ընծայում հողից և նորոգում Քո փառքի պատկերով» Մաշտոց 576:
[1] Յովհ., Զ 39:
[2] Մատթ., ԺԷ 2:
[3] Մատթ., ԻԲ 31, Ղուկ., Թ 38, Յովհ., ԺԱ 24, Ա Կոր., ԺԵ, Ա Թես., Դ 12:
[4] Յովհ., Ե 28:
[5] Մարկ., Թ 44, տե՛ս նաև Ես., ԿԶ 24, Յաճախ., Ե 239-260, Հարց., 714, Հմմտ. Զգօն 134. «Ովքեր նորոգւում են՝ նրանք հագնում են երկնաւոր Ադամի մարմինը և լինում հոգևոր, իսկ ովքեր չեն նորոգւում՝ մնում են բնութեամբ շնչաւոր արարած հողեղէն Ադամի [նման] և մնում բուն սկզբի նման: Յետոյ երկնաւորները յափշտակւում են երկինք և Հոգին, որով զգեստաւորուած են, նրանց թոցնում է, և ժառանգում են արքայութիւն, որ նրանց համար պատրաստուած էր ի սկզբանէ և շնչաւորներն իրենց մարմնի ծանրութեան պատճառով մնում են այստեղ երկրի վրայ և նրանք վերադառնում են դէպի դժոխք. այնտեղ նրանց կը լինի լաց և ատամների կրճտոց» Տե՛ս Կոչ. ընծ. 364:
[6] Ս. Յովհ. Իմաստ. 93:
[7] Ա Կոր., ԺԵ 50-55:

այն ժամանակ և «մեք նորոգեսցուք», ասում է Պողոս առաքեալը: Այսպիսի նորոգութեամբ յաղթանակը կը պանծայ մահուան վրայ[1]:

Արարածական աշխարհն էլ ստեղծուել է զարգացման համար, որի առաջադիմութեան և բարձր բարգաւաճման օգտին աշխատելու տէր նշանակուեց մարդը, բայց մարդիկ չկարողացան սկզբից գործակից լինել Աստծու բարերար կամքին և անէծք և ապականութիւն բերին դրանց վրայ իրենց հետ: Քրիստոս վերացրեց այս ամենը՝ դնելով իր հաւատացեալներին ճշմարիտ ուղղութեան առաջադիմութեան վրայ և տալով նրանց վերջնական ազատութեան յոյս: «Քանզի գիտենք, որ բոլոր ստեղծուածները հեծեծում են և երկունքի ցաւի մէջ են մինչև այժմ»[2], և սպասում են, որ իրենք էլ վայելեն Աստծու որդիների փառաւոր ազատութեան պտուղները երկնքի ու երկրի պայծառացմամբ: Սրա երաշխիքն է այն մեծ քաղաքակրթութիւնն ու մշակումը, որ փայլում է քրիստոնեայ աշխարհում և որի կատարումն է այդ խոստումը: Այն ժամանակ այլևս չի լինի հանգիստ, առաջադիմական զարգացում, որ խանգարուեց մարդու մեղանչումով, այլ յանկարծակի ամենայն ինչ կընկնի ստեղծագործութեան սկզբում եղած դրութեան մէջ, «Հրավառ երկինքը պիտի չքանայ, և տարրերը հրկիզուելով պիտի հալչեն: Բայց մենք, Աստծու խոստման համաձայն, աչքներս յառած սպասում ենք նոր երկնքի և նոր երկրի, որոնցում արդարութիւնն է բնակւում»[3]: Ուրեմն, աշխարհը կը լուծի, կը մտնի մի նոր կարգի մէջ, և քանի որ մարդու մարմինը գլխաւորապէս ջրածնից, թթուածնից, բորակածնից ու քլորից է կազմուած և մահուան կամ ջերմութեան մէջ կամ բնալուծաբար կամ ջրում դրանք ցնդում են, այդ տիեզերական մեծ յեղափոխութեան ժամանակ՝ մարդկաբար դատելով՝ նոյն գազերը կը միանան աստուածային ազդմամբ և վերստին հոգևոր մարմին կը կազմեն, ըստ իւրաքանչիւր անհատականութեան:

Այսպիսի մի աղէտալի հարուածով ուրեմն, նորոգութեան մէջ կը մտնի ամբողջ մարդկային արարածական աշխարհը, դիմելով դէպի այն, որ Քրիստոս խոստացել է և հաստատուն աւետիք տուել ի պատիժ անհաւատների և ի բարեզարդութիւն հաւատացեալների: Եւ խոստացած այս փառքի երաշխիքն է

[1] Յաճախ., Զ 68-115, 156-180, 185:
[2] Հռոմ., Ը 22:
[3] Բ Պետ., Գ 12, Ես., ԿԵ 17, Յայտ., ԻԱ 1:

Քրիստոսի Աստուածութիւնն ու յիշեցուցիչ է Նրա յարութեան օրը՝ կիրակին կամ միաշաբաթը, ըստ որում և ս. Յովհան Իմաստասէրն ասում է. «Այսօր Քրիստոս խափանեց մահը՝ մեռելութիւնից դէպ իրեն բարձրացնելով մարդկային բնութիւնը: Սրանով նաև Հօրից առաքուած Սուրբ Հոգին մեզ անմերկանալի մխիթարութիւն հագցրեց: Ինչպէս նա խոստացել է, Յարութեան այս օրը լինելու է Քրիստոսի՝ երկրորդ անգամ աշխարհ գալով...»[1]:

ԾԲ

ԴԱՏԱՍՏԱՆ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՎԻՃԱԿ

Սովորական կեանքում մարդիկ դատաստանի առաջ քննւում են, որովհետև նրանց զանցառութիւնները կարող են զանազան աստիճաններ ունենալ, այն է՝ երբ անգիտութեան, բռնադատութեան և այլ նման վիճակներում են կատարւում: Իսկ վերջին դատաստանը կը լինի մարդկանց արդէն վճռականութեան հասած գործերի համար և կը կատարուի ոչ թէ հարց ու փորձով, քննութեամբ ու դատով, այլ այդտեղ երևան կը գայ այն ամենը, ինչ որ իւրաքանչիւր մարդ ինքն անձամբ արել է իր վրայ՝ Աստծու փրկագործութեան հանդէպ ցոյց տուած վերաբերմունքով: Քրիստոս եկել է ոչ թէ դատելու, այլ փրկելու համար և ուրեմն նրան հաւատացողը չի դատապարտուի, մինչդեռ չհաւատացողն «արդէն իսկ դատապարտուած է, որովհետև Աստծու Միածին Որդու անունը չհաւատաց: Եւ դատաստանն այսպէս իսկ է, որ լոյս աշխարհ եկաւ, սակայն մարդիկ խաւարն աւելի սիրեցին, քան լոյսը, որովհետև իրենց գործերը չար էին»[2]: Հետևաբար հաւատքը լինելով մարդու հոգու ճրագը վառողը, անհաւատը ոչ թէ լոյսով կը փայլի, այլ խաւարով կը մրկւի (խանձուել, կիսապայրուել) և արդէն իսկ այդ է, որ դատաստանի առաջ կը պարզի իւրաքանչիւրի ճշմարտութիւնն ու մեղաւորութիւնը: Եւ այս ակներև է, որովհետև Աստուած ամենագէտ լինելով՝ պէտք չունի հարցնելով իմանալու իւրաքանչիւր հոգու արժանաւորութիւնը, իսկ դատաստանի առաջ ներկայացող այլ անձինք ևս

[1] [Աւանեցի], Ճառք. 13, 16, 92, 93:
[2] Յովհ., Գ 18, 19, Ե 22:

կարևորութիւն չեն ունենայ դատողի խօսքերը լսելու, քանի որ նրա լուսաւոր կամ խաւար տեսքը յայտնի վկայութիւն կը լինի նրա արժանիքների:

«Ովքեր տեսնեն արդարներին՝ կը ճանաչեն նրանց և կասեն. սրանք են Աստծու օրհնեալ զաւակները», ասում է ս. Գրիգոր Լուսաւորիչը[1]: Քրիստոս յայտնելու է այդ դատաստանը նրանով, որ բաժանելու է արդարներին մեղաւորներից՝ հատուցելով «իւրաքանչիւր ըստ գործս իւր», վարձատրելով իր ճշմարիտ հաւատացեալներին ու պատժելով չհաւատացողներին և ապստամբներին[2]: Այդ բաժանումը Նա կը կատարի աստուածային զօրութեամբ, Իր հրեշտակներով ու սուրբերով, ըստ որում արդարներին ու մեղաւորներին կը ջոկի իրարից այնպէս, ինչպէս հովիւն առանձնացնում է ոչխարներին այծերից[3]. ոչխարներին աջակողմ, այսինքն՝ դէպ աստուածային փառքի լոյսն առաքելով, ուր նրանք դիմել են հաւատքով, իսկ այծերին՝ ձախակողմ, այսինքն՝ դէպի խաւար, ըստ իրենց աշխարհային տենչանքների: Այս բաժանման վիճակը լաւ ու հակիրճ նկարագրւած է թաղման կարգի մի սիրուն աղօթքի մէջ. «Ուրախանում են բարիները և ողբում չարերը, բերկրում են Քրիստոսի երկրպագուները և հառաչում ուրացողները: Պսակները յայտնւում են և կոյսերը խնդրում, առագաստը զարդարւում է, և իմաստուն կոյսերը պատրաստ մտնում են՝ ճրագները վառած: Իսկ յիմար կոյսերը թափուր մնացած, ճրագները՝ մարած, գլուխները՝ հակած, սրտները՝ տխրած, հոգիները՝ յուսահատ և տարակուսած, ովքեր հալածւում են Թագաւորի ձայնից, որ ասում է, թէ՝ «ձեզ չգիտեմ»: Ուրախանում են աջակողմեանները և լաց լինում ձախակողմեանները, Տիրոջ երեսից խայտում են ոչխարները և մերժւում այծերը»[4]: Այնուհետև մեր ժամանակի անցաւորութիւնը կը մտնի յաւիտենական յարատևութեան մէջ. հաւատացեալները լուսեղէն մարմնով՝ «աստուածեղէն բնութեանը հաղորդակից» կը լինեն[5]՝ հասնելով իրենց

[1] Մաշտոց 649:
[2] Մատթ., ԺԶ 27, Գործք., Ա 11, Յայտ., ԻԲ 12:
[3] Մատթ., ԺԳ 49, 50, ԺԹ 28, Ա Կոր., Զ 2, 3. «Որովհետև Արարչի կողմից զատորոշւում են ոչխարներն ու այծերը, և ձախակողմեաններն ամօթով են մնում, որովհետև բոլոր չար գործերը, որ նրանք արել են, կերպաւորւում են նրանց մէջ և յանդիմանում են նրանց Քրիստոսի աներեղ ատեանի առջև: Իսկ աջակողմեանները զարթ երեսով կանգնած են Քրիստոսի առջև՝ պարծենալով այն փառքով, որ ստացել են իրենց աշխատութեամբ» Մեկն. Ժամ., էջ 304:
[4] Մաշտոց 513, հմմտ. Ղազար Փարպ., էջ 387, 519:
[5] Մատթ., ԺԳ 43, ԺԵ 2, Բ Պետ., Ա 4:

ամենաբարձր զարգացմանը, որ է հաղորդութիւն Աստծու հետ: Իսկ ապստամբ մեղաւորները կը դատապարտւեն իրենց գահավիժումով, որ է բաժանում Աստծուց: Իսկ այսպիսի վիճակից ինքնըստինքեան հասկանալի կերպով հետևում է, թէ ի՞նչ կը լինի այդ երկու կարգի մարդկանց կեանքը:

Արդարների վիճակի մասին առաքեալն ասում է. «Ինչ որ աչքը չտեսաւ, և ականջը չլսեց և մարդու սիրտը չընկալաւ, Աստուած այն պատրաստեց իր սիրելիների համար»[1]: Նրանց բնակութեան տեղը պայծառացած է և աստուածային անանց լոյսով լուսաւորւած, որ է Երկնաւոր Երուսաղէմը կամ խաղաղութեան քաղաքը, որ պատրաստւած է Աստծուց և յատկացրած սուրբերին[2]: Այնտեղ են բազմաթիւ օթևանները, այնտեղ Քրիստոս իր հաւատացողներին իր եղբայրներն է դարձնում, որոնք Նրա հետ ժառանգում են աստուածային փառքի երանութիւնը[3]: Մինչդեռ մինչև այդ ժամանակ հաւատացեալները միայն հաւատում էին և հոգու տեսողութեամբ էին տեսնում Աստծու փառքը, այժմ անմիջապէս ներկայ են և նրանց հաւատքը դառնում է պարզ հայեցողութիւն ու նրանք տեսնում են Աստծու մեծութիւնը մշտապէս[4]: Վկայութեան խորանը կամ Աստծու տաճարն այստեղ յաւիտենականութիւն է ստանում և վերացնում է նրա երկրաւոր և յարաբերական անկատարելութիւնը. նրա մէջ միմիայն սրբութիւն է թագաւորում, որտեղ մարդիկ սուրբ կը լինեն և Աստուած միշտ նրանց մէջ: Այս կը լինի կատարեալ դրախտ, որտեղ փորձութեան ծառի փոխարէն կը լինի միմիայն կեանքի ծառը[5] և որտեղ չի լինի երկրաւոր ախտաւոր, այլ հրեշտակային անխախտ կեանք[6]:

Երկրորդ՝ այստեղ չկայ տրտմութիւն, այլ միայն ուրախութիւն. չկայ մահ, այլ՝ յաւիտենական կեանք Քրիստոսի անշիջանելի լոյսի տակ[7]: Նրա հաւատացեալներն անապական պայծառացած մարմին կը ստանան, և հրեշտակների պէս լինելով՝ կերպարանակից կը լինեն Իրեն. և եթէ մինչև այն

[1] Ա Կոր., Բ 9, Յաճ., Ի 71-90:
[2] Կող., Ա 12, Յայտ., ԻԱ 23, Եղիշէ 353-354, Գաղ., Դ 25, Եբր., ԺԲ 22, Յայտ., Գ 12, ԻԱ 2, 10:
[3] Յովհ., ԺԴ 2, Եբր., Բ 11, Հռ., Ը 17, Յովհ., ԺԷ:
[4] Ա Կոր., ԺԳ 12, Բ Կոր., Ե 7, Յովհ., ԺԴ 3, ԺԷ 24, Յայտ., ԻԲ 4, Եղիշէ 218:
[5] Ծննդ., Բ 9, Գ 22, Յայտ., ԻԲ 1, 2, Բ 7, ԻԲ 19:
[6] Ղուկ., Ի, 34-36, Ա Կոր., Զ 13-15, 50:
[7] Յակ., Ա 12, Հռ., Ը 17, Ա Պետ., Ա 4, Եբր., ԺԱ 10, Դան., ԺԲ 3:

ժամանակ հրեշտակներից զատ էին, այժմ կը համալրեն նրանց թիւն ու նրանց խմբի մէջ մի դաս կը կազմեն. Նրանք «անճառ լոյս են հագնում Քրիստոսից և [ստանում] անպատմելի, անանց կեանք», ասում է ս. Գրիգոր Լուսաւորիչը:

Երրորդ՝ մարդիկ երկրաւոր կեանքում ձգտում էին հետևել Քրիստոսին, որ ժառանգեն նրա բարիքները, իսկ հանդերձեալում այլևս ձգտում և աշխատանք չի լինի, այլ լինելով Քրիստոսի ուրախութեան մէջ, Քրիստոսի հետ կը վայելեն յաւիտենականութեան այն բոլոր բարիքները, երանութիւնն ու շնորհը, որոնց միայն շողերն են այստեղ մարդկանց բաշխւում երկրաւոր կեանքի անկատարութեան պատճառով[1]:

Վերջապէս նրանք Քրիստոսի եղբայրները դառնալով ուրախակիցներ, նրան աթոռակից կը լինեն ու մասնակից այն աստեղ դատաստանին, որ պէտք է պայթի ինքնակամութեամբ դատապարտուած անհաւատ և ամբարիշտ մարդկանց վրայ[2]: Ուրեմն Քրիստոսի ճշմարիտ հաւատացեալները յաւիտենականութեան մէջ կը վայելեն Քրիստոսի կատարեալ գործակցութիւնն ու աստուածային երանութիւնը: Ըստ որում աշխարհի վերահաս վախճանի ժամանակ կենդանի մնացած ճշմարիտ հաւատացեալներն էլ հաւատացեալների հետ «ամպերով օդում կը յափշտակւենք Տիրոջն ընդառաջ և այնպէս միշտ կը լինենք Տիրոջ հետ միասին»[3]:

Ս. Գրիգոր Լուսաւորիչը գեղեցկապէս նկարագրելով հաւատացեալների այդպէս առ Աստուած սլանալը (որոնք կը բարձրանան ու կը խառնւեն հրեշտակների խմբի մէջ, ինչպէս «լուսափետուր սպիտակակերպ երամ աղաւնեաց» և Քրիստոսի կերպարանքով զարդարուած)՝ աւելացնում է պատկերաւոր բացատրութեամբ[4]. «Արդ, վերին լուսեղէն զօրքերը զարմանալով կը հարցնեն, երբ տեսնեն մարմնաւոր սրբերի ստորին գնդերին, որ ներքևից թռչելով բարձրանում են վեր դէպի Տէրը. թէ ո՞վ են սրանք, որ ամպերի նման թռչելով ու ձագախառն աղաւնիների երամի նման գալիս են Տիրոջ մօտ: Ապա

[1] Մատթ., ԻԵ 21, Բ Կոր., Ե 16-18, Սաղմ., ԼԶ 11:
[2] Ղուկ., ԻԲ 30, Ա Կոր., Զ 2, Հարց. 738:
[3] Ա Թես., Դ 14-16, Ե 23, Կող., Ա 28, Եփ., Դ 13, Շարական, էջ 660, 550, 664, 665, Եղիշէ 274:
[4] Տե՛ս Մաշտոց 623:

Տիրոջից պատասխան կը լսեն, թէ սրանք են Ինձ յուսացողները. սրանց տանելու եմ Իմ սուրբ լեռան վրայ, և նրանց ուրախութիւն պիտի տամ Իմ տաճարում»:

Ի՞նչ կը լինի ապա դատապարտեալների վիճակը: Անշուշտ նրանց վիճակը երանելեաց վիճակի կատարեալ հակապատկերը կը լինի: Նրանց վիճակը կը լինի յաւիտենական մահ՝ զուրկ Աստծու տեսութիւնից[1]:

Երկրորդ՝ նրանց բնակութիւնը կը լինի արտաքին խաւարը՝ «ուր լալ աչաց է և կրճտել ատամանց» հոգևոր տանջանքի ծանրութեան պատճառով, որ նրանց մէջ անմահ որդերի և անշէջ կրակի ներքին տոչորմամբ վառւելու է իբրև գեհենի բորբոքւած կրակ[2]:

Եւ երրորդ՝ այդ յաւիտենական խաւարի ու տանջանքի մէջ կենակից կը լինեն այն չար ոգիներին, որոնց գործակից են եղել այս կեանքում և նրանց են ճանաչել իրենց առաջնորդ[3]:

Ուրեմն յաւիտենական տանջանքը կամ անէծքը բացասական ու դրական է. բացասականապէս մեղաւորները յաւիտեան մերժւելու են Աստծու երեսից և այն ամեն երանութիւններից, որոնք միայն Աստծու հաղորդակցութեամբ կարելի է վայելել. նրանք զրկւելու են լոյսի նշոյլից, ուրախութիւնից ու վայելքներից, զրկւելու են հաւատացեալների ու հրեշտակների ընկերութիւնից, կտրւելով սիրոյ որևիցէ բարիքից: Իսկ դրականապէս նրանք ընկնելու են կատարեալ տանջանքի կամ, ըստ հինգ զգայարանների, հրի, արտասուքի, կրճտոցների, խաւարի ու որթի անընկճելի խայթոցների տակ[4]՝ :մնալով դատապարտուած մարդկանց ու սատանայի անտանելի շրջանի մէջ և զուրկ մնալով նոյնիսկ այն բարիքներից, որոնք այս կեանքում վայելում են ամենաչար մարդիկ անգամ աստուածային ողորմածութեամբ:

Յաւիտենական այդ դատապարտութեան ապացոյցը տեսնում է իւրաքանչիւր մարդ իր խղճի վկայութեամբ, այլևս այս կեանքում փորձով իսկ համոզւում է, որ Աստծու արդարութեան օրէնքի հետևանքը ճշմարիտ հատուցումն է, և իւրաքանչիւր մարդ կենդանութեան աղբիւր Աստծու հետ լինելով՝ բնականօրէն վայելքների պէտք է հանդիպի, իսկ Նրանից հեռացողը

[1] Հռոմ., Բ 8, Զ 16, 21 23, Մատթ., Ե 20, ԻԵ 46:
[2] Մատթ., Ը 12, ԻԵ 30, Մարկ., Թ 42-44, Մատթ., Գ 12, Յայտ., ԺԴ 10, Ի 10, Եղիշէ 359:
[3] Մատթ., ԻԵ 41, Յայտ., Ի 10:
[4] Ս. Յովհան Իմաստասէր,էջ 14:

դատապարտութեան: Այստեղի վարձն ու պատիժը, ներքին խաղաղութիւնն ու երջանկութիւնը, տանջանքն ու անբախտութիւնը նախաստեր են և սկզբնաւորութիւն հանդերձեալ հատուցման, որի համեմատ և պէտք է վայելենք յաւիտենական կեանքի քաղցրութիւնը կամ դառնութիւնը կատարեալ չափով[1]:

Բայց ոչ միայն մեր խիղճը, այլև Աստծու օրէնքի վերաբերեալ դատողութիւնն ու մեր կեանքի փորձն է հաստատում հանդերձեալ կեանքի այդ վիճակը: Աշխարհի առաջադիմութիւնը ևս մի անշեղ ապացոյց է, որ նրա վախճանը պէտք է ամենայնի կատարելութիւնը լինի և ոչ թէ ետընթացը: Աստուածադիր օրէնքները տանում են աշխարհը առաջադիմական ընթացքով, որի մէջ այժմ դեռևս չար ու բարի կամքերի ընդհարումներն ենք տեսնում, մինչդեռ այն ժամանակ վերջնականապէս պէտք է հաւասարութիւնը տիրապետի և աստուածային վճիռն իրականանայ իբրև պսակ այդ ընթացքի:

Բնագիտական հետազօտութիւնները ևս անհրաժեշտապէս յանգում են այն եզրակացութեանը, որ ներկայ աշխարհն այս դրութեամբ յաւիտենական չէ, այլ վերջ ունի, և եթէ այդ վերջը յետադարձ հայացքով դատենք, կը յանգենք այն եզրակացութեանը, թէ աշխարհը վերստին պէտք է ընկնի իր ստեղծագործութեան ժամանակ եղած վիճակի մէջ և Աստծու անմիջական ներգործութեան տակ: Սակայն կեանքի փորձը և աշխարհի ընթացքը ցոյց են տալիս, որ առաջադիմութիւնը բնական է և անընկճելի, հետևաբար վերը[2] նկարագրուած տիեզերական մեծ յեղափոխութիւնից յետոյ աշխարհը հրով զտելով՝ մարդկային լուսեղէն երանութեան համեմատ կերպարանք կը ստանայ և կը լինի նոր երկիր ու նոր երկինք և «Աստուած ամենայն յամենայնի»[3]: Ուստի և ս. առաքեալը երաշխաւորում է այս վերջնական նորոգումը, ասելով. «Սիրելիներ, այժմ Աստծու որդիներ ենք, և դեռ յայտնի չէ, թէ ինչ ենք լինելու: Գիտենք, որ երբ նա յայտնուի, լինելու ենք Նրա նման, քանի որ Նրան տեսնելու ենք այնպէս, ինչպէս Նա կայ»[4]:

Բայց եթէ կամենանք վերջին այդ վիճակի յարացոյցը գտնել կամ տեսնել նաև մեր կեանքի առաջադիմական ընթացքի սկզբում իսկ, այդ ոչ թէ պէտք է

[1] Մատթ., ԻԵ 23:
[2] Տե՛ս գլուխ ԾԱ:
[3] Ես., ԿԵ 17-18, Եզնիկ 272:
[4] Ա Յովհ., Գ 2, Մատթ., ԺԹ 26, Ա Կոր., ԺԵ 22, 26-28, Եփես., Ա 10, Փիլ., Բ 10-11:

որոնենք անկեալ մարդկութեան մէջ, որ ժամանակաւոր յետադիմութիւն էր և ոչ աստուածադիր կարգ, այլ՝ ինչպէս ասացինք՝ պէտք է նկատենք արդէն Աստծու արարչագործութեան ընթացքի մէջ, առաջին մարդու օրերում: Առհասարակ, իւրաքանչիւր գործի ընթացքն այն ժամանակ է միայն որոշ ու երաշխաւորուած, երբ նրա գաղափարը կայ իր սկզբնառութեան մէջ: Աստծու մէջ էր և աշխարհի ընթացքի ու վախճանի գաղափարը, որ պէտք է մարդկային ազատակամութեամբ իրագործուէր[1]: Եթէ Ադամն իր կամքով հաւատարիմ մնար իր Ստեղծողին, նա պէտք է վայելէր այնպիսի երանութիւն, որ այլևս կասկածի տեղիք չտար իրեն շրջապատող իրականութիւնից տարբերելու հանդերձեալ կեանքի հաւատավաստակ փառքի կատարելութիւնը: Սակայն նա ընկաւ ինքնակամութեամբ և վերստին նոր ու ճշմարիտ ճանապարհի վրայ ոտք դնելու համար փրկչական ձեռքերի օգնութեանը կարօտեց: Այժմ ընթանում ենք Փրկչական նոր ճանապարհով և հաւատքի զարդարանքով դիմում ենք դէպի փառքի պսակը: Մենք Քրիստոսով կը հասնենք այդ նոր դրախտային փառքին, որից սակայն ընկնելու երկրաւոր փորձութիւն չենք տեսնի: «Նրանով եղանք և Նրանով փրկուեցինք և դէպի Նա պիտի գնանք»[2], ասում է Ս. Գրիգոր Լուսաւորիչը:

ՎԵՐՋ

[1] Տե՛ս վերը գլուխ ԺԳ և ԺՋ:
[2] Յաճախ., Ժ 493, Եղիշէ 78:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ագաթ= Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատ. Գ. Տէր-Մկրտչեան, Ստ. Կանայեանց, Տփխիս, 1909:

«Գանձասար» Ա-Զ= «Գանձասար»: Աստուածաբանական հանդէս, Ա 1992, Բ 1992, Գ 1993, Ե 1994, Զ 1996:

Գիրք թղթոց= Գիրք թղթոց, խմբ. Ն. Արք. Պողարեան. Երուսաղէմ, 1994:

Դրուագներ= Յակոբ Քիւսէեան, Դրուագներ հայ միջնադարեան արուեստի աստուածաբանութեան, Ս. Էջմիածին, 1995:

Կանոնագիրք Ա, Բ= Կանոնագիրք Հայոց, աշխատ. Վազգէն Յակոբեանի, Հտ. Ա, Երևան, 1964, Հտ. Բ, Երևան, 1971:

Յաճախապատում= «Սրբոյ հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում Ճառք լուսաւորք» աշխատ. Ա. Տէր-Միքէլեանի, Ս. Էջմիածին, 1894:

ՄՄ= Մաշտոցի անուան Մատենադարան

Մանդակունի= «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի ճառք», Բ տպ. Վենետիկ, 1860:

Նարեկ= Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան աշխատ. Պ. Մ. Խաչատրեանի, Ա. Ա. Ղազինեանի, Եր., 1985:

Աւձնեցի= Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:

ԱՌԱՋԱԲԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1* Քաղւած է. Յաճախապատում, էջ 22 (Ճառ Գ):

2* Հանգանակներ տե՛ս «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց՝ աշխատասիրութեամբ

Մսերայ վարժապետի Գրիգորեան Զմիւռնացւոյ», Մոսկւա, 1850, էջ ԺԷ-ԽԸ: Նրանց համադիր մանրամասն քննութիւնն իրականացւած է հետևեալ աշխատութիւնների մէջ. Յ. վրդ. Գաթրճեան, Հանգանակ հաւատոյ, որով վարի Հայաստանեայց եկեղեցի, Վիեննա, 1891: Ծ. արք. Ահեմեան, Հանգանակ հաւատոյ, Դաւանութիւն հայ եկեղեցւոյ. Ս. Էջմիածին, 2001:

3* Կեպլերեան վկայութիւնն ամենայն հաւանականութեամբ բերւած է Göthe's sämmtliche Werke, Leipzig (Reclam jun) III հրատակութեան միջնորդութեամբ. Հմմտ Ա. Տէր-Միքէլեան, Աստուածաբանական գիտութիւնները, «Արարատ», 1893, էջ 491:

4* Այս միտքը յատկանշօրէն համաձայնում է Տերտուղիանոսի (շուրջ 160-220) «Հոգին իր բնոյթով քրիստոնեայ է» ջատագովական բացարձակաբանութեանը. "Богословские труды", сб. 25, с. 219:

5* Ներհայեցողական ճանապարհով աստուածային յայտնութեանը հաղորդակից լինելու վերաբերեալ այս տեսակէտը համերաշխ է վաղ հայրախօսական աստուածաբանութեանը: Այսպէս Տերտուղիանոսը "De testimonio cenimae" երկում (II) գրում է. «Թող մարդ սկսի ունկնդիր լինել իր հոգու ձայնին, և այնժամ ճշմարիտ Աստուածը նրան անծանօթ չի լինի»: Մարդ Աստծուն ճանաչում է իր սեփական հոգու ինքնեկ պահանջով. տե՛ս "Богословские труды", сб. 25, с. 219:

6* Հմմտ. В. С. Нерсесяну, Сократ, М, 1980, с. 12-22:

7* Վկայութիւնը քաղւած է Թէոփիլոս Անտիոքացու «Առ Աւտոլիկոս» երկից (180թ.). Գիրք Ա, 2. տե՛ս Антология. Ранние отцы церкви, Брюсель, 1988, с. 458:

8* Միտքը քաղւած է Ժան Ժակ Ռուսսոյի 1762թ. հեղինակած «Էմիլ կամ դաստիարակութեան մասին» նշանաւոր երկից (СПБ. 1912 с. 265-278, 298-309):

9* Աստուածճանաչողութիւնը մասնայատուկ տեղ է զբաղեցնում քրիստոնէական մտքի պատմութեան մէջ: Եկեղեցու շատ հայրեր իրենց երկերում ուղղակի կամ անուղղակի կերպով անդրադարձել են այդ կարևորագոյն իրողութեանը. այդ մասին մանրամասն տե՛ս В. Д. Сарычев, Святоотеческое учение о Богопознании, "Богословские труды", сб. 3, с. 34-63: Епископ Паргев. Богопознание, Степанакерт, 1991.

10* Այս կապակցութեամբ բնութագրական է Danie'lu-ի հետևեալ միտքը. «Աւելի վտանգաւոր բան չկայ, երբ կրօնը յաւակնում է ընթանալ առանց բանականութեան: Այն հասցնում է ֆանատիզմի, պատրանքայնութեան, խաւարամոլութեան, որից ծնւում է սնահաւատութիւն: Այսօրինակ հաւատքը պէտք է ունենայ բանականութեան փորձառութիւնը» J Danie'lu, Dieu et nous, P., 1956, ըստ "Λογος" պարբերականի (1971, № 9 c. 25-26):

11* Զանազան ժողովուրդների մէջ կրօնական բնազդի առկայութեան, նրա բազմակերպ առանձնայատկութիւնների մասին հանգամանալից տե՛ս Буше-Леклерк, Философия, христианство, фатализм и ведовство, Киев, 1889, В. Джемс, Многообразие религиозного опыта, М, 1910:

12* Հակառակ (նիւթապաշտական իմաստով ընկալուած) առասպելի մէջ առկայ կրօնական որոշ տարրերի, բոլոր առասպելները չեն, որ ունեցել են կրօնական բովանդակութիւն. տե՛ս М. И. Шахнович, Первобытное мифология и философия, Л., 1971, с. 15-24, նաև՝ А. Н. Чанышев, Эгейская предфилософия, М., 1971, Ф. Х. Кессиди, От мифа к Логосу, М., 1972: А. Ф. Лосев, Диалектика мифа, տես հեղինակի Философия, мифология, культура, М., 1991, с. 21-186.

13* Մարդու կրօնական բնէութեան մասին համակողմանիօրէն խօսւում է Պ. Ֆլորենսկու (1882-1937) դասախօսութիւններից մէկում. П. Флоренский, Общечеловеческие корни идеализма, Сергиев Посад, 1909:

14* Հեղինակի այս միտքը համերաշխ է Շուէյցարացի խոշոր աստուածաբան Կ. Բարտի (1886-1968)՝ մասնաւորաբար «Թուղթ առ Հռոմայեցիս» (1921) երկում արտայայտուած այն տեսակէտին, թէ քրիստոնէական հաւատը չի կարող հիմնաւորուել արտաքին ազդակներով, բանականութեամբ, փիլիսոփայական, գիտական փաստարկներով: Այդ հաւատքը ծնւում է «Աստծու հետ ներքին, անմիջական հանդիպումից», երբ Աստուած հանդիպում է ինձ. իմ գոյութեան մէջ: Ճշմարիտ կրօնն ըստ Բարտի, յայտնութեան կրօնն է:

15* Կրօնի յայտնութենական ծագման, մարդու մէջ կրօնական բնազդի նախնականութեան, վերփորձառական բնոյթի մասին տե՛ս Э. Светлов, Истоки религии, Брюссель, 1970:

16* Հեղինակը նկատի ունի հասարակական յարաբերութիւնների ծայրայեղ սրման, հեթանոսական կրօնների ինքնասպառման հետևանքով քրիստոնէութեան, իբրև դրական կրօնի յայտնութեան իրողութիւնը, ինչը պէտք է հետագայի պատմագիտութեան մէջ մասնաւոր քննութեան նիւթ դառնար. Г. Буассье, Конец язычества, пер. М. С. Корелина, М., 1892, В. Плотников, История христианского просвещения в его отношениях к древней греко-римской образованности. Период первый. От начало христианства до Костантина Великого, Казань, 1885, А А. Спасский, Эллинизм и христианство: История литературно-религиозный полемики между эллинизмом и христианством за раннейший период христианской истории (150-254), Сергиев Посад, 1913, Е. М. Штаерман, Кризис античной культуры, М., 1975, С. Л. Утченко, Древний Рим: События, Люди, Идеи, М., 1969, М. М. Кубланов, Возникновение христианства: Эпоха, Идеи, Искания. М., 1974:

17* Քրիստոնէութեան համատիեզերական փրկագործող դերի մասին հեղինակի տեսալ նկատումն այսօր համերաշխւում է Կ. Բարտի այն տեսակէտի հետ, ըստ որի սկզբունքային տարբերութիւն կայ ճգնաժամային դարաշրջանների ծնունդ կրօնների և «աստուածաշնչական վարդապետութեան ամբողջական ոգին» ներկայացնող կրօնի միջև. Э. Светлов, Магизм и единобожие, Брюссель, 1970, с. 9: Այս կապակցութեամբ նոյնքան բնութագրական են Կ. Յասպերսի (1883-1969) հետևեալ տողերը. «Քրիստոնէութիւնն, անշուշտ, պատրաստ է ճանաչել միւս բոլոր կրօնները և նրանց ճշմարտացիութիւնը, բայց միայն իբրև մասնակի ճշմարտութիւններ: Որպէս այդպիսիք նրանք պէտք է միաւորեն քրիստոնէութեանը՝ թօթափելով իրենց յատուկ ոչ ճշմարիտ բովանդակութիւնը... Մարդն իբրև մարդ արդէն քրիստոնեայ է - anima naturaliter christiana, նա միայն պէտք է հասկանայ և ճանաչի իրեն իբրև այդպիսին» K. Jaspers, Von der Wahrheit, München, 1958, S. 835, յղումն ըստ А. Н. Тупсина, Философия религии К. Ясперса, Л., 1982, с. 74:

18* Ըստ 1977թ. տեսալների, մօտաւոր հաշուումներով միայն Աֆրիկայում մուհամեդականների թիւը կազմում էր 41.17 միլ. մարդ, իսկ քրիստոնեաներինը 28.88, միլ. (Г. А. Шпажников, Религии стран Африки, Справочник, М., 1981, с.

305): Ի դ. 70-ական թթ. 800 միլ. մուհամեդական էր բնակվում աշխարհի 53 երկրներում. տեղեկությունն ըստ. V. Weekes, Muslim Peoples. A World Ethnographical Sarvey. Westport, Connecticut, London, 1, 1978, p. 499, 528, 535:

19* Աշխարհի ծագման վերաբերեալ Անտիկ փիլիսոփաների հայեացքների մանրակրկիտ քննությունը տե՛ս П. Таннери, Первые шаги древнегреческой науки, СПБ., 1902, Даннеман, История естествознания, т. 1, М., 1932, И. Д. Рожанский, Анаксагор. У источников античной науки, М., 1972, с. 196-198, նույն հեղինակի. Развитие естествознания в эпоху античности. Ранняя греческая наука "О природе", М., 1979:

20* Թալեսի, Դեմոկրիտի, Էպիկուրի, ստոյիկների բնափիլիսոփայական խորհրդածությունները ցրված են տարբեր աղբիւրներում: Դրանք հաւաքված և արժեւորված են հետևեալ աշխատություններում. П. Таннери, Первые шаги...: С. Я. Лурье, Теория бесконечно малых у древних атомистов, М. Л. 1935, նույն հեղինակի Демокрит, Тексты, перевод, исследования, Л., 1970, M. L. West, Early Greek Philosophy and the Orient, Oxford, 1971, W. Jaeger, The Theology of Early Greek Philosopers, Oxford, 1967:

21* Այստեղ ակնայայտորէն չափազանցված է Էպիկուրի (341-270թ. Ն. Ք.) դաւանած հաճույքի փիլիսոփայությունը, որ շարադրված է նրա Մենեքէին յղած նամակի մէջ: Հաճույքի իբրև հոգևոր կեանքի նպատակի վերաբերեալ նրա գաղափարները հետագայում նենգափոխելով մեկնաբանել են իբրև լոկ մարմնական, եսակենտրոն հաճույք վայելելու քարոզ: Ուստի պատահական չէ, որ Ուշ անտիկ շրջանի և միջնադարի քրիստոնեայ մատենագիրները ժխտական վերապահությամբ են ընդունել Էպիկուրին: Դանթէի «Աստուածային կատակերգության» մէջ Էպիկուրը զետեղված է դժոխքի 6-րդ պարունակում հերետիկոսների հետ միասին (Դժոխք X, 14):

22* Կանտ-Լապլասեան համակարգի էությունը հետևեալն է. համաձայն Կանտի (Allgemeine Naturgeschichte and Theorie des Himmels, 1755= «Երկնքի բնապատմությունն...»), աշխարհը գոյացել է նախնական միգամածությունից, որի առաւել ծանր զանգվածը ձգում է համեմատաբար թեթևին: Սրա հետևանքով տեղ-տեղ առաջանում են ձգողականության կենտրոններ, ամբողջ միգամածությունը բաժանվում է մասերի, գնդաձև, առաւել սեղմ ու խիտ

կուտակումներից գոյանում են ապագայ աստղերը: Իւրաքանչիւր աստղային միգամածության մէջ ի յայտ են գալիս կենտրոնացված կուտակումներ. մասնիկները, ձգտելով կենտրոն, ընդհարվում են, որի ընթացքում նրանց մի մասը յայտնվում է կենտրոնում, միւսը ստանում է եզրային շարժում: Պատահականօրէն տեղի է ունենում շարժման գերակշիռ մասի կուտակում մի կողմի վրայ, և ինչպէս կենտրոնական մաս միտող, այնպէս էլ միգամածության մէջ հաւասարակշռված վիճակում գտնվող մասնիկները ստանում են բովանդակ զանգվածի համար յատուկ պտույտի շարժում: Պտույտի հետևանքով միգամածությունը տափակում է և Արևի վրայ չընկած մասնիկները սկսում են խմբաւորվել տեղական, պատահական ձգողական կենտրոնների շուրջը, որի հետևանքով և գոյանում են մոլորակները: Մինչդեռ Լապլասի վարկածի համաձայն բացակայում է միգամածության աստիճանական կրճատումն ու սղակների զատումը: Մասնաւորաբար Լապլաս-Ռոշի վարկածը ոչ թէ աստղային աշխարհներին է վերաբերում, այլ՝ բացառապէս արեգակնային համակարգությունը: Նախնական միգամածությունը Արևի գազակերպ շիկացած մթնոլորտն է, որը գտնվում էր մեր համակարգից շատ հեռու: Միգամածության պարբերական սառեցման և խտացման հետևանքով գոյանում են օղականման զանգվածներ, որոնք և կազմում են ապագայ մոլորակների բաղադրությունը:

23* «Յաւիտենական նիւթ»-ով հեղինակն ակնարկում է ռումինացի մատերիալիստ փիլիսոփայ Վասիլէ Կոնտի (1845-1882) իմաստասիրական գլխաւոր հիմնադրույթը, ըստ որի անսահման նիւթը յաւիտենապէս զարգանում է տարածության և ժամանակի մէջ:

24* Ուժի պահպանության օրէնքը, ըստ որի ուժը փոխակերպվելով չի կորչում և չի գոյանում վերստին, բացայայտված է ԺԹ դարի կէսերին Ռ. Մայերի, Ջ. Ջոուլի, Հելմհոլցի և այլոց ջանքերով:

25* Անհրաժեշտության հակոտնեան հանդիսացող (բայց նրա հետ օրինաչափօրէն կապված) և աշխարհի գոյաւորումն առթող պատահական յարաբերությունները, որոնցում բացակայում է պատճառի գաղափարը, յատկորոշվում են անկայուն, ժամանակաւոր բնույթով, ժամանակի և տարածքի մէջ առաջացման անորոշությամբ, անկանխատեսելի պայմանների ծնունդով: Չկարողանալով յաղթահարել անհրաժեշտության և պատահականության

հակասությունը՝ բնազանցական միտքը հանգում է կամ ճակատագրապաշտության (ֆատալիզմ), որի պարագային իրաքանչիր իրադարձությունն կանխորոշված է, կամ ռելատիվիզմի, երբ իրադարձությունները ի վերջոյ վերածվում են պատահականությունների քաոսի: «Իմաստուն պատահականության» փիլիսոփայական «հիմնավորումը» տրված է Դեմոկրիտի, Սպինոզայի, Հոլբախի, Բիխնէրի կողմից. տե՛ս Философ. энц., т. 5, М., 1970, с. 33-34:

26* Շարժումն իբրև նիւթի գոյակերպ հանգամանալից հետազոտված է արդի բնագիտության կողմից: Սակայն այդ հետազոտությունը բնականաբար փաստագրությունից այն կողմ չի անցնում: Այս մասին եղած ընդարձակ գրականություն տե՛ս Философ. энц., т. 1, М., 1960, с. 433-438:

27* Բնագիտության կարևորագոյն հարցերի առջև նիւթապաշտական (մատերիալիստական) փիլիսոփայության և բնագիտության անկարողությունն արձանագրված է մերօրեայ բնագիտության և աստուածաբանության մէջ նմանապէս: Այսպէս, ամերիկեան նշանաւոր կենսաբան Սիմպսոնն ասում է. «Հնարաւոր է, որ ինչ-որ մէկի կողմից սկիզբն է դրված (էոլիւցիոն) ընթացքի, և հիմնակարգուել են բնական օրէնքները, որոնցով այն ընթանում է և որ այդ նոյն ծրագիրը կեանքի կոչող մեքենայական միջոցն անհարժեշտ է նկատել իբրև ինչ-որ ծրագրաւորող սկզբի զինամիջոց, բայց գիտնականի խնդրի մէջ չի մտնում խօսել գիտության սահմանից դուրս գտնուող այդ հարցերի մասին» (Fr. Rauh, Der Glaube und die Naturwissenschaften – "Universitas", 1976, H. 6, S. 618): Անդրադառնալով այս խնդրին Föhr-ը իր «Բնագիտական հայեացք աշխարհի վրայ և քրիստոնէական հաւատք» մեծարժէք աշխատության մէջ ամենայն իրաւամբ արձանագրում է. «Բնագիտօրէն հիմնաւորված նիւթապաշտությունը մեռած է». E. Föhr, Naturwissenschaftliche Weltsicht und christliche Gaube, Freiburg-Basel-Wien, 1976, S. 300:

28* Պարմենիդէսի համաստուածեան իմաստասիրության մասին տե՛ս Рожанский, Развитие естествознания... с. 192-199, 312-314:

29* «Բացարձակ» բնորոշումով հեղինակը նկատի ունի Հեգէլի (1770-1831) փիլիսոփայության մէջ հանդէս եկող համաշխարհային բանականությունը կամ բացարձակ ոգին, Ֆիխտէի (1762-1814) մօտ՝ «Ես»-ը, Շոպէնհաւերի (1788-

1860) մօտ՝ կամքը, Հերակլիտի (Դ դ. Ն. Ք.), Զէնոնի (480-430թ. Ն. Ք.), Նիկողայոս Կուզանացու (1401-1464), Զորդանոյ Բրունոյի (1548-1600) և այլոց մօտ «հակադրությունների միությունը»:

30* Տե՛ս Сенека, Нравственные письма к Луцилию, М., 1977:

31* Հեղինակն ակնարկում է Անաքսագորասի հետևեալ միտքը «Քանզի նա (Բանականությունը=Նուսը), որ բոլոր իրերից թեթևագոյնն ու մաքրագոյնն է, իր մէջ բովանդակում է լիակատար գիտելիք ամենայն ինչի մասին և ունի մեծագոյն հզորություն: Բանականությունն իշխում է ամեն ինչի վրայ, որ ունի հոգի՝ թէ՛ մեծի և թէ՛ փոքրի: Բանականությունը իշխում է համընդհանուր պտոյտի վրայ, քանզի նա է սկզբնաւորել այդ շարժումը», տե՛ս Рожанский, նշ. աշխ., с. 217-218:

32* Այս մասին տե՛ս А. Н. Кочетов, Буддизм, М., 1983:

33* Դէպի Աստուածություն առաջնորդող ագնոստիցիզմի այս հանգամանքը նկատի ունենալով Աուրել Ֆոն Յուհէնը գրում է. «Մինչդեռ անցեալ դարի բնագիտությունը համոզված էր, որ ինքը կարող է տալ աշխարհի պատկերը, մինչդեռ անցեալ հարիւրամեակի ֆիլոգենետիկան հաւատացած էր, որ նա ի զօրու է ցոյց տալ մարդու զարգացումը, արդի ֆիզիկան սահմանափակւում է լոկ մեր կողմը շրջված բնության փորձարարական չափագրությամբ, իսկ ֆիլոգենետիկան բաւարարւում է նրանով, որ նկարագրում է միլիոնաւոր տարիների ընթացքում տեղի ունեցող կենդանի ձևերի անդամների հերթագայությունը: Բնագէտը զգուշանում է պատասխանել, թէ ինչ ծագում ունեն տիեզերքի երևոյթները». տե՛ս "Наука и теология в XX веке", М., 1972, с. 160:

34* Ժամանակ էր պէտք, որ կրօնի նկատմամբ գիտության, իմաստասիրության քամահրական, ժխտողական վերաբերմունքը, որ սրուեց ԺԹ դարում և տևեց մինչև Ի դարակէս, տասնամեակների ընթացքում աստիճանաբար մեղմանար, ինչը պէտք է իրաւունք տար գերմանացի աստուածաբան Ե. Ֆերին գրելու. «Հարիւր տարի առաջ բնագիտությունն ու փիլիսոփայությունը հակադրւում էին հաւատին և մերժում այն: Բայց այս վերջին 50 տարիների ընթացքում իրավիճակը զգալիօրէն փոխուել է: Գիտությունն այժմ սովորել է յարգել իր իրազեկության սահմանները: Գիտնականները

խորասուզեցին իրենց բնագաւառի մէջ, ի յայտ եկան նորանոր առաւել մեծ առեղծուածներ, զգուշաւոր անաչառութիւն որդեգրած հետազօտողները աւելի յաճախ հասկացան, որ առանց Աստծու չի կարելի բացատրել արարչութիւնն ու կեանքը: Բնագէտների մեծ մասն այժմ դաւանում է Արարչին, խոշոր բնագէտներն այլևս մարտական կեցուածք չունեն աստուածաբանութեան նկատմամբ, այլ ձգտում են գիտական շփումներ ունենալ նրա հետ: Այսպիսով, այսօր հնչեց Աստծու բնական յայտնութեան ժամը». E. Föhr, Naturwissenschaftliche Weltsicht und christlicher Geaube, Das moderne Weltbild, Freiburg, 1976, S. 4-5: Արձանագրելով «հոգևոր դիֆուզիայի օրէնքով» հաստատագրած կրօնի և գիտութեան միասնութեան իրողութիւնը (Н. И. Боголюбский, Богословие апологетических чтениях, М., 1915, с. 25)՝ Թէյար դէ Շարդէնը ասում է. «Կրօնը և գիտութիւնը դրսևորում են նոյն և մէկ լիարժէք իմացութեան երկու անտրոհելի կողմերը կամ փուլերը, իմացութիւն, որ կարող է միայն ինքը ընդգրկել զարգացման անցեալն ու ապագան, որպէսզի դրանք վերլուծի, չափի և աւարտի». Т. Тейяр де Шарден, Феномен человека, М., 1965, с. 279:

35* Այս կապակցութեամբ E. Föhr-ը սահմանազատելով բնագիտութեան և աստուածաբանութեան ոլորտները՝ գրում է. «Մեր արդի աշխարհի պատկերը, եթէ այն դիտարկենք իր բովանդակ լրումի մէջ, բաղկացած է չորս առանձին ոլորտներից. մակրոկոսմոս, մեդիոկոսմոս, միկրոկոսմոս և անդրանցականութիւն: Բնագիտութիւնը կարող է զբաղուել միայն առաջին երեքով, իսկ վերջինի հետ գործ ունի բացառապէս փիլիսոփայութիւնն ու աստուածաբանութիւնը» E. Föhr, նշ. աշխ., S 298-299:

36* «Երկու ճշմարտութիւնների» կամ «երկու լեզուների» տեսութիւնը, որը ոչ միայն զատորոշում, այլև հակադրում էր կրօնն ու գիտութիւնը, ԺԹ և Ի դարերի սահմանագծում աստիճանաբար նահանջում է՝ իր տեղը զիջելով ներդաշնութեանը: Ինչպէս աստուածաբանութեան, փիլիսոփայութեան, այնպէս էլ մասնաւորաբար բնագիտութեան մէջ գնալով տիրապետող է դառնում այն միտքը, որ գիտութիւնը կոչուած է հաստատել, փաստել կրօնական ճշմարտութիւնները: Գիտական յայտնագործութիւններն ի յայտ են բերում բնութեան մէջ գործող օրինաչափութիւնները, որոնց առկայութիւնն իսկ ինքնին

նպաստում և հաստատում են աստուածաբանական դիտումների և ընդհանրացումների ճշմարտացիութիւնը: Ա. Տէր-Միքէլեանը ամենայն իրաւամբ նշում է գիտական յայտնագործութիւնների և կրօնական ճշմարտութիւնների փոխշաղկապուածութիւնը: Գիտութեան նպատակն է ի յայտ բերել նիւթական աշխարհի օրէնքները եռաչափ տարածքի որոշակի սահմանում, մինչդեռ կրօնի նպատակն է ցոյց տալ այդ սահմանից անդին եղած վերնիւթական, հոգևոր փաստերը: Այս երկու բնագաւառների ներդաշն յարաբերութեամբ միայն կարելի է վերականգնել Աստծու և մարդու յարաբերութիւնը: Այսօրինակ մօտեցման կարևորութիւնը առաւելագոյն հետևողականութեամբ շեշտւում է արդի աստուածաբանութեան մէջ նմանապէս: Այսպէս Բեռնարդ Լոներգանն իր «Թափանցման կարողութիւնը. մարդկային հասկացողութեան ուսումնասիրութիւն», «Մեթոդը աստուածաբանութեան մէջ» (Insight. A study of Human Understanding, London, 1958, Method in Theology, New York, 1972) աշխատութիւններում գիտութեան և կրօնի ներդաշնակ յարաբերութիւնը հնարաւոր է համարում գլխաւորաբար բնազանցական իմացութեան հարթութեան վրայ, ինչը բացում է իմացութեան այնպիսի հորիզոններ, որոնք ներկայացնում են մարդկային իմացութեան ընդհանուր բնոյթով պայմանաւորուած գիտութեան իսկ «կրօնական չափումները»: Գիտական իմացութեան պայմանների և բնոյթի մասին խորհելիս, գիտնականը անխուսափելիօրէն յայտնւում է կրօնական խնդրի առջև, այն է՝ կեցութեան բանական հիմքի աշխարհի վերնիւթական պատճառի, Աստծու գաղափարի առջև: Գիտութեան և կրօնի համագործակցութեան հեռանկարների մասին հանգամանալից տե՛ս Science and Religion: New Perspectivus on the Dialogue, L., 1968:

37* Տե՛ս Migne, PG., t. 11, col. 1993:

38* Լուկրեցիոսի այս գաղափարը համերաշխւում է Անաքսագորասի տիեզերաբանութեան հետ. Рожанский, նշ. աշխ., с. 369, прим. 8:

39* Այս հեղինակների բնագիտական հայեացքների մանրակրկիտ քննութիւնը տե՛ս С. Я. Лурье, Теория бесконечно малых у древних атомистов, М. Л., 1935, նոյն հեղինակի Очерки по истории античной науки, М. Л., 1947, Рожанский, նշ. աշխ.:

40* Н. Я. Данилевск – ու երկու ընդարձակ հատորներով հրատարակված "Дарвинизм" (1885) աշխատութեան մէջ խստօրէն քննադատւում և ժխտւում է Դարւինի ուսմունքը:

41* Քաղւած է. Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ 591:

42* Այս կապակցութեամբ բնութագրական են ս. Բարսեղ Կեսարացու «Յաղագս Վեցաւրեայ արարչութեան» երկի հետևեալ տողերը «... Բնութիւնները, որ եղան մի հրամանով, առաջանում, գալիս են և նրանց տեսակները արարածների մէջ կարգաւորւում են ծննդեան և ապականութեան համար... անվրէպ կերպով պահպանում են նրանց տեսակների ընթացքն ու բոլորի համար սահմանւած վախճանը: Քանզի ձիուց ձի է կարգւած, առիւծից առիւծ է երևում, արծւից արծիւ է ծնւում, և իւրաքանչիւր տեսակի թռչուն մշտնջենաւորապէս անդադար կարգաւորւում է մինչև գալիս հասնում է բոլորի վախճանի ժամը: Եւ արդ, չկայ մի ժամանակ, որ խախտի ժամը: Եւ արդ, չկայ մի ժամանակ, որ խախտի սահմանւած կարգը...» (Ճառ Թ, տե՛ս քննական բնագիր, աշխատ. Կիմ Մուրադեանի, Եր., 1984, էջ 291-292):

43* Մարդ էակի հետևեալ նկարագրութիւնն ենք կարդում ԺԴ-ԺԵ դդ. հեղինակ Մատթէոս Ջուղայեցու քարոզներից մէկում. «Քանզի մարդը երկու [տեսակի] գործ ունի անելու. մէկը, որ ոտքով է ընթանում և միւսը, որ ձեռքով է արւեստ ստեղծում և հող մշակում: Արդ, քանի որ անասունները չունեն միտք, որով կարողանան արւեստ ստեղծել, այս պատճառով նրանց հարկաւոր չեն ձեռքեր, մինչդեռ մարդն ունի իմաստութիւն և գիտութիւն և արւեստ ու խօսք, որոնք ձեռքի կարիք ունեն: Այս պատճառով անհրաժեշտաբար երկու ոտքի վրայ կանգնեց և երկուսը ուղիղ միջոց դարձրեց խօսքի բնութեան և արւեստի համար». «Քարոզ ի բանն՝ Մարդ պատւի էր և ոչ իմացաւ». ՄՄ., ձեռ. 2229, թ. 109ա տե՛ս Լ. Խաչիկեան, Մատթէոս Ջուղայեցու կեանքն ու մատենագրութիւնը- «Բանբեր Մատենադարանի», 3, էջ 83:

44* Մարդու դիրքի վերաբերեալ այս դիտումը, որ կենցաղավարում է հայրախօսական մատենագրութեան մէջ, տեղ է գբաղեցրել Ներսէս Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութիւնում նմանապէս («Որպէս լուաք ի գրոց, Աստուած զմարդն ուղիղ ստեղծ»). ՄՄ, ձեռ. 6558, թ. 6բ:

45* Արիստոտէլի տեսակէտը շարադրւած է նրա «Կենդանիների մասին» աշխատութեան մէջ: Յիշատակւած գիտնականները հիմնւել են այդ աշխատութեան վրայ: Տեսալ երկով հիացած են եղել յատկապէս Կովիերը և Միլլէրը (G. Guvier, Histoire des sciences naturalles, t. 1, P., 1841, p. 146, 159: Müller, Über den Glatten hai des Aristoteles, Berlin, 1842) ըստ Рожанский, նշ. աշխ., с. 460, прим. 16, 18:

46* Մարդ՝ Մարթուչ=մտածող ստուգաբանութիւնը բերւած է համաձայն ս. Ներսէս Շնորհալու «Մարդն անուն, որ է մարթուչ, այսինքն՝ իմաստուն» (Թուղթ ընդհանրական, Ս. Էջմիածին, 1865, էջ 398): Մինչդեռ հնախօսական իմաստը «մեռնել»-ը, «մահկանացու»-ն է, տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Հտ. Գ, Եր., 1977, էջ 279:

47* Խղճի գաղափարը շեշտւում է գլխաւորաբար Կանտի (1724-1804) «Կրօնը բացառապէս բանականութեան սահմաններում» և «Գործնական բանականութեան քննադատութիւն» աշխատութիւններում:

48* Դիոնիսիոս Ալեքսանդրացու (+ 265) Էպիկուրեանների դէմ գրած թուղթը ոչ այլ բան է, քան նրա «Բնութեան մասին» երկը, ուր Դիոնիսիոսը հերքում է էպիկուրեանների՝ Դեմոկրիտի ատոմիստական ուսմունքի վրայ հիմնւած գաղափարները: Այս երկից առանձին հատակոտորներ են պահպանւել Եւսէբիոս Կեսարացու «Աւետարանական նախապատրաստութիւններում» (ԺԴ 23-27) և Յովհան Դամասկացու «Ιερα παραλληλα» երկերում. տե՛ս Էզնիկ ծ. վրդ. Պետրոսեան, Հայրաբանութիւն, Ա, Ս. Էջմիածին, 1996, էջ 168:

49* Աշխարհի, բնութեան երևոյթների նպատակայարմարութեան գաղափարը (թելէոլոգիա), որ առկայ է Պլատոնի և Արիստոտէլի մօտ և իր ոչ անկարևոր տեղն է գբաղեցնում արդի աստւածաբանութեան մէջ ևս, ի յայտ է եկել և լայնօրէն կենցաղավարել միջնադարում (տե՛ս օր. S. Thomas, La somme theologie, t. 1, Paris, 1851, q 22, a 1): Եթէ անտիկ մտածողութեան համաձայն, բնութիւնն ինքնակայ օրէնքներով առաջնորդւող, ինքն իր մէջ նպատակ կրող իրողութիւն է, ապա միջնադարում գերիշխող է դառնում այն յայտնութենական միտքը, որ բնութիւնը Աստծու կողմից ստեղծւած է մարդու համար, ի շահ մարդու բարօրութեան. գաղափարը, որը թոյլ է տալիս մարդուն և բնութիւնը դիտել մէկ ամբողջութեան մէջ (Հմմտ. П. П. Гайденко, Эволюция понятия науки, М.,

1980, с. 394): Ըստ Թուլիոյ Գրեգորիի ուսումնասիրութեան, մինչև ԺԲ դ. տիրապետող էր բնութեան նշանային և կրօնական ըմբռնումը: Բնութեան որպէս նշանային իրողութեան ըմբռնումը նրան զրկում էր որպէս ինքնակայ օրէնքներով ապրող մի երևոյթի ինքնուրոյնութիւնից՝ այն ներկայացնելով իբրև անդրանցական իրողութեան սիմուլ (Տե՛ս Н. С. Мудрагей, Рациональное и иррациональное. Историко-теоретический очерк, М., 1985, с. 20): Բնութեան աստուածակենտրոն ըմբռնումն է ընկած Ա. Տէր-Միքէլեանի այս վերլուծման հիմքում:

50* Հեղինակը գործադրում է Աստծու գոյութեան ապացուցման («ապացուցում» բառն այստեղ օգտագործում ենք վերապահօրէն, որովհետև ինչպէս իրաւացիօրէն նկատում է Պ. Ֆլորենսկին, աստուածային ճշմարտութիւնները լինելով ըստինքեան աքսիոմատիկ «ոչ թէ ապացուցելի են, այլ՝ ցուցադրելի» П. Флоренский, Столп и утверждение истины, М., 1914, նոյնքան բնութագրական է Tillich-ի միտքը. «Աստծու գոյութեան ապացուցումը նոյնքան աթէիստական է, որքան և Նրա գոյութեան մերժումը». P. Tillich, Systematic Theology, v. 1, Chicago, 1951, p. 237): Աստուածաբանութեան պատմութեան մէջ յայտնի են երեք գլխաւոր սկզբունքներ՝ Տիեզերաբանական (Աստուած բոլոր պատճառների նախապատճառն է. Պլատոն, Արիստոտէլ, Լէյբնից, Վոլֆ. այս սկզբունքը առաւելապէս տարածուած է արդի աստուածաբանութեան մէջ. Հմմտ. Q. Huonder, Die Gottesbeweise. Geschichte und Schieksal-"Urban-Bücher", Bd. 106, S. 53), Թելէոլոգիական (Բնութեան բոլոր երևոյթները հանդէս են գալիս նպատակայարմար ներդաշնակութեամբ, որի բացարձակ Ստեղծիչը Աստուած է. Սոկրատ, Պլատոն, ստոյիկներ), Գոյաբանական (մարդ արարածի գիտակցութեան մէջ ամրօրէն նստած է կատարելագոյն Էակի մասին ըմբռնումը, որի առկայութիւնն ինքնին ցոյց է տալիս Աստծու գոյութիւնը. Օգոստինոս Երանելի, Անսելմոս Քենթերբերիցի). տե՛ս Философ. энц., под. общ. ред. И. Т. Фролова, М., 1981, с. 142:

51* Համաձայն պարականոն մի վաղնջական զրոյցի, Աստծու անունը տրուեց Երեմիային, որն այն արձանագրեց տապանակն իր մէջ ամփոփող վէմի վրայ: Սակայն լուսաւոր ամպը ծածկելով քողարկեց Աստծու անունը. տե՛ս «Ճաշոց», Բ տպ., Վաղարշապատ, 1872, էջ 540-541:

52* «Բացասական և դրական» անուանումներով հեղինակը նկատի ունի մի կողմից անճառելի, ժխտական, ապոֆատիկ և միւս կողմից ճառելի, հաստատական=դրական, կատաֆատիկ աստուածաբանութիւնը, որոնք քրիստոնէական միջնադարի վարդապետական մտակառուցման երկու կարևորագոյն եղանակներն են յայտորոշում: Սրանց մասին հանգամանալից տե՛ս Вл. Лосский, Апофатическое Богословие в учении святого Дионисия Ареопагита, "Богословские труды" сб. 26, М., 1985, с. 163-172, նոյն հեղինակի Августин учитель. Элементы отрицательного Богословия в мышлении Блаженного Августина, անդ, с. 173-180:

53* Աստծուն տեսնելու կարելիութեան և անկարելիութեան պարագան տեղիք է տուել աստուածաբանական տարընթաց կարծիքների: Եթէ Արևելքը (յանձին հայ և բիւզանդական աստուածաբանութեան) արձանագրում է Աստծու էութիւնը տեսնելու սկզբունքային անկարելիութիւնը (Գրիգոր Լուսաւորիչ [Ագաթ. 209], Յովհան Ոսկեբերան, Դիոնիսիոս Արիսպագացի), ապա Արևմուտքը (յանձին սքոլաստիկ աստուածաբանութեան) հակւած է հնարաւոր համարել Աստծուն տեսնելը (մասամբ) Թովմայ Աքւինացի, լիովին՝ Գաբրիէլ Վասկէս, Դիէգո ռուիս դէ Մոնտոեայ. տե՛ս Вл. Лосский, Предание отцов и схоластика, "Богословские труды" сб. 18, М., 1978, с. 118-135:

54* Յովհաննէս Պլուզ Երզնկացին հետևեալ կերպ է տարբերակում «Աստուած» և «Տէր» անուանումները. «Արարիչը երկու զօրութեամբ է նախախնամում Իր արարածներին՝ արարչական, բարեգործական զօրութեամբ, որով Աստուած է անուանւում, իսկ արքունական և դատողական [զօրութեամբ] Տէր է անուանւում». ՄՄ, ձեռ. 2173, թ. 183ա: Աստծու անուանումների և ստորոգութիւնների մասին տե՛ս Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, էջ 171-172:

55* Սաբէլեան գաղափարաբանութիւնն է ընկած մեր օրերում լայն տարածում գտած «Եհովայի վկաներ»-ի դաւանաբանութեան հիմքում. տե՛ս և Հմմտ. Զարեհ եպս. Ազնաւորեան, Եհովայի վկաներու այլափոխուած Աստուածաշունչը, Անթիլիաս, 1992, Հ. Մաշտոց Ղազարեան, Խօսքին հաւատարիմ. Ճշմարտութիւնը Եհովայի վկաների մասին. Եր., 1999, Սերժ (այժմ՝

Տ. Ղևոնդ քահ.) Մայիլեան. Ժամանակակից աղանդները Հայաստանում, Ս. Էջմիածին. 2000, էջ 109-231:

56* Աստծու անձնաւոր լինելու պարագան վերլուծած է. Вл. Лосский, Догматическое Богословие, "Богословские труды" сб. 8, с. 131-133:

57* Փիլոն Եբրայեցու այս միտքը քաղուած է նրա «Յաղագս նախախնամութեան» երկից. տե՛ս Փիլոնի Եբրայեցւոյ Բանք երեք չեւ ի լոյս ընծայեալք, աշխատ. Հ. Մկրտիչ վրդ. Աւգերեանց, Վենետիկ, 1822, էջ 11:

58* Մամբրէ Վերծանողի՝ Ս. Երրորդութեան անճանաչելիութեան մասին խօսող այս տողերը համերաշխւում են Ս. Գրիգոր Աստուածաբանի Երրորդաբանական հետևեալ խորհրդածութեան հետ. «Աստուած՝ երեքը իրար միացած է. այս է միիշխանութեան բովանդակութիւնը: Չեմ հասցնում Մին ճանաչել, Երեքով եմ պայծառանում, չեմ հասցնում Երեքը բաժանել՝ դէպ Մինն եմ բարձրանում: Երբ երեքից մէկին եմ տեսնում, նրանով իմանում եմ ամեն ինչ և լիալուած եմ լինում դէմքով, և աւելին փախչում է. չեմ կարող հասու լինել նրա մեծութեանը... Իսկ երբ Երեքի տեսութիւնը միասին եմ ընդունում, Մին եմ տեսնում որպէս ջահ, և չեմ կարող զատորոշել կամ չափել միաւորեալ լոյսը». տե՛ս Կնիք հաւատոյ, աշխատ. Կարապետ եպս-ի, Ս. Էջմիածին, 1914, էջ 35 թրգմ. ըստ Մ. քհ. Արամեան, Երեք տիեզերական ժողովների դաւանութիւնը (աստուածաբանական ակնարկ), «Գանձասար», Ա, էջ 123:

59* Տե՛ս Նարեկ, Բան ԼԴ, Է:

60* Արարչագործական ծրագրի՝ կանխապէս Աստծու կամքի մէջ լինելը աստուածաբանօրէն վերլուծուած է Եղիշէի կողմից: Իր Արարածոց մեկնութեան մէջ նա գրում է. «Աստուած բնութեամբ բարի և նախագէտ է. մղուեց բարիք անել Ադամին և Եւային: Նրա մէջ եղած նախագիտութիւնն իմացաւ, թէ ինչ է լինելու և Աստծու նախագիտութիւնը չկարողացաւ արգելք լինել Աստծուն՝ բարի մղումով ստեղծել մարդուն և նրա օգնականին...»: Հեղինակի «Վասն հոգւոյ մարդկան» երկում դարձեալ կարդում ենք. «Եւ երբ կամեցաւ՝ կամեցաւ ու ինչ որ մտքում ունէր՝ գոյութեան կոչեց, որովհետև նրա բնական իմացութիւնը իմանալի բաների ստեղծիչն է...». տե՛ս Լ. Խաչիկեան, Եղիշէի Արարածոց մեկնութիւնը, Եր., 1992, էջ 241, 265: Այս երկի մէկ այլ տարբերակում, որ վկայաբերուած է Անանիա Սանահնեցու Մատթէի մեկնութեան Նախադրութեան մէջ, ասուած է.

«Արարչութիւնը մարմնացրեց անմարմին գիտութիւնը և [առարկայացնելով] կեանքի կոչեց զգալի տեսութիւնը, որպէսզի յայտնի դառնայ իմաստութիւնը, որ ծածկուած է Աստծու գիտութեան մէջ». «Գանձասար», Դ, էջ 240:

61* Կազմակերպուած, «բարեզարդ» նիւթին կանխող քաոսի, «անդունդի վրայ եղած խաւարի» վերաբերեալ գաղափարը առկայ է հին եգիպտական տիեզերածագումնաբանական պատկերացումներում ևս. Г. Франкфорт. Г. А. Франкфорт, Дж. Уильсон, Т. Якобсон, В преддверии философии, М., 1984, с. 63:

62* Այս հեղինակների բնագիտական հայեացքների ընդհանուր մեկնաբանութիւնը տրուած է Философ. энц., т. 1, с. 342, т. 4, с. 342:

63* Հմմտ. «Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք», Հտ. Ա, Վենետիկ, 1836, էջ 2. Բարսեղ Կեսարացի, Վեցաւրեայ, էջ 35-44:

64* Արարչագործութեան մասին վիպող աւանդազրոյցների նմանութիւնը վեր է հանուած հետևեալ աշխատութիւններում. М. Ф. Ястребов,Соглашение библейского сказания и миротворении с научными данными и выводами естествознания, Киев, 1903: В. Н. Топоров, К реконструкции мифа о мировом яйце- "Труды по знаковым системам", Тарту, 1967, т. III, с. 81-89:

65* Աստուածեան, համաստուածեան տեսութիւնների ընդհանուր բնութագիրը տրուած է Философ. энц., т. 1, с. 441-442, т. 4, с. 206-207:

66* Դուալիզմի մասին տե՛ս Философ. энц., т. 2, с. 79-81:

67* Այս հեղինակների նիւթապաշտական ուսմունքի վերաբերեալ տե՛ս Материалисты Древней Греции, М., 1956, Тит Лукреций Кар, О природе вещей, М., 1933:

68* Այս մօտեցումը հետևանք է հին հրէական մտայնութեան այլամերժօրէն աստուածակենտրոն ուղղուածութեան. Հմմտ. Ch. Pearl, R. Brookes, A guide to Jewish Knowlege, L. 1973, p. 99, Философ. энц., т. 5, с. 199-200 (Теократия):

69* Բնագրում թիւրիմացաբար՝ «վերջը»:

70* Վկայութիւնը, ինչպէս երևում է, քաղուած է Եղիշէի Արարածոց մեկնութեան մի տարբերակից. այդ է ցոյց տալիս ներքոբերեալ համադրութիւնը.

Սերմն ամենայն կենդանեաց մարմնաւորաց ջուր է եւ զաւրութեամբ Աստուծոյ Հոգւոյն գոյանայ: «Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս». Այս առաջին բարբառ Աստուծոյ առանց շրթանց շարժելոյ եւ թարց լեզուի տատանելոյ, առանց ատամանց կափկափելոյ եւ թարց բարբառ արձակելոյ, զի ոչ եթէ գործիք եւ աւդապահք բան է կարծել զԱստուծոյ, այլ մեզ ուսուցանելոյ վարի գիրս մերովս աւրինակաւ: Եւ դու տես, զի նախ զ-«արարն» դնէ և ապա զ-«ասացն» ի ցոյցս գործոցն: Զի կամելով միայն զգործն կատարեաց»:

«Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս եւ եղեւ լոյս: Եւ ետես Աստուած զլոյսն, զի բարի է...»: Այս առաջին բարբառ Աստուծոյ առանց շրթանց շարժելոյ եւ լեզուի տատանելոյ եւ աւդոյ հնչելոյ եւ ատամանց ընդհարկանելոյ, զի ոչ գործիք եւ յաւդապատ բան է կարծել զԱստուծոյ, այլ վասն զմեզ ուսուցանելոյ վարի մերովս աւրինակաւ նախ զ-«արարն» դնելով ի ցոյցս գործոյն, եւ ապա զ-«ասացն»՝ զանաշխատն յայտ առնելով». տե՛ս Լ. Խաչիկեան, Եղիշէի «Արարածոց մեկնութիւնը», էջ 232 (Գ):

Ի դէպ, որոշակի է այս հատուածի աղերսը ս. Բարսեղ Կեսարացու «Ցաղագս Վեցաւրեայ արարչութեան» երկի հետ: Այն գալիս է լրացնելու արդէն նկատուած ընդհանրութիւնների շարքը (Բարսեղ Կեսարացի, Ցաղագս Վեցաւրեաց արարչութեան, աշխատ. Կիմ Մուրադեանի, Եր., 1984, Առաջաբան, էջ ԺԶ-ԺԷ). «Բայց յորժամ լսես, թէ բարբառեցաւ Աստուած եւ խաւսեցաւ Արարիչն եւ ետ հրաման հաստիչն, մի՛ կարծիցես, եթէ բարբառ էր, որ ելանէր յանդամոց յաւդս, եւ լեզու էր, որ բախէր ընդ գործիսն, որ կազմեալ են հանել զհնչիւն ձայնից եւ տան արտաքոյ զլուրն իւրեանց: Զի Աստուծոյ ակնարկելովն մեծութեանն իւրոյ կատարին կամք իւր յամենայնի, զոր եւ կամիցի առնել: Եւ վասն իմանալոյ այնոցիկ, որ գալոց են յուսումն վարդապետութեան, որ կարծեցուցանէ, թէ մարդկեղէն խաւսեսցի բարբառով, եւ առնու զկերպարանս մարմնաւոր բանից՝ վասն մերոյ աւգտութեան» (էջ 56, տ. 3-12):

71* Միտքը առկայ է Եփրեմ Ասորու Արարածոց մեկնութեան և Եզնիկ Կողբացու Եղծ աղանդոցի մէջ: Այս աղբիւրներից էլ ամենայն հաւանականութեամբ մտել է Թ դ. հեղինակ Տիմոթէոս վարդապետի Արարածոց խմբագիր մեկնութեան մէջ. տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 17:

72* Հոգու նախագոյութեան մասին ուսմունքը, որի հետևորդն է նաև Պլատոնը (Ֆեդոն, 80 a), սկզբունքօրէն ժխտում է Տերտուղիանոսի կողմից, որ անընդունելի է համարում նաև այն տեսակէտը, թէ հոգին արարւում է ծննդեան պահին (De testimonio anima. XXVI, XXVII) Տե՛ս "Богословские труды", сб. 25, с. 172: Նա հաստատում է, թէ հոգին և մարմինը ստեղծւում են միաժամանակ: Հոգիների նախագոյութիւնն ընդունում էր նաև Որոգինէսը (185-253), որ, ի յաւելումն հաստատում էր, որ հոգիները մարմինների մէջ են ներմուծւում նախընթաց կեանքում ունեցած մեղքերի պատճառով (De Princ. 1, 7 § 3, 4, 8 § 4 Comm. in Math. t 15, § 35, in Iohan. t 2 p.25) տե՛ս Православное Догматическое Богословие. Сочинение Филорета Архиепископа Черниговского, ч. 1, Второе изд., Чернигов, 1865, с. 316, 317:

73* Վաղ շրջանի հայրերից ոմանք, սակայն, նիւթականութեան ինչ-ինչ յատկութիւններ էին վերագրում հոգուն. օր. Տերտուղիանոսն իր «Հոգու մասին» աշխատութեան մէջ (գլ. 8) յենւելով հոգու յարաբերական մարմնականութեան և որոշ պարագաներում տեսանելի դառնալու վերաբերեալ սուրբգրային տեղեկութիւնների վրայ (Ցայտ. Զ 9, Ղուկ. ԺԶ 23)՝ ասում է, թէ հոգին «իր տեսակի մէջ մարմին է» (corpus sui generis). "Богословские труды", сб. 25, с. 172:

74* Տե՛ս Цицерон, Трактат "О дивинации"I 63,66-Цицерон, Философские трактаты, М., 1985, с. 215-216:

75* Հոգու անմահութեան վերաբերեալ մանրամասն տե՛ս Серафим (Роуз). иеромонях, Душа после смерти. Современные "посмертные" опыты в свете учения Православной церкви (Пер. с англ.), М., 1991:

76* Մարդուն տրւած «փոքր աշխարհ» որակումը առկայ է «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք» (տե՛ս «Բանբեր Մատենադարանի». № 3, էջ 299, տ. 1 [աշխատ. Հ. Մանանդեանի]), Գրիգոր Նիւսացու անւամբ յայտնի «Ցաղագս կազմութեան մարդոյ» (ՆԲՀ, Ա, էջ 160), Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկերում (տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, աշխատ. Սէն Արևշատեանի, Եր., 1980, էջ 71):

77* Եբրայերէնի համար տե՛ս The Hebrew-English Old Testament from the Bagster Polyglot Bible, L., 1971: Ի դէպ, Ա. Տէր-Միքէլեանն իր Die armenishe Kirche in ihren Besiehungen zur Byzantinischen (Leipzig, 1892, S. 35) աշխատութեան մէջ այն միտքն է առաջադրում, թէ հայերէնը անմիջաբար կապւած է եբրայեցերէն Աստուածաշնչի հետ: Այս տեսակէտը ժխտւել է F. Macler-ի (Les traducteurs arméniens ont-il connu et utilisé l'hébreu ?), «Հանդէս ամսօրեայ», 1927, էջ 609-616) և Եղիշէ Արք. Դուրեանի (Մեր թարգմանիչներուն կարծցեալ եբրայագիտութիւնը, «Սիոն», 1929, էջ 63-64, 116-119, 152-154) կողմից:

78* Մարդուն տրւած անձնիշխանական մենաշնորհը ժխտւում է Օգոստինոս Երանելու, Մարտին Լիւթերի, Ժան Կալւինի և Արևմուտքի աստուածաբանական մտքի այլ ներկայացուցիչների կողմից: Նրանք պնդում են ճիշտ հակառակը. մարդը զուրկ է ընտրելու անձնիշխան իրաւունքից, և գտնւում է Աստծու լիակատար գերիշխանութեան տակ: Այս մասին տե՛ս. Творение Блаженного Августина, ч. 3, Киев, 1906, с. 258. և շար: Мартин Лютер, О рабстве воли. (Эразм Роттердамский, Философские произведения, М., 1986, с. 290-545), J. Calvin, Institution de la religion chrestienne, P., 1911:

79* Եզնիկ Կողբացու անւամբ յայտնի խրատներից է. տե՛ս Եղծ աղանդոց. թրգմ. ներած. և ծանօթ. Ա. Ա. Աբրահամեանի, Եր., 1970, էջ 183:

80* Զարի ինքնակայ գոյութիւնն առհասարակ ժխտւում է հայրախօսական մատենագրութեան մէջ. այսպէս Մեթոդիոս Պատարացին (+ 311/2) նկատում է. «Ոչինչ չար չէ բնութեամբ, բայց կիրառման ձևով չարը

դառնում չար...: Սակայն չարիքը աշխարհ եկաւ կամքի միջոցով: Դա բնութիւն չէ, այլ՝ վիճակ» (տե՛ս Ο. Π. Флоренский, Столп и утверждение истины, с. 263): Չարիքի կամ մեղքի ինքնակայ անգոյութեան մասին է խօսում նաև ս. Աթանաս Ալեքսանդրացին. «Ոգին գիտակցելով իր ազատութիւնն, իր մէջ ընդունակութիւն է տեսնում կիրարկելու մարմնաւոր անդամները այս կամ այն կերպ. և՛ ըստ գոյութեան և՛ ըստ անգոյութեան, գոյը բարիք է, իսկ անգոյը՝ չարիք: Ես գոյ-ն անւանում եմ բարիք, քանզի նա օրինակներ ունի Աստծու գոյի մէջ, իսկ անգոյը անւանում եմ չարիք, քանզի անգոյը ստեղծւում է մարդու խորհուրդներով» (անդ, с. 693): Բարսեղ Կեսարացին նոյնպէս արձանագրում է, որ չարիքը բնութեան մէջ ինքնին բացակայելով, սոսկ մարդկային կամքի ծնունդ է (Տե՛ս Վեցաւրեայ, էջ 48-49 [Մաս. Բ]): Գրիգոր Նիւսացին իր Ժողովողի մեկնութեան մէջ ասում է. «Ուրեմն չարութիւնը դուրս է Աստծուց, քանզի չարութեան բնոյթը ինքնին ոչինչ է, այլ գոյանում է բարու բացակայութեան հետևանքով...» (ՄՄ, ձեռ. 436, թ. 62բ-63ա): Յաճախապատում ճառերում կարդում ենք. «Բնութեամբ ինքնակայ եղած չարը չար չէ և ոչ բարին՝ բարի, այլ (ադամորդին) իր մտքում ունի՝ լինել բարի կամ չար...» (էջ 52): Մի ուրիշ տեղ դարձեալ կարդում ենք. «Որովհետև բոլոր արարածները Բարերարից բարի ստեղծուեցին, և իրենց յօժար մտքով չար եղան» (էջ 228):

81* Սատանան այս անունով է կոչւում Խորենացու Հռիփսիմեանց ճառում, Յովհան Օձնեցու «Ընդդէմ պաւղիկեանց», Գրիգոր Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոյ» երկերում և այլուր. «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի» Բ, էջ 720:

82* Միջնադարի քրիստոնէական մատենագրութեան մէջ Նեռի վերաբերեալ շրջանառութեան մէջ են եղել հետևեալ բնագրերը. «Ագաթոնի անյաղթ փիլիսոփայի ասացեալ վասն Նեռին գալստեան» (ՄՄ, ձեռ. 8507, թ. 200ա-214բ) «Պատմութիւն վասն Նեռին ծննդեան, սննդեան, եւ չար գործոցն... ասացեալ Ագաթանգեղի սուրբ եւ անյաղթ փիլիսոփայի» (ՄՄ, ձեռ. 6961, թ. 62ա-91բ), «Հիպպոդիտեայ Բոստրացւոյ վասն կատարածի աշխարհիս», (ՄՄ, ձեռ. 2330, թ. 195բ-203ա), «Մեթոդիոսի Պատարացւոյ Տեսիլ Յաղագս անցելոյն, ներկայիս եւ ապառնեացն, ասացւածք յԱստուածաշունչ գրոց...» (ՄՄ, ձեռ. 1487, թ. 18բ-26ա) տե՛ս նաև Мифы народов мира, т. 1, М., 1991, с. 85-87:

83* Աղանդի հիմնադիրը Մանին է (215/16-276), ըստ որի գնոստիկեան ուսմունքի, աշխարհի նախնական սկզբունքները լոյսն ու խաւարն են: Սրանք ոչ թէ հոգևոր ուժերի պատկերներ են, այլ նիւթական նախատարրեր: Լոյսի աշխարհը գտնւում է լոյսի թագաւորի տիրապետութեան տակ: Այդ նախնական Լոյսը՝ Աստուած, Իր էութեամբ միանգամայն հոգևոր է: Խաւարի թագաւորութիւնից ծնւում է սատանան, որը հակառակւում է Լոյսի թագաւորութեանը: Մանիքէական դուալիզմի մասին ընդարձակ տեղեկութիւններ են բերւած հետևեալ սկզբնաղբիւրում. Acta Archelai, ed. CH. H. Beeson, Lpz., 1906, տե՛ս նաև՝ Եր. Տէր-Մինասեան, Միջնադարեան աղանդների ծագման և զարգացման պատմութիւնից, Եր., 1968, էջ 91-106:

84* Հակառակ աստուածային նախասահմանուածութեան մասին խօսող Օգոստինոս Երանելու (354-430) վարդապետութեան Պելագիոսը (360-418) սովորեցնում էր, որ մարդու հոգին փրկւում է ի հատուցումն երկրաւոր բարի գործերի: Բացարձակեցնելով ազատ ընտրութեան, կամքի դերը՝ Պելագիոսը գտնում էր, որ մարդկային կամքը բոլորովին կապւած չէ ո՛չ ադամական մեղքի և ո՛չ էլ աստուածային շնորհի հետ: Նա բոլորովին չէր ժխտում շնորհի նշանակութիւնը, այլ նրա մէջ տեսնում էր լոկ աստուածային օժանդակութիւն, բայց ոչ երբեք փրկութեան միակ միջոց. Հմմտ. Пелагий, Послание к Деметриаде տե՛ս Эразм Роттердамский, философские произведения, М., 1986, с. 594-635 (Տե՛ս Երկրորդ մաս. ծնթ. 38*):

85* Տե՛ս Գիրք թղթոց, Թիֆլիզ, 1901, էջ 386-387:

86* Այս կապակցութեամբ բնութագրական են ԺԱ դ. նշանաւոր մատենագիր Անանիա Սանահնեցու Մատթէոսի Աւետարանի մեկնութեան հետևեալ տողերը. «Թէպէտ Աստուած հանդուրժեց չարի զարգացումը [մարդու մէջ՝ այդ արեց], որպէսզի լրանայ մեղքերի քանակը, որ սերմանւեց օձից, և յետոյ ընդունի դատապարտութեան հատուցումը, և թէպէտ առաջին մարդ Ադամը հող դարձաւ, սակայն անապականութեան խմորը անթեղւած կար նոյն զանգւածի մէջ, որպէսզի հապաղելով երկար ժամանակի ընթացքում այդ զանգւածն իր նման դարձնի և կատարի կեանքի նորոգութիւնը». տե՛ս «Գանձասար», Դ, էջ 231-232:

87* Տե՛ս ծնթ. 77*:

88* Օրինակ բուդդայականն իր խորհրդապաշտական ուղու վերջում իրեն ոչ թէ մարդ, այլ Աստուած է գիտակցում. «Ես Բրահման եմ, ես Աստուած եմ, Ես Ճշմարտութիւնն եմ, փառք ինձ, ես վեր եմ բոլոր իրերից: Ես Դու եմ և Դու ես եմ», ասում է նա, Г. Олденберг, Будда, его жизнь, учение и община, пер. П. Николаева, М., 1890, с. 38, հղումն ըստ П. Минин, Главные направления Древнецерковной мистики, "Богословский вестник", Сергиев-Посад, 1911-1914:

89* Ակնարկում է հեթանոս յոյների դաւանած «Անծանօթ Աստծուն» (Գործք. ԺԷ 23):

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1* Ի դէպ, Գրիգոր Արշարունու անունով վկայաբերւած երկը՝ «Վասն Քառասնորդաց պահոց», որ ս. Կիւրեղ Երուսաղէմացու «Կոչումն ընծայութեան» աշխատութեան այլաբանական եղանակով շարադրւած լուծմունքն է (հրատարակւել է իբրև յաւելւած վերջինիս. տպ. Կ. Պոլիս, 1727), ըստ Ն. Արք. Պողարեանի «յօրինւած է մօտաւորապէս ԺԳ դարուն» մեզ տակաւին անյայտ մի հեղինակի կողմից («Հայ գրողներ», Երուսաղէմ, 1971, էջ 104):

2* Հայ միջնադարի քրիստոնէական գրականութեան մէջ Տիրոջ աստուածային և մարդկային բնութեան յարաբերակցութիւնը ցոյց տալու

նպատակով լայնօրէն օգտագործուող մի համեմատութիւն էր սա, որ քաղուած է ս. Բարսեղ Կեսարացու, Դիոնիսիոս Արիսպագացու և այլոց երկերից. այս մասին ընդարձակ տեղեկութիւններ տե՛ս «Գանձասար», Բ, էջ 218, ծնթ. 66աբ:

3* Ի դէպ, եբիոնեան մոլորութեան մասին յիշատակւում է Մովսէս Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին Հայոց ՉԾԸ» թղթում, ուր դաւանական հակառակորդի շուրթերով ասւում է, թէ «եբիոնեանքն մարդ սրբացեալ ասեն զՔրիստոս եւ ոչ Աստուած եւ մարդ, եւ յայն սակս ջրով միայն պատարագին...», Իսկ «Հերձուածողք երեւելիք այսչափ են եւ այսոքիկ, զոր սերմանեաց սատանայ ի մարդիկ» բնագրում ասւում է, թէ սրանք «զջուր որպէս զԱստուած պատուեն» տե՛ս Եզնիկ աբդ. Պետրոսեան, Մովսէս Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման...» թուղթը, «Էջմիածին», 1974, Թ, էջ 37: Գալուստ Տեր-Մկրտչեան, Հայագիտական ուսումնասիրութիւններ, Գիրք Բ, Ս. Էջմիածին, 1998, էջ 19 (ՀԷ):

4* Մանիքէացիների և ապողինարեանների երևութաբանական հայեացքների վերաբերեալ այս միտքը առկայ է ս. Ներսէս Շնորհալու՝ ասորական Միջագետքի Ամայք նահանգի Թլկուրան աւանի Առիւծ իշխանի խնդրանքով գրած յորդորական թղթում. «Ընդհանրական թուղթք...», Ս. Էջմիածին, 1865, էջ 333-400 տե՛ս Եր. Տէր-Մինասեան, Միջնադարեան աղանդների ծագման և զարգացման պատմութիւնից, էջ 185:

5* Տե՛ս ՄՄ, ձեռ. 8132, թ. 79բ-90բ:

6* Քաղուած է Ցաճախապատում, էջ 18-19:

7* Քաղուած է Մամբրէ Վերծանողի «Ի մեծի աւուր գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յԵրուսաղէմ» ճառից. «Կորիւնի վարդապետի, Մամբրէի Վերծանողի, Դաւթի Անյաղթի Մատենագրութիւնք» Վենետիկ, 1833, էջ 81:

8* Տե՛ս «Կորիւնի վարդապետի, Մաբրէի Վերծանողի...» համապատասխանաբար էջ 80, 92:

9* Քրիստոնեայ միստիկների այսօրինակ ըմբռնումների հանգամանալից վերլուծութիւնը տրուած է Ռ. Միհոհ, նշ. աշխ.:

10* Քրիստոսի «աստուածամարդ» (θεάνθρωπος) բնորոշումն առաջին անգամ տուել է Որոգինէսը (+253). Եզնիկ Ծ. վրդ. Հայրաբանութիւն, Ա, Ս. Էջմիածին, 1996, էջ 151:

11* Սա տեսական վերարծարծումն է հայրախօսական մատենագրութեան մէջ (Աթանաս Ալեքսանդրացի, Կիւրեղ Երուսաղէմացի, Գրիգոր Աստուածաբան) լայնօրէն տարածուած Աստծու մարդացման և ադամորդու աստուածացման վերաբերեալ արտայայտուած գաղափարի. տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Ա, Վենետիկ, 1836, էջ 327 («Աստուածանամ») Հմմտ. И. В. Попов, Идея обожения в Древневосточной церкви- "Вопросы философии и психологии", кн. 97, с. 165-213: Г. Флоровский, Восточные отцы IV века, Париж, 1931, с. 36:

12* Ընդարձակ Հաւատամքը, որ առկայ է Ժամագիրք, Մաշտոց և Խորհրդատետր ծիսամատեաններում, դաւանաբանական մանրակրկիտ ծանօթագրութիւններով հրատարակւած է «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ Ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց», էջ ԻԷ-ԽԸ:

13* Տե՛ս Գիրք թղթոց, էջ 457:

14* Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխատ. Կ. Կոստանեան, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 119:

15* Վկայաբերուած հատուածը, սակայն, բացակայում է յղուած բնագրում. «Արարատ», 1892, էջ 1097-1099:

16* Տե՛ս Գիրք թղթոց, էջ 529:

17* Քաղուած է «Խոստովանութիւն ճշմարիտ հաւատոյ ուղղափառաց» դաւանաբանական միաւորից. տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց աշխատ. Կ. Մելիք-Օհանջանեանի, Եր., 1961, էջ 335, տ 6-9:

18* Միակամութեան (Տիրոջ մէջ մէկ կամքի) վարդապետութիւնը կենտրոնական տեղ է զբաղեցնում Է դարի դաւանաբանական տարաձայնութիւններում: Արաբական սպառնալիքի պայմաններում կայսրութեան ներքաղաքական անդորրը խափանող քրիստոսաբանական վէճերը հանդարտեցնելու նպատակով 638թ. Հերակլ կայսրը հրապարակում է Կ. Պոլսի Սերգիոս պատրիարքի (610-638) ջանքերով շարադրուած Ektesis անունով հրովարտակը, որը կայսրութեան բոլոր հպատակ ժողովուրդներին պարտաւորեցնում էր ընդունել «ի Քրիստոս» աստուածային եւ մարդկային «երկու բնութիւնք», բայց մէկ կամք կամ մէկ Thelema բանաձևը: Սակայն միակամութեան վարդապետութիւնը յաջողութիւն չի ունենում և շուտով դատապարտւում է Կ. Պոլսի 6-րդ «տիեզերաժողովի» կողմից. տե՛ս Աբել վրդ. Օղլուգեան, Հայ եկեղեցւոյ դիրքը քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ մէջ. ծիսական, դաւանական տարբերութիւններ և նմանութիւններ, «Գանձասար», Ե, էջ 74-77:

19* Ի շարս այլոց Ս. Խաչը բարձրօրէն պանծացւում է ս. Յովհան Ոսկեբերանի կողմից. «Վասն զի Խաչիւն վերստին բացաւ դուռն դրախտին, ծառն կենաց մեզ տուաւ: Խաչիւն դեւք փախստականք եղեն, հրեշտակք յերկիր ծաւալեցան: Խաչիւն մեռեանք կործանեցան, Կաթողիկէ եկեղեցի պայծառացաւ, սեղան հաւատոյ կանգնեցաւ, սուրբ պատարագք աւրհնեցան, մկրտութիւնք կնքեցան... Խաչիւն ճգնաւորք ժուժկալեցին, միայնակեացք պահպանեցան, ախտացեալք բժշկեցան, մեղուցեալք առին զթողութիւն. մեռեալք ընկալան զհանդիպումն յուսոյ յարութեան, ըստ բանի Տեառն...» տե՛ս Ցայսմաւուրք, Կ. Պոլիս, 1834, էջ 145:

20* Տե՛ս հրատ. «Գանձասար», Ա, էջ 204-236, Բ, էջ 168-218, Գ, էջ 174-215:

21* Տե՛ս Խոսրով Անձևացի, Մեկնութ. Ժամակարգութեան, Կ. Պոլիս, 1840, էջ 105: Ի դէպ, այս վկայութիւնը քաղուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Ի Ծնունդ Քրիստոսի» ճառից. ՄՄ, ձեռ. 2600, թ. 6ա, 948, թ. 183բ:

22* Նկատի ունի «Տոլեդոտ Իէշու» երկը, որ հետագայում է ներմուծել Թալմուդի մէջ. տե՛ս Еврейская энциклопедия, под общей ред. Д-ра Л. Каценелсона, т. XIV, с. 722:

23* Մարայի և նրա երկի մասին հանգամանալից տե՛ս F. Schulthes, Der Brief des Mara bar Sarapion. Ein Beitrag zur Geshichte der Syrischen Literatur- "Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft", Leipzig, 1897, Bd. 51. յղումն ըստ С. С. Аверинцев, Стоическая житейская мудрость глазами образованного сирийца предхристианской эпохи (Увещевательное послание Мары бар Сарапиона к сыну)- "Античная культура и современная наука" М., 1985, с. 67-75:

24* Քրիստոսի պատմականութիւնը փաստող վկայութիւններ մէկտեղած են հետևեալ աշխատութիւններում. "Богословская энциклопедия", т. 7, СПБ. 1906, с. 356-378, Г. М. Лившиц, Очерки историографии Библии и раннего христианства, Минск, 1970, М. К. Трофимова, К методике изучения источников по истории раннего христианства – "Вестник Древней Истории", 1970, № 1, Неоспоримые свидетельства, (Исторические свидетельства, факты, документы христианства), Сост. Джон Мак-Дауелл, пер. с анг. А. Тамаринова М., 1990: Ի դէպ հակաքրիստոնեայ հեղինակների վկայութիւնները (բացառութեամբ Lociani, de morte Peregrini, 13) մեզ հասել են միջնորդաւորուած, այլ աղբիւրների միջոցով. այսպէս Կելսոսի հաղորդած տեղեկութիւնը հասել է Որոգինէսի Contr. Cels. երկի (PG. t. 11) միջոցով, իսկ Պորփիւրի տեղեկութիւնը, որ զետեղուած է եղել նրա «Ընդդէմ քրիստոնեաների» երկում (270թ.), և այստեղից է անցել այդ երկի դէմ գրուած Մեթոդիոս Պատարացու Հակաճառութեան մէջ (որը նոյնպէս մեզ չի հասել), յիշատակւում է Հերոնիմոս Երանելու երկերում (De viris illus. 83, Epist. 48, 13, 70, 3, Comment in Danielem, Praef. 12, 13, Adv. Rufinum 2, 13,):

25* Այդ մասին տե՛ս А. М. Иванов-Платонов, Ересы и расколы первых трех веков христианства, М., 1877, В. Плотников, История христианского просвещения в его отношениях к древней греко-римской образованности. Период Первый. от начала христианства до Константина Великого, Казань, 1885, А. А. Спасский, Эллинизм и христианство: История литературно-религиозной полемики между эллинизмом и христианством за раннейший период христианской истории (150-254), Сергиев-Посад, 1913:

26* Այդ աղանդի մասին հանգամանալից տե՛ս Երւ. Տէր-Մինասեան, նշւ. աշխ., էջ 46-54:

27* Արիոսի ուսմունքը, որ իր ակունքներով կապւած էր Փիլոն Եբրայեցու աստուածաբանութեանն ու Որոգինէսի երրորդական աստիճանաբանութեանը (սուբորդինացիա), գլխաւորաբար արդիւնք էր Մովսիսական միաստուածականութեան բացարձակեցման. այս մասին հանգամանալից տե՛ս Г. В. Флоровский, Восточные отцы IV века, с. 8-17:

28* Կիւրեղեան նզովքները տե՛ս Կիւրեղ Ալեքսանդրացի, Գիրք Պարապմանց եւ լուծմունք, Կ. Պոլիս, 1717, էջ 472: Տիրամայրը Աստուածածին է անւանում Որոգինէսի (Սոկրատ. VIII. գլ. 32), Դիոնիսիոս Ալեքսանդրացու (Թուղթ առ Պօղ. Սամոս.), Ալեքսանդր Ալեքսանդրացու (Թէոդորետոս, Պատմութ. եկեղեց. 1. գլ. 4) և. Աթանասի (Contr. Arian. orat. 3 n. 29) կողմից. տե՛ս Փսլարետ, նշւ. աշխ., կ. II, с. 93:

29* Նեստորի քրիստոսաբանական հայեացքների մանրակրկիտ քննութիւնը տե՛ս Ալոյիս Գրիլմայեր, Քաղկեդոնի ժողովը. Ընդհարման մի վերլուծութիւն, «Գանձասար», Զ էջ 33-35 (ուր սակայն, երևութական հակասութիւնների արձանագրումով, ցոյց է տրւում Նեստորի և Կիւրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական հայեացքների իրական ընդհանրութիւնը), Մեսրոպ քհ. Արամեան, Երեք տիեզերական ժողովների դաւանութիւնը (աստուածաբանական ակնարկ) «Գանձասար», Ա, էջ 130-139:

30* Ցակոբիկները կամ Դիոսկորեանները (առաջացել է հիմնադրի՝ Ցակոբ Բարադայի կամ Ծանծաղոսի անունից) Ասորի միաբնակ եկեղեցու հետևորդներ են, որոնք առաջնորդւել են Սեւերոս Անտիոքացու վարդապետութեամբ, ըստ որի Քրիստոսի մարմինը մինչև Յարութիւնը եղել է ապականացու, Յարութիւնից յետոյ միայն դարձել անապական: Այս վարդապետութիւնը դատապարտւեց Հայ Եկեղեցու կողմից Մանազկերտի 726թ. ժողովում. տե՛ս Գ. վրդ. Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ, 1899, Ներածութիւն, էջ 77-79, Մ. քհն. Արամեան, Հայ եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ-Ը դդ.), «Գանձասար», Բ, էջ 106-108:

31* Զուլամերիկ-գիւղաքաղաք, աւան Վանայ լճի մօտ, Տիգրիսի ափին՝ այժմ բնակեցւած քրդերով:

32* Լէո (Լևոն) Ա (Մեծն) Հռոմի պապ (440-461), որի քրիստոսաբանական հրահանգները («Սկզբնագիրք տոմարին սրբոյն Լեւոնի եւ սահմանադրութիւն սուրբ ժողովոյն Քաղկեդոնի՝ աշխատ. յաշակերտաց մեծին Մխիթարայ աբբահօր» Վենետիկ, 1805) կարևոր դեր են կատարել Քաղկեդոնի ժողովում: Լևոնեան տոմարի ամփոփ բնութագիրը տե՛ս Մ. Արք. Օրմանեան, Տեղիք Աստուածաբանութեան, էջ 164 (§ 181):

33* Նկատի ունի Սահակ Մռուտ վարդապետի (Թդ) նշանաւոր թուղթը (Գիրք թղթոց, էջ 524-539) և Ստեփանոս Օրբէլեանի (ԺԳ-ԺԴ դ.) «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» երկը (Կ. Պոլիս, 1756):

34* Տե՛ս Քննական բնագիրը աշխատասիրութեամբ Մ. Արք. Մութաֆեանի, «Շողակաթ», եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդէս, 1995, Ստանպուլ, էջ 162-164:

35* Քաղւած է Վարդան Այգեկցու (1205) «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ», երկից. քննական. բնագ. կազմեց Շ. քհ. Հայրապետեանը Եր., 1998, էջ 206:

36* Աշխարհաբարն ըստ «Եղիշէի Վարդանանց պատմութիւնը», թրգմ. և ծանօթ. պրոֆ. դոկտ. Երւ. Տէր-Մինասեանի, Եր., 1958, էջ 39-40:

37* Տե՛ս Ցայսմաւուրք, 1834, Ա, էջ 272, Բ, էջ 133:

38* Նկատի ունի Պելագիոսի հերձուածը, համաձայն որի ադամական մեղքը չի տարածւում մարդկային ցեղի վրայ: Ժխտելով նախասահմանուածութեան գաղափարը՝ նա պնդում էր, որ իւրաքանչիւր ոք կարող է սեփական կամքի ճիշտ գործադրումով և առաքինի վարքով արժանի դառնալ աստուածային շնորհին: Այսու, ըստ Պելագիոսի, Աստծու Բանը մարմնաւորուել, մարդացել է Ադամի նախամեղսական բնութիւնից. (Տե՛ս Առաջին մաս. ծնթ. 84*)

39* Իր մօր՝ Աննայի արգանդում ադամական՝ ժառանգական մեղքից Մարիամի զերծ լինելու մասին պապական հռչակագիրն ամենայն իրաւամբ այն օրերի աստուածաբանական գրականութեան մէջ որակւում է «քմահաճ յանդգնութիւն»: Այն դատապարտուել է ժամանակի կարդինալներ Լամբրուսկինիի և Գարնիժերի կողմից. Филарет, նշ. աշխ. т. II, с. 96-97:

40* Նշւած թւականի «Արարատում» առհասարակ բացակայում է Գրիգոր Վկայասէրի անունով որևէ երկ. տե՛ս «Արարատ». Պաշտօնական ամսագիր հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի 1868-1919. Մատենագիտութիւն, Էջմիածին, 1970:

41* Նկատի ունի Խոսրովիկ Թարգմանչի և Յովհաննէս Սարկաւագի դաւանաբանական աշխատութիւնները. տե՛ս Գ. վրդ. Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ, 1899, Մ. քհն. Արամեան, Յովհաննէս Սարկաւագի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-ից» ժողովածուն, «Գանձասար», Զ, էջ 278-297:

42* Մխիթար Գօշի անունով յիշատակւած այս երկն («Յաղագս միութեան բնութեան եւ ներգործութեան կրից մարդացելոյ Բանին Աստուծոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի ուղղափառ դաւանութեամբ ըստ սրբոց հարցն աւանդից») իրականում պատկանում է ԺԳ-ԺԴ դդ. դաւանաբանական հեղինակ Մխիթար Սասնեցուն (1260°-1337). տե՛ս Մխիթար Սասնեցւոց Ճառք Աստուածաբանականք, աշխատ. Պ. Քաուի, Լուէին, 1993, էջ 32-45: Ի դէպ, համանուն լինելու պատճառով տեղ գտած այս շփոթ վերագրումը առկայ է Մխիթար Սասնեցու երեք տարբեր ճառերն ընդօրինակող գրչի յիշատակարանում (ՄՄ, ձեռ. 3276, թ. 44ա): Այս մասին տե՛ս Պ. Մուրադեանի գրախօս. «Ծողակաթ», 1995, էջ 201:

43* Քաղւած է «Յովհաննու Իմաստասիրի Հայոց Կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի, եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս» երկից (հրատ. Կարապետ վրդ., Վաղարշապատ, 1896, էջ 2-3, 10, 18), որ Եղիշէ Արք. Դուրեանի կարծիքով հաստատօրէն չի պատկանում Օձնեցու գրչին (Նախատարերգ, 1915, էջ 93):

44* Հայ եկեղեցու որդեգրած քրիստոսաբանական դիրքորոշման վերաբերեալ ընդհանուր ակնարկ տե՛ս. Եզնիկ Ծ. վրդ. Պետրոսեան, Հայ եկեղեցու քրիստոսաբանութիւնը, Ս. Էջմիածին, 1995:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

1* Այս կապակցութեամբ բնութագրական է Եղիշէի հետևեալ միտքը. «Հայր մեր»-ի մեկնութեան մէջ նա գրում է. «Մեծ է այս պարգևը մարդկանց տրւած բոլոր պարգևներից առաւել՝ Աստծուն՝ Հայր լինել մարդկանց: Այս ասելու իշխանութիւնը չունեն հրեշտակները, թէպէտ հզօր են և հոգևոր, [սակայն] սպասաւորներ են և ոչ՝ որդիներ: Ո՞վ մարդ, զգուշացիր քո անձի համար, [տես թէ] ինչպիսի պատւով մեծարւեցիր՝ մինչև իսկ Աստծուն քեզ Հայր անւանելու իշխանութիւն ստացար. ուստի այս բանը ևս խորհիր, որ Հօր պատւի համաձայն նաև քեզ պահես, որպէսզի վերիներն ու ստորիններն իմանան, թէ արդարև Աստծու որդի ես». Եղիշէ, էջ 200, ըստ աշխարհ. թրգմ. (Խ. Գրիգորեան) «Գանձասար», Գ, էջ 249:

2* Սուրբ Հոգու նաև Որդուց բխելու վերաբերեալ վարդապետութիւնը (Filioque), որից միշտ խորշել են Արևելեան եկեղեցիները, առաջին անգամ պաշտօնապէս սահմանակարգւել է Իսպանիայի Տոլեդո քաղաքում 689թ. տեղի ունեցած ժողովում: Filioque-ի վարդապետութիւնը կաթոլիկ եկեղեցին ընդունել է Ժ դարից յետոյ: Ինչպէս երևում է «եւ յՈրդւոյ» յաւելւածը առաջին անգամ ընթերցւել է Ֆլորենցիայի 1438թ. ժողովում. Лебедев, Очерки внутренней истории Византийско-Восточной церкви в IX, X и XI веках, М., 1902, с. 320: «Ֆիլիոքւէ»-ի մասին մանրամասն տե՛ս В. Болотов, К вопросу о Filioque, СПБ. 1914:

3* Շարականներում առկայ Ս. Հոգու աստուածաբանութեան մասին տե՛ս Դրւագներ, էջ 222-226:

4* Տե՛ս Նարեկ, Բան ՀԵ, ԺԵ:

5*-6* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 387 տ. 2-4:

7* Տես Նարեկ, Բան ՀԵ:

8* Քաղւած է՝ Աւծնեցի, 134:

9* Կանոնագիրք, Ա, էջ 412, տ. 1-8:

10* Կանոնագիրք, Ա, էջ 388, տ. 2-10:

11* Տե՛ս Կանոնագիրք Հայոց. Ա, էջ 425: Սահակի տեսիլքը (Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչեան, Ստ. Մալխասեան Տփղիս 1904. էջ 29-31) յիշւում է նաև Յովհան Մայրագոմեցու «Վերլուծութիւնք Կաթողիկէ եկեղեցւոյ» ճառում («Սիոն» 1967, էջ 70-75) այս մասին մանրամասն տե՛ս Հ. Քիւսէեան, Բանասիրական Ճշտում, «Լրաբեր» հաս. գիտ. 1980, №4, էջ 88-91:

12* Քաղւած է Եսայի Նչեցու «Թուղթ վասն կարգաց եկեղեցւոյ եւ ժամուց» երկից. ՄՄ, ձեռ. 5154, թ. 259բ. տե՛ս Ս. քհ. Պետրոսեան, Եսայի Նչեցու թղթերը, «Էջմիածին», 1985, №ԺԱ-ԺԲ, էջ 97:

13* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 390-391:

14* Տե՛ս Աւծնեցի, էջ 132:

15* Քաղւած է. Ագաթ., § 748:

16* Կանոնագիրք, Ա, էջ 390:

17* Հայ եկեղեցու՝ այլ եկեղեցիների հանդէպ որդեգրած հանդուրժողական, լայնախոհ վերաբերմունքի մասին հանգամանալից տե՛ս Հ. Ս. Անասեան, Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լոյսի տակ, «Բազմավէպ», 1968, էջ 273-277, նոյնի Վարդան Այգեկցին, որպէս համերաշխութեան գաղափարախօս, «Էջմիածին», 1969, N⁰ Է-Ը, էջ 56-58, Պ. Մուրադեան, Դաւանական հանդուրժողականութեան և ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում, «Գանձասար», Դ, էջ 95-108:

18* Հայ Առաքելական Եկեղեցու որդեգրած էկումենիկ շարժման ներկայ պայմաններում չափազանց անվերապահ է հնչում այս միտքը:

19* Ի դէպ, հոգևոր զինուորութեան, հաւատարմութեան գաղափարը հայրախօսական մշակութաբանութեան կարևորագոյն պահերից մէկն է դրսևորում. С. С. Аверинцев, Поэтика ранневизантийской литературы, М., 1987, с. 124-128, Հմմտ. с. 270, прим. 77:

20*-21* Հատուածները քաղուած են. Նարեկ, Բան Հէ, ԺԴ:

22* Պապի անսխալականութեան հրամանակարգը (դոգմատ), ինչը վաւերացնում էր նրա քաղաքական անսահմանափակ իշխանութիւնը, հռչակուեց Վատիկանի Առաջին տիեզերաժողովում (1869-1870թթ.):

23* Միտքը քաղուած է հեղինակի "Disputationes de controversiis fidei adversus huius temporis hoereticos" (Հռոմ, 1833-1840 t. I-V) կամ, որ առաւել հաւանական է. «Dichiaratione piu copiosa della Doctrina Christiana composta per ordine di Clemente VIII» երկից (Հռոմ, 1603), որ յայտնի է նաև (գործի ընդարձակ խմբագրութեան) հայերէն երեք տարբեր թարգմանութիւններով («Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան՝ թարգմանեալ ի ֆռանգաց լեզուէ ի հայոց...», տպ. 1630, 1634, 1669). տեղեկութիւններն ըստ Հ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, Հտ. Բ, Եր., 1976, էջ 1447-1454:

24* Պետրոս առաքելի առաջնայնութեան և այսու՝ պապի գերագահութեան (=Petrusamt-Primat Petri) մասին այս տեսակէտը պէտք է պաշտօնականացուէր կաթոլիկ աստուածաբանութեան մէջ և տեղ զբաղեցնէր արևմտամետ հայ հեղինակների աշխատութիւններում: Հմմտ. Ա. Պալճեան, Պատմութիւն «Կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ Հռոմէական եկեղեցւոյ ի փլորենտեան սինոդոսի», Վիեննա, 1878, նոյն հեղինակի «Աթոռ սրբոյն Պետրոսի Առաքելապետի», Վիեննա, 1853:

25 * Ա. Տէր-Միքէլեանի այս միտքը, որ ամրապնդելի է հայրախօսական բարձր հեղինակութեամբ («եկեղեցու միասնական և ճշմարտապէս միակ գլուխը Քրիստոս է». Ս. Բարսեղ Կեսարացի [տե՛ս "Православное Догматическое Богословие. Сочинение Филарета Архиепископа Черниговского", ч. 11, с. 362]), հաստատում է Մ. արք. Օրմանեանի հետևեալ դիտումով. «Կենդանի մարմինէն եւ տաճարի շինուածէն առնուած այս երկու փոխաբերական բառերէն (գլուխ. վէմ) աներկբայապէս կը հաստատի, թէ Եկեղեցւոյ գլխաւորութիւնը Քրիստոսի միայն կը պատկանի, թէ բացի Քրիստոսէ չկայ մէկը եւ չի կրնար ըլլալ

մէկը, որ կարող ըլլայ կատարել որևէ անհատական գլխաւորութիւն...» տե՛ս Տեղիք Աստուածաբանութեան, էջ 38 (§ 101):

26* Ս. Սահակ Պարթևի կանոնները տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 363-421:

27* Քաղուած է «Վարդապետութիւն երկոտասան առաքելոց կամ Վարդապետութիւն Տեառն երկոտասան առաքելովք յազգս» (=Դիդախէ) երկից (Կ. Պոլիս, 1898):

28* Քաղուած է. Ցաճախապատում, էջ 117:

29* Ի դէպ, արդէն ԺԹ դարում ժխտուել է Պետրոս առաքելի Հռոմում լինելու աւանդութիւնը (R. Lipsius, Quellen der Petrussage. Kiel, 1872, նաև՝ Petrus nicht in Romf – "Jahrbür für protestantische Theologie", 1876, N⁰=4, տե՛ս «Արարատ», 1892, էջ 956, նաև՝ Էդ. Գելլեր, Թէ Պետրոս առաքեալը երբեք Հռոմ չէ եկել, «Արարատ», 1888, էջ 581-590, Շահէ Արք. Աճեմեանի դասախօսութիւնը՝ կարդացուած Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների տօնի առիթով, «Էջմիածին», 1998, Ա, էջ 45-51):

30* Այս մասին մանրամասն տե՛ս նաև, «Քանի մի խօսք Հռովմ. եկեղեցու գլխաւորութեան մասին», թրգմ. Մ. Զոհրապեանի, Թիֆլիս, 1861, «Ճշմարիտ նշանակութիւն կաթուղիկէութեան կամ գիրք վիճաբանութեան Գէորք վարդապետի Կ. Պոլսեցւոյ», Կ. Պոլիս, 1749, «Ճրագ ճշմարտութեան՝ շարադրեալ ի Յակովբոսէ Պատրիարքէ...», Ս. Էջմիածին, 1755, «Թէ ինչպէս հռովմ. եկեղեցին ոչ եւս է Կաթուղիկէ եկեղեցի պրոֆ. Միշոյի Փարիզեցւոյ», թրգմ. Գ. Արք. Այլազեանի, Վաղարշապատ, 1878. Мейрик, Главенство папы перед судом древней церкви, пер. с анг. СПБ., 1866, Суворов, Римское папство до разделения церквей, Ярославль, 1882, с. 8-13:

31* Պապի անսխալականութեան և քաղաքական, հոգևոր անսահմանափակ գերիշխանութեան դէմ հանդէս եկած «հին» կաթոլիկ եկեղեցականներից յատկապէս նշանաւոր էր, հեղինակի իսկ յիշատակած, Իգնատիոս Դէոլինգերը (+1890թ.). տե՛ս «Արարատ», 1892, էջ 283-323, 385-409, 573-610, 681-709, 777-789:

32* Մէկ անգամ չէ, որ պապական անսխալականութեան տեսութիւնը հեղինակազրկուել է իբրև անհեթեթ հրամանակարգ: Օրինակ Ոնորիոս պապը (625-638) միակամութեան կողմն անցած լինելու պատճառով Կ. Պոլսի 6-րդ «տիեզերաժողովի» կողմից դատապարտուել է: Իրողութիւն, որ ինքնին խօսում է խնդրոյ առարկայ երևոյթի մասին. «Գանձասար» Ե, էջ 78:

33* Ճիզուիտական միաբանութիւնների գործունէութեան մասին հանգամանալից տե՛ս Т. Гризингер, Иезуиты. Полная история их явных и тайных деяний от основания ордена до настоящего времени, т. 1, СПБ., 1868, Ж. Губер, Иезуиты. их история, учение и практическая деятельность в сфере общественной жизни, политики и религии, СПБ., 1899, Г. Бемер, Иезуиты, М., 1913, А. Тонди, Иезуиты, М., 1955, Д. Е. Михневич Очерки из истории католической реакции (Иезуиты), М., 1955, A. Guichard, Les jesuites, Paris, 1974:

34* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 179, 118-119:

35*-36* Ս. Գրիգոր Լուսաւորչից առաջ Հայաստանում գործող քրիստոնէական համայնքների, կազմակերպած եկեղեցու գոյութեան մասին տե՛ս Դիոնիսիոս Ալեքսանդրացի, «Թուղթ վասն Ապաշխարութեան առ Մերուժան եպիսկոպոս Հայոց» (Ներած. Հ. Ն. Ակինեանի), «Հանդէս ամսօրեայ», 1949, էջ 49-78, Հ. Պ. Անանեան, Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէն առաջ, Վենետիկ, 1979:

37*-38* Փաւստոս Բուզանդի Պատմութիւնը կարևոր սկզբնաղբիւր է Հայ եկեղեցու հիմնադրման հանգամանքների հետազօտման համար: Այս տեսակէտից այն մասնաւոր քննութեան է ենթարկւել հետևեալ աշխատութեան մէջ. Հ. Գելցեր, Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն, թրգմ. Հ. Յ. Թորոսեան, Վենետիկ, 1896:

39* Եւսէբիոս Կեսարացու հաղորդած տեղեկութիւնները լուսաբանած են հետևեալ աշխատութեան մէջ. I. Duchen, Քրիստոնեայ Հայաստանը Եւսեբիոսի Եկեղեցական պատմութեան մեջ, թրգմ. Հ. Պ. Ֆերհաթեան, «Հանդէս ամսօրեայ», 1890, էջ 268-271:

40* Տե՛ս Ագաթ. § 744:

41* Շահապիւանի կանոնները տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 422-466:

42* Տե՛ս Գիրք թղթոց, էջ 323-324: Ի դէպ, ս. Գրիգոր Աստուածաբանի անւամբ բերւած վկայութիւնը քաղւած է նրա «Առ որս» ճառաշարի «Ցաղագս առ Արիանոս է բանս» ճառից. «Նեղ է փարախս, սակայն գայլոցն՝ անկոխելի». ՄՄ, ձեռ. 60, թ. 112բ-123բ:

43* Տե՛ս «Արարատ», 1894, էջ 329:

44* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 39-40:

45* Տե՛ս Ցայսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ 248, 1834, Բ, էջ 244:

46* Կալւինեան աստուածաբանութեան բնորոշ դրսևորումը կարելի է համարել հետևեալ խորհրդածութիւնը, որ քաղւած է նրա նշանաւոր «Ցորդոր քրիստոնէական հաւատքի» երկասիրութիւնից. «Երբ որոշ փիլիսոփաներ ուսուցանում են. «Ծանիր ինքդ քեզ»՝ նրանք մարդուն մղում են մտածելու իր արժանիքի և գերազանցութեան մասին... թէպէտ աստուածային ճշմարտութիւնը բոլորովին այլ բան է պահանջում. վստահութիւն սեփական առաքինութիւնների անհնարինութեան և հրաժարում սնափառութիւնից: Ոմանք, ձգտելով համեստ լինել, ընդունում են աստուածայինի առկայութիւնը, բայց նրանք այդ եղանակով բաժանում են մարդկայինն ու աստուածայինը, իբր թէ առաքինութեան, իմաստութեան և արդարութեան մի կարևոր մասը բնակւում է իրենց իսկ մէջ»: Նա պախարակում է նրանց. «ովքեր հասնում են այնպիսի խելայեղութեան, որ հպարտանում են՝ իբր նրանք Աստծուց ստանալով կեանքի շնորհը՝ իրենց սեփական ջանքով են հասնում կեանքի առաքինի միջոցին» (J. Calvin, Institution de la religion chrestienne, Paris, 1911, p. 30-31, 44) տե՛ս Н. В. Ревуненкова, Идеи гумманизма в трактовке Жана Кальвина- "Культура эпохи Возрождения и Реформация", Л., 1981, с. 180:

47* Տե՛ս Մանդակունի, էջ 197-198:

48* Մանդակունի, էջ 198:

49* Մանդակունի, էջ 205-206:

50* Հմմտ. Ագաթ. § 541, 563-564:

51* Խորհրդապաշտական աստուածաբանութեան մէջ հոգևոր վերընթացի այս ուղին ունի հետևեալ աստիճանները. Կատարսիս («ձերբազատում այլազան խառնուրդից». ս. Դիոնիսիոս Արիսպագացի) ֆոտիսմոս (ոգու պայծառացում աստուածային լոյսով), տելէոսիս («հաղորդակցում կատարելագործող հայեցող խորհուրդներին») տե՛ս Ռ. Մսհսհ, նշւ. աշխ.:

52* Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխատ. Կ. Կոստանեան, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 165-166:

53* Այս տեսակէտից աւելի քան բնութագրական է Ի. Բենինի աստուածաշնչագիտական բազմամեայ հետազօտութիւնների ամփոփումը հանդիսացող հետևեալ գրքոյկը. Մ. Յ. Պօզօգլեան, Սուրբ Գիրքին բառական ներշնչութիւնը գիտականօրէն հաստատւած, Հալէպ, 1946, ուր տառերի թւային խորհրդաբանութեան հիման վրայ կատարւում են Աստուածաշնչի գրքերի շարադրման պահին Ս. Հոգու ներկայութիւնը փաստող ընդհանրացումներ:

54* Տրիդենտեան ժողովը (գործերը տե՛ս Monumentorum ad historium concilii Tridentini collect., Lovanii, 1783), որ տեղի ունեցաւ 1546թ., Հերոնիմոս Երանելու իրագործած լատիներէն թարգմանութիւնը (Վուլգատա) հռչակեց «աստուածաշունչ», ներշնչւած, «վաւերական» և «կատարելապէս հաւաստի». Bellarmen. De verbo Dei 2 գլ. 10 տե՛ս «Արարատ», 1893, էջ 125-126:

55* Մինչև 1978թ. դեկտեմբեր ամիսը Աստուածաշունչը թարգմանւել է 1659 լեզուներով և բարբառներով. տեղեկութիւնն ըստ. Bullentin of United Bible Societies, Stuttgart, 1979, 1-2 Quart. p. 139:

56* Ստ. Մալխասեանցը ծանօթագրելով Խորենացու Պատմութեան այս հատւածը՝ բացառում է ամբողջ Աստուածաշունչը միանգամից թարգմանւելու հնարաւորութիւնը: Ըստ նրա, Խորենացու «բովանդակելով զքսան եւ երկու յայտնիսն եւ զնոր Կտակս լեզու ի հայ բան» բառերն ընդմիջարկութիւն են. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1981, էջ 385-386, ծնթ. 315:

57* Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան հանգամանքների, ինչպէս նաև նրա կանոնի մասին հանգամանալից տե՛ս Հ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, Բ, էջ 309-667 (ուր բերւած է ընդարձակ գրականութիւն):

58* Այս միաւորների հրատ. տե՛ս Անկանոն գիրք Հին Կտակարանաց, Վենետիկ, 1896 (հրատ. Ս. Յովսէփեան), Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1898 (հրատ. Ես. Տայեցի):

59* Սրբազան աւանդութեան պահպանութիւնն ու կենսագործումն եկեղեցու ծոցում առանձին ուժգնութեամբ է շեշտւում մասնաւորաբար ս. Իրենէոսի, ս. Կիպրիանոսի մատենագրութեան մէջ. տե՛ս Եղնիկ Ծ. վրդ. Հայրաբանութիւն, Ա, էջ 103-105, 220:

60* Հայ դաւանաբանական գրականութեան մատենագիտութիւնն ու ընդհանուր բնութագիրը տե՛ս Հ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, Բ, էջ 216-308, Աբէլ վրդ. Օղլուգեան համառօտ ակնարկ Հայ եկեղեցւոյ վարդապետական աստուածաբանութեան գրականութեան, «Գանձասար», Դ, էջ 45-71: Հայ եկեղեցու դաւանութեան համառօտ պատկերն է տրուած Մ. Մսերեանցի կազմած յայտնի անթոլոգիայում. «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ...»:

61* Ծիսական մատեանների (ժամագիրք, Շարակնոց, Ճաշոց. Ցայսմաւուրք, Տաղարան-Գանձասար, Տօնացոյց, Խորհրդատետր-Պատարագամատոյց, Մաշտոց) աղբիւրագիտական քննութիւնը տե՛ս Նորայր Արք.Պողարեան Ծիսագիտութիւն, Նիւ-Եորք, 1990 (ուր բերւած է ընդարձակ գրականութիւն):

62* Հայ եկեղեցական իրաւունքի աղբիւրները հրատարակել ու ենթարկել են մանրակրկիտ հետազօտութեան. տե՛ս Ն. Եպս. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրաւունքը, Հտ. Ա, Շուշի, 1903, Հտ. Բ, 1905, Ա. Ղլտճեան, Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1914, «Կանոնագիրք Հայոց» աշխատ. Վազգէն Ցակոբեանի, Հտ. Ա, Եր., 1964, Հտ. Բ, Եր., 1971, С. Тигранян, Древнеармянская книга канонов. Очерки описания и изследования памятника, Петроград, 1918:

63* Հայ միջնադարեան մատենագրութեան մէջ առանձին սեռ են ներկայացնում ճարտարապետութեան, սրբազան պարագաների (անօթներ, զգեստներ և այլն) աստուածաբանական բովանդակութիւնը մեկնաբանող եկեղեցագիտական աշխատութիւնները. տե՛ս Դրուագներ, էջ 45-82, Խորհրդանշանը Ստեփանոս Սիւնեցու եկեղեցաբանական ժառանգութեան մէջ, «Էջմիածին» 1998, Ժ-ԺԱ, էջ 94-102:

64* Տե՛ս Ցայսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ ՃԱ (=101):

65* Յովհաննէս Երզնկացի-Պլուզն իր ճառերից մէկում «Աղօթք» բառի հետևեալ ստուգաբանութիւնն է տալիս, «Բայց երկու վանկից է բաղկացած «աղօթք» բառը: Եւ առաջին վանկը, որ «աղ»-ն է, ցոյց է տալիս աղաչական և աղերսական աղաղակով հանդերձ սրտի խորքերից բխած բաղադրւած խօսքը: Իսկ «ոտք»-ը խօսքի պատշաճումն է իրար, որ կոչւում է «աղօթք», և թարգմանւում է Խօսք ուղղւած Աստծուն, որ առաջանում է սիրոյ բաղձանքից և անմարմին հոգու փափագից, որ նիւթագործումն է անարիւն զոհի և օրհնութիւնը Աստծու պատարագի». տե՛ս «Ի մեկնութենէ սրբոց վարդապետաց՝ յարմարեալ Յովհաննիսի Երզնկացւոյ Սաղմոսն ի բանն, որ ասէ «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց» (ՃԺԵ 15) ՄՄ, ձեռ. 2173, թ. 380բ: Աղօթագրական միաւորների ընդարձակ մատենագիտութիւնը տրւած է Հ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, Հտ. Ա, էջ 626-634:

66* Որոգինէսը կարգորոշում է Աղօթքի չորս տեսակ. փառաբանական, գոհաբանական, խոստովանական և պատճառական. Եզնիկ. Ծ. վրդ., Հայրաբանութիւն, էջ 149:

67* Խրատ տե՛ս Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, աշխարհ. թրգմ., էջ 183:

68* Աղօթքի վերաբերեալ ս. հայրերի խորհրդածութիւնները տե՛ս Աղօթագիրք, «Գանձասար», 1992, էջ 28-71:

69* Նշանի (սիմուլի=նշանակի, խորհրդանշանի) աստուածաբանական, իմաստասիրական բովանդակութեան մասին մանրամասն տես՝ ՝ С. С. Аверинцев, Поэтика ранневизантийской литературы, М., 1978, с. 109-149, О. П. Флоренский, Иконостас, "Богословские труды", ' 9, М., 1972, М. Иванов, К вопросу богословии символа, "Журнал Московской Патриархии", 1984, №=4, В. В. Бычков, Византийская эстетика. Теоретические проблемы. М., 1977, с. 108-143, А. Ф. Лосев, Логика символа հեղինակի Философия, мифалогия, культура, М., 1991.
Դրուագներ, էջ 83-87: Նոյնի՝ Խորհրդանշանը Ստեփանոս Սիւնեցու եկեղեցաբանական ժառանգութեան մէջ, «Էջմիածին» 1998, Ժ-ԺԱ, էջ 92-104:

70* Եօթ թի աստուածաբանական հանգամանալից վերլուծումը տե՛ս Դրուագներ, էջ 87-91:

71* Մինչդեռ Կաթոլիկ եկեղեցին Եօթերորդ «տիեզերաժողովով» և Տրիդենտեան ժողովով (մէկը պատկերամարտների, միւսը բողոքականների դէմ) Խաչը և պատկերները երկրպագութեան արժանի սահմանեցին նաև առանց օծման և օրհնութեան. տե՛ս Յովս. վրդ. Գաթրճեան, Հիմնական տարբերութիւն Կաթողիկէ եւ Էջմիածնական դաւանութեանց, Կ. Պոլիս, 1864, էջ 336:

72* Քաղւած է Մամբրէ Վերծանողի «Ի գալուստ Երուսաղէմ» ճառից. տե՛ս «Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի... Մատենագրութիւնք», էջ 80:

73* Ս. Միւռոնի բաղադրատարրերի և նրանց խորհրդաբանական նշանակութեան մասին տե՛ս «Վասն իւղոյ սուրբ աւծութեան» (հրատ. Հ. Հ. Քիւսէեան) «Էջմիածին», 1991, Թ-Ժ, էջ 79-80, (որի ընդարձակ տարբերակն է. ՄՄ, ձեռ. 2039, թ. 225 աբ), «Զի՞նչ էր իւղն աւծութեան» [Անանուն մեկնութիւն Արարածոց], ՄՄ, ձեռ. 4370, թ. 166ա, Ն. Ս. Խանջեան, Սրբալոյս Միւռոնի բոյսերը, «Էջմիածին», 1996, № Թ, էջ 70-89: «Սրբալոյս միւռոն», Ս. Էջմիածին, 2001:

74* Տե՛ս Կորիւն, Վարք Մաշտոցի, աշխատ. Մ. Աբեղեանի, Եր., 1981, էջ 134, 136 (ԻԴ):

75* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 379:

76* Կանոնագիրք, Բ, էջ 7:

77* Տե՛ս «Կանոն օրհնութեան սրբալոյս Միւռոնին», Վաղարշապատ, 1890:

78* Հմմտ. Պողիկ. Զմիւռ. Թուղթ առ Փիլիպ. V, տե՛ս Ранние отцы церкви, с. 152:

79* Դուինի և Պարտաւի ժողովների կանոնները տե՛ս Կանոնագիրք, Բ, էջ 200-215, 3-18:

80* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 377-378:

81* Աղանդաւորների կողմից մկրտաւածների վերամկրտութիւնը պաշտպանել, հաստատել է Դիոնիսիոս Ալեքսանդրացին (+265) և օրինակարգել Նիկիայի տիեզերաժողովը. տե՛ս Եզնիկ Ծ. վրդ. Հայրաբանութիւն, Ա, էջ 163:

82* Տե՛ս Ցայսմաւուրք, 1834, Բ, էջ 213:

83* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 378:

84* Կանոնագիրք, Բ, էջ 15-16:

85* Տե՛ս Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 38:

86* Կաթոլիկ մկրտութեան այս բանաձևը դաւանաբանօրէն դատապարտւում է Կիրակոս Երզնկացու «Թուղթ առ Կարնեցիս» երկում (աշխատ. Ա. քահ. Դանիէլեանի), «Գանձասար», Զ, էջ 563-564:

87* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 485:

88* "Տե՛ս Die Kanones der wichtigsten altkirchlichen Concilien nebst den apostolischen Kanones", herausgegeben von Lic. Dr. Friedrich Lauchert, Freiburg im Breisgau und Leipzig, 1896:

89*-90* Տե՛ս Մաշտոց, Վաղարշապատ, 1905, էջ 5-51 (Կանոն Մկրտութեան):

91*-92* Տե՛ս Նարեկ. բան ՂԳ (Աղաւթք թարգմանաւորէն վասն սրբալոյս Միւռոնի):

93* Նարեկ. Բան ՂԳ, ԺԲ:

94* Տե՛ս Ծնթ. 88*

95* Տե՛ս Ծնթ. 88*:

96* Ս. Խորհուրդների կատարման հայ և կաթոլիկ եկեղեցիների որդեգրած սկզբունքների տարբերութեան մասին ընդհանուր ակնարկ տե՛ս և Հմմտ. ծնթ. 79*, նաև Ցովս. Գաթրճեան, Հիմնական տարբերութիւն Կաթողիկէ եւ Էջմիածնական դաւանութեանց, Կ. Պոլիս, 1864, էջ 300-322:

97* Մկրտութեան խորհրդաբանութեան մասին տե՛ս Փսևարբեմ, նշ. աշխ., m. II, c. 204-245, Մ. քհ. Արամեան, Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը, «Գանձասար», Գ, էջ 57-88, Դ, էջ 72-94:

98* Տե՛ս Մանդակունի, էջ 153:

99* Տե՛ս Մանդակունի, էջ 169:

100* Տե՛ս Կանոնագիրք, Բ, էջ 15 (ԺԹ):

101* Տե՛ս Մանդակունի, էջ 33:

102* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 464-466:

103* Տե՛ս Մանդակունի, էջ 77:

104* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 486 («Կանոնք Ներսիսի եւ Ներշապհոյ». ԺԸ, ԺԹ):

105* Իրողութիւնը լաւագոյնս բնութագրում է ս. Եղիշէի հետևեալ արտայայտութիւնը. Քրիստոս «մի օր հացացաւ ի վերնատունն, եւ հանապազ հացանայ յեկեղեցիս ի վերայ սուրբ սեղանոյն». Մատենագրութիւնք, էջ 204, Հմմտ. Մանդակունի, էջ 168:

106* Վկայութիւնը քաղւած է Մանդակունի, էջ 167:

107* Տե՛ս Ժամագիրք, Նիւ-Եորք, 1986, էջ 694-695:

108* Տե՛ս Ժամագիրք, էջ 704:

109* Մանդակունի, էջ 61:

110* Մանդակունի, էջ 59:

111* Տե՛ս Ծնթ. 110*:

112* Տե՛ս Մանդակունի, էջ 169:

113* Ս. Հաղորդութեան Հացի և Գինու Տիրոջ իրական մարմինն ու արիւնը լինելու իրողութիւնը հաստատում են տակաւին Ս. Իրինէոսը և Ս. Կիպրիանոսը. Եզնիկ. ծ. վրդ., Հայրաբանութիւն, էջ 103, 220: Իրողութեան աստուածաբանական արժեւորումը տրւած է «Գէորգեայ վարդապետի Վասն հաղորդութեան սուրբ Պատարագին» երկում. ՄՄ, ձեռ. 941, թ. 6բ-9ա, 944, թ. 4բ-7բ:

114* Համաձայն Որոգինէսի, «ծիսական աղօթքը ուղղւած է միայն Հայր Աստծուն». տե՛ս Եզնիկ. Ծ. վրդ., Հայրաբանութիւն, էջ 149:

115* Պատարագամատոյցների մանրակրկիտ քննութիւնը տե՛ս Ցովս. վրդ. Գաթրճեան, Սրբազան Պատարագամատոյցք Հայոց՝... հրատարակեալ հանդերձ յաւելւածովք ի Հ. Ցակովբոսէ վ. Տաշեան, Վիեննա, 1897, Arhim Zareh Baronian, Liturgia Biscericii Armene in cadrul eelorlate rituri liturgice rasoritene, B., 1975:

116* Հայ եկեղեցու դիրքորոշման իրաւացիութիւնը փաստելու նպատակով մասնաւորաբար ս. Ցովհան Ոսկեբերանի, ինչպէս նաև՝ ս. Եփրեմ Ասորու և ս. Գրիգոր Աստուածաբանի երկերից բանաքաղւած խմբագիր վկայութիւն է բերւած Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» աշխատութեան մէջ. տե՛ս «Գանձասար», Բ, էջ 188, 189, 190, ծնթ. 26, 28, էջ 213-214:

117* Հմմտ. Ոսկեբերան, Մեկնութ. Մատթէի, (Վենետիկ, 1826), Ճառ ՁԲ: Հաղորդութեան բաժակի մէջ ջուր խառնելու՝ կաթոլիկ եկեղեցու որդեգրած ծիսական սովորութեան դէմ խօսում է Մովսէս Երզնկացին իր «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին Հայոց ՉԾԸ (1309)» դաւանաբանական թղթում (Հրատ. Եզնիկ աբդ. Պետրոսեան) «Էջմիածին», 1974, Թ, էջ 33-42, Ժ, էջ 49-64, ուր բերւած են առատ վկայութիւններ եկեղեցու հայրերից:

118* Այսօրինակ բացատրութիւնը, որ գալիս է Որոգինէսից, Մեթոդիոս Պատարացուց, Աթանաս Ալեքսանդրացուց, Գրիգոր Նիւսացուց, տեղ է գտնում ոչ միայն Գրիգոր Նարեկացու, այլև Վարդան Արևելցու, Գրիգոր Տաթևացու, Պետրոս Բերթումեանի Երգ Երգոցի մեկնութիւններում. տե՛ս «Երգ երգոց՝ հանդերձ մեկնութեամբ նախնեաց», աշխատ. Մ. քհն. Արամեանի, Եր., 1993:

119* Հայ եկեղեցաիրաւական մտքի զանազան աղբիւրներ ամուսնական հասունութեան տարբեր տարիք են սահմանել: Այսպէս «Գիրք Մեծ Մաշտոց» ծիսամատեանը (տպ. Կ. Պոլիս, 1807) «Ինչան տալոյ եւ աւրհնելոյ» կանոնով (էջ

229-233) սահմանում է. «Վիցի փեսայն հնգետասան (15) կամ երկոտասան (12) ամաց եւ հարսն՝ ԺԴ (14) կամ Ժ (10) ամաց»: Այս սահմանումին գրեթէ համերաշխ են Յովհաննէս Պլուզ Երզնկացու «Ցաղագս խրատ պսակի եւ խրատ ամուսնացելոցն» կանոնական գրութեան հետևեալ տողերը. «Զի աւրինաւք չորեքտասան (14) տարոյն հարսին եւ փեսային՝ հնգետասան (15) եւ եթէ այլ պակաս՝ երեքտասան տարոյ տղայն եւ եկոտասան աղջիկն, զի վասն դառնութեան ժամանակին զերկու տարին պակասեցուցին սուրբ վարդապետքն մեր...» (ՄՄ, ձեռ. 835, թ. 14բ): Այս նշանակում է, որ նայած հանգամանքների, ժամանակի պարտադրանքի տղայի և աղջկայ համար համապատասխանաբար սահմանել են 15 և 16, 13 և 12 տարեկանը: Ելնելով զանազան տեղեկութիւններից ենթադրել է, որ Դ-Ե դդ. «ամուսնական չափահասութեան նուազագոյն տարիքը տղաների և աղջիկների համար համապատասխանաբար եղել է 12-11 տարեկանը» (Ս. Ց. Յովհաննիսեան, Ամուսնա-ընտանեկան իրաւունքը վաղ աւատական Հայաստանում, Եր., 1976, էջ 195-196): 1243թ. Սսի ազգային ժողովը տղայի համար սահմանում է 14, աղջկայ համար 12 տարեկան հասակը: Բայց ժողովրդի մէջ կենցաղավարող սովորութիւնների համաձայն տարբեր վայրերում դրանք տարբերւել են իրարից: Սակայն ամեն տեղ էլ «սովորութիւնը՝ կանոնական կարգերով դրուած չափահասութեան սահմանն իջեցրած է եղել մի քանի տարով»: Ուստի Յակոբ Ղրիմեցին իր «Ցաղագս ազգականութեան» աշխատութեան (1416թ.) մէջ գրում է. «Ըստ օրէնքի, պէտք է իսկապէս որ փեսացուն լրիւ 16 և հարսնացուն լրիւ 14 տարեկան հասակին հասած լինէին, որպէսզի պսակւէին, բայց մեր Սուրբ Հայրերը վատ ժամանակների պատճառով պսակողների տարիքը երկու տարով իջեցրին...: Չպէտք է մանկահասակներին ամուսնացնել, քան այդ թոյլատրուած է. դրա համար հեռու մնացէք այդ չար սովորութիւնից». տե՛ս Յակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատութիւններ, աշխատ. Զ. Էյնաթեանի, Եր., 1987, էջ 26-27:

120* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 382:

121* Տե՛ս Մաշտոց, Երուսաղէմ, 1901, էջ 71, Մայր Մաշտոց, Կ. Պոլիս, 1807, էջ 21, Հմմտ. Երուսաղէմ, ձեռ. 846, էջ 30-34, ձեռ. 1097, էջ 61-73:

122* Կանոնագիրք, Բ, էջ 10, 259-260:

123* Կանոնագիրք , Ա, էջ 182, 342, 348, 353-354, 358-362:

124* Պսակի խորհրդի աստուածաբանական հանգամանալից վերլուծումը տրուած է Գէորգ Երզնկացու (+1416) «Խրատ պսակի» երկում. Երուսաղէմ, ձեռ. 1462, թ. 302-308: Ս. Պսակի վերաբերեալ եկեղեցու խորհրդածութիւնները տե՛ս Филарет, Նշ. աշխ., т. II, с. 348-354:

125* Քաղուած է Ցաճախապատում, էջ 68:

125ա Այս միտքն այսօր այլևս ժամանակավրէպ է, որովհետև Կաթոլիկ եկեղեցին Վատիկանի Բ ժողովում (1962-1965) վերանայել է այն՝ «Վերջին օծում» որակումը փոխարինելով առաւել նախնական «Հիւանդաց օծում» անունով. The Dokuments of Vatican II, Pillar Books, N-Y 1975, ch. 3, p. 22,

յօդուած 73-75, p. 870, յօդ. 63 յղումն ըստ Բագրատ աբղ. Գալստանեան, «Հիւանդաց օծման խորհուրդը Հայ եկեղեցում» (վարդապետական աւարտական) Ս. Էջմիածին, 2002 (անտիպ), էջ 58:

126* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 126:

127* «Քահանայ» բառի այս ստուգութիւնը, ինչպէս երևում է, հեղինակը վերցրել է Հիւբշմանի Armenische Grammatik (Leipzig 1895-97, S. 318) աշխատութիւնից. տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Հտ. Դ, Եր., 1975, էջ 539-540: Ի դէպ, Մովսէս Երզնկացին տալիս է բառիս հետևեալ ստուգաբանութիւնը «Զի քահանայն մաքրող թարգմանի, զի մաքրեսցէ զմեղս ժողովրդեանն սրբասէր վարուք եւ մաքրափայլ աղաւթիւք: Եւ ըստ այլ տեսութեան հայր ասի քահանայն, զի հայրաբար խնամարկեսցէ որդիացելոցն՝ զնոցին պակասութիւնն ինքեան համարելով...», «Էջմիածին», 1975, Գ, էջ 54:

128* Իրականում քաղուած է «Ներսիսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» կանոններից. տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 482 (Ժ):

129* Կաթողիկոսական ընտրութիւնների, դրանց հետ սերտօրէն կապուած պատմութեան, կանոնների, ընթացակարգի և յարակից պարագաների մասին հանգամանալից խօսւում է. Ա. Տէր-Միքէլեան, Հայաստանեայց Առաքել. ս. եկեղեցին եւ իւր ս. կարգը, Վաղարշապատ, 1897, էջ 34-115, Բաբգէն վրդ., Կաթողիկոսական ընտրութիւն եւ կանոններ, Վաղարշապատ, 1908, Հ. Գրիգոր վրդ. Մագսուտեան, Ընտրեալդ յԱստուծոյ. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութիւնը, Եր., 1995:

130* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 375, 377:

131* Կանոնագիրք, Ա, էջ 118-119:

132* Տե՛ս Մանդակունի, էջ 207-208:

133* Վարդապետական պաշտօնավարութեան, վարդապետական աստիճանների վերաբերեալ հանգամանալից տե՛ս Բ. ծ. վրդ. Կիւլէսերեան, Վարդապետութեան աստիճանները հայ եկեղեցւոյ մէջ, Անթիլիաս, 1980:

134* Տե՛ս Մանդակունի, էջ 169:

135* Մանդակունի, էջ 23:

136* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 128 (ԺԶ):

137* Կանոնագիրք, Ա, էջ 409-410 (ԽԹ), էջ 456-457 (ԺԶ):

138* Հմմտ. Եղիշէի Վարդանանց պատմութիւնը. էջ 55:

139* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 432, տ. 2-3:

140* Կանոնագիրք, Ա, էջ 371, (Կանոնք Սահակաց Պարթեւի. Ը):

141* Հմմտ. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց (Աղանդների հերքումը) թրգմ. ներած. և ծանօթ. Ա. Ա. Աբրահամեանի, Եր., 1970, էջ 175:

142* Կանոնագիրք, Ա, էջ 118-119:

143* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 195:

144* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 450-451 (ԺԵ):

145* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 393-394 (ԼԸ):

146* Կանոնագիրք, Ա, էջ 363-421:

147* Տե՛ս Մանդակունի, էջ 83-84:

148* Մանդակունի, էջ 88:

149* Հմմտ. Թուղթ ընդհանրական, աշխարհ, թրգմ. «Գանձասար», 1991, էջ 89:

150* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 458-459:

151* Կանոնագիրք, Բ, էջ 7 (Դ):

152* Տե՛ս Յովհաննէս սարկաւագ, Յաղագս քահանայութեան, էջ 23:

153* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 118-119, 179:

154* Տե՛ս Գիրք Հարցմանց, էջ 672:

155* Հրատարակուած է հետևեալ խորագրով. «Եկեղեցական աղմուկները ԺԴ դարի սկզբում. «Արարատ», 1893, էջ 412-418, 507-523:

156* «Մարդն արարուած է Աստծու հետ հաղորդակցման համար: Դրա կորուստով՝ նրա լիարժէք յարաբերութիւնն իր նման ադամորդիների և շրջապատող բնական միջավայրի հետ խախտւում է: Յիսուս Քրիստոսի մէջ հաղորդակցումը վերականգնւում է երկու չափումներում էլ». տե՛ս On the way to communion in the sacraments. Faith and order. Louvain, 1971, Geneva, WCC, 1971, p. 57:

156*ա Այս միտքը, որ հակասում է բուն իսկ քրիստոնէութեանը, սկզբունքօրէն անընդունելի է ոչ միայն ներողամտութիւն քարոզող և հոգեհանգստեան պատարագով Աստծու ողորմածութիւնը ակնկալող հայ, այլև Ընդհանրական Եկեղեցու համար առհասարակ:

157* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 501-502:

158* Տե՛ս Յաճախապատում, էջ 153 Հմմտ. «Պատմութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զոր եհարց հրեշտակն Տեառն մինչ էր յայրին վասն հոգւոց մարդկան» ՄՄ, ձեռ. 2546, թ. 313ա-321ա, 715, թ. 37բ-45ա, 6800, թ. 73ա-84ա:

159* Տե՛ս Յաճախապատում, էջ 190:

160* Յաճախապատում, էջ 190:

161* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 503-504:

162* Յաճախապատում, էջ 190:

163* Տե՛ս Աւծնեցի, էջ 119-144, Բ տպ. 1953, էջ 139-157, որի աստուածաբանական քննութիւնը տե՛ս Դրւագներ, էջ 141-143:

164* Տե՛ս Ագաթ. § 730-759:

165* Եկեղեցու ճարտարապետութեան խորհրդաբանական մեկնութիւնը մասնաւորաբար տրուած է Յովհան Մայրագոմեցու («Սիոն», 1967, դ 1-2, էջ 70-75), Յովհան Օձնեցու (Մատենագրութիւն, էջ 119-144), Ստեփանոս Սիւնեցու (ՄՄ, ձեռ. 2039, թ. 230ա-244ա), Եսայի Նչեցու («Էջմիածին», 1985, № ԺԱ-ԺԲ, էջ 97) և այլոց աշխատութիւններում: Երևոյթի աստուածաբանական վերլուծութիւնը տե՛ս Տիգրան Խաչատրեան, Քրիստոնէական տաճարի խորհրդաբանութիւնը, «Գանձասար», Ե, էջ 338-351:

166* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 372 (Ժ):

167* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 380-381 (ԻԴ):

168* Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 486 (Ի):

169* Օրապահքերը (Զորեքշաբթի, Ուրբաթ) սահմանուած են Կանոնագրքում (Ա, էջ 30, 92, 497, 498, Բ էջ 17, 36, 56, 96, 104, 242 և այլուր): Օրապահքերը մասնաւոր սրբութեամբ յարգելու վերաբերեալ շարադրուած հրահանգներից առաւել ներկայանալի է. «Եփրեմի Խորին Ասորւոյ առացեալ վասն չուտելոյ զՉորեքշաբաթն եւ զՈւրբաթն եւ վասն ուրացողացն եւ պիղծ յիշոցնատուացն» ՄՄ, ձեռ. 3791, թ. 435բ-439բ:

170* Հմմտ. Մանդակունի, էջ 209-211, Աւծնեցի, էջ 12-16, Խոսրովիկ Թարգմանիչ, «Բան վարդապետութեան յաղագս Քառասնորդաց պահոց» (աշխատ. Հ. Ն. Ակինեանի) «Հանդէս ամսօրեայ», 1904, էջ 310-316:

171* Խուսափելով սրբազան առարկաների (Խաչ, պատկեր) նկատմամբ ծայրայեղ պաշտամունքից, նրանց նիւթական կողմի բացարձակեցումից (ինչը առկայ էր յունական եկեղեցում)՝ Հայ եկեղեցին որդեգրել է զգուշաւոր մօտեցում՝ բնեռացած պաշտամունքը փոխարինելով ողջախոհ յարգանքով: Այս տեսակէտը պաշտպանում և հաստատում են Վրթանէս Քերթողը Յովհան Օձնեցին, Անանիա Սանահնեցին, Յովհաննէս Սարկաւագը և ուրիշներ:

172* Անաւանդ պատկերագրութիւնը դրսևորում է մասնաւորաբար Արևելաքրիստոնէական աստուածաբանութեան այն կարևոր կարգոյթը, թէ «պատկերն ու անունը նոյնն են. մէկը լոկ պատկեր է, միւսը՝ սոսկ ձայն, որոնք ցոյց են տալիս իրի նշանակութիւնը՝ մէկը աչքերին և միւսը ականջներին ընծայելով զգայութիւն և էութիւն» («Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ», Ս. Էջմիածին, 1865, էջ 191-192): Ուրեմն պատկերն իբրև վիզուալ իրողութիւն և անուան արտաբերումն, իբրև դրա ձայնական տարբերակ, անունն ու անուան պատկերագրութիւնը ներկայացնում են իբրև փոխներդաշնակ, մէկը միւսով առարկայացող սինկրետիկ իրողութիւն: Այս երկուսի մէջ սակայն առաւել կարևոր դեր է վերապահուած «անուանը», որը շնորհունակ է դարձնում պատկերը. այս մասին մանրամասն տե՛ս Դրւագներ, էջ 122, 125, 138, նաև՝ П Флоренский. Столп, с. 346-7:

173* Պատկերների հանդէպ ծայրայեղ պաշտամունքը հեթանոսական, ուստի և մերժելի է համարուել տակաւին վաղ հայրախօսական աստուածաբանութեան մէջ: Այս մասին խօսում են Տերտուղիանոսը, Տատիանոսը, Թէոփիլոս Անտիոքացին, Կղեմէս Ալեքսանդրացին և ուրիշներ. տե՛ս В. В. Бычков, Эстетика Позднего Античности, II-III в.в. М., 1981, с. 166-179:

174* Ի դէպ, յունական կողմի պատկերապաշտական ծայրայեղութիւնների մասին գրում է Մովսէս Երզնկացին. «Բայց յոյնք բազում եպերանաց գործս գործեն ի պատկերս, որովք յոլովից պատճառք լինին գայթագղութեանն: Նախ զի մանուն անեն եւ չուանաւք կախեն, որք ի հողմոց տարուբերին: Ապա, զի մեքենայիւք խաղալ առնեն պատկերաց, ոմանց եւ այլոց արտասուել եւ զազգի իւրոց մեռելոց պատկերս գրեն ընդ սրբոցն, որք ոչ տարբերին ի միմեանց: Եւ այսոքիւք բազումք գայթագղին տեսաւղք եւ լսաւղք».

«Մովսէսի Հայոց վարդապետի գրեալ պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց» (աշխատ. Եզնիկ աբդ. Պետրոսեանի) «Էջմիածին», 1975, Ա, էջ 36-37:

175* Խաչի խորհրդաբանութեան և աստուածաբանութեան մասին տե՛ս М. Ф. Мурьянов, Статья Тума Бострского в Изборнике 10732- "Изборник Святослава. 10732", М., 1977, с. 311-316:

176* Հմմտ. «Կանոն զնկարեալ եկեղեցն եւ պատկեր աւրհնելոյ». Մայր Մաշտոց, էջ 213-215, նաև ՄՄ, ձեռ. 1001, թ. 32բ-33ա:

177* Տե՛ս ծնթ. 176*:

178* Հմմտ. «Կանոն Խաչ աւրհնելոյ», Մաշտոց, ՄՄ, ձեռ. 1001, թ. 40բ-54բ:

179* Տե՛ս «Կորիւնի վարդապետի, Մամբրէի Վերծանողի, Դաւթի Անյաղթի մատենագր.», էջ 76:

180* Քրիստոնէութիւնն իր էութեամբ ունի գերազանցապէս վախճանաբանական ուղղուածութիւն: Նրա նպատակն է ադամորդու հայեացքն ուղղել դէպի ապագան, որովհետև «վախճանաբանական արժէքի տեսակէտից «նրան էր վերապահուած ցոյց տալ «զհանդերձեալն լինելոյ» (Յովհան Մայագոմեցի): Քրիստոնէական յայտնութեան ներկայ իւրաքանչիւր պահը ներթափանցւած է ապագայով, որ կարող է գալ յաջորդ իսկ վայրկեանին. տե՛ս М. А. Барг, Эпохи и идеи, М., 1987, с. 99:

181*-182* Տե՛ս Մանդակունի, էջ 69:

183* Ի դէպ, վկայաբերւած այս հատուածը (Եղիշէ, մատենագր., էջ 13) քաղւած է «Հերմեայ եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք» երկից. տե՛ս Լ. Խաչիկեան, Եղիշէի «Արարածոց մեկնութիւնը», էջ 138-139:

183*ա «Առանձնական դատաստանը» չի ընդունում և այն բացառապէս Կաթոլիկ վախճանաբանութեան տեսակէտն է համարում նաև Մաղաքիա Արք. Օրմանեանը (Տեղիք Աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1985, § 240-242): Մինչդեռ «Առանձնական դատաստանը» ընդունւած է ոչ միայն Կաթոլիկ, այլև Հայ Եկեղեցու կողմից: Յենւելով Արևելաքրիստոնէական աստուածխօսական հարուստ աւանդների վրայ (Ս. Աթանաս Ալեքսանդրացի, Վարք Ս. Անտոն Անապատականի. «Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին, ըստ կրկին թարգմանութեան նախնեաց «Հտ. Ա, Վենետիկ, 1855, էջ 17-80, Ս. Յովհան Ոսկեբերան, «Ի Մատթէոսի Աւետարանին մեկնութենէ», «Յայսմաւուրք», տպ. 1834, Յաւելւած, էջ 47-48)՝ հայ Եկեղեցու հայրերը ուղղակի թէ անուղղակի անդրադառնում են այս իրողութեանը: Այսպէս, ծիսական մատենագրութեան մէջ դրա անդրադարձը կայ «Մաշտոց», «Շարակնոց» մատեաններում. «Մաշտոց»-ի «Մեծի այգուց» կարգում կարդում ենք. «Եւ սրա (համգուցեալ հոգու-Հ. Ք.) վէրքերը բժշկիր, և սրան խաղաղութեամբ անցկացրու խաւարային իշխանութիւնների միջով, որպէսզի չարութիւն չգտնեն Քո ծառաների մէջ: Այլ ջնջիր, Տէր, նրանց գործերի ձեռագիրը, որ սերմանեցին սրա

մէջ և սրան բարի ճանապարհ տուր: Թող սրա համար բացակայ լինի հրեղէն սուրը, որ պահպանում է Կենաց Ծառի ճանապարհը՝ պատկառելով Խաչի փրկչական նշանից...» (Վաղարշապատ, 1905, էջ 503-504): Յիշատակելի են Մեծի թաղման կանոնագլխի հետևեալ տողերը. «Դատիր, Տէր, նրանց, ովքեր դատում են ինձ, ալէլուիա, մարտնչիր նրանց դէմ, ովքեր մարտնչում են իմ դէմ, ալէլուիա: Վերցրու Քո զէնքն ու զրահը և արի ինձ օգնելու, հանիր Քո սուրը ընդդէմ ինձ հալածողների, արգելիր նրանց, և ասա դու քո անձին, թէ քո փրկութիւնը Ես եմ: Թող ամաչեն և ամօթով մնան, ովքեր փնտռում են իմ անձը, թող ետ դառնան և ամաչեն, ովքեր իմ մասին չար էին մտածում» (անդ, էջ 389-390), Հմմտ. Ս. Ներսէս Շնորհալու շարականների համապատասխան տեղիները. Շարակնոց, էջ 35, 113-114, 124-125: Սարգիս Շնորհալին (ԺԲ դ.) Կաթողիկէ թղթոց մեկնութեան մէջ գրում է. «Որովհետև իւրաքանչիւր մարդու մահւան ժամանակ դատաստանի դռները բացւում են, և համաձայն նրա գործերի դատավճիռ է կայացւում նրա համդէպ թէ՛ կեանքի, և թէ՛ դատապարտութեան, թէ՛ արքայութեան, և թէ՛ դժոխքի համար: Ըստ որում Ադամը ևս պատւիրանը խախտելով ընդունեց մահւան դատավճիռը, սակայն ինն հարիւր երեսուն տարի յետոյ ըմպում է մահւան դառը բաժակը: Ճիշտ այդպէս էլ ամեն մարդ, ով ենթակայ է մահւան, մեռնելիս դատաստանի դատակնիք է ընդունում, իսկ յարութիւն առնելիս ընդհանուր դատաստանի ժամանակ Դատաւորի տւած դառնութիւնն ու քաղցրութիւնը կըմպի» (տպ. Կ. Պոլիս, 1826, էջ 156): Այս միտքը առկայ է նաև Վարդան Այգեկցու խրատներում (աշխարհ. թարգմ. Տ. Շահէ քհն. Հայրապետեան, Եր. 1999, էջ 36-37), Ներսէս Լամբրոնացու Յովհաննէս Աւետարանչի Հանգստեան մեկնութիւն (աշխարհ. թարգմ. Տիգրան Խաչատրեանի, տե՛ս «Գանձասար», Զ, էջ 542) մէջ: Համակարգելով Ազգային Եկեղեցու՝ իրողութեանս նկատմամբ որդեգրած աստուածաբանական այս կեցւածքը՝ Ս. Գրիգոր Տաթևացին գրում է. «Վեց կողմից ապշում և զարհուրում են հոգիները. նախ որովհետև միայնակ է մնում հոգին, և բոլոր բարեկամներն ու ծանօթները թողնում են նրան, այլև բաժանւում են մարմնից, երկրորդ՝ ճանապարհը հեռու է, այսինքն՝ դէպի երկինք՝ այս աշխարհից դէպի այլ աշխարհ և ոչ թէ ինչ-որ մօտիկ տեղ, երրորդ՝ դժւարին և անտեսանելի է այդ ճանապարհը, չորրորդ՝ հրեշտակի ահեղ տեսքից և ձայնից, որովհետև նրան ոչ ոք չէր տեսել կամ լսել, հինգերորդ՝ զարհուրում են դևերի բազմութիւնից, որ դառն ու դաժան կերպարանքով շրջապատում են հոգուն և պատերազմում նրա դէմ, վեցերորդ՝ ապշում են, և քանզի իրենց բոլոր մեղքերը տեսնում են, և դևերը դրանք առաջ են բերում մանրազնին քննութեամբ [մեղքեր], որոնք գործւած և մոռացւած են «(Գիրք քարոզութեան, որ կոչի Զմռան հատոր, էջ 231-232): «Առանձնական դատաստանի» վերաբերեալ մանրամասն տե՛ս Միք. ծ. վրդ. Յակոբեան-Սալլանթեանց, Կրօնագիտութիւն քրիստոնէական, Մոսկով, 1831, § 178, 179, էջ 143-146: Տե՛ս Ս. Ստամբոլցեան, Մեղայ Աստուծոյ (Բացատրութիւն

«Հրաժարիմքի» և մեղքերի ընդհանրական խոստովանութեան աղօթքի խօսքերի), Ս. Էջմիածին, 2001, էջ 23-24:

Ի դէպ, վախճանաբանական այս գիտակցութիւնն առկայ է նաև «Պատմութիւն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զոր եհարց հրեշտակն Տեառն մինչ էր յայրին վասն հոգւոց մարդկան» գրութեան մէջ: Մեղաւոր հոգու վիճակը հետևեալ կերպ է նկարագրւում այստեղ. Հոգու վերյառնումի երկու աստիճաններից (ուր առկայ են «գունդք դիւացն» և «տարտարոսքն ահագինք») յետոյ «երրորդ աստիճանում կայ մի ահագին լոյս, որ մեղաւորին մթնագոյն է երևում: Յետոյ լալիս է և դառնապէս ողբում է ու ասում. Վա՜յ ինձ, ի՜նչ արեցի անցաւոր աշխարհում: Երբ չորրորդ աստիճան են բարձրանում, այնժամ գալիս են հրեղէն սուսերով հրեշտակները, կապում և ետ են դարձնում ու ասում. Ետ գնա, ցանցառ, հպարտ, ամբարտաւան, անողորմ և ամեն չարիքի մէջ անյագ, որովհետև երբ տեսում էիր աղքատին, չէիր ողորմում նրան: Բայց չգիտեմ, թէ ուր են տանում նրան: Քանզի երբ աղջամղջի խաւարը թանձրանում է, դևերի գնդերը գալիս, առնում են նրան, չարչարում, բռնցքահարում են: Եւ նա այստեղ մնում է մինչև Տիրոջ գալուստը, և Տիրոջ գալստեան ժամանակ մտնում է անշէջ կրակի մէջ, կերակուր դառնում հրեղէն որդերին» (ՄՄ ձեռ. 715, թ. 37բ-45ա): Յունարէն բնագրով անյայտ Ս. Յովհան Ոսկեբերանի անունով «Յաղագս հրաժարման մարդկան յաշխարհէս» ճառում կարդում ենք. «Երբ մեղաւորները աշխարհից հեռանում են՝ ահեղանման հրեշտակները գալիս են... և յափշտակում մեղաւորի հոգին, որ ագռաւի պէս սև է և գարշահոտ: Հրեշտակները առնում և բռնցքահարում, կշտամբում, յանդիմանում, ծեծում են նրան». ՄՄ, ձեռ. 2890, թ. 158բ:

184* Ներբող Խաչի. տե՛ս «Կորիւնի վարդապետի... Դաւթի Անյաղթի Մատենագր.», էջ 103-119:

185* Տե՛ս Մայր Մաշտոց, էջ 155-166:

186* Քաղւած է հեղինակի «Վասն յարութեան Ղազարու յաւուր շաբաթու» ճառից. տե՛ս «Կորիւն վարդապետի... Դաւթի Անյաղթի Մատենագր.», էջ 75:

187* Նկատի ունի հազարամեայի վարդապետութիւնը (Մ. Արք. Օրմանեան, Տեղիք Աստուածաբանութեան, էջ 188 § 249), որ որդեգրել են Առաքելական հայրերից Պապիասը (Եւս. Կեսար. Պատմութ. եկեղ. Գ 39, 12) Իրինէոսը (Adver. hear. V), Յուստինոս Վկան, և ուրիշներ:

188* Տե՛ս «Կորիւնի վարդապետի... Դաւթի Անյաղթի Մատենագր.», էջ 55:

189* Քաղւած է հեղինակի «Ի յարութիւն Ղազարու» Ա ճառից, տե՛ս «Կորիւն վարդապետի... Դաւթի Անյաղթի Մատենագր.», էջ 38:

ՅԱՆԿ ԵՒ ԲԱՆԱԼԻ ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Հայաստ. եկ. և Բիւզ. ժող. պար.= A. Ter-Mikelian, Die armenisch Kirche in ihren Besiehungen zur Byzantinischen, Leipzig, Gustav Fock, 1892 հայ թրգմ. Հայաստանեայց եկեղեցին եւ Բիւզանդեան ժողովոց պարագայք, պատմական յառաջադրութիւն, Մոսկւա, 1892:

Աստուածաբան. գիտ.= Արշակ Տէր-Միքէլեան, Աստուածաբանական գիտութիւնները, «Արարատ», 1893, էջ 7-48, 107-128, 220-235, 299-318, 383-403, 487-506, 587-602, 679-703:

Միջին դարերի աղմուկները= Արշակ Տէր-Միքէլեան, Եկեղեցական աղմուկները ԺԴ դարի սկզբում, «Արարատ», 1893, էջ 412-418, 507-523:

Պսակի ս. խորհուրդը= Արշակ Տէր-Միքէլեան, Պսակի սուրբ խորհուրդը, Ս. Էջմիածին, 1894:

Հայաստ. եկեղեցու ս. Կարգը= Արշակ Տէր-Միքէլեան, Հայաստանեայց Առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցին եւ իւր ս. կարգը, Վաղարշապատ, 1897:

«Արարատ», 1892= Արշակ Տէր-Միքէլեան, Կոստանդին կաթուղիկոսի մի թուղթն առ Հեթում թագաւոր, «Արարատ», 1892, էջ 944-973, 1044-1058:

Ագաթ (Ագ)= Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1882 [քննակ. բնագ. աշխատ. Գ. Տէր-Մկրտչեան, Ս. Կանայեանց, Տփղիս, 1909]:

Ամար. քար.= «Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն եօթնալոյս վարդապետի», Կ. Պոլիս, 1741:

Ան. Նարեկացի, «Ճռաքաղ»= «Երանելոյն Հաւրն՝ Անանիայի հոգեվարժ փիլիսոփայի ներբողեան ասացեալ ի սուրբ Կաթողիկէ եկեղեցի, որ է ի Նոր քաղաք, որ այժմ կոչի Վաղարշապատ...» (հրատ. Ա. Այլազեան), «ճռաքաղ», Հտ. Ա, 1859, էջ 265-272, 291-298, 323-332, 359-366, 399-406 [քննակ. բնագ. աշխատ. Հ. Քիւսէեանի, «Անանիա Սանահնեցու մատենագրութիւնը» (հրատ. ընթացքում):

Անանիա Սանահնեցի, Ընդդէմ երկաբ= [«Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» քննակ. բնագ. աշխատ. Հ. Քիւսէեանի, «Գանձասար» Աստուածաբանական հանդէս, 1992, Ա, էջ 204-238, Բ, էջ 168-218 Բ տպ. Հ. Քէոսեան. Աստուածաբանական բնագրեր. Ուսումնասիրութիւններ, Ա. Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 192-357]:

Ասողիկ= «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական...» աշխատ. Ստ. Մալխասեանցի, Ս. Պետերբուրգ, 1885:

Արիստոտէլ Եթիկա= Aristotelis Ethica Nicomachea, rec. I. Bywater, Oxford, 1894, Ethica Nicomachea, rec. F. Susemihl, Leipzig, 1880, նաև ռուս. թրգմ. Э. Радлов, СПБ., 1887:

Բարսեղ Մեծն, Վեցօրեայ= «Բարսղի Կեսարացւոյ Ճառք Վեցօրեայ արարչութեան», Վենետիկ, 1830 [քննակ. բնագ. աշխատ. Կ. Մուրադեանի, Եր., 1984]:

Բիւզ.= «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս», Վենետիկ, 1832, նաև՝

աշխատ. Ք. Պատկանեանի, Ս. Պետերբուրգ, 1883:

Գլագոլեւ, Մարդկային սեռի ծագումն ու սկզբնական վիճակը= Глаголев, Происхождение и первоначальное состояние человеческого рода, М., 1894:

Կանոն Ս. Գրիգորի=[Կանոն Ս. Գրիգորի (Լուսաւորչի) Պարթևի (հրապ.), «Բազմավէպ», 1981, էջ 62-71]:

Գր. Արշ. = Կիւրեղ Երուսաղէմացի. Կոչումն ընծայութեան, Գրիգոր Արշարունի, Մեկնութիւն ընթերցւածոցն Կիւրղի Երուսաղէմացւոյ, Կ. Պոլիս, 1727-1728 (Բ էջակալութիւն), էջ 1-196:

Գրիգոր Գ Կաթող.= «Բան պիտանի Գրիգորիսի կաթողիկոսի» (հրատ. Ա. Տէր-Միքէլեան), «Արարատ», 1892, էջ 1057-1099:

Գրիգոր Մագիստրոս. Տաղ.= «Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ», Վենետիկ, 1868

Գրիգորիոս Մեծ, Թղթեր= Migne PL t. 77 նաև՝ S. Gregorii Magni Papae, Registrum epistolarum ed P. Ewald, L. Hartman, B., 1887-1899, t. I-II:

Գրիգոր Նարեկ. Բան= «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840՝ «Մատեան ողբերգութեան». էջ 1-268 [քննակ. բնագ. աշխատ. Պ. Խաչատրեանի, Ա. Պազինեանի, Եր., 1985]:

Գրիգոր Նարեկ. Ներբող Առաք.= «Ներբողեան գովեստի ի համօրէն գունդս Առաքելոցն», տե՛ս «Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 424-438:

Գրիգոր Սարկաւագապետ, ճառ= Գրիգորի Սարկաւագապետի ներբող ի ս. Գրիգոր Լուսաւորիչ, «Սոփերք

հայկականք», Դ, Վենետիկ, 1853, էջ 129-157:

Գրիգոր Տաթևացի, Հարց. տես Հարց (Գիրք Հարցմանց):

Գոլուբինսկի, Աստծու իմաստությունն ու բարերարությունը աշխարհի մարդու վիճակների մէջ, Մոսկվայ, 1894=Голубинский, Премудрость и справедливость Бога в состоянии мира и человека, М., 1894:

Դանիլեւսկի, Դարւինիզմ= Данилевский, Дарвинизм, т. I-II, М., 1885:

Դաւանութիւն հաւատոյ. Կ. Պոլիս, 1713= Յովհաննէս Զուղայեցի (Մրգուզ), Դաւանութիւն հաւատոյ (Գիրք համառօտ վասն ճշմարիտ եւ ուղղափառ դաւանութեան Կաթուղիկէի եկեղեցւոյս Հայաստանեայց) Կ. Պոլիս, 1713:

Դաւիթ Անյաղթ, Ներբ. Խաչի= «Մատենագրութիւն նախնեաց Կորիւն վարդապետ, Մամբրէ Վերծանող. Դաւիթ Անյաղթ», Վենետիկ, 1833, էջ 103-119, [«Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ», Վենետիկ, 1932, էջ 9-25]:

Դարւինի կեանքը I, II, 1887= The life and letters of Charles Darwin, v. I-II, London, 1887:

Դրախտ= «Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ծաղկեցւոյ», Կ. Պոլիս, 1735:

Եզնիկ= Եզնիկ Կողբացի, «Գիրք ընդդիմութեանց», Կ. Պոլիս, 1869 (նաև՝ տպ. 1871, 1879, Թիֆլիս, 1914, Բուենոս Այրես, 1951):

Եղիշէ= «Սրբոյ հաւրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք», Վենետիկ, 1859:

Եսայի Նչեցի, Հակաճառութիւն ընդդէմ ֆռանկաց= [Պատասխանի թղթոյն ֆռանկաց, որ գրեալ էին առ Հայք վասն նախատանաց եւ ոչ միաբանութեան (մասամբ հրատ. Գ. վրդ. Սրւանձտեան, Թորոս աղբար, Կ. Պոլիս, 1884, Բ, էջ 395. տե՛ս Յ. Բ. վրդ. Սարգիսեան, Մայր Ցուցակ հայրերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Հտ. Բ, Վենետիկ, 1924, էջ 732]:

Եւս. Պատմ. եկեղ.= «Եւսէբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ», Վենետիկ, 1877:

Զգօն= «Գիրք, որ կոչի Զգօն՝ արարեալ ս. Յակովբայ երիցս երանեալ հայրապետին Մծբին քաղաքի», Կ. Պոլիս, 1824:

Ընդհան.= «Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ», Ս. Էջմիածին, 1865, Երուսաղէմ, 1871, [քննակ. բնագ. աշխատ. Էդ. Բաղդասարեանի, Եր., 1995]:

Թովմայ Արծրունի= Պատմութիւն տանն Արծրունեաց Կ. Պոլիս, 1852, նաև՝ Ս. Պետերբուրգ, 1887:

Ժամագիրք= «Ժամագիրք Հայաստանեայց ս. եկեղեցւոյ», Գ տպ. Վաղարշապատ, 1892, Դ տպ. 1902, նաև՝ Նիւ-Եորք, 1986:

Լութեր, երկեր= D. Martin Luthers Werce: Kritische Gesamtausgabe ed. J. K. F. Knaake..., Weimar i H. BΦhlau, 1883 [ռուսերէն թարգմ. հատընտիրը Мартин Лютер, Избранные произведения, СПБ. 1997]:

Լուկրեցիոս, Հարց= Лукреций, О природе вещей , пер. с. лат. А. Клеванова, М., 1876:

Կանոն Դւինի ս. ժող.= [տե՛ս Կանոնագիրք Հայոց, աշխատ. Վ. Յակոբեանի, Հտ. Բ, Եր., 1871, էջ 200-215]:

Կանոն Ներսէս կաթ-ի և Ներշապհոյ= [«Կանոնագիրք Հայոց», աշխատ. Վ. Յակոբեանի, Հտ. Ա, Եր., 1964, էջ 475-490]:

Կանոն ս. Սահակի= [«Կանոնագիրք Հայոց», Հտ. Ա, էջ 363-421]:

Կանոն Շահապիւանի= [«Կանոնագիրք Հայոց», Հտ., Ա, էջ 422-466]:

Կանոն Սիոն կաթ-ի= [Ա. Ղլտճեան, Կանոնք Պարտաւի Ազգային ժողովի (Սիովն կաթողիկոսի) Վաղարշապատ, 1905, քննակ. բնագ. Վ. Յակոբեանի՝ Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 3-18]:

Կոչումն ընծ. (Կիւրեղ. Կոչ. ընծ.)= Կիւրեղ Երուսաղէմացի, Կոչումն ընծայութեան, Կ. Պոլիս, 1727-1728 (Ա էջակալութիւն) նաև՝ «Երանելւոյն Կիւրղի Երուսաղէմայ հայրապետի Կոչումն ընծայութեան», Վիեննա, 1832:

Յակոբ պատր. Նալեան= Յակոբ պատր. Նալեան, Ճրագ Ճշմարտութեան, Կ. Պոլիս, 1756:

Յաճախ.= «Գիրք որ կոչի Յաճախապատում ասացեալ սուրբ հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչին», Կ. Պոլիս, 1737: Նաև՝ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք եւ աղաւթք», Ա տպ. Վենետիկ, 1826, Բ տպ., Վենետիկ, 1954, «Յաճախապատում ճառք սրբոյ հաւրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի» աշխատ. Ա. Տէր-Միքէլեան, Ս. Էջմիածին, 1894:

Հարնակ. Պատ. դաւ. Գ= A. Harnack, Lehrbuch der Dogmengeschichte, t. III, Berlin, 1890:

Հարց (Գիրք Հարցմանց)= Ս. Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729:

Հերոդոտ= [Herodotus, Historiarum libri IX, 1-3 Cambrige, Mass-London, 1946-1960, նաև՝ История, Л., 1972]:

Յովհ. վրդ. Երզն. ի ս. Գր. Լուսաւորիչն= «Յովհաննու վարդապետի Երզնկացւոյ ասացուած ներբողական գովեստի ի ս. Լուսաւորիչն Հայոց» տե՛ս հետևեալ հրատ. մէջ «Գիրք որ կոչի Յաճախապատում...», Կ. Պոլիս, 1737, էջ 265-311, նաև՝ Սոփերք Հայկականք, Հտ. Ե, Վենետիկ, 1853, էջ 83-164:

Յովհ. վրդ. Երզն. Վիպաս.= Յովհաննու Երզնկացւոյ Յաղագս երկնային զարդուց ոտանաւոր տե՛ս Յովհաննու Երզնկացւոյ Յաղագս երկնից, Նախիջևան, 1792, էջ 21-62:

Յովհ. Իմաստ.= «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, Բ տպ. Վենետիկ, 1953:

Յովհ. Իմաստ, Խոստով.= «Յովհաննու Իմաստասիրի Հայոց Կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս» հրատ. Կարապետ վարդապետի, Վաղարշապատ, 1896:

Յովհ. Կաթող Պատմ= Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1853, [Թիֆլիս, 1912]:

Յովհ. Սարկ. վրդ. ճառ= «Յովհաննու Սարկաւագ վարդապետի ներբողեան ի Ս. Գրիգոր Լուսաւորիչն Հայոց», «Սոփերք Հայկականք», Ե, Վենետիկ, 1853, էջ 5-36:

Յովհ. Սարկ. վարդ Յաղ. քահան= Յովհաննու Սարկաւագ վարդապետի Յաղագս քահանայութեան, «Սոփերք Հայկականք», Հտ. Գ, Վենետիկ, 1853, էջ 9-79:

Յովհ. Սարկ. վարդ. Աղօթք= «Աղօթամատոյց Յովհաննու Սարակաւագայ վարդապետի», «Սոփերք Հայկականք», Հտ. ԺԷ, Վենետիկ, 1854:

Յովս. Փլաւ. Հնախօս. Հրէից= Յովսէփոս Եբրայեցի, «Հրէական հնութիւնք», Կ. Պոլիս, 1761:

Խոսր. Անձ. տե՛ս Մեկն. Ժամ.

Կանտ, Երկնքի բնապատմութիւն= Kant, Allgemine Naturgeschichte und Theorie des Himmels, Königsberg-Lpz., 1755, Frankfurt-Lpz, 1797, նաև՝ Sämtliche Werke, Bd. 14, 1876:

Կիր.= «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ...» Մոսկուա, 1858, Վենետիկ, 1865 [քննակ. բնագ. աշխատ. Կ. Մելիք-Օհանջանեանի, Եր., 1961]:

Զեռաց Մաշտոց= «Գիրք գաւազան տալոյ աշակերտացն ճշմարիտ բանին քարոզութեան...», Վաղարշապատ, 1876:

Ղազար Ճահկեցի տե՛ս Դրախտ:

Մամբրէ Վերծ.= Մամբրէի Վերծանողի ճառք տե՛ս «Մատենագրութիւն նախնեաց», Կորիւն վարդապետ, Մամբրէ Վերծանող, Դաւիթ Անյաղթ, Վենետիկ, 1833, Բ. տպ. 1894:

Մանդ.= Յովհան Մանդակունի, Ճառք, Բ. տպ. Վենետիկ, 1860:

Մաշտոց= Մեծ Մաշտոց, Կ. Պոլիս, 1714, Մայր Մաշտոց, Կ. Պոլիս, 1807, «Մաշտոց (ձեռաց) յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս...», Գ. տպ. Վաղարշապատ, 1905:

Մեկն. Երգ երգոցի= «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւն», Վենետիկ, 1840, էջ 271-367:

Մեկն. Ժամ.= «Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն Ժամակարգութեան՝ կարգադրեալ Մովսէսի գիտնական վարդապետի», Կ. Պոլիս, 1840:

Մեկն. Կաթուղ.= Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն Կաթողիկեայ թղթոց, Կ. Պոլիս, 1826:

Մեկն. Մատթ.= «Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի՝ արարեալ ի սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ...», Կ. Պոլիս, 1825:

Մեկն. Մատթ. (գրչագիր)= Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, ՄՄ ձեռ. 5060:

Միք. Ասորի. Պատմ.= «Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորւոյ Ժամակարգութիւն», Երուսաղէմ, 1870, Բ տպ. «Ժամակարգութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի», Երուսաղէմ, 1871:

Մխիթար Գօշ, [Սասնեցի], Յաղագս միութեան մարդացելոյ

Բանին Աստուծոյ (գրչագիր)= «Յաղագս միութեան բնութեան եւ ներգործութեան կրից մարդացելոյ Բանին Աստուծոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի ուղղափառ դաւանութեամբ ըստ սրբոց հարցն աւանդից» [տե՛ս Մխիթար Սասնեցւոյ՝ Ճառք Աստուածաբանականք, աշխատ. Պ. Քաուի, Լուէին, 1993, էջ 32-45]:

Մխիթար Սկևռացի= «Պատասխանիք Մխիթարայ քահանայի Սկևռացւոյ Յաղագս համապատութեան երկոտասան առաքելոց», Երուսաղէմ, Ա տպ. 1857, Բ

տպ. 1860, Գ տպ. 1865 [աշխարհ. թրգմ. Ա. Բոզոեանի. «Գանձասար», Ե, էջ 139-157, Զ, էջ 403-420]:

Միլլէր, Մտածողութիւն= Müller, Handbuch der Physiologie des Menschen fϑr Vorlesungen (2 vol. 1834-1840. անգլ. թգմ. Elements of Physiology, 2 vol. 1837-1842):

Մովս. վրդ. Երզնկացի= «Մովսէսի Հայոց վարդապետի գրեալ պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց» աշխատ. Եզնիկ աբղ. Պետրոսեանի, «Էջմիածին», 1975, Ա, էջ 30-40, Գ, էջ 50-58, «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին Հայոց ՉԾԸ», «Էջմիածին», 1974, Ժ, էջ 49-64:

Ներսէս Մեծն տե՛ս Բիւզ.:

Ներսէս Լամբր. Մեկն. Պատ.= Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւն ի վերայ Պատարագի, Երուսաղէմ, 1840, նաև՝ Վենետիկ, 1847:

Շար.= «Շարական հոգեւոր երգոց սուրբ եւ ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց՝ յաւրինեալ ի սրբոց թարգմանչացն մերոց», Ս. Էջմիածին, 1861, նաև՝ 1997:

Շնորհալի, Չափաբեր.= Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830:

Որոգինէս, Ընդդէմ Կելսոսի= Contr. Cels. տե՛ս Migne, PG. t. 11:

Պարապմունք= Կիւրեղ Ալեքսանդրացի, Գիրք Պարապմանց, Կ. Պոլիս, 1717:

Պօղ. Տար.= «Թուղթ երանելոյն Պօղոսի Տարօնացւոյն ընդդէմ գրոյն Թէոփիստեայ երկադաւան հայ հոռոմ փիլիսոփային», Կ. Պոլիս, 1752:

Սամ. Անեցի= «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», աշխատ. Ա. Տէր-Միքէլեան, Վաղարշապատ, 1893:

Սահակ Ձորոփ. ճառ= «Ճառ ասացեալ յԱրմաւենեացն օր, որ է Ղոգոմեան» տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 185-193:

Սահակ վրդ. Մռուտ= [«Պատասխանի թղթոյն Փոտայ, գրեալ Սահակայ Հայոց վարդապետի՝ հրամանաւ Աշոտայ Հայոց իշխանաց Իշխանի»], հրատ. Հ. Ն. Ակինեան, «Հանդէս ամսօրեայ», 1968, էջ 451-472:

Սեբէոս= «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն եւ սկիզբն նորագիւտ պատմութեան Մխիթարայ Անեցւոյ ի լոյս ած Ք[երովբէ] Պ[ատկանեան]», Ս. Պետերբուրգ, 1879, [քննակ. բնագ. աշխատ. Գ. Վ. Աբգարեանի, Եր., 1979]:

Սիմէոն կաթող. «Ի գովեստ Էջմիածնի և կաթողիկոսութեան» (գրչագիր)= «սիմէոնի քարոզ եւ ասացուած եւ ներբողեան ի վեցերորդ տեսակ յողորմութիւն Աստուծոյ ի սուրբ Էջմիածին, զոր ընկալաւ ազգս Հայոց ղնտական եւ յատկապէս պարգեւ յԱստուծոյ ձեռամբ սրբոյն Գրիգորի...», ՄՄ, ձեռ. 2212, թ. 40բ-54ա:

Ստ. Սիւնեցի, Թուղթ առ Գերմանոս= [Պատասխանի թղթոյն զոր գրեաց տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս առ տէր Գերմանոս...» տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 373-395]:

Ստ. Սիւնեցի, Թուղթ առ պատր. Անտիոքայ= «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, մեծի իմաստասիրի պատասխանի թղթոյն Անտիոքայ եպիսկոպոսի, զոր վասն հաւատոյ գրեալն է», Գիրք թղթոց, էջ 323-334:

Ստ. Սիւնեցի, «Ընդդէմ հերետիկոսաց եւ թուղթ առ վարդապետս Աղուանից»= [«Երանելւոյն Քերթողի Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Բան պատասխանւոյ առ վարդապետս Աղուանից» Հրատ. Եզնիկ քհ. Պետրոսեան, «Էջմիածին», 1984, Ա, էջ 45-47]:

Ստ. Օրբէլ. Ձեռնարկ հաւատոյ= «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց», Կ. Պոլիս, 1756:

Վանական վրդ. Բան հաւատալի= [«Գիրք թղթոց», 1901, էջ 533-535, քննակ. բնագ. աշխատ. Մ. Արք. Մութաֆեանի, «Շողակաթ». եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդէս, 1995, էջ 162-163]:

Վարդան վրդ.= Վարդան Բարձրաբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861, Վարդանայ վարդապետի Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862:

Վարդան վրդ. ճառ= «Վարդան վարդապետ Բարձրաբերդցի [Արևելցի]», Նախադրութիւն ճառիս վասն սրբոյն Գրիգորի ի խնդրոյ տեառն Համազասպայ ներբողեան մեծիմաստ վարդապետին Վարդանայ յերիցս երանեալ պարթեւն Գրիգորիոս Լուսաւորիչ Հայաստան

աշխարհիս», «Սփերք Հայկականք», Ե, Վենետիկ, 1858, էջ 39-82:

Վարդան վրդ. ի խնդրոյ Կոստ. կաթող. դաւանութ.= Դաւանութիւն հաւատոյ ուղղափառութեան սրբոյ արդիւնական վարդապետին Վարդանայ ի խնդրոյ սրբազան կաթողիկոսին Հայոց տեառն Կոստանդեայ, ՄՄ, ձեռ. 8133, թ. 79բ-90բ (հրատ. ընթացքում):

Տիրան վրդ. առ Սենեքերիմ= տե՛ս Վարդան Այգեցի, «Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ», ՄՄ, ձեռ. 3295, թ. 146բ-148ա, 371ա-374ա, [քննակ. բնագ. աշխատ. Շահէ քհ. Հայրապետեանի, Ներածութ. Յակոբ Քիւսէեանի, Եր., 1998, էջ 206-207, 262]:

Տօնացոյց= «Տօնացոյց՝ սկզբնաւորեալ ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ... եւ կարգաւորեալ սրբոյն Սահակայ Պարթեւի.... իսկ յետ ժամանակաց ի Ս. Աթոռն Էջմիածնի Տ. Սիմէոնի Հայոց կաթողիկոսի», Ս. Էջմիածին, 1774:

Ուխտանէս= Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871:

Փարպ= «Ղազարայ Փարպեցւոյ արարեալ Պատմութիւն», Վենետիկ, 1793 [քննակ. բնագիր աշխատ. Գ. Տէր-Մկրտչեանի, Ստ. Մալխասեանցի, Տփղիս, 1904]:

Cureton, Spicilegium Syriacum, 1855= W. Cureton, Spicilegium Syriacum, containing remains of Bardesan, Meliton, Ambrose and Mar bar Serapion. With an English translation and notes, L, 1855:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ

- ԵՐԿՈՒ ԽՕՍՔ (ՅԱԿՈԲ ՔԻՒՍԵԵԱՆԻ). 1
- ԵՐԿՈՒ ԽՕՍՔ (ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԻ) . . . . . 2 - 3
- ՅԱՌԱՋԱԲԱՆ. . . . . 4 -11
- ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՒԱՏԻ ՀԱՆԳԱՆԱԿՆԵՐԸ. 12-15
- ՆԱԽԱՇԱՒԻՂ. 16-21

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ. ԱՍՏՒԱԾ ՈՒ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԸ

- Ա. ԱՍՏԾՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ. 22-30
- Բ. ԱՍՏԾՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԿՐՕՆՆԵՐՈՎ 30-39
- Գ. ԱՍՏԾՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԲՆԱՋԱՆՑԱԿԱՆ ՁՆՆՈՒԹԵԱՄԲ . . . 39-50
- Դ. ԱՍՏԾՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՄԲ . . 50-60
- Ե. ԱՍՏԾՈՒ ԷՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ. 60-69
- Զ. Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ. 69-77
- Է. ԱՍՏԾՈՒ ԱՐԱՉՈՒԹԻՒՆԸ. 77-80
- Ը. ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ. 80-86
- Թ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ. 86-89
- Ժ. ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾՈՒՄԸ. 89-98
- ԺԱ. ԱՍՏԾՈՒ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆԸ. 99-105
- ԺԲ. ՉԱՐՆ ՈՒ ՉԱՐԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ. 105-111
- ԺԳ. ՄԱՐԴՈՒ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՊԱՏԻՒՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ. 112-116
- ԺԴ. ՄԵՂԱՆՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ. 116-122
- ԺԵ. ՍԿԶԲՆԱԿԱՆ ՄԵՂՔԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ. 122-126
- ԺԶ. ԱՍՏԾՈՒ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ ՇԵՂՒԱԾ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ. 127-135
- ԺԷ. ՓՐԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ , ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԼՐՈՒՄԸ. 135-144

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ. ԱՍՏՒԱԾՈՐԴՈՒ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

- ԺԸ. ՄԻԱԾՆԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆԸ. 145-154
- ԺԹ. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՒԱԾՈՒԹԵԱՆ ՈՒ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ. 154-162
- Ի. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՒԱԾՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ. 163-168
- ԻԱ. ՔՐԻՍՏՈՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ. 168-170
- ԻԲ. ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԸ. 170-174
- ԻԳ. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆՆ ՈՒ ՊԱՏԱՐԱԳԸ. 175-183
- ԻԴ. ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԸ ԵՒ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ. 183-191

- ԻԵ. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՒԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԻՔԸ. 191-204
- ԻԶ. ՓՐԿՉԱԲԱՆԱԿԱՆ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 204-219

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ. ՓՐԿՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ

- ԻԷ. Ս. ՀՈԳԻՆ. 220-227
- ԻԸ. Ս. ՀՈԳՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ ԵՒ ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԸ. 227-234
- ԻԹ. ԵԿԵՂԵՑԻ. 234-243
- Լ. ՃՇՄԱՐԻՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ. 243-258
- ԼԱ. ՃՇՄԱՐԻՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ. 259-275
- ԼԲ. ԵԿԵՂԵՑՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ. 276-289
- ԼԳ. ՀԱՅԱՍՏ. Ս. ԵԿԵՂ. ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ. 289-298
- ԼԴ. ՓՐԿՈՒԹԵԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ. 298-314
- ԼԵ. ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՆՈՐ ԿԵԱՆՔ. 314-323
- ԼԶ. ԱՍՏԾՈՒ ԽՕՍՔՆ ՈՒ Ս. ԳԻՐՔԸ. 323-330
- ԼԷ. ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ. 330-338
- ԼԸ. ՄԱՐԴՈՒ ԽՕՍՔՆ ԱՌ ԱՍՏՒԱԾ ԿԱՄ ԱՂՕԹՔ. 338-344
- ԼԹ. ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ. 344-352
- Խ. ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ. . . 352-359
- ԽԱ. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ. 359-370
- ԽԲ. ԴՐՈՇՄ. 370-378
- ԽԳ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ. 378-398
- ԽԴ. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ. 399-416
- ԽԵ. ՊՍԱԿ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ. 416-431
- ԽԶ. ԿԱՐԳ ՀԻՒԱՆԴԱՑ. 432-441
- ԽԷ. ՉԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ. 441-474
- ԽԸ. ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՏՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ. 474-495
- ԽԹ. ԵԿԵՂԵՑՈՒ ԼՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ, ԱՅՍՏԵՂԻՑ ՓՈԽԱԴՐՈՒԵԼԸ ԵՒ ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ. 496-505
- Ծ. ՎԱԽՃԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ. 505-511
- ԾԱ. ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ. 512-519
- ԾԲ. ԴԱՏԱՍՏԱՆ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՎԻՃԱԿ. 519-525
- ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 526-566